9(47.925)/1
Դ-52

ԴԻՒԱՆ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԳԻՐՔ Ձ.

ԴԱՒԻԹ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

1801—2

Հրատարակեց
ԳԻՒՏ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԱՂԱՆԵԱՆՑ

ՄԻ ՎԻՄԱՏԻՊ ԿՈՆԴԱԿՈՎ

Ի Հայրապետութեան Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Վեհափառ եւ Սրբազնագոյն Կաթողիկոսի ամենայն Հայոց

Տպուած ի յիշատակ հանգուցեալ
ՄԵԼԻՔ ԱՂԷՔՍԱՆԴՐԵԱՆ ՍԱՓԱՐԵԱՆՑԻ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Տ. Ռոտինեանց
1904

Տպուած է սակաւաթիւ օրինակներ.

A III/2425

«ԼՈՒՄԱՅ» Ի Խմբագրատանը վաճառւում են

ԳԻՒՏ Ա. ՔՀՆ. ԱՂԱՆԵԱՆՑԻ

աշխատութիւնները.

1	Աղօթարան Ե. տպ. 1903	—	10
2	Կրօնի դասագիրք Ա. տ. 1889 (սպառուած)	—	15
3	« « Բ. Ա. Դ. տպ. 1891	—	25
4	« « Գ. Ա. Դ. տպ.	—	25
5	Տօմար և տօնացոյց Հայաստ. եկ. Բ. տպ. 1894	—	50
6	Կարինայ գաղթը. պատմական տեսութիւն. 1891	—	10
7	Դիւան Հայոց պատմութեան. գիրք Ա.—Բ. 1780—1834 Սահակ-Մեսրոպեան մրցանակին արժանացած 1893	2	—
8	Դիւան Հայոց պատմ. գիրք Գ. Սիմէօն կաթողիկոսի յիշատակարանը, կենսագրութեամբ, յաւելուածներով ու ծանօթութիւններով, Սահակ Մեսրոպեան մրցանակին արժանացած. 1894	7	—
9	Դիւան Հայոց պատմ. գիրք Դ. Ղուկաս կաթող. 1780—1800 I (լուսանկար պատկերով և վիմատիպ կոնդակով) 1899	4	—
10	Դիւան Հայոց պատմ. գիրք Ե. Դանիէլ կաթ. 1800—1808 (մի վիմատիպ կոնդակով) 1902.	4	—
11	Դիւան Հայոց պատմ. գիրք Զ. Դաւիթ կաթ. մ. I. 1801—2 մի վիմատիպ կոնդակով. 1904.	4	—
12	Կարգ աստուածպաշտութեան Հայաստանեայց ս. եկեղեցւոյ 35 նկարով, Դ. տպ. 1902	—	50
13	Հնից-Նորից, Հնախօս. ուղարկ. պրակ Ա. 1900	—	30
14	Պատի օրացոյց 1902 ամի. ժամանակագր. ծ.Ն. ամի	—	50
15	Նամակագիրք. 1902.	—	50
16	Տոցի օրացոյց 1902 ամի և յաւելուած.—Առաջնորդական խնդրութիւն (սպառուած.)	—	15
17	Ջաւար Ղարաբաղեանցի կեանքը և Մշակի դատաստանները (սպ.)	—	5

Թարգմանութիւնք.

18	Ճշմարտութիւնը այն արդիւնքների յաղթում է Ֆ. Հոֆմանի 1877	—	40
19	Խաւարից դէպի լոյս Ֆ. Հոֆմ. 18 8.	—	40
20	Դոն Քիշոտ լամանշեցի, Մ. Սերվ. 1878 (սպառ.)		70
21	Դէօրդ Ռօլլեստոն, 1879 (սպառուած)	—	60
22	Եբբարդ [illegible], Լակիդէի Բ. տպ 1893	—	10
23	Ռօբինզոն (Հրատ. Թիֆլ. ազգագր. ընկերութ.) (սպառ.)	—	60
24	Ձեռներոնի ժառանգը, պատկերազարդ, 1882. (սպառ.)	1	—
25	Ակամա ա. Սիրօնմայի. 1885 (սպառուած)	—	50
26	Եան Էրնաս Սմօլեար. Ն. Եանշուկի, 1885 (սպ.)	—	20
27	Արծուի մտածմունքը, պրօֆ. Մ. Բոգդան. 1892.	—	5
28	Գիւղի սուրբը. Ովեստոպոլկ Զէի, 1892	—	10
29	Կեանքի դպրոցը, Դիկկէնսի, 1892	1	—
30	Դէպի Աթէնք, Հ. Սենկեվիչի Բ տպ. 1901.	—	15
31	Մի կտոր հաց, Պոտապենկոյի Բ. տպ. 1901	—	10
32	Որսորդ. Օ. Շրայների	—	10
33	Մտածում ամպերի մասին. Օ. Շրայների	—	10
34	Կարա	—	5
35	Անապատը Ֆրիդերիկ. Էրկման Շատրիանի. 1903	—	40
36	Տնային բժշկարան. մասն Ա. (Թարգմ. ընկերութեամբ Իս. Յար.-ի և հրատ. բժշկ. Գ. Բարսեղի)	1	—
37	« « [illegible] Թարգմ. և հրատ. նոյն	1	60

Հրատարակութիւններ

38	Ի. Յարութիւնեան [illegible] գիրք 1893	1	50
39	Իշխ. Կ. Բեհբութ[illegible] 1893	—	15
40	Ռանդալէ, Էմէլ, [illegible] թարգմ. Յ. Լալայեանի	—	25
41	Ալբէր Ալջէօ, [illegible] 1893	—	25
42	Ճագարբեկեան [illegible] ա. ա. 1904	—	30
43	Խրիմեան Հայրիկ [illegible] 1895	—	15
44	Սպիրի, Այծարած [illegible] Ի. Յարութիւն. 1885	—	15
45	Բակ. (Դարդէն [illegible] 1896	—	10
46	Պեստալոցցի, Լ[illegible] Իսերսեն 1896.	1	50
47	Մեկլբէսինեկ [illegible], Պետրոս Շանշեան պատկերով, 1897	—	50
48	Թ. Ա. Խոհարար[illegible] Կոխագրած 190	—	50
49	Լուսոյ, դրական [illegible] 1896 Ա. գիրք	2	—
50	Լուսոյ « [illegible] 1896 Բ. գիրք	2	—

Дозволено цензурою, Тифлисъ, 21-го Марта 1903 г.

† ՄԵԼԻՔ ԱՂԷՔՍԱՆԴՐԵԱՆ ՍԱՓԱՐԵԱՆՑ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Դանիէլ կաթուղիկոսի վերաբերեալ գրագրութիւններից յետոյ (Տես «Դիւան Հայոց պատմութեան» գիրք Ն.), անհրաժեշտ համարեցինք ամենից առաջ հրատարակութեան տալ նորա մրցակից Դաւիթ կաթուղիկոսի կոնդակների ժողովածուն, որ առաջինների հետ միասին մի ամբողջութիւն պիտի կազմէ տասնևիններորդ դարի առաջին ութը տարիների, այդ կնճռոտ ժամանակի, Հայոց եկեղեցական պատմութեան և ժամանակակից անցքերի։

Դաւիթ կաթուղիկոսի կոնդակներից մեր ձեռքն են հասել 1801—4 թուերի կոնդակներն ու գրութիւնները. այդ կոնդակները մենք երկու խմբի բաժանեցինք, որովհետև նորա հայրապետական պաշտօնավարութիւնն էլ այդ կոնդակների համեմատ երկու մասի է բաժանւում.—1801-2 և 1803-4։ 1801-2 թուերի կոնդակների գրեթէ մեծագոյն մասը վերաբերում են իւր կաթուղիկոսանալուն, նոցանից շատերի բովանդակութիւնը համարեա նոյնն է և այդ կողմից կարելի է նոյն իսկ մեղադիր կացուցանել մեզ անխտիր տպագրելուն համար, բայց ուշադիր ընթերցողը կտեսնէ, որ ինքը Դաւիթ կաթուղիկոսը իւր ընտրութեան, ժողովրդական մահսէր-համախոսականներ պատրաստելու և տէրութիւններից հաստատութեան հրովարտակներ ստանալու նկարագրութիւնը գրեթէ ամեն մի կոնդակում կրկնելովը՝ նա աստիճանաբար, ժամանակի հետ նաև այնպիսի մանրամասնութիւններ է առաջ բերում, որ անզգալաբար ներկայացնում է մեզ այդպիսով իւր կաթուղիկոս ընտրուելու ամեն պարագաները այնպիսի մանրամասնութիւններով, որ անշուշտ մի ուրիշից մենք չէինք կարող լսել։ Այդ տեսակէտից մենք անհրաժեշտ համարեցինք բոլոր կոնդակների տպագրութիւնը, որքան էլ աննշան լինէին նոքա։ Այդ թուերի բոլոր կոնդակները զետեղուած են ներկայ հատորում։

Հետևեալ երկու տարիների կոնդակներն ու գրութիւնները, որոնք կազմում են «Դիւանի» առաջիկայ՝ Է. հատորի նիւթը և որ մամուլի տակ է արդէն, տարբերւում են առաջիններից ըստ ամենայնի. առաջինում Դաւիթը ներկայանում է որպէս մի ընտրեալ և օծեալ կաթուղիկոս, լցուած ս. Էջմիածնի, ս. Գրիգոր Լուսաւորչի և ամենայն Հայոց «Աստուածակերտ և երկնահանգէտ» Մայր Աթոռի անշարժ և յաւիտեան պահպանութեան ըղձակաթ սիրով և աշխարհի ամեն կողմը տարածում է այն միտքը, թէ «Հայաստանեայց Մայր Աթոռը և նորա Հայրապետութիւնը ս. Էջմիածնում անփոփոխելի է», ինչպէս անփոփոխելի է նաև մի անգամ օրինաւոր ընտրութեամբ օծուած Հայրապետը, բողոքում է Հայ Ազգին, որ Դանիէլը քակում է հայրենի ցանկը և իւր կրքերին բաւականութիւն տալու համար Էջմիածինը քանդելով՝ Համազգային Աթոռը Քիւրդստան է տեղափոխում-Բագրևանդի՝ Ուչքիլիսէի վանքը։ Նորա այս միտքը բուռն կերպով է արտայայտւում գրեթէ իւր բոլոր կոնդակների մէջ, չը խնայելով ոչ իրան Դանիէլին, և ոչ նորա շրջապատող և գործակից կրօնաւորներին, որոնցից գլխաւորներին նոյն իսկ բանադրում է և նզովում։ Եւ ի վերջոյ յաղթանակը ի հարկէ տանում է նա, ստանում է երեք պետութիւններից հաստատութեան հրովարտակները և Դանիէլը Ուչքիլիսէից աքսորւում է ս. Էջմիածին։ Դաւթի այս յաղթութեան մեծապէս նպաստում են նախ՝ այն հանգամանքը, որ իւր Բարսեղ եղբայրը պսակուած էր Երևանի յայտնի իշխան Մելիք-Աբի

րահամի դստեր հետ, և վերջինս՝ Նորա խնամին չարաչար աշխատում էր Դաւթի համար Երեանի Մահմատ խանի մօտ, իսկ միւս կողմից Գէորգ Աղայեկեան անունով մի խիստ ազդեցիկ մարդ, որ Պօլիս ապրելով յարաբերութիւն և կապեր ունէր թէ Պօլսի Ռուսական դեսպանի և թէ Պօլսական արքունիքի հետ։

Դաւիթը հասնելով իւր նպատակին և կաթուղիկոսութեան մէջ հաստատուելով՝ հետեւեալ երկու տարին, ինչպէս երեւում է աըպտգրելի կոնդակներից, արդէն նուիրւում է գործին և ձեռնարկում է Աթոռի և վիճակների բարեկարգութեան, թէպէտ և երբեմն երբեմն հարկ է լինում շատերին գրած կոնդակների մէջ կրկնել իւր կաթողիկոսանալու պատմութիւնը և ս. Էջմիածնի տարած յաղթանակը Իւչքիլիսէի նորահաստատ Աթոռի դէմ։ Եւ այդ յաղթանակը ընդհանուր բերկրութիւն է պատճառում ի սփիւռս աշխարհի ցրուած հայութեան։ Հետեւեալ հատորում մենք կվերադառնանք այս կարեւոր խնդրին։

—

Այս և հետեւեալ հատորին որպէս նիւթ ծառայել են հետեւեալ գրչագիրները.—

1. Ս. Էջմիածնի մատենադարանի № 760 գրչագիր «Օրինակք կոնդակաց Դաւիթ կաթուղիկոսի չղագիր, գրեալ յամի 1801 մինչև ց1803. յորս են քանի մի գրութիւնք Դաւթի ծանր անիծարանութիւն առ. կողմնականս Դանիէլի և վրդովիչս ժողովրդեան ընդդէմ իւր։ Գրեալք ըստ մեծի մասին ի ձեռն Աբրահամ վարդապետի ուրումն միաբանի սրբոյ Էջմիածնի»։ Այս մատեանը գրուած է գրելու հաստ թղթի վերայ, 752 երես, կազմած. մեծ մասը գրուած իրա՝ Դաւիթ կաթուղիկոսի ձեռքով. սկզբում դոքա գրուած են եղել առանձին թերթիկում և տետրերում, վերջը ամփոփել են մի կազմի մէջ, ուստի և կոնդակների սեագիրները խառն ի խուռն են և ոչ ժամանակագրական կարգով։

2. Ս. Էջմիածնի մատենադարանի № 755 գրչագիր, «Օրինակք կոնդակաց Ղուկաս կաթուղիկոսի, գրեալք ի թուին Հայոց ՌՄԽ մինչև ց ՌՄԾԳ»։ Բաղկացած 9 տետրից, որոնցից առաջին Ց-ը գրելու թղթի, իսկ վերջինը նամակի դիրքով. սոցանից I տետրը՝ 60 երես և VIII տետրի 59 երեսը (էջ 1016—1074) միայն Դաւիթ կաթողիկոսինն են, իսկ մնացեալները Ղուկասինը։

3. Ս. Էջմիածնի մատենադարանի № 762 գրչագիր «Օրինակք կոնդակաց Դաւիթ կաթուղիկոսին, միաբանից Էջմիածնի գրութեանց և Եփրեմ կաթուղիկոսին և Ներսէս արքեպիսկոպոսին, որ և յետ ժամանակաց կաթուղիկոս. գրեալ յամի Տեառն 1808 մինչև ց1811»։ Այս հաւաքածոյքի մէջ կան կոնդակների օրինակներ 1801 թուի յուլիս 11-ից մինչև 1804 թուականի յունիսը։ Ամբողջը 5 տետր է, նօտրգիր, 314 երես, գրելու թղթի վերայ։

4. Հ. Յովհ. ա. քահ. Մկրեանի հաւաքածոյքը։

5. Մեր սեպհական մատենադարանից Դաւիթ կաթուղիկոսի թէ իսկական կոնդակներ և թէ բազմաթիւ սեագրութիւններ արտագրուած զանազան անյայտ անձանց ձեռքով, որոնցից շատերի օրինակները գտնւում էին և վերը յիշած №№ 755, 760 և 762 գրչագիրների մէջ,

—

Այս գրքի մէջ մենք ընդարձակ և մանրամասն ծանօթութիւններ չդրինք, բացի միայն օտար և դժուարիմաց բառերի բացատրութիւններից, այլ այդ բոլորը մենք թողինք Դաւթի հատորի երկրորդ մասի համար, որ յոյս ունինք, Տեառն յաջողութեամբ, աւարտել մինչև այս տարուայ վերջը։

ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ

1801

Ա. *Թուղթ ի Դաւթէ նորոգ կաթուղիկոսէ առ մեծին Պօլսոյ պատրիարգ Յովհաննէս եպիսկոպոսն ծանուցումն զօծմանէն իւրմէ, եւ խնդիր վասն արքունական նոմոսացն հանելոյ:*

Յորմէ սիրով մեծաւ և կարօտիւ եղբայրականաւ, մատուսցի Քրիստոսաւանդն ողջոյն սիրելի և յարգելի եղբօրդ մերում, հարազատ և չնորհընկալ որդւոյդ սրբոյ Աթոռոյս՝ տեառնդ Յովաննիսի իմաստնապերճ արքեպիսկոպոսի և վայելչապատիւ պատրիարքի տիեզերական մայրաքաղաքիդ Կոստանդնուպօլսոյ որում և գիտութիւն լիցի:

Զի յանցելումն ամի ի գալն մեր և ի բերելն յայդր ղմահուէրս վասն ընտրութեան կաթուղիկոսի, եթէ զինչ անցք անցին, քո սիրելի եղբայրդ վերահասու գոլով քաջագէտ ես: Վերջապէս Յովսէփ արքեպիսկոպոսն ընտրեցաւ ի կաթուղիկոս, և յանուն նորա հանիք զֆերման և զբերաթ, զորս առեալ դարձաք ի սուրբ աթոռս և մինչ գրեալ էր նա զհասանել իւր ի Մոզտօք, աստուստ հրաւիրակք գնացին ընդառաջ ի Թիֆլիզ: Այլ ի պատրաստելն նորա ի գալ, հիւանդացեալ էր, և վախճանեալ. որոյ զհոգին տէր լուսաւորեսցէ, և զգլուխ սիրելի եղբօրդ ողջ պահեսցէ: Իբրև լսելի եղև մեզ լուր վախճանման նորա, տարակուսեալ կրկին վասն անտերութեան սրբոյ աթոռոյս, միաբանիւք և երկրացւովք ղմահուէր գրեցաք առ Դանիէլ արհի եպիսկոպոսն ի Թօխաթ, ժամագիր լինելով առ ի փութանակի գալ ի կաթուղիկոսութիւն. բայց մինչ բազմանային աւուրքն, իշխօղն երկրիս և այլ մեծամեծք հանդերձ միաբանիւք և ժողովրգօք հոգացեալ յաղագս յերկար մնալոյն մեծի տանս առանց գլխաւորի, ի խնդիր լինէին կաթուղիկոսի: Յայնժամ և ի Թիֆլիզու պատուաւոր իշխանօք մահտար և թուղթք եկին առ միաբանութիւնս և առ երկրացիքս, յորս զեկուցեալ էին վասն հանգուցեալ Տն. Յովսեփայ Հայրապետին կտակ առնելոյ յաղագս մերս յաջորդելոյ ի կաթուղիկոս: Առ որ եթէ ժողովուրդն և թէ միաբանք համահաճեալ յատկացուցին զմեզ ի կաթուղիկոսութիւն, որ և ի վեցերորդ կիւրակէի լինանցն՝ Ապրիլի ԻԸ ընկալաք ի գլուխ մեր զօծումն սրբալոյս Մեռօնի: Որոյ սակս ահա միաբանք սրբոյ զահիս և ժողովուրդք երկրիս զբազմակնիք թուղթ գրեցին ի մայրաքաղաքդ, լիովին ծանուցեալ զանցսն. և մեք կօնդակ օրհնութեան գրեցաք առ հասարակութիւն օրհնեալ ժողովրգոցն տեղւոյդ և ըզյատուկ-յատուկ թուղթս առ. յատկացեալ անձինս ձեռամբ սիրելի որդւոյն մերոյ Կարապետ հանճարունակ եպիսկոպոսին: Եւ այսու գըրովս քեզ արգոյ եղբօրդ ծանուցանեմք ըզսոյն մեր հանդիպումն զի գիտասցես թէ թէպէտ և ես ոչ գիտէի զիս արժանի այսմ պատւոյ և չէի իսկ բաւական կրելոյ զծանրութիւն

դժուարակիր լծոյս ի ժխորեալ ժամանակիս զառնաղէտ պատահարաց, սակայն զի մի ընդ երկար անպաշտպան մնալով սրբոյ տանս իսպառ յանչքութիւն հակեսցի յանձն առի զայս պաշտօն։ Եւ այսպէս անկեալ ի վարանս մեծաց հոգոց՝ ունիմ զյոյս օգնականութեան նախ յԱստուծոյ, և ապա հաւատարմէ բարեմիտ եղբարցդ և օրհնեալ տղղիս։ Ապաքէն խնդրեմ ի սիրելի եղբայրութենէդ զի և դու յԱստուածայինն կամաց զխտացեալ զեղելութիւնս հաճեցիս ընդ այս, և կամակար մտօք ախորժեսցես և եղբայրսիրաբար ձեռնտու և օգնական լիցիս մեզ։ Եւ հոգ տարեալ ջանասցես զարքունի ֆէրման և զբէրաթն յանուն մեր առնուլ և յղել։ Եւ ո՛ գիտէ՝ եթէ Դանիէլ վարդապետին անուամբ հանեալ լինիցի, խափանեսցես զայն, և ի մեր անուն առցես վերստին. քանզի մինչև ցայժմ անզր քան զչափ վնասեցեալ եմք և պակասաւորեալ և սուրբ տունս մերձ է ի յանկումն, եթէ ի վերայ այսքան վնասուց և նեղութեանց դարձեալ ես փորձութիւն մի գայցէ, իսպառ աւերեալ լինելոցք եմք, զի այլ տեելոյ ոչ գոյ ճար։ Վասնորոյ խնայելով յաթոռս և ի մեզ, զնումոսն արքունական մերով անուամբ փոյթ տածեալ անյապաղ յղեսցես։

Եւ եթէ սիրելի եղբայրդ և օրհնեալ մերազունքդ զանց առնիցէ և զխնդրուածս այսուիկ, կարելի էր յայլ եղանակ վճարել բանին, յորմէ մեծ սրտնեղութիւն լինի ձեզ և մեզ և վնասք ի վերայ վնասուց, հետևապէս խղճահարութիւն։ Ապա կամիմք և ախորժիմք, զի ձեր հոգածութեամբ և սիրովն յառաջասցի։ Եւ մինչ եղբայրաբար և կարեկցութեամբ հոգ տարեալ նպաստեսցես յօգուտ սրբոյ աթոռոյս և ի դիւրութիւն մեզ, մեծապէս շնորհակալ լինելոց եմք զսիրոյդ, որում Տէր լիցի վարձահատոյց ըստ բարեշնորհութեանցդ զորս առնիցես։ Եւ զայլ երկարապէսն համառօտ գրութեանցս ի կենդանի գրոյդ՝ ի Կարապետ խոհեմամիտ եպիսկոպոսէդ ունիս իմանալ։

Զոր և յարգելի եղբօրդ յանձն առնեմ, զի սիրով ընկալցիս և փոյթ տածեալ արքունի հրովարտակօքն չուառով դարձուսցես։ Եւ զսովորական ծախսն հրովարտակացն՝ որպէս զառաջինն ի յանուն Յովսէփ կաթողիկոսի հանելոյն սիրելիքն մեր Պետրոս զգօնամիտ եպիսկոպոսն և բարեպաշտօն մահտեսի Նիկողայոս ամիրայն ետուն զանձանակաղրամիցն սրբոյ աթոռոյս նոյնպէս և այժմ տացեն որպէս գրեցաք իւրեանց։ Եւ մեք թէ զայն յառաջ տարեալ ծախսն և թէ զոր երկրորդապէս ի յանուն մեր գրելոցն տացին, ընդունելոց եմք ի հաշիւ սրբոյ աթոռոյս։ Ողջ լեր ի տէր ի հրճուանս և ի մխիթարութիւն մեր ամէն։

Գրեցաւ ի թուականիս մերում ՌՄԾ և ի մայիսի... Ի սուրբ Էջմիածին։

Բ. Թուղթ Ի Զմիւռնիա առ ղրոշմահար Ստեփանոս աղայն, ի պատասխանի թղթոյն յամի տեառն 1799 յօգոստոսի 20: գրեցելոյ ընդ սուրբ Սաղիմայ նուիրակ Կարապետ վարդապետին առ Ղուկաս սրբազան կաթուղիկոսն։ Որոյ ի յետին հիւանդութեանն հասեալ. եւ թուղթն պահեալ մինչեւ ց՚ամ՛ տեառն 1801, ի մայիսի 3 հասոյց նորապսակ տեառն Դաւթի սրբազան կաթուղիկոսի. որ ծեռնադրեալ զնա, եւ գրեաց զայս՝ ի ծանուցումն հսյրապետութեան իւրոյ, եւ ի շնորհակալութիւն վասն յղեալ ընծայիցն։

Եւ ընդ Աստուածային օրհնութեանս՝ գիտասջիր իսկապէս սիրելիդ մեր։ Զի սրբոյ Երուսաղէմի նուիրակ Կարապետ շնորհառատ վարդապետն որ յԱմի տեառն 1799 օգոստոսի ամսեանն գրեցեալ թղթովքն ձեր առ երջանիկ տէր Ղուկաս սրբազան կաթուղիկոսն՝ ուղեորեցեալ էր առ սուրբ Աթոռս, ի Դեկտեմբերի 23։ Նոյն թուոյն էհաս, և ի յետին աւուրս կենաց նորա հազիւ ժամանեաց միանգամ սրբոյ Աջոյն համբուրման։ Իսկ մինչ փոխեցաւ սրբազան հայրապետն ի կենաց աստի (զորոյ զհոգին տէր լուսաւորեսցէ.) թուղթքն ձեր մնացին մօտ առ Կարապետ վարդապետն, սպասելով նորա յաջորդ կաթուղիկոսի։ Ապա մինչ մահսէրս տարաք մեք ի մեծն Պօլիս վասն բանի կաթուղիկոսութեան, եթէ զինչ անցք անցին, լուեալ էք, վերջապէս Յովսէփ արքեպիսկոպոսն անուա-

նեցաւ կաթուղիկոս, և արքունական նոմոսքն յանուն նորա ելին։ Եւ մինչ սպասէաք գալոյ նորա ի հիւսիսային կողմանցն, եկեալ ի Թիֆլիզ վախճանեցաւ։ Որով կրկին տարակուսեալ մեր վասն անտերունջ մնալոյ սրբոյ Աթոռոյս, թէպէտ և մահսէր գրեցաք ի Թօխաթ յաղագս Դանիէլ արհի եպիսկոպոսին, բայց ի յամելն նորա նկատեալ ամենեցուն՝ եթէ ընդ երկար անգլուխ մնալով սրբոյ Աթոռոյս ի յանչքութիւն հակի, յատկացուցեալ զմեզ օծին ի կաթուղիկոս յապրիլի ԻԸ։ Ապա Կարապետ վարդապետն զթուղթն քո մատոյց մեզ, որով իմացեալ զխնդիր ձեր յաղագս ձեռնադրելոյ զԿարապետ շնորհունակ վարդապետն եպիսկոպոս, ըստ վկայութեան հանգուցեալ Պետրոս Պատրիարգին, ձեռնադրեցաք, և առաքելական կարգիւ ճոխացուցաք։ Եւ զոր ընծայեալ էիր ի ձեռն նորա յանուն հոգելոյս սրբազան կաթուղիկոսին ի քոյդ տպարանէ զծ. Թաշկինակս, ընդ որս և զերկուս պաճախլու ոսկիս ի ժամուց յաղագս հանգուցեալ ծնողացդ Խաչատրոյ և Թագուհւոյ, մեք ընկալաք սիրով, և չնորհակալութեամբ օրհնեցաք զբարեպաշտ սիրելիդ, և հանդերձ յիշեալ ծնողօքդ յիշատակեցաք յաղօթս և ի պատարագս ի սուրբ տեղւոջս։ Ուրեմն՝ ընկալցի տէր զառատաձեռնուէր տուրս քո ի հաճոյս իւր և զփոխարէնն առաւելապէս հատուսցէ ի հոգիս հանգուցեալ ծնողացդ՝ և զքեզ ամենայն կենդանեօքդ օրհնեսցէ և զօրացուսցէ փրկեսցէ ի չարէ, և պահեսցէ ի խնամս իւր։ Արդ այսու նախանուէր օրհնութեան թղթովս գրեմ ազնուամիտ սիրելւոյդ՝ զի զկոչումն մեր յայս աստիճան՝ յԱստուծոյ համարելով հաճեսցիս բարեյօժար կամօք. և զստոյգ սէրդ և զհաւատարմութիւնդ զոր ունէիր առ լուսահոգի Հայրապետն, զնոյն և այժմ առ մեզ ունիցիս, և սիրանիչ գրովդ մեզ մխիթարիչ գտանիցիս. որով օժանդակեցեալ ի ձէնջ կարասցուք բառնալ զծանրութիւն լծոյս տիրականի, և շնորհակալութեամբ օրհնեսցուք զձեզ։ Ողջ լեր ի տէր։ Գրեցաւ ի ՌՄԽ թուոջս և ի Մայիսի ի սուրբ Աթոռ Էջմիածին։

Սիրով ողջոյն և օրհնութիւն տամք սիրելի և հոգևոր որդւոց մերոց՝ հարազատ եղբարց քոց տէրամբ զօրացելոց՝ պարոն Յոհաննէսին, և մահտեսի Ոսկանին, և բարեզարմ որդւոցդ՝ Խոչատուր՝ Յակոբ և Թագւոր չէլեպւոցն. և քէնակալին քո՝ Քէթխուտայ մահտեսի Հայրապետին, և համայն օրհնեալ ընտանեաց ձերոց։ Որք հանդերձ քև լիցին յանձնեցեալք ի ողորմութիւնս տեառն ամենակալի. Ամէն։

Գ. Թուղթ յիզմիր առ կեօրտէզցի պրն. Գէորգն, ի պատասխանի թղթոյն առ Ղուկաս սրբազան կաթողիկոսն գրեցելոյ ի ՌՄԽԸ, օգոստոս՝ 22, ծեռամբ սրբոյ Երուսաղէմի նուիրակ Կարապետ վարդապետին, որ այժմ ի ՌՄԾ, մայիսի էհաս առ նորոգ սրբազան կաթողիկոս, որ նախ յիշէ զիւր անցիցն, եւ ապա շնորհակալ վասն ընծային ի սորա:

Եւ ընդ օրհնութեան սիրառաք թղթոյս՝ գիտասջիր բարեպաշտ սիրելի մեր և լուսածնունդ որդի սրբոյ գահիս Էջմիածնի։ Քանզի թուղթն քո դրեալ յամի թուականութեան մերոյ ՌՄԽԸ, օգոստոսի ԻԲ, առ սրբազան Հայրապետն մեր տէր Ղուկաս կաթուղիկոսն, ձեռամբ սրբոյ Երուսաղէմի նուիրակ Կարապետ խոհեմամիտ վարդապետին, ի դեկտեմբերի ԻԳ. հասեալ ի սուրբ Աթոռս, այն ինչ ի ծանր հիւանդութեան էր սրբազան Հայրապետն, որ և փոխեցաւ առ Քրիստոս, թուղթն քո մնաց ի ձեռս Կարապետ վարդապետին։ Այնուհետև յաղագս բանի ընտրութեան կաթուղիկոսի թէ զինչ անցք անցին, իմացեալ էք։ Ապա մինչ Յովսէփ անուանակոչեալ կաթուղիկոսն ևս վախճանեցաւ ի Թիֆլիզ, որոյ զհոգին տէր լուսաւորեսցէ, յետ բազում տարակուսանաց և անցից, ըստ վերնախնամ տեսչութեան՝ մեզ հանդիպեցաւ յաջորդել զաթոռս աստիճանի Հայրապետութեան, որ և օծեալ եղաք յապրիլի ԻԸ, Կարապետ հանճարունակ վարդապետն զթուղթն քո հանդերձ ընծայիւդ մէկ փիլոնցու հարէիւ նախայիշատակեալ սրբազան կաթուղիկոսին մատոյց մեզ, զոր ընթերցեալ ծանեաք զդրեալսդ։ Եւ զսիրանուէր ընծայդ ընկալեալ ի վայելս՝ շնորհակալ եղաք օրհնութեամբ։

Զորս ընկալցի՛ տէր ի հաճոյս իւր. և զփոխարէնն առատապէս հատուցանելով օրհնեսցէ զքեզ և զօրացուսցէ. փրկեսցէ ի չարէ, և խնամարկեսցէ միշտ՝ հանդերձ ամենայն քոյանովքդ, և զհողիս ննջեցելոց քոց լուսաւորեսցէ։ Իսկ և ի սակս Կարապետ չնորհառատ վարդապետին որ խնդրեալ էիր եպիսկոպոս ձեռնադրել, տեսեալ և զվկայական դիրն հանգուցեալ պատրիարգին՝ ձեռնադրեցաք և առաքելական աստիճանաւ փառաւորեցաք։ Որ բարեաւ վայելեսցէ զհոգևորն պատիւ, ի բարի յիշատակութիւն բարեկամութեան ձերոյ։ Եւ այսոցիկ այսպէս եղեալ, մինչ զանդրանիկ օրհնութեան կոնդակ գրեցաք ի վերայ աստուածախնամ քաղաքիդ, զայս օրհնաձիր Թուղթ ես յատկապէս առ սիրելիդ դրել վայելուչ վարկաք. զի և դու յԱստուծոյ համարեալ զկոչումն մեր յայս պաշտօն, յօժարակամ լիցիս. և որպէս յաւուրս լուսահոգի Հայրապետացն, նոյնպէս և ի մերս ժամանակի զհաւատարմութիւն և զսէրդ հաստատուն կալցիս առ սուրբ Աթոռս և առ մեզ. Որովք հանապազ վայելեսցես զշնորհս սրբոյ գահիս և զօրհնութիւնս մեր։ Նաև ի կողմանէ տէր Նիկողայոս քահանային փութաքարցւոյ՝ որ հարցեալ էիր, նա ի դառնալն մեր ի Կոստանդնուպօլսոյ՝ ընդ մեզ եկն, զոր մեր ծախուք խնամելով բերաք, և կայ այժմ ի գեղջն իւրեանց. յորմէ և ահա գիր առեալ յղեցաք ընդ Թղթոյս մերոյ ի միամտութիւն սիրելւոյդ։ Ո՛ղջ լեր ի տէր։ Գրեցաւ ի ՌՄԾ. և ի մայիսի... ի սուրբ Էջմիածին։

Գ. Թուղթ առ Եփրեմ վաղապետն յիշումն յառաջ գրեալ Թղթոյն իւրոյ. եւ բանք վասն կողմանցն վրդովմանց։

Ցորմէ անխարդախ սիրով և ողջունիւ, և սրբոյ իջման տեղւոյս հրաշագործ չնորհիւն գիտութիւն լիցի սիրելւոյդ իմոյ և բազմաշխատ որդւոյդ սրբոյ Աթոռոյս Եփրեմ Աստուածիմաստ վարդապետիդ և Արքեպիսկոպոսիդ։ յառաջ քան զայս՝ յամսոյս մայիսի 3. Թուղթ գրեցաք առ քեզ՝ ծանուցանելով զանցսն մեր, և զորպիսութիւն կոչմանն մերոյ յայս պաշտօն։ Ապա յետ այնորիկ Թուղթքն զորս ընդ սպասաւորին ձեր Ցարութիւն սարկաւագին և յետոյ ևս ի ձեռն Փիթօլեանց պարոն Աղային յղեալ էիր տռ եպիսկոպոսունսն տեղւոյս, հասին առ նոսա, և նոքա ես ցուցին մեզ. և ծանեաք զգրեալսդ, որով յայտ եղև եթէ բարիոք համարելով զայդ փոյթն առ ազգն և առ աթոռս, ջանասիրես։ Սակայն՝ մեք զսիրելի եղբայրդ խաղաղասէր գիտեմք՝ որ ոչ ունիս յօժարութիւն ընդ վրդովմանց՝ և Գրիգոր վարդապետն դեռ ի Թիֆլիզու գալոց է, խօսելոց եմք և խորհելոց և զօգտակարն ընտրելոց։ Մինչև ցայժմ զոր ինչ ի տեղւոյս գըրեալ են, յանդգնութեան ժամանակի են գըրեցեալք։ Այժմ որ մեք գլուխ կարգեցաք եղաք, այսուհետև որ ինչ լինիցի, մեք պարտիմք առնել և հաստատել։ Անցեալքն անցեալ են։ Արդ՝ որպէս և առաջին Թղթովն նշանակեալ եմք, ի հերուն հետէ և այսր զզանազան նեղութիւնս և զբաւական վնասս կըրեալ եմք, և առաջի մերազանց և օտար ազգաց նշանակութիւնս ցուցեալ. միւսանգամ այլես որ ինչ խառնմունք լինիցին, յումմէ և իցէ կրկին չարաչար վնասուց և աւերման պատճառ են գտանելոց։ Բայց սիրելիդ խղճմատանաւոր ես և բարեհամբոյր. և Թէ չփոթութիւն ինչ և բան աւերողական ի քէն ելանիցէ, և օգուտ մի ոչ երևիցի, յետոյ ըսարջանալոց ես, և խղճահարելոց. զի միայն վատահամբաւութիւն կարգաւորաց, և լինելի օգուտն պակասի իսպառ։ Եւ արդ ուրեմն ձեռք բարձցես յայնպիսի հետևմանց՝ ուստի յառաջանայ աղմուկ և տարակուսութիւն, և հոգ տարցիս քեզ առաջադրելոյ գործոյն նուիրակութեան. և զի այլոց ոչ է ակն առնել ինչ, այսուհետև զգրելի բանսդ առ մեզ գրեսցես, ի մէնջ պատասխանի առցես։ Եւ մեք զոր յառաջն ազդ արարաք սիրելւոյդ՝ եթէ առ ինքնակալ Կայսրն և առ Գաւլ Ցէտրիչ Կուսակալն, և առ [illegible]ողնիւ Աղայ Յովաննէսն Թուղթս գրեցաք միմիայն վասն ծանօթութեան, յետոյ Գրիգոր վարդապետն խնդրեալ էր՝ եթէ զմահսէրն զոր հանգուցեալ հայրապետի յղեալ է, զայնմանէ և ըղկտակաբարութենէն յիշումն լիցի. մեք յանպատկանիցն զգուշացեալ, իսկ զպատեհսն միջին ճանապարհաւ գրեցաք և յղեցաք. զի անտարակոյս գայցէ։ Եւ սպասեմք գալոյն, զի

յայնժամ խօսեսցուք և լիապէս խորհեալ ընտրեսցուք զարժանն, նկատելով և առ կամս ժողովրդեանն։ Վասնորոյ քեզ սիրելի եղբօրդ գրեմ, զի զգլուխ քո մի տայցես ի զբաղմունս և ի վէճս, այլ հանդարտութեամբ վարեսցես ըզյանձնեալդ քեզ գործ՝ սպասելով ակնարկութեան Աստուծոյ ամենակալին, որ եթէ յայդր ոչ դիպեսցի ըստ դիտմանդ լինել, այլ յարմար վիճակ գործոյ ես ոչ պակասի ի քէն, և մեք ըստ պարտն գոլոյ եղբայրական սիրոյ դիւր առնելոց եմք քեզ, և պատուով շահելոց։

Ողջ լեր ի տէր։ Գրեցաւ ի թուոջ փըրկչին 1801, և ի մայիսի։ ի սուրբ Էջմիածին։

Եւ ի կողմանէ Յարութիւն սարկաւագին գիտասցես, զի ընդ սմա դրեալքդ թուղթք առ. վարդապետսն էին. և մինչ կացութիւն տեղւոյս այսպէս կերպաւորեցաւ, մեք ահա առաջնովն և այսու երկու թուղթս գրեցաք քեզ սիրելւոյդ, զսոցա պատասխանիսն գրեա առ. մեզ, և որ ինչ խնդիրդ իցէ՝ ծանո, զի ըստ այնմ հոգացեալ տացուք սմա, և ուղևորեսցուք։ Ողջ լեր տէրամբ ի սէր մեր։ Ամէն։ Գրեցաւ ի թուոջ փրկչին 1801։ և ի մայիսի 22, ի սուրբ Էջմիածին։

Ե. Թուղթ ի տէր Դաւիթ նորապսակ կաթուղիկոսէ ի մեծն Պօլիս, առ Շնորհք Մկրտիչ ամիրայի որդիսն Մուրատ եւ Մանուէլ Չէլէպիսն, վասն ընտրութեան իւրոյ եւ օծման: Եւ ի յորդորումն՝ զի հոգատար լիցի ֆէրմանին եւ զմահսարատար Կարապետ եպիսկոպոսն փութով վերադարձուցէ առ մեզ:

Եւ ընդ անդրանիկ օրհնութեան ողջունառաք նամակիս, գիտութիւն լիցի ձերդ աստուածասիրութեան։ Զի մինոյն հոգի է, որ տայ իւրաքանչիւր ումեք զարժանն, և բաշխէ զշնորհս որպէս և կամի։ Զսոյն զայս է տեսանել և ի կոչման մերում յայս հայրապետական Աթոռ։ Վասն զի՝ ընդ լսելն մեր զվախճան տեառն Յովսէփայ կաթուղիկոսին ի Թիֆլիզ քաղաքի, իսկոյն զթուղթ հրաւիրանաց միաբանութեամբ գրեցաք առ. Դանիէլ Արքեպիսկոպոսն փութով գալ ի սուրբ Աթոռս՝ բայց իբրև երկարաձգեցան աւուրքն, իշխօղն երկրիս, և երկրացիք և միաբանք սրբոյ գահիս, տեսանելով թէ օր աւուր անչքանայ սուրբ Տունս, և յանտիրութեան մնալով՝ ի յաւերութիւն երթայ, վասնորոյ զմերս նուաստութիւն կամեցան նստուցանել։ Ի վերայ այսր, եկին ժամանեցին և բազմակնիք մահսէր և թուղթք ի Թիֆլիզ քաղաքէն առ. միաբանութիւն մեր, և առ. իշխօղն և ժողովուրդսն երկրիս։ Որովք և ծանուցեալ էին զմահ հոգելոյս հայրապետին, և զկտակ նորին յաղագս մեր յաջորդութեան ի տեղի իւր. ընդ որ հաճեալ և հաւանեալ համայն միաբանից սրբոյ Աթոռոյս ընդ մերազնեայ ժողովրդականացն, ի յայրելի ԻԸ. օծին ըզմերս անարժանութիւն և կացուցին գահակալ սուրբ Լուսաւորչին և հայրապետ ի վերայ տանս հայոց։ Որպէս և ինքեանք իսկ մահսէրիւ ծանուցին հասարակութեան մայրաքաղաքիդ։ Արդ՝ կարելի էր մեզ թէպէտ ընդդիմանալ կամաց և բանից ամենեցն, սակայն՝ յանցեալ ամին ի գալն մեր յայդր, ի հրաւիրակ յարգելի եղբօրն մերոյ Դանիէլ պատրիարգին, դուք պերճապատիւ իշխանքդ հաճեալ ընդ մնալն նորա ի քաղաքդ, առաւելապէս զմեզ պատշաճ վարկանէիք այսմ պաշտօնի։ Ուստի՝ ապաւինեալ նախ յԱստուած, և ապա ի նոյն ճշմարիտ սէր և յանկեղծաւոր բարեկամութիւն յատկեղ սիրելեացդ յանձն առաք զայս տարժանելի գործ, և զխուժանն ի վերայ թիկանց մերոց բարձաք. համարելով յԱստուածայլին եղեալ։ Ապա ի գալն սիրելի որդւոյն մերոյ մահասերաբեր + հանճարամիտ եպիսկոպոսին, գրեցաք և մեք զկոնդակ օրհնութեան առ. ժողովուրդսն տեղւոյդ, և առ. պատրիարգ եղբայրն մեր և առ. այլս ոմանս, զսոյն օրհնութեան և սիրոյ թուղթ ևս սիրելեացդ գրել յօրժարեցաք։ Խնդրելով յԱստուածասիրութենէ ձերմէ, զի և դուք յԱստուծոյ համարեալ զայս գործ՝ բարեյօրժար կամօք ընդունիջիք, և ճշմարիտ բարեկամութեամբ ձերով՝ գործակից մեզ լինիջիք, որով կարողասցուք բառնալ զտնտեսութեան զլուծ սիրեցեալ ազգիդ, և մանաւանդ յորդորեսջիք զյարգելի եղբայրն մեր զշնորհունակ պատրիարգն՝ փութով հանել զֆէրմանն յանուն մեր։ Այսպէս առնելով ձեր և կատարելով ըզ-

խնդիրս մեր՝ ընկալջիք զվարձս յԱստուծոյ և զօրհնութիւնս ի մէնջ հանդերձ չնորհակալութեամբ։ Զայլ ողջխութիւնսն մեր՝ ունիք ի մահսէրարերէս իմանալ, զոր և յանձն առնեմք ի սէր սիրելեացդ։ Շնորհք տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ և ընդ ձերայինսն, Ամէն։ Գրեցաւ ի ՌՄԾ թուոջս, և ի մայիսի... ի լուսանկար Աթոռս ի ս. Էջմիածին։

Զ. Փուստլայ առ մահտ. Նիկողայոսամիրայն՝ յաղագս ծախուց կաթուղիկոսական հրովարտակացն, եւ վասն Գալուստ վարդապետ նուիրակին. եւ զանծապետացն յուսադիր լինելոյ ի կողմանէ շնորհակալութեան թղթոց:

Դարձեալ գիտասջիր և զայս դերաղնիւ սիրելիդ մեր և աշխատասէր հարազատ որդի սրբոյ Աթոռոյս բարեպաշտօն օրհնեալ մահտեսի Նիկողայոս Ամիրայ։ Զի ի Կարնոյ և յԱթոռոյս քանիցս թուղթ եմք գրեալ քեզ վասըն անցից կողմանցս և սրբոյ Աթոռոյս, և պատասխանի չեմք առեալ, չգիտեմք դհասանիլն առ ձեզ կամ զոչ հասանիլն։ Նա և սիրելի եղբօր մերոյ նուիրակ Գալուստ վարդապետի ուր տեղոջ լինիլն՝ և յինչ աշխատութեան է, ոչ գիտեմք բնաւ։ Այժմ. մեք սիրոյ և ծանուցման թուղթ գրեցաք նմա, և սիրելոյդ խնդրեմք, որ ըստ կատարեալ բարեկամութեանդ՝ դրեսցես նմա, և ի մերս կողմանէ ըստ ամենայնի մխամտեցուսցես, որ մեր սիրելի և յարգելի եղբայր է, մեք ջանալոց եմք յամենայն կողմանէ շահել և սրրտադիւր առնել զնա. մեր գրոյ պատասխանին իւր ողջխութեամբն գրեսցէ, և անհոգ լիցի։ Այլ և՝ Յովսէփ կաթուղիկոսի անուամբ փէրման և բէրաթն մինչ եւ՝ զոր մեք ըերէաք, գնոյն ծախսն դու օրհնեալդ և սիրելին մեր վէքիլ Պետրոս վարդապետն ետուք։ Նոյնպէս և այժմ. որ ի մեր անուն հանեցին փէրման և բէրաթն, զսովորական ծախսն դարձեալ դու և Պետրոս վարդապետն պարտիք տալ՝ և գրել մեզ՝ որ մեք եթէ զառաջինն՝ և թէ զերկրորդս ծախսն ընդունելոց եմք ի հէսապս խարճիցն սրբոյ Աթոռոյս։ Եւ դրարեպաշտօն օրհնեալ զանձապետսն միամտեցուսջիք, զի յորժամ. փոքր մի ապահովասցուք ի խուժանաց, և ծանուցանէք մեզ զորքանութիւնս զանձանակադրամիցն եկեղեցեաց, յայնժամ. թէ առ ժողովուրդսն և թէ առ զանձապետսն շնորհակալութեան կոնդակս գրելոց եմք ի միամտութիւն։ Եւ նուիրակ վարդապետին ես ծանուսցուք առ սուրբ դահս և առ մեզ հասանել գոլ։ Նաև՝ սիրելի որդւոյդ մերոյ Կարապետ խոհեմամիտ վարդապետի սիահի եմք տուեալ պիտանի իրաց առ ի գնել վասն հարկաւոր ծախուց սրբոյ Աթոռոյս, գնոցին գինսն ես դուք տաջիք և գրեսջիք մեզ, զայն ես ի հաշիւ սրբոյ Աթոռոյս խաբջիցն ընկալցուք։ Այսպէս գիտացեալ՝ ողջ լեր։

Ծանիր վերստին. թէպէտ և գրեցաւ ի վերոյ թէ՝ սիահի եմք տուեալ Կարապետ վարդապետին գիրս գնել, և այլն, սակայն ոչ տուաք. ուրեմն մնաց ձեզ միայն զարքունի հրովարտակաց զծախսն տալ, և ոչ զայլ ինչ։ Բաւ է խոհեմութեան աղնուոյդ։

Է. Թուղթ ի մեծն Պոլիս առ մահտեսի Յովհաննէս ամիրայն Յարութիւնեան յաղագս կաթուղիկոսութեան տեառն Դաւթի:

Եւ ընդ օրհնաձիր նամակիս՝ ծանուցումն լիցի Աստուածասիրութիւն քում, Զի լսելով մեր զմահ Յովսէփայ անուանակոչեալ կաթուղիկոսին ի Թիֆլիզ, զմահսէր առաքեցաք առ Դանիէլ Արքեպիսկոպոսն ի Թոխաթ զալ ի կաթուղիկոսութիւն։ Բայց իբրև երկարեցաւ միջոցն՝ բազմակնիք մահսէր եկն ի Թիֆլիզ քաղաքէն առ միաբանութիւնս մեր և առ երկրացիքս։ Յորում. ծանուցեալ էին զկասկ հողելոյս հայրապետին, յաղագս մերս յաջորդութեան ի տեղի իւր։ Ուստի որ և միաբանք սրբոյ Գահիս և ամենայն բնակիչ մերազնեայքն տեղւոյս՝ յօժարամիտ սրտիւ բարեհաճեալ՝ նստուցին զմեզ յԱթոռ հայրապետութեան օծմամբ սրբալոյս մեռոնաւ՝ ի յապրիլի ԻԸ։ Եւ մահսէրաւ ծանուցին օրհնեալ

ժողովրդոցն մայրաքաղաքիդ։ յորմէ՝ և ի հասարակական կոնդակէն մերմէ, զոր գրեցաք առ. Աստուածախնամ քաղաքիդ՝ ունիս լիապէս դիտել զամենայն ինչ։ Ընդ որս՝ և զայս անդրանիկ օրհնութեան նամակ՝ քեզ սիրելւոյդ մերում գրել կամեցաք։ Որով և խնդրեմք ի բարեպաշտութենէ քումմէ, զի և դու յաստուծոյ համարեալ զայս գործ, փառս մատուսցես նորին անքնին տնօրէնութեանցն, և մեզ օգնական և մխիթար զտանիցես, և ի ճշմարիտ բարեկամութեանդ հաստատուն կացցես և մնասցես։ Որովք վարձատրեսցիս յԱստուծոյ և ի մէնջ։ Զայլ որպիսութիւնսն ունիս ի մահսարաքեր հոգևոր որդւոյն մերմէ զգօնամիտ եպիսկոպոսէն լիապէս գիտել։ որև՝ շնորհք տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ քեզ և ընդ քոյաիննսն, Ամէն։ Գրե.

Ըստ այսմ և առ. Թադէոս Աղային, որ ի Ուսկուտար, և առ. Մէրիամղուլի Թօմայ Աղային գրեցաւ ձեռամբ Մահսարատար Կարապետ եպիսկոպոսին։

Ը. Ի մեծն Պօլիս ծեռամբ Կարապետ վարդապետին առ պարոն Գէորգն Աղայեկեանն, յաղագս օծման եւ հայրապետութեան տեառն Դաւթի։

Եւ ընդ օրհնածիր ողջունառաք նամակիս՝ գիտութիւն լիցի բարեպաշտութեան քումս Զի մինչ լուաք մեք զմահ տեառն Յովսէփայ սրբազան կաթուղիկոսին ի Թիֆլիզ քաղաքի, տրտմութիւն կալաւ զմեզ և ի մեծ տարակուսի մնացաք, զորոյ զպատուական հոգին տէր լուսաւորեսցէ, և սիրելւոյդ մերում զերկար կեանս տացէ։ Եւ տռ Դանիէլ Արքեպիսկոպոսն միաբանութեամբ զթուղթ հրաւիրանաց առաքեցաք գալ ի հայրապետութիւն։ Եւ ի յերկարաձգիլ աւուրցն, ի մեծամեծացն Թիֆլիզու և յալոց թուղթք եկին առ միաբանութիւն մեր և առ իշխօղն և ժողովուրդսն երկրիս՝ հանդերձ բազմակնիք մահսէրաւ։ Որովք ծանուցեալ էին նախ զմահ հոգելոյս հայրապետին, և ապա՝ զկտակ նորին յաղագս մերս յաջորդութեան ի տեղի իւր։ Ընդ որ հաճեալ և հաւանեալ միաբանից սրբոյ գահիս և համայն մերազնեայ ժողովրդոցն տեղւոյս, կացուցին զմերս նուաստութիւն, յԱթոռ Հայրապետութեան՝ յայրիլի ԻԸ. տալով զօծութիւն սուրբ հոգւոյն Աստուծոյ, որպէս ինքեանք իսկ երկարապէս գրեցին առ. ժողովուրդսն մայրաքաղաքիդ բազմակնիք մահսէրաւ։ Ընդ որս և մեք առ հասարակութիւն տեղւոյդ և առ յարդելի եղբայրն մեր պատրիարգ վարդապետն գրեցաք զկոնդակ օրհնութեան և զգիր սիրոյ, և ձեռամբ հոգևոր որդւոյն մերոյ մահսարաքեր Կարապետ Արքեպիսկոպոսին առաքեցաք։ Նոյնպէս և հարազատ բարեկամին սրբոյ Աթոռոյս և մեր՝ շքեղափառ պարոն Թամարով գերամեծար դեսպանին զթուղթ անդրանիկ օրհնութեան գրեցաք և խնդրեցաք զի յամենայնի օգնական և օժանդակ լիցի մեզ, և շրջանկատ իմաստութեամբ հոգատար լիցի ֆէրմանին։ Զայս սիրալրական գիր ես քեզ քոջընտիր բարեկամիդ և արգոյ սիրելւոյդ մերոյ գրել կամեցաք։ Որով և խնդրեմք յԱստուածասիրութենէդ, զի և դու օգտաւէտ խորհրդով քով ձեռնտու լիցիս Կարապետ եպիսկոպոսիդ, և աշխատասիրեալ՝ բարեյօժար կամօքդ ջանասցես փութով զդա վերադարձուցանել առ մեզ, և հանապազ յորդորօղ եղիցիս նորին գերազանցութեան, օր մի յառաջ հանել զֆէրմանն մեր։ Եւ եթէ խռովութիւն և աղմուկ պատահեսցի վասն այսմ քաղաքիդ. փոյթ կալջիք դադարեցուցանել, և խաղաղութեամբ զգործն ի կատարումն տանել։ Եւ եթէ վասն Դանիէլ վարդապետին հանեալ իցեն զֆէրմանն, որպէս և իցէ խափանեսջիք, զուն դործեալ ըզմերն հաստատեսջիք։ Այսպէս առնելով քոյ՝ ընկալցիս զմեծագոյն վարձս յԱստուծոյ ըզշնորհս ի լուսատու ծնողէս քո սրբոյ աթոռոյս և զօրհնութիւնս ի մէնջ բազմապատիկ շնորհակալութեամբ, զայլ ամենայն զեղելութիւնսն լիապէս պատմելոց է ձեզ սիրելի որդիդ մեր Կարապետ շնորհափայլ վարդապետդ զոր յանձն առնեմ ի սէր սիրելւոյդ, ողջ լեր ի տէր, Ամէն։ Գրեցաւ ի ՌՄԾ թուոջս և ի մայիսի Թ, ի լուսանկար Աթոռս ի սուրբ Էջմիածին։

Թ. *Թուղթ ի տէր Դաւիթ նորաօծ կաթուղիկոսէ ի յԷջմիածին առ նուիրակ եւ առաջնորդ Մարտիրոս վարդապետն յաղագս իւրոյ հայրապետութեան:*

Յօրմէ սիրով բազմաւ, և փրկչական ողջունիւ ծանիր սիրելիդ մեր և շնորհընկալ զաւակ սրբոյ Աթոռոյս Մարտիրոս զգօնամիտ Արհի եպիսկոպոս:

Զի բոց ի յերկուց սիրալալտ թղթոցդ, զայլ ես գիր և զորպիսութիւն չունիմք ընկալեալ ի քէն: Մինչ ցարդ զորոց զանդրադարձոն հանդերձ զիարդութեամբք մերովք, ի ժամանակին գրեալ եմք սիրելութեան քում շնորհակալութեամբ: Յորոց գիտացեալ ես ի հարկէ մասնաւորապէս զանցսն, որք հանդիպեցան ի մեծն Պօլիս սակս ընտրութեան Հայրապետի: Հուսկ յետոյ անուն կաթուղիկոսութեան եղաւ ի վերայ տեառն Յովսէփայ սրբազան արքեպիսկոպոսին: Եւ այն ինչ կայսերական հրովարտակօք և մեծաշուք հանդիսիւ կահաւորեալ ժամանել ի սուրբ գահս և փեսայանալ, ի Թիֆլիս քաղաքի վըճարեաց զկեանս իւր և փոխեցաւ յաստեացս թողլով զմեզ զամենեսեանսն ի տագնապ տարակուսի, զորոյ հոգին ի լոյս երեսաց իւրոց հանգուսցէ տէր, և սիրելի եղբօրդ իմում ընդ խաղաղ և զերկար կեանս շնորհեսցէ: Զայն գոյժ մինչ լուաք մեք, միաբանիւք ըմբռնեցաք ի տրտմութիւն և մատնեցաք ի վարանս սակս անդրէն անխնամ մնալոյն մեծի տանս: Ուստի՝ միակամ յօժարութեամբ վերստին զմահսէր առաքեցաք ձեռամբ երկուց վարդապետաց ի Թօխաթ առ յարգելի եղբայրն մեր նախակոչ Դանիէլ արքեպիսկոպոսն և հրաւիրեցաք փոյթ ընդ փոյթ գալ ի սուրբ Աթոռ, և լինել այցելու մեզ տարտամելոց, որք հանապազօր տագնապիմք տուայտանօք և հիւծիմք անձկութեամբք ներքնովք և արտաքնովք, և հոգաբարձու այրեացեալ Մօրս լուսոյ, ժամագիր լինելով նմա: Եւ իբրև յամեցաւ նա և էանց պայմանադրեալ ժամն, յորս ոչ ինքն եկն, և ոչ զհամբաւ գալստեանն հնչեցաւ, ապա թէ միաբանք սրբոյ գահիս, և թէ իշխողն Երևանու՝ զմեզ արժան տեսանէին և յառաջ կոչէին յայս Աթոռ: յորում միջոցի եկին բազմակնիք մահսէր ի Թիֆլիզու, հանդերձ պատուաւոր իշխանօք, առ միաբանութիւնս մեր, և զանազան թուղթք ի մեծամեծացն տեղւոյն առ խանն մեր գրեալք: Որովք ծանուցեալ էին նախ զկտակ հոգելոյս Հայրապետին յաղագս մերոյ յաջորդութեան, և ապա յորդորել զամենեսեան փութով հոգ տանել մեծի տանս և մի այլ ևս թողուլ անգլուխ: Իսկ առ այն գրութեան հաճեալ միաբանից, և երկրականացս՝ յօժարակամ սրտիւ ի յապրիլի ԻԸ. զմերս անարժանութիւն նստուցին յաթոռ հայրապետութեան տանս հայոց օծմամբ իւղով օրհնութեան: Եւ զայսպիսի զեղելութիւնսն բազմակընիք մահսէրաւ համաձայն միաբանութեամբ առ լուսաւորչածին երամսն ի մեծն Պօլիս գըրեալ, ծանուցին: Ընդ որ՝ և մեք զկոնդակ անդրանիկ օրհնութեան առ նոյն հասարակութիւն, և զթուղթս սիրոյ և յորդորանաց առ պատրիարգ եղբայրն մեր, և առ պերճապատիւ իշխանս գրեալ, ձեռամբ հոգևոր որդւոյն մերոյ մահսարատար Կարապետ նորապսակ եպիսկոպոսին առաքեցաք: Նոյնպէս և առ օրհնեալ մեծահաւատ ժողովուրդսն Աստուածախնամ քաղաքիդ զկոնդակ անդրանիկ օրհնութեան, առ յատկեղ բարեկամսն մեր ըզթուղթ սիրալիրական գրեալ, յղեցաք ի ձեռս սիրելւոյդ, մատուցանել իւրաքանչիւրցն հանդերձ մերս ողջունիւ և օրհնութեամբ: Եւ ըզկոնդակն ի լուր ամենեցուն ի յեկեղեցիսն տալ ընթեռնուլ: Զայս սիրալիրական գիրս ես քեզ գրել և ուրախ առնել յօժարեցաք. զի և դու յԱստուծոյ անքննին տեսչութենէն, տնօրինեալ համարեսցիս այս գործ, և յամենայնի զհարազատութիւն ցուցցես, և զվաղեմնական ճշմարիտ սէրդ, զոր ունիս մինչ ցարդ ընդ մեզ, ի բարեպատեհ պահուս յայսմիկ արփնորէն փայլեցուսցես և ի ջատագովելոյ մի վերջասցիս: Զայս ես գիտասցէ սիրելութիւն քո, զի յանցեալ ՌՄԽԸ թուոյ յօգոստոսի ԻԹ գրեալ գիրդ ընդ տեղւոյդ բարեպաշտ իշխանաց թղթոյն ձեռամբ սուրբ Երուսաղեմայ միաբան և տեղւոյդ նուիրակ Կարապետ հանճարափայլ վարդապետին առ հոգելոյս սրբազան Ղուկաս հայրապետն գրեցեալ զայն մեք ամբողջ կնքովն ընկալեալ բացաք և ընթերցաք, և զմիտս ամենայն գրեցելոցդ գիտացաք: Նոյնպէս և զհաւատով նուիրեալ աջահամբոյր հոգեկան նուէրս նոյն բարե-

պաշտից ընկալեալ գրեցաք ահա նոցա ըղթուղթս օրհնութեան և շնորհակալութեան, զորս մատուցես իւրաքանչիւրոյն մերս ողջունիւ և օրհնութեամբ։ Իսկ զքոյդ ընծայն որոյ սխահին ի մէջ թղթոյդ եղեալ էիր, զայն լուսահոգի Մինաս արքեպիսկոպոսն ի պէտս սրբոյ Աթոռոյս բանեցուցեալ էր, որ այն ևս առ մեզ և առ սուրբ Աթոռս հասեալ դիտասցես, և միամիտ լիցիս։ Բայց՝ վասն Մէնէմշեան մահտեսի Յօհաննէս աղայի խոստացեալ 200 մարչլնոց մէկ շուրջառին, և Բահատուրեան հանգուցեալ Արիստակէս աղայի կենակից Թագուհւոյ տուեալ 400 մարչլին, վասն միոյ արծաթեայ ղաւաղանի և հանգուցեալ Իփեկչի Աւագի որդւոյ՝ պարոն Կարապետի խոստացեալ՝ մէկ արծաթեայ սկհւոյն, և պարոն Եսայու մէկ արծաթապատ աւետարանին, և վասն հաստատութեան բարեկարգութեանցն քաղաքիդ, զորս նորոգ արարեալ էք, զկոնդակս օրհնութեան խնդրեալ էիր, զայնս առայժմ անձեռնհաս գոլով և ի զանազան պատաղմունս և ի հոգս եղով, չկարողացաք հոգալ և հասուցանել, այլ թողաք յայլում պահու կատարել զնոսա. մինչ ողորմութեամբ տեառն զխաղաղ ժամ գտցուք։ Այսպէս գիտացեալ քոյ, և զսիրոյ դիրդ հանդերձ որպիսութեամբ քոյ և գործոյդ մէնջ անպակաս արարեալ, լեր ողջ ի տէր և զօրացեալ միշտ ի շնորհս Նորին Ամէն։ Գրեցաւ՝ ի ՌՄԾ թուոջս, ի մայիսի ի լուսակերտ Աթոռս ի սուրբ.

Ժ. *Թուղթ ի տէր Դաւիթ նորապսակ կաթուղիկոսէ ի մեծն Պոլիս՝ առ Նիկողայոս ամիրայն, յաղագս ընտրութեան իւրոյ եւ օծման եւ յորդորումն, զի հոգատար լիցի ֆէրմանին։*

Եւ ընդ ողջունառաք անդրանիկ օրհնութեան նամակիս, դիտասցէ սիրելութիւն ձեր։ Զի մինչ լուաք մեք զմահ տեառն Յովսէփայ՝ անուանակոչեցեալ կաթուղիկոսին ի Թիֆլիզ քաղաքի, միաբանութեամբ զմահսէր գրեցաք ի Թոխաթ, առ Դանիէլ եպիսկոպոսըն, գալ ի կաթուղիկոսութիւն, ժամադիր լինելով նմա։ Բայց և նա ոչ կարաց գալ առ մեզ ի պայմանադրեալ ժամանակին։ Իսկ իշխօղն երկրիս և երկրացիք՝ խորհելով զօգուտըն և զբարին, ստիպէին զմերս անարժանութիւն, լինել պաշտօնատար սրբոյ տանս։ Յորում միջոցի եկին ժամանեցին թուղթք հանդերձ բազմակնիք մահսէրիւ, ի Թիֆլիզու և յայլ և այլ կողմանց գրեցեալք առ միաբանութիւնս մեր, և առ բնակիչսն երկրիս, որովք ծանուցեալ էին զկտակ վերոյիշեալ կաթուղիկոսին և յորդորեալ զմեզ զամենեսեան, ի կատարումն բերել այնմ, բաւական համարելով որչափ եկացն և մնաց սուրբ տունս առանց գլխոյ։ Ընդ այս գրութիւն հաճեալ և հաւանեալ միաբանութեանս մերոյ՝ ի յապրիլի ԻԸ, օծմամբ սրբալոյս միւռոնաւ՝ կացուցին զմեզ հայրապետ ի վերայ տանս Հայոց, և ձերդ հասարակութեան՝ բազմակնիք մահսէրաւ՝ զայսպիսի զեղելութիւնսն գրեալ ծանուցին, յորմէ և դուք ունիք լիովին տեղեկանալ։ ընդ որ՝ և մեք զկոնդակ անդրանիկ օրհնութեան գրեցաք առ օրհնեալ ժողովուրդսն մայրաքաղաքիդ, և զթուղթ սիրոյ և յորդորանաց առ յարգելի եղբայրն մեր՝ պատրիարք Աստուածիմաստ վարդապետն, և առ իշխանսն ոմանս, և ձեռամբ սիրեցեալ որդւոյն մերոյ՝ մահսէրաբեր... շնորհափայլ եպիսկոպոսին առաքեցաք. զոր յանձնեմք ի սէր ձեր, և հայցեմք փութով առ մեզ վերադարձուցանել։ Արդ՝ այնց ամենից ստիպմանց՝ կարելի էր մեզ թէպէտ ընդդիմանալ, այլ ըստորում ի գալն մեր յանցեալ ամին յայդր, ի խնդիր Դանիէլ պատրիարքին, բարեպաշտ իշխանքն տեղւոյդ ախորժելով ընդ մնալն նորա ի պատրիարգութեան, զմեզ պատշաճ դատէին լինել կաթուղիկոս։ Վասնորոյ՝ ապաւինելով նախ յԱստուած, և ապա՝ ի ճշմարիտ սէր սիրելեացդ, յանձն առի զծանր լուծ պաշտօնիս և փութացայ զայս սիրոյ և օրհնութեան նամակ՝ քեզ ընտրելագոյն սիրելւոյդ գրել. որով և խնդրեմ, զի նախ յԱստուծոյ համարեալ զայս գործ բարեհաճեսցիս և դու, ապա՝ յամենայն գործս մեր՝ օգնական և օժանդակ գտանիցիս, և յորդորող պատրիարգ վարդապետ սիրեցեալ եղբօրն մերում, փութով հանել զֆէրմանն յանուն մեր։ Այսպէս առնելով քոյ, և զհաւատարմական բարեկամութիւնդ ի մէնջ անպակաս ունելով, ընկալցիս զվարձս յԱստուծոյ և զօրհնութիւնս ի մէնջ։ Որև՝ շնորհք տեառն

A III/2425

Տերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ քեզ և ընդ քոյայինսն, Ամէն. գրեցաւ ի ՌՄԾ թուաջըս, և ի մայիսի · ի հրաշակերտ աթոռս ի սուրբ Էջմիածին։

ԺԱ. *Ի մեծն Պոլիս, առ տէր Մեսրոպ քահանայն, յաղագս ընտրութեան եւ օծման տեառն Դաւթի ի կաթուղիկոսութիւն։*

Ցորմէ անդրանիկ օրհնութեամբ և փըրկչաւանդ ողջունիւ ծանիր հոգեոր որդի մեր և շնորհընկալ զաւակ Սրբոյ Աթոռոյս՝ տէր Մեսրոպ խոհական քահանայ։ Զի լսելով ըզմահ տեառն Յովսէփայ անուանակոչեցեալ կաթուղիկոսին ի Թիֆլիզ քաղաքի, միաբանութեամբ զմահսէր առաքեցաք ի Թօխաթ առ Դանիէլ Արքեպիսկոպոսն փութով գալ ի կաթուղիկոսութիւն։ Եւ ի յերկարաձգել աւուրցն, յաղագս ընդ երկար անգլուխ մնալոյն սրբոյ տանս՝ մեծամեծքն երկրիս և միաբանք սրբոյ Աթոռոյս՝ հաճութեամբ մերազնեայցն՝ աստ և յայլ կողմանս բնակեցելոց՝ մեզ նստուցին յԱթոռ հայրապետութեան օծմամբ սրբալոյս միւռոնաւ՝ ի յապրիլի ԻԸ։ Եւ առ Աստուածախնամ մայրաքաղաքդ բազմակնիք մահսէրաւ զայսպիսի զեղելութիւնսն դրեալ ծանուցին՝ յորմէ և՛ ի հասարակական կոնդակէն մերմէ, զոր գրեցաք առ լուսաւորչերամ ժողովուրդսըն տեղւոյդ, ունիս զամենայն ինչ գիտել։ Զայս սիրոյ և օրհնութեան թուղթ ես հոգեոր որդւոյդ մերում գրել հաճեցաք։ Որով և պատուիրեմ, զի ի սէր և՛ ի մտերիմ որդիութեան միասցես, և ի հարազատութենէդ մի վերջասցիս։ Որով զշնորհս սրբոյ Աթոռոյս և զհայրական օրհնութիւնս մեր մշտապէս վայելլոյ՝ արժանաւոր գտանիցիս։ Իսկ զայլ զորպիսութիւնսն մեր ի մահսարարեր ... բազմահանճար եպիսկոպոսէն գիտելոց ես։ Այսպէս առնելով քոյ՝ Վիջիր զօրացեալ տերամբ, Ամէն։ գրեցաւ ի ՌՄԾ թուոջս, և ի մայիսի ... ի լուսանկար Աթոռս ի սուրբ Էջմիածին։

Տէր Պօղոս.

Ի գիմաց մերոց ողջոյն և զօրհնութիւն մատուսջիք բոլոր քահանայից, իշխանաց և ժողովրդոց, և զմիմեանս յորդորեսջիք ի հաւատարմութիւն շնորհատու մօրս ձերոյ լուսոյ. անձեռնհաս զոլով՝ չկարացաք զյստուկ թուղթս գրել։ Զայլն ամենայն ունիք գիտել ի սիրեցեալ որդոյն մերմէ մահսէրաբեր ... եպիսկոպոսէն զոր յանձնեմ ի սէր ձեր։

ԺԲ. *Թուղթ առ վէքիլ Պետրոս վարդապետն մեծն Պոլիս ծանուցումն հայրապետութեան նորոգ սըբազանիս. եւ յորդորումն ի սէր եւ բան ինչ վասն ծախուց արքունական հրովարտակացն։*

Ցորմէ սիրով և օրհնութեամբ և ողջունիւ քրիստոսականաւ, և սրբոյ Իջման տեղւոյս նորին մեծազօր շնորհիւ դիտասջիր սիրելիդ իմ շնորհնկալ և հաւատարիմ որդի սրբոյ Աթոռոյս Պետրոս գերզգօն եպիսկոպոս։ Զվախճանելն Յովսէփայ կոչմամբ կաթուղիկոսին ի Թիֆլիզ, և զգրելն մեր ի Թօխաթ յաղագս Դանիէլ վարդապետին գալոյն և ի բազմանալ աւուրցն յետանալոյ նորա, զմերս կոչիլն յայս աստիճան կաթուղիկոսութեան, ի մահսարէ միաբանից և երկրացւոցս և ի կոնդակէ և թղթոյ մերոյ գրեցելոց առ պատուելի պատրիարգ վարդապետն և առ իշխանսն և առ այլս, իմանալ կարես և առաւել ես ի մահսարարեր հոգեոր որդւոյդ մերմէ Կարապետ Նորապերճ եպիսկոպոսէդ։ Իսկ զայս թուղթն ես յատկապէս առ յատուկ սիրելիդ իմ գրել յօժարացաք։ զի և դու յԱստուծոյ համարեսցիս զայս, և քաջախորժ լեալ բարեկամական ջատագովութեամբ օժանդակ և կարեկից գըտանիցիս ի յօգուտ սրբոյ յաթոռոյս և ի դիւրութիւն մեզ։ Որոյ աղագաւ շնորհակալ լինելոց եմ զսիրելոյդ և ի տեառնէ ունիս վարձատրիլ ըստ արժանւոյդ։ Եւ զի պատրիարք արհւոյ եղբօրն գրեցաք սիրելոյդ ևս գրեմք որպէս ի մահտեսի Նիկողայոս բարեպաշտօն ամիրային։ Զի ըստորում հանեալ լինելն ֆէրմանի և ի բերաթն յանուն հանգուցեալ Յովսէփ կաթուղիկոսին զծախսն ի զանձանակադրա-

մեցն սրբոյ աթոռոյս առ ձեզ եղելոց, ետուք նոյնս և այժմ որ մերովս անուամբ հանցին հրովարտակք յարքունուստ, այլ ես զսովորական ծախսն դու սիրելիդ և մահտեսի Նիկողայոս ամիրայն տացէք և գրեսջիք մեզ, որ մեք թէ զառաջինն և թէ զերկրորդս ծախս ընդունելոց եմք ի յազագս սրբոյ աթոռոյս։ Այլ և վասն հարկաւոր պիտոյից զոմանս վէճ իրս սխահի արարեալ տուաք Կարապետ եպիսկոպոսիդ գնել և բերել. զգինս այնոցիկ ես տաջիք և ծանուջիք մեզ։ Եւ հաւատարիմ զանձապահացն սրբոյ աթոռոյս օրհնեցելոյն յԱստուծոյ յուսադրեսջիք, որ ի ստանալ մեր սակաւ մի ապահովութիւն ի խուժանաց ըզբաղմանց և ի ծանուցանելն ձեր ցմեզ զորքանս իւրաքանչիւր եկեղեցեացն գանձանակադրամից, գրելոց եմք ի հարկէ զկոնդակս շնորհակալութեամբ և օրհնութեամբ առ ժողովուրդս և գանձանակապահսն։ Եւ զայլ ամենայն որպիսութիւնս ի հոգևոր որդւոյդ մերմէ ունիս իմանալ ի Կարապետ հանճարաշատ եպիսկոպոսէդ, զոր և ի սէր մեր սիրով ընկալցիս և յամենայն կողմանէ ձեռնտու և օժանդակ լիցիս։ Նա և սիրելի եղբօրն մերում նուիրակ Գալուստ վարդապետին ես դիր դըրեցաք, բայց ոչ գիտեմք ամենևին զուրու րէք լինիլն և զիարդ կեալն։ քանզի և ի Կարնոյ յաթոռոյս քանիցս ես առ պատրիարք վարդապետ եղբայրն և առ սէրդ թուղթս գրեալ եմք վասն անցիցն ի տեղւոյս կողմանցս և երբէք պատասխանի չեմք ընկալեալ, տարակուսիմք թէ ձեզ չիցէ հասեալ, եթէ որպէսէ։ Արդ խնդրեմք զպատասխանի թղթոյս չյամեցուցանել և զԳալուստ վարդապետի զորպիսութիւնն և ուրուրեք լինիլն ես ազդարարեսցես մեզ ըստ եղբայրականի հաւատարմութեանդ որ առիթ է մեզ մեծի գոհունակութեան ըզսիրոյդ։ Եւ լեր ողջ ի տէր և յանձնեցեալ շնորհաց նորին։

Գրեցաւ ի ՌՄԾ թուոջս և ի մայիսի Թ. ի սուրբ Էջմիածին։

Փուսուլայ առ մահտեսի Նիկողայոս ամիրայն՝ յաղագս ծախուց կաթուղիկոսական հրովարտակացն, և վասն Գալուստ վարդապետ նուիրակին. և զանձապահացն յուսադիր լինելոյ ի կողմանէ շնորհակալութեան թղթոյ։

ԺԳ. *Թուղթ ի Զմիւռնիա առ Դրոշմահար Ստեփանոս աղային ի պատասխանի թղթոյն յամի տեառն 1799 յօգոստոսի 20: Գրեցելոյ ընդ սուրբ Սաղիմայ նուիրակ Կարապետ վարդապետին առ Ղուկաս սրբազան կաթուղիկոսն, որոյ ի յետին հիւանդութեան, հասեալ և թուղթըն պահեալ մինչև ցամ՛ տեառն 1801 Ի մայիսի 3 հասոյց նորապսակ տեառն Դաւթի սրբազան կաթուղիկոսի, որ ճեռնադրեալ զնա, և գրեաց զայս, ի ծանուցումն հայրապետութեան իւրոյ, և ի շնորհակալութիւն վասն յղեալ ընծայիցն:*

Յորմէ ժամանեցէ թուղթ ճշմարիտ սիրոյ՝ Քրիստոսաձիր ողջունի և հայրապետական անդրանիկ օրհնութեան, ի վերայ բարեպաշտ սիրելւոյդ մերոյ, և հարազատ որդւոյդ սրբոյ Աթոռոյս Քրիստոսասէր ե նովիմբ զօրացեալ Ստեփանոս աղայիդ. և Աստուածապահ տան քում և համայն ընտանեաց և ազգայնոց ե բարեկամաց քոց, ի տէր խնդալ։

Եւ ընդ աստուածային օրհնութեանս գիտասջիր իսկապէս սիրելիդ մեր։ Զի սրբոյ Երուսաղէմի նուիրակ Կարապետ շնորհառատ վարդապետն որ յամի տեառն 1799։ օգոստոսի ամսեանն գրեցեալ թղթովք ձեր առ երջանիկ տէր Ղուկաս սրբազան կաթուղիկոսն ուղեորեցեալ էր առ սուրբ աթոռս ի դեկտեմբերի 23-ն։ նոյն թուոյն էհաս, և յետին աւուրս կենաց նորա հազիւ ժամանեաց միանգամ սրբոյ Աջոյն համբուրման։ Իսկ մինչ փոխեցաւ սրբազան հայրապետն ի կենաց աստի, (զորոյ զհոգին տէր լուսաւորեսցէ). թուղթքն ձեր մնացին մօտ առ Կարապետ վարդապետն, սպասելով նորոյ յաջորդ կաթուղիկոսի։ Ապա մինչ մահսէրս տարաք մեք ի մեծն Պօլիս վասն բանի կաթուղիկոսութեան, եթէ զինչ անցք անցին լուեալ էք. վերջապէս Յովսէփ արքեպիսկոպոսն անուանեցաւ կաթուղիկոս, և արքունական նոմոսքն յանուն նորա ելին։ Եւ մինչ սպասէաք գալոյ նորա ի հիւսիսային կողմանցն, եկեալ ի Թիֆլիզ վախճանեցաւ։ Որոյ կրկին տարակուսեալ մեր վասն անտերունջ մնալոյ սրբոյ աթոռոյս, թէպէտ և մահսէր գրեցաք,

ի Թօխաթ յաղագս Դանիէլ արհի եպիսկոպոսին, բայց ի յամելն նորա, նկատեալ ամենեցուն՝ եթէ ընդ երկար անգլուխ մնալով սրբոյ աթոռոյս ի յանչքութիւն հակի, յաակացուցեալ զմեզ օծին ի կաթուղիկոս յապրիլի ԻԸ։ Ապա Կարապետ վարդապետն զթուղթն քո մատոյց մեզ։ Որով իմացեալ զխնդիր ձեր յաղագս ձեռնադրելոյ զԿարապետ շնորհունակ վարդապետն եպիսկոպոս ըստ վկայութեան հանգուցեալ Պետրոս պատրիարքին, ձեռնադրեցաք և առաքելական կարգիւ ճոխացուցաք. և զոր ընծայեալ էիր ի ձեռն նորա յանուն հոգելոյս սրբազան կաթուղիկոսի ի քուդ տպարանէ զմ. Թաշկինակս, ընդ որս և զերկու պաճախլու ոսկիս ի ժամուց յաղագս հանգուցեալ ծնողացդ Խաչատրոյ և Թագուհւոյ, մեք ընկալաք սիրով, և շնորհակալութեամբ օրհնեցաք զբարեպաշտ սիրելիդ, և հանդերձ յիշեալ ծնողօքդ յիշատակեցաք յաղօթս և ի պատարագս ի սուրբ տեղւոջս։ Ուրեմն ընկալցի տէր զառատանուէրն տուրս ի հաճոյս իւր և զփոխարէն առաւելապէս հատուսցէ ի հոգիս հանգուցեալ ծնողացդ. և զքեզ ամենայն կենդանեօքդ օրհնեսցէ և զօրացուսցէ, փրկեսցէ ի չարէ և պահեսցէ ի խնամս իւր։ Արդ այսու նախանուէր օրհնութեան թղթովս զրեմ ազնուամիտ սիրելւոյդ զի զկոչումն մեր յայս ատեան յաստուծոյ համարելով հաճեսցիս բարեյօժար կամօք, և զստոյգ սէրդ և զհաւատարմութիւնդ զոր ունէիր առ լուսահոգի հայրապետն, զնոյն և այժմ առ մեզ ունիցիս, և սիրանիչ զրովդ մեզ մխիթարիչ գտանիցիս, որով օժանդակեցեալ ի ձէնջ կարասցուք բառնալ զծանրութիւն լծոյս տիրականի և շնորհակալութեամբ օրհնեսցուք զձեզ։ Ողջ լեր ի տէր։

Դրեցաւ ի ՌՄԾ թուոջս ի մայիսի. ի սուրբ աթոռս Էջմիածին։

Սիրով ողջոյն և օրհնութիւն տամք սիրելի և հոգևոր որդւոյ մերոյ՝ հարազատ եղբարց քոց տէրամբ զօրացելոց՝ պարոն Յովաննէսին, և մահտեսի Ոսկանին, և բարեզարմ որդւոցդ՝ Խաչատուր, Յակոբ և Թագւոր Զելէպւոյն. և քենակալին քո Քէթխուդայ մահտեսի Հայրապետին, և համայն օրհնեալ ընտանեաց ձերոց։ Որք հանդերձ քև լիցին յանձնեցեալք ի յողորմութիւնս տեառն ամենակալին ամէն։

ԺԴ. *Թուղթ առ Փիլիպոս ամիրայն Ալփիարեանի յեպիսկոպոսաց սրբոյ աթոռոյս ծանուցումն զեղելութեանցն ի ընտրութիւն եւ ի օծումն նորապսակ սրբազանիս եւ խնդիր, յանուն սորին հանել տալ զֆէրման եւ զբէրաթն յարքունուստ։*

Ի լուսանկար սրբոյ գահիս Էջմիածնի պաշտօնէից իբր եպիսկոպոսաց սիրով ողջոյն և օրհնութիւն ամենապատուական սիրելւոյդ մերոյ և բազմաջան օգտարարութեամբ երախտաւոր զտեալ բարեկամիդ սրբոյ աթոռոյս աստուածասէր և նովիմբ զօրացեալ ճոխապատիւ և ազնուալսալրոյ Փիլիպպոս ամիրայիդ։ Որում և գիտութիւն լիցի։

Զի յետ վախճանման տն. Ղուկասու սրբազան կաթուղիկոսին՝ յորժէ հետէ մահսէրք գրեցան ի Կոստանդնուպօլիս յաղագս ընտրութեան կաթուղիկոսի, և թէ զինչ անցք անցին ի չփոթութիւն ազգի և ի վնաս սրբոյ աթոռոյս, իմացեալ էք, չէ պարտ երկարել։ Վերջապէս անուն կաթուղիկոսութեան կալցաւ ի վերայ արքեպիսկոպոսին հիւսիսոյ, և ֆէրման և բէրաթն յանուն նորա ելեալք հասին ի սուրբ աթոռս։ Եւ մինչ իմացեալ զգալն նորա ի Վրաց տուն, սպասէաք ի սուրբ գահս գալոյն ի յայցելութիւն, վախճանեցաւ ի Թիֆլիս քաղաքի։ Որոյ զհոգին տէր լուսաւորեսցէ և զգլուխ արգոյ սիրելւոյդ ողջ պահեսցէ։ Ապա կրկին տարակուսեալ վասն անգլուխ մնալոյ մեր միաբանիւք և երկրացւովք մահսէր գրեցաք առ Դանիէլ արքեպիսկոպոսն ի Թօխաթ, փոյթ ընդ փոյթ գալ ի հայրապետութիւն սրբոյ աթոռոյս, և ոչ յամենալ, և քեզ զերազնիւ սիրելւոյդ ևս յատուկ թղթով ծանուցաք շուտով յուղարկել։ Բայց իբրև աւուրք բազմութեամբ անցին, և ոչ երևեցաւ նշան գալստեան նորա, և իշխողն երկրիս ստիպէր վասն կաթուղիկոս կացուցանելոյ, յայնժամ և ի Թիֆլիզու մահսէր և թուղթք եկին պատուաւոր իշխանօք առ միաբանս և ժողովուրդս երկրիս գրեալ ի նմա եթէ հանգուցեալ Յովսէփ կաթուղիկոսն կտակ է արարեալ վասն Դաւթի զերաշուք արքեպիսկոպոսի լինել զկնի իւրն կաթուղիկոս, և յորդորեալ էին վասն ոմանց

պատճառանաց, զի սա լիցի և ոչ այլ ոք։ Առ որ համաձայնեալ մեծամեծացն երկրիս և միաբանից և ժողովրդոցն յատկացուցաք զհոգևոր հայրն մեր զտէր Դաւիթ սրբազան արհիեպիսկոպոսն ի կաթուղիկոս։ Որ և յապրիլի ԻԸ. ի վեցերորդ կիւրակէի յինանցն օծաւ սրբալոյս միւռոնաւն ի հայրապետութիւն սրբոյ աթոռոյս և ազգիս հայոց։ Ուստի միաբանք և ժողովուրդք երկրիս զհամահաճութիւն խնդրոյ, մահսէր գրեցեալ ուղևորեցաք ի մեծն Պոլիս։ Եւ ինքն սրբազան հայրապետն ևս զանդրանիկ օրհնութեան կոնդակ գրեաց ի վերայ հասարակութեան ժողովրդոցն և զթուղթս առ պատրիարգն և յարգելի իշխանսն։ հետևաբար այժմ և առ քեզ նախածանօթ ազնուազոյն սիրելիդ իւր և մեր գրեաց ըղթուղթ հայրապետական նախնծայ օրհնութեան. զոր ի յընդունելդ իմանալոց ես զոր ինչ գրուածքն են։ Եւ մեք այսու յորդորական գրով ծանուցեալ պատուականութեան քում զանցս զայսոսիկ, ստիպաւ խնդրեմք աստուածսիրութենէ քումմէ։ Ըստ որում ի բնէ անտի օգտակար ես սրբոյ աթոռոյս և բարոք հոգածու և չահեցող եղեալ ի մէնջ հանդիպելոցն քեզ իւրաքանչիւրոց նովին բարեսէր բարուքդ և այժմ անսալով խնդրոյ մերում փոյթ տարցիս յօժարամիտ հոգունակութեամբ զֆէրման և զբէրաթն կաթուղիկոսութեան ի յանուն նորապսակ սրբազան հայրապետիս հանել տալ. որ թէ այսպէս չլինիցի, ի վերայ անցելոց բազմապատիկ վնասուցն՝ կըրկին ևս մեծամեծ վնասք պատահին սրբոյ աթոռոյս, որովք զրեթէ յաղարտ և յամայութիւն վարի սուրբ տունս. և ամենեցուն խղճահարութիւն և ապաշաւհանդիպլին, զոր մի արասցէ տէր այնպէս լինել. խնկաւորեալ մաղթանօք սրբոյն Գրիգորի լուսաւորչին մերոյ։ Ապաքէն իմաստնախոհ մտօք յերկար քննեալ զհամառօտութիւն գրեցելոցս և ի գրաբեր եղբօրէդ մերմէ ևս լիապէս վերածանեալ, հոգատար լիցիս լինել արքունի հրովարտակացն հանեցման յանուն օծեցեալ և առ պատրաստ զահաւորեալ սրբազան հայրապետիս, որով սրբոյ աթոռոյս շինութիւն ի կալի մնասցէ և միաբանութեան մերոյ խաղաղութիւն և հանդարտութիւն լիցի և քեզ մեծագոյն վարձք բարութեան շնորհեսցին ի յԱստուծոյ վարձատրութիւն բարեգործաց։ Ողջ լեր ի Տէր փառազուարճ բարեկենդանութեամբ ի հրճուանս մեր, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾ. թուոջս. և մայիսի ԺԳ ի սուրբ Էջմիածին։

ԺԵ. Աստուածապսակեալ օգոստոսափառ կայսեր, եւ ամենաողորմած Թագաւորի

Եւ Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Դաւիթ կաթուղիկոս ամենայն հայոց, և առաքելականի եկեղեցւոյս Քրիստոսի, ծայրագոյն պատրիարգ զահիս Հայաստանեայց սրբոյ Էջմիածնի մեծի փոխանորդ սրբազանից Առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի, և սրբոյ Լուսաւորչին մերոյ Գրիգորի, յորմէ սրտակէզ կարօտիւ և հոգետենչ ըղձիւ մատուցի փրկչաւանդն ողջոյն։ Մինչ ամենաբարի կառավարիչն աշխարհի Աստուած հասոյց զամենազօր զծիրանածին անձն կայսերական մեծութեան ձերոյ ի հայրենական ձեր բարձրագոյն աթոռ, ի վերայ ամենայն ռուսաց, որով ընծայեալ պարգևեցաւ բնակչացն համայն հիւսիսոյ. նոր արեգակն ճառագայթիւ նշուլի իւրոյ, ի լուսաւորել, և սոյնս այս հնչումնս ախորժալուր մեզ ժամանելով, իսկոյն բոլոր միաբանիւք միագրոհ եկեալ առաջի սրբոյ Իջման տեղւոյ միածնի բանին Աստուծոյ, և համայն աստ գումարեալ սրբոց մասանցն նախ վասն երանելի հանգուցեալ հօգւոյ ծնօղի ձերոյ կայսերական մեծութեան և ամենաողորմած թագաւորին, և ապա վասն կենաց մեծի ինքնակալութեան ձերոյ զի բոլոր սրտէ ջերմեռանդ պաղատանս մատուցաք։ Վասն զի ոչ թէ միայն ընդ հովանեաւ ձերով բնակեալքն յազգէս հայոց ցնծան յաղագս վայելման քաղցրագոյն շնորհաց և մարդասիրական խնամոց ձերդ կայսերական մեծութեան, այլ և ընդ ոլորտս տիեզերաց ազգք քրիստոնէից, և մանաւանդ որք միանգամ ելով ենթ լծոյ այլակրօնից՝ կրեն զանուրն ծանրութեան, և ակն ունին աւուրն ազատութեան իւրեանց ի հզօր ձեռանէ մեծի կայսերութեան ձերոյ, հնչմամբ քաղցրալուր համբաւոյն յորդորեալք խրախուսեն զիրեարս առ

ի օրհնեալ և բարեբանեալ զամենաբարձր անունն և թագաւորութիւն մեծի կայսերութեան ձերոյ։

Եւ մերս Արարատեան գաւառք մինչ հանդերձեալ էին զձերդ ամենաբարձր կայսերութեան ամենախնամ մարդասիրութիւնսն վայելել, ի ձեռն հարազատին ձերոյ և մերս բազմարդիւն հոլուապետի տեառն Յովսեփայ սրբազնասուրբ կաթուղիկոսին ամենայն հայոց, և նա այն ինչ մտեցեալ էր առ մեզ ի սուրբ աթոռս, ի գալն ի Թիֆլիզ, ընդ առաջ եկեալ նմա արարչական անդառնալի վճռին, կարճեալ էր ի կենաց, թողլով միաբանութիւնս և զազգն ի սուգ և ի տրտմութիւն։ Բայց ի ժամ աւանդման մաքուր հոգւոյն՝ հոգ տարեալ յաղագս սիրելի ազգին իւրոյ և սրբոյ տանս որ յԱստուծոյ յանձնեցեալ էր նմա, կտակօրէն աւանդեալ էր իւրոց մերձակայից զմերս նուաստութիւն իբրու զվաղեմնական զիւր ծանօթ և յիւրմէ վերատեսուչ կոչեցեալ սրբոյ տանս ի կառավարութիւն սրբութեանցն և միաբանից սորին.+ և ստիպմամբ պատուիրեալ էր օծանել հայրապետ և ընդհանրական կաթուղիկոս սրբոյ աթոռոյս Էջմիածնի, և համայն ազգին հայոց։ Նաև զսոյն պատուէր լուսահոգւոյն զկնի վախճանի նորին իւր հոգևոր որդի Գրիգոր վարդապետն հանդերձ Թիֆլիզու իշխանօք և բոլոր ժողովրդովք ծանուցեալ էին մեզ և միաբանութեանս մերում։ Բացայայտելով և զայն թէ՝ ըստ պատուիրելոյ լուսահոգի հայրապետին Գրիգոր վարդապետին իւր ամենահպատակական յայտարարութեամբն ծանուցեալ է ձերդ կայսերական մեծութեան, իսկ մեք թէպէտ զառաջինն հրաժարեցաք դիտելով ըզծանրութիւն գործոյն, բայց ի բռնադատութենէ բարեհամբոյր արանց հարկեալ, և մանաւանդ մաքուր հրամանաց հանգուցեալ վեհին հնազանդութիւնս ցուցեալ առաւել ևս վստահանալով ի բարձրագոյն խնամատարութիւն ձերդ կայսերական մեծութեան, յապրիլ ամսոյ ԻԲ, յաւուր կիւրակէի ընկալայ զշնորհ հոգւոյն Աստուծոյ, օծմամբ սրբալոյս միւռոնի ի գլուխ մեր ըստ ծիսի օրինաց մերոց, ընդ նմին և ընկալաք լրիւ զաթոռ հայրապետական ամենայն հայոց. ուստի որպէս նախանցեալ հայրապետքն մեր ունեցեալ են զվայելչուչն հաւատարմութիւն առ տիրահաստատ աթոռ մեծի կայսերութեան ձերոյ նոյնպէս և մեք ունելոց եմք, գտանիլ այնու ընդունակ խնամոց մեծի բարերարութեան ձերոյ, համարելով մեծ բարերարութիւն մեզ։

Ունելն մեր զփոփագ ջերմեռանդ սիրոյ գերամբարձ աթոռ ձերդ կայսերական մեծութեան, և զլիալիրն շնորհակալութեան հարազատ որդեակն երանելի հայրապետին մերոյ և մեր Գրիգոր վարդապետն յորժամ գայցէ ի սուրբ աթոռս ընդունիլ զաստիճան արք եպիսկոպոսութեան և վերադառնայցէ ընդ կտակի հանգուցեալ հայրապետին Յովսէփայ, զբաւականն ի մէնջ տեղեկացեալ, յայտնելոց է առաջի կայսերական մեծութեան ձերոյ։

Ով Աստուածապսակ օգոստափառ թագաւոր, ամենաողորմած տէր, ընկալ զջերմեռանդ սէր հաւատարմութեան աղօթարար պաշտօնէիս Քրիստոսի, որ հանդերձ միաբանիւքս և ժողովրդովք կամք մնամք ի հայցուածս բարիս յաղագս ձերոյ կայսերական մեծութեան։

Գրեցաւ յամի Տեառն 1801, և ի մայիսի ի սուրբ Էջմիածին։

ԺԶ. *Պաւել Փէդրիչին։*

Ցորմէ ժամանեցի թուղթ սիրոյ և ողջունի և հոգևոր օրհնութեան հանդերձ առաքեալ շնորհիւն միածնաէջ սրբոյ տեղւոյս և Աստուածակիր սրբութեանցն որք աստ, առ յատկացեալ սիրելիդ նորին կայսերական մեծութեան կողմնակալիդ Հաշտարխան և Վրաստանու բարձր գերագանցագունեդ Պաւլ Ֆէտրիչ. զանազան նշանակիր կաւալերիդ, և արիական զօրապետիդ ամենայն Կովկասեան կողմանց կայսերական անյաղթելի զօրուն, և մերս ազգի յատկագոյն խնամակալիդ։ Զի ըստ ընտրութեան վերին կառավարչին հասեալ առ մեզ վիճակ ընդհանրական հայրապետութեան ի վերայ ամենայն հայոց, զոր ընկալաք օծմամբ շնորհաց սրբոյ հոգւոյն յանցելումն ամսոյ 28ին. և այժմ ջանամք բարեկարգել զամենայն զմեծավայել գործս պաշտօնի մերոյ։ Զի ահա երկու ամ լրանայ՝ մինչ սուրբ աթոռս և սորին միաբանութիւն

հանդերձ հայկազուն ժողովրդովք մնացեալ էին թարց հոգևոր կառավարչի, և հոգածութեան, քանզի ի հանգուցեալ և երանութեան արժանաւոր Յովսէփ հայրապետն սակս հիւանդութեան իւրոյ ոչ կարէր դարմանել և գլխովին հոգս կրել սրբոյ աթոռոյս և ազգի. թէպէտ ջանայր յամենայն զօրութենէ փութալ հասանել առ սուրբ աթոռս իւր, և ազգքն ըստ ծխի իւրեանց այնու ոչ բաւականայլին, սակս ոչ գոլոյ նորա ի սուրբ գահի իւրում, և մանաւանդ տակաւին ոչ գոլով յատկացեալ օծմամբ թէև զամենայն զպատուէր և զհրաման նորա յարգէին, իբրև Փեսայի անարատ հարսին սրբոյ աթոռոյս Էջմիածնի։ Եւ մեր մտեալ ենթ ծանր լծոյս ապաւինեալ ի շնորհ և յօգորմութիւն ամենաբարձրելոյն Աստուծոյ, որ թարց նորին կամաց ոչ կարէ առ նա դիմել, մանաւանդ ի գրութեանց Թիֆլիզու քաղաքին տեղեկացեալ կտակի հանգուցեալ հայրապետին Յովսեփայ զոր յատկացուցեալ էր զմեզ յաջորդել զԱթոռս զկնի իւր, առ այն ոչ ես հրաժարեալ յանձն առնի օծանիլ, ի վերայ հայրապետական աթոռոյ ընդհանուր ազգին հայոց։ Յուսամք որ ըստ վկայելոյ հարազատին կայսերութեանդ ռուսաց Յովսեփայ հայրապետին մեք ես հաւատարիմ լիցուք ամենախնամակալ աթոռոյ ամենաօգոստափառ կայսերութեան։ Ուրեմն փութամք զձեզ ի բարեկամութիւն մեր յորդորել, որպէս առ հանգուցեալ հայրապետն ունեցեալ էք, որոյ հարազատն և ձեր ծանօթ Գրիգոր վարդապետն գովութեամբ դրեալ է վասն ամենաբարեբարոյ մարդասիրութեան ձերոյ և վերջապէս առ ներկայս խնդրեմք ի ձերդ բարձր գերազանցութենէ, որ զմիրս հաւատարմութիւն յայտարարական թուղթ չեշտիւ ուղեորիցէք առ նորին կայսերական մեծութիւն։ դարձեալ յայտ առնեմք որ ի կտակաբանութեանց հանգուցեալ հայրապետին Յովսեփայ երկու ես այս են. զի մարմինն բերեալ աստ ամփոփիցի և բոլոր կայքն ի սուրբ աթոռս հասցի։ Որք կան այժմ մօտ առ նորին հոգեծին որդի Գրիգոր վարդապետին։ Վասնորոյ խնդրեմք ի բարձր գերազանցութենէ ձերմէ հրամայել նմա Գրիգոր շնորհունակ վարդապետին գալ հանգերձ դիովն և կայիւքն և այլն։ Յանկալով ձերդ բարձր գերազանցութեան կենացն բազում երջանկական աւուրց լրութեան, զկուր առողջութեանդ մըշտապէս ի յամենախորժ գրութենէդ տեղեկանալ, մնամք վասն քո աղօթարար։

Գրեցաւ ի մայիսի.. Ամին 1801. ի սուրբ Էջմիածին։

ԺԷ. *Թուղթ առ պարոն Մկրտում Գալստեան ի Հաշտարխան յաղագս մահուան Ցովսէփայ հայրապետին, եւ վասն իւրն յաջորդելոյ եւ ըան վասն Գրիգոր վարդապետին:*

Յորմէ ժամանեսցէ թուղթ սիրոյ՝ ողջունի և անդրանիկ օրհնութեան հանդերձ հոգեզուարճ շնորհիւ Միածնաէջ սրբոյ տեղւոյս և հարազատ որդւոյդ սրբոյ աթոռոյս քրիստոսասէր և ճոխապատիւ ազնիւ պարոն Մկրտումիդ, և Աստուածապահ տան քում և համայն ընտանեացդ և ազգայնոց և բարեկամաց քոց ի տէր խնդալ։

Եւ ընդ օրհնութեանս անդրանիկ գիտասջիր ազնիւ սիրելիդ մեր՝ և հարազատ որդի սրբոյ աթոռոյս Էջմիածնի. զի այն ինչ յուսահատեալ ի լուր գալստեան մեծահամբաւ տեառն Յովսէփայ սրբազնասուրբ հայրապետին զիմելոյ ի կողմանցդ յայսկոյս՝ սպասէաք նմա ժամանել ի սուրբ աթոռս յայցելութիւն միաբանութեանս և ազգի մերոյ. հասեալ նորա ի Թիֆլիզ քաղաք մինչ հանդերձեալ էր ելանել առ այսր, օրհասին մահու կանխելով վճարեաց զկեանս իւր։ Որոյ զհոգին տէր լուսաւորեսցէ, և ընդ երջանիկ հայրապետսն դասակարգեսցէ, և զմեզ մխիթարեալ զուարճացուսցէ և ընդ երկայն աւուրս արասցէ. իսկ դի ի վախճանին կտակ էր աւանդեալ յաղագս մեր յաջորդելոյ զսուրբ աթոռս ըստ որում տեղեկացաք ի գրութեանցն Թիֆլիզու, և դի անգլխութեամբ նուաղէր սուրբ տունս ի շինութենէ ուր սակս և ժողովուրդք երկրիս և իշխօղն, միաբանք սրբոյ աթոռոյս ըստիպէին զմեզ յայս պաշտօն, թէպէտ և զիտէաք զծանրութիւն գործոյն, այլ հպատակեալ մըտաք ընդ լծով պաշտօնէի այսօրիկ և ընկալաք ի գլուխ մեր զօծումն սրբոյ միւռոնին յԱպրիլի ԻԸ։ Յաւուր կիւրակի կարգեցեալ ի կա-

թուղիկոս սրբոյ աթոռոյս և ազգիս հայոց։ Եւ զի հոգեծին որդի հանգուցեալ հայրապետին Գրիգոր հանճարունակ վարդապետն կայ ի Թիֆլիզ քաղաքի, կալուք լուսահողուոյն, որոց սիահին յառաջազոյն ի կենդանութեան իւրում ձեռամբ Կարապետ վարդապետին յղեալ է աստ և կայ առ մեզ։ Այժմ գրեցաք նմա զալ և զկայսն բերել հասուցանել ի սուրբ աթոռս։ Նարդենիս ընդ պատկանի իրաց ժամուս զայսչափ ինչ ծանուցեալ յորդորեմք զհաւատարիմ սիրելիդ, որ զիարդ և առ երանելի և յիշատակաց արժանի Յովսէփ հայրապետն ունեցեալ էք զսէր և զբարեկամութիւն, զնոյնս և յաւուրս մեր առ մեզ ունիցիք, և ի ջանալոյ զբարին և զօգուտն սրբոյ աթոռոյս լուսածնի մօրս ձերոյ հաւատոյ մի պակասիցէք։ Իսկ զխալիր որպիսութիւն սրբոյ աթոռոյս և մեր յայլում դիպօղ ժամանակի դրելոց եմք։ Ողջ լեր ի տէր։

Դրեցաւ ի թուականի փրկչի 1801 և ի մայիսի 20 ի սուրբ աթոռս Էջմիածին։

ԺԲ. *Թուղթ առ Յովհաննէս վարդապետն Պօլսոյ. յիշումն յառաջ գրեալ թղթոյն ընդ Կարապետ վարդապետին եւ կրկին պատմութիւն անցիցն տեղւոյս եւ արարմանց Դանիէլ վարդապետին ի Բայազիտ:*

Յորմէ սիրով և կարօտիւ մատուցի ողջոյն քրիստոսեան սիրելի և յարգելի եղբօրդ մերում տն. Յովհաննիսի աստուածաբան արք եպիսկոպոսիդ և արժանապատիւ պատրիարքիդ դերահռչակ մայրաքաղաքիդ մեծի Պօլսոյ։

Ընդ որոյ և ծանուցումն լիցի սիրելւոյդ. զի ամսոյս Թ զմահսրատար Կարապետ եպիսկոպոսին զկոնդակ օրհնութեան ի վերայ քաղաքիդ, և զթուղթս առ սէրդ և առ ազնիւ իշխանսն դրեալ յղեցաք, յայտ առնելով զանցսըն տեղւոյս և մեր զորս հարկաւորեցաք այժմ դարձեալ պատմել հանդերձ հետևեալ պատահմամբըն առ ի գիտել ձեզ։ Յորժամ լուաք զվախճանելն Յովսէփ կաթուղիկոսին ի Թիֆլիզ, աստ ժողով արարեալ միաբանիւք և երկրոցուովք մահսէր դրեցաք առ Դանիէլ վարդապետն ի Թօխաթ և մէկ ամիս վաղայ եղաք որ շուտով գայ, քանզի իշխօղն և մեծամեծքն երկրիս ստիպէին շուտով լինել կաթուղիկոսի. առ այն բան մի ևս տուաք որ համբերէ։ Այգ ի լրման ամսոյն ինչ ոչ հնչեաց ձայն գալոյ Դանիէլ վարդապետին. սոքա այլ ևս արծածեցին զստիպումն թէ ահա ոչ գայ նա, մէկ մի կաթուղիկոս եղէք. յայնժամ ևս միաբանութեամբ ընդդիմացաք եթէ դրեալ եմք պարտիմք զիր առնուլ. կամ համբաւ լսել զգալոյն, կամ զոչ գալոյն։ Ի վերայ այսր կրկին մահսար գրեցաք և ի ձեռն Ղազար և Ստեփան եպիսկոպոսացն յղեցաք զալ ցԿարին, և որք թէ գտանիցէն, բերցէն, և թէ ոչ իցէ ի մերձ տեղիս, դարձցին զի աստ բռնադատութիւն նեղէր զմեզ յաղագս կաթուղիկոս կարգելոյ։ Եւ մինչ նոցա աւուրքն բազմացան ի Թիֆլիզու մահսէր եկն պատուաւոր իշխանօք հանդերձ թղթովք մեծամեծացն առ միաբանսն և առ իշխօղն երկրիս ծանուցանելով զկտակ հանգուցեալ Յովսեփայ հայրապետին, յաղագս մեր յաջորդելոյ, և խնդրելով առ ի անյապաղ կատարել։ Ընդ այս և խանն կոչեալ էր զբազմութիւն միաբանից, և որչափ խօսք և զրոյց եղև, ոչ ես հաճեալ նորա, ասաց եթէ Դանիէլն այսօր աստ գըտանիցի, ես զնա ոչ կամիմ և ստիպէին զիս յօժարել և յանձն առնուլ, առ որ և միաբանք և ժողովուրդն համակամեալ հաճութեամբ յատկացուցին զմեզ յայս պաշտօն, օծեալ ի յապրիլի, ԻԸ. և հետևաբար ի Կարնոյ թուղթս ընկալաք յոմանց՝ և յեպիսկոպոսացն թէ Դանիէլ վարդապետի ոչ դալն կայ ի մերձակայս, և ոչ համբաւն։ Եւ մեք յետ օծման մերոյ թուղթս գրեցաք ի Ղարս և ի Բայազիտ և այլ տեղիս, որք ամենեքեան ընկալեալ են և դարսեցուոց մահսէրն հանդիպելով Կարապետ եպիսկոպոսին բերեալ է ընդ իւրն յայգր։ Իսկ ի դառնալ վերոյիշեալ Բ. եպիսկոպոսացն ի Կարնոյ յԻւչքիլիսայն, Դանիէլ վարդապետն հասեալ էր նոցա իբրև ամսոյս ԺԳ. և խանին թուղթ էր գրեալ զոր իբրև իմացաք, խանն զգլխաւոր տաճիկ մի յղհաց, և մեք զերկուս պատուաւոր զեպիսկոպոսունս յղեցաք հրաւիրակս թղթով մերով առ ի համոզել և բերել։ Իսկ նա ամենևին անլուր եղեալ զվարգապետն տանող կոնդակացն մե-

րոյ արհամարհեալ է և դանեալ և զկոնդակն մեր առեալ և զանունն մեր բարձեալ ի յիշատակութենէ յեկեղեցեացն. այլ և ի Կարին թուղթքն հասեալ ի սիրելոյ եղբօրէդ և յիշխանաց ոմանց ի վերայ մեր զորս յանձնեալ են Ստեփանոս եպիսկոպոսին դայս ես յափշտակեալ է ի նմանէ։ Ո՛չ գիտեմք զինչ իցէք գրեալ։ Եւ ի վերայ այսր ամենայնի գրեալ է յայդր եթէ եկեղեցական անօթքն խորտակեալ իցեմք և տուեալ այլազգեաց, որ իսպառ ստայօղութիւն է, այլ ի նստել նոր կաթուղիկոսի բան մի ընծայ տուեալ լինի. այլ զի աւելի եղե քան զսովորականն, այն ի ժամանակիս վատութենէ և յագահութենէ պահանջողացն է։

Եւ զի խնդրէաք համբերել ժամանակ ինչ զի գայցէ Դանիէլ վարդապետն, ի պատճառս նորա խոստացեալ լինէին դրամքն, սակայն տեղեկասջիք լաւապէս եթէ մէկ հատ անօթի ես ձեռնամուխ իցեմք եղեալ ասութիւնք ստոյգ համարեսցին, իսկ թէ ոչ այնպիսի գրոյցք ի զռեհկաց բերանոց առեալ դրեալ է, որք ունայնք են։

Սակայն դրամոց և այլ իրաց ծախքն ոչ այժմ միայն, այլ և ի հերուն հետէ ի յարուցման զօրացն պարսից, և յաւէտ ես ի չահ կոչեցելոյ յայսկոյս գալոյն մինչև ցայսօր թէ յաւուրս հոգելոյս հայրապետին և թէ յետ մահուանն յանգլխութեան սրբոյ տանս, գրեթէ ոչ գան ի հաշիւ։ Եւ ահա այսպէս վնասաւորեալ, և պակասեալ տունս այս մերձ է յանկումն. եթէ ի բոլոր սրտէ հոգացողութիւն և օգնութիւն առնել չկամեցիք, իմացարուք որ անկանի։ Եւ ձեզ և մեզ մեղք է։ Ապա ուրեմն ջանացարուք հաստատել զբան մեր և կայացուսջիք դխաղաղութիւն, որով և շինութիւն սրբոյ աթոռոյս մնասցէ ի հաստատութեան իւրում։ Եւ խնդրեմ զպատասխանի գրոյս շուտով դարձուցանել, ի սիրոյ անպակաս մնալով. ողջ լեր ի տէր։

Գրեցաւ ի ՌՄԾ թուոջս և ի մայիսի ԻԴ. ի սուրբ աթոռս Էջմիածին։

ԺԹ. Կոնդակ ի վերայ Ղազախու Հաղարծնու վանից Թեմիցն, ի պատասխանի մահսէրին նոցա որք խնդրեալ էին Տէրունի լինել սրբոյ աթոռոյս եւ հովուիլ ի Սիմէօն վարդապետէն, մինչեւ եթէ շինասցի վանքն իւրեանց, յայնժամ զարդիւնսն նմա հասուսցեն. եւ մինչ ոչ է շէն, հասուսցեն սրբոյ աթոռոյս: Առ այս եւ Աղէքսանդրու եւ ի Յակոբայ եւ ի Սիմէօնէ եւ ի Ղուկասու սրբազան կաթուղիկոսացն ունէին զկոնդակս. ընդ որոց եւ այս գրեցաւ։

Եւ ընդ օրհնութենէս Աստուծոյ ծանուցումն լիցի սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց և հարազատ զաւակացդ սրբոյ աթոռոյս Էջմիածնի։ Զի բազմակնիք մահսէր ձեր զոր յղեալ էիք ձեռամբ Սիմէօն խոհեմամիտ վարդապետին և պարոն Յարութիւն Քէովխային էհաս առ մեզ, հանդերձ թղթով այլոց մեծամեծացն գաւառիդ, զորս ընթերցեալ ծանեաք զդրեալսն ձեր։ Եւ զկոնդակսն տեառն Աղէքսանդրի, տեառն Յովսէփայ, տեառն Սիմօնի և տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսացն զորս բերեալ էր Սիմէօն վարդապետն, զայնոսիկ ես կարդացեալ հասու եղաք։ Որք ի վրդովել կողմանցս և յամայանալ սրբոյ վանիցն Աղարծնոյ՝ և ի դալն միաբան վարդապետացն ի մէջ ձեր, զթեմդ նոյն սրբոյ վանացն արարեալ են տէրունիս սրբոյ աթոռոյս, զի առաջնորդն ձեր սրբոյ գահիս գահակալքն լինիցին և վարդապետքն ի կողմանէ յԱստուծոյ փոխանորդ նստեալ ի մէջ ձեր հովուեսցեն ըզձեզ և զհոգևոր արդիւնս ձեր հասուսցեն սրբոյ աթոռոյս, մինչև յորժամ վանքն շինեսցի, յայնժամ ժողովեսցին ի վանքն, և արդիւնք ի վանսն ձեր հասցեն, դուք ևս այժմ կամակար մտօք խնդրեալ էիք այսպէս լինել։ Եւ զի յայնցանէ միաբան վարդապետացն շառաւիղ մնացեալ է Սիմէօն վարդապետն, կամեցեալ էք, զի սա լիցի վէքիլ, ի կողմանէ սրբոյ աթոռոյս և մեր ի միջի ձերում. և զգործ նախանցեալ վարդապետացն միաբանից Հաղարծնու վանիցն սա կատարեսցէ, զի դուք զհոգևոր վերակացու ձեր առ ձեզ ունիցիք, և արդիւնքն ձեր մի կորիցեն, այլ ի սուրբ աթոռս հասցեն ի յոյս ուրախութեան ձեզ և ի յօգուտ հոգւոց ձերոց ըստ որում աստանօր

կատարին հոգևոր պաշտամունք սաղմոսերգութիւնք փառաբանութիւնք և սուրբ պատարագք վասն կենդանեաց և ննջեցելոց օրհնեալ ազգիս հայոց։ Պատմեցաւ մեզ որ նորոգ հանգուցեալ Յովսէփ կաթուղիկոսն ևս այսպէս է խոստացեալ Սիմէօն վարդապետին։ Արդ ըստ որում նախնի երանելի հայրապետքըն այնպէս բարւոք համարելով կոնդակս են շնորհեալ և ժողովուրդքըն ևս հաճեցեալ են և նարդենիս օրհնեալ ժողովուրդքդ ևս զնոյն լինել խնդրէք, ահա և մեք ըստ չառաւիղի սրբազան կաթուղիկոսացն մերոց և ըստ խնդրոյ ձերոյ զգաւառդ Ղազախու այսու կոնդակաւ դարձեալ արարաք տէրունիս սրբոյ աթոռոյս։ Այլ քանզի յաւուրս տեառն Սիմէօնի սրբազան կաթուղիկոսին վէճ և գրոյց է եղեալ ընդ մէջ Հաղբատեցւոց և Աղարծնոյ վանականացն վասն Ղազախու, և նոյն սրբազան հայրապետն առ ի հատանել զվէճն նոցա, գրեալ է զկէսն Ղազախու լինել Հաղբատեցւոց, և զկէսն լինիլ Աղարծնեցւոց, մեք ևս առ այժմ առ ի լոյժ բացայայտ առնել զնոյն սահմանագրութիւն, գրեմք, զի Ջուղաղու և Աղստաֆու ջրոց վերայ եղեալ գիւղօրայքըն՝ յանուն Աղարծնոյ վանացն որոշեսցին. իսկ այլ գիւղօրայքըն՝ յանուն Հաղբատայ վանացն։ Ուստի՝ ժողովուրդք որք բնակեալք կայք ի գիւղօրայսդ ջրոցն Ջուղաղու և Աղստաֆու, ահա զհոգևոր որդիդ մեր զտեառն Սիմէօն հեզաբարոյ վարդապետդ կարգեցաք վէքիլ և փոխանորդ մեր՝ ի մէջ ձեր. զի հովուեսցէ զձեզ հոգևորապէս՝ Աստուածային օրինօք և աւանդութեամբք սրբոյ եկեղեցւոյս ըստ կանոնաց Հարցն սրբոց։

Եւ յամենայն հոգեվնաս ապօրինաւոր գործոց արգիլելով յօրէնս և ի պատուիրանս տեառն հաստատեսցէ զբանաւոր հօտդ Քրիստոսի։ Եւ զամենայն առաջնորդական և վանքական հասոյթս ձեր ընկալեալ հատուսցէ ի սուրբ աթոռս մինչդեռ վանքն ձեր ոչ է ի շինութիւն, և երբ բարերարն Աստուած ողորմեալ խաղաղութիւն շնորհեսցէ երկրացս և ղոքա կարիցեն զվանքն Աղարծնոյ և կամ սրբոյն Մակարայ վանսն շինացուցանել և անդ ժողովել և զպաշտամունս տեառն փառաւոր առնել, որպէս և դուք փափագիք, և խոստանայք ջանս գնել, մեք ևս ըստ ձեռնհասութեան մերում զեկեղեցական պէտսն յցուցուք, յայնժամ զարդիւնս ձեր, ի վանքն տարեալ ի պէտս միաբանիցն արասցեն, և բարեզարդութիւն սուրբ վանացն մխիթարութիւն ընծայեսցի հոգւոց ձերոց։ Ուրեմն պատուիրեմք սիրելեացդ քահանայից և ժողովրդոց զի զհոգևոր որդիդ մեր զտէր Սիմէօն հոնճարունակ վարդապետդ մեծաւ սիրով և պատւով ընկալջիք առաջ իբրև զփոխանորդ մեր ի տեղի առաջնորդի, և ամենայն հոգևոր Աստուածահաճոյ հրամանացն լսողք և կատարողք լիջիք. մի ոք ի քահանայից և ի ժողովրդոց անիրաւաբար հակառակ երեեսցի դմա, այլ որդիական հպատակութեամբ հնազանդ կացջիք։ Եւ զառաջնորդական և զվանքական հասս և զիրաւունս ձեր զուարթ երեսօք ի ձեռս դորա հասուսջիք հասուցանել ի սուրբ աթոռս և երբ Աստուած շինութիւն տացէ սուրբ վանիցն ձերոյ, անդ հասուսցէ. որով պարգևեսցի ձեզ առ ի վերուստ բարեացն և առատութիւն, և լցուսցէ զամենայն պէտս ձեր ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ. զհոգիս ննջեցելոց ձերոց լուսաւորեսցէ։ Որք և լիջիք յանձնեցեալք ի խնամս և ողորմութիւնս տեառն. և շնորհք սրբոյ իջման տեղւոյս Քրիստոսի եղիցի ընդ ձեզ յարաժամ. ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾ թուոջս և ի մայիսի ԻԹ. ի սուրբ աթոռս Էջմիածին։

Գիտելի է և այս զի թէպէտ աստ սուրբ Մակարայ վանքն ևս յիշատակեցաւ, բայց թեմն՝ Աղարծնոյ վանացն է, ուստի՝ եթէ խաղաղութեան ժամանակ լիցի յորում թէ Աղարծնոյ վանքն և թէ սուրբ Մակարայ վանքըն երկուքն ևս շինասցեն, սուրբ Մակարայ վանիցն որոշեալ թեմ ոչ գոյ. այլ յանուն Աղարծնոյ վանիցն է որոշեցեալ թեմն։ Այսպէս յայտնի լիցի։

Ի. Թուղթ ի Պօլիս առ մահտեսի Կարապետ աղայն. վասն արարմանցն Դանիէլ վարդապետին։

Ցորմէ ժամանեսցէ թուղթ սիրոյ, ողջունի և օրհնութեան ի վերայ սիրելի և հոգևոր

որդւոյդ մերոյ, և հարազատ զաւակիդ սրբոյ Աթոռոյս երկիւղազարդ և բարեպաշտօն քրիստոսասէր մահտեսի Կարապետ աղային, և տիբահաստատ տան քում, և համայն քոյայնոցն ընտանեաց և ազգականաց, խնդալ ի տէր։

Եւ ընդ օրհնառաք նամակիս, գիտութիւն լիցի սիրելւոյդ մերոյ։ Զի յանցեալսն ձեռամբ մահսարաբեր Կարապետ եպիսկոպոսին ծանուցաք ձեզ զամենայն զհարկաւոր զխտելիսն. այսինքն զբազմելն մեր յԱթոռ հայրապետութեան հաճութեամբ միաբանիցս և երկրականացս, և զկտակս տեառն Յովսէփայ հոգելոյս հայրապետին վասն մեր, իսկ զարդիս՝ զայս ինչ դրեմ սիրելւոյդ՝ զի ըստ կտակի նոյն հանգուցեալ հայրապետին, զպատուական զի նորին բերել ետուք ի սուրբ Աթոռս հանդերձ գոյիւքն իւրովք։ զԴին հանգուցանել ի գերեզմանս հայրապետաց, և ըղգոյսն ի վայելս Աստուածային տաճարիս։ Դարձեալ և զայս հարկաւորապէս ծանիր. զի Դանիէլ վարդապետն ի Բայազիտ նստեալ, ընդդէմ մեր հակաղինի, և զսուտ զրաբանութիւնս առնէ ի վերայ մեր. որպէս թէ աւելի դրամս խարջեալ իցեմք ի տունս իշխողին, և ի յարծաթեղէն անօթս եկեղեցւոյ արկեալ իցեմք զձեռս մեր, որ բոլորովին սուտ է և ունայն։ Ահա զճշմարիտ միաբանք սրբոյ գահիս բազմակնիք մահոնրաւ ձեռամբ ... խոհեմ վարդապետին դրեցին հասարակութեան տեղւոյդ. անտի ունիս և դու գիտել լիովին։ Արդ՝ ի լսելն ձեր զայսոսիկ, և ի վերահասու լինելն եղելոցն ստուգութեամբ, զսնոտի զրութիւնս Դանիէլ վարդապետին անպիտան համարեալ, ջերմասջիք ի վերայ սրբոյ տանս այսմիկ. և ի յաղքատութեան ժամուս՝ լուսոյ ծնողիս ձերոյ՝ յօգնութիւն փութասջիք։ Զի քանի ժամանակ են, յորս անգլուխ և անտէր կալով սրբոյ տանս ի յանշքութիւն և յանզարդութիւն է հասեալ։ Եւ մանաւանդ ի խաղաղ զօրացն պարսից յերկիրս յանցելումն, զրկեալ է յամենայն հարկաւոր պիտոյից։ Եւ զի՝ օրհնեալքդ էք շինութեան սորին, և հարկ է ձեզ զպայծառութենէ սորին հոգալ։ Այսպէս գիտեալ քոյ, և զհարազատութիւնդ ի սրբոյ Աթոռոյս և ի մէնջ անպակաս արարեալ, ընկալցիս զվարձս յԱստուծոյ, Ամէն։

Հայրական սիրով և Քրիստոսական ողջունիւ Աստուածային օրհնութիւն մատուցանեմ բարեմիտ փեսային քոյ Անտոն աղային. և Քրիստոսիւ զօրացեալ թոռանցն քոց Կարապետ, Յոհաննէս և Գրիգոր Չէլէպեացն. զորս և շնորհացն Աստուծոյ յանձն առնեմ։

ԻՍ. *Թուղթ առ խորհրդական իշխանսն Պոլսոյ, յիշումն յառաջ գրեալ թղթոցն իւրոց, եւ ծանուցումն ընդիմման արարմանց Դանիէլ վարդապետին։*

Յորմէ սիրով մեծաւ, օրհնութեամբ բազմաւ, և սուրբ ողջունիւ խաղաղականաւ և Քրիստոսաէջ սրբոյ տեղւոյս հոգեատած շնորհիւ ծանուցումն լիցի ազնուամեծար սիրելեացդ մերոց՝ և հարազատ և օգտախոհ որդւոցդ սրբոյ աթոռոյս՝ աստուածասիրաց՝ իրաւախորհից և փառազարդից խորհրդական օրհնեալ իշխանապետացդ մեծի մայրաքաղաքիդ Կոստանդնուպօլսի։ Յառաջ քան զայս ամսոյս Թ դրեալ եմք զանցսն մեր և տեղւոյս, և միաբանք մեր և երկրացիք ևս հասարակական մահսարիւ իւրեանց լիապէս գրեալ են. և ընդ Կարապետ եպիսկոպոսին յղեալ։

Այլ առ հարկին պահանջելոյ՝ զոմանս բանս յայնցանէ երկրորդեմք, հանդերձ նոր եղելութեամբքն։ Յորժամ եհաս մեզ լուր վախճանի Տն. Յովսէփայ հայրապետին ի Թիֆլիզ միաբանք և երկրացիք ժողովեալ մահսէր գրեցաք առ Դանիէլ վարդապետն ի Թօխաթ, ամսօրեայ ժամադրութեամբ՝ շուտով գալ, քան զի իշխօղն մեծամեծք երկրիս ստիպէին շուտով լինիլ կաթուղիկոսի յաղագս անշփոթութեան յաւեր գիմելոյն։ Վասնորոյ բան մի ևս տուաք իշխօղին, որ համբերէ. ապա ի լրման ամսոյն մինչ ոչ եղև գալ Դանիէլ վարդապետին, նոքա այլ ևս արծարծեցին զստիպումն թէ ահա ոչ գայ նա, մինդ կաթուղիկոս եղէք, յայնժամ ևս միաբանութեամբ ընդդիմացաք եթէ գրեալ եմք նմա. պարտիմք գիր առնուլ, կամ համբաւ լսել զգալոյն կամ զչգալոյն։ Ի վերայ այսր կրկին մահսէր գրեցաք և ի ձեռն Ղազար և Ստեփան եպիսկոպոսացն յղեցաք գնալ մինչ ի Կարին թէ գըտանիցին բերցեն, և թէ ոչ իցէ ի մերձ տե-

ղիս, դարձցին, զի ասա բռնադատութիւն նեղէր զմեզ յաղագս կաթուղիկոս կարգելոյ. և մինչ նոցա աւուրքն ես բազմացան։ (Մնացեալն տես ի նախորդն)։

Այլ և ի Կարին թուղթք են հասեալ ի սիրելի եղօրէն մերմէ պատրիարդ Աստուածաբան վարդապետէն, և ի յմանց ի պատուական իշխանացդ, ի վերայ մեր։

Թուղթ առ Յովհաննէս պատրիարդն Պօլսոյ, շնորհակալութիւն վասն բերաթին հանելոյ, և զխարճն ես յիւր մօտէն տալոյն։
ՌՄԾ. յուլիս։

Կոնդակ ի վերայ Ջուղայու և շրջակայ գաւառացն և Համատանու յաղագս հայրապետութեան տեառն Գաւթի նորոգ սրբազանիս և վասն ձեռնադրութեան Յարութիւն և Գէորդ վարդապետացն միաբանիցն սրբոյ Ամենափրկչի վանացն ի յեպիսկոպոսունս, և այլ ինչ ըստ այսմ բանք։
(Արտահանեալ ի կոնդակէն պօլսոյ որ է յերեսն 3)։
1801 յունսի։

Թուղթ առ հնդկաց երկրին զործաւարս նուիրակ Յակոբ վարդապետն, ծանուցումն զհայրապետութենէ, և թէ լուաք զգալդ ի Բասրայ, և ի քէն գիր ոչ գոյ առ սուրբ աթոռս, և թէ պարոն Ստեփանոսին և պարոն Գէորգին վասն քոյ յանձնարարութիւն գրեցաք և զորպիսութիւնդ գրեսցես մեզ։
ՌՄԾ յունս ԺԲ։

Թուղթ ի Բասրայ առ պարոն Ստեփաննոսն տէր Յովհաննիսեան ծանուցումն զորպիսութենէ հայրապետութեան նորոգ սրբազանիս և յատուկ յանցեալ ամին գրեալ թղթոց սորա, և պատասխանեաց միաբանիցն և ծանուցումն վասն ձեռնադրելոյն եպիսկոպոս ըՋուղայու վանիցն միաբան Յարութիւն և Գէորդ վարդապետսն. և պատուէր զկոնդակն ծանուցական անդ ընթեռնուլ տալ և յղեալ ի Հնդիկս և նուիրակին ձեռնտու լինել և յղել յայսկոյս։
1801 յունիս։

Թուղթ առ Ատրանայու առաջնորդ Միքայէլ վարդապետն ծանուցումն զհայրապետանալոյ նորոգ սրբազանիս և յորդորումն ի սէր և ի հաւատարմութիւն։

Թուղթ առ սրբոյ Երուսաղէմի Թէոդորոս պատրիարդն վասն յաջորդելոյն նորոգ սրբազանին զԱթոռս, և յորդորումն ի սէր և ի բարեկամութիւն։
ՌՄԾ յունիս։

ԻԲ. *Թուղթ երկրորդ առ կայսրն Ռուսաց Աղէքսանդրը Պաւլովիչն շնորհակալութիւն յաղագս բարեշնորհութեան եւ հաճութեան առ կոչումն իւր ի հայրապետութիւն եւ վասն սրբոյ Աթոռոյս եւ ազգին եւ Գրիգոր նորաւերիծ եպիսկոպոսին յանձնարարութիւն։*

Աստուածապսակեալ օգոստափառ կայսր, ամենողորմած թագաւոր, որոյ աղօթարար, և Քրիստոսի ծառայ Տէր ԴԱՒԻԹ կաթուղիկոս ամենայն հայոց՝ առաքելական և ուղղափառ եկեղեցւոյս Քրիստոսի և ծայրագոյն պատրիարք մեծի գահիս Հայաստանեայց սրբոյ Էջմիածնի։ Փոխանորդ սրբազանից Առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի և սրբոյն Գրիգորի լուսաւորչին մերոյ։

Զառաջինն ի մայիսի ամսեան այսր ամի մատուցաք խոնարհ դիմօք զթուղթ մեր ի յարգանս շնորհաւորութեան ձերդ նորապսակ կայսերական մեծութեան, յայտարարեալ ի նմա և զմերս նուաստութեան կոչումն ի սոյն աստիճան կաթուղիկոսութեան տանս հայոց և սրբոյ Աթոռոյս, ըստ կտակարանութեան տեառըն Յովսեփայ երջանկայարդ հայրապետին մերոյ ի Քրիստոս հանգուցելոյ։

Ապա գիր ընկալեալ ի հաւատարիմ կուսակալէն ձ'րմէ ի Գուռլ Ֆէդրիչ Կնօրինէն, և լուր առեալ ի Կոստանդնուպօլսոյ, եթէ ձերդ կայսերական մեծութիւն ամենողորմածաբար հոգունակութեամբ հրամայեալ էք յիշեալ քաջ կողմնակալին, և Պօլսոյ դեսպան Վասիլ Ստեփանիչ Թամարովին յաղագս մերոյս

կացուցման ի լայս աթոռ. արդարև ստացաք գլխագոյն բաւականութիւն, և գոհունակ եղեալ զանբաւ. խնամոց ձերոց պարտական եղաք զմեզ զօր հանապազ ի քրիստոսաէջ սուրբ Տաճարիս զաղօթս և պաղատանս մատուցանել առ. ամենազօրն Աստուած մեծագունեղ մեծի ինքնակալութեան ձերում և երկնաձիր կայսերական սուրբ օծութեամբ գերազարդեսցէ ի խաղաղութիւն և չահաւէտութիւն հասարակաց և ի պարծանս մխիթարութեան մեղ որք չրջապատեցեալ գոլով ի զանազան օտարակրօն և դժնեալ ազգաց ոչ եմք ազատ ի նեղութեանց։

Նարդենիս ըստ կտակի լուսաւոր հոգի տեառն Ցովսէփայ սրբազան հայրապետին մերոյ դհոգեոր որդին նորա և մեր գԳբիգոր հանճարունակ վարդապետն ձեռնադրեալ եպիսկոպոս դարձուցաք յԱստուածահաստատ երկրիդ ի հոգեոր հովութիւն և առաջնորդութիւն մերազան ժողովրդոց ընդ քաղցրաչուք հովանաւորութեամբ տէրութեան ձերոյ եղելոց։ Որոյ ի հանդիպելն ի մեծահանդէս սպասու կայսերական մեծութեան ծանուցանելոց է զմերս հաւաստի հաւատարմութիւնս առ. ձերդ բարձրագահ աթոռ. արքունիս հանդերձ այլ ամենայն որպիսութեամբք կացութեան մերոյ և սրբոյ աթոռոյս և երկրիս։ Ուստի զայս թուղթ աղերսանաց խոնարհաբար մատուցանելով առ. հանդիսավեհութիւն ձեր խնդրեմք, նախ զի ըստ երանելի և մշտնջենական փառաց ժառանգաւոր նախնեացն ձերոց կայսերաց առաւելութեամբ ունիցիք զխնամարկութիւնս ի վերայ ազգիս հայոց առ. հասարակ՝ մանաւանդ բնակելոցն ի բարեճոխ երկրիդ ռուսաց ընդ հովանեաւ ամենաողորմածագունեղ կայսերական մեծութեան ձերոյ։ Եւս և ի վերայ սրբոյ Աթոռոյս և մեր աղօթաւորացս։ Եւ զզովարար հովանաւորութիւն մեծազօր տէրութեան ձերոյ զոր տարածեալ էք ի գաւառս Վրաց առ. ժողովուրդս նոցա և մեր, հաստատուն առնիցէք. յորմէ գուցէ յաջողութեամբ տեառն և մեզ աղդեսցէ զօրութիւն ի դիւր տագնապակրութեանս մերոյ։ Երկրորդ՝ զի որպէս բարեյիշատակ երջանկափառ Եկատարինէ մեծ կայսրուհին և մեծ կայսրն Պաւէլ Պետրովիչ յերկաքանչիւրն ժամանակի շնորհեալ են զհրովարտակս ողորմութեան նախընթաց գահակալացն սրբոյ աթոռոյս, նոյնպէս և ձերդ կայսերական մեծութեամբն ամենաողորմածարար շնորհեսջիք զնոյնպիսի հրովարտակ մեալ ի Քրիստոսաէջ սուրբ տաճարիս ի մշտնջենաւոր յիշատակ քաղցր գթութեան ձերում։ Երրորդ ըստ որում ի սկզբան այսր ցուցիք ղբարեհաճութիւն կամաց ձերոց ընդ կոչիլս մեր ի պատիւ հայրապետութեան, ի յայդ մեծագոյն չնորհ վստահացեալս, խնդրեմ, զի հրամայիցէք ի գուռն տէրութեան Ազարացւոց՝ անյապաղ տալ յանուն մեր զֆէրման և զբէրաթն ըստ սովորութեան. որով առաքեցեալքն իմէնջ առ. մերազնեայ ժողովուրդսն որք անդ, վստահ լիցին. առ. այն զի ապրուստ կենցաղավարութեան մերոյ ըստ մեծի մասին ի նոցանէ է։ Եւ ըստ այս կարի յոյժ գոհունակ լիցուք զկայսերական մեծութենէդ։ Որոյ ամենաօգտակար կենաց երկարութեան աղաչաւ մնամք ի բոլոր սրտէ հաւատարմութեամբ և ջերմեռանդ սիրով աղօթաւոր՝ հանդերձ համայն միաբանիւք ի Քրիստոսահիմն սուրբ տաճարիս։

ԻԳ. *Թուղթ առ Հնդկաց երկրին գործաւարտ նուիրակ Յակոբ վարդապետն, ծանուցումն զՀայրապետութենէն, եւ թէ՝ լուաք զգալդ ի Բասրայ. եւ ի քէն զիր ո՛չ գոյ առ սուրբ Աթոռս. եւ թէ՝ պարոն Ստեփաննոսին, եւ պարոն Գէորգին վասն քոյ յանձնարարութիւն գրեցաք, եւ զորպիսութիւնդ գրեսցես մեզ:*

Ցորմէ սիրով մեծաւ, և ողջունիւ Քրիստոսականաւ, և անդրանիկ օրհնութեամբ, ծանուցումն լիցի սիրելւոյդ իմոյ և հաւատարիմ որդւոյդ սրբոյ Աթոռոյս՝ Յակոբայ Աստուածիմաստ վարդապետիդ և աբհի եպիսկոպոսիդ։ Զի յետ առ. Աստուած փոխեցման Տեառն Ղուկասու սրբազան Կաթուղիկոսին հոգեոր ծնողին մերոյ՝ որ աստ ժողով եղև վասն ընտրութեան կաթուղիկոսի, և ընտրեցեալ եղեն ոմանք, զմահսարն մեք առեալ գնացաք 'ի մեծն Պօլիս, անդ եթէ զինչ անցք անցին, լուեալ էք ցարդ. և չէ պիտոյ

երկարել այժմ 'ի գրաւ ամենայնի կոչումն կաթուղիկոսութեան եղև 'ի վերայ Յովսէփ արքեպիսկոպոսին հիւսիսոյ. և արքունի նոմոսքն՝ յանուն նորա ելին. զորս առեալ դարձաք 'ի սուրբ Աթոռս, և մինչ սպասէաք զալստեան նորա, 'ի Թիֆլիզ քաղաք ժամանեալ՝ վախճանեցաւ անդէն։ Եւ 'ի լսելն մեր զլուր մահուան նորա, միաբանիւք և երկրացւովք մահսար գրեցաք առ Դանիէլ արքեպիսկոպոսն 'ի Թոխաթ, փութով գալ 'ի կաթուղիկոսութիւն. այլ 'ի յապաղել նորա, մեծամեծք երկրիս և ժողովուրդք, և միաբանք սրբոյ Աթոռոյս՝ փութացին չուտով կացուցանել զկաթուղիկոս, յաղագս ոչ ևս ընդ երկար անտերունջ կալոյ Տանս սրբոյ։ Եւ այն ինչ ի վերայ այսմ խորհուրդք և զրոյցք լինէին, 'ի Թիֆլիզու մեծամեծացն և ի հասարակութենէ թուղթք և մահսար եկին ձեռամբ պատուաւոր իշխանաց առ Տիրօղն երկրիս և առ միաբանս սրբոյ Աթոռոյս, յորս և վկայեալ էին եթէ հանդուցեալ Յովսէփ կաթուղիկոսն կտակարանութեամբ աւանդեալ է վասն մեր՝ յաջորդեցուցանելոյ զաթոռս։ Առ որ համաձայն գտեալ իշխօղն և ժողովուրդքն և միաբանք սրբոյ Աթոռոյս յատկացուցին զմեզ յայս աստիճան, և յԱպրիլի իը, օծին ի Հայրապետութիւն սրբոյ Աթոռոյս և օրհնեալ ազգիս հայոց։ Վասնորոյ գրեմ վաղեմի սիրելւոյդ, զի և դու ի վերուստ ազդեցութենէ համարեսցես զայս, և զնախնի սէրդ այժմ առաւել ևս աճեցուսցես, և գրով հաւատարմութեան քո՝ դիւր սրտի մատուսցես յոգնավարան մտաց մերոց, որով շնորհակալ լիցուք զքէն օրհնաբանութեամբ։ Գիտասջիր ապա սիրելիդ մեր, զի Ջուղայու սրբոյ Ամենափրկչի Վանից միաբանք Յարութիւն և Գէորգ վարդապետքն վասն եպիսկոպոսութեան մահսարական թղթով Ջուղայու և Բասրայու և Բուշեռու եկին ի սուրբ Աթոռս ի թուոջ Փրկչին 1800. փետրվարի 17. Եւ զի զՂուկաս սրբազան կաթուղիկոսն վախճանեալ գտին, սպասեցին յաջորդ կաթուղիկոսի՝ ընկալնուլ զձեռնադրութիւն եպիսկոպոսութեան։ Եւ յերկար միջոցի կացեալ աստ՝ պանդխտութեամբ ոչ սակաւ նեղութիւնս կրեցին։ Ապա մինչ մեք յաջորդեցաք զաթոռս, թէպէտ և պարտ էաք դիտել յանուն մեր ևս առնլոյ զթուղթս ի թեմականացն, սակայն՝ զի սոքա երկար մնացեալ աստ զանազան դիպուածովք սրբոյ Աթոռոյս նեղեցան ընդ միաբանից Տեղւոյս, և այժմ լուսակտուր դարձուցանելն խղճահարելի էր, և վանքն իւրեանց ևս ընդ ծանր պարտուք անգլուխ կայր, վասնորոյ ձեռնադրեցաք զսոսա յեպիսկոպոս ի մայիսի ե. պայմանադրեալ նախ, և թուղթ առեալ, զի Յարութիւն ծերունի եպիսկոպոսն առաջնորդ լիցի, և Գէորգ եպիսկոպոսն յաջորդ նմա և գործակից, և զի ինքնագլուխ և ոչ մին անցանիցէ ի Հնդիկս, այլ զվարդապետ ոմն յղեսցեն կոնդակաւ իւրեանց ի խնդրել զօգնութիւն վճարման պարտուցն, և թէ ժողովուրդք տեղւոյն խնդրեսցեն զմին ի յերկուց եպիսկոպոսացն, զորն և իցէ, յանուանէ ծանուսցեն մեզ, և մեք կոնդակ գրեալ չափաւոր ժամանակաւ յանուն խնդրեցելոյն առաքեսցուք, զոր առեալ գնասցէ ի Հընդիկս, և ի լրման սահմանեալ ժամանակին դարձցի յետս ի սուրբ վանսն։ Եւ այժմ ի յարձակելն մեր զսոսա՝ գրեցաք զկոնդակ մի ի վերայ Բասրայու և Հնդկաստանի քաղաքացն. և զկոնդակ մի ի վերայ Ջուղայու և շրջակայիցն. ծանուցանելով զմեր կոչումն յայս աստիճան, և զսոսա ձեռնադրելն, և այսու պայմանաւ դարձուցանելն։ Գրեցաք և զթուղթ մի առ Պարոն Ստեփաննոսն Տէր Յովհաննէսեան, ծանուցանելով զայսոսիկ, և վասն քո յանձնարարութիւն, զի որպէս սկսեալն էր հոգատար լինել բանիցդ, և տիրեալ էր յղելոց իրացդ, ամենայն հոգալեաց քոց ի Բասրայ կատարումն տացէ, և ուղեորեսցէ յայսկոյս՝ քանզի ի Բաղդատու դրութեամբ ուրուք առ Ջուղայեցի վարդապետսն՝ ազդ եղև մեզ թէ Աստուծով վաղապէս ելեալ իցես ի Բասրայ։ Բայց և լուեալ թէ Պարոն Ստեփաննոսն ի Բասրայու դարձեալ իցէ ի Բաղդատ, թուղթ մի ևս առ Պարոն Գէորգն Տէր Գաւթեան գրեցաք։ զի յոչ գտանելն Պարոն Ստեփաննոսին անդ ի Բասրայ, նա ինքն Պարոն Գէորգն ձեռնտու լիցի քեզ և հոգացող բանից քոց և ուղեորութեանդ։ Գրեցաք և զկոնդակ մի ի վերայ հասարակութեան Բաղդատայ. և զթուղթս առ աղայ Ղուկասն և Պարոն Միքայէլն. և առ մահտեսի Ղուկասն Գաբրիէլեան, և առ մահտեսի Կիւրեղն Արզումեանս։ Որոց՝ յետ ծանուցման

մերոյս կոչման, և վասն քո յանձնարարութիւն եմք գրեալ, պատուով ունիլ, և խաղաղութեամբ ուղևորել յայսկոյս։ Բայց արդ՝ երկար ժամանակ է՝ որ ի սիրելւոյդ գիր ոչ հասանի առ սուրբ Աթոռս բաց ի ՌՄԽԸ թուոյ դեկտեմբերի ԺԱ ի Կալկաթայու գրեալ թղթոյդ երկրորդ օրինակէն. որոյ զպատասխանին յանցելում ամին գործակալք սրբոյ Աթոռոյս գրեալ են քեզ։ Յայնմհետէ և այսր այլ թուղթ չէ հասեալ ի քէն աստ։ Իսկ մեք զայս թուղթ գրեալ՝ սպասեմք գրոյդ՝ իմանալ ստուգիւ թէ ուր իցես ժամանեալ. խնդրեմք յԱստուծոյ՝ բարի ճանապարհ շնորհել սիրելւոյդ խաղաղութեամբ գալ ի սուրբ Աթոռս։ Ողջ լեր ի Տէր։ Գրեցաւ յԱմի Տեառն 1801, ի մերս թուականի ՌՄԾ. ի Յունիսի ԺԹ. Ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ԻԴ. *Թուղթ ի Պոլիս, առ Թումայ աղային վասն աղարմանցն Դանիէլ վարդապետին:*

Յորմէ ժամանեցէ թուղթ սիրոյ՝ ողջունի և օրհնութեան ի վերայ հարազատ և հաւատարիմ որդւոյդ սրբոյ Աթոռոյս, Քրիստոսասէր և մեծահաւատ Թումայ աղայիդ։ Եւ Տիրախնամ տան քոյ, և համայն քոյայնոցն, ընտանեաց և ազգականաց ի տէր խնդալ։

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ, գիտութիւն լիցի բարեպաշտութեան քում։ Զի՝ զամենայն որպիսութիւնս մեր, և զհարկաւոր դիտելիսն, ձեռամբ հոգեծին որդւոյն մերոյ՝ Կարապետ եպիսկոպոսին ծանուցաք սիրոյդ, և հասարակութեան քաղաքիդ զորս մինչ ցարդ ընկալեալ գիտացեալ էք ի հարկէ զամենայն ինչ, զորոց աստէն ոչ երկրորդեմք։ Զկնի այնմ, ըստ կոչել տեառն Յովսէփայ սրբազան հայրապետի ի Տփխիս հանդուցելոյն, զպատուական դի նորին հանդերձ զոյլիւքն բերել տուաք ի սուրբ Աթոռս. զդին ի շիրիմս հայրապետաց ամփոփել և զկայսն ի պէտս սրբոյ տաճարիս պիտոյացուցանել։ Զարդիս զայս կամիմ գրել և ծանուցանել հարկաւորապէս ճշմարիտ բարեկամիդ մերոյ և ստոյգ սիրելւոյդ։ Զի Դանիէլ վարդապետն ի Բաղդադու նստեալ, զանազան սուտ գրութեամբք յայլ և այլ տեղիս՝ զպարզամիտսն վրդովէ, և զանուն մեր վատահամբաւէ, որպէս թէ՝ մեք յարծաթեղէն անօթս եկեղեցւոյ զձեռս արկեալ իցեմք, և ի դուռն իշխողին՝ զմեծ դրամս խարջեալ, որ ստայօդ զրաբանութիւնք մեծ են։ Ահա զուղիղն և զստոյգն. միաբանք սրբոյ զահիս, բազմակնիք մահտեսաց՝ ձեռամբ հոգևոր որդւոյն մերոյ խոհեմառատ ...վարդապետին գրեցին առ ժողովուրդսն մեծի մայրաքաղաքիդ՝ յորմէ և դու ունիս երկարապէս գիտել։ Արդ՝ ի յընթեռնուլն ձեր զթուղթս միաբանից՝ և ի վերահասու լինելն իրացն ճշմարտապէս, զսնոտի զրութիւնսն Դանիէլ վարդապետին ի բաց ձգեալ, ի սէր և ի հարազատութիւն շնորհատու մօրս ձերոյ փութասջիք. և արդիւնաւորել զխղճալի սուրբ տունս այս ջանասջիք, և ի նեղութեան և ի պակասութեան ժամու այսմիկ՝ յօգնութիւն հասջիք։ Զի յայսքան միջոց՝ աներունջ կալով սրբոյ տանս, զրկեալ է յամենայն հարկաւոր պիտոյից, և զի՝ դուք օրհնեալքդ էք պայծառութիւն և շինութիւն սորին. և հարկ է ձեզ զբարեզարդութենէ սորին հոգալ։ Այսպէս գիտացեալ քոյ, զօգտարար ձեռնտուութիւնդ և պչահաւէտ ջանացողութիւնդ ի սրբոյ Աթոռոյս և ի մէնջ անաղարտ արարեալ, լեր միշտ յանձնեցեալ ի գթութիւնս տեառն Աստուծոյ, Ամէն։

Գրեցաւ ... ի ՌՄԾ թուոջս, ի յունիսի ... ի սուրբ Էջմիածին ։

Հայրական սիրով և Յիսուսաւանդ ողջունիւ օրհնութիւն նուիրեմ տերամբ զօրացեալ ազնուամիտ որդւոյ քոյ Կարապետ աղալին, և շնորհացն Աստուծոյ յանձն առնեմ, որով կացցէ և մնասցէ միշտ ի բարեյաջողութիւն։

ԻԵ. *Կոնդակ ի վերայ Ջուղայու եւ շրջակայ գաւառացն եւ Համատանու, յաղագս հայրապետութեան տեառն Դաւթի նորոգ սրբազանիս, եւ վասն ձեռնադրութեան Յարութիւն եւ Գէորգ վարդապետացն միաբանից սրբոյ Ամենա-*

փրկչի վանացն ի յեպիսկոպոսունս, եւ այլ ինչ ըստ այսմ բանից:

Որք բնակեալ կայք ի տէրախնամ քաղաքդ Նոր Ջուղայ, և ի շրջակայ գաւառսդ. և ի Համատան ի Թեմս և ի վիճակս սրբոյ Ամենափրկչի հրաշազարդ վանիցն, նախապէս միաբանից նորին խոհեմամիտ վարդապետաց և համեստակեաց աբեղայից, և այլ համայն վանականաց. ապա սրբանուէր քահանայից, և բարեպաշտօն իշխանաց, հանճարեղ վաճառականաց, վայելչագործ արհեստաւորաց, քրտնաջան հողագործաց, երկիւղազարդ տանտիկնաց, և համայն օրհնեալ ժողովրդականացդ. և (այլն).

Քանզի յետ առ Աստուած փոխեցման տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին՝ բազում անցք անցեալ յաղագս ընտրութեան յաջորդ կաթուղիկոսի, եւ այն ինչ անուանակոչութիւն եղև Յովսէփ արքեպիսկոպոսին հիւսիսակողման դալ. ի հայրապետութիւն, հասեալ նորա ի Տիփլիզ՝ վճարեաց զկեանս իւր. Որոյ զկնի թէպէտ և մահսէր գրեցաք վասն Դանիէլ Արհիեպիսկոպոսին գալոյ, բայց ի յամելն նորա, մեծամեծք երկրիս և ժողովուրդք և միաբանք սրբոյ Աթոռոյս համակամեալ՝ առնլով և զվկայութիւն ի շրջակայից, յատկացուցին զմեզ յայս աստիճան. որ և ընկալաք զօծումն սրբալոյս միւռոնի ի գլուխ մեր յապրիլի ԻԸ, ի կաթուղիկոսութիւն սրբոյ Աթոռոյս Էջմիածնի և օրհնեալ ազգիս հայոց. Եւ այսպէս անկեալ իմ ընդ այսու լծով մեծի պաշտպանութեան ոչ յայլ ինչ եմ ապաստան, եթէ ոչ՝ նախ յողորմութիւն Աստուծոյ և ապա ի յօժանդակ»։

Գիտասջիք դարձեալ սիրելիք մեր ի Տէր, զի սրբոյ վանից ձեր գլխաւոր միաբանք Յարութիւն և Գէորգ հանճարունակ վարդապետքն որք ի Թուոջ փրկչին ՌծՂԸ, և ի դեկտեմբերի Ի, բազմակնիք մահսարիւն ձերով և Բասրայեցւոց և այլոց դրեալ առ Ղուկաս սրբազան կաթուղիկոսն դիմեալ էին առ սուրբ Աթոռս, ի ՌԸՃ. Թուոյ փետրվարի ԺԷ. հասին. Եւ այնն զի զսրբազան հայրապետն վախճանեալ զտին, սպասեալ մնացին յաջորդ կաթուղիկոսի. զի ըստ խնդրոյն ձերոյ ընկալցին զձեռնադրութիւն եպիսկոպոսութեան. զորմէ միաբանք սրբոյ Աթոռոյս գրեալ են ձեզ յայնժամ. Եւ մինչ յոյժ երկարեցաւ միջոցն յաականալոյ կաթուղիկոսի, սկսեալ վարդապետքն պանդխտեալ տոտ ի հանգիպմունս զանազան նեղութեանց սրբոյ Աթոռոյս, նոքա ևս նեղեցան և աշխատ եղեն. Ապա նորդենիս որ մեք յաջորդեցաք զԱթոռս, թէպէտ և պարտէաք նալիլ կրկին դրութեան ձերոյ և Հնդկաց երկրի ժողովրդեան առ մեզ, սակայն խղճալի վարդապետքն որք յայսքան ժամանակ մնալով աստ վշտակիցք եղեն մեզ, և այժմ տագնապէին ընդունել զխնդրելին իւրեանց և դառնալ ի սուրբ վանքդ՝ որ մինչև ցայժմ անգլուխ մնալով բազմօք պակասաւորեալ է, և պարտքն գիզացեալ, մեզ ևս խղճահարութիւն լինէր այլ և՛ս պահելն, և կամ տոսկապէս յուսակտուր դարձուցանելն. վասն որոյ նախ պայմանադրեցաք՝ զի Յարութիւն ծերունի վարդապետն առաջնորդ լիցի սրբոյ վանիցդ՝ զներսայլին հոգսն հոգալ. և Գէորգ վարդապետն՝ յաջորդ և օգնական նմա՝ զարտաքին հողալիսն հոգասցէ; և երկոքեան ի միասին համաշունչ և համակարիք լեալ՝ ջանըս դիցեն ի պահպանութիւն շինութեան սրբոյ վանիցն, և յայցելութիւն օրհնեալ ժողովրդոցդ. Եւ ի դառնալն իւրեանց աստի ի սուրբ վանքդ՝ զվարդապետ ոմն առաքեսցեն կոնդակաւ իւրեանց առ Հնդկաց երկրի հայկազուն ժողովուրդսն՝ ժողովել զտուրս օգնութեան ի վճարումն պարտուց սուրբ վանիցն, և թէ կամիցին նոքա զի մինն ի յերկուց եպիսկոպոսացն գնայցէ առ նոսա, դրեցեն մեզ, և որն հաճելի իցէ իւրեանց, յանուանէ խնդրեսցեն, յայնժամ և մեք կոնդակ գրեալ յանուն խնդրեցելոյն՝ չափաւոր ժամանակաւ, առաքեսցուք, զոր առեալ գնասցէ ի հոգալ զվճարումն պարտուց սրբոյ վանիցդ, և ի լըրման պայմանեալ ժամանակին դարձ արասցէ ի սուրբ վանքդ. Արդ՝ ըստ այսց պայմանաց թուղթ առաք ի Յարութիւն և ի Գէորգ վարդապետաց, և ապա ի մայիսի Ն. շնորհօք ամենասուրբ Հոգւոյն ի յատենի լուսանկար սուրբ տաճարիս ձեռնադրեցաք զսոսա եպիսկոպոսունս՝ ճոխացուցեալ խաչանման եմիփորոնաւ. և օծեալ սրբալոյս միւռոնաւ զճակատս և զբոյթս սոցա, առ ի ձեռնադրել զքահանայս և զայլ աստիճանաւորս ըստ պահանջման հարկին. եդաք զթագ ի գլուխ սոցա, և զմատանիս ի մատունսն. և տուաք զա-

նւէտարան փրկչական ի դիրկսն, և զգաւազանն իշխանական ի ձեռս իւրեանց, առ ի հովուել զբանաւոր հօտդ Քրիստոսի, խրատել և մխիթարել։ Եւ այսպէս հոգևորական պատուով զարձուցաք, ի լինել զհոգևոր պէտս սըրբոյ եկեղեցեաց ձերոց, և բարեկարգօրէն կառավարել զսուրբ վանքն ձեր։ Ուստի՝ այսու օրհնաձիր կոնդակաւ պատուիրեմք սիրելեացդ, զի այսպէս զիտացեալ ձեր՝ զՅարութիւն ծերունի եպիսկոպոսն ծանիջիք առաջնորդ սըրբոյ վանացդ և ձեզ. և զԳէորգ հանճար . . . Օգտարար հրամանաց իւրեանց լսօղք և կատարօղք լի . . . չէն և պայծառ պահեսցեն, լի միաբանիւք, զարդարեալ բարեկարգութեամբ, և հոգևորական պաշտամամբք, ի փառս տեառն և ի պարծանս ձեր և յ՚ղուտ կենդանեացդ և ննջեցելոց ձերոց։ Որք և լիջիք յանձնեցեալք... 1801 և ի յունիսի...

ԻԹ. *Թուղթ ի Բասրայ առ պարոն Ստեփաննոսն տէր Յովաննիսեան, ծանուցումն զորպիսութենէ հայրապետութեանն նորոգ սրբազանիս, եւ յիշատակ յանցեալ ամին գրեալ թղթոց սորա, եւ պատասխանեաց միաբանիցն, եւ ծանուցումն վասն ձեռնադրելոյն եպիսկոպոս զՋուղայու վանից միաբան Յարութիւն եւ Գէորգ վարդապետսն. եւ պատուէր զկոնդակն ծանուցական՝ անդ ընթեռնուլ տալ՝ եւ յղել ի Հնդիկս. եւ նուիրակին ձեռնտու լինել եւ յղել յայսկոյս:*

Յորմէ ճշմարտիւ սիրով փրկչաւանդ ողջունիւ և անդրանիկ օրհնութեամբ, և հոգեպարար շնորհիւ Միածնաէջ սրբոյ տեղւոյս դիտութիւն լիցի բարեպաշտ սիրելւոյդ մերում և հաւատարիմ որդւոյդ սրբոյ Աթոռոյս՝ Քրիստոսասէր զգաստամիտ և խոհական պարոն Ստեփաննոս աղայիդ։ Զի ի հերունհետէ զանցսն Կոստանդնուպօսոյ որ վասն ընտրութեան կաթուղիկոսի, լուեալ էք ցարդ, և զանուանակոչիլն Յովսէփայ արքեպիսկոպոսին ի կաթուղիկոս։ Բայց և նորա ժամանեալ ի Թիֆլիս՝ վախճանեցաւ ի մարտի Թ. որոյ զհոգին տէր լուսաւորեսցէ. և զձեզ մխիթարեսցէ։ Յետ այնորիկ մահուէր գրեցաք ի Թօխաթ առ Դանիէլ արհիեպիսկոպոսն, զի շուտով գայցէ. այլ ի յամելն նորա, աստանօր մեծամեծքն և ժողովուրդք մերայինք, և միաբանք սրբոյ Աթոռոյս փութային կարգել ըղգլխաւոր սրբոյ Տանս՝ զի մի այլ ես ընդ երկար անտերունջ մնալով առաւել վնասիցի. ի վերայ այսր և ի Թիֆլիզու բազմակնիք թուղթ եկն վկայութեամբ կտակի Յովսէփայ հանգուցեալ կաթուղիկոսին՝ վասն զմեզ յաջորդեցուցանելոյ։ Ուստի՝ ամենեքեան միաձայնեալ յատկացուցին զմեզ յայս աստիճան. և ընկալաք զօծումն սուրբ յապրիլի ԻԸ։ Այպ հասու եղեալ անցելոյ ամի երկուց թղթոցն քոց գրեցելոց առ սուրբ Աթոռս, ըստ որում խնդրեալ էիր յաղագս Ջուղայու սրբոյ վանիցն միաբանից Յարութիւն և Գէորգ խոհեմամիտ վարդապետացն ձեռնադրելոյ եպիսկոպոս. և նոքա ի նախընթաց տարւոյ փետրուարէն մինչև ցայժմ դեգերէին աստ նժդեհական նեղսակրութեամբ, ոչ ես յետաձգեցաք, զի կրկին թուղթս առնուաք ի կողմանցդ, այլ խնայելով ի սոսա, և ի սուրբ վանքն Ամենափրկչին, ի մայիսի Ե. ձեռնադրեցաք եպիսկոպոս, որոց Յարութիւն վարդապետն առաջնորդ լիցի, և Գէորգ վարդապետն՝ յաջորդ նմա և գործակից. այնու պայմանաւ զարձուցաք, և գրեցաք ընդ սոսա զկոնդակ անդրանիկ օրհնութեան մերոյ ի վերայ Հնդկաց երկրին և Բասրայու, ծանուցանելով զորպիսութիւն մեր՝ և զձեռնադրութիւն սոցին, և զրանն պայմանի։ Որ ի հասանիլ կոնդակին յայդր ի Բասրա, ընթեռնուլ տայցէք, և զօրինակս հանեալ յղեսցէք յայնկոյս ծովուն ի քաղաքսն Հնդկաց, թէ և մեք զերկու համօրինակս յուղարկեմք զթուղթքս, մին ձեռքն յիշեալ վարդապետաց ձեռօքն, և միւս ձեռքն ի վերայ Վանայ։ Եւ զի վասն նուիրակ Յակոբ շնորհապերճ արհիեպիսկոպոսին գրեալ էիր թէ՝ դարձեալ է ի Մատրաս, և անտի ցամաքաւ գալոց է ի Բումբայի՝ նաւել ի Բասրա, ի գալն հոգալոց եմ զամենայն հոգալիսն և ուղևորելոց, արդարև՝ մեծի հաւատարմութեան զոր է՝ զոր խոստացեալ էիր։ Եւ մեք յանցելումն ի թղթոյ ուրումն իմացաք եթէ անվտանգ ան-

ցեալ ընդ ծովն ելեալ իցէ ի Բասրա, խնդրեմք՝ զի եթէ մինչև ցայժմ ոչ իցէ գնացեալ ի Բաղդատ, ի անդ ամենայն բանիցն հոգատար լիցիս, և ուղևորեսցես ի Բաղդատ։ Ահա ինքեան Յակոբ Աստուածախմաստ վարդապետին ես թուղթ եմք գրեալ և յուղարկեալ ի Բաղդատ՝ որ անդանօր՝ կամ յայդր իւրեան հասցի, և իմացեալ նորա զօրպիսութիւնս մեր և սրբոյ աթոռոյս՝ դքանս իւր ըստ այնմ ուղղեսցէ։ Արդ՝ սիրելիդ մեր, որպէս յառաջնմէ ձեռնարկեալ ի բանս նուիրակ վարդապետին գրագրում օգտութիւնս ցուցեր, նոյնպէս և յաւարտման գործոյն ջանս դիցես առ ձեռն եկեալ արդեամբն անվնաս ուղևորել յայսկոյս։ Որոց սակս լիագոյն շնորհակալութեամբ օրհնելոց եմք դարժանիդ օրհնութեանց հանդերձ ամենայն քոյայնովքդ. զորս տէր օրհնեսցէ և զօրացուսցէ, փրկեսցէ ի չարէ, պահեսցէ ի խըռնամս և յողորմութիւնս իւր։ Ո՛ղջ լեր ի տէր։

Գրեցաւ յամի փրկչին 1801, և ի յունիսի... ի լուսանկար Աթոռս սուրբ Էջմիածին։

Իէ. *Թուղթ առ Ատրանայու առաջնորդ Միքայէլ վարդապետն՝ ծանուցումն ըզ հայրապետանալոյ նորոգ սրբազանիս, եւ յորդորումն ի սէր եւ ի հաւատարմութիւն:*[1]

Յորմէ սիրով մեծաւ և նախանուէր սուրբ ողջունիւ Քրիստոսականաւ և սրբոյ Իջման տեղւոյս նորին առատածաւալ շընորհիւ ծանուցումն լիցի սիրելի եղբօրդ մերոյ՝ և հարազատ որդւոյդ սրբոյ Աթոռոյս՝ վայելչապատիւ առաջնորդիդ Աստուածախնամ քաղաքիդ Ատրանայու՝ Միքայէլ Աստուածաիմաստ վարդապետիդ և արհի եպիսկոպոսիդ։ Զի յետ առ Աստուած փոխելոյ տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին՝ որ ի տեղւոյս զմահուէրս բերաք ի մեծն Պօլիս վասն ընտրութեան յաջորդ կաթուղիկոսի, եթէ զինչ անցք անցին անդ, մերձաւոր գոլով ձեր տեղեկացայք։ Ապա կայացաւ կոչումն կաթուղիկոսութեան ի վերայ Յովսէփայ արքեպիսկոպոսին, և արքունի նոմոսքն յանուն նորա ելին, զորս առեալ դարձաք ի սուրբ Աթոռս, և մինչ սպասէաք գալստեան նորա, որ ճանապարհորդեալ ի վիճակէն իւրմէ դայր հասեալ ի Տիֆլիզ քաղաք, էառ անդէն զվճար կենաց իւրոց։ Զոր լսելով մեր՝ վերստին տարակուսեցաք, և մահսար գրեցաք առ Դանիէլ արքեպիսկոպոսն ի Թօխաթ՝ չուտով ժամանել։ Իսկ ի յամելն նորա մեծամեծքն երկրիս և ժողովուրդք մերայինք, և միաբանք սրբոյ Աթոռոյս փոյթ կալան ոչ ևս անգլուխ թողուլ զսուրբ տունս, որով յանշքութիւն դիմէր, ի յայս փոյթ գոլով սոցա, և ի Տիֆլիզ քաղաքէ մահսէր և թուղթք եկին նշանաւոր արամբք, որով և գրեալ էին զՅովսէփայ հոգելոյս հայրապետի կտակաւ աւանդելն վասն մերոյ նուաստութեան յաջորդելոյ զԱթոռս։ Առ որ համաձայնեալ ամենեցուն յատկացուցին զմեզ և օծին յապրիլի ԻԸ. ի կաթուղիկոս։ Այլ սակս և մահսէր գրեալ միաբանք սրբոյ Աթոռոյս և ժողովուրդք երկրիս, զոր ընդ մերս անդրանիկ օրհնութեան թղթոց առաքեցաք ի Կոստանդնուպօլիս՝ ձեռամբ Կարապետ եպիսկոպոսին։ Այլ զի յայնժամ ոչ ժամանեցաք առ սիրելութիւնդ գրել զգիր, այժմ ի գալն յօրհնեալ Քաղաքէդ բարեպաշտօն ուխտաւորաց, և յետ կատարման ուխտին իւրեանց ի դարձ առնելն՝ փոյթ յանձին բերաք զայս ծանուցական և սիրայորդոր թուղթ գրել առ բարեխոհ սիրելիդ, զի և դու յԱստուածային տեսչութենէ իմասցիս զկոչիլս մեր յայս պաշտօն, և բարեհաճ կամօք ախորժեալ՝ արժանահայց աղօթիւք օգնեսցես տկարութեանս՝ զօրանալ ի բարձումն լծոյս տիրականի, նաև սիրանշան գրովդ մխիթարեսցես և ուրախ արասցես ի զանազան հոգսակրութիւնս մեր։ Շնորհակալ լինելոց եմք զառատութենէ սիրոյդ։ Եւ զայլ ամենայն որպիսութիւնս սրբոյ գահիս և մեր ի գրաբեր օրհնեալ Կարապետ աղայէդ ունիս իմանալ։ Ո՛ղջ լեր ի տէր։ Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾ. թուոջս, և ի յունիսի... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

---

[1]) Նոյնպիսի թուղթ գրուած է և Գանարմայու Գօզոս ծերունազարդ վարդապետին, Թէքիրտաղու Յակոբ ծերունաւայլ արհիեպիսկոպոսին և Պրուսայու Գօզոս Աստուածաիմաստ արհիեպիսկոպոսին։

ԻԸ. *Թուղթ առ սրբոյ Երուսաղէմի Թէոդորոս պատրիարգն, վասն յաջորդելոյ նորոգ սրբազանին զԱթոռս, եւ յորդորումն ի սէր եւ ի բարեկամութիւն։*

Քրիստոսի Փրկչին մերոյ վասն մեր մարմնացելոյ Տնօրինական սուրբ տեղեացն՝ Ծննդեան սուրբ Այրին, Խաչաբարձ սուրբ Գողգոթային, և լուսափառ սուրբ Գերեզմանին, այլ և սրբազանից Յակոբեանց Առաքելոց, շնորհաբուղխ սուրբ Գլխադրին և սուրբ Գերեզմանին, և այլ վայրացն հռչակելոց՝ հոգետենչ ըղձիւ և եռանդագին սիրով՝ ի հեռուստ իբրև մօտոյ զերկրպագութիւն և զհամբոյրս մատուցանեմ։

Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Դաւիթ, և շնորհիւ նորին կաթուղիկոս ամենայն հայոց առաքելականի եկեղեցւոյս Քրիստոսի, և ծայրագոյն պատրիարգ լուսանկար մեծի դահիս սրբոյ Էջմիածնի։ Որ ահա նախապէս***։ Եւ ապա սիրելի և յարգելի եղբօրդ իմոյ՝ հարազատ և շնորհընկալ որդւոյդ սուրբ Աթոռոյս՝ տեառն Թէոդորոսի աստուածիմաստ արհի եպիսկոպոսի և վայելչապատիւ պատրիարգի ամենահռչակ սրբոյ քաղաքիդ Երուսաղէմի՝ սիրով և կարօտիւ նուիրելով զողջոյն Քրիստոսաձիր՝ ծանուցանեմ զայս ինչ։ Քանզի մինչ յԱստուծոյ ամենակալին է շարժել զամենայն, և ոչ շարժիլ յումեքէ, ապաքէն ամենայն շարժողութիւնք մեր և վարք որք ի բարւոյ մասին, ի նոյն Աստուածպետականին խնամոց յաջողեալ իմանին. ըստ առաքելոյն թէ՝ նովաւ կեամք և շարժիմք, և եմք։ Որպէս դիտելի է և մերս կոչումն ի սոյն աստիճան գահաւորութեան սրբոյ Աթոռոյս։ Վասն զի յետ վախճանման տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսի՝ մինչ անուանակոչութիւն կաթուղիկոսութեան կալցաւ ի վերայ տեառն Յովսէփայ արքեպիսկոպոսին հիւսիսակողմանց, և ֆէրման և բէրաթն յանուն նորա ել, և նա ելեալ ի վիճակէն գայր ի կաթուղիկոսութիւն սրբոյ Աթոռոյս, ժամանեալ ի Թիֆլիզ քաղաք, ի պատրաստելն յուղևորութիւն առ այսր, վախճանեցաւ անդէն, որոյ զհոգին Տէր լուսաւորեսցէ, և զքեզ ողջ պահեսցէ։ Իբրև ընկալաք զլուր մահուան նորա, կրկին ես անկեալ ի վարանս տարակուսանաց, թէպէտև գրեցաք զմահսէր հրաւիրման առ Դանիէլ արհի եպիսկոպոսն ի Թօխաթ, չուտով գալ, բայց յամելով նորա, տաղնապեալ միաբանից սրբոյ Աթոռոյս և ժողովրդոցն երկրիս վասն երկար անտերունջ մնալոյն սրբոյ տանս՝ խորհէին և խօսէին անյապաղ զոք գլուխ կարգել սրբոյ տանս։ Ի նմին խորհրդեան, ի Թիֆլիզ քաղաքէ բազմակնիք թուղթ էհաս պատուաւոր արամբք առ միաբանքս, ծանուցեալ ի նմա զկտակ տեառն Յովսէփայ հոգիալոյս հայրապետին զկնի իւր զմերս նուաստութիւն յաջորդեցուցանել։ Ուստի միաբանք և ժողովուրդք հաճեցեալ յանկացուցին զմեզ յայս պատիւ, յԱպրիլի ԻԸ. օծանելով ի կաթուղիկոս սրբոյ Աթոռոյս և օրհնեալ ազգիս Հայոց։ Եւ թէպէտ կանխաւ կամէաք զնախընծայ սիրոյ մեր թուղթ գրել առ ցանկալի եղբայրութիւնդ, բայց զբաղմունք յոգնախուռն խուժանաց այնպէս պատեցան զմեօք, մինչև չկարել մեզ և զաչս բանալ. այլ այժմ որպէս թէ ժամ գոգացեալ, զայս թուղթ սիրոյ և յայտարարութեան մերոյս հանդիպմսն առաքեմք առ յարգութիւնդ, որպէս զի և դու յԱստուծոյ համարեսցիս ըղկարգիլս մեր ի հայրապետական յայս աթոռ, և կամակար մտօք հաճեցեալ արժանահայց աղօթիւք և սիրակցութեամբ նպաստեսցես տկարութեանս մերում, որպէս զի և իմ օժանդակութիւն մխիթարութեան կտեալ զօրացայց բաւական լինել ի բարձումն լծոյս պաշտպանութեան մեծի տանս և օրհնեցելոյ ազգիս հայոց, և այն ի ժխորեալ ժամանակիս ալեկոծութեանց։ Յորում որպէս մեք զկողմանցդ դառնաղէտ զիպուածսն և զձեր նեղութիւնսն լսեմք և վշտանամք, նոյնպէս և դուք զկողմանցս և զմերն իմանայք ի հարկէ մանաւանդ և զոր յերկուս ամս յանտէրութեան սրբոյ Աթոռոյս և ի բնաւ պակասութեան մտիցն՝ քանիք կոհակք մեծաց փորձութեանց յարեան ի վերայ սորա թարգօյնութեան յերկրաւորաց՝ բաց ի աներևոյթ պահպանութենէն Աստուծոյ։ Այս դարձեալ ի նոյն հանրախնամ Այցելուէն հայցեմք՝ իւր անքաւ ողորմութեամբն անդորրութիւն շնորհելով կողմանդ և կողմանս, թէ զայդ և թէ զայս Տաճարքս փառաց սրբութեան իւրոյ անաղարտ պահել ի զանազան վտանգից հակա-

ռակորդաց, և զձեզ և զմեզ փրկելով ի փորձութեանց անամօթալի առնել ի յանձնեցեալսն մեզ սպասաւորութիւնս հոգևորս։ Գիտասջէք դարձեալ սիրելի եղբայրութիւն քո. զի սրբոյ Աթոռոյդ ի Զմիւռնիա նուիրակ եղեալ Թօխաթցի Կարապետ վարդապետն վկայականաւ լուսահոգի Պետրոս պատրիարքին և բազում յանձնարարական թղթովք երեսելի առանց դիմելոյ առ Ղուկաս սրբազան կաթուղիկոսն վասն եպիսկոպոսութեան՝ ի ՌՄԽԸ. թուոյ դեկտեմբերի ԻԴ. էհաս առ սուրբ Աթոռս, մինչ երանելի հայրապետն ի կենաց լեալն աւուրսն էր, որ և ի դեկտեմբերի ԻԸ փոխեցաւ յաստեացս. և Կարապետ վարդապետին դդառնալն և զելսն միւսանգամ յոյժ դժուարին վարկ ունելով մնաց սպասել յաջորդ կաթուղիկոսի, յուսալով թէ ոչ յոյժ երկարեսցի։ Բայց իբրև երկարեցաւ միջոցն, և ինքն եկաց աստ ձեռերեալ, փոխանակ իւրն այլ նուիրակ առաքեցիք ի Զմիւռնիա, ուր սակս և սա տարակուսեալ՝ վերջապէս հաստատեաց թէ առանց եպիսկոպոսութեան դառնալ ոչ կարեմ, այլ յետ եպիսկոպոսութեանս եթէ խնդրեսցեն, դարձայց, և թէ ոչ, կացից ի միաբանութեան սրբոյ Աթոռոյս։ Ապա իբրև մեք յաջորդեցաք զաթոռս, սոյնու պայմանաւ ձեռնադրեցաք եպիսկոպոս ի Մայիսի Ե. և կայ աստ առ մեզ, զոր եթէ խնդրիցէք, յուղարկեսցուք։ Եւ եթէ ոչ խնդրիցէք, պահեսցուք ի կարգի միաբանից սրբոյ Աթոռոյս։ Նոյնպէս և զԿարնոյ նուիրակն ձեր Գրիգոր խոհեմամիտ վարդապետն՝ որ յաւուրս համբաւոյն գալոյ Յովսէփ կաթուղիկոսին կանխեաց եկն ի սուրբ Աթոռս, զնա ես ձեռնադրեցաք դառնալ ի գործն։ Զայսքան ինչ գիտացեալ այժմ, զսէրդ և զբարեկամութիւնդ հաստատուն կալցիս առ սուրբ Աթոռս և առ մեզ. և սիրանիշ գրովդ ի մխիթարել զմեզ փութասցիս, որով շնորհակալ լիցուք դարդոյ եղբայրութեանդ։ Եւ լեր ողջ տէրամբ ի Տէր» ճուտնիս մեր։ Ամէն։ Գրեցաւ ի թուոջն մերում ՌՄԾ. և ի Յունիսի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ԻԹ. *Թուղթ ի տէր Դաւիթ կաթողիկոսէ ի մեծն Պօլիս, առ Գրիգոր ամիրայն: Վասն զրաբանութեանցն Դանիէլ վարդապետին։*

Յորմէ ժամանեսցի թուղթ լիսուսածիր ողջունի, Աստուածային օրհնութեան, եւ ճշմարիտ սիրոյ, հանդերձ հոգեզուարճ շնորհիւ սուրբ Իջման տեղւոյս Քրիստոսի, ի վերայ սիրելի և հոգևոր որդւոյ մերոյ, և հարազատ զաւակիդ սրբոյ Աթոռոյս, տէրամբ զօրացեալ բարեպաշտօն և չքեղափառ Գրիգոր ամիրայիդ։ Եւ Աստուածախնամ տան քում և բնակութեան և համայն քոյայնոցն. խնդալ ի տէր։

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ՝ գիտութիւն լիցի բարեպաշտութեան քում. Զի յանցեալսն զամենայն զեղելութիւնսն, զմեր բազմիլն յաթոռ հայրապետութեան, համահաճութեամբ բոլոր միաբանից սրբոյ գահիս, և երկրականացս, զկտակս հոգելոյս հայրապետին տեառն Յովսէփայ, և յորդորելն Թիֆլիզու մերազնեայ բնակչացն զմիաբանսն ի կատարումն այնմ, և զայլս այսպիսիս գրեալ ծանուցաք ձեռամբ հոգեծին որդւոյն մերոյ Կարապետ Նորապսակ եպիսկոպոսին. յորմէ ի հարկէ լիով գիտացեալ էք զամենայն ինչ։ Իսկ այժմ մինչ ըստ կտակի վերոյիշեալ հանգուցելոյն, զպատուական Գի նորին հանդերձ զոյիւքն իւրովք բերել ետուք ի սուրբ Աթոռս առ ամփոփել ի շիրիմս հայրապետաց, և զդոյսն ի վայելս սրբոյ Աստուածային տաճարիս, հարկ համարեցաք կրկին ի ձեռն օրհնութեան նամակիս ծանուցեալ ձեզ զայսոսիկ և մանաւանդ զանպատեհ արարմունս Դանիէլ վարդապետին։ Որ եկեալ ի Բաղդադու՝ զանազան դրութեամբք յայլ և այլ տեղիս, կեղտոտել կամի զանուն մեր, և որքան հրաւիրեմք զալ ի սուրբ Աթոռս և կալ ի պատուի, ըստ ամենայնի անհնազանդ եղեալ՝ զրաբանութեամբ պղտորէ զմիտս ժողովրդոց և վրդովէ զնոսա և զսուտ բարուրանս կուտէ ի վերայ մեր, որպէս թէ յարծաթեղէն անօթս արկեալ իցեմք զձեռս մեր և զաւելի դրամս վատնեալ ի դուռն իշխօղին տեղւոյս որ ոչ է ճշմարիտ, ուստի գրեմ սիրելւոյդ և զգուշացուցանեմ չընդունել զբանս նորին և զհաւատ չընծայել և չտալ տեղի զրպարտութեանցն նորին, զի

սուտ է և ի նախանձու շարժեալ, զճշմարիտն ահա միաբանք սրբոյ գահիս բազմակնիք մահսէրաւ. գրեալ ձեռամբ ... խոհեմափայլ վարդապետին առաքեցի առ հասարակութիւն տիրահաստատ քաղաքիդ, անտի և դուք ունիք գիտել լրապէս։ Արդ՝ ի լսելն զմերս ճշմարիտ գրութիւն, և ի յընթեռնուլն զթուղթս միաբանից, զգրագրութիւնսն Դանիէլ վարդապետին՝ ճշմարտասիրաբար ի բաց հերքեալ ի ձէնջ, ըստ բարի սովորութեան ձերում առատասջիք ի սէր և ի ջերմեռանդութիւն լուսատու ծնողիս ձերոյ, և փութասջիք օր մի յառաջ զկայսերական ֆէրմանն հանել և առաքել. զի և մեք միամիտ հոգւով ի գործս մեր կացցուք։ Նա՝ այս քանի միջոցք են, յորս անտէրունջ կալով սրբոյ տանս՝ զրկեալ է ի բարեկարգութեանցն յաղագս պակասութեան հարկաւոր պիտոյիցն, և մանաւանդ յանցեալ ամին ի խաղալ զօրացն պարսից յերկիրս, զինչ ինչ տառապանս և զմեծամեծ վնասս ոչ կրեաց սուրբ տունս. և զի օրհնեալ ազգդ էք շինութիւն և պայծառութիւն սորին, ուրեմն հարկ է ձեզ զբարեկամութենէ սորին հոգալ, և մի ուկն դնել չարագրդիռ բանից ումեք։ Այսպէս գիտացեալ քոյ, զսէրդ հաստատուն և զօգտարար հաւատարմութիւնդ ի մէնջ և ի սրբոյ Աթոռոյս անպակաս արարեալ լեր միշտ զօրացեալ ի շնորհս տեառն և պահպանեցեալ ի խնամս նորին։ Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾ թուաջս, ի յունիսի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։ Բարեբողբոջ և ազնուազարմ տերամբ զարդացեալ որդւոցդ, և բոլոր ընտանեացդ, հայրական սիրով ողջոյն և օրհնութիւն նուիրեմ, և ի շնորհս Ամենազօրին յանձնեմ, որով միշտ ի խաղաղութեան և ի յաջողութեան կացցեն։

Լ. Թուղթ առ մահտեսի Յովհաննէս ամիրայն ի Պոլիս։

Յորմէ ժամանեսցի թուղթ սիրոյ, ողջունի և օրհնութեան ի վերայ հոգեոր որդւոյդ մերոյ և հարազատ զաւակիդ սրբոյ Աթոռոյս Աստուածասէր և պերճապատիւ մահտեսի Յովհաննէս ամիրայիդ։ Եւ տիրահաստատ տան քում, և բոլոր ընտանեաց և ազգականաց քոց, խնդալ ի տէր։

Եւ ընդ Աստուածայնոյ օրհնութեանս, ծանուծումն լիցի բարեպաշտութեան քում։ Զի յանցելումն զորպիսաբար կոչմանէն մերմէ յայս Առաքելական Աթոռ, ընդ այլ անցիցն, ի ձեռն սիրելի որդւոյն մերոյ Կարապետ շնորհափայլ եպիսկոպոսին ծանուցաք։ Իսկ զարդիս՝ զայս գրեմ սիրելւոյդ իմոյ. զկնի այնըմ, ըստ կտակի տեառն Յովսէփայ հոգելոյս հայրապետին, զպատուական դի նորին հանդերձ զոյիւքն իւրովք բերել ետուք ի Թիֆլիզու ի սուրբ Աթոռս, զդին հանգուցանել ի շիրիմս հայրապետաց, և զգոյսն ի պէտս սրբոյ տանս կիր առնուլ։ Եւ հարկաւորապէս զայս ինչ ծանուցանեմ հարազատիդ իմոյ, զի Դանիէլ վարդապետն եկեալ ի Բայազիտ՝ ունայն և սուտ գրութեամբք կեղտոտէ զանուն մեր և վատահամբաւել կամի զրաբանութեամբք, որպէս թէ՝ մեք յարծաթեղէն անօթս եկեղեցւոյ ձեռն արկեալ իցեմք, և զաւելորդ զըրամս վատնեալ ի զուռն իշխօղին տեղւոյս, որ ըստ ամենայնի անհիմն է և ընդունայն, քանիցս գրեցաք նմա և զհրաւիրակս յղեցաք գալ ի սուրբ Աթոռս և կալ ի պատուի, նա անլսօղ եղեալ ընդդէմ մեր հակաղինի։ Ուստի գրեմ և զգուշացուցանեմ սիրելւոյդ չհաւատալ բանից նորին, զի սուտ է։ Զճշմարիտն ի բազմակնիք մահսէրէն միաբանիցս գիտելոց էք։ Արդ՝ ի տեղեկանալն ձեր զսոյսոսիկ, ըզստութիւնս նորին ի բաց հերքեալ ի ձէնջ ի սէր և՛ ի հարազատութիւն փութասջիք, և ի նեղութեան և յաղքատութեան ժամուս յայսմիկ յօգնութիւն լուսատու ծնողիս ձերոյ հասջիք։ Որովք ընկալջիք զվարձս յԱստուծոյ և զօրհնութիւնս ի մէնջ, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾ թուոջս, ի յունիսի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

Հայրական սիրով ողջոյն և օրհնութիւն մատուցանեմ բոլոր բազմաշխատ եկեղեցականացն և ի խնամս տեառն Աստուծոյ յանձնեմ, յորմէ ընկալցին զվարձս ըստ վաստակոց իւրեանց։

Շքեղափառ և մեծահաւատ Բորդողիմէոս Զէլէպւոյդ՝ Հայրական սիրով ողջոյն և օրհնութիւն նուիրեմ ազնուամիտ և բարեբարոյ տերամբ զօրացեալ եղբարց քոց և որդւոյ, զորս և շնորհացն Աստուծոյ յանձն առնեմ։

ԼԸ. Թուղթ ի մեծն Պօլիս, առ Կարապետ աղայն վասն արարմանցն Դանիէլ վարդապետին:

Ցորմէ ժամանեսցէ թուղթ հայրական սիրոյ. Փրկչաւանդ ողջունի և Աստուածային օրհնութեան հանդերձ հոգեկեցոյց շնորհիւ սրբոյ Իջման տեղւոյս Քրիստոսի ի վերայ սիրելի և հոգևոր որդւոյդ մերոյ՝ հարազատ և մտերիմ զաւակիդ սրբոյ Աթոռոյս, պերճապատիւ և չքեղափառ մեծահաւատ Կարապետ աղայիդ. Եւ տիրահաւատ տան քում և բնակութեան. և համայն քոյայնոցն, ընտանեաց և ազգականաց ի տէր խնդալ.

Եւ ընդ շնորհապարգև օրհնութեանս Աստուածայնոյ՝ գիտութիւն եղիցի բարեպաշտութեան քում. Զի յանցելումն զհարկաւոր անցսն սրբոյ Աթոռոյս և մեր, այսինքն ըզկոչիլն մեր յայս հայրապետական Աթոռ հաճութեամբ միաբանիցս, երկրականացս, իշխօղին երկրիս, և բոլոր բնակչացն Թիֆլիզու, ես և՝ զկտակս հոչելոյս հայրապետին տեառն Ցովսէփայ ի Թիֆլիզ վախճանելոյն, և զայլս այսպիսիս, գրեալ ձեզ և հասարակութեան ձերոյ, առաքեցաք ձեռամբ հոգեծին որդւոյն մերոյ Կարապետ եպիսկոպոսին, զորոց աստէն ոչ երկրորդեմք. Զկնի այնմ, ըստ կտակի նոյն հանգուցելոյն, զպատուական դի նորին հանդերձ բոլոր գոյիւքն իւրովք բերել տուաք ի սուրբ Աթոռս. զդին հանգուցանել ի շիրիմս հայրապետաց, և մինչս պիտոյացուցանել ի պէտս սրբոյ տաճարիս, զորոյ զհոգին լուսաւորեսցէ տէր ի լոյս երեսաց իւրոց՝ դասակարգելով ընդ երջանիկ հայրապետսն. Արդ՝ ի ձեռն սոյն օրհնութեան նամակիս, զայս հարկաւորապէս ծանուցանել կամիմք քումդ ազնուականութեանդ. Զի Դանիէլ վարդապետն ի Բայազիտ նստեալ՝ ընդդէմ մեր ըզբազում հակառակութիւնս գործէ. և սուտ և մտացածին գրութեամբք՝ զանազան բարուրանս յօդէ ի վերայ, և զսիրտս պարզամտաց ի յինքն յանկուցանէ, և զանուն մեր կեղտոտել և վատահամբաւել կամի այնու՝ որպէս թէ՝ մեք զաւելորդ դրմաս իցեմք ծախսեալ ի դուռն իշխօղին և յարծաթեղէն անօթս եկեղեցւոյ՝ ձեռնամուխ իցեմք եղեալ, որ բոլորովիմբ անհիմն է և ի բերանոյ ռամկաց առեալ. Քանիցս անգամ զթուղթ սիրոյ և յորդորանաց գրեցաք նմա ի Բայազիտ, և ըզպատուաւոր անձինս յղեցաք գալ ի սուրբ Աթոռս, և ըստ ամենայնի յապահով և ի պատուի կալ ըստ իւր արժանւոյն, նա անհնազանդ գտեալ զհրաւիրակսն մեր անարգանօք յետս էր դարձուցեալ. և վասն մեր զբազում ինչ ասացեալ. Արդ՝ վասն այն յառաջագոյն գրեմ և զգուշացուցանեմ ուրելեացդ, մի՛ զի՛ գտցեն ի ձեզ տեղի զրաբանութիւնք Դանիէլ վարդապետին, զի զստոյգն և ճշմարիտն ահա միաբանք սրբոյ Աթոռոյս բազմակնիք մահսէրաւ գրեալ ծանուցին ժողովրդոցն այգւոյդ, յորմէ և դու ունիս լիովին գիտել. Ուրեմն՝ ի յընթեռնուլն ձեր զայսոսիկ և ի տեղեկանալն, զանհնազանդութիւնսն Դանիէլ վարդապետին խոտան համարեալ, ի հաւատարմութիւն և ի սէր փութասջիք, և ցաւակցաբար ջերմացեալ ի վերայ Լուսոյ ծնողիս ձերոյ՝ առատասջիք յարդիւնաւորութիւն, և ի պակասութեան պահուս յայմիկ յօգնութիւն հասջիք. Զի քանի ժամանակ է, յորս անտէր լինելով սրբոյ տանս, յամենայն բարեվայելչութեանց խրթնացեալ է և մանաւանդ ի խաղալ զօրացն պարսից յերկիրս յանցեալ ամին, զըրկեալ է յամենայն հարկաւոր պիտոյից. Եւ զի՛ զուք օրհնեալքդ էք շինութիւն սորին. և հարկ է ձեզ զպայծառութենէ սորին հոգալ, զկայսերական ֆէրմանն փութացուցանելով առ մեզ, զի միամիտ հոգւով ի գործի կացցուք. Այսպէս գիտելով քոյ, և զորդիական հաստատ բարեկամութիւնդ ի սրբոյ Աթոռոյս և ի մէնջ անպակաս առնելով, լեր ողջ ի տէր.

Գրեցաւ ի ՌՄԾ թուոջս, ի յունիսի ... ի սուրբ Էջմիածին.

Հայրական սիրով զողջոյն և զօրհնութիւն մատուցանեմ տերամբ զօրացեալ Մուքուս և Սարգիս ազնուամիտ տղայիցն. և բարեբարոյ փեսային քոյ խոհական Նիկողայոս աղային, զորս և յանձնեմ ի խնամս Բարձրելոյն, որով միշտ ի յառաջադիմութեան եղիցին.

ԼԲ. *Թուղթ ի մեծն Պօլիս առ մահտեսի Գէորգ ամիրային վասն արարմանց Դանիէլին։*

Ցորմէ սիրով, ողջունիւ և օրհնութեամբ ժամանեսցէ Թուղթ ի վերայ սիրելի և հոգևոր որդւոյդ մերոյ և մտերիմ զաւակիդ սրբոյ աթոռոյս ազնուաբարոյ և բարեհամբաւ մահտեսի Գէորգ ամիրայիդ։ Եւ տիրահաստատ տան քում և քոյայնոցն, ընտանեաց և ազգայնոց։

Ես ընդ աստուածային օրհնութեանս, դիտութիւն լիցի բարեպաշտութեան քում։ զի ձեռամբ մահսարարեր Կարապետ շնորհաշատ եպիսկոպոսին ղրեցաք սիրելւոյդ մերում յանցեալսն ղհարկաւոր անցսն սրբոյ դահիս և մեր, զոր ընկալեալ մինչև ցարդ գիտացեալ էք ի հարկէ զ ի նմայսն։ Զկնի այնըմ ըստ կտակի հոգելոյս հայրապետին տեառըն Ցովսէփայ, զպատուական դի նորին հանդերձ բոլոր գոյիւքն իւրովք՝ բերել տուաք ի սուրբ Աթոռս, զդին հանգուցանել ընդ սրբոց հայրապետաց, և զինչսն ի պէտս Աստուածային տաճարիս պիտոյացուցանել։ Իսկ այժմ զայս կամիմ ծանուցանել հաքկաւորապէս քումդ սիրելութեան, զի Դանիէլ վարդապետն ի Բայազիտ նստեալ, սուտ և ունայն գրութեամբք յայլ և և այլ տեղիս, պղտորէ ըզպարդամիտսն, և կեղտոտել կամի զանուն մեր, որպէս թէ՝ մեք յարծաթեղէն կահս եկեղեցւոյ՝ ձեռնամուխ իցեմք եղեալ, և զաւելի դրամս վատնեալ ի դուռն իշխօղին, որ ըստ ամենայնի անհիմն է և անընդունելի, զստոյգն և զճշմարիտն ահա միաբանք սրբոյ Աթոռոյս բազմակնիք մահսէրաւ ծանուցին լուսաւորչածին երամոցն բազմամբոխ քաղաքիդ, յորմէ և դու ունիս լիովին դիտել։ Արդ՝ ի լսելն ձեր զայսոսիկ, զնոտի գրութիւնս Դանիէլ վարդապետին ի ձէնջ ի բաց տարհեբքեալ, ի սէր և ի հարազատութիւն փութասջիք, և ի նեղութեան և ի պակասութեան ժամուս՝ յօգնութիւն և ի յարգիւնաւորութիւն հասջիք շնորհատու ծնողիս ձերոյ։ Զի քանի ժամանակ է, յորս անտերունջ կալով սրբոյ տանս զրկեալ՝ է յամենայն հարկաւոր պիտոյից։ Եւ զի՝ դուք օրհնեալքդ էք շինութիւն սորին, ուրեմն հարկ է ձեզ զպայծառութենէ սորին հոգալ, որով միշտ ի բարեզարդութեան մնասցէ։ Որև՝ լսելով և կատարելով զպատուէրս մեր՝ միջիք զօրացեալք ի շնորհս տեառն, ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾ. Թուոջս ի յունիսի ... ի սուրբ Էջմիածին։

ԼԳ. *Թուղթ ի մեծն Պօլիս, առ Ղրիմեցի պարոն Գէորգ Աղայեկեանն, ի պատասխանի մայիսի ԻԸ գրեցեալ թղթոյն առ մեզ. եւս եւ՝ յիշատակութիւն վասն արարմանց Դանիէլին եւ այլ բանք։*

Ցորմէ ժամանեսցի Թուղթ իսկական սիրոյ, նամակ փրկչաւանդ ողջունի, և կոնդակ Աստուածային բազմապատիկ օրհնութեան, հանդերձ հոգեզուարճ շնորհիւ սրբոյ իջման տեղւոյս Քրիստոսի, ի վերայ սիրելի և հոգևոր որդւոյդ մերոյ և լուսածնունդ զաւակիդ սրբոյ Աթոռոյս՝ բարեպաշտօն երկիւղազարդ, մեծահամբաւ և ազնուական Գէորգ աղայիդ։ Եւ որոց ընդ քեզ են, ի տէր խնդալ։

Եւ ընդ շնորհառաք օրհնութեանս Աստուածայնոյ դիտութիւն լիցի քումդ ազնուականութեան։ Զի զամենայն անցսն սրբոյ Աթոռոյս և մեր, և զհարկաւոր զեղելութիւնսն, և զգործսն, որք անցին և գործեցան. այսինքն զբազմիլն մեր յաթոռ հայրապետութեան, և զծանիլն սրբալոյս մեռոնաւ յապրիլի 28. հաճութեամբ միաբանիցս և երկրականացս, և զկտակն հոգելոյս հայրապետին տեառն Ցովսէփայ վասն մերս փոխանորդութեան և զայլս այսպիսիս, ձեռամբ մահսարաբեր Կարապետ շնորհափայլ եպիսկոպոսին՝ ի մայիսի 9. գրեալ ծանուցաք անդրանիկ օրհնութեամբ մերով նորին գերազանցութեան Վասիլ Ստեփանիչ Թամարովին և քումդ սիրելութեան. յորոց ի հարկէ մինչ ցարդ գիտացեալ էք զայնս ամենայն։ Ցետ որոյ զպատուական դի վերոյիշեալ սրբազան հայրապետին ըստ կտակի իւրն՝ հանդերձ գոյիւքն բերել տուաք ի սուրբ Աթոռս, զդին ընդ սրբոց հայրապետացն հանգուցանել, և զկայսն ի պէտս սրբոյ տանս ի կիր առնուլ, զորոյ սրբասնեալ հոգին լուսաւո-

րեսցէ առ ի և ընդ երջանիկսն դասակարգեսցէ։ Եւ առ. ի ըստ ամենայնի՝ զկտակս հանգուցելոյն ի կատարումն հասուցանել, զկնի հաւատարմական սիրով ցուցիչ գտանելոյս բաղձանացն նորին, զհոգեծին որդի նոյն սրբազանին և մեր զԳրիգոր շնորհափայլ վարդապետն ի յունիսի 16 ձեռնադրեալ եպիսկոպոս, ունիմք ի մտի փութով վերադարձուցանել։ Դարձեալ և զայս գիտասցես, զի Դանիէլ վարդապետն ի Բայազիտ նըստեալ վ։սն մեր զբաղում բանս է գրեալ ի մեծդ Պօլիս և յայլ և այլ տեղիս, վասնորոյ ի ջրումն և յեղումն նորին ունայնագրութեանցն, միաբանք սրբոյ գահիս բազմակնիք մահսէրաւ ծանուցին զճշմարիտ բազմամբոխ քաղաքիդ բոլոր հասարակութեան. ձեռամբ հոգևոր որդւոյն մերոյ Ղազար խոհեմամիտ վարդապետին, որպէս գիտելոց ես լիովին ի նոյն մահսէրէն և մանաւանդ ի հարազատ որդւոյն մերմէ և շնորհընկալ գաւակէն սրբոյ Աթոռոյս Ղազար հանճարափայլ վարդապետէն. զոր յանձնեմ յատկապէս ի սէր քո ունիլ, և ըստ ամենայնի օգնական գտանիլ, և ջանալ փութով առ մեզ վերադարձուցանել։ Այլև՝ ի մայիսի 24 գրեալ, ուրախարար և աւետաւոր գիրդ ընկալեալ, մեծապէս ուրախ եղաք զամենայն հաւատարիմ գրուածոյդ, որով և գիտացաք զի յապրելի 16 գրեալ թղթոյ մերոյ հասանելն առ քեզ ի մայիսի 25 ընդ Գրիգոր վարդապետ հոգևոր որդւոյ մերոյ գրոյն։ Եւս և ի մայիսի 13. ի Քրիստոսազօր տէրութենէն զհրաման զայն ի վերայ տեղւոյդ մեր հաւատարիմ բարեկամ ամենախոհեմ դեսպանին, և զորին գերազանցութեան ցլայտնելն զայն ի դուռն, և ի դրանէն ի մայիսի 21-ին զֆէրման ելանելն ի վերայ պատրիարգին, և ամիրայիցն վասն ընտրութեան կաթուղիկոսին, և զԴանիէլեանց դիտաւորութիւնսն։ Եւ ապա ի յերգրումայ զթուղթ ընկալնուլն ձեր և ամիրայից վասն մերս ընտրութեան և հայրապետութեան, և օծման, և զցրումն խորհրդոց ի կողմն Դանիէլի հակողացն, և զնորին գերազանցս թեան զուրախ լինելն ի վերայ մերս յաջորդութեան, և իբրև զստոյգ և հարազատ բարեկամի խոստումն նորին մեզ զիւր ձեռնտուութիւն և օգնականութիւն յամենայն հարկաւոր սյահու՝ և զայլս այսպիսիս տեղեկացեալ ի դրոյ հարազատ որդւոյդ մերոյ՝ բազկատարած խնդրուածովք կանխեցաք առ Տէր վասն երկարութեան կենաց նորին կայսերական մեծութեան և զորին գերազանցութեան, և ձեր. և օրհնեցաք զարժանիսդ օրհնութեան՝ երկնաւոր և հոգևոր օրհնութեամբ, և փութացաք որպէս քեզ աղնիւ սիրելւոյդ, նոյնպէս և առ նորին գերազանցութիւն ըղթուղթ սիրոյ և շնորհակալութեան մատուցանել, և խնդրել, զի որպէս ընդ հոգելոյս հայրապետին ունեցեալ է զկապակցութիւն, նոյնպէս և ի մէնջ զայն աննուազելի արասցես, և յամենայն գործս և ի բանս մեր օգնական գտանիցի։ Արդ՝ և քեզ հարազատիդ մերոյ պատուիրեմ, մնալ ի դոյն հաստատուն սէր, յանխարդախ որդիութիւն և ի ճշմարիտ բարեկամութիւն, և յորդորող լինել զորին գերազանցութեան յաղագս ֆերմանին և բարաթին, որով միամտեալ և սրտադիւր եղեալ՝ ի գործս մեր պարապեսցուք։ Իսկ զայլ զորպիսութիւնսն մեր և կողմանցս՝ ի սիրելի որդւոյգ մերմէ Ղազար վարդապետէդ, և ի թղթոց հոգեծին որդւոյն մերոյ Գրիգոր նորապսակ եպիսկոպոսին ունիս լիովին գիտել։ Որև՝ շնորհք տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եղիցի ընդ քեզ, Ամէն։

Գրեցաւ ի 1801, յունիսի 2, ի դերահրաշ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ԼԴ. Կոնդակ ի Շապին Ղարահիսար ի վերայ հասարակութեան. յաղագս ընտրութեան եւ օծման տեառն Դաւթի ի հայրապետութիւն։

Յորմէ ժամանեցէ թուղթ իսկական սիրոյ փրկչաւանդ ողջունի, և Աստուածային օրհնութեան, հանդերձ զօրացուցիչ շնորհիւ սուրբ Իջման տեղւոյս Քրիստոսի, և հրաշագործ զօրութեամբ սրբոց մասանց և սրբութեանց աստանօր եղելոց, ի վերայ սիրելի և հոգևոր որդւոցդ մերոյ, և լուսածնող զաւակացդ սրբոյ Աթոռոյս, որք կայք և բնակիք ի տիրահաստատ քաղաքդ ի Շապին Ղարահիսար. սրբասէր քահանայից, բարեպաշտ իշխանաց,

հարազատ զանձապետաց և երիցփոխաց, քրտնաջան վաճառականաց, բազմաշխատ արհեստաւորաց, արդարավաստակ երկրագործաց, երկիւղազարդ տանտիկնանց և այլ համայն լուսաւորչակրօն օրհնեալ ժողովրդականացդ առհասարակ, մեծաց և փոքունց, արանց և կանանց. խնդալ ի տէր։ Շնորհք։

Եւ ընդ չնորհապարգև օրհնութեան նամակիս՝ ծանուցումն եղիցի սիրեցեալ և հարազատ որդւոցդ մերոց ի տէր։ Զի յանցեալ ամին՝ որ ինչ անցք անցին ի մեծն Պօլիս յաղագս ընտրութեան կաթուղիկոսի, յայտնիք են ձեզ, զորոյ ոչ երկրորդեմք աստէն։ Յետ որոյ անուն հայրապետութեան եղաւ ի վերայ հիւսիսային կողմանց Առաջնորդ տեառն Յովսէփայ ողբացեալ արքեպիսկոպոսին։ Եւ մինչ արքունական հրովարտակօք գայր դէպ ուղիղ ի սուրբ Աթոռս, ի Թիֆլիզ քաղաքի հիւանդացեալ, փոխեցաւ առ Տէր. զորոյ զհոգին լուսաւորեսցէ Տէր և սիրելեացդ զերկարութիւն կենաց տացէ։ Ապա՝ միաբանութեամբ զմահսէր առաքեցաք ի Թօխաթ առ Դանիէլ արքեպիսկոպոսն գալ ի կաթուղիկոսութիւն։ Եւ մինչ նա ես՝ յամեցաւ, և ի պայմանադրեալ ժամուն ոչ կարաց հասանել առ մեզ, յայնժամ ի Թիֆլիզու բնակչացն բազմակնիք մահսէր եկն առ միաբանութիւնս մեր. որովք ծանուցեալ էին զմահ վերոյիշեալ հանգուցելոյն, և զնորին կտակն վասն մերս փոխանորդութեան. ընդ որ հաճեալ՝ միաբանից սրբոյ դահիս՝ և իշխօղին տեղւոյս հանդերձ երկրականօք, զմերս անարժանութիւն յառաջ կոչեցին։ Որև՝ ի յապրիլի ԺԸ ընկալաք զօծումն սուրբ ի գլուխ մեր, և կացուցաք հայրապետ ի վերայ տանս հայոց։ Եւ զայսպիսի իրակութիւնսն գրեալ ծանուցաք մերազնեայ իշխանացն և ժողովրդոց մեծի մայրաքաղաքին Կոստանդնուպօլսոյ ընդ բազմակնիք մահսէրի բոլոր միաբանից։ Նոյնպէս և ձեզ սիրելեացդ իմոց և հարազատ որդւոց գրել. և այսու անդրանիկ օրհնութեան նամակաւ մերով ուրախ առնել կամեցաք։ Զի և դուք յԱստուծոյ համարեալ զայս գործ, և ի նորին նախասահմանութենէ տնօրինեալ, փառս մատուսջի՛ք նորին անքննին կամացն, և ի հարազատ որդիութիւն և ի ճշմարիտ սէր փութասջիք, և յամենայնի զձերդ օգտարար և չահաւէտ հաւատարմութիւն ցուցջիք և անաղօտ պահեսջի՛ք զայն ի սրբոյ Աթոռոյս և ի մէնջ։ Դարձեալ և զայս գիտասջիք։ Զի՝ վասն հարկաւոր գործոց զհոգեոր որդին մեր զՂազար խոհեմամիտ վարդապետն առաքեցաք ի մեծն Պօլիս. ուստի ի գալն նորա և ի հանդիպելն յայդր ձեզ՝ ըստ ամենայնի զմարդասիրութիւն ցուցջիք և օգնական լինջիք։ Յորմէ զմերս որպիսութիւն և սրբոյ Աթոռոյս և կողմանցս տեղեկանալոց էք լիապէս։ Այսպէս առնելով ձեր՝ ընկալջիք զշնորհս ի սրբոյ Աթոռոյս և զօրհնութիւնս յԱստուծոյ և ի մէնջ, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾ թուոջն, ի յուլիսի Բ. ի սուրբ Էջմիածին։

Եւ որդիական սիրով պատուէրս մեր կատարելով և բարեպաշտութեան ձերում հաստատուն կալով, ընկալջի՛ք զմեծագոյն և զբազմապատիկ վարձս ի տեառնէ Ամենակալի, զգերազօր շնորհս ի սրբոյ Աթոռոյս և զհայրական օրհնութիւնս ի մէնջ։

ԼԵ. *Թուղթ առ մահտեսի Մինաս ամիրայի որդի պարոն Աղայեկն ի Կարին։*

Յորմէ ժամանեսցի թուղթ սիրոյ, ողջունի և օրհնութեան ի վերայ հոգեոր որդւոյդ մերոյ և լուսածնունդ զաւակիդ սրբոյ Աթոռոյս, Քրիստոսիւ զօրացեալ նորին Ամենազօր Աջովն պահպանեցեալ ազնուամիտ և բարեբարոյ պարոն Ազայեկիդ։ Եւ որոց ընդ քեզ են ի Տէր խնդալ։

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ՝ ծանուցումն եղիցի հարազատ զաւակիդ սրբոյ Աթոռոյս։ Զի զամենայն որպիսութիւնսն մեր, այսինքն հաճութեամբ միաբանից և երկրականացս զկոչիլս յայս Աթոռ հայրապետական, մինչ ցարդ ի հարկէ լուեալ ես և գիտացեալ. զորմէ ոչ երկրորդեմք։ Զարդիս՝ որովհետև ի հոգեսէր ուխտաւորացն լուաք զխաղաղութեամբ գալդ ի քաղաքդ Էրզրում, վասն որոյ հարկեալ ի հայրական սիրոյ՝ զայս օրհնութեան և յորդորանաց թուղթ գրեցաք առ հոգեոր որդիդ մեր, որով և հրաւիրեմք զբարեպաշտութիւն ձեր գալ ի չնորհատու ծը-

նօղ մայրս քոյ լուխա և յերկրպագութիւն հրաշագործ սրբութեանցն, որք ի սմա, և վայելել աստապէս դհոգևորական պարգեւ լուսոյ ծնողիս քոյ, և զօրացուցիչ օրհնութիւնս հօրն մերոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին և մեր, ուստի՝ եթէ կարելի իցէ և հնար, դիմել առ սուրբ Աթոռս և առ հայրութիւն մեր ի հոգևոր ուրախակցութիւն, պատուիրեմք ոչ զանց առնել, ապա թէ ոչ ի կամս ձեր լիցի ապաստան։ Այլև՝ որովհետև Դանիէլ վարդապետի արեղայն ի Բալաղիառւ վասն մեր զայլ և այլ սնոտի բանս էր դրեալ յայլ և այլ տեղիս, վասնորոյ ի ջնջումն և ի ցրումն նորին ունայնագրութեանցն՝ միարանք սրբոյ գահիս՝ բաղմակնիք մահսէբաւ զիրին զստուգութիւն հարկ համարեալ ծանուցին հասարակութեան մեծի մայրաքաղաքին, և զայն ձեռամբ հոգևոր որդւոյն մերոյ և հաւատարիմ զաւակին սրբոյ գահիս՝ Ղազար խոհեմափայլ վարդապետին յղեցաք։ Ընդ որ՝ և թուղթս սիրոյ և օրհնութեան գրեցի ոմանց դերապատիւ անձանց, և մանաւանդ հաւատարիմ բարեկամին մերոյ մահտեսի Մինաս ամիրային, յորում և զբարեբողբոջ զաւակդ նորին և մեր ողջունեցաք կարծելով զքեզ անդ լինել։ Ապա՝ մինչ ի մեծահռւառ ուխտաւորացն լուաք զքոյ յալղը գալն, զայս օրհնութեան և սիրոյ նամակ գրել և առաքել փութացաք։ Այսպէս գիտացեալ քոյ և զորդիական մտերմութիւնդ ի սրբոյ Աթոռոյս և ի մ;նջ աննուաղելի արարեալ, լեր միշտ զօրացեալ ի շնորհս տեառն, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾ թուոջս և ի յուլիսի Բ. ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ԼԶ. *Թուղթ ի Տէր Դաւթէ առ Իվան Պետրովիչ Լազրովն ի Բամբակածոր:*

Ցորմէ սիրով բաղմաւ, փրկչաւանդ ողջունիւ, և Աստուածային օրհնութեամբ ծանուցումն եղիցի սիրելւոյդ մերում և հարազատ բարեկամիդ սրբոյ Աթոռոյս՝ վեհադնեա քաջայաղթ զօրապետիդ։ Զի՝ զկնի գրեցման առաջին գրոյն, ապա ընկալաք զձերդ թուղթ ի յուլիսի 4. գրեցեալ ի Բամբակ առ Ցըքի գետով. որով գիտացեալ զձերդ պատուական առողջութիւն, և խաղալն անպարտելի հզօր զօրօք ի Թիֆլիզու յալղը, ուրախութեամբ օրհնեցաք զՔրիստոսասէր զօրապետդ հանդերձ ընդ ձեօք եղեալ անյաղթելի զօրօքդ. և խնդրեցաք յԱստուծոյ Ամենակալէ, որ է՝ Թագաւոր Թագաւորաց. զի զթագաւորութիւն մեծին ի Կաճառս օծելոց Աստուածապսակեալ Օգոստափառ Կայսերն յաւիտեանս ժամանակաց զօրաւորս և ահարկու արասցէ։ Եւ ձեզ ամենահպատակ կառավարչիդ՝ զերկարութիւն կենաց շնորհեսցէ։ Եւ զառաջիկայ զործոյդ այդմիկ՝ զխաղաղութեամբ և սիրով կատարումն տացէ, ի շինութիւն երկրի և ազգի։ Իսկ յաղագս թղթոցն մերոց առ ձեզ ոչ ժամանելոյն, և մեք կամք ի զարմացման, ունիք ուրեմն զտեղի ներողութեան, մինչ ցարդ զթուղթ սիրոյ չգրելոյն ձեր առ մեզ վասն վերոյիշեալ պատճառին։ Նաև՝ յաղագս հոգեծին որդւոյս մերոյ Գրիգոր Նորապսակ Արքեպիսկոպոսին՝ զորինչ և գրեալն էիք, ծանեաք զխնդիրս ձեր։ Ուստի փութացարուք զնա առ ձեզ, զնալ այտի ի կայսերապերճ երկիրն պանծալի ազգացդ՝ ի յառաջնորդութիւն մերազնեայ ժողովրդոցն։ Եւս՝ ահա ի նշան սիրոյ և հայրական օրհնութեան մերոյ, առաքեցաք առ ձերդ պատուականութիւն զհոգևոր ընծայս ինչ զուտելիք և զըմպելիք և զայլ իրս, իբրու զշնորհ ի սրբոյ Աթոռոյս՝ ձեռամբ հաւատարիմ սպասաւորին մերոյ պարոն...։ Զորս խնդրեմ սիրով ընկալնուլ, և ի բարեաւ վայելելդ՝ ըզմերս նուաստութիւն ի յիշումն ածել։ Ողջ լեր ի տէր կրկնակի կենօք։ ամէն։

Գրեցաւ ի 1801 յուլիսի... Ի սուրբ Էջմիածին։

ԼԷ. *Թուղթ ի Բայազիտ առ Գէորգ աղային, որ է ի վերայ գործոյ փաշային։*

Ցորմէ ժամանեսցէ թուղթ սիրոյ, օրհնութեան և քրիստոսական ողջունի, ի վերայ հաւատարիմ որդւոյդ սրբոյ Աթոռոյս և մեր՝ բարեպաշտ և ճոխապատիւ Գէորգ Աղայիդ։ Եւ տիրապահ տան քոյ և համայն քոյայնոցն ի տէր խնդալ։

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ՝ գիտութիւն լիցի քումդ սիրելութեան։ Զի զբաղում ջերմեռանդութեամբ և լիագոյն հարազատ որդիութեամբ գրեցեալ թուղթդ ընկալաք մեք մեծապէս շնորհակալութեամբ, և օրհնեցաք առաջի Աստուածաէջ սուրբ տաճարիս, զտունկդ օրհնութեան, եղիցիս օրհնեալ։ Արդ՝ ոչ միայն այժմ ի ձեռն որդիական գըրոյդ ծանեաք զճշմարիտ ոէրդ, որ առ մեզ, և առ շնորհատու մայրս քոյ, այլ յառաջ քան զայս գիտացեալ եմք և վերահասու եղեալ ամենայն ցուցեալ բարեյաւութեանց քոց մեզ և սրբոյ Աթոռոյս. քանզի՝ սիրեցեալ որդիքն մեր Ստեփաննոս արքեպիսկոպոսն և Յովհաննէս շնորհափայլ վարդապետն լիովին պատմեցին մեզ դքոյդ առ նորա ցուցեալ մարդասիրութիւն։ Նոյնպէս և Մարսվանայ առաջնորդ Գէորգ վարդապետն զանազան շնորհակալութեամբ՝ ծանոյց զքէն և զբարեբարութեանց քոց՝ զորս արարեալ էիր ինքեան և օրհնեալ ուխտաւորացն սրբոյ Աթոռոյս։ Ուստի՝ զայնս ամենայն առ մեզ վերաբերեալ, այսու օրհնութեան նամակաւ՝ դոհունակ եմք վասն ամենայնի արարեալ և ցուցեալ մարդասիրութեանց, բարեյաւութեանց և ջատագովութեանց քոց, զփոխարէնն ընկալցիս վարձս բարեաց ի հասարակաց վարձատրողէն. զշնորհս և զօրհնութիւնս յԱստուածաէջ Աթոռոյս և ի մէնջ, և եղիցիս ծառ պտղալիր անկեալ միշտ ի գնացս ջուրց, և զօրացեալ Ամենազօր Աջով բարձրելոյն։ Նոյնպէս և զաբարսն Նաւասարդեան Հայրապետին ծանեաք. նա յիւրում ժամանակին ուղղեալ լինելոց է, յանհոգս կաց առ այն, ըստ արարմանցն և ի տեառնէ ունի ընկալնուլ զհատուցումն։ Ուրեմն պատուիրեմ սիրելւոյդ իմոյ. զի զայդ առատ սգոյն սէրդ և զճշմարիտ որդիութիւնդ ընդ մեծի մտերմութեանցդ հանապազ անադօտ և աննուաղելի արասցես ի լուսատու ծնողէս քումմէ և ի մէնջ։ Որովք արժանաւոր գտանիցես և ես բազմազոյն և մեծամեծ սիրոյ և օրհնութեանց։ Այսպէս դիտացեալ քոյ՝ ողջ լեր ի տէր Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾ թուոջս և ի յուլիսի...ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ԼԸ. Վկայական Ղզլարու հարազատ ծնեացեալ Տէր Սահակին։

Յորմէ սիրով և օրհնութեամբ ծանիր հոգևոր որդի մեր և հարազատ զաւակ սրբոյ Աթոռոյս Տէր Սահակ խոհեմափայլ քահանայ։ Զի՝ դհաւատարմութիւնդ բազմամեայ սպասաւորութեամբ, որ առ հանգուցեալ Յովսէփ կաթուղիկոսն, հոգեծին որդի նորին և մեր Գրիգոր նորապսակ եպիսկոպոսն պատմեաց մեզ. որպէս մեզէն իսկ եղաք ականատես քոյին հարազատութեանդ, ուստի՝ ի նշան սիրոյ և ի վարձ աշխատանացդ ետուք քեզ զայս օրհնութեան նամակ. որով և ես առաւել արիացիս ի քեղապատկան գործս. որ վերաբերի առ սուրբ Աթոռս և առ մեզ։ Որպէս զի՝ մշտապէս արժանաւոր գտանիցես շնորհաց սրբոյ Աթոռոյս և մերս հայրական օրհնութեան։

Գրեցաւ ի 1801 ի յուլիսի 10. ի սուրբ Էջմիածին։

ԼԹ. Ղրիմու, եւ ի Գրիգորիուպօլ եւ ի շրջակայս դոցին։

Յորս կառուցեալ սրբոց եկեղեցեաց, և եկեղեցականաց, շնորհազարդ վարդապետաց, սրբանուէր քահանայից, ուսումնասէր սարկաւագաց, և համօրէն կղերիկոսաց։ Ազնուամիտ և ճոխապատիւ իշխանաց, իրաւարար դատաւորաց, հանճարաչատ գործակալաց, և հաւատարիմ զանձապետաց, իմաստնախոհ վաճառականաց, վայելչագործ արուեստաւորաց, քաջավաստակ երկրագործաց, և այլ ամենայն ժողովրդականացդ խմբից՝ մեծաց և փոքունց, արանց և կանանց, ի տէր խնդալ։

Եւ ընդ օրհնութեան սիրառաք նամակիս՝ գիտութիւն լիցի սիրելեացդ մերոց ի Տէր, և լուսածնունդ զաւակացդ մօրս հաւատոյ սրբոյ Էջմիածնի. և տէրունի ժողովրդոցն սորին։ Յայտ իսկ է ձեզ բազմամեայ հոգևոր վերատեսչութիւն տեառն Յովսեփայ սրբազան հայրապետին ի վերայ ձեր, որ ի յերանելւոյն Սիմէօնէ սրբազան կաթուղիկոսէ առաքեցեալ յառաջնորդութիւն և ի նուիրակութիւն ձեզ, այն ինչ ի լրման ժա-

մանակին ոչ կարաց դառնալ վասն կարեւոր զբաղմանց նորադէպ գործոց, և ձեռնարկութեանց, զկնի վախճանի տեառն Սիմէօնի սրբազան կաթուղիկոսին, յաջորդն նորա տէր Ղուկաս սրբազան կաթուղիկոսն ևս երկիցս նորոգեաց զգործ նորին տեառն Յովսեփայ ի վիճակի յայդմիկ։ Եւ իբրև յոյժ ծանրացաւ բազմազան հոգօք վասն բազմանալոյ օրհնեալ ժողովրդոցդ յայդր մինչև ոչ ժամանել իւրովի վճարելոյ զգործն նուիրակութեան, խնդրեաց զայլ ոք նուիրակ՝ և նա առաքեաց զսիրելին մեր զԵփրեմ արհիեպիսկոպոսն։ Ապա ի փոխիլն առ Աստուած տեառն Ղուկաս սրբազան կաթուղիկոսին, և ի յանցանելն զանազան բանից և իրաց, մինչ Յովսէփ սրբազան հայրապետն ընտրեալ ի կաթուղիկոս, և ելեալ ի վիճակէ այտի դայր առ սուրբ Աթոռս, հասեալ ի Թիֆլիզ քաղաք ըստ անդարձ վճռոյ Արարչին անդէն վճարեաց զկեանս իւր. որոյ զհոգին Տէր լուսաւորեսցէ, և զձեզ երկար կենօք և խաղաղութեամբ պահեսցէ, բայց երանելին կտակս աւանդեալ էր՝ զմերս նուաստութիւն ի յաջորդ իւրն կաթուղիկոս կացուցանել՝ և զմարմինն բերել աստ ամփոփել ընդ նմին և զկայսն ի սուրբ Աթոռս հասուցանել։ Եւ յաղագս հոգևոր որդւոյն իւրոյ Գրիգոր վարդապետին ևս հաստատեալ էր յառաջմէ իսկ՝ կարգել յաջորդ ինքեան ի մէջ ձեր. որպէս և ձեզ ասացեալ է բերան առ բերան։ Ուստի՝ ըստ կտակարարութեան նորա ժողովուրդք երկրիս և միաբանք սրբոյ Աթոռոյս յատկացուցին զմեզ յայս աստիճան՝ օծին ի կաթուղիկոս սրբոյ Աթոռոյս և ազգիս հայոց յԱպրիլի ԻԸ։ Զկնի որոյ՝ առ ի կատարել զՆացեալ կտակսն լուսահոգւոյն, զպատուական մարմին նորա և զկայսն ձեռամբ հոգևոր որդւոյն նորա և մեր՝ Գրիգոր շնորհապերճ վարդապետին բերել տուաք ի Թիֆլիզու։ Զմարմինն ամփոփեցաք ի շիրիմս երջանիկ սրբազան հայրապետացն ի դաւթի Գայիանեայ վանաց, և զգոյսն և զեկեղեցական սպասուն ընկալաք ի վայելս լուսակազմ սըրբոյ Տաճարիս, և ի պէտս միաբանից՝ և այլ ծախուց տանս։ Որոց աղագաւ և շնորհակալեմք զսիրելեացդ, զորս Տէր օրհնեսցէ, և զօրացուսցէ, շէն և պայծառս պահեսցէ, ընկալցի զտուրս և զյիշատակս ձեր ի հաճոյս իւր, և զփոխարէնն բազմապատկապէս հատուսցէ ձեզ, և զհոգիս ննջեցելոցն ձերոց լուսաւորեսցէ։ Իսկ զհոգևոր որդին հանգուցեալ հայրապետին և մեր՝ զԳրիգոր յոգնահանճար վարդապետն որ ի նմանէ սահմանեցեալ էր յաջորդ գոլ ինքեան ի վիճակիդ, ըստ այնմ զի ի գնալն իմ ի Կոստանդնուպոլիս՝ թուղթ ընկալեալ ի նմանէ՝ տեղեկացայ որ հաստատուն մտադրեալ էր՝ թէ մինչ գալցէ ի սուրբ Աթոռս՝ զսա եպիսկոպոս ձեռնադրեալ դարձուսցէ փոխանակ իւր. նա և ի կայսերական մեծութենէն ևս նշանեցեալ է խոստմամբ. և մեզ հարկ էր ըստ դիտման նոցին կատարումն տալ։ Ի յունիսի ԺԶ, յաւուր կիւրակէին ձեռնադրեցաք եպիսկոպոս, և առաքելական կարգիւ ճոխացուցաք, արկեալ զուսովքն զոսկեթել եմիփորոն խաչանման, և սրբալոյս միւռոնաւ օծեալ զճակատն և զբոյթըն, և եդաք զպատուական թագ ի գլուխն, և զազնիւ մատանի ի մատն, և ետուք դարձեալ զաւետարանն փրկչական ի գիրկն և զգաւազանն իշխանական ի ձեռն։ Եւ այսպիսի փառաւորութեամբ դարձուցաք ի Տիրախնամ երկիրդ՝ առ ի հովուել զբանաւոր հօտսըդ Քրիստոսի Աստուածայլին օրինօք, և աւանդութեամբք սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեաց, ըստ կանոնաց Հարցն սրբոց։ Իսկ արդ՝ որպէս հրամայէ սրբազան Առաքեալն Պօղոս՝ ունկնդիր լերուք առաջնորդաց ձերոց՝ և հպատակ կացէք նոցա, և այլն, պարտ է ձեզ որդիական խոնարհութեամբ հնազանդ լինել առաջնորդիդ ձերում շնորհընկալ զաւակիդ սրբոյ Աթոռոյս և սիրելի որդւոյ մերում Գրիգոր նորափայլ եպիսկոպոսիդ, և գտանիլ լսօղք և անսացօղք ամենայն Աստուածահաճոյ հոգեշահ հրամանաց նորին, և մեծայարգ ընդունել և սիրել և պատուել ըստ արժանւոյ առաքելական աստիճանին, և հանգուցանել զսիրտ նորա. զի խնդութեամբ հովուեսցէ զձեզ, և մի յոգւոց հանելով։ Ապաքէն մի ոք ի ձէնջ յանիրաւս հակառակ ելցէ դմա ի յանդիմանելն իւր ողջամիտ վարդապետութեամբ զստահակսն, և ի կշտամբելն զանհնազանդսն օրինացն և պատուիրանացն Աստուածայնոց։ Քանզի՝ ունի դա զհրաման և զիշխանութիւն ի հոգւոյն սրբոյ և ի հայրապետական իշխանութենէս մերմէ կատարել զգործ և ըզպաշտօն հոգևոր առաջնորդութեան և եպիս-

կոպոսութեան ի վիճակսդ իւր, ի լորս զկապելիսն կապել, և զարձակելիսն արձակել և մանաւանդ ըստ Առաքելոյն բանի զթիւրեալսն յօրինացն Աստուծոյ սաստել՝ յանդիմանել, և դարձեալ մխիթարել մինչ վերադարձցին ի շաւիղս ուղղութեան և ճշմարտութեան։ Եւ ոչ ոք առանց դորին գիտութեան ձեռնամխեսցէ ի գործս հոգևորս օրինաց և եկեղեցւոյ՝ թէ եկեղեցականաց ձեռնադրութեան, թէ պսակաց հրամանատրութեան, և թէ այլ իրակութեանց կանոնաւորաց, ըստ այնմ զի հոգեորական կառավարութիւն ձեր զմն յանձնեցան յԱստուծոյ և ի մէնջ։ Եւ զի կրելոց է դա վասն ձեր զքրտնաջան աշխատանս և ըղտքնութիւնս ըստ հոգևորին, զուք օրհնեալ ժողովուրդքդ ես պարտիք զկանոնաւորեալ հասոյթս առաջնորդականս զուարթ երեսօք և յօժարամտութեամբ հասուցանել դմա, որպէս և սովորութիւն է յայլր և յայլ ամենայն տեղիս, յորոց հասութից, մի ոք իշխեսցէ հատանել, կամ արգելուլ։ Այլ ընդունելով նորա զարդիւնս ձեր լցուսցէ զպէտս իւր մարմնականս, և որքան ինչ պարտն է հասուցանել սրբոյ Աթոռոյս, հասուսցէ հաւատարմութեամբ։ Որպէս և պայմանեցաք ընդ ինքեան, ի չորիս ամս միանգամ գալ ի սուրբ Աթոռս առ գահակալ սորին, և ծանուցանել զորպիսութիւն հոգևոր կառավարութեան օրհնեալ ժողովրդոցդ ըստ նախնեացն սահմանի, և զհասիւս մտից և ելիցն ցուցանել, և զսրբոյ Աթոռոյս հասանելին հասուցանել, իբրև յատկապէս տան հողւոց ձերոց, ըստ որում տէրունի ժողովուրդք էք սմա, և սա է ձեր սեպհական առաջնորդարան։ Եւ յետ այնորիկ վերադարձցի առ ձեզ հանդերձ միամտութեան թղթով յաղագս արդեանցն ձերոց, որոյ ի փոխարէն պարգեսցի ձեզ առ ի վերուստ բարեացն առատութիւն։ Արդ՝ ուրեմն՝ ընդունելութեամբ այսոցիկ պատուիրանաց՝ ի մեծագոյն սէր ունիջիք զառատահանճար առաջնորդ ձեր և զհոգևոր որդին մեր զՏէր Գրիգոր շնորհապերճ արքեպիսկոպոսդ, և ըստ վայելման աստիճանին պատուելով մխիթարեսջիք. զի դիւրութեամբ սրտի հովուեսցէ ձեզ. որով կացջիք յուղղափառ դաւանութեան սրբոյ եկեղեցւոյ Հայաստանեայց, և ի բարի վարս Աստուածահաճոյս, և ապահովս արասջիք զփրկութիւն հոգւոց ձերոց։ Եւ լինիջիք օրհնեալք ի Տէր, և յանձնեալք ի բարեգթութիւն նորին։ Ամէն։

Գրեցաւ յԱմի փրկչին 1801, և ի յուլիսի 11, ի յերկնահանգէտ Աթոռս սուրբ Էջմիածին։

Խ. Թուղթ ի Կարին առ Հանի Բաբային փեսայ Յովհաննէս աղային։

Յորմէ ժամանեսցէ թուղթ հայրական սիրոյ, փրկչաւանդ ողջունի, և Աստուածային օրհնութեան, հանդերձ հոգեզուարճ շնորհիւ սրբոյ Իջման տեղւոյս Քրիստոսի, ի վերայ սիրելի և հոգևոր որդոյդ մերոյ, հարազատ և լուսածնունդ զաւակիդ սրբոյ Աթոռոյս՝ բարեպաշտօն օժտաջան և բարեմիտ Յովհաննէս աղայիդ։ Եւ տիրախնամ տան քոյ և բնաւից քոյայնոցն, ընտանեաց և ազգականաց, խնդալ ի տէր բազում բարութեամբ։

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ, գիտութիւն լիցի քումդ սիրելութեան։ Զի ի յուլիսի 9 գրեցեալ ուրախական գիրդ շնորհաւորութեան և աւետեաց, ի յուլիսի 19. ընդ Գրիգոր շնորհափայլ եպիսկոպոսին ընկալաք մեք. և ընթերցմամբ որոյ՝ լցաք անճառ խնդութեամբ, նախ ի վերայ բարեյաջող առողջութեան ձերոյ, և ապա՝ ի վերայ անկեղծ և ճշմարիտ սիրոյդ, հաստատուն բարեկամութեանդ և ջերմեռանդ որդիութեանդ, զորս ունիս առ լուսատու ծնօղ մայրս քոյ և առ մեզ։ Եւս՝ ըստ օրինի, հարազատ և մտերիմ բարեկամի և սիրելւոյ՝ զշնորհաւորական բանս, զորս գրեալ էիր, ընկալաք յօժարամիտ սրտիւ ի մխիթարութիւն մեզ և զփոխարէնն՝ առաջի Աստուածաէջ տաճարիս օրհնեցաք զարժանիդ օրհնութեան և սիրոյ։ Եւ մեծապէս շնորհակալեցաք զամենից շահաւէտ աշխատանաց քոց և զորդիութեանցդ։ Դարձեալ ընդ գրոյդ՝ ի Պօլսոյ եկեալ պարոն Գէորգ Աղայեկեանի գիրն և այլում ես ընկալաք. զորոյ զպատասխանիսն գրեալ նոցա, յղեցաք ի ձեռս սիրելւոյդ մերոյ, զորս պարտիս փութով առանց յետաձգութեան հաւատարիմ թաթարաւ ի մեծն Պօլիս առ մեր հաւատարիմ բարեկամ պարոն Գէորգ Աղայեկօմն հասու-

ցանել օր մի յառաջ, որք յոյժ կարեւորք են և պիտանիք և զկնի առնելոյդ ըստ այսմ և կատարելոյդ զպատուէրս մեր, վաղվաղակի դրովդ մեզ ազդեսցես. զի միամիտ լիցուք և կրկին շնորհակալութեամբ զօրհնութիւն մեր մատուսցուք յարգելի և արժանապատիւ սիրելւոյդ։

Իսկ վասն Ղազար վարդապետի գնալոյն ի Պօլիս և կամ մնալոյն, մեք բոլորովիմբ ի կամս հաճի Բաբա ազնիւ սիրելւոյն մերոյ եմք յանձնեալ զայն, կամի զՂազար վարդապետն առաքել, առաքեսցէ, և եթէ ոչ կամի զնա առաքելն, այլ զգրեանսն, զայն ես ինքն գիտէ, որպէս և արասցէ ընդունելիք են մեզ և հաճոյ ոգւոյ մերում։ Եւս՝ յառաջադոյն ընդ Մարտիրոսին քեզ ազնիւ բարեկամիդ մերոյ զթուղթ անդրանիկ օրհնութեան և սիրոյ դրեալ էաք, յուսամ ընկալեալ իցես, բայց ի թղթիդ ոչինչ նշմարանք երեւին, մի գուցէ չիցէ առ սիրելիդ մեր հասեալ։ Վերջապէս պատուիրեմ մշտահարազատ սիրելւոյդ մերոյ, զի յամենայն ժամ ի դոյն օգտախոհ և բարեջան որդիութեան կալով, անվերջանալի, աննուազելի և անպակասելի առնիցես զայն ի մէնջ, և որպիսածանոյց թղթովդ սրտադիւր արասցես զսիրտ մեր, և որչափ թուղթք աստի ի մէնջ առ ձեզ առաքին յայլ և այլ տեղիս հասանելիք, և կամ յայլուստ զան ժողովին յայդր, առ մեզ հասանելիք, ճշմարիտ որդիութեամբդ զայնոսիկ ի ժամանակի առանց դանդաղանաց հոգասցես, զմերն առ մեզ յղելով, և զառաքելիսն հաւատարմաւ առաքելով։ Եւ որչափ դրամք վասն այսպիսեաց, որք խարջեալ լինին ի զաւթարի ուրոյն նշանագրեսցես, ի պիտանութիւն յապագայս։ Այսպէս առնելով քոյ ողջ լեր ի տէր, և զօրացեալ գերազօր շնորհիւ նորին, Ամէն։

Գրեցաւ, ի 1801, և յուլիսի 28, ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ԽԱ. *Թուղթ ի յԱմիր առ հարազատ զանձապետ մահտեսի Մարտիրոս աղայն մահտեսի Յօհանեան յաղագս հայրապետութեան տեառն Դաւթի, եւ յորդորումն, զի զործ զանձապահութեան հաստատուն կացցէ, եւ ի հաւատարմութեանց մի վերջասցի:*

Յորմէ ժամանեսցէ թուղթ ճշմարիտ սիրոյ, Յիսուսաւանդ ողջունի, և երկնածիր օրհնութեան, հանդերձ շնորհիւ սրբոյ Իջմանեղւոյս Քրիստոսի, և սքանչելարար զօրութեամբք սրբութեանցն և սուրբ մասանցն աստանօր եղելոց, ի վերայ ընտիր և հարազատ բարեկամիդ մերոյ, և նախածանօթ սիրելւոյդ, և լուսածնունդ զաւակիդ սրբոյ Աթոռոյս Աստուածասէր և բարեպաշտօն՝ ճոխապատիւ ծերունի մահտեսի Մարտիրոս աղայ բազմաշխատ զանձապետիդ։ Եւ Աստուածապահ տան քոյ և բնաւից քոյանոցն ընտանեաց, ազգականաց և բարեկամաց, ի տէր խնդալ։

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ, գիտութիւն լիցի քումդ Աստուածպաշտութեան։ Զի ամենայն անցք և գործք, որք անցին և գործեցան զկնի հոգելոյս հայրապետին մերոյ և յաւիտենական փառաց արժանաւոր տեառն Ղուկասու, յաղագս նորոդ ընտրութեան հայրապետիդ, յայտնիք են ձեզ և ի հարկէ ղիտացեալ էք զայնս. զորոց ոչ երկրորդեմք։ Անուն հայրապետութեան հուսկ յետոյ եղաւ ի վերայ հիւսիսային կողմանց Առաջնորդ տեառն Յովսեփայ արքեպիսկոպոսին, որոյ եկեալ ի կողմանցն մինչև ի Թիֆլիս քաղաք, հիւանդացաւ, և յետ ութ աւուրց՝ փոխեցաւ առ Տէր, զորոյ զհոգին լուսաւորեսցէ Տէր և սիրելւոյդ զերկար կեանս շնորհեսցէ։ Եւ մինչ լուաք, միաբանութեամբ զթուղթ հրաւիրանաց գրեցաք ի Թօխաթ առ Գանիէլ արքեպիսկոպոսն զալ փութով ի հայրապետութիւն Տանս Հայոց։ Ի յամիլն որոյ՝ և ի չկարել ժամանելն առ մեզ ի պայմանադրեալ պահուն, ընկալաք զթուղթ և զրազմակնիք մահսէր ի Թիֆլիզու բնակչացն ձեռամբ նշանաւոր արանց, որք և ծանուցեալ էին նախ զմահ տեառն Յովսէփայ անուանակոչեալ կաթուղիկոսին, և ապա զնորին արարեցեալ կտակն, յաղագս մերս փոխանորդութեան ի տեղի ինքեան։ Ընդ այս գրութիւն և խորհուրդ նոցա հաւանեալ միաբանութեան մերի զահիս ընդ մերազնեալ ժողովրդոցն երկրիս, զմերս նուաստութիւն յառաջ կոչեալ՝ ի յապ-

րիլի ԻԸ օծին հայրապետ ի վերայ Տանս Հայոց, և զայսպիսի զեղելութիւնսն բազմակնիք մահսէրաւ ի մեծն Պօլիս առ. բազմախումբ ժողովուրդսն ի մայիսի Ժ, գրեալ ծանուցին, զոր առաքեցաք ձեռամբ Կարապետ արհիապանծ եպիսկոպոսին. և որպէս լսեմք և ի Պօլսոյ գրեն մեզ, զֆերմանն և զբէրաթն յանուն մեր ես հանեալք են և մահսարատարին մերոյ սպասեն։ Արդ՝ հարկ էր մեզ թէպէտ, նախ քան զամենայն, քեզ ընիկ և վաղեմնի սիրելւոյդ մերոյ գրել զայս և անդրանիկ օրհնութեան նամակաւ մերով ուրախ առնել, սակայն զոլով զբաղեալ ի բազում հոգս ոչ կարացաք։ Ո՞ւր մնաց զի ճանապարհքն ես փակ էին և նրթենկք սակաւք։ Բայց զարդիս՝ մինչ գտաք զրարեպաահ ժամ, փոյթ յանձին կալեալ, զայս սիրոյ և անդրանիկ օրհնութեան նամակ քեզ հարազատիդ մերոյ գրել և զշնորհ սուրբ հոգւոյն ի հոգիս և ի մարմինս օղաաջան և բազմավաստակ սիրելւոյդ առաասպէս բաշխել յօժարեցաք։ Որով և պատուիրեմ, որպէս մինչ ցարդ լեալ ես հարազատ զաւակ սրբոյ Աթոռոյս և սորին զահակալաց, նոյնպէս և յայսմհետէ առաւելապէս փայլեալ զայնս կացցես և մնասցես հաստատուն ի սէր և ի հաւատարիմ որդիութիւն, և յառաջիկայ գործոյդ արի և ժիր գտանիցես, որովք շնորհացն Աստուծոյ և օրհնութեան մերոյ մշտապէս արժանաւոր լիցիս։ Եւ՝ Դանիէլ վարդապետն ի Թօխաթու եկեալ ի Բայազիտ՝ ունայն և սուտ զրուցեամբք բալլ և այլ տեղիս ընդդէմ մեր հակառակինի, որպէս թէ մեք զաւելորդ զրամս խցեմք տուեալ իշխօղին երկրիս և յեկեղեցւոյ անօթս ձեռնարկեալ. որք ստայօդ և մտացածին բանք են, ի ցրումն և յեղծումն բանից որոյ, միաբանք սրբոյ զահիս զստոյգն մահսէրաւ ծանուցին հասարակութեան մեծին Պօլսոյ։ Այսպէս գիտացեալ քոյ ողջ լեր ի տէր, Ամէն։

Դրեցաւ ի ՌՄԾ թուոջս, ի յուլիսի Լ, ի սուրբ Էջմիածին։

ԽԲ. *Ի Հաշտարխան առ աղայ Մկրտումն եւ աղայ Մարգարն յանձնարարութիւն վասն Գրիգոր վարդապետին:*

Ցորմէ սիրով բազմաւ և կարօտիւ և Աստուածային առատաձեռ օրհնութեամբ ժամանեսցէ, ողջոյն խաղաղական ի վերայ սիրելեացդ մերոց և մշտահարազատ որդւոց սրբոյ Աթոռոյս, բարեպաշտից և մեծահաւատից երկուց եղբարցդ հարազատից, գերագնիւք աղայ Մկրտում և աղայ Մարգար իշխանաւորացդ։ Եւ Աստուածախնամ տանց ձերում և բնակութեանց բնաւից ձերայնոցն, որդւոց և ազգականաց, ի Տէր խնդալ։

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ գիտութիւն լիցի ձեզ։ Զի մեք երկակի թղթովք ծանուցեալ եմք ձեզ զամենայն անցս սրբոյ Աթոռոյս և զորպիսաբար կոչումն մեր յայս հայրապետական Աթոռ, որք մինչ ցարդ ի հարկէ հասեալք են ձեզ։ Բայց ի ձէնջ զոչինչ պատասխանի ընկալաք. զարդիս ի ձեռն սոյն համառօտ օրհնութեան նամակիս, զայս միայն կամիմք ծանուցանել ձերդ վեհանձնութեանց. զի ըստ կտակի տեառն Ցովսէփայ հոգելոյս հայրապետին զհոգեծին որդին նորա և մեր, զԳրիգոր շնորհունակ վարդապետն ի յունիսի 16, ձեռնադրեալ եպիսկոպոս, առաջնորդական կոնդակաւ, վերադարձուցաք յօրհնեալ երկիրդ այդ, ի հոգևոր հովութիւն ձեզ, որպէս ունիք գիտել երկարապէս ի նոյն կոնդակէն, որ ի ձեռս նորա։ Զոր և յանձնառնեմ ի սէր սիրելեացդ, ընկալնուլ յարգանօք և գործոց և բանից նորին օգնական գըտանել։ Իսկ զգիտաւորութիւնս ձեր, զորս բազմաձեռնարկ ստորագրութեամբ երկիցս յայտնեալ էիք միաբանից սրբոյ գահիս, որպէս և Ղզլարցիք և Մօզդոկցիք, համաձայն գրուուածոց ձերոց, մահսէրաւ ծանուցեալ էին զնոյնս, առ այնս ահա միաբանք մեծի Աթոռոյս գրեցին ձեզ և հասարակութեան ձերոյ, զոր ընդ գրոյս յղեցաք առ ձեզ։ Ընթերցմամբ որոյ գիտելոց էք զհարկաւորսն, զորմէ ոչ երկրորդեմք աստէն, զկնի ձեր ընթերցմանն և վերահասութեան, առաքեսջիք զայն ի Ղզլար և ի Մօզդոկ, զի և նոքա գիտասցեն։ Դարձեալ Դանիէլ արքեպիսկոպոսն յետ օծման մերոյ եկեալ ի Բայազիտ, անտի զբազում ստութիւնս էր գրեալ ի մեծն Պօլիս և յայլ ուրեք վասն մեր, որպէս թէ մեք զծանր կաշառս խցեմք տուեալ իշխողին երկրիս և յարծաթեղէն անօթս եկեղեցւոյ ձեռնամուխ եղեալ և զայլ այսպիսիս, որք մտացածին բանք են և սնոտիք, ուս-

տի ի ցրուումն և ի լեղծումն ունայնագրութեանց նորին, համայն միաբանք մեծի և որբոյ Աթոռոյս, բազմակնիք մահուբրաւ. ըզ-ստոյգն և զճշմարիտն գրեալ, ձեռամբ Ղազար չնորհափայլ վարդապետի առաքեցաք ի մեծն Պօլիս, առ մեծահաւատ իշխանսն մեր, զի գիտասցեն զուղիղն և զբանս նորին խոտան համարեալ, ի հարազատութեան և ի միամտութեան կացցեն։ Զորոյ զօրինակն յղեցաք առ Գրիգոր վարդապետն յայտնել ձեզ։ Ուստի զամենայն զայնպիսիս խռովարար բանս ի խռովասիրաց, անպիտան համարեալ, և զկարծիս ի մտաց ձերոց փարատեալ ի սէր և ի բարեկամութիւն փութասջիք։ Ուրեմն պատուիրեմք սիրելեացդ մերոց, զի ուղիղ մտօք, աներկբայ սրտիւ, և արդար հոգւով ընկալջիք զբանս մեր, և ի հաւատարմութենէ մի վերջասցիք, և խաղաղութեան զհետ գնալով ի յանդորրութիւն պահեսջիք զձեզ և ըզմեզ և մեծահաւատ սիրով ձերով և հնազանդութեամբ մխիթար մեր լինիջիք։ Եւ ի տառապակրութեան մերում սրտադիւր զմեզ արարեալ, օգնական զտանիջիք։ Որովք չնորհացն Աստուծոյ և վարձուց մեծաց արժանաւորք եղիջիք։

Եւս ի Պօլսոյ ամսոյս 19 զգիր ընկալաք, որով ծանուցանեն մեզ ֆէրմանի ելանելն և ի պատրաստի լինելն, զոր յուսամք յայս քանի աւուրս ստանալ։

Այսպէս գիտացեալ ձեր, ողջ լերուք ի Տէր, ամէն։ յԱմի տեառն 1801, յուլիսի 31։

ԽԶ. *Թուղթ յեպիսկոպոսաց սրբո յգահիս առ Հաշտարխանու Նուիրակ Եփրեմ եպիսկոպոսն, յաղագս հաշտարխանցւոց եւ ղզլարցւոց եւ մօզդոքցւոց մահուէրացն առ սոսա մինչ սոքա եւս պատասխանի գրեցին նոցա յաղագս նորոգ սրբազան հայրապետիս, եւ վասն առաջնորդ եղեալ Գրիգոր վարդապետին։*

Դերապատիւ արդոյ եղբօրդ մերում սիրելւոյ՝ և ծայրագոյն նուիրակի սրբոյ Աթոռոյս՝ յԱստուածախնամ երկրիդ ռուսաց, տեառն Եփրեմի սրբափայլ արքեպիսկոպոսի՝ սիրով և կարօտիւ ողջոյն։

Սրեք մահուէրքն ի Հաշտարխանու ի Ղզլարու, և ի Մօզդոքու գրեալ առ մեզ, մինն յառաջ եհաս, և երկուքն ի յամսոյս 17, հասին, յորս էին երկու բանք. մին վասն նորոգ սրբազան կաթուղիկոսիս, և միւսն վասն Գրիգոր վարդապետին, զորս վերծանեալ, ըզրեցաք առ նոսա զպատասխանի։ Եւ ի դէպ վարկեալ զայս թուղթն ես քեզ յարգելի եղբօրդ գրեմք։ Այն զոր գրեալ են թէ՝ զի Կոստանդնուպօլիս ընարեցեալ հայրապետն ընդունիմք, ես քաջ յայտնի է քեզ, որ ի վախճանիլ տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին մինչ անդ ի մեծն Պօլիս գրեցաք և խնդրեցաք, զինչ անցք անցին, և որքան վնասք և ցաւք յառաջացան. և յետ այնց ամենայնի՝ որ Յովսէփ սրբազան հայրապետն անուանակոչեալ զայր, և ի Թիֆլիզ վախճանեցաւ, թէպէտ և դարձեալ առ Դանիէլ եպիսկոպոսին մահուէր գրեցաք, և ժամադրեցաք փութով գալ, բայց նա յետացաւ, և թէ զինչ վնասք յառաջանային ոչ է տեղւոյս երկարել. վասնորոյ մեծամեծաց և փոքերց փոյթ լինէր չուտով զոք գլուխ կացուցանել սրբոյ Տանս, զի մի մինչև իսպառ վնասեսցի։ Ի յայնմ խորհրդեան զոլով, և ի Թիֆլիզոյ մահուէր և թուղթս ընկալաք, որք գրեալ էին թէ հանգուցեալ Յովսէփ հայրապետն կտակաւ աւանդեալ է, կամ զՅովաննէս պատրիարքն. կամ զԴաւիթ արքեպիսկոպոսն կացուցանել ի կաթուղիկոս և զի պատրիարքն հեռի է, որոյ գալն յետաձգի, անյապաղ զԴաւիթ արքեպիսկոպոսն կացուցաք զոր և ի գուռն կայսերական մեծութեան ես ազդեալ էին։ Այնու գըրութեամբք նոցա առաւել ես յօրդորեալ միաբանք և ժողովուրդք երկրիս համահաճեալ օծաք զսրբազան վեհապետս մեր ի կաթուղիկոս և մահուէր առաքեցաք ի մեծն Պօլիս, որ թէպէտ մահուէրատարն յետացեալ էր ի ճանապարհին, բայց հրաման օղոստափառ մեծի կայսրն վաղ քաջ հասեալ ի Պօլիս դեսպանին, հոգածութեամբ նորա, պատրիարքն հանեալ է զֆէրման և զբարաթն յարքունուստ, ոյր սակս յամսոյս 19 գիր եհաս ի Պօլսոյ, և ստուգեցաք։ Եւ թէպէտ Դանիէլ արքեպիսկոպոսն ի Բայազտոյ զոմանս ծանր բարուրս գրէ, ուրեք ուրեք, բայց ունայն է,

և ոչ օգտի յայնցանէ։ Այլ ամենայն շրջակայից ժողովուրդք ևս հաճութիւն գրեն առ սրբազան վեհապետս։ Եւ զի միանգամ ընտրեցեալ և օծեալ է, միթէ փոփոխումն լինիցի։ Ապա զի օրհնեալ ժողովուրդք քաղաքացդ զայնպիսի նորաձև ինչ գրեն, տարակուսիմք թէ առ ինչ վախճան է. միթէ անցեալ բազմապատիկ վնասքն և նեղութիւնքն, որք յանդգնութենէ հասին սրբոյ Տանս, չիցեն բաւական, որ կրկին ևս վրդովիցիմք և ալեկոծիցիմք։ Վասնորոյ խնդրեմք ի սիրառատ և բարեմիտ եղբօրէդ, զի ըստ խաղաղասէր բարուցդ առ յօգուտն սրբոյ Աթոռոյս և առ խաղաղութիւն խղճալի ազգիս ի համակամութիւն յորդորեսցես զդոսա սիրով հպատակել նորապսակ սրբազան կաթուղիկոսիս. և զերկպառակութեան ասութիւնսն խափանեալ. ոյր սակս և մեք շնորհակալ լիցուք բարեհամբոյր եղբօրդ ցանկալւոյ։ Իսկ ի կողմանէ Գրիգոր վարդապետին որ գրեալ են, ոչ է անգիտելի յօրհնեալ ժողովրդոցն և ի քէն, զի Յովսէփ հանգուցեալ հայրապետն ի կենդանութեան իւրում հաչակէր կարգել զնա ինքեան յաջորդ, որպէս և յելանելն ի վիճակէդ ասացեալ իսկ էր ժողովրդոցն։ Եւ յետ վախճանման նորա, և օծման նորոգ սրբազանիս, մինչ եկն Գրիգոր վարդապետն ի Թիֆլիզու բերելով զդին և զկայսն· լուսահոգւոյն, ունէր զթուղթս ի Կառլ Ցէտրիչ կերազան ցազունեղ կողմնակալէն առ իշխօղն երկրիս, և առ սրբազան վեհապետն, առ ի դարձուցանել։

Ապա ի ստիպմանէ խնդրողացն, և ի փութացուցանելոյ խանին, չեղև երկարապէս պահել զնա աստ։ Այլ ձեռնադրեալ զնա եպիսկոպոս, և զաւուրս ԼԲ պահեալ, դարձոյց առաջնորդական կոնդակաւ ի վերայ օրհնեալ ժողովրդոցդ, գրեալ ևս թէ ի Դ. ամս միանգամ գայցէ ի սուրբ Աթոռս. և պատուիրեալ՝ զի ընդ նուիրակին սրբոյ Աթոռոյս սիրով և խաղաղութեամբ վարիցի։ Այլ և գրեաց ընդ թուղթ ազերսանաց առ նորին կայսերական մեծութիւն. և այնպէս ուղեորեաց, որոյ ի ժամանելն յայդր՝ լիովին գիտելոց էք զորպիսութիւն։ Իսկ օրհնեալ ժողովուրդքն զայն ինչ որ մեզ են գրեալ, մեք չունիմք բաւականութիւն այժմ վճարել ինչ ըստ խնդրոյ նոցա. այլ գրեսցեն սրբազան վարդապետիս մերոյ, զինչ և ունին ծանուցանելոյ. և ի նմանէ ընկալցին զդարման ցաւոց իւրեանց։ Եւ յարգելի եղբօրդ որ սրբազան վեհս մեր Գ. անգամ թուղթ է գրեալ և դեռ պատասխանի չէ ընկալեալ, պատկան է զպատասխանիս գրել, և զոր ինչ դիտումն է քո, առաջի առնել, զի զդիւրութիւն սրտի ընկալցիս. և յերկուս կողմանս ապահովութիւն մտաց լիցի և տարաձայնութիւն բարձեալ ի միջոյ համաձայնութիւն և խաղաղութիւն կայասցի։ Եւ մեք մաղթեմք առ բարձրեալ բարեգութն Տէր, զամենայն ինչ ուղղել առ բարին և օգտաւորն։ Ողջ լեր ի Քրիստոս ի հրճուանս պաշտօնէից սրբոյ աթոռոյս և եղբարց քոց՝ եպիսկոպոսաց կնքողաց ի թղթիս։

Գրեցաւ յամի տեառն 1801 և ի յուլիսի ԼԱ ի սուրբ Էջմիածին։

ԽԳ. *Թուղթ առ Յովհաննէս պատրիարքն Պօլսոյ, շնորհակալութիւն վասն քէրաթին հանելոյ, եւ զխարջն եւս յիւր մօտէն տալոյն*

Յորմէ ճշմարիտ սիրով և սրտակէզ կարօտիւ, Քրիստոսաւանդ ողջունիւ, և սրբոյ Իջման տեղւոյս նորին առատաբուղխ շնորհիւն ծանուցումն լիցի մեծասէր սիրելի եղբօրդ իմոյ հոգեկցի՝ հարազատ և հաւատարիմ որդւոյդ սրբոյ Աթոռոյս՝ տեառնդ Յովաննիսի շնորհափայլ արքեպիսկոպոսի՝ և վայելչապատիւ պատրիարքի Աստուածախնամ մեծի մայրաքաղաքիդ Կոստանդնուպօլսոյ։ Զի յայդրուստ ի սպասու ձերում եղեալ Թադէոս եպիսկոպոսէն, և ի պարոն Գէորգէն Աղայեկեան թուղթս ընկալեալ յամսոյս 19. ծանեաք փոքր ի շատէ զանցիցն տեղւոյդ, և զյարգելի եղբօրդ յօժարակամ հաճելն ընդ կոչումն մեր յայս պատիւ, և զարզն տալդ ի դուռն մեծազօր արքային արքայից, և զառնուլդ յանուն մեր զնոմոսն կաթուղիկոսութեան, և զծախսըն ևս ի քէն տալդ։ Որոյ բարեշնորհութեանցդ և աշխատակրութեանցդ աղագաւ յոյժ և յոյժ շնորհակալ եղաք զյարգելի եղբօրէդ, որում տացէ տէր զերկարութիւն կե-

նաց, և զպաշտօնութիւն գործոց, պահելով միշտ խաղաղականացս և վառապերճս հոգևոր և մարմնաւոր ճոխութեամբ։ Եւ թէպէտ մահսաբաբերն մեր Կարապետ եպիսկոպոսն յաւուրս ինչ ընդ վայր ի Թօխաթ արգելեցեալ է, բայց յետոյ արձակեցեալ անդուստ գիմեալ է ի մայրաքաղաքդ, զորմէ համարիմք թէ մինչև ցայսօր եկեալ ժամանեալ իցէ առ ձեզ։ Վասնորոյ խնդրեմ, եթէ ցհասանիլ թղթոյս տակաւին ոչ իցես դարձուցեալ զնա առ մեզ, ջանասցես աւուրբ միով յառաջ դարձուցանել հանդերձ արքունական բէրաթիւն և ֆէրմանիւն, որ չուտով հասցի առ մեզ, և մեք միամտութեամբ կացցուք ի հողս պաշտպանութեան սրբոյ Տանս։ Եւ զորքան ինչ ծախս արարեալ ես յաղագս ֆէրմանին և բէրաթին, մեք վճարելոց եմք սիրառատ եղբօրդ, յորոյ կողմանէ անհրկբայ լիցիս։ Եւ որպէս դու բարեմիտ եղբայրդ մեր 'ի հանդիպեալ քաջապատեհ ժամու հոգացողութեան հարկաւոր բանի մերում զաշխատութիւն յանձն առեալ՝ ցուցեր զարդիւնս մեծի սիրոյդ, նոյնպէս և մեք պարտապանութիւն մեզ դիտելով ունելոց եմք զփոյթ եղբայրսիրութեան աննուազօրէն, եթէ առ հարկի Տէրունական պատուիրանին, և թէ առ պահանջելոյ բնական և քաղաքական օրինին։ Այսպէս գիտացեալ, ուրեմն՝ զսկզբնաւորեալդ ածցես ի կատարումն, և սիրանշան թղթովք պատասխանատրելով քանիցս գրեալ սիրալորդոր թղթոց մերոց՝ մխիթարութիւն մատուսցես մեզ՝ յաւելուլ ևս քանզևս զպատճառս զոհունակութեան մերոյ զբարեչնորհութեանց ազնուազոյն եղբօրդ։ Ողջ լեր ի Տէր խաղաղական բարեկենդանութեամբ ի հրճուանս մեր. Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾ. թուոջս մերում. և ի յուլիսի ... ի սուրբ Էջմիածին։

ԽԵ. *Թուղթ ի Կարին, առ Շէհիրվէքիլի մահտեսի Յովհաննէսն, ի պատասխանի յուլիսի 3 գրեալ թղթոյն, եւ ի շնորհակալութիւն ընծայեալ ձիոյն:*

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ՝ Յանուցումն լիցի բարեպաշտութեան քում. Ձի ընդ Մարտիրոս թֆանքճուն գրեալ սիրալատ թուղթդ որ վաղապէս էհաս առ մեզ, զնորին պատասխանին ընդ Ղազար խոհեմամիտ վարդապետին յառաջ քան զայս դրեալ առաքեալ եմք, զոր և ընկալեալ ես ցարդ, և իմացեալ զոր ինչ են ի նմա բանք։ Միայն զի խոստացեալ էիր զոմանս թուղթս յուղարկել մեզ, յղեսցես, զի տեսցուք, և դործուսցուք։ Իսկ ապա, յամսոյս յուլիսի 3 դրեալ ուրախակցութեան թուղթդ ընդ սիրելոյն մերոյ ի Մաաենու դարձ արարեալ Գրիգոր շնորհունակ եպիսկոպոսին էհաս առ մեզ յամսոյս 19։ Եւ ծանեաք զամենայն գրեալսդ։ Եւ զի ի վերայ յաջողուածոյ իրացն մերոց՝ և ընդունելութեան թղթոյ օրհնեալ Փիլիպոս ամիրայապետին առ մեզ՝ ցուցեալ էիր զսրտական մեծ ուրախութիւն, սրտադիւր եղաք, զի այդ իսկ է նշան ճշմարիտ բարեկամութեան, ընդ զուարճալին զուարճանալ։ Եւ առ ոչ բանիւ միայն՝ այլ արդեամբ երեացուցանելոյ զնոյն, յղեալ էիր վասն մեր զձի մի արագաքայլ և լաւ, զոր սիրով ընկալեալ շնորհակալ եղաք զպատկեղ սիրելւոյդ. և զպարտական կացուցաք զանձն միշտ յիշատակելոյ զքեզ բարութեամբ և օրհնութեամբ։ Զոր Տէր օրհնեսցէ և զօրացուսցէ, չէն և պայծառ պահեսցէ. և ընդ թևօք խնամոց իւրոց ունիցի հանապազ ի խաղաղութեան և ի բարեյաջողութեան։ Հանդերձ բարեընձիւղ որդւովքդ, և ամենայն քոյայնովքն։ Ցաղագս Կարապետ եպիսկոպոսին սրբոյ Նրուսաղէմի, որ խնդրեալ էիր դարձուցանել ընդ Գրիգոր եպիսկոպոսին ի գործակցութիւն նմա, գիտասջիր՝ որ մեք յառաջ քան զայս սիրելի եղբօրն մերում Թէոդորոս պատրիարգին գրեալ եմք վասն նորա թէ իբրև զմիարան սրբոյ Աթոռոյս ձեռնադրեալ ունիմք առ մեզ, զոր եթէ խնդրիցես, յուղարկեսցուք, և թէ ոչ, ի միաբանութեան սրբոյ զահիս պահեսցուք։ Այլ այժմ որ ազնիւ սիրելիդ յոյժ ստիպմամբ խնդրեալ էիր, ոչ կաբելով բացասել, ահա արձակեցաք սիրով և օրհնութեամբ ընդ Գրիգոր եպիսկոպոսին, սակայն ըստ խոստմանդ ի պատրիարք վարդապետէն հարկիւ պարտիս վասն նորա թուղթ բերել առ մեզ, զի յապաշայն այլ և այլ ասութեանց առիթ չմնասցէ։ Իսկ և զԽաչիկեալ վարդապետն զոր այդի կարգեալ էիր ընդ Գրիգոր եպիսկոպոսին ուղեկից լինել մինչ ի Բասէն, և նա եկեալ էր ի սուրբ Աթոռս,

զնա ևս հայրական սիրով ընկալաք, և վայելուչ փիլոնաւ խիլայեալ դարձուցաք։ Նւ ահա ի դարձ առնել յիշատակելոյ վարդապետացդ՝ դալս թուղթ սիրոյ և շնորհակալութեան գրեցաք առ ի միամտութիւն ազնուոյդ յորմէ և խնդրի, զի միշտ զհաւատարիմ բարեկամութիւնդ և զսիրալալտ սիրտ չպակասեցուսցես։ Իսկ գ սրձեալ և այս ազդ լիցի, որ եթէ առ հասարակ ամենայն բարեկամացեալ անձինք զօգուտն և զլաւն իրերաց կամին, որչափ ևս առաւել ինձ հոգևոր հօրս ձերում փոյթ է զձեր բարին և զօգտակարն խորհել և առաջի առնել, որով թէ զհոգւոց ձերոց և թէ զմարմնոց ապահովութիւն և զշահն ստանալք։ Արդ՝ ի մէջ մերձաւորաց չիք առաւել պերաղանց բարի քան զսէրն և զմիաբանութիւն, առ որ և սրբազան Առաքեալն բազմօք յորդորէ՝ ունիլ զմիաբանութիւն հոգւոյն յօդիւ խաղաղութեան, և զհաղորդութիւն սիրոյ, ի պատիւ զմիմեամբք ելանել։ Վասնորոյ խնդրեմ, զի բարեպաշտ օրհնեալ իշխանքդ՝ որք հասարակութեանն նպատակ էք և կառավարիչք, ընդ միմեանս սիրով կապակցեալ կայցէք, իրերաց օգնական լինջիք՝ և զմիմեանս մխիթարեսջիք պատուով և յարգանօք, որով և կարողանալք օտարացն զգէմ ունիլ, և զձեր օգուտն յառաջ ածել, և զհաճոյս Տեառն գործել։ Նւ այս ինձ առաւել ախորժելի է քան զայլ ամենայն ինչ, ուրեմն այգու ևս ուրախ առնել կամեսցես զմեզ։ Ողջ լեր ի Տէր։

Դրեցաւ ի ՌՄԾ. Թուոյս և ի յուլիսի ...ի սուրբ Աթոռս Էջմիածին։

Սիրով ողջոյն և օրհնութիւն տամք բարեպաշտ սիրելոյն մերոյ և ընտիր բարեկամին քո՝ մեծահաւատ Ղազիմալ մահտեսի Կարապետին, որում պարտէաք յատուկ ևս թուղթ գրել, բայց սուղ էր ժամս, այն յետոյ լիցի, այժմ ողջունագրութեամբս բաւականացեալ՝ ողջ կացցէ ի Տէր։

Դարձեալ հայրական սիրով և օրհնութեամբ ողջունեմք զբարեպաշտուհի մայրդ, և զԱստուածապարգև զորդիսն քո զբարեբողբոջ Յակոբն և զՅսվակիմն, զայլ օրհնաժառանգ ընտանիսդ, որք հանդերձ քև լիցին յանձնեցեալք ի խնամս Տեառն։

ԽՋ. *Թուղթ ի Տէր Դաւիթ կաթուղիկոսէ առ Վանայ ժողովուրդն յաղագս Դանիէլ վարդապետին։*

Նւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ, գիտութիւն լիցի բարեպաշտութեան ձերում։ Զի զկնի ամենայն անցիցն անցելոց ի մեծն Պօլիս յաղագս ընտրութեան կաթուղիկոսի, անուն հայրապետութեան կալացաւ ի վերայ հիւսիսայլին կողմանց առաջնորդ տեառն Յովսէփայ հոգելոյս հայրապետին, որոյ եկեալ մինչև ի Թիֆլիզ քաղաք, փոխեցաւ առ Տէր. զորոյ զհոգին լուսաւորեսցէ Տէր, և ձեզ զերկարութիւն կենաց շնորհեսցէ։ Յետ որոյ կրկին ի Թօխաթ առ Դանիէլ արքեպիսկոպոսն զթուղթ հրաւիրանաց յղեցաք դալ ի հայրապետութիւն, և մինչ նա ևս՝ յամեցաւ և ոչ կարաց հասանիլ ի պայմանադրեալ ժամուն, ապա ստիպմամբ զմերս նուաստութիւն յառաջ կոչէին. յորում միջոցի եկն ի Թիֆլիզու բնակչացն թուղթ և բազմապատիկ մահսէր առ միաբանութիւնս մեր, որովք ծանուցեալ էին զկտակն նոյն վերոյիշեալ սրբազանին յաղագս մերս փոխանորդութեան ի տեղի իւր։ Ընդ որ հաճեալ միաբանից սրբոյ գահիս, իշխօղին տեղւոյս, և երկրականացս, զմեզ կացուցին գահակալ սրբոյ Աթոռոյս. որ և ի յապրիլի ԻԲ ընկալաք ի գլուխ մեր զօծումն սուրբ հոգւոյն Աստուծոյ, և զայսպիսի զեղելութիւնս ի մեծն Պօլիս ընդ բազմակնիք մահսէրի միաբանիցս գրով ծանուցաք ձեռամբ հոգեծին որդւոյն մերոյ Կարապետ շնորհափայլ եպիսկոպոսին։ Նոյնպէս և ձերդ բարեպաշտութեան ի մայիսի ամսոյն անդրանիկ օրհնութեան կոնդակաւ զայնպիսի իրակութիւնսն գրեցաք և յղեցաք ի Բայազիտ, ուր արգելեալ, ոչ ժամանեաց առ սիրելիսդ մեր։ Վասնորոյ հարկ համարեալ կրկին ի ձեռն սոյն օրհնութեան նամակիս, զշնորհ հոգւոյն սրբոյ ի հոգիս և մարմինս ձեր առատապէս բաշխել կամեցաք։ Զի և դուք յԱստուծոյ գիտացեալ զայս գործ, սիրով և քաղցրութեամբ բարեյօժարեսջիք, և ի հաւատարիմ որդիութիւն, և ի հարազատ սէր զանձինս պատրաստեսջիք, և հանապազ զնոյնն գործով ցուցջիք. որովք շնորհաց սրբոյ Աթոռոյս, և հայրական օրհնութեան մերոյ մշտապէս արժա-

նաւորք զտանիջիք։ Դարձեալ և զայս ծաներուք․ զի Դանիէլ վարդապետն ի Բալաղիա նստեալ վասն մեր զբազում սնոտի բանս էր գրեալ ի մեծն Պօլիս և յայլ տեղիս, ուստի՝ ի յեղծումն նորին զրաբանութեանցն, միաբանք սրբոյ գահիս՝ բազմակնիք մահսէրաւ զստոյգն և զճշմարիտն ծանուցին հասարակութեան մեծի մայրաքաղաքին, զոր յղեցաք ձեռամբ սիրելի որդւոյն մերոյ Ղազար խոհեմամիտ վարդապետին։ Արդ՝ և ձեզ սիրելեացդ գրեմ, զի ի լսելն ձեր զայնպիսի ունայն բանս, սուտ և անհիմն համարեալ, ի ձէնջ ի բաց հերքեսջիք, և յառաւել ջերմեռանդ որդիութիւն լուսոյ ծնողիս ձերոյ՝ առատասջիք։ Այսպէս առնելով ձեր՝ ընկալջիք զվարձս յԱստուծոյ և զօրհնութիւնս ի մէնջ, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾ թուոջս, ի յուլիսի ... ի սուրբ Էջմիածին։

ԽԷ. *Թուղթ ի Տէր Դաւիթ կաթուղիկոսէ ի Կապան Մատէնն առ Փիլիպոս ամիրայն ի պատասխանի յունիսի 15 գրեցեալ թղթոյ նորին։*

Եւ ընդ շնորհապարգև օրհնառաք նամակիս՝ գիտութիւն լիցի ձերդ ազնուականութեան։ Զի՝ ընդ հոգեծին որդւոյն մերոյ Գրիգոր շնորհափայլ արքեպիսկոպոսին դ' ի յունիսի ԺԵ գրեցեալ մտերմական և բարեպաշտական սիրալրութեամբ զգիրդ, ընկալաք մեք ուրախութեամբ սրտի յամսոյս ԺԹ։ Որով գիտացեալ զդըրուածսդ և զցանկալի առողջութիւնդ մխիթարեցաք. և սակս երկարութեան և բարեյաջող երջանկութեան պատուական և հանրաշահ անձին ձերոյ՝ մաղթանս տարածմամբ բազկաց առաջի Քրիստոսաէջ տաճարիս առ երկնաւոր Թագաւորն մատուցաք, զի զպտղալիր ծառդ պարարտացեալ առաքինութեամբքդ՝ մշտապէս ծաղկեալս, ուռճացեալս և անթառամելիս արասցէ, ի պարծանս սուրբ անուանն իւրոյ և ի յատուկ սփոփանս և ի բերկրանս խղճալի ազգիս, սրբոյ Աթոռոյս և մեր։ Իսկ յաղագս մարմնաւոր սիրանիշ ընծայլին, (զոր ի ցուցումն և ի բացայայտութիւն ներքին զուտ և յըստակ սիրոյս և շնորհակալութեանս յըղեալ էի առ ձեզ)․ զհոգևոր օրհնութիւնս խնդրելդ ոչ սակաւ ձերդ ջերմեռանդութեան է ցոյց․ որոյ վասն և զայս գրեմք․ զի յերկրպագանէ աշխարհի՝ աներևոյթքն Աստուծոյ, երևելի արարածովքս իմացեալ տեսանին ըստ առաքելոյն․ վասնզի՝ անշօշափելքն ի մէնջ և անտեսքն, ըմբռնին և տեսանին ի ձեռն թանձր, և մարմնեղ իրաց։ Որպէս ինքն Տէրն գոլով անտես ի հողեղինացս, զոր մերս զգայութիւնք ոչ կարեն ըմբռնել և գիտել, ի հաղորդիլն զանարատ մարմինն և զսուրբ արիւնն իւր մեզ ի ճաշակումն և յարբումն, ի ձեռն լոկ հացի և գինւոյ բացակատարեաց զայն։ Ուստի՝ եկեղեցիք քրիստոնէից երևելի նիւթովքն այնոքիւկ, զաննիւթն և զաներևն ճանաչեն։ Արդ՝ որ մերս էր գործ, ըստ սոյն սարասի գիտասցի․ զի ոչ միայն ի բազմաց զբազում գովաբանութիւնս լուեալ եմք զձէնջ, այլ նաև՝ ականատես գոլով ձերդ բարեգթութեանց, որ մինչ յայդ կողմունսդ էաք, այն վասն՝ փութացաք զմերս զոհունակութիւն և անդրանիկ օրհնութիւն շնորհակալաթեամբ հանդերձ իրօք, բարեպաշտութեան ձերում մատուցանել։ Ուստի և ձերդ վեհանձնութիւն մի զայլ և այլս մտաւ ածցէ, այլ յուղիղ մտաց և յանխարդախ սիրոյ սրտի՝ ծանիցէ։ Նա՝ զբարի կամս և զխորհուրդս ձեր, ընդ մեծին Պօլսոյ իշխանաց կամացն հետևեցուցանել մեծապէս և մեզ եղեն հաճոյք և ընդունելիք․ քանզի և մեք չունիմք զյօժարութիւն՝ արտաքոյ խորհրդոց նոցին առնել ինչ, այլ զայն, որ տեառն Աստուծոյ է հաճելի, և ազգի օգտութեան, և սրբոյ Աթոռոյս շինութեան են առիթք, և մեք զուարթ սրտիւ ընդգրկեմք։ Դարձեալ, զհարազատ բարեկամութիւնդ և զմեծահաւատ սէրդ, զորս մինչ ցարդ արփնօրէն լուսափայլութեամբ ցուցեալ ես սրբոյ Աթոռոյս լուսատու ծնողիս քոյ, և սորին գահակալին, զայնս և ի մերումս ժամանակի ի գործ դնել, զոր խոստացեալ էիր, առ այդ բնաւին չունիմք զերկբայութիւն։ Զի ոչ ոք առաքինի և խաղաղասէր, հակառակ բարուց իւրոց գլինի։ Ուրեմն Տէր, որ վարձատրիչն է ամենայն բարեսիրաց, ըստ ամենայն աշխատանաց քոց և բարեգործութեանց, ինքն եղիցի քեզ վարձ յերկակի բարեբաստիկ կեանս քոյ։ Հուսկ յետոյ՝ մաղթեմք, հաստատուն մնալ

ի սէր, և անաղօտ առնել զհաւատարմութիւնդ ի սրբոյ Աթոռոյս և ի մէնջ. և յամենայն բարեվախճան գործս մեր օժանդակ գտանիլ։ Որովք հանապազ վարձուց մեծաց և շնորհացն Աստուծոյ՝ արժանաւոր գտանիցես։ Այսպէս գիտացեալ ողջ լեր ի Տէր, զօրացեալ Ամենազօր Աջով նորին, Ամէն։

Գրեցաւ, ի ՌՄԾ թուոջս, և ի յուլիսի ... ի սուրբ Էջմիածին։

ԽԸ. *Ի մեծն Պօլիս, առ պարոն Գէորգ Աղայեկեանն ի պատասխանի յունիսի 23 գրեցեալ թղթոյ նորին։*

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ՝ գիտութիւն լիցի ձերդ ազնուականութեան, Զի ի յունիսի 23 գրեցեալ զուրախարար զիրդ, ընկալաք մեք ի յուլիս ամսոյ 19, և զոր ինչ բանք, որք կային անդ՝ լրապէս գիտացաք։ Մեք ըստ որում. զամենայն որպիսութիւնս կողմանցս լիով ունիմք գրեալ ձեզ երկակի թղթովք. զառաջինն ի ձեռն Կարապետ Նորապսակ արքեպիսկոպոսին, և զերկրորդն ի ձեռն հոգևոր որդւոյն մերոյ Ղազար շնորհափայլ վարդապետին, որովք ի հարկէ տեղեկացեալ իցէք մինչ ցարդ զհարկաւորսն։ Վասնորոյ զարդիս ի համառօտ փութացեալ զայս և եթ կամիմք ծանուցանել։ Զի Գրիգոր վարդապետն եկեալ ի սուրբ Աթոռս հանդերձ պատուական դիւով և կալիւք հանգուցեալ հոգելոյս հայրապետին, ընկալեալ եղև ի մէնջ ըստ արժանւոյն պատուով, զոր ի յունիսի 16. ձեռնադրեալ արքեպիսկոպոս, ի սոյն յուլիսի 11. վերադարձաք առաջնորդական կոնդակաւ և առաքելական աստիճանօք ի կայսերապերճ երկիրն ռուսաց ըստ կտակի հանգուցելոյն, որոյ աղագաւ այսչափ ինչ գիտացեալ, լեր միամիտ։ Արդ՝ զանցսն տեղւոյդ, զորս գրեալ էիր, որոց աղագաւ ես զայս գրեմք սիրելւոյդ։ Նախ գիտացեալ զլայնածաւալ գթութիւն նորին կայսերական մեծութեան; որ երկու փոշտով հրամայեալ է ամենաողորմածարար՝ մեծահամբաւ դեսպանին տեղւոյդ վասն մերս հայրապետութեան. և ապա՝ ըղ-

հարազատ բարեկամութիւն դորին վերազանցութեան. զոր զնոյն հրամանն յայտնեալ է ի դուռն կրկին-կրկին, և ցրուեալ զխորհուրդս ոմանց և յանուն մեր զփէրմանն և զբէրաթն հանել տուեալ, և զայլս այսպիսիս բազկատարած մաղթանօք՝ սրբէջադումար միաբանիւք հանդերձ, զաղօթս և զպաղատանս առ երկնաւոր թագաւորն թագաւորաց Աստուած վեր առաքեցաք ի մէջ Իւրաէջ սարսափելի սուրբ տեղւոջս, վասն երկարութեան կենաց օգոստափառ ✝ և վասն երջանկութեան դորին վերազանցութեան։ Որպէս և գրով զնոյն օրհնաբանութիւն մեր շնորհակալութեամբ մատուցաք դորին վեհանձնութեան զոր ունիս տեսանել։ Եւ զդրամն, զոր խոստացեալ են ոմանք, զի յանուն Դանիէլին հանցեն զփէրմանն, տեղւոյս խոստացեալ դրամն ես խանին ըստ այդմ. գիտասցես, զի ոչ մեք եմք պատճառ, այլ այնք, որք զԴանիէլն խնդրէին, ուստի ի զուր բամբասեն զմեզ։ Ունիմք շնորհակալութիւն զյարգելի եղբօրէն մերմէ Յօհաննէս սրբազան պատրիարքէն յաղագս բէրաթի խարջն յարգեանց իւրոց տալոյն, զոր ինչ և խարջեսցէ վասն այնմ, յօժարութեամբ սրտի հատուցանելոց եմք, առ այդ լիցի միամիտ, որպէս և ինքեան գրեցաք։ Դարձեալ զմերս օրհնութիւն և զհայրական սէր, զորս խնդրեալ էիր ի մէնջ անպակաս առնելյառ այդ այսպէս գիտեա։ Զի մեք մշտապէս օրհնող եմք զարժանիդ օրհնութեան և գոհունակ եմք զամենից ճշմարիտ և անկեղծ որդիութեանց քոց և հարազատութեանց. Տէր լիցի քեզ վարձագիր ըստ բազում. վաստակոց և աշխատութեանց քոց։ Եւ ունիմք ի մտի՝ առաւել քան զհանգուցեալ հոգելոյս հայրապետն յարգել զյարգի բարեկամդ մեր և հարազատ զաւակ սրբոյ Աթոռոյս և մեզ գիտել ճանաչել։ Իսկ զսխալանաց գրոյդ, զներումն՝ զոր գրես, ծանիր, որպէս քեզ, նոյնպէս և մեզ են հաճոյ քոյով ձեռօք և քոյով զալէմով գրելդ։ Այսպէս գիտացեալ և զորպիսածանոյց զիրդ ի մէնջ անպակաս արարեալ, ողջ լեր ի Տէր, Ամէն։

Կացջիր միշտ հաստատուն ի սէր մեր։ Զայս ես ծանիր։ Զի ընդ Կարապետ վարդապետին մերոյ՝ զԳրիգոր եպիսկոպոսն յայտաբարական օրհնութեան կոնդակաւ առաքեալ էի ի Մատէնն առ Փիլիպոս ամիրայն. նա վե-

բազարձաւ անտի հանդերձ Փիլիպպոս ամիրայի գրովն առ մեզ, զորոյ գրեցեալ գրոյ զօրինակն յղեցի առ քեզ ի գիտելի Ցուսամ մեր Կարապետ վարդապետն ես արձակեալ ի յարգելմանցն Թօխաթու, եկեալ իցէ յայդր, և մինչ ցարդ ֆէրմանաւ ե բերաթով վերադարձուցեալ իցէք առ մեզ։ Որ ե շնորհք Տեառն եղիցի ընդ քեզ, Ամէն։ Ի 1801, ի յուլիսի ... ի սուրբ Էջմիածին։

ԽԹ. *Ի Կապէն Մատէնն, առ Թօխթօվեանց մահտեսի Ստեփանոս աղայն:*

Եւ ընդ սիրառաք ողջանատրութեանս գիտութիւն լիցի ձերումդ Աստուածպաշտութեան։ Զի հոգևոր որդին մեր և շնորհընկալ զաւակն սրբոյ Աթոռոյս Գրիգոր նորապսակ եպիսկոպոսն խաղաղութեամբ վերադարձեալ այտի ի սուրբ Աթոռս յամսոյս Ժ.Թ, պատմեաց մեզ լիով զամենայն զբարելաւութիւնսն քոյ, այսինքն զմարդասիրութիւնդ, զոր ցուցեալ ես ինքեան ըստ բարեբարոյութեան աղնիւ բարուցդ, զքաղցրութեամբ և յարգանօք ընկալնուլդ, ի պատուի ունիլդ, և քաղաքական մարդավարութեամբ մշտապէս շահելդ զինքն, ընդ որս ե զճշմարիտ բարեկամութիւնդ և զջերմեռանդ հաւատարիմ որդիութիւնդ առ սուրբ Աթոռս և առ մեզ, և զայլս այսպիսիս, քոյդ Աստուածսիրութեան և բարեպաշտութեան ցոյցս։ Զորս ի լսելն և ի գիտելն մեր ի նմանէ, արդարև՝ լցաք անճառ և անպատում հրճուանօք, և ուրախութեամբ սրտի՝ շնորհակալութեամբ և անբաւ գոհունակութեամբ օրհնեցաք զծագկեալդ և զարգացեալդ այդպիսի Աստուածահաճոյ գործովք և յաչս ամենից գեղապանծ և արժանաւոր առաքինազարդ վարուք, զոր Տէր Աստուած յարաժամ ի դոյնպիսի բարեվախճան յուղիղ ընթացս առաքինութեամբ պահեսցէ, և ըզկեանս քոյ և զաւուրս, երկարակեացս և խաղաղականս արասցէ, պարգևելով զիւր առատ բարութիւն քեզ և քոյայնոցն։ Եւ արդ պատուիրեմք սիրելւոյդ մերոյ, զի զզոյն անխարդախ սէր, անկեղծաւոր բարեկամութիւն, և զճշմարիտ որդիութիւն ի սրբոյ Աթոռոյս և ի մէնջ հանապազ անվերջանալի և անյեղլի առնիցես և օր աւուր առաւելեալ զայնս, իբրև զարփի՝ բանիւ և գործով լուսափայլեալ բեղմնաւորեսցես բազում արդասեօք, որովք՝ շնորհացն Աստուծոյ և սրբոյ Էջման տեղւոյս նորին, և օրհնութեան հոգևոր հօրս քոյ՝ արժանաւոր գտանիցես, որև ողջ լեր ի Տէր և զօրացեալ միշտ նովաւ, Ամէն։

Գրեցաւ, ի ՌՄԾ թուոջս, և ի յուլիսի ... ի սուրբ Էջմիածին։

Ծ. *Թուղթ ի Թիֆլիզ առ Իվան Պետրովիչ Լազրովն յաղագս վերադարձուցման Գրիգոր պետին ի Հաշտարխան։*

Եւ ընդ օրհնառաք նամակիս գիտութիւն լիցի ձերդ վեհանձնութեան։ Զի զառաջինն՝ զմերս անդրանիկ օրհնութիւն շնորհակալութեամբ հանդերձ մատուցաք ձեզ և ի ձէնջ մինչ ցարդ զոչինչ պատասխանի ընկալաք. զարդիս ի ձեռն սոյն օրհնութեան նամակիս՝ համառօտիւ գալս գրեմք։ Զի ըստ կտակի և բաղձանաց հանդուցեալ սրբազանին Տեառն Ցովսէփայ, զպատուական դի նորին ամփոփեցաք ընդ սրբազանից հայրապետացն, և զկայս ընկալաք ի պէտս Աստուածային տաճարիս։ Եւ առ ի բոլորովիմբ կատարիչ և լցուցիչ կամաց և կտակի նոյն հոգելոյս հայրապետին գտանելոյ մեր, զնորին հոգեծին որդի Գրիգոր խոհեմամիտ վարդապետն ի յունիսի 16, ձեռնադրեցաք եպիսկոպոս և բարձրացուցաք ի պատիւ և ի փառս առաջնորդական իշխանութեան, զոր և առաքեցաք նոյնով արքեպիսկոպոսական աստիճանաւ և առաջնորդական կոնդակաւ ի կայսերապերճ և յԱստուածապահ երկիրն ռուսաց։ Ուստի՝ ի գալըն նորին յայդր զմերս ուրախութիւն ունիս ի նմանէ տեղեկանալ, զոր յանձնեմ ի սէր ձեր։ Եւս մաղթեմք, զձերդ շնորհ և մարդասիրութիւն և զհաստատուն բարեկամութիւն ի սրբոյ Աթոռոյս և ի մէնջ անպակաս առնել, որովք պարտաւորեալ մնալոց եմք մերով հաւատարմական սիրով մշտապատրաստ աղօթաբար վասն երկարութեան պատուական կենաց ձերոց։ Այսպէս գիտացեալ քոլ ողջ լեր ի Տէր ամէն։

Գրեցաւ ի 1801, ի յուլիսի ... ի սուրբ Էջմիածին։

ԾԱ. *Թուղթ առ Իվան Պետրովիչ Լազ-րովն ընդ Սոլոման մէյթարին, ի պա-տասխանի յուլիսի 13 գրեցեալ թղթոյն ի Բամբակու:*

Վաշը վիսօկօ բրեսխօտիտէլստվայ, մի-լօստիվէյ ղօսուտար.

Վաշի բօչտեննի բիսմի ըզ կնեազ Սօ-լօման մէլթարը բլուչիլի մի, ի տակժէ՝ ըշ-տօ վի իզվօլիլի ըսքազալց եմու, նօ օն տալ նամ ըզնալց. Ի տակժէ մի սլօվօմ ըսքազըլվե-լի եմու, վամ տալա օն ֆըսէ ըզնալց.

Բրօշու պակօրնի՝ նի զապիթ նամ, ի նա վըսէ սլուչօմ պօմօղալց.

Թուրեցքի ղրամատի ըզ ցարիկրատէ ըշօ նէ պլուչիլի սի, նա վըսէկի տեն աղիժտալու տօ ղրամատու.

Տաք դումու ըշտօ, եղօ վեկիչեստվայ իմ-փերաթօրայ միլօստ ի բօմօժ նե բուտիտ, դօ ըռկօրօյ նէ պլուչու. Բող տաստ չաւլիվի բուտեմ տօ միլօստ եղօ վեկիչեստվայ.

Ումելու չեստ վաշեղօ բրեսխօտիտելստ-վօյ մելօստիվաղօյ ղըսուտարեյ պակօրնիշի բօղու մօլեց. 1801, զօտայ, յուլեայ 19 դնեայ ֆը Արարատի.

ԾԲ. *Ի մեծն Պօլիս առ պարոն Վասիլ Ստեփանիչ Թամարովն մեծահամբաւ դեսպանն ռուսաց:*

Եւ ըստ օրհնութեան Քրիստոսականի, գիտութիւն լիցի ձերդ գերազանցութեան. Զի զխոնարհ շնորհակալութիւն մեր, և զհամա-ռօտ զիարդութիւն սրբոյ Աթոռոյս, և զկոդ-մանէն մերմէ լալս աստիճան պատրիարգու-թեան, հանդերձ անդրանիկ օրհնութեամբ, երկոքումբք թղթովք յայտնեալ եմք ձերդ գերազանցութեան, ի ձեռն Կարապետ արք եպիսկոպոսին և Ղազար վարդապետին և յու-սամք թէ ցարդ հասեալք իցեն առ ձեզ. Իսկ այս երրորդն է, որ մատչի ի մէնջ ան-կեղծ սիրով առ ձերդ պատուականութիւն. Վասն զի՝ ի գրոյ հաւատարիմ պաշտօնէին ձերոյ պարոն Գէորգ Աղայեկովին գիտացաք զպայծառացեալ ողորմութիւն աստուածապսակ օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն ի վերայ մեր, որ երկու փոշտիւ զսուրբ կամս իւր յաղագս հարապետութեան մերոյ յայտնեալ է ձերդ գերազանցութեան. Եւ դուք հաւատա-րիմ խորհրդականդ նորին կայսերական մե-ծութեան ծանուցանելով զայն ի դուռն օս-մանցւոց տէրութեան բարեհաճեալ ես յանուն մեր տալ զֆէրմանն և զբերաթն, և այլն. Ուս-տի ի լսելն մեր զայսոսիկ միաբանութեամբ հանդերձ առաջի Քրիստոսաէջ տաճարիս զա-ղօթս և զխնդրուածս տարածմամբ ձեռաց՝ առ Թագաւորն երկնաւոր, խնկեցաք, որ-պէս զի զմեծազօր թագաւորութիւն օգոս-տափառ ինքնակալ կայսերն իբրև զարե-գակն լուսալիր արփնօրէն փայլեցուսցէ յա-ւիտենանս ժամանակաց. Եւ ձեզ իմաստուն և հարազատ խորհրդականիդ նորին կայսերա-կան մեծութեանն և ճշմարիտ բարեկամիդ սըր-բոյ Աթոռոյս զխաղաղ և զբաղում ամս պար-գեւեսցէ ամենայն հոգեկան և մարմնական բա-րեաց լրութեամբ, ի պարծանս քրիստոնէա-կան սուրբ հաւատոյս և ի բերկրութիւն սըր-տի մերում. արդ՝ ի վախճան բանիս, մաղ-թեմք ի ձերմէ գերազանցութենէ, զի զայս սէր և կատարեալ բարեկամութիւն ի յամե-նայն ժամանակս ի մէնջ աննուազելի և ան-վերջանելի արասջիք հանդերձ նպաստամա-տոյց օժանդակութեամբ ձերով օգնականու-թիւն փութասջիք զֆէրմանն ձեռամբ Կարա-պետ արքեպիսկոպոսին առ մեզ հասուցանել, զի հանդարտ և անվրդով հոգւով յառաջիկայ հոգևոր պաշտօն մեր ժրասցուք, և զօրհնա-բանութիւնս փառաւորութեամբ Տեառն Աս-տուծոյ մատուսցուք, որ յաջողէ զամենայն յամենայնի. Ողջ լեր Քրիստոսազօր իշխան ի յողջ զլուխն Քրիստոս, Ամէն.

ԾԳ. *1441*

Ողորմութեամբն Աստուծոյ մինչ փոխա-դրեցաւ Աթոռ սուրբ Լուսաւորչին ի Սսոյ վերստին ի Վաղարշապատ քաղաք յաստուա-ծակառոյց տաճարն սուրբ Էջմիածնի, յամի տեառն 1441 և սահմանեցաւ անտի և այսր ի սրբոց հարց նստել հարազատ գահակալաց

նորին անզանօր, և զսուրբ միւռօնն աստուածագործ անդ սրբագործել ի ձեռն հարազատ կաթուղիկոսացն նմին, միջնորդութեամբ կոդամուխ սուրբ Գեղարդեանն Քրիստոսի, և աջոյ սուրբ Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի, ապա որք միանգամ ընդդիմակք զաան այսմ կանոնաց սուրբ հարց, և արտաքոյ զայլ Աթոռ հաստատել կամեցան, և կամ զգործ կաթուղիկոսի գործել, ի գայթակղութիւն բազմաց, և ի վնաս ազգին, որպէս Եղիազար Անթապցին, որ ընդդէմ Յակոբայ կաթուղիկոսին Ջուղայեցւոյ օծաւ արտաքոյ ի Հալէպ, և յայլ գործս անվայելս ձեռնամուխ եղև, մերժեցան յազգէն և ընկեցան յիշխանութենէն։ Արդ՝ կամօք և յաջողութեամբ Տեառն մինչ օծաւ Տէր Դաւիթ կաթուղիկոս ընդհանուր հայրապետ Տանս Թորգոմայ յամի Տեառն 1801 ի յապրիլի 28, ըստ սահմանադրութեան հարց սրբոց յԱթոռ. սուրբ Էջմիածնի ընդհանուր ժողովով, յայնժամ զժկամակեալ Դանիէլի վարդապետի ընդ այս օրինաւոր օծութիւն նորին, կամեցաւ ի Բագրևանդ գաւառի ի վանքն Ուչքիլիսէ կոչեցեալ հակաթոռ նմին լինել, և ընդդէմ օրինի, արտաքոյ օծանիլ, որ և օծաւ իսկ, և ի գայթակղութիւն ազգին զմիւռօն ևս օրհնեաց, և այսպէս երկպառակեաց զազգն և ջանաց որոշել ի հարազատ գլխոյ իւրեանց։ Ցայս ապօրինաւոր գործ նորին, և ես ներքոյ սստորակնքեալ մեղապարտ ոգիս Տէր Գէորգ արքեպիսկոպոս վանիցն Թաղզէ սուրբ առաքելոյն զտայ, և մասնակից նորին յանցանացն եղէ, յակամայ կամս բռնադատեալ ի նմանէ։ Բայց ստրջացեալ յետոյ ընդ այն իմ գործ անվայել, դիմեցի մեղայիւ և զղջմամբ ի հարազատ Աթոռ սուրբ Լուսաւորչին իսուրբ Էջմիածին ի յոտս հարազատ կաթուղիկոսին ամենայն հայոց Տէր Դաւիթ Աստուածընտիր հայրապետին, և ընկալայ զթողութիւն անուղղայ գործոց իմոց։ Ուստի և սոյն ձեռագիր իմով կամաւ և յօժարութեամբ կնքեալ առաջի պանծալի դասուց եպիսկոպոսաց միաբանից սուրբ Էջմիածնի, թողի ի մէջ տաճարի սրբոյ և մեծի Աթոռոյն Էջմիածնի, ի խոստովանութիւն յանցանաց իմոց, և ի զգուշութիւն ապագայից, որով և ուխտեմ նախ կալ և մնալ հպատակ Աստուածաբնակ Աթոռոյս մեծի Քրիստոսաիջջի, և նորին գահակալացն, մինչև ցել շնչոյ իմոյ՝ և ապա՝ նզովեմ զգործս իմ, զորս գործեցի թէ կամաւ և թէ ակամայ, ընդդէմ շնորհատու ծնողիս իմոյ սրբոյ Էջմիածնի. և ընդդէմ հարազատ գահակալի սորին փոխանորդի սրբոյ Լուսաւորչին։ Երրորդ՝ նզովեմ և զայնոսիկ, որք գտան, և կամ գտանիցին յայսպիսի գործս գայթակղեցուցիչս։ Եւ չորրորդ՝ նզովեմ և զնա ինքն զԴանիէլն, եթէ միւս անգամ ձգտեսցի ինքնին, և կամ յայլոց հրապուրեալ զայսպիսի արարս, և ոչ գագարեսցի ի վրդովմալից գործոյ, և ի բաժանելոյ զԱթոռ Լուսաւորչին, որպէս ինքն ունի զայնս բանիւք և կնքով իւրովք հաստատել, և նզովիւք նզովեալ վինքն եթէ գացի դարձեալ յայսպիսի յանցանս։

ԾԳ. *Թուղթ ի Հաշտարխան, առ գերազնիւ աղայ Սիմէօն Սևրգէյիչն, վասն տուեցեալ յիշատակնաց ձեռամբ հանգուցեալ Յովսէփ կաթուղիկոսին:*

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ՝ գիտութիւն լիցի ձերդ գերազանցութեան։ Զի՝ յայտնի են ձեզ անցքն սակս ընտրութեան կաթուղիկոսի, հուսկ յետոյ՝ անուն հայրապետութեան կալաւ ի վերայ սրբազան Յովսէփ հոգելոյս հայրապետին։ Եւ այն ինչ գայր նա այսր ի սուրբ Աթոռս՝ ի Թիֆլիզ քաղաքի հիւանդացեալ, փոխեցաւ առ Տէր, զորոյ զհոգին դասեսցէ նոյն ինքն Տէր ընդ սուրբս իւր, և ձեզ սիրելի որդւոյգ նորին և մեր զխաղաղ և զյաջող կեանս շնորհեսցէ։ Այնպիսի բօթ մահուանն երբ հնչեցաւ ի մեզ, կրկին ի վարանս անկեալ տրտմութիւն ի վերայ տրտմութեանց պաշարէր մեզ. յորում միջոցի եկին ժամանեցին ապա՝ թուղթք և բազմակնիք մահսէր ի Թիֆլիզու. բնակչացն նշանաւոր արամբք առ միաբանութիւնս մեր, որովք ծանուցեալ էին զերջանիկ մահն, և զբանիւ աբարեցեալ կտակն նորին վասն մերս յաջորդութեան։ Ընդ որ հաւանեալ միաբանից սրբոյ գահիս, իշխօղին երկրիս և մեծաղնեալ ժողովրդոցն զմեզ յառաջ կոչեցին. որոց թախանձանաց ոչ կարացեալ ընդդիմանալ, ընկալաք զսուրբ օծումն ի յապրիլի 28. ի

գլուխ մեր, և կացուցեալ եղաք հայրապետ ի վերայ Տանս Հայոց. և զայսպիսի զեղելութիւնսն ի Մեծն Պոլիս առ. Աստուածասէր իշխանսն գըրեալ միաբանութեամբ՝ ծանուցաք։ Եւ որպէս լսեմք և գրեն մեզ ի Պօլսոյ՝ զփէրմանն և զբէրաթն ես հանեալ են յանուն մեր. զորս յուսամք յառաջիկայ աւուրսս ընկալնուլ։ Եւ՝ ըստ կտակի նոյն հանգուցելոյն՝ զպատուական զդի նորին հանդերձ զոյիւքն բերել տուաք ի սուրբ Աթոռս ընդ Գրիգոր շնորհափայլ վարդապետին։ Զդին հանգուցաք ի շիրիմս սրբազանից հայրապետաց, և զկայսն ընկալաք ի պէտս Աստուածային տաճարիս։ Եւ զԳրիգոր վարդապետ սիրելի որդեակն մեր ի յունիսի 16 ձեռնադրեալ եպիսկոպոս՝ ըստ բանի և կտակի հանգուցելոյն վերադարձուցաք առաջնորդական կոնդակաւ ի յօրհնեալ յերկիրդ այդ՝ ի հովուութիւն. զոր յանձնեմք ի սէր սիրելեացդ։ Զայլն ամենայն ի հասարակական կոնդակէն, որ ի ձեռս նորա, ունիք լիովին գիտել։ Արդ՝ մինչ սիրեցեալ որդին մեր Գրիգոր շնորհափայլ եպիսկոպոսն աստ էր, պատմեաց մեզ լիով զքոյդ ջերմեռանդ որդիութիւն և զմեծագոյն հարազատութիւն առ հանգուցեալ սրբազանն, ընդ նմին և զկատարեալ հաւատդ և զբարեպաշտական սէրդ, զորս ունիս առ շնորհատու ծնող մայրս քոյ և զայլս այսպիսիս, վասնորոյ արժան համարեալ զայս սիրոյ և անդրանիկ օրհնութեան նամակ՝ ձեզ Աստուածահաճոյ և առաքելական գործովք զարդարելոցդ գրեալ յօժարացաք։ Որով և յորդորեմք, զի և դուք նախ յԱստուծոյ համարեալ զայս մերս կոչումն սիրով բարեհաճեսջիք, և ապա՝ ի ճշմարիտ սէր և ի հարազատ որդիութիւն հաստատուն կացջիք, և առաւելապէս ցուցջիք զայնս և ի մերումս ժամանակի։ Այլ և՝ զյիշատակիսն, զորս յանձնեալ էիք հանգուցեալ սրբազանիս, վասն հոգւոց բարեյիշատակ ծնողացն քոց, որք էին մէկ հատ եմիփորոն, կոնքեռ, փորուրար, մէկ ջուխտ թեանոց, սկիհ արծաթեալ ոսկէջուր, և մէկ սկհւոյ ծածկոց։ Ընդ որս ի Քրիստոս հանգուցեալ պօլկովնիկ Ստեփան Գրիգորովիչի դիազարդն, զոր եղբօր դուստրն քոյ գերազնուուհի Կատարինէ խաթունն յանձնեալ էր նոյն հանգուցելոյն, զայնս ամենայն անթերի և անպակաս ընկալեալ մատուցաք անկարօտին Աստուծոյ ի մէջ սարսափելի սուրբ Իջման տեղւոյս նորին, և պատարագօք և պաշտամամբք յիշեցաք զանուանս երջանիկ ծնողացն քոց, և համայն ի Տէր հանգուցեալ ննջեցելոցն քոց ասելով զհոգւոցն՝ զորոց զհոգիսն լուսաւորեսցէ Տէր, և մարդկօրէն սխալանացն նոցին զներումն և զքաւութիւն շնորհեսցէ, իսկ զկենդանի բարեշաւաւիղ բողբոջսդ, և Քրիստոսիւ զօրացեալ բարեբեր տունկդ ի յօրհնեալ յարմատոց վերընձիւղեալք պահեսցէ Տէր երկար ամօք, բարեյաջող երջանկութեան և խաղաղական աւուրբք ի պայծառազարդութիւն սուրբ եկեղեցեաց։ Ուրեմն՝ պատուիրեմք սիրելւոյդ մերոյ յարամնալ ի դոյն բարեպաշտութեան։

ՃԵ. *Ի Մոսկով, առ աղայ Աւետ Գալստեանն, յանձնարարութիւն վասն Գրիգոր վարդապետին:*

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ՝ գիտութիւն լիցի քումդ Աստուածապաշտութեան։ Զի յայտնի է ձեզ կոչումն մեր հաճութեամբ բազմաց յայս Աթոռ և ի յապրիլի 28. օծմամբ կացուցանելն մեր հայրապետ ի վերայ Տանս Հայոց, զորմէ աստանօր զոչինչ երկարել կամիմք, բայց զայս գիտասջիր։ Զի ըստ կտակին հոգելոյս հայրապետին Տեառն Յովսէփայ, զդին և զկայսն նորին ընդ Գրիգոր վարդապետին, բերել ետուք ի սուրբ Աթոռս, զդին հանգուցաք ի շիրիմս հայրապետաց, և զկայսն ի պէտս սուրբ տաճարիս և սորին միաբանից ընկալաք. և զԳրիգոր վարդապետ որդին նորա և մեր ի յունիսի 16 ձեռնադրեալ եպիսկոպոս, առաջնորդական կոնդակաւ վերադարձուցաք առ ձեզ ի յօրհնեալ երկիրդ այդ, զոր յանձնեմք ի Տէր սիրելւոյդ։ Արդ՝ ի սիրելի որդւոյն մերմէ Գրիգոր շնորհափայլ արքեպիսկոպոսէն գիտացաք լիով զքոյդ հարազատ և հաստատուն որդիութիւն՝ և զճշմարիտ բարեկամութիւն, զորս ցուցեալ ես հանգուցեալ սրբազանին։ Նոյնպէս պատմեաց մեզ զմեծագոյն սէրդ և զջերմեռանդ բարեպաշտութիւնդ, զորս ունիս առ սուրբ Աթոռս մայրս քոյ։

Վասնորոյ ի գիտելն մեր զայսոսիկ, արժան համարեցաք այսու անդրանիկ օրհնու-

թեան նամակաւ, զշնորհս սուրբ Իջման տեղւոյս Քրիստոսի և զօրհնութիւն սուրբ Լուսաւորչին ի հոգիս և ի մարմինս տարածանել։ Զոր և օրհնեսցէ Տէր հոգևոր և երկնայլին օրհնութեամբ և անփորձ պահեսցէ յամենայն դիպուածոց։ Ուրեմն խնդրի յԱստուածասիրութենէ ձերմէ, զի որպէս մինչ ցարդ լեալ ես մշտահնազանդ զաւակ սրբոյ Աթոռոյս և սորին զահակալաց, յայսմհետէ ևս ի նոյն յարամնասցես և քոյով օգտակար և չահաւէտ օժանդակութեամբն մխիթար և օգնական մեզ լինիցիս և քաղցր բարուքդ և համեստ շարժմամբդ սրտադիւրս զմեզ արասցես, ի սիրոյ, ի յորդորութենէ և ի կատարեալ բարեկամութենէ մի վերջասցիս, որովք օրհնութեան և շնորհակալութեան արժանաւոր գտանիցիս մշտապէս. զայլն ամենայն ի Գրիգոր շնորհունակ եպիսկոպոսէն ունիք լիապէս գիտել։ Այսպէս գիտացեալ քո ողջ լեր ի Տէր և զօրացեալ նովաւ։ Ամ․Տ․ ի 1801. և ի յօգոստոսի 4. ի սուրբ Էջմիածին։

ՃՋ․ *Թուղթ առ Իզմիրու առաջնորդ Մարտիրոս վարդապետն ի պատասխանի շնորհաւորական թղթոյն, յիշումն յառաջ գրեալ թղթոցն մերոց եւ բան վասն խնդրոյն Իզմիրցւոց, որոյ աղաչաւ եւ պատրիարգն միջնորդեալ էր։*

Ցորմէ սիրով և կարօտիւ, հոգևոր օրհնութեամբ, և Քրիստոսաէջ սրբոյ Տեղւոյս մշտածաւալ շնորհիւն գիտութիւն լիցի վաղեմեան սիրելւոյդ մերոյ և հարազատ որդւոյդ սրբոյ Աթոռոյս՝ Մարտիրոս զերգզօն վարդապետիդ և շնորհափայլ եպիսկոպոսիդ։ Զի յամսեանն մայիսի գրեցաք հասարակական կոնդակաւ ի վերայ օրհնեցելոյ վիճակիդ և յատուկ թղթովք առ քեզ և առ բարեպաշտօն յատուկ իշխանսդ զօծմանէն մերմէ ի հայրապետութիւն, և զհանդամանացն, և յետ այնորիկ ի յուլիսի 28 ևս առ հարկի խնդրողացն դարձեալ գրեցաք զթուղթս առ ի Ղնըզ բնակեալ պարոն Յակոբն և առ քեզ վասն երեանցի հանգուցեալ Տէր Վարդանի կալիցն, որ ի Ղընըզ վախճանեալ է, և ցարդ ոչ ընկալաք զպատասխանիս նոցա։ Բայց . . . գրեալ թուղթն քո, և բազմաձեռնակ թուղթն քահանայից և իշխանացն քաղաքիդ հասին առ մեզ յօգս. ամսոյս 27։ Եւ ընթերցաք զսիրաչտրուն բանսն ձեր։ Եւ զի չև ևս ընկալեալ զթուղթսն մեր, ի յարգոյ պատրիարքէն Պօլսոյ և ի վէքիլ Պետրոս հանճարապերճ վարդապետէն իմանալով զհամբաւ հանդիպմանցն մերոց ըստ օրինի ճշմարիտ բարեկամութեան ուրախացեալ էիք, և յառաջեալ ի դրել զբանըս ուրախակցութեան և շնորհաւորութեան, շնորհակալ եղաք զսիրելեացդ հաւատարմաց օրհնաբանութեամբ և գովութեամբ։ Որոցդ առաւել ևս տացէ Տէր զբարեպաշտութիւն կամաց և յաջողուածս հաճոյական գործոց, և զփոխարէնն զիւրութեան և մխիթարութեան առ ի ձէնջ մատուցելոց՝ բազմապատկապէս հատուսցէ ձեզ։ Ծանիր աստանօր ուրեմն ըզդարմանալի դիպւորութիւն եղելութեանցս՝ զի ի յունիսի քանիսն որ զՍտեփաննոս եպիսկոպոսն արդալիւ [1]) յղեալ էաք ի դուռն շահին պարսից՝ տալ մեզ զռաղամս [2]) և նա հաճութեամբ ընկալեալ էր և զպիտանի նոմոսսն [3]) տուեալ և ի ձեռն պարսիկ իշխանի միոյ ևս զխիլայս [4]) յուղարկեալ, յամսոյս ԻԴ հասին նոքա առ մեզ, որոց մինչ ընդ առաջ ելեալ սովորական հանդիսիւ մերով կարդալ տուաք զռաղամսն շահին և զգեցեալ զխիլայսն դարձաք ի սուրբ Աթոռս, յետ միոյ ժամու ի Պօլսոյ ուղևորեալ սուրհանդակի համբաւն էհաս թէ ահա բերէ զարքունական բէրաթն [5]) և ըզֆէրմանն [6]), ապա զնոյն հանդէսն ուղղեցաք ընդ առաջ սուրհանդակին, և փառաւորութեամբ ընկալաք զհրովարտակսն արքունիս, և գոհութեամբ փառաւորեցաք զԱստուած որ յաջողեաց մեզ զերկուց տէրութեանց զհաճութիւնսն ի միում աւուր ընդունել։ Իսկ քահանայք և իշխանք տեղւոյդ որ խնդրեալ էին վասն սիրելւոյդ կրկին կարգել ի գործս նուիրակութեան և առաջնորդութեան վիճակիդ, յարգելի եղբայրն մեր պատրիարք վարդապետն ևս էր խնդրեալ, ընդ որ և մեք հաճեցաք։ Սակայն վայելուչ է զի զնախանուէր օրհնութեան կոնդակին և թղթոց մերոց զփոխադարձսըն ընկալցուք ի ձէնջ, և յայնժամ զայլ ինչ դրեսցուք։ Ուստի այժմ գրեցաք պատրիարգ վարդապետին միամիտ առնել զձեզ, և մեք ևս

անհա դրեմք, զի արիութեամբ և զգուշութեամբ հովուեսցես զժողովուրդսն, և զառաջնորդական արդիւնսն ժողովելոյն փոյթ ունիցիս, մինչև ընկալցուք ի ձէնջ զպատասխանիս նախադրեալ թղթոցն մերոց, և մահսէրատար Կարապետ վարդապետն ևս առ մեզ դարձցի, յայնժամ պատշաճապէս կատարումն տացուք խնդրոյն մերոյ, և զպայման բանին ևս առաջի արասցուք: Այլ և՝ զի գրեալ էիր թէ զայսչափ ինչ արդիւնս ունիմ ի պատրաստի, և կամիմ փոլիցայ [1]) առնել, գիաասջիր որ մեք ընդ առաջին թղթոյն մերոյ սիահի [2]) եմք յըղեալ առ քեզ պիտանի իրաց ինչ՝ դնել և յղել. այժմ դարձեալ սիահի արարաք, յաւելլով ի վերայ այնց իրաց և զայլ իրս՝ որք համայնքն ևս կարի պիտոյք են ի ծախս սրբոյ Աթոռոյս. զայնս չուտով դնեալ յղեսցես, և որքան ինչ դրամս ունիս, պաճախլու ոսկիս չինեալ ծրարեսցես և եթէ այտի առ սուրբ Աթոռս եկօղ լիցի հաւատարիմ անձն, ընդ նմա յղեսցես առ մեզ, իսկ եթէ առ այսր եկօղ չգտանիցի, հասուսցես հաւատարմաւ ի Թօխաթ առ գործակալ պարոն Գասպարն, զի և նա առ մեզ հասուսցէ ի պէտս ծախուց սրբոյ Աթոռոյս, որ կարի իմն պակասաւորեալ է ի դոլից յաղագս ընդ երկար անտերունջ մնալոյն, և ելիցն յաճախելոյ և մտիցն պակասելոյ: Ուստի և դիտեմք յօյնութիւն ժամանելոյ քեզապիսեաց հաւատարմաց: Այսքան առ այժմ բաւ. և ի հաւատարմութիւն սիրոյդ հաստատուն մնալով, ողջ լեր ի Տէր:

Գրեցաւ ի թուոջ Փրկչին 1801. և ի յօգոստոսի 29. ի սուրբ Էջմիածին:

ԺԷ. Թուղթ առ Հաշտարխանու արք եպիսկոպոսն ռուսաց Պլատօն, ծանուցումն զնորոգ հայրապետութենէ սրբազանիս, եւ զեպիսկոպոսութենէ Գրիգոր վարդապետին, եւ յանձնաւարութիւն վասն նորա եւ ազգին:

Յորմէ անխարդախ սիրով, և սրտական կարօտիւ, և հոգետենչ բաղձանօք մատուցի՝ Քրիստոսաձիրն միարար ողջոյն գերապատիւ եղբօրդ մերոյ սիրելւոյ՝ և իսկապէս բարեկամիդ սրբոյ Աթոռոյս և ազգիս Հայկազնոյ՝ Տ. Պլատոնի սրբազան արքեպիսկոպոսի, և արժանապատիւ վերատեսչի հռչակաւոր քաղաքիդ Աժտարխանու:

Որում և դիտութիւն՝ լիցի: Քանզի որպէս և յայտնի է սրբութեան ձերում, Յովսէփ երջանկամեծար հայրապետն որ հաճութիւն ընկալեալ յօրհնեցելոյ ազգիս և ի միաբանութենէ սրբոյ Աթոռոյս՝ ելեալ ի կայսերական երկրէդ գայր ի կաթուղիկոսութիւն, այն ինչ ժամանեաց ի Թիֆլիս քաղաքդ, օրհասին մահու կանխելով առ նա, վճարեաց անդանօր ըզկեանս իւր: Որոյ դհոգին Տէր լուսաւորեսցէ, և զպատուական դլուխդ ողջ պահեսցէ: Յետ այնորիկ ի լսելի լինելն աստ համբաւոյ մահուան նորին, յաղագս ընդ երկար անտերունջ մնալոյ Տանս սրբոյ՝ խորհէին և խօսէին մեծամեծք և փոքունք փութով զոք գլուխ կացուցանել: Եւ զի հանգուցեալ Յովսէփ սրբազան հայրապետն կտակեալ էր վասն մեր յաջորդ իւրն կարգել, ընդ որում ի Թիֆլիզու բազմակնիք թղթով գրեալ էին, վասնորոյ ժողովուրդք երկրիս և միաբանք սրբոյ զահիս համակամեալ օծին զմեզ ի կաթուղիկոս: Ապա ըստ կտակի հոգիալոյս հայրապետին Յովսեփայ՝ զհոգևոր որդին նորա և մեր զԳրիգոր չնորհունակ վարդապետն ձեռնադրեցաք եպիսկոպոս, և մերով կոնդակաւ առաքեցաք ի հոգևոր առաջնորդութիւն մերազանց Աստուածապահ երկրիդ: Եւ մինչ հասու եղաք նախընթաց երանելի հայրապետացն մերոց առ սրբազնութիւն ձեր գրութեանց՝ յաղագս ունելոյ ձեր զճշմարիտ սէր և բարեկամութիւն առ սուրբ Աթոռս և առ ազգս մեր որք ընդ հովանեաւ մեծազօր կայսերութեանդ ռուսաց են, մեք ևս պարտ և պատշաճ իմացաք այսու սիրածիր թղթով յայտնի առնել ձեզ զանցս և զորպիսութիւնս մեր: Որով և խնդրեմ ի զեբայարգելի եղբայրութենէդ, զի զմեծագոյն մարդասիրութիւն ձեր և խնամածութիւն որ առ ազգդ մեր և զստոյգ բարեկամութիւնդ որ առ Միածնաէջ սուրբ Աթոռս, աննուազ ունիցիս և առաւելցես, և զհոգևոր որդին մեր զԳրիգոր նորապերճ եպիսկոպոսն սիրով ընկալցիս, և օժանդակութեամբ բարեշնորհութիւն ցուցցես, և սիրանշան գրովդ փութասցիս մխիթարել զնեղսակրութիւնս մեր ի

փորձանուտ ժամանակիս և ի վշտալի վայրիս։ Որոց լաւութեանցդ աղաչաւ շնորհակալ լինիցուք զամենապատուական եղբայրութենէդ։ Ո՛ղջ լեր ի Տէր խաղաղ կենօք և հարուստ ամանակօք ի հրճուանս մեր. Ամէն։

Գրեցաւ յամի Թուականութեան Փրկչին 1801. և յօգոստոսի ... ի լուսանկար Աթոռս ամենայն Հայոց՝ ի սուրբ Էջմիածին։

ԾԲ. *Թուղթ առ Լմայ կրօնաստանի միաբանսն, ի շնորհակալութիւն ընդունելութեան իւրեանց, եւ ի պատասխանի խնդրոյն՝ որ զՎարդան վարդապետն արգելուլ ի վանահայրութենէ իւրեանց խնդրեալ էին։*

Ցորժէ սիրով և օրհնութեամբ և Քրիստոսական սուրբ ողջունիւ, և սրբոյ Իջման տեղւոյս նորին շնորհիւ ծանուցումն լիցի սիրելի և հոգևոր որդւոց մերոց՝ և հարազատ զաւակացդ սրբոյ Աթոռոյս՝ ի Լիմն կոչեցեալ կղզւոջդ յանուն սուրբ Գէորգայ կառուցեալ կրօնաստանիդ զետեղելոյ խաբաղնազգեաց կրօնաւորացդ միանձանց, շնորհունակ վարդապետացդ, համեստակեաց աբեղայից, և այլ աստիճանաւորաց, և առաքինասէր մահտեսեաց։ Քանզի Թուղթք ձեր հասին առ մեզ ձեռամբ յուղարկելոցն ի միաբանութենէ ձերմէ՝ Յովաննէս խոհեմամիտ վարդապետին և բարեպաշտ մահտեսի Խաչատուրին։ Զորս ընթերցեալ ծանեաք զորդիական հպատակութիւն և սէրն ձեր առ սուրբ Աթոռս և առ մեզ, որք սիրով և պատուով ընկալեալ զօրհնաձիր Թուղթն մեր՝ ուրախացեալ էիք առ կոչումն մեր ի սոյն աստիճան հայրապետութեան սրբոյ գահիս և օրհնեալ ազգիս Հայոց, որք և գրեալ էիք բանս շնորհաւորականս հանդերձ յուսացուցմամբ արժանահայց աղօթից։ վասնորոյ զդիւր սրտի առ ստացեալ շնորհակալ եղաք զսիրելեացդ։ Զորս Տէր օրհնեսցէ և կարողացուսցէ, փրկելով ի վտանգից հոգւոյ և մարմնոյ և յաղթականս առնելով զհոգևոր մարտն ձեր ընդդէմ հնարից աներևոյթ Թշնամւոյն, միշտ ի շնորհս խնամոց իւրոց պահպանեսցէ զձեզ. հանապազ դարդարեալ առաքինական գործովք։

Իսկ յաղագս Վարդան վարդապետին որ խնդրեալ էիք ոչ դարձուցանել ի վանահայրութիւն ձեզ, իբր զի պարտսն սրբոյ Անապատիդ յոյժ բազմացուցեալ է, այլ արգելուլ, և զհաշիւն առնուլ և յղել առ ձեզ։ Գիտասջիք, որ մեք ես յօժար չէաք յապաժամն ի ձեռնադրութիւնս եպիսկոպոսաց, այլ ի սէր սրբոյ Անապատիդ և ձեր ձեռնադրեցաք զնա, բայց զկարծիս առեալ յոմանց նշանաց՝ պայմանեցաք, զի Թէ ամենայն յօժարութեամբ խնդրիցէք, առաքեցեմք, իսկ Թէ ո՛չ խնդրիցէք, պահիցեմք ի միաբանութիւն սրբոյ Աթոռոյս։ Ապա այժմ որ տհաճութիւն ցուցանելով ընդ սա՝ գրեալ էիք զհաշիւն պարտուց սրբոյ Անապատիդ առնուլ ի սմանէ, և զինքն արգելուլ, ահա յանձն արարաք եպիսկոպոսաց տեղւոյս և տեսին զհաշիւն և զորքանն պարտուց՝ ի ներկայութեան լինեալ Յովհաննէս վարդապետին և մահտեսի Խաչատուրին. որ այնքան ինչ ես չէ յաւելեալ զպարտսն ի վերայ առաջնոցն՝ որչափ դուք նշանակեալ էիք, որպէս և հաշուագիրն ցուցանէ՝ զոր յղեցաք։ Եւ զՎարդան վարդապետն պահեցաք ի կարգս միաբանից սրբոյ Աթոռոյս։ Իսկ որ յաղագս օգնութեան սրբոյ Անապատիդ կոնդակս էիք խնդրեալ ժողովարարութեան՝ բարի է և մեք յօժարիմք տալ. սակայն պարտիք նախ զպատշաճաւորն ընտրել ի վանահայրութիւն ձեզ, զի ըզկոնդակսն ի յանուն նորա տացուք, որպէս սովորութիւն է։ Եւ Թէ կամիցիք յերկար ժամանակ մնալ առանց վանահօր, զի մի երևելի լինիցի պարտատեարցն, զայն ես դուք գիտէք. քանզի ձեզ բնակչացդ է քաջ իմանալ զօգուտն և զվնասն սրբոյ Տանդ ձերոյ։ Բայց զի մի ամենևին առանց կառավարչի լինիցիք, գոնէ ընտրեսջիք զմիոյն զգլխաւոր ձեզ վէքիլ կոչմամբ, և ծանուսջիք մեզ, զի ի ժամանակին զնորա անունն գրեսցուք ի կոնդակսն մեր, և զի զսրբոյ Անապատիդ կառավարութեան լաւն և վատն ի նմանէ գիտասցուք։ Եւ ժողովարար վարդապետքն ընտրանաւ համեստք և բարեբարոյք լինիցին, և ոչ անյարմարք։ Վասնզի յառաջնմէ Թէ և այլոց տեղեաց ոմանք սեադլուխք զտգեղութիւն ինչ երևեցուցանէին, սակայն ի յանապատացդ

նկեալքն զպարկեշտք գտանէին, այլ այժմ լորոց ոչ կարծին վասութիւնք, ի նոցունց յառաջնան, որով և զայթակղութիւն լինի պարզամտաց, վասնորոյ զգուշացուցանեմք յայժմուցս, զի զփորձանսն ի համեստութեան ընարեցէք։ Եւ զուք ի սիրոյ սրբոյ Աթոռոյս աննուաղ մնասջիք, ե՛ ի սուրբ կրօնս և ի ջերմեռանդ աղօթս ձեր ժիր և արի կացջիք, և վասն մեր ևս աղօթելով առ Աստուած, լիջիք ողջ և յանձնեցեալք ի խնամս նորին հանապազ. Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾ թուոջս և ի յօղոստոսի ի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

Դարձեալ՝ դիտասջի՛ք պարզապէս վասն հաշուոց Վարդան վարդապետին, որ վերահասութեամբ եպիսկոպոսաց մերոց սահմի եզև, և ինքն կնքեաց, և ընդ թղթոյս յղեցաք առ ձեզ, որպէս կարէք տեղեկանալ։ Վարդան վարդապետի ընկալեալ մուտքն՝ հանդերձ աւեցեալ պարտուքն է՝ ԺՌ. ՑՃ. ԿԹ. ղուռուշ։ Իսկ արարեալ խարճն, հանդերձ հատուցեալ պարտուքն է՝ ԺԱ Ռ. ԺԳ. ղուռուշ։ Աբրահամ վարդապետի արարեալ հին պարտքն է ԹՌ. ԴՃԽԹ. ղուռուշ. յորմէ Վարդան վարդապետն առ. ԸՃԻԸ. ղուռուշ հատուցեալ զոլով, մնաց ԸՌ. ՁՃԻԷ ղուռուշ։ Որոց զսահին ընդ թղթոյս տեսեալ վերահասու լիջիք։

ԾԹ. *Թուղթ ի Թիֆլիզ, առ Մէլիք Դարչին Բէհբուտեանն։*

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ՝ դիտութիւն լիցի ձերդ վեհանձնութեան։ Զի՝ զհարազատ և ջերմեռանդ բարեկամութեամբ զթուղթդ՝ ընկալաք ուրախութեամբ, և շնորհակալութեամբ սրտի՝ յերևան քաղաքի ի յանապատն մեր որոյ զպատասխանին երկու թղթովք արարեալ եմք սիրոյդ, զմինն յերևանայ ձեռամբ պարոն Թաղալպէկին, և զմիւսն ի սրբոյ Աթոռոյս ընդ Գրիգոր վարդապետին և ընդ Տէր Դաւթին մերոյ, զորս մինչ ցարդ ի հարկէ ընկալեալ ես, և զհայրական օրհնութիւն մեր և զճշմարիտ անխարդախ սէր վայելել, և դիտացեալ նոքօք զհաստատուն և զանփոփոխելի բարեկամութիւն մեր, որ առ ձերդ պատուականութիւն։ Բայց ընդ այս կարի զարմացեալ կամք, թէ զիարդ մինչև ցայժմ ի ձէնջ զպատասխանի չընկալաք, և կամ որպէս զցանկալի առողջութիւնդ ի ձեռն զրոյ մեզ չծանուցեր, որք ըղձալիք են մեզ, և որում ժամէ ժամ սպասեմք դիտել, և ըստ օրինի կատարեալ բարեկամի ի սիրտ և ի յոգի զուարճանալ։ Արդ՝ եթէ նուաղութիւն ինչ սիրոյ, և կամ ցրտութիւն ջերմեռանդ մտեալ իցէ ի ներքս ի հարազատ և ի հաւատարիմ սիրելիդ մեր՝ ի յոմանց խռովասիրաց որպէս լսեմք, և որպէս ճշմարտեն ոմանք, և վասն այն ի սէր, ի բարեկամութիւն և ի պատասխանատրութիւն ոչ փութաս, հարկ էր վաղեմնի և նախածանօթ սիրելոյդ՝ ըստ ազնուական բարուցդ, և ըստ հանճարեղ խոհականութեանդ, մեզ փութով ազդել, և զստուգութիւն բանին դիտել, և ապա ըստ տեղեկութեան առնել ինչ, կամ կրկին ի սէր հաստատուն կալով, և կամ մեկուսի մնալով։ Ապա ընդդէմ քաղաքական օրինի և ընդդէմ ստոյգ սիրոյ երևի թարց վերահասութեան և քննութեան զործել ինչ, և առանց դատողութեան յայտ և կամ յայն ինչ կողմն հակամիտել փոփոխել, և յեղյեղուկ ի բարս և յարաբս երևիլ։ Այլ արդ զաչինչ կարծիս ի մտի եղեալ զձէնջ, և զամենայն բանս ունայնս և ստայօդ համարելով վերսաին այսու օրհնութեան նամակաւ, և սիրաշաղկապ զրովս՝ մատչիմք առ ձերդ ազնուականութիւն, անդրէն ի յանվերջանալի և յաննուազելի հաստատուն բարեկամութիւն և հարազատ մտերմութիւն յորդորել կամիմք։ Ուստի՝ ի յընկալնուլն ձեր զայս թուղթ սիրոյ և յորդորանաց, զպատասխանին ժամանեցուսցես առ մեզ ի փարատումն երկբայութեանց մտաց մերոց և ի յամօթ և ի նախատինս զրաբանողաց զձէնջ։

Դարձեալ և զայս յայտնի լիցի ձեզ։ Զի ի Պօլսոյ զթուղթ ընկալաք ի յուլիսի ԺԹ յորում ծանուցանեն մեզ զֆէրմանի և զբէրաթի հանիլն յանուն մեր և ի պատրաստ զոլն, միմիայն մահսարատար Կարապետ եպիսկոպոսին մերոյ սպասեն, զի ձեռամբ նորին յղեսցեն։ Այսպէս դիտացեալ քոյ, և զորպիսածանոյց զիրդ ի մէնջ անպակաս արա-

րեալ, ողջ լեր ի Տէր զօրացեալ, և նովաւ միշտ, Ամէն։ Եւս՝ զսիրելի և զհոգևոր որդին մեր Տէր Դաւիթ գիտնական քահանայն, ի շնորհս և ի յատուկ մարդասիրութիւնս ձեր յանձնեմք, ցուցանել նմա որպէս մինչ ցարդ, նոյնպէս և յայսմհետէ զառատ և զառաւել շնորհս և զխնամս։

Պայծառ իշխան ազնուազնեայ քաջատոհմիկ մերիշկարբաշի աղայ Յովսէփին մերս յատուկ հարազատին, սիրով մեծաւ զողջոյն լիսուսաձիր և զօրհնութիւն տիրական նուիրեմք։ Իմացաք ւնորա այգր չլինելն, այլ յայլ ուրեք երթալն, այնր աղագաւ՝ զԳիր սիրոյ չգրեցաք։ Ի 1801 թուոջս, ի յօգոստոսի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

Հայրական սիրով և օրհնութեամբ ողջունեմք ի Քրիստոս՝ նովիմբ զօրացեալ և ծաղկեալ բարեբողբոջ զազատազնեայ և զազնուամիտ զորդեակն քոյ և մեր զԱսլան աղայն. և զարենակիցն ձեր զԱրսէն աղայն զորս և շնորհացն Աստուծոյ յանձն առնեմք, որով ի բարձրութենէ ի բարձրութիւն ժամանեսցեն։

Կ. *Թուղթ ի Թիֆլիզ առ Սուլխան Դիւանն եւ Մանուչար Դիւանն ի պատասխանի սեպտեմբեր 3 գրեցեալ թղթոյն։*

Եւ ընդ օրհնութեան Աստուածայնոյ գիտութիւն լիցի ձերդ աստուածպաշտութեան։ Զի ձեռամբ Տէր Առաքել աւագ քահանայ սիրելւոյն մերոյ ի սեպտեմբեր Գ. գրեցեալ որդիական սիրով և կատարեալ բարեկամութեամբ զթուղթն ձեր. ընկալաք ի սոյն սեպտեմբերի ԺԱ. որով գիտացեալ զառաւելութիւն սիրոյ ձերոյ որ առ մեզ և առ սուրբ Աթոռս ծնող մայրս ձեր, ընդնմին և զառողջութիւն պատուական անձանց ձերոց, ընդ մեծայոյն մտերիմ բարեկամութեանց ուրախացեալ յոյժ, շնորհակալեցաք զձէնջ։ Եւ խնդրեցաք ի Տեառնէ պահել մշտապէս զսիրելիսդ մեր խաղաղ անդորր և երկար կենօք, ի բերկրութիւն ոգւոյ մերումս արդ կրկին պատուիրեմ սիրելեացդ մերոց, զի զորպիսութիւն ձեր և տեղւոյդ և զսիրաշաղկապ բարեկամութիւն և զօղտակար հաւատարմութիւն ի սրբոյ Աթոռոյս և ի մէնջ հանապազ անպակաս արասջիք, որովք ունիք վայելել զօրհնութիւն Աստուծոյ և մեր ընդ գերագոյ շնորհացն սրբոյ Աթոռոյս, յարապէս հանդերձ մեծագոյն շնորհակալութեամբ և զՏէր Առաքել աւագ քահանայ, սիրեցեալ որդին մեր ընկալեալ, ի սէր և ի յարգանս ցուցաք զմարդասիրութիւնս։ Յորմէ ունիք լիով ամենայն որպիսութեանց մերոց հասու լինել։ Իսկ ըգդալուսա ռաղամին ի Թեհրանայ ձեռամբ Ստեփան վարդապետին հանդերձ ընծայիւքն զոր յատկապէս ի ձեռն պատուաւոր խանին յղեալ էր, և զֆերմանին ի մեծէն Պօլսոյ ձ՛ռամբ սուհանդակին ի միում աւուր և զայլ սոյնպիսիս գրեալ եմք յառաջագոյն ի քաղաքիդ. զորս մինչ ցարդ լուեալ էք ի հարկէ։ Այսպէս գիտացեալ ողջ լերուք ի Տէր. Ամէն։ Ի 1801 և ի սեպտեմբեր 18 ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ԿԱ. *Թուղթ առ Հաղբատայ առաջնորդն, եւ Մինաս վարդապետն, եւ աւագ քահանայսն ի պատասխանի թղթոյն նոցա՝ որք զանգատեալ էին զՏափի թաղի Տէր Գրիգորէն թէ հրամանագրով Վրաց մեծամեծացն ինքնին գործակալ ծեւանալով ի գիւղօրայսն սարտարեանց՝ արգելու զարդիւնս սրբոյ Աթոռոյս եւ Հաղբատայ։*

Յորմէ սիրով և օրհնութեամբ Քրիստոսականաւ սուրբ ողջունիւ գիտութիւն լիցի սիրելեացդ մերոց և հարազատ որդւոցդ սրբոյ Աթոռոյս, Սարգիս շնորհազարդ արքեպիսկոպոսիդ Հաղբատայ սրբոյ վանից, և մեր վէքիլ Մինաս խոհեմամիտ վարդապետիդ, և սրբանուէր քահանայիցդ Թիֆլիզու քաղաքի, աւագաց և երկրորդաց։ Զի բազմակնիք թուղթ ձեր էհաս առ մեզ. և ծանուցաւ նորահնար անկարգ արարողութիւն ի Տափի թաղն եղեալ Գրիգոր անուն չերիցուն, որ թարց գիտութեան սրբոյ Աթոռոյս և տեղւոյդ առաջնորդաց՝ աշխատ առնելով զպատուական իշխանաւորսն վրաց՝ թուղթս է առեալ ի նոցունց և ինք-

նայելուխ գործակալ ձևացեալ ի գիւղօրայսն ժառանգութեան նոցա, որք են թեմք սրբոյ Աթոռոյս և Հաղբատայ սրբոյ վանացն, և արգելու զհոգևոր պտուղս հասութից նոցա, վասն իւր յափշտակել կամելով։ Զոր ի գիտելս մեր զարմացաք թէ դա այնքան մարդ չէ որ մինչև ցայժմ ի տեղս լսելի եղեալ իցէ և ծանօթ ումեք լիցի, ապա զիարդ յանդգնեցաւ զայդպիսի անօրինակ արարողութիւն յինքենէ հընարել, արտաքոյ սահմանաց և աւանդութեաց նախնեաց, ընդվզելով ընդդէմ խրատուց և զգուշացուցման ձերոյ։ Յայտնի է և այլոց ազգաց՝ որ հոգևորական կառավարութիւն մերաղանց զորրոյ Աթոռոյս կախեալ կայ, և եթէ մեզ կամ առաջնորդացն երկրիդ գործակալ իցէր պիտոյ, մեք պարտ էաք կացուցանել, ապա եթէ մեզ ոչ է կարևոր՝ դա որոց է գործակալ, և զինչ հոգածութիւն է ունելոց առ ժողովուրդսն, և յոյր անուն է զարդիւնս խնդրելոց։ Եւ եթէ իշխանաւորքն այնք գրեալ իցէին մեզ զայնպիսի տարականոն խնդիր, մեք զբանաւոր պատասխանիս գրել ունէաք նոցա, այլ բնաւ չենն ինչ գըրեալ մեզ, իսկ անզգամ չէրէցդ խստացեալ ի ստահակութեան իւրում նոր իմն բանաւոր կամի երևիլ արտուղի ընթացիւքն։ Որոյ ամբարշտութեան ի հատուցումն արժան էր արկանել զնա ընդ չարաչար բանադրանօք, բայց տակաւին համբերելով ոչ արարաք. այլ զթուղթ սաստի և յանդիմանութեան գրեալ ի վերայ դորա լուծաք ի քահանայական կարգէն, և զայն թուղթ յղեցաք ընդ թըղթոյս ի ձեռս ձեր, հասուցանել նմա, որ ըզփիլոնն մերկացեալ յինքենէ ընդ ժողովրդականացն դասուց համահաշուեսցի, և զզգասցի ի խոտորնակի վարուցն, և յետս կացցէ յանչափ արշաւանացն։ Իսկ եթէ յամառեալ կրկին ևս ի լրբութեան իւրում կացցէ, ծանուսջիք մեզ, այնուհետև արիւն իւր ի գլուխ իւր լիցի։ Եւ դուք եղիջիք ողջ ի Տ.ր, և յանձնեցեալք ի շնորհս նորին. Ամէն։

Գրեցաւ յամի Տեառն 1801. և ի սեպտեմբերի 19. ի յերկնահանգէտ Աթոռս սուրբ Էջմիածին։

ԿԲ. *Թուղթ ի Թիֆլիզ առ Գրիգոր երեց ոմն ի Տափի թաղն բնակեալ, որ ինքնահնար կամագիւտ լինելով ի վրաց իշխանաւորացն հրամանագիրս առեալ գործակալ էր եղեալ ի գիւղօրայսն նոցա, եւ արգելոյր զհասոյթսն սրբոյ Աթոռոյս եւ Հաղբատայ վանիցն: Առ որս յանդիմանութիւն եւ սաստ, լուծեալ լինիլ ի կարգէ քահանայութեան:*

Յորմէ ժամանեսցէ սաստ և յանդիմանութիւն ի վերայ Գրիգոր անուանեալ ոչ երիցուդ, առ ի զղջաստութիւն քեզ անզգամելոյդ ամբարտաւանութեամբ, որ ոչ գիտես յո շըրջիս, տիրացեալ զոլով աչացդ ի խաւարէ յիմարութեան։ Քանզի ահա քանիցս հասին առ մեզ բողոքք զանկարգ արարմանց քոց, որ նորագիւտ ի պատուելի իշխանաւորաց Վրաց յանդգնեալ ես ինքնագլուխ գործակալ լինիլ ի գիւղօրայս կալուածոց նոցա, ի վիճակսն սրբոյ Աթոռոյս և Հաղբատայ վանիցն, և բըռնաւորաբար ժողովել զառաջնորդական և ըզվանքական հասոյթսն ի յագուրդ անիրաւութեանց քոց։ Որ եթէ գործակալ էր պիտոյ մեզ և առաջնորդացն, մեք պարտ էաք որոնել և գտանել զհաւատարիմն զի գործոյ տէրն մեք եմք։ Իսկ եթէ մեք և առաջնորդքն ոչ եմք ընտրեալ, և բնաւ իսկ ոչ ես ի ծանօթութիւն եկեալ մեզ, ապա որոյ գործակալ ես դու, և յինչ պէտս իցես յառաջ մատուցեալ զանձնդ. և միթէ քան զքեզ լաւ անձինք չգտանեցան մինչև ցայժմ որ զայդ համարձակութիւն չարարին, և դու գերազանց ես որ վստահեցար ինքնագլուխ տիրեալ ոք թեմիցն սրբոյ Աթոռոյս և Հաղբատայ սրբոյ վանացն, առանց իրաւանց և ի կարևոր պատճառաց։ Եւ այնքան յամառեալ ես ի ժանտութեանդ, մինչև ոչ բնաւ անսալ զգուշացուցման և խրատուց թէ եպիսկոպոսաց, թէ վարդապետաց և թէ քան զքեզ արգոյ քահանայից։ Այլ տակաւին աշխատութիւն հասուցանելով մեծապատիւ իշխանաց Վրաց ջանաս պնդութեամբ յարատևիլ յանզգամութեանդ, և խարդախել զպարզ բարեկամութիւն նոցա ընդ մեզ։ Արդ՝ պիտոյ էր այժմ ըստ արժանի խստութեան քում առնել զվրէժխնդրութիւն, բայց դ՛ո. ես երկայնամտեալ միայն հրամայեմք լուծանել

քեզ ի քահանայական կարգէ, և տպաշաւեալ ի վերայ նորահնար լրբենի արարողութեանդ, և ամենևին հրաժարիլ յազգմանէ․ զի դու ոչ ես գործակալ և խաբէութեամբ ոչ զօրես իշխանութիւն յափշտակել։

Բայց եթէ այլ ես յամառեալ ի նոյն չարիսդ կալցիս զփոյթ, յայնժամ ընդունելոց ես զկատարեալ հատուցումն։ Բաւականասցին բանքս իբրև զխթան զզաստացուցիչ քեզ ի թմրութենէդ որով ասցէ քեզ տէր ճանաչել զչափ անձին քո և զերծ լինել ի սաստիկ պատուհասէ։

Գրեցաւ յամի Տն. 1801 և ի սեպտեմբերի 19 ի սուրբ Էջմիածին։

ԿԳ. *Թուղթ առ Իւանէ սարտարն ի Թիֆլիզ, ի պատասխանի թղթոյն նորա վասն Ճորտ Գրիգոր երիցուն. որ ինքնին նորա թղթովն գործակալ էր կարգեցեալ, եւ քաղաքի առաջնորդք եւ քահանայքն գիր գանկատանաց էին գրեալ. վասնորոյ եւ յանդիմանութիւն գրեցաւ նմա։ Իսկ սա այժմ իւր գրով պատճառս արդարութեան տայր նմա եւ այլն:*

Յորմէ մեծաւ սիրով և կարօտիւ տացի Քրիստոսաւանդ ողջոյն և աստուածադեղ օրհնութիւն զերազնիւ սիրելւոյդ մերում և իսկապէս բարեկամիդ սրբոյ Աթոռոյս՝ վեհազնեալ, բարձրապատուիւ և փառազարդ իշխան՝ Տէրամբ զօրացեալ Իւանէ սարդարիդ։

Որում և գիտութիւն լիցի. զի թուղթն պատուականութեան քո էհաս առ մեզ, և իմացաք զգրեալսդ որ վասն Գրիգոր երիցուն։ Առ որ գիտասջիր. զի զոր յիշատակեալ ես զարժանագով նախնեացն ձերոց և ձեր զհաւատարմութիւն առ սուրբ Աթոռս, և առ զահակալսն սորին, այո և մեք հաւաստի եմք, որ բարեյիշատակ լուսահոգիքն այնք, ի սրտէ բարեկամք և ջատագովք են լեալ սրբոյ զահիս, և սրբազանից Հայրապետացն, և դու յԱստուծոյ օրհնեալ բարի շառաւիղդ նոցա այժմ ես մեզ ես իսկապէս օգտակամ, և ճշմարիտ սիրելի, զորմէ՛ շնորհակալ եմք յոյժ. սակայն անհամեստ երէցն այն խորամանկ խորհրդով զպատուական գլուխն քո ցաւեցուցանելով կամեցեալ է նոր ինն հնարիւք ինքնին գործակալ լինել՝ արտաքոյ նախնական սահմանաց, և թարց սրբոյ Աթոռոյս և մեր և առաջնորդաց գիտութեան և կամաց։ Եւ որքան զգուշացուցեալ են վարդապետքն և քահանայքն, ամենևին ոչ է անսացեալ։ Վասնորոյ բազմակնիք թղթով բողոքեալ էին առ մեզ զյանդգնութենէ երիցուն, և մեք քանի աւուրբք յառաջ սաստի և յանդիմանութեան թուղթ գրեցաք ի վերայ երիցուն, որ մերկացեալ ի քահանայական պատւոյն՝ ծանիցէ զչափ իւր և զզջասցի յանկարգ գնացիցն։ Եւ մինչ զայն թուղթսն ուղեորեալ էաք, յետ քանի աւուրց՝ ձեր պատուականութեան գիրն էհաս, որ գրես թէ ընդ Առաջնորդի փոխանորդին վիճեալ են և կռուեալ, և երիցու փիլոնն պատառոտեցեալ է, և վասն այն դատաստան խնդրես։ Արդ՝ զերազնիւ սիրելիդ իմ, զոր դու ի մէնջ խնդրես դատ առնել, մեք քոյդ իմաստութեան յանձնեմք իրաւամբ քննել, զի եթէ ազգին մերոյ հոգեոր կառավարութիւն զսրբոյ Աթոռոյս և զսորին Հայրապետէն կախեալ կայ, և զկնի մեր, ի ձեռն առաջնորդաց պարտի ընտրիլ գործակալն եթէ պիտոյ իցէ, արժան էր այդ երիցուդ յանդգնութեամբ ինքնագլուխ գործակալ լինել, և ձեզ ի զուր աշխատութիւն հասուցանել և զայդ խռովութիւն ի քաղաքիդ յարուցանել։ Թէպէտ և յիրաւի՝ մեք ոչ կամիմք և ոչ հաճիմք զի ի վարդապետաց մերոց ոք յարգութեան քում անպատուութիւն երևեցուսցէ, ըստ որում ընտիր և պատուեալ բարեկամ ես մեր, սակայն և ձերում պատուականութեան վայելուչ է՝ որ զմեզ, կամ զմեր փոխանորդ վարդապետն ոչ փոխանակիցէք ընդ երիցու միոյ որ ամենևին ստահակաբար վարի։ Քանզի եթէ գործակալ պիտոյ իցէր մեզ, մեք պարտէաք որոնել, զի գործն մեր է, կամ եթէ զիրաւունս ունէր գործակալ լինելոյ՝ պարտ էր ձեր յարգութեան գրովն գալ առ մեզ, և թէ կերպիւ իւիք կարեոր լինէր, վասն խաթեր ձերոյ ոչ անտես առնէաք։ Այլ ախտաւորդ այդ գիտելով որ ամենևին զիրաւունս ոչ ունի, հնարագործութեամբ աշխատեցուցեալ զձեզ թուղթ է առեալ և նորաձևութեամբ ինքնագլուխ գործա-

կալ կացուցեալ, վատ օրինակ լինելով, և զփառաւոր անուն ձեր ընդ վայր բամբասել տալով։ Ուստի ի լսելն մեր զբողոքն բազմութեան, սաստ գրեցաք նմա և լիրաւի անպատիժ չէաք թողլոց զնա ըստ իւր լրբութեան, բայց զի ձեր վեհաղնութիւն գրեալ էք, ահա զայս ասեմք, որ մեք գործակալի պէտս չունիմք, և յաղագս այնմ, յանղուգն վարեցման նորա մեղադրութիւն եմք գրեալ։ Արդ՝ եթէ նա զղջասցի ի յանկարգ ձեռնաձգութենէ իւրմէ, և զգուշասցի ի չափուն իւրում. կալ, մեք ես վասն քաղցրաղունի խաթեր ձերոյ զանց արարեալ զպատժովն, ներելոց եմք նմա դարձեալ զքահանայական կարգն պաշտել։ Եւ ձերդ ճոխապատուութիւն ի ճշմարիտ բարեկամութենէ աննուաղ մնալով ողջ լերուք ի Տէր և յանձնեցեալ ի խնամս նորա՝ հանդերձ ամենայն ձերայնովքն. Ամէն։

Գրեցաւ յամի Փրկչին 1801. և ի սեպտեմբերի ամսոյ 24. ի լուսանկար Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ԿԳ. *Թուղթ առ բժիշկ Գրիգորն ի Թիֆլիս, ի պատասխանի թղթոյն, որով խընդիրս էր արարեալ վասն Սահակաշէն եկեղեցւոյն իւրեանց, զի ինքն նորոգեսցէ, եւ ըստ հաճոյից իւրոց զաւագ քահանայ կարգեսցէ եւ այլն։ Որոց իրր բացասութիւն։*

Ցորմէ սիրով և օրհնութեամբ, և սուրբ ողջունիւ, և Միածնաէջ սրբոյ տեղւոյս շնորհիւն ծանուցումն լիցի սիրելւոյդ մերում. և հարազատ որդւոյդ սրբոյ Աթոռոյս Տերամբ օրհնեցեալ բժիշկ պարոն Գրիգորիդ։ Զի թուղթն քո մեզ եհաս ի սեպտեմբերի ամսոյ ԻԲ, զոր ընթերցեալ ծանեաք՝ զի զերիս խնդիրս էիր արարեալ. առաջինն, զի զՍահակաշէն եկեղեցիդ ձեր որ աւերեցեալ է, դու նորոգեսցես իբրև զհայրենի ձեր. երկրորդն զի ի քահանայից զովք և կամիցիս, զնա կացուսցես աւագ քահանայ առ ժամանակ մի. և երրորդն զի փեսայացուն ձեր որդեգրեալ ձեզ երբ հասցէ ի կատարեալ հասակ, քահանայացուսցես զնա, և աւագ երեց կարգեսցես եկեղեցւոյդ։ Արդ՝ առ նախկին՝ խընդիրդ զայս ասեմք թէ՝ եկեղեցին նշանակէ զժողովն հաւատացելոց, և զնիւթականն որ յանշնչից, և նիւթականն ժողովոյ բազմութեան է պիտոյ, և ոչ միոյն ումեք։ Ապա դու որ իբրև զհայրենի ասելով ձեր՝ կամիս քոյդ և եթ կամաւ շինել և ընդ քո ձեռամբ կառավարել, անպատեհ իմն է, այլ հասարակաց աղօթարան զոլով և տուն Աստուծոյ, պարտի համայն վիճակեցեալ ժողովրդեան և քահանայից և երևելի անձանց հաճութեամբն շինիլ. և հոգևորական դլխաւորաց պատշաճաւորութեամբն կառավարիլ։ Եւ եթէ անբան հօտից փարախն ոչ միայն ըստ կամաց շինողին, այլ մանաւանդ ըստ կամաց հօտապետին լինի ի պահպանութիւն և ի բարւոք սնունդ հօտիցն, որչափ ևս եկեղեցին որ հոգևոր փարախ է բանաւոր հօտից, պարտի ըստ կամաց եկեղեցւոյ գլխոյն շինիլ որ է ընդհանրական հայրապետն, և առաջնորդն, և նոցին կարգադրութեամբն կառավարիլ։ Ուրեմն չէ արժան քեզ միայնակ ինքնակամ վարիլ առ այդ դործառնութիւն. իսկ առ երկրորդ խնդիրդ, թէ զովք և կամիցես ի քահանայից, զնա կացուսցես աւագ երեց, ասեմք թէ այն ևս անտեղի բան է, զի աւագ երեցն, որ եկեղեցւոյն կառավարիչ է և ժողովրդեանն պաշտպան, այն ևս պարտի հասարակաց հաւանութեամբն ընտրիլ, և մեր հրամանաւն կարգիլ որպէս միւս եկեղեցեաց աւագ քահանայքն. և ոչ թէ միայն միոյ ուրուք կամեցողութեամբ։

Եւ առ երրորդ խնդիրդ՝ թէ յետ ժամանակի յորժամ փեսայացուն ձեր որ և որդեգրեալն է ձեզ, հասցէ ի չափ հասակի կատարելութեան, զնա քահանայացուսցես, և աւագ երեց կարգեսցես, պատասխանեմք թէ այդ անյարմար է քան զայլ խնդիրսն. նախ՝ զի ոչ դիտես զինչ ծնանիցի քեզ վաղիւն. քանզի ապագայքն Աստուծոյ միայն են դիտելիք, և ոչ մարդկան, երկրորդ՝ զի թէ այսօր ևս հասեալ իցէր յարբունս հասակի փեսայացուն ձեր, քննելի էր ի ձեռնադրողէն թէ ըստ պարագայից քահանայութեան արժանի իցէր, ապա ուր մնայ, որ տղայ է, և յետ ժամանակի է քահանայանալոց, և մինչև ցդիտեալ ժամանակն չէ յայտնի թէ զիարդ

լինիցի։ Արդեօք խոհեմութեան գործ համարի զայս աւուր անկատարն զկնի բաղում ամաց քահանայ և աւագ երէց նկատելով խորհել ե առնել ինչ. Մանաւանդ թէ յորում ժամանակի լինիցի, այն ես հասարակ ժողովրդեան խնդրոյն՝ և առաջնորդի ե Հայրապետի հաճութեան կարօտի, և ոչ միոյ կամեցողութեան։ Արդ՝ մինչ մեզ հարցանէք, մեր օրինաւոր պատասխանիք այս են. իսկ եթէ դուք համարիք զձեզ կարօղս առ. կորզելն ե փոփոխելն, չունիք պէտս ի մէնջ դիր և հըրաման խնդրելոյ։

Բայց եթէ անսայցեն օղտաւոր բանից, զհետ երթալով խաղաղութեան՝ զոր ինչ կարգ և սահմանքն ցուցանեն մինչև ցայժմ, ըստ այնց վարեաց, ի սիրոյ և հարազատութենէ սրբոյ Աթոռոյս և մեր անպակաս մնալով ողջ լեր։

Գրեցաւ յամի Տեառն 1801. և ի սեպտեմբերի 25. ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ըստ որում մարդ յղեալ ե գիր մատուցեալ էիր սիրելւոյն իմոյ Յովհաննէս խոհական վարդապետին, ի գրոյ նորին գիտացի զորդիութիւն քո և առ ի հիւանդութենէ զերծանելոյդ ուրախ եղէ և միանգամայն խնդրեցի յԱստուծոյ պահել յառողջութեան և ի յաջողութեան զպատուելի սիրելիդ իմ զերկար կեանս, ընդ անդորր կեցութեան շնորհելով։ Արդ իմ ազնիւ սիրելի, յընկալնուլ քոյ զայս նամակ օրհնութեան, ըստ յորդ հաւատոյ քոյ և ես յաւելեալ սէր, զհարազատութիւն և ջերմեռանդութիւն, առ լուսածին ծնողս քոյ, մայր Աթոռս այս ե կացեալ հպատակութեան և սերտ բարեկամութեան առ. ղահակալս սորին, լեր ջատագով զմէնջ. զի եղիցիս վայելող հանապազօր զզօրացուցիչ շնորհս անբիծ Ծնողի քո և զհայրական օրհնութիւնս մեր. գիտելով քո զայս այսպէս լեր ողջ, երկար կենօք յանձնեցեալ իխնամս ամենակալ արարչին։

ԿԵ. *Բարետոհմ Մելիք Աբով աղային:*

Ցորմէ ժամանեսցի փրկչական ողջոյն և Աստուածային նախապարգև անդրանիկ օրհնութիւն և զօրացուցիչ շնորհք Ի.Քման տեղւոյս Քրիստոսի ի վերայ ազնուական և բարետոհմ Մելիք Արով աղայիդ, իմ սիրելւոյ և հաւատարիմ զաւակիդ սրբոյ Աթոռոյս, որոյ ի Տէր խնդալ միշտ։

Ցայտ լիցի քումդ օրհնեալ բարեպաշտութեան, զհամբաւ բարեյաւութեան և իշխանաւորութեան քոյ լուեալ ուրախանամ և ճանաչեմ զձեզ, երևելի յարգի մերոյ, սրտացաւ առ սուրբ Աթոռս և բարեկամ մեզ։ Նախակոչ ընտրութեամբ սրբոյ հոգւոյն ե օծմամբ շնորհաց նորին, կարգիլ մեր յայս պաշտօն հայրապետական, գիտես լաւապէս. յորէ անտի յայնմանէ, յորում ընկալայ զսուրբ օծումն, զբաղեալ եմ հոգով առ բարուոք կառավարութիւն սրբոյ Աթոռոյս, նմին իրի չեղէ ձեռնհաս գրել զգիր օրհնութեան սիրելւոյդ մերոյ, մանաւանդ թէ մինչև ցարդ ի քէն ես չեմ ընկալեալ գիր, որպէս զի պատասխանի նորին դարձուցանէի. իսկ այժմ

ԿԶ. *Թուղթ ի Թիֆլիզ առ Մելիք Դարչինն եւ միրիշկարբաշի Ցովսէփ աղայսն վասն գալստեան ֆերմանին ի Պոլսոյ առ մեզ։*

Եւ ընդ օրհնութեանս աստուածայնոյ գիտութիւն լիցի ձերդ ազնուականութեան։ Զի զամենայն զհարկաւոր գիտելիսն քանիցս ի ձեռըն օրհնութեան. նամակաց ծանուցեալ եմք ձեզ։ Եւ յուսամք թէ հասեալք առ ձեզ գիտացեալ իցէք, բայց զարդիս այսու օրհնութեան թղթով զհարազատ սիրելիսդ մեր և զճշմարիտ բարեկամսդ ի յուրախակցութիւն մեզ հրաւիրեմք, և զձայն աւետեաց ընդ սքանչելի գործոց տեառն ի լսելիս ձեր հնչեցուցանել փութամք։ Զի և դուք ընդ համազգեաց ձերոց միակցեալ միտապէս ուրախ լինիցիք ի Տէր։ Քանզի ըստ նախինի սովորութեանցն, մեք զմեր Ստեփանոս արքեպիսկոպոսն առաքեալ էաք առ շահն ի Թէհրան վասն ֆերմանի ե ռազամի։ Եւ շահն մեծ յարգանօք ընկալեալ զնա տուեալ է յանուն մեր զազդու և հզօր ռազամն ե ի ձեռն յատուկ միոյ պատուաւոր խանի առա-

քեալ էր վասն մեր գլխիլայ և զպարդև։ Որք ի յօգոստոսի 24. յաւուր չարաթու՝ յառաւօտեանն պահուն եկին ժամանեցին ի սուրբ Աթոռս. ընդ յառաջ որոյ ելեալ մեծաւ հանդիսիւ. և խուռն բազմութեամբ ընկալաք զֆերմանն և զխիլայսն, և զաւն մեծ կատարեցաք յայն օր՝ փառս մատուցանելով այնմ որ յաջողէ զամենայն յամենայնի։ Բայց ընդ այս արժան է կարի յոյժ զարմանալ։ Զի մինչ հանգերձեալ էաք զզգեստսն մեր հանել և զմիւրանսն արձակել զի հանգիցեն։ Իսկոյն կրկին աւետաւորք եկին ի նոյն օր և ի նոյնում պահու թէ Օսմանցւոց մեծազօր թագաւորի ֆերման և բերաթն հանդերձ երկու թաթարօք ի դուռն Պազարապատին է եկեալ։ Ուստի՝ զուրախութիւն մեծ և զխնդութիւն բազում ի վերայ խնդութեանց ընկալեալ վերստին նոյն հանդիսիւ ընդ յառաջ ելեալ յոյժ յարգանօք և ընդունելութեամբ ընկալաք և բոլոր միաբանութեամբ դձայն գոհութեան ի բարձունս աեառն Աստուծոյ վեր առաքեցաք։ Եւ ընդ անքննին գործս նորին հիացեալ ապշութիւն կալաւ զմեզ. զի ի միում աւուր նկեալք և ի միում աւուր մտին ի սուրբ Աթոռս։ Քանզի յորում աւուր մեր Սահփան վարդապետն է ելեալ ի Թեհրանայ, ի նոյն օր թաթարն է յուղի անկեալ ի Պոլսոյ, և ի մի և նոյն օր տնօրինմամբ Տեառն մտին ի սուրբ Աթոռս, և պարգևեցան մեզ կրկին ուրախութիւնք։ Ուրեմն՝ ի գիտելն ձեր զայսօսիկ և զուք ընդ համայն ժողովուրդսն մեր և ընդ մեզ խնդակցեալ փառս մատուսջիք Աստուծոյ և ի սիրոյ և ի հարազատութեանց մի վերջասջիք որով և զուք շնորհացն Աստուծոյ և օրհնութեան հոգևոր հօրս ձերոյ արժանաւորք դտանիջիք։ Այսպէս առնելով ձեր և զորպիսութիւնսն ընդ ճշմարիտ սիրոյն ի մէնջ անպակաս առնելով, ողջ լերուք ի Տէր Ամէն։

Գրեցաւ ի 1801. և ի սեպտեմբերի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ԿԼ. *Թուղթ առ Դաւիթ արքայորդին ի Թիֆլիզ, ի պատասխանի թղթոյն ընդ Ղորղանեանց Գաբրիէլին գրեցելոյ։ Բայց անքացայայտօրէն։*

Ցորմէ Քրիստոսաձիր սուրբ ողջունիւ և սիրով սրտիւ, սրտական կարօտիւ և հոգևոր օրհնութեամբ ծանուցումն լիցի արդոյապատիւ սիրելոյդ իմոյ և ողտախոհ բարեկամիդ սրբոյ աթոռոյս Տերամբ Յիսուսի զօրացեալ չքնաղափառ լուսաւորադունեղ Դաւիթ արքայորդւոյդ։

Զի թուղթն մեծարգսւթեան ձերոյ ի ձեռն Գաբրիէլ բէկի Ղորղանեան էհաս առ մեզ. և ծանէաք զգրեալդ։ Արդ քանզի բանն օտարատեսակ ինն էր, որ չէր իսկ բացայայտ գրելի, զպատասխանին բերանով ասացաք հաւատարմին ձերում Գաբրիէլ բէկին՝ ասել ձեզ։ Այլ զգրելին առաջասեալ այսպէս գրեմք զի լուսաւոր հոգի բարեյիշատակ նախնիքն ձեր խնամածու են եղեալք սրբոյ գահիս. և սոուզապէս բարեկամք գահակալացն սորին նախանցելոց. ապա այժմ լուսաւորադունեզութիւն ձեր ըստ նմանութեան նոցա և առաւել ևս քան զնոսա պարտիս մեծասէր և օգտակամ լինել առ մեզ, մանաւանդ յաղագս համաշխարհիկ գոլոյն մեր ընդ ձեզ։ Եւ բարեկամին յատկութիւն է, որ ոչ զայնպիսի ինչ առաջադրէ բարեկամին՝ որ ի վնաս նորին վերաբերեսցի. իսկ եթէ այժմոյս առաջի արարեալն ի ձէնջ բան՝ վնասարեր երեի առ ազգն մեր և առ սուրբ Աթոռս, յայտ է որ արտաքոյ է ի սահմանաց բարեկամութեան։ Վասնորոյ խնդրելով խնդրեմ, ըստ օրինի անխարդախ բարեկամութեան խնայելով ի մեզ, թէ զայն խնդիր, և զայլ այնպիսիս որք՝ իբրև չկտրելիք են, ոչ գրել մեզ զի յոչ կատարման իրացն լինելոց է յարգութեան ձերում սրտապակասութիւն, և մեզ՝ նեղսակրութիւն մեծ ի յամօթոյ։ Եւ զի յիշեալն խնդիր ոչ կատարիւր, և յայնմ կողմանէ առ այլ ոք ես թուղթ էիր դրեալ Գաբրիէլ բէկին, ընդ ասացաք վայր ոչ տալ զթուղթն, չի յոչ լինիլ բանին՝ պակասութիւն բերի մեծանունութեան ձերոյ։ Եւ իբրև եցոյց նա երկնչիլ ի ձէնջ առ չտալոյն, յուսադրեցաք նմա, թէ մեք գրես-

ցուք արքայորդւոյն՝ անմեղադիր լինել ընդ։ վասն որոյ ահա գրեմք առ բարձրապատուութիւն ձեր, ոչ ինչ յանցանս համարիլ Գաբրիէլ բէկին վասն արգելման գրոյն։ Եւ զայլ երկարապէսն համառօտութեանս ի հաւատարիմ գրաբերէդ իմանալով ողջ լեր ի Տէր ի հրճուանս մեր. ամէն։

Գրեցաւ յամի տեառն 1801. և ի սեպտեմբերի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ԿԸ. *Կոնդակ ի վերայ Թիֆլիզու եւ բոլոր երկրին Վրաց յաղագս ողորմութիւն տալոյ եկեղեցւոյն Խօջայ Բէհբութեանց, որ է կառուցեալ ի Հաւլաբար անուն սուրբ Աստուածածնին, եւ է գերեզմանատուն նոցա, որ ի յարուցման պարսից եւ լեզգեաց ամայացեալ էր, եւ նորապէս բնակութիւն էին արկեալ:*

Ցորմէ ժամանեսցէ թուղթ սիրոյ, ողջունի և օրհնութեան հանդերձ հոգեզուարճ շնորհիւ Քրիստոսաէջ սրբոյ տեղւոյս և համայն հրաշալի սրբութեանցն աստանօր եղելոց, ի վերայ սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց և լուսածնունդ զաւակացդ սրբոյ Աթոռոյս՝ հայկաոէր՝ և լուսաւորչակրօն և միաբանադաւան հաւատացելոցդ ի Քրիստոս՝ որք բնակեալ կայք ի Տիրախնամ քաղաքդ Թիֆլիզ, և ի շրջակայ գիւղաքաղաքսդ և ի գաւառսդ ի Գօրի, ի Կրցխլվան, ի Սուրամ, ի յԱխալցօր, և ի Գուչէթ, այլ և ի Կախէթ, ի Թէլաւ, ի Քիսեղ, և ի համայն գիւղօրայս դոցին. նա և ի Ղազախ, ի Բամբկաձոր, Բոռչալու, ի Շամշատին և ի Շուլավէր, և ի բոլոր գիւղօրայս։ Ցորս կառուցեալ սրբոց եկեղեցեաց և եկեղեցականաց դասուց, հանճարունակ առաջնորդաց, խոհեմամիտ վարդապետաց, սրբանուէր քահանայից, աւագաց և երկրորդաց, ուսումնատենչ սարկաւագաց, պերճապատիւ մելիքաց, բարեպաշտ իշխանաց, քաջատոհմ ազնուորդեաց, երևելի քէթխուտայից, հաւատարիմ երեցփոխաց, վայելչագործ արհեստաւորաց, քրտնաջան երկրագործաց և բնաւ Քրիստոսասէր ժողովրդականացդ խմբից առհասարակ՝ մեծաց և փոքունց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսից, ի Տէր խնդալ։

Եւ ընդ շնորհաղեղուն օրհնութեանս Աստուածայնոյ դիտասջիք սիրեցեալքդ մեր ի Տէր և հարազատ որդիք մօրս հաւատոյ սրբոյ Էջմիածնի։ Զի ըստ որում ի զանազան տեսակս բարեգործութեանց ողորմութիւնն գերազանց և օգտակար է ողորմածին և ողորմեցելոյն և առաջի Աստուծոյ առաւել հաճելի և անլեղծ առաքինի։ Վասնորոյ ասէ սրբազան առաքեալն Յակոբոս թէ ողորմութեամբ բարձրագլուխ պարծի առ դատաստանաւ։ Ապաքէն ամենայն աստուածասէր անձանց արժան է ողորմած լինիլ առ արժանիսն ողորմութեամբն, որով նմանօղք լիցին ամենաողորմածին Աստուծոյ։ Եւ եթէ ըստ սրբոյն Պօղոսի առաքելոյն բանի՝ զոր ինչ սերմանէ ոք, զնոյն և հնձեսցէ, ապա և ի բարեգործ հոգւոց որոք զողորմութիւն բաշխեսցէ կարօտելոց և խնդրողաց, զնոյն գտանէ ի տեառնէ, ըստ նորայն աւետարանական բանի եթէ չափ բարուոք՝ թաթաղուն՝ դեղուն՝ և չարժուն տացին ի ծոցս ձեր, նովին չափով որով չափէք, չափեսցի ձեզ։ Իսկ արդ եթէ ամենայն կարօտելոց և պակասաւորաց ողորմելն և օգնելն է ընդունելի Աստուծոյ, որչափ ևս առաւել հաճելի է զողորմութիւնս նուիրելն սրբոց եկեղեցեաց և վանորէից և կրօնաստանաց, յորս մատչին փառաբանութիւնք և սաղմոսերգութիւնք Աստուծոյ, և սուրբ պատարագք վասն աշխարհի խաղաղութեան և վասն կենդանեաց և ննջեցելոց հաւատացելոց։ Եւ ըստ բերմանց փորձանալից կենցաղոյս վնասեալք և անշքացեալք իցեն։ Արդ՝ ի բազմաց եկեղեցեաց և մենաստանաց մի է սուրբ եկեղեցին Խօջայ Բէհբուտեանց որ ի Հաւլաբար յանուն սրբոյ Աստուածածնին կառուցեալ կայ ի հանգստարանս ննջեցելոց՝ տուն Աստուծոյ և տեղի աղօթից և մատուցման փրկագործ սուրբ պատարագին. և բնակութիւն միանձանց կրօնաւորաց. որ երբեմն ճոխ էր և պայծառ շինութեամբք և ժառանգութեամբք որչափ պէտքն էին։ Բայց ամօք յառաջ ի յարուցման լեզկեաց և յարձակման աւերագործ զօրացն պարսից, որպէս բազում եկեղեցիք, նմանապէս և այն խանդարեալ անշքացաւ և պակասեցաւ ի վայելչութեանց։

Ուստի և բնակիչքն ոչ առեալ դկալ ցրուեցան։ Իսկ այժմ մինչ ողորմութեամբ Աստուծոյ ի խնամոց ինքնակալ օգոստափառ մեծի կայսերն անդորրացեալ է երկիրդ, Յովսէփ աշխատասէր վարդապետն կարգեցեալ է հոգածու և առաջնորդ սրբոյ անապատին այնմիկ. որ և բարւոք ջանացողութեամբ արկեալ է կարգս շինութեան, և ժողովեալ զպաշտօնեայս եկեղեցւոյ պարապի աղօթից և օրհնութեան։ Սկայն առ ի նորոգութիւն առնել և կատարելապէս շինացուցանել, կարօտի լիագոյն օգնութեան Աստուածասիրացդ ամենեցունց. Վասնորոյ զայս օրհնածիր և յորդորական կոնդակ գրեալ առ սիրելի և հոգեոր որդիսդ մեր՝ շնորհեցաք նոյն Յովսէփ բարեջան վարդապետին՝ որ այսու շրջելով ի մէջ ձեր, խնդրեսցէ զտուրս ողորմութեան յօգնութիւն շինութեան և նորոգութեան լիշեցելոյ սուրբ անապատին։ Ուրեմն՝ ի փառս Քրիստոսի, և ի սէր երջանիկ մօր նորա սրբուհւոյ կուսին Մարիամու՝ յորոյ անուն կառուցեալ կայ սուրբ եկեղեցին, ի գալն Յովսէփ հանճարունակ վարդապետին ի սուրբ եկեղեցիսդ ձեր և առ ձեզ ընկալջիք սիրով և պատուով. և առատաձեռնեսջիք նմա զլիագոյն տուրս ողորմութեան իբրև օգնութիւն և իմաստիւ °) առնելով նորոգութեան և բարեզարդութեան սրբոյ անապատին այնմիկ։ Զորս առընկալեալ կամաւոր տրօքն ձերովք կատարելապէս շինացուսցէ և վայելչացուսցէ զսուրբ անապատն զայն հաստատելով ըզպաշտօնեայս և ժամակարգութիւնս ի նըմա. և փոխանակ վարձու և առատ աըրոցն ձերոյ՝ զորս տայցէք, պարգևեսցի ձեզ առ ի վերուստ բարեացն առատութիւն, զի առնելով զամենայն պէտս ձեր ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, օրհնեսցէ զձեզ և զօրացուսցէ և ի խոր խաղաղութեան պահեսցէ փրկելով յամենայն վտանգից և ի փորձութեանց։ Եւ ի սուրբ եկեղեցւոջն յայնմիկ որքան աղօթք, սաղմոսերգութիւնք, օրհնաբանութիւնք և սուրբ պատարագք մատչին, լայնցանէ մասն և բաժին եղիցի ձեզ կենդանեացդ և ննջեցելոց ձերոց Ամէն։

Գրեցաւ յամի տեառն 1801. և ի սեպտեմբերի ... ի լուսանկար Աթոռս սուրբ Էջմիածին։

ԿԺԹ. *Թուղթ ի վերայ Աղբակու, Սալմաստու, Որմու եւ այլ վիճակաց սըրբոյ վանից սըրբազան Առաքելոյն Բարդողիմէոսի. յիշումն հայրապետութեան նորոգ սըրբազանին, եւ պատասխանի Սալմաստցւոց եւ Աղբակցւոց խնդրոյն վասն առաջնորդի։*

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ՝ գիտասջիք՝ հոգեոր որդիք մեր սիրեցեալք ի Տէր, և հարազատ զաւակք Մօրս հաւատոյ սրբոյ Էջմիածնի։ Զի ըստ վերնախնամ տեսչութեան որ յաջողեցաւ մեզ կարգիլ ի սուրբ Աթոռս հայրապետութեան, և ընկալաք զօծումն կաթուղիկոսութեան օրհնեցելոյ ազգիս Հայոց և սրբոյ գահիս, գրեցաք ի զանազան կողմանս զթուղթս օրհնութեան և ծանուցման մերս հանդիպմանց, ընդ որս նաև ի Թարվէզ և յՈրմի և յայլ կողմանսն։ Եւ կամէաք ի յօրհնեալ երկիրս ձեր և՛ս գրել, սակայն պէսպէս լուրքն վրդովմանց տեղեացդ որք եղեալ էին, և մերս յողնազան զբաղմունքն արգելս եղեն, նազի և նոր համբաւ ոչ հասանէր յականջս մեր թէ յորպիսի կացութեան էիք։ Առորս մեծ տարակուսանս ունէաք։ Բայց այժմ որ Աղբակցւոցդ բազմակնիք թուղթն, և Սալմաստեցւոցդ առ Աղբակու Դօլվաթլու բէկն գրեցեալ տաճկերէն թուղթքն ի միասին հասին առ մեզ, թէ ի թղթոյն և թէ ի գրաբերացն ծանեաք զորպիսութիւնս ձեր, և առ այն զի սակաւ մի անդորրութիւն գտեալ՝ հոգայք յաղագս սըրբոյ վանիցն ձերոց, մխիթարեցաք իբրու թէ, և խնդրեմք յԱստուծոյ, զի ըստ մեծի ողորմութեան իւրում ողորմեալ տացէ ձեզ զբաւական ապահովութիւն և զխաղաղութիւն և զշինութիւն, և մխիթարեսցէ ի վերայ բազմապատիկ նեղութեանցն և տառապանացն զորս կրեցայք։ Իսկ առ այն զի բազում աղէտալի բանիւք ծանուցեալ էիք զչափաւորութիւն և զանշքութիւն սրբոյ վանիցն ձերոց, սրտմտութիւն մեծ եղև սրտից մերոց. և պատճառն որ ցուցեալ էիք զանհոգութիւն կառավարչին և զանկարգաբար վարեցմունսն, մեք զԽաչատուր վարդապետն ոչ այնպէս ճանաչէաք, և տարակուսիմք թէ՝ զիարդ փոփոխեալ իցէ ի վատ անդր, որ այդքան վնա-

սաղործ և զայթակղեցուցիչ հոչակի։ Արդ՝ քանզի խնդրեալ էիք զայլ ոք կարգել առաջնորդ իբր զի շինարար լինիցի սրբոյ վանիցն, լաւ էիք գրեալ և յայտնի է թէ բարեմտութեամբ է խնդիրն ձեր, սակայն մեք երկար խորհեցաք՝ զի այդ շուտափոյթ լինելոյ բան չէ, այլ քաջ տեղեկութեան, և բազմաց խորհրդակցութեան և բազմաքննին ընտրողութեան պէտք են առ ի զօգտակարն կացուցանել։ Ապաքէն որովհետև հարկ էր Խաչատուր վարդապետին մինչև ցայժմ գալ ի սուրբ Աթոռս և յետացաւ, ահա թուղթ գրեցաք նմա որ յԱղբակայ և ի Սալմաստու և յայլ թեմիցն սրբոյ վանաց ձերոց յիւրաքանչիւր գաւառացդ քանի մի երևելի մարդիք գայցէք. ի միասին խորհրդակցելով խօսեսցուք և ընտրեսցուք, եթէ Խաչատուր վարդապետն յանձն առցէ հրաժարիլ յարտուղի և վնասաբեր ընթացիցն, և շինեցուցանել զսուրբ Տունն հոգւոց ձերոց, և դուք հաճիցիք ընդ նա թերևս դարձեալ զնա տարջիք, և թէ այն ի գլուխ չգայցէ, զայլ ինչ որ բարեգոյն թուիցի ձերովդ կամակցութեամբ, այնպէս արասցուք։ Ահա որպէս գրեցաք, պարտի Խաչատուր վարդապետն շուտով ելանել գալ ի սուրբ Աթոռս, և ոչ ևս յամել։ Եւ ձեզ ևս գրեմ, որ մինչ հոգ ունիք վասն բարութեան սրբոյ վանիցն ձերոց, քանի մի քէթխուտայք ժողովեալ գայցէք։ Որ երկար խորհրդակցութեամբ ընտրեսցուք զօգտաւորն. եթէ Խաչատուր վարդապետն հաճելի գացի, կամ թէ ձեր յանուանէ խնդրեցն պատշաճիցի, և կամ թէ զայլ ոմն նորապէս յառ. կացուսցուք, զորն և վայելուչ իցէ, զայն հաստատեսցուք։

Եւ թէ Խաչատուր վարդապետն այժմ խոյս տացէ ի գալոյ և հեռասցի, ինքնին ստուգելոց է զյանցաւորութիւնս իւր, և թող նորոգ կոնդակի մերոյ ոչ իշխեսցէ առաջնորդ կոչիլ ձեզ։ Եւ զայլ երկարապէսն ի գրաբերացդ ունիք իմանալ։ Որքն լիջիք օրհնեալք յԱստուծոյ, և յանձնեցեալք ի խնամս նորին, և շնորհք սրբոյ Աթոռոյս ընդ ձեզ եղիցի յարաժամ, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾ. թուաջս, ի հոկտեմբերի Գ. ի սուրբ Աթոռս Էջմիածին։

Է. Թուղթ առ Սալմաստու և Ուրմու քահանայյն և քէթխուտայյն ի պատասխանի թղթոյն նոցա որք ընդդէմ Աղբակեցոց գրութեան՝ զառաջնորդ Խաչատուր վարդապետն անպարտ էին ցուցեալ, և զԱբրահամ վարդապետ ոմն խարդախիչ պարտաւորեալ: Առ որս գրի այժմ, զի Խաչատուր վարդապետն և քանի մարդիկ զայցեն, որ նորան առ նորան խօսելով բան հասկանալ լիցի։

Եւ ընդ Աստուածային օրհնութեանս՝ գիտասջիք սիրելիք մեր ի Տէր՝ և լուսածնունդ որդիք սրբոյ Աթոռոյս Էջմիածնիս։ Զի թուղթըն ձեր էհաս առ մեզ, զոր սիրով ընկալեալ ընթերցաք։ Նախ որ բարեպաշտութեամբ և քաղաքավարութեամբ գրեալ էիք զբանս շնորհաւորութեան առ հայրապետութիւն մեր, ուրախացաք ի վերայ հնազանդ որդիութեան ձերոյ, և շնորհակալ եղաք զձէնջ, զորս Տէր օրհնեսցէ, և զօրացուսցէ, և ի խընամս իւր պահեսցէ։ Բայց որ յիշեալ էիք զնեղութիւնս ձեր և զվնասոն և զաւերագործութիւնս ի զօրացն պարսից, զայնս մեք յառաջնմէ ևս գիտելով ցաւեցաք և ցաւիմք։ Այլա այդ փորձութեանց լուրն լսելով, և ճանապարհքն խառնակ գոլով, մինչև ցայժմ արգելաւ գրութիւնն մեր։ Այլ միշտ մշտակցելով ձեզ՝ հայցեմք յԱստուծոյ վասն ձեր զողորմութիւնս, որ իւր բարեգթութեամբն բարձցէ զնեղութիւնս ձեր, և փոխանակ տառապանացն զոր կրեցիք, տացէ ձեզ զխաղաղութիւն և զլիութիւն և զապահովութիւն։ Իսկ ի կողմանէ սրբոյ վանիցն ձերոց և առաջնորդի անցիցն որ գրեալ էիք երկարապէս, հոգալով և վշտանալով ընդ չքաւորութիւն և անշքութիւն սրբոյ վանացս, ծաներուք, զի քանի աւուրբք յառաջ քան զգալ թղթոցն ձերոց՝ ի յԱղբակու քէթխուտայից թուղթ էհաս մեզ, որք զտրտունջ և զամբաստանութիւնս էին գրեալ զառաջնորդ Խաչատուր վարդապետէն, և զձեր առ Հազարու բէկն գրեալ տաճկերէն թուղթն ևս յղեալ էին, և ծանուցեալ զԱբրահամու ուրումն վարդապետի նստիլն ի մէջ վանիցն, և այլն։ Եւ մինչ կամէաք մեք զպատասխանիս նոցա գրել, ձեր և միաբան

վարդապետաց և այլոց թուղթքն հասին։ Եւ անսաք որ երկուց կողմանցդ գրեալքն տարաձայնք էին և ներհակք իրերաց։ Ուստի՝ տարակուսեցաք թէ արդեօք որն իցէ իրաւացի։ Յետ երկար մտածութեան, ահա մի կոնդակ օրհնութեան գրեցաք հասարակապէս ի վերայ բոլոր թեմիցդ սրբոյ վանիցն, և յղեցաք ի ձեռս Աղբակցւոց, որք ընթերցցին և առ ձեզ յղեսցեն, և մի թուղթ գրեցաք առ Աղբակու մէլիքսն և քէթխուտայսն, թէ երկու կողմանքդ իրերաց ներհակ բանս էք գրեալ, յորոց զպարզ ինչ հասկանալ ոչ լինի, Խաչատուր վարդապետն զոր ինչ պայմանս է ընկալեալ ի յառաջնորդ լինելն, պարտի ր այնպէս վարիլ, և Աբրահամ վարդապետին չէր արժան առանց մերս գիտութեան յայնպիսի իրս ձեռնամուխ լինել։ Ապա ուրեմն յիւրաքանչիւր գաւառաց պարտիք քանի մարդիք գալ, որ բերան առ բերան խօսելով զճշմարիտն իմասցուք, և որ ինչ օգտակարն է սրբոյ վանիցն, զայն արասցուք։ Արդ՝ առաջնորդ Խաչատուր վարդապետին ևս գրեցաք գալ։ Եւ որպէս Աղբակցւոցն գրեալ եմք, նոյնպէս և ձեզ սիրելեացդ գրեմք, զի ի ձեր կողմանէ ևս քանի մարդիկ գայցէք, որ բաւականապէս հարցաքննութեամբ տեղեկասցուք զեղելութեանցն անցելոց, և կամս կցութեամբ ձերով ընտրեսցուք զպատշաճագոյնն առնելով՝ որ ի յօգուտ սրբոյ վանացն ձերոյ և ի դիւրութիւն ձեզ լինիցի։ Ապա թէ ոչ, ի հեռաւոր տեղեաց դուք զայլ ինչ գրելով, և աղբակցիք զայլ ինչ, կատարելապէս հոգացողութիւն ոչ լինի։ Այսպէս գիտացեալ՝ ըստ գրեցելոյս առնել ջանալով ողջ լերուք ի Տէր։

Գրեցաւ ի ՌՄԾ. թուոջս և ի հոկտեմբերի Ի. ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՀԱ. *Թուղթ ի Գիլան առ Անզալի եղեալ պարոն Ալէքսանն ծանուցումն զտեղւոյս անցից, եւ հարկ՝ գրել զտեղւոյն զորպիսութիւնն, եւ թէ ի մերայնոցն ովք են մնացեալք եւ զիարդ կան։*

Եւ ընդ սիրոյ և օրհնութեանս՝ ծանուցումն լիցի սիրելութեանդ։ Քանզի յայտ իսկ է եթէ ամենայն իրք բարիք որք յաջողին յաշխարհի, տնօրէնութիւն նոցա ի կամաց բարձրելոյն նկատի։ Ըստ այսմ է իմանալ և մերս կոչումն ի յայս աստիճան Հայրապետութեան։ Քանզի յետ վախճանման Տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին, բազում բանք անցեալ, թէպէտ և անուն կաթուղիկոսութեանն կոչեցաւ ի վերայ Յովսէփ արքեպիսկոպոսին հիւսիսակողման, բայց և նա մինչ առ սուրբ Աթոռս՝ ի Թիֆլիզ քաղաքին վախճանեցաւ, որոյ զհոգին Տէր լուսաւորեսցէ, և զձեզ ողջ պահեսցէ։ Եւ սակայն լուսաւորեալ հոգին կտակեալ էր յաղագս զմեզ յաջորդեցուցանելոյ։ Որպէս ի Թիֆլիզու քաղաքէն բազմակնիք թղթով ծանուցեալ էին։ Ուստի միաբանք սրբոյ Աթոռոյս և ժողովուրդք երկրիս յատկացուցեալ զմեզ յայս պատիւ, և ընկալաք զօծումն կաթուղիկոսութեան յապրիլի ԻԸ։ Եւ հետևաբար գրեցաք զթուղթս յամենայն կողմունս, և յՕսմանցւոց տէրութենէն զֆէրման և զբերաթ, և ի պարսից շահէն ևս ռաղամս և խիլայս ընկալաք։ Ապաքէն պարտէաք և յայդր գրել զկոնդակ նախընծայ օրհնութեան մերոյ, բայց ամենևին անտեղեակ գոլով զորպիսութեանց տեղւոյդ, և թէ մերազնէից որքան ինչ տունք են մնացեալք յայդր, և ովք իցեն երևելիքն, զայսոսիկ չգիտելով արգելեցաք։ Այլ զի քեռորդին քո և յատկապէս սիրելին մեր բարեպաշտօն մահտեսի պարոն Յովաննէսն՝ զքէն ազդարար մեզ, վասն որոյ զայս թուղթ անդրանիկ օրհնութեան մերոյ գրեալ ի ձեռն նորա առաքեցաք առ քեզ, զի ծանիցես եղելութեանց. և զտեղւոյդ մեզապատշաճ գիտելի զորպիսութիւնսն և զմերային ժողովրդեան զիարդ կեալն գրեսցես մեզ. զի գիտացեալ և առ նոսա զօրհնութեան կոնդակ գրեսցուք։ Այսչափ առ այս բաւ համարեալ խոհեմութեանդ՝ ողջ լեր ի Տէր։

Գրեցաւ ի ՌՄԾ. թուոջս, և ի հոկտեմբերի ... ի յերկնահանգէտ Աթոռս սուրբ Էջմիածին։

ՀԲ. *Թուղթ ի Շուշի առ քահանայսն եւ իշխանսն, խնդիր թէ՝ ի մեծն Պոլիս վախճանեցեալ Ագուլեցի Շահինենց պարոն Պօղոսին զաւակ ունի եւ թէ ոչ, մահսէրիւ[10]) գրեալ վկայեսցեն։*

Ցորմէ սիրով և օրհնութեամբ, և Քրիստոսական ողջունիւ ծանուցումն լիցի սիրելեացդ մերոց՝ և հարազատ որդւոցդ սրբոյ Աթոռոյս՝ յԱստուածախնամ Դղեակդ Շուշի բնակեալ ագուլեցի երեելի անձանցդ. Տէր Առաքել, Տէր Գալուստ և Տէր Մինաս խոհեմամիտ քահանայիցդ, և օրհնեալ իշխանաց բարեպաշտից՝ պարոն Թումանիդ, գանձապետ տիրացու պարոն Առաքելիդ, պարոն Բարալիդ, պարոն Մարկոսիդ, մահտեսի Զաքարիայիդ, երեցփոխ տիրացու Յարութիւնիդ, և պարոն Սոկեարիդ, և այլ խոհական քէթխուտալից։

Զի այժմոյս սիրելի եղբայրն մեր Յովաննէս պատրիարքն Կոստանդնուպօլսոյ գրեալ էր մեզ, որ անդ ի Ստամպօլ ագուլեցի զօլբանտճի[11]) Շահինենց պարոն Պօղոսն յանցեալ տարիքն վախճանեալ է, նոյն Պօղոսին աղաղաւ ասեն թէ բազում ամօք յառաջ յայդր ի Շուշի դղեկումդ ամուսնացեալ է, և զաւակ ունեցեալ, և այլք ոմանք ևս ասեն թէ նոյն պարոն Պօղոսն ի յԱգուլիսն է կարգուած, և աղջիկ զաւակն անտի ի Շուշի հարսն է եկած. Եւ ի ներկայումս ի Ստամպօլ հարց ու փորձ առնեն թէ՝ այն հանգուցեալ Պօղոսն զաւակ ունեցեալ է, թէ ոչ, և կամ եթէ զաւակ ունեցեալ է, այժմ կենդանի, թէ մեռած է. Վասնորոյ յիշեալ պատրիարգ վարդապետն խնդրեալ էր մէնջ, որ ի տեղդ գրեմք և հարցանեմք, և մահսէրիւ վկայութիւն առնումք յուղարկեմք անդ։ Նա և եթէ հանգուցեալ Պօղոսի զաւակն կենդանի իցէ, զով ոք վէքիլ[12]) կանէ իւր իսկական ժառանգութեան, որ իւր հիսէէն իսապէթ[13]) արած ապրանքն թէսլիմ[14]) լինի, թէ շատ և թէ քիչ։ Արդ՝ մինչ պատրիարգ վարդապետն այսպէս խնդիր էր արարեալ ի մէնջ, մեք ևս ահա մէկ թուղթ ի յԱգուլիս գրեցաք, և զայս թուղթ ևս առ ձեզ գրեցաք ձեռամբ հոգեւոր որդւոյդ մերոյ Սիմէօն վարդապետիդ որոյ ի հասանելն յայդր առ սիրելիսդ մեր, պարտիք հարց ու փորձ առնելով ստուգել եթէ այն հանգուցեալ Պօղոսն զաւակ ունեցեալ է, և այն զաւակն կենդանի կայ, և յետ ստուգելոյն ձերոյ՝ ճշմարտութեամբ գրեսջիք մեզ հանդերձ մօր և այլ ազգականաց անուամբքն և ամենեքեանդ վկայութիւն գրեալ և կնքեալ զմահսէրն յղեսջիք առ մեզ։ Իսկ եթէ մեռեալ իցէ, պարտիք ծանուցանել թէ երբ է մեռեալ։ Նա և եթէ ճշմարտիւ զաւակն կայ պարոն Պօղոսին, ով վէքիլ կանէ, ի Ստամպօլ, նորա անուամբն վէքիլլամայ գրեալ տացէ և յղեսցէ, որ մեք եթէ ձեր վկայութեան մահսէրն և թէ վէքիլլամայն՝ մեր թղթովն յղեսցուք ի Ստամպօլ, որ ի հանգուցեալ Պօղոսի կայիցն ինչ բաժին հասանելոց է, յանձնեսցէ վէքիլին։ Այսպէս իմացեալ, շուտով գրեցէք զբազմակնիք թուղթն ձեր և յղեցէք ձեռամբ Սիմէօն վարդապետիդ, և մի յետացուցանէք։ Եւ լերուք ողջ ի Տէր, և յանձնեցեալք ի խնամս նորին, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾ. թուոջս և ի հոկտեմբերի ԻԳ. ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՀԳ. *Թուղթ առ Լմնայ Անապատի Միաբանսն եւ նորանց վիճակի ռէսներն ի պատասխանի մահսէրական թղթոյն նորանց՝ յաղագս եպիսկոպոսութեան Անապատի հայր Անանիա վարդապետին, եւ կոնդակաց շրջաբերականաց՝ զորս խնդրեալ էին՝ յօգնութիւն պարտուց Անապատին։*

Եւ ընդ Աստուածային օրհնութեան սիրառաք նամակիս՝ ծանուցումն լիցի սիրելեացդ մերոց ի Քրիստոս, և հարազատ որդւոցդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Քանզի որպէս ընդ մարմնաւոր հարս և ընդ որդիս բնական օրէն է՝ զի ի խնդրելն որդւոյն զբարի ինչ, ոչ զանց առնէ հայրն, այլ զթաշարժեալ յօժարամիտ կատարէ զխնդիրն, այսպէս է և ի հոգևորս։ Ապաքէն այժմ և սիրելի որդիութիւն ձեր որք բարւոք խորհրդով և միաբան հաւանութեամբ զԱնանիա հեզաբարոյ վարդապետն յուղարկեալ էիք ի սուրբ Աթոռս և մահսէրական բազմակնիք թղթով խնդիր ա-

րարեալ՝ ի հոգևոր Հայրութենէս մերմէ ձեռնադրեալ զնա եպիսկոպոս, և կացուցանել ի վերայ սրբոյ կրօնաստանիդ և ձեր Հայր և առաջնորդ, մեք ևս սիրով մեծաւ և հայրականաւ գթով կատարեցաք զբարի խնդիր ձեր։ Քանզի ահա զընտրեցեալն ի ձէնջ՝ մանաւանդ թէ ի հոգւոյն սրբոյ՝ զսիրելի որդին մեր զԱնտոնիա հանճարառատ վարդապետն յաւուրս տօնի Գիւտի սրբոյ Խաչին Շնորհօք Ամենասրբոյ հոգւոյն և հայրական իշխանութեամբ մերով ձեռնադրեցաք եպիսկոպոս, ճոխացուցեալ խաչանման եմիփորոնաւ, և սրբալոյս մեռոնաւ օծեալ դճակատն և դրոյթն աջոյ, և դնելով զպատուական թագ ի գլուխն, և ագուցանելով զմատանի ի մատն, և տալով վերստին զգաւազան հովուելոյ և զաւետարան քարոզելոյ։ Զոր և կարգեցաք հայր և առաջնորդ սրբոյ Անապատիդ և համայն միաբանից դորին, և խաղաղութեամբ դարձուցաք առ ձեզ այսու օրհնաձիր Նամակաւ մերով։ Զի եկեալ յայդր ըստ օրինի հարց կրօնաւորաց ձեզ հայրութիւն արասցէ, և զսուրբ կրօնաստանդ ի շինութեան և ի բարեկարգութեան պահեսցէ ի փառս Աստուծոյ և ի պարծանս օրհնեալ ազգիս մերոյ։ Իսկ արդ՝ որպէս դուք սիրով խնդրեցիք զդա, և մեք սիրով կատարեցաք զխնդիր ձեր, և բարձրացուցեալ սրբազան Աստիճանաւ եպիսկոպոսութեան առ ձեզ առաքեցաք, պարտիք նովին սիրովն ընդունիլ և պատուել զդա, և որդիական հնազանդութեամբ լսել և առնել զամենայն Աստուածահաճոյ հրամանսն դորա՝ որք ի շինութիւն սրբոյ Տանդ և յօգուտ բարեկարգութեան ձերոյ լինին։ Եւ մի ոք ի ձէնջ հակառակեսցէ դմա, քանզի որպէս որք հնազանդին դմա, մերոց հրամանաց հնազանդիք, նոյնպէս և որք ներհակեսցին դմա, առ մեզ վերաբերի ներհակութիւն, վասնորոյ ոչ մնասցեն այնպիսիքն թարց վրէժխնդրութեան։ Ուրեմն՝ ըստ օգտակար պատուիրանացս յօժարամիտ հնազանդութեամբ կալով ընդ ձեռամբ արժանապատիւ առաջնորդիդ ձերոյ արի և ժիր լիջիք ի հանդէս հոգևոր կըրօնից և պաշտաման ձերոյ, որով և առատապէս վարձատրեսջիք ի Քրիստոսէ՝ ընդ ընտիր ծառայից նորա ժառանգելով զանանց վայելչութիւն երկնից արքայութեան։

Դարձեալ՝ յաղագս պարտուցն սրբոյ Անապատիդ որ խնդրեալ էիք զերկուս կոնդակս տալ շրջաբերականս վասն ժողովման տրոց ի հատուցանել զպարտսն, ահա զմի կոնդակ տուաք ընդհանրական։ Իսկ միւսոյն որ ի վերայ հիւսիսային կողմանն, չէր ժամ գրելոյ։ Քանզի՝ ըստ որում զեռ նոր եմք նըստեալ ի հայրապետականս Աթոռ, և տակաւին ոչ եմք թուղթս ընկալեալ ի նոցունց, և դի նոքա ի մէջ զանազան ազգաց զոլով, հազիւ մտանեն ընդ կարգաւորք, այժմ միանգամայն ժողովարարս յուղարկելն դժուարին է, մնաց ի գիպօղ ժամանակի լինել։ Այսպէս գիտացեալ ի յորդիական սիրոյ և ի հաւատարմութենէ առ սուրբ զահս և առ մեզ՝ անպակաս մնալով, և զմեզ ի յարժանահայց աղօթս ձեր յիշելով ողջ լերուք ի Տէր։

Գրեցաւ ի ՌՄԾ. թուոջս և ի հոկտեմբերի ... ի շնորհածաւալ Աթոռս սուրբ Էջմիածին։

Դարձեալ՝ որ երկրորդ թղթով բանս էիք գրեալ յաղագս հաշուի Վարդան վարդապետին՝ իբր թէ նա զոմանս պարտս ոչ է գրել տուեալ ի հաշուագրին, առ այն ասացաք եպիսկոպոսաց՝ խօսեցուցանել զՎարդան վարդապետն և զԱնանիա վարդապետն, որք և խօսեցուցին, և Վարդան վարդապետն թուղթ գրեաց առ մեզ, և որ ինչ գիտելիք են, ի թղթոյ Վարդան վարդապետին և ի բերանոյ Անանիա վարդապետին իմանալոց էք։

ՀԹ. Թուղթ առ Կտուցայ Անապատի միաբանսն, ի պատասխանի թղթոյն նոցա, որով ծանուցեալ էին զխռովեանց առաջնորդ Կարապետ վարդապետի յամենայն ի զալոյ, թէ յաղագս շինութեան զաւթին է, եւ կոնդակ էին խնդրեալ առ այն։

Եւ ընդ սիրոյ և օրհնութեանս՝ դիտասջիք սիրելիք մեր ի Քրիստոս՝ և հարազատ որդիք Մօրս հաւատոյ՝ սրբոյ Գահիս Էջմիածնի։ Զի առաքեցեալն ի ձէնջ բամսկնիք թուղթ

ձեռամբ բազմաշխատ միաբանին սրբոյ Անապատիդ՝ Գրիգոր հանճարունակ վարդապետին էհաս առ. մեզ՝ Որով նախապէս ծանուցեալ զորդիական սէր և զհպատակութիւն ձեր առ. սուրբ Աթոռս և առ. մեզ, որոյ ի նշանակ և գրեալ էիք զուրախութիւն ձեր շնորհաւորական բանիւք առ. կոչիլս մեր յԱթոռ Հայրապետութեան օրհնեցելոյ ազգիս Հայոց՝ սրտագիւր եղաք և շնորհակալեցաք զձէնջ օրհնաբանութեամբ, զոր Տէր օրհնեսցէ, և զօրացուսցէ ի հոգևոր մարտս ձեր ընդդէմ աներևոյթ թշնամւոյն՝ հակառակողին բարեաց, յաղթող լինել նմա առաքինասէր ձերդ հանդիսիւ, և վարձատրիլ ի յերկնաւոր հանդիսադրէն։ Իսկ ապա յաղագս վանահօր ձերոյ Կարապետ բարեշնորհ վարդապետին՝ որումպարտ էր դալ, և՛ յամէ տակաւին, գրեալ էիք զպատճառն թէ իցէ քալքայեալ փայտակերտ դաւթին սրբոյ եկեղեցւոյդ վիմաքարօք նորակերտելն, առ. այն թէ և ունէաք ասել ինչ, այլ թողաք, և չունիմք ստիպումն առ. ի գալ. ինքն ընտրեսցէ։ Եւ զոր խնդրեալ էիք զերկուս կոնդակս շնորհել միոյ Անապատիդ աղագաւ, մինթէ ոչ գիտէք զնախնեացն սովորութիւն՝ որք երկու սուրբ Անապատացդ մէկ կոնդակ են տուեալ։ Բայց այժմ մեք երկաքանչիւր Անապատացդ յատուկ յատուկ պատճառաց զմի մի ընդհանրական ժողովարարութեան կոնդակ տուաք, և ի ձերումն կոնդակի գրեալ եմք դյորդորումն՝ օգնութիւն առնել առ. նորոգութիւն դաւթի սրբոյ տաճարիդ։ Եւ արդ՝ մինչ հոգևոր որդին մեր յիշեալ Գրիգոր համեստակեաց վարդապետն սիրով ընդունեցեալ ի մէնջ, և ընկալեալ զայն կոնդակ, խաղաղութեամբ դարձ առնէր աստի, զայս սիրոյ և օրհնութեան նամակ գրեցաք առ. սիրելութիւն ձեր, որով և պատուիրեմք, զի յորդիական սէր և ի հաւատարմութիւն ձեր որ առ. սուրբ Աթոռս և առ. մեզ, հաստատուն մնալով յիշեսջիք ի մշտանուէր աղօթս ձեր, հայցելով սրտիմտօք զանդորրութիւն խղճալի ազգիս մերոյ՝ և զհաստատութիւն սրբոյ Աթոռոյս։ Որք և լիջիք յանձնեցեալք ի խնամս և յողորմութիւնս Տեառն յարաժամ, Ամէն։

Գրեցաւ թուականիս մերում ՌՄԾ. և ի նոյեմբերի Դ. բարձրագահ Աթոռս սուրբ Էջմիածին։

ՀԵ. Թուղթ առ Կտուցայ Անապատի վանահայր Կարապետ վարդապետն ի պատասխանի թղթոյն, եւ ի շնորհակալութիւն վասն աջահամրուրին, եւ յանդիմանութիւն վասն ոչ գալոյն:

Ցորմէ սիրով և օրհնութեամբ և Քրիստոսաւանդ ողջունիւ ծանիր սիրելի և հոգևոր որդի մեր՝ և հարազատ զաւակ սրբոյ Աթոռոյս Կարապետ հանճարաշատ վարդապետ։ Զի թուղթ քո ի հոկտեմբերի 13 գրեցեալն էհաս առ. մեզ հանդերձ բազմակնիք մահսէրիւն միաբանից սրբոյ Անապատիդ ձեռամբ հաւատարմին ձերոյ՝ Գրիգոր խոհեմամիտ վարդապետին, որով ծանուցեալ էիք թէ ունիս դփափագ յօժարութեան գալոյ առ. սուրբ Աթոռս, բայց յաղագս փայտեղէն քալքայեալ դաւթի սրբոյ եկեղեցւոյդ քարամբք նորակերտութեան յետացեալ ես։ Բարւոք էիր գտեալ զպարմար պատճառն, և մեզ չէ ինչ փոյթ ստիպել զքեզ գալոյ, բայց թէ առ. հպատակական սովորութիւն նախնեացն նկատէիր դու քեղէն ջանայիր զերագելդ՝ ընտրութեամբ բարւոյ և օգտի։ Այլ զի զկտրևոր գործ շինարարութեան սուրբ Մենաստանիդ ցուցեալ էիր առիթ արգելման, մեք ևս զմեր ախորժանս մերձաւոր նմին համարելով, ոչ երկարեմք զբան յանդիմանութեան։ Յաջողեսցէ Տէր ի կատարումն ածել զայդ, որ և մեզ ուրախութիւն է։ Իսկ որ ժողովարարութեան կոնդակ էիք խնդրեալ, հաճելի եղև մեզ, բայց զարմանալի՝ իմն զի առ. նախնեօքն երկուց Անապատացդ աղագաւ մի կոնդակ է տրեցեալ, և այժմ ի միում վայրկենի զերկու զերկու խնդրէք երկաքանչիւրոցն։ Բայց մեք ընդ միջին ճանապարհ ընթանալով զմի կոնդակ ընդհանրական Լմայ սրբոյ Անապատին տուաք, գրելով դյորդորմունս՝ օգնութիւն առնել ի ծախս շինութեան դաւթիդ։ Եւ զոր ի ցոյց սիրոյ և հաւատարմութեան յղեալ էիր յանուն մեր զաջահամբոյր ձեռամբ Գրիգոր պարկեշտակենցաղ վարդապետին էհաս առ. մեզ ԼԲ. հատ ... զոր ընկալեալ շնորհակալ եղաք զձէնջ օրհնութեամբ։ Ընկալցի Աստուած ի հաճոյս իւր, և զփոխարէնն պարգևեսցէ զառ. ի վերուստ բարեացն առատութիւն. զսուրբ Տունդ պահեսցէ ի շինութեան և ի բարեկարգութեան,

և զքեզ օրհնեսցէ ի բարւոքապէս կառավարութիւն դմին։ Խնդրեալ էիր զթուղթ յանձնարարութեան տալ Գրիգոր վարդապետին ի վերայ Ղարսայ առաջնորդ Յօհաննէս եպիսկոպոսին. կամեցաք գրել թէպէտ, սակայն բնակիչքն Ղարսայ յայսմ ամի այնքան տառապանս և վնասս են կրեալ, և այժմ ևս յայնպիսի նեղութիւնս կան, որք զինքեանս դարմանել ոչ կարեն, ուր մնաց այլոց օգնել։ Այսր աղագաւ չկամեցաւ գնալ Գրիգոր վարդապետն, և թուղթն ևս արգելաւ։ Իսկ դու ի յորդիական սիրոյ և ի հաւատարմութենէ առ սուրբ գահս և առ մեզ աննուազելի մնալով ողջ լեր ի Տէր։

Գրեցաւ ի ՌՄԾ թուոջս և ի նոյեմբերի Դ. ի սուրբ Էջմիածին։

ՀԳ. *Թուղթ առ Պօլսոյ Յովաննէս պատրիարգն, ի պատասխանի երկուց թղթոց նորա ընդ Կարապետ եպիսկոպոսին։ զրկեցելոց, շնորհակալութիւն, վասն մեծի ընդունելութեան առ նա և յաղագս գերազանց սիրոյն և օգտաջանութեան առ իրս և գործս սրբազանիս, ևս և վասն յուղարկեալ ընծայիցն:*

Յորմէ ջերմեռանդն սիրով և կաթոգին կարօտիւ և յոգնատենչ բաղձանօք մատուսցի ողջոյն Քրիստոսաւանդ սիրառատ և դեբարգոյ եղբօրդ իմում հոգւոյս յարակ ցանկալւոյ, և սրբոյ Աթոռոյս շնորհավայելչ հարազատամիտ և օգտաջան որդւոյ՝ Տեառնդ Յովհաննիսի վսեմախոհ Արհիապանծ եպիսկոպոսիդ և վայելչապատիւ պատրիարգիդ հռչակեալ մեծի մայրաքաղաքիդ Կոստանդնուպօլսոյ։ Որում և գիտութիւն լիցի։ Զի ձերդ յարգութեան երկոքին քարտէզքն սիրածիրք յօգոստոսի 18. և սեպտեմբերի 26. գրեցեալք հասին առ մեզ ի նոյեմբերի 16. ձեռամբ սիրելւոյն մերոյ Կարապետ հանճարունակ եպիսկոպոսին, հանդերձ արքունական չքեղազարդ ֆէրմանիւն և բէրաթիւն։ Զորս արժանափառ հանդիսաւորութեամբ և յարգանօք ընկալեալ. և զքոյդ սիրազմայլ եղբայրութեան զամենայն գրուածսն ընթերցաք։ Որով զառ ի վերուստ պարգևեալ անխզելի շաղկապն կցորդութեան զմիաբարն սէր ի սիրարանէ մաքուր սրտիդ եռաբորբոք վառմամբ ցոլացեալ առ մեզ տեսաք։ Արդարև՝ որպէս այն որ գտանէ զանստգիւտ իմն բարի, ուրախութեամբ մեծաւ ուրախ լինի առ այն, եղեալ զամենայն ընդդիմակս ցնծութեան ի բացեալ, այսպէս և ի գտանելս մեր զգերազանց սիրոյդ քո զբորբոքումն առ մեզ՝ մխիթարեցաք ի յոգնատեսակ տրտմութեանց, և ստացաք զուրախութիւնս բաւականս։ Եւ զընծայեցեալն յայդմանէ բազմարդիւն սիրոյ գքաղցրաճաշակն պտուղ վայելեցաք, այսինքն զմեծապատիւ ընդունելութիւնսդ ցուցեալս առ Կարապետ եպիսկոպոսն, և զյամենայն սրտէ նպաստաւոր լինելդ ի յառաջացումն իրակութեանց մերոց, և զստուգապէս յուսադիր գոլդ առ ներկայ և ապառնի գործոց մերոց յայդր հանգիպելոց հոգացողութիւնսն, և ի վերայ այսր ամենայնի ընկալաք և զերեելի նշանակսն աներեւութիցն, ըղվայելուչ ընծայսն՝ զթիրմաշալ գօտին ընդ մէջ ածելոյ, զվերարկուն, և զայլսն ընդ նոսին։ Ուստի շնորհակալ եղաք և եմք զծնողամեծար հարազատութենէդ, և զմեծասէր եղբայրութենէդ, և համաձայն քոյոյ անխառն և վճիտ դիտման հաստատեցաք և զմերս դիտումն՝ կալ մնալ յեղբայրսիրութեան հաւատարմութեան։ Հայցելով ևս յաղբերէն սիրոյ՝ հատուցանել ըստ վաստակոցդ զպարգևս երկնաձիրս և պահել զմեզ ի նոյն անշարժ, և հեռի յամենից աւերաբեր դիտմանց, և հաստատել յերկաքանչիւր հոգևոր պաշտամունս գործունեայս անամօթապարտս։ Եւ արդ՝ հարկաւորիմք գրել զկոնդակ օրհնութեան և շնորհակալութեան առ հասարակութիւն մերազուն ժողովրդոց, և զյատուկ շնորհակալութիւնս առ պատուելի ամիրայսն և առ այլս, սակայն կատարումն բովանդակութեան նոցա սակս յօժնադան հոգօք ևս ծանրացեալ գոլոյ մեր, ձեռին յաւուրս բազումս, յաղագս որոյ աճապարեցաք փութով գրել զայս թուղթ ի միամտութիւն յարգութեանդ ի կողմանէ Կարապետ վարդապետին առ մեզ ժամանելոյ, մինչև զբազմութիւն թղթոցն ի գլուխ բերեալ առաքիցեմք։

Դարձեալ՝ վասն Շահինենց Թիւլպէնտ-

ճի հանգուցեալ պարոն Պօղոսի զաւակին հարցաքննութեան որ կրկին թուղթ էիր գրեալ ի հոկտեմբերի Գ. եւ այժմ էհաս, նորին նախկին օրինակն որ վաղաղոյն էիք առաքեալ յօգոստոսի Ա. և անագան հասեալ եղև մեզ ի հոկտեմբերին, մեք ևս ի նոյն ամսոյ ԻԳ-էն թուղթ գրեցաք վասն այնմ թէ ի Շուշւոյ զղեակն և թէ յԱգուլիս առ գտանեցեալ քահանայսն և քէթխուտայսն, և ձեռամբ Սիմէօն վարդապետի ուրումն միաբանի վանացն Տաթեւու առաքեցաք, զի տարեալ հասուսցէ առ նոսա, և զպատասխանիսն բազմակնիք արարեալ բերցէ։ Բայց ողորմելին ի ճանապարհին ընդ մէջ Երեւանու և Նախչուանու՝ աւաղակաց պատահելով գերի վարեցաւ. զոր իբրև լուաք, վերստին գրեցաք զնախայիշեալ թուղթսն հարցաքննութեան, և առաքեցաք յատուկ փայեկաւ յամսոյս նոյեմբերի ԺԱ։ Սպասեմք արդ պատասխանեաց թղթոցն մերոց մինչև ցքանի աւուրս ընդունել, զորս երբ ընկալցուք, մեք ևս թուղթ գրեալ ըստ վկայութեան նոցա, փոյթ ընդ փոյթ յուղարկելոց եմք։ Այլ արդ՝ յաղագս նուիրակ Գալուստ վարդապետ եղբօրն մերոյ զմյս գրեմք, զի ի մերս կողմանէ ցանկալի եղբայրդ երաշխաւոր լիցիս և յամենայնի միամտեցուսցես, առ որ դարձեալ սիրոյ թուղթ գրեցաք՝ զի հանգուսցէ զմիտսն առ սուրբ Աթոռս՝ և ի վճարման գործոյն յօժարամիտ եկեսցէ, քանզի ի տեղի հօր պատուով ընդունելոց եմ զնա։ Նոյնպէս և Ռումելու նուիրակ Գէորգ վարդապետին յուսադիր լինիցիս՝ և ի գալն յայդր՝ բարւոք հոգունակութեամբ ուղեորեսցես առ սուրբ Աթոռս։ Գիտել լիցի և այս, զի ըստ սահմանեալ սովորութեան որ ամ յամէ ընծայք յուղարկին առ շահն պարսից, այժմ ահա և մեք հարկաւորեալ պատրաստեմք առ ի առաքել։ Յաղագս ի Հաշտարխան վախճանեալ լուսահոգի Թադէոս վարդապետի եղբօր և քեռ առ քեզ ստիպմանցն որ գրեալ էիր մեզ, գիտասջիր. զի Գրիգոր վարդապետն ի գալն իւրում աստ ոչ ինչ խօսեցաւ յայնմ կողմանէ, իսկ մեք իբրև հարցաք, պատասխանեաց թէ՝ նա ի կենդանութեան Յովսէփ կաթուղիկոսին վախճանեցաւ, և զոր ինչ արարեալ է նա ինքն լուսահոգին է արարեալ, ես քաջ վերահասու չեմ։ Ապա այժմ մինչ արգոյ եղբայրդ հարցեալ ես, պարտիմք և մեք գրել Գրիգոր վարդապետին, բայց նարդենիս և նա ի վրդովմանց Եփրեմ վարդապետին չփոթեալ ոլով, չէր ժամ գրելոյ. բարեաւ հանդարտութիւն լինիցի յետ փոքու միջոցի գրեսցուք, և զպատասխանի առեալ ազգ արասցուք սիրելութեանդ։ Իսկ և առ ի ջրումն զանազան զրաբանութեանց և զրուածոց Գաբրիէլ վարդապետին ի յուլիսի ամսոյ վերջին աւուրսն մահսար գրեցին միաբանքն տեղւոյս երկրացուվք հանդերձ և մեք թէ առ ձեզ և թէ օրհնեալ տմիրայսն և առ բազումս զրաղում թուղթս գրեցաք, և ձեռամբ Ղազար վարդապետին յղեցաք, որ յԱխլցխայու ծովային ուղեղնացութեամբ դիմեաց գալ յայդր. զորմէ մինչև ցայժմ ոչ գիր առաք, և ոչ զառ ձեզ հասանելն իմացաք։ Արդ՝ խնդրեմ, զի թէ եկեալ հասեալ իցէ յայդր, զիարդ և կամիցիս, այնպէս դարձուսցես շուտով առ սուրբ Աթոռս։ Այլ և մինչ նուաղեալ է սրբալոյս Միւռոնն, և հարկէ յառաջիկայ գարնանն նորապէս օրհնել, ի նիւթոցն քանի ինչ պակաս են, որոց մինն է միասալիլէի իւղ [16]) որ և զուկի ձէթ ասի, յայնմանէ ի տեղդ մէկ հօխայաչափ գնեալ ամրակազմ անօթով շուտով յուղարկեսցես։ Դարձեալ զմյս ծանիր, զի Ստեփան էրէց ոմն թիֆլիզեցի [17]) զոր հոգելոյս Յովսէփ կաթուղիկոսն առաքեալ էր ի Հնդիկս, յորժամ Գրիգոր վարդապետն զդի հանգուցեալոյն եբեր, և թաղէաք, ի նմին աւուր նոյն էրէցն իբրև գծպտեալ յունական կերպիւ և վարսիւք գտանեցաւ աստ. ընդ որում ունէաք բազում ինչ խօսելիք, բայց թոյլ տուաք՝ յետ երեսուն աւուց ննջելոյ նորա այսր՝ յեղակարծ իմն առանց ազգ առնելոյ մեզ ելեալ էր ի ճանապարհ իբր խոյս տալով, որոյ զկնի գործակալքն մարգիք արձակեալ դարձուցեալ էին յետս. զոր արժան էր դատել մեզ թէ զու այսքան ժամանակ գնացեալ ի Հնդիկս զայնչափ ինչ ժողովեալ ես, և զբաղումս գայթակղեցուցեալ, զինչ արարեր և ուր թողեր, և այլն, բայց սակաւ մի բանիւ ևեթ յանդիմանեալ, ներեցաք՝ միայն զհոռոմաձև հերսն կտրել տուեալ, և յանձնեցաք Գրիգոր վարդապետին. ընդ որում գնացեալ նորա ի Բամբակաձոր՝ անտի ուղեորեալ էր դէպ յայդր, և ի մտանել ի Կարին զոչ սակաւ վայրաղօղանջութիւնս արարեալ էր զմէնջ, զոր և անտի մեզ գրեալ էին։ Արդ ի Հնդկաց երկրէն վասն

նորա գրեցեալ թուղթ մի եղի ի մէջ թղթոյս և յղեցի. եթէ և լայդր գրաբանութեամբ բաջաղեսցէ զմէնջ, այգու թղթով զխտացեալ զլրբութիւն անզգամին՝ սաստեսջիք, և լռեցուսջիք ի վատաբանութեանց. Եւ յամենայնի զեղբայրական սէրդ և զօժանդակութիւնդ հանդերձ սիրայրութեամբդ աննուազ առնելով՝ ողջ լեր ի Տէր մխիթարութիւն մեզ, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾ. թուոջս և ի Նոյեմբերի ԻՆ. ի լուսանկար Աթոռս սուրբ Էջմիածին։

ՃԷ. *Օրինակ Թղթոյ Գէորգ Աղայեկովին 1801, Նոյեմբերի 19:*

Աստուածակոչ Հայրապետ ամենայն Հայոց՝ Տէր Դաւիթ սրբազան վեհապետ։

Արդ լիցի մեծութեան քում, ի վախճանիլ Յովսէփայ լուսահոգւոյն կաթուղիկոսի, բարեպաշտ կայսրն մեր ամենայն ռուսաց գրեալ էր տեղւոյս էլչի Թամարով դեսպանին թէ հանգուցեալ Յովսէփի կաթուղիկոսն կըտակ է արարեալ, որ իմ տեղն Դաւիթ սրբազանն նստցի հայրապետ ամենայն Հայոց, տամ քեզ հրաման, որ դու տլգր ծանուցես Օսմանցւոց թագաւորին և ֆէրման պէրաթ հանես շուտով օր մի յառաջ լցես Դաւիթ սրբազանին. վասնորոյ և մեք ըստ հրամանի թագաւորին մերոյ զֆէրման պէրաթդ հանեցաք և եկն Կարապետ վարդապետն և առեալ երեր, մեք ակնունէաք թէ եղև խաղաղութիւն և ուրախացաք. Եւ լսեցինք եթէ Եփրեմ վարդապետն անդ ի Մոսկով չորս գրագիր է նստեցուցեալ և աշխարհ ամենայն լըցեալ է ապականագրովն, եթէ Հնդիկս և մանաւանդ ի քաղաքս Պօլիս, և եթէ ինչ ինչ բարուրանս է դրեալ ի տէրութենէդ, ոչ համարձակիմ գրել և անդէն մահսէր է ժողովեալ ամենայն թեմիցն իւրոց, և թագաւորին օծմանն գնացեալ է ի տեսութիւն և ի օծութեան թագաւորին մատուցեալ է Դանիէլ վարդապետի զանգատանաց զիրն առ թագաւորն վասն տէրութեանդ հանդերձ ժողովրդեամբ. Յովանէս, Մինաս, և Յովակիմ ազայքն յառաջընթացք գոլով ծանուցեալ են թագաւորին զլուսահոգւոյ կտակն սուտ են հանեալ, և առաւել ծանուցեալ են թագաւորին թէ յեկեղեցին անօթ չէ թողեալ, զամենն ջարդեալ տաճկաց է տուեալ և ձեռամբ տաճկաց զօրութեամբ է օծեալ կաթուղիկոս, և վարդապետաց և եպիսկոպոսաց ամենայն օր տաճկաց տալ ծեծել, և Գրիգոր վարդապետին սուտ են հանեալ թէ այս ամենայն բանս դու ես արարեալ և Գրիգոր վարդապետն դատաստան է խնդրեալ և կայ դատաստանատունն միայն գոլով. և Քնօրինին փարալով հաճեցուցեալ են և նա ես վկայութիւն տուեալ է թէ սուտ է կտակն Յովսէփ կաթուղիկոսին, և թագաւորն մեր հաւատ է ընծայեալ նոցա և Դանիէլի աղաչանաց զիրն տեսեալ, և Եփրեմ վարդապետի և ժողովրդեան աղաչանքն տեսեալ, հաւատացեալ է նոցա, և լսելով աղաչանաց նոցա՝ գրեալ է աստ Թամարով դեսպանին իւրոյ՝ հրամայեալ է թէ՝ շուտով թագաւորին ծանուցէք և ֆէրմանն հանեցէք ի վերայ Դանիէլին՝ որ նա լինի կաթուղիկոս, և մեք հրամանաւ թագաւորին մերոյ ազգ արարաք տեղւոյս թագաւորին և ֆէրմանն կայ պատրաստի վասն Դանիէլի. Եւ դու տեղդ եթէ զինչ աշխատես ոչ գիտեմ, եթէ կամիս որ անունդ պայծառ լինի և այս ստութեան և բարուրանաց համբաւքն քեզանէ վերանալ, և բանդ յաջողակ լինի, և դու ընտիր երեխս և հայրապետութեանդ Աթոռոյն հաստատուն Մնաս և վայելես, զոր ինչ գրեմ արա վաղվաղակի, զի քեզ բարի է լինելոց, և յուսամ յԱստուած, որ փութով կատարելոց ես աներկբայապէս. Զի որպէս ստէքա աստ քոյդ ձեռամբ բերեալ Դանիէլին մանսարի զերեսն գրեցուցին և իւրաքանչիւրոց կնքոյ զանունն գրով նշանագրեցին յիւրում տեղւոջն և բազմաց կնքով ես հաստատեցին ճշմարտական վկայութեամբ եթէ յար և նման է օրինակին և Էջմիածնայ մուհրն ես նշանագրեցին ի վերայ ճակատին թղթոյ, մէնսարին միտքն է այս. մեր ամենին խնդրեալ կաթուղիկոսն Դանիէլն է. Արդ եթէ կամիս քոյդ Կարապետ վարդապետի բերեալ մահսէրի և ֆէրման պէրաթի զերեսն գրել տացես և իւրաքանչիւրոց կնքոց զանունն նըշանակել տացես իւրում տեղւոջն և միաբանիցն և ժողովրդոցն տեղւոյդ հաստատական վկայութեամբ կնքեցուցես ամենեցունցն և սուրբ Էջմիածնայ մօհրն ի վերայ ճակատին

մահսէրին դնել տացես, և թող ղալոսիկ լատուկ մին մահսար ես նոր դրել և մօհրել տացես միաբանիցդ և տեղւոյդ իշխանաց և քահանայից, և այդ եկեղեցական անօթոյն սուտն և իբաւն ե քոյդ որպէս նստիլն ծանուցես մի ըստ միոջէ հանդերձ քոյդ լատարարական և լատկական օրհնութեան թղթովն ի վերայ գթածաչունեղ թագաւորին մերոյ յատկապէս Կարապետ վարդապետիւ ե Բ. վարդապետ ես ընդ նմա հանդերձ ձեր խանի թղթով և ընծայուք յղեցես առ թագաւորն մեր և դատաստան խնդրեսցես ի նմանէ ե իրաւունք ճշմարտութեան, զի լոյծ գթած է և լսէ ճշմարտութեան, Աստուծով թշնամիք քո պարտաւորելոց են ե դու էլ թագաւորելոց ես, ահա տես դու որ չես խապար չիք Ներսէս վարդապետն մէկ մեծ խուրջին ոսկի և Ե րօխչայ թիրմայ շալ ի մէջ բոմբակի եղեալ բերեալ էր աստ ընդ հետ իւր, և կիւմրուկչիքն [18]) բացին տեսին և հիացան և տօխստն [19]) քէսայ եսուն ի դուռն թագաւորին ե զպատրիարդ Ցօհաննէս վարդապետն աքսորեցին Թօխաթ և զԳրիգորն բերել տուին արարին պատրիարդ. ե ահա արդ պիտի տայ ի դուռն որ Դանիէլի պէրաթն հանէ, և դու քեզ համար խնայես, որքան փող ունիս չը խնայես ձեռդ բաց լեր ե Կարապետ վարդապետին քանի մի վարդապետաց հետ շուտով շատ ընծայիւք յղեա ի Պետրբուրք առ թագաւորն, հոգևոր դատաստանն արդ արա և սէնօթին արդ տուր, օրէնք խնդրէ, լուսահոգւոյ կտակի վերայ վկայք քեզի կնի մէկն Գրիգոր վարդապետն մի նայ ճարէ. Եւս Տէր իմ այս գիրս հասածին պէս մին մանսար այ շինես, ե այն որ յառաջ Պետրբուրք էին մէլիքներն նոցա մհրով կնքել տաս, մահսարին մէջ դրես որ հայոց օծեալ հայրապետ մէկ կլայ, երկու չիլար, փող չխնայես որքան ունիս խարճես, թէ չունիս ինքնդ վաճառես տաս, այս բանն փողով կլայ, Կարապետ վարդապետն ղրկես, այս բանիս տակն չմնաս գլուխ ելնիս, հայոց ազգն Դանիէլին ուզելն սուտ է, ասես Պօլիս քննութիւն թող անեն, Դամիրայէ մաղայ [20]) ուզեցող չկայ, տեղս ծառայդ կգատիմ, լաքեն այս բանս փողով կլայ, դու մեզ բան չես գրած.

1801 Նոյեմբերի 29. ի մեծն Պօլիս.

ՀԸ. Կոնդակ ի վերայ Կոստանդնուպօլսոյ ժողովրդոցն առ հասարակ, շնորհակալութիւն եւ օրհնութիւն յաղագս ընդունելութեան նոցա, եւ զֆէրման եւ ըէրաթն յղելոյն ընդ մահսարատար Կարապետ եպիսկոպոսին: Ընդ որս եւ պատւէրք ոմանք, զորս օրէն է հայրապետին՝ յետ օծմանն գրել առ ժողովուրդն:

Եւ ընդ շնորհապարգև օրհնութեան և սիրոյ ողջունառաք նամակիս՝ ծանուցումն լիցի սիրելեացդ մերոց՝ և հարազատ որդւոցդ մեծի դահիս սրբոյ Էջմիածնի. Զի սրբազան առաքեալն Պօղոս ի խօսիլն զբաղմանէ պէս պէս շնորհաց հոգւոյն Աստուծոյ, (ըստ որում և ասէ՝ իւրաքանչիւր ումեք տուեալ է յայտնութիւն հոգւոյն առ. իւրաքանչիւր օգուտ, և այլն որ զհետ սմին) վերջապէս բերէ ի վերայ թէ Զայս ամենայն յաջողէ միենոյն հոգի, և բաժանէ իւրաքանչիւր որպէս և կամի. Ահա յասացելոյ աստի յայտնի երևի, զի ամենայն բաշխումն շնորհաց ի հոգւոյն սրբոյ է, և ամենայն ընտրութիւն հոգւոց նովաւ լինի. և առանց նորա ոչինչ իրողութիւն առնուլ կարէ զհաստատութիւն. Արդ՝ ի նոյն սրբոյ հոգւոյն տնօրինմանէ յաջողեալ պարտ է իմանալ և մերս նուաստութեան կոչիլն ե կարգիլն ի սուրբ Աթոռս հայրապետական. Որ թէպէտ իսկզբանէն ոչ էր յայտնի ումեք, ըստ այնմ զի ամենայն ապառնիք չե ևս կատարեցեալք՝ Աստուծոյ ամենադիտին միայն են գիտելիք. Որպէս և Սողոմոն վասն այսորիկ ասէ, զամենայն յաւիտեանսն ետ Աստուած ի սիրտս որդւոց մարդկան, որպէս զի մի գտցէ մարդ զարարածն, զոր արար Աստուած իսկզբանէ մինչև ցկատարած. Այս ինքն զյաւիտեանսն ամենայն այնպէս սահմանեաց Աստուած՝ որդւոց մարդկան ե այնպիսի զբաղմամբ եխից զաչս սրտից նոցա, զի մի գտանել ե գիտել կարասցեն զայն ամենայն՝ զոր ինչ ինքն նախասահմանեալ և տնօրինեալ է. յիւրաքանչիւր յաւիտեանսն իսկզբանէ մինչև ցկատարած.

Քանզի զլիտութիւնս ամենից նախասահմանելն իւրոյ ինքեան միայն եթող Աստուած առ ի յայտնել յիւրաքանչիւր ժամա-

նակի։ Եւ զի այսպէս է, վասնորոյ և մերս հանդիպումն յայսմ պատուոյ շնորհի՝ յառաջմանէ ի նախագիտութեան Աստուծոյ դոլով, այլ ի մարդկային մտաց տկարին անդիտելի, իսկ դրան կոչմանն մերոյ ոմանք ընդ հակառակս վարեալք դիզեցին ի վերայ մեր դրանս բասրանաց և զրպարտութեանց և հուչակեցին առ բազումս զմեզ վատահամբաւութիւն, իբր թէ մեք ծանրագունեղ կաշառօք, և եկեղեցական արծաթեղէնաց սպասուց վաճառմամբ իցեմք առստացեալ զայս պատիւ. որովք և ոչ սակաւուց մտաց պղտորութիւն և ամբոխումն եղև, և յաւելաւ հողսակրութիւն և վիշտ սրտի մերում։ Բայց նոյն ամենատնօրինօղն Աստուած՝ որ իւր մարդասիրութեան շնորհիւն նախասահմանեալ էր կոչել զմեզ ի գործ պաշտպանութեան տեսչականի այդւոյս իւրոյ՝ այսինքն ի հաչեռր հովուապետութիւն և ի ծայրագոյն պատրիարգութիւն և ի կաթուղիկոսութիւն օրհնեալ ազգիս Հայոց, և ի յատուկ հոգածութիւն տանս իւրոյ լուսակերտի սրբոյ Աթոռոյս Էջմիածնի, զորօրինակ նախապէս զարթոյց զմիտս միաբանից սորին և երկրականաց ժողովրդոց՝ ընտրել զմեզ ի յայս բարձրագոյն շնորհ, նմանապէս և զկնի այնորիկ ազդեաց ի սիրտս սիրելի եղբօրդ մերոյ պատրիարգ աստուածաբան վարդապետիդ և պատուական իշխանացդ և օրհնեալ ժողովրդեանդ մեծի մայրաքաղաքիդ՝ համաձայն և կամակից գտանել սոցա, սիրով և հնազանդութեամբ որդիականաւ ընդունել զմեզ, և զայլ ամենայն զրաբանութիւնս աւելորդախօսիցն ընդունայն համարել։ Ապաքէն բարի է ըստ ասից իմաստնոյն՝ վախճան բանից, քան զսկիզբն նոցա, զի սկիզբն ամենայն իրակութեանց անկատար է, և վախճան՝ կատարուն՝ իսկզբան գործոց կրեն սկզբնաւորօղք նոցին զծանրութիւնս հոգոց, այլ ի կատարման նոցին թեթևանան յայնց՝ և ընդունին զմխիթարութիւնս և զուրախութիւնս։ Որպէս ահա և մեք թեթևացեալ գտաք ի տարակուսանաց, և եղաք արդարև մխիթարեցեալք և զուարճացեալք։ Քանզի էհաս առ մեզ բազմակնիք թուղթն համահաճութեան ձերոյ ընդունողական և սիրալալտական, հանդերձ յատուկ թղթովք ցանկալի եղբօրդ մերոյ պատրիարգ գերզգօն վարդապետիդ և յարգելի իշխանաց, նա և նոմոսիւք մեծազօր թագաւորին զորս յօժարամիտ հոգացեալ և լցեալ էիք ձեռամբ հողևոր որդւոյն մերոյ և հարազատ զաւակին սրբոյ Աթոռոյս՝ Կարապետ լիահանճար եպիսկոպոսին, որև էհաս աստ ի նոյեմբերի ԺԶ. ի բարւոք ժամու և յուրախութեան պահու։ Ուստի հանդիպեցաւ մեզ բերկրութիւն մեծ։ Որք և սիրով բազմաւ և յարգանօք առ ընկալեալ զնոսին՝ այսինքն զնոմոսսն արքունի, և զթուղթն ձերոյ հաճելութեան մեծաւ հանգիսիւ և խնդութեամբ ընթերցաք։ Եւ ծանեաք զհամայն գրեալսն ի նոսա։

ՀԹ. Կոնդակ առաջնորդութեան եւ վըկայական եպիսկոպոսութեան՝ Վարագայ սուրբ Խաչ վանիցն առաջնորդ Յարութիւն վարդապետին:

...հայկառէր և լուսաւորչակրօն հաւատացելոցդ ի Քրիստոս՝ վիճակեցելոցդ Վարագայ սուրբ Խաչի հրաշափառ վանից, որք բնակեալ կայք ի բարեճոխ քաղաքդ Վան, և ի մերձակայսդ ի թեմս նոյն սրբոյ վանից։ Նախ հարազատս մեր միաբանից նորին խոհեմամիտ վարդապետաց, և աբեղայից և այլոց աստիճանաւորաց։ Եւ ապա սրբանուէր քահանայից, ուսումնասէր սարկաւագաց, պերճապատիւ իշխանաց, և ռէսաց, իմաստնախոհ վաճառականաց, ձեռահմուտ արհեստաւորաց, քրտնաջան երկրագործաց, և համայն օրհնեալ ժողովրդականացդ խմբից առհասարակ՝ մեծից և փոքունց։

...Եւ զհարազատ զաւակն սրբոյ Աթոռոյս զՅարութիւն յօգնաշխատ վարդապետն լցեալ էիք ի սուրբ Աթոռս ընդ հաւատարիմ նուիրակին մերոյ և թղթովք իշխանացդ խնդրեալ էիք ի մէնջ ձեռնադրել զնա եպիսկոպոս օրհնեցելոյ վիճակիդ։ Եւ մեր նկատեալ առ բարեմտութիւնս ձեր...

Քանզի ահա զսիրելին մեր զՏէր Յարութիւն զզօնամիտ վարդապետն ի տօնի Գիւտի սուրբ Խաչին, ի ներկայութեան եպիսկոպոսաց և վարդապետաց և այլ աստիճանաւորաց եկեղեցւոյ՝ և աշխարհականաց իշխանաց և ժողովրդոց՝ ի յատենի երկնահանգէտ սրբոյ

Տաճարիս, շնորհօք ամենազօր սրբոյ Հոգւոյն ձեռնադրեցաք եպիսկոպոս, արկեալ զուսովք սորա զոսկեթել եմիփորոնն խաչանման . . .

Գրեցաւ ի ՌՄԾ. Թուոջս և ի Նոյեմբերի ի շնորհածաւալ Աթոռս սուրբ Էջմիածին։

Չ. Կոնդակ ժողովարարութեան վասն Թօմայի առաքելոյ վանիցն՝ որ է յեզր Վասպուրական ծովուն որ էր իւր ամայացեալ, եւ այժմ ծեր Յովհաննէս եպիսկոպոս ոմն նորոգեալ էր զաւերսն, եւ զօգնութիւն խնդրէր:

Յորմէ ժամանեսցէ Թուղթ սիրոյ՝ ողջունի՝ և օրհնութեան և նամակ պահպանութեան, հանգերձ հոգեպարար շնորհօք Միածնաէջ սուրբ տեղւոյս։ Ի վերայ սիրելի և հոգեւոր որդւոցդ մերոց՝ և լուսածնունդ զաւակացդ սրբոյ Աթոռոյս, հալկասէր և լուսաւորչակրօն հաւատացելոցդ ի Քրիստոս, որք բնակեալ կայք յԱստուածախնամ քաղաքսդ ի Տիգրանակերտ՝ որէ Ամիդ, ի յՈւռհայ, ի Բալու, ի յԱրզնի, ի Մառէն, ի Զարսանջաղ, ի Զմշկածաղ, ի Խարբերդ, և յայլ աւանս ի շէնս՝ որք շուրջ զգոքօք։ Առաջնորդաց, քահանայից, իշխանաց, մեծատանց, արհեստաւորաց, երկրագործաց, և համայն օրհնեալ ժողովրդականացդ խմբից՝ և փոքունց, արանց և կանանց, ի Տէր խնդալ։

Եւ ընդ սիրոյ և օրհնութեան նամակիս գիտասջիք հոգեւոր որդիք մեր՝ սիրեցեալք ի Տէր և հարազատ զաւակք սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի ըստ որում ի զանազան տեսակս բարեգործութեանց ողորմութիւն դերազանց իմն է, առաւել հաճելի Աստուծոյ և անկեղծ առաքինութիւն, վասնորոյ ասէ սրբազան առաքեալն Յակոբոս Թէ բարձրազլուխ պարծի առ դատաստանաւ. և փոխարէնն հաստուցանի աներկբայապէս տուողացն ըստ Աւետարանական բանին Քրիստոսի, եթէ որով չափով չափէք, չափեսցի ձեզ։ Եւ Թէ հասարակապէս որոց և իցէ ողորմելն և օգնելն բարի է,ապա որչափ ևս առաւել արժան է սրբոց եկեղեցեաց և վանորէից անչքացելոց օգնելն առ շինութիւն և նորոգութիւն։ Որ ի փառս Աստուծոյ վերաբերի, և ի պատիւ սրբոցն նորա։ Այդ ի բազմաց վանօրէից մի է սրբազան առաքելոյն Թօմայի հրաշազարդ վանքն որ կառուցեալ կայ ի յեզերն Վասպուրականի ծովուն ի վայելուչ վայրի, ուր և ամփոփեալ կան պանծալի նշխարք մարմնոյ և ոսկերաց նորին սրբազան առաքելոյն։ Եւ վանքն այն երբեմն ճոխ էր և պայծառ շինուածովք և բազում պարագայիւք, բայց յետոյ ի խառնակութենէ կողմանց և ի յանդուգն յարուցմանց և յաւարառութեանց Թշնամեաց կողոպտեցեալ և խանգարեցեալ։ Իսկ ապա Յովհաննէս ծերունազարդ եպիսկոպոսն առաջնորդ կարգեցեալ նորին սրբոյ վանից՝ մեծաջան աշխատութեամբ նորոգեալ է զժամատունն և զայլս տեղիս յաւերածոցն. և ի կարգս շինութեան արկեալ, և ջանայ զմնացուածս խանգարելոցն ևս նորոգել, բայց Թեմքն սակաւ և ինքն պակասաւոր՝ կարօտի ողորմութեան և օգնութեան աստուածասէր ժողովրդոցդ, զի ձերով ձեռնտուութեամբ կարողանայցէ զբարւոք գիտումն իւր ի գլուխ հանել։ Վասնորոյ գիմեալ ի սուրբ Աթոռս և առ մեզ յոգնաթախանձ աղերսանօք խնդրեաց ի մէնջ զնամակ շրջաբերական տալ առ բարեպաշտութիւն ձեր և խնդրել ի ձէնջ զտուրս ողորմութեան։ Եւ մեր զիջեալ յաղաչանս նորա գրեցաք զայս Թուղթ օրհնաձիր ի վերայ աստուածասիրացդ և շնորհեցաք նմա։ Որով պատուիրեմք, զի ի գալն Յովհաննէս ծրաջան վարդապետին և ծերունի եպիսկոպոսին ի մէջ ձեր սիրով ընդունիցիք։ Եւ ըստ բարեյօժար կամաց ձերոց զառատ տուրս ողորմութեան շնորհեսջիք զորս ժողովեալ և դարձեալ ի սուրբ վանսն Թօմայի առաքելոյն նորոգեսցէ զաւերեալ տեղիսն եկեղեցւոյն և շրջակայ շինութեանց, ի փառս Աստուծոյ և ի պատիւ լիշեալ սրբազան առաքելոյն։ Եւ որպէս դուք յօժարամ շարժեալ ձեր կամաւոր տրօքն յօգնութիւն ժամանիցէք դմա և սրբոյ Տանն այնմիկ ի նորոգութիւն և ի պայծառութիւն, Քրիստոս Տէր մեր ողորմեսցի և օգնեսցէ, և պայծառացուսցէ զձեզ հոգւով և մարմնով, ատ լցուցանելով զամենայն պակասութիւնս ձեր, և ի հանդերձելումն արքայութեան երկնից արժանի առնելով հանդերձ համայն ննջեցելովք ձերովք. Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾ, Թուոջս, և ի Նոյեմբերի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՁԵ. *Թուղթ առ Պօլսոյ նուիրակ Գալուստ արքեպիսկոպոսն, շնորհակալութիւն սակս հարազատութեան եւ յորդորումն ի պատասխանատուութիւն:*

Յորմէ կարօտիւ բազմաւ, քրիստոսական սուրբ ողջունիւ և յատկական հոգևոր սիրով, ծանուցումն եղիցի իգիմական ստոյգ սիրելւոյն մերոյ և հայրապատիւ ճշմարիտ եղբօր ի Քրիստոս և բազմաշխատ հարազատիդ սրբոյ Աթոռոյս, և ծայրագոյն զգօնամիտ նուիրակիդ մեծի մայրաքաղաքիդ Կոստանդնուպօլսոյ Տեառնըդ Գալուստ սրբազան արհիապանծ եպիսկոպոսիդ։ Զի թէպէտ զամենայն իրակութիւնս ծանուցեալ եմք սիրոյդ լրիւ ի ձեռն սիրանիչ թղթոյ և չեմք բնաւին վերջացեալ ի ջինջ և ի մաքուր սիրոյ եղբայրութեան և ի գերապատիւ սիրելութենէ ձերմէ չընկալաք մինչ ցարդ զանդրադարձն։ Այլ սակայն, մինչ Կարապետ վարդապետ մահտարատար սիրելի որդին մեր վերադարձաւ ի Պօլսոյ ողջութեամբ առ մեզ ի Դահս սուրբ հանդերձ ֆերմանաւ և բերաթիւ և համահաճական մանսարաւ Պօլսեցւոց և այլոց, լիով և անթերի պատմեաց մեզ զձերդ ամենայն սրտացաւ ջանացողութիւն և զմեծագոյն հաւատարմութիւն, զորս ցուցեալ էք բանիւ և գործով ի կողմունսդ յորս կայքդ. ի պատիւ լուսակերտ ծնողիս ձերոյ և ի սէր եղբայրութեան մերոյ։ Որպէս և սրբազան պատրիարգն Պօլսոյ մեծապատիւ եղբայրն մեր և պարոն Դէօրգ Աղաեկովն քանիցս գրով զնոյնն մեզ գրելով, վկայեալ էին զձէնջ գոլ ըստ այնմ. զոր այժմ. Կարապետ վարդապետն մեր պատմէ. որոց աղագաւ չունիմք և մեք ամենեւին զկարծիս։ Ուստի և այսու անխարդախ գրով մերով նախ շնորհակալ եմք մեծաւ գոհունակութեամբ ի բոլոր սրտէ ամենայն բաւականութեամբ զձերդ յորդառատ հարազատութեանց, որոց փոխարէնն որպէս ի Տեառնէ ունիք զբազում. վարձս ընկալնուլ արժանապէս, նոյնպէս և ի մէնջ զանբաւ քաղցրութիւնս հանդերձ բազում. պատուադրութեամբ։

Արդ ոմանք ի մէնջ, որպէս Եփրեմ. վարդապետն և այլք զրաբանութեամբ պղտորեալ են թէպէտ զսիրտս պարզամտաց և ջանան վատահամբաւել զանուն մեր ի մէջ ազգին, սակայն ի յայտնիլ ճշմարտութեան ունին լետոլ խղճահարիլ, զի սուտն թարց հիման գոլով, ոչ կարէ հաստատիլ, որպէս ի բարեաւ և խաղաղութեամբ դառնալդ ի սուրբ Դահս, ունիս իրացն անցելոց ստուգապէս հասու լինել, և զայս մեր այժմեան գրութիւն ճշմարտել։ Ուրեմն ի հասանելն այսպիսի անհիմն զրուցաց, ի լսելիս ձեր ի խռովասիրաց, բոլորովիմբ խոտան համարեալ, ի սէր սրբոյ Տանս ջերմասցիք. և ձերով բարեմտութեամբ և օգտակամ. ջանացողութեամբ օժանդակ մեզ գտանիջիք։ Եւ ևս խնդրեմք սիրով, զի որպէս մինչև ցայժմ. ցուցեալ էք գործով զհարազատութիւնս, նոյնպէս և յայսմհետէ հաստատուն և անշեղլի գոլով և մնալով ի նոյնն, օր քան զօր իբրև արփի ի փայլեցուցանելն եղիջիք ի պարծանս անուան ձերոյ և ի մխիթարութիւն սրտի մերում։ Ընդ որ զամենայն որպիսութիւնն կողմանցդ և գործոյդ ընդ ցանկալի առողջութեանց ձերոց մեզ ծանուսջիք ի միամտութիւն զի գիտասցուք զհանգամանս գործոյդ և զուր լինելն սիրելւոյդ ի մտատանջութեանց զերծ լիցուք։ Այսպէս գիտացեալ և զուրախական թուղթդ ի մէնջ անպակաս արարեալ, լեր ողջ ի Տէր, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾ թուոջս և ի նոյեմբերի ... ի սուրբ Էջմիածին։

ՁԶ. *Թուղթ առ Եփրեմ արքեպիսկոպոսն ընդ Կարապետ եւ Աբրահամ եպիսկոպոսացն զանազան մտօք ըանք, որպէս տեսցի։*

Յորմէ սիրով ճշմարտիւ, բազմապատիկ կարօտանօք և փրկչաւանդ ողջունիւ և երկնաւոր միարար խաղաղութեամբ հանդերձ գերազօր շնորհիւն սրբոյ Իջման տեղւոյս Քրիստոսի, ծանուցումն եղիցի մշտահարազատ որդւոյդ և կաթնասուն հոգևոր զաւակիդ շնորհատու ծնօղիս քոյ սրբոյ Աթոռոյս, և մեր վաղեմնական նախածանօթ սիրելւոյ, և յարգելի եղբօրդ Տեառնդ Եփրեմայ շնորհառատ արքեպիսկոպոսիդ։ Զի տնօրինմամբն Աստուծոյ, զկնի բազում. իրակագործութեանց, մինչ յա-

ջողեցաւ մեզ լինել այցելու սրբոյ Տանս և ազգի, ըստ կտակի Տեառն Ցովսէփայ հոգելոյս հայրապետին, երիցս գրեցաք զթուղթս սիրոյ առ յարգիդ, կոչելով ի յարտախուսյութիւն հոգևոր, յորմէ չեղև մեզ ցարդ ընկալնուլ զարժանի զանդրադարձն։ Եւ ի յերկար միջոցսու ակնադէտ սպասելն մեր ձերդ ուրախական թղթոյն, առ. վայելել զմխիթարութիւն ինչ և զսրտագիւրութիւն, հնչեցան անախորժ ձայնք և խռովարար լուրք, և վնասակար տագտկացուցիչ համբաւ առ. մեզ։ Քանզի՝ արք աղմկասէրք թողեալ զճշմարտութիւնն, յորում Աստուած բնակի, անհիմն զրուցիւք խաբբալեալ են զպարզ միտս ձեր, և ի վերայ ընտրութեան մերոյ ի հայրապետութիւն զայթակղեցուցեալ, որոց ստայօղ բանից հետևելով ձեր և տեղի տալով՝ վրդովեալ էք և դուք զսեպհս որպէս ձերն, նոյնպէս և տեղւոյդ բնակչացն և զայն մինչև ի յունկս օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն և նորին մեծամեծացն էք հասուցեալ, և չկարացաք տակաւին պարզապէս գիտել զվախճան այդպիսի սկսուածոցդ, թէ արդեօք վասն օգտի անձին ձեր աշխատիք, և թէ վասն այլոց։ Եւս շինութեան և խաղաղութեան ցանկայք, թէ վնասուց սրբոյ Տանս, և խռովութեան ազգին և այլն։ Եթէ վասն անձին ձեր իցէ, անիրաւութիւն է վասն օգտի անձին այլոց զչարիս մաղթել, և թէ վասն այլոց, մեղանչիք առ անձն ձեր. զի կրկին անիրաւութիւն է սակս այլոց լալն. քանզի առած է նախնեաց թէ՝ լացօղն ի վերայ օտարաց, զրկի ի տեսութեանց։ Իսկ թէ՝ շինութեան Տանս և խաղաղութեան ազգին իցեն այդ արարք, դիտասջիք ստուգիւ. որ յայդպիսի ներհակ շարժմանց, ոչինչ բարի ունի յառաջանալ, եթէ ոչ մեծամեծ վնասք. ազգի ազգի խայտառակութիւնք, և բարի անուան ձերոյ մշտնջենաւոր տգեղութիւն, որպէս տեսանեմք ի գիրս պատմաբանից արձանացեալք, և ամօթ ի մէջ օտարասերից։ Եւ վերջապէս եթէ յայս յանդիման ցուցանէք զձեզ հակադինեալ ընդդէմ սրբոյ Աթոռոյս և մեր, և կամիք վրդովել զսուրբ Տունս այս, և վեր ի վայր տապալել զխաղաղութիւն մեր և ազգին, զայն ի կամս ձեր թողում։ Միայն ունիք յետոյ մեծապէս զղջանալ և խղճահարիլ, և գիտասջիք ճշմարտիւ զի ոչ ոք է, որ արար զայդպիսիդ և ոչ սարջացաւ։ Արդ՝ ի բաց բարձումն ամենայն կարծեաց և անտէպատիր բանից զտեղի տալոց ի ձեզ և ի բնակիչսն տեղւոյդ և ի յեղծումն և ի ջնումն զպարտութեանց զպարանոցացն զմեզ, առաքեցաք ահա ի դուռն օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն զհարազատ որդին սրբոյ Աթոռոյս և մեր զՎարդապետ և զԱբրահամ շնորհափայլ եպիսկոպոսունսն հանդերձ օրինակօք օսմանցւոց և պարսից հրովարտակացն, մահսարօք մեծին Պօլսոյ, և այլ քաղաքաց, և շնորհաւորական թղթովք առաջնորդաց, իշխանաց և ժողովրդոց, մերազնէից և օտարազգեաց, զորս տեսանելոց էք և գիտելոց, և զճշմարիտն ի ստոյն որոշելոց, և յամենայն երկբայութեանց և ի տարակուսանաց հանգչելոց, որովք կարէք իրացն ստուգապէս հասու լինել, թէ արդեօք հաճութեամբ ազգին է, թէ բռնութեամբ զարծաթեղէն անօթս խորտակելով և մեծամեծ կաշառօք, որպէս մտացածին բանաստեղծութեամբ բարդին ի վերայ մեր առանց խղճի և յաջ և յահեակ նկատման, և թարց զվախճան խորհելոյ։ Եւս՝ եթէ վասն առաջնորդութեան իցեն ձեր և տեղւոյդ բնակչացն վիրաւորութիւնք, առ այն գրեմ սիրելւոյդ իմոյ զստոյգն։ Զի մեք ոչ թէ հակառակ կամաց ժողովրդոցն տեղւոյդ արարաք զայն, և ոչ խոչնդոտն լինիլ ձեզ կամեցաք, զի մեզ առաւել ըղձալիք են ձերդ բարեկամութիւնք քան զայլոց. այլ զկամս և զկտակս լուսահոգւոյն լցուցանելով, ձեռնադրեցաք եպիսկոպոս և առաքեցաք յերկիրդ առաջնորդ, որպէս ի կենդանութեան իւրում նոյն հանգուցեալն գրով և բանիւ՝ ի կողմանսդ և այլ և այլ տեղիս ունէր հրատարակեալ, և որպէս յայտնի ճշմարտեն ձեզ զասացեալքս պարոն Կնօրինի առ մեզ գրեցեալ բարեագիրն յաղագս Գրիգոր վարդապետի եպիսկոպոսութեան և առաջնորդութեան։ Դարձեալ երբ ծանուցիք գրով դուք և նոքա մեզ զկամս ձեր, զորս անտես արարաք և ոչ լուաք։ Ուստի բոլոր բնակչացն գրեցաք կոնդակօք, զորս տեսանելոց էք, զի երբ և ծանուսցեն մեզ զխնդիրս իւրեանց, մեք յօժարութեամբ ընկալեալ կատարելոց եմք, և զխնդրելին իւրեանց ի վերայ ինքեանց առաջնորդ կարգելոց ի շինութիւն սրբոց եկեղեցեաց։ Եւ ձեզ սիրելւոյդ մերում ես գրեմք, զի զայն անխարդախ սէրն, զոր եր-

ընծա վայելիւլ եմք անսութեամբ ոչ փոխանակեմք ընդ ամենայն աշխարհի լոյս, որք հնչյն ի լսելիս մեր, այլ կամք հաստատուն ի ճշմարիտ սէր, և յարատևելոց եմք ի նոյն։ Ուրեմն այսու գրով յորդորեմ զսիրելի որդեակդ իմ ի բաց հեռանալ յաշխարհի չփոթութենէն, և սիրովն Քրիստոսի զարդարեալ զխաղաղութեան և սիրոյ զհետ երթալք, ... Տէր խաղաղացուսցէ զձեզ և զժողովուրդս այդ, և տացէ մեզ միաբանութեան սիրով կալ և մնալ ի փառս անուան իւրոյ, և ի պարծանս մեր։ Զայլն ամենայն ունիք ի գրաբերացն մերոց լիալիր տեղեկանալ, զորս յանձնեմ ի սէր ձեր։ Ողջ լերուք ի Տէր ամէն։ 1801 և ի դեկտեմբերի 11։

ՁԳ. *Թուղթ ի Հաշտարխան առ Զօրղանեան պարոն Թադայ Դաւիթն ի պատասխանի նորին թղթոյն, ընդ Կարապետ եւ Աբրահամ եպիսկոպոսացն:*

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ, գիտութիւն լիցի ձերդ պատուականութեան, Զի զթուղթ սիրոյդ սրտական հարազատութեամբ գրեալ, ընկալաք օրհնութեամբ ընդ մեր քննաղ Սօլոմօնի գրոյն։ Որով և գիտացաք զառատութիւն մեծի ջերմեռանդութեանդ, և զկատարեալ աստուածպաշտութեանդ ընդ որդիական մտերմութեանդ զորս ունիս առ շնորհատու Մնօղ Մայր Աթոռս քոյ սուրբ Էջմիածին, և առ մերս հոգևոր հայրութիւն։ Տէր օրհնեսցէ զսիրելիդ մեր, և բարեբախտ յաջողութեամբ պահեսցէ յերկար ամս հանդերձ բարեբողբոջ զաւակօք և ընտանեօք։ Նա՝ գիտացաք զքաղաքիդ այժմիկ խռովութիւնսն, և եղբօր մերում Նփրեմ Արքեպիսկոպոսի զանպատեհ արարսն, և զպարտութեամբ բամբասելն զմեզ ի դրունս նորին կայսերական մեծութեան և նորին մեծամեծացն և այլն. վասնորոյ ի փարատումն կարծեաց դոցին, և ի յեղծումն ունայնաբանութեանցն Նփրեմին, առաքեցաք ահա առ բարձրագահ Աթոռ Նորին կայսերական մեծութեան զհաւատարիմ որդիսն սրբոյ Աթոռոյս և մեր՝ զԿարապետ և Աբրահամ արքեպիսկոպոսունսն շնորհաւորական գրով, և այլ բազում մանսաւորք և թղթովք առաջնորդաց և իշխանացն Պօլսոյ և այլ քաղաքաց, հանդերձ ֆարմանի և Հաթի բազմի օրինակօքն, զի ծանիցեն ամենեքեանքն և գիտասցեն, թէ՝ հաճութեամբ և ընտրութեամբ ազգին է, և ոչ բռնութեամբ և կաշառօք։ Ուրեմն և սիրելի որդւոյդ մերում և ճշմարիտ բարեկամիդ ես՝ գրեմ։ Զի ի դալն յայդր սիրելի որդւոցն մերոց՝ ըստ ամենայնի զմարդասիրութիւն ցուցեալ, օգնական լինիջիք դոցա, և ի ջատագովութենէ անվերջանալի մնասջիք, յորոց և զմերում որպիսութեան և կողմանցս՝ ունիք անպակաս իմանալ։ Այսպէս գիտացեալ քոյ և զճշմարիտ սէրդ ընդ որպիսածանոյց գրովդ և պատուական առողջութեանդ ի մէնջ անպակաս արարեալ, լեր ողջ ի Տէր և զօրացեալ նովաւ, Ամէն։

Գրեցաւ ի 1801 և ի դեկտեմբերի 11. ի սուրբ Էջմիածին։

ՁԴ. *Թուղթ ի մեծն Պօլիս առ Մէլրամ ղուլի Թովմաս աղայն ի պատասխանի թղթոյն շնորհաւորութեան, եւ յորդորումն զնա ի սէր եւ ի հարազատութիւն սրբոյ Աթոռոյս:*

Եւ ընդ շնորհածաւալ օրհնութեան նամակիս, ծանուցումն լիցի սիրելի և հոգևոր որդւոյդ մերում. Զի՝ Կարապետ վարդապետ շնորհափայլ եպիսկոպոս հաւատարիմ որդին մեր՝ անվնաս եկեալ ժամանեաց ի սուրբ Աթոռս ի նոյեմբերի ԺԶ. ունելով ընդ ինքեան զարքունական հրովարտակսն, և զհամահաճական մահսէրս օրհնեցելոցդ, և զբազում շնորհաւորական թուղթս յաբդելի եղբօրն մերոյ պատրիարք Յօհաննէս աստուածաբան եպիս-

կոպոսին և այլոց իշխանացն տեղւոյդ և երեւելի քաղաքաց առաջնորդաց և ժողովրդոց. ընդ որս մատոյց և զքոյդ շնորհաւորական թուղթ. և ծանոյց բանիւ ևս զսիրով և զյօժարութեամբ ընդունելն ձեր զինքն և զօրհնութեան նամակն մեր. որք հասարակական համաձայնութեամբ հաճեալ և հաւանեալ էիք յայս պաշտօն կոչմանս մեր. որք բաց ի մահսէրէն, և յատուկ սիրալից թղթովք ցուցեալ էիք զայն հաճութիւն մեզ. և մեք մեծաւ սիրով և յարգանօք ընկալեալ զՖէրմանն և զբէրաթն, և զբազում ջերմեռանդութեամբ գրեցեալ զրեանսն սիրելեացդ, բազմապատիկ շնորհակալութեամբ զբարեհռչակ իշխանսդ օրհնեցաք բոլորով սրտիւ. զորս Տէր օրհնելով օրհնեսցէ և զօրացուսցէ ի փորձանաց և ի չարեաց փրկեալ ազատեսցէ և ողորմութեամբ իւրով պահեսցէ յերկար ամս ի շինութիւն սրբոց եկեղեցեաց և ի յուրախութիւն սրտի մերում։ Եւ թէպէտ վայելու զյատուկ օրհնութեան կոնդակ գրել առ հասարակութիւն տեղւոյդ, սակայն՝ մինչ լուաք զնորապէս ծագեալ շփոթութիւնսն ի քաղաքիդ, և պատուական եղբօր մերոյ Յօհաննէս պատրիարգի տարագրելն այտի՝ զանց արարաք, և սպասեմք խաղաղութեան համբաւոյն, զի յայնժամ ըստ փափագանաց մերոց գրեսցուք զայն։ Բայց այժմ մատուցաք ոմանց երեւելեաց թուղթս օրհնութեան, ընդ որս և զայս սիրոյ և շնորհակալութեան զիր քեզ մտերիմ բարեկամիդ մերում գրեցաք, որով և յորդորեմք զսիրելիդ մեր՝ անփոփոխ կալ և մնալ ի հաւատարմութեան զոր ունիս, և զքոյդ ջատագովութիւն և զշահեկան ջանացողութիւն անվերջանալի առնել ի սրբոյ Աթոռոյս. և երբեմն ուրախական զրուցդ մխիթարիչ. մեզ լինել։ Այլ արդ՝ մինչ ի վերայ խռովութեան քաղաքիդ՝ տրամեալ և վարանեալ կայաք, կրկին հասին առ մեզ ձայնք շփոթից, քանզի քանի մի խանք հրամանաւ շահին զան յերկիրս այս զօրօք՝ պատերազմել ընդ իշխողին տեղւոյս, որոյ վասն, ամենեքեան կամք ի մեծ տագնապի. Տէր լիցի այցելու խղճալի Տանս, և երկրիս։ Բայց առաւել քան զամենայն բարեկարգութիւն քաղաքիդ և անդորրութիւն ձեր՝ բաղձալիք են մեզ, քանզի դուք էք մխիթարութիւն մեր և պատճառ սրտագիւրութեան. ուրեմն, Աստուած իւրով խաղաղութեամբն խաղաղացուսցէ զքաղաքդ և զձեզ։ Այսպէս գիտացեալ քոյ առ այժմ, ողջ լեր ի Տէր, և Շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի օժանդակ յամենայն բանս և ի գործս քոյ, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾ թուսջս, և ի դեկտեմբերի 26։

---

26. Թուղթ Դաւթի առ Կարապետ եւ Աբրահամ արքեպիսկոպոսունս

Յարմէ բազում սիրով և օրհնութեամբ, և փրկչաւանդ ողջունիւ, հանդերձ հոգեպարար շնորհիւ Քրիստոսաէջ սրբոյ տեղւոյս՝ գիտասջիք սիրելի և հոգեսր որդիք մեր՝ և շնորհածին զաւակք սրբոյ Աթոռոյս՝ Կարապետ և Աբրահամ մեծահռչակ վարդապետք և արհի եպիսկոպոսունք։ Քանզի՝ առ այժմ ի դեկտեմբեր ԻԴ ի Պօլսոյ գչորս թուղթս ընկալաք ի բարեկամացն մերոց գրեալս, զերկուսն առ մեզ, զորս լուցեալ ընթերցաք, և զերկուսն առ քեզ, զորս ահա ընդ մեր թղթոյն ի քեզ առաքեցաք. ընթերցեալ իմանալոց ես։ Զկնի ձեր գնալոյն ընկալաք և զթուղթ ի մեր Գրիգոր եպիսկոպոսէն, որ յետ բազում բանից՝ զայս ինչ գրէ, եթէ Նիփրեմեանքն զՅովսէփայ կաթուղիկոսի կտակն վասն քո յաջորդութեան՝ ոչ ընդունին. քանզի՝ խոստովանահօր վկայաբանութիւնն և կնիքն՝ ասեն, ահա առ մեզ են. որ վկայէ եթէ սուտ է այն կտակ։ Վասնորոյ խոստովանահօրն գրել տացես զուղիղն և զհանգամանս իրացն, և առաքեսցես՝ յիղծումն ստութեան, և ի հաստատութիւն ճշմարտութեան։ Եւ մեք ահա զստոյգ վկայութիւն ի նոյն խոստովանահօր բերանոյն՝ իւր ձեռագրովն ընկալեալ առաքեցաք ի ձեռս ձեր, զի ընդ ձեզ տարջիք, և ուր պիտոյասցի, ցուցջիք. առաքելով ի հոգևոր և ի մարմնաւոր դատարանս։ Եւ եթէ ոչ ընդունիցին հակառակորդքն, զնոյն ինքն զխոստովանահայրն առաքեմք յայդկոյս, զի ճշմարտութիւնն յաղթող է։ Եւ զայս ամենայն ծանուսջիք Գրիգոր վարդապետին. և դուք ի քաղաքիդ մի յամենայք. այլ փութացարուք ի գնալ. և օր մի յառաջ ժամանել ի դուռն Քրիստոսապսակ ինքնակալ կայսերն։ Եւ ի ճանա-

պարհին ուր և տեսանիցէք զՏերամբ զօրացեալ զվերափառ Պնօրին՝ զհզօր կուսակալն կողմանցն Կովկասու և բոլոր Վրաց ատն, Ցանացարուք զիարդ և իցէ՝ եթէ արօք՝ եթէ բանիւ հաճել զմիտս նորա, և զսիրտն ի ձեզ յանկուցանել, զի մի լինիցի խափան ընթացից ձերոց։ Կրկին պատուիրեմք, մի ընդ երկար մընալ ի քաղաքին ի պատճառս համահաճութեան թղթոյն զոյգ. այլ արագընթաց լինել, և թէս արծուոյ փութալ յաշխարհամուտ զուռն հասանել, օգնականութեամբ լիշեալ զերապատիւ կուսակալին, և զխոստովանահօր վկայականն յամենայն դատարանս ցուցանել։ Զայլն ամենայն ասացեալ եմք բանիւ ընտիր սիրելոյն մերում օրհնեալ Մելիք Աբրահամ տղային, որ գրով ծանուցանելոց է ձեզ։ Այսպէս զիտացեալ ձեր, և զորպիսածանոյց թուղթըս ի մէնջ անպակաս արարեալ, ողջ լերուք զօրացեալք ի շնորհս Աստուծոյ։

Գրեցաւ ի թուականիս մերում ՌՄԾ ի դեկտեմբերի ԻԶ ի մայր Աթոռս ի սուրբ Էջմիածին։ [1])

---

29. Թուղթ առ Ղազար վարդապետ:

Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր ԴԱՒԻԹ կաթողիկոս և ծայրագոյն պատրիարք Ամենայն Հայոց՝ Առաքելականի Եկեղեցւոյս Քրիստոսի, նաև՝ լուսանկար Աթոռոյս սրբոյ Էջմիածի։

Յորմէ բաղում սիրով և օրհնութեամբ ծանիր հոգևոր որդի մեր և շնորհընկալ զաւակ սրբոյ Աթոռոյս Ղազար խոհեմամիտ վարդապետ։ Զի երեքին լիալիր որպիսութեամբք թուղթքդ՝ ի զանազան ժամանակս հասին առ մեզ, որովք խռովութեանցն քաղաքին և անմիաբանութեանց բարեպաշտ իշխանացն, և տարադրութեան պատրիարդ վարդապետին, և այլ անցից և իրակութեանց հասու եղեալ, զայս գրեմ, զի եթէ Աստուած կամի ըղվնաս ինքնակերտ Տանս այսմիկ, և խղճալի ազգին մերոյ, զինչ կարեմք առնել. եղիցին կամք նորա օրհնեալ, ապա եթէ ի մարդկանէ իցեն այդ խորհուրդք թարց վերին ակնարկութեան, ի հարկէ խափանին. Թէև՝ առ ժամանակ մի յաջողեալ երևեսցին, զի ոչ ոք կարէ Աստուածամարտ լինել։ Արդ՝ մեք կարծելով թէ վերին տեսչութենէ, և բարեպաշտ իշխանքն մեր սիրով ընդունին, վասն այն յանձնառաք զայս անտանելի պաշտօն որպէս մինչ յայդր ի Պօլիս էաք, իւրաքանչիւր զերապատիւ ամիրայքն կամէին զՆանիէլի մեալն ի պատրիարդութեան, և զմեր կաթողիկոս լինելն, և ի Պօլսոյ մինչև ի սուրբ Աթոռս՝ ամենայն երևելի քաղաքս, յորս հանդիպեցաք պատուաւոր իշխանաց՝ ամենեքեան վասն մեր պատշաճ համարէին լինել Հայրապետ, և զմեզ բռնադատէին յանձն առնուլ, թէ և՝ մեք որպէս յայանի է Աստուծոյ՝ յամենայն պահու հրաժարէաք։ Ապա՝ ի զալս աստ՝ յորժամ Յովսէփ սրբազանն ի Թիֆլիզ վախճանեցաւ, և Դանիէլ սրբազանն ի Թոխաթ յամեցաւ, և միաբանք և երկրացիք և այլ և այլ կողմանց բնակիչք անդադար զմեզ ստիպէին, յայնժամ ի միտ ածելով զկամս օրհնեալ իշխանացն տեղւոյդ յանձնառաք զայս տաժանելի զործ՝ վստահանալով ի մեծահաւատ իշխանսն և ի հաւատարիմ բարեկամսն մեր, և յուսալով թէ՝ բարեհաճին, և ոչ թէ վիրաւորեալ զայթակղին։ Ուրեմն՝ գրեմ ահա քեզ որդւոյդ իմոյ, և դու ի զիմաց մերոց ողջունիւ և օրհնութեամբ ծանուցես բոլոր գերապանիւ ամիրայիցն մերոց՝ իշխանապետաց և իշխանաց։ Զի եթէ ստուգիւ վրդովին ի վերայ կաթողիկոսութեան մերոյ, և վասն մեր է մրրիկդ այդ, մեք սիրով հրաժարիմք, և արտաքոյ կամաց դոցին բնաւ իսկ ոչ կամիմք զայս պատիւ, և ոչ լինիմք պատճառ խռովութեան ազգին, և վնասուց խղճալի Տանս. Քանզի՝ մեք ցանկամք խաղաղութեան ազգիս մերոյ, և բարեկարգութեան և շինութեան սուրբ Տանս այսմիկ, և ոչ ատելութեան և աւերութեան։ Եւ վերջապէս սիրելի որդւոյդ մերում պատուիրեմք, սիրով և քաղցրութեամբ կալ և միալ յայդր, և խաղաղութեամբ վարիլ ընդ ամենեսին. մինչև ողոր-

---

[1]) Լուսանցքում Դաւիթ կաթողիկոսի ձեռքով գրուած է. «Նաև զայս ծանիր թէև գրեցուցի ի թղթոջս թէ զչորեսին թուղթսն առաքեցի, բայց գիտելով թէ զոր ինչ Գէորգ աղայն ինձ գրեալ է, քեզ ևս գրեալ կլինի, առ այն զիմ թուղթսն յետաձգեցի»։ Ծ. Հր.

մնայի Տէր Սիմոնի, և ջանասցեն զբարի անուն ժառանգել, և այնու սրտագին զմեզ առնել. և տեղւոյդ զանցս անյապաղ մեզ գրեսցես, և Աստուած խաղաղացուսցէ զգոսա, և ողորմութեամբ գթասցի ի տառապեալ ազգս մեր և ի տաճարս այս սուրբ, և դադարեսցուցէ զալիս և զմրրիկս խռովութեանց։ Եւ՛ զԹուղթն, զոր յղեցաք ի ձեռն պարոն Գէորգ Աղալեկովին, եթէ նա անձեռնհաս լինիցի, դու հասուսցես վերաքննչիր տեարոցն։ Այսպէս գիտացեալ առ այժմ, լեր ողջ ի Տէր, և զօրացեալ նովաւ. և Շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ. Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾ թուոջս, և ի դեկտեմբերի ԻԵ. ի սուրբ Էջմիածին։

ՁԷ. *Թուղթ առ Թէլաւու Տէր Սարգիսն ի պատասխանի բազմականիք թղթոյ տեղականացն, զոր Տէր Յարութիւնն բերեալ էր եւ ինքն եւս գանկատէր զհաղբատցւոցն։*

Եւ ընդ սիրոյ և ողջունի օրհնասաւք նամակիս՝ ծանուցումն լիցի և հոգևոր որդւոցդ մերոց և հարազատ զաւակացդ Մօրս հաւատոյ սրբոյ Էջմիածնի. Քանզի մերձաբնակ գոլով ձեր ի կողմանս ի հարկէ բազմիցս լուեալ էք՝ որ յետ վճարման կենաց Տէր Յովսէփայ հոգելոյս հայրապետին ի Թիֆլիզ քաղաքի՝ ըստ անօրինելոյ նախասահմանութեան Աստուծոյ, մեք կոչեցեալ եղաք ի սոյն Աթոռ կաթուղիկոսութեան օրհնեցելոյ ազգիս Հայոց՝ ընկալեալ զօծումն ի յապրիլի ԻԲ. Յորմէ հետէ գրեալ զբազում թուղթս առ բազում տեղիս, կամէաք և յայդր գրել, բայց խռոժանն զանազան զբաղանաց կարևոր գործառնութեանց պատեալ զմեօք, արգելս ետ մինչև ցարդ. Իսկ այժմոյս մահզէրն ձեր ձեռամբ Տէր Յարութիւն հանճարունակ քահանայիդ էհաս մեզ, յորում յայտնեալ էիք զորդիական սէրն և զհնազանդութիւն ձեր առ սուրբ Աթոռս և առ մեզ, և որպէս Մինաս խոհեմամիտ վարդապետն, և գործակալ Տէր Սարգիս աւագ քահանայն գրեալ էին մեզ, ըստ խոստմանն ձերում տուեալ էիք զտարեկան տալին ձեր զքսան լիտր մոմն վասն լուսաւորութեան Աստուածայլին սրբոյ տաճարիս Ուստի՝ շնորհակալ եղաք զսիրելի և հոգևոր որդւոց մերոց, և օրհնեցաք զձեզ օրհնութեամբ բազմաւ։ Եւ զոր յառաջ պարտ էաք գրել, և անայանեցաւ, զայս կոնդակ նախընծայ օրհնութեան ահա առաքեցաք, որով ի ժամանելն առ ձեզ, հանգիցէ ի վերայ ձեր շնորհք և օրհնութիւն Աստուածային, և զօրացուսցէ զձեզ, զարդարեսցէ համայն բարեգործութեամբք, և վասնզի հոգւոյ և մարմնոյ փրկեալ զերծուսցէ, ընկալցի զնուէրս ձեր ի հաճոյս իւր, և զփոխարէնն բազմապատկապէս հատուսցէ ձեզ, և զհոգիս ննջեցելոց ձերոց լուսաւորեսցէ։ Եւ յաղագս տեղւոյդ անցիցն և վճռոյն ընդ հովուապետացդ որ գրեալ էիք, ծանեաք, մեք ոչ կամիմք զի այժմ այդպէս չփոթք և խռովութիւնք լինիցին ի ձեզ, այլ որպէս խոստացեալ եմք Հաղբատայ և Սանահնու առաջնորդացն, և կոնդակ գրեալ, առ ժամանակ մի պարտիք ըստ գրեցելոց Տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսի կոնդակին վարիլ, մինչև յապահով միջոցի միում թէ նոքա, և թէ գործակալքդ մեր ի միասին ժողովեցեալ գայցէք առ ի սուրբ Աթոռս և յԱստուածակալս կողմանէ խորհեցեալ և խօսեցեալ ընտրեսցուք զիրաւունս և այնպէս սահմանադրեսցուք ըստ հաճութեան ամենեցուն, զի ոչ մի կողմն ագահեսցէ, և ոչ միւսն զրկեսցի։ Եւ ի ներկայումս չէ պիտոյ ձեզ ի մէջ զանազան ազգաց բանակռիւ լինել ընդ միմեանս, և աղմուկ հանել. միայն թէ որքան ինչ արդիւնք լիցին ի տէրութենէ մերոյ առ նոսա հասեալք, ի գիր համար հանջիք, ի ժամանակին տեսցուք և ըստ իրաւանցն հասու լիցուք։ Եւ զայլ երկարապէսն գրեցելոցս ի Տէր Յարութիւն խոհեմամիտ քահանայէդ իմասջիք։ Ողջ և մնջիք օրհնեալք ի Տէր, և յանձնեցեալք ի խնամս նորին, և շնորհք սրբոյ Աթոռոյս ընդ ձեզ լիցի հանապազ Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾ թուոջս և ի դեկտեմբերի Լ. ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՁԸ. *Թուղթ ի Մեծն Պօլիս առ Բարդուղիմէոս Չէլէպին, ի պատասխանի շնորհաւորական թղթոյն՝ շնորհակալութիւն եւ օրհնութիւն, եւ յորդորումն դարձեալ ի հաստատութիւն սիրոյ։*

Եւ ընդ առաքածուալ օրհնութեան սիրուաք նամակիս՝ գիտասջիր յատկեղ սիրեցեալդ իմ եւ օգտակամ որդի սրբոյ Դահիս Էջմիածնի։ Զի ըստ իմաստնոյն բանի թէ համբաւ բարի պարարէ ոսկերս, արդարեւ նարդենիս ժամանեալ առ մեզ ախորժալուր համբաւոյ ձերդ բարեկամութեան դուարթացաք ուրախութեամբ, եւ զուարճացաք ի հոգի եւ ի մարմնի։ Վասն զի Կարապետ շնորհապերճ եպիսկոպոսն զոր մաքսէրին համահաճութեան առաքեալ էաք ի յարքայանիստ մայրաքաղաքդ՝ անվնաս եկն եհաս ի սուրբ Աթոռս եւ առ մեզ բերելով զարքունական ֆէրմանն եւ զբէրաթն շնորհեցեալ յանուն մեր, եւ ծանոյց զընդունելութիւն եւ զկամակցութիւն յարգելի եղբօրն մերոյ պատրիարք աստուածաբան վարդապետին, եւ սիրառատ օրհնեալ իշխանացդ, եւ համայն ժողովրդականացն։ Որ եւ զիսկական սիրելւոյդ զյատկապէս ի 19 օգոստոսի սիրածրեալն թուղթ մատոյց մեզ. զոր ընթերցեալ ծանեաք զվերադանցութիւն սերտ սիրոյդ, եւ զկամենալն սրտէ ուրախակցութիւնդ ընդ կոչումն մեր ի կարգ եւ յաթոռ կաթուղիկոսութեան ազգիս Հայոց եւ սրբոյ Աթոռոյս։ Եւ թէպէտ յամանց տեղացեալ լինին ի վերայ մեր տարադէպ բարուրք այլ եւ այլ զրաբանութեանց, սակայն զու ազնուամիտ սիրելիդ զնախանշտանակեալ հարցաբանութիւնն Արքայի վասն մեր, որ յապարանիցն իւրոց առածովն դիտեալ ի տեսանելն զմեզ՝ ասացեալ էր թէ նա լիցէ փաթրիկն Հայոց։ Եւ զասացուածն յԱստուածամայս եկեղեցւոջն ի Սաղմոսէն վասն մեր թէ զտի զԴաւիթ ծառայ իմ, եւ Աթոռայնոցս իւղով սրբով օծանելն, ի կատարումն հետեւեցելոյն, զայտոսիկ իբրեւ յԱստուածակոյս կողմանէ ազդեցութեամբ մարգարէութեանց նշանակք իմանալով, բոլորով սրտիւ հաճեցեալ էիր, եւ ըստ ճշմարիտ բարեկամութեան օրինի զշնորհաւորական բանս գրեալ, մեծապէս շնորհակալ եղաք զհաւատարիմ սիրելւոյդ, եւ օրհնեցաք բերանալիր օրհնութեամբ։

Զոր Տէր օրհնեսցէ եւ զօրացուսցէ եւ ի յառաջադիմութեան պահեսցէ, ի փորձութեանց փրկեսցէ եւ ի խնամս իւր ունիցի միշտ՝ հանդերձ քոյայնովքդ ամենեքումբք։ Եւ զամենայն բանս եւ զգործս քո առ բարին ուղղեսցէ։ Եւ ըստ չափու սիրոյ եւ հաւատարմութեան քում որ առ մեզ, չափեսցէ ի քեզ եւ ի քոյսդ առատապէս։ Արդ՝ ահա գրեցաք զթուղթս օրհնութեան առ բազումս ի նշանաւոր անձանց մայրաքաղաքիդ։ Եւ զայս սիրանշան օրհնաձիր թուղթ եւս յատկապէս առ յատկեղ սիրելիդ գրեցաք, որով խնդրեմ, զի զջերմեռանդ սէրդ եւ զհաւատարիմ բարեկամութիւնդ հանապազ հաստատուն պահեսցես, եւ զհարազատօրէն օգտաջանութիւնդ առ սուրբ Աթոռս, աննուազելի ունիցիս։ Եւ սիրադրութեամբդ առ մեզ սրտագիւրիչ եւ մխիթարիչ լիցիս. որովք ամենայն բարեշնորհութեամբքդ շնորհակալ լինելոց եմք զհաւաստեալ սիրելւոյդ։ Թէպէտ եւ հարկ էր գրել զկոնդակ օրհնութեան եւ շնորհակալութեան ի վերայ համայն ժողովրդոց տեղւոյդ, բայց յայտնի է որ յիշեալ Կարապետ եպիսկոպոսն անդրէն էհաս առ սուրբ Աթոռս. եւ մինչ հանդերձեալ էաք գրել զկոնդակն հասարակական, ազդ եղեւ մեզ տարաձայնութիւնն տեղւոյդ եւ ի բաց մեկնիլն այտի սիրելի եղբօր մերոյ Յովաննէս պատրիարքին, ընդ որ յոյժ տրտմեցաք։ Եւ թէպէտ մեք իբրեւ ի հանդարտութեան եմք, սակայն վասն ձերդ վրդովման ցաւիմք եւ հոգամք, եւ յԱստուծոյ ամենակալէն զխաղաղութիւն հայցեմք։ Քանզի ուրախութիւն մեր առաւել բարի համբաւն ձեր է. ապա եթէ դուք ամբոխեալ իցէք, ուստի լիցի մեզ մխիթարութիւն։ Վասնորոյ սպասեմք ձերումդ խաղաղութեանն լրոյ, զոր ի լսելն մեր՝ ի հարկէ գրեսցուք եւ զհասարակական կոնդակն օրհնութեան եւ շնորհակալութեան ի վերայ մայրաքաղաքիդ։ Բայց առ այժմ զայս խնդրեմ ի յազնուոյդ. որ զինչ եւ իցէ, ըստ կարելութեան դիւրութիւն եւ քաղցրութիւն ցուցանիցէք առ սիրելի եղբայրն մեր Յովաննէս Պատրիարքն, ըստ որում ճշմարիտ բարեկամի ի փորձութեան ժամանակի փորձեցեալ լինի։ Առ որ արարեալ օգտակարութիւնքդ առ մեզ վերաբերին եւ յատկապէս շնորհակալելոց եմք զյատկեղ սիրելւոյդ։ Ողջ լեր ի Տէր. եւ շնորհք սրբոյ Աթոռոյս ընդ քեզ լիցի, Ամէն։

Գրեցաւ յամի Տեառն 1801. և ի դեկտեմբերի ..., ի յերկնահանգէտ Աթոռս սուրբ Էջմիածին։

Հայրականաւ սիրով, ո՛ որդոյ Իջման տեղւոյս Քրիստոսի պահպանողական շնորհին ողջոյն և օրհնութիւն տամ Աստուածապարգև զաւակացդ քոց՝ և հոգևոր որդւոց մերոց սիրելեաց՝ բարեձնունդ և ոսկեբողբոջ Սարգիս և Յակոբջան Աղազատէլեցն։ Եւ զի զառ ի մէնջ ընկալեալ զքսակսն զերկոսին տակաւին պարապ ի պահեստի ունին՝ յուսալով օրհնութեամբ լնանիլ, որպէս և գրեալ էիր, ահա գիտասցեն, զի մշտապէս յաղօթս մեր յիշատակելով խնդրեմք ի Տեառնէ՝ լի և պատարուն առնել զնոսա ողորմութեամբ իւրով, և շնորհիւ սրբոյ Աթոռոյս։ Դարձեալ և բազմամեայ աշխատաւորին ձերոյ Տէրամբ օրհնեցեալ Խօջայ Մարտիրոսին ողջոյն տամք՝ յանձնելով ի խնամս Ամենակալին։

ՁԹ. *Թուղթ ի մեծն Պոլիս առ հաճի Դասա մահտեսի Առաքել ամիրայն ի պատասխանի թղթոյն շնորհաւորականի՝ ընդ մահսարաբեր Կարապետ վարդապետին՝ շնորհակալութիւն վասն ընդունելութեան եւ յորդորումն ի հաստատութիւն սիրոյ։*

Յորմէ ժամանեսցէ թուղթ սիրոյ՝ ողջունի և օրհնութեան, հանդերձ ամենաբաւական ողորմութեամբն և գթութեամբն Աստուծոյ, հոգեզուարճ շնորհօք Միածնաէջ սրբոյ տեղւոյս, և հրաշալի սրբութեանցն որք աստ կան. ի վերայ գերազնիւ սիրելւոյդ մերոյ. և հարազատ որդւոյդ սրբոյ Աթոռոյս՝ Քրիստոսասէր և բարեպաշտօն՝ իմաստնախոհ և գերահանճար անձին պատուականի և ամենայնով ճարտարապետի՝ Հաճիդատ ձայնեալ մահտեսի Առաքել ամիրայիդ. և բարեկարգ տան քում և համայն ընտանեաց և ազգականաց և բարեկամաց քոց, ի Տէր խնդալ։

Եւ ընդ սիրաձիր ողջունատրութեան օրհնառաք նամակիս՝ գիտութիւն լիցի բարեպաշտութեան քում. Քանզի յառաջնմէ ի նախատեսութեանն մեր ընդ սիրելւոյդ՝ բաւականապէս ճաշակեալ յայդր ի մօտոյ զառատ քաղցրութիւն սիրոյդ, նարդենիս եւ քան զայն առաւել վայելեցաք ի հեռուստ՝ ընդ որոց մինչ արժանին փոխարինել շնորհակալիք և օրհնաբանութիւնք, վասն այն պարտ և պատշաճ դատեցաք զայս սիրայայտական և օրհնաձիր նամակ առաքել առ քոյդ յարգութիւն։ Զի սիրելին մեր մահսէրաբեր Կարապետ շնորհունակ եպիսկոպոսն ամբողջապէս ժամանեալ ի սուրբ Աթոռս եբեր զարքունական ֆէրման և զբէրաթն յանուն մեր գծագրեալ, զոր մեծաւ հանդիսաւորութեամբ և փառացի շքով առընկալաք ի նոյեմբերի ԺԶ. Հանդերձ զուարճական թղթովք՝ յարգելի եղբօրն մերոյ պատրիարք վսեմախոհ վարդապետին, և այլոց պատուաւոր անձանց եկեղեցականաց և աշխարհականաց։ Ընդ որս մատոյց և զառ ի բաղձալւոյդ գրեալ թուղթն շնորհաւորական։ Զոր մեծաւ սիրով ընթերցեալ վերծանեցաք զսիրտաշարուն բանսդ որ ըստ սահմանի ճշմարտօրէն բարեկամութեան լիապէս ուրախացեալ առ կոչումն մեր ի սոյն այս պատիւ հայրապետական յամենայն յօժարութենէ սրտի գրեալ էիր զգեղեցիկ բանս խնդակցութեան և շնորհաւորութեան։ Որովք ցնծացեալ մեր իբրև գիւտիւ աւարաց բազմաց, արդարև յոյժ և յոյժ գոհունակ եղաք զպատուական սիրելւոյդ, և օրհնեցաք բերանալից օրհնութեամբ մեծաւ զքեզ համայնիւք քոյայնովքդ։ Զորս Տէր օրհնեսցէ և զօրացուսցէ, ընկալցի միշտ ի խնամս և ի գթութիւնս իւր. և ի հոգևկան և մարմնական վտանգից ազատս պահեսցէ. և զամենայն բանս և զգործս ձեր ի բարին յաջողելով արդիւնաւոր և շահեկանս արասցէ։ Արդ՝ դէպ եղև մեզ ահա գրել զթուղթս առ երեելի անձինս քաղաքիդ, ընդ որս և զայս թուղթ սիրոյ և օրհնութեան առ արդոյ սիրելիդ գրելով խնդրեմք՝ զանխարդախ սէրդ և զբարեկամութիւնդ հաստատուն և անեղծ ունել առ սուրբ Աթոռս և առ մեզ. և յօգտակար ջանացողութեանց ոչ նուաղիլ և սիրոյ գրովդ միշտ մխիթարել զծանրաբեռն հոգաբարձութիւնս մեր։ Որովք հանապազ արժանապէս վարձատրեսցիս ի Տեառնէ, և ընկալցիս զշնորհս սրբոյ Աթոռոյս և զօրհնութիւնս մեր։ Գիտասջիր ևս, զի յաւէր լինելն մեր որ ըստ բարեպաշտութեանդ յորդորէիր

զմեզ զսրբոյ Աթոռոյս Ջրաղացից և բրնձահանից զորպիսութիւնսն և զչափսն առաքել առ քեզ, զի ըստ այնց զգործիս պատրաստեալ ի ձեռն միոյ յաշտկերտաց յուղարկեսցես՝ զի այնպէս կազմեսցին աստ ի յիշատակ Աստուածապարգեւ շնորհաց, յիրաւի ոչ եմք մոռացեալ, այլ ի միտս մեր ունիմք, միայն թէ բարերարն Աստուած յաջող ժամանակ տացէ՝ յորում կատարեսցին օգտաւոր փոյթն քո և մեր ի բարի յիշատակ սիրելւոյդ։ Իսկ և թէպէտ պարտ էր մեզ և առ հասարակութիւն ժողովրդոց մայրաքաղաքիդ գրել զկոնդակ օրհնութեան և շնորհակալութեան, սակայն մինչ սկսաքն, հնչեաց ի լսելիս մեր անախորժ լուր շփոթից տեղւոյդ, և տարագրելն սիրելի եղբօր մերոյ պատրիարգ Յովհաննէս աստուածաբան վարդապետին, յորմէ և կարի իմն արտմեալ ցաւեցաք։ Եւ թէպէտ մեք ի միջակ խաղաղութեան էաք, այլ ոչ ապաքէն վրդովումն ձեր մխիթարչացդ մերոց անդր քան զչափ տարակուսանաց առիթ է մեզ։ Մանաւանդ զի և սոյն աւուրքս լուաք զշարժումն պարսկային զօրաց յայսկոյս, յորմէ ոչ սակաւ կասկածիմք։ Աստուած զվերջն ի բարին եզերեսցէ։ Եւ քանզի այդպէս աղմկեալ և յանդլխութեան կայք, ոչ ի դէպ վարկաք զգրելն հասարակական կոնդակին, այլ ի լսելն մեր զհամբաւ խաղաղութեան ձերոյ՝ որում սպասեմք, յայնժամ գրեսցուք, որպէս և հարկն է։ Բայց ի սոյն ժամու զայս առաջի առնեմ, զի ըստ որում ստոյգ բարեկամին ոչ լինի փոփոխել առ բարեկամն ի նեղութեանն ժամանակի, վասնորոյ և դուք իսկապէս սիրելիքդ՝ որք հաւատարիմն օժանդակք էք լեալ նմա, այժմ ևս որչափ կարելի է՝ զնպաստ մխիթարութեան և զիւր սրտի մատուսջիք նմա։ Որում զոր ինչ բարեշնորհութիւնս առնիցէք, յիրաւի մեզ համարեալ լինին. և զոհունակ լիցուք զձէնջ օրհնութեամբ բազմաւ։ Ողջ լեր ի Տէր և յանձնեցեալ ի պահպանութիւն հզօր Աջոյ Նորին. Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾ թուոջս, և ի դեկտեմբերի ... ի յերկնահանգէտ Աթոռս սուրբ Էջմիածին։

Դ. Կոնդակ ի վերայ Գաղատիոյ յաղագս հայրապետութեան սրբազանիս մերոյ եւ ընդունելութեան ժողովրդոցն ընդ հաճութիւն գրելոյ առաջնորդին, առ որ եւ շնորհակալութիւն։

Եւ ընդ սիրոյ և ողջունատրութեան օրհնառատ նամակիս՝ ծանուցումն լիցի սիրելի և հոգևոր որդւոյդ մերոյ՝ և լուսածնունդ զաւակացդ մեծի Գահիս Էջմիածնի։ Քանզի եթէ ի վշտանալ միոյ անդամոյ վշտանան ամենայն անդամքն ընդ նմա, և ի փառաւորիլն միոյն՝ խնդան և միւսքն ընդ նմա, ըստ դրելոյ սըրբաղան Առաքելոյն, ապա որչափ ևս առաւել ի փառաւորիլն գլխոյն, զուարճանալ հանդիպի այլ ամենայն մասանցն մարմնոյն։ Արդ՝ որպէս և յայտ է, առ ժամանակ մի մնալով սրբոյ Աթոռոյս և ազգիս յանդլխութեան, և ի յանուանակոչիլն և յառաջ շարժիլն Տեառն Ղովսեփայ հոգելոյս Հայրապետին, մինչ վճարեաց զկեանս իւր ի ճանապարհի ապա ըստ նախասահմանութեան Աստուծոյ՝ որ տնօրինեալ կարգադրէ զամենայն իրս յաշխարհի, ի ձեռն հասարակականի համաձայնութեան՝ կարգեցեալ եղաք հոգևորական գլուխ խորհրդական անդամոցդ սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց, և ընկալաք զօծումն կաթուղիկոսութեան յանցեալ տարւոյ ապրիլի ամսոյ ԻՀ, ըստ սովորութեան նախնականի գրեցաք ի բազում ուրեք առ քաղաքս և առ գաւառս զկոնդակս և զթուղթըս ծանուցականս ի մասնաւորել զամենեսեան յօրհնութեանց և ի շնորհաց, և ի զուարճացուցանել հոգևորապէս իբրև անդամոց ի պըսակաւորութիւն կատարման գլխոյ։ Ընդ որս թէպէտ և պարտ էաք առ հոգևոր որդիսդ մեր փութանակի դրել զօրհնութիւն, սակայն հոգնահոլլ հոգք կարևոր զբաղմանց ծանրաբեռնեալք ի վերայ մեր՝ ոչ թողին երբէք բանալ զաչս, վասնորոյ յապաղեցաք մինչև ցարդ։ Բայց նարդենիս ի դառնալ մահսէրաբեր Կարապետ հանճարասլերճ եպիսկոպոսին, հանդերձ Արքունական նոմոսիւքն, մինչ սիրելին մեր և արժանապատիւ առաջնորդն ձեր Անդրէաս զգօնամիտ արհի եպիսկոպոսն զթուղթ շնորհաւորութեան և յարգանաց գըրեալ էր մեզ, որով և զձեր հաճութիւնն և զուրախակցութիւն իմացաք, շնորհակալ ե-

զաք զօրհնեալ ժողովրդոցդ, և լիալիր սիրով կարդացաք առ. ձեզ զօրհնութիւնս, և հարկադրեալ ի հայրական սիրոյ ահաւասիկ զայս նամակ օրհնաձիր դրեցաք առ. սիրեցեալ հոգևոր որդիսդ մեր։ Զորս Տէր օրհնեսցէ և զօրացուսցէ. ի վտանգից և ի փորձութեանց հոգւոյ և մարմնոյ փրկեալ զերծուսցէ, ընկալցի հանապազ ի խնամս և ի գթութիւնս իւր, և համայն առաքինութեամբ զարդարեսցէ, և զամենայն բանս և զգործս ձեր արդիւնաւորս և շահեկանս արասցէ։ Եւ արդ՝ սովիմբ այսու սիրալիրդոր օրհնառաք նամակաւս պատուիրեմք հոգևոր որդւոցդ սիրելեաց, զի զծնողամեծար հարազատութիւնն ձեր հաստատուն պահեսջիք առ լուսածին Մայրս հաւատոյ ձերոյ սուրբ Աթոռս. և զորդիական սէր և ըզհպատակութիւնն զոր բարեյօժար կամօքդ ընկսեալդ էք առ մեզ, աննուազ ունիջիք. և սիրելւոյդ մերում. և հոգևոր առաջնորդիդ ձերում. Պօղոս վայելչապատիւ. արքեպիսկոպոսիդ հնազանդ մնասջիք, յերկիւղ Տեառն կրթելով զանձինս ձեր՝ և ունելով զփոյթ գործոց բարեաց՝ և անխարդախ վարուց ի հաճոյս Աստուծոյ։ Որոց զբարիոք գնացից զախորժ լուրս լսելով ուրախութեամբ մեծաւ ուրախ եղիցուք և դիւրութեամբ սրտի օրհնեսցուք զձեզ առ հասարակ։ Որք ամենեքեան լիջիք յանձնեցեալք ի խնամս Տեառն. և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ ձեզ. Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾ թուոջ, և ի դեկտեմբերի … ի լուսանկար Աթոռս սուրբ Էջմիածին։

ՂԸ. Առ օգոստափառ եւ ինքնակալ մեծ կայսրն ամենայն ռուսաց։

Ամենողորմ. խնամակալ սրբոյ Աթոռոյս և մեր։

Արդ՝ ըստ որում. գործ Աստուծոյ է զանարգս և զյետինս յառաջ կոչել, և նոքիմբ զգործ մեծ կատարել, որպէս ի հին և ի նոր մատեանս Աստուածաշունչ գրոց, յայտնի ծանուցանի անքննին կարողութիւն Աստուծոյ գործեցեալ տկարագունիւք, ըստ որում. և սրբազանն Պօղոս բարբառէ, թէ զարհամարհեալս և զոչինչս ընտրեաց Աստուած, զի զէսն իմն խափանեսցէ (Կորն. 5. 28) և մանաւանդ զսիրտ իւրոց օծելոց, և զշունչ բազմաթիւ ժողովոց՝ մինչ ունի յԱմենազօր ձեռին իւրում, որ յորկոյս կամի, դարձուցանէ. զորս և գումարէ միասիրտ և միակամ առ բարին հասարակաց, վասն այսորիկ և ի յառաջ կոչիլն զմեզ զյետինս և զոչինչս, և ի շարժելն զսիրտս կայսերաց և իշխանաց իբրև զսահանս ջուրց ի յընտրութիւն մեր ի աընտեսութիւն մեծի Տանս ինքնակերտի, ոչ կարացաք զանձինս հրաժարեցուցանել և ընդդէմ Աստուածայնին, և մարդկայնին կամաց հակառակիլ։ Այն զի՝ յայս կոչումն մեր՝ լրացեալ բովանդակի Աստուածայինն և մարդկեղէն հաճութիւն։ Յարդոյն է, որ լուսահոգի Ղուկաս սրբազան հայրապետն մինչև զնիւրեմ. արքեպիսկոպոսդ յայլր յղեաց, և զայլս այլ ուր, զմեզ առ ինքն ունէր իբր գործակից և օժանդակ ինքեան յամենայն գործս իւր, և խոստանալը ես բանիւ զյաջորդութիւնն մեզ։ Այլ մեք անարժան զանձնս համարեալ, յետ վախճանի նորին ի դիմաց միաբանից ընացաք ի Պօլիս վասն նորոգ կաթուղիկոսի, և ժողովուրդք տեղւոյն զմէնջ պատշաճ դատէին մանաւանդ՝ որոյ վասն և արարին ինքեանց Պատրիարգ ի Պօլիս։ Այլ մեք զերկուսն ես թողեալ՝ վերադարձաք ի սուրբ Աթոռս միամիտ հոգւով, և Դանիէլ եպիսկոպոսն, որ ցանկայր անձամբ զանձն բարձրացուցանել, չոգաւ յաքսորս. և ոչ յաջողեաց նմա Տէր։ Նոյնպէս և Յովսէփ սրբազանն հայրապետական չքով եկեալ ի Թիֆլիզ քաղաք, մինչև կամեցաք ընդ այլ եպիսկոպոսաց և մեք ընդ յառաջ նորա գնալ ի Թիֆլիզ, արգել զմեզ գրով, ի կառավարութիւն միաբանից սորին իբրև փոխանորդ ինքեան։ Եւ ի վախճանիլն՝ կտակեալ էր մերձակայից իւրոց՝ զմեզ յաջորդեցուցանել։ Որպէս զնորին կտակն բազմակնիք մահսերաւ բոլոր ժողովուրդք Թիֆլիզու թէ ի Հայոց և թէ յայլոց ազգաց ծանուցին մեզ, միաբանից սորին, և խանին երկրիս և ստիպեցին զմեզ յանձն առնուլ։ Իսկ կամք կայսերաց եղև ընդ ընտրութիւն մեր՝ որ ձերդ կայսերական մեծութիւն, թարց մերս աղերսանաց գիտացեալ զկտակս Տեառն Յովսէփայ՝ ազդեցութեամբն Աստուծոյ բարեհաճեալ էիք գրել ի Պօլիս առ դեսպանն հոգալ արքունական նոմոսացն։ Եւ թագաւորն Հագարացւոց

ակնարկութեամբ ձերով, ինքն ես յօժարամիտ եղև առ այն։ Եւ Աստուած կատարելագործիչն ամենայն բարի սկզբնաւորելոցն ի մէնջ, զայսոսիկ այսպէս յաջողեալ կատարեաց, որոյ և օժանդակութեամբն եկին ժամանեցին առ մեզ ի միում աւուր, և ի միու ժամու երկուց մեծազօր թագաւորաց հրովարտակքն, այսինքն օսմանցւոց սուլթանին, և պարսից շահին, հանդերձ բազմակնիք մահսերօք ազգին և բազում շնորհաւորական թղթովք զանազան անձանց։ Եւ այսպէս արժանացոյց զանարժանութիւն մեր այսմ սուրբ աստիճանի, որոյ շնորհօք ընկալեալ և զօծումն սուրբ հոգւոյն, օրինաւոր կոչմամբ, լրացեալ թուով երկոտասան եպիսկոպոսօք, սպասաւորեցաք մինչ ցարդ, ի տասն և ինն ամիս, Տանն Աստուծոյ. և կառավարեցաք զսուրբ Աթոռս միաբանովքն թէև ոչ աւելի, սակայն և ոչ պակաս քան զնախորդսն մեր։ Ահա որպէս ի վերդ յիշատակեցաք, այս կոչումն մեր եղև կամեցողութեամբ և ընտրութեամբ բարձրելոյն Աստուծոյ, մեծի օծելոցն իւրոց, և ընդհանուր ազգին։ Ապա զիարդ համարձակին ասել թշնամիքն արդարութեան զսուտն մեծ և անբերելի, թէ բռնութեամբ և արծաթով իցեմք յառաջ կոչեցեալ արտաքոյ կամաց ազգին և այլն։ Որոց աղագաւ կամեցաք թէև զամենայն մահսէրսն ազգիս մերոյ յղել ի սպաս մեծի կայսերութեան ձերոյ ի ձեռն երկուց եպիսկոպոսաց հանդերձ հրովարտակօքն և բազում թղթովք առ մեզ գրեցելովք, ի ստուգել զբանս մեր, սակայն ոչ թողին դիմել առ աստուածապարգև դահ ձեր և կան արգելեալ ի Թիֆլիզ քաղաքի։ Ուրեմն խնդրի ի քրիստոսապսակ և լաստուածազօր արդար աթոռոյ ձերմէ, դիջանել լաղաչանս մեր, և քննութեամբ հասու լինել անցիցն անցելոց, և մի մի կողման ունկն դնելով՝ զմիւս կողմն պարտաւորել։ Նթէ այսոքիկ բանք մեր սուտ լինիցին, և զոր ինչ թշնամիքն ասեն, այնոքիկ ի վերայ մեր ստուգեսցին, ոչ հրաժարիմք ի լապաշխարելոյ, և ամենայն յօժարութեամբ ընդդրկեմք լայնժամ զդատակնիքն ի վերայ մեր։ Ողջ լեր քրիստոսապսակ կայսր օգոստափառ։ [1])

[1]) Այս թուղթը թուական չունի, բայց բովանդակութիւնից պարզ է, որ գրուած է 1801 կամ 1802 թուականներին։ Ծ. Հր.

ՂԲ. *Թուղթ ի Թիֆլիզ առ ազատազնեայ իշխանս Մէլիք Ջիմշիտն, Ապովն, եւ առ Փիրիտոնն, ի յորդորումն զնոսա խաղաղացուցանել զԵփրեմ վարդապետն եւ զժողովուրդսն Հաշտարխանու եւ այլ քաղաքաց:*

Եւ ըստ առատածաւալ օրհնութեան նամակիս, գիտութիւն լիցի բարեպաշտութեամբ զարդարեալ սիրելեացդ իմոց։ Զի յայտնի է ձեզ, որ Կարապետ վարդապետ հոգևոր որդին մեր վերադարձաւ ի մեծէն Պօլսոյ խաղաղութեամբ առ մեզ ի Նոյեմբեր 16 ունելով ընդ ինքեան զարքայական բարձրագոյն հրովարտակսն զֆէրմանն և բէրաթն, և զհամահաճութեան մահսարն, և զբազում շնորհաւորական թուղթս Կոստանդնուպօլսոյ սրբազան պատրիարգին, առաջնորդաց, իշխանաց, ամիրայից և հասարակ ժողովրդոց, և այլ երևելի քաղաքաց, զորս յարդանօք ընկալեալ զփառս տնօրինողին Աստուծոյ մատուցաք, և զընդհանուր լուսաւորչերամ մեծահաւատ ժողովուրդսն և զազգսն մեր օրհնեցաք։ Եւ ըստ որում Եփրեմ վարդապետն զանազան սուտ բարուրանօք պղտորեալ էր զսիրտս պարզամիտ ժողովրդոցն հիւսիսայնոց, որպէս թէ մեք զարծաթեղէն անօթս եկեղեցւոյն խորտակեալ տուեալ իցեմք երկրիս խանին և այլ բռնաւորաց և նօքօք յափշտակեալ զայս Աթոռս, և ոչ ընտրութեամբ միաբանից և ազգին, որ ըստ ամենայնի զրպարտութիւն մեծ է զոր առնէ, զի ոչ զարծաթեղէն եմք խորտակեալ, և ոչ բռնութեամբ նստեալ, այլ հաճութեամբ երկրացւոց, միաբանից սրբոյ Աթոռոյս և մանաւանդ յորդորմամբ քաղաքացւոցդ, և զայն ըստ կտակի հանգուցեալ Յովսէփայ սրբազանին, որպէս դուք քաջ հմուտ էք այնմ և լաւապէս գիտէք։ Եւ նոյն Եփրեմ վարդապետն զայս անհիմն և դատարկ բանս, զորս լուեալ է ի բերանոց ռամիկ մարդկանց, առանց քննութեան հաւատացեալ է մինչև ի լունկս օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն և բոլոր մեծամեծացն ռուսաց և Հայոց և զանազան սուտ և ունայն դրութեամբք զայս բարուրանս տարածեալ է և ի հեռաւոր քաղաքս ի մեծն Պօլիս և այլ տեղիս. և վրդովեալ զնոսա և գայթակղեցուցեալ զբազումս

ի վերայ հայրապետութեան մերոյ, որ անիրաւութիւն մեծ է, զոր գործէ առանց խղճահարութեան, և թշնամութիւն յաախլութենէ շարժեալ և ի նախանձու ըմբռնեալ թարց զվերջն խորհելոյ և այլն։ Վասնորոյ հարկաւոր համարեալ առաքեցաք զնոյն Կարապետ արքեպիսկոպոսն և զԱբրահամ եպիսկոպոսն ի կայսերանիստ քաղաքն Պետերբուրգ առ բարձրագոյն աթոռս նորին, հանդերձ շնորհաւորական գրով, ֆերմանի և չահի բազմի օրինակօք, մահուարօք, և այլ բազում և անթիւ շնորհաւորական և բարեհաճական թըղթովք զանազան քաղաքաց օսմանցւոց և պարսից հոգեորական և աշխարհական դասուց միրաղնէից և օտարազգաց, այսինքն մեծամեծ փաշայից՝ խանից և այլոց, և խնդրեցաք յարգարակշիռ աթոռոյ նորին, զի ճշմարտութեամբ և իրաւամբ զճշմարիտն քննեալ վերահասու լինիցի իրացն ստուգութեան, և մեզ իբրև բարեպաշտ կայսր զբաւականութիւն տացէ շնորհելով զհրովարտակն, այսինքն զբարձրագոյն զրամատն վերահաստատութեան մերս կաթուղիկոսութեան։ Արդ՝ այսու օրհնութեան և սիրալից նամակաւ յորդորեմ զճշմարտասէր և զխաղաղարար իշխանսդ և զհաւատարիմ բարեկամսդ սրբոյ Աթոռոյս և մեր, զի դուք որ ամենայն բանիցն տեղեակ էք, առաջի Աստուծոյ և առաջի մարդկանց վկայ եղիջիք ճշմարտութեան և բանիւ և գրով ջատագով լինիջիք սրբոյ Աթոռոյս, և մեզ վշտակիր ի զուր բամբասելոցս, և մանաւանդ ի կայսերապերճ երկիրն ռուսաց ի հռչակաւոր քաղաքսն ի Պետրբուրգ, ի Մոսկով, և ի Հաշտարխան և յայլ քաղաքս կողմանցն իբրև աստուածասէր և բարեպաշտօն իշխանք, զխաղաղութիւն սերմանեսջիք ի սիրտս նոցա. և զուղիղն ծանուսջիք գրովք սիրելեաց և բարեկամաց ձերոց, և յորդորեսջիք զնոսա հեռանալ ի խռովութեանց և ի չփոթից և չինութեան սրբոյ Աթոռոյս ցանկալ, քանզի ի հակառակութեանց ոչ այլ ինչ ծնանի, եթէ ոչ բազմազիմի խայտառակութիւնք, մեծամեծ վնասք խղճալի Տանս և մշտնջենաւոր կեղտ անուն ի վերայ իւրեանց և մանաւանդ զքաղցր սիրտ օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն զառնացուցեալ զխնամն և զգթութիւնն ի մէնջ և յԱթոռոյս բառնալոց են և մեք զրկեալ լինելոց եմք ի հովանաւորութենէ նորին. զայլն ոչ երկարեմ, դուք ձերով խոհեմութեամբ ծանիջիք, և զմեզ ի բանից խըռովարարաց յապահովլի կացուսջիք և մխիթարիչ լինիջիք, որովք վարձուց մեծաց և շնորհացն Աստուծոյ արժանաւոր գտանիջիք։ Եւս մանաւանդ սիրելի զաւակացն մերոց Կարապետ և Աբրահամ եպիսկոպոսացն ըստ ամենայնի բանիւ և գործով օգնական և օժանդակ լինիջիք, զորս յանձնեմ ի շնորհս ձեր, յորոց և զմերս ամենայն սրտխոսութիւնն ունիք լիապէս գիտել։ Այսպէս առնելով ձեր՝ զօրասջիք տէրամբ Քրիստոսիւ և եղիջիք օրհնեալք ի նմանէ և ի մէնջ, և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ ձեզ հանապազ. Ամէն։

Գրեցաւ ի 1801 և դեկտեմբերի ....

ՊԳ. *Թուղթ ի Պօլիս առ Գէորգ Աղայեկովն, ծանուցումն վասն գալստեան մեր Կարապետ վարդապետին ի սուրբ Աթոռս եւ շնորհակալութիւն վասն աշխատանացն, զորս ունի կրեալ յանուն մեր:*

Ցորմէ սիրով սուրբ հօգւոյն երկնաւոր օրհնութեամբ և բազմապատիկ շնորհակալութեամբ հանդերձ պահպանողական շնորհիւ Իջման տեղւոյս Քրիստոսի, ժամանեսցէ ողջոյն խաղաղական ի վերայ սիրելի և հոգեոր որդւոյդ մերոյ և ընտիր բարեկամիդ, բարեպաշտօն և ազնուական պարոն Գէորգիդ և որոց ընդ ձեզ են ի Տէր խնդալ։ Եւ ընդ ողջունառաք օրհնութեան նամակիս, գիտութիւն լիցի սիրելութեան ձերում։ Զի օգնականութեամբ Տեառն Ամենակալին, հարազատ որդին մեր և սրբոյ Աթոռոյս, Կարապետ Արհիական եպիսկոպոսն վերադարձաւ այսր առ մեզ ի նոյեմբերի 16, հանդերձ արքայական հրովարտակօք, և բարեհաճական մանսաբաւ օրհնեալ իշխանաց Պօլսոյ, և այլ անուանի քաղաքաց, և շնորհաւորական գրովք սրբազան պատրիարգին և այլոց հոգեորականաց, զորս սիրով և հանդիսիւ ընկալեալ, փառս մատուցաք տնօրինողին Աստուծոյ, որ զամենայն ինչ ունի ի բարին յաջողել, և

մեծագոյն գոհունակութեամբ օրհնեցաք զհարազատ և զհաւատարիմ բարեկամսն մեր, և զամենայն աշխատաւորսն, որք բարեպաշտական սիրով և ջերմեռանդ բարեմտութեամբ խորհելով զօգուտն սրբոյ Տանս և Ազգին՝ ըստ կարի և զօրութեան՝ հետևօղք եղեն յայսմ բանիս· որոց ամենից Տէր եղիցի վարձատրի։ Մեք ես յատուկ գթուղթս օրհնութեան և շնորհակալութեան գրեցաք իւրաքանչիւրոցըն։ Եւ այս օրհնութեան թղթով մերով՝ արժանապէս և զսիրելւոյդ մերմէ ի բոլոր սրտէ շնորհակալիմք. և եմք օրհնող զկեանս ձեր ի մէջ քրիստոսահիմն սրբոյ տաճարիս, քանզի՝ երկիր որ բերէ զքաղցրաճաշակ պտուղ՝ եթէ օրհնութեան արժանաւորի ըստ առաքելոյն, ապա որչափ պարտաւորիմք մեք օրհնութեան և սիրոյ զպատուականութիւն ձեր արժան համարել, զորոյ զպտուղն, այսինքն զբազում զործս հաւատարմականս տեսեալ վայելեցաք, ուրեմն՝ օրհնեսցէ զքեզ Տէր երկնային և անանց օրհնութեամբ, և յաւելցէ աւուրս ձեր՝ զբազում և խաղաղ կեանս, և պահեսցէ՝ Ամենազօր Աջով իւրով բարեբաղդ բարեյաջողութեամբ՝ փրկելով յամենայն ձախողակի դիպուածոց՝ ի մխիթարութիւն սրտի մերում, և՛ ի շինութիւն սրբոյ Տանս իւրակերտի։ Արդ՝ ըստ ոյում, Եփրեմ վարդապետն և այլք ոմանք՝ զրաբանութեամբ ծանուցեալ են զմէնջ նորին կայսերական մեծութեան, որպէս թէ՝ մեք զարծաթեղէն անօթս եկեղեցւոյն խորտակեալ, տուեալ իցեմք պարսից, և նօքօք յափշտակեալ զայս Աթոռ և ոչ հաճութեամբ ազգին, և այլն որպէս և տեղդ զնոյնն ունի գրեալ, զոր միըստմիոջէ պատմեաց մեզ Կարապետ սիրելի որդին մեր, դուք ես ի թղթի ձերում յիշատակեալ էիք, վասնորոյ զնոյն ինքն զԿարապետ արքեպիսկոպոսն և զԱբրահամ եպիսկոպոսն առաքեցաք ի դուռն նորին կայսերական մեծութեան թղթովք, և օրինակօք հրովարտակաց, և այլ մանսարաց, համահաճական թղթոց առաջնորդաց, իշխանաց և ժողովրդոց, որպէս զի՝ զճշմարիտն և զստոյգն գիտացեալ, զբանս խռովասիրաց խոտան համարեսցէ, և ամենաողորմածաբար զզրամատն վերահաստատութեան մեզ շնորհեսցէ ի՛ պահել քրիստոսահիմն սրբոյ տաճարիս ի յաւիտենական յիշատակ ամենամեծ անուանն իւրոյ և այլն։ Վասնորոյ որպէս նորին գերազանցութեան պարոն Վասիլ Ստեփանիչ Թամարովին գրեցաք, նոյնպէս և քեզ սիրելւոյդ մերում գրեմք և խնդրեմք, զի ըստ ամենայնի փոյթ կալեալ հետևեսջիք զճշմարիտն և զբարին յառաջացուցանել, և զբանս խռովասիրաց ունայնացուցանել, և զխաղաղութիւն սերմանել ի սիրտս ամենեցուն, և եթէ հարկաւորի, գրով ևս ուր հարկն է գրել, և զճշմարտութիւն, զոր կամին ծածկել ոմանք, յայանի կացուցանել։ Որպէս և վասն այսմ լիով գրեցաք պարոն Թամարով հարազատ բարեկամին մերում, յորմէ տեղականալոց էք։ Այսպէս գիտացեալ, ողջ լեր ի Տէր և զօրացեալ նովաւ, Ամէն։ ի 1801, ի դեկտեմբեր ... ի սուրբ Էջմիածին։

Եւ թէպէտ ընդ Կարապետ վարդապետին ի քէն գիր ոչ գոյր, սակայն յետոյ ի դեկտեմբեր 5. ընկալաք զորպիսածանոյց թուղթըն քո ընդ պարոն Թամարովի գրոյն, որովք ամենայն գրուածոցն ձերոց հասու եղաք, և գիտացաք զանցսն տեղւոյդ և զանպատշաճարարս ոմանց։ Ահա նորին գերազանցութեան պարոն Թամարովին գրեցաք զշնորհակալութիւնս, զորս տեսանելոց ես։

ՂԴ. Թուղթ սիրոյ ընդ Կարապետ եւ Աբրահամ վարդապետացն ի Բամբակաձոր առ Փեօտր Կիրիլիչ մայօրն:

Ցորմէ ժամանեսցէ ողջոյն և օրհնութիւն ի վերայ սիրելւոյդ մերում և հաւատարիմ բարեկամիդ ազնուական պարոն Ֆեօտր Կիրիլիչ քաջալաղթ զօրապետիդ և բարեհամբաւ կողմնակալիդ, և որոց ընդ ձեզ են ի Տէր խնդալ։ Որում գիտութիւն լիցի։

Զի յառաջ քան զայս, քանիցս օրհնութեան և սիրոյ թղթովք ծանուցեալ եմք ձեզ զմերս որպիսութիւն և զկեցութիւն։ Իսկ զարդիս ըստ որում յաղագս զանազան հարկաւորութեանց առաքեցաք ի դուռն կայսերական մեծութեան զհարազատ որդիսն մեր զԿարապետ և զԱբրահամ շնորհափայլ եպիսկոպոսունսն հանդերձ շնորհաւորական թղթով,

և այլ բազում դրովք, վտանորոյ պատշաճ դատեցաք ընդ նոսա և ձերումդ աղնուականութեան զայս թուղթ սիրոյ և բարեկամութեան համառօտապէս գրել։ Որով և խնդրեմք ի յԱստուածսիրութենէ ձերմէ, զի սիրով և մարդասիրութեամբ ընկալեալ զեպիսկոպոսունսդ զշնորհս մեր, ցուցջիք զոցա, և ըստ ամենայնի օգնական լեալ, ջանասջիք օր մի յառաջ ուղևորել զղոսա ի Թիֆլիզ առանց արգելման և պատճառի, որովք արդարև՝ պարտաւորելոց էք զմեզ՝ հանապազ օրհնաբան լինել ձերումդ սիրելութեան հանդերձ բազմապատիկ շնորհակալութեամբ։ Զայլ որպիսութիւնս մեր ունիք գիտել ի սիրելեացդ մերոց ի Կարապետ և յԱբրահամ վարդապետացդ, զորս յանձնեմք ի խնամս ձեր։ Այսպէս գիտացեալ, ողջ լեր ի Տէր, և զօրացեալ նովաւ. Ամէն։ 1801. ի դեկտեմբերի ... ի սուրբ Էջմիածին։

ԳԵ. *Կոնդակ ի վերայ հասարակութեան Ղզլարու ընդ Կարապետ եւ Աբրահամ եպիսկոպոսացն ի համոզել զնոսա ի խաղաղութիւն եւ այլն:*

Ցորմէ ժամանեսցի թուղթ ճշմարիտ սիրոյ, Քրիստոսական ողջունի, երկնային օրհնութեան և խաղաղութեան, հանդերձ կենսազուրծ Շնորհօք սրբոյ Իջման Բանին Աստուծոյ, և այլ սրբութեանցն աստանօր եղելոց, ի վերայ հոգևոր և սիրելի որդւոցդ մերոց, հարազատ զաւակացդ, և տէրունի ժողովրդոցդ սրբոյ Աթոռոյս, որք կայք ընդ հովանեաւ լայնածաւալ խնամարկութեան օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն բնակեալ ի տիրահաստատ քաղաքդ ի Ղզլար, նախ սրբասնունդ քահանայից, և բոլոր եկեղեցական մանկանց, և ապա գերապատիւ իշխանաց, յարգելի ազնուականաց, իրաւախոհ դատաւորաց, բարեհամբաւ վաճառականաց, հաւատարիմ երեցփոխաց, գործակալաց և գանձապետաց, բազմավաստակ արհեստաւորաց, քրտնաջան հողագործաց, եկաց և բնակաց, և առհասարակ մեծաց և փոքերց արանց և կանանց եղիցի ի Տէր խնդալ։

Եւ ընդ ողջունաառաք օրհնութեան նամակիս, ծանուցումն եղիցի մշտահաբաղատ որդւոցդ սրբոյ Աթոռոյս սիրելի և մեծահտւաա հոգևոր զաւակացդ մերոց։ Զի մեք համարելով զձեզ օրտախոհ և բարեջան ընտիր ժողովուրդք, և հաւատարիմ բարեկամք Քրիստոսահիմն սրբոյ Գահիս և մեզ, անդրանիկ օրհնութեան նամակաւ մերով, ծանուցաք ձեզ զբազմելն մեր յԱթոռ Հայրապետութեան հաճութեամբ ազգին և Աթոռայնոցս ըստ կտակի ի Տէր հանգուցեալ սրբազան Ցովսէփայ հոգելոյս հայրապետին, Նոյնպէս և յաբղի եղբօրն մերում Տեառն Եփրեմայ Արհւոյն երկիցս գրեցաք զթուղթս սիրոյ և ծանուցականս. Ընդ մեզ և միաբանք սրբոյ Աթոռոյս գրեցին նմա և ձեզ զամենայն զանցս և զիրակութիւնս տեղւոյս, և զմեր կոչումն յայս աստիճան հաւանութեամբ ազգին և ինքեանց։ Բայց չընկալաք ի ձէնջ մինչև ցարդ զոչինչ զպատասխանի, և չկարծեցաք բացառապէս զդիտումն ձեր գիտել։ Արդ՝ առաւել քան զամենեսեան՝ ձեզ հարկ էր և վայելուչ հաճիլ ընդ ընտրութիւն մեր և ուրախ լինել. ըստ որում բանիւ և կտակաւ բազմաշխատ հովուին ձերոյ Տեառն Ցովսէփայ եմք նստեալ, և չեմք օտար։ Իսկ դուք ընդ հակառակն գործէք և խոչնդոտն լինիք մեզ, ի պատճառ գայթակղութեան այլոց։ Քանզի՝ լսեմք, որ սիրեցեալ եղբայրն մեր Եփրեմ արքեպիսկոպոսն երկու զրպարտութիւնս արարեալ վասն մեր, պղտորեալ է նոքօք զքաղցր սիրտ օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն և ապա ըղձերն, որպէս թէ, մեք զարծաթեղէն անօթս եկեղեցւոյն խորտակեալ տուեալ լցեմք բռնաւորաց, և նոքօք յափշտակեալ զայս աթոռ և աչ ընտրութեամբ ազգին, և ձեր ես ի բանից նորին գայթակղեալ, հակեալ էք ի կողմն նորա, և գրով յայլ և այլ տեղիս գրեալ։ Ուստի՝ ի բաց փարատումն սնոտի բանից նորին, առաքեցաք ահա շնորհաւորական թղթով ի դուռն օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն զհաւատարիմ որդիսն սրբոյ Աթոռոյս (զԿարապետ և զԱբրահամ արք եպիսկոպոսունսն) հանդերձ ֆերմանի և բերաթի, և Շահի մեզ շնորհեալ՝ բազամի օրինակօքն ընդ այլ բազում մանսարաց և շնորհաւորական թղթոց Պօլսոյ և երևելի քաղաքաց, զորս տեսանելոց էք և գիտելոց, թէ

հաճութեամբ ազգին է, և ոչ բռնութեամբ։ Եւ վասն արծաթեղինացն, զորոց երկբայիք, կորէք ի ձեռն հաւատարիմ արանց զիրսն ճշմարտութեամբ քննել՝ և հանդչել ի տարակուսանաց, յիրաւի՝ եթէ մինչև մէկ արէմ արծաթ կորուսեալ իմք, հաւատոյն ի վերայ մեր այն բարսւրանք, ապա թէ ոչ՝ ծանիջիք, զի թշնամութիւնք են և զրաբանութիւնք։ Իսկ թէ՝ վասն Գրիգոր վարդապետին իցեն այդ տարաձայնութիւնք, գիտացէք, զի Երբ ծանուցիք մեզ գրով զխնդիրս և զկամս ձեր, զորս անաևս արարաք և ոչ լուաք. զի մեք զկամս հանդուցելոյն լցուցանելով, ձեռնադրեցաք զնա եպիսկոպոս և առաքեցաք առաջնորդ յերկիրդ այդ, կարծելով այնու հաճոյ դառնել նորին կայսերական մեծութեան և ձեզ, և ոչ պատճառ խռովութեան։ Վասնորոյ գրեմ ձեզ ահա, զի յերկուց եպիսկոպոսաց այափ զորն և հաճեսջիք, թէ զՆփրեմ թէ զԳրիգորն, և միաբանութեամբ մեզ գրեսջիք, զայն կացուցանելոց եմք ի վերայ ձեր առաջնորդ ի հաստատութիւն եկեղեցեաց ձերոց և ի շինութիւն ձեզ առանց երկբայութեան։ Ուրեմն՝ յորդորեմ զսիրելիսդ իմ և պատուիրեմ, ի բաց հեռանալ ի խռովարար բանից և ի յաղմկարար զրուցաց, և զհետ խաղաղութեան և միաբանութեան երթալ, բառնալով զամենայն նիւթս ատելութեան։ Քանզի յայդպիսի ներհակ և հակառակ շարժմանց, ոչինչ բարի յառաջանալ, եթէ ոչ՝ տղեղութիւն անուան ձերոյ, և դայթակղութիւն օտարասերից։ Եւ Աստուած որ հաստատիչն է բարութեանց, և խաղաղութեանց, հաստատեսցէ զձեզ ի բարին, և անդորրացուսցէ զվրդովեալ միտս ձեր՝ զերկնայնին խաղաղութիւն տալով ձեզ, ի փառս անուան իւրոյ, և ի պայծառութիւն սրբոյ Աթոռոյս, սրբոց եկեղեցեաց մերոց, և ձեզ։ Զայլ ամենայն որպիսութիւնս մեր ունիք տեղեկանալ . . . զորս յանձնեմք ի սէր սիրելեացդ։ Որև՝ Շնորհք սրբոյ Գահիս և օրհնութիւն սուրբ Լուսաւորչին եղիցին օժանդակ յամենայն բանս և ի գործս ձեր բարիս, Ամէն։

Գրեցաւ ի 1801 դեկտեմբերի ... ի սուրբ Էջմիածին։

Դ.Ջ. Առ պարոն Սոլոմոնն։

Պայծառ իշխան քնեազ Սոլոմոն։ Զի զամենայն ինչ ունիմք քեզ յառաջագոյն գրեալ։ Նոյնպէս և զորպիսութիւնսն տեղւոյդ և հիւսիսայնոց ի թղթոց քոց տեղեկացեալ, հասու լեալ եմք ամենայն գրեցելոցդ։ Բայց զորդիս զայս ծանիր առանձին, զի յաղագս երկուց յառաջագրութեանցդ, զորս իբրև հաւատարիմ և ճշմարիտ բարեկամ գրեալ էիր մեզ, այսինքն նախ զանց առնել և գրել ընթուղթ կրկին առ Նփրեմն և առ ժողովուրդսն։ Եւ երկրորդ չառաքել զընծայս տեղւոյդ անձանց ոմանց, որոց պատկանի. ըստ որում փոխանակ գոհութեան, առաւել թշնամանան և բամբասեն. յիրաւի՝ որպէս զկատարեալ մտերմի՝ ընկալաք զբարի խորհուրդդ, և մատուցաք զշնորհակալութիւնս ոչ սակաւ։ Բայց ըստ որում զրպարտութիւնք նոցա, զորս դնեն ի վերայ մեր՝ հնչեցաւ յամենայն ուրեք, և իբրև զհուր սկսաւ հրդեհել զամենեսեան, որք բաց ի յունկս նորին կայսերական մեծութեան և մեծամեծացն հասուցանելոյն, և գրովք և թղթովք լցին յամենայն քաղաքս հեռաւորս ի Պօլիս և այլ տեղիս, պատշաճ զատեցաք զարժանի զպատասխանին տալ ամենիցն, և զստայօդ բանս նոցին ունայնացուցանել, և զմեզ ի ձեռաց զրաբանողացն յապահովլի առնել, և ընդդէմ ստութեանցն զճշմարտութիւն հրատարակել, զի գիտասցեն թէ թշնամութիւնք են, և անհիմն սուտասպելաբանութիւնք։ Զի ամենայնի ժամ է և ժամանակ, բաւական է որչափ լռեցաքն։ Վասնորոյ ի յեղծումն և ի ջրումն ունայնութեանցն այնոցիկ, առաքեցաք ահա զսիրելի որդիսն սրբոյ Աթոռոյս և մեր զՄարապետ և զԱբրահամ արքեպիսկոպոսունսն ի դուռն կայսեր հանդերձ ֆարմանի և Շահի բաղամի օրինակօքն, և մեծին Պօլսոյ և այլ քաղաքաց մահսարօք, և բաղում համահաճական թղթովք առ մեզ գրեցելովք առաջնորդաց, իշխանաց և ժողովրդոց մերազնեայց և օտարազգաց, և բազմակնիք մահսարօք միաբանից և երկրացւոցս, զորս տեսանելոց ես, և զամենայն ինչ գիտելոց, զորոց ոչ երկրորդեմք։ Որպէս զի՝ ծանուսցեն ամենեքեան թէ՝ հաւանութեամբ ազգին է և ոչ բռնութեամբ և կաշառօք, որպէս զրաբանեն։ Նոյնպէս գրեցաք առ նորին կայսերական մեծու-

թիւն շնորհաւորական բանս, և խնդրեցաք յԱրդարադատ Աթոռոյ նորին ճշմարտութեամբ զիրսն քննել, և մեզ զբաւականութիւն տալ, շնորհելով զգրամատն վերահաստատութեան։ Ըստ այնմ և առ ամենայն բնակիչսն կողմանցն ի զանազան քաղաքս գրեցաք զօրհնութեան կոնդակս, և յորդորեցաք զնոսա ի խաղաղութիւն և ի միաբանութիւն։ Ընդ որս՝ և տեղւոյդ բնակչացն և զանազան անձանց զհարկաւորսն և զպատշաճսն գրեցաք, զորս ունիս տեսանել, և ընդ վարդապետացն մերոց մատուցանել իւրաքանչիւրոցն զիւրեանց թուղթսըն հանդերձ ողջունիւ և օրհնութեամբ ի դիմաց մերոց, ծանուցանելով թէ՝ ունիք իւրաքանչիւրքդ ըստ ջատագովութեան և մտերմութեան՝ արժանապէս վայելել զշնորհս սրբոյ Աթոռոյս և զօրհնութիւնս մեր՝ բազմապատիկ շնորհակալութեամբ։ Բանզի՝ ըստ դրութեանդ անվայել համարեցաք այժմ ընդ վարդապետացն մերոց զհոգևոր օրհնութեան մերոյ դնչանն, այսինքն զընծայսն որոց պատշաճի առաքել. ուստի՝ ըստ այսմ ծանուցես նոցա, և լուսաղիր լիցիս շրջանկատ խոհեմութեամբ, զի յետոյ ունիցին վայելել զայն ի մէնջ։ Զայլն ամենայն ի սիրելեացն մերոց ի Կարապետ և յԱբրահամ եպիսկոպոսացն տեղեկանալոց էք, որք են կենդանի գիր, և բերան առ բերան պատմելոց են զամենայն ինչ ձեզ, զորս յանձնեմք ի սէր ձեր. ըստ ամենայնի օգնական և ձեռնտու լինել քոյով մեծադոյն հաւատարմութեամբդ, զորս ունիս դէպ առ մեզ խորհրդատու և օգտակամ գտանիլ, և զբարին և զշահաւէտն, որք հային ի շինութիւն սրբոյ Աթոռոյս և ի խաղաղութիւն ազգին, զայն առաջադրել, և զվարձս յԱստուծոյ, և զՇնորհս ի սրբոյ Աթոռոյս մշտապէս վայելելոյ՝ արժանաւորիլ։ Ի սոյն օր, յետ աւարտման գրոյս ընկալաք զքոյ գիրն ի սոյն դեկտեմբերի 1 գրեցեալ առ մեզ և առ Կարապետ վարդապետն. որովք գիտացաք զմիտս գրեցելոցդ որ համեմատ մերս դիտմանց էիր խորհեալ և դու. քանզի տնօրինմամբն Աստուծոյ, որպէս գրեալ էիր և յառաջադրեալ, ըստ այնմ և մեք յառաջագոյն հոգացեալ ճանապարհեցաք ահա յաղգկոյս ըզվերոյիշեալ եպիսկոպոսունսն, յորոց մի է սիրելին մեր և հանդուցեալ հօղեկոյս հայրապետին հաւատարիմ զաւակն Կարապետ Արհին, որ և է ձեզ սիրելի և ջատագով որպէս գիտես և յայտնիք են ձեզ. յորմէ երկարօրէն ունիս զբաղում ինչ գիտել, որում և յատկապէս պատուիրեալ եմք տնօրինել զամենայն ի բարին։ Բայց զոր գրես թէ՝ ընդ գրոյս և Գրիգոր վարդապետի գիրն առաքեցաք, մեք միայն զքոյ երկու գիրն իւր ամբողջ պահարանաւն ընկալաք, բայց Գրիգոր վարդապետինն չտեսաք և ոչ զոյր ընդ գրոյդ։ Վասնորոյ ի յԵրևան զմարդ յղեցաք որոնել, դու ես՝ որպէս և իցէ հետաքրքիր լինիցիս, և քննեսցես, ում ես տուեալ հարցցես, և կամ գուցէ յայլը իցես մոռացեալ սխալմամբ, և մեզ փութով ծանուսցես. զի գիտացեալ միամիտ լիցուք։ 1801 դեկտեմբեր ի Էջմիածին։

ԳԷ. Թուղթ ի Պօլիս առ վարժապետ տիրացու Մեսրոպն։

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ գիտութիւն լիցի հոգևոր որդւոյդ մերում Զի Կարապետ վարդապետ հարազատ որդին մեր խաղաղութեամբ ժամանեաց ի սուրբ Աթոռս ի նոյեմբերի ԺԶ, ունելով ընդ ինքեան ըզհրովարտակսն արքայական, և զմահսարս համահաճութեան մեծի մայրաքաղաքիդ օրհնեցեալ իշխանացն և ժողովրդոց, և զայլ բազում շնորհաւորական թուղթս հոգևորական և աշխարհական դասուց. զորս յարդանօք ընկալեալ, զփառս Աստուծոյ մատուցաք և զլուսաւորչածին ժողովուրդսն մեր ի բոլոր սրտէ օրհնեցաք բերանալիր շնորհակալութեամբ։ Որք միակամ յօժարութեամբ ի յօգուտ և ի շինութիւն մեծի Տանս հայելով, հաճեալ էին ընդ յայս մեր կոչումն, և մեզ գրեցեալ շնորհաւորական թղթով՝ ցուցեալ զայն իբր գործով, որոց Տէր նդիցի վարձատիր։ Եւ թէպէտ սակս խռովութեանց ինչ ծաղելոց նորապէս ի քաղաքիդ չգրեցաք զյատուկ օրհնութեան կոնդակ հասարակութեան տեղւոյդ, որ կարի կարեւոր էր, սակայն յարդելի և չքեղափառ ամիրայիցն և իշխանաց, և մանաւանդ այնոցիկ, որք քաջընտիր բարեկամք են մեզ, և յայտնի կացուցին զայն գրովք զօրէն հաստատուն և հաւատարիմ առն ընտրելա-

զունի, և լիրև զլուս յաչտանակ եղեալ փայփայեցին ի գրուածս, մատուցաք զմերս օրհնութեան և չնորհակալութեան նամակ, զորս ունիք տեսանել։ Թէ և՛ սիրելի որդիդ մեր չէիր զպատուկ թուղթ առ. մեզ գրեալ, սակայն՝ ընթեռնլով զպորգական թուղթս մեծապատիւ ամիրայիցն, յորս երևիւր միանգամայն և չարադրողից ջերմեռանդութիւն առ. մերո հոգևոր հայրութիւնն և մանաւանդ հաւելով յերջանիկ բարեբեր բոյսոն զ'ի Քրիստոս հանգուցեալ ուխտերահաչակ նախնիսն քոյ ասեմ, զայս թուղթ օրհնութեան և ճշմարիտ սիրոյ և քեզ հոգևոր զաւակիդ մերում գրել՝ արժան և բարեպատեհ վարկաք։ Որով և պատուիրեմք. զի ի դոյն որդիական սէր և ի ջատագովութիւն, զորս ունիք դէպ առ. սուրբ Աթոռս և առ. մեզ՝ հաստատուն կացջիք և ի զբարին և զօգուտն խորհելոյ և ի հարազատութենէ մի վերջառջիք, որովք չնորհացն Աստուծոյ և նոյնաիջի տեղւոյս, և զօրհնութիւնս մեր կրկին կրկին վայելելոյ արժանաւորք զտանիջիք։ Այսպէս առնելով քոյ զօրասցիս Տէրամբ, և ի խնամս և ի զըթութիւնս նորին լիցիս յանձնեցեալ։ Ամէն։ Ի ՌՄԾ թուոջս, և ի դեկտեմբերի ... ի սուրբ Էջմիածին։

ՂԸ. *Թուղթ ի Պօլիս առ Անդրէաս Չէլեպին ի պատասխանի թղթոյն եւ ի յորդորումն կրկին ի սէր եւ ի հաւատարմութիւն։*

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ, գիտասցէ սիրելի և հոգևոր որդիդ մեր, և օգտախոհ զաւակդ սրբոյ Գահիս Էջմիածնի։ Զի Կարապետ վարդապետ չնորհափայլ եպիսկոպոսն խաղաղութեամբ ժամանեաց ի սուրբ Աթոռս ի նոյեմբերի ԺԶ. հանդերձ արքայական հրովարտակօք, մահսարաւ, և այլ բազում չնորհաւորական թղթովք օրհնեցելոցդ։ Ընդ որս՝ ծանուց բանիւ զձերդ ընդունելութիւն և զկամակցութիւն, որք միաչունչ և միահոգի՝ խորհելով զբարին ընդ յարգելի եղբօր մերում Յօհաննէս պատրիարդ արհւոյն հաւանեալ էիք ընդ կոչումս մեր՝ յայս կարդ և ի պատիւ. և զայն հաճութիւն որպէս՝ ի հասարակական մահսարին նոյնպէս և ի յատկական թուղթս ձեր ցուցեալ էիք։ Եւ մեք սիրով և յարգանօք ընկալեալ զփէրմանն և և զթուղթսն ձեր, նախ զգոհութիւնս Աստուծոյ մատուցաք, որ զիտէ յաջողել զգործս մեր, և ապա՝ բերանայիր օրհնութեամբ չնորհակալեցաք զամենեցդ զորս Տէր օրհնեսցէ և յամենայն փորձանաց փրկեսցէ։ Եւ թէպէտ հարկ էր մեզ զկոնդակ օրհնութեան գրել առ. օրհնեալ մերազնեայսն տեղւոյդ, սակայն մինչ հնչեցան առ. մեզ ձայնք խռովութեան ձերոյ և մանաւանդ սիրեցեալ եղբօր մերոյ Յօվհաննէս պատրիարգի տարագրելն, զանց արարաք և Աստուծով յորժամ զխաղաղութեան լուրն ձեր լուիցեմք, որում ցանկամք, և մեծաւ յուսով սպասեմք, յայնժամ գրելոց եմք զայն ըստ մերումս պարտաւորութեան։ Այլ այժմ առ. բազումս յիշխանաց գրեցաք զթուղթս օրհնութեան։ Եւ զայս սիրոյ և չնորհակալութեան նամակ ես՝ քեզ բարեպաշտութեամբ զարդարեցելոյդ և փոխադարձ չնորհաւորական բանիցդ գրել արժան համարեցաք։ Որով խնդրեմք, զի հաստատուն կացցես ի սէր մեր, և անվերջանալի արասցես զմեծագոյն ջատագովութիւնդ զոր ունիս առ. սուրբ Աթոռս և առ. մեզ, և քոյով օգտաբար ջանացողութեամբ և մշտահարազատ որդիութեամբ սրտադիւր զմեզ արասցես։ Քանզի ահա ի վերայ տրտմութեանցն զորս ունիմք զտարաձայնութեանց ձերոց, ստացաք կրկին զվիչտս, ըստ որում լսի թէ՝ քանի մի խանք զօրօք խաղան յերկիրս ի վերայ իշխողին որոյ ազգաւ ամենեքեանս կամք ի տարակուսի։ Տէր այց ելցէ մեզ, և ողորմեսցի ըստ մեծի ողորմութեան, և իւրով միարար խաղաղութեամբն խաղաղացուցեալ անորրացուսցէ ըզքաղաքդ և զժողովուրդսդ, և ապա զմեզ և զերկիրս։ Այսպէս գիտացեալ քոյ առ. այժմ, և զորպիսածանոյց գիրդ ի մէնջ անպակաս արարեալ, ողջ լեր ի Տէր, և զօրացեալ նովաւ, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾ թուոջս մերում, և ի դեկտեմբերի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

[1]) **ՂԹ.** *Ի Տէր Դաւիթ կաթուղիկոսէ՝ թուղթ օրհնութեան առ Ալրօյեան Մարզար աղայն յԻզմիր, ծանուցումն զմահուանէ Յովսէփ կաթուղիկոսին, եւ զընտրութենէ յիշեալ սրբազան հայրապետին:*

Եւ ընդ սիրոյ և օրհնութեանս Աստուածայնոյ գիտութիւն լիցի պատուական սիրելւոյդ իմոյ՝ և բարեխօհ որդւոյդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի յանցելումն ամի գրեցեալ երկոքին սիրանչան թուղթքդ ժամանեալք առ մեզ ընդ ժամանակս ժամանակս, որոց զպատասխանիսն մեք ևս գրեալ՝ և յղեալ եմք, թերևս հասեալ լինին առ պատուելութիւն քոյ։ Այլ արդ զայս ունիմք ծանուցանել աղնուոյդ։ Զի զկնի անցից և չփոթութեանցն Կոստանդնուպօլսոյ որ յաղագս բանի գահակալութեան սրբոյ Աթոռոյս, վերջապէս այն ինչ կալացաւ անուն կաթուղիկոսութեան ի վերայ Յովսեփայ արքեպիսկոպոսին Հիւսիսոյ, և յանուն նորա արքունական նոմոսքն հանեալ եղեն, մեք ևս առեալ զայնս՝ զարձաք ի սուրբ Աթոռս, և ինքն Յովսէփ անուանեալ կաթուղիկոսն ևս ուղևորեցաւ ի կողմանցն Հիւսիսոյ գալ ի սուրբ Աթոռս։ Բայց եկեալ նորա մինչև ի Թիֆլիզ քաղաք, հիւանդացաւ անդ, որով և փոխեցաւ ի կենաց աստի, որոյ զհոգին Տէր լուսաւորեսցէ, և զգլուխ սիրելւոյդ ողջ պահեսցէ։ Իսկ յետ վախճանման նորին՝ մինչ լուեալ էաք զպարգելի եղբօրէն մերմէ Դանիէլ արհիեպիսկոպոսէն թէ ի Թօխաթ քաղաքի է, բաղմակնիք մահսէր արարեալ միաբանութեամբ՝ ձեռամբ երկուց վարդապետաց առաքեցաք առ նա, առ ի փութանակի գալ ի սուրբ Աթոռս ի կաթուղիկոսութիւն։ Բայց քանզի յամեցաւ նա ի գալն, և բազում աւուրք անցին՝ յորս համբաւ ինչ վասն գալստեան նորա, և ուրեք ժամանելոյն լսելի չեղև մեզ։ Իշխօղն Երևանու, և ժողովուրդք երկրիս՝ նաև միաբանք սրբոյ Գահիս վարանելով առ այլ ևս երկարաձգիլ միջոցին, և խնայելով ընդ անգլխութեամբ մնալն սրբոյ Աթոռոյս, խորհէին զմեզ ընտրել ի կաթուղիկոս։ Մինչ յայսմիկ խորհրդեան էին սոքա, ի Թիֆլիզու ևս մահսէր և թուղթք եկին առ միաբանութիւնս և առ երկրականքս մեր վասն այնր խնդրոյ։ Ուստի՝ և միաբան եղբարքն մեր՝ ի վեցերորդ կիւրակէի լինանցն որ էր ապրիլի ԻԸ. օծին զմեզ նուաստութիւն ի կաթուղիկոս սրբոյ Աթոռոյս և Ազգիս հայկազնոյ։ Որպէս և յետ գրեցին բաղմակնիք մահսէրիւ ի Կոստանդնուպօլիս, և ձեռամբ Կարապետ զգօնամիտ եպիսկոպոսին առաքեցին։ Մեք ևս պատշաճ տեսանելով գրեցաք այժմ զկոնդակ օրհնամատոյց առ Աստուածասէր օրհնեալ ժողովուրդս քաղաքիդ, իսկ զայս նախընծայ սիրոյ և օրհնութեան թուղթ ևս առ ազնիւ սիրելիդ գրել կամեցաք, զի և դու յԱստուածայինն կամաց գիտացեալ զեղելութիւնս, հաճեսցիս ընդ այս կամակար մտօք, և զառատութիւն սիրոյդ և հաւատարմութեանդ առ սուրբ Աթոռս և առ մեզ աննուաղ պահելով, օգնական և կարեկից լիցիս մեզ՝ զի կարողացայց թերևս բառնալ զծանրութիւն լծոյս կառավարութեան սրբոյ Տանս մեծի, և օրհնեալ ազգիս։ Եւ դու ըստ բարեջանութեանդ ունիս ընկալնուլ զվարձս յԱստուծոյ, զշնորհս ի Քրիստոսաէջ սուրբ Տեղւոյս, և զօրհնութիւնս ի մէնջ։ Ողջ լեր ի Տէր, և զօրացեալ հզօր Աջով նորին յարաժամ, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾ թուոջս, և ի մայիսի ... ի լուսանկար Աթոռս սուրբ Էջմիածին։

Ճ. *Թուղթ դարձեալ ի Զմիւռնիա, առ Չալիկեան մահտեսի Կարապետ աղայն ի պատասխանի թղթոյն գրեցելոյ ի ՌՄԽԸ թուոյ օգոստոսի ԻԲ. ընդ սրբոյն Սաղիմայ նուիրակ Կարապետ վարդապետին, առ ի ծեռնադրել զնա եպիսկոպոս:*

Եւ ընդ Աստուածային օրհնութեանս՝ գիտասջիր սիրելիդ մեր։ Զի ի ՌՄԽԸ թուոյ օգոստոսի ԻԲ. առ մեծավաստակ Հայրապետն մեր Տէր Ղուկաս սրբազան կաթուղիկոսն

---

[1]) 1801 թուականի կոնդակների տպագրութիւնը աւարտուելու վերայ էր, երբ մեր ձեռքն անցաւ Դաւիթ կաթուղիկոսի նոյն թուին գրուած մի շարք այլ կոնդակների օրինակներ, որ զետեղում ենք այստեղ։

գրեցեալ թուղթն քո՝ յայնմ ժամանակի ժամանեաց ի սուրբ Աթոռս ձեռամբ սրբոյն Սաղիմայ նուիրակ Կարապետ շնորհունակ վարդապետին, յորում նա ինքն սրբազան Հայրապետն ի ծանր հիւանդութեան էր, և դկնի սակաւ աւուրց փոխեցաւ. յաստեացս, որոյ զհոգին Տէր լուսաւորեսցէ, և զյիշատակ սիրելւոյդ ողջ պահեսցէ։ Վասնորոյ թուղթն քո միայն առ Կարապետ վարդապետն։ Այնուհետև թէ զինչ անցք անցին ի Կոստանդնուպօլիս յաղագս բռնի կաթուղիկոսութեան, լուայք ի հարկէ։ Վերջապէս Յովսէփ արքեպիսկոպոսն վերակոչեցաւ կաթուղիկոս արքունական հրովարտակօք, և եկեալ ի Թիֆլիզ քաղաք վախճանեցաւ։ Որով վերստին տարակուսեալ մեր ի սակս անտերունջ մնալոյ սրբոյ Տանս, թէպէտ և մահուէր գրեցաք ի Թօխաթ առ Դանիէլ արքեպիսկոպոսն՝ գալ փութով ի կաթուղիկոսութիւն, սակայն ի յամելն նորա՝ նկատեալ ամենեցուն եթէ ընդ երկար անգլուխ մնալով սրբոյ Աթոռոյս ի յաւեր դիմէ, յատկացուցեալ զմեզ օծին ի կաթուղիկոս յայրիլի ԻԲ։ Որպէս երկարապէս գրեցաք ահա առ Քրիստոսասէր օրհնեալ ժողովուրդս քաղաքիդ, զոր իմանալոց էք։ Ապա Կարապետ վարդապետն զթուղթն սիրելւոյդ մատոյց մեզ, զոր ընթերցեալ իմացաք զի նմա գրուածսդ, որք ահա եղեալ և անցեալ բանք էին, և այժմոյս չունին պէտս ինչ խօսելոյ։ Այլ զոր խնդրեալ էիք վասն զԿարապետ վարդապետն ձեռնադրելոյ յեպիսկոպոս, մեք ես վասն խաթեր ձերոյ՝ և ըստ վկայութեան հանգուցեալ պատրիարգին ձեռնադրեցաք, և առաքելական կարգիւ ճոխացուցաք։ Եւ զայս նախընծայ սիրոյ և օրհնութեան թուղթ գրեցաք առ սիրելիդ, զի և դու յԱստուծոյ համարելով զկոչումն մեր յայս աստիճան, բարեհաճ կամօք ախորժեսցես. և զճշմարիտ սէրդ զոր ունէիր առ հոգելոյս Հայրապետն, զնոյնն և այժմ առ մեզ ունիցիս, որպէս զի և իմ զմխիթարութիւն գտեալ ի ձէնջ՝ կարասցիք բառնալ զծանրութիւն լծոյս տիրականի, և շնորհակալութեամբ օրհնեսցիք զձեզ։ Ողջ լեր ի Տէր։

Գրեցաւ ՌՄԾ թուոջս, և ի մայիսի … ի սուրբ Աթոռս Էջմիածին։

Հայրական սիրով և սրբոյ Էջման տեղւոյս Քրիստոսի հոգեպարար շնորհիւ՝ ողջոյն և օրհնութիւն առաքեմք հարազատ զաւակին քոյ և հոգեոր որդւոյն մերոյ Տերամբ զօրացեալ մո՛տեսի Սարգսին, և օրհնեալ թոռին քոյ Նորաբողբոջ Աստուածատուրին, և համայն քոյայնոցն՝ զօրս և յանձնեմք ի խնամս Արարչին։

ԺԱ. *Թուղթ ի Ղազախ առ Սօլոմօն բէկն, վասն զմասն Ղազախու տէրունի առնելոյ սրբոյ Աթոռոյս, եւ զՍիմէօն վարդապետն Աղարծնոյ ի կողմանէ սորին վէքիլ կարգելոյ, եւս եւ խնդիր՝ օգնական լինել իւղաժողով Ռէթէոս վարդապետին:*

Ցորմէ ճշմարիտ սիրով և անդրանիկ օրհնութեամբ, և Քրիստոսական ողջունիւ ծանուցումն լիցի յատուկ սիրելւոյդ մերոյ՝ հաւատարիմ բարեկամիդ սրբոյ Աթոռոյս Տերամբ Աստուծով զօրացեալ քաջատոհմ և ազնուական պարոն Սօլոմօն բէկիդ։ Զի բազմակնիք մահուէրն մերագնեալ քեաթխուտայից և ժողովրդոց կողմանցդ՝ հանդերձ ալլագրեաց մեծամեծաց թղթովք հասին առ մեզ ձեռամբ հոգևոր որդւոյն մերոյ Սիմէօն հանճարունակ վարդապետին և քեռվխայ Ցարութիւնին, զոր ընթերցեալ իմացաք զխնդիր նոցա վասն տէրունի առնելոյ զՂազախ սրբոյ Աթոռոյս՝ որպէս նախնի սրբազան Հայրապետքն արարեալ են, ընդ որ և հաճեցաք։ Առ որ թէպէտ սիրելիդ բան չէիր գրեալ մեզ, բայց հասկացաք որ ի գալն Ցովսէփ սրբազան կաթուղիկոսին ի Թիֆլիզ քաղաք, ի նմանէ յատկապէս խնդիր ես արարեալ առ այն բան, և նա խոստացեալ է առնել։ Այլ յաւուրս հոգելոյս Տեառն Սիմէօնի սրբազան կաթուղիկոսին Հաղբատեցիք և վանականք Աղարծնոյ վէճ են արարեալ ընդ միմեանս, նա ինքն լուսահոգին առ ի խաղացուցանել զնոսա՝ ի կողմակին մերում սահմանադրութիւն է արարեալ՝ զկէսն Ղազախու՝ լինել Աղարծնու վանականացն, կէսն Հաղբատեցւոցն։ Ապա և մեք

այժմուս զնոյն սահմանադրութիւն բացայայտ առնելով, զայն զիւղօրայքն որք կան ի վերայ ջրոցն Ջուղաղու և Աշտարակու՝ տուաք վանականացն Աղարծնու, իսկ զմիւս մնացեալսն թողաք Հաղբատեցւոցն։ Վասնորոյ առ նա և զկոնդակ գրեցաք առ մերայլն ժողովուրդսն. և զսիրելի որդին մեր զՍիմէօն խոհեմամիտ վարդապետն ի կողմանէ սրբոյ Աթոռոյս վէքիլ կարգեցաք՝ առ. ի հովուել զնոսա։ Զոր մինչ դարձուցանիցէք, զայս սիրանիշ թուղթ օրհնութեան ընդ նմա գրեցաք առ հաւատարիմ բարեկամդ մեր, զի դու գիտակ լիցիս այսմ արարողութեան մերում։ Բայց զայս գիտեա. զի սուրբ Աթոռս վասն ընդ երկար անգլուխ մնալոյն՝ ի բազում պիտոյից և լուտելեաց պակասաւորեալ է։ Այժմուս մինչ հաճութեամբ Աստուծոյ մեք գլուխ կարգեցեալ եղաք, վասնորոյ ահա զհոգևոր որդին ... շնորհունակ վարդապետն յատուկ կոնդակաւ առաքեցաք ի յօրհնեալ երկրայդ Ղաղախու առ ի ժողովել զկուղ, զպանիր, զմսացուս և զայլ ինչ՝ ի պէտս բազմութեան միաբանից և երթևեկաց տեղւոյս։ Ուստի խնդրեմք ի բարեպաշտութենէ քումմէ, զի ի սէր ընկալցիս զնա ի պատիւ սրբոյ Աթոռոյս՝ և վասն խաթեր մերոյ, և բարեկամական հաւատարմութեամբ ձեռնտու լիցիս նմա՝ առ արդիւնաւորութիւն գործոյն։ Որով շնորհակալ լինելոց եմք զսիրելւոյդ արժանաւոր օրհնութեամբ։ Ո՛ղջ լեր Տերամբ։

Գրեցաւ յԱմի Տեառն 1801 և ի մայիսի ... ի լուսանկար Աթոռս սուրբ Էջմիածին։

ՃԲ. *Թուղթ ի Բաղդատ, առ աղայ Ղուկասն Ալէքսանեան եւ պարոն Միքայէլն Տէր Մինասեան, ծանուցումն ուրախութեան նորոգ սրբազան Հայրապետիս, եւ յանձնարարութիւն վասն նուիրակ Յակոբ վարդապետին ուղեւորելոյ ի սուրբ Աթոռս։*

Եւ ընդ առատածաւալ օրհնութեանս Աստուածայնոյ՝ գիտութիւն լիցի սիրելեացդ մերոց՝ և բարեմիտ որդւոցդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի յետ վախճանման բազմավաստակ Հայրապետին մերոյ Տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին՝ զանցսն որք անցին ի Կոստանդնուպօլիս վասն բանի ընտրութեան յաջորդ կաթուղիկոսի՝ լուեալ էք ի հարկէ ի գրութեանց և ի համբաւուց։ Հետեաբար՝ Յովսէփ արքեպիսկոպոսն հիւսիսոյ յատկացեալ ի կաթուղիկոս արքունական հրովարտակօք, և եկեալ մինչև ցԹիֆլիզ քաղաք, վախճանեցաւ անդէն։ Տէր լուսաւորեսցէ զհոգի նորին, և զձեզ երկարակեցս պահեսցէ։ Յետ այնորիկ՝ վերստին տարակուսեալ մեր վասն անախրունջ մնալոյն սրբոյ Աթոռոյս, թէպէտ մահսէր գրեցաք ի Թօխաթ սակս Դանիէլ արքեպիսկոպոսին գալոյ ի կաթուղիկոսութիւն, բայց ի յամելն նորա՝ նկատեալ ամենեցուն՝ եթէ ընդ երկար անգլուխ մնալով սրբոյ Գահիս՝ ի յաւերութիւն դիմէ, յատկացուցեալ զմեզ օծին ի կաթուղիկոս յապրիլ ամսոյ ԻԲ. երորդ աւուր։ Արդ՝ արժան համարելով մեր՝ գրեցաք ահա զանդրանիկ օրհնութեան մերոյ կոնդակ առ մերայինս Քրիստոսասէր օրհնեալ ժողովուրդս քաղաքիդ, և յուղարկեցաք առ ձեզ, զոր ընթեռնուլ տուեալ ի սուրբ եկեղեցւոջն՝ երկարապէս իմանալոց էք զէութիւն եղելութեան այսր անցից մերոց։ Գրեցաք և զկոնդակ մի ծանուցական ի վերայ Հնդկաց երկրի և Բասրայու ժողովրդոցն, և ընդ թղթոյ պարոն Ստեփաննոսին Տէր Յովհաննէսեան և պ. Գէորգին Տէր Դաւթեան մի փակէթ շինեալ յղեցաք ի ձեռս սիրելեացդ՝ հասուցանել հաւատարմաւ առ նոսա։ Իսկ զայս նախանուէր սիրոյ և օրհնութեան թուղթ ես յատկապէս առ բարեպաշտ սիրելիդ գրեալ՝ խնդրեմք՝ զի զկոչումն մեր յայս աստիճան յԱստուծոյ համարելով՝ հաճութեամբ ախորժեսջիք, և զսէր և զհաւատարմութիւն ձեր զոր ունէիք առ հոգելոյս Հայրապետն, զնոյն և այժմ առ մեզ ունիցիք, և սիրանիշ թղթով ձեր մեզ մխիթարիչ զտանիցիք։ Այլ և՝ վասն արժանավայել առաջնորդին ձերոյ և սիրելւոյն մերոյ՝ Յակոբ արհիպասակ եպիսկոպոսին լուեալ եմք թէ վաղ ուրեմն եկեալ իցէ ի Բասրայ, որով և համարիմք՝ թէ մինչև ցարդ եկեալ իցէ ի քաղաքդ, առ որս ահա թուղթ գրեցաք։ Եւ ձեզ սիրելեացդ գրեմք՝ զի թէ յայդր իցէ նա, ի դէպ ժամանակի յաջող ճանապարհաւ ընդ հաւատա-

րիմ կարաւանի ուղեորեսջիք անվտանգ գալ ժամանել ի սուրբ Աթոռս։ Որովք օգտակար բարեգործութեամբ ձեր՝ ընկալջիք զվարձս բարիս յԱստուծոյ, զհոգեգուարճ շնորհս ի սրբոյ Աթոռոյս՝ և զօրհնութիւնս ի մէնջ։ Ողջ լերուք ի Տէր։ Ամէն։

Գրեցաւ յԱմի Տեառն 1801. և ի յունիսի ... ի սուրբ Էջմիածին։

ՃԳ. *Թուղթ դարձեալ ի Բաղդատ, առ մահտեսի Ղուկաս Գաբրիէլեան, համառօտակի ծանուցումն զընտրութենէ նորոգ սրբազան Հայրապետիս, եւ զձեռնադրութենէ Ջուղայու Յարութիւն եւ Գէորգ վարդապետացն:*

Ու ընդ սիրոյ և օրհնութեանս Աստուածայնոյ գիտութիւն լիցի սիրելւոյդ մերում՝ և օգտաջան ուխտուոյդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի զկնի անցիցն անցելոց ի Կոստանդնուպօլիս որ վասն բանի ընտրութեան յաջորդ Հայրապետի՝ թէպէտ Յովսէփ արքեպիսկոպոսն կոչեցաւ ի կաթուղիկոս, այլ եկեալ մինչև ցԹիֆլիս քաղաք՝ վախճանեցաւ անդէն, Աստուած լուսաւորեսցէ զհոգի նորին. և զձեզ երկարակեացս պահեսցէ։ Յետ այնորիկ զբազմակնիք մահսէր գրեալ՝ զնախկին ընտրեալն մեր Դանիէլ Արքեպիսկոպոսն խնդրեցաք գալ ի Հայրապետութիւն, բայց յամեցաւ՝ և ոչ եկն, և սուրբ Տունս անգլխութեամբ մնալով՝ ի յաւեր դիմէր։ Ընդ որ սըրտացաւութիւն առնելով մեծամեծք երկրիս հանդերձ միաբանիւք և ժողովրդովք՝ ընտրեցին զմեզ առնել ի կաթուղիկոս, որ և ընկալաք զօծումն սուրբ ի գլուխս մեր յապրիլի ԻԸ. որպէս ահա երկարապէս գրեցաք զպատմութիւն այսր անցից առ մերազնեայս Քրիստոսասէր օրհնեալ քաղաքիդ, զոր տեսանելոց էք։ Այլ այսու թղթով զայս ունիմք ծանուցանել սիրելւոյդ՝ զի Ջուղայու սուրբ Ամենափրկչի վանից միաբան՝ Յարութիւն և Գէորգ վարդապետքն՝ որք յանցեալ տարւոյ փետրուար ամսոյն հետէ զեզերէին աստ առ ի ձեռնադրել եպիսկոպոս, այժմոյս մինչ մեք յաջորդեցաք զԱթոռ Հայրապետութեան, թէպէտ պարտ էր մեզ նայել՝ զի յանուն մեր ես թուղթս առնուաք ի թեսականաց սոցին, այլ քանզի յայսքան ժամանակ մնացեալ սոցա աստ՝ բազումս նեղեցան և վշտացան, և խըղճալի սուրբ վանքն իւրեանց ես ի յանտիրութեան կալով՝ ի հարկէ բազմօք պակասաւորեալ լինի, վասնորոյ այլ ոչ պատշաճ տեսանելովս յետացուցանել, ձեռնադրեցաք զնոսա եպիսկոպոս, այնու պայմանաւ, որ Յարութիւն ծերունի վարդապետն առաջնորդ լիցի վանացն, և Գէորգ վարդապետն յաջորդ նմին և գործակից։ Զորս և ահա սիրով և օրհնութեամբ արձակեցաք գնալ ի սուրբ վանսն իւրեանց։ Ընդ որոց գրեալ մեր զկոնդակս հասարակականս և զթուղթս առ ոմանս յայդր և ի Բասրայ, զայս անդրանիկ օրհնութեան թուղթ ես յատկապէս առ բարեպաշտ սիրելիդ գրեցաք, առ ի ծանուցանել զեղելութենէ այսր անցից մերոց և զձեռնադրութենէ յիշեալ վարդապետացն։ Այլ և՝ թէպէտ երկար միջոց եղև, որ ի սիրելւոյն մերմէ և յարժանավայել առաջնորդէն օրհնեցելոյ քաղաքիդ Յակոբ շնորհապերճ արքեպիսկոպոսէն գիր չեմք ընկալեալ, սակայն ի թղթոյ ուրումն ազդ եղև մեզ՝ թէ վաղուրեմն անվտանգ անցեալ ընդ ծովն՝ ելեալ իցէ ի Բասրայ, և կարելի է՝ թէ ցարդ ի տեղդ եկեալ լինի։ Վասնորոյ գրեմք ազնուաբարոյ սիրելւոյդ, զի որքան ցայդր իցէ նա՝ ըստ բարեպաշտութեանդ ի սէր և ի յարգանս ունիցիս զնա, և ամենայնիւ ձեռնտու և օժանդակ լիցիս, և ի դէպ ժամանակի յաջող ճանապարհաւ ուղեորեսջիք՝ անվնաս հասանիլ ի սուրբ Աթոռս։ Որոյ աղագաւ շնորհակալ լինելոց եմք, և օրհնելոց զքեզ լիագոյն օրհնութեամբ։ Զոր Տէր օրհնեսցէ և զօրացուսցէ և փրկեսցէ ի փորձութեանց, հանդերձ քոյայնովքդ, և զամենայն բանս և զգործըս քո առ ի բարին յաջողեսցէ։ Ողջ լեր ի Տէր. Ամէն։

Գրեցաւ ի թուոջս Փրկչին 1801. և ի յունիսի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՃԴ. *Թուղթ ի Զմիւռնիա առ Մարգարայն Ալրօյեան, ի պատասխանի յանձնարարական թղթոյն գրեցելոյ ընդ Տէր Յարութիւն քահանային Մանիսացւոյ:*

Եւ ընդ ամենառատ օրհնութեանս Աստուածայնոյ՝ գիտութիւն լիցի բարեպաշտութեան քում. Զի յառաջ քան զայս՝ ի մայիսի ամսեանն, ըհայրապետական անդրանիկ օրհնութեան մերոյ զթուղթ դրեալ առ. ազնուութիւն քոյ՝ ծանուցաք այնու զանցսն մեր և զկոչումն ի յայս պաշտօն Քահանայապետութեան. Ապա՝ ի սոյն թուոյ մարտի 16, գրեցեալ սիրալիտական թուղթն քոյ ժամանեաց առ. մեզ ի ներկայ ամսոյս 6, ձեռամբ հոգեոր որդւոյն մերոյ Տէր Յարութիւն հանճարունակ քահանային Մանիսացւոյ, զոր ընթերցեալ և իմացեալ զբարեկեցիկ ողջունէ քումմէ՝ ուրախացաք. խնդրելով ի Տեառնէ Աստուծոյ՝ հանապազ ի բարօրութեան պահել զյատկեղ սիրելիդ և զհաւատարիմ բարեկամդ իմ ի բաղում պարագայս ամաց. Եւ յաղագս Տէր Յորութիւն խոհեմամիտ քահանային յիշեցելոյ որ զյանձնարարական բանս էիր գրեալ, ընկալաք զնա հայրական սիրով, և ըստ ձեռնհասութեան մերոյ և ժամանակին ներելոյ՝ կամեցաք շահել և ուրախ առնել՝ ի սէր սիրելւոյդ և ըստ արժանաւորութեան իւրոյ. Եւ այժմոյս յետ կատարելոյն զուխտն իւր՝ և լցուցանելոյն զհոգեոր փափագ սրտի իւրոյ՝ մինչ սիրով և օրհնութեամբ դարձուցանէաք, զայս սիրանիշ թուղթ գրեցաք ընդ նմա առ ազնուական սիրելիդ ի միամտութիւն. Որով և խնդրի ի պատուականութենէ քումմէ, զի զառատութիւն ճշմարիտ սիրոյդ և հաւատարիմ բարեկամութեանդ զոր ունիս առ մեզ՝ աննուազելի պահեսցես, և յօգտարար բարեգործութեանց առ սուրբ Աթոռ լուսածին Մայրըս քոյ և առ մեզ՝ մի վերջասցիս, և սիրարծարծ զրովդ զմեզ մխիթարել ջանասցես. Որոյ աղագաւ միշտ շնորհակալութեամբ օրհնաբան լինելոց եմ արժանաղով սիրելւոյդ. Իսկ զայլ որպիսութիւն սրբոյ Աթոռոյս և մեր՝ աստէն ոչ երկարելով՝ թողումք ի կենդանի դրոյդ ի Տէր Յարութիւն խոհական քահանայէդ իմանալ. Ողջ լեր ի Տէր և պահպանեցեալ ամենազօր Աջով նորին. Ամէն.

Գրեցաւ յԱմի կենարարին 1801. և ի յունիսի ԺԲ. ի լուսանկար Աթոռս սուրբ Էջմիածին.

ՃԵ. *Կոնդակ ի Հաշտարխան, առ մերազնեայ ժողովուրդսն ծանուցումն զմահուանէ Յովսէփայ կաթողիկոսին եւ մխիթարութիւն, եւ յայտարարութիւն զընտրութենէ սրբազան Հայրապետիս մերոյ, եւ զձեռնադրութենէ Գրիգոր վարդապետին, եւս եւ խոստումն՝ առ ի ուղեւորել յետս:*

Եւ ընդ շնորհապարգև օրհնութեան նամակիս՝ գիտասջիք սիրելիք մեր ի Տէր՝ և հարազատ որդիք Մօրս հաւատոյ սրբոյ Էջմիածնի. Զի յԱւետարանական բանէ անտի թէ՝ ոչ կարէ մարդ առնուլ յանձնէ և ոչինչ, եթէ ոչ իցէ տուեալ նմա յերկնից ի վերուստ, ստուգապէս իմացեալ լինի թէ՝ ամենայն իրակութիւնք բարիք ի վերուստ յԱստուածայինն ակնարկութենէ ներգործին յաշխարհի, ամենայն գործք հոգեորք ի նմանէ տնօրինին, և ամենայն ընտրութիւն հոգւոց ի հոգւոյն սրբոյ է, զի նա է՝ որ յաջողէ զամենայն յամենայնի՝ ըստ բանի սրբազան Առաքելոյն Պօղոսի. Արդ՝ համեմատութեամբ ասացելոցս ծանուսցուք սիրելեացդ և զմերս կոչումն ի յայս աստիճան, զի իմասջիք թէ՝ և այս ոչ էր առանց վերնախնամն տեսչութեան, որ արդարև ես անարժան գիտէի զիս այսմ պատւոյ, այլ նա որ բարեկարգօղն է ամենայնի, և ամենառատ ի ձիրս բարեաց՝ ոչ խորշելով յիմս անբաւականութենէ, հաճեցաւ առնել ժառանգորդ իւրն շնորհաց. Քանզի այն ինչ վայելչապատիւ վերատեսուչն տիրախնամ վիճակիդ՝ Յովսէփ սրբազան արքեպիսկոպոսն կոչեցեալ ի կաթուղիկոս, դէմ եդեալ ի կողմանցդ դայր ի սուրբ Աթոռս, որում և ի մէնջ հրաւիրակք գնացին ընդ առաջ, և մեք ամենեքեան սպասէաք գալստեան նորին ի հողաբարձութիւն սրբոյ Աթոռոյս և օրհնեալ Ազգիս հայոց, նա հասեալ ի Թիֆլիզ քաղաք՝ հիւանդացաւ անդէն, և վճարեաց զկեանս

իւր, զոր ի լսելն մեր՝ մեծապէս տրտմեցաք։ Եւ ո՛հ՝ ահա բազմամեայ և յողնաջխատ աւագնորդ էր նա ձեզ, և յոլով զործառնութեամբք արժանի յիշատակաց, ի հարկէ և զուք տրտմեալ լինիք ընդ փոխիլն նորա յաւտեաց։ Բայց զի գործ Աստուծոյ է՝ որ Տէր է կենաց և մահու, զի՞նչ ունիմք առնել. կամք նորին օրհնեալ եղիցի։ Որ և՝ լուսաւորեսցէ զհոգի նորին Տեառն Յովսէփայ սրբազան կաթուղիկոսին ի լոյս երեսաց իւրոց. և երջանիկ Հայրապետացն դասակից և պսակակից արասցէ։ Եւ զձեզ դոյրեկյաց մխիթարեալ ողջ պահեսցէ, և ընդ երկայն աւուրս արասցէ։ Ամենաւանդ շնորհեսցէ զերկարութիւն կենաց՝ և զյաջողուածս հասարակաշահ մեծագործութեանց Քրիստոսապսակեալ օգոստափառ ինքնակալ մեծի կայսերն ամենայն ռուսաց՝ Ալէքսանդր Պաւլովչին, և համայն փառազարդ ժառանգորդացն կայսերութեան։ Եւ արդ՝ յետ փոխելոյն աստի հոգեւոյս Հայրապետին յիշելոյ՝ վերստին անկեալ մեր ի հոգս տարակուսանաց, թէպէտ գրեցաք զմահուէր հրաւիրանաց առ Դանիէլ արհիեպիսկոպոսն գալ ի Հայրապետութիւն, այլ զի նա յամեցաւ ի գալն, և լուսահոգի սրբազան կաթուղիկոսն ևս ի ժամ վախճանմանն իւրոյ՝ կտակ էր աւանդեալ կամ զԿոստանդնուպոլսոյ պատրիարգ Յովհաննէս արքեպիսկոպոսն, և կամ զմերս նուաստութիւն կացուցանել իւրն յաջորդ։ Բայց նա հեռաւոր գոլով, երկար ժամանակի կարօտանայր ի գալ, իսկ սուրբ Տունս անգլխութեամբ մնալով՝ յանչքութիւն դիմէր։ Վասնորոյ իշխօղն երկրիս և այլ մեծամեծք հանդերձ միաբանիւք և երկրացւովք սրտացաւութիւն առնելով՝ կամեցան վասն մեր կարգել ի կաթուղիկոս, առ այս՝ ի Թիֆլիզու ևս զբազմակնիք մահուէր և թուղթս ընկալեալ, համահաճութեամբ օծին զմեզ ի կաթուղիկոս ի ԻԸ. երորդ աւուր ապրիլ ամսոյ ի վեցերորդ կիւրակէին յինանց։ Արդ՝ ի կոչիլն մեր յայս պաշտօն քահանապետութեան՝ թէպէտ հարկ էր մեզ փոյթ ընդ փոյթ զայս ծանուցական և մխիթարական կոնդակ գրել առ բարեպաշտութիւն ձեր, սակայն զի նա ինքն հոգեւոյս Հայրապետն կտակեալ էր վասն մարմնոյն իւրոյ և կայիցն բերելոյ ի սուրբ Աթոռս, սպասէաք զայնս ընկալնուլ և ապա գրել։ Ուստի՝ որպէս և լցէ հոգատար եղեալ բերել տուաք զայնս ի սուրբ Աթոռս՝ ի ձեռն հարազատամիտ որդւոյ նորին Գրիգոր հանճարունակ վարդապետին։ Զպատուական մարմինն՝ ի տօնի Գիւտի նշխարաց սրբոյ Լուսաւորչին, որ էր ամսոյս Ը. մեծահանդէս փառաւորութեամբ և պաշտամամբք ամփոփեցաք մերձ ի շիրիմս սրբազանից Հայրապետացն՝ որք ի գաւթի Վկայարանի սրբուհւոյն Գայիանեայ։ Իսկ զկայսն ընկալեալ ի պէտս սրբոյ տաճարիս և Աթոռոյս, օրհնեցաք շնորհակալութեամբ զբազմարդիւն օրհնեալ ժողովուրդսդ։ Տէր օրհնեսցէ զձեզ անանցանելի օրհնութեամբն իւրով՝ և զօրացուսցէ. և զփոխարէնն տրոց և ողորմութեանց ձերոց զբազում վարձս հատուսցէ ձեզ աստ և յանանց կեանսն։ Եւ զննջեցեալսն ձեր հանգուսցէ յարքայութեան իւրում։ Իսկ զվերոյիշեալ Գրիգոր խոհեմամիտ վարդապետն ձեռնադրեցաք եպիսկոպոս՝ յամսոյս ԺԶ. և ըստ կտակի հոգեւոյս հօրն իւրոյ՝ յետ հասու լինելոյն մեր հանգամանաց իրաց նորին՝ դարձուցանելոց եմք յետս առ ձեզ։ Զայսց եղելութեանց տեղեկութիւն տալոյ աղագաւ՝ պատկան համարեցաք գրել զայս անդրանիկ օրհնութեան մերոյ կոնդակ առ աստուածասիրութիւն ձեր, որով և խնդրեմք՝ նախ, զի և զուք ի Տեառնէ համարելով զկոչումն մեր ի յայս աստիճան՝ բարեյօժար կամօք ախորժեսջիք։ Երկրորդ՝ սրտական հաւատարմութեամբ վառեալ ի սէր լուսածին Մօրս ձերոյ սրբոյ Աթոռոյս, նովին սիրով վշտակից և մխիթարիչ լինիցիք մեզ, յամենայնի զբարեջանութիւն և զօգտասիրութիւն ցուցանելով առ սուրբ Գահս և առ մեզ։ Եւ երրորդ՝ զյարգելի եղբայրն մեր՝ զԵփրեմ գերաշուք արքեպիսկոպոսն ի սէր և ի մեծարանս ունիջիք, և զհոգեւորական նուէրսն ձեր առատութեամբ տաջիք նմա՝ զի և նա հասուսցէ ի սուրբ Աթոռս՝ ի յօգնութիւն բազմադիմի պակասութեանց սորին։ Որովք եղիջիք օրհնեալք և վարձատրեալք ի Տեառնէ. և շնորհք սրբոյ Աթոռոյս ընդ ձեզ լիցի յարաժամ. Ամէն։

Գրեցաւ յԱմի Տեառն 1801. և ի յունիսի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՃԶ. *Թուղթ ի մեծն Պօլիս առ պատրիարգարանին վէքիլ Պետրոս վարդապետն, ընդ մահսէրատար Ղազար վարդապետին, ի ջրումն զրաբանութեանց Դանիէլ վարդապետին:*

Ցորմէ մեծաւ սիրով, փրկչաւանդ ողջունիւ և նոյնաէջ սրբոյ տեղւոյս առատածաւալ շնորհիւ՝ գիտասջիր սիրելիդ մեր ի Տէր, հարազատ և շնորհընկալ որդի սրբոյ Աթոռոյս՝ Պետրոս աստուածախմաստ վարդապետ՝ և արհիապատիւ Եպիսկոպոսս Զի ի մայիսի Թ. ընդ մարհսէրաբեր Կարապետ եպիսկոպոսին զթուղթ մի գրեալ առ քեզ՝ ծանուցեալ եմք ի նմա զնստիլն մեր յաթոռս Հայրապետութեան և զայլ բանս, յուսամք թէ ցորդ ժամանեալ լինի առ ձեզ Կարապետ եպիսկոպոսն, և իմացեալ իցէք զամենայն անցսն մեր։ Այլ արդ՝ այսուիկ թղթով ունիմք ծանուցանել վասն Դանիէլ վարդապետին, որ նա (յետ երեքտասան աւուրց կոչելոյն մեր յայս պաշտօն՝) եկն ի Պալաղիտ, զոր ի լսելն մեր՝ սիրալորդոբ թուղթ գրեցաք առ նա, և զերկոսին եպիսկոպոսունս հրաւիրակք առաքեցաք՝ առ ի գալ պատուով ի սուրբ Աթոռս, և նստել աստ յամենայնի ապահով։ Բայց նա ամենեին անլուր եղեալ բանից մերոց՝ արհամարհեալ էր զհրաւիրակսն, և ի վերայ այնորիկ՝ ի մեծդ Պօլիս և ի բազում ուրեք զբազում զրաբանութիւնս զմէնջ. որպէս թէ՝ մեք անզր քան զչափ զդրամս վատնելով կոչեցեալ իցեմք յայս Աթոռ, և թէ՝ զանօթս եկեղեցականս՝ զարծաթեղէնս և զոսկեղէնս խորտակեալ իցեմք, և տուեալ այլազգեաց։ Որք զուր են խապառ, և զրեհկաց անմիտ բաջաղանք լորոց և նա առեալ և գրեալ է՝ առ ի պղտորել ըզմիտս պարզամիտ ժողովրդոց։ Այլ զստոյգ եղելութիւնսն մեք յառաջնմէ ի մայիսի ԻԴ. գրեալ առ յարգելի եղբայր մեր վսեմախոհ պատրիարգ վարդապետն և առ պատուելի օրհնեալ իշխանսն, այժմոյս ևս միաբանք սրբոյ Աթոռոյս գրեցին բազմակնիք մահսէրիւ, զոր և ձեռամբ սիրելի և հոգևոր որդւոյն մերոյ Ղազար հանճարունակ վարդապետին առաքեցաք։ Ընդ որում և մեք գրեցաք վերստին թուղթ առ նա ինքն պատրիարգ վարդապետ եղբայրն մեր և առ իշխանսն և երևելի անձինս։ Ի յայնց թղթոց մերոց և մանաւանդ ի մահսէրէն թէպէտ սիրելիդ ունիս լիապէս հասու լինել ուղղութեան բանին, բայց համառօտիւ ևս այսու թղթով գիտասցես, զի սովորութիւն է աստ՝ որ ի նստիլ նորոց կաթուղիկոսի բան մի ընծայ տուեալ լինի իշխողին։ Իսկ յայս նուագ՝ մինչ խանն առ երկար տնտերունջ մեալն սրբոյ Աթոռոյս՝ ոտխպէր վուլթով զոք կաթուղիկոս կարգել, բայց միաբանքն խնդրէին համբերել առ ժամանակ ինչ՝ մինչև Դանիէլ վարդապետն գայցէ, վասն այնորիկ խոստացեալ լինէին դրամքն։ Զայն խոստումն՝ եթէ Դանիէլ վարդապետն լինէր կաթուղիկոս, ի հարկէ նա տալոց էր, բայց զի մեք եղաք, ի մէնջ խնդրեցին և առին. ահա ճշմարիտն այս է, իսկ յիրս եկեղեցականս ձեռնարկելն սուտ է ամենեին։ Ուրեմն՝ մի երբէք հաւատասցես այնպիսեաց ստայօդ բանից, և մի պղտորեսցես զմիտս, այլ զուղիղն իմանալով՝ հաստարմատ կացցես յառաւելութիւն սիրոյդ առ մեզ, և որպէս գրեալ եմք յառաջմէ մինչ ֆէրմանն մեր և բերաթն հանելոց իցէք, զնորին ծախսըն ընդ սիրելւոյն մերոյ բարեպաշտօն մահտեսի Նիկողայոսին հոգասջիք տալ ի զանձանական արդեանցն, որպէս յառաջնումն եստուք. և գրեսջիք մեզ՝ զոր ընդունելոց եմք ի հաշիւս սրբոյ Աթոռոյս, և զանձապետաց անուանսն ևս պարտիք ծանուցանել մեզ՝ զի օրհնութեան թուղթս գրեսցուք առ նոսա ի միամտութիւն։ Որոյ ազազաւ շնորհակալ լինելոց եմք զսիրելութենէ քումմէ։ Ողջ լեր ի Տէր Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾ թուոջս, և ի յունիսի ... ի սուրբ Էջմիածին։

ՃԷ. *Թուղթ օրհնութեան ի Պօլիս առ Սարգիս աղայն եւ իւր կենակից Սուլթան խաթունն, վասն ԺԷ ղուռուշ եւ կէս տրոցն ընդ ուխտաւորացն յղեցելոց:*

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ՝ գիտութիւն լիցի բարեպաշտութեան ձերում։ Զի ասէ իմաստունն թէ՝ ողորմութեամբ և

հաւատով սրբին մեզ։ Արդ՝ ակնկալութեամբ այսմ լուսագրութեանս հաստատնոյ՝ կատարեալ հաւատով և ջերմեռանդ սիրով տուեալ էիք լուսածին Մօրս ձերսյ սրբոյ Աթոռոյս զԺԷ ղուռուշ և կէս լաղագս հոգւոյ ի Քրիստոս հանգուցեալ որդւոյն ձերոյ Սահակին, կենդանի որդւոցն ձերոց Մարտիրոսին, Գրիգորին՝ և Կիրակոսին, յանձնելով սիրելւոյն մերոյ մեծահաւատ ուխտաւոր՝ օրհնեալ մահտեսի Սահակ աղային, և նա բերեալ հասոյց ի սուրբ Աթոռս և առ մեզ։ Զոր և մեք ընկալեալ սիրով՝ մատուցաք բարեսիրին Աստուծոյ և նոյնաէջ սուրբ տեղւոյս, և շնորհակալութեամբ բազմաւ օրհնեցաք զձեզ և զբարեծնունդ որդիսն ձեր և զայլ ամենայն ձերայինսն, և վասն հանգուցեալ որդւոյն ձերոյ Սահակին ասացաք զհոգւոցն, և լիշեցաք ըզձեզ զամենեսին ի հաշտաբար սուրբ Պատարագւոջ ի հրաշազարդ սուրբ Տեղւոջս։ Վասնորոյ և գրեցաք զայս Թուղթ օրհնութեան առ ձեզ, դի միամտեալ զուարճասջիք հոգեոբապէս։ Արդ ուրեմն, ընկալցի Տէր զտուրս ձեր ի հաճոյս իւր, և զփոխարէնն առաւելութեամբ հատուցանելով՝ օրհնեսցէ զձեզ անանց օրհնութեամբն իւրով, և զօրացուսցէ զվերապարգև զորդիսն ձեր՝ զՄարտիրոսն, զԳրիգորն և զԿիրակոսն, փրկեսցէ ի փորձութեանց և ի վտանգից, և պահեսցէ ի խնամս իւր։ Եւ զհոգի հանգուցեալ որդւոյն ձերոյ Սահակին և այլ համայն ննջեցելոցն ձերոց լուսաւորեսցէ ի լոյս երեսաց իւրոց, և հանգուսցէ զնոսա լարքայութեան երկնից։ Եւ արդ՝ պատուիրեմք օրհնեցելոյդ զի հաստատ մնասջիք ի բարեպաշտութեան ձերում առ Աստուած, և ի ջերմեռանդ սիրոյն ձերոյ առ սուրբ Աթոռս՝ մի վերջասջիք որովք միշտ ընկալջիք զվարձս յԱստուծոյ, զշնորհս ի սրբոյ Աթոռոյս և զօրհնութիւնս ի մէնջ. Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾ Թուոջս, և ի յուլիսի ... ի սուրբ Էջմիածին։

ՃԸ. Կոնդակ ի Ղզլար առ հասարակ ժողովուրդն, վասն առաջնորդութեան Գրիգոր վարդապետին. եւ շնորհակալութիւն յաղագս երկուց պատուական շուրջառացն յղելոց ընդ կայից Յովսէփայ կաթուղիկոսին:

Եւ ընդ սիրոյ և օրհնութեան ողջունառաք նամակիս՝ զխնդութիւն լիցի սիրելի և հոգեւոր որդւոցդ մերոց՝ և հարազատ զաւակացդ Մօրս հաւատոյ՝ սրբոյ Էջմիածնի։ Զի յառաջ քան զայս՝ զհայրապետական անդրանիկ օրհնութեան մերոյ կոնդակ դրեալ եմք առ ձեզ, ծանուցանելով ի նմա զկոչումն և օծումն մեր ի սոյն յայս պաշտօն Վահանայապետութեան ըստ կտակի հոգելոյս Տեառն Յովսէփայ հայրապետին, և զպատուական դիոյ նորա և զկայից բերիլն ի սուրբ Աթոռս ձեռամբ հոգեւոր որդւոյ նորին Գրիգոր հանճարունակ վարդապետին, և զմեր ձեռնադրելն զնա եպիսկոպոս։ Եւ զի յայնժամ խոստացաք եւ թէ՝ դարձուցանելոց եմք առ ձեզ զնա ինքն զԳրիգոր վարդապետն, վասնորոյ ահա կարգեալ զնա առաջնորդ աստուածախնամ վիճակիդ, յամսոյս ԾԱ. յատուկ կոնդակաւ առաջնորդութեան ուղեորեցաք զալ՝ և հովուել զբանաւոր հօտսդ Քրիստոսի Աստուածային օրինօք և աւանդութեամբք սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց։ Իսկ ի մէջ կայից լուսահոգի Հայրապետին զոն երկու հատ պատուական շուրջառք՝ զորս զուք օրհնեալքդ էք շնորհեալ լուսատու ծնողիս ձերոյ սրբոյ Աթոռոյս՝ առ ի բարի յիշատակ ձեզ։ Եւ մեք առընկալեալ զայնս սիրով մեծաւ՝ մատուցաք ի լուսակազմ տաճարս փառաց սրբութեան Տեառն, և շնորհակալութեամբ բազմաւ օրհնեցաք զարժանիսդ օրհնութեանց, յիշատակելով յաղօթս և ի պատարագս ի հրաշափառ սուրբ Տեղւոջս։ Վասնորոյ և զայս օրհնութեան նամակ գրեցաք առ սիրեցեալսդ, ի բացայայտութիւն շնորհակալութեան մեր զձէնջ, և ի հոգեւորապէս ուրախութիւն ձեզ և ի միամտութիւն։ Ուրեմն՝ ընկալցի՝ Տէր զկամաւորապէս նուիրեալ յիշատակսն ձեր ի հաճոյս բարեսէր կամաց իւրոց, և զփոխանակն ծաւալեսցէ առ ձեզ զառատագեղ շնորհս ողորմութեան և զթութեան իւրոյ, զկենդանիսդ օրհնելով օրհ-

նեսցէ և զօրացուսցէ, չէն և պայծառ պահեսցէ, յամենայն փորձութեանց և վտանգից փրկեալ ազատեսցէ, և զամենայն զբանս և զգործս ձեր ի բարի յաջողելով արդիւնաւորս և շահեկանս արասցէ։ Եւ զհոգիս ննջեցելոց ձերոց լուսաւորեսցէ, և հանգուսցէ յարքայութեան իւրում։ Արդ՝ պատուիրեմք սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց. զի ի բարեպաշտութեան ձերում առ Աստուած, հաստատուն կացջիք, և յորդիական սիրոյ և ի հաւատարմութենէ ձերմէ որ առ լուսածին Մայրս ձեր և առ հոգեսր հայրութիւնս մեր, մի նուազիցիք. աճեսջիք ի նոյն, և առաւելացուսջիք զբարեջանութիւն և զօգտարարութիւն ձեր։ Որով հանապազ արժանապէս վարձատրեսջիք յԱստուծոյ վարձատուէն բարեգործաց, և ընկալջիք զհոգեպարար շնորհս սրբոյ Իջման տեղւոյս Քրիստոսի, և զօրհնութիւն սրբոյ Լուսաւորչին և մեր։ Ամէն։

Գրեցաւ ի Թուականի Փրկչին 1801. և ի յուլիսի ամսոյ ... ի յերկնահանգէտ Աթոռս սուրբ Էջմիածին։

ՃԺԹ. *Կոնդակ ի վերայ Գրիգորիուպօլու ժողովրդեանն, ծանուցումն մահուան Ցովսէփայ կաթուղիկոսին, եւ ընրելոյ զմարմինն եւ զկայս նորին ի սուրբ Աթոռս, եւ առաջնորդութիւն Գրիգոր վարդապետին, եւ ի վերջոյ յանձնարարութիւն վասն նուիրակ Եփրեմ վարդապետին։*

Եւ ընդ շնորհապարգև օրհնութեան նամակիս՝ ծանուցումն լիցի սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց՝ և հարազատ զաւակացդ մեծի Աթոռոյս սրբոյ Էջմիածնի։ Քանզի Ցովսէփ սրբազան Հայրապետն՝ որ հաճութիւն ընդունելով յազգէս և ի մէնջ, եկեալ յօրհնեցելոյ վիճակէդ զայր ի սուրբ Աթոռս ի գահակալութիւն սորին, և մեք սպասէաք գալոյ նորին եկեալ ժամանեալ նա ի Թիֆլիզ քաղաք, այն ինչ հանգերձեալ էր ուղեւորիլ անտի առ այսըր, հիւանդացաւ անդ՝ և փոխեցաւ յաստեացս։ Զոր հանգուսցէ Տէր յարքայութեան իւրում, ընդ սրբազան Հայրապետս դասելով և պսակելով։ Եւ զձեզ մխիթարեալ երկարակեացս պահեսցէ։ Զկնի վախճանման նորին՝ վերստին ես տարակուսեալ միաբանից և ժողովրդոցն երկրիս վասն ընդ երկար անտերունջ մնալոյն սրբոյ Տանս, խորհէին զօք փութով կառավարիչ կացուցանել սմա։ Մինչ ի յալս խորհրդեան էին սոքա, ի Թիֆլիզու քաղաքէն ևս մահսէր և թուղթք եկին, որք զրեալ ծանուցեալ էին դհոգելոյս Հայրապետի կտակաւ աւանդելն վասն յաջորդեցուցանելոյ զմեզ ի տեղի իւր։ Առ որ առաւել ես յորդորեալ միաբանք և ժողովուրդք՝ յանկացուցին զմեզ յալս պաշտօն յապրիլի ամսոյ ԻԲ. օծանելով ի կաթուղիկոս սրբոյ Աթոռոյս և օրհնեալ Ազգիս Հայոց։ Իսկ ապա՝ ըստ կտակի Տեառն Ցովսեփայ սրբազան Հայրապետին՝ զպատուական մարմին նորա և զկայսն բերաք ի սուրբ Աթոռս՝ ձեռամբ հոգևոր որդւոց նորին և մեր՝ Գրիգոր հանճարունակ վարդապետին, զմարմինն ամփոփեցաք ի գերեզմանս նախնի սրբազան Հայրապետացն մերոց, և զկայսն ընկալաք ի պէտս սրբոյ Տաճարին և Աթոռոյս և միաբանութեան։ Եւ զսիրելի որդեակն մեր՝ զԳրիգոր խոհեմամիտ վարդապետն ձեռնադրեցաք եպիսկոպոս ի յունիսի ԺԶ. զոր և ըստ կտակի լուսահոգի Հայրապետին առաջնորդ կարգեալ տիրախնամ վիճակիդ՝ դարձուցաք առ ձեզ յատուկ կոնդակաւ առաջնորդութեան. յորում գրեալ եմք թէ որպէս պարտ իցէ ինքեան հովուել զձեզ Աստուածային օրինօք և աւանդութեամբք սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց ըստ կանոնաց Հարցն սրբոց, և զկարգ արժան իցէ ժողովրդոցդ զորդիական հնազանդութիւն ցուցանել առ նա, իսկ ի սակս ծանուցման զանցից մերոց՝ և շնորհելոյ ձեզ ըղյատուկ օրհնութիւնս՝ կամէաք թէպէտ կանխաւ գրել ի վերայ ձեր զթուղթ օրհնութեան, բայց յաղագս բազմակերպ հոգոց և զբաղանաց անձեռնհաս եղաք։ Նարդենիս պատշաճ ժամ գտեալ գրեցաք յատկապէս զայս օրհնամատոյց կոնդակ առ աստուածսիրութիւն ձեր՝ ի յայտարարութիւն հանգիպմանցս մերոց։ Զոր՝ և դուք ի Տեառնէ համարելով՝ բարեյօժար կամօք ախորժեսջիք, և զառատութիւն սիրոյն ձերոյ զոր ունիք առ լուսածին Մայրս ձեր սուրբ Աթոռս՝ աննուազ

պահելով, առաւել ևս հաստատեսջիք ի հաւատարմութիւն ձեր առ սա։ Որպէս զի՝ և իմ. գոժանդակութիւն մխիթարութեան գտեալ ի ձէնջ՝ կարացից բառնալ զծանրութիւն լծոյս պաշտպանութեան մեծի Տանս և օրհնեալ Ազգիս Հայոց։ Նա և գիտասջիք զհասանիլ արգեանց ձերոց ի սուրբ Աթոռս, որոց աղաղաւ և շնորհակալ եմք զբարեբեր օրհնեալ ժողովրդոցդ։ Զորս Տէր օրհնեսցէ և չէն պահեսցէ. և զփոխարէնն արոց ձերոց առաւելապէս հատուսցէ ձեզ և ննջեցելոց ձերոց։ Եւ փառապսակ մեծի ինքնակալ կայսերն տացէ զկեանս երկարս և խաղաղականս, և ըղխնամս նորին յաւէտ ևս առատացուսցէ ի վերայ ձեր և մեր։ Դարձեալ՝ և զսիրելի եղբայրն մեր և զծայրագոյն նուիրակն ձեր զԵփրեմ. շնորհապերճ արքեպիսկոպոսն ի սէր և ի յարգանս ունիջիք, և զհոգևոր նուէրս ձեր զուարթ երեսօք և առատաձեռնութեամբ տաջիք՝ ի յօգնութիւն բազմադիմի պակասութեանց սրբոյ Աթոռոյս՝ առ որ ևս մեծապէս շնորհակալ լինելոց եմք զսիրելեացդ օրհնութեամբ։ Որք և լիջիք օրհնեալք յԱստուծոյ և յանձնեցեալ ի խնամս նորին, և շնորհք սըրբոյ Խաչման տեղւոյս Քրիստոսի լիցի ընդ ձեզ ամենեսին. Ամէն։

Գրեցաւ յամի Տեառն 1801. և ի յուլիսի ... ի բարձրադահ Աթոռս սուրբ Էջմիածին։

ճժ. *Թուղթ ի Ղզլար առ կլաւայ[21]) ազնիւ պարոն Յովակիմն, ազդարարութիւն վասն եպիսկոպոսութեան և առաջնորդութեան Գրիգոր վարդապետին հոգեզաւակին Յովսեփայ անուանակոչեցեալ կաթուղիկոսին։*

Եւ ընդ սիրոյ և օրհնութեանս Աստուածայնոյ՝ ծանուցումն լիցի սողոյ սիրելւոյդ մերում, և բարեխոհ որդւոյդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի զԹէութիւն անցից կոչմանն և օծման մերոյ յայս պաշտօն Հայրապետութեան, և զհոգելոյս Յովսեփայ սրբազան կաթուղիկոսի պատուական Դիոյ և կալից բերելն ի սուրբ Աթոռս՝ ձեռամբ հոգեծնունդ որդւոյ նորին Գրիգոր առատահանճար վարդապետին, և զմեր ձեռնադրելն զնա եպիսկոպոս, և զառաջնորդ կարգելն տիրախնամ. վիճակիդ, ահա երկարապէս ունիս իմանալ յառաջնորդական կոնդակէ նորին՝ և միւս օրհնութեան կոնդակէն զոր գրեցաք յատկապէս առ հասարակութիւն ժողովրդոց քաղաքիդ։ Այլ այսուիկ օրհնամատոյց Թղթով զայս ունիմք աղդ առնել քոյինդ բարեպաշտութեան։ Քանզի՝ նա ինքն սիրելի որդեակն մեր Գրիգոր շնորհապերճ արքեպիսկոպոսն ի պատմելն մեզ զողջունէ և զբարեկցութենէ աղնուոյդ, պատմեաց մեզ և զեռափափագ ջերմեռանդ սէրդ և զկատարեալ հաւատարմութիւնդ զոր ունիս առ հաւատոյ Մայրս քո սուրբ Աթոռս։ Զոր և մեք դիտելով՝ ընդ քաջառողջ բարեկենդանութիւն անձինդ ուրախացաք, և ընդ սիրալիրական հաւատարմութիւնդ շնորհակալեցաք, և լիադոյն օրհնութեամբ օրհնեցաք զարժանաւորդ օրհնութեանց։ Զոր Տէր օրհնեսցէ և զօրացուսցէ, և ըստ հաւատարմութեանդ վարձատրեսցէ, և տացէ ամենից բանից և գործոց քոց զյաջողուածս բարեաց։ Արդ՝ի մեծէն Պօլսոյ դրեալ էին մեզ՝ որ քաղցրահայեաց ակնարկութեամբ Աստուածապսակեալ կայսերն և հոգածութեամբն հաւատարիմ. դեսպանին տեղւոյն՝ ֆերմանն և բերաթն մեր հանեալք են յարքունուստ՝ նախ քան զդնալն մահսէրատար Կարապետ եպիսկոպոսի, և այժմոյս նա գնացեալ անդ՝ Աստուծով առնելոց և բերելոց է զայնս առ. մեզ։ Ապաքէն խնդրի յաղնուութենէ քումմէ, զի ի բարեհաճութեամբ ախորժելն քոյ ընդ կոչումն մեր ի յայս պաշտօն, և ի յորդարացուցանելն քոյ զսէրդ և զհաւատարմութիւնդ առ սուրբ Գահս, նովին սիրով օգնական և կարեկից լիցիս մեզ, յամենայնի զբարեջանութիւնս և զջատագովութիւնս ցուցանելով վասն մեր, որովք գոհունակ լինելոց եմք զսիրելւոյդ։ Իսկ զայլ որպիսութիւն մեր ի նորոգ առաջնորդէ ձերմէ Գրիգոր արքեպիսկոպոսէդ ունիս իմանալ, զոր և ի սէր քոյ յանձն առնեմ։ Ողջ լեր։

Գրեցաւ ի Թուոջ փրկչին 1801. և ի յուլիսի 31. ի սուրբ Էջմիածին։

ՃԺԱ. *Թուղթ ի վերայ Նոուցայ սուրբ Անապատի միաբանիցն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ ի շնորհաւորութիւն Հայրապետութեանն նորոգ սրբազանիս մերոյ։*

Ցորմէ սիրով մեծաւ և Աստուածային օրհնութեամբ, Քրիստոսապարգև ողջունիւ և նոյնաէջ սրբոյ տեղւոյս հոգեղուարճ շնորհիւն՝ ծանուցումն լիցի սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց՝ և հարազատ ղաւակացդ սրբոյ Աթոռոյս ի Նոուց կոչեցեալ կղզւոջդ ընդ հովանեաւ սուրբ Կարապետի վանացդ բնակելոց խարաղնազգեստ կրօնաւորացդ միանձանց, նախ՝ վանահայր Կարապետ հանճարունակ վարդապետիդ, և ապա՝ միւսոց խոհեմամիտ վարդապետաց, պարկեշտասուն աբեղայից, և այլ աստիճանաւորաց, և առաքինազարդ մահտեսեաց ամենեցունց։ Զի բազմակնիք թուղթ ձեր ի յուլիս ամսոյ 28. գրեցեալ՝ ժամանեաց առ. մեզ՝ զոր ընթերցեալ գիտացաք զմեծագոյն սէր և զհաւատարմութիւն ձեր առ սուրբ Աթոռս, և զբարեյօժար ընդունելութիւն և զորդիական հպատակութիւն առ հոգևոր հայրութիւնս մեր, ըստ որում մեծաւ սիրով և լրութեամբ սրտի ուրախացեալք ընդ կոչելն մեր ի սոյն այս պաշտօն հայրապետութեան, միաբանական ձայնիւ աղօթանուէր և բարեմաղթ էիք եղեալ վասն մեր առ Բարձրեալն, գրելով առ մեզ և զբանս շնորհաւորութեան։ Որովք և մեք շնորհակալեալ զսիրելի որդւոցդ մերոյ հոգևորաց օրհնեցաք զարժանաւորսդ օրհնութեանց։ Զորս Տէր օրհնեսցէ և կարողացուսցէ, և պահպանեսցէ յարաժամ ընդ թևօք արարչական խնամոց և գթութեանց իւրոց՝ և յաներևոյթ մարտս պատերազմի ձերոյ որ ընդ աներևոյթ չարին՝ միշտ յաղթականս և անպարտելիս արասցէ։ Արդ խնդրեալ էիք զխնամս և զգթութիւնս ունիլ ի վերայ երկուց սրբոց Անապատացդ, վասնորոյ գրեմք՝ որ անտարակոյս կացջիք առ այն, զի որպէս հոգելոյս նախանցեալ Հայրապետքն մեր՝ զսէր և զխնամս են ունեցեալ առ ձեզ, նոյնպէս և մեք ունելոց եմք, և օժանդակելոց ձեզ ի հարկաւորեալ ժամանակին։ Իսկ յաղագս Լմնայ սուրբ Անապատի միաբանից նեղսակրութեանցն զոր գրեալ էիք, նոցին մահսէրաբերքն ես եկին առ մեզ, և իմացաք զխնդիր ձեր և նոցա՝ որ վասն Վարդան վարդապետին չդարձուցանելոյ ի վանահայրութիւն նոցին։ Եւ զոր գրեալ էիք թէ զպաքասն սրբոյ անապատին յաւելեալ իցէ նա, մեք աստ քննեաց եպիսկոպոսաց տեսանել տուաք զհաշիւն, և իմացաք որ այնքան չէր բազմացուցեալ ի վերայ առաջնոցն։ Բայց ինչ և իցէ՝ ըստ խնդրոյն ձերոյ զՎարդան վարդապետն ոչ ևս դարձուցաք, այլ պահեցաք աստ ի միաբանութիւն սրբոյ Աթոռոյս, և զհաշիւսն նորին յղեցաք առ. նոսա՝ զոր թերևս և դուք տեսջիք, և գրեցաք՝ զի զո՛վ և կամեսցին զայն ընտրեսցեն, և մեք զնա կացուսցուք։ Այսպէս գիտելով ձեր, և աննուազելի մնալով յաւատութիւն սիրոյ և հաւատարմութեան ձերոյ առ. սուրբ Աթոռս և առ. մեզ՝ լիջիք օրհնեալք յԱստուծոյ և պահպանեցեալք ամենազօր Աջով նորին, և Շնորհք սրբայ Իջման տեղւոյս Քրիստոսի ընդ ձեզ ամենեսին յարաժամ. Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾ թուոջս, և ի յօգոստոսի ... ի սուրբ Էջմիածին։

ՃԺԲ. *Թուղթ ի Ղարս առ առաջնորդ Յովհաննէս վարդապետն եւ առ քահանայսն եւ իշխանս, վասն դրամոյն զոր նոքա խնդրեալ էին տալ աստ իշխողին մերոյ ի կողմնէ փաշային, զի ինքեանք հատուցեն, եւ սրբազանն անձեռնհաս լինելով ի տալ, սանատ [22]) ետ՝ որ ի Լ. օր վատային [23]) տացի, բայց յետոյ Ժ. օր անցեալ՝ սոքա ստիպէին առնուլ զդրամն, վասնորոյ եւ սրբազանն զԳէորգ վարդապետն առաքեաց անդ այսու թղթով, զի հոգս արասցեն վասն դրամոյն հատուցանելոյ։*

Ցորմէ ճշմարիտ սիրով և Աստուածային օրհնութեամբ, Քրիստոսապարգև ողջունիւ. սրբով, և նոյնաէջ սրբոյ տեղւոյս հոգեղուարճ շնորհիւն՝ ծանուցումն լիցի իսկապէս սիրելեացդ մերոց՝ և հարազատ որդւոցդ սրբոյ Աթոռոյս, վայելչապատիւ առաջնորդ Յովհան-

նէս Աստուածիմաստ վարդապետիդ և շնորհապերճ արհիեպիսկոպոսիդ, սրբանուէր քահանայիցդ և բարեպաշտօն օրհնեալ իշխանացդ Աստուածախնամ քաղաքիդ Դարսայ: Վանզի՝ յաւաղէս բացայայտ է խոհականութեան ձերում, թէ սուրբ Աթոռս մեր յորպիսի նեղութիւնս և պակասաւորութիւնս կայ, և մեք զիարդ հայթայթանօք գտանեմք զօրըստօրական ուտելիս, և տարակուսանօք անցուցանեմք զաւուրս մեր: Այո՝ յայսպիսի պակասաւորեալ ժամանակի մերում՝ թէպէտ անմարթ էր մեզ յայն ձեր խնդրեալ դրամոցն կողմանէ ի մէջ խառնիլ, խօսք տալ սոցա, և երաշխաւոր լինել, բայց սակայն՝ մինչ ազիդ բարեկամն մեր գրեալ էր, մեծապատիւ Գօլվաթլու փաշայն և դուք սիրելիքդ մեր ես հասարակութեամբ խնդիր էիք արարեալ, վասն այն մեք ես ընդ մէջ մտաք, և յետ բազում խօսից և ասութեանց սանատ տուաք սոցա Լ. օր վատայով, և երաշխաւոր եղաք վասն դրամոյն հատուցանելոյ՝ յուսալով եթէ Լ. օր՝ այս վատայովս անցցի, և Լ. օր ես ըստ խնդրելոյն ձեր լիցի յաւել, որք լինին վաթսուն օր, և յայսքան աւուրս կարելի լինիցէր զայն դրամն հատուցանել և զերծանիլ: Իսկ արդ՝ ահա ի մեր առեալ Լ. օր վատայէն դեռ Ժ. օր եղև անցեալ՝ որ սոքա մարդ են եղեալ ի վերայ իշխանաց մերոց Մէլիք Աբրահամին և իւզպաշի Գաբրիէլին, և զայն մեր յանձն առեալ դրամն խնդրեն ստիպմամբ, վասնորոյ և նոքա գրեալ էին մեզ թէ պարտիք հոգալ և տալ, և այլն: Բայց ստուգիւ իմասջիք՝ որ մեք այսօր ամենևին կարողութիւն չունիմք տալոյ, մեր զերեսուն օր վատայ առնուլն այնու մտօք էր՝ որ դուք օրհնեալքդ հասուցանէիք մեզ զգլխամն, մեք ես սոցա տայաք, որպէս և ձեզ գրեցաք յառաջագոյն: Բայց ահա սոքա ոչ սպասեն վատային, այլ ստիպմամբ խնդրեն, և մեք եթէ յայնքան պակասութեան միջի կամք՝ որ հազիւ ուրեմն կարողանամք կառավարել զսուրբ Տունս և զմեզ, ապա զիարդ է կարելի թէ այնքան դրամն իսկոյն տացուք, իսկ զմուլքս դնելն ի գրաւի՝ այն ես մեծ պակասութիւն է անուան սրբոյ Աթոռոյս և մեր, զոր որպէս գիտեմք՝ դուք ես չէք կամելոց: Վասնորոյ ահա թուղթ գրեցաք առ բարձրապատիւ փաշայն, և ձեռամբ սիրելի և հոգևոր որդւոյն մերոյ Գէորգ հանճարունակ վարդապետին առաքեցաք, ընդ որում զայս թուղթ սիրոյ գրեալ առ ձեզ, խնդրեմք յԱստուածասիրութենէ ձերմէ, զի մասն ինչ որքան կարելի իցէ՝ դուք հոգ կալեալ ժողովեսջիք ի հասարակութենէ ձերմէ, և ձեռամբ թղթաբերիդ մերոյ առաքեսջիք առ մեզ, զի և մեք որպէս իցէ՝ աստ ճարեսցուք զմիւս մնացեալ մասն, և զգումար դրամոյն լրացուսցուք՝ և տացուք խնդրողացն, և զսանատն մեր առցուք, և յետոյ մեք և դուք ընդ միմեանս ըզհաշիւն մեր տեսցուք: Այսպէս ըստ գրուածոյս մերոյ հոգ տանելով ձեր ի կատարել, և զօգուտն սրբոյ Աթոռոյս յուսոյ Մօրս ձերոյ՝ որպէս միշտ խորհեալ էք և արարեալ՝ նոյնպէս և այժմ առնելով, ողջ լերուք ի Տէր և պահպանեցեալք ամենազօր Աջով Նորին և Շնորհք սրբոյ Աթոռոյս լիցի ընդ ձեզ յարաժամ. Ամէն:

Գրեցաւ ի ՌՄԾ թուոջս, ի յօգոստոսի ԺԲ: ի սուրբ Էջմիածին:

ՃԺԳ. *Թուղթ ի Թիֆլիզ առ մէլթար Սօլօմօնն ի պատասխանի վրացերէն գրեցեալ թղթոյն՝ որ վասն Գրիգոր Երեցուն, զի նա թուղթ առեալ յԻվանէ սարտարէն, ինքնագլուխ գործակալ եղեալ եւ զարդիւնս սրբոյ Աթոռոյս եւ Հաղբատայ ժողովէր, զոր գիտելով սրբազանին մեղադրանաց թուղթ գրեաց, իսկ այժմ թէ սա եւ թէ սարտարն գրեալ էին զերիցուէն՝ իբր թէ նա արդար է:*

Եւ ընդ Աստուածային օրհնութեանս՝ ծանուցումն լիցի ազնուամիտ սիրելւոյդ: Զի վրացերէն գրեցեալ թուղթն պատուելւոյդ՝ ժամանեաց առ մեզ, զոր ընթեռնուլ տուեալ իմացաք զգրուածսդ որ վասն Գրիգոր երիցուն: Քան զոր բացայայտ և երկարապէս իմացաք ի թղթոյ ազնուազգւոյն սիրելւոյն մերոյ, բարեշուք և քաջայաղթ Իվանէ սարդարին: Առ որ այսպէս գիտասցես, զի ահա դուք ի բնէ

հաւատարիմ բարեկամ էք սրբոյ Աթոռոյս՝ և յատկեղ սիրելիք մեր, և ձեր խաթրն չատ աղիղ է առ մեզ՝ այլ այն երէցն թէ ով է, և որպիսի ոք, ոչ գիտեմք ամենևին. Իրաւունք է ապա՝ որ այնպէս նորայիստ հնարս առնելով՝ գործակալ ձեռնալ և իշխանութիւն ի կիր արկանէ. Եթէ մեզ՝ և կամ Առաջնորդի ուրուք գործակալ լինիցի պիտոյ՝ մեք պարտիմք կացուցանել. ահա մեք որ այսպէս չեմք տեղեակ, նա որոյ հրամանաւ՝ որոյ գիտութեամբ գործակալ է անուանեալ զինքն, և որոյ աղաղաւ գործ կատարէ, և յոյր անուանէ զարգիւնս խնդրէ ի ժողովրդենէն, նա որքան մարդ է՝ որ զայնպիսի անօրինակ արարողութիւն հնարէ լինքենէ, արտաքոյ սահմանաց և աւանդութեանց նախնեաց, ոչ ապաքէն ահա յանդգնութիւն է մեծ՝ և չար օրինակ այլոց. Արդ՝ որչափ զգուշացուցեալ են վարդապետքն և քահանայքն՝ ամենևին ոչ է լուեալ նոցա. Ուստի թղթովք և յատուկ մուճալլամալիւ [34]) իսկ բողոքեալ էին առ մեզ զանկարգ արարողութենէ նորին. և մեք թէպէտ ի հատուցումն անբարշտութեան նորա՝ պարտ էաք արկանել զնա ընդ չարաչար բանադրանօք, բայց տակաւին համբերելով ոչ արարաք, այլ սաստի և յանդիմանութեան թուղթ գրեցաք ի վերայ նորա՝ և լուծաք զնա ի քահանայական կարգէն, որ զփիլոնն մերկացեալ լինքենէ՝ առ ժամանակ մի ապաշխարեսցի, և զղջասցի ի խոտորնակ գնացից իւրոց. Իսկ արդ՝ սիրելի մեք գիտեմք՝ զի պատուելի օրհնեալ սարաարն որ զգործակալութեան թուղթ է տուեալ այն անհամեստ երիցուն, զայն ինքնակամ չէ տուեալ, այլ երէցն է ցուեցուցեալ զպատուական գլուխ նորա, և խորամանկ խաբէութեամբ իւրն կամակից արարեալ զնա, և ինքնագլուխ գործակալ ձևացեալ ի գիւղորայսն, վասն իւր յափշտակել կամելով զարդիւնսն. Դուք ահա յատուկ սիրելիք էք իմ, և յարգի բարեկամք և օգտաշխանք սրբոյ Աթոռոյս, վասնորոյ զիրաւունս արարէք, վայելուչ է երիցուն յանդգնութեամբ զայն առնել, և զաղմուկ չփոթի յարուցանել ի քաղաքիդ. Մեք լիրաւի ոչ կամիմք և ոչ հաճիմք՝ թէ Մինաս վարդապետն մեր ընդդէմ ինչ առնիցէ և անպատուութիւն ցուցանիցէ առ յարգոյապատիւ սարտարն և կամ առ ձեզ. այլ զի նա ահա փոխանորդ առաջնորդի է ի քաղաքօջդ և գործակալ մեր, վասնորոյ պարտիք դուք ևս զնա ոչ փոխանտկել ընդ երիցու միում. Այլ ըստ արժանւոյն իւրոյ ի պատուի ունել՝ որ առ մեզ և առ սուրբ Աթոռս վերաբերի, ըստ ասացելումն թէ՝ պատիւ ծառային առ տէրն վերաբերի. Այլ ինչ և իցէ մեք այժմոյս գործակալի պէտս չունիմք. յայտնի լրբութիւն է զոր արարեալ է այն երէցն, և արժանի է մեծամեծ պատժոյ. Բայց մեք խնամք առնելով՝ յառաջ քան զքանի աւուրս փոքր մի սաստ և յանդիմանութիւն գրեցաք առ նա. այլ եթէ զղջասցի և յետս կացցէ յանկարգ արարմանց իւրոց, և ի չափու իւրում մնասցէ, յայնժամ և մեք վասն օրհնեալ խաթերն ձեր ներելոց եմք յանցանացն և ընդունելոց եմք զնա ի կարգ քահանայութեան. Ուրեմն և դուք ի սիրոյ և ի բարեկամութենէ անպակաս մնալով առ մեզ՝ ողջ լեր ի Տէր.

Գրեցաւ ի ՌՄԾ թուոջս, և ի սեպտեմբերի ԻԵ. ի լուսակաղմ Աթոռս սուրբ Էջմիածին.

ՃԺԳ. *Թուղթ ի Կեանջայ, առ սրբոյ Աթոռոյս զանձապետ պարոն Վարդազարն, ծանուցումն զտեղւոյս անցից, եւ հարկ՝ առ ի գրել զիւրեանց ողջախուութիւնն:*

Եւ ընդ սիրոյ և օրհնութեանս՝ գիտասջիր սիրելիդ մեր՝ և օգտախոհ որդի սրբոյ Աթոռոյս Էջմիածնի. Զի յայտ իսկ է՝ որ ամենայն բարեաց իրաց յաջողութիւնք՝ ի տնօրէնութենէ բարձրելոյն նկատին. Ըստ այսմ է իմանալ և կոչումն մեր ի յայս պաշտօն հայրապետութեան. Վասն զի՝ յետ վախճանման Տեառն Ղուկասու. սրբազան Հայրապետին, բազում բանք անցեալ, թէպէտ և անուն կաթուղիկոսութեան կայացաւ ի վերայ Յովսէփայ արքեպիսկոպոսին հիւսիսակողման, որ և դէմ եդ զալ առ սուրբ Աթոռս. բայց մինչ եկեալ ժամանեաց ի Թիֆլիզ քաղաք՝ հիւանդացաւ անդ և վախճանեցաւ. որոյ ըղհողին տէր լուսաւորեսցէ, և զձեզ երկարակեացս պահեսցէ. Եւ սակայն՝ նա ինքն յու-

սահոյին կոտկեալ է՝ առ ի զմեզ յաջորդեցուցանել, որպէս ի Թիֆլիզու քաղաքին բաղմակնիք ծանուցեալ էին։ Ուստի՝ միաբանք սրբոյ Աթոռոյս և ժողովուրդք երկրիս՝ համահաճեալ յատկացուցին զմեզ յայս պատիւ. յԱպրիլի ԻԲ. օծանելով ի կաթուղիկոսութիւն սրբոյ Գահիս և օրհնեալ Ազգիս Հայոց։ Այնուհետև՝ գրեցաք զթուղթս օրհնութեան յամենայն կողմանս, և ընկալաք զֆէրման և զբէրութ ի տէրութենէ օսմանցւոց և ի շահէն պարսից՝ ռաղամս և խիլայս։ Եւ թէպէտ պարտ էաք ի քաղաքդ ևս գրել զրանս ծանուցականս այսր հանդիպմանց մերոց, բայց յոգնախուռն հոլօք և զբաղանօք պաշարեցեալ չեղաք ձեռնհաս։ Իսկ արդ՝ այժմ սպասաշած միջոց գտեալ՝ գրեցաք զկոնդակ նախընծայ օրհնութեան մերոյ առ հասարակութիւն ժողովրդոց քաղաքիդ և շրջակայից գորին, զոր և ահա յղեցաք առ սիրելիդ, զի ընթեռնուլ տացես ի սուրբ եկեղեցին ի լուր ամենեցուն, առ ի հոգևորապէս ուրախանալ։ Այլ այսու թղթով քեզ սիրելւոյդ պատուիրեմք, զի զոր ինչ սէր և հաւատարմութիւն ունէիր ի կենդանութեան հոգելոյս Հայրապետին առ նա և առ սուրբ Աթոռս, զնոյնս և յաւուրս մեր ունիցես առ սա և առ մեզ և ի հոգեշահ գործդ զանձապետութեան արի և ժիր կացցես, և զորպիսութիւն գրեսցես առ մեզ ի գիտել. Նա և՝ զորպիսութիւն տեղւոյդ և զվիճակաբար կեալն ձեր անխափան ծանուսցես մեզ։ Որոց աղագաւ շնորհակալ լինելոց եմք զքէն օրհնութեամբ։ Ո՛ղջ լեր ի Տէր։

Գրեցաւ ի ՌՄԾ թուոջս, և ի հոկտեմբերի ԻԲ. ի սուրբ Աթոռս Էջմիածին։

Դարձեալ գիտասջիք սիրելիքդ մեր. զի այս թուղթ ձեր հանդերձ կոնդակաւն և այլ բազում թղթովք յառաջքան զայս յառաջ գրեալ յղեցաք ձեռամբ Տաթևու միաբան Սիմէօն վարդապետին՝ որպէս ի վերոյգրեալ ամսաթւոյդ ցուցանէ։ Բայց զկնի ԺՆ. աւուրց լուաք թէ ընդ մէջ Նախիջևանու և Երևանու զքէրվանն կողոպտեալ են, և զյիշեալ վարդապետն դերի տարեալ։ Վասնորոյ թէ զկոնդակ և թէ զայս թուղթ ձեր վերստին գրեալ յղեցաք ի նոյեմբերի . . .

ՃԺԵ. *Թուղթ ի յԱրղնի, առ երեսփոխ Կիրակոսն եւ Մարտիրոսն, յանձնարարութիւն յաղագս Կարբեցի Յովաննէս վարդապետին՝ որ գնայր անդ՝ առ ի զպտուղսն նոցա ժողովել:*

Եւ ընդ Աստուածային օրհնութեանս՝ գիտասջի՛ք սիրելի՛ք մեր՝ և հարազատ որդիք սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի որպէս յայտնի է բարեպաշտութեան ձերում՝ ահա այս տարւոյս չորս տարի լինի՝ որ յաղագս այլ և այլ արդելառիթ պատճառաց՝ առ ի ժողովել ըզպտղին և զայլ ինչ արդիւնս բերեալ ի սուրբ Աթոռս իսկ դուք օրհնեալքդ՝ մինչ յատուկ կոնդակաւ հոգելոյս Հայրապետին կարգեցեալ էք գործակալ ի կողմանէ սրբոյ Աթոռոյս, որ յորժամ վարդապետ չգայցէ ի մէջ ձեր, դուք ժողովիցէք յօրհնեալ ժողովրդոցն զամենայն առաջնորդական և վանքական հասոյթս և զիրաւունս՝ հասուցանել ի սուրբ Աթոռս, վասնորոյ համարիմք՝ թէ զանցելոց երից ամաց արդիւնսն ժողովեալ իցէք։ Այժմ ահա զսիրելի և զհոգևոր որդին մեր՝ զՅովաննէս զզօնամիտ վարդապետն առաքեցաք ի տիրախնամ նահանգդ առ բարեպաշտօն ժողովուրդսդ օրհնութեան կոնդակաւ, որ ձեր ըզժողովեալ երից արդիւնսն՝ առցէ, և այս տարւոյս ևս ժողովեսցէ վասն սրբոյ Աթոռոյս։ Ըստ որում գրեցաք և զթուղթ առ պատուելի բարեկամն մեր՝ Բուդաղ Սուլթանն։ Իսկ զայս թուղթ սիրոյ ևս յատկապէս առ սիրելիդ գրեալ՝ պատուիրեմք, զի ի գալն նորա յայդր՝ սիրով ընկալջի՛ք, և զոր ինչ արդիւնս իցէք ժողովեալ՝ այսինքն՝ թէ պտղի, թէ պսակադրամ, թէ մատաղ, թէ հոգեբաժին, և՛ թէ այլ ինչ՝ զամենայն անպակաս յանձնեսջի՛ք դմա՝ որ բերցէ. Նաև՝ ամենայնիւ հարազատութեամբ ձեռնտու լիջի՛ք դմա ի ժողովելն զայսր տարւոյ արդիւնսն, և սրտացաւութեամբ հետևեսջի՛ք՝ որ արդիւնաւոր լիցի, քանզի՝ գիտէք իսկ՝ թէ ինչ փորձութիւնք անցին ընդ սուրբ Աթոռս, և քանի վնասք հասին մեզ յանցելում ամին ի զօրացն պարսից. և յերկար ժամանակի ևս անտերունջ մնալով սրբոյ Տանս, շատ պակասութիւն ունի յայսմ ամի ի կողմանէ ցորենոյ և գարւոյ և այլ կերակրոց։ Վասնորոյ պարտիք հոգացող լինել առատա-

ձեռնութեամբ ժողովել զպտուղն, զմնացուն՝ և զայլ նուէրսն, զոր և յանձնել Յովաննէս խոհեմամիտ վարդապետիդ, հասուցանել ի սուրբ Աթոռս, այլ ի գալն դորա աստ՝ դու պարոն Մարտիրոսդ ևս ընդ դմա եկեսցես՝ առ. ի յառակապէս զօրհնութիւն ժառանգել ի մէնջ։ Ողջ լերուք ի Տէր։

Գրեցաւ ի ՌՄԾ թուոջս, և ի հոկտեմբերի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՃԺԶ. *Թուղթ ի Կարին՝ առ Հաջիբաբայի փեսայ խօջայ Յովաննէսն, մխիթարութիւն վասն մահուան զոքանչին իւրոյ՝ որ էր կին յիշեալ Հաջիբաբային։*

Եւ ընդ Աստուածային օրհնութեանս՝ գիտասջիր սիրելիդ մեր ի Տէր՝ և օգտախոհ որդի սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Քանզի՝ ի բազմավիշտ ժամանակիս յայսմիկ, յորում ի մերձակայից մերոց բնաւին բարձեալ է սրտագիւրութիւն մեր, և առաւելեալ են դառնութիւնքն և նեղութիւնքն, միայն ակնկալեմք ի կողմանէ հեռաւոր սիրելեացդ ընդունել զուրախութիւն, բայց նարդենիս ընդ հակառակն ակնկալութեան մերոյ՝ փոխանակ սփոփարար լրոց զտրտմականս լուաք։ Վասնզի՝ ազդ եղև մեզ՝ թէ հաւատարիմ զոքանչն քո՝ բարեպաշտուհի կողակիցն ազնիւ սիրելւոյն մերոյ օրհնեալ Հաջիբաբայ աղային վախճանեալ է։ Ուստի՝ և մեք տրտմեալ ցաւեցաք թէ յաղագս պակասելոյն նորա յաստեացս, և թէ մանաւանդ առ այն՝ որ հաւատարիմ սիրելիքդ և բարեկամքդ իմ հանդիպեալ էք կրից տրտմութեան։ Բայց զի մահ և կեանք ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ է, և որպէս կամի, ոչ ոք կարէ ընդդիմանալ, զի՞նչ կարող եմք առնել։ Ապաքէն մնայ մեզ փառս տալ բարերար կամաց Արարչին, և վասն հանգուցելւոյն զողորմութիւն խնդրել, և սակս յետամնալեացդ զմխիթարութիւն։ Ուստի՝ և ասեմք, Տէր լուսաւորեսցէ զհոգի նորին, և ընդ իւղաբերից սուրբ կանանցն դասեսցէ և պսակեսցէ ի լուսեղէն առագաստին։ Եւ զքեզ հաւատարիմ սիրելիդ մեր մխիթարեալ ողջ պահեսցէ, փրկեսցէ ի յայլ ապագայ փորձութեանց, և ունիցի ի խնամս իւր ի խաղաղութեան և ի բարեկենդանութեան։ Արդ՝ ի ներկայս թէպէտ գիր չունիմք ի ձէնջ, բայց ի լրոյ իմանալով վասն դերաղնիւ սիրելւոյն մերոյ պերճապատիւ մահտեսի աղային թէ եկեալ է ի քաղաքդ՝ ահա զմխիթարութեան թուղթ գրեցաք առ նա՝ և յղեցաք։ Ընդ որում զայս թուղթ մխիթարութեան ևս առ բարեպաշտութիւն սիրելւոյդ գրել պատշաճ վարկաք, որով ունիս մխիթարիլ ի Տէր, և սփոփել զքոյալինսն ամենեսին, զոր և մեք լսելով՝ սրտագիւր լիցուք։ Որև ի սէրդ և ի բարեկամութիւնդ հարազատ կալով առ մեզ՝ ողջ լեր Տերամբ։ Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾ թուոջս, և ի նոյեմբերի ... ի լուսակաղմ Աթոռս սուրբ Էջմիածին։

ՃԺԷ. *Թուղթ ի Թաւրիզ՝ առ մահտեսի Յովաննէսն Ղազարեան, ծանուցումն զգալստենէ արքունական նոմոսացն և նոմոսաբերացն Ստեփանոս և Կարապետ եպիսկոպոսացն, և յանձնարարութիւն ընծայատարին և նոր նուիրակ ... վարդապետին։*

Եւ ընդ Աստուածային օրհնութեանս՝ ծանիր սիրելիդ մեր՝ և բարեմիտ որդի սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի յօղոստոս ամսոյ ԻԴ. սիրելին մեր Ստեփանոս շնորհապերճ արք եպիսկոպոսն և Մէլիք Ստեփանն խաղաղութեամբ եկեալ ժամանեալ ի սուրբ Աթոռս՝ բերելով առ. մեզ զպիտանի ռազմսն և խիլայս ի մեծազօր շահէն, պատմեցին մեզ զբարելաւութիւն և զմարդասիրութիւն ազնուոյդ՝ զոր ցուցեալ էիր ինքեանց ի գնալն և ի դառնալն, որոց աղագաւ և կարի շնորհակալուք էին զքէն, ուստի՝ և մեք շնորհակալեալ զբարեպաշտ սիրելւոյդ օրհնեցաք զքեզ բազմաւ օրհնութեամբ։ Զոր Տէր օրհնեսցէ և զօրացուսցէ, և ըստ հաւատարմութեանցդ առ սուրբ Աթոռս՝ վարձատրեսցէ առաւելապէս, և պահելով միշտ ընդ թեւօք Աստուածային խնամոց իւրոց, փրկեսցէ ի դիպուածոց չարաց՝ հանդերձ քոյալնովքդ ամենիւք։ Բայց դու ծանիր աստանօր զզարմանալի դիտաւորութիւն եղե-

լութեանցս առ մեզ. քանզի՝ յայնմ աւուր՝ այն ինչ յիշեալ ֆէրմանաբերքն եկին, որոց և մեք ընդ առաջ ելեալ սովորական հանդիսիւն մերով՝ կարդալ տուաք զսուղամսն բարձրաղաղաւ չահին, և զգրեցեալ զխիլայսն դարձաք ի սուրբ Աթոռս, ի նմին աւուր յետ միոյ ժամու ի յօսմանցւոց թագաւորէն յանուն մեր շնորհեցեալ ֆէրմանի և բէյրաթի սուրաթներն ի սիրելի եղբօրէն մերմէ պատրիարգ վարդապետէն առաքեցեալք ժամանեցին մեզ։ Ապա՝ և ի նոյեմբեր ամսոյս ԺԶ. մահտէսի Կարապետ վարդապետն մեր եկն, բերելով առ մեզ զիսկական հրովարտակսն յԱրքունուստ, և զբաղում թուղթս ընդունելութեան և համահաճութեան ի մեծէն Պօլսոյ ի պատրիարգ վարդապետէն և յօրհնեալ իշխանացն, ես և յայլ քաղաքաց՝ առաջնորդաց և յերևելի անձանց։ Արդ՝ այսպէս թէ յերկուցունց տէրութեանց՝ և թէ յօրհնեցելոյ Ազգէ մերմէ զհաճութիւն և զմիամտութիւն ընկալեալ՝ փառս և գոհութիւնս մատուցաք և մատուցանեմք Տեառն Աստուծոյ՝ որ յաջողեաց մեզ ի նոյն։ Նւ զի՝ դու օրհնեալդ ես գոլով իմ յատուկ սիրելի, գիտեմ՝ որ ախորժես ընդ այս ուրախական համբաւքս, վասն այնորիկ գրեցի, զի ուրախ լիցիս։ Դարձեալ՝ գիտասջիր և զայս, զի թէպէտ ամենայնիւ պակասաւոր է սուրբ Տունս, բայց որպէս և իցէ հոգացեալ պատրաստեցաք զընծայս յանուն մեծահամբաւ Շահին, զոր և ահա ձեռամբ սիրելւոյն մերոյ . . . արհիապանծ եպիսկոպոսին առաքեցաք։ Վասնորոյ գրեմք սիրելւոյդ, զի ի գալն նորա յայդր և առ քեզ՝ սիրով ընկալեալ չահեսցես այժմ ես՝ որպէս և յառաջ։ Որև անյապաղ ուղևորեսցես խաղաղութեամբ գնալ ի սպաս մեծութեան Շահին, և զերբ ուղևորելդ գրեսցես մեզ ի գիտել։ Առ որ ես շնորհակալ լինելոց եմք զքէն օրհնութեամբ։ Այլ և՝ որպէս յայտնի է ձեզ ի Սողոմոն վարդապետէն դարձելոյ ի վիճակէդ ի սուրբ Աթոռս՝ մինչև ցարդ երկու նուիրակութեան ժամանակ էանց՝ որ ի պատճառս պէս պէս անցից և վրդովմանց մերոց՝ և խառնակութեանց կողմանցդ՝ չյաջողեցաւ նուիրակ առաքել ի յերկիրդ յայդր։ Իսկ նորդենիս՝ լսելով թէ օրհնեալ ժողովուրդքդ պակասութիւն ունին ի կողմանէ սրբալոյս միւռոնի և մեք ես այսպէս դատարկացեալ եմք ի կարևոր ապրուստից, վասնորոյ զսիրելի և զհոգևոր որդին մեր՝ զ . . . հանճարունակ արհիեպիսկոպոսն նուիրակ կարգեալ տիրապահ վիճակիդ՝ ահա առաքեցաք հանդերձ սրբալոյս միւռոնաւ՝ և օրհնաձիր կոնդակաւ։ Ընդ որում գրեցաք և զթուղթ՝ և յղեցաք զընծայս առ Մարաղու Ահմատ խանն՝ որ այժմ սարտար է կարգեցեալ կողմանցդ։ Ապաքէն գրեմք ազնուոյդ, զի զնուիրակդ մեր յատուկ սիրով ընկալցիս որպէս վայել է քում բարեպաշտութեան, և սպասուեալ ըստ արժանոյն շահեսցես և մխիթարեսցես, և յամենայն կողմանէ ձեռնտու և օժանդակ լիցիս առ արդիւնաւորութիւն գործոյն, և եթէ յիշեալ սարտարն ի տեղդ լինիցի, զայն թուղթն և զընծայս նորա տարեալ մատուսջիք։ Իսկ թէ այլ ուրեք լինիցի, հասուսջիք առ նա ձեռամբ նուիրակիդ, և մէկ թուղթ առջիք ի նմանէ, որ նուիրակդ անվնաս շրջագայեսցէ ի կողմունսդ։ Նա և՝ այն վախուֆ այգին մեր որ կայ ի Տուխուրղան՝ նորին աղագաւ թուղթ ունիմք մեք ի Շահերից՝ որ մէկ փարայ խարճ առնող չլինիցի. և մինչև յանցեալ տարին չէ եղեալ յիրաւի, բայց լսեմք՝ թէ յայսմ ամի խարճ են առեալ։ Ուստի թէպէտ մեք գրեցաք առ նա ինքն Ահմատ խանն, բայց դուք ես պարտիք խնդիր առնել՝ ոք թամպէհ արասցէ և թուղթ տացէ, որ յայն մեր վախուֆ այգւոյն կողմանէ խարճ առնող չլինիցի, որպէս մինչև ցարդ չէ եղեալ։ Այսպէս առնելով սիրելւոյդ և զորպիսութիւն գրելով մեզ, յոյժ շնորհակալու կացուցանելոց ես զմեզ զբարեպաշտութենէ քումմէ։ Իսկ և՝ յաղագս պարոն Ալէքսանին զոր ինչ գրեալ էիր, իմացաք։ Բայց մեք մինչև ցարդ դեռ չկարացաք յայն կողմունս թուղթ գրել, և չգիտեմք թէ որքան տունք կան յայն կողմանսն, և ոյք են երևելի անձինք։ Վասնորոյ մէկ օրհնութեան թուղթ գրեցաք առ պարոն Ալէքսանն, և ահա յղեցաք առ քեզ՝ զոր յղեսցես առ նա, և որպէս մեք գրեալ եմք, դու ես գրեսցես, զի զորպիսութիւնս իւրեանց և զայլ համբաւս շուտով մեզ գրեալ ծանուսցէ, յայնժամ որպէս պատկանն է այնպէս արասցուք։ Ողջ լեր ի Տէր։

Գրեցաւ ի ՌՄԾ. և ի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՃԺԷ· *Թուղթ ի մեծն Պօլիս՝ առ Շնորհք ամիրայի որդի Մուրատ ամիրայն, ի պատասխանի թղթոյն, շնորհակալութիւն վասն սիրով ուրախակցութեան ընդ անցսըն սրբոյ Աթոռոյս:*

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ՝ ծանուցումն լիցի գերազնիւ սիրելւոյդ մերում, և օգտաշահ որդւոյդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի ճանաչել զերախտաւորս՝ և գոհանալ զբարերարաց, հարկադրեն մեզ օրէնք բնութեան, նաև սուրբ գիրն Աստուածայինն՝ որ պատուիրէ թէ, մի մոռանար զբարեկամս քոյ ի մտաց քոց։ Արդ՝ ըստ այսմ բնութենական կանոնի՝ և Աստուածայնոյ պատուիրի՝ պարտ և պատշաճ համարիմ երախտագիտաբար շնորհակալ լինիլ զազնուութենէ քումմէ, քանզի՝ յանցեալում ամին ի տեղդ գոլով իմ, զու օրհնեալդ զշնորհ և զմարդասիրութիւն ցուցեր առ իս, յարգանօք ընկալնլով զիս ի բարեճոխ օրհնեալ տունդ ձեր, առաւելապէս չահելով և մխիթարելով, զոր լիրաւի չեմ մոռացեալ, և պարտական գիտեմ զիս միշտ լիշատակելոյ զքեզ ի բարին, և յաւէտ աղօթելոյ առաջի Քրիստոսաէջ սրբոյ տեղւոյս վասն կենաց և բարեյաջողութեան իշխանապետիդ մեծի և համայն քոյայնոցն։ Արդ՝ յայնժամ զայն յատկական բարեշնորհութիւնս ցուցեալ, այժմ և ի դիտելդ զկոչիլս մեր ի կարգ և յԱթոռ. կաթուղիկոսութեան, յատուկ իմն սիրով ուրախացեալ ընդ այն, գրեալ էիր առ մեզ ըզթուղթ շնորհաւորութեան, զոր սիրելին մեր Կարապետ եպիսկոպոսն բերեալ հասոյց մեզ ի Նոյեմբերի 16. հանդերձ փառազարդ հրովարտակօքն յանուն մեր շնորհեցելովք, և բազում թղթովք ընդունելութեան յարգելի եղբօր մերոյ պատրիարգ աստուածաբան վարդապետին, և օրհնեալ իշխանաց։ Նւ մեք ընթերցեալ զսիրանիչ գրուածսդ՝ մխիթարեցաք ի բազմապատիկ վարանմունս մեր, և շնորհակալեալ զբազմագով սիրելւոյդ, օրհնեցաք զքեզ լիաբերան օրհնութեամբ։ Զոր Տէր օրհնեսցէ և զօրացուսցէ, տարածեսցէ զթևս խնամոց իւրոց ի վերայ քոյ և քոյայնոցն, և համայն բարեգործութեամբք զարդարունս և ճոխս պահեսցէ, փրկելով ի վտանգից հոգեկանաց և մարմնականաց, և զամենայն բանս և զգործըս ձեր արդիւնաւորս և չահեկանս արասցէ։ Եւ արդ՝ լիրաւի զոր ինչ և տնօրինեսցէ Աստուած՝ զամենայն հանգամանս նորին ես ըստ այնմ ուղղէ։ Որպէս և ահա այժմ ըստ մեծի ողորմութեան իւրոյ յաջողելով մեզ զսոյն զայս վիճակ, յաջողեաց մեզ և զկամակցութիւն օրհնեցելոյ Ազգիդ մերոյ ընդունել։ Յաջողեաց նա և՝ որ ի յօգոստոսի 24 մինչ զոտզամս և զխիլայս ընկալաք ի Շահէն պարսից, ի նմին աւուր զկնի միոյ պահու և ի տէրութենէ այտի· զֆէրմանի և պերաթի զօրինակսն ընկալաք, որպէս ի ժամանակին երկարապէս գրեալ եմք պատրիարգ վսեմամիտ վարդապետին, յորմէ և օրհնեալ իշխանքըդ ի հարկէ իմացեալ լինիք։ Վասնորոյ փառք և գոհութիւն բարեխնամ գթութեան Արարչին։ Իսկ և՝ սիրելիդ որ ի կողմանէ Մշու սուրբ Կարապետի վանից առաջնորդ Յակոբ արհի եպիսկոպոսն զյանձնաըարութեան բանս էիր գրեալ, արդարև նա յատկապէս սիրելի է մեզ և հաւատարիմ։ Այժմ ես յայղր բազում ջատագովութիւնս է արարեալ զմէնջ, և Կարապետ վարդապետին մերոյ ուղեկցելով մինչև ի Մուշ՝ բազում սէր և քաղցրութիւնս էր ցուցեալ նմա որպէս պատմեաց մեզ ի գալն։ Ուստի և մեք թէ ի սէր սրբոյ Ամլորդւոյն թէ վասն ազնիւ խաթեր սիրելւոյդ, և թէ ըստ արժանաւորութեան իւրոյ, ջանալոց եմք ի պատուի պահել զնա, և յամենայնի ի գործս իւր ձեռնտու լինել, և առ մեզ անկեալ բանիցն ես հոգատար։ Որպէս և այժմոյս ի գալն նորա ի Մուշ՝ անտի զշնորհաւորութեան գիր էր գրեալ առ մեզ, և զՇրջաբերական կոնդակ խնդրեալ վասն սըրբոյ վանիցն օգնութեան, զորս և մեք յետ մըրջոցի ինչ գրելոց և յղելոց եմք, և կամելոց եմք, ամենայնիւ զսէր և զխնամս ունիլ։ առ որս միամիտ կացցես։ [illegible] ահա գրեցաք զթուղթս առ երևելի անձինս մայրաքաղաքիդ. կամէտք զկոնդակ ես գրել առ հասարակութիւն ժողովրդոցն, բայց ազդ եղև մեզ խառնակութիւն տեղւոյդ՝ և տարագրիլն այտի պատրիարգ Արհւոյն, որովք տրտմեցաք ոչ սակաւ։ Վասնորոյ և արգելեցաք զկոնդակն, խնդրելով յԱստուծոյ շնորհել զխաղաղութիւն ձեզ, զի յայնժամ գրեսցուք։ Արդ այժմ խնդրեմք ի սիրելւոյդ, զի որով կերպիւ և իցէ՝ զդիւրութիւն և քաղցրութիւն ցուցցես սիրելի եղբօր մերոյ պատ-

րիարդ տրհուոյն, և ջանասցես մխիթարել զնա, որ առ մեզ վերաբերի։ Դարձեալ խնդրեմք, զի զօգտաջանութիւնդ առ սուրբ Աթոռս աննուազ ունիցիս, և զպատուկ սէրդ և զբարեկամութիւնդ առ մեզ՝ հաստատ պահեսցես, և ոմանց զրաբանութեանց զմէնջ՝ մի անսայցես, որպէս մինչև ցարդ չես անսացեալ։ Որովք զոհունակ լինելոց եմք ճշմարիտ սիրելւոյդ արժանաւոր օրհնութեամբ. Ամէն։

Գրեցաւ յԱմի Տեառն 1801 և ի դեկտեմբերի ... ի սուրբ Էջմիածին։

ՃԺԸ. *Թուղթ ի Թիֆլիզ առ Ղորղանենց Յովսէփ աղային եւ առ բոլոր Ղորղանեցիսն, ծանուցումն վասն վարդապետին թէ ահա յղեցաք առ ի գնալ ի կողմանսն Հիւսիսոյ վասն զշփոթութիւնսն նոցա խաղաղացուցանելոյ, եւ խնդիր՝ զի ինքեանք եւս զմահսէր գրեսցեն նմա:*

Նւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ՝ ծանուցումն լիցի սիրելեացդ մերոց՝ և օգտաջան որդւոցդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի թուղթն բարեկամութեան ձերոյ ժամանեաց առ մեզ, զոր ընթերցեալ իմացաք զբարւոք խորհրդատուութիւն ձեր մեզ՝ առ ի զեպիսկոպոս մի առաքել ի կողմանսն հիւսիսոյ՝ որ զնացեալ անդ՝ զշփոթութիւնսն մերայնոց խաղաղացուսցէ։ Որոյ աղագաւ օրհնեալ Դաւիթ արքայորդին և այլք բազումք ևս էին գրեալ։ Ուստի՝ և մեք զայն հաւատարմօրէն առաջադրութիւն ձեր՝ յօժուտ իմանալով մեզ և սրբոյ Աթոռոյս, ահա զսիրելիսն մեր և ընդհարազատ զաւակսն սրբոյ Աթոռոյս՝ զ . . . և ... հանճարունակ վարդապետսն և արհիեպիսկոպոսունսն պատրաստեալ՝ առաքեցաք հանդերձ յանուն մեր հանեալ ֆերմանի սուրաթիւն, բազմակնիք մահսէրիւն պօլսեցւոց, և բազում թղթովք առաջնորդաց, իշխանաց՝ և այլ երևելի անձանց, որ զայցեն այդր՝ և գընասցեն այտի՝ անդ ի կողմունսն հիւսիսոյ, և զխաղաղութեան հոգսն տեսցեն։ Ընդ որոց գրեցաք և արդ մի՝ առ մեծութիւն աստուածապսակեալ ինքնակալ կայսերն, և զթուղթ առ Նփրեմ արքեպիսկոպոսն, և զկոնդակս առ մերասեր ժողովուրդսն։ Բայց սիրելիք, ահա յաւապէս յայտնի է ձեզ զիարդ կոչիլն մեր յայս պաշտօն Հայրապետութեան սրբոյ Աթոռոյս, ըստ որում դուք քաղաքացիքդ բազմակնիք թղթով խնդրեցիք, ծանուցանելով և զկտակէ հոգելոյս Տեառն Յովսեփայ կաթուղիկոսին՝ առ ի զմեզ նստուցանել ի տեղի իւր։ Առ որ և միաբանք և երկրացիք համաձայնեալ՝ յատկացուցին զմեզ յայս պատիւ։ Գիտէք ես թէ այն տուրքն որք տուան իշխողաց՝ եթէ Դանիէլ վարդապետն ես լինէր կաթուղիկոս, տալոց էր անպատճառ՝ մեք եղաք, ի մէնջ առին։ Բայց այն վուր է որ նա գրեալ է զմէնջ, իբր թէ մեք զեկեղեցական անօթս խորտակեալ իցեմք՝ և տուեալ այլազգեաց։ Եւ որպէս գիտէք զճշմարտութիւն՝ պարտիք ըստ այնմ ջատագով լինել, և զուղղութիւն բանին գրել և ծանուցանել ի յերկիրսն հիւսիսոյ։ Ապաքէն ի զալն առ ձեզ լիշեալ եպիսկոպոսացն, դուք քաղաքացիքդ հասարակութեամբ արդ գրեսջիք առ մեծութիւն օգոստ. կայսերն, թէ այն որ հասկացուցեալ են ձերումդ մեծութեան, թէ կաթուղիկոսըն մեր արտաքոյ կամաց և հաճութեան Ազգին է կացուցեալ, սուտ է ամենևին, մեք մերձաւոր դրացի գոլով՝ յաւապէս տեղեակ եմք որ միաբանք սրբոյ Աթոռոյս ընտրեալ և յատկացուցեալ են զնա ի կաթուղիկոս, ընդ որ և Ազգն հաճեալ և հաւանեալ են, որպէս և բազում քաղաքաց ժողովուրդք զհամահաճութեան թուղթս են գրեալ, և ամենեքին ընդունեն զնա և պատուեն։ Խնդրեմք, զի ձերինդ մեծութիւն ևս հաճեսցեալ՝ շնորհիցէք զողորմութեան հրովարտակս ի հաստատութիւն Հայրապետութեան նորա։ Ընդ որում գրեսջիք և բազմակնիք մահսէր առ հասարակութիւն մերազանց, թէ զայդ զոր դուք բարի կարծելով առնէք, ոչ է բարի, այլ պատճառ է վնասուց և աւերման սրբոյ Աթոռոյն. այն՝ զոր լուեալ էք թէ կաթուղիկոսն յեկեղեցական անօթս ձեռնամխեալ է, սուտ է ամենևին, այդպիսի բան ոչ է անցեալ ի սուրբ Աթոռն, ի զուր էք պղտորեալ զմիտս ձեր։ Որ միանգամ ընտրեալ և օծեալն է ի կաթուղիկոս՝ նա է ընդունելի։ Որպէս ընդ օսմանցւոց տէրութեան եղեալ ազգին և մեզ իսկ

ընդունելի և հաճելի է։ Ուրեմն՝ դուք ևս ձեռն քարշեցէք յայլոցիսի վնասակար արարմանց. և զընդունելութեան թուղթ գրեցէք առ կաթուղիկոսն։ Այսպէս գրեսջիք զմահսէրն, և զայլն որպէս խոհեմութեան ձերում վայել է։ Եւ ապա թէ զայն՝ և թէ զթագաւորի արզն տասջիք ի ձեռս վարդապետացդ մերոց, և որպէս մեք գրեալ եմք առ Կառլ Ֆէտրիչ Քնոբինն, և առ Լազրով Ենարալն, դուք ևս խնդրեսջիք ի նոցունց՝ որ ըստ սովորութեան իւրեանց զայդ վարդապետսդ մի՛ արգելցեն ի տեղդ, այլ որ յառաջ անարգել՝ իւրեանց հաւատարիմ մարդովք ուղևորեսցեն զդոսա առ մեծութիւն օգոստափառ կայսերն։ Տացէ Աստուած՝ որ բարձցի խռովութիւն, և կալասցի խաղաղութիւն։ Եւ մեք շնորհակալ լինելոց եմք զսիրելեացդ արժանաւոր օրհնութեամբ։ Ո՛ղջ լերուք ի Տէր, և պահպանեցեալք հզօր աջով նորին յարաժամ. Ամէն։

Գրեցաւ յամի Տեառն 1801. և ի դեկտեմբերի ... ի սուրբ Էջմիածին։

ճժթ. *Թուղթ ի Թիֆլիզ առ Իւան Պետրովիչ Ենարալն, ծանուցումն վասն վարդապետացն յուղարկելոց ի դուռն մեծի կայսեր, և խնդիր, առ ի զնոսա շուտով ուղևորել։*

Յորմէ ժամանեսցէ Աստուածային օրհնութիւն և փրկչաւանդ ողջոյն՝ հանդերձ պահպանողական շնորհիւ սրբոյ Խաչման տեղւոյս Քրիստոսի, գերապատիւ սիրելւոյդ մերոյ՝ և հաւատարիմ բարեկամին սրբոյ Աթոռոյս, Աստուծով զօրացեալ չքեղապանծ և քաջազօր Իւան Պետրովիչ Ենարալին, և ամենեցուն որք քոյ են, և ընդ ձեռամբ քով, խնդալ։

Եւ ընդ Աստուածային օրհնութեանս՝ գիտութիւն լիցի գերազանցութեան քում Բազմիցս երթևեկութեամբ թղթոց հաւաստեալ գոլով զճշմարիտ սէր և բարեկամութիւն ունիլդ առ սուրբ Գահս Աստուածեան՝ և առ մեզ, յաղագս որոյ՝ նարդենիս դէպ եղև մեզ գրել զայս օրհնաձիր թուղթ առ ձերինդ պայծառափայլութիւն ի յարծարծումն այնր սիրոյ և բարեկամութեան, և ի ծանուցանել զայս ինչ։ Քանզի՝ ահա արդ գրեցաք առ բարձրութիւն աստուածապսակեալ ինքնակալ մեծի կայսերն, և զկոնդակս առ մերազուն ժողովուրդսն, ընդ որս և առ Նիրսէս արքեպիսկոպոսն ևս թուղթ գրեցաք, և հանդերձ օսմանցւոց տուեալ ֆարմանի և բարաթի օրինակօքն, և պարսից շահի տուեալ ռաղամովն, և սրբոյ Աթոռոյս միաբանից և Կոստանդնուպօլսոյ մերասեր ժողովրդոց՝ և այլ քաղաքաց առաջնորդաց և իշխանաց և բազմաց երևելի անձանց ընդունելութեան և համահաճութեան թղթովքն՝ ի ձեռն . . . հանճարունակ արքեպիսկոպոսաց առաքեցաք գնալ ի դուռն օգոստափառ կայսեր։ Վասն զի՝ զմէնջ ոմանք ասացեալ են յայն կողմանսն՝ իբր թէ առանց հաճութեան ազգին՝ բռնաւորութեամբ այլազգեաց կացուցեալ իցեմք յայս պաշտօն հայրապետութեան սրբոյ Աթոռոյս, և թէ զեկեղեցական անօթս խորտակեալ եմք և տուեալ այլազգեաց, որք զուր են ամենևին՝ և ստայօդ բարբառանք։ Ահա քաջազոյնս գիտէ գերազանցութիւն քո՝ յաղագս հոգելոյս Յովսեփայ կաթուղիկոսի կտակաւ աւանդելոյն սակս նըստուցանելոյ զմեզ ի տեղի իւր, ի տեղւոջ էին գրեալ մերազնեայ ժողովուրդքն զբազմակնիքն մահսէր, որոց և միաբանք և երկբացիք համաձայնեալ՝ կացուցին զմեզ յայս աստիճան։ Յետոյ՝ ամենաքաղցր ակնարկութեամբ կայսերն Ֆէրմանն մեր հանեալ եղև ի տէրութենէ օսմանցւոց, և առ նոսա եղեալ ժողովուրդքն մեր ևս հաճեցեալ ընդ ընտրութիւն մեր՝ կնքեցին զմահսէրն մեր, զորս ահա յղեցաք ձեռամբ յիշեալ եպիսկոպոսացն։ Աստի՝ խնդրեմք ի գերազանցութենէ ձերմէ, զի որպէս գիտէք զուղղութիւն անցից մերոց՝ ըստ այնմ վկայեսջիք, թէպէտ մեք գրեցաք արզիւն մերով առ մեծութիւն կայսեր, և տեղւոյդ մերազնեայ ժողովուրդքն ևս գրելոց են, բայց դուք ևս փոյթ կալջիք գրել, և տեղեկացուցանել վասն կոչման մեր յայս պաշտօն՝ թէ գիտութեամբ միաբանից՝ և հաճութեամբ ազգին է, և ոչ բռնութեամբ. որով որոշեսցի ճշմարիտն ի ստոյն, և զրաբանութիւնք ոմանց ի գերևս ելցեն։ Մանաւանդ՝ խնդրեմք, զի զյիշեալ եպիսկոպոսունսն մեր արգիլեալ չպահեսջիք ի տեղդ և կամ յայլ ուրեք, որ-

պէս սիրելութիւն է ձեր, այլ անյապաղ հաւատարիմ. ուղեկցօք առաքեսջիք այտի, և սահմանակալաց ձերոց գրեսջիք, զի նոքա ևս թարց ընդդիմագործութեան մուծանիցեն ի ներքս, և յուղարկեսցին ի սպաս օգոստափառ կայսեր, առ ի յայտնել զիրաւունս մեր, և բերել զհրովարտակս ողորմութեան ի հաստատութիւն մեր։ Որև մեծաւ զոհունակութեամբ շնորհակալ լինելոց եմք զաստուածասիրութենէ ձերմէ։ Ողջ լերուք։

Գրեցաւ յամի Տեառն 1801, և ի դեկտեմբերի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՃԻ. *Թուղթ ի Մօսկով առ աղայ Յովակիմն և աղայ Մինասն Եղիազարեան, ծանուցումն և յանձնարարութիւն վասն եպիսկոպոսացն:*

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ՝ ծաներուք սիրելիք մեր ի Տէր՝ և հարազատ որդիք սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի զորպիսութիւն անցից կոչման և օծման մերոյ ի Հայրապետութիւն սրբոյ Աթոռոյս և օրհնեալ Ազգիս Հայոց, յառաջագոյն գրեալ ծանուցեալ եմք ազնուականութեան ձերում. երկու և երեք թղթովք։ Որք ի հարկէ հասեալ լինին սիրելիսդ։ Բայց ի ձէնջ մինչև ցարդ մէկ պատասխանի չընկալաք. առ որ կամք ի վարանս տարակուսանաց։ Իսկ ի գրութեանց այլոց ազդ եղև մեզ՝ թէ ոմանք զայլ ինչ են հռչակեալ զմէնջ յայդ կողմունս, որպէս թէ մեք ակամայ և բռնութեամբ եմք նստեալ յայս Աթոռ, և թէ զեկեղեցական անօթս խորտակեալ եմք՝ և տուեալ այլազգեաց։ Որովք և պղտորեալ են զքաղցր սիրտ աստուածապսակեալ ինքնակալ կայսերն. և ձեր։ Բայց արդարև զուր են իսպառ այնպիսի բանք։ Այլ ահա գրեալ եմք քանիս զստոյգ անցսն մեր՝ թէ զկնի փոխելոյն յաստեացս հոգելոյս Յովսէփ կաթուղիկոսին, մերաղնեալ ժողովուրդք Թիֆլիզու զբազմակնիք մահսէր գրեալ՝ խնդրեցին՝ վասն մեր նստուցանելոյ ի կաթուղիկոս, որոց և սրբոյ Աթոռոյս Միաբանք և երկրացիք մեր՝ համաձայնեալ՝ յատկացուցին զմեզ և օծին։ Որպէս ահա այժմ ևս մահսէր գրեալ ի վերայ կողմանցդ՝ ծանուցին այնու զհամահաճութենէ իւրեանց, զոր տեսանելոց էք։ Ընդ որում մեք ևս արդ գրեցաք առ մեծութիւն ինքնակալ կայսերն, և զպատուկ-յատուկ կոնդակս առ իւրաքանչիւր քաղաքսդ, և զթուղթ առ Եփրեմ արքեպիսկոպոսն։ Զորս և հանդերձ օսմանցւոց տէրութենէ յանուն մեր տուեալ ֆէրմանի և բէրաթի օրինակօքն, պարսից շահի տուեալ ռաղամով, և սրբոյ Աթոռոյս միաբանից և Կոստանդնուպօլսոյ՝ և բազմաց երևելի քաղաքաց առաջնորդաց և իշխանաց համահաճութեան թղթովքն առաքեցաք՝ ձեռամբ սիրելեաց մերոց . . . . արքեպիսկոպոսաց։ Իսկ զայս թուղթ ևս գրեալ առ բարեպաշտութիւն ձեր՝ խնդրեմք, զի թէ ի յիշեալ թղթոցն և թէ ի բերանոյ գրաբերացն զուղիղն իմանալով՝ յայնս հաստատեսջիք զմիտս ձեր, և հեռի պահեսջիք զլսելիս ի ստայօղ ասութեանց, քանզի ահա մատնեալ կամք ի ձեռս անօրինաց, յորոց միշտ կեղեքիմք և վնասիմք։ Եթէ առիթ ինչ ևս հանդիպեսցի, իսպառ աւերելոց եմք, իսկ օգուտ և ոչ մի ինչ. որպէս և յայտնի է խոհեմութեան ձերում։ Վասնորոյ պարտիք ի սէր ընկալուլ զառաքեցեալսդ ի մէնջ, և հասուցանել զարդն մեր առ մեծութիւն կայսերն, և յամենայնի զօգուտն սրբոյ Աթոռոյս խորհել և առնել ըստ բնիկ սիրոյն և հաւատարմութեան ձերոյ առ սա։ Իսկ թէ ի կողմանէ առաջնորդի ունիցիք զտրտունջ, զայն ևս յայտնել մեզ, զի ըստ այնմ արասցուք։ Որովք շնորհակալ լինելոց եմք զձէնջ արժանաւոր օրհնութեամբ։ Ողջ լերուք ի Տէր։ Ամէն։

Գրեցաւ յամի Տեառն 1801. և ի դեկտեմբերի ... ի սուրբ Էջմիածին։

ՃԻԱ. *Թուղթ ի Ախալքալաք, առ վեցեսին անձինս, օրհնութիւն և շնորհակալութիւն վասն վեցեցունց մատաղացուացն, զորս յղեալ էին ի սուրբ Աթոռս:*

Եւ ընդ Աստուածայնոյ օրհնութեանս՝ գիտութիւն լիցի սիրելեացդ մերոց և բարեմիտ որդւոցդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի ասէ իմաստունն Սողոմոնն եթէ՝ որ երկնչի ի Տեառնէ՝

պատուէ զծնօղս։ Արդ՝ զոլով զուք երկիւղածք առ ի յԱստուծոյ, ի լսելն ձեր զզանազան փորձանսն հասեալս ի վերայ սրբոյ Աթոռոյս, և զ'ի բազմաց պիտոյից պակասաւորիլն ըստ հարկաւորութեան ժամանակիս՝ և ըստ չափու կարողութեան ձերոյ պատուեալ էիք զլուսածին Մայր ձեր կամաւոր նուիրօք ողորմութեան։ Քանզի մեծաւ բարեպաշտութեամբ տուեալ էիք յանուն սորա զմատաղացուս։ Պարոն Միքայէլդ և պարոն Գաբրիէլդ զԱ. թօսուն Դ. տարեկան։ Պարոն Ստեփանոսդ և միւս պարոն Յովսէփդ զԱ. արջառ։ Պարոն Պետրոսդ զԱ. երինջ, ներկարար Խթխաւարդ ես զԱ. երինջ, և պարոն Դաւիթն ես զԱ. երինջ։ Որոց զումարն լինի վեց. զորս և յանձնեալ էիք հոգեոր որդւոյն մերոյ՝ և հարազատ գործակալին սրբոյ Աթոռոյս՝ Տէր Միքայէլ խոհեմամիտ քահանային։ Եւ նա՝ զ'հինդն ձեռամբ օրհնեալ տիրացու Խաչատուրին յուղարկեալ էր ի սուրբ Աթոռս՝ իսկ զմինն տուեալ էր նմա ի վարձ բերելոյն զմիւսսն։ Եւ մեք զայն հինգ մատաղացուսն ընկալեալ սիրով՝ մատուցաք Տեառն Աստուծոյ և Նոյնաէջ Տեղւոյս՝ առ ի պէտս կերակրոց սիրազումար միաբանիցն, իսկ զմիւսն ես որ վասն սրբոյ Աթոռոյս էր խարճեցեալ՝ առ մեզ հասեալ համարելով, շնորհակալ եղաք ձէնջ, օրհնելով զձեզ բազմաւ օրհնութեամբ. զորսև յիշեցաք ի հաշտարար սուրբ Պատարագս ի հիահրաշ սուրբ Տեղւոջս։ Վ.ասնորոյ և զայս թուղթ օրհնութեան գրեցաք առ ձեզ, զի միամտեալ ուրախասջիք հոգեւորապէս։ Արդ՝ ուրեմն՝ Տէր օրհնեսցէ զձեզ և զօրացուսցէ. ընկալցի զկամաւոր տուրս ձեր ի հաճոյս իւր, և զփոխանակն՝ հեղցէ ի ձեզ և ի համայն ձերայինսն զշնորհս ողորմութեան իւրոյ աստ և յանանց կեանս։ Եւ զննջեցեալսն ձեր հանգուսցէ յարքայութեան երկնից։ Պատուիրեմք ես օրհնեցելոցդ, զի ի բարեպաշտութեան ձերում որ առ Աստուած՝ և ի ջերմեռանդ սէր և հաւատարմութիւն ձեր որ առ սուրբ Աթոռս՝ հաստատուն մնասջիք, և յօգտակարութեանց սորին մի պակասեսջիք։ Որովք միշտ ընկալջիք զվարձս յԱստուծոյ, զշնորհս ի սրբոյ Աթոռոյս՝ և զօրհնութիւնս ի մէնջ. Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾ թուոջս, և ի դեկտեմբերի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՃԻԲ. *Թուղթ ի Վան առ Ցարութիւն աղայն Մահտեսի Թօմայեան, յանձնարարութիւն վասն Նոր նուիրակ վարդապետին:*

Եւ ընդ Աստուածային օրհնութեանս՝ գիտասջիր ընտիր սիրելիդ մեր՝ բարեմիտ որդի սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի յառաջագոյն միանգամ և երկիցս գրեալ եմք առ սիրելիդ զարդիւնաւորութեամբ և խաղաղութեամբ գալստենէն առ մեզ սիրելի և հոգեոր որդւոյն մերոյ՝ և գործակատար նուիրակին ձերոյ Աբրահամ հանճարունակ վարդապետին։ Սակայն՝ յայս երկոսին ամս մինչ սուրբ Աթոռս մեր կայր յանտիրութեան, եթէ որչափ փորձութիւնք և նեղութիւնք ժամանեցին մեզ, և որքան անհուն վնասք դիպեցան սրբոյ Տանս, քաջագոյնս լուեալ և իմացեալ ես։ Այժմ յամենայնէ ի կարեոր իրաց պակասաւոր զոլով, և զօրական ապրուստն մեր հազիւ ուրեմն գտանելով, այլ ես ի պահանջմանց պահանջողաց, և ի սրտամաշ տարակուսանաց չունիմք զապահովութիւն։ Բայց որչափ կարն մեր զօրէ՝ ջանս եղեալ աշխատեմք վասն օ.տի և բարեկարգութեան սրբոյ Աթոռոյս՝ յուսալով նախ յԱստուած՝ և ապա յօգնութիւն Աստուածասէր օրհնեալ ժողովրդոցդ Հայկազնէից։ Ուստի, մինչ լրացեալ էր ժամանակն նուիրակութեան Տիրախնամ վիճակիդ, և հարկ էր մեզ նորոգ նուիրակ առաքել, վասնորոյ ահա զսիրելին մեր՝ և զհարազատ զաւակն սրբոյ Աթոռոյս՝ զ . . . զգօնամիտ վարդապետն և զարհի եպիսկոպոսն նուիրակ կարգեալ օրհնեցելոյ երկրացդ՝ սրբարար միւռոնաւ և օրհնութեան կոնդակաւ առաքեցաք, որ զհոգեորական պիտոյն հաւատացելոցդ բաշխեսցէ ձեզ, և զմարմնաւոր արդիւնսն ձեր ժողովեալ բերցէ ի կարեոր պէտս օգնութեան բազմապատկեալ ծախուց սրբոյ Տանս հոգւոց ձերոց։ Որոյ աղաղաւ թէպէտ աւելորդ է գրելս զյանձնարարութիւն, ըստ որում գիտեմ՝ զի բարեպաշտ սիրելիդ յօժարամիտ ես առ այսպիսի գործս բարութեան, սակայն և հակիրճ բանիւ յանձն առնելս ոչ է անտեղի։ Զի որպէս զԱբրահամ վարդապետն ընկալեալ էիր, նոյնպէս և զդա մեծաւ սիրով և յարգանօք ընկալցիս, և ամենայնի մխիթարիչ և

շահեցող լիցիս որպէս վայել է Աստուածասիրութեան քում, և արհիական կարգի իւրումս և գլի՝ ահա մեր առաջին նուիրակն է՝ զոր առաքեցաք ի յօրհնեալ վիճակդ, լուսալով նախկին օգնութիւն մեր ի ձէնջ գտանել, վասնորոյ պարտիս՝ յամենայնի ի յատուկ սէր ունելով, հաւատարիմ խորհրդով և բանիւք ձեռնտու լինել դմա՝ և օժանդակ գտանել առ. գործն առ. ի խաղաղութեամբ յառաջեցուցանել։ Եւ զինչ ևս երկարեսցուք, ահա զդա հանդերձ գործովն յանձնեմք սիրելւոյդ, և զքեզ՝ Աստուծոյ, որպէս և բարի և օգուտ իմացիս սրբոյ Աթոռոյս և մեզ՝ այնպէս կառավարեսցես, յորդորելով և զհասարակութիւն՝ զուարթութեամբ և առատութեամբ տրոցն օգնութիւն մատուցանել Մօրս ձերոյ հաւատոյ՝ յայսպիսի պակասաւորեալ ժամանակի։ Որովք յոյժ շնորհակալեալ մեր ղադնիւ սիրելւոյդ, օրհնեսցուք յաւէտ զարժանիդ օրհնութեանց, և ընկալցիս զվարձս ի Քրիստոսէ, և շնորհս ի սրբոյ Իջման տեղւոյս նորին։

ՃԻԳ. *Թուղթ ի մեծն Պօլիս առ մահտեսի Յովաննէս ամիրայն մահտեսի Յարութիւնեան, ի պատասխանի թղթոյն շնորհաւորականի ընդ մահսէրաքեր Կարապետ վարդապետին, շնորհակալութիւն վասն ընդունելութեանցն, եւ յորդորումն ի հաստատութիւն սիրոյ:*

Եւ ընդ սիրոյ և օրհնութեան ողջունառաք նամակիս՝ դիտութիւն լիցի զերադնիւ սիրելւոյդ մերում՝ և օգտախոհ որդւոյդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի ըստ որում բնական է բարեպաշտից բարեպաշտիլ ի յամենայն իրս, նմանապէս և դու սիրելիդ յամենայն տեսակս բարեպաշտութեան դոլով, յանցելումն ամին ի նախատեսութեան աղնուոյդ ընդ մեզ ցուցեալ առ մեզ զբաւական շնորհ քաղցրութեան և զառատութիւն սիրոյ, նարդենիս ևս նովին սիրով և քաղցրութեամբ ուրախացեալ ընդ կոչումն մեր ի յայս պաշտօն Հայրապետութեան, գրեալ էիր առ մեզ ըդթուղթ սիրալալտական ձեռամբ ազնիւ սիրելւոյն մերոյ Մինաս արդոյ ամիրայի՝ թոռն օրհնեալ Բաղտասար Աղազատէին, որ ընդ մահսէրաքեր Կարապետ եպիսկոպոսին եկեալ այտի յԱկն քաղաք, անդ արդելեցեալ էր առ օրհնեալ Փիլիպոս ամրրայն։ Իսկ Կարապետ եպիսկոպոսն եկեալ ի նոյեմբերի ԺԶ. հասոյց մեզ զարքունական յանուն մեր գծագրեալ փառազարդ հրովարտակն՝ և զբաղում թուղթս շնորհաւորութեան սիրելի եղբօր մերոյ պատրիարդ Յովաննէս վսեմամիտ վարդապետին և պատուամեծար օրհնեալ իշխանաց և այլ անձանց։ Եւ պատմեաց մեզ յատկապէս դշնորհ ընդունելութեան քո առ ինքն, և զօգտարար ջանացողութիւնսդ վասն իրաց մերոց։ Ապա և յիշեալ պարոն Բագդասարն եկեալ յամսոյս 17. հասոյց առ մեզ զհարազատական թուղթն պատուելւոյդ, զոր ընթերցեալ մեր իմացաք առաւել քան զոր պատմեցեալն էր ի Կարապետ եպիսկոպոսէն, այսինքն զջերմեռանդութիւն սիրոյդ և հաւատարմութեանդ առ սուրբ Աթոռս և առ մեզ, և զհողւով չափ աշխատիլդ և ջանասիրելդ ի պայծառութիւն սորին և յօգուտ մեզ։ Արդարև հարազատ որդի՝ զնմանութիւն կերպարանաց հօրն բերէ՝ ըստ դրեցելումն։ Քանզի՝ որպէս բարեաց յիշատակաց արժանաւոր հայրն քո բազմադիմի հաւատարիմ և օգտարար էր առ սուրբ Աթոռս և առ զահակալս սորին (զորոյ զթութսն զըրեցեալս առ հոգելոյս կաթուղիկոսն ունելով առ մեզ ընթեռնումք և իմանամք զառ սուրբ Աթոռս արարեալ զբարեշնորհութիւնսն, և միշտ կարդամք առ նա զարժանաւոր ողորմիս). Նմանապէս դու հարազատդ և բարի շառաւիղդ զբարեպաշտութիւն նորին ի քեզ բերելով, պատուես զսուրբ Աթոռս Մայր քո և զմեզ իսկ. միշտ օգտիցն և բարեաց մերոց լինելով խորհօղ և առնօղ, խոստանալով ես յաւէտ աննուազ մեալ ի նոյնս։ Որովք լիրաւի յոյժ և յոյժ սրտադիւր եղեալ մեր՝ զուարճացաք ի սիրտ և ի հոգի, փառս և գոհութիւնս մատուցանելով Աստուծոյ պարգևողին մխիթարիչս զքեզապիսի սիրելիս, և հայցելով ի նմանէ առաջի սրբոյ Իջման տեղւոյս զխնամս և զգթութիւնս վասն քոյ, և զբարեյաջողութիւնս յամենայնի։ Որք և շնորհակալեալ յոյժ զբազմադով սիրելւոյդ ասեմք՝ Տէր օրհնեսցէ, և միշտ տարածեալ ունելով ի վերայ քոյ զթևս Աստուածայլին խնամոցն իւրոց՝

փրկեսցէ ի չարէ հանդերձ քոյայնովքդ, և պահեսցէ միշտ զարդարունս վայելուչ պատուով և պերճացեալս բնաւիւք հոգեկան և մարմնական բարութեամբք. տալով և զյաջողուածս ամենից իրաց ձերոց։ Արդ գրեցաք ահա առ պերճապատիւ օրհնեալ իշխանսն տեղւոյդ և առ այլ երեելի անձինսն զիւրաքանչիւր թղթոյն զպատասխանիս. պարտէաք թէպէտ զկոնդակ ևս գրել առ հասարակ ժողովուրդն, սակայն մինչ ձեռնամուխ եղաք յայն՝ յանկարծ լինի լուաք զանախորժ համբաւ վրդովմանց քաղաքիդ, և զարտահանելն այտի լինել պատրիարգ վարդապետ եղբօր մերոյ. ընդ որս մեծապէս տրտմեալ ցաւեցաք։ Քանզի՝ առաւել ուրախութիւն մեր ի ձէնջ պարտի լինել, և մինչ դուք աղմկեալ իցէք, մեք ուստի գտանելոց եմք զմխիթարութիւն. բայց զինչ ունիմք առնել, հայցեմք յԱստուծոյ զիւր ըղձալի խաղաղութիւն շնորհել ձեզ, ի յուրախութիւն մեզ։ Արդ՝ վասն այդպէս վրդովեալ գոլոյն ձեր՝ անդէպ վարկաք այժմ զկոնդակն գրելն. սպասեմք լսելոյ զլուր խաղաղութեան ի ձէնջ, զի յայնժամ գրեսցուք զօրհնութիւն և զշնորհակալութիւնս։ Այլ զի ահա ճշմարիտ բարեկամի է օգնել բարեկամին յաւուր փորձութեանս Վասնորոյ և բարեպաշտ սիրելեացդ այս է կարեւոր ժամանակ օգնելոյ սիրելի եղբօր մերոյ լինելոյ։ Ուստի՝ խնդրեմք զի որով կերպիւ և իցէ՝ զմիաբանութիւն և զքաղցրութիւն ցուցանիցէք առ նա, որում որքան լինչ բարեյաւութիւնս առնիցէք, յիրաւի մեզ վերաբերեալ լինին. և յոյժ զոհունակութեամբ շնորհակալ լինելոց եմք ձէնջ։ Արդ՝ մինչ հոգեոր որդին մեր՝ Քրիստոսիւ օրհնեցեալ պարոն Բաղդասարն կատարեալ զուխտ և զերկրպագութիւն իւր վերադառնայր աստի՝ գրեցաք ընդ նմա զայս օրհնաձիր թուղթ առ պատուականութիւն քո, յորմէ և խնդրեմք զի զճշմարիտ սէրդ և զբարեկամութիւնդ առ սուրբ Աթոռս և առ մեզ՝ հաստատուն պահելով՝ առաւել ևս աճեցուսցես, և յօգտախոհութեանցդ և ի բարեջանութեանցդ առ մեզ՝ մի պակասեսցիս, և ջանասցես սիրանիշ գրովդ մխիթարել զվշտակրութիւնս մեր։ Որովք միշտ ընկալցիս ըղձաքս յԱստուծոյ, զշնորհս ի սրբոյ Աթոռոյս և զօրհնութիւնս ի մէնջ։ Իսկ զմերս կացութենէ եթէ կամեսցիս գիտել, Աստուծով ի միջակ խաղաղութեան կամք՝ որպէս իմանալոց ես ի յօրհնեալ պարոն Բաղդասարէդ, սակայն ի ներկայս աղդ եղև մեզ՝ թէ անադորոյն զօրքն պարսից գալոց են ի վերայ Երեւանու, որով տարակուսութիւն եղև մեզ ոչ սակաւ. Աստուած զվախճանն ի բարին եղեբեսցէ շնորհիւ իւրաէջ սրբոյ տեղւոյս։ Այսպէս գիտասցես ողջ լեր ի Տէր, և պահպանեսցեալ հանրախնամ. Աջով նորին հանդերձ քոյայնովքդ բնաւիւք յարաժամ. Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾ թուոջս, և ի դեկտեմբերի ... ի սուրբ Էջմիածին։

ՃԻԹ. *Թուղթ ի յէտրէնէ առ Դանիէլեան Պետրոս աղայն, օրհնութիւն եւ շնորհակալութիւն վասն ընծայից ընդ Կարապետ վարդապետին յղեցելոց:*

Ու ընդ սիրոյ և օրհնութեանս Աստուածայնոյ՝ գիտաւոջիր սիրելիդ մեր՝ և բարեմիտ որդի սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի մահաւէբարբեր Կարապետ արհիեպիսկոպոս սիրելին մեր խաղաղութեամբ եկեալ ժամանեալ ի սուրբ Աթոռս հանդերձ արքունական հրովարտակօքն և բազում շնորհաւորական թղթովք յարգելի եղբօր մերոյ պատրիարգ Յովաննէս արհւոյն և օրհնեալ իշխանապետաց և իշխանաց մեծի մայրաքաղաքին Պօլսոյ, պատմեաց յատկապէս և զքոյդ ջերմեռանդն սէր և զհոգետարփ բաղձանսն առ յուսածին Մայրըս քոյ սուրբ Աթոռս և առ մեզ, և զմեծապատիւ ընդունելութիւնսդ առ ինքն։ Եւ զոր յերեական բացայայտ նշանակ նոյնոյ սիրոյդ և հաւատարմութեանդ առ մեզ յուղարկեալ էիր յանուն մեր իբր շնորհաւորական ընծայ զմի բազայ զութի մի զուրսիու[25]) և զմէկ մուճասամ մահրամայ[26])՝ զայն ևս հասոյց առ մեզ։ Եւ մեք ընդ բարեշնորհութիւնսդ շնորհակալ եղաք, և զսիրանուէր ընծայող ընկալեալ առ ի վայելս՝ օրհնեցաք զքեզ բազում օրհնութեամբ։ Զորս Տէր օրհնեսցէ և զօրացուսցէ, չէն և պայծառ պահեսցէ, ի հոգեկան և ի մարմնական փորձութեանց և պահեսցէ միշտ ի խնամս և ի գթութիւնս իւր հանդերձ

քոյայնովքդ ընաւիւք։ Նւ զամենայն բանս և զգործս քո միշտ առ ի բարին յաջողելով արդիւնաւորս և չահեկանս արասցէ։ Արդ՝ ահա գրեցաք զբազում. Թուղթս օրհնութեան և շնորհակալութեան առ երևելի իշխանսն Կոստանդինուպօլսոյ, բայց լուեալ մեր զանախորժ լուր խառնակութեան տեղւոյն, և տարաղրիլն անտի՝ վերոյիշեալ պատրիարգ արհւոյն՝ յոյժ և յոյժ տրտմեցաք և ցաւեցաք. բայց զինչ ունիմք առնել, խնդրեմք յԱստուծոյ բազկատարած մաղթանօք՝ զխաղաղութիւն շնորհել նոցա՝ ի սրտադիւրութիւն և ի մխիթարութիւն մեր։ Այլ բարեպաշտ սիրելւոյդ զայս գրեմք, զի ի ջերմագին սէրդ և ի կատարեալ հաւատարմութիւնդ առ սուրբ Աթոռս և առ մեզ՝ հաստատուն կացցես, և յօդտարար բարեգործութեանց որ առ սա՝ մի պակասեսցիս, նա և՝ ի գտանիլդ ի Պօլիս՝ որչափ կարելին է՝ հետևող լինիք զխաղաղութիւն կացուցանել, և զառիթսն ատելութեան ի բաց բառնալ, յորմէ մեծամեծ վնասք տընաւերութեան յառաջանան, և օգուտ ինչ ոչ, որպէս և յայտ է։ Այսպէս առնելով քոյ՝ ընկալցիս զվարձս յԱստուծոյ, և ժառանգեսցես զհոգեզուարճ շնորհս սրբոյ Աթոռոյս և զօրհնութիւնս մեր հանդերձ քոյայնովքդ ամենիւք։ Ողջ լեր ի Տէր, և պահպանեցեալ ամենազօր Աջով նորին յարաժամ. Ամէն։

Գրեցաւ ի Թուականիս մերում ՌՄԾ. և ի դեկտեմբերի ԻԷ.՝ ի լուսակաղմ. Աթոռս սուրբ Էջմիածին։

1802

ՃԻԵ. *Թուղթ ի Հաշտարխան առ զեղագնիւ Սիմէօն Սէրգէյիչն։*

Եւ ընդ ողջունառաք օրհնութեան նամակիս, գիտութիւն լիցի քումդ աստուածպաշտութեան։ Զի յառաջ քան զայս քանիցս գրեալ եմք սիրոյդ զորպիսութենէ մերմէ և սրբոյ Աթոռոյս զորոյ կրկին ոչ լինչատակեմք։ Եւ դու սիրելիդ իմ ի հարկէ մինչև ցարդ ընկալեալ զայնս հասու ես եղեալ ամենայն գրուածոց մերոց և անցից։ Իսկ այժմ զայս ծանիր ազնիւ սիրելիդ իմ. զի մինչ Եփրեմ վարդապետն ի սնօտի բանից Դանիէլ վարդապետին խաբեցեալ, ծանուցեալ էր մեծի կայսերն զնախանձու ստայօղ բանս յաչաղկոտաց, վասնորոյ և մեք հարկաւոր համարեալ առաքեցաք ի դուռն նորին կայսերական մեծութեան զսիրելի որդիսն մեր զԿարապետ և զԱբրահամ եպիսկոպոսունսն, հանդերձ շնորհաւորական գրով, և Օսմանցւոց Թագաւորի և Պարսից շահի մեզ շնորհեալ ֆարմանի և բազամի օրինակօքն, և ընդհանուր ազգիս Հայոց համահաճական մահսարօքն, և խնդրեցաք ի յարդարադատ աթոռոյ նորին ճշմարտութեամբ ուղղատաստան արդար դատել, և զճշմարիտն ի ստոյն որոշել, և զմեզ զբաւականութիւն տալ։ Նոյնպէս և առ ամենայն քաղաքս կայսերապետ երկրիդ գրեցաք զնոյնն օրհնութեան կոնդակօք։ Ընդ որս՝ և քեզ ղեռագնիւ ցանկալւոյդ մերոյ գրեցաք յայնժամ և նոյն երկու եպիսկոպոսունքն մեր կան տակաւին այժմ ի Թիֆլիզ։ Արդ զմտաւ ածեալ թէ՝ ղուցէ նոքա յամեսցին անդ, վասնորոյ կրկին զհամառօտ թուղթ գրեալ առ նոյն Քրիստոսազօր մեծ կայսրն, առաքեցաք ընդ այս քոյ գրոյն առ Կարապետ վարդապետն մեր ի Թիֆլիզ։ Եւ գրեցաք նմա, զի կամ ինքըն անտի ի փոշտն ձգեալ կայսեր անուամբ առաքեսցէ առ նա, և կամ ընդ գրոյս յղեսցէ առ քեզ և դու սիրելիդ իմ փութով ի փոշտն տուեալ ի Հաշտարխանու յղեսցես ի Պետրբուրգ ուղղակի ի ձեռս մեծի կայսերն։ Ուրեմն խնդրեմ ի ճշմարիտ սիրելւոյդ իմմէ. զի թէ՝ առաքեսցէ առ քեզ, ջանասցես օր մի յառաջ փոշտիւ հասուցանել առ նորին կայսերական մեծութիւն, և մեզ փութով ծանուցանել, զի զիտացեալ միամիտ լիցուք և բազում շնորհակալութեամբ օրհնեսցուք ի քրիստոսահիմն սուրբ տաճարիս զբարեացապարտ և զղծ·ելի կեանս ղերադնւոյդ իմոյ, զոր Տէր օրհնեսցէ և բարեբախտ երջանկութեամբ, և ամաց բազմաց երկարաձգութեամբ պահեսցէ ի մխիթարութիւն սրտի մերում. զայլ որպիսութիւնս մեր՝ ունիք ի նոյն Կարապետ վարդապետ սիրելւոյն ձերմէ գիտել լիապէս։ Այսպէս առնելով քոյ եղիցես օրհնեալ յԱստուծոյ և ի մէնջ. և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ միշտ. Ամէն։

Գրեցաւ ի 1802 և ի յունուարի 16, ի սուրբ Էջմիածին։

ՃԽԹ. *Թուղթ ի վերայ Դրեւանու Շ՚արի ժողովրդոցն առ հասարակ՝ վասն աւծալման ի քանադրանաց Քնալ պարոն Յովաննիսին եւ պարոն Ջօհրային.*

Եւ ընդ սիրոյ և օրհնութեանս Աստուածայնոյ՝ ծանուցումն լիցի սիրելի և հոգեոր որդւոցդ մերոց՝ հարազատ զաւակացդ սրբոյ Էջմիածնի։ Զի ըստ գրոց սրբոց՝ որքան ատելի լինի մարդն Աստուծոյ ի հեռանալն ի Նմանէ մեղօք, այնքան՝ և առաւել իսկ քան զայն լինի Նմա սիրելի, յորժամ զղջմամբ դառնայցէ առ Նա։ Որպէս և եղև անառակ որդւոյն՝ բնութեանս մերոյ մարդկայնոյ. որ իբրև ի Հօրէն երկնաւոր զթիկունս դարձոյց մեղօք, ատեցաւ ի Նմանէ։ Իսկ յորժամ զղջմամբ դարձաւ առ Նա, և մեղայ գոչեաց, ընկալաւ զնա Հայրն երկնաւոր, և եղեն վասն Նորա զեզն պարարակ՝ զՄիածին զորդին իւր, և առաւել քան զառաջինն սիրեաց զնա։ Սոյն օրինակ և ի յերկրաւոր հարս և յորդիս լինի. զի յորժամ որդիք զհայրն իւրեանց բարկացուցանիցեն ընդդէմ հրամանաց նորա շարժելով, յայնժամ և հայրն բարկանայ ի վերայ նոցա, և առ ժամանակ մի ատէ։ Իսկ յորժամ դարձցին անդրէն առ հայրն իւրեանց հնազանդելով հրամանաց նորին, յայնժամ և հայրն քաղցրանայ ի վերայ նոցա՝ և սիրէ զնոսա առաւել քան զառաջինն։ Արդ ըստ այսմ և մեք մինչ շնորհիւն Աստուծոյ հոգեորապէս հայր եմք կացուցեալ համայն Լուսաւորչակրօն օրհնեալ Ազգի մերոյ, պարտիմք զյանցաւոր որդիսն մեր սաստել և յանդիմանել, և ի զղջանալն նոցա՝ մխիթարել, թողլով զյանցանսն։ Եւ զի՝ յայտնի է՝ որ հոգեոր և սիրելի որդիքն մեր՝ յԱստուծոյ օրհնեցեալք և բարեպաշտք պարոն Յովաննէսն և պարոն Ջօհրայն յառաջ քան զայս բարկացուցին զմեզ ինչ ինչ թիւր արարմամբք, այնր աղագաւ և մեք որտնեզեալ ի վերայ նոցա՝ ընդ բանիւ արարաք զնոսա։ Իսկ այժմ՝ որովհետև զղջմամբ մեծաւ դիմեալք ի սուրբ Աթոռս և առ մեզ՝ մեղայ ասացին, վասնորոյ և մեք հայրական սիրով և գթով ընկալաք զնոսա, և հայեցեալ ի զղջումն նոցա, Քահանայապետական կարգիւ և իշխանութեամբ մերով արձակեցաք զնոսա ի բանադրանացն մերոց և, ի հոգեոր կապանացն, և շնորհեցաք յանցանաց նոցա զներումն և զթողութիւն յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, և յօղեցաք դարձեալ զնոսա ի յանդամս Քրիստոսի։ Ուրեմն՝ ամենեքեան սիրելիքդ մեր՝ կարգաւորք և աշխարհականք՝ մի խորիցէք ի սիրելեացդ մերոց ի յիշեալ պարոն Յովհաննիսէդ և ի պարոն Ջօհրապէդ, այլ ընկալջիք յեղբայրութիւն ձեզ և համարեսջիք ի թիւս որդւոց սրբոյ եկեղեցւոյ և անդամոցդ Քրիստոսի, զի օրհնեալ են յԱստուծոյ և ի մէնջ։ Զորս նոյն ինքն ամենախնամն Աստուած՝ օրհնեսցէ այնու օրհնութեամբն՝ որով օրհնեաց զԱդամ, զՆոյ, զԱբրահամ, զԻսահակ և զՅակոբ, և զայլ նոյնպիսի նախահարս, զօրացուցանելով զօրացուսցէ, և երկայնակեացս արասցէ, որդւովք և դստերօք ծաղկեալ պահեսցէ, և արասցէ յազգ մեծ, և զամենայն բանս և զգործս զոցա արդիւնաւորս և շահեկանս արասցէ. և որքան են յայսմ աշխարհի՝ զարդարեսցէ համայն հոգեկան առաքինութեամբք, և յետ աստեացս բացցէ զոցա զդուռն մտից երկնային առագաստին, և իբրև զատոք ցորեան ժողովեսցէ ի շտեմարանս արքայութեան իւրոյ։ Օրհնեսցէ նաև զտունս և զորդիս և զամենայն ընտանիս զոցա, ազատս կացուսցէ ի հոգեկան և ի մարմնական վտանգից, և պահեսցէ միշտ ընդ հովանեաւ ամենազօր Աջոյն իւրոյ ի խաղաղութեան և ի բարեզուարճ կեցութեան։ Ամէն։ Դարձեալ զիտասջիք և զայս. զի ի քաղաքւոջդ դոն այլ ես ոմանք՝ որք ընդ նոցա ի թիւր ընթացս են, և ընդդէմ կամաց մերոց շարժին, զորս թէպէտ պարտիմք սաստել, բայց դեռ խնայելով սպասեմք ուղղութեան նոցա։ Եթէ զղջասցին և դարձցին ի թիւր արարմանց իւրեանց, բարի է, ի հարկէ զաւակունք են սրբոյ Աթոռոյս, և մեք ուրախանալոց եմք ընդ հնազանդութիւն նոցա։ Իսկ եթէ ոչ զղջասցին, յայնժամ և մեք հարկաւորեալ պատժելոց եմք զնոսա ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։ Բայց տացէ Տէր, զի առ ներկայ եղեալ իրակութեամբքն զգաստասցին, և դարձցին ի թիւր ընթացից իւրեանց, զի զօրհնութիւնս ժառանգեսցեն ի մէնջ։ Այսպէս գիտացեալ ձեր, և մնալով ի խաղաղութեան և ի բարեկարգութեան, լինջիք օրհնեալք յԱստուծոյ և ի մէնջ. և շնորհք սրբոյ Ա-

թոռոյս եղիցի ընդ ձեզ յարաժամ. Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս, և ի յունուարի ԻԷ. ի սուրբ Էջմիածին։

ՃԻԻ. *Թուղթ ի Պետերբուրգ առ սրբազան արքեպիսկոպոսն Ամբրոսէ սէր եւ յորդորումն ըստ խնդրոյ Գրիգոր վարդապետին:*

Ցորմէ քրիստոսական սուրբ և միաբար ողջունիւն և ճշմարիտ սիրով ամենասուրբ հոգւոյն Աստուծոյ և, մերոյս եղբայրութեան ստոյգ բաղձանօք և կարօտիւ ծանուցումն լիցի դերյարգելի և մեծապատիւ եղբօրդ մերոյ, ցանկալւոյ տեառնդ Ամբրոսիէ սրբազնակատար եպիսկոպոսապետիդ, և արժանտվայել այցելուիդ, և քաջ հովուապետիդ աստուածակեցոյց և կայսերապերճ մեծի մայրաքաղաքիդ Պետերբուրգու և Մոսկովու և ամենայն շրջակայից դոցին։ Զի ըստ որում հարկեալ եմք, ի բանից փրկչին մերոյ Քրիստոսի սիրել ըզմիմեանս, որպէս և ինքն սիրեաց զմեզ և եդ զանձն իւր ի վերայ մեր, վասնորոյ պարտականս վարկանիմք սիրոյ զմեզ՝ առ ի սիրել սիրով սրտիւ զմիմեանս, որք միաբան աշակերտեալքս եմք նոյնոյ երկնաւոր վարդապետին Քրիստոսի. և որք զմի և զնոյնն արբաք հոգի, մանաւանդ՝ որք ենթարկեալ եմք զպարանոցս հոգւոց մերոց քաղցր լծոյ կենարարին մերոյ։ Որով և ոչ զմերձաւորս միայն, այլ և զհեռաւորս, պարտ վարկանիմք նոյնոյ ճշմարիտ սիրոյն։ Քանզի՝ ոչինչ է արգել ստոյգ սիրոյ, ոչ հեռաւորութիւն տեղեաց, ոչ ուրոյնութիւն ազգի և լեզուի, ոչ փոփոխութիւն ժամանակի, ոչ դետ յորդեալ, ըստ դրեցելոյն, և ոչ որ ինչ նման է սոցին, քանզի հզօր է սէր։ Արդ սոյն ստոյգ և կատարեալ սիրով, զոր պարգևեաց մեզ Տէրն մեր, զդերապատիւ եղբայրութիւն ձեր սիրել ստիպէ ըզմեզ համբաւն բարելուր, զոր յարաժամ լսեմք զձէնջ։ Քանզի հոգեծին որդին մեր Գրիգոր արքեպիսկոպոսն, և այլք դրեալ էին մեզ զշնորհակալութիւնս յոլովս զսիրոյդ, որ զմերաղնեալս ամենայն որպէս զքոյն համարելով սիրես և խնամարկես հայրական գթով և սիրով՝ նաև ծանուցանեն մեզ զսէրդ ճշմարիտ զոր ունիս առ Աստուածաէջ Աթոռս մեր սուրբ և առ մերս նուաստութիւն, զորս և ցուցանես իսկ մերայնոցն յայդր եղելոց։ Ուստի և մեք այսու զմեզ պարտականս սիրոյ վարկանելով, սիրեմք սիրով ստուգիւ զցանկալի եղբայրդ մեր, որում թէպէտ ոչ տեսութեամբ և ոչ գրով մինչև ցայժմ չէաք ինչ ծանօթ, այլ այժմ բարի համբաւ առատ սիրոյդ և քաղցր մարդասիրութեանդ յարաքարշեաց զմեզ ի սէր բաղձալւոյդ։ Հայցեմ ուրեմն ի մեծապատիւ եղբայրութենէդ, զի և դուք առ մեզ զնոյն ստոյգ սիրոյ սերտութիւն երևեցուսջիք սիրանիշ գրով և արդեամբ, ունելով ի խնամս ձեր զմերազնեայսն առաւել քան զառաջինն։ Մանաւանդ առ սուրբ Աթոռս և առ մեզ յարամնայ սիրով զբարեկամութիւնս առնել, և զշնորհածին որդեակն մեր Գրիգոր արքեպիսկոպոսն իբրև զորդի ձեր վարկանել, և յայդր պատահելոց ձեզապատշաճ բանից նորին սիրով և հայրական գթով օժանդակել, որոյ աղաչաւ ոչ սակաւ շնորհակալ լինելոց եմ զձերդ սրբազնութենէն։ Եւ ի վերայ այսր ամենայնի, մի իբրև զօտարս զմեզ վարկանել, այլ իբրև զընտանիս, և զմերձաւորս, քանզի և մեք զսոյնս ունիմք առ ձեզ։ Մանաւանդ բոլոր ազգաւ մերով և համայն միաբանիւք Աստուածաէջ Գահոյս սրբոյ աղօթող եմք միշտ վասն կենաց և յաղթութեան աստուածապսակ և հանրախնդող+[27]) և ամենայն զօրապետացն և զօրացն, և վասն աիրահաստատ տէրութեան իւրոյ և Աթոռոյ, և ամենայն արքայական ժառանգութեան։ Զոր ամենաթագաւորն Քրիստոս՝ պերճ յաղթող և երևելի պահեսցէ միշտ և ընդ երկայն աւուրս արասցէ համդերձ բոլոր ժառանգաւորօքն և ժառանգակցօք և ամենայն պալատականօքն ի փառս ամենասուրբ անուան իւրոյ, ի պատիւ խաչին կենսատուի, ի բարձրութիւն եկեղեցւոյ իւրոյ սրբոյ, և ի պարծանս ամենայն հաւատացելոց, ևս առաւել մեզ տառապելոց։ Դարձեալ և այս յայտնի լիցի ձերդ պատուականութեան։ Զի Նփրեմ արքեպիսկոպոսն և այլք ոմանք զայթակղեալ ի սնոտի բանից խռովասիրաց ծանուցեալ են գրպարտութեամբ զմէնջ զբազում ունայն և տնհիմն բանս և նօքօք վրդովեալ զսիրտ նորին, վասնորոյ և մեք աղեր-

սական գրով առաքեցաք ի սպաս Նորին կայսերական մեծութեան, զԿարապետ և զԱբրահամ արքեպիսկոպոսունս ի վերայ Թիֆլիզու, հանդերձ երկուց տէրութեանց Օսմանցւոց և Պարսից մեզ շնորհեալ հրովարտակաց օրինակօքն և բազում թղթովքն ազգիս մերոյ, զորս ունի և ձերդ սրբազնութիւն տեսանել։ Եւ խնդրեցաք ի Նորին կայսերական մեծութենէն, զիրաւունսն արդարութեամբ զատել և մեզ ի զուր բռնաբարեցելոցս զբաւականութիւն տալ շնորհելով զբարձրագոյն դրամատն վերահաստատութեան մերս պատրիարգութեան։ Եւ ի ձերդ սիրելութենէն ես խնդրեմ ի բաց հեռացուցանել զլսելիս յայնպիսեաց և ձերով բարեզթութեամբն և եղբայրական անխարդախ սիրովն քաղցրացուցանել վերստին զմաքուր սիրտ ի վերայ մերս նուաստութեան և ի վերայ սրբոյ Աթոռոյս մերոյ, և զտկար և զցաւաշատ եղբայրս ձեր անմոռաց ունելով, սիրանիշ գրովդ և հզօր ձեռնտուութեամբդ ի մխիթարել և յուրախ առնել զմեզ փութալ, որք ի մէջ մարդատեսակ գայլոց՝ յարդիմք պէսպիսեօք տառապակրութեամբք։ Ողջ լեր ի Տէր Ամէն։

Գրեցաւ յամի կենարարին մերոյ Յիսուսի 1802. և ի յունուարի 31. ի սուրբ Աթոռս Էջմիածին։ Ի դաշտս Արարատեան։

ՃԻԸ. *Թուղթ ի Հաշտարխան առ Թաղոյ պարոն Դաւիթն յորդորումն ի սէր եւ ի հարազատութիւն։*

Եւ ընդ սիրապարգև ողջունաւաք օրհնութեան նամակիս, ծանուցումն եղիցի սիրելի և հոգևոր որդւոյդ մերոյ, և մշտահարազատ բարեկամիդ սրբոյ Աթոռոյս։ Զի յիւրաքանչիւր ժամանակի, մեք զմերն հայրական սէր և օրհնութիւն, ի ձեռն նամակաց յայտնեալ եմք զերազնիւ սիրելւոյդ մերում, բայց ի ձէնջ դնոցունց զանզրազարձն մինչ ցարդ ընկալեալ եմք երկիցս և գիտեմ, զի դուք ի զանազան գործս և յաշխարհային հոգս զբաղեալ զոլով՝ անձեռնհասս լինիք ի գրել։ Ահա հարկաղրեալ ի յառաւել սիրոյ մերմէ՝ վերակրկնեմք զթուղթս մեր արժանապէս. ըստ որում վկայեմ հոգւովս, և գիտեմ ստուգիւ, և Գրիգոր արքեպիսկոպոս հոգեծին որդին մեր պատմեալ է մեզ, որ դու աննենգ սիրով և ճշմարիտ բարեկամութեամբ կաս հաստատնապէս կապակցեալ ընդ Շնորհատու ծնողիս քոյ Աստուածաէջ Գահոյս, և մերս հոգևոր հայրութեան։ Որպէս և գրով նոյն սիրելի որդին մեր՝ քանիցս անգամ գրեալ է մեզ։ Ուստի՝ պատուիրեմ սիրով սիրելւոյդ իմում, ի դոյնն յարամնալ և հաստատուն կալ, և ի սիրոյ և ի հարազատութեանց և ի ջատագովելոյ զսուրբ Աթոռ. Շնորհատու ծնօղս քոյ և զմերս հոգևոր հայրութիւն անվերջանալի պահել զքեզ, զի զօրհնութիւնս մեր և շնորհս սրբոյ զահիս մշտապէս վայելելոյ արժանաւոր զտանիցիս։ Եւ՝ սակս ունայնաբանութեանց ոմանց խռովասիրաց՝ հարկաղրեալ առաքեցաք ի սպաս մեծի կայսերն հանդերձ բազում թղթովք ըղԿարապետ և զԱբրահամ արքեպիսկոպոսունսն մեր. զի զճշմարիտն և զստոյգն յայտնեսցեն մեծի կայսերն, և ի յերկիրդ զխաղաղութիւն արկցեն։ Բայց մինչ ցարդ կան ի Թիֆլիզ արգելեալ. զպատճառսն ոչ գիտեմք։ Վերջապէս խնդրեմ ի քումդ աստուածպաշտութենէ զբարեկամութիւնդ և զօգտախոհ և զշահաւէտ ձեռնտուութիւնդ հանապազ գրովք և արգեամբք մեզ երևեցուսցես, և զմեզ զվշտագնեալքս և զցաւալիքս ի սփոփել փութասցիս։ Այսպէս դիտելով քոյ, և զսիրոյ գիրդ, և զ՚ի յամենայնի ձեռնտուութիւնդ ի մէնջ անպակաս առնելով, ողջ լեր ի Տէր և զօրացեալ ի նոյնն, և Շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ և ընդ քոյսն, Ամէն։

Գրեցաւ ի 1802. և ի յունուարի 31 ի սուրբ Էջմիածին։

ՃԻԹ. *Թուղթ յԸզմիւռին, առ Աըրոյեան Առաքել աղայն ի պատասխանի օգոստոս 20 գրեալ թղթոյն:*

Եւ ընդ օրհնառաք սիրապարգև նամակիս, գիտութիւն լիցի քումդ պատուականութեան։ Զի՝ ի յօգոստոս 20 գրեալ շնորհա-

ւորական և միանգամայն ուրախական թուղթ արդոյ անձինդ քրիստոսասիրի մտերմի և հաւատարիմի, բերկրութեամբ սրտի՝ զուարճութեամբ ոգւոյ՝ օրհնութեամբ բերանոյ և լիալիր շնորհակալութեամբ չրթանց աչընկալեալ, ծանեաք զորդորութիւն աննենգ սիրոյ, զհաստատութիւն ճշմարիտ բարեկամութեան, և զջերմեռանդ կատարեալ որդիութիւն և զսրբոյ հոգւոյն անխզելի առասանաւ բաղազանութիւն ընդ հոգևոր մերս հայրութեան զերազնիւ բաղձալւոյդ իմոյ։ Եւ ի քրիստոսահիմն սուրբ տաճարիս ուխտիւք մանկամբք սորին օրհնեցաք զարժանիդ օրհնութեան, և զխնդրուածս հաճոյականս առ Բարձրեալն սակս երկարութեան ըղձալի կենաց, և լիալիր բարեպաստիկ աւուրց ձերդ պատուականութեան բարեյօժար կամօք խընկեցաք, առ դիւտ որոյ՝ գործ մեծ վարկանէ Արքայածինն Սաղոմոն։ Եւ զայս սիրանիշ թուղթ անդրադարձ շնորհաւորական բանից սիրոյդ փութապէս ազնիւ սիրելւոյդ իմոյ մատուցանել արժան և բարեպատեհ համարեցաք։ Որով և խնդրեմք ի դոյնն յարամնալ և անլեղլի կալ, և ընդդէմ ամենայն հողմոց հաստախարիսխ հիմնաւորել զկատարեալն սէր, և յիւրաքանչիւր պահու՝ բազում արդասեօք զայն բեղմնաւորելի պարծանս անուան ձերոյ և ի ցնծութիւն և ի մխիթարութիւն վշտակիր ոգւոյ մերում։ Իսկ զոր ինչ բան սակս առաջնորդութեան սիրելի որդւոյն մերոյ և արժանավայել առաջնորդին ձերոյ Մարտիրոս արհիապանծ եպիսկոպոսին զոր գրեալ էիք, և խնդրեալ վերահաստատել զնա և նորոգել զգործն, վասն որոյ և մեք կամակար մտօք ընկալեալ զայն, ի կատարել սիրով փութացաք։ Որև առաքեցաք ահա զառաջնորդութեան կոնդակն, և զնուիրակութեան և զկիւղն օրհնութեան սրբալոյս միւռոնն ես յետ սակաւ միջոցի լինելոց դմք աներկբայ։ Ուստի՝ տացէ Տէր զի նա որպէս մինչև ցայժմ, նմանապէս և յայսմհետէ հովուեսցէ զբանաւոր հօտսդ ողջմտութեամբ, և դուք յարգիցէք զինքն որդիական սիրով։ Արդարև, այդ խնդիր ձեր, և հոգւոյ մերում եղեն ախորժելիք։ Զի ինչ պանծայոյն, քան զոր հովիւն զհօտից, և հօտքըն զհովուէն զբարեկալութիւնս քարոզեսցեն։ Եւ մանաւանդ ճահ է և վայելուչ, որում դալզքան յարդանս մատուցանէք, զի և ընիկ հարազատ որդի սրբոյ Աթոռոյս, և սիրելի մեր ի վաղուց։ Եւ զիւրն անխարդախ սէր, որպէս ձեզ, նոյնպէս և մեզ եցոյց գործով, հասանելով յօգնութիւն ի հարկաւոր ժամու Շնորհատու ծնողիս իւրոյ, և մեզ, արդեամբքն սրբոյ Աթոռոյս, զոր փոխցալիւ լինեալ էր ի Կարին, և մեք ստացաք անտի, և ի դէտս Աստուածային տաճարիս ընկալաք բազում օրհնութեամբ և շնորհակալութեամբ։ Եւ զհոգւոցն վասըն ի Քրիստոս հանգուցեալ նախնեացն ձերոց և ծնողաց և զպահպանեալն վասն կենդանեացդ առաջի Աստուածաէջ սուրբ տեղւոյս ասացաք միաբանութեամբ հանդերձ, զորոց զհոգիսն անմահական լուսով զարդարեսցէ Տէր, և հաստընտիր տէրունի ժողովրդոցդ և լուսածնունդ զաւակացդ հաւատոյ մօրս ձերոյ զխաղաղական կեանս շնորհեսցէ։ Արդարև՝ ընտիր ժողովուրդք յԱստուծոյ օրհնեցեալք, և ընտիր հոգևոր պետ ի նմանէ և ի սրբոյ Աթոռոյս ի վերայ ձեր կարգեցեալ, և զորս միանգամայն շնորհեալ է ինձ Տէր ի զիւրութիւն սրտի իմոյ, որ տուայտիմ բազում և տգդի ազգի նեղսակրութեամբ։ Քանզի որպէս դուք երիցս անգամ ընծայեցիք զնախախնամ պտուղ հարազատ որդիութեան ձերոյ, գրելով նախ առ մեզ զշնորհաւորութիւնս բազմակնիք մահսէբրաւ յառաջ քան զամենեսեան, և երկրորդ՝ յատուկ թղթով զբանս կրկին շնորհաւորութեան և ցնծութեան։ Եւ երրորդապէս ի դուռըն օգոստափառ մեծի կայսերն Ռուսաց զբազում ջատագովութիւնս զմէնջ ընդդէմ սնոտի բանից Եփրեմ և Դանիէլ վարդապետաց, որպէս լսեմք և որպէս ի Պօլսոյ գրեալ էին մեզ։ Նմանապէս և արժանավայել առաջնորդն ձեր և սիրելին մեր Մարտիրոս շնորհափայլ և բարեմիտ արքեպիսկոպոսն զանդրանիկ պտուղ արդեանց սրբոյ Աթոռոյս յառաջ քան զամենայն գործակալսն և նուիրակունսն մեր մատոյց մեզ ի բարեպատեհ ժամու։ Որոցդ ամենից Տէր ինքն եղիցի վարձ յերկնակի կեանս ձեր։ Եւ հարկաւոր էր թէպէտ յառաջագոյն զպատասխանին թղթոց ձերոց փութապէս լինել, սակայն մահսէրաբեր Կարապետ վարդապետն մեր՝ անայան եկն, և մանաւանդ յայնմ միջոցի ի զանազան հոգս և յզբաղմունս գոլով, անձեռնհաս եղաք, ուստի՝ այժմ զժամ գտեալ գրեցաք։ Այլ արդ՝ համառօտ բանիւք և զանցիցն անցելոց զմեօք յիշատակելն պատ-

չաճ վարկանիմ աստէն։ Քանզի մինչ Եփրեմ վարդապետն ի յուղայն բանիցն անցելոց Դանիէլ վարդապետին պատրեալ ծանուցեալ էր մեծի կայսերն վասն մեր զոմանս ստայօղ բանս, զորս յիշելն վերստին անվայել համարիմ, վասնորոյ և մեք հարկաւոր համարեալ, առաքեցաք ի դուռն նոյն ինքնակալին զսիրելի որդիսն մեր զԿարապետ ե զԱբրահամ եպիսկոպոսունսն հանդերձ Օսմանցւոց թագաւորի և Պարսից շահի մեզ շնորհեալ ֆարմանի և բաղամի օրինակօքն, և ընդհանուր ազգիս Հայոց յայլ և այլ աշխարհս բնակելոց շնորհաւորական և բարեհաճական թղթովք ե մահսէրօք, և խնդրեցաք յարգարադատ Աթոռոյ նորին զիրաւունս արդար դատաստանաւ զատել ե բազում քննութեամբ զճշմարիտն ի ստոյն որոշել, և յայնժամ մեզ զբաւականութիւն տալ՝ շնորհելով զհրովարտակն վերահաստատութեան մերս պատրիարքական իշխանութեան։ Նոյնպէս և մեծի մայրաքաղաքին Կոստանդնուպօլսոյ՝ և՛ առ բոլոր իշխանապետսն ե իշխանսն գրեցաք զբաղում բանս ամենայն պարագայիւք, հեռի կալ ի չփոթից և ի խռովութեանց, որք հային ի տգեղութիւն անուան իւրեանց և ազգիս մերոյ, և մանաւանդ ի բոլորովին աւերութիւն խղճալի Տանս այսմիկ, և զգուշացուցաք ամենիցն թողուլ զխորհուրդն զայն, զոր խորհին թէ՝ Դանիէլն հաստատեսցի և հակաթոռ դիցէ և այլն. քանզի անկարելի է այնմ լինիլ։ Զի թէ կարելի ինչ իցէր ե օգուտ, նախնիքն ևս առնէին, բայց ոչ արարին, այն զի՝ օգուտն սակաւ է, և վնասն անթուելի։ Իսկ թէ՝ յայտնապէս զմեզ կամին անպատուել, և զԴանիէլն ի տեղի մեր ի սուրբ Աթոռոջս նստուցանել, մեք ոչ ներհակիմք կամաց նոցին թէպէտ, սակայն խոռամանկ պարսիկ են սոքա ընդորս բնակիմք. թարց զվերջինն ծծելոյ, զմեզ ի ձեռաց ոչ թողուն, և զայլ ոք ի ներս ոչ ընկալնուն. զօգուտն ընտրեսցեն ե ըստ այնմ արասցեն. զի մի գուցէ փոխանակ շինութեան, իսպառ քակման պատճառ լինիցին։ Եւս՝ գրեցաք, զի զարս հաւատարիմս յղեսցեն, և մեզ յանձնեցեալ իրացն հասու լիցին. և գիտասցեն թէ՝ մեզ զինչ են յանձնեալ, ե մեք որքան ինչ խարջեալ. զի մի յետոյ ինքեանք վատնեսցեն, և զկեղտ անունն ի վերայ մեր դիցեն։ Որպէս և վասն Դանիէլի կաթուղիկոսութեան ինքեանք խարջեցին, և զայն յանցանս ի վերայ մեր եդին։ Եւ զթղթոյ օրինակն, զոր յղեցաք ի մեծն Պօլիս առ իշխանապետսն, առաքեցաք առ սիրելի որդիսդ մեր, տեսանել, ուստի աստէն ոչ կրկնաբանեմ։ Ուրեմն՝ և քեզ անկեղծ սիրելւոյդ իմոյ ևս գրեմ և խնդրեմ, զի զմաքուր լսելիս ձեր ի բաց հեռացուցեալ յամենայն բանից դատարկութեանց ի սէր և ի բարեկամութիւն սրբոյ Աթոռոյս և մերս հոգևոր հայրութեան հաստատուն կայջիք, և ի ջատագովութենէ և ի յօգտակամ ջանացողութենէ անվերջանալի մնասջիք. և բանիւք և գրովք զճշմարտութիւն զոր կամին ծածկել արք յաչաղկոտք առ ամենեսին հրատարակեսջիք։ Եւ ի մեծն Պօլիս առ որս պատկանի համեմատ մերս գրուածոց գրեալ զգուշացուսջիք, և զմեզ ի ձեռաց թշնամեաց և նախանձոտաց ազատս արասջիք։ Որովք վարձուց մեծաց մշտապէս արժանաւորք գտանիջիք։ Եւ վերջապէս զսիրելի ե զհոգևոր որդին մեր և զարժանավայել առաջնորդ ձեր զՄարտիրոս արհիապանծ արքեպիսկոպոսն ի սէր և ի մարդասիրութիւն ձեր ունիցիք, ե յամենայն գործըս և ի բանս նորին օգնական և օժանդակ եղիջիք. քանզի և առ նա ցուցեալ պատիւն և յարգանքն կատարելապէս առ մեզ վերաբերին, զայլն ամենայն ի կոնդակէն ունիք տեղեկանալ լիապէս։ Այսպէս առնելով քոյ եղիցիս օրհնեալ յԱստուծոյ և ի մէնջ և Շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ, և ընդ քոյոցն, Ամէն։

Գրեցաւ ի 1802. և ի յունուարի ... ի յԱստուածակերտ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ՃԼ. *Թուղթ ի Պետրբուրղ առ Եկիմ Վասիլիչ Խաստատովն ըստ խնդրոյ Գրիգոր վարդապետին։*

Եւ ընդ սիրապարգև անդրանիկ օրհնութեան նամակիս, գիտութիւն լիցի ձերդ գերազնութեան։ Զի մինչ ցարդ ի հարկէ դիտացեալ էք զկոչմանէն մերմէ յայս աստիճան հովուապետութեան ընդհանուր ազգիս Հայոց, և զօծմանէն մերմէ ի յապրիլի 28 ի վերայ

սրբոյ Գահիս ղահակալ հաճութեամբ և ընտրութեամբ ազգիս մերոյ Աթոռակնոցս և երկրականացս, զորմէ կրկին ոչ լիշատակեմք։ Նւ մեք զմերս անդրանիկ օրհնութեան նամակ որպէս առ ամենեսին, նոյնպէս և առ մերազնեայ բոլոր ժողովուրդսն աստուածախնամ և կայսերապերճ երկրիդ գրեցաք յայնժամ ըստ մերս պարտաւորութեան։ Արդարև՝ արժան էր, և քեզ դերազնիւ սիրելւոյդ մերում զմերս հայրական սէր օրհնութեան թղթով յայանել ի ժամանակին, սակայն ի բազմապատիկ հոգս մեծի Տանս զոլով չկարացաք։ Բայց մինչ հարազատ որդին սրբոյ Աթոռոյս և սիրելին մեր Գրիգոր Նորապսակ արքեպիսկոպոսն ի Պետրբուրգու գրեալ է մեզ զազնիւ սիրելւոյդ մերոյ զմեծազոյն հաւատարմութիւն և զհաստատուն սէրն զորս ունիս ընդ սրբոյ Աթոռոյս և ընդ մեր հոգևոր հայրութեան, հանգոյն ի Քրիստոս հանգուցեալ երջանիկ նախնեացն քոց և ծնողաց, որք յատկական սիրով մեծապէս ջատագովք են եղեալ ըէնաշէն երկնաքատակ սրբոյ Գահիս, և սորին գահակալացն հոգելոյս հայրապետացն որոց զովութիւն յայտնապէս երևի ի լիշատակագիրս նոցին, վասնորոյ՝ և մեք հարկադրեալ ի հայրական սիրոյ մերմէ, զայս անդրանիկ օրհնութեան նամակ քեզ յատկեղ ցանկալւոյդ մերում դրել փութացաք։ Որով և խնդրեմք ի յԱստուածպաշտութենէ ձերմէ, զի զայդ կատարեալ և զանկեղծաւոր հաւատարմութիւնդ և զառատազոյն ջերմեռանդ սէրդ, զորս ունիս առ մեզ և առ Շնորհատու ծնօղ մայրս քո՝ աննուազելի և անպակասելի առնիցես և յայմհետէ։ Նւ ձերով օգտաւար և բարեխոհ ջանացողութեամբն և ուրախական դրովն մխիթարիչ մեզ եղիցիս, և սրտադիւրս արասցես, և ի բարեբեր ոստոց շառաւիղդ օրհնեալ, եր ջանիկ նախնեացն քոց նմանելով, միշտ շինութեան և պայծառութեան Աթոռոյս մեծի, և խաղաղութեան ազգիս, և մերոյ ցանկասցիս, որովք հանգոյն նոցին զշնորհս և զօրհնութիւնս սրբոյ տեղւոյս Քրիստոսաիջի և մեր վայելելոյ արժանաւոր գտանիցիս հանապազ։ Արդ՝ ի վերջոյ և զայս հարկաւորապէս ծանուցանեմ ձերդ վեհանձնութեան։ Զի ըստ որում Եփրեմ վարդապետն ի դատարկ բանիցն Դանիէլ վարդապետին խաբեցեալ, ծանուցեալ էր օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն զրադում ունայն և սնոտի բանս, և այնու վրդովեալ, զխաղաղ և զանվրդով սիրտ նորին, զորս վերստին լիշատակելն տաղտկութիւն բերէ մաքուր լսելեաց ձերոց։ Վասնորոյ և մեք հարկ անձին կալեալ առաքեցաք ի դուռն օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն զհարազատ որդիսն սրբոյ Աթոռոյս զԿարապետ և զԱբրահամ շնորհափայլ արքեպիսկոպոսունսն հանդերձ օսմանցւոց թագաւորի և պարսից շահի մ.գ շնորհեալ ֆարմանի և բազամի օրինակօքն, ազգիս մերոյ համահաճական և շնորհաւորական մահսարօքն և գրովք, և խնդրեցաք, արդարութեամբ և իրաւամբ զդատաստան արդար զատել և ճիշտ քննութեամբ վերահասու լինել իբաւին և ստոյն, և յայնժամ դբարձրագոյն զրամատն վերահաստատութեան մերս պատրիարգական իշխանութեան ամենողորմածաբար շնորհել, և մեզ զբաւականութիւն տալ, որ ի զուր բամբասիմք և այլն։ Արդեմն և ձեզ զերազնիւ ցանկալւոյդ մերում ևս գրեմք և խնդրեմք. զի զլսելիս ձեր յայնպիսի խառնափնդոր դատարկ բանից ի բաց հեռացուցեալ, ի սէր և ի հարազատութիւն փութասջիք, և յամենայն բանս և ի գործս մեր օգնական եղիջիք. և զճշմարտութիւն զոր կամին ծածկել արք յաչաղկոտք յայտնի կացուսջիք, և ի դրունս մեծամեծացն, յորս անունն մեր վատահամբաւել ջանան ոմանք, զխկութիւն և զուղիղն հրատարակեսջիք, և զվարձս բարիս և բազմապատիկս ի միոյն Աստուծոյ զճշմարտէն և լիրաւասիրէն ընկալջիք. և զհոգեծին որդին մեր Գրիգոր Նորապսակ արքեպիսկոպոսն ի խնամս ձեր ունելով ըզմարդասիրութիւն ցուցջիք։ Զայլն ամենայն ունիք ի Կարապետ և յԱբրահամ արքեպիսկոպոսացն մերոց գիտել, զորս յանձնեմ ի շնորհս ձեր՝ սիրով ընկալնուլ և քոյոց սիրելեացն գերապատիւ մեծամեծացն տեղւոյդ ծանօթացուցանել։ Այսպէս առնելով քոյ՝ և սիրոյ դիրդ ի մէնջ անպակաս ունելով, ողջ լեր ի Տէր Քրիստոս և զօրացեալ նովաւ և Շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ և ընդ քոյոցն ամենից, Ամէն։

Գրեցաւ ի 1802. և ի յունուարի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ԺԼԱ. *Թուղթ ի Պետրբուրգ առ Տէր Գրիգոր աւագ քահանայն օրհնութիւն եւ պատուէր, զի ի հարազատութեան կացցէ:*

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ, գիտութիւն լիցի հաւատարիմ որդիութեան քում։ Զի սիրելի որդին մեր Գրիգոր շնորհափայլ արքեպիսկոպոսն մինչ այսր էր, բերանօք պատմեալ էր մեզ զքոյդ մեծագոյն հարազատութիւն զոր ցուցեալ ես հանապազ հոգելոյս հայրապետին Տեառն Յովսեփայ և ի գնալն աստի՝ կրկին այժմ ի Պետերբուրգու դրեալ էր մեզ զջերմեռանդ սէրդ, և զորդիական մտերմութիւնդ, զորս ունիս առ շնորհատու ծնող Մայրս քոյ սուրբ Էջմիածին, և առ մերս հոգևոր հայրութիւն։ Առ որ ուրախացեալ կարի յոյժ, օրհնեցաք զարժանիդ օրհնութեան բազմաւ օրհնութեամբ։ Զոր Տէր օրհնելով օրհնեսցէ և զօրացուսցէ զքեզ հանդերձ բոլոր քոյայնովքն, և յամենայն փորձանաց փրկեսցէ, և բարեկաշող երջանկութեամբ պահեսցէ զքեզ, և ի խնամս և ի գթութիւնս իւր ունիցի, և ինքն իւրով ամենառատ ողորմութեամբն հովանի և վերակացու եղիցի ի վերայ սիրելի որդւոցդ մերում և ի վերայ բնաւից քոյայնոցն։ Ուստի զայս օրհնութեան, սիրոյ, և շնորհակալութեան նամակս մեր՝ քեզ Քրիստոսիւ և նորին շնորհիւն զօրացելոյդ գրել արժան և վայելուչ համարեցաք։ Որով և պատուիրեմք սիրելի և հոգևոր որդւոյդ մերում, զի որպէս մինչ ցարդ, նոյնպէս և յայսմհետէ զգոյն ջանացողութիւնդ, և զօգտասիրութիւնդ աննուազելի և հաստատուն ունիցիս առ Աստուածակերտ սուրբ տունս այս և առ մեզ, և քոյով հաւատարիմ որպիսութեամբն օգնական և օժանդակ եղիցիս մեզ և սիրելի որդւոյն մերոյ Գրիգոր արքեպիսկոպոսին յամենայն բանս և ի գործս մեր։ Եւ միշտ ի ջատագովելոյ և ի բարձրացուցանելոյ զանուն անյաղթելի սրբոյ Աթոռոյս և հայրապետական բարձր հոգևոր իշխանութեանս անվերջանալի մնասցես։ Որովք որպէս ի մարմնաւոր ամենաբարեպաշտ ինքնակալէ պսակեցար զգալի պսակաւ, նմանապէս և յերկնաւորէն վարձատրիլ ունիս անթառամելի պսակաւ, յերկակի կեանս քոյ ըստ հոգւոյդ և ըստ մարմնոյդ. և մանաւանդ ըստ մեծի հաւատարմութեանդ, և ի մէնջ և ի սրբոյ Աթոռոյս ժառանգելոց ես զգերագոյն յարգանս և զբազմապատիկ օրհնութիւնս հանդերձ մեծաւ գոհաբանութեամբք։ Դարձեալ և զայս հարկաւորապէս ծանուցանեմ սիրելի որդւոյդ իմոյ. զի մինչ Եփրեմ և Դանիէլ վարդապետքն ծանուցեալ էին զանազան սաայօդ բանս զդպարտութեան օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն, և զքաղցր սիրտ և զխաղաղ միտ նորին կայսերական մեծութեան վրդովեալ, վասն որոյ և մեք հարկաւոր համարեալ առաքեցաք առ բարձրագահ Աթոռ +զԿարապետ և զԱբրահամ արքեպիսկոպոսունսն զսիրելի որդիսն մեր, հանդերձ Օսմանցւոց թագաւորի և Պարսից Շահի մեզ շնորհեալ հրովարտակաց օրինակօքն, և Ազգիս Հայոց բարեհաճական մահսարօքն և այլ բազում թղթովք։ Եւ խնդրեցաք ի յԱրդարադատ աթոռոյ նորին, զիրաւունս արդարութեամբ առնել, և զճշմարիտն ի ստոյն որոշել, և մեզ զբաւականութիւն տալ, որ ի զուր ի բերան անկեալ բամբասիմք, շնորհելով ըզբարձրագոյն զրամատն վերահաստատութեան մերս պատրիարգական իշխանութեան։ Ըզնոյնն և քեզ սիրելւոյդ մերում գրեմ, զի ըզլսելիս ի րաց հեռացուցեալ, յայսպիսի ունայն բանից յաչաղկոտաց, ճշմարտութեան հետևողք լինիջիք, և զմեզ սրտադիւրս արասջիք, և ի վշտակրութեան մերում մխիթարիչ լինիջիք, զամենայն որպիսութիւնսն տեղւոյդ ամենայն պարագայիւք հանապազ մեզ ի դրել փութասջիք։ Զայլն թողում ի Կարապետ և յԱբրահամ արքեպիսկոպոսացն մերոց գիտել, զորս յանձնեմ ի սէր ձեր։ Այսպէս առնելով քոյ, և զսիրոյ գիրդ ի մէնջ անպակաս ունելով, ողջ լեր ի Տէր և զօրացեալ նովաւ և Շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ և ընդ քոյոցն ամենից, Ամէն։

Գրեցաւ ի 1802, և ի յունուարի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

Հայրական սիրով զողջոյն և զօրհնութիւն մատուցանեմ Տերամբ Քրիստոսիւ զօրացեալ ազնուամիտ և բարեսիրտ եղբօրն քոյ և հոգևոր որդւոյն մերոյ պարոն Յովհաննիսին, զոր և ի խնամս բարձրելոյն յանձն առնեմ, զի միշտ ի բարձրութենէ ի բարձրութիւն հասցէ, և յաչս մեծամեծացն քաղցր և սիրելի երևեսցի։

ՃԼԲ. *յԹուղԹ Իզմիր առ Ղօնճայեան պ. Գասպարն, օրհնութիւն եւ շնորհակալութիւն յաղագս մէկ արծաթապատ Աւետարանին զոր տուեալ էր Մարտիրոս վարդապետին:*

Եւ ընդ ամենառատ օրհնութեանս Աստուածայնոյ՝ ծանուցումն լիցի սիրելի և հոգևոր որդւոյդ մերոյ՝ և հարազատ զաւակիդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի Եսայիաս սրբազան մարգարէն ասէ թէ՝ Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն, այսինքն, ի տան Աստուծոյ։ Որոյ պատճառն է, զի որպէս որք ունիցին զմարմնաւոր զաւակ ի տան երկրաւոր թագաւորի՝ հանապազ վայելեն զխնամս նորին միջնորդութեամբ զաւակին իւրեանց, նոյնպէս և որք ունիցին զհոգևոր զաւակ՝ այսինքըն զբարի լիշատակ ի տան երկնաւոր թագաւորի, վայելելոց են զխնամս և զողորմութիւնս նորին ի ձեռն հոգևոր զաւակին իւրեանց աստ և յանանց կեանսն։ Արդ՝ ըստ այսմ և դու օրհնեալդ կամելով ունել զհոգևոր զաւակ ի տանս Աստուծոյ ի լուսակազմ սուրբ Աթոռոջս, տուեալ էիր յանուն սորա զմէկ արծաթապատ Աւետարան ի բարի լիշատակ քեզ և հանգուցեալ Քեռն քոյ բարեպաշտուհի Աննային. յանձնելով յաղր վայելչապատիւ առաջնորդին ձերոյ և իսկապէս սիրելւոյն մերոյ Մարտիրոս աստուածիմաստ վարդապետին և արհի եպիսկոպոսին։ Եւ նա հասոյց ի սուրբ Աթոռս և առ մեզ։ Զոր և մեք ընկալեալ սիրով՝ մատուցաք Աստուածաէջ սրբոյ տեղւոյս, և շնորհակալութեամբ բազմաւ օրհնեցաք զքեզ. և վասն հանգուցեալ Քեռն քոյ ասացաք դհողւոցն, և լիշեցաք ի փրկարար սուրբ պատարագուոջ ի հրաշափառ սուրբ Տեղւոջս։ Վասնորոյ և զայս թուղթ օրհնութեան դրեցաք առ սիրելիդ, զի միամտեալ ղուարճասցիս հոգևորապէս։ Արդ ուրեմն՝ հաճեսցի Տէր Աստուած սիրով և քաղցրութեամբ ընդ վերոյիշեալ բարի լիշատակն քոյ, և զփոխարէնն առաւելապէս հատուսցէ ի հոգի հանգուցեալ Քեռն քոյ բարեպաշտուհի Աննային. ներեսցէ մարդկօրէն սըխալանաց նորին, և հանգուսցէ զնա ի լուսեղէն երկնային առագաստին, ընդ իւղաբեր երջանիկ և սուրբ կանանցն դասելով և պսակաղարդելով։ Եւ դքեզ զբարեպաշտ սիրելիդ օրհնեսցէ և զօրացուսցէ հանդերձ համայն ընտանեօք քովք, և պահելով ի խնամս իւր՝ փրկեսցէ ի փորձութեանց ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, և զամենայն բանս և զգործս քոյ առ ի բարին յաջողեսցէ։ Եւ արդ՝ պատուիրեմք օրհնեցելւոյդ. զի ի կատարեալ բարեպաշտութեան քում որ առ Աստուած՝ հաստատուն կացցես, և զառաւելութիւն ջերմեռանդ սիրոյդ և որդիական հաւատարմութեանդ որ առ լուսածին Մայրս քոյ սուրբ Աթոռս և առ հոգևոր հայրութիւնս մեր՝ աննուազելի արասցես, և յօղտաբար բարեգործութեանցդ որ առ սա՝ մի պակասեսցիս։ Որովք միշտ ընկալցիս զվարձս բարեաց յԱստուծոյ, և ժառանգեսցես զհոգեպարար շնորհս սրբոյ Աթոռոյս և զօրհնութիւնս մեր հանդերձ քոյայնովքդ ամենիւք. Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս, և ի յունուարի ԼԱ. ի սուրբ Էջմիածին։

ՃԼԳ. *Թուղթ ի Կապէն Մատէնն առ Փիլիպպոս ամիրայն:*

Եւ ընդ սիրոյ և օրհնութեանս Աստուածայնոյ՝ ծանուցումն լիցի սիրելւոյդ իմոյ, և հարազատ զաւակիդ սրբոյ Աթոռոյս Միածնիջի։ Զի Կարապետ վարդապետ մահսարատարն՝ անվնաս ժամանեաց ի սուրբ Աթոռս ի նոյեմ՝ ԺԶ. բերելով զարքունական հրովարտակն, զֆէրմանն և զբերաթն յանուն մեր շնորհեալ, ընդ նմին և բազմակնիք մահսէրն համահաճութեան պատրիարգ վարդապետին, առաջնորդաց, բոլոր իշխանապետաց և իշխանաց, հասարակ ժողովրդոցն մեծի մայրաքաղաքին Կոստանդնուպօլսոյ և այլ երևելի քաղաքաց, ընդ որս և զբազում և զանթուելի շնորհաւորական թուղթս հոգևորականաց և աշխարհական դասուց, մինչև և թուրքաց մեծամեծ փաշայից։ Եւ մեք յարգանօք ընկալեալ զնոյն ինք զմահսարաբերն, և զթուղթսն, ուրախութեամբ սրտի և բազմապատիկ շնորհակալութեամբ լիաբերան օրհնեցաք դՔրիստոսահիմն սուրբ տաճարի ըղ-

լուսաւորչածին ժողովուրդսն մեր, որք միակամ յօժարութեամբ, հայելով ի յօգուտ և ի շինութիւն սրբոյ տանս, բաղում հաւանութեամբ ընկալեալ էին զմահսէրն միաբանից սրբոյ Աթոռոյս, և զօրհնութեան կոնդակսն մեր, և հաճեալ ի վերայ կաթուղիկոսութեան մերոյ, միահամուռ բազմութեամբ ի յԱստուածամայր սուրբ եկեղեցւոջն միաբերան Աստուած Շնորհաւոր արասցէ, ասելով մեծաւ խնդութեամբ կնքեալ էին զմահսէրն մեր, և իւրաքանչիւրքն ևս զյատուկ յատուկ շնորհաւորութեան և ցնծութեան զթուղթս գրեալ, որք կան այժմ առ մեզ ամբողջապէս, և այսպիսի յարգանօք առ մեզ ի սուրբ Աթոռս վերադարձուցեալ զմտհսարատարն։ Մեք ևս՝ ըստ պարտաւորութեան մերում գրեցաք զօրհնութեան և շնորհակալութեան թուղթս իւրաքանչիւրոցն ուրոյն ուրոյն։ Բայց այժմ հնչեցան առ մեզ զանազան ձայնք խռովութեանց և չփոթից, և զցաւս ի վերայ ցաւոց մերոց յաւելին, և պատճառեցին ի վշտալիսս և ի տառապեալս զզժուարտփարատելի տրտմութիւնս։ Քանզի՝ մեք զպատահեալքս այսպիսի վշտապատ ժամանակիս, և բնակեալքս ի մէջ գազանաբարոյ անլագ թշնամեաց, և անկեալքս ընդ ծանր լծով բիւրակերպ նեղութեանցն, զոր պարտէաք ի յօրհնեալ իշխանաց Պօլսոյ վայելել, զհակառակն կթեմք այսօր, քանզի վեր ի վայր տապալեալ կամին զմնացեալ խաղաղութիւն ի մեզ, և քար գայթակղութեան լինիլ ամենից, և պատճառ խռովութեան պարզամտաց, և քակման և ծանր ծանր վնասուց ողորմելի Տանս և մշտնջենաւոր խայտառակութիւն թողուլ յաշխարհի, և յամօթ և ի նախատինս Ազգիս մերոյ, ի մէջ զանազան օտար ազգաց։ Քանզի՝ զկնի օծման մերոյ՝ Դանիէլ արքեպիսկոպոսն եկեալ ՝ի Բալաղիտ, սկսաւ սուտ բարուրանօք կեղտոտել զանուն մեր, որպէս թէ մեք զարծաթեղէն անօթս եկեղեցւոյն խորտակեալ, տուեալ իցեմք բռնակալաց, և նօքօք յափշտակեալ զայս Աթոռ. և ինքնաշարժ ախտիւք յառաջ խաղացեալ, և հակառակ իցեմք կանոնաց սրբոց հարց. և ոչ ընտրանօք ազգին կոչեցեալ. և այլն։ Եւ զայս զրպարտութիւնս տարածեաց բանիւք և գրովք յայլ աշխարհս ի մեծն Պօլիս, յերկիրն ռուսաց, ի յԱշտարխան և յայլ տեղիս, և ի բանից նորին գայթակղեալ հիւսիսային երկրի նուիրակ Եփրեմ արքեպիսկոպոսին սկսեալ է և նա յանիր կողման զժողովուրդսն վրդովել, մինչև զայս անհիմն և սուտ համբաւ և ի լսելիս ինքնակալ մեծի կայսերն է հասուցեալ. և զքաղցր սիրտ նորին դառնացուցցեալ։ Եւ նոյն ողորմած կայսրն հաւատալով բանից նորին հրամայեցեալ է դեսպանին իւրոյ յանուն Դանիէլ արհւոյն հանել զֆէրմանն զոր ի հարկէ լուեալ էք և դուք։ Եւ ոմանք յիշխանացն մերոց ևս, սկսեալ են և զայլ բարեպաշտ անձինս ի կողմն իւրեանց ձգել, և զԴանիէլ արհին ի կաթուղիկոսութի.ն կոչել, և զմեզ անպատուել և հակաթոռ հաստատել և երկու հայրապետ ի վերայ միոյ փոքրիկ տեղի նստուցանել և զխղճալի Տունս այս, որ ի բաղում ամաց հետէ հաստատեցեալն է, և պայծառ մնացեալ, քակել և ամայի առնել, և յաւիտենական զվատ անուն թողուլ ինքեանց յաշխարհի։ Վասնորոյ գրեմ բարեպաշտ ճշմարտասէր և խաղաղարար իշխանապետիդ և սրտացաւ հարազատ որդւոյդ սրբոյ Աթոռոյս, և զամենայն ինչ առանց սըտութեան առաջի առնեմ և դու աննախանձ սրտիւ և պարզ հոգւով միտ դիր բանից իմոց։ Նախ՝ զմէնջ զոր ասեն թէ բռնութեամբ իցեմք, և ոչ ընարութեամբ ազգին, առ այդ ծանիցէ խոհեմութիւն քոյ, զի չէ ուղիղ։ Քանզի յանցեալ ամին մինչ գնացաք ի Պօլիս, բարեպաշտ իշխանքն և յարգելի ամիրայքն կամէին զի Դանիէլ արհին մնասցէ անդ ի պատրիարգութեան, և մեք յանձն առցուք լինել կաթուղիկոս, և ամենեքեան մանաւանդ զմէնջ պատշաճ տեսանէին, որք ոչ կարեն ուրաստ լինել, զի չեմք մոռացեալ մեք զայս բանս նոցա։ Ապա ի գալս ի սուրբ Աթոռս, ի ճանապարհին յամենայն քաղաքս, յորս հանդիպեցաք պատուելի իշխանացն մերոց, իւրաքանչիւրքն վասն մեր առաւել բարեպատեհ համարէին, և զմեզ ստիպէին։ Եւ յորժամ եկաք ի սուրբ Աթոռս, և հանդիպեցաւ որ Յովսէփ անուանեալ կաթուղիկոսն ի Թիֆլիզ վախճանեցաւ, և Դանիէլ արհին ի Թօխաթ յամեցաւ և ի պայմանադրեալ ժամուն չկարաց ժամանել ի սուրբ Աթոռս, յայնժամ բոլոր երկրացիք և իշխօղն երկրիս և մեծ մասն ի միաբանից և մերձակայ բնակիչք այլ և այլ կողմանց՝ բանիւք և գրովք զմեզ բռնադատէին լինել այցելու խղճալի Տանս և չթողուլ

յանչքութեռն. և ի հրաժարիլս և յոչ առնուլս յանձն զայս տաժանելի պաշտօն, եկին յայնմ միջոցի և բազմակնիք մահսէր ի Թիֆլիզու բնակչացն և մեծամեծաց և ի փոքունց, ի մերազնէից և յայլասեռից առ միաբանութիւնս մեր գրեցեալ, որով ծանուցեալ էին զկտակն հանգուցելոյն վասն փոխանորդութեան մերոյ և խնդրեալ էին սրտացաւօրէն փութով զոք տէր Տանս կացուցանել, զի մի իսպառ ամայասցի։ Եւ զայն կտակն հանգուցելոյն Յովսեփայ սրբազանին, որպէս մեզ նմանապէս և մեծի կայսերն ռուսաց ծանուցեալ էին, և նա հաւանեալ ընդ կտակն հանգուցելոյն, և ընդ հայրապետութիւն մեր հըրամայեալ էր զեսպանին տեղւոյդ յանուն մեր հանել տալ զֆէրմանն որ յայտնի է ձեզ։ Եւ իբրև զայն կտակս լուսահոգւոյն ես լուան բազմութիւնք միաբանից և իշխանաց և ժողովրդոց երկրիս, և տեսին համաձայն զկտակն իւրեանց, ապա պնդագոյնս սկսան ստիպել զմեզ ի յայս։ Եւ բաց յայսցելոց, զոյին՝ և այլ ես մեծամեծ վնասք, որք լինելոց էին, եթէ այլ ես մնայցէր սուրբ Տունս յանտիրութեան։ Եւ իմ հայեցեալ յառաջիկայ վնասսն, և ի համակամ խնդիրս և յստիպմունս սոցին, ոչ կարացի մնալ ի կամս իմ, և կամ առանց Աստուծոյ գիտել զայս, վասն որոյ թողի զիս ի կամս սոցին և յանձըն առի զծանրութիւն տիրականի լծոյս։ (Թէպէտ և չէի այսմ բաւական), յաղթեցին և ես յաղթեցայ, յուսալով նախ յամբաւ ողորմութիւնս ամենագթածին Աստուծոյ, (որ գիտէ զմաքսաւորս և զձկնորսս կոչել ի յառաքելութիւն) որ և զայս այսպէս նախատնօրինեալ արար և կատարեաց, և ապա ի յատուկ սիրելութիւն, ի հարազատութիւն, ի սրտացաւութիւն, յօգտաջանութիւն, և ի յամենայնի հզօր ձեռնտուութիւն յատկեղ սիրելեացդ իմոց, և հաւատարիմացդ։ Եւ զայսպիսի եղելութիւնսն գրեցաք յայնժամ միաբանութեամբ հանդերձ ի Պօլիս. և առ սիրելիդ մեր։ Եւ օրհնեալքն ես բազում յօժարութեամբ, ընկալեալ զմահսէրն, կնքեալ էին և յանուն մեր զֆէրմանն հանեալ, և չնորհաւորական թղթովք զուրախաճութիւնս իւրեանց ցուցեալ, և բազում ընդունելութեամբ զմահսարատարն մեր տռ մեզ վերադարձուցեալ, զոր տեսեր բարի աչօք քով։ Եւ աշխարհ ամենայն հնչեցաւ այս լուր և ամենայն ոք գիտաց զօծանիլն մեր ի հայրապետ ամենայն Հայոց։ Արդ՝ քաջայայտ է թէ՝ չեմք բռնութեամբ նստեալ, այլ հաճութեամբ ազգին ըստ օրինի նախնեացն կանոնացն, և եթէ կաշառօք կամէաք նստել, ոչ յայնչափ ժամանակ երկարաձգէաք, և ըզտունս անգլուխ թողուաք, և ոչ ի Պօլիս առ Դանիէլ արհին զնայաք ի հրաւիրակ, այլ զկնի Ղուկասու հոգելոյս Հայրապետին լինէաք և կաշառօք յափշտակէաք, որ քաւ և մի լիցի թէ՝ մտօք անգամ մի խորհեալ ես իցեմք։ Իսկ վասն արծաթեղինացն զոր ասեն թէ խորտակեալ եմք և տուեալ բռնաւորաց, առ այն բազմութեամբ միաբանից և երկրացւոց գրեցաք Պօլսեցւոցն և ցուցաք թէ սուտ են և զրպարտութիւնք. և առաքեցաք ձեռամբ Ղազար վարդապետին։ Եւ եթէ տարակուսին, կարեն զհաւատարիմ արս յղել և քննութեամբ վերահասու լինել։ Եւ զիարդ խղճմտանք իցէ, որ թարց քննութեան զմեզ ընդ բամբասանօք արկանեն, և ի մէջ աշխարհի վատահամբաւեն, ո՞չ ապաքէն խղճահարելոց են յետոյ, և ամօթ կրելոց։ Եւ երկրորդ՝ եթէ երկու կաթուղիկոս կամին նստուցանել, այդ անկարելի է, քանզի ի վերայ միոյ փոքրիկ ազգի երկու հայրապետ ոչ լինի։ Եւ եթէ լինիցէր, երանելի նախնիքն մեր ես առնէին, այնզի՝ օգուտն սակաւ է և վնասն անթուելի։ Ուրեմն, թողցեն զայդպիսի վտանգարար խորհուրդս, և զհետ խաղաղութեան երթիցեն։ Արդ՝ դու բարեպաշտօն իշխանապետդ մեր, որ տեղեակ ես այսմ անցիցն, և երկարապէս ծանուցաք սիրելւոյդ մերում, պարտիս քոյով խաղաղարար բարուքդ և ճշմարտասիրութեամբըդ, գրել առ իշխանսն Պօլսոյ և հանդարտեցուցանել զնոսա, և զայսոսիկ առաջի նոցա առնել, զի մի խայտառակ և ծաղր լիցուք ի մէջ ամենայն ազգաց, և խղճալի Տունս այս բոլորովին տապալեսցի. զոր Տէր մի արասցէ ի ժամանակս մեր լինիլ և մեզ տեսանիլ։ Իսկ թէ՝ վասն իմ են մրրիկդ այդ մեծ, և զիս կամին անպատուել և զԴանիէլ արհին ի սուրբ Աթոռս կաթուղիկոս նստուցանել, խնդրեմ զի գրեսցեն պարզապէս զմիտս իւրեանց մեզ, և մեք սիրով և քաղցրութեամբ հրաժարելոց եմք և չեմք բարի կամաց նոցին հակառակելոց և մանաւանդ չեմ ես մեծ քան զսուրբսն Աստուծոյ, և քան զնոյն ինքն զՓրկիչն աշխարհի,

որք ի զուր չարչարեցան և ի մահ մատնեցան, և չեմ լաւ քան զՑովնան, առեալ ընկեսցեն զիս ի ծով, և դադարեսցին ալիքդ, և յարուցմունքդ։ Բայց և զայս ծանիցեն օրհնեալ իշխանքն մեր զի խորամանկ պարսիկ են սոքա, թարց զվերջին թոշակն սրբոյ տանս զատարկելոյ, զմեզ ի ձեռաց ոչ թողուն, և զայլ ոք ի մերս ոչ ընկալնուն, թէև մեք բիւրիցս աղերսիցեմք հրաժարել։ Ահա յայտնապէս զամենայն ինչ գրեմ, զի անպարտ եղեց առաջի Աստուծոյ և ձեր ամենեցունց։ Զօղուան և զբարին խոհեսջիք, և այնպէս ողջուչութեամբ և չրջանկատ խոհեմութեամբ արասջիք զոր ինչ առնելոց էք, զի մի վերջինն չար լինիցի, և կործանման խղճալի և ողորմ արժանի տանս պատճառ լինիջիք։ Եւ վերջապէս խնդրեմ ի յօրհնեցելոցդ զի զչորս հաւատարիմ անձինս առաքեսջիք ի սուրբ Աթոռս զի վերահասու լինիցին մեզ յանձնեցեալ իրացն և գիտասցեն, թէ մեզ զինչ են յանձնեալ և մեք որչափ ինչ եմք խարջեալ։ Զի մի լետոյ ինքեանք վատնեսցեն, և զկեղտ անունն ի վերայ մեր դիցեն։ Որպէս և ի մերումս ժամանակի, ինքեանք արկին զմեծ կաչառն ի բերանս բարբարոսաց, վասն գայստեան Դանիէլ արհւոյն և կաթուղիկոսութեան նորին, և զայն յանցանս ի վերայ մեր եդին և մեք համբերութեամբ տարաք, և ոչ կամեցաք ըղմաքուր ունկնս ձեր զղուեցուցանել այնպիսեօք։ Ուրեմն՝ կրկին կրկին աղաչեմ զմեծահաւատ բարեկամդ մեր, կատարումն տալ խնդրուածոցս, և զմեզ այնու բարերարել, զի թէ մեռայց այնուհետև ուրախութեամբ իջից ի գերեզման, և սպասեմ ակնադէտ պատասխանւոյն ձերոյ, զսոյն ահա և առ հասարակութիւն բոլոր իշխանապետացն և իշխանացն մեծի մայրաքաղաքին Կոստանդնուպօլսոյ ղըրեցի։ Այսպէս գիտացեալ և զանդրադարձն թղթոյս առ մեզ փութացուցեալ, լեր ողջ ի Տէր, և զօրացեալ նովաւ ի պարծանս ազգիս մերոյ և ի մխիթարութիւն վշտապատ սրտի մերում. Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս, և ի յունուարի ... ի սուրբ Աթոռս։

ՃԼԴ. *Թուղթ օրհնութեան եւ սիրոյ առ Պլատոն Ալէքսանդրիչ Քնեազ Զուպովն ըստ խնդրոյ Գրիգոր վարդապետին:*

Եւ ընդ ողջունառաք օրհնութեան նամակիս յայտ լիցի ձերդ լուսափայլութեան։ Զի զմեծագոյն բարերարութիւնսն, զսէրն ճշմարիտ և զբազմապատիկ զերախտիսն զորս արարեալ է և ցուցեալ ձերդ գերազանցութիւն ի զանազան ժամանակս խղճալի Ազգիս մերոյ, որք յայլր կան և գոցին գերընտիր հովուին Տեառն Ցովսէփայ հոգելոյս սրբազան Հայրապետին, որ պարծիւր միշտ նոյն հանգուցեալն ի կենդանութեանն ձերովք բարերարութեամբն և բարեկամական գրովն, զամենն պատմեալ է մեզ սիրելի որդին մեր և հոգեծին զաւակն նորին Գրիգոր Նորապսակ արքեպիսկոպոսն։ Եւ մեր գիտացեալ այնու զմարդասիրութիւն և զօդտասիրութիւնն ձեր որ առ սուրբ Աթոռս մեր, և առ մեզ, և առ մերայինսն ամենայն, մեծաւ շնորհակալութեամբ և գոհունակութեամբ օրհնեցաք զարժանիդ օրհնութեան. զոր Տէր օրհնելով օրհնեսցէ և զօրացուսցէ զձեզ, և օր ըստ օրէ ի մեծագոյն փառս և ի ճոխութիւնս ածցէ զձեզ և հանապազ հաճոյ և սիրելի երևեցուսցէ զբաղձալիդ մեր յուչս խնամաշաա և ամենողորմած օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն և յամենայն կեանս ձեր հովանի և վերակացու լիցի ձերդ լուսափայլութեան իւրով արագահաս օգնականութեամբն, ի պարծանս տառապեալ Ազգիս մերոյ, և ի մխիթարութիւն վըշտակիր սրտի մերում պահեսցէ երկար և բարեբաստիկ կենօք և յաջողեալ աւուրբք, ուստի և զայս օրհնութեան՝ սիրոյ և շնորհակալութեան նամակս մեր գրեալ առ լուսափայլ ցանկալիդ մեր բարեպատշաճ համարեցաք, որովք և խնդրեմք յաստուածասիրութենէ ձերմէ, զի զգոյն սերտութիւն և ստուգութիւն սիրոյ, և զճշմարիտ բարեկամութիւն անպակասելի և աննուազելի պահեսցես միշտ և ի մեր աւուրս յԱթոռոյս մերոյ սրբոյ և ի մէնջ, և ի համայն մերազնեայցս, որք յայդ կոյս և յատկապէս ի սիրելի որդւոյն մերմէ Գրիգոր արքեպիսկոպոսէն, զոր յանձնեմ ի խնամս ձեր։ Եւ զքաղցր և զանվրդով սիրտ օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն, զոր ոմանք

խռովասէրք պղտորեալ են և վրդովեալ զանազան զրպարտութիւնս առնելով զմէնջ, վերստին ջերմացուցեալ և պարզեալ քաղցրացուսցես ի վերայ մեր և ի վերայ սրբոյ Աթոռոյս, զի զամենայն զսնոտի բանս այլոց ի բաց եղծեալ, մեզ բարձրագոյն զրամատն վերահաստատութեան շնորհեսցէ, որ կամք մինչ ցել չնչոյ մերում ջերմեռանդ հպատակութեամբ աղօթաւոր անդադար վասն բարեացապարտ և անգին կենացն նորին, ի քրիստոսահիմն սուրբ տաճարիս հանդերձ համախմբութեամբ միաբանից, Աստուածեան Գահոյս։ Որոց աղագաւ և մեք զԿարապետ և զԱբրահամ արքեպիսկոպոսունսն մեր առաքեալ եմք անտի առ բարձրագահ աթոռ օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն հանդերձ բաղում թղթովք, և խնդրեցաք զիրաւունս առնել ճշմարտութեամբ և զմեզ ամենողորմածաբար զբաւականութիւն տալ։ Որոց ի գալն յայդր մաղթեմք զի ըստ ամենայնի օգնական լինիջիք։ Եւ զմեզ, զսուրբ Աթոռս մեր հանապազ ի մտի ունիցիք, և ձերով ջանացողութեամբ և սիրով զրով ուրախ արասջիք զմեզ, որ տառապիմք բիւրակերպ նեղսակրութեամբք։ Ողջ լեր ի Տէր զօրացեալ միշտ կենսատու սուրբ խաչիւ նորին համայն քոյայնովքդ Ամէն։

Գրեցաւ յամի փրկութեան մերոյ ի 1802. և ի յունուարի ... ի լուսակառոյց Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին ի դաշտս Արարատեան։

ՃԼԵ. *Թուղթ ի Պետրբուրգ առ Սէրգէյ Լազրիչ Լաշկարովն օրհնութիւն եւ սէր ըստ խնդրոյ Գրիգոր վարդապետին:*

Եւ ընդ Աստուածապարգև օրհնութեանս, ծանիցէ ձերդ գերազանցութիւն։ Զի զմեծագոյն բարերարութիւնսն, զկատարեալ սէրն, և զբաղում ջանացողութիւնսն զորս արարեալ ես և ցուցեալ յիրաքանչիւր ժամանակի Տեառըն Ցովսէփայ հոգելոյս սրբազան Հայրապետին, գիտացեալ եմք մեք ի սիրելի որդւոյն մերմէ Գրիգոր արքեպիսկոպոսէն։ Եւ մանաւանդ այժմ ես ի Պետրբուրղու գրեալ էր մեզ զնոյնն մեծաւ շնորհակալութեամբ և գոհունակութեամբ։ Եւ մեր գիտացեալ այնու զջերմեռանդ սէրն և զօգտասիրութիւն ձեր, որ առ սուրբ Աթոռս մեր, և առ մեզ, և առ մերազնեայսն որք յայդկոյս, մեծապէս շնորհակալեալ զպատուականութենէ ձերմէ՝ օրհնեցաք զարժանաւորդ օրհնութեան հոգևոր և անանցանելի օրհնութեամբ։ Ուստի և զայս օրհնութեան, սիրոյ և բազմապատիկ շնորհակալութեան նամակս մեր գրեցաք, առ վեհանձնութիւն ձեր։ Տէր օրհնեսցէ, զբազմատենչ ցանկալիդ մեր, և զօրացուսցէ և օր ըստ օրէ ի գերագոյն փառս և յիշխանութիւնս ածցէ զքեզ, և հանապազ հաճոյ և սիրելի երևեցուսցէ յաչս խնամաշատ և ամենողորմ օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն, և յամենայն կեանս քո հովանի և վերակացու լիցի քեզ և քոյոցն ամենից։ Այժմ այս է խնդիր մեր ի ձերդ աստուածսիրութենէ, զի զնոյն առատութիւն և ստուգութիւն սիրոյ և ճշմարիտ բարեկամութիւն, զորս ունեցեալ էք ընդ հանգուցեալ Հայրապետին Տեառն Ցովսէփայ, առաւելապէս առ սուրբ Աթոռս, և առ մեզ, վերադարձուսջիք, անխարդախ և աննուազելի պահեսջիք միշտ զնոյն յԱթոռոյս մերոյ սրբոյ և ի մէնջ և ի համայն մերազնեայցս, և յատկապէս ի սիրելի որդւոյն մերմէ Գրիգոր արքեպիսկոպոսէն։ Եւ զի սիրտ օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն, զոր ոմանք խռովասէրք պղտորեալ են և վիրաւորեալ զզանազան զրպարտութիւնս առնելով զմէնջ, վերստին քաղցրացուսջիք ի վերայ խղճալի Աթոռոյս մերոյ։ Որոց աղագաւ և մեք զհողեծին զաւակսն մեր զԿարապետ և զԱբրահամ արքեպիսկոպոսունսն առաքեցեալ եմք առ բարձրագոյն աթոռ օգոստափառ մեծի կայսերն հանդերձ օրինակօք հրովարտակաց երկուց թագաւորացն Օսմանցւոց և Պարսից և այլ բաղում թղթովք, զորս և ձերդ գերազանցութիւն ունի տեսանել։ Եւ խնդրեալ եմք քննութեամբ զիրաւունս առնել, և մեզ զբաւականութիւն տալ, շնորհելով զբարձրագոյն զրամատն վերահաստատութեան մերս պատրիարգութեան։ Ուրեմն և ձերդ պատուականութեան զնոյն գրեմ և խնդրեմ, զի զլսելիս ի բաց հեռացուցեալ յամենայն բանից սնոտեաց, ճշմարտասիրութեամբ ձերով զմեզ ի ձեռաց թշնամեացն մերոց ապահովս արաս-

ջիք, և զանուն մեր, որ ի զուր կեղտոտի ի նոցունց, ի բերանոց նոցին կորղեսջիք, և ձերով ձեռնտուութեամբն մեզ օգնական եղիջիք, և սրտագիւրին լինիջիք, որովք զվայծս բարիս ե զբազմապատիկս ի լիրաւասիրէն Աստուծոյ ընկալջիք։ Զայլն ունիք ի Կարապետ և յԱբրահամ արքեպիսկոպոսացն մերոց գիտել լիապէս, զորս յանձնեմ ի յատուկ շնորհս և ի խնամս ձեր։ Այսպէս առնելով քոյ և զուբախական զիրդ ի մէնջ անպակաս ունելով, ողջ լեր ի Տէր և զօրացեալ ի շնորհս նորին ի պայծառութիւն սուրբ եկեղեցւոյ մերոյ և ի մխիթարութիւն վշտակիր սրտի մերում. Ամէն։

Գրեցաւ լամի կենարարին մերոյ, ի 1802, և ի յունուարի։ Ի լուսակառոյց Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին որ ի դաշտս Արարատեան։

ՃԼՁ. *Թուղթ ի մեծն Պոլիս առ պարոն Թամարով ղեսպանն, ընդ Ստեփաննոս արքեպիսկոպոսին:*

Եւ ընդ օրհնութեանս Աստուածային գիտութիւն լիցի ձերդ գերազանցութեան։ Զի մահսարարեբ Կարապետ արքեպիսկոպոսն ի նոյեմբերի 16, ժամանեալ ի սուրբ Աթոռս պատմեաց մեզ լիապէս զձերդ մարդասիրութիւն որ առ ինքն և զմեծագոյն սէրն, և զօգտարար ջանացողութիւն որ ս. ռ. հաւաստութիւն մեր, և առ սուրբ Աթոռս մեր. առ որ չունիմ երբեք զկարծիս, որպէս ի թղթիդ զոր գրեալ էիր մեզ, առաւելապէս ցուցեալ էիր զայնս, զոր օրհնութեամբ և անպատում սիրով ընկալեալ գիտացաք զամենայն սրտացաւօրէն և հաւատարիմ բարեկամութեամբ գրեալ բանսդ։ Ուստի՝ և մեր գիտելով աներկբայապէս զքոյդ խնամարկութիւն ի վերայ մեր ի լոյլ և ի գրոյդ, գրեցաք ե մեք երիցս զթուղթ օրհնութեան առ ձերդ վեհանձնութիւն շնորհակալելով յաղագս ամենայն բարելաւութեանց ձերոց ցուցելոց մեզ։ Բայց գիտեմ սաուղիւ որ չեն հասեալք առ ձեզ, որպէս՝ քաջ վերահասու եղաք մեք։ Քանզի արք նենգաւորք ի ձեռն կաշառաց փակեալ զճանապարհսն Ղարսայ և Բայազիտու. անհետ են արարեալ զամենայն թուղթսն մեր, զի մի հասցեն ի տեղիս իւրեանց, և սէր բարեկամութեան մերոյ հաստատուն արասցեն, զորս թողում առ ի չձանձրացուցանել զլսելիս ձեր։ Ցետ որոյ իբրև գիտացաք թէ Եփրեմ վարդապետն ի նախանձու բանից Դանիէլ վարդապետին պատրեալ ծանուցեալ է զբազում ինչ վասն մեր օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն ե նօքօք պղտորեալ զքաղցր սիրտ նորին, վասն որոյ հարկ համարեալ առաքեցաք յանցեալ թուոյ զեկտ. 19 զերկու եպիսկոպոսս զնոյն ինքն զմահսաբարեր Կարապետն և այլ ոմն Աբրահամ անուն առ նոյն ինքնակալն, զի զճշմարիտն ի ստոյն որոշեսցէ և մեզ բաւականութիւն տացէ, որ ի բերան անկեալ ի զուր բամբասիմք։ Եւ մինչ ցարդ տակաւին ի Թիֆլիզ կան նոքա սպասելով Կնօրինի հրամանին, բայց լուսամ թէ փութով զհրամանսն ընկալեալ երթիցեն խաղաղութեամբ առ արդարադատ և իբաւախոհ ամենողորմած ինքնակալն, և զցաւս մեր ծանուցեալ բերցեն զբարձրագոյն զրամատն վերահաստատութեան մերս պատրիարգական իշխանութեան։ Ի զեկտ. 6. ի Պետերբուրղու, գրեալ էր մեզ սիրելի որդին մեր Գրիգոր արքեպիսկոպոսն զձերդ գերազանցութեան ըզբարեպաշտութիւն և զճշմարտասիրութիւնն որովք ծանուցեալ էիք օգոստափառ ե ինքնակալ մեծի կայսերն, թէ ժողովուրդքն զ'ի պատրաստի եղեալ կաթուղիկոսն ոչ կամին փոփոխել, և զԴանիէլն ի տեղի նորա նստուցանել։ Եւ թէ՝ յօծեալ Հայրապետն ոչ կամին մեղանչել և մերժենալ, ե այլն. զոր իբրև գիտացաք արդարև բոլոր սրտիւ զկեանս երկարս և զհայցուածս պէսպէսս ի յերկնաւորէն վասն բաղձալի բարեկամիդ խնդրեցաք։ Տէր օրհնելով օրհնեսցէ զքեզ և զօրացուսցէ ե ի խնամս իւր պահեսցէ զքեզ հանդերձ բոլոր գերապատիւ ծաղկեալ քոյայնովքն, և յաչս օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն միշտ քաղցր և հաճոյ արասցէ։ Այլ արդ՝ մինչ Դանիէլ վարդապետն ի Կարին նստեալ զինքն կաթուղիկոս ձևացուցանէ, ե հակառակ սրբոյ Աթոռոյս և մեզ չարժի, վասնորոյ նորինորոյ բոլոր միաբանք սրբոյ Գահիս և ամենայն ժողովուրդք երկրիս միակամ ե միախորհուրդ

բազմակնիք ստորագրութեամբ զերիս՝ մահսէրս գրեցին, մինն առ Դանիէլ վարդապետն, զի թողցէ զսնոտի խորհուրդն իւր որով զոչինչ ունի շահել, այլ մանաւանդ վնասիլ, և յետս կացցէ յանպատեհ արշաւմանցն, ապա թէ ոչ՝ ունի մերժիլ ի միաբանութենէ սրբոյ Աթոռոյս։ Երկրորդն է առ Կարնեցիսն, զի ի բանս և ի գործս Դանիէլին հաղորդ չգտանիցին։ Իսկ երրորդն է առ ընդհանուր ազգ մեր, որով յայտնապէս զվերջին կամս իւրեանց յայտնեալ են, թէ զոր միանգամ ընտրեցաք և օծաք՝ բնաւին ոչ փոփոխեմք, և որչափ կենդանի է, այլում նորոգ կաթուղիկոսի պէտս ոչ ունիմք, ոչ Դանիէլին և ոչ ով ոք և իցէ։ Մեք ես՝ գրեցաք առ բոլոր ազգն մեր զերկու ինչ, կամ հանդարտիլ և կամ ըղձանապարհ ինչ ցուցանել մեզ, զորս ոչ երկարեմ ըստ որում ունիք տեսանել զայնոսիկ և բոլոր գրուածոցն մերոց հասու լինել։ Եւ զայսոսիկ թուղթսն յղեցաք ընդ սիրելի որդւոյն մերոյ Ստեփաննոս արքեպիսկոպոսին, զի ամբողջապէս բերցէ ի մեծդ Պոլիս, և զպատասխանի ի դոցունց առեալ վերադարձցի։ Զոր յանձնեմ յատկապէս ի շնորհս և ի խնամս ձեր ընկալնուլ սիրով առաւել քան զԿարապետ արքեպիսկոպոսն և հզօր ձեռնտուութեամբ և ամենաառատ մարդասիրութեամբդ ըստ ամենայնի ամենայն կերպիւ օգնական լինել, զի և ես առաւել վարձուց մեծաց և երկնաւոր օրհնութեանց արժանաւոր եղիցիս, քանզի այլ բարեկամ յաւուր հարկաւորութեան գործի՝ և մեք մինչև ցել շնչոյ մերոյ անմոռաց ունելով զյարգի բարեկամդ մեր՝ մնալոց եմք պարտաւոր յամենայն կեանս մեր ձերդ բիւրապատիկ բարեյթութեանց։ Զայլն ամենայն ունիք լսել ի հարազատ և ի հաւատարիմ որդւոյդ մերմէ յըՍտեփաննոս շնորհափայլ արքեպիսկոպոսէդ գիտել, զոր վերստին ի ճշմարիտ սէր սիրելւոյդ յանձնեմ։ Ողջ լեր քրիստոսազօր իշխան և մեծահամբաւ դեսպան և անախտ պատկեր օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն, ի պարծանս սրբոյ Աթոռոյս մերոյ և մանաւանդ ի մխիթարութիւն և ի յուրախութիւն վշտատար սրտի մերում. Ամէն։

ՃԼԵ. *Թուղթ ի Նորն Նախիջևան առ պալկովնիկ Յօհաննէս աղայն համեմատ Հաշտարխանու թղթոց մտացն։*

Եւ ընդ առատածաւալ օրհնութեան ողջունառաք նամակիս գիտութիւն լիցի բարեպաշտութեան ձերում։ Զի՝ լուաք որ յարգելի եղբայրն մեր Եփրեմ արքեպիսկոպոսն ի յունայն և յանհիմն բանից Դանիէլ վարդապետին պատրեալ զայթակղեալ է նախ ինքըն ի վերայ հայրապետութեան մերոյ և ապա զպարզամիտ օրհնեալ ժողովուրդսդ տեղւոյդ գայթակղեցուցեալ։ Որպէս թէ զարծաթեղէն անօթս եկեղեցւոյ խորտակեալ տուեալ իցեմք բռնակալաց, և կաշառօք և բռնութեամբ յափշտակեալ զայս Աթոռ. և ոչ ընտրութեամբ ազգին և աթոռակցացն։ Եւ զայս ունայնախօսութիւն հասուցեալ է մինչև և ի մաքուր լսելիս օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն, և նորին մեծամեծացն։ Եւ նորին կայսերական մեծութիւն ևս հաւատալով այնպիսի սնոտի բանից նոցին, հրամայեալ է դեսպանին Պոլսոյ թողուլ զընտրութիւնն ի կամս ազգին, և զԴանիէլն յառաջ կոչել, զորս դուք լաւապէսն գիտէք ի հարկէ։ Արդ զարծաթեղինացն զորոց ասէ թէ խորտակեալ եմք, և այլն, ըստ ամենայնի սուտ է և անիրաւութիւն մեծ զոր խօսին և ի հոգւոյ Նախանձու։ Ցիրաւի եթէ մինչև մէկ դրէմ արծաթ խորտակեալ եմք, ճշմարիտ են ասողքն, ապա թէ ոչ՝ գիտասջիք զի մեծագոյն թշնամութիւն է որք ունին յետոյ խղճահարիլ և զամօթ կրել, զի սուտն թարց հիման գոլով՝ ոչ կարէ հաստատիլ։ Եւ զոր բռնութեամբ և կաշառօք ասեն՝ զիարդ կարելի է այդմ լինել, որ մեք բիւրաւոր անձանց զմահուէրս և ըղձութուղթս ունիմք ի ձեռին մերում և ի զանազան աշխարհս բնակեալ Ազգիս Հայոց համահաճութիւնն ընդ մեզ է։ Քանզի յանցեալ ամին մինչ գնացաք ի մեծն Պոլիս սակս ընտրութեան կաթուղիկոսի, մեծամեծ ամիրայքն մանաւանդ զմէնջ պատշաճ զատէին և զմեզ յորդորէին։ Եւ իբրև հանգուցեալ Յովսէփ սըրբազանն հզօր գտեալ քան զամենեսին ինքն անուանակոչեցաւ կաթուղիկոս, յայնժամ հընազանդեցան այլքն և զմեզ կացուցին պատրիարգ ինքեանց՝ իշխանքն մեծի Պոլսոյ։ Եւ

ի ծափել անդ զանազան չփոթից, թողեալ զպատրիարգութիւն վերադարձաք ի սուրբ Աթոռս։ Եւ ի ճանապարհին յամենայն քաղաքս յորս հանդիպեցաք մերազանց, ամենեքին զըրեթէ՝ վասն մեր վայելուչ համարէին զայս կոչումն, մինչև և այլազգիք ես։ Ապա մինչ պատահեցաւ որ Յովսէփ անուանակոչեալ կաթուղիկոսն ի Տիփլիզ վախճանեցաւ, և Դանիէլ արքեպիսկոպոսն ես ի Թօխատ մնաց, և միարանք և երկրացիք և այլ և այլ հեռաւոր և մերձաւոր կողմանց բնակիչք գրովք և բանիւք զմեզ յորդորել սկսան, յորում միջոցի և Թիֆլիզու բնակիչքն բազմակնիք մահսէրաւ ծանուցին զբանիւ կտակն Յովսէփայ հանդուցելոյն վասն մեր և խնդրեցին ի միաբանից և յերկրականացս փութով զոք Տէր Տանս կացուցանել սակս զանազան վնասակար պատճառաց, զի մի իսպառ խղճալի Տունս այս ամայասցի, յորոց պատճառաց և իբրև կրկին զմեզ սկսան բռնադատել, յայնժամ և մեզ ի վերին ակնարկութենէ Տեառն Աստուծոյ համարելով, յորոյ ձեռին է սիրտ ամենեցուն, և տերև մի՝ ի ծառոց ոչ անկանի թարց նորին ակնարկութեան և մանաւանդ վստահանալով առաւել ի բանս իշխանացն Պօլսոյ, զորս ի մտի ունէաք, յանձնառաք զայս գործ. ապաւինելով նախ յամենազօր բազուկ տիեզերաց կառավարչին, (որ զիտէ զանարգս և զձգնորսս կոչել ի յառաջելութիւն), և ապա՝ ի ջանացողութիւն և ի հարազատ որդիութիւն բարեպաշտ իշխանացդ մերոց։ Եւ բազմակնիք մահսէրաւ զայսպիսի զեղելութիւնսն զկնի օծման մերոյ ծանուցաք ընդհանուր Ազգիս մերոյ. և առաքեցաք ձեռամբ սիրելի որդւոյն մերոյ Կարապետ նորապսակ եպիսկոպոսին։ Եւ օրհնեալ ամիրայքն և ժողովուրդքն մեծին Պօլսոյ ես հաւանեալ ընդ ընտրութիւն մեր, զֆէրմանն յարքունական դրանէն հանեալ էին, և զմահսէրն մեր ուրախութեամբ սրտի կնքեալ։ Բաց ի յերկուց և յերից անձանց։ Եւ բազում յարդանօք զմահսէրասարն առ մեզ վերադարձուցեալ, և իւրաքանչիւրքն ես յատուկ յատուկ շնորհաւորութեան թուղթն էին գրեալ մեզ, զորս ունիմք այժմ առ մեզ։ Եւ ուստի է յայտ թէ բռնութեամբ է և կաշառօք, և ոչ հաճութեամբ ազգին և աթոռայնոցս։ Զայսոսիկ վասն այն սակաւ ինչ երկարութեամբ գրեցաք, զի գիտացեալ զրանին ճշմարտութիւնն անվրդով մտօք ի սէր և ի բարեկամութիւն սրբոյ Աթոռոյս հաստատուն կացցէ Ձերդ աստուածպաշտութիւն։ Այլ արդ՝ որովհետև պղտորեալ էր զսիրտ օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն, նոյն Եփրեմ վարդապետ եղբայրն մեր, վասնորոյ հարկ համարեալ առաքեցաք ի դուռն նորին կայսերական մեծութեան ըզԿարապետ և զԱբրահամ շնորհափայլ եպիսկոպոսնսն, հանդերձ Օսմանցւոց թագաւորի և Պարսից Շահի մեզ շնորհեալ ֆարմանի և բազամի օրինակօքն, և բազմաց հոգևորական և աշխարհական դասուց մեծին Պօլսոյ, պատրիարգին առաջնորդաց իշխանաց, և ժողովրդոց, մինչև և թուրքաց փաշայից և խանից, և այլ երևելեաց մերազանց և օտարազգեաց զանազան շնորհաւորական և բարեհաճական թղթովք և մահսէրօք, զորս և սիրելիդ իմ տեսանելոց ես և իրաւացի զբանս մեր համարելոց, և գիտելոց յայնժամ թէ՝ իզուր զմեզ ի բերան առեալ բամբասեն, և զանուն մեր կեղտոտել ջանան, զորս՝ թողում ի կամս խղճմտանաւորաց խոկալ և խղճահարիլ, և խնդրեցաք ի յարդարադատ աթոռոյ նորին կայսերական մեծութեան զճշմարիտն ի ստոյն որոշել և մեզ զբաւականութիւն տալ, շնորհելով զգրամատն վերահաստատութեան մերս պատրիարգական իշխանութեան։ Ընդ որս և յամենայն քաղաքս օրհնեալ նահանգին ռուսաց գրեցաք առ մերազնեայսն կոնդակօք և զբանս չարասիրաց ունայնացուցեալ, յորդորեցաք զամենեսին անփոփոխելի ջերմեռանդութեամբ և մեծահաւատ բարեպաշտութեամբ կալ մնալ ի սէր և ի հաւատարմութիւն սրբոյ Աթոռոյս և մերս հոգևոր հովուութեան։ Նոյնպէս և առ բոլոր իշխանսն մեծի մայրաքաղաքիդ Կոստանդինուպօլսոյ գրեցաք ահա կրկին զի զլսելիս իւրեանց ի բաց հեռացուցեալ յայնպիսի տաղտկացուցիչ բանից սնոտեաց, ջերմասցին ի վերայ սրբոյ Աթոռոյս։ Եւ զխորհուրդն չար և վնասաբեր, զոր խորհին ոմանք իբրու թէ Դանիէլն հաստատեսցի, և ընդդէմ մեր հակաղինեալ հակաթոռ դիցէ և այլն, թողցեն և ի մտաց իւրեանց իսպառ բարձցեն, զի անհնար է այնմ լինել։ Եւ զորոմն չար՝ զոր ամենաչարն սատանայ կամի սերմանել յազգս Հայոց՝ ի բաց խլեսցեն։ Եւ երկնաւոր խաղաղութեամբն Յիսուսի զարդարեալ զհեա չի-

նութեան խղճալի Տանս, և բարեհամբաւութեան ինքեանց և հանրաշահ օգտից եղիցին։ Քանզի՝ յայնպիսի ներհակութեանց ոչինչ բարի յառաջանալ եթէ ոչ բաղում և անթուելի մեծամեծ վնաս սրբոյ Տանս, և մշտնջենաւոր խայտառակութիւն Ազգիս ի մէջ այլակրօնից։ Ուստի և քումդ գերազնութեան գրեմք և խնդրեմք զի և դա նախապէս խոտան համարեալ զայնպիսի բանս խռովասիրաց, ըղպարզ սիրտ քոյ ի յըստակութեան պահեսցես յամենայն պղտորութեանց, և մի զհաւատ ընծայեսցես երեխայական ծանակութեանց նոցին։ Եւ երկրորդ գրով և բանիւ զխաղաղութիւն սերմանեալ յամենեսին հանդարտեցուսցես դքարեմիտ ժողովուրդսն աստուածապահ նահանգիդ, և ի ճշմարիտ բարեկամութենէ և ի կատարեալ սիրոյ և ի հաւատարմութենէ զորս մինչ ցարդ ունեցեալ ես ընդ սրբոյ Աթոռոյս լուսատու ծնողիս քոյ և ընդ երջանիկ Գահակալսն սորին, աննուազելի մնասցես։ Եւ քոյով օգտակամ և բարեջան որդիութեամբդ յամենայնի մեզ օժանդակ և նպաստամատոյց լիցիս։ Եւ սիրաշաղկապ գրովդ մեզ վշտացելոցս ազդի ազդի տուայտանօք զգիւրութիւն սրտի և զմխիթարութիւն ոգւոյ մատուսցես։ Որովք վարձուց բազմաց և Աստուածային օրհնութեանն մշտապէս արժանաւոր գտանիցիս։ Իսկ զայլ ամենայն լիալիր որպիսութիւնսն խղճալի Աթոռոյս և տառապելոցս ունիս տեղեկանալ ի Կարապետ և յԱբրահամ արքեպիսկոպոսացն մերոց, զորս յանձնեմ ի յատուկ խնամս և ի շնորհս ձեր օգնական լինել նոցա յամենայն գործս իւրեանց։ Այսպէս առնելով քո եղիցիս օրհնեալ ի բարձրելոյն և յամենայն սրբոց նորա և ի մէնջ, և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի զօրավիգն քեզ օրհնեցելոյդ ի Տեառնէ և ի քոյոցն ամենից, Ամէն։

Գրեցաւ ի 1802 և ի յունուարի ի սուրբ Էջմիածին։

ԺԼԸ. *Թուղթ ի մեծն Պօլիս առ Ազնաւուրեան մահտեսի Գալուստ ամիրայն եւ Սուրենեան Մուրատ ամիրայն:*

Եւ ընդ օրհնութեանս աստուածայնոյ գիտութիւն լիցի սիրելեացդ մերոց և մշտահարազատ որդւոցդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի Կարապետ վարդապետ որդին մեր ժամանեաց ի սուրբ Աթոռս ի նոյեմբերի ԺԶ. բերելով զարքունական հրովարտակսն և ըղբարեհաճական մահսաբս օրհնեցելոցդ, և զայլ բաղում շնորհաւորական թուղթս այլ և այլ կողմանց բնակչաց, և մեք սիրով ընկալեալ օրհնեցաք առ հասարակ զլուսաւորչածին ժողովուրդսն մեր, որք միակամութեամբ հաւանեալ էին ընդ այս մեր կոչումն յԱթոռ կաթուղիկոսութեան Ազգիս Հայոց. և ըստ պարտաւորութեան մերում գրեցաք զսիրոյ և զօրհնութեան թուղթս առ ձեզ, շնորհակալելով զձէնջ, և յուսամք թէ ցարդ հասեալք իցեն առ սիրելիսդ մեր։ Բայց այժմ հնչեցան ի լսելիս մեր զանազան ձայնք չփոթից և տեղեկացաք տարաձայնութեան ձերոյ, և տարագրութեան պատրիարգ վարդապետին, և այլ անցից։ Եւ գիտացաք, որ ի բանից խռովասիրաց խաբեալ ձեր գայթակղեալ էք ի վերայ մեր, որպէս թէ զարծաթեղէն զարդս եկեղեցւոյն խորտակեալ իցեմք և տուեալ պարսից և նոքօք յափշտակեալ զայս Աթոռ և ոչ ընտրութեամբ, և հակառակ իցեմք օրինացն Աստուծոյ և սրբոց հարց և ինքնաշարժ ախտիւք յառաջ մատուցեալ զանձնս և ոչ հաճութեամբ բազմաց։ Ցորոց ազգաւ զայլ ոք կամիք ընտրել, և ի սուրբ Աթոռս, կամ յայլ ուրեք նստուցանել և մեզ հակառակիլ, և մշտնջենաւոր խայտառակութիւն թողուլ յաշխարհի ի նախատինս Ազգիս մերոյ, յայլասեռից և այլոց։ Առ որս գրեմք և ստուգիւ զիրսն առաջի առնեմք ձեզ սիրով, և դուք երկիւղիւն Աստուծոյ, աննախանձաբար միտ դիք աննենգ և անխարդախ գրուածոց մերոց։ Նախ, չեմք բռնութեամբ յափշտակեալ, այլ ըստ կանոնաց սրբոց հարց, հաճութեամբ ընտրեցեալ, քանզի՝ մինչ յայդր ի Պօլիս էաք յանցեալ ամին, դուք բարեպաշտօն իշխանքդ, և անուանի ամիրայքդ կամէիք, զի Գանիէլ Արհին մնասցէ յիւրում պատրիարգութեան, և մեք եղիցուք այցելու սրբոյ Տանս, որում ոչ կտրէք դուք ճշմարտասէրքդ ուրաստ լինել, և եթէ մոռացեալ իցէք զայս բան ձեր, սակայն մեք չեմք մոռացեալ և միշտ ի մտի ունիմք և ունէաք։ Եւ ի յելանելս այտի, և ի գալս դէպ առ սուրբ Աթոռս, ի ճանապարհին յամենայն քաղաքս յորս հան-

դիպեցաք երեւելեացն Ազգիս, ամենեքեան մանաւանդ զմեզ յորդորէին յանձն առնուլ և զմէնջ պատշաճ դատէին մինչև ե օտարացեգք ես զալս ասէին մեզ։ Ապա՝ յորժամ եկաք ի սուրբ Աթոռս, Յովսէփ անուանեալ կաթուղիկոսն ի Թիֆլիզ վախճանեցաւ, և Դանիէլ արքեպիսկոպոսն ի Թօխատ յամեցաւ և ի պայմանեալ ժամանակին չկարաց գալ և միաբանք և երկրացիք և իշխողն Երևանայ և բնակիչք այլ և այլ մերձակայ կողմանց զմեզ բռնադատէին լինել Գահակալ։ Ցորում միջոցի և ժողովուրդքն Թիֆլիզու բազմակնիք մահսէրաւ ծանուցին զբանիւ կտակն Յովսէփայ հանգուցելոյն վասն մեր և խնդրեցին ի միաբանից և յերկրացւոցս՝ փութով զոք Տէր Տանս կացուցանել, զի մի խպառ ամայասցի։ Յայնժամ և մեք հակադրեալ յանձն առաք, վստահանալով առաւել ի բանս օրհնեցելոցն տեղւոյդ, և ի վերին ակնարկութեանցն տնօրինեալ կարծելով և յուսացաք թէ՝ և ձեզ հաճոյ թուին, տպա թէ ոչ չի փոյթ էր մեզ ձեռներէց լինել յալս անտանելի գործ։ Այլ՝ բացէ ի բաց հրաժարելոց էաք և զօձիս պատառելոց ի ձեռաց նոցա։ Որպէս զայսոսիկ յառաջագոյն քանիցս անգամ գրեալ եմք սիրելեացդ, և հաւատարմացուցեալ, թէև դուք ոչ անսացիք բանից մերոց, և հակառակամարտիցն ունայնախօսութեանց առաւել միտ դընէք, զորս թողումք ի բարի խղճմտանս ձեր, Նա՝ եթէ բռնութեամբ և կաշառօք կոմեցեալ էաք յափշտակել, դիւրին էր զայն զկնի Ղուկասու հոգեւոյս Հայրապետին առնել, որքան և մի լիցի մտօք անգամ ես խորհիլ. միայն ամենատես ակն ի բարձանց տեսանէ և գիտէ թէ ով է կաշառատուն. մեք թէ խուրճինով ոսկին ընդ ինքեան շրջեցուցանօղն որում և ի մարդկանց՝ բազում են վկայք, թող թէ մեք լռեմք և՛ ոչ նոցա ի գիր արձանացուցանեմք։ Երկրորդ՝ զարծաթեղինացն, զորոց ասեն թէ՝ խորտակեալ եմք և այլն։ Ըստ ամենայնի սուտ է և թշնամութիւն, զի իրք, որք դաւթարաւ յանձնին ումեք, յառաջ քան ըղքննութիւնն աւելորդէ զայլ ինչ եղրակացուցանել։ Գոհութիւն Աստուծոյ, որ մեզ յանձնող անձինք կենդանի գնին, և դեֆտէրքն ես ամբողջապէս պահին։ Ցիրաւի՝ եթէ մէկ տրէմ արծաթ խորտակեալ եմք, անմեղք են զրպարտօղքն և մեք պարտպաւորք առաջի Աստուծոյ և մարդկանց, ապա թէ ոչ՝ ծանիջիք, զի ատելութիւնք են և հոգւոյ նախանձու շարժեալք և ի վերայ մեր յարուցեալք։ Զայսմանէ ես՝ ունիմք բազմիցս ձեզ գրովք յիշատակեալ, ոչ կամիմք ուստի՝ աստէն կրկին երկարաբանել։ Երրորդ՝ ի վերայ միոյ փոքրիկ ազգի դժուարին է երկու կաթուղիկոս լինել զորս խորհէքդ դուք։ Քանզի՝ եթէ կարելի լինիցէր, յառաջ քան զմեզ՝ երջանիկ նախնիքն ձեր առնէին և հաստատէին, և մեք տեսանէաք ապա ուրեմն անկարելի է. այնպէս օգուտն սակաւ է, և վնասն անթուելի, զորս դուք քան զամենեսեան լաւապէս գիտէք, և չէք կարօտ մերս առ ձեզ զգուշութեան։ Եւ չորրորդ՝ եթէ կամիք յայտնապէս մեզ հակառակել, և ատել, և չընդունել, և զայլ ոք ի տեղի մեր ի սուրբ Աթոռոջս նստուցանել ձեզ կաթուղիկոս, և վասն իմ են մրրիկդ այդ, և յարուցմունքդ և խռովութիւնքդ, ամէն ասեմ ձեզ՝ ես չեմ մեծ քան զՅովնան, առէք զիս և ընկեցէք ի ծով, և դադարեսցին ալիքդ։ Քանզի՝ բնաւ ոչ կամիմ յայս պատիւ, եթէ դուք օրհնեալքդ և հաստատութիւնքդ սրբոյ Աթոռոյս և սրբոց խղճալի վանօրէից և եկեղեցեաց մերոց զայթակղիք ե խախտիք։ Վասն որոյ՝ ահա այսու գրովս ուխտեմ ձեզ և հաւատարմացուցանեմ զբանս իմ, և զկամս իմ բոլորովին ի բարեպաշտ և ի խղճմտանաւոր իշխանսդ ապաստան առնեմ, զի որպէս և կամիք, զինչ ե հաճիք, և որով կերպիւ զինէն խորհիք, ըստ այնմ առանց խոտոբելոյ յաջ- և յահեակ արարից ե զոր ինչ և գրեսջիք, յօժարութեամբ սրտի ընկալեալ զկատարումն տացից, միայն թէ՝ դուք խաղաղասջիք և խռովութիւնքն և աղմուկքն հանդարտեսցին։ Քանզի՝ բարի կամաց ձերոց և դրութեանց ես ոչ ներհակիմ, և պատճառ քակման խղճալի Տանս և մեծամեծ վնասուց ոչ լինիմ, եղիցի սուր Տեառն Ամենակալի ի վերայ իմ, ե դուք փրկեալք, և ապրեալք ի պատուհասից իբրև ժողովուրդ արդար։ Բայց և զայս բազում քննութեամբ խորհեսջիք։ Զի անյազ տգրուկ, և խորամանկ պարսիկք են սոքա ընդ որս բնակիմք, և միշտ այսպիսի խռովարար լրոց սպասեն, զի յագեսցին։ Եւ առանց դատարկելոյ զողբոց արժանի Տունս՝ զմեզ ի ձեռաց ոչ թողուն, և զայլ ոք ի ներս ոչ ընկալնուն, թէև՝ մեք բիւրիցս աղերսի-

ցեմք. զայս քաջ գիտացէք և աննենգ մտօք ծաներուք զոր ինչ գրեմս։ Վերջապէս՝ խնդրեմ ի յաստուածսիրութենէ ձերմէ, և սիրով սուրբ հոգւոյն աղաչեմ, զի ի ձէնջ երկու հաւատարիմ անձինս առաքեսջիք անյապաղ զալ ի սուրբ Աթոռս, զի վերահասու եղիցին մեզ յանձնեցեալ իրացն, և գիտասցեն զորքանութիւնն և ստուգութեամբ քննեսցեն թէ մեզ տէֆթերով որքան ինչ են տուեալ, և մեք որչափ խարճեալ, և զճշմարիտն ի ստոյն որոշեսցեն, զի մի յետոյ այլք վատնեսցեն, և զկեղտոտ անունն ի վերայ մեր դիցեն, որպէս և ի մերումս այս ժամանակի ինքեանք արարին, և զայն յանցանս ի վերայ մեր եդին անուզղայքն, և մեք համբերութեամբ տարաք։ Ուրեմն կրկին աղաչեմ զձեզ գիջանիլ ի խնդրուածս մեր և անտես չառնել։ Զի թէ այլովք ոչ կամիք զմեզ մխիթարել, գոնեայ՝ այսքանեօք ի բարեբարել զմեզ փութասջիք, զի թէ մեռայց այնուհետև, ուրախութեամբ իջից ի գերեզման։ Նաև թէպէտ հարկաւոր էր դրել զթուղթ տեղւոյդ պատրիարգին, սակայն ըստ որում չգիտացաք զով լինելն, վասնորոյ զանց արարաք և խնդրեմք զի ի դիմաց մերոց զողջոյն մատուսջիք յարգելի եղբօրն մերում պատրիարգ վարդապետին եթէ է այժմ, և մեզ ծանուսջիք զի ըստ պարտաւորութեան մերում դրեսցուք զսիրոյ և շնորհաւորութեան զթուղթըս։ Այսպէս գիտացեալ ձեր և զպատասխանին առ մեզ փութով վերադարձուցեալ, եղիջիք օրհնեալք յԱստուծոյ և ի մէնջ Ամէն։

Դրեցաւ ի ՌՄԾԱ. թուոջս և ի յունուարի ... ի սուրբ Էջմիածին։

ՃԼԹ. *Ի Պօլիս առ Տաճէսեան Յօհաննէս ամիրայն եւ Գրիգոր աղայն վասն խաղաղութեան։*

Եւ ընդ օրհնութեանս տիրականի, գիտութիւն լիցի գերազնիւ ցանկալեացդ իմոց։ Զի գիտացաք, որ Եփրեմ վարդապետն ի յունայն բանիցն Դանիէլ վարդապետին պատրեալ, զժողովուրդսն այնր կողման վրդովեալ է, որպէս թէ՝ զարծաթեղէն զարդս եկեղեցւոյն խորտակեալ եմք և տուեալ պարսից և կաշառօք և բռնութեամբ յափշտակեալ զայս աստիճան և ոչ ընտրութեամբ Ազգին։ Եւ զայս տնհլիմն զրոյց հասուցեալ է ի յունկս կայսերն ռուսաց և նորին մեծամեծացն, և նա հրամայեալ է դեսպանին յանուն Դանիէլին հանել զֆարմանն և այլն։ Եւ ոմանք անձինք ևս որ ձեզ յայտնի է, հաճեալ ընդ այն խռովեցուցեալ են զժողովուրդսն մեծի մայրաքաղաքիդ և զպատրիարգ սիրելին մեր տարագրեալ. և կամին զայլ ոք ի տեղի մեր կամ ի սուրբ Աթոռս և կամ յայլ ուրէք նստուցանել և զմեզ անպատուել, ուստի գրեմ սիրով սիրելեացդ իմոց, և հաւատարիմ և սրտացաւ բարեկամացդ սրբոյ Աթոռոյս և դուք աննախանձ հոգւով ունկնդիր քրուածոց իմոց և ճշմարտութեամբ ծանուցէք ամենայն ժողովրդոցն զի գիտասցեն ամենեքեան թէ զըրպարտութիւնք, թշնամութիւնք, և անիրաւութիւնք մեծ են, զորս գործեն ընդ իս առանց իրաւանց և խղճմտանաց։—Նախ զըրպարտութիւն մեծ զոր ասեն զմէնջ թէ բռնութեամբ և կաշառօք է և այլն, զի չեմք այնպէս, այլ հաւանութեամբ միաբանից, երկրացւոցս և օրհնեցելոցդ ընտրեցեալ ըստ կանոնի հարցն առաջնոց։ Քանզի՝ յանցեալ ամին, մինչ ի Պօլիս յայդր էաք բարեպաշտօն ամիրայքն տեղւոյդ կամէին, զի Դանիէլ արհին ի պատրիարգութեան մնասցէ, և մեք յանձն առցուք լինել Հայրապետ Ազգին, զոր չեմք մոռացեալ և ի մտի ունիմք և ունէաք։ Ապա ի ճանապարհին մինչ այտի ի սուրբ Աթոռս գալաքն, ի քաղաքս յորս հանդիպեցաք աստուածասէր ժողովրդոցն մերոց, ամենեքեան վասն մեր բարեպատշաճ համարէին զայն, մինչև՝ և այլազգիք զնոյնն ասէին։ Եւ յորժամ եկաք ի սուրբ Աթոռս, պատահեցաւ, որ Յովսէփ անուանեալ կաթուղիկոսն ի Թիֆլիս վախճանեցաւ, և Դանիէլ արհին ի Թօխաթ յամեցաւ և միաբանք և երկրացիք զմեզ ստիպէին, յայնժամ և մեք ի վերին ակնարկութեանցն տնօրինեալ կարծելով, յանձն առաք և մանաւանդ վստահանալով առաւել ի բանս օրհնեցելոցն տեղւոյդ և ի յօժանդակութիւն գերազնիւ սիրելեացդ իմոց թողաք զմեզ ի կամս ստիպողացն։ Եւ միաբանութեամբ և երկրացւովք բազմականիւք մահսարաւ ծանուցաք յառաջագոյն ձեզ օրհնեցելոցդ

ընդ Կարապետ վարդապետին զայսպիսի զեղելութիւնսն և դուք ևս սիրով ընկալեալ զբանս մեր, հաճեալ էիք և զմահսարն կընքեալ, և յանուն մեր զֆարմանն և զբերաթն հանեալ և շնորհաւորական թղթովք և բազում ընդունելութեամբ զմահսարաքերն առ մեզ դարձուցեալ, և մեք մեծ շնորհակալութեամբ ուրախ եղաք և զսիրոյ և զօրհնութեան թուղթս գրեցաք իւրաքանչիւրոցդ համարակաբար և յատկապէս։ Եւ յաշխարհ ամենայն հնչեցաւ այս լուր և իւրաքանչիւր անձինք մերազնեալք և այլասեռք գրովք զհպատակութիւն և զբարեհաճութիւնս մեզ մատուցին։ Արդ՝ ուստի է յայտ թէ բռնութեամբ է և ոչ ընտրութեամբ։ Երկրորդ՝ թշնամութիւն մեծ է զարծաթեղինացն, զորս ասեն թէ խորտակեալ եմք և այլն։ Զորմէ աստէն ոչ կրկնաբանեմ, ըստ որում վասն այդմ վերստին մահսէր արարաք բազմութեամբ միաբանից և երկրացւոց և ընդ Ղազար վարդապետին առաքեցաք, որով լիապէս տեղեկանալոց էք։ Եւ եթէ տարակուսին, կարեն զարս հաւատարիմս յղել և քննութեամբ զստոյն և զճշմարիտն իմանալ և զբանս մեր հաւատարիմ առնել։ Եւ որքան խղճահարութիւն է ինքեանց, որք թարց քննութեան զմեզ ի ներքոյ բամբասանաց արկանեն, և ի մէջ աշխարհի վատահամբաւեն, զորս թողում ի բարի կամս իւրեանց, և երրորդ անիրաւութիւն մեծ է, եթէ կամին երկու կաթուղիկոս հաստատել ի վերայ միոյ փոքրիկ ազգի։ Եւ մանաւանդ անկարելի է այն. քանզի եթէ կարելի իցէր, նախնիքն մեր ևս առնէին. բայց ոչ կարացին և ոչ կամեցան. ըստ որում օգուտն յոյժ սակաւ է և վնասն կարի մեծ։ Եւ վերջապէս՝ եթէ վասն իմ են մրրիկդ այդ մեծ՝ ամէն ասեմ ձեզ ամենիցդ չեմ ես մեծ քան զՅովնան. առէք զիս և ընկեցէք ի ծով և դադարեսցին յարուցմունքդ։ Բայց և զայս բազում զգուշութեամբ քննեսցեն և ծանիցեն շինութեան սրբոյ Աթոռոյս ցանկացողքն, զի խորամանկ պարսիկ են սոքա, և անյագ զազան, թարց զվերջինս ծծելոյ, զմեզ ի ձեռաց չթողուն և զայլ ոք ի ներս ոչ ընկալնուն։ Ուրեմն մեծահաւատ իշխանքն և պատուելի ամիրայքն, որք կամին զշինութիւն և զպայծառութիւն խղճալի Տանս, պարտին մեծաւ ուշիմութեամբ զբարին և զօգուտն Աթոռոյս մեր և ընդհանուր ազգին խորհել, և մեզ պարզաբար գրել և յայտնել զգլխաւորսն իւրեանց զի և մեք զկատարումն տացուք թարց ընդդիմութեան։ Զի մի վերջինն չար լինիցի, և փոխանակ շինելոյ իսպառ քակտման պատճառ լինեցիք, ահա զամենայն ինչ յայտնապէս գրեցի, այսուհետև ես անպարտ եղէց առաջի ամենեցուն։ Եւս խնդրեմ, զի ի ձէնջ զերկու հաւատարիմ անձինս յղեսջիք անյապաղ գալ ի սուրբ Աթոռս և վերահասու լինել մեզ դէֆթէրաւ յանձնեցեալ իրացն, զի գիտասցեն թէ մեզ զինչ են տուեալ և մեք զինչ խարջեալ. զի մի յետոյ ինքեանք վատնեսցեն և զկեղտ անուն ի վերայ մեր դիցեն, որպէս և վասն Գանիէլի կաթողիկոսութեան ինքեանք խարջեցին, և զայն ի վերայ մեր կալացուցին։ Ուրեմն վերստին աղաչեմ զձեզ զամենեսեան զի զայս վերջին խնդիր մեր կատարել յօժարեսջիք, և այդու մեզ բարերար և երախտաւոր լինիջիք. զի թէ այնուհետև մեռայց, ուրախութեամբ իջից ի գերեզման։ Ահա և բոլոր իշխանապետացն և իշխանացն ևս զսոյնս գրեցաք։ Այսպէս առնելով ձեր եղիջիք օրհնեալք ի տեառնէ, և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցին ընդ ձեզ ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ. թուոջս և ի յունուարի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ճԽ. *Թուղթ ի Պետերբուրգ առ վից կանցլար քնեազ Ալէքսանդր Պաւլովիչ Գուրակինն, օրհնութիւն եւ սէր ըստ խնդրոյ Գրիգոր վարդապետին։*

Եւ ընդ առատաձիր օրհնութեան և ողջունաարութեանս, դիտութիւն լիցի ձերդ լուսափայլութեան։ Զի սիրելի որդին մեր Գրիգոր արքեպիսկոպոսն մինչ յայսր էր, պատմեալ էր մեզ զբարեբարութիւնսն և զերախտիսն ձեր, զորս ցուցեալ էք յայդր եղեալ մերազնեայցն, և զճշմարիտ սէրն զոր ունեցեալ էք ընդ հոչելոյս սրբազան Հայրապետին Տեառն Յովսէփայ։ Եւ այժմ ևս գրեալ էր մեզ ի Պետերբուրգոյ զօգտասիրութիւնդ և ըղ-

կատարեալ բարեկամութիւնդ, զորս ունիք առ սուրբ Աթոռս մեր և առ մեզ։ Ընդ որս և մեր շնորհակալեալ մեծապէս օրհնեցաք զոհունակութեամբ զարժանաւորդ օրհնութեան։ Վասնորոյ և զայս օրհնութեան սիրոյ և բազմապատիկ շնորհակալութեան նամակս մեր՝ բարեպատշաճ վարկաք գրել առ պատուականութիւն ձեր։ Զոր Տէր օրհնեսցէ միշտ և զօրացուսցէ՝ հանդերձ ամենայն ձերայնովքն։ Եւ ես առաւել ղերադոյն փառաց և պատուոյ արժանացուսցէ զձեզ և հանապազ քաղցր և սիրելի երևեցուսցէ զձեզ յաչս խնամատու և ամենաողորմած օղոստափառ և ինքնակալ մեծի կայսերն։ Եւ արդ՝ յաւարտ բանիս զայս ինչ հարկաւորապէս ծանուցանեմ ձերդ լուսափայլութեան։ Զի ըստ որում Եփրեմ և Դանիէլ արքեպիսկոպոսունքն զզանազան զըրպարտութիւնս առնելով վասն մեր, զխաղաղ և ըստ ամենայնի զանվրդով սիրտ օղոստափառ և ինքնակալ մեծի կայսերն պղտորեալ էին, և այլն։ Վասնորոյ և մեք կարեւոր համարեալ առաքեցաք ի դուռն մեծի կայսեր զԿարապետ և զԱբրահամ արքեպիսկոպոսունսըն մեր հանդերձ Օսմանցւոց թագաւորի և Պարսից Շահի մեզ շնորհեալ ֆերմանի և ռաղամի օրինակօքն, բազում մահսարօք և հոմահաճական թղթովք Ազգիս մերոյ հոգևորականաց և աշխարհականաց։ Եւ խնդրեցաք, զի ճշմարտութեամբ զիրաւունսն արարեալ և քննութեամբ զուղիղն ի ստոյն որոշեալ մեզ զբաւականութիւն տացէ, որ ի զուր ի բերանս այլոց անկեալ բամբասիմք, և զբարձրագոյն զրամատն վերահաստատութեան մերս պատրիարգական իշխանութեան ամենաողորմածաբար մեզ շնորհեսցէ։ Ուրեմն և ի ձերդ լուսափայլութենէն ես խնդրեմ զի նախ զդոյն ստուգագոյն սէրդ և զբարերարութիւնսդ հանապազ անխախտ և աճեցուն ունիջիք առ սուրբ Աթոռս մեր և առ մեզ, և առ մերազնեայսն ամենայն որք յայդկոյս։ Մանաւանդ առ հոգևոր որդին մեր Գրիգոր արքեպիսկոպոսն։ Եւ ապա ձերով բարեսրտութեամբն քաղցրացուսջիք զսիրտ մեծի կայսեր ի վերայ մեր, ի և վերայ խղճալի Աթոռոյս մերոյ, զորս յանձնեմ ի յատուկ խնամս ձեր։ Որոց աղաղաւ օրհնութեամբ և շնորհակալութեամբ մնալոց եմք պարտաւոր զամենայն աւուրս կենաց մերոց ձերդ սիրելութեան։ Զայլն ի Կարապետ և յԱբրահամ եպիսկոպոսացն մերոց ունիք տեղեկանալ։ Ողջ լերուք ի Տէր Քրիստոս և պահպանեցեալք կենսատու սուրբ խաչիւ նորին ի պարծանս Քրիստոսական սուրբ հաւատոյս, և ի մխիթարութիւն վշտակիր սրտի մերում Ամէն։

Գրեցաւ յամի փրկութեան մերոյ ի 1802 և ի յունուարի ... Ի սուրբ Էջմիածին։

ՃԽԸ. *Թուղթ ի Պօլիս առ Գիւլաբօղլի Յակոբ աղայն եւ Բարդուղիմէոս Չէլէպիին։*

Եւ ընդ ողջունառաք օրհնութեան նամակիս, գիտութիւն լիցի սիրելեացդ իմոց և զերազնիւ ցանկալեացդ։ Զի՝ Կարապետ վարդապետն խաղաղութեամբ եկն, և մեք ուրախութեամբ ընկալաք, և իւրաքանչիւրոցդ զշնորհակալութիւնս մեր մատուցաք օրհնութեան կոնդակօք։ Բայց այժմ լուաք, որ կայսրըն Ռուսաց հաւատալով բանիցն Եփրեմ վարդապետին հրամայեալ է դեսպանին յանուն Դանիէլին հանել զֆէրմանն։ Եւ ոմանք իշխանացդ ևս՝ հաւանեալ ընդ այն, կամին զԴանիէլն կոչել ի կաթողիկոսութիւն, և զմեզ անպատուել։ Եւ զպատճառն ասեն, որպէս թէ՝ մեք բռնութեամբ և կաշառօք եմք նստեալ, և ոչ ընտրութեամբ։ Եւ թէ՝ զարծաթեղէնս եմք խորտակեալ և պարսից տուեալ և այլն։ Առ առաջինն, միաբանութեամբ և երկրացւովք բազմակնիք մահսէրաւ ծանուցաք ամենիցդ, և ցուցաք թէ՝ հաւանութեամբ Աթոռայնոցս, երկրացւոցս, և մանաւանդ ձեր Ամիրայիցդ է, և ոչ որպէս ասենն. և դուք ևս՝ հաւանեալ ընդ ընտրութիւն մեր՝ ի յԱստուածամայր սուրբ եկեղեցւոյն Աստուած շնորհաւոր արասցէ ասելով՝ բազում յօժարութեամբ զմահսէրն մեր կնքեալ էիք, և զֆերմանն հանեալ, և շնորհաւորական գրովք, և բազում պատուագրութեամբ զմահսաբաբերն մեր՝ առ մեզ վերադարձուցեալ։ Ապա՝ զի՞ է զի այժմ զայլ և այլս խորհին, և զրպարտութեամբ զսուտ բարուրանս դնեն ի վերայ մեր։ Եւ զմշտնջենաւոր խայտառակութիւն և զվա-

տահամբաւութիւն կամին թողուլ յաշխարհի ինքեանց և որդւոց իւրեանց յետ ինքեանց ի յամօթ և ի նախատինս Ազգիս մերոյ։ Իսկ առ. երկրորդն այն թէ՝ զարծաթեղէնս եմք խորտակեալ, և դրունաւորսն կաշառատուր արարեալ, և այլ։ Բազմութեամբ միաբանից և երկրացւոց բազմակնիք մահսարաւ կրկին դրեցաք օրհնեցելոցդ ընդ Ղազար վարդապետին մերոյ, և ցուցաք թէ՝ սնոտի բանք են, և թշնամութիւնք, և անիրաւութիւնք, և ի հոգւոյ ատելութենէ յառաջացեալք։ Իսկ թէ երկու կաթուղիկոս կամին նստուցանել և այլ։ Առ այդ գրեմ ձեզ սիրելեացդ իմոց։ Զի թէ ոգուտ ինչ իցէր և բարի, նրջանիկ նախնիքն ձեր ևս առնէին, բայց ոչ կամեցան և ոչ արարին. քանզի օգուտ ոչ զոյ ընաւ, իսկ վնասք բազումք են, զորս թողում, զի ինքեանք խոկասցեն։ Եւ վերջապէս՝ եթէ պարզապէս զիս կամին անարգել, և զԴանիէլ արհին ի սուրբ Աթոռոյս՝ ի տեղի մեր նստուցանել, խնդրեմ, զի յայտնապէս գրեսցեն մեզ զկամս և զդիտմունս իւրեանց, և ինձ զճանապարհ ինչ ցուցցեն յաջ կամ. յահեակ, և մեք բարի կամաց դոցին չեմք ընաւին ներհակելոց։ Քանզի՝ չեմ. ես մեծ քան զնախնի Հայրապետսն, քան զսուրբսն Աստուծոյ, և քան զնոյն ինքն զՓրկիչն աշխարհի որք իգուր նախատեցան, և ի մահ վարեցան։ Եւ մանաւանդ եթէ վասն իմ են մրրիկդ այդ մեծ, և իմ. պատճառաւ է խռովութիւն դոցա, առեալ ընկեսցեն զիս ի ծով նման Յովնանու, և զադարեսցին ալիքդ։ Բայց և զայս լաւապէս գիտասցեն յարգելի ամիրայքն և իշխանքն մեր, զի խորամանկ պարսիկ են սոքա, առանց դատարկելոյ զսուրբ Տունս այս, զմեզ փութով ի ձեռաց ոչ թողուն, և զայլ ոք ի ներս ոչ ընկալնուն։ Ուրեմն՝ բազում զգուշութեամբ քննեսցեն զբանս մեր, և մեծ շրջանկատութեամբ արասցեն, զոր ինչ առնելոց են։ Զի մի գուցէ փոխանակ բարեկարգութեան և շինութեան խղճալի Տանս, կրկին քակման, աւերութեան, և բոլորովին անկարգութեան պատճառ լինիցին, և վերջինն չարագոյն լինիցի։ Ահա այսու գրովս՝ անպարտ եղէց ես առաջի Աստուծոյ և ձեր ամենեցուն՝ զօգուտն Աթոռոյս և մեր դուք ընտրեցէք։ Զի այսքան միայն կայր ի վերայ իմ. պարտաւորութիւն։ Եւս խնդրեմ, զի զոմանս հաւատարիմ անձինս առաքեսջիք. զի վերահասու եղիցին սրբոյ Աթոռոյս իրացն. և գիտասցեն թէ՝ մեզ դէվթէրաւ զինչ են տուեալ, և մեք զինչ եմք խարջեալ, զի մի յետոյ ինքեանք վատնեսցեն, և զկեղտ անունն ի վերայ մեր դիցեն։ Որպէս և վասն Դանիէլի կաթողիկոսութեան ինքեանք խարջեցին, և զայն յանցանս ի վերայ մեր եդին, ուրեմն կրկին աղաչեմ զձեզ զամենեսեանսն, զի զայս վերջին խնդիր իմ կատարեսջիք, և այնու ինձ բարերար և երախտաւոր երևիջիք, զի թէ մեռայց այնուհետև՝ ուրախութեամբ իջից ի գերեզման։ Զսոյն ահա և բոլոր իշխանապետացն և իշխանացն տեղւոյդ գրեցաք. անտի և դուք լիով ունիք տեղեկանալ։ Այսպէս գիտացեալ ձեր, և զպատասխանին առ մեզ փութացուցեալ՝ որում. ակնադէտ սպասեմք. ողջ լերուք ի Տէր և զօրացեալք նովաւ՝ ի մխիթարութիւն սրտի մերում. Ամէն։

Դրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս և ի յունվարի … ի սուրբ Էջմիածին։

ՃԽԲ. *Թուղթ մխիթարութեան ի Թիֆլիզ վասն մահուան քնեազ Սողոմոնի քեռն Քեթեւանին:*

Եւ ընդ օրհնառաք նամակիս, գիտութիւն լիցի քումդ սիրելութեան։ Զի զործ ճշմարիտ բաերկամի է, ընդ ուրախալիսն ուրախանալ, և ընդ տրտմալիսն տրտմիլ։ Ըստ նոյն համեմատութեան, և մեք իբրև ճշմարիտ բարեկամ և հոգևոր հայր, ի լսելս զվաղաթառամ մահ քեռն ձերոյ բարեպաշտուհւոյ, և զպակասիլն նորա ի ձէնջ, արդարև՝ զբազում. տրամութիւն ի վերայ այլոց տրտմութեանց մերոց ընկալեալ, ցաւեցաք և կսկծեցաք ի վերայ մահու նորա ընդ ձեզ։ Եւ այսու մխիթարական բանիւք ի յըսփոփել զվշտագնեալ սիրտս ձեր, և դադարեցուցանել զարտասուս ի ձէնջ փութացաք։ Ուստի՝ գրեմ սիրելեացդ իմոց և խնդրեմ, զի մինչև ցայժմ որքան սգացիք և ողբացիք, և լացիք ի վերայ վախճանի նորին, բաւական համարեսջիք. զի մի յառաւելու դիմելով, զՏէրն կենդա-

նեաց և մեռելոց դալրացուսջիք։ Քանզի՝ ի ձեռին նորա է ամենայն շունչ կենդանութեան, և նորա վճիռն մահու եղեալ ի վերայ հողածնացս։ Տէր ետ և Տէր էառ, եղիցի անուն նորա օրհնեալ։ Ուրեմն՝ լուսաւորեսցէ Տէր զհոգի հոգեոր դստերն մերոյ և բարեպաշտուհի քեռն ձերոյ Քէթեանին ի լոյս երեսաց իւրոց, և հանգուսցէ յարքայութեան ընդ սուրբ կանանցն իւղաբերից։ Եւ ձեզ ընտանեացդ և ազգայնոցդ նորին զկեանս խաղաղականս շնորհեսցէ, և սուրբ հոգւովն մխիթարիչ եղիցի. և զսուգս և զարտասուս ձեր ի սրտից ձերոց փարատեսցէ և ի յուրախութիւն յեղափոխեսցէ։ Իսկ զսրբոյ Աթոռոյս և վշտակրելոցս զորպիսութիւնսն թողումք ի թղթոյ Կարապետ և Աբրահամ եպիսկոպոսացն մերոց գիտել, զորս կրկին յանձնեմ ի սէր սիրելւոյդ։ Այսպէս գիտացեալ առ այժմ, և զսիրոյ թուղթըդ ի մէնջ աննուաղելի արարեալ, լեր ողջ ի Տէր և մխիթարեալ նովաւ. Ամէն։

Հայրական սիրով և հոգեոր օրհնութեամբ զողջոյն Փրկչաւանդ մատուցանեմք բոլոր քեւ զօրացեալ որդւոց քոց և ընտանեաց, զորս և խնամոց Բարձրելոյն յանձն առնեմք զի զօրասցին նովաւ։

Գրեցաւ ի 1802 և ի յունուարի ... ի սուրբ Էջմիածին։

ՃԽԳ. *Թուղթ նզովից եւ բանադրանաց առ երկու չարագործսն, որոց անուանքն յետոյ իմացեալ լինին:*

Ցորմէ ժամանեսցէ թուղթ անիծից նզովից և չարաչար բանադրանաց, և գիր կապանաց և կալանաց, զառնութեան և սաստիկ բարկութեան, ատելութեան և դատապարտութեան, հանդերձ կենագրաւ և ընդմիջահատ սրով սուրբ հոգւոյն Աստուծոյ, և մեծազօրին ցասմամբ և անանցանելի սրտմտութեամբ Փրկչին մերոյ Յիսուսի, ի վերայ երկուց հակառակորդացդ ճշմարտութեան և մըշտաջան հետևողացդ չարութեան, անօրինակ անդղումացդ և վատաշուէր լրբիցդ, անամօթ և անպատկառ ամբարշտացդ և Աստուածուրաց անօրինացդ, երախտամոռ թշնամեացդ Աստուծոյ և անպիտանիցդ սրբոց նորին, արժանաւորացդ անիծանաց, և կորստեան վիճակեցելոցդ, անդեղջ յանցաւորացդ և անդարձ խռովասիրացդ, չարտղործ դաւակացդ քանանու և անիծեցելոցդ ի Տեառնէ Ամենակալէ, և հոգւոյ աչօք կուրացելոցդ՝ չի՞ք ... քամասարաս և ծնողանարգ թշուառացեալ պղծոցդ։ Ընդ որս գիտասջիք ով չափազանց լիրբք և որդիք արատոյ, ծնունդ խոտորեալք և թիւրեալք, զաւակք ստութեան և զուրկք ամենևին ի ճշմարտութենէ։ Զի վասն ձեզապիսի անզգամաց ասէ մարգարէն Դաւիթ թէ՝ եկաց նա յամենայն ճանապարհս, որ ոչ է բարի, ի չարէ ոչ ձանձրացաւ։ Եւ թէ՝ ոչ կամեցաւ իմանալ նա զբարի. զանօրէնութիւն խորհեցաւ ի սրտի իւրում։ Որ ահա դուք իսկ էք յիրաւի։ Քանզի՝ մինչ ցարդ կացիք և կայք դուք յամենայն ճանապարհս չարեաց և խռովութեանց. և ի պէսպէս սատանայական հնարից ոչ ձանձրացայք։ Եւ ի յանարգելոյ դհոգեոր ծնողս ձեր զսուրբ Լուսաւորիչն և զԱթոռս սուրբ և զմեր հայրապետական իշխանութիւն ոչ դադարեցայք, և երկիցս և յերիցս հայրաբար խրատուցս ոչ անսացիք, և ի յերկայնամիտ համբերութենէս որ դարձի անդարձիցդ սպասէաք՝ ոչ պատկառեցայք անամօթքդ և անպատկառքդ։ Եւ իբրև զորոմն չար՝ ի մէջ ցորենոյ գտեալ, այսինքն ի մէջ օրհնեալ և միամիտ ժողովրդեան, ապականեցիք և զնոսա. և ի նոյնն յամառեալ օրըստօրէ աւելացուցիք զչարիսդ, և ուր և կայք աղմկով և խռովութեամբ լցիք՝ և ուր ոչ հասիք՝ դրովք և թղթովք վրդովեալ գայթակղեցուցիք, և ի փողոցս և ի հրապարակս ի ներկայութեան զանազան մարդկանց՝ օտարազնէից և մերազանց զսուրբ Աթոռ մայրս ձեր անարգեցիք և անպատուեցիք, և ըստ նախահպարտ հօրն ձերում սատանայի, այնքան հպարտացայք և զեղջիւր ամբարտաւանութեան ի վեր ամբարձիք, մինչև առ մեզ ևս զքարինս անզգամութեան, հայհոյանաց՝ այպանաց և նախատանաց ձգել սկսայք, ի մէջ բազմամբոխ ժողովրդոց։ Վասնորոյ դնոյն քարինսն ահա ժողովեալ ի մի՝ այսու գրովս իբրև զԴաւիթ զօրացեալ Տէրամբ Քրիստոսիւ հարկանեմք ընդ ճակատ երկրորդ գողիադիցդ և ի գլուխ ձեր կուտեմք զայնոսիկ. և ըստ որում զորդնալից բերանս ձեր բացիք ի վերայ մեր և զչարահամբաւ լեզուս ձեր իբրև զսուր սրեալ՝ ածիք զերկրաւ, վասնորոյ իբրև զնոյն Դաւիթն Աս-

տուածարեալ՝ հանեմ զսուսեր ձեր ի ձէնջ, և այնու հատանեմ զգլուխս անթլփատիցդ, դի որով մեղանչէ ոք, նովիմբ և տանջեսցի։ Արդ՝ ուրեմն՝ առէք ըստ արժանեաց ձերոց զվարձս ով յցեալքդ ամենայն չարութեամբ և ամբարտաւանութեամբ։ Եւ որպէս յայդր բանիւ, և ի հեռաւոր աշխարհս թղթովք զխռովութիւնս սերմանեցիք, ըստ հեղինակին հօրն ձերում սատանայի, ընկալջիք զպատիժն նորին, զոր ընկալաւ ի Տեառնէ։ Եւ որպէս զոգիս բազումս զայթակղեցուցիք, զանէծս ի Քրիստոսէ ընկալջիք, որ՝ վասն ձեղապխսեաց զայթակղեցուցչաց, կապեալ ընդ պարանոց յանցանաց ձերոց իբրև զերկանաքար՝ ընկղմեսջիք ի խորս ծովու կորստեան։ Եւ զի՝ անօրինակ յանցանօք յանցեալք, ուստի՝ անօրինակ տանջանօք տանջեսջիք աստէն ի կեանս, և ի հանդերձեալն մշտնջենապէս։ Եւ զի՝ քանիցս հայրական խրատուցս ոչ լուայք, առ ի զգաստանալ և գալ ի զղջումն, վասնորոյ՝ զպատիժն աքարու զարմեան ընկալջիք, որ նման ձեզ ոչ լուաւ խրատուն յեսուայ։ Եւ զի՝ որոմն չար եղիք, և զայն արկիք յաղարակ Տեառն ի բանաւոր հօտս Քրիստոսի, ուստի՝ Տէրն ագարակի ի ձեռն իմ քաղեսցէ ի միջոյ ցորենոյն իւրոյ զձեզ, և ի հուրն անշէջ մատնեսցէ ի յայրել յաւիտենականապէս։ Եւ զի՝ իշխեցիք ընդ սուրբ Աթոռս ընդ անշարժ վէմս հաւատոյ մերոյ սրբոյ՝ ընդ հարկանիլ, ուստի՝ փշրեսջիք զօրութեամբ և շնորհիւ սորա, և լոսեսջիք իբրև զփոշի առաջի հողմոյ։ Եւ զի՝ ըստ Կորխայ՝ Դաթանայ և Աբիրոնի, հակառակ կացիք բարձր հայրապետական մերոյս իշխանութեան, վասնորոյ ըստ նոցա յանդունդս սուզեսջիք, զի ժողովուրդս մեր մաքրեսցի։ Եւ որպէս դուք ի մէջ բազմութեան զհոգևոր զլուխս ձեր և հովիւս անարգեցիք, անարգեալ եղիջիք և դուք յԱստուծոյ և յամենայն սրբոց նորա և ի հրեշտակաց նաև յամենայն մարդոյ ի կեանս յայս և ի հանդերձեալն ըստ անսուտ վճռոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի թէ որ զձեզ անարգէ, զիս անարգէ։ Արդ՝ գրեալ է յօրէնս, եթէ իցէ ուրուք որդի անզգամ, և ոչ լուիցէ ձայնի հօր իւրոյ և մօր. արք քաղաքին այնորիկ քարկոծեսցեն զնա քարամբք և մեռցի, և բարձջիք զչարն ի միջոյ ձերմէ. զի այլքն զահի հարկանիցին։ Ուրեմն ես ահա արդար իրաւամբ առնում ի ձեռս իմ իբրև զսուր երկսայրի զբանն Փրկչին մերոյ Յիսուսի, զայն՝ որով ունիմ զիշխանութիւն կապելոյ զձեզ հոգւով և մարմնով ի յերկինս և ի յերկրի, որով և իջուցանել ի դժոխս և հանել. և կտրեմ զձեզ այնու ընդ մէջ։ Նաև՝ բարձու հրամանաւն սրբոյ Աթոռոյս և իշխանութեամբս իմով հայրապետականաւ քարկոծեմ և սպանանեմ զչար և զանօրէն որդիսդ սատանայի, ոչ եթէ դգալի քարամբք և սրով, այլ քարամբք բանին Աստուծոյ, և հոգեսպան սրով ամենասուրբ հոգւոյն, և հատանեմ զձեզ իբրև զհոտեալ անդամ, յանդամոց սրբոյ եկեղեցւոյն, և որոշեմ ի հօտէն Քրիստոսի, և կապեմ անլոյծ կապանօք ի յերկինս և ի յերկրի և մատնեմ զձեզ ի կորուստն յաւիտենական և ի հուրն անշէջ ի յայրումն մշտնջենապէս ընդ հօրն ձերում սատանայի։ Անիծեալ էք դուք այսուհետև, և կապեալք հոգւով և մարմնով. չունիք զհրաման յեկեղեցի Աստուծոյ մտանել, և կամ ի հօտս Քրիստոսի խառնիլ և քրիստոնեայ անուանիլ, և աղօթք ձեր այսուհետև ի մեղս և յանէծս դարձցին։ Բայց կանայք ձեր և որդիք և ընտանիք օրհնեալք են յԱստուծոյ և ի մէնջ, և եղիցին հեռի և ազատ յամենայն անիծիցս այսոցիկ. միմիայն ի գլուխ ձեր կուտեսցին անէծքս և դառնութիւնքս և պատիժքս։ Զոր լուեալ հրեշտակք և մարդիկք՝ ասասցեն Ամէն։ Եղիցի, եղիցի և եղիցի։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս և ի յունուարի ... Առ դրան ներհակակործան և թշնամավան մեծի Աթոռոյս սրբոյ Էջմիածնի։

ՃԽԳ. *Թուղթ ի Պետրբուրղ առ Իվան Պետրովիչ Գասպարովն օրհնութիւն եւ հարազատութեանց աղագաւ շնորհակալութիւն:*

Եւ ընդ ողջունառաք առատարաշխ անդրանիկ օրհնութեանս, գիտութիւն լիցի ձերդ պատուականութեան։ Զի թէպէտ հարկաւոր էր և վայելուչ, յառաջ քան զամենայն քեզ զերազնիւ սիրելւոյդ իմոյ գրել զթուղթ, ըստորում սիրելի որդին մեր Գրիգոր շնորհա-

փալլ արքեպիսկոպոսն պատմեալ էր մեզ լիալիր զհաւատարմութիւն ձեր, զորս ընդ հանդուցեալ Յովսէփ հոգելոյս Հայրապետին ունեցեալ էք, սակայն ի զանազան գործս և ի հոգս զոլով պատաղեալ, չեղաք ձեռնհաս յայնժամ։ Բայց օրհնութեան կոնդակօք գրեցաք առ. բոլոր հասարակութիւն Աստուածապահ Երկրիդ զկոչմանէն մերմէ յայս պատիւ քահանայապետութեան ընդհանուր ազգիս հայոց և զօծմանէն մերմէ ի յապրիլի 28. համութեամբ Աթոռայնոցս երկրականացս և յայլ և այլ աշխարհս բնակեցեալ ազգիս մերոյ և յուսամք թէ՝ ի յայն կոնդակաց և դուք ըստ բաւականին իմացեալ լիցէք։ Այժմ մինչ նոյն հարազատ որդին մեր և սիրելին ձեր Գրիգոր խոհեմառատ Արքեպիսկոպոսն կրկին գրեալ էր մեզ ի Պետրբուրղու զգերազնիւ ցանկալւոյդ մերմէ զբազում բանս զովութեան արժանաւորս զմեծազոյն սէրդ և զջերմ եռանդական հաւատարմութիւնդ զորս ունիս առ. աստուած, առ. շնորհատու ծնօղս քոյ և առ. մերս հոգևոր հայրութիւն, ուրախ եղաք ընդ այն յոյժ և բազմապատիկ օրհնաբանութեամբ շնորհակալ եղաք զձերդ վեհանձնութենէն. և ի քրիստոսահիմն սուրբ տաճարիս վասն Երկարութեան աւուրց ձերոց զպաղատանս առ. բարձրեալն վերառաքեցաք, և երկնաւոր օրհնութեամբ զըղձալի կիանս ձեր օրհնեցաք. զոր տէր օրհնելով օրհնեսցէ և զօրացուսցէ և յաչս օգոստափառ և ինքնակալ մեծի կայսեր յառաջադէմս արասցէ ի պարծանս ազգիս մերոյ և մանաւանդ ի մխիթարութիւն վշտապատ սրտի մերում։ Ուստի և զայս օրհնութեան անդրանիկ նամակ ձերդ գերազնուութեան գրել բարեյօժարեցաք. որով և խնդրեմք ի բարեպաշտութենէ ձերմէ, զի որպէս մինչ ցարդ յատկական սիրով կապակցեալ էք լեալ ընդ հոգելոյս Հայրապետին տեառն Յովսեփայ, զայն յայտնեսցէ ընդ մեզ ունիջիք առաւելապէս, և ի ջատագովութենէ անվերջանալի կացջիք. և յամենայն գործս մեր օգնական և օժանդակ գտանիջիք, և զհոգեծին որդին հանդուցելոյն և մեր զԳրիգոր նորապսակ արքեպիսկոպոսն ի շնորհս և ի խնամս ձեր ունելով նպաստամատոյց լինիջիք. որովք վարձուց մեծաց արժանաւորք եղիջիք։ Եւ արդ՝ Եփրեմ վարդապետն ըստ որում ի յունայն բանիցն Դանիէլ վարդապետին պատրեալ, ծանուցեալ էր օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն զբազում սնոտի բանս, զորս վերստին յիշատակել անվայել համարիմ. վասնորոյ և մեք հարկաւոր համարեալ առաքեցաք ի դուռն օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն զհարազատ որդիսն սրբոյ Աթոռոյս զԿարապետ և զԱբրահամ արքեպիսկոպոսունսն հանդերձ օսմանցւոց թագաւորի և պարսից շահի մեզ շնորհեալ ֆարմանի և բազումի օրինակօքն և ընդհանուր ազգիս հայոց և Աթոռայնոցս համահաճական և շնորհաւորական մահսարօքն և թղթովք։ Եւ խնդրեցաք յարդարադատ Աթոռոյ նորին զիրաւունս արդար դատաստանաւ դատել, և բազում քննութեամբ զճշմարիտն ի ստոյն որոշել, և մեզ ամենաողորմածաբար զբաւականութիւն տալ շնորհելով զբարձրագոյն զրամատն վերահաստատութեան մերս պատրիարքական իշխանութեան։ Եւ քեզ արդարախոհ և ճշմարտասէր իշխանիդ մերոյ ես գրեմ և խնդրեմ, զլսելիս ձեր ի բաց հեռացուցանել յամենայն ունայնախօսութեանց և ի խռովարար բանից խռովասիրաց, և ի հաւատարմութեան և ի կատարեալ սէր անփոփոխելի և հաստատուն մնալ, և այնպիսի զատարկ զրուցաց հաւատ չընծայել, և զճշմարտութիւն, զոր կամին ծածկել արք թշնամանողք զրովք և բանիւք հրատարակել առ. ամենեսին ի հեռաւորս և ի մերձաւորս, և այնու զմեծագոյն վարձս ի ճշմարտասիրէն աստուծոյ ընկալնուլ բազմապատկապէս։ Զայլն ոչ երկարեմ, այլ թողում ի Կարապետ և յԱբրահամ արքեպիսկոպոսացն մերոց գիտել լրապէս. զորս յանձնեմ յատկապէս ի մարդասիրութիւնս ձեր։ Այսպէս գիտելով քոյ, և զսիրոյ և զուրախական գիրդ ի մէնջ անպակաս առնելով, եղիցիս օրհնեալ յԱստուծոյ և ի մէնջ. և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ, ամէն։

Գրեցաւ ի 1802. և ի յունուարի... ի սուրբ Էջմիածին։

ԺԽԵ. *Թուղթ ՚ի Զմիւռին քաղաք առ դրոշմակիր Ստեփան աղայն ի պատասխանի նորին թղթոյ եւ բան վասն խաղաղութեան*

Եւ ընդ քրիստոսաւանդ ողջունի, և հոգեկեցոյց օրհնութեանս յայտ լիցի յատուկ սիրելւոյդ իմոյ և հաւատարիմ բարեկամիդ։ Զի յօգոստոս ամսոյ ի հինգերորդում աւուր գրեալդ սիրոյ թուղթ շնորհաւորական և ուրախական, ընկալայ ի նոյեմբեր ամսոյ ԺԶ. զոր ընթերցեալ գիտացի զամենայն գրեալսն ի նմա. որք ըստ ամենայն հանդամանաց ազդէին մեզ զհաւատարմութիւն, զանկեղծ սէր, զյատուկ սրտացաւութիւն անձինդ պատուականի և քրիստոսասիրի առ մեզ և առ սուրբ Աթոռս։ Ուստի և ես ըստ այսպիսի բարեմասնութեամբ զերճացեալ դոլոյդ և ըստ սրտակից բարեկամական հաւատարմութեանդ օրհնեցի ըզսիրելիդ իմ և զամենայն ընտանիսդ. զաղօթս առ տէր նուիրելով. և եղէ յոյժ շնորհակալ զպատուելոյդ իմմէ ի սիրտ և ի բերան։ Եւ հանդերձ միաբանական ուխտիւք զպէսպէս բարիս և զերկարութիւն կենաց վասն քոյ ի Տեառնէ խնդրեցաք։ Եւ զայն դիր անդրադարձ քումդ գրութեան, առաքել արժան համարեցաք. որով յորդորեմ զյարգի սիրելիդ իմ կալ ի դոյն հաւատարիմ բարեկամութեան հաստատուն և անյեղլի, և ընդդէմ կոհակաց խռովայոյզ բանից ոմանց ոմանց լինել արձան ամուր և զօրավիգ վէմ ի մխիթարութիւն վշտակիր անձին իմոյ։ Արդ՝ գրեալ էիր վասն բարեջան առաջնորդին ձերոյ և սիրելի որդւոյն մերոյ՝ Տեառն Մարտիրոս շնորհափայլ արքեպիսկոպոսին թէ՝ ըստ խոհականութեան իւր, գեղեցիկ իմն կառավարէ զբազմութիւն հաւատացելոց։ Եւ թէ՝ ժողովուրդք տեղւոյդ խաղաղ միաբանութեամբ կան ի հպատակութիւն ենթ հովուութեան դորա, ուրախ եղէ յոյժ առաւելութեամբ. որ այդ իսկ է ինձ ախորժելի և հոգւոյ իմոյ բերկրութիւն։ Նմին ՚իրի ըստ խնդրանաց ձերդ քաղաքի բազմութեան՝ վերահաստատեցի զդա առաջնորդ և այցելու լուսաւորչածին մերազանց, որոյ և առաջնորդական կոնդակն ընդ այսմիկ գրութեան առաքեցի. եթէ Տէր յաջողեսցէ՝ յետ փոքր միջոցի ունիմ առաքել զՍրբալոյս մեռոն և զնուիրակականն կոնդակ։ Ուրեմն տացէ Տէր դմա կարողութիւն առ ի յողջամիտ վարդապետութեամբ և լիահանճար խորհրդով արածել զբանաւոր հօտսդ առ ջուրբս հանգստեան աստուածային պատուիրանաց. և յաւելցէ ի ձեզ սէր հպատակութեան առ ի խաղաղ կենցաղավարութեամբ ընդ միմեանս կառավարիլ ի ներքոյ հոգևոր կառավարութեան դորա առ ի հանդուցանել զսիրտ իմ և առնել ուրախ։ Խնդամ ընդ այդ գործ ձեր Աստուածահաճոյ որ արժանաւոր յարդութեամբ յարգեալ պատուէք զդա, որ արժան իսկ է գերագոյն յարդանաց և մեծի պատուոյ։ Վասն զի որդի հարազատ է սուրբ Աթոռոյս և սրտացաւ իսկ և մեզ վաղեմական սիրելի, որ ըստ իւրն սերտ հարազատութեան և ըստ անխարդախ սիրոյն էհաս յօգնութիւն ի հեռուստ արդեամբ՝ լուսափայլ ծնողին իւրոյ և մեզ, որոյ զարդիւնսն օգնականութեան ընկալաք փօլիցայիւ ի վերայ Կարնոյ։ Վասն որոյ մեծաւ շնորհակալութեամբ օրհնեցաք զտէրունի ժողովուրդսդ միաբանութեամբ հանդերձ. ննջեցելոց ձերոց զհանգիստ և զերկնից արքայութիւն խնդրելով, և կենդանեաց ձերոց զերկար և զխաղաղ կեանս։ Իրաւի իսկ ցնծայ հոգի իմ առ Աստուած, որ պարգևեալ է ինձ ի մխիթարութիւն զանազան զբազմանօք աուալտելոյս զընտիր ժողովուրդսդ և զարժանավայել դէտ ձեր՝ զընտրեալս ի բիւրուց սիրելին իմ։ Քանզի ըստ ցարդ սիրոյ ձերոյ և հաւատարմական որդիութեան յայսմ միջոցի քանիցս անգամ սփոփիչք եղէք հոգածութեամբ տխրեալ անձին իմոյ. զի նախ, բազմակնիք մա՛ սէրաւ շնորհաւորութիւն զըրեալ՝ և ուրախութիւն ՚ցուցեալ էիք յառաջագոյն քան զամենեսեան վասն այս մեր հոգեւորական պաշտօնի։ Երկրորդ՝ յատուկ թղթով զբանս շնորհաւորութեան և ցնծութեան էիք կրկնեալ։ Եւ երրորդ բազում բանս ջատագովականս զմէնջ գրեալ ՚ի դուռն մեծի կայսերն ռուսաց՝ ջանացեալ էիք հանրացուցանել զսնոտի բանս Եփրեմ և Դանիէլ վարդապետաց. հանդոյն և ձեզ արժանավայել առաջնորդն ձեր և սիրելին մեր Մարտիրոս շնորհափայլ արքեպիսկոպոսն յարգեանց սրբոյ Աթոռոյս զանդրանիկ պտուղ աշխատանաց իւրոց նախքան զամենայն գործակալս և զնուիրակունս մեր մատոյց մեզ ի հարկաւոր ժա-

մանակի։ Թէպէտ պատշաճ իսկ էր մեզ կանխաւ գրել զպատասխանի ձերդ թղթոյ, բայց մահսէքաբեր Կարապետ վարդապետն անագան ժամանեաց ի սուրբ Աթոռս։ Եւ յետ ժամանելոյն պատաղեալ էաք զանազան զբաղանօք. նմին իրի այժմ հազիւ կարացաք ձեռնհաս լինել յայս ձեր զլութիւն։ Եւ զկնի զալստեան Կարապետ վարդապետին, եթէ զի՞նչ անցք անցին զմեօք, հարկ համարիմ աստանօր յիշատակել հակիրճ բանիւ։ Քանզի մինչ Եփրեմ վարդապետն պատրեալ ի զբարանութեանց Դանիէլ վարդապետին, ծանուցեալ էր մեծի կայսերն զմեզ այլ իմն եղանակաւ, զոր աստէն յիշելն անպատշաճ համարիմ։ Նմին իրի և մեր հարկաւոր համարեալ՝ առաքեցաք ի դուռն նորին կայսերական մեծութեան զսիրելի որդիսն մեր՝ զԿարապետ և զԱբրահամ եպիսկոպոսունսն հանդերձ օսմանցւոց Թագաւորի և պարսից շահի մեզ շնորհեալ ֆերմանի և բազմի օրինակօքն. նա և բոլոր ազգի մերոյ ի զանազան քաղաքաց և ի գաւառաց եկեալ համահաճական մահսէրօք և շնորհաւորական թղթովք. որպէս զի նոյն ինքնակալն նոքօք որոշեալ զճշմարիտն ի ստոյն արդար դատաստանաւ իրաւունս արասցէ. և զիտասցէ թէ՝ զիա՞րդ ստայօղ բանիւք զբարուրանս կուտել կամին ի վերայ իմ. այսպէս իրագէտ եղեալ ամենայն որպիսութեանց՝ շնորհեսցէ հրովարտակ հաստատութեան մեր այս պատրիարքական իշխանութեան։ Նաև գրեալ ի մեծն Պօլիս իշխանապետաց և իշխանաց ամենեցուն զգուշացուցաք զնոսա հեռի կալ յազմկալիր խռովութեանց. զի այնպիսի խռովութիւնք ոչ այլ ինչ գործեն, եթէ ոչ տգեղութիւն անուան ինքեանց և ազգի մերոյ, և աւերութիւն սրբոյ Տանս։ Եւ յորդորեցաք զնոսա ի յետս կալ ի խորհրդոյն յայնմանէ, զոր խորհեալ՝ կամին զԴանիէլ հաստատել ուրեք և մեզ հակաթոռ առնել և այլն, որ անկարելին է և թղթոյ զօրինակն իշխանաց պօլսոյ ընդ գրոյս այսօրիկ առաքեցաք առ ձեզ, զի ընթերցեալ տեղեկասջիք զրելոցն մեր ի նմա։ Ուստի զայնոսիկ բանսն աստէն ոչ երկրորդեմ ի գրել՝ միայն յորդորեմ զսիրելիդ իմ. լսեալ զլսելիս քոյ ընդդէմ ստայօղ խօսից զրաբանից՝ մի անսար և մի տայր տեղի նոցա՝ գրով և բանիւ ուր հարկն է, զճշմարտութիւն, զոր ոմանք ծածկել կամին, հրատարակեսջի՛ր։ Եւ զսիրելի որդին մեր՝ զՄարտիրոս շնորհապերճ արքեպիսկոպոսն և զարիաջան առաջնորդն ձեր ի յարգութեան կալեալ մարդասիրապէս պատուեսջիր ամենայն գործառութեանցն օգնական և ձեռնտու լինելով, զի ի ձէնջ եղեալ յարգութիւն առ դա, ստուգիւ ի մեզ վերաբերին։ Զայսքան զրութիւնս բաւական համարեալ՝ զմնացեալսն ի հասարակ կոնդակէն ունիս զիտել. հարազատութիւն քոյ հաստատ պահելով լեր ողջ երկար կենօք ի խնամըս արարչին, ի շնորհս աստուածաբնակ տեղւոյս և ի սէր մեր։

Գրեցաւ 1802 յունվարի... ի սուրբ և յաստուածակերտ Գահս յէջմիածին։

ՃԽԶ. Առ Իսահակ աղայն։

Եւ զկնի Փրկչական ողջունիս և շնորհազեղուն օրհնութեանս, յայտ լիցի քումդ օրհնեալ բարեպաշտութեան։ Զի որդիական հաւատարմութեամբ և ջերմ սիրով գծագրեալդ սիրոյ թուղթ ի հինգերորդում աւուրն օգոստոսի, ընկալայ յետ երկար միջոց անցանելոյ ի նոյեմբերի ԺԶ ի ձեռն մահսէրաբեր Կարապետ շնորհունակ եպիսկոպոսին և սիրելի որդւոյն մերոյ. յընթեռնուլն զայն, ի նմա զրեալն բանք եղեն ինձ յայտնիչ քոյդ յորդ սիրոյ, անկեղծ բարեկամութեան, սըրտացաւոր են հարազատութեան և մտերիմ հաւատարմութեան առ մեզ և առ սուրբ Աթոռս։ Ուստի և շնորհակալութեամբ մեծաւ և բազմատեսակ օրհնութեամբ օրհնեցի զպատուական սիրելիդ իմ և վասն քոյ ի Տեառնէ զպէսպէս բարիս մաղթեցի։ Իրաւի ի յայսմ միջոցի օրհնեալ ժողովուրդք և յարգելի իշխանք քաղաքի ձերոյ յատկապէս իմն եղեն սփոփիչ սրտի իմոյ և յայտնեցին զանկեղծ սէրն իւրեանց առ մեզ, ի շարս որոց և դու սիրելիդ իմ փայլեցար նովին Աստուածահաճոյ սիրով, վասն զի՝ նախ քան զամենայն մահսէրական բազմակնիք թղթով շնորհաւորութիւն բարբառեալ էիք ի մեզ առ այս մեր հայրապետական իշխանութեան։ Եւ զկնի այնր զնոյն բարբառ ձեր յատուկ թղթով

կրկնեալ և որ մեծն է, բազում բանս ջատագովականս գրեալ զմէնջ առ. կայսրն ռուսաց՝ կամեցեալ էիք նանրացուցանել զսնոտի զըրպարտանս Եփրեմ և Դանիէլ վարդապետաց։ Այս ևս է ինձ յոյժ ախորժելի, որ զսիրելի որդին մեր՝ զՄարտիրոս լիահանճար արքեպիսկոպոսն, և զարժանավայել դէտն ձեր պատուէք ըստ ամենայնի, և սրտագիւր իսկ առնէք, որ արժան է պատուել մեծի և յարգանաց, զի հարազատ որդի է սրբոյ Աթոռոյս և յատուկ սրտացաւ, որ ըստ իւրն սերտ հաւատարմութեան՝ կամեցաւ ի պատկան պահու նպաստամատոյց լինել սուրբ Դահիս արդեամբ սորին՝ նախ քան զամենայն նուիրակունս և զգործակալս մեր, որոյ զարդիւնսըն փոխցալիւ ընկալաք ի Կարնոյ։ Եւ ըզփորձ բարեյաւութեան դորա առեալ բազմութիւնք օրհնեալ մերազանց քաղաքիդ, համակամութեամբ խնդրեալ էին զդոյն դա առաջնորդ վերահաստատել և իմ զբարւոք կառավարութիւն դորա հայեցեալ՝ և զձեր խաղաղ կենցաղավարութեամբ ընդ միմեանս հպատակութիւն առ դա՝ վերանորոգեցի առ դա զտեսչութեան գործ դորա՝ զկոնդակն առաջնորդական ընդ գրոյս յղելով, Աստուծով զկնի կոնդակ նուիրակութեան, և սրբալոյս միւռոն ես ունիմ առաքել։ Զի թէպէտ արժան իսկ էր յառաջագոյն գրել զանդրադարձն գրութեանց ձերոց և յղել փութով, բայց՝ Կարապետ վարդապետն յոյժ յետոյ ի տասն և վեցն նոյեմբերի էհաս աստ ի սուրբ Աթոռս. որ յաւուրս հասանելոյն նորա ի զանազան զբաղանս յածեալ գոլով մեր, չեղաք ձեռնահաս յայնժամ, այլ՝ այժմ փոքր ինչ միջոց պարապոյ գտեալ՝ ձեռնարկաք ի գրութիւնս ձեր, ի լրումն ածաք և յղեցաք։ Որով ծանուցանեմ զանցս սրբոյ Աթոռոյս սիրելւոյդ իմոյ իբր՝ հարազատի և սրտացաւի։ Դանիէլ վարդապետն նախանձու լցեալ՝ ոգով թշնամանաց զինեալ ընդդէմ մեր՝ զբազում զրպարտանս անվայել բանիւք յօդեալ ի գրի յղեալ էր Եփրեմ վարդապետին, և նա առանց հետաքննին խուզողութեանց անսացեալ զրաբանութեանցըն որոյ՝ ծանուցեալ էր զայնոսիկ բանսն ի դուռն կայսերն ռուսաց՝ և կամեցեալ էր յետս նահանջել զքաղցր ակնածութիւն նոյն ինքնակալին ի մէնջ, և իմ իրազեկ լեալ այսոցիկ եղելութեանց՝ զԿարապետ և զԱբրահամ եպիսկոպոսունսն առաքեցի գնալ և ներկայանալ առաջի նորին կայսերական մեծութեան և յայտնել զստութիւն բանից նախանձոտաց. ընդ որս առաքեցի զհամահաճական բազմակնիք մահսէրն ազգի մերոյ, զ՚ի զանազան քաղաքաց և յանձանց եկեալ շնորհաւորական գրեանս, և զօրինակսն ֆէրմանաց թագաւորին Օսմանցւոց, և Պարսից Շահին, որպէսզի օգոստափառ կայսերն այն, զրովն այնոքիւք կշռեալ զբանս զուր զրպարտողաց զմէնջ, ծանիցէ զստութիւն նոցա և մեզ իրաւունս արասցէ, և իւրն հրովարտակաւ հաճեսցի յայս մեր հայրապետական իշխանութիւն։ Հանգոյն սմին գրեալ ի մեծն Պօլիս՝ յորդորեցաք զիշխանապետս և զիշխանս, զի տեսցեն զաղմըկալիր խռովութիւնս և զհետ երթիցեն խաղաղութեան. և թողցեն զդիտումն զայն, որք կամին զԴանիէլն ուրէք մեզ հակաթոռ կացուցանել ի վնաս սրբոյ Աթոռոյս և այլն զգրոյ օրինակն նոցա ընդ գրոյս առ ձեզ յղեցի, զի տեղեկասջիք գրելոցն ի դմա։ Եւ դուք սիրելիքդ իմ ջատագով լեալ ճշմարտութեան՝ մի լինիք ունկնդիր սնոտի բանից նոցա, որք հային յաւերութիւն բարեկարգութեան Ազգին, և բերեն տգեղութիւն համբաւոյ մերային ժողովրդոց, այլ որչափ և հնար է ջանասջիք նանրացուցանել զվայրաբանութիւնս նախանձոտ արանց, և ուր հարկըն է, փոյթ կալջիք հրատարակել զճշմարտութիւն գրով և բանիւ, հաստատեսջիք զգայթակղեալսն ի բանից նոցա։ Եւ զսիրելի որդին իմ Մարտիրոս առատաձեռն արքեպիսկոպոսն մարդասիրապէս պատուեսջիք, զորդի փոխանակ հօր յարգելով, և լեր ողջ երկար կենօք ի Տէր զօրացեալ, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս, և ի յունուարի ... ի սուրբ Էջմիածին։

ՃԽԸ. *Թուղթ յըԶմիւռին առ Աբրօյեան Մարգար աղայն ի պատասխանի օգոստոսի 21 գրեալ թղթոյն:*

Եւ ընդ ողջունառաք սիրապարգև օրհնութեան նամակիս, ծանուցումն եղիցի սիրելի և հոգևոր որդւոյդ սրբոյ Աթոռոյս Էջմիած-

նիւ Ձի բազմատենչ սրտիւ և մեծաղոյն բազ-
ձանօք ի յօգոստոսի 21 գրեցեալ զԹուղԹն
խնդակցուԹեան և շնորհաւորուԹեան յատկեղ
սիրելւոյդ, ընկալաք և մեք բազմապատիկ
շնորհակալուԹեամբ և առատաբաշխ օրհնու-
Թեամբ ի նոյեմբերի 16 ընդ սիրելի որդւոյն
մերոյ մահսարատաք Կարապետ շնորհափայլ
եպիսկոպոսին։ Եւ գիտացեալ այնու զանխաբ-
զախ պարզուԹիւն սիրոյդ, և կատարեալ բա-
րեկամուԹիւն պատուական անձինդ, ուրախ
եղաք ի Տէր ըստ հոգւոյ և մարմնոյ։ Եւ որ ըղ-
ձալի նշանաւ՝ մէկ վերարկուացու չուխային՝
զիմանալիր բշտեմարան սիրոյն, իբրև զբոլո-
րապտուղ նուէր, մեր առաջի մատուցեալ էիր,
և իբրև զհանդերձ՝ զայն ի ձեռն մարմնակա-
նին մեզ զգեցուցեալ, և մեք անբաւ՝ և լիա-
լիր գոհունակուԹեամբ առընկալեալ, զմաղ-
Թանս առ զարդարօղն տիեզերի և պսակա-
դիրն ամենեցուն վերառաքեցաք։ Որպէսզի՝
փոխանակ այնր երեելւոյն և մարմնաւորին,
զաներևն զհոգևորն և զանանցանելին պար-
գևեսցէ քեզ դերաղնի։ բազձալւոյդ միրոյ, և
յերկակի կեանս քոյ մարմնով և հոգւով զար-
դարեսցէ, և անԹառամելի պսակաւ պսակա-
ւորեսցէ, և ի հաճոյս իւր ընկալցի, և ըստ
անչափուԹեան սիրոյդ, առաւելապէս հա-
տուսցէ քեզ, հայելով՝ ոչ ի յորքանուԹիւն
տրոյն, այլ ի յազնուական սիրտ տուողիդ,
և իբրև զծառ ի գնացս Ջուրց անկեալ սա-
ղարԹալից բազմապտուղ և բարեբեր, միշտ ի
պարարտուԹեան պահեսցէ ի փառս անուան
իւրոյ և ի բերկրուԹիւն սրտի մերում։ Եւ բա-
րեպատշաճ էր Թէպէտ, զմերս այս օրհնու-
Թեան և շնորհակալուԹեան նամակ փուԹա-
պէս առ ցանկալիդ մեր առաքել, սակայն
մահսարատարն ըստ որում անագան ուրեմն
ժամանեաց առ մեզ, և մանաւանդ յայնմ մի-
ջոցի՝ և մեք ի յանտանելի բազմակերպ հոգս
կալաք պատաղեալ, չեղև մեզ ուստի՝ ի ժա-
մանակին զայն պատրաստել. այժմ ես՝ Թէև
կամք ի նոյնն, այլ հակազրեալ ի սիրոյ, և զա-
մենայն խուժանն ի բաց եղեալ, ի գրել սիրով
զանդրադարձն ԹղԹոյ ձերդ աստուածպաշ-
տուԹեան բարելօժարեցաք երկրորդ համարե-
լով զամենայն։ Այս արդ՝ և զանցիցն անցե-
լոց զմեօք և զսուրբ ԱԹոռովս սակաւուք բա-
նիւք գրեսցուք աստէն։ Եփրեմ վարդապետն
որ ի յՌուսաստուն, ի դատարկ բանից Դա-
նիէլ վարդապետին խարեցեալ, ծանուցեալ է
մեծի կայսերն ռուսաց զանազան անհիմն
զրոյցս, որպէս Թէ՝ բռնուԹեամբ և կաշառօք
իցեմք նստեալ, և զարծաԹեղէն զարդս եկե-
ղեցւոյ խորտակեալ և պարսից տուեալ, նո-
քօք յափշտակեալ զայս ԱԹոռ և ոչ ընտ-
րուԹեամբ ազգին և ԱԹոռայնոցս, և այլն, զորս
վերստին արծածելն՝ աւելորդաբանուԹիւն հա-
մարիմ։ Եւ օգոստափառն ես՝ հաւատալով բա-
նից նորին հրամայեալ է իւրում դեսպանին
չխառնիլ ի հոգևոր գործս ազդիս։ Եւ ոմանք
յիշխանացն Պօլսոյ ես՝ նիւԹ ի յԵփրեմ և ի
Դանիէլ վարդապետացն առեալ, կամին զնոյն
ինքն Դանիէլն յառաջ կոչել և զմեզ անպա-
տուել. զորս ի հարկէ և սիրելիդ մեր է լուեալ։
Որոց աղագաւ և մեք զԿարապետ և զԱբրա-
համ եպիսկոպոսունսն զսիրելի որդիսն մեր
առաքեցաք առ նոյն ինքնակալն ռուսաց,
հանդերձ ֆերմանի և Պարսից Շահի մեզ շնոր-
հեալ բաղամի օրինակօքն, և ընդհանուր Ազ-
գիս Հայոց համահաճական և շնորհաւորական
մահսարօքն և ԹղԹովք։ Եւ խնդրեցաք ի նմա-
նէ ճշմարտուԹեամբ և քննուԹեամբ զիրա-
ւունս առնել, և բանից սնոտեաց ունկն չը-
մատուցանել։ Եւ առ բոլոր իշխանապետսն և
իշխանսն մեծին Պօլսոյ գրեցաք հասարակա-
բար և իւրաքանչիւրոցն ես ուրոյն ուրոյն
զնոյնն։ Եւ պատուիրեցաք նոցա, և բազում
սիրով յորդորեցաք Թողուլ զամենայն խոր-
հուրդս և զգործս վնասակարս, որք առըե-
րին խղճալի Տանս զմեծամեծ և ազգի ազգի
վնասս, և զմշտնջենաւոր վատահամբաւու-
Թիւնս ի բարի անուանց իւրեանց յազգաց յաղ-
գըս ի մէջ այլակրօնից։ Եւ զգուշացուցաք ամե-
նիցն հեռի կալ ի չփոԹից և ի խռովուԹեանց,
յորոց ոչ ինչ բարի յառաջանայ։ Քանզի՝ եԹէ
կամին, զի Դանիէլն հակաԹոռ դիցէ և մեզ
հակազինիցի, այն կործանումն է ԱԹոռոյս և
ոչ օգուտ, զի Թէ բարի ինչ իցէր, նախնիքն
նոցա առնէին, բայց ոչ կամեցան և ոչ արա-
րին, վասնզի՝ վնասն անԹուելի է, որք խո-
հականի առն են յայտնիք։ Իսկ Թէ բացար-
ձակ զմեզ կամին տեղափոխել, և զԴանիէլն
ի սուրբ ԱԹոռոջս նստուցանել և այլն, այն ի
բարի կամս նոցա առնեմ ապաստան։ Բայց
ծանիցեն, զի խորամանկ պարսիկ են սոքա
առանց գլխաւոր վնասուց, զմեզ փուԹով ի
ձեռաց ոչ Թողուն, և զայլ ոք դիւրաւ՝ ի

նէրս ոչ ընկալնուն, մեք անպարտ լիցուք։ Մի գոցէ փոխանակ պայծառացուցանելոյ, անչքութեան և աւերման պատճառք լինիցին, զօգուտն ինքեանք ընտրեսցեն։ Եւ վերջապէս խնդրեցաք, զի զայս հաւատարիմս լզեսցեն և մեզ յանձնեալ իրացն հասու եղիցին, զի մի լետոյ ինքեանք վատնեսցեն և զայն ի վերայ մեր դիցեն, որպէս և վասն Դանիէլի կաթուղիկոսութեան ինքեանք խարջեցին, և յիմ վերայ եղին զկեղտ անուն։ Եւ վասն բռնութեան և արծաթեղինացն եւ՝ զորս ըզմէնջ ասեն, տուաք զպատասխանին երկար բանիւք և ճշգրիտ փաստիւք, զորոց ոչ առնեմ աստէն զյիշումն։ Եւ զօրինակն թղթոյն զոր յղեցաք ի Պոլիս առ իշխանսն, առաքեցաք ընդ գրոյս առ սիրելիդ մեր տեսանել, և գրուածոցն մերոց հասու լինել։ Որպէս և քեզ սիրելւոյդ իմոյ ես գրեմ և խնդրեմ, ի բաց հեռացուցանել զքեզ ի բանից խռովասիրաց, և ի սիրոյ և ի հաւատարմութենէ աննուազելի մնալ և ի մեծն Պոլիս առ որս պատկանի գրել և ի խաղաղութիւն զնոսա համոզել։ Եւ զճշմարտութիւն զոր կամին ծածկել այլք, յաղթանակ դնել, և ի հեռաւորս և ի մօտաւորս և ի մերձաւորս տարածանել, և այնու զմեզ ի ձեռաց թշնամի արանց ապահովս առնել որովք վարձուց բազմաց արժանաւոր զտանիցիս մշտապէս։ Իսկ զայլ որպիսութիւնսն մեր և սրբոյ Աթոռոյս, ունիս ի սիրելի որդւոյն մերմէ և յարժանաւորել առաջնորդէն ձերմէ Մարտիրոս շնորհափայլ արքեպիսկոպոսէն լիապէս տեղեկանալ, զոր յանձնեմ ի սէր սիրելւոյդ։ Այսպէս գիտելով քոյ, և զսիրոյ թուղթ ի մէնջ անպակաս առնելով, լեր ողջ ի Տէր, և զօրացեալ նովաւ. և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ և ընդ քոյոցն, Ամէն։

Գրեցաւ ի 1802 և ի յունուարի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՃԽԸ. *Թուղթ յիզմիր առ Մոսկով կոչեցեալ Յովհաննէս աղայն Սաւալանեան, շնորհակալութիւն վասն սիրոյն եւ հարազատութեանցն որ առ սուրբ Աթոռս:*

Եւ ընդ ամենառատ օրհնութեանս Աստուածայնոյ գիտութիւն լիցի գերազնիւ սիրելւոյդ մերոյ՝ և օգտախոհ որդւոյդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի ըստ իմաստնոյն բանի թէ համբաւ բարի պարարէ զոսկերս, արդարև նարդենիս ժամանեալ առ մեզ ախորժալուր համբաւոյ ձերդ բարեկամութեան՝ զուարթացաք ուրախութեամբ, և զուարճացաք ի հոգի և ի մարմին։ Քանզի՝ թէպէտ սիրելիդ ոչ էիր դրեալ առ մեզ թուղթ, բայց վայելչապատիւ առաջնորդ և նուիրակն ձեր, և լսկապէս սիրելին մեր՝ Մարտիրոս հանճարունակ արհիեպիսկոպոսն յատկապէս դրեալ էր մեզ զբարելաւութիւն և զառաջադիմութիւն քոյ և զունելդ առ սուրբ Աթոռս Մայրս լուսոյ և առ մեզ զսրտական սէր և զհաւատարմութիւն, նաև զյամենայն սրտէ ուրախանալդ, և զուարթամտութեամբ յօժարակամ լինելդ առ կոչումս մեր ի սոյն պաշտօն հայրապետութեան։ Որովք զուարճարար համբաւովք՝ բազում դիւրութիւն և ուրախութիւն եդև սրտի մերում և պարարումն ոսկերաց ըստ բանի իմաստնոյն, վասն որոյ բազմաւ գոհունակութեամբ շնորհակալ լեալ զսիրելւոյդ հաւատարմէ, օրհնեցաք զքեզ և զհամօրէն բարեպաշտօն օրհնեալ ժողովուրդսդ իսկ։ Քանզի՝ յատկեզ սիրելիքդ մեր և հատընտիր որդիքդ Մօրս հաւատոյ սրբոյ Դահիս՝ հարազատ որդիութեան և հաւատարմօրէն բարեկամութեանս ձերոյ՝ երիցս տուիք առ մեզ զշնորհս բարելաւութեան. զի նախապէս ի լսելն ձեր զլուր կոչման մեր յայս աստիճան, իսկ և իսկ հաճեցեալ ընդ այն՝ վաղվաղեցիք յառաջ քան զամենեսեան գրել առ մեզ զշնորհաւորութիւնս հասարակական ձեռնարկիւ։ Երկրորդապէս՝ օրհնեալ իշխանքդ դրեցիք յատուկ յատուկ թղթովք զկրկին բանս շնորհաւորութեան և խնդակցութեան։ Երրորդ և գերազանց պտուղն սիրոյ ձեր այն՝ որ ահա ի Դուռն ինքնակալ Կայսերն հասարակութեամբ արդ էք դրեալ ի ջատագովութիւն զմէնջ՝ ընդդէմ ստալօդ բանից Եփրեմ և Դանիէլ վարդապետաց, որպէս դրեալ ծանուցեալ էին մեզ ոմանք ի Պոլսոյ։ Եւ որպէս դուք, նոյնպէս հարազատամիտ առաջնորդն ձեր Մարտիրոս գերզգօն արհիեպիսկոպոսն յամենայնի զսէր և զհաւատարմութիւն եցոյց առ մեզ. քանիցս գրելով զթուղթս շնորհաւորութեան և յարգանաց, և ըստ հարազատ որդիութեան և բարեմտութեան առ սուրբ Աթոռս՝

յօգնութիւն հասանելով սմա ի բարեպատշաճ ժամուս մատուցմամբ արդեանց իբրև նախախալծ պտղոց յառաջ քան զամենայն նուիրակունս և գործակալսն մեր, քանզի ի բարեպարգիւն տրոց ձեռոց՝ փօլիցալիւ զարդիւնս էր հասուցեալ ի Կարին, զոր և մեք ստացաք անտի, և մատուցաք Քրիստոսաէջ սրբոյ տեղւոյս, և շնորհալութեամբ օրհնեցաք զնա և զնուիրօղսդ։ Եւ գիտեմք՝ զի նա ինքն սիրելին մեր ըստ բնիկ բարեսիրութեան իւրում քաղցրութեամբ կառավարելով չահէ և Տէրունի ժողովուրդսդ մեր, առ. որ և դուք սիրէք զնա, որպէս բազում իշխանք քաղաքիդ զբազում գովութիւնս գրելով մեզ զնմանէ, խնդրեալ էին վերահաստատել զառաջնորդութիւն նորին։ Արդարև ընտիր առաջնորդ և ընտիր ժողովուրդք, որք իբրև զմի հօտ և զմի հովիւ սիրաշաղկապ միաւորութեամբ համակցեալք, զսէր և զխաղաղութիւն համբուրէք առ. ձեզ և առ. մեզ ի փառս Աստուծոյ, ի բարեհամբաւութիւն ձեզ, և ի յուրախութիւն բազմավարան սրտի մերում։ Եւ այսպէս գիտելով մեր և զձեր երկակողմեան սէր և միաբանութիւն, վասնորոյ ահա զկոնդակ դրեցաք առ. օրհնեալ ժողովուրդսդ, որով և վերստին շնորհեցաք ձեզ առաջնորդ զմտերիմ սիրելին մեր Մարտիրոս աստուածիմաստ արհիեպիսկոպոսն։ Իսկ առ. առաքումն Սրբալոյս Միւռոնի այժմ յաղագս պէսպէս զբաղմանց անձեռնհաս լինելով, յետոյ Աստուծով յղելոց եմք՝ առ. ի կատարել և զգործ նուիրակութեան, որպէս լիապէս իմանալոց ես ի կոնդակէն։ Արդ՝ թէ զայն կոնդակն և թէ զայլ թուղթս պարտէաք թէպէտ փութով յղել, բայց մահսէրաբեր Կարապետ եպիսկոպոսն անազան եկն առ. մեզ, և ի գալն՝ մեք այլ և այլ անցիւք և հոգօք զբաղեալ՝ արգելեցաք։ Այժմ ձեռնհաս լեալ՝ դրեցաք ընդ կոնդակին և զբազում թուղթս շնորհակալութեան առ. յարգելի իշխանսն։ Իսկ զայս թուղթ օրհնութեան ես յատկապէս առ. սիրելիդ գրեցաք՝ նախապէս առ. ի տալ քեզ այսու զօրհնութիւնս Աստուածայինս. զոր Տէր օրհնեսցէ և զօրացուսցէ, և ըստ հաւատարմութեանցդ առ. մեզ վարձատրեսցէ առաւելապէս, և պահեսցէ ի խնամս իւր հանդերձ քոյայնովքդ բնաւիւք։ Եւ ապա ծանուցանեմք ազնուոյդ զայս. զի Եփրեմ վարդապետն պատրեալ ի ստայօղ բանից Դանիէլ վարդապետին մինչ պղտորեալ է զմիտս մեծի կայսերն աւելուդ զրպարտութեամբք զմէնջ՝ զորս պարզապէս գրելն ասաէն՝ անդէպ վարկանիմ.ուստի՝ և մեք հարկաւորեալ՝ արզայ դրեցաք՝ ծանուցեալ ի նմա ուղղութիւն անցից մերոց. զոր և ձեռամբ երկուց եպիսկոպոսաց առաքեցաք հանդերձ օսմանցւոցդ տէրութեան յանուն մեր շնորհեցեալ ֆէրմանի, և պարսից շահի տուեալ ռաղամի օրինակօքն, և բազում տեղեաց բազմաց Անձանց եկեղեցականաց և աշխարհականաց շնորհաւորութեան թղթովք և մահսերովք ես և միաբանից և երկրացւոց մերոց մահսէրօք, առ. ի ճշգիւ քննութեամբ հասու լինիլ իրաւանցն, և զուղիղն կացուցանել, և վասն մեր շնորհել զհրովարտակ հաստատութեան։ Գրեցաք և առ. Կոստանդնուպոլսոյ իշխանսն և առ. այլ երևելի անձինս, հեւի մեալ՝ ի խորհրդոցն՝ զոր խորհին՝թէ Դանիէլն հաստատեսցի, և հակաթոռ մեզ երևեսցի։ Քանզի՝ ահա վնասն յայտնի է՝ որ իսպառ աւերելոց է սուրբ Տունս, իսկ օգուտ ոչ մի ինչ երևի, զի թէ օգտաւոր ինչ լինէր՝ նախնիքն առնէին, բայց գիտելով զաղետալի վընասն՝ չարարին զայն ապօրինաւոր գործ։ Այլ թէ ոչ փոյթ առնելով առ. վնասն՝ կամեսցին յայտնապէս անպատուել զմեզ, և զԴանիէլն փոխանակ մեր նստուցանել աստ, մեք թէպէտ չունիմք առնել ինչ, բայց զլխաւորքն մեր խորամանկ պարսիկք գոլով՝ մինչև բոլորովիմբ չկեղեքեսցեն զկեանս մեր, ոչ թողուն զմեզ ի ձեռաց, և ոչ զայլ ոք ընդունին։ Ուրեմն զգոյշ լիցին, զի մի փոխանակ շինութեան սրբոյ Աթոռոյս՝ աւերման լիցին պատճառք։ Դարձեալ գրեցաք, զի զարս հաւատարիմս յղեսցեն ի սուրբ Աթոռս, որք ականատեսութեամբ հասու լիցին՝ թէ մեզ որքան ինչ յանձնեալ են և մեք զինչ եմք խարճեալ, զի մի գուցէ այլք վատնելով՝ զկեղտ անունն զմէնջ ստորոգեսցեն, որպէս և որինչ խոստմունք և ծախք եղեն աստ, վասն Դանիէլին կաթուղիկոս լինելոյ եղեն, բայց ի վերայ մեր բարդեցին։ Ահա զօրինակն թըղթոյն մեր զոր գրեցաք առ. իշխանապետսն Պօլսոյ՝ յղեցաք առ. ձեզ, զի տեսջիք, և դուք ևս ըստ այնմ գրեսջիք անդ՝ զգուշացուսջիք, զի հեռի մնասցեն ի վնասակար չարժմանց։ Այլ մեք գրեմք սիրելւոյդ, զի զմիտսդ անպղտոր

պահելով ի ստալօղ բանից, ի ճշմարիտ սէրդ և ի հաւատարմութիւնդ առ սուրբ Աթոռս և առ մեզ հաստատ կացցես, նաև արժանավայել առաջնորդիդ ձերում յարգօղ և մեծարօղ լինիս՝ որպէս մինչև ցարդ եղեալ ես. և զոր ինչ բարելաւութիւնս առնիցես դմա՝ մեզ և սրբոյ Աթոռոյս լինին համարեսցեալք, և յոյժ շնորհակալ լինելոց եմք զքէն օրհնութեամբ։ Ողջ լեր ի Տէր։

Գրեցաւ ի ՌՄԾԱ Թուոյս, և ի յունուարի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՃԽԹ. *Թուղթ ի Թիֆլիզ առ Դաւիթ արքայորդին, յաղագս ներման եւ թողութեան Տէր Գրիգոր Երիցուն։*

Ցորմէ խաղաղական ողջունիւ սրբով և քրիստոսապարգև սիրով, սրտական կարօտիւ և հոգևոր օրհնութեամբ ծանուցումն լիցի յարգոյապատիւ սիրելւոյդ մերում և քաջընտիր հաւատարիմ բարեկամիդ սրբոյ Աթոռոյս, տերամբ քրիստոսիւ զօրացեալ մեծահամբաւ և չքեղաշուք լուսաւորազունեդ Դաւիթ արքայորդուդ։ Զի ի ներկայումս սիրելի և հոգեւոր որդիքն մեր՝ Կարապետ և Աբրահամ հանճարունակ եպիսկոպոսունքն թուղթ էին ղըրեալ առ մեզ ի յօրհնեալ քաղաքէդ, որով և ծանուցեալ էին զանվնաս հասանելն իւրեանց յայդր, և զձեր սիրով ընդունելն զինքեանս։ Առ որ և մեր շնորհակալ լեալ զգերապայծառութենէ ձերմէ՝ օրհնեցաք բազմաւ օրհնութեամբ։ Որում տէր շնորհեսցէ ըզկեանս երկարս և խաղաղականս։ Արդ՝ ըստ գրուածոյ լիշեալ եպիսկոպոսաց մերոց լուսամք թէ մինչև ցարդ նոքա զնացեալ իցեն այտի. բայց թէ դեռ ևս յամեալ իցեն յայդր, խնդրեմք, զի շուտով ուղևորեսջիք զնոսա գնալ ի յերկիրսն հիւսիսոյ։ Որոյ աղագաւ յոյժ և յոյժ շնորհակալ լինելոց եմք զպատուականութենէ ձերմէ արժանաւոր օրհնաբանութեամբ։ Եւ արդ՝ զայս գիտասցես. զի այն Տէր Գրիգոր երիցուն՝ առ որ փոքր մի զմեղադրանաց բանս էաք գըրեալ, ահա ի պատիւ և ի սէր պատուականութենէդ ներեցաք, և զսիրոյ և զօրհնութեան թուղթ ղըեցաք առ նա, որ միամտութեամբ կատարեսցէ զիւր Քահանայական կարգն, բայց և հեռի մնասցէ այսուհետև յանպիսի ապօրինաւոր վարեցմանց։ Այսպէս գիտելով ձեր ե ի սիրոյ և բարեկամութենէ աննուազ մնալով առ մեզ, ողջ լեր տերամբ, և պահպանեցեալ հզօր աջով նորին յարաժամ։ Ամէն։

Գրեցաւ յամի Տեառն 1802։ Եւ ի յունվարի... ի լուսակաղմ Աթոռս սուրբ Էջմիածին։

ՃԾ. *Թուղթ ի Թիֆլիզ առ Իվան Պետրովիչ Լազրովն։*

Ցորմէ ստոյգ բաղձանօք սիրով և օրհնութեամբ ծանուցումն լիցի ընտիր բարեկամիդ մերում պարոն Իվան Պետրովիչ քրիստոսազօր ենարալիդ և զանազան նշանակրիդ։ Զի ի յունվարի 10 դրեալ զհաւատարմական և զսիրոյ գիրն ձեր, ընկալաք բաղում շնորհակալութեամբ և օրհնութեամբ ի ձեռն մինբաշի[28]) պարոն Ցովսէփին ի փետրուարի 2 յԵրեան։ Եւ գիտացեալ զբարերարութիւնսդ զորս ցուցանես այդր եղեալ եպիսկոպոսացն մերոց, որպէս և ինքեանք մեծ գոհունակութեամբ դրեալ էին մեզ վնոյնն, ուրախ եղաք ի տէր։ Եւս ծանուցանելդ պարոն Կնօրինին վասն եպիսկոպոսացն մերոց թէպէտ բարւոք է և նշան սիրոյ առ մեզ, սակայն փութով գնալն դոցա այտի, և ևս առաւել բարւոքագոյն լինէր, և սրբոյ Աթոռոյս մերոյ և մեզ օգուտ յոյժ, և մանաւանդ մաքուր միտք մեծի կայսեր, զոր ոմանք այլ և այլ բանիւք պղտորեալ էին, շուտով պարզիւր։ Նա և ձեզ յայտնի է, որ եթէ (մեծի կայսեր) շնորհն չիցէր ի վերայ մեր, յայս պաշտօն հոգևոր ոչ էաք ելանելոց, և լըսկղբանէ մինչ ցարդ, և մինչև ցել շնչոյ մերոյ՝ կամք վերստին ի յողորմութիւնս նորին յուսացեալ, ապա՝ դժ է, զի որ ինչ այլոց ոչ հանդիպի, մեզ պատահին, և բանք և գործք և թուղթք այլոց, որպէս Դանիէլ վարդապետին յառաջ երթան, իսկ մերս արգելանին։ Եւ մանաւանդ լայսպիսի վտանգաւոր ժամանակիս, յորում շրջապատեալ կամք ի զանազան թշնամեաց այլազանց, ե-

թէ մեք զերկիւղն և զվնասն որ ի սոցանէ ի րաց եղեալ, զերկու եպիսկոպոսունս ըղեցաք աղերսական գրով առ. նորին կայսերական մեծութիւն յայանելով զցաւս մեր, ապա ընդէր է՝ իբրև զօտարս զմեզ համարելով, ոչ մարդկանցն մերոց լինի յառաջ խաղալ, և ոչ թղթոցն, որ այդ գործ արկանէ զմեզ ի յուսահատութիւն և ի սիրոյ ցրտութիւն։ Ուրեմն՝ ջանասջիք զիարդ և իցէ՝ փութով դդոսա ուղևորել և այդու զմեզ բարերարել, քան զոր չիք առաւել բարեկամութիւն զոր կամեցիք մեզ ցուցանել։ Ողջ լեր ի Տէր։ Ի 1802։ Եւ ի փետրվարի 2։ յԵրեան։

ՃԺԱ. *Թուղթ ի Թիֆլիզ առ վրացի քահանայն, որոյ անունն յետոյ գրի, որ է թարգման պարոն Լազրովին։*

Ցորմէ օրհնութեամբ և սիրով և քրիստոսաձիր սուրբ ողջունիւ ժամանեսցէ թուղթ խաղաղական. հանդերձ ամենառատ գթութեամբ հօրն ամենակալի և շնորհօք և կենսագործ զօրութեամբք սրբոյ տեղւոյս քրիստոսաիջի և սրբութեանցն և սրբոց նշխարացըն որք ի սմա, ի վերայ հարազատ որդւոյդ մերոյ և մտերիմ սիրելւոյդ՝ տերամբ յիսուսիւ զօրացեալ Տէր Ցովսէփ հանճարառատ և խոհեմամիտ քահանայիդ։ Եւ ի վերայ Աստուածապահ տանդ և բնակութեանդ, և համայնից քոյայնոցն որդւոց, ընտանեաց և բարեկամաց և ջերմեռանդ սէրդ, զորս ունիս զէպ առ. մեզ և որոց ընդ օրհնեալ յարկաւ քով են եղիցի ի տէր խնդալ բազում բարութեամբ։

Եւ ընդ սիրոյ և օրհնութեանս Աստուածայնոյ՝ գիտութիւն լիցի սիրելի որդւոյդ մերում։ Զի զհամբաւդ բարի և զսէրդ կատարեալ որ առ սուրբ Աթոռս մեր և առ մեզ գիտացեալ ի ձեռն գրութեանց այլոց, օրհնեցաք զարժանաւորդ օրհնութեան։ Քանզի ոմանք բարեկամք գրեալ էին զհարազատ որդիութիւնդ և որովք լինիս ջատագով որք ոչ միայն ի դրոյ, այլ և ի լրոյ հնչին առ մեզ. վասնորոյ արժանապէս այս թուղթ ի նշան առաւել սիրոյս և հայրութեանս և օրհնութեան, և յանդրադարձ հարազատութեանցդ մատչի առ սիրելիդ մեր։ Տէր օրհնեսցէ զքեզ և զօրացուսցէ, և յամենից փորձանաց փրկեսցէ զքեզ հանդերձ համայն քոյտնովքդ, և միշտ յառաջադէմս արասցէ զքեզ ի գործս մեծամեծաց։ Պատուիրեմ ուրեմն՝ զի զոյնն յաքամնասցես, և ևս աճեցուն և հաստատուն արասցես զայդ, և ի սրբոյ Աթոռոյս մերմէ և ի մէնջ աննուաղելի և անպակասելի պահեսցես, և երբեմն որպիսածանոյց և սիրալիր գրովդ զմեզ ուրախ արասցես, զի հանապազ զօրութիւնս և զշնորհս Աստուածէջ սրբոյ տեղւոյս ժառանգելոյ արժանաւոր դտանիցիս։ Այսպէս գիտացեալ ողջ լեր ի տէր Քրիստոս, և զօրացեալ միշտ ի նոյնն։

Գրեցաւ ի Փետրվարի 2։ 1802 յԵրեան քաղաք։

ՃԺԲ. *Թուղթ ի Հաշտարխան առ դատաստանատանց դատաւորսն վասն Ալիասկարի բանի: Գնացող վէքիլի անունն է մոլլայ Համզաբայ եւ վարիսքն տեղս են։*

. . . Հաւատարիմ խորհրդականացդ օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն և ճշմարտասէր արդարադատ դատաւորացդ Առաջնոյ և Երկրորդաց, որք կայք ի դատաստանատունս Աստուածապահ և կայսերապերճ երկրիդ պանծալի ազգիդ ռուսաց. սրոցդ ամենից գիտութիւն լիցի։

Զի ամենայն օրէնք թէ բնականք և թէ դրականք ուսուցանեն մեզ զինչս մեռելոց հասուցանել նոցին ազգայնոցն և ընտանեաց, և այնու զօրէնս կատարել և ի պարտուց ազատիլ։ Արդ՝ յայսպիսի ասացելոցս մինն է Ալի Ասկար կոչեցեալն, որ վերջացեալ ի կենաց յայդր ի Հաշտարխան քաղաքի՝ թողեալ է զինչս և զդրամս, ընդ որս և մէկ քարվանսարայ քարեայ որպէս ստուգեն բազումք։ Եւ ունի հաստատնապէս և առանց ստութեան զընտանիս և զազգականս յԵրեան քաղաքի։ Որոյ ինչքն չարժականքն և անշարժքն ըստ ամենայն օրինաց՝ իրաւամբ և արդարութեամբ սոցա պարտի հասանիլ և ոչ այլոյ օտարի։

Որպէս նոյն Ալիասկարի արենակից ընտանիքըն յանցեալ ամս ի կողմանէ իւրեանց ղմոլլա Հաջի բաբայ ոմն վէքիլ արարեալ առաքեալ են յայգր ի Հաշտարխան հանդերձ բազմակնիք թղթով ամենայն բնակչացն Երեւանու Եւ նախորդ հայրապետն սրբոյ Աթոռոյս տէր Ղուկաս ողբացեալ կաթողիկոսն ևս ղիտելով զոտուղութիւն բանին, որ լիբաւի սոքա արենակից մերձաւորք են Ալիասկարին, և նորին կայքն առ սոսա պարտին հասանիլ օրինօք և ոչ առ օտարս, վասնորոյ իւրով ղրով և հայրապետական կնքով վկայեալ է և նա․ Բայց մինչ ցինչ և իցէ պատճառաւ զկայսն Ալիասկարին փակեալ են ի ղատաստանատան, և նորին աղղայնոցն մինչ ցարդ չեն հասուցեալ, և մոլլայ Հաջի բաբայի ես վէքիլութիւն ունայն համարեալ, վասնորոյ ազգականք նոյն Ալիասկարին որք յԵրեւան քաղաքիս վերստին ղխնդիր մատուցեալ գերապատիւ խանին երկրիս աղերսեցին, ղի խնդրեսցէ ի մէնջ վկայել ճշմարտութեան, որ և՝ մեք ըստ խնդրոյ բարձրապատիւ խանին մերոյ և ըստ թախանձանաց ողորմելի ազգականացն վերոյգրեալ Ալիասկարին այսու ղրով մերով վկայեմք ճշմարտիւ և ստուգութեամբ, որ ալի Ասկարն ունի յԵրեւան քաղաքին ղարենակիցս և ղմերձաւորս, և յայգր եղեալ մոլլայ Հաջի բաբայն ես՝ սոցա վէքիլն է հաւաստեաւ, և կայքն մեռելոյն ի դա պարտին հասանիլ, և ի դա հասեալն՝ առանց կարծեաց ի սոսա հասեալ ղիաառօքիք։ Զայսոսիկ այսպէս ծանուցեալ ձեր, և զիրաւունս զրկելոց չնորհեալ՝ ողջ լերուք ի Տէր Քրիստոս ի լոյսն բնաւիցս, և զօրացեալք ի նոյնըն, ամէն։

Դրեցաւ վկայականս յամի կենարարին մերոյ ի 1802։ Եւ ի փետրվարի 11։ Ի սուրբ Աթոռս ամենայն Հայոց, որ ի դաշտս Արարատեան։

ՃԺԳ. *Թուղթ ի Կարին առ Ասլան Մարտիրոս աղայն ի պատասխանի թղթոյ նորին. եւ բան վասն խաղաղութեան եւ ծանուցումն մահսէրի միաբանից, որ եղեւ առ ազգն:*

Եւ զկնի Աստուածային օրհնութեանս յայտ լիցի պատուական սիրելւոյդ իմոյ. ի հինգն յունվար ամսոյ ղրեալդ սիրոյ թուղթ ժամանեաց ի մեզ նոյն ամսոյ ... ընթերցեալ ծանեայ զանկեղծ հաւատարմութիւն, զսերտ սէր և սրտակից բարեկամութիւն քրիստոսասէր անձինդ պատուականի. և եղէ չնորհակալ զքէն և օրհնեցի։ Եւ նախքան զ՚լիր յարգելւոյդ էհաս առ միաբանս մեր յորդորանօք Դանիէլ վարդապետի մահսերակերպ ղրուածն օրհնեալ իշխանաց տեղւոյդ. ընթերցեալ զայն իմացան զմիտ գրուածոյն. ուստի և իշխանօք, և երկրական բազմութեամբ ժողով արարեալ՝ բազմաքնին խուզողութեամբ ընտրեցին զօգուտն սրբոյ Աթոռոյս. և դծագրեալ զայն յերիս հատուածս թղթոց՝ կնքեցին ամենեքեան ստորագրելով ղանուանս իւրեանց. մինն ի գքոցս է առ Դանիէլ վարդապետն. որով յորդորեալ են թողուլ ղիւրն վնասաբեր խորհուրդ. երկրորդ է առ քաղաքացիսդ. և երրորդն առ համօրէն ազգ մեր. որովք զ՚ի խռովութեանց պատճառեալ բազմատեսակ վնասսն բացատրելով խրախուսեալ են զամենեսին ի խաղաղութիւն և ես յարմարելով զխաղաղական բանս դրեցի կոնդակ մի օրհնութեան առ ընդհանուր ազդ մեր և յղեցինք զայնսսիկ ի ձեռն Բարսեղ և Ստեփան արքեպիսկոպոսաց ի քաղաքդ. զի Բարսեղ եպիսկոպոսն կացեալ այդր, ղիջուսցէ զմիտս Դանիէլ վարդապետին ի սնոտի խորհրդոց իւրոց, և ապա դարձցի ի սուրբ Աթոռս։ Այլ Ստեփան եպիսկոպոսն ընդհանրական մահսէրաւն ունի գընալ ի Պօլիս բառնալ անտի զորոմն խռովութեան զի ի վեր ընձիւղեսցի զխաղաղութեան բարի բոյս, և դու սիրելիդ իմ զայսոսիկ գրեսմնս ունիս տեսանել և ընթեռնուլ։ Արդ՝ պատուական սիրելի իմ վերահասու եղեալ քոյ այսոցիկ գրութեանց, յԱստուածային իմն աղդեցութենէ համարեա զխորհուրդ բազմութեանս այսոցիկ, զի Աստուած ոչ չարժէ զայսքան բազմութիւնս ի մի խորհուրդ, բայց եթէ իցէ հաճոյ նմա, ուրեմն ի հաճութենէն Աստուծոյ է խորհուրդ և ընտրութիւն բազմաղումար անձանց այսոցիկ, ապա ատեցեալ քոյ զամենայն սնոտի բանս յաչաղկոտաց, լեր հետեւող ճշմարտութեան, և ըստ քոյդ օրհնեալ բարեպաշտութեան զամենայն նիւթս խռովութեան արհամարհեալ՝ զխաղաղութիւն բարի սերմանեա ի հաւատացեալս, ի հեռաւորս ղրով և ի մերձաւոր անձինս բա-

նիւք և խօսիւք, զի գործ խաղաղութեան ի քեզ բերելով կոչեսցիս շնորհական որդի Աստուծոյ արքայութեան երկնից արժանաւոր լինելով։ Զայս ես է քեզ յայտ յարդի սիրելի իմ, թէ Դանիէլ վարդապետ եղբայրն մեր յամենայն տեղիս ուր և պատահեցաւ արար վատնումն ընչից սրբոյ Գահիս ընդ վայր, այժմ ես ի նոյն արարմունս գոլով՝ նեղութիւնս հասուցեալ վէքիլաց մերոց զինչս խնդրէ ի նոցանէ. և ուր կարծիս ունի իրաց ինչ ձեռն ձգել և յափշտակել կամի, որպէս արդիս ի Զմիւռնոյ բեռն մի բերել տուեալ եմք փողով մերով, զայն ևս լսեմք թէ առ ինքն կորզել և ձգել կամի. կեղծաւոր սերոբզ այդ դրով զեկուցեալ էր մեզ, թէ բեռն ե փոխցալի դրամն Զմիւռնոյ առ իս է հասանելոյ, և ես ունիմ յղել այդր, ապա այդ ինչ չարութիւն է, զոր առնէ դա ընդդէմ իւրն դրութեան առ մեզ, զգուշացուցէք զդա զի թողցէ զանզգամութիւն իւր, զի մի զդառնութիւնս ընկալեալ լինէն յետոյ զզջանայցէ, և պատուական սիրելիդ իմ յամենայն կողմանց պաշտպան լեալ վէքիլաց մերոց՝ մի թողուր նեղութիւն հասանել դոցա, զի և ես լուեալ զայդպիսի բարեյաւութիւն քոյ բերանալիր օրհնութեամբ շնորհակալ ունիմ լինիլ դքէն, կացեալ զքոյ հաստատուն ի սէր, և ի հարազատ բարեկամութեան լեր ողջ երկար կենօք ի շնորհս Աստուածաէջ տեղւոյս և ի սէր մեր. յամի Տեառն 1802 ի փետրուար ... ի շնորհատու սուրբ Գահս Էջմիածին։

ՃԺԳ. *Թուղթ ի Թիֆլիզ ընդ մոմի նուիրակին առ Մելիք Դարչինն։*

Ցորմէ բազում սիրով և օրհնութեամբ, և Քրիստոսական ողջունիւ ժամանեալ հասցէ թուղթ երկնաւոր և միարար խաղաղութեան և կարօտանաց ի վերայ դերադնիւ ցանկալւոյդ իմոյ, և ստուգտողոյն բաղձալւոյդ, և անկեղծ հաւատարիմ բարեկամիդ, և մշտահարազատ զաւակիդ սրբոյ Աթոռոյս՝ տերամբ քրիստոսիւ զօրացեալ բարեշուք և փառազարդ ազատազնեալ և մեծատոհմ Մելիք Դարչին ազայիդ։ Զի յառաջ քան զայս զամենայն ինչ բազմիցս գրեալ եմք սիրոյդ լիապէս. զորս ի հարկէ մինչև ցարդ ընկալեալ, տեղեկացեալ իցէք գրուածոցն, որք ի նոսա։ Ուստի՝ զարդիս չունիմք զայլ ինչ հարկաւոր ծանուցանելի բաց յայսց։ Զի ըստորում Դանիէլ վարդապետն ի Կարին նստեալ ընդդէմ սրբոյ Աթոռոյս և մեր հակաղինի, և բազում կերպիւ ջանայ վնասել զխղճալի Տունս այս. վասնորոյ բոլոր միաբանք և երկրականք վերստին ի մի վայր եկեալ խորհեցան զօղուտն և զբարին և ի նորոյ զչորս մոհսէրս գրեցին բազմակնիք ստորագրութեամբ, զմինն առ ընդհանուր Ազգ մեր, որք կան ի կողմունս Օսմանցւոց թէ՝ զոր միանգամ օծաք, ամենեին մինչև ցմահն ոչ փոփոխեմք և այլն։ Զերկրորդն առ նոյն ինքն Դանիէլ վարդապետն ի Կարին նստեալ զի ի սնոտի ձգտմանց յետըս կասցէ։ Զերրորդն առ կարնեցիսն, զի ի գործս Դանիէլ վարդապետին օգնական չլինիցին. ընդ որս և մեք զընդհանրական կոնդակ գրեալ ծանուցաք ամենիցն, կամ զազարել ի խռովութեան, և կամ մեզ զճանապարհ ինչ ցուցանել։ Եւ զայսոսիկ թուղթսն ձեռամբ մեր սիրելի Ստեփաննոս արքեպիսկոպոսին յղեցաք ի Պոլիս ամսոյս 17։ Իսկ զչորրորդն գրեցին առ բնակիչսն քաղաքիդ և հիւսիսային կողմանց։ Մեք ևս զհամառօտ կոնդակ գրեալ յատկապէս առ սիրելի ժողովուրդսն տեղւոյդ առաքեցաք ընդ թղթոյս հոգևոր զաւակին մերոյ . . . Նորապսակ եպիսկոպոսին, յորմէ՝ և մանաւանդ ի մահսարէն միաբանից և ի կոնդակէն մերմէ ունիս զամենայն ինչ լիապէս գիտել, զորոց ոչ երկարեմ։ Եւ զոյն սիրեցեալ որդւոյդ մերում շնորհափայլ եպիսկոպոսիդ միանգամայն շնորհեցաք և զգործ մոմի ժողովաբարութեան. զի եկեալ այդր ժողովեսցէ զի ի նախնեաց անտի կանոնեցեալ մոմսն և վերադարձցի յիւրում ժամանակին, զոր յատկապէս յանձնեմ ի շնորհս ձեր, զի օգնական և պաշտպան լինիցիս դմա և գործոյ դորին, քանզի՝ զոր ինչ և յարգանս և զմարդասիրութիւնս ցուցջիք դմա, կատարելապէս առ առաքօղս դորին վերաբերին։ Եւ Մինաս վարդապետին հրամայեցաք զալ առ մեզ, զհաշիւն տալ, և մանաւանդ զորպիսութիւն քաղաքիդ, և կացութիւն հոգևորականացն ի նմանէ տեղեկասցուք, և զհաւատարիմն և զբարեկամն մեր գիտասցուք։

Նաև՝ մեք յանցեալսն առ Շահն զեպիսկոպոս մի չաք առաքեալ, հանդերձ կանոնեցեալ տարեկան հարկիւն, և ի 15ըն ամսոյս վերադարձեալ անտի եմուտ ի սուրբ Աթոռս հանդերձ չորիւք հզօրագոյն հրովարտակօք։ Որովք դանազան կերպիւ և հաստատուն խոստմամբք յուսադրեալ է զմեզ, և բոլոր խաներիցն Հատերրէժանի հրամայեալ է սաստկապէս օգնական և նպաստ մեզ լինել, և ամենայն կերպիւ յամենուստ կուսէ զմեզ յապահովի առնել, զորս ի սիրելի որդւոյդ մերմէ, և ի պարոն Թազայ պէկէն տեղեկանալոց էք։ Այսպէս գիտելով քոյ, և զճշմարիտ սէրդ և զանխաբդախ բարեկամութիւնդ և սիրալրակ սն դիրդ ի մէնջ անպակաս առնելով, ողջ լեր ի Տէր Քրիստոս, և զօրացեալ միշտ ի նոյնն հանդերձ բոլոր քոյայնովքամենեքումբք, Ամէն։

Գրեցաւ ի 1802, և ի փետրուարի ... ի սուրբ Էջմիածին։

ՃԺԵ. *Կոնդակ օրհնութեան ի վերայ բնակչացն Թիֆլիզու, ծանուցումն վասն մահսէրացն, զորս յղեցուք ձեռամբ Ստեփանոս արքեպիսկոպոսին: Եւ համոզումն զնոսա ի խաղաղութիւն:*

Եւ ընդ օրհնութեան և սիրոյ նամակիս ծանուցումն լիցի սիրելեացդ իմոց ի Քրիստոս։ Զի որպէս մարմնոյ բժիշկք՝ ի տեսանելն թէ՝ դժուարաւ բժշկին վէրք ախտացելոյն, սկսանին բազում ջանիւ հետամուտ լինել առ ի փարատել զայն, և ոչ լքանին, մինչև ոչ ի կատարեալ առողջութիւն հասուսցեն զնոյն ինքն ախտացեալն։ Այսպէս և մեք ի վերայ բազում առողջարար դեղոց, սիրոյ և օրհնութեան և խաղաղական նամակաց, յաւելումք և զայս Թուղթ յորդորանաց առ սիրելիսդ իմ, և առ ոմանս ախտացեալս հոգւով ի ձէնջ, իբրև զվերջին և զզօրաւոր սպեղանի ի մաքրումն ախտից ձերոց և ի կատարեալ առողջութիւն ի հոգևոր հիւանդութեանց ձերոց, որով և զայս ինչ համառօտիւ ծանուցանեմք և որպէս թէ զգուշացուցանեմք զամենեսեանդ, զի փոքր ինչ խմոր զամենայն զանդուածն խմորէ։ Արդ՝ ի թուլութենէ և ի բազմազոյն ներողութենէ մերմէ՝ յառաջացան և բազմացան բազում և ազգի ազգի խռովութիւնք յազգս մեր, և մեծագոյն վնասք խղճալի տանս այսմիկ և ի ձեռն ստապատում թղթոց խռովասիրաց և չարախնդացից, որպէս թէ խմորոց նեխելոց՝ սկսան խմորել և ապականել անարատ լսելիք պարզամտաց։ Որպէս ի շաղփաղփ բանից ճառատողաց պատրեալ Դանիէլ վարդապետին սկսաւ վրդովել և գայթակղեցուցանել զբազումս ի վերայ մեր յորոյ բանէն բաց ի բազմաց և Նփրեմ վարդապետն խաբեցեալ, սկսաւ և նա յայն կողմունսն խմորել զբազումս։ Եւ այսպէս ի սակաւիկ խմորոյ այսինքն ի ստալի և ի նենգաւոր բանից դատարկախօսից՝ զանդեալ խմորեցան ազգ մեր համակ, և հեռացեալ ի խաղաղասիրութենէ ամբոխեալ աղմկեցան և խռովեցան, և իբրև զալիս ծովուց ի բովանդակ տասն ամիսս մրրկալիր դառնութեամբ տարուբերեալ ի պատճառս թունալի գրութեանց ոմանց յաչաղկոտաց։ Վասնորոյ բոլոր միաբանք և մնացորդք երկրիս քանիցս և քանիցս բազմակնիք թղթովք կամեցան ի բաց խլել զորոմն ապականիչ ի սրտից հաստացելոց գրելով զուղիղն և զստոյգն և վըկայելով ճշմարտութեան, բայց տակաւին մնացին նիւթք և սպիք ատելութեանցն և վիրաց թշնամեաց, ուստի՝ կրկին անգամ ի մի վայր ժողովեալ համայն միաբանից սրբոյ Աթոռոյս և ամենայն երկրականացս սկսան խորհել զօգտից սրբոյ Աթոռոյս և զխաղաղութենէ օրհնեցելոցդ, և դարման մատուցանել, նորանոր խռովութեանց. զորս ամենաչարն սատանայ անդադար սերմանէ ի ձեզ, և իբրև զախտ փոխարերական տարածանէ ի հոգիս ձեր, որք և գրեցին զչորս մահսէրս. զառաջինն առ ընդհանուր ազգն մեր, որք կան ի տէրութեան օսմանցւոց ծանուցանելով զվերջին դիտմունս իւրեանց թէ՝ զոր միանգամ օծաք շնորհիւ սրբոյ հոգւոյն, ամենեւին մինչ ցմահն ոչ փոփոխեմք և այլում նորոգ կաթողիկոսի պէտս ոչ ունիմք բնաւին։ Զերկրորդն առ նոյն ինքն Դանիէլ վարդապետն, զի յետս կացցէ ի սնոտի ձկտմանցն և յարչաւմանցն առ. որ ցանկայ ոչ կարէ հասանել. այլ մանաւանդ թէ ունի սաստիկ դահավիժել անտի և ևս ծանուցին անաչա-

ռապէս. զի թէ ոչ դադարեսցէ, մերժեալ լինելոց է ի յորդւութենէ սրբոյ Աթոռոյս և ի միաբանութենէ իւրեանց։ Չերորդն է առ կարնեցիսն. զի ի գործս Դանիէլ վարդապետին օգնական չլինիցին, և հաղորդ չգտանիցին։ Ընդորս և մեք գրեցաք զկոնդակ մի ընդհանրական առ Ազգս մեր առաջի դնելով զերկու ինչ, այսինքն կամ խաղաղանալ, և կամ մեզ զճանապարհ ինչ ցուցանել յաջ կամ յահեակ։ Եւ զայսոսիկ թուղթսն ձեռամբ . . .[1]) զհոգևոր բժիշկ զառողջարարն դեղ նուիրելով, ջանամք մաքրել զոմանս ախտացեալս ի ձէնջ, և ի փարախ սուրբ եկեղեցւոյ ժողովել։ Ուրեմն աղաչեմ զձեզ զամենեսին, և կթովն Քրիստոսի պատուիրեմ, ի բաց մերկանալ զհին մարդն իւրովք գործովք, և զլսելիս ձեր հեռացուցանել յամենայն դատարկ բանից պարապորդաց, և զբերանս և լեզուս ձեր սանձահարել, և մանաւանդ զգրիչս ձեր՝ յորոց բղխին մեծամեծ թոյնք և թունաւորեն զյոլովս՝ ի ձեզ ամփոփել, և բուսականանալ զորս մինչ ցարդ արարիքդ, և թղթովք զաշխարհս լցիք։ Յորոց զքանիսն տեսեալ է մեր և ընթերցեալ, և մեք անյիշաչարութեամբ մինչ ցարդ համբերութեամբ տարեալ եմք և տակաւին տանեմք։ Եւ ես՝ յորդորեմ խաղաղանալ, և զկնի սիրոյ և շինութեան սրբոյ Տանս լինել, և այնու՝ մխիթարութեան և սրտադիւրութեան պատճառ լինիլ։ Զի կարացից և ես օրհնելով և ուրախութեամբ հովուել զբանաւոր հօտդ, և մի՝ հողոց հանելով։ Եւ ինքն Տէրն ամենայնի, որ եբարձ զխռովութիւն, և հաստատեաց զխաղաղութիւն յերկինս և յերկրի, բարձցէ և իսպառ խլեսցէ զխռովութիւն և զսերմանօղն նմին զամենաչարն սատանայ ի ձէնջ և ի սրտից ձերոց, և երկնաւոր խաղաղութեամբ խաղաղացուցեալ զձեզ զամենեսին արասցէ ժողովուրդ սուրբ և ընտիր ի փառս անուանն իւրոյ, ի պայծառութիւն խղճալի Տանս իւրակերտի, և ի մխիթարութիւն սրտի հօրս ձերոյ ըստ հոգւոյ։ Այսպէս առնելով ձեր՝ եղիջիք օրհնեալք յԱստուծոյ և յամենայն սրբոց նորա և ի մէնջ, և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ ձեզ ամենեսին, Ամէն։

Գրեցաւ ի1802 թուոջս, և ի փետրուարի.

1) Բնագրի մէջ այստեղ մի թերթ պատռուածէ։

ՃԺԶ. *Թուղթ առ միրիշկարպաշի[29]) Յովսէփ Ա... ընդ մոմի ժողովարարին։*

Եւ ընդ սիրոյ և օրհնութեան նամակիս ծանուցումն եղիցի զերազնիւ սիրելւոյդ իմոյ։ Զի յառաջ քան զայս ի զանազան ժամանակս օրհնութեան թղթով՝ յայտնեալ եմ սիրոյդ զանցս և զօրպիսութիւնս սրբոյ Աթոռոյս մերոյ և մեր զորս ցարդ հարկիւ ընկալեալ և գիտացեալ զգրուածսն ի նմին։ Այժմ ևս համառօտիւ զայսքանս ծանիր։ Զի մինչ սկսաւ փոքրիկ կայծն զաղեալ արծարծանիլ, և մեծաբորբոք վառիլ, և միանգամայն հրդեհել զբազումս, վասնորոյ ի մի վայր ժողովեալ միաբանից սրբոյ զահիս, և բոլոր ժողովրդոց երկրիս կամեցան շիջուցանել զայն, և իսպառ անհետ առնել, վասն որոյ նոր ի նորոյ գրեցին չորս մահուէրս. զմինն առ ընդհանուր ազգ մեր։ Զերկրորդն առ Դանիէլ վարդապետն, զի դադարեսցի ի վնասատուութեանցն, ապա թէ ոչ՝ մերժեալ լինելոց է ի սրբոյ Աթոռոյս, և այլն։ Զերրորդն առ էրզրումցիսն զի Դանիէլին օգնական չգտանիցին։ Ընդ որս և մեք գրեցաք զկոնդակ մի առ լուսաւորչածին ժողովուրդսն մեր բնակեցեալս յայլ և յայլ կողմունս. զի կամ դադարեսցին, և կամ մեզ զճանապարհ ինչ ցուցցեն։ Եւ զայսոսիկ առաքեցաք ձեռամբ Ստեփաննոս արքեպիսկոպոսին ի մեծն Պօլիս ի սոյն ամսոյս 17-ին։ Իսկ զչորրորդ մահուէրն գրեցին յայդ կողմունսն։ Մեք ևս զհամառօտ օրհնութեան թուղթ գրեալ ի քաղաքդ առ օրհնեալ ժողովուրդսն տեղւոյդ, զգուշացուցաք զամենեսին ի բաց կալ յողմկից ի վնասակար գրուածոց և դադարել զորս մինչ ցարդ արարիքն և այլն։ Զորս և ընդ սիրելի որդւոյն մերոյ... նորապսակ եպիսկոպոսին յղեցաք առ սիրելիսդ մեր։ Յորմէ և մանաւանդ ի թղթոյ մերմէ և ի մահսարէն միաբանիցս լիով ունիս զամենայն ինչ գիտել, զորս աստէն ոչ երկրորդեմ։ Եւ նոյն սիրելի որդւոյդ մերում միանգամայն յանձնեցաք և զգործ ժողովարարութեան մոմին զոր յատկապէս յանձնեմ ի յատուկ սէր սիրելւոյդ. զմարդասիրութիւնս ցուցանել և գործոյն և ինքեան օժանդակ լինիլ և պաշտպան գտանիլ։ Եւ տեղւոյդ Մինաս վարդապետին գրեցաք դառնալ ի սուրբ Աթոռս։ Զի զհաշիւն տեսցուք և տեղւոյդ որ-

պիսութեանցն ի նմանէ տեղեկասցուք, և զհաւատարիմն և զանհաւատարիմն գիտասցուք։ Այսպէս գիտացեալ, և զօրպիսածանոյց և զսիրալյա գիրդ ի մէնջ անպակաս արարեալ, ողջ լեր ի տէր և զօրացեալ միշտ ի նոյնն հանդերձ բոլոր քոյայնովքն, Ամէն։

Գրեցաւ ի 1802։ Եւ ի փետրվարի... ի սուրբ Էջմիածին։

ճձէ. *Թուղթ ի ի միաբանից եւ յերկրացւոց առ ընդհանուր Ազգս Հայոց յաղագս սիրոյ եւ միաբանութեան: Եւ ըան վասն սրբազան հայրապետիս մերոյ, զի անփոփոխ զսա ունիցեն Թաւըց այլ եւ կարծեաց:*

Ի լուսակառոյց և ի շնորհաբաշխ սրբոյ և մեծի Աթոռոյս Էջմիածնի բոլոր սպասաւորաց և պաշտօնէից միաբան և կարգակից եղբարց, այսինքն յարք եպիսկոպոսաց, և վարդապետաց, յաբեղայից, և յայլ եկեղեցական ուխտից։ Այլ և՝ Ցարենեան Երկրոջս եղեալ ի համայն վանօրէից և յանապատաց, առաջնորդաց, ի հարց և ի բոլոր միաբանից։ Նաև ի քաղաքական և ի գիւղական քահանայից, ի մէլիքաց, ի հարիւրապետաց, յիշխանաց, ի տանուտէրաց, ի բնակչաց և յեկաց, և յայլ ամենայն ժողովրդոց ի մեծաց և ի փոքունց, ի միաբան և ի համաձայն սիրով ի Քրիստոս Յիսուս մրացելոց։ Յոբոց քրիստոսաւանդ խաղաղական և միաբար սուրբ ողջունիւ, հոգեկանաւ, ճշմարիտ սիրով և եղբայրականաւ ստոյգ և անխարդախ բաղձանօք, ծանուցումն լիցի գերամեծար և աւագագոյն եղբարցդ մերոց ի քրիստոս, լուսածին հօրաղաս և սրտացաւ զաւակացդ ըստ հաւատոյ Մօրս Հայաստանեայց սրբոյ Աթոռոյս Էջմիածնի, և ցաւակից և օգտախոհ բարեկամացդ սորին, որք կայք զետեղեալք ի բոլոր տանդ Արեւմըտեան և յայլ կողմանս աշխարհի, ի յԱստուածախնամ և ի կայսերաբերձ մայրաքաղաքդ մեծ ի Կոստանդնուպօլիս, և յայլ երևելի քաղաքսդ, ի ղասապայսդ, ի գիւղօրայսդ, և յայլ ամենայն երկիրսդ։ Նախ՝ յարգելի եղբօր մերոյ ի Քրիստոս, և հոգևոր այցելուի և արժանավայել պատրիարգի մեծի մայրաքաղաքիդ, և ապա՝ ամենից ուղղաշաւիղ առաջնորդաց, արժանապատիւ եպիսկոպոսաց, հանճաբափայլ վարդապետաց, մաքրասուն աբեղայից, և այլ վանականաց ամենեցունց, որք կան ի վանորայսդ և ի քաղաքսդ։ Այլ և՝ համայնից սրբանուէր քահանայից, աւագաց և երկրորդաց, և համօրէն եկեղեցական մանկանց, ընդ որս՝ չքեղափառ իշխանապետաց, և իշխանաց, պերճապատիւ սառաֆներաց, իմաստուն վաճառականաց, բազմաղով ասնէֆից, արուեստապետաց, և արուեստաւորաց, հաւատարիմ զանձապետաց եկեղեցապանաց և երեցփոխաց, եկաց և բնակաց, և համայնից ժողովրդականացդ խմբից, մեծաց և փոքունց, եղիցի ի Տէր խնդալ բազում բարութեամբ, ամէն։

Որոցդ ամենից՝ գիտութիւն լիցի, և դուք ունկնդիրք ոլրովն Քրիստոսի մերս հաստատուն և վերջին բանիցս և գրուածոց։ Զի յայտնի է ամենիցդ պարզապէս, թէ զկնի հոգելոյս հայրապետին Տեառն Ղուկասու որչափ ազգի ազգի խռովութիւնք ծագեցան ի մեծ մայրաքաղաքիդ, և որքան վիշտք ի սիրտս ձեր, զորս մի առ մի աստանօր ոչ թուեմք. յետ ամենայն անցից՝ հիւսիսային կողմանց առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոսն ընտրեցաւ. որ և նա վասն տարաբախտութեան մերոյ վճարեալ զկեանս իւր ի Թիֆլիզ քաղաքի, չկարաց ի սուրբ Աթոռս ժամանել։ Եւ մեք վշտագնեալքս և նեղեալքս, հարուածեալքս, և զանեալքս, թէ յառաջ քան զմահն Տեառն Յովսէփայ ի Տէր հանգուցելոյն, և թէ զկնի մահուան նորին ի տասնեհինգ ամիս, յորս մնացաք յանգլխութեան, թէ որքան չարչարանս, զորչափ զգանս ընկալաք ի յանգլուխ զօրացն պարսից, որք խաղացին և յաւուրսն յայնոսիկ ի վերայ որրացելոցս և մնացելոցս թողումք աստէն, և ոչ յիշատակեմք, զորս և դուք օրհնեալքդ լուեալ էք գիտեմք։ Մանաւանդ խղճալի Տունս այս ընդ ժամանակս ընդ այնոսիկ, եթէ զինչ ինչ կրեաց և որքան մեծամեծ և անգրելի վնասուց դիպեցաւ մինչև ցնորոդ կաթուղիկոս կացուցանելն մեր, և զայն ևս թողումք ձեզէն խոկալ։ Քանզի՝ պատկառանք շուրջ զմեօք եղեալ այլազգեաց, և պատիւ պահել, և կամ երկնչիլ

ինչ մասամբ ի կաթուղիկոսէ միայն է, և առանց որոյ՝ այլոցն ոչ ոք է լսօղ, ե կամ ըղպատիւն պահող, վասնորոյ յայնքան ժամանակս ի յանկլխութեանն մերում եկին հասին այնոքիկ ամենայն չարիք ի վերայ մեր, ե աւերութիւնք մեծի Տանս։ Եւ ի մեզ չմնաց զօրութիւն և կարողութիւն այլես համբերելոյ ե յանգլխութեան մնալոյ, որոց ազազաւ չեզև մեզ միջոց խաղաղ ըստ օրինի ե նախնոյ սովորութեանն ղրել կրկին առ ձեզ ըղմահսէր վասնորոյ մեք բոլոր միաբանութեամբ սրբոյ Աթոռոյս ե համայն երկրականքս ի մի վայր եկեալ առաջի Աստուածաէջ սրբոյ աթոռոյս, ըստ՝ աղղեցութեան հոգւոյն սրբոյ համակամեալք և միախորհուրդ լեալք, կամեցաք և ընտրեցաք զարժանաւորն առաքելականի շնորհի զգերամեծար հայրն մեր զՏէր Դաւիթ սրբազան արքեպիսկոպոսն լինել մեզ և բոլոր Ազգիս մերոյ և սրբոյ Աթոռոյս Էջմիածնի Հայրապետ և հովիւ, կաթուղիկոս և ծայրագոյն պատրիարգ։ Եւ զայն ոչ վայրաբար, այլ բազում քննութեամբ իրաւամբ և արժանաւոր կոչմամբ, զի բնիկ հարազատ և բազմաշխատ միաբան է սրբոյ Աթոռոյս ե նախագահ ի մեզ և երկիցս զգործս նուիրակութեան կատարեալ բազմաշահ արդեամբք։ Որում սակս բազմապատիկ հաւատարմութեանցըն հաւատացաւ՝ ի լուսահոգւոյն և մեծ զօրծըն աթոռակալութեան։ Որ ե ի կենդանութեան նոյն լուսահոգւոյն բազումս աշխատեալ էր ընալով վասն սրբոյ Աթոռոյս առ Շահն Պարսից, որ և ծանօթացեալ նոցին և հմուտ և բազմակարդ կառավարութեանց, զոր զկնի ամենայնի առաքեցաք ե ի մեծդ Պօլիս և տեսիք, ե արժանաւոր այսմ գերագունի շնորհի և դուք վարկանէիք, զոր ե սակս գովելի վարուցն ե սրբափայլ կենցաղավարութեանն զսա ի պատրիարգական փառս վերածիք։ Վասնորոյ ե մեր գիտելով ղոյսոսիկ՝ միակամ յօժարութեամբ զսա յառաջ կոչեալ կացուցաք ղահակալ սրբոյ Գահիս։ Որ թէպէտ ինքն բազմիցս հրաժարեցաւ չառնելով յանձն և անարժան զինքն ցուցանելով, այլ մեք ոչ թողաք զսա ի կամս իւր. զօր և օծաք շնորհիւ սրբոյ հոգւոյն, ի կաթուղիկոսութիւն Տանս Հայոց, ի յապրիլի ԻԸ։ Զի չկարացաք այլ ևս երկարել զմիջոցն վասն վտանգիցն անցելոց, և յետագայից, զորս զրեցաք և զորս թողաք. քանզի ըստ ասիցն՝ եղոյծ զօրէնս, և օգուտն ներկային ետ մեզ առնել զայն։ Եւ զհամահաւանութեան թուղթ գրեալ և կնքեալ յայնժամ առաքեցաք ձեռամբ սիրելի եղբօր մերոյ Կարապետ արքեպիսկոպոսին առ աւտագոյն եղբարսդ մեր, զի և դուք ստուգապէս և իրաւաբար յԱստուծոյ գիտելով զայն և համաձայնելով լինիցիք մեզ՝ կամակիցք մերոցս կամաց և գործոց։ Որք և միաբանութեամբ ընդունելով ձեր զխորհուրդս և զգրուածս մեր՝ բազում սիրով յօժարութեամբ և ուրախութեամբ կնքեալ էիք զառ ձեզ առաքեցեալ մահսէրն մեր և զբազում պատուագրութիւնս ցուցանելով մահսարաբերին մերոյ, յարգանօք վերադարձուցետլ էիք ի սուրբ Աթոռս հանգերձ արքունական նոմոսիւքն, և շնորհաւորական գրովք։ Զորս և մեք բազում շնորհակալութեամբ և օրհնութեամբ ընկալեալ ի Քրիստոսահրաման սուրբ տաճարիս միաբան ուխտիւք օրհնեցաք զարժանաւորսդ օրհնութեանց, ի սիրտս որոց միենոյն հոգի ազդեաց, զի համակիցք մեզ լինիցիք, որք և եղէքդ իսկ, ըստ նախատնօրէնութեան Աստուծոյ։ Բայց մինչ զիտացաք թէ՝ ամենաչարն սատանայ ի ձեռն ոմանց խռովասիրաց և թշնամանողաց զորոմն չար սերմանելով ի սիրտս պարզամտացդ գայթակղեցուցեալ է զբազումս ի ձէնջ ի վերայ ընտրութեան և օծման ե հայրապետութեան սրբազան վեհիս մերոյ, ի ձեզ զտեղի գտանելով, զայն զոր երբեմն խլեաց Տէր ի Տանէս Թորգոմայ կամի կրկին վերընձիւղիլ, վասնորոյ վերստին ի մի վայր ժողովեալ բոլոր միաբանիցս և ժողովրդոցս երկրիս կամեցաք օժանդակութեամբ սրբոյ հոգւոյն արմատաքի առնել ի հոգւոց ձերոց զամենայն նիւթս չարասիրին, որովք ջանայ մեծաբորբոք հրդեհել միանգամայն ըղձեզ և զմեզ, և զխղճալի Տունս այս, ե ունայնացուցանել զպէսպէս սնոտի բանս յաջաղկոտաց, որովք վրդովեալ են և պղտորեալ զմաքուր լսելիս ձեր։ Ուստի՝ ահա բազմակնիք թղթովս, զոր առաքեցաք ի ձեռն սիրելի եղբօրդ մերոյ . . . շնորհափայլ արքեպիսկոպոսիդ առ մեծապատիւ եղբարսդ մեր յայտնեմք համառօտիւ զառաջին և զվերջին դիտմունս մեր։ Նախ՝ եթէ կամիք զԴանիէլ արքեպիսկոպոսն յառաջ կոչել և յայլ ուրեք զհակաթոռ հաստատել, և ընդդէմ սրբազան վեհիս

մերոյ հակաղինել, յաղմանէ յառաջանան վընասք. այն զի՝ նորն ոչ հաստատի, և որ կայ այժմս յերանելի նախնեացն ձերոց մինչ ցարդ հաստատեցեալ (զոր մինչ ցկատարած հաստատ պահեսցէ Տէր), աւերի և քայքայի։ Վասնորոյ երջանիկ նախնիքն ձեր զիտելով զայսոսիկ ոչ կամեցան և ոչ արարին։ Երկրորդ՝ եթէ զսրբազան վեհըս մեր կամիք փոփոխել, և զայլս ի տեղի նորա կացուցանել, այդ ևս անտեղի իմն է և անկարելի, մանաւանդ թէ ընդդէմ կանոնաց և սահմանադրութեանց սրբոց հարցն. Քանզի՝ երանելի նախնիքն մեր զ'ի փոփոխութենէ յառաջացեալ զանազան վնասն մտածելով, զորոյ և զփորձն առին, որք երբեմն խախտեցինն զայն, միանգամայն վճիռ հատին, և կանոնօք սահմանեցին, զի համակամութեամբ և օրինաւոր 'ընտրութեամբ օծեալ կաթուղիկոսն հաստատուն մնասցէ յիշխանութեան իւրում, մինչ կենդանի է նա, ոչ զոք կացուսցեն ի տեղի նորա։ Այս բան յայտնի է այնոցիկ որք տեղեակք են գրուածոց նախնեաց մերոց. Քանզի՝ Աստուածային շնորհն անզղջանալի է և կնիք կարգին անջնջելի, զի որ միանգամ զինչ շնորհս և կարգ ընկալեալ իցէ, զայն անկարելի է բառնալ միւս անգամ անտի։ Եթէ փոխեսցի կաթուղիկոսն, և ի տեղի նորա այլ ոք կացցէ, յայտ է թէ՝ այն կաթուղիկոսական շնորհք ի վերայ երկուցն ևս երևի, եթէ մինն լռեսցէ, անպատուութիւն լինի շնորհաց սուրբ հոգւոյն, զոր ոչ ուսաք անպատուել, այլ ի յարգութեան ունիլ։ Եթէ երկուքն ևս ի գործ ածցեն ընկալեալ շնորհսն իւրեանց, յայնժամ ազգ մեր լինի ունող երկուց գլխոց, և երկգլխեան կենդանին բերէ ի յինքն զտգեղութիւն, զի է հրէշ իմն բնութեան։ Երրորդ ի փոփոխութենէ յառաջանան զանազան անկարգութիւնք, զի եթէ հայրապետն վասն օրինազանցութեանց ինչ յանդիմանեսցէ զոք, յանդիմանեալ նոյն միաբանեալ ընդ իւր զայլ զօրինազանցսն զինի ընդդէմ հայրապետին և կամի փոփոխել զայն, և այսպէս բազում անկարգութիւնք տիրեն Ազգի մերում։ Չորրորդ՝ իշխողն երկրիս և այլազգիք իսկ գիտեն թէ օծեալ հայրապետն ոչ կարէ փոխիլ, եթէ այժմ զփոփոխութիւն ինչ տեսցեն, ջանան զի մշտապէս հղիցի առ ի պահանջել և առնուլ ի սըրբոյ Աթոռոյս զծանրագոյն ինչս. ուստի հետևի ւերութիւն մեծ։ Եւ մեք լինիմք եղծիչ կանոնական սահմանադրութեանց նախնեաց մերոց և պատճառ ապագայ անկարգութեանց, և ենթարկիմք անիծից և նզովից նոցին։ Այսպէս ծանուցեալ ձեր զայսոսիկ վնասս, ի բաց դիք ի մտաց ձերոց զայն, զոր խորհիք առնել և ի միաբանութեան ընդ մեզ հաստատուն կացեալ, փոյթ կալջիք ի պայծառութեան և ի բարեկարգութեան պահել զձեզ, զմիաբանութիւնս մեր, և զսուրբ Աթոռս զայս, զի այդ խորհուրդ ձեր մեծաց վնասուց և բազում անկարգութեանց լինի առիթ որպէս գրեցաք, և մանաւանդ տգեղացեալ անուն Ազգի մերոյ լինի ծանակ օտարազգաց և անկրօն ազանց։ Ուրեմն արարեցեալս մեր խորհուրդ, զոր և կատարեալս իսկ է աստուծով բազմաւ քննութեամբ և հասարակակամ միաբանութեամբ և հաստատուն կացուցմամբ և անփոփոխելի պահեցմամբ և ամենեքեանս միասիրտ և միահոգի, միակամ և միաշունչ կամք հաստատուն ի վերայ արարեցեալ զործոց մերոց մինչև ցել շնչոյ մերոյ, և այլում նորոգ կաթուղիկոսի չունիմք պէտս և բնաւ իսկ ոչ կամիմք զայլ ոք, ոչ զԴանիէլն, և ոչ զովոք և իցէ, զի որ միանգամ օծեցեալ է սա ընդունելի է մեզ, և որչափ կենդանի է, ամենևին ոչ փոփոխեմք, և զօտար ոք ի տեղի սորա ոչ ընդունիմք երբէք. Քանզի՝ փոփոխութիւն օծեալ հայրապետի լինի յայնժամ, յորժամ ի հաւատն և ի վարքն արատ ինչ գտանիցի, իսկ ի մաքրափայլ հայրս մեր զերընտիր, ոչ ինչ յայդպիսի ասացելոցդ գտանի։ Ոչ բիծ ի վարս, և ոչ արատ ինչ ի հաւատս։ Այլ զարդարեալ անբիծ հաւատով և անմոլար վարդապետութեամբ և առաքինական գործովք, զոր Տէր ի հայրապետական իշխանութեան իւրում հաստատ պահեսցէ երկար և խաղաղ կենօք, ի պարծանս Ազգիս մերոյ, ի պայծառութիւն սրբոյ Աթոռոյս, ի մխիթարութիւն վշտագնեալ սրտից մերոց, և մեզ տացէ Տէր ուրախութեամբ վայելել զսա և անմեկնելի ի հովուապետութենէ սորին մնալ, և թէպէտ սրբազան հայրս մեր ի կոնդակին իւրում գրեաց, թէ Եթէ ձեզ հաճոյ չլինիցին, հրաժարելոց եմք յայսմ պաշտօնէս, և այլն. իսկ մեք զներհակն գրեմք սիրելեացդ մերոց, զի թէ հրաժարեսցի ինքն, սակայն մեք ոչ հրաժարեցուցանեմք, և ոչ ի կամս իւր թողումք,

որպէս և յառաջ չթողաք զսա ի կամս իւր այլ բռնադատեալ յայս պատիւ կացուցաք, զոր և անփոփոխելի պահելոց եմք Աստուծով։ Եւ զթովն Քրիստոսի աղաչեմք զամենեսեանդ, զի և ձեզ հաճոյ թուեսցի։ Եւ զսիրտս և ըզկամս ձեր միացուցեալ ընդ մեզ զխաղաղական և զուրախական պատասխանին ի ձեռն սիրելւոյդ մերոյ . . . շնորհառատ արքեպիսկոպոսիդ փութով վերադարձուսջիք, զի եղիցուք մի հօտ միահովիւ ի փառս ամենասուրբ անուանն յիսուսի, ի շինութիւն և ի պայծառութիւն սրբոյ Գահիս նոյնաէջջի և ի խաղաղութիւն և ի միաբանութիւն մեր ամենեցուն, որք և ընդունօղքդ, և լսօղքդ և համաձայն հետեւօղքդ մերումս ընտրողութեան և յորդորական բանից, լիջիք օրհնեալք յԱստուծոյ և ի սրբոյ Աթոռոյս։ Ողջ լերուք։

Գրեցաւ ի ՌՄԾԱ. թուականութեանս մերում, ե ի փետրուարի... ի լուսակառոյց և ի Քրիստոսակերպ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ՃԺԲ. *Թուղթ առ Իսրայէլ կաթուղիկոսըն Աղուանից ի պատասխանի իւր գրուածոյն:*

Ցորմէ Քրիստոսական սուրբ և միարար ողջունիւ, և անխարդախ ստոյգ կարօտիւ և սիրով ծանուցումն եղիցի յար լելի եղբօրդ մերոյ ի Քրիստոս և ճշմարիտ բաղձալւոյ Տեառնդ Իսրայէլի սրբասէր և ծերունազարդ կաթուղիկոսիդ Տանն Աղուանից։ Զի թէպէտ պարտ և արժան էր մեզ փութալ կանխաւ իբրև զսիրապարտ ոք ի պատասխանագրութիւն քոյդ բարեմաղթ գրուածոցդ, և ի շնորհակալութիւն զառաւելութենէ սիրոյդ որով զշնորհաւորականս էիր առ մեզ կարգացեալ, սակայն զանազան հոգք և զբաղմունք կուտեալք ի մեր վերայ յամենայն ուստեքէ ի հեռաւորաց և ի մերձաւորաց ոչ ետուն մեզ զխաղաղ ժամ զայն պարգև հոգւոյն սրբոյ զգլուխն ամենայն առաքինութեանց. զմաքուր և զանարատ սէրն ի գործ դնել։ Ուստի եղբայրականաւ աննենգ սրտիւ պարտիք կարեկից մեզ լինել, և անմեղադիր զմեզ առնել։ Արդ՝ զանցից տեղւոյս և զորպիսութեանց մերոց ի հարկէ լուեալ էք ի մասնաւորի, ուստի աւելորդ վարկանիմք կրկին ձանձրացուցանել զձեզ այնպիսի բանիւք։ Միայն զայսչափս ի բազմաց գիտասցէ ձերդ սիրելութիւն, որ սուրբ Աթոռս բոլոր միաբան ուխտիւք կայ ի շինութեան և ի խաղաղութեան և երկիրս զարդիս ի հանդարտութեան. և դեբապատիւ շահն և իշխողն երկրիս ունին զրադում խնամարկութիւնս ի վերայ մեր և ի վերայ սուրբ տեղւոյս Աստուածաիջի։ Զորոյ զոհ եմք յոյժ։ Բայց լսի ես թէ՝ յայսմ միջոցի խաղալոց են զօրքն Շահին յերկիրս Երևանայ, և զայս ստուգեն բազումք։ Ցորոց մնասուց որպէս մինչ ցայժմ պահեալ է իջեալն և բնակեալն ի սմա, պահեսցէ՝ և յայսմ հետէ լրմամբ ազօթից եկեղեցւոյ ուխտից։ Նաև՝ զսեաղլխէն որ կայ ի Գետնջայ ընդվզեալ անդր քան զչափըն, զոր ինչ և գրեալ էիր ծանեաք լիով առ որ յանդիմանական բանիւ մարգելս և ի յուղղութիւն վերածելս թողաք ի ներկայումս, սակս անձեռնհասութեան մերոյ, և աստուծով յետ փոքր միջոցի ի խաղաղանալս՝ հոգացայց զայնմանէ լեր ըստ ամենայնի միամիտ. այլ և ըստ որում օր քան զօր նուազին մուտք սրբոյ Տանս. և առաւելուն ելք ի պատճառս վրդովման երկրաց և աղքատութեան ժողովրդոց և անչափ հարկապահանջութեանց այլազգեաց և բռնակալաց, վասնորոյ հարկաւոր համարեալ, առաքեցաք նուիրակ և առաջնորդ յերկիրն Գիլանայ առ տէրունի ժողովուրդսն մեր զ... շնորհափայլ ի խնդրել զօդնութիւնս յօրհնեցելոց և ի ժողովել զարդիւնս սրբոյ Աթոռոյս որք կան ի քանի ամաց հետէ անդ, որպէս և ոմանք բարեպաշտ անձինք դրով ևս խնդրեալ էին ի մէնջ փութացուցանել զնուիրակ և զառաջնորդն. որում պատուիրեցաք զալ և ի յաստուածապահ վիճակդ այդ ի ժողովել զ;անձանակսն որք սահմանեցեալք են ի նախնեաց սրբոց յանուն սրբոյ Աթոռոյս. ուրեմն ի գալն սիրելի ողդւոյն մերոյ... շնորհառատ... առ յարդի եղբայրդ մեր և ի մատուցանելն զայս թուղթ ընդ սիրալիր զգալի նշանաց հողեոր ընծայից, ընկալցիս սիրով սուրբ հոգւոյն և անմոռանալի զեղբայրութիւն մեր ունիցիս. և սիրելի որդւոյդ մերում օգնական լիցիս յամենայն գործս

զորին, և ջանասցես արդիւնաւորել զայն, և բեղմնաւոր արգասեօք խաղաղութեամբ ի բարեձևու վիճակէդ ուղևորել. առ. որ չնորհակալ լինելոց եմք լոյժ զօրհնութենէդ։ Եւ առ. բարձրապատիւ Իբրահիմ խանն ևս՝ զթուղթ դրեալ և զսակաւ ընծայ պատրաստեալ յղեցաք ընդ սիրելի որդւոյդ մերում, մատուցջիք ի դիմաց մերոց, հարցանելով զառողջութենէն և խնդրելով զպաշտպանութիւն նորին վասն գործակատար վարդապետին մերոյ։ Զայլ որպիսութիւնսն մեր և սրբոյ Աթոռոյս և երկրիս ունիք ի հոգևոր որդւոյդ մերմէ լիապէս դիտել զոր յանձնեմ ի յատուկ խնամս և ի սէր ձեր. ողջ լերուք ի Տէր։

ճծթ. *Թուղթ ի վերայ ընդհանուր Ազգիս Հայոց յայլ եւ այլ աշխարհս բնակելոց, եւ նախ ի մեծն Պոլիս, ապա յայլ քաղաքս օրհնութիւն եւ յորդորումն, ի բաց դնել զխռովութիւնսն, եւ խաղաղութեան զհետ լինիլ:*

Եւ ընդ չնորհաղեղուն օրհնութեան և ողջունառաք սիրոյ նամակիս, ծանուցումն լիցի սիրելեացդ մերոց ի Քրիստոս հարազատ և օգտաջան որդւոցդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի ամենաբարին Աստուած որ գիտօղն է ամենայն գաղտնեաց, յամենից ստեղծականաց լռեցոյց զգիտութիւնս աներևութից և գաղտնեաց, և յիւրում իշխանութեան միտյն եդ զայն։ Քանզի զգիտութիւնս ամենից նախասահմանելոցն իւրոց՝ ինքեան միայն եթող Աստուած, առ ի յայտնել զիւրաքանչիւրս ի նոցանէ, յիւրաքանչիւր ժամանակիս, որպէս լըսկզբանէ մինչև ցարդ զմեծամեծս և զանպատումս յայտնեալ է։ Եւ ևս յայտնելոց է, մինչև ցկատարած։ Ընդ որս հիացեալ Յոբայ ասէր որ առնէ զմեծամեծս, զանքննինս, ըղփառաւորս, զհրաշակերտս, որոց ոչ գոյ թիւ։ Եւ թէ զինչ իցեն պատճառք, զի լռեցոյց Աստուած յորդւոց մարդկան զգիտութիւնս ապագայ ժամանակաց, դժուարանան միտք ի հասու լինել, զի զայն ինքն նախասահմանողն միայն գիտէ։ Քանզի կամ դիտելով զապագայ ցաւն փախչէր մարդս յիրակութենէ իմեքէ, և կամ դիտելով զբարին և զօգուտն անձին, վաղվաղէր առ այն և անկանէր յորոգայթս ըստ բանին Սողոմոնի։ Զի առաջնովն խափանէին գործք մարդկան, ընդ նմին աշխարհաշինութիւնք, որով ոչ եղելոց, որպէս ասի երկին անկատար, իսկ երկրորդաւն յառաջանային ազգի ազգի վնասք՝ ապա իրաւամբ լռեցոյց ի մէնջ զգիտութիւնս ապագայից։ Որպէս զի ինչ և գիպեսցի մարդոյն՝ յամենաբարի ակնարկութենէ, ամենակալ տէրութեան իւրոյ՝ յանկասկածս իմն լինիցի։ Եւ ի բարեբար կամացըն վարկցուք։ Արդ ըստ այսց բանից տեսանելի է և մերս կոչիլն ի լոյս Շնորհ ըստ ամենաբարի ակնարկութեան Աստուծոյ։ Քանզի՝ ըղկնի վախճանի կենաց Տեառն Ղուկասու հողելոյս սրբազան հայրապետին և մեք ընդ այլոց միաբանից սպասէաք նորոգ կաթուղիկոսի և ընտրութեան ձերոյ և կամաց, զի ըստ նախնեացն կանոնի դուք զարժանաւորն և զընտիրն ընտրիցէք։ Որոյ ազդաւ իբրև ըղյետին աբեղայ ոք առեալ զմահուէրն միաբանութեանս մերոյ՝ երկար ճանապարհորդութեամբ յերկրէ յերկիր, և յաշխարհէ յաշխարհ անցանելով բազում նեղսակրութեամբ եկաք ի Պօլիս, առ հասարակութիւն ձեր, որ յայտնի է ամենիցդ։ Եւ զկամս բոլորիցս և զընարութիւնն թողաք ի կամս ձեր, և զկնի բազում իրակութեանց և զանազան խռովութեանց աղմուկից ծագելոյ ի քաղաքիդ, մինչ քանի պատուաւոր անձինք յաքսորն չոգան, ընտրեցաւ հիւսիսային կողմանց առաջնորդ հանգուցեալ Յովսէփ սրբազանն և մեք միամիտ հոգւով իբրև հարազատ միաբան Աթոռոյս, և հնազանդ ոք սորին զահակալացն՝ առեալ զմահուէրն վերադարձաք ի սուրբ Աթոռս առ ի մնալ ընդ իշխանութեամբ ի ձէնջ ընտրեցեալ հայրապետին։ Թէև՝ դուք բարեպաշտօն իշխանքդ Պօլսոյ զմեզ ի սոյն պատիւ պատշաճ տեսանէիք, յայնժամ որպէս և ի յառաւել սիրոյ ձերոյ որ առ իս, զիմս նուաստութիւն և պատրիարգ ձեզ արարիք, սակայն ըստ ամենայնի անբաւական համարելով զիս այնպիսւոյ փառաց, ի բաց հրաժարեալ յամենից, լաւ համարեցայ կալ ընդ իշխանութեամբ այլոց, քան ինքնիշխան լինել։ Նոյնպէս և ի վերադառնալս այտի ի սուրբ Գահս, ի ճանապարհին յամենայն երևե-

ելի քաղաքս յորս հանդիպեցաք մերազնէից
և այլակրօնից, ամենեքեան զրեթէ համեմատ
ձերդ դիտմանց զմէնջ վայելուչ տեսանէին մա-
նաւանդ և յորդորէին եւ։ Բայց մեք անփո-
փոխելի մտօք զամենայն բանս այնպիսեաց
երկրորդ համարելով, անարժան ցուցանէաք
զմեզ այսմ զերադոյնի պատուոյ, որպէս և սր-
տագէտին Աստուծոյ է յայտնի։ Եւ իբրև հանդի-
պեցաւ, որ անուանակոչեալ կաթուղիկոսն
Տէր Յովսէփ ի Թիֆլիզ վախճանեցաւ, և չկա-
րաց ժամանել ի սուրբ Աթոռս որև այս չէր ա-
ռանց վերին ակնարկութեանն, ըստ որում տե-
րև մի ծառոյ թարց վերին կամաց տնօրինողին
ամենայնի ոչ անկանի։ Եւ ընտրելի անձինք ևս
յայլ և այլ հեռաւոր կողմանս մնացին `յայն-
ժամ միաբանք և երկրացիք և շրջակայ մեր-
ձակայս բնակեալքն բանիւք և գրովք զմեզ
յորդորել սկսան յանձն առնուլ զայս պաշտօն։
Իսկ մեք ոչ կամեցաք և՞ոչ յանձն առաք։ Եւ
միաբանութեամբ զմահուէր արարեալ առաքե-
ցաք ի Թօխատ առ Դանիէլ արքեպիսկոպոսն
փութով գալ ի հայրապետութիւն Ազգիս։ Եւ
իբրև կարի յամեցաւ նա՝ անդ, և ի պայմա-
նադրեալ ժամուն չկարաց հասանել, յորում
միջոցի եկն էհաս ի Թիֆլիզու բոլոր բնակ-
չացն բազմակնիք մահուէր առ միաբանութիւ-
նս մեր, և առ Երկրականքս գրեցեալ, որովք
յայտնեալ էին զկտակն Տեառն Յովսէփայ ի
Քրիստոս հանգուցելոյն վասն մեր, և զդիտ-
մունս իւրեանց, և խնդրեալ էին փութով զոք
Տէր Տանս կացուցանել, զի մի ի չարաչատ
և դառն ժամանակիս, յորում յամենայն կող-
մանց կեղեքիչք և աւերիչք յարուցեալք են
ի վերայ մեր, իսպառ անչքասցի մերկասցի,
և յամենայն զարդուց զրկիցի սուրբ Տունս
այս. որպէս եղեւ յանցեալ ամին. և յանդլուխ
զօրացն պարսից որք խաղացին ի վերայ սո-
րա և յամենայն հարկաւորաց զրկեցին և ոչ
ոք էր գլուխ, որ ընդդէմ նոցա դառնայր,
որք յայտնիք են ամենեցուն։ Եւ իբրև զսոյն
կտակն լուսահոգւոյն ես իմացան բազմու-
թիւնք միաբանից և ժողովրդոց երկրին և
տեսին համաձայն դիտմանն իւրեանց, և սկսան
խորհել զօգտից սրբոյ Տանս, և գիտացին՝ զի
յերկար միջոցս յանտիրութեան մնալով՝ կրկին
վնասուց մեծաց է դիպելոց, ապա պնդագոյնս
սկսան ստիպել զմեզ ի յայս։ Եւ իմ հայեցեալ
ի միաբան և ի համակամ խնդիրս և յըստիպ-
մունս սոցա և այլոց, ոչ կարացի մնալ ի
կամս իմ, և կամ առանց Աստուծոյ դիտել
զայս։ Վասնորոյ թողի զիս ի կամս ստիպո-
ղացն, և յանձն առի զծանրութիւն տիրականի
լծոյս (թէպէտ և չէի իսկ այսմ բաւական)
յաղթեցին, և ես յաղթեցայ։ Արդ՝ ում էր յայտ-
նի, և ով էր որ գիտէր թէ, ի ծագել շփոթից՝
երկու արքեպիսկոպոսունքն մեր յաքսորս
էին գնալոց, և հիւսիսային առաջնորդն ի կա-
թուղիկոսութիւն էին կոչելոց։ Եւ որ միտ դի-
տէր, թէ նա ի Թիֆլիզ էր վախճանելոց և Դա-
նիէլ արհին ի Թօխատ յամենալոց։ Եւ մանա-
ւանդ ում էր յայտնի, թէ մեք ի պատրիարգու-
թենէն Պօլսոյ ելեալ, ի սուրբ Աթոռոջս ի կա-
թուղիկոսութիւն էին զմեզ ընտրելոց, և ըզ-
ծանր բեռինս ի վերայ մեր արկանելոց։ Ար-
դարև՝ թէ յառաջագոյն գիտիցէաք զլինելոցս
զայս, որ եղև, այսինքն զանկանիլս ի ներքոյ
ծանրագունի լծոյս այսմիկ, որ տուատիւք
տառապիմք և տաղտապիմք բազում և անտա-
նելի վշտօք, և թշուառութեամբք յանբարի
ժամանակիս, ի զանազան թշնամեաց, ի զրա-
ցեաց, և յօտարաց, մանաւանդ թէ գիտիցէաք
թէ՝ չեն պատահելոց մեծագոյն վնասք սրբոյ
Տանս, յորոց կասկածէաքն։ Եւս առաւել թէ
զայն ես գիտիցէաք, թէ յաղագս սոյնոյ կոչ-
մանս մերոյ ի յայս շնորհ, լինելոց են այս-
քան տարաձայնութիւնք և այսքան պղտո-
րութիւնք մտաց պարզութեանց, և այսքան
երկարաձիգ վրդովմունք, ի յօրհնեալ մայ-
րաքաղաքոջդ, և յայլ կողմունս, յորոց և
այսքան կենամաշութիւնք մեզ և ցաւք
սրտից, ի յայս տասն ամիս, մանաւանդ և
վնասք ծանրագոյնք, և արդեանց նուա-
զութիւնք Հաւատոյ Մօրս ձերոյ սրբոյ, ա-
մենևին ոչ առնուաք յանձն զգժուարու-
թիւնսն զայս, այլ հրաժարէաք մանաւանդ և
փախչէաք իսկ յայսմանէ, զոր ստուգու-
թեամբ իսկ ասեմ առաջի Աստուծոյ, և ոչ
ստեմ։ Բայց զի ամենատնօրինողն Աստուած
լռեցուցեալ և թաքուցեալ էր ի մէնջ զգիտու-
թիւնս եղելութեանցս այսոցիկ, որպէս և յա-
մենայն որդւոց մարդկան, վասնորոյ ոչ կա-
րացաք գիտել, և ինքն որպէս կամեցաւ, նմա-
նապէս և արար, որ և զայս այսպէս տնօրի-
նեալ արար, և յաջողեաց։ Ոչ ըստ մերոց ինչ
արժանեաց, յորոց թափուր եմք յոյժ, այլ
ըստ իւրում ամբաւ ողորմութեան և անճառ

մարդասիրութեան, ե շնորհաց, որովք կացոյց զհովիւս ի մարգարէս ե զձկնորսս ի առաքեալս, որ առատն է ի տուրս բարեաց, և հաւասարապէս բաշխէ ամենեցուն զպարգեւս, որ և հասարակորդս իսկ արար և առնէ զյետինսն այգեգործ մշակաց՝ ընդ առաջնոցն։ Եւ նոյն կանխագէտն Աստուած մինչ զսիրտս ամենայն մարդկան, այնպէս ունի ի ձեռին, որպէս զսահանս ջուրց ըստ բանի իմաստնոյն, և ընդ որ կոյս կամի, զարձուցանէ զնոսա, ապա որպէս յառաջագոյն ազդեաց ի սիրտս միաբանիցն սրբոյ Աթոռոյս ե երկրականացս, նմանապէս զկնի այնորիկ ի սիրտս ձեր ևս ազդեաց, համակամ և միաբան լինել սոցին, և զկոչեցեալս ի յազդմանէ իւրմէ ի հոգեոր հովուապետութիւն ի ծայրագոյն պատրիարգութիւն և ի կաթուղիկոսութիւն օրհնեալ Ազգիս Հայոց, ընդունիլ սիրով մեծաւ և որդիական հնազանդութեամբք, և միաբանիլ ձեր ևս ամենեցուն ի մի միաբանութիւն ճշմարիտ և ի սէր կատարեալ, որք և խնդութեամբ սրտի՝ և յԱստուածամայր սուրբ եկեղեցւոյն բարձրագոչ աղաղակաւ, Աստուած շնորհաւոր արասցէ ասելով, զմահսէրսն մեր կընքեալ էիք և բազում ընդունելութեամբ ըզ մահսաբաքերն մեր ի սուրբ Աթոռս, առ մերս հոգեոր հայրութիւն առաքեալ հանդերձ նոմոսիւքն արքայից և բազմակնիք համահաճական թղթովք ձերովք։ Զորս և մեք յատկական սիրով և բազմապատիկ շնորհակալութեամբ ընկալեալ ուրախ եղաք ի Տէր և ի Քրիստոսահիմն սուրբ տաճարիս օրհնեցաք համախմբութեամբ միաբանից զԼուսաւորչածին ժողովուրդսդ մեր զբարեպաշտօն իշխանսդ, զհարազատ և զսրտացաւ զաւակունսդ մեծի և սրբոյ Աթոռոյս։ Եւ ուստի է յայտ թէ մեք բռնութեամբ և կաշառօք եմք նստեալ, որպէս ընդ վայր զրաբանեն արք թշնամանօղք, ե ոչ ընտրութեամբ և հաճութեամբ Ազգին և Աթոռոյ նոցա։ Եւ որպէս գիտեն, և կամ զիարդ կարեն ասել թէ ինքնաշարժ ախտիւք յառաջ իցեմք մատուցեալ զմեզ յայս գործ, և ոչ արժանաւոր կոչմամբ։ Քանզի ոչ ոք կարէ առնուլ յանձնէ և ոչ ինչ, թէ ոչ իցէ նմա տուեալ ի վերուստ ըստ ճշմարիտ վճռոյ կենաբարին մերոյ Յիսուսի. զի ամենայն որ ի մարդկանէ լինին՝ խափանին բայց Աստուածայինն ոչ երբէք խախտի, և ոչ ոք կարէ Աստուածամարտ գտանիլ։ Ուրեմն՝ մեղանչեն մեծապէս, մանաւանդ թէ, խղճահարին յետոյ, որք թարց իրաւանց զանուն մեր ի բերան առեալ, առաջի ամենեցուն մերազանց և այլազանց, վատահամբաւեն և կեղտոտել ջանան, զորս մինչև ցարդ երկայնամտեալ համբերաբար տանեմ. և Փրկչական երանութեան ակն ունելով, յուսամ հանդիպել վարձուց մեծաց, ուր իմաստսի ի զուր բամբասեցեալքն սպասեն յուսով մեծաւ արդար դատաստանի իրաւասէր դատաւորին։ Եւ զիորդ ոչ մտածեն զայս ևս զի եթէ կաշառօք և բռնութեամբ կամէաք զայս աթոռ յափշտակել, զայս զկնի Ղուկասու հոգեւոյս հայրապետին դիւրին էր առնել։ Ոչ յայնչափ ժամանակ երկարաձգէաք ե ոչ ի մեծն Պօլիս իբրև զհասարակ ոք յաղագս ընտրութեան կաթուղիկոսի երթայաք։ Եւ ոմանք ի բարեպաշտ ժողովրդոցդ ևս լուեալ զայն բալուրանս զմէնջ, որպէս լսեմք գայթակղեալ իցէք որպէս թէ՝ ի վերայ հայրապետութեան մերոյ։ Վասնորոյ հարկաւոր համարեալ գրեցաք զայս ընդհանրական կոնդակս ի վերայ սիրելի ժողովրդոցդ մերոց երկար բանիւք և բոլոր պարագայիւք հանդերձ պատճառօքն. զի գիտասջիք ամենեքեան զճշմարտութիւն, և զունայն ե զսնոտի բանս խռովասիրաց խոտան համարեալ խաղաղասջիք և ի վերայ սրբոյ Աթոռոյս շնորհատու ծնողիս ձերոյ ջերմաոջիք։ Իսկ վասն արծաթեղէն անօթոցն, զորս ասեն թէ խորտակեալ եմք և բռնաւորաց տուեալ և այլն։ Գրեցաք յայնժամ երկրականօք ե բոլոր միաբանութեամբ առ հասարակութիւն ձեր. զոր ե ձեռամբ Ղազար վարդապետ հարազատ միաբանին սրբոյ Աթոռոյս յղեցաք, զորմէ ոչ առնեմք աստէն կրկին զյիշատակութիւն։ Եւ՝ եթէ տարակուսին ոմանք առ այն ևս, կարեն քննութեամբ հասու լինել, և զբանս մեր իրաւացի համարել։ Եւ թէ ամենայն գրուածոցն մերոց բնաւին ոչ կամիք անսալ, այլ զԴանիէլն յօժարիք յառաջ կոչել, և յայլ ուրեք կաթուղիկոս հաստատել, ե ընդդէմ մեր հակազինել, և հակաթոռ հիմնել, այն ի բարի կամս ձեր լիցի ապաստան։ Բայց զայսչափ ինչ գիտեմ ևս, և դուք ևս ծանիրուք, զի թէ կարելի ինչ իցէր և բարի ե օգուտ, երջանիկ նախնիքն ձեր ևս առնէին ե հաստատէին, բայց ոչ արարին և ոչ կամեցան. այնզի՝ օգուտն

ոչինչ է, իոկ վնասն անթուելի։ Եւ մանաւանդ նորն ոչ հաստատի, և եղեալ հինն եւս աւերի զորս թողում ձեզէն խոկալ։ Եւ եթէ ոչ այսպէս կամիք, այլ պարզապէս և յայտ յանդիման զմեզ անպատուել խորհիք, և զԴանիէլն ի տեղի մեր ի սուրբ Աթոռոջս նստուցանել, և վասն իմ են աղմուկդ այդ մեծ, և խռովութիւնդ և տարաձայնութիւնդ, ամէն ասեմ ձեզ, չեմ ես մեծ քան զնախնի Հայրապետսն, քան զսուրբսն Աստուծոյ. և քան զնոյն ինքն զՓրկիչն աշխարհի, որք ի զուր նախատեցան և չարչարեցան. և մանաւանդ թէ ի մահ վարեցան։ Եւ ես առաւել չեմ ես մեծ քան զՅովնան, առէք զիս և ընկեցէք ի ծով, և դադարեսցին յարուցմունքդ այդ մեծ և կարի յոյժ վնասաբերք։ Բայց և զայս բազում աղաչանօք խնդրեմ ի յաստուածասէր օրհնեալ ժողովրդոցդ իմոց։ Զի զոմանս հաւատարիմ անձինս առաքեսջիք զալ ի սուրբ Աթոռս, զի քննութեամբ և ճշմարտութեամբ, ամենայն ելիցն և մտիցն սրբոյ Աթոռոյս և ամենայն ներքսական և արտաքսական իրացն և ընչիցն վերահասու լինիցին և զիտասցեն թէ մեզ զինչ են յանձնեալ զաւթարաւ, և մեք որչափ ինչ եմք խարջեալ զի մի յետոյ այլք վատնեսցեն, և զկեղտ անունն ի վերայ մեր դիցեն։ Ուրեմն կրկին կրկին աղաչեմ զձեզ զանց չառնել զխնդրուածովք մերովք, այլ սիրով և յօժարութեամբ զիջանիլ յաղաչանս այս, զի թէ մեռայց այնուհետև, օրհնելով զձեզ ուրախութեամբ իջից ի գերեզման։ Արդ՝ վերջապէս խնդրեմ յընդհանուր ժողովրդոցդ օրհնեցելոց և ի Քրիստոս հաւատացեալ Լուսաւորչածին զաւակացդ սրբոյ Աթոռոյս, զի և դուք պարզապէս զդիտմունս և զկամեցողութիւնս ձեր յայտնեսջիք մեզ փութապէս և գրով ծանուսջիք, զի օր մի յառաջ զիտացեալ զդիտմունս օրհնեցելոցդ ըստ այնմ զկատարումն տացուք և մեք։ Քանզի ի ցաւաշատ և ի վշտալի երկրոջս ոչ զոյ մեզ մխիթարութիւն ինչ. ըստ որում ի յետին թշուառութեան են հասեալ ամենայն բնակիչք երկրիս, ոչ զոյ ի դէմս ուրուք ուրախութիւն ինչ կամ մխիթարութիւն ի սրտի։ Իսկ յայդ կուսէ և յայլ և յայլ կողմանց ի յընտանեաց և ի հարազատից, ահա՝ այնքան ընդունիմք զպէսպէս ցաւս և զխոցս, մինչ զի՝ զորս յօտարաց ընդունիմք, մոռանամք։ Տասն ամիս է ահա յորս յամենայն տեղիս խափանեցեալք են ամենայն գործք սրբոյ Աթոռոյս. և կան ի վերայ երեսաց, և ի յետին թելս է հասեալ շնորհատու ծնողս ձեր։ Մուտք բնաւին ոչ դոն, իսկ ծախքն և ելքն անչափք, զորս ով կարէ թուել, և դիտէք դուք ամենեքեանքն։ Մեք ես կամք ի վարանս և ի ցաւս, վրդովեալ մտօք և դառն սրտիւ, և սդամք զխզճալի Տունս, որ եթէ այլ ես այսպէս մնասցէ մերձ է ի յաւեր։ Զայսոսիկ գրելով ոչ այլ ինչ խնդրեմ ի սիրելի եղբարցդ իմոց, այլ կամիմ զաղէտս սրբոյ Աթոռոյս և մեր ծանուցանել ձեզ։ Եւ մանաւանդ ի շինութեան և ի պայծառութեան պահել զսա, զի որպէս յառաջ քան զիս եղեալ երջանիկ հայրապետքն ի բարեկարգութեան ունեցեալ են զհոգւոյ Տունս ձեր, նմանապէս և մեք Աստուծով և օժանդակութեամբ ձերով, առաւելապէս ունիցիմք ի նոյնն զսա։ Ուրեմն՝ զիտելով ձեր զայսոսիկ, և սրտացաւ որդիաբար ի գութ և ի սէր սրբոյ ծնողիս ձերոյ շարժելով. թէև յիս ոչ խնայիցէք, գոնեալ՝ ի լուսատու ծնողս ձեր սուրբ Աթոռս խնայեսջիք, և օր մի յառաջ զդիտումն ձեր զայոն կամ զոչն մեզ դրեսջիք, զի գործք սրբոյ Աթոռոյս ի վերայ երեսաց մի մնասցեն, որպէս և մինչև ցարդ մնացին. զի որպէս ասացաք ի յետին աղքատութիւն է հասեալ, և լեալ կարօտ յամենայնի։ Եւ մեք բարի կամաց ձերոց ոչ եմք ներհակելոց. որպէս և կամիք արարէք, և զսուրբ Աթոռ մայրս ձեր հոգացէք և զօգուտն սորին խորհելով. և զշինութիւն և պայծառութիւն սորին, և զբարձրութիւն պատուոյն և փառացն պահեսջիք ի նոյնութեան, որպէս մինչև ցարդ լեալ է, առ ի պարծանս ձեր, և բոլոր ազգիս մերոյ։ Որպէս և մեք սակս նոյնոյ պայծառութեան դեգերիմք և հոգամք հանապազ։ Իսկ եթէ խնայել կամիք և ի խոցեցեալս նետիւք բանից, մանաւանդ ի յանխոնարհելի իշխանութիւն հայրապետութեան սրբոյ Աթոռոյս, որ է ձեզ յատուկ պարծանք, որ ինչ յաւուրս հոգելոյս նախնեաց ձերոց չէ եղեալ, դուք ես մի կամիք, զի յաւուրս ձեր լիցի. զի մի և զձեզ մեզադրեսցեն յետաչալք ձեր, քանզի՝ որք երբեմն այնպէսն արարին, և սրբոյ Աթոռոյս և սորին զահակալացն խոչնդոտն եղեն և հակառակ կացին, ոչինչ շահեցան զբարի, այլ զբազում չարիս գանձեցին ինքեանց և յետա-

զայից իւրեանց, զի ինքեանք զարձան ի հող, և զչար անունն թողին յաշխարհի ի խայտառակութիւն ինքեանց և ի նախատինս որդւոց իւրեանց, յազգաց յազգս. ահա զամենայն ինչ պարզապէս գրեցի և ճշմարտութեամբ առաջի ձեր եղի, այսուհետև ես անպարտ եղեց առաջի Աստուծոյ և առաջի ձեր ամենեցուն, զի այս և եթ զոր յիմ վերայ պարտաւորութիւն։ Քննեցէք ուշի ուշով զօգուտն և զբարին և զհիմնաւոր և զվերջին կամսն ձեր և զպատասխանին թղթոյս, մեզ գրեալ ծանուցէք, և զթղթաբեր սիրելի որդիդ մեր . . . արքեպիսկոպոսդ փութով յետս առ մեզ դարձուցէք, յորմէ և զհապէսն ոչ գրեցելոցս ունիք գիտել։ Զայնս երկիցս և երիցս գրեալ եմք, յառաջագոյն ձեզ օրհնեցելոցդ Աստուծոյ, բայց զիտեմ զի չեն հասեալք առ ձեզ՝ վասնորոյ չորրորդ անգամ գրեցաք առաւել քան զառաջինսն և յատուկ եպիսկոպոսն յղեցաք։ Եւ լուողքդ աղաչանաց մերոց, եղիջիք օրհնեալք յԱստուծոյ և յամենայն սրբոց նորա և ի մէնջ, և շնորհք սրբոյ Աթոռոյս ընդ ձեզ լիցի յարաժամ Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս, և ի փետրուարի . . ի շնորհածաւալ և ի լուսակառոյց Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ճԿ. *Թուղթ ի Թիֆլիզ առ միլախօրպաշի պարոն Յովսէփն Ղորղանեան, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ յաղագս վիճոյ Սհակաշէն եկեղեցւոյն։*

Թուղթ քո ի փետրվարի 24 գրեցեալ ժամանեաց առ մեզ ի մարտ ամսոյս 11 ձեռամբ ի ձէնջ առաքեցեալ մարդոյն. զոր ընթերցեալ իմացաք զերկարօրէն գրուածսդ որ վասն վիճոյ Սհակաչէն եկեղեցւոյն։ Որոց իւրաքանչիւր բանից մի ըստ միոջէ գրելոյ ըզպատասխանի յիրաւի չունիմք առ ժամս զձեռնհասութիւն, բայց հասառօտիւ զայս գրեմք։ Եւ սակայն նախքան զգրել մեր ինչ առ խնդիր սիրելւոյդ, զայս ունիմք գրել աստէն ի վստահութիւն սիրոյ։ Զի մեք՝ թէ առ հարկին պահանջելոյ, թէ յաղագս ի պայծառութեան և ի շինութեան մնալոյ սրբոյ աթոռոյս, և թէ վասն խաղաղութեան և անդորրութեան ազգին և թէ առ օգուտ անձին մերոյ, զԿարապետ և զԱբրահամ եպիսկոպոսն առաքեցաք զնալ ի կողմունսն հիւսիսոյ. ընդ որոց և զթուղթս գրեցաք առ սիրելիդ և առ այլս բազումս, առ զօգուտն սրբոյ Աթոռոյս խորհիլ և առնել և զնոսա չուտով ուղևորել այդրուստ. դուք օրհնեալքդ թող զհոգ չտանիլն ձեր առ ի տալ զկատարումն գրուածոց մերոց, արժան չտեսիք զոնեայ, թղթոց մերոց զպատասխանիս դարձուցանել, ըստ որում ահա լրացան երեք ամիսք որ յիշեալ եպիսկոպոսքն մեր արգելեալ մնան յայդր, բայց դուք ամենեին ոչինչ փոյթ կալեալ այդ, և ոչ թէ զերկտողեան բան ինչ գրեցիք առ մեզ ի դոցունց կողմանէ յայսքան երկար միջոցի։ Եւ այսպէս եթէ ընդ մեր հոգացողութեամբ ինչ պատահի առ ձեզ, ընաւ անփոյթ առնէք. բայց յորժամ ընդ ձեր ցաւ հանդիպի ստէպ ստէպ գրէք մեզ զթուղթս և զպեղանիս խնդրէք. բայց ինչ մեղադրութիւն սիրելւոյդ, զի յայտնի է, որ ազնուականութիւն քոյ ոչ գիտէ գրել զգիր հայերէն. այլք գրեն ըստ ախորժակաց իւրեանց, և տան զգլխացաւութիւն թէ առ քեզ և թէ առ մեզ։ Արդ եթէ եկեղեցւոյ խնամս տանիք, ահա սուրբ Աթոռս մեր ամենայն եկեղեցեաց մայր, և թէ վասն քահանայի միոյ զխաղաղութիւն կամիք, մեք ահա ձեզ քահանայապետ. ընդէ՞ր ապա առաւել քան զամենայն եկեղեցի, ոչ հոգայք և ոչ աշխատիք վասն սրբոյ Աթոռոյս լուսատու ծնողիս ձերոյ զօգուտն խորհել և առնելոյ, և զմեզ յանդորրու կացուցանելոյ. ինչ և իցէ աստ չէ տեղւոյս երկարել. Աստուած զապահով ժամանակ տացէ, զի յայնժամ գրեսցուք և խօսեսցուք։ Իսկ առ գրուածսն սիրելւոյդ՝ այսպէս գիտասջիր, զի մինչ այդ դրութիւնք ձեր, մէկ այնպէս ծանր բան չէ, կամ ընդդէմ օրինաց և հաւատոյ, և կամ այլ կրօնաքակութիւն ինչ, վասնորոյ այսպէս պատշաճ տեսանեմք՝ որ ժամանակ ինչ թէ դուք և թէ միակողմնականք ձեր համբերեսջիք և ի խաղաղութեան մնասջիք, և որպէս մինչև ցարդ կառավարեալ էք, այնպէս կառավարեսջիք ընդ միմեանս սիրով և հանդարտութեամբ, մինչև բարեգութն աստուած խաղաղ ժամանակ

շնորհեսցէ, և մեք սակաւ մի անդորրամիտ լիցուք ի հողոց և ի զբաղմանց աստի, և յայնժամ լաւապէս հասու լիցուք այդ վիճոյն ձեր, և ըստ այնմ զիրաւունս արասցուք, կատարելով զոր ինչ խնդիրն է ձեր. որպէս միւս կողմնակտնացն ես ընդ այսմ գրեցաք պատասխանի։ Իսկ թէ չկամիցիք համբերել առ ժամայն և ասացեալ եկեղեցի ձեր փոխանակ խաղաղութեան, տուն խռովութեան լիցի, տյսպէս արասջիք, զի թէ ի ձէնջ և թէ միւս կողմնականացն քանի երևելի քահանայք և իշխանք դայցեն առ մեզ, որ բերան առ բերան խօսելով՝ հասու լիցուք իրաւանցն, և զվէճն ի միջոյ բարձեալ կոնդակաւ մերով հաստատեսցուք զխաղաղութիւն։ Իսկ թէ ոք չլսելով բանիցս մեր՝ կամեսցի ըստ հաճոյից իւրոց առնել, զայն ինքն գիտէ. մեք առ այն զոր ինչ արասցուք անպարտ եմք լինելոց։ Այսպէս գիտելով ողջ լեր ի տէր։

Գրեցաւ յամի տեառն 1802։ Եւ ի մարտի Ժ.Դ. ի սուրբ Էջմիածին։

ՃԿԸ. *Թուղթ առ մահտեսի Յօհանէս Շէհիր վէքիլն։*

Զի յառաջ քան զայս ընդ Ստեփաննոս արքեպիսկոպոսին զամենայն զհարկաւորն գրեալ եմ սիրելւոյդ իմոյ։ Ընդ որ և միաբանք և երկրացիք զմահսէր արարեալ նոր ի նորոյ առաքեցին զմինն առ քաղաքացիսդ ի պատասխանի մահսերակերպ թղթոցն իւրեանց, որ առ ինքեանս։ Եւ զերկրորդն առ նոյն ինքն Դանիէլն, զի յետս կացցէ ի վնասատուութեանցն։ Եւ զերրորդն յղեցին ի մեծն Պօլիս, նոյնպէս և գերապատիւ Խանն գրեաց թէ առ Թագաւորն օսմանցւոց և առ նորին մեծամեծսն ի Պօլիս, և թէ առ փաշայսն տեղւոյդ, Ղարսայ, Ախալցխու և այլոց, և զայսոսիկ տաճկերէն թուղթսն իւր ձեռամբ հաւատարմին իւրոյ Իսմայել պէկին ընդ Ստեփաննոս արք եպիսկոպոսին առաքեաց ի Պօլիս. որք մինչ ցարդ կամ եկեալ են առ ձեզ և կամ գալոց են, և անտի գիտելոց էք զերկարապէսն։ Այժմ զայս միայն ծանուցանեմ հարկաւորաբար ազնիւ սիրելւոյդ իմոյ, զի Թաթարն և Մարաիրոս սեաղլուխն զորս առաքեալ էր Դանիէլ վարդապետն այտի առ Խանն եկին յԵրևան. և թէպէտ շատ ջանացին ի ձեռն մեծամեծ և անթուելի կաշառաց շրջել զմիտս Խանին, այլ ամենևին չեղեն ընդունելի բանք և թուղթք նոցին առաջի Խանին և առաջի բոլոր մեծամեծացն իւրոց։ Զի Խանին առաւել ցանկալիք են շինութիւն և պայծառութիւն աստուածային տաճարիս, քան զբազում գանձս։ Քանզի ի նախնեաց իւրոց բազում խնամարկութեամբ պահպանեցեալ Աթոռս՝ ոչ կամի թէ ի ժամանակս իւր ամա ասցի։ Վասն որոյ ատելով ատեաց զսեաղլուխն և զբերեալ թուղթսն ընդ ինքեան։ Եւ մեծամեծօք, և երկրականօք և միաբանութեամբ ի խորհուրդ մտեալ, սկսաւ նոր ի նորոյ կրկին անգամ գրել զթուղթ առ քաջայաղթ Թագաւորն օսմանցւոց թէ՝ ես զկաթուղիկոսս այս հաւանութեամբ ազգին և աթոռայնոցն կացուցի, որպէս ազգի ձեռագիրքն կան ի ձեռս սորա և քեզ ես ծանուցի և դու զֆարման շնորհեցեր յանուն սորա. և ի ֆարմանին հրամայեալ ես անփոփոխելի մնալ մինչև ցմահն, և թէ Հայք զօրէնս ունին զօծեալ Հայրապետն չփոփոխել, և ես թէ՝ երկիրս այս Շահինն է, և Շահն գիտէ սորա կաթուղիկոս լինելն, և քանիցս պարգևս և զհաստատութեան բազամս է շնորհեալ, և ես առանց նորա հրամանին ոչ կարեմ առնել ինչ այժմ։ Եւ խնդրեաց ես ի նմանէ անփոփոխելի զմեզ պահել, և զֆարմանն հաստատութեան անդրէն մեզ շնորհել. զայսոսիկ լիով գիտելոց էք ի յերևելի իշխանէն իւրմէ ի Մահմադ Վէլի սուլթանէն, որ առաքեցաւ ի զիմաց Խանին և մեր առ Դովլեթլու Ապտուրահման փաշայն և առ ձեզ, զի մինն ծանուսցէ փաշային զկամս Խանին, և միւսն պատմեսցէ ձեզ զվիշտս և զտառապանս մեր և Աթոռոյս մերոյ։ Եւս գրեաց Խանն մեծապատիւ փաշային տեղւոյդ ձայնակից ինքեան լինել, և ի մեծն Պօլիս ի դուռն արքունի գրել, և տեղւոյդ ժողովրդեանն ես հրամայել՝ հասարակութեամբ վերստին զմահսէր առնել, և ի մեծն Պօլիս առ իշխանսն մեր առաքել և յորդորել զնոսա ի բաց կալ ի վնասակար գործոցն։ Արդ՝ և ես յատկեղ սիրելւոյդ իմոյ գրեմ և խնդրեմ զի և դու ըստ հաւատարիմ սիրոյդ և

անխարդախ բարեկամութեանդ լորդորող ժողովրդոցդ այգմիկ լինիցիս, և զամենայն զգրեալսն մեր ի կոնդակին լաւապէս ի միտ առեալ, ըստ այնմ ջանասցես առնել զկատարումն տալ, քանզի այր հաւատարիմ լալսպիսի ժամս փորձի։ Զսոյնս գրեցաք և սիրելւոյն մերոյ մահտեսի Մարտիրոս աղային օգնական քեզ լինել, և գործակցութեամբ միմեանց զճշմարտութիւնն յառաջ տանել, և փութով զմահսէր արարեալ ի Պօլիս յղել, և խափանել զչար և ղապականարար խորհուրդս նոցա, որ ածէ զկորուստ և ղաւերութիւն ի վերայ Աթոռոյս, ազգիս մերոյ, և մեր, որպէս զանտի ծաղեցեալ զվնասսն և զխալատակութիւնս թուեալ եմք ի կոնդակին, և ղաչս ամենից բացեալ և խելամուտ արարեալ զնոսա, զի զիտասցեն ամենեքեան թէ ի նախնեաց իւրեանց հաստատեցեալ Աթոռս ահա ի պատճառս միոյ սեաղլխի ի ժամանակս իւրեանց փոլթ ընդ փոլթ մերձ է ի քալքալիլ։ Ուրեմն ջանա սրտի մտօք անչքացեալ տանս ալսմիկ լօգնութիւն հասանել, նոյնպէս ի հրամայելն փաշային ժողովրդեան սակս մահսէրին, փութացուսցես ղդոսա և դու և ի պատմելն զաղէտս մեր և սրբոյ Աթոռոյս մերոյ, ցաւակցաբար ի զութ շարժեալ ի վերականգնել ըղսա, վաղվաղենջիր, որպէս զի վարձուց մեծաց և կրկին օրհնութեանց արժանաւոր զտանիցիս։ Զայլ երկարօրէնն ի թղթաբերացն մերոց զիտելոց ես, զոր յատկապէս ի սէր քոյ յանձնեմ լինել դմա և պաշտպան։ Այսպէս գիտելով քոյ և ղրուածոցն մերոց սիրով զկատարումն շնորհելով՝ եղիցիս օրհնեալ յաստուծոյ և յամենայն սրբոց նորա և ի մէնջ, և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ և ընդ քոյսն ամենայն, ամէն։ Ի մարտի ԻԵ ի ՌՄԾԱ թուոջս։

Նաև ընդ աթոռակալ Սիմէօն արք եպիսկոպոսիդ առաքեցաք և զՄելիք Ստեփան աղային առ ձեզ որպէս զի եթէ մեր Ստեփանոս արք եպիսկոպոսն եկեալ անցեալ և գնացեալ իցէ սլտի, զձեր մահսէրն, զոր պմրտիք առնել, դոյն Մելիք Ստեփան տղայն տարեալ հասուսցէ առ նա, ուր և զտանիցի. զոր յանձըն առնեմ խնամոց և մարդասիրութեանց ձերոց։

ՃԿԲ. *Թուղթ ի Թիֆլիզ առ Բէկլթաբէկ Դիւանն։*

Եւ ընդ օրհնութեանս և սիրոյ ողջունիս ծանուցումն լիցի աղնիւ սիրելւոյդ իմոյ և հաւատարիմ բարեկամիդ. զի այր կատարեալ՝ զարդարեալ բարեպաշտութեամբ և լցեալ առաքինական գործովք և փայլեալ բարեմասնութեամբք, և փորձեալ ի բարեկամութեան՝ յաւուր նեղութեան և վշտաց՝ և ես առաւել փայլեցուցանէ իբրև զարփի զիւրն պատուական գանձ զճշմարիտն սէր։ Արդ՝ նարդենիս ի կատարեալ բարեկամաց և ի հաւատարմաց մինն մեզ և սրբոյ Աթոռոյս մերոյ զքեզ ճանաչեմք ի գրոյ և ի լրոյ. քանզի՝ արք բարիք և բարեկամք մեր՝ վկայելով զկատարեալ բարեկամութենէ և զմեծագոյն հաւատարմութենէ քումմէ, զորս ունիս առ մերս հողեոր հայրութիւն և առ լուսոյ մայրս ծանուցեալ էին մեզ լիապէս։ Վասնորոյ ընդ ի համար ընտիր սիրելւոյ զքեզ զասեալ արժանապէս զայս թուղթ օրհնութեան և սիրոյ գրեցաք՝ ի ցուցանել այսու զմերս առատութիւն սիրոյ և շնորհակալութեան զորս շնորհակալիմք զքէն միշտ օրհնութեամբ։ Արդ՝ մինչ Դանիէլ վարդապետն կամի վնասել զՏունս այս, և զանփոփոխելի հայրապետութիւն ազգիս ընդ փոփոխութեամբ արկանել ի ձեռն կաշառաց, վասնորոյ թէ խանն և թէ մեծամեծք երկրիս ընդ միաբանից ի խորհուրդ մտեալ գրեցին երկու անգամ ի դուռն Օսմանցւոց թագաւորին և նորին մեծամեծացն և շրջակայ քաղաքաց փաշայիցն զճշմարտութիւն և զամենայն ինչ ուղղութեամբ ծանուցին ամենեցուն և բողոք կալեալ յայտնեցին թէ՝ մեք զԴանիէլն բնաւին ոչ կամիմք, և ոչ իսկ թողումք յերկիրս մտանել. և թէ՝ զօծեալ հայրապետն մեր ամենևին մինչև ցմահն իւր ոչ փոփոխեմք և այլն։ Մեք ես գրեցաք կոնդակօք զհարկաւորսն պօլսեցւոց և այլոց։ Եւ ղալոսսիկ թուղթսն ձեռամբ երևելի արանց եպիսկոպոսաց և իշխանաց յղեցաք ի մեծն Պօլիս ի Կարին և յայլ քաղաքս, և սպասեմք պատասխանեաց նոցին։ Նոյնպէս գրեաց խանն տեղւոյդ պարոն Կնօրինին և պարոն Լազրովին այնպէս որպէս գրեաց ի մեծն Պօլիս, մեք ես գրեցաք մեծամեծացն տեղւոյդ Ռու-

սաց, Վրաց և Հայոց զօրս և ձեռամբ Հասան պէկ ազային և դերագնիւ Աղալ Մելիք Սահակին առաքեցաք. անտի զամենայն ինչ գիտելոց ես և զու. ուստի ոչ երկարեմ: Այլ արդ խնդրեմ. և ի քումմէ հարազատութենէ Թղթաբերացդ մերոց օգնական լինել սրտի մըտօք, և մեծագոյն հարազատութեամբդ ջանալ զստութիւն խափանել և զճշմարտութիւն յառաջ տանել, և զուն գործել արձակել զվարդապետսն մեր այտի, և ի դուռն ինքնակալին փութացուցանել՝ զի գնացեալ պատմեսցեն արդարադատին զրանին իսկութիւն և ըզօգնութիւն խնդրեսցեն վասն խղճալի Աթոռոյս մերոյ և մեր ի զուր բամբասելոցս. որ եթէ այլ ևս այսպէս մնասցէ, քաքայլի իսպառ ողբոց արժանի տունս այս. զայլն թողում ի կենդանի գրոցդ մերոց տեղեկանալ. այսպէս առնելով քոյ և կատարելով զգրուածս մեր եղիցիս օրհնեալ յԱստուծոյ և ի մէնջ և շնորհք սրբոյ Աթոռոյս եղեցի ընդ քեզ և ընդ քոյսն, Ամէն:

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս, և ի մարտի ԼԱ ի յանապատս Երևանու:

ՃԿԳ. *Թուղթ ի Թիֆլիզ առ պալուն Կնօրինն շնորհաւորութիւն վասն գալստեան նսցա ի քաղաքն եւ յանձնարարութիւն վասն եպիսկոպոսաց մերոց:*

Շնորհաւորեմք նախ այսու զրարի և զշահաբեր զալուստ ձեր ի քաղաքդ Թիֆլիզ և հայցեմք ի յերկնաւոր Թագաւորէն Թագաւորաց զի քացրացուցեալ զսիրտ օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն, ի վերայ բանաւոր հօտին իւրոյ, բնակեցելոյն ի դոյն քաղաքի և ի բոլոր շրջակայս գորին պահպանեսցէ զդոսա ի յերջանկութեան և մեզ ևս արժանացուսցէ վայելել զնոյնն առաւելապէս, առ որ յօրէ յօր ակնապիշ եղեալ սպասեմք: Ուրեմն, աչք ամենեցս լիցին լուսաւորեալք, և տրտմեալ սիրտք մեր ցնծացեալ, և ի մտանելն ձեր ի կայսերախնամ քաղաքդ այդ՝ մտցեն բարութիւնք տեառն ամենակալի և խնամք և գթութիւն օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն: Եւ՝ ապա մաղթեմք ի ձերդ դերազանցութենէն, որպէս և յառաջ քան զայս բազմիցս խնդրեալ եմք զնոյնն ի խոնարհ սրտէ, ի գութ շարժիլ և զարդարութիւն և ճշմարտութիւն ի գործ ածեալ հրամայել եպիսկոպոսացն մերոց Կարապետի և Աբրահամու զիմել ի յոտս ինքնակալին մեծի և ծանուցանել զամենայն ինչ ուղղութեամբ, և մեզ զբաւականութիւն խնդրել, որ ի բերան անկեալ՝ բամբասիմք ընդ վայր ի դրունս կայսերաց և մեծամեծաց: Եւ մանաւանդ կարկեցուցանել զբերանս չարասիրաց, որք զպայծառացեալ խնամարկու տէրութիւնդ այդ, և զձերդ գերազանցութիւն պատճառ ինքեանց առեալ մաքառեն ընդ մեզ, և անպատուեն իբր թէ ամենաքաղցր տէրութիւնդ այդ և ձերդ մեծութիւն անհաճ գոլով ընդ հայրապետութիւն մեր՝ զփոփոխութիւն առնել կամիք. և այսպէս զինքեանս արդարացուցեալ խռովարարքն զայս պատճառեն: Իսկ սակս Յովհաննէս վարդապետիդ ուզմիկ, որ փախստեալ անկաւ յայդր, ծանիցէ ձերդ գերազանցութիւն, զի ի հանգուցեալ Յովսէփ կաթուղիկոսէն սկսեալ մինչև ցարդ լեալ է դա խռովարար ժողովրդոց և նէրհակ սորին ղահակալաց, մեք ոչ դադարեցաք երբէք ի բարեբարելոց զդա և դա ոչ վերջացաւ ի խռովելոյ զպարզամիտն, յետ ամենայնի երդուեաց յանուն Աստուծոյ և ի սուրբ Գեղարդն նորին դադարել յամենայն չարեացն իւրոց, և կալ ի հանդարտութեան, բայց սուտ գտաւ և առ այնս, և ինքնահալած փախեաւ ի Թիֆլիզ. ուստի ոչ միայն խռովարար պարտիք գիտել զդա, այլ և երդմնազանց որպէս ի միաբանից մահսէրէն ունիք լիապէս գիտել զորս մեք ոչ երկարեմք: Յաւել քան զայս՝ ցանկամք բարեբաստիկ երջանիկ կենաց ձերոց մնալ խաղաղութեամբ, որք բաղձալիք են հոգ.ոց մերոց, և առաջի Քրիստոսէջ սուրբ տեղւոյս միաբանութեամբ հանդերձ եմք օրհնօղ անդադար զբարեցապարտ անգին կեանս օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն և ձերդ գերազանցութեան, ողջ լերուք ի Տէր ի պարծանս քրիստոնէական սուրբ հաւատոյս մերոյ, և ի հաստատութիւն սրբոց եկեղեցեացն Աստուծոյ և մանաւանդ ի մխիթարութիւն վշտակիր սրտի աղօթաւորիս ձերոյ ԴԱՒԻԹ կաթուղիկոսիս ամենայն Հայոց: Ի յապրիլի 1802. յԱստուածակերտ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին ի դաշտս Արարատեան:

ՃԿԴ. *Թուղթ ի Թիֆլիզ առ Միրզայ Աբրահամն, ի պատասխանի թղթոյն, եւ ծանուցումն զայլ եւ այլ բանից:*

Թուղթ քոյ յամսոյս 6 գրեցեալ՝ էհաս առ մեզ ի 26, ձեռամբ օրհնեալ Դաբրիէլ մովրովին [30]) և ընթերցեալ իմացաք զոր գրեալ էիր վասն Մինաս վարդապետին թէ ձեռնամուխ լինի յարդիւնս ժողովրդոց եկեղեցւոյն ձերոյ, վասնորոյ և խնդրեալ էիր ըղ սասա գրել նմա։ Առ որ ալսպէս գիտասցես զի մեք խնդրեալ եմք զՄինաս վարդապետն, որ յայս մերձակայ աւուրքս գալոց է, որոյ ի գալն հասու լինելոց եմք որպիսութեանցն, և երբ Աստուած յաջողեսցէ՝ որ առաջնորդ լղիցեմք ի քաղաքդ, յայնժամ հոգ տանելոց եմք այդ բանին ձեր։ Բայց զի դուք հարազատ որդիք էք սրբոյ Աթոռոյս, և բարեկամք մեր, եկեսջիք այժմ, և վասն ցաւոց սրբոյ Աթոռոյս հոգասջիք։ Քանզի զարդիս ի Կարնոյ փաշայէն մէկ Թաթար և ի Դանիէլ վարդապետէն. ոմն սեադլուխ եկին յԵրեւան քաղաքս, ունելով զսուրաթ ֆէրմանի կաթուղիկոսութեան յանուն Դանիէլ վարդապետին։ Արք տեսեալ զխանն՝ յայտնեցին զվնասակար խորհուրդ իւրեանց, զոր և ի գլուխ տանելոյ աղագաւ խոստացան թէ խանին և թէ այլ մեծամեծաց զանթուելի կաշառս. բայց Դօվլաթլու խանն, իմանալով թէ ապօրինաւոր է խնդիր նոցա և մեծ պատճառ աւերման Աթոռոյն, ոչ հաճեցաւ ամենևին։ Այլ ընդ միաբանից և երկրացւոց խորհուրդ արարեալ գրեաց վերստին արզ առ թագաւորն Օսմանցւոց թէ ես ինքնագլուխ չկացուցի զսա կաթուղիկոս, այլ խնդրանօք միաբանից և շրջակայ երկրացւոց, որպէս բոլոր ազգի ձեռագիրքն և մահուրքն ես կան ի ձեռս սորա։ Դուք ես շնորհեսցիք զֆէրմանս, յատկապէս հրամայելով թէ մի՛ փոխեսցի սա մինչև ցմահն։ Մեր Շահն ես իմացեալ է, և շնորհեալ սմա զքանիս ռաղամս հաստատութեան։ Վասնորոյ ես ոչ կարեմ փոխել զսա։ Վերջապէս խնդրեաց՝ զի վասն մեր շնորհեսցէ զկրկին ֆէրման հաստատութեան, իսկ Ղարսայ և Կարնոյ փաշայիցն ես գրեաց ըղթուղթս՝ զի նոքա ես արզ գրեսցեն առ թագաւորն, և մերազնէից և մահուրս չինել և յղեսցեն ի Պոլիս։ Զայն թուղթսն իւր առաքեաց խանն ձեռամբ երևելի տաճկի. ընդ որում և մեք յղեցաք զաթոռակալ Սիմէօն արքեպիսկոպոսն, հանդերձ կոնդակօք առ մերազնեայսն յիշեալ քաղաքաց, առ ի հոգ տանել չինեցուցման արզալիցն և մահուրացն, և յուղարկելոյ ի Պոլիս։ Իսկ այժմոյս ես առաքեցան թղթովք ի Դօվլաթլու խանէն և ի մէնջ պատուելի Հասան բէկն՝ և սիրելին մեր իշխանազնեալ Մելիք Սահակ աղայն, առ պարոն Կնօրինն և առ այլ մեծամեծսն քաղաքիզ, զի ծանուսցեն զոցա զցաւսն սրբոյ Աթոռոյս և մեր, և խնդրեսցեն իսկ վասն Կարապետ և Աբրահամ արքեպիսկոպոսացն արձակելոյ գնալ ի դուռն աստուածապսակեալ ինքնակալ կայսերն։ Իսկ այսու թղթով զայս ունիմք գրել, զի որպէս միաբանք և երկրացիքն մեր՝ մահուրօք գրեալ են, յայդ երկրայսդ և ի կողմանսն Պօլսոյ՝ ըստ կանոնաց սրբոց նախնեաց՝ օծեալ կաթուղիկոսն ոչ է փոխելոց, արդ այժմ եթէ ընդդէմ այսր կանոնի փոփոխութիւն լիցի մեզ, հետագայ կաթուղիկոսքն մեր ես ոչ կարեն զտանել զհանգիստ, զի սուրբ Աթոռս է ի մէջ երից տէրութեանց. եթէ մի տէրութիւն այժմ առնիցէ զփոփոխութիւն հայրապետութեան, միւս տէրութիւնքն ես ուսեալք անտի՝ ի տարին միանգամ դնելոց են զկաթուղիկոս և բառնալոց, և ի փոփոխութենէ անտի աւերելոց է իսպառ խղճալի Աթոռն որպէս յայտ է։ Վասնորոյ բարւոքապէս խորհելով ձեր զօգուտն սրբոյ Աթոռոյս, հանդերձ իշխանօք և ժողովրդօք ջանասջիք հաստատ պահել զկանոն նախնեացն և թղթաբերսդ մեր սիրով ընկալնելով օգնական լիջիք դոցա և խնդիր արասջիք ի պարոն Կնօրինէն, վասն արձակելոյ զԿարապետ և զԱբրահամ արքեպիսկոպոսն, զի գնացեալ նոցա ի դուռն աստուածապսակեալ ինքնակալ կայսերն, խնդրեսցեն ինմանէ զօգնութիւն սրբոյ Աթոռոյս և մեր։ Իսկ զայլ երկարապէսն թողումք ի թղթաբերացդ իմանալ, և ըստ այնմ բարերարել առ սուրբ Աթոռս. զի միշտ շնորհաց և օրհնութեանց արժանասջիք։ Ողջ լեր ի Տէր։

Գրեցաւ յամի Տեառն 1802 և ի մարտի ԼԱ. ի սուրբ Էջմիածին։

ՃԿԵ. *Թուղթ ի ղեկավն Շուշւոյ՝ առ սուրբ Աթոռոյս գանձապետ պարոն Աւագն, ընդ... վարդապետին՝ որ գնայր յայն երկիրսն ի ժողովել զգանձանակադրամսն։*

Եւ ընդ շնորհապարգև օրհնութեան նամակիս՝ գիտասջիր սիրելիդ մեր և ողջախոհ որդի սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի հարազատական թուղթ քո՝ էհաս առ մեզ, զոր ընթերցեալ և իմացեալ զառատութիւն ջերմեռանդ սիրոյդ և հաւատարմութեանդ առ սուրբ Աթոռ լուսատու մայրս քո և առ հոգևոր հայրութիւնս մեր՝ ուրախացաք, և շնորհակալութեամբ բազմաւ օրհնեցաք զքեզ։ Զոր տէր օրհնեսցէ և զօրացուսցէ, ազատ կացուսցէ ի վտանգից հոգեկանաց և մարմնականաց. և պահեսցէ միշտ ի խնամս և յողորմութիւնս իւր հանդերձ քոյոյնովքդ ամենեքումբք. և զամենայն բանս և զգործս ձեր արդիւնաւորս և շահեկանս արասցէ։ Արդ՝ յայտնի է սիրելւոյդ՝ թէ յայս քանի տարիս որքան անտանելի նեղութիւնք և վիշտք և անյաջողութիւնք հանդիպեցան մեզ, և քանիպատիկ վնասուց վնասեցաւ սուրբ Տունս այս, որև յերկուամս ևս մնալով յանգլխութեան՝ ի բազում կարևոր պիտոյից պակասեցաւ. զի երթեեկքն հատեալ գոլով՝ մուտքն նուազեալ են իսպառ. այլ ելքն՝ ընդ միոյն տասնապատիկ առաւելեալք։ Եւ զի՝ ահա բազում ժամանակ եղև՝ որ յայդ երկրայսդ վարդապետ չէ եկեալ առ ի ժողովել զգանձանակադրամսն, վասնորոյ թէ առ հարկին պահանջելոյ, և թէ յաղագս մեզ օգնութիւն լինելոյ ի բարեպաշտօն օրհնեալ ժողովրդոցդ, ահա զսիրելի և զհոգևոր որդին մեր՝ և զհարազատ զաւակն սրբոյ Աթոռոյս՝ զ... առաքեցաք հանդերձ օրհնածիր կոնդակաւ, զի ի ձեռս գանձապետաց զոր ինչ նուէրք գոն յանուն սրբոյ գահիս, այսինքն թէ ղանձանակադրամք, թէ կտակք, թէ խոստմունք թէ քառասնից՝ և թէ այլ արդիւնք, զայնս ժողովեսցէ և բերցէ ի սուրբ Աթոռս ի յօգնութիւն պակասութեանց սորին։ Վասնորոյ գրեմք սիրելւոյդ, զի ի գալն նորա յայդր՝ սիրով ընկալցիս, և պատուեալ ըստ արժանւոյն՝ շահեսցես և մխիթարեսցես, և առ գործն ևս ձեռնտու և օժանդակ լիցիս. նաև՝ զոր ինչ զանձանակադրամս և զայլ արդիւնս ունիս ժողովեալ յանուն սրբոյ Աթոռոյս՝ բոլորապէս յանձնեսցես նմա բերել հասուցանել ի սուրբ Աթոռս։ Եւ մեք ի յընկալնուլն մեր՝ զկամայական տուրսն ձեր՝ գրելոց եմք զթուղթս օրհնութեան առ ժողովուրդսն սրբոյ եկեղեցւոյդ ձերոյ և առ սիրելիդ՝ ի միամտութիւն և ի զուարճութիւն հոգևորապէս։ Որ և ի սէրդ և ի հաւատարմութիւնդ առ սուրբ Աթոռս և առ մեզ հաստատուն մնալով, և ի հոգեշահ գործդ գանձապետութեան արի և ժիր լինելով, և զորպիսակալտ դիրդ չպակասեցուցանելով ի մէնջ, ողջ լեր ի Տէր, և պահպանեցեալ հզօր աջով նորա յարաժամ. Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս, և ի մարտի... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՃԿԶ. *Թուղթ ի Թիֆլիզ առ Պետր Իվանիչ Կաւալենցկին:*

Լսելով մեր զբարի անուն զքաղցր սիրտ և զճշմարիտ սէր ձերդ գերազանցութեան, զորս ունիք և ցուցանէք դուք ձերոց բարեկամաց, ցանկացաք ունիլ զմեծանուն այրդ պատուական մեզ և սրբոյ Աթոռոյս մերոյ բարեկամ։ Ուստի ընդ երկուց եպիսկոպոսաց մերոց գրեցաք յառաջ ձերդ պատուականութեան զթուղթ սիրոյ և օրհնութեան, զոր ցարդ յուսամ թէ ընկալեալ իցէք։ Իսկ այժմ այսու զայս ինչ հարկաւորաբար ծանուցանեմք ձերդ գերազանցութեան և մանաւանդ թէ խնդրեմք տալ դրուածոց մերոց ըղկատարումն։ Ամենահզօր տէրութիւնդ այդ պանծալի՝ ընդ ծագս երկրի հռչակեալ է յամենից պէսպէս գովելի բարեկարգութեամբք և յատկապէս երիւք ձրիւք, այսինքն ի խոստմունս իւր է հաստատ, ի դատաստանս արդարակշիռ, և ստորադրեալսն իւր մարդասէր, և զիւրաքանչիւր ազգս թողու զի ըստ ծիսի և օրինի իւրեանց կառավարեսցեն, զի՞ է ապա որ մեզ, ապաւինելոցս ի քաղցր հովանաւորութիւն իւր՝ այլոցիկ մարդասիրութեանց ներհակն հանդիպի։ Քանզի հզօր տէրութիւնդ այդ բարեհաճեցաւ նախ ընդ հայրապետու-

թիւն մեր, և զֆարմոն հաստատութեան ետ հանել յանուն մեր, այժմ հաւատալով բանից նախանձոտաց հրամայեալ է յանուն Դանիէլ վարդապետին հանել զֆարմանն։ Երկրորդ՝ մինչ ոմանք սուտ բանիւք զրպարտեալ զմեզ պղտորեալ էին զսիրտ օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն, և մեք գիտացեալ առաքեցաք առ նորին կայսերական մեծութիւն զԿարապետ և զԱբրահամ եպիսկոպոսունսն ի յայտնել ճշմարտութիւնն, զգոսա ևս առանց վերահասութեան արգելեալ են ի Թիֆլիզ և չթողուն յառաջ երթալ։ Եւ երրորդ՝ հայք զօրէնս ունին անփոփոխ զօծեալ հայրապետն պահել յաղագս զանազան պատճառաց՝ քանզի Աթոռս այս է ի մէջ երից տէրութեանց՝ ռուսաց, օսմանցւոց և պարսից, ուրեմն եթէ մի տէրութիւն կամիցի զանփոփոխելի հայրապետութիւն Ազգիս ընդ փոփոխութեամբ արկանել, յայնժամ և պարսիկք, որք մինչև ցայժմ անփոփոխելի դիտեն զհայրապետն Հայոց, ի տեսանելն միանգամ զփոփոխութիւն ինչ, և ինքեանք յաղագս կաշառաց և հարկապահանջութեանց յասիսն մի անգամ սկսանին փոխել զհայրապետն, և այսպէս բազում խայտառակութիւնք յառաջ գան անտի. և մեծ զրամավատնութիւնք, և լինելոց է խաղալիք, և ծաղր ամենեցուն հայրապետութիւն ազգիս, և փակեալ լինելոց են. դրունք խղճալի Տանս սակս ծանր պարտուց. և տէրութիւնդ այդ որ առանց քննութեան և վերահասութեան կամի փոփոխել զօծեալ հայրապետս հաւատալով բանից թշնամեացն ճշմարտութեան և այնու կարծէ զբարիս առնել Աթոռոյս և Ազգին, աւերութեան լինի պատճառ յայնժամ և այն զորս կարծել տան ձեզ արք նախանձոտք, բարի դառնան ի վնասատուութեան, զորըս թողումձեզէն ձերով ուշիմութեամբ քննել և իմանալ։ Վասնորոյ և տէրութիւն Օսմանցւոց գիտելով զայսպիսի անփոփոխելի օրէնս Ազգիս մերոյ և մանաւանդ զհետևեալ վնասսն, որք ծագին ի փոփոխութենէ, հրամայեալ է ի ֆարմանին անփոփոխ պահել զհայրապետութիւն մինչև ցմահն։ Այլ արդ՝ այս է մեր խնդիր ի ձերդ գերազանցութենէ, զի զայսոսիկ վնասս խորին քննութեամբ մտածեալ ծանուցես ուր հարկն է, և մանաւանդ պարոն Կնօրինին, և մեծութիւն ձեր ևս յորդորօզ լինիցի նմա առ ի արձակել զեպիսկոպոսունսն մեր ի Թիֆլիզու և ուղևորել ի դուռն օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն զի գնացեալ ծանուսցեն զցաւս մեր, և զրանին ուղիղն, և խղճալի Տանս աղագաւ և մեր ի զուր բամբասելոցս վասն գօգնութիւն հայցեսցեն, քանզի եթէ այլ ևս այսպէս մնասցէ, մերձ ընդ մերձ կործանի տունս այս. որոց աղագաւ առաքեցան առ պարոն Կնօրինն . . . ի դիմաց խանին և մեր, որպէս զի բերանօք ևս պատմեալ մեծութեան նորին և ձեր զոր ինչ ի վերդ գրեցաք, խնդրեսցեն արձակել զվարդապետն մեր, և մանաւանդ ի խնամարկել, և ի յօգնել մեզ յորդորել զպատուականութիւն ձեր։ Ուրեմն խնդրի և ի ձերդ բարեպաշտութենէ յատկապէս օգնական մեզ լինել, և մարգասէր բարուքդ, և արդարադատ իրաւախոհութեամբդ, բողոքանացն մերոց հասու լինել, և յԱստուածակոյս կողմանէ ջատագով ճշմարտութեանն գտանել, զմեզ ի ձեռաց թշնամեաց մերոց և ի զուր բամբասողաց ապահով առնել, որովք պարտաւորեալ մեր օրհնելոց եմք անդադար զանդին և զբարեացապարտ կեանս ձեր զամենայն աւուրս կենաց մերոց, հանդերձ բոլոր միաբանութեամբ։ Զայլն ամենայն և զթշուառութիւն Աթոռոյս մեծի, ի թղթաբերացդ մերոց ունիք գիտել, զորս յանձնեմ ի ճշմարիտ սէր սիրելւոյդ։ Ողջ լերուք ի Տէր և զօրացեալ կենսատու սուրբ խաչիւն նորին ի փառս անուան մեծի և ի մխիթարութիւն վշտապատ սրտի մերում Ամէն։

Գրեցաւ ի 1802 յԱստուածաէջ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին, որ ի դաշտս Արարատեան։

ճԿԷ. *Թուղթ ի Թիֆլիզ առ Մելիք Ջիմշուտն, ծանուցումն զայլ եւ այլ բանից, եւ յանձնարարութիւն վասն նորոց անդ գնալի մարդկանցն։*

Ցորմէ ժամանեսցէ թուղթ սիրոյ՝ ողջունի և օրհնութեան. հանդերձ հոգեզուարճ շնորհիւ սրբոյ Տեղւոյս իջման բանին միածնի. ի վերայ իսկապէս սիրելւոյդ մերոյ՝ և

հարազատ որդւոյդ սրբոյ Աթոռոյս, տերամբ զօրացեալ պերճապատիւ և ազնուական Մէլիք Ջիւմշուտ աղայիդ։ Որում և զխոտութիւն լ՛ցի· Ջի լառաջքան զայս՝ երկիցս գրեալ եմք ըզԹուղթս առ ազնուականութիւն քոյ․ ըստ որում ահա երևելի իշխան ես գտանեցեալ ի մէջ մնբաղնէից՝ յատկացեալ պերճ փառաւորութեամբ և խոհական խորհրդով, և սրբոյ Աթոռոյս ես հաւատարիմ բարեկամ ես և օգտախոհ, վասնորոյ և մեք ստէպ ստէպ գրելով զԹուղԹս առ պատուելութիւնդ՝ կոչեմք զքեզ ի ցաւակցութիւն մեզ և սրբոյ դահիս․ բայց սիրելիդ ոչինչ փոյթ կալնուս դունեալ դփոխադարձուն Թղթոց մերոց գրել և մխիթարել զմեզ ի յոդնապատիկ վարանմունս մեր։ Իսկ արդ՝ այսու Թղթով զայս ունիմք ծանուցանել. զի մինչև ցարդ Թէ քանիպատիկ վնասք և փորձութիւնք հասին սրբոյ Աթոռոյս՝ լուեալ ես ի հարկէ Թէ չաս և Թէ . սակաւ. վասնորոյ ոչ երկարեմք աստէն, այլ Դանիէլ վարդապետն զայնքան բազմադան վնասսն բաւական չհամարելով՝ կամի այլ ես նոր ի նորոյ վնասս հասուցանել՝ որով և աւերել իսպառ զխղճալի Աթոռս․ քանզի՝ ի ներկայս մէկ սուրհանդակ և մէկ սեաղլուխ էր յղեալ նա ի Կարնոյ՝ հանդերձ կաթուղիկոսութեան ֆէրմանի օրինակով, որք եկեալ առ Դօլվաթլու խանն մեր՝ յայտնեցին զվնասակար խորհուրդ իւրեանց․ որոյ աղագաւ և խոստացան իշխողաց և այլ մեծամեծաց զբազում և զանթուելի կաշառս՝ զոր մեք անդէպ համարելով գրել աստ՝ Թողումք յալլոց իմանալ։ Բայց մեծապատիւ խանն՝ ընդ միաբանից և երկրացւոց խորհելով, և իմանալով՝ Թէ նոքա առ նախանձու կամին աւերել զԱթոռս, ջուղապետ սուրհանդակին և սեաղլխին՝ Թէ անկարելի է, այդ գլուխ գալոյ բան չէ, մինչև ցարդ չեմք լուեալ՝ և չեմք տեսեալ՝ Թէ օծեալ կաթուղիկոսն փոխեսցի, վասնորոյ մեք ես չեմք առնելոց՝ եթէ հայք ներհակեսցեն առ այս՝ և ձեռս բարձցեն աթոռոյն՝ մեք ձեռն քարշօղ չեմք․ զոյիւք պահպանելոց եմք զնա՝ և պատճառ աւերման նորա չեմք լինելոց։ Այսպիսի ասութեամբք յետս դարձոյց զնոսա ունայն։ Ապա՝ գրեաց վերստին արզալ առ տէրութիւն օսմանցւոց՝ Թէ մեք ինքնագլուխ չեմք կարգեալ զսա կաթուղիկոս․ այլ խնդրանօք հրջակայ երկրացւոց և միաբանիցն եղև, ձեր տէրութիւն ես չնորհեաց յանուն սորա զֆէրմանս հաստատութեան․ բոլոր ազգն սորա ես իմացեալ՝ ընկալան, Թէ կընքելով զհամահաճական մահսէրն, և Թէ գրելով զյատուկ յատուկ մահսէրս և Թուղթս հաւանութեան։ Շահն ես գիտացեալ է զկաթուղիկոս լինելն սորա, որում և չնորհեալ է զքանիս ռաղամս։ Ապա՝ ընդէր է որ այժմ կամիք դուք զֆէրմանն ձեր եղծել՝ և զսա փոխել․ խնդրեմք՝ չնորհել զկրկին ֆէրմանս՝ զի մնասցէ սա ի հաստատութեան։ Գրեաց և զԹուղԹս առ Ղարսայ և Կարնոյ փաշայսն, զի նոքա ձայնակից լինելով ինքեան՝ արզ գրեսցեն առ Թագաւորն, և մերազնեայ ժողովրդոցն ես հրամայեսցեն զմահսէրս գրել առ Պօլսեցիսն զի ի բաց կացցեն ի վնասակար խորհրդոց։ Ջայն Թուղթսն իւր՝ յղեաց ձեռամբ Թայնոյ Սուլթան Մահմադ վէլի բէկին․ ընդ որում և մեք առաքեցաք զԱթոռակալ Սիմէօն արքեպիսկոպոսն հանդերձ այլով ոմամբ, զի գնացեալ ի Ղարս և ի Կարին՝ բերան առ բերան խօսելով ընդ մերազնեայսն՝ ծանուսցեն զապաղս Թչուառութիւնսն՝ որք հասանելոց են սրբոյ Աթոռոյս յերկպառակութենէ անտի։ Իսկ այժմ ես նոյն ինքն Դօլվաթլու խանն՝ ձեռամբ հաւատարմին իւրոյ․ . Թուղթս գրեաց յայդր առ Լազրով եղբարսն՝ առ պատուելի Կնօրինն և առ այլս, զի զՄարապետ և զԱբրահամ արքեպիսկոպոսունսն արձակեսցեն գնալ ի դուռն ✠։ Ընդ որում և մեք առաքեցաք զ... գրելով զԹուղԹս առ յիչեալ մեծամեծսն և առ մերազնեայ երևելի անձինսն վասն այնմ խնդրոց։ Ուստի՝ զայս Թուղթ օրհնութեան ես առ ստոյգ սիրելիդ գրեալ՝ խնդրեմք զի ի սէր ընկալնով զԹղԹաբերսդ մեր՝ ձեռնտու լիցիս դոցա․ և զի՝ գիտես ահա՝ Թէ յերկպառակութենէ կաթուղիկոսաց Տանն Աղուանից՝ քանի քանի վնասք հասին այն երկրացն, և զիարդ յաղարտ վարեցան վանորայքն, ապա նոյն աղէտն պատահելոց է մեզ և սրբոյ Աթոռոյս՝ եթէ դուք ոչ օգնիցէք մեզ, և երկպառակութիւն ինչ ծնանիցի։ Վասնորոյ սրտական հաւատարմութեամբ խորհելով և խօսելով ընդ ԹղԹաբերացդ մերոց՝ ջանասջիք յօդնութիւն հասանիլ լուսածին մօրս ձերոյ՝ որ ահա մերձ է յաւեր գիմել․ և որպէս մեք խնդրեալ եմք, դուք ես խօսք անցուսջիք առ վերոյիչեալ մեծա-

մեծոն՝ որք արձակեսցեն զԿարապետ և զԱբրահամ եպիսկոպոսսն մեր գնալ ի սպաս ✠. զի իցէ թէ ողորմութիւն առնելով՝ շնորհեսցէ մեզ զհրովարտակ հաստատութեան, որով և սուրբ Աթոռս մեր մնասցէ ի կալի իւրում. Եւ յաղագս սիրելւոյդ ես գրեսցես որ հարկն է, և յորդորեսցես հեռի մնալ ի վնասակար խորհրդոց, և պատճառ չլինել աւերման Աթոռոյն առ որ շնորհակալ լինելոց եմք զսիրելւոյդ օրհնութեամբ։ Որև ի բարեկամութիւնդ հաստատ մնալով առ մեզ, և զգիրդ չպակասեցուցանելով ի մէնջ, ողջ լեր ի Տէր։

Գրեցաւ յամի տեառն 1802. և մարտի ի սուրբ Էջմիածին։

ՃԿԸ. Թուղթ ի Թիֆլիզ առ Իվանէ սարտարն ընդ գնացողաց:

Արդարև զայր հաւատարիմ գործ է զգտանել ըստ իմաստնոյն, առ զիւտ որոյ՝ ոչ միայն զճրագ, այլ և զմեծամեծ աշտանակս և զամպարս բոցավառել արժան է որոնողացն զնա։ Արդ՝ այսմիկ բարեբաստիկ վիճակի հանդիպեալ մեր ունելով զքեզապիսի զայր պատուական և զհաւատարիմ մեզ բարեկամ, խայտամք հոգւով և զգոհունակութիւնս առ պարգևողն Աստուած նուիրեմք, պահել երկար և խաղաղ կենօք հանդերձ բոլոր ազնուական քոյայնովքն զպատուականութիւն ձեր ի բարեյաջողութեան վասն մեր յատկապէս և վասն սրբոյ Աթոռոյս մեծի։ Արդ՝ զանցումն տեղւոյս ի հարկէ ցարդ լուեալ էք ի գրոյ և ի լրոյ, ուստի՝ ոչ կամիմ երկարել։ Միայն զհարկաւորսն ի գիտելեաց ծանուցից ձերդ պատուականութեան ի տեղեկութիւն ձեզ։ Զի մինչ գիտացաք թէ արք նախանձոտք այլ և այլ բանիւք պղտորեալ էին զսիրտ մեծի կայսերն ռուսաց և զայլթակղեցուցեալ զբազումս ի վերայ կաթուղիկոսութեան մերոյ, որպէս թէ բռնութեամբ և կաշառօք իցեմք նստեալ, և զարծաթեղէն անօթս եկեղեցւոյն խորտակեալ և պարսից տուեալ և թարց գիտութեան և հաճութեան Ազգին, և Աթոռոյ նոցա, յափշտակեալ զայս պատիւ և ոչ ընտրութեամբ ըստ նախնեաց կանոնի և այլն, վասնորոյ յատկապէս առ նոյն ինքնակալն ռուսաց յղեցաք զերկու եպիսկոպոսս զԿարապետ և զԱբրահամ հանդերձ երկուց թագաւորաց Օսմանցւոց և Պարսից, մեզ շնորհեալ ֆերմանաւն և ռազամաւն, և Ազգիս մերոյ բազմակնիք համահաճական մահսերօքն և այլ բազում թղթովք, որպէս զի գնացեալ ի դուռն կայսերն ծանուսցեն զճշմարիտն, և անդրէն զգայթակղեալսն կանգնեսցեն և չթողուցուն զբանս թշնամեաց մերոց և ննդգաւորաց յառաջանալ։ Բայց զինչ օգուտ որ մինչև ցայժմ առանց քննութեան կան դոքա արգելեալ ի քաղաքիդ։ Օետ այնորիկ յորժամ Դանիէլ վարդապետն ի Կարնոյ զիւր ֆարմանի օրինակն երկիցս յառաջ և յետոյ յղեաց յԵրևան առ խանն ի ձեռն արծաթոյ կամեցաւ շրջել զմիտս նորին, ապա՝ նախ խանն երկրիս և մեք և յետոյ բոլոր միաբանք և երկրացիք մեծք և փոքունք երկիցս անգամ զմահսէր արարեալ ձեռամբ երևելի արք եպիսկոպոսաց և անուանի իշխանաց Հայոց և Տաճկաց առաքեցաք առ թագաւորն Օսմանցւոց ի Պոլիս և առ մեծամեծսն նորին, եւ առ ընդհանուր Ազգն մեր և ծանուցաք ամենեցուն զստութիւնս ննդգաւորաց, յայտնելով զճշմարտութիւն. ըստ այսմ գրեաց զերապատիւ խանն և տեղւոյդ ենարալին, և պարոն Կնօրինին, ընդ որ և մեք գրեցաք զկոնդակ առ հասարակութիւն տեղւոյդ և զյորդորական թուղթս առ սրտակից ոմանս, բարեկամս մեր։ Զայս թուղթ ես քեզ ընտիր և դերազնիւ սիրելւոյդ իմոյ և հարազատ և ճշմարիտ բարեկամիդ և բազմայով մեծահամբաւ առնդ պատուականի գրեցաք, գիտելով զքեզ մեզ վշտացելոցս ցաւակից և վշտակից, և ընդ մեզ սրտակից, որպէս զքոյդ աստուածսիրութեան ջերմեռանդութիւն և զհաստատուն բարեկամութիւն յայտնեալ ես գործով և յայտնես միշտ, զորս լուաք յականողացն այտի, յիրաւի զուարճացան թոռոմեալ սիրտք մեր, և զօրացան և մանաւանդ թէ՝ կենդանացան ցամաքեալ ոսկերքս յիրաւի ի տրտմութեան և ի փորձութեան ժամու փորձի քաջ և ընտիր բարեկամն, և աներկբայ յուսով հաւատամ թէ նոյն սիրով և աննուազելի բարեկամութեամբ կաս ի նոյնն մինչ ցարդ և յարատևելոց ես ես՝ չունիմ զարժանաւոր փոխադարձ սիրոյդ, եթէ ոչ զմաղթանս բազկատարած բոլոր ուխ-.

տիւք Աստուածաէջ գահիս առ աննուաղ բարութիւնն երկնաւոր վերառաքեմ, առ ի վարձատրել զօրհնեալ շառաւիղդ ի քաջաց հզօրաց եղեալ պէսպէս և բազմապատիկ պարգևօք ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, և ամենազօր զօրութեամբ իւրով զօրացուցանել զբաղձալիդ իմ ընդդէմ հակառակամարտիցն ճշմարտութեան, և հանապազ ի խնամս և լողորմութիւնս իւր պահել ի պարծանս Քրիստոսական սուրբ հաւատոյս մերոյ, և առաւել ես ի մխիթարութիւն վշտապատ և ցաւակիր սրտի մերում։ Ապաքէն այս է իմ խնդիր այժմ ի ձերդ պատուականութենէն։ Նախ ամենայն սրտիւ և զօրութեամբ ջանասցես զեպիսկոպոսունսն մեր զիարդ կերպիւ և իցէ արձակել այտի, և օր մի յառաջ ուղևորել ի դուռն ինքնակալին ի Պետերբուրգ զի դնացեալ ծանուսցեն արդարադատ մեծի կայսերն զամենայն ինչ ճշմարտութեամբ, և զբանս մեր արդարացուցեալ խնդրեսցեն բազում քննութեամբ վերահասու լինել ստոյն և իբաւին, և մեզ զբաւականութիւն տալ, որ ի բերան անկեալ ի զուր բամբասիմք և վատահամբաւիմք։ Եւ ապա ամենայն բարեկամացդ և սիրելեացդ բանիւ և գրով յորդորել և ի հեռաւոր տեղիս զճշմարտութիւն քարոզել և վկայ ուղղութեան լինել, և լիրաւարութեամբդ ջանալ զբերանս հակառակողաց լռեցուցանել և զդրանին զիսկութիւն հռչակել, և զիրաւացի բանս մեր յառաջ տանել, որոց աղաղաւ առաքեցան ի դիմաց խանին և մեր երեելի իշխանքն տեղւոյս յարգելի Հասանպէկ աղայն և սիրելի որդին մեր դեբազնիւ Մելիք Սահակ օրհնեալ աղայն, առ պարոն Կնօրինն և առ ձեզ, որպէս զի բերանօք ես պատմեալ ձեզ զամենայն ցաւս և զտառապանս սրբոյ Աթոռոյս մերոյ և մեր, որք ծագին և յառաջ գան ի փոփոխութենէ և յերկպառակութենէն, խնդրեսցեն զօգնութիւն և զհզօր ձեռնտուութիւն վասն սրբոյ Աթոռոյս, որ եթէ այլ ես այսպէս մնասցէ, քայքայի իսպառ և աւերի։ Զայլն ամենայն թողում գիտել ձեզ ի սիրելեացն մերոց ի կենդանի դըրոցդ. զորս յանձնեմ ի յատկեղ սէր սիրելւոյդ, մարդասիրութեամբ ընկալնուլ, և ըստ ամենայնի օգնական լինել. և ամենեցուն որք երեելիք են և սիրելիք ծանօթացուցանել, և ուրախութեամբ զդոսա վերադարձուցանել, և աւետալի դրովդ զմաշեալ սիրտ իմ սփոփել։ Իսկ եթէ յայտ չլինիցի պարոն Կնօրինն, դնալոց են մինչև ի Մոզդոկ առ նա ուր և գտանիցի։ Ուրեմն ջանասցես և դու օր մի յառաջ զդոսա ճանապարհել այտի և մեզ ծանուցանել։ Ողջ լեր ի Տէր և զօրացեալ կենսատու սուրբ խաչիւ նորին ի պայծառութիւն սրբոյ Աթոռոյս և շնորհք Աստուածաբնակ սուրբ տաճարիս եղիցի ընդ քեզ և ընդ քոյոդ Ամէն։

Գրեցաւ ի 1802 և ի մարտի ... ի սուրբ Էջմիածին։

ՃԿԹ. *Թուղթ բանադրանաց առ Թադէոս առաքելոյ վանից չառաջնորդ Գէորգ չեպիսկոպոսն եւ իւր լկտի աբեղայ Կարապետ չիքն, սակս համարձակելոյ նոցա մուքառել ընդ սրբոյ Աթոռոյս եւ ընդ օծեալ Հայրապետ սորին բառնալով զանունն ի վիճակէ իւրմէ:*

Յորմէ ժամանեալ հասցէ թուղթ անիծից և բանադրանաց, իրաւացի բարկութեան և հոգևոր կապանաց, հանդերձ արժանահաս վրէժխնդրութեամբն Աստուծոյ, և թշնամակործան զօրութեամբ անպարտելի սրբոյ Գահիս Քրիստոսեան ի վերայ անազորոյն վատահամբաւ լպիրշ և անառակ որդւոցդ կորստեան և չար զաւակացդ Քանանու՝ ամբարտաւան և անզգամ երկուց լրբիցդ և ծնողանարգ անպիտանիցդ Աստուծոյ և սրբոց նորա, և թշնամեացդ ճշմարտութեան, չԳէորգ և չԿարապետ կաբղազեղծ սևակրացդ և ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ ախտացելոցդ, որով և ծանիք ով արժանաւորք դառնութեան, զի ամենայն անձըն որ ընդ իշխանութեամբ է ասէ առաքեալն ի հնազանդութեան կացցէ, և թէ կամիս չերկնչիլ յիշխանութենէ, զբարիս գործեա. արդ՝ ուր են ձեր հնազանդութեան պտուղքն, քանզի ահա մի ամն լրանալ, յորում թագաւորք և իշխանքն մերազին ժողովուրդք և այլակրօնք ցուցին զհաճութիւնս իւրեանց ընդ հայրապետութիւն մեր գրելով դշնորհաւորութիւնս, ապա դուք դոռոզացեալքդ և դազանացեալքդ, յոր կաղաղս և ի մորիս ողջա-

ցեալ՝ առիք զզաղար երևի թէ մինչ կուտեալ զարդիւնս խղճալեաց խճողելով զգարշ որովայնս անկեալ դնի ի յաննշան զիւղ ինչ կենակցելով ընդ աշխարհականս և պահելով փակեալ զդրունս ողորմելի վանիցն, իսկ միւսըդ իբրև զոսվեալ շուն չրջի զքաղաքաւ ծակէ ի ծակ և տանէ ի տուն կեղեքելով զժողովուրդսն Աստուծոյ պօշաքաղութեամբ և զայթակղեցուցանելով զպարզամիտ հօտսն Քրիստոսի և ցրտացուցանելով զջերմութիւն սիրոյ նոցա զորս ունին դէպ առ. չնորհատու ծնողս իւրեանց, զոր դուք անօրինակ անզգամքդ չարաչար ուրացեալ կայք։ Եւ մանաւանդ զիարդ չիմացայք զայս ես թէ բարձրազօր Շահն պարսից քանիցս խիլայիւք և հրովարտակօք իւրովք հաճեալ և հաւանեալ ընդ հայրապետութիւն մեր, համաձայն այլ ինքնակալաց հաստատեալ ամրացուցեալ է զիշխանութիւնս մեր, և սաստիկս հրամայեալ ամենայն խանիցն Ատրպատականի օգնական մեզ լինիլ, ի սևագլխաց մերոց զմաքս և զայլ ինչ հարկս չպահանջել և թողուլ չրջել համարձակ անահ և աներկիւղ ի տէրութեան իւրում. զայսոսիկ զամենայն որք աշխարհ ամենայն հնչեալ հռչակեցան, եթէ դուք միայն չգիտացիք և չլուայք, յանասնոց և յանբանից համարի էք, և ոչ ի մտաւորաց կարգի. իսկ թէ գիտացեալ կամաւ կուրացայք կուրացեալքդ հոգւոյ և մարմնոյ աչօք, հակառակէք ուրեմն Աստուածային կամաց և հոգւոյն սրբոյ ընտրութեան, որ զիս յառաջ կոչեալ ի բազմութենէ ծառայից իւրոց բարձրացոյց յայս չնորհ, ըստ որում գիտէ զմեղաւորս և զմաքսաւորս յառաջ կոչել, և ոչ ոք կարէ ասել թէ ընդէր այդպէս առնես, նոյնպէս ներհակ էք և առաքելական հրամանին, որ զձեզ ապիսի անզգամսն զգուշացուցանէ հնազանդութեան ճանապարհաւ, նմանապէս ընդդէմ էք և հրամանաց ինքնակալաց և կամաց ընդհանուր ազգին և միաբանութեանս սրբոյ Գահիս, յորոց զընկալեալն և զընտրեալն դուք միայն լկտի չարժմամբ ձերով կամիք անպատուել։ Եւ ի վերայ այսքան չարութեանց ձերոց յանդգնեալ ևս էք զնուիրակն սրբոյ Գահիս զպարգելին յամենից, և զընտիրն քան զձեզ անարգել և հակառակ ընդ նմա չարժիլ, և ի յընդունելն և ի մեծարելն սիրով օրհնեալ Լուսաւորչածին ժողովրդոցն մերոց, զնուիրակն մեր և ի խնդրելն զսրբալոյս միւռոնն և ի տալն յօժարութեամբ զհոգւոյ պտուղս իւրեանց սրբոյ գահիս, դուք դայլքդ արաբացի զրով և բանիւ ըստ հոտեալ և նեխեալ բարուց և ժանտութեանց ձերոց ապականեալ զպարզ միտս օրհնեցելոցն արգելեալ էք զայնս և զնուրբ զանգուածսն զբարեբարոյ ժողովուրդս Քրիստոսի և սրբոյ Աթոռոյս լրբենի գործովք ձերովք խմորեալ և վրդովեալ։ Եւ մանաւանդ այնչափ անպարտաւանեալ ըստ հօրն ձերում սատանայի, մինչ զի զքարինս անզգամութեան ձերոյ առ մեզ և առ սուրբ Աթոռս ձգել համարձակեալ էք, ոչ մտածելով թէ՝ որ ի բարձունս զքար ձգէ՝ ի գլուխ իւր անկցի։ Եւ զայսոսիկ թէ որով իշխանութեամբ և որոյ հրամանաւ գործէք, չէ մեզ յայտ, և զո՞ առնէք զձեզ, և կամ զինչ կարծէք զձէնջ, և զիարդ համարձակիք հրամայել ժողովրդեան որք չեն ձեր, զայն ևս չկարացաք գիտել, զի եթէ իբրև զլոկ սևագլուխ չարժեալ ի զիւաց զայդոսիկ գործէք, և հրամայէք ժողովրդեան մերոյ չճանաչել զսեփական տէրն իւրեանց և զգլուխն, չարաչար պատժելիք էք յԱստուծոյ և յամենայն սրբոց և յօրինաց իրաւամբ և արդարութեամբ և իբրև զկոզս և զաւազակս դատապարտելիք. որք մտեալ ի տան յափշտակեն և զողանան զինչս այլոց։ Իսկ թէ իբրև զառաջնորդ առնէք զչարիսդ զայդ՝ կրկին պատժելիք էք չարաչար անիծեալքդ դուք. նախ՝ զի ոչ կարէ ծառայն թագաւորել ի վերայ տեառն իւրոյ. և երկրորդ մեք և սուրբ Աթոռս Լուսաւորչին ոչ ճանաչեմք բնաւին զպիղծսդ և զվերջացեալսդ յորդիութենէ սորին, և ի հնազանդութենէ բարձու իշխանութեան հայրապետականիս, քանզի՝ իւրաքանչիւր վանից և քաղաքաց առաջնորդք պարտին ի սրբոյ Աթոռոյս և ի գահակալէ սորա կարգիլ ըստ բնական և վաղեմի կանօնաց երջանիկ սրբազան հայրապետաց։ Այլ դուք խաբերայքդ ինքնագլուխ [1]) ի գործս հեշտութեան ձերոյ և ախտի զոլով, չեղեք ձեռնհաս զխոնարհութիւն ինչ և զհնազանդութիւն ըստ խրատու առաքելոյն որով կերպիւ և իցէ ցուցանելոյ գըլխոյն ձերոյ հանրականի, և զհաճութիւն ընդ ընտրութիւն մեր առ որ հաճեալ են ամենեքին բաց ի յերկուց անիծելոցդ և ի ձեռանման լրկտեաց։

[1]) Բնագրում պակաս տողեր կան։

ճՀ. Թուղթ առ պարոն Լազրովն ի Թիֆլիզ:

Որում գիտութիւն լիցի, զի մինչ ցարդ ի՞սիրոյ և ի յորպիսածանոյց Թղթոյ չեմք բնաւին վերջացեալք ունելով զպատուականութիւն ձեր ի մտի. բայց ի գերադնիւ սիրելւոյդ մերմէ յերկար ժամանակ չունիմք զգիր ուրախական։ Այլ արդ՝ ըստ որում յաղագս մեծագոյն հարկաւորութեանց առաքեցան առ. նորին գերազանցութիւն պարոն Կնօրինն ի գերապատիւ խանէն մերմէ և ի մէնջ ի ծանուցանել զվիճակս սրբոյ Աթոռոյս, և մեր, և զցաւ ազգին մերոյ՝ նորին մեծութեան, և ի խնդրել արձակել զերկու եպիսկոպոսունսն մեր զՎարապետ և զԱբրահամ՝ ի դուռն մեծի կայսեր, զի զնացեալ պատմեսցեն նորին կայսերական մեծութեան զճշմարիտն, և զօգնութիւն հայցեսցեն ի խնամառատ բարձրագոյն Աթոռոյ նորին մեզ և սրբոյ Աթոռոյս մերոյ, որ հանդերձեալ է միաբանովին ի կորուստ մատնիլ։ Վասնորոյ զայս Թուղթ համառօտ՝ և ձեզ պատուական սիրելւոյդ մերում գրեցաք, որով և խնդրեմք նախ՝ զճշմարիտ սէրդ հաստատուն առնել։ Եւ ապա՝ զեկեալ անձինսն ի դիմաց խանին, և մեր՝ սիրով և մարդասիրութեամբ ընկալնուլ, և ըստ ամենայնի օգնական լինել և ծանօթացուցանել զգոսա նորին գերազանցութեան, և քաղցրացուցանել զսիրտ նորին ի վերայ սրբոյ Աթոռոյս, որ եթէ այլ ևս այնպէս մնասցէ, քայքայի և աւերի իսպառ, և մանաւանդ կարծեցեալ բարութիւնքն, զորս կամի տէրութիւնդ այդ պարգևել Ազգին՝ բոլորովիմբ լինին պատճառք մեծամեծ վնասուց և զանազան խայտառակութեանց, զորս Թողում ձեզէն իմաստասիրել։ Եւ վերջապէս ջանասջիք օր մի յառաջ փութապէս զվարդապետսն մեր արձակել, և այտի ուղևորել ի դուռն մեծի կայսեր, որով արդարև՝ պարտաւորելոց ես զմեզ, զմիաբանսն և զազգն մեր. ողջ լեր ի Տէր և զօրացեալ Քրիստոսիւ և սուրբ խաչիւ նորին ի պարծանս սուրբ հաւատոյս մերոյ և ի մխիթարութիւն վշտակիր սրտի մերում. Ամէն։

Գրեցաւ ի 1802 և ի մարտի ... ի սուրբ Էջմիածին։

ճՀԱ. Թուղթ ի Կարին առ Շէհիր վէքիլի մահտեսի Ցօհաննէսն:

Թէպէտ ի վաղուց է որ չունիմք զԹուղթ որպիսածանոյց ի սիրելւոյդ, սակայն մեք միշտ զհարկաւոր զիտելիսն գրեալ եմք ձեզ։ Որպէս յառաջ քան զայս ընդ Ստեփաննոս եպիսկոպոսին ծանուցաք սիրոյդ զմեր կոնդակ զբելն առ ընդհանուր Ազգն, և միաբանից ըղչորս մահսէրս ի Նորոյ առնելն, յորոց զերեսն ընդ Սահակեան եպիսկոպոսին յղեցաք հանդերձ խանի երեելի արամբն, և զչորրորդն առաքեցաք ձեռամբ միոյ եպիսկոպոսի ի Հաշտարխան և ի Թիֆլիզ, զորս ի գալն մեր Ստեփաննոս արքեպիսկոպոսին գիտելոց ես լիովին։ Բայց զայսքանս հարկաւորաբար ծանիր, ի Ղարսայ զԹուղթ ընկալաք և գիտացաք զանհամ և զանվայել արարս սնհամելոցն, որ ոչ միայն յայզր, այլ և յընդհանուր աշխարհ լցին զանհամութիւնս, որովք ինքեանք քան թէ այլք վտանգաւորեցան, զորոց լռելն բարւոք զատիմ, քան եթէ ճառելն։ Եւ ապիրատն ըստ ապիրատութեան ընկալնլոց է զտրիտուրն աստ և անդ։ Նմանապէս ազգեցան մեզ գործք նոցին և արարք և իրակագործութիւնք տեղւոյդ, որովք ոչ սակաւ վշտացեալ են մերային սիրելիք։ Եւ ըստ որում չունէաք զԹուղթ ի ձէնջ վասն այն և չկարացաք պարզապէս գիտել թէ ուստի ծագեցան այդօքիկ չփոթք, և զինչ պատճառն, և կամ այժմ ուր դադարեցան։ Ուրեմն պարտիք բոլոր պարաշալիւք մեզ փութով տալ ի գիտել, գոհութիւն Քրիստոսի ի ներկայս կայ ի խաղաղութեան երկիրս, սուրբ Աթոռս Մայրս ձեր ի շինութեան և ի բարեկարգութեան բոլոր միաբանիւք։ Եւ գերապատիւ Շահն և խանն երկրիս ունին զմեծ խնամս ի վերայ մեր և սրբոյ Տանս այսմիկ, և չունիմք արդարև յուստեքէ ըղցաւս, միայն տրտմիմք և ցաւիմք ի վերայ ատելութեանցն և երկպառակութեանցն ազգիս մերոյ, որովք վնասեցաւ սուրբ Տունս, և ունի կրկին վնասիլ ի պատճառս ոմանց խռովարար անձանց յորոց ունի արդարադատն իրաւամբք խնդրել զվրէժս զայթակղելոցն և վնասեցեալ Տանս, զորս ոչ երկարեմ։ Լսի ևս թէ՝ զօրքն Շահին խաղալոց են ի վերայ երկրիս յորոց վնասուց Տէր փրկեսցէ զսուրբ Տունս և զերկիրս, այսպէս գիտելով քոյ և

զսիրոյ Թուղթդ ի մէնջ անպական առնելով հանդերձ ամենայն ուրախութեամբ քաղաքիդ և ձեր ողջ լեր ի Տէր և զօրացեալ ի նոյնն և Շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ և ընդ քոյսն Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ Թուոջս և ի մարտի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՃՀԲ. Թուղթ առ պարոն Կնօրինն ընդ պարոն Գաւլ Փէօտորիչին:

Ամենայն ումեք յայտնի է և ամենայն աշխարհ վկայէ, որ Աստուածահաստատ տէրութիւնդ այդ բաց ի բազմապատիկ բարեկարգութեանց, և յըղձալի խնամարկութեանց ունի վերիս գլխաւորագոյն բարեմասնութիւնս արժանի ամենայն գովեստից։ Նախ՝ ի բանս և ի պարգևս միայն հաստատուն և անզղջանալի, երկրորդ՝ երկար քննութեամբ զդատաստան դատել, և այնու զուղիղն և ճշմարիտն ի ստոյն որոշել և տալ բաւականութիւն զորկելոյն։ Եւ երրորդ՝ զամենայն զհպատակեալսն ինքեան թողու պաշտել զՏէր, ըստ իւրաքանչիւր լեզուի և ծիսի։ Արդ այսոքիկ որք կան ի տէրութեանդ հաստատուն և անջրելի, և առ ամենեսին տարածեալ, ընզէր ի մէնջ և ի սրբոյ Աթոռոյս և յԱզգէս մերմէ ծածկեալ, վասն զի զառաջինն Թարգ մեր խնդրանաց ըստ կտակի Տեառն Յովսէփայ աստուածազօր տէրութիւնդ այդ ինքնին հրամայեաց դեսպանին Պօլսոյ, վասն հայրապետութեան մերոյ, և բարեհաճեցաւ ընդ այն, որպէս լաւապէս յայտնիք են ձերումդ գերազանցութեան, և Թէ երկբայլին ումանք վասն կտակին, կորէք հեշտեաւ քննել զայն և գիտել. և այժմ լսի, սր դոյն տէրութիւնդ զղջացեալ է ընդ գործս իւր որ պարտ է անզղջանալի միայն, և անփոփոխելի կալ։ Թեև այնորիկ մինչ հնչեցան զանազան ձայնք ի մաքուր լսելիս + և արք նենգաւորք ստութեամբ և մանաւանդ Թէ Թշնամութեամբ վրդովեալ զպարզ միտ Նորին կայսերական մեծութեան վատահամբաւեցին զանուն մեր, և մեք առաքեցաք ի յոտս Նորին կայսերական մեծութեան զերկու եպիսկոպոսունս բազում Թղթովք և գիրաւցի բողոքս մեր կամեցաք արդարակշիռ մեծի տէրութեանդ այդմիկ յայտնել առ ի քննութեամբ մեզ ի դուր բամբասելոցս զբաւականութիւն շնորհել, որոշելով զճշմարիտն ի ստոյն, Նորին ընդդէմն մեզ դիպեցաւ, զի որ պարտիւր քննութեամբ լինել, առանց քննութեան կատարի, զի յայսքան ժամանակ եպիսկոպոսունքն մեր կան արգելեալ և չկարեն և անտեղի իմն է վճիռն որ լինի Թարգ ներկայութեան ամբաստանելոյն, զի չէ օրէն զաղաղակ միոյն այլ և միւսոյն լսել, և որ արդարութիւն է, որ բանք Թշնամեացն ընդունելի լինին, և մերս խոտան զանեին առաջի մեծահամբաւ տէրութեանդ այդմիկ, որով սկսաւն զառաջինն մեր բարեբախտութիւն և զորմէ կայ կախեալ։ Եւ միւս ևս օրէնք է ազգիս հայոց զօծեալ Հայրապետն անփոփոխելի ունել։ Եւ ամենայն ազգաց Թագաւորք և իշխանք գիտեն զայս. քանզի եթէ ոչ լինիցի այնպէս, բազում անկարգութիւնք տիրեն յազգս մեր և մեծամեծ վնասք և աւերութիւնք ծագին Աստուածային տաճարիս, քանզի խռովարարք և անարժանք յառաջ խաղացեալ յանժամ կամ ինքեանք ի ձեռն կաշառաց յափշտակեն զայն պատիւ և կամ իշխօղք երկրիս սակս ծանր հարկապահանջութեանց ձգեն զօրինաւորն և զկամակատարս ինքեանց բռնութեամբ յայն աթոռ բարձրացուցանեն. ուստի միանգամ վճռեցեալ է ի սրբազանից հարց զընտրեալն և զօծեալն մինչև ցմահն անփոփոխելի պահել, և զայլ ոք զի արդ և իցէ ի տեղի նորա չընդունել։ Այլ արդ՝ այս է մեր և բոլոր միաբանից և երկրական ժողովրդոցս խնդիր ի ձերդ գերազանցութենէն, հրամայել քաղցրութեամբ և արձակել խաղաղութեամբ զԿարապետ և զԱբրահամ արքեպիսկոպոսունսն մեր ի Թիֆլիզու և ուղևորել առ բարձրագոյն աթոռ Նորին կայսերական մեծութեան ի յայտնել զայսպիսի օրէնս ազգիս և զսահմանադրութիւնս երջանիկ հայրապետացն մերոց, և ծանուցանել զտառապանս և զաղէտս մեր, սրբոյ Աթոռոյս և խղճալի ազգիս մերոյ, և ի գտանել զհզօր սպեղանիս խոցոտեալ սրտից մերոց ի ճարտար բժշկէն և ի չինութեան պահել զխղճալի տունս այս, որ մերձ ընդ մերձ փոյթ է ի կործանիլ։ Եւ մի գուցէ բարերարութիւնքն և պայծառութիւնքն որ ձեզ Թուին բարիք

զորս կամիք շնորհել ազգիս մերոյ և աթոռոյս մեծի, թարց վերահասութեան իսկութեանն վնասուց լինիցին պատճառք, և դարձցին յաւերութիւն։ Ուրեմն լսելի լիցին խնդրուածք մեր առաջի ձեր և բարեպաշտական ջերմեռանդութեամբ ի յօդնել և ի խնամորկել զմեզ և զսուրբ Աթոռս զայս փութասջիք, քանզի յետ աստուծոյ միմիայն ի քաղցր հովանաւորութիւն օգոստափառ կայսեր կամ ամենայն յուսով ապաւինեալ։ Որոյ աղագաւ ի դելրապատի. խանէն մերմէ և ի մէնջ առաքեցան առ ձերդ գերազանցութիւն յորոց լիապէս ունիք զամենայն ինչ գիտել զորս յանձն առնեմ խնամոց ձերոց ընկալնուլ մարդասիրութեամբ և օրինաւոր խնդրանաց դոցին ունկն մատուցանել և փութով ուրախական գրովդ առ մեզ վերադարձուցանել։ Ողջ լերուք տերամբ Քրիստոսիւ և զօրացեալ կենսատու խաչիւն սրբով ի հաստատութիւն եկեղեցեաց սրբոց և քրիստոնէական սուրբ հաւատոյս, և մանաւանդ ի շինութիւն և ի պայծառութիւն քրիստոսակերտ սուրբ տեղւոյս որ կարօտի ձերդ հզօր ձեռնտուութեան, ամէն։

Գրեցաւ ի մարտի... յամի փրկութեան մերոյ ի 1802 ի բարձրագահ աթոռ ամենայն հայոց ի սուրբ Էջմիածին որ ի դաշտ Արարատեան։

ՃՀԳ. *Թուղթ ի Թիֆլիզ առ Դաւիթ արքայորդին, ընդ խանի եւ մեր մարդկանցն որք գնացին անդ վասն արձակել տալոյ զվարդապետսն:*

Ցորմէ Փրկչաւանդ ողջունիւ և սիրով սրտիւ սրտական կարօտիւ և հոգևոր օրհնութեամբ ծանուցումն լիցի ամենապատուական սիրելոյդ իմոյ և օգտախոհ բարեկամիդ սրբոյ Աթոռոյս, Քրիստոսասէր և նովիմբ զօրացեալ չքեղաշուք և լուսաւորազունեղ Դաւիթ արքայորդւոյդ։

Զի՛ յանցեալում ամին մինչ լուաք թէ՝ արք խռովարարք ինչ ինչ զրաբանութեամբք պեղտորեալք են առ մեզ զամենաքաղցր սիրտ Աստուածապաշտկեալ կայսերն։ Վասնորոյ նախահոգութիւն առնելով՝ զՎարդապետ և զԱբրահամ եպիսկոպոսն մեր՝ արդալիւ առաքեցաք յայդր՝ առ ի գնալ ի դուռն Աստուածապսակեալ ինքնակալ կայսերն և ծանուցանել զճշմարտութիւն։ Ընդ որս և առ պատուելութիւն ձեր գրեցաք զխնդիր. զի չուտով ուղևորիցէք զնոսա յայդրուստ. այլ առ տարաբաղդութեան մերոյ ոչ ինչ փոյթ առնելով ձեր՝ արգելեալ մնացին նոքա յայդր, և նարդենիս այս չփոթութիւնս ծագեցաւ։ Քանզի ի ներկայս մինչ եկեալ էաք մեք ի յԵրեւան քաղաքս ի շնորհաւորութիւն վասն Նաւռուզին ի Կարնոյ փաշայէն մէկ սուրհանդակ և ի Դանիէլ վարդապետէն ումն սեադլուխ, եկին աստ հանդերձ յանուն նորա հանեալ կաթուղիկոսութեան ֆէրմանի օրինակով. զոր ցուցեալ խանին՝ յայտնեցին զապօրինաւոր խորհուրդ իւրեանց առ որ և խոստացան զբաղում կաշառս, որպէս յայլոց ունիք իմանալ։ Իսկ Դօլվաթլու խանն ընդ միաբանից և երկրացւոց խորհելով իբրև իմացաւ թէ բոլորովին վնասակար է առաջադրութիւն նոցա առ Ազգն և առ Աթոռն, ջուղապ ետ նոցա, թէ սա որ կացուցեալն է յայս պատիւ, ոչ է ինքնագլուխ, այլ հրամանօք երկուց տէրութեանց և համահաճութեամբ իւր բոլոր ազգին՝ և կամեցողութեամբ մերով է եղեալ, վասնորոյ ոչ կարեմ փոխել զսա և չար օրինակ լինել այլոց։ Այսպիսի բանիւք յետս դարձոյց ունայն զնոսա. ապա գրեաց վերստին արզ առ թագաւորն Օսմանցւոց ի ծանուցումն գիտաւորութեան իւրոյ, և ի խնդիր վասն մեր շնորհելոյ զկրկին ֆէրման հաստատութեան։ Գրեաց և զթուղթս առ ի փաշայսն Ղարսայ և Կարնոյ, զի նոքա ես արզ գրեսցեն առ տէրութիւն և մերազնէից ևս հրամայեսցեն ընդմահսէրս գրել առ պօլսեցիս։

Զայն թուղթսն իւր՝ ձեռամբ Թալնոյ սուլթան Մահմատ Վէլիբէկին առաքեաց, ընդ որում և մեք առաքեցաք զԱթոռակալ Սիմէօն արքեպիսկոպոսն հանդերձ կոնդակօք, զի դընացեալ նոցա ի Ղարս և ի Կարին, մինն գրուածոց խանին հոդ տարցէ, տալ զկատարումն, և միւսն ծանուսցէ Ազգին զանտանելի վնասսն, որք յերկպառակութենէ հասանելոց են Աթոռոյն։ Եւ սակայն յետոյ մտածելով թէ՝ կապանք բանին մեր ի կողմանց Հիւսիսոյ է եղեալ և արձակումն ևս անդուստ պարտի

լինել, վասնորոյ Դօլվաթլու խանն զթուղթս գրեաց առ Կնորին կողմնակալն, առ Լազրով ենարալն և առ այլս, զորս և ձեռամբ հաւատարմին իւրոյ պատուելի Հասան բէկին յղեաց ահա, զի արձակեսցեն զՍարապետ և զԱբրահամ արքեպիսկոպոսն, գնալ ի սպաս Աստուածապսակեալ ինքնակալ կայսերն և ծանուցանել ղաղէտսն և զցաւսն մեր հայցեսցեն ղօգնութիւն մեզ և սրբոյ Աթոռոյն։ Մեք ևս զսիրելին մեր, Մէլիք Սահակ աղայն առաքեցաք գրելով զթուղթս առ լիշեալ մեծամեծսն և առ այլս վասն այնր խնդրոյ։ Իսկ ղայս սիրանիչ թուղթ ևս առ պատուականութիւն ձեր գրեալ, ունիմք ծանուցանել ղայս ինչ, զի ահա կանոնիւք փակեցեալ է ի մեր նախնի սրբոց հարց՝ որ օծեալ կաթուղիկոսն ոչ պարտի փոխիլ, մեք թէ անարժան էաք՝ պէտք էր միաբանից և երկրացւոց յառաջ ըղձուշանալ և չկացուցանել զմեզ յայս պատիւ, բայց թէ սոքա արժան տեսին, ընկալան սիրով զմեզ, իրաւունք է, որ արդարակորով տէրութիւնն ստայօղ բանից նախանձոտաց լսելով՝ կամիցի խախտել զմեզ. արդ՝ ահա հաստատութիւն կաթուղիկոսութեան Ազգի մեր՝ կախեալ կայ զհրամանաց երից տէրութեանց Ռուսաց, Օսմանցւոց և Պարսից. այժմ եթէ քրիստոնեայ տէրութիւն այդպէս առնիցէ, յետոյ նոքա ևս ըստ կամաց իւրեանց կաթուղիկոս կացուցանելոց են, և յերկպառակութեանց անտի ոչ այլ ինչ յառաջանայ՝ եթէ ոչ կործանումն Աթոռոյն և խայտառակութիւն Ազգին որպէս օրինակ ունիմք մեք զԱթոռն Աղուանից որ յերկպառակութեանց կաթուղիկոսացն լաւապէս գիտէք, այլ ոչ երկարեմք թէ զիարդ աւերեալ այժմ կայ ի յետին թըշուառութեան սակս մինչև ցարդ որ սուրբ Աթոռն մեր մնաց, ի շինութեան էր այն սակս, միաբանութեամբ Ազգին և անփոփոխ մնալոյ կաթուղիկոսացն, այժմ եթէ կանոնին ցանկն պատառիցի, այլ խրամակարկատ չէ լինելոց, ով ոք և իցէ ի ձեռն կաշառաց լինելոց է ի տէրութիւն ինչ, և առնլոց զկաթուղիկոսութիւն։ Վասնորոյ խնդրի ի գերազանցութենէ ձերմէ, զթղթաբերսդ մեր ի սէր ընկալնլով օժանդակ լիջիք զոցա և որպէս հոգելոյս նախնիքն մեր պահպանեալ են զսա ի յամենից ներհակաց ևս, նմանապէս և դուք պահպանեսջիք միշտ ղօղտից և զքարւոյ սո րին խորհելով և առնելով և յատկապէս խօսք անցուսջիք առ Կնորինն և առ այլս, զի արձակեսցեն զերկոսին զեպիսկոպոսունսդ դնալ ի դուռն Աստուածապսակեալ ինքնակալ կայսերն և ծանուցանել զխնդիրս մեր. մանաւանդ ի կողմանս հիւսիսոյ առ ծանօթ բարեկամս ձեր գրեսջիք զթուղթս զի հոդ տարցեն բանից մերոց, և մերաղնէից ևս յորդորեսցեն հեռի կալ ի պատճառ զտանելոյ աւերման Աթոռոյն։ Որովք ամենաբարեշնորհութեամբք ձեր շնորհակալ լինելոց եմք զբարձրապատութենէ ձերմէ, և աղօթելոց միշտ վասն ազնիւ կենաց ձերոց։ Իսկ ղայլ որպէսն մեր թողումք ի թղթաբերացդ իմանալ։ Ողջ լեր ի Տէր եւ զօրացեալ հզօր Աջով նորա. Ամէն։

Գրեցաւ յամի Տեառն 1802 և ի մարտի … ի սուրբ Էջմիածին։

ՃՀԳ. Կոնդակ ի Ղարս ի վերայ հասարակութեան, ծանուցումն զարարմանց Դանիէլ վարդապետին, եւ խնդիր զմահսէր գրելոյ ի Պոլիս ի ջատագովութիւն զարքազան հայրապետէս։

Եւ ընդ շնորհապարգև օրհնութեան նամակիս ծանուցումն լիցի իսկապէս սիրելեացդ մերոց, և բարեջան որդւոցդ սրբոյ Աթոռոյ Էջմիածնի։ Զի յառաջ քան զայս կամեցեալ մեր զզուշացուցանել զձեզ և զամենալուսաւորչակրօն օրհնեալ ազդ մեր՝ առի միշտ զօգուտն և զբարին լուսածին մօրս ձերոյ սրբոյ Աթոռոյս խորհելով, հեռի կալ մնալ ի խորհրդոյ, որ հալի յաւերումն և ի կործանումն սորա, գրեցաք թէ մեք և թէ՝ միաբանք և երկրացիքն զկոնդակս և զմահսէրս լիապէս ծանուցեալ սնոքիւք զամենայն որպիսութիւնս անցիցն և զվիպաւորութիւնս մեր. զորս և ձեռամբ սիրելւոյն մերոյ Ստեփաննոս արքեպիսկոպոսին առաքեցաք, ի հարկէ տեսեալ իցէք զայն նամակոն մեր. և իմացեալ զամենայն գրուածսն որ ի նոսին։ Իսկ նարզենիս այսու օրհնածիր կոնդակաւ զայս ունիմք գրել սիրելեացդ. զի յայսմ միջոցի յորում մեք եկեալ էաք ի յԵրեւան քաղաքն

վասն նուաղուլին Տաճկաց, ի Կարնոյ քաղաքէն, ի Դանիէլ վարդապետէն առաքեցեալք, մէկ սուրհանդակ և մէկ սեագլուխ եկին ասա, հանդերձ յանուն նորա հանեալ կաթուղիկոսութեան ֆէրմանի սուրաթիւ. որք անկեալք ի դրունս մեծամեծաց տեղւոյս աշխատեցան յոյժ վասն զմեզ մերժել տալոյ յաթոռոյն, և զԴանիէլ վարդապետն բերեալ, և նստեցուցանելոյ ի կաթուղիկոս, որոյ աղագաւ խոստացան իշխողաց զայնքան ծանր ծանր կաշառս, որովք գրեթէ իսպառ աւերելոց է սուրբ Աթոռն։ Արդ յորմէ հետէ կոչեցեալ եղաք մեք յայս աստիճան, նոքա անողորմաբար այնպէս հուչակեցին զմէնջ, իբրև թէ մեք զամենայն զոյսն սրբոյ Աթոռոյն զեկեղեցականս և զարտաքսականս տուեալ իցեմք այլազգեաց, և այնու յափշտակեալ զայս պատիւ. բայց այժմ ահա յայտնի լինի թէ ով է կաշառատուն, և ով ոչ, ով է չինողն, և ով աւերողն։ Ցայնմ ժամանակի մինչ սուրբ Աթոռն մեր կայր յանտիրութեան ի յերկուս ամս, յիրաւի բազում վնասք հասին մեզ, թէ ի պատճառս վատութեան ժամանակին, և թէ սակս անգլուխ գոլոյն մեր։ Ի յայնց բազմաց վնասուց մինն ևս եղև այս զի ի նստել նորոգ կաթուղիկոսի, որ բան մի ընծայ տուեալ լինի իշխողաց, յայսմ նուագի աւելի եղև այն քան զսովորականն։ Ըստ որում իշխողքն մեր բազմայորդ որ փութով ոտիպէին զմեզ զոք կաթուղիկոս կացուցանել, մեք խնդրէաք՝ համբերեաց ժամանակ ինչ՝ զի Դանիէլ վարդապետն գայցէ, ի պատճառս նորա խոստացեալ և տուեալ լինէին դրամքն և ոչ թէ ի պատճառս մեր. որպէս բազմիցս գրեալ եմք և տեղեակ էք։ Այժմ որ նա զայսքան ծանր կաշառս խոստանալ սոցա ի ձեռն անխոհեմ ուրումն սեագլխի ուստի կարէ տալ և մանաւանդ՝ եթէ այս մասնաւոր իշխողիս զայսքան կամի տալ, ապա յորժամ այն մեծ իշխօղն գայցէ և իմասցի զայս, նորա ջուղայն զիարդ կարէ տալ. և յանյժամ թող զամենայն ինչսն սրբոյ Աթոռոյն եթէ զքարինսն վաճառեսցէ ոչ կարէ լցուցանել զպագուրդ նորա։ Ուստի յայտնապէս երևի ահա թէ Դանիէլ վարդապետն ոչ յայլ ինչ հայի՝ եթէ ոչ յաւերումն սրբոյ Աթոռոյն, զոր իմացեալ միաբանից և երկրականաց՝ Ջուղայ ետուն մարդկանց նորա թէ անկարելի է, որ կաթուղիկոսն մեր չեմք փոխելոց միթէ վնասքն մեր բաւական չեղև, որ կրկին ևս վրդովիցիմք և վնասիցիմք։ Իսկ Դօլվաթլու խանն մեր ևս ասաց նոցա, թէ մեք որ զսա յատկացուցաք ի կաթուղիկոս, ոչ եթէ ինքնագլուխ արարաք, այլ խնդրանօք ազգին և միաբանիցն. ձեր օսմանցւոցդ տէրութիւնն ես զֆէրման չնորհեաց որպէս սովորութիւնն է. իսկ բոլոր տղղն ևս այսինքն թէ կոստանդնուպօլսեցիք, և թէ համայն քաղաքաց ժողովուրդք հայոց՝ հաճեալ սիրով ընկալան, և կնքեցին զմահուէրն. որք և յատուկ յատուկ ևս գրեցին զմահուէրս և զթուղթս ընդունելութեան, որք կան այժմ ի ձեռս սորա։ Եւ Շահն ևս իմացեալ զքանիս ռաղամս է առաքեալ առ սա ի հաստատութիւն հայրապետութեան սորա. և միով ռաղամովն յատկապէս հրաման է գրեալ մեզ, զի բաց ի սմանէ զայլ ոք ոչ ընդունիցիմք կաթուղիկոս։ Այժմ եթէ մեք զսա թողուցումք ի բաց և զԴանիէլն ընդունիցիմք, ոչ կարեմք Շահի ջուղայն տալ, նա ևս անկարծիք զԴանիէլն չէ ընդունելոց որով և իսպառ աւիրելոց է տունն։ Եւ մանաւանդ ձեր ֆէրմանումն ևս գրեալ է, որ մինչև ցվախճանիլ կաթողիկոսիս ոչ փոխեսցի, ապա այժմ ընդէր կամիք զֆէրմանն ձեր եղծել և զսա փոխել։ Մեք ամենևին ոչ կամիմք թէ սա փոխեսցի, ըստ որում թէ և աթոռն ազգինն է, բայց ի մեր երկրումն է և երկիրս մեր՝ Շահինն է՝ և յատկապէս հրամայեալ է զի սա լիցի կաթուղիկոս. մեք ոչ կարեմք ներհակել առ այն. իսկ հայք ևս կանոն ունին՝ որ զօծեալ կաթուղիկոսսն ոչ են փոխելոց, ապա և այժմ զայս օծեալ կաթուղիկոսս որ ահա մի տարի ժամանակ լինի՝ որ նստեալ և հաստատեցեալն է հրամանօք երկուց աերութեանց կամեցողութեամբ մերով և համահաճութեամբ ազգին իւրոյ, ոչ կարեմք փոփոխել, ոչ մեք և ոչ թէ միաբանքն և երկրացիք։ Այսպէս պատասխանեաց խանն՝ թէ սուրհանդակին և թէ սեագլխին. զորս և դարձոյց յետս։ Եւ այժմ նոյն ինքն Դօլվաթլու խանն՝ վասն ծանուցանելոյ զայն դիտաւորութիւն իւր՝ վերստին գրեաց արդալ ամենազօր տէրութեանդ օսմանցւոցդ և զթուղթս առ Դօլվաթլու փաշայն տեղւոյդ, և առ Աբդուլ Ռահման փաշայն, բաւականապէս զգացուցանելով նոցա զօգուտն և

զվնասն մեր. և զպատճառն անկարելի գոլոյն փոփոխման մերոյ. և խնդիր արար ի փաշալիցն, զի ինքեանք ևս արզ գրեսցեն՝ առ Թագաւորն. և ձեզ ևս մահսէր գրել տացեն ի Պօլիս և զայն Թուղթսն իւր ահա առաքեաց ի ձեռն հաւատարմին իւրոյ, Թալնոյ Սուլթան պատուելի Մահմադ Վէլի պէկին, և ընտիր սիրելւոյն մերոյ ազնուատոհմ Մէլիք Աբրահամ աղային, որք գնալոց են ի միասին ցԿարին, եթէ գտանիցեն անդ զՍտեփաննոս արհի եպիսկոպոսն, յանձնելոց են նմա զարզայսն և զմահսէրսն՝ տանել ի Պօլիս. իսկ թէ անցեալ իցէ սա ընդ Կարին, յատուկ սուրհանդակաւ առաքելոց են առ նա: Իսկ այսու թղթով զայս ունիմք գրել սիրելեացդ զի Դանիէլ վարդապետի արարքն թէպէտ անհիմն և անօգուտ ինչ է, բայց վնասն է անտանելի, որ ահա պատճառ է գտանելոց աւերման խղճալի աթոռոյն, և թէ որպէս է անհիմն այսու յայտ է. զի ահա իշխօղքն մեր, որ միանգամ ճանաչեալ են զմեզ՝ այլ դիւրաւ ոչ են թողլոյ ի բաց որպէս բազմիցս ասեն և խոստանան, և ի կողմունսդ ևս գրեցին: Բայց թէ հանդիպեսցի՝ զի որպէս այժմ լուան, նմանապէս և միւսանգամ լուիցեն զձայն բազմութեամբ կաշառաց, թերևս խաբեցեալք այնու, կամեսցին շարժել զմեզ և զԴանիէլն բերել, բայց հաստատ չեն պահելոց զնա, զի սովորեալ գոլով ի ձեռն կաշառաց զորն կամին՝ բարձրացուցանեն, և զորն ոչ կամին՝ ընկենուն. և յայնժամ կաթուղիկոսունքն մեր՝ լինելոց են որպէս զպատրիարգունսն Պօլսոյ: Այս մէկ պատճառ վնասուն: Երկրորդ պատճառն ևս այն, որ թէ Դանիէլ վարդապետն կամեսցի ուրեք նստել և հակաթոռ մեզ լինել, թէպէտ այնու ևս ոչ կարէ մնալ ի հաստատութեան, ըստ որում ահա բնականապէս ի սրբոյն Լուսաւորչէ անտի հաստատեցեալ, այս սուրբ Աթոռս է կաթուղիկոսարան եղեալ՝ և ազգն զսա ճանաչէ, ապա նա ուր կարէ նստիլ, և Աթոռ դնել. և մշտնջենաւորել ի նմա. բայց թէ ներհակելով, նստցի ուրեք, և ազգն ևս հաճեսցի ընդ այն լիրաւի՝ այս տիրահաստատ Աթոռս աւիրելոց է իսպառ՝ և կործանելոց: Եւ Տէր մի արասցէ եթէ միանգամ աւերեսցի յայս չարաշատ ժամանակիս, այլ միւս անգամ չէ շինելոց:

Արդ՝ ըստ իմաստնոյն բանի՝ յաւուր նեղութեան փորձի բարեկամ. ձեր բարեկամ գոլն սրբոյ Աթոռոյս, պարտի առաւելապէս յայս նեղ աւուրս երևիլ, որ հոգւով չափ ջանայցէք յօգնութիւն հասանիլ լուսածին մօրս ձերոյ: Եւ զի ահա մերձաւորք գոլով՝ լաւապէս տեղեակ էք անցիցն, և գիտէք զօգուտն և զվնասն սորա. վասնորոյ ի հրամայել Դօլվաթլու փաշային՝ շուտով մէկ մահսէր շինեսջիք, ի ծանուցումն ճշմարտութեան անցիցն և ի ջատագովութիւն զմէնջ. զոր և տաջիք ի ձեռն թղթաբերացդ, զի հասուսցեն Ստեփաննոս եպիսկոպոսին՝ տանել ի Պօլիս. Եւ յայնժամ տեսցուք թէ ազգն զինչ հոգս քարշելոց է. եթէ կամեսցին մնալ մեզ ի հաստատութիւն՝ գրեալ եմք նոցա, զի զհաւատարիմ արս յղեսցեն որ հասու լիցին թէ մեզ՝ զորքան ինչ յանձնեալ են, և մեք զինչ եմք խարճեալ և յայնժամ իրաւունս տացեն մեզ. և ի նանիր պատճառ չգտցեն աւերման սրբոյ տանս. ուրեմն դուք ևս կամակից լինելով մեզ՝ մահսէրաւ և թղթով ծանուսջիք զճշմարտութիւնն ուր հարկն է, որովք յոյժ և յոյժ շնորհակալ լինելով եմք զձէնջ օրհնութեամբ: Որք և լիջիք օրհնեալք յԱստուծոյ յարաժամ. Ամէն:

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս և ի մարտի... ի սուրբ Էջմիածին:

ՃԺԵ. *Թուղթ ի միաբանից առ Էրզրումցիսն զանազան բանք վասն Դանիէլ վարդապետին 'ու վերջապէս բանադրանք նորին:*

Թէպէտ ի զանազան ժամանակս ընդդէմ գրաբանութեանց ոմանց զսրբազան և զհոգէընտիր Տեառնէս մերմէ՝ գրեալ եմք բազմակնիք վկայութեամբ զճշմարտութիւնն ամենայն ուրեք առ Ազգ մեր օրհնեալ, բայց որպէս երևի՝ ոչինչ ազդեցին այնոքիւ բանք ընթերցողաց: Ուստի ահա զվերջինն գրեմք ստուգութեամբ ամենիցդ, և յայտնեմք դիտմունս մերս միաբանութեան, ընդ նմին և զկրաց անցելոց և զգործեցեալ իրակութեանց զխիկութիւնն դնեմք առաջի հանդերձ վնա-

սակար արարմամբք ոմանց. նախ զարծաթեզինացն, զորս չազփազփեն արք նախանձոտք, որպէս թէ սրբազան Տէրս մեր խորտակեալ իցէ և բռնաւորաց տուեալ, և ի ձեռն կաշառաց յառաջ մատուցեալ զանձն և այլն։ Առ այդ՝ վաղ ուրեմն տուեալ եմք զպատասխանին, և այժմ ես մեք ամենեքեան վկայեմք որ ըստ ամենայնի սուտ է։ Քանզի զարդք Աստուածային տանս՝ որպէս տեսեալ եմք յըսկըզբանց անտի, այնպէս անպակաս ցարդ կան, և մանաւանդ՝ քանիցս սրբազան Տէրս մեր դրեալ է առ. Աղդ մեր օրհնեալ ի Պօլիս, զչորս հաւատարիմ արս յղել, և ամենայն ելումտիցն վերահասու լինել, ուստի՝ զոլոցանէ ոչ առնեմք կրկին զյիշատակութիւն աստանօր։ Երկրորդ՝ եթէ նոյն խռովարկուք պատճառեսցեն, թէ Ազգն ոչ կամի և այլն. գիտասցեն ճառատօղք առասպելիս, որ յըսկզբանն Ազգն ընդ մեզ սիրով ընկալան ըղ հայրապետութիւն պատուական գլխոյս մերոյ, և յօժարակամ կնքեցին զմահուէրն յանուն սորին, և անյապաղ զֆէրմանն հանին ե իւրաքանչիւրքն ես յատուկ յատուկ շնորհաւորական թղթովք մատեան առ Աստուածընտիր սրբազան Տէրս մեր։ Իսկ յետոյ՝ թէ զիարդ դայթակղեցան և խռովեալ ամբոխեցան, ե ցրտացան սիրտք ժողովրդոց ի լուսոյ մօրս իւրեանց, ինքն պատճառն տացէ զպատասխանի արդարադատին Աստուծոյ և նոցա, դայթակղելոցն։ Լաւ էր նմա ըստ տէրունական բանին կապել ընդ պարանոց իւր զերկանաքար ե ընկենել ի ծով, և կորնչիլ զկորուստն յաւիտենից, քան վրիպեցուցանել զմի ի փոքրկանցս։ Եւ երրորդ՝ եթէ զմիաբանութիւնս մեր պատճառ ինքեանց չարութեանցն առեալ խռովեցուսցեն զխաղաղութիւն ժողովրդոց, ցուցանելով զմեզ տհաճս ընդ հայրապետութիւն պատուական Տեառնս մեծի, զոր բազում յօժարութեամբ ե ստիպմամբ յառաջ կոչեալ օծաք և զոր յարգեմք և սիրով ունիմք առ մեզ, և մինչև ցվախճան կենաց մերոց պահելոց եմք սիրով անփոփոխելի, որպէս և վասն այսմ յառաջ բազմիցս բազմակնիք թըղթով ծանուցեալ եմք ամենից. որք եթէ ոչ բաւականասցին ի զգաստացուցանել զթմրեալսն, ահա վերստին բոլոր միաբանք սրբոյ Դահիս բազմակնիք վկայութեամբ անյեղլի մտօք կնքեմք զվերջին ե զհաստատուն բանս մեր, որովք և յայտնեմք զկամս և զդիտմունս մեր Աստուածասիրացդ, որ բացի հողընտիր և յեռերջանիկ հայրապետէս մերմէ՝ կրկին նորոգ և անձնամատն կաթուղիկոսի չունիմք զպէտս, և ոչ իսկ կամիմք ճանաչել, և կամ զանունն լսել. որում զկեանս խաղաղականս պարգևեսցէ Տէր ի շինութիւն իւրակերտ տաճարին սրբոյ, և ի պարծանս Ազգի մերոյ։ Եւ բաց ի դրեցելոցս՝ եթէ այլ ոք զայլ ինչ քարոզեսցէ, թէև հրեշտակ երկնից իցէ, նզովեալ եղիցի։ Իսկ զոր ասեն թէ՝ կայսրն հիւսիսոյ իբր իցէ հաստատեալ զհայրապետութիւն Դանիէլին, առ այդ ես սրբազան Տէրս մեր առաքեաց զարս ոմանս ի գիտել զիսկն, և ծանեաք ստուգապէս որ կայսրն այն թողեալ է ի կամս Ազգին ըստ ծիսի և օրինի մերոյ։ Եւ՝ վասն թէմեսուկացն զորս չազփազփեն արք յաչաղկոտք, իբր սրբազան Տէրս մեր իցէ հնարեալ յանուն Դանիէլին և տարածեալ այսր անդր և այլն։ Այդ այնչափ հեռի է ի ճշմարտութենէ, որչափ հրեշտակ ի բելիարայ, զոր ոչ թէ միայն չեմք լուեալ և չեմք տեսեալ, այլ և մտօք անգամ չէ կարելի խորհիլն, ուր մնաց ի գիր արձանացուցանելն։ Այդու գիտացէք զսրբազան հօր մերոյ զսրտի պարզութիւնն, և ըղհնարողի զորին զթիւրութիւնն, և ծաներուք թէ արդեօք ով է սանդարամետականն, զտակըն այդպիսի չարութեանց, եթէ՝ այն, որ մտօք ե ոչ առ անգամ մի իցէ խորհեալ։ Եւ արդ՝ մեք բնաւ ուխտք եկեղեցւոյ՝ բոլոր միաբանք սրբոյ Գահիս ի մի վայր եկեալ՝ քննեցաք զամենայն թիւր և վնասակար արարս և գործս Դանիէլին և զտաք զնա աւերիչ սրբոյ Տանս, խռովարկու ժողովրդոց և մերս միաբանութեան, և խանգարիչ բարեկարգութեանց մերոց, և օրհնաց սրբազան հայրապետաց, զորոց զպատճառսն ոչ թուեմք աստանօր առ ի ոչ տաղտկացուցանել զլսելիս ձեր երկարութեամբ բանից, ըստ որում սրբազան Տէրս մեր յիւրում կոնդակին յաճախօրէն բացայայտեաց, ուստի իրաւամբ ընդ սրբազան քահանայապետիս մերոյ և մեք որոշեցաք զնոյն ինքն զԴանիէլն ... և ի միաբանութենէս մերմէ և իբրև անպիտան ... անգամ հատեալ արտաքս ընդ ... և որպէս ատե... յայտնեաէ ինքըն ե խոտորեալ գործքն իւր, նոյն ... և առաջի աստուածասիրացդ անարգեալ և անպիտան ...ցին բանք և գրուածք նորին։ Այս-

պէս գիտաց ... և համեմատ կամաց մերոց և գործոց զկատար... եղիջիք օրհնեալք յԱստուծոյ և զօրացեալք շնորհիւ ... Աստուածաընակի. Ամէն։

ՃՀԹ. *Թուղթ ի Թիֆլիզ ի վերայ հաստատութեան մերազանց սակս Անտոն վարդապետին, որ փախուցեալ աստի անկաւ ի Կարին, եւ անտի ի Թիֆլիզ:*

Եւ ըստ օրհնութեանս Աստուածայնոյ և սիրոյ ողջունիս՝ ծանուցումն եղիցի սիրելի և հոգեւոր որդւոցդ մերոց, և հաւատարիմ զաւակացդ սրբոյ Աթոռոյս Աստուածաէջի։ Պէտք են հովուաց եկեղեցւոյ և մանաւանդ հարկաւորք են յոյժ զօտարն և զընտանին ճանաչել, և ըստ մէջ հարազատին և խորդ որդւոյն առնել զորոշումն ի պահպանութիւն Եկեղեցւոյ և ի յըզգուշութիւն ինքեան յանձնեցեալ բանաւոր հօտիցն Քրիստոսի։ Ուրեմն և մեք կարգեցեալքս յԱստուծոյ հովիւ և տեսուչ ժողովրդոց Քրիստոսի պարտաւորիմք որպէս խնամ տանիլ հոգևոր կարգաց, նմանապէս և հոգալ զձէնջ ե զգուշացուցանել կալ ի բաց ի մոլորեցուցչաց։ Արդ յայտնի է ամենիցդ, որ տխալցխալեցի պատրի ոմն Անտոն անուն հեսաեալ ի մէնջ և յօրինաց մերոց՝ յետ ամենայն մոլորութեանց և մոլորեցուցմանց ե զկնի շրջելոյ ե յածելոյ ի բազում տեղիս ըստ սովորութեանց իւրայլխեաց, ի Մօզդօկ դալթըն ի դալթին կաղալր յերկուսհետս։ Եւ կարգաւորութեամբ յանկարգութեան կացեալ ի յանպատուիլն ի ժողովրդոց իւրոց, և ի կամիլն նորանոր կրօնիւք զնորանոր փառս որսալ ի պարզամտաց. և այլ այսպիսի պատճառաց աղաղաւ դարձաւ որպէս թէ յուզզութիւն առ կենդանութեամբ Յովսէփ սրբազան կաթուղիկոսին ի Մօզդօկ քաղաքի, սրոյ ուխտից և երդմանց ձեռագիրքն, զորս տուեալ է տեառն Յովսէփայ ի տէր հանդուցելոյն կան ի մեզ ամբողջապէս, և ուր հարկն է՝ յզելոց եմք ի յիւրում ժամանակին։ Ապա եկն ի Մօզդօկու նոյն Անտօն վարդապետն ի վախճանիլ լուսահոգւոյն ի սուրբ Աթոռս ի լինել միաբան սրբոյ Աթոռոյս ըստ զօրութեան ձեռագրացն իւրոց և ի կալ ի հնազանդութեան սոմին դահակալաց։ Եւ մեք ի սէր և ի պատիւ նոյն լուսահոգւոյն ընկալաք հայրախնամ քաղցրութեամբ և դթարկեցաք նմա, և թողլ տուաք մնալ յապահովի։ Եւ քանիցս հասեալ ի վերայ ծանեաք զնորին խաբեբայ դոլն. որպէս դտանեցան ի յինքն երկու չիշալիւ ըստ ծիսի իւրեանց վերջին օծման իւղն, սակայն զանց արարեալ՝ ամենևին ոչ ցուցաք զխորզութիւն։ Յետ այսորիկ՝ ըստ Թախանձանաց խանին երկրիս՝ առաքեցաք զնա յԵրևան սակս բժշկութեան, և պատուիրեցաք փութով վերադառնալ։ Բայց նա դնացեալ անդ և թողեալ զկրօնաւորական զիւր պաշտօնն և զձեն՝ շրջէր ի դրունս հեթանոսաց պատճառաւ բժշկութեան համարձակ՝ իւր առաջին խաբեբայական պատրիկի ձևովն և զգեստուք։ Եւ բազումք ի միաբանից և յերևելի իշխանաց հայոց և տաճկաց բանիւք և գրովք զգացուցին մեզ սանձել զսանձարձակն այն, սակայն որպէս յայտնի է Աստուծոյ և ամենեցուն որք տեսեալ են զնա ըստ զրեցելումս աստ ի յԵրևան, թողլ տուաք կրկին և ոչ կամեցաք երբէք վիրաւորել զեկեալ և յեցեալն ի մեզ և յազգս մեր. ի վախճանի՝ ինքնահալած եղեալ փախեաւ ի յԵրևանու և դնաց ի Բայազիտ և ի Կարին ի զտանել զիւրանմանսն, և անտի լսեմք որ եկեալ է ի քաղաքդ, բայց զպատճառ դալստեանն ոչ գիտեմք։ Արդ՝ դուք ամենեքեանքն ի միվայր եկեալ կոչեցէք զայրդ այդ զԱնտոն անուանեալդ և ստուգիւ գիտացէք զմիտս դորին, եթէ կայ ի յուղղութեան և ի պայմանին իւրում, ուղևորեցէք առ մեզ ի մնալ աստ միաբան ընդ հնազանդութեամբ ըստ տուեալ ձեռագրաց ցուցմանն, և մեք վերստին ներելոց եմք զսխալանսն դորին և հայրաբար ընկալնլոց։ Ապա թէ՝ ոչ կամիցի հնազանդիլ և դալ առ մեզ ի սուրբ Աթոռս ն ենթարկիլ ընդ ուղղափառ դաւանութեամբ Հայաստանեայց եկեղեցւոյս, մերկացուցէք զձև կրօնաւորութեան մերոյ և թողլ տուք երթալ ուր ե կամեսցի։ Զսոյնս գրեցաք և պարոն Ղազրով ենարալին և այլոց որոց հարկաւոր էր։ Եւ կատարողքդ հրամանաց մերոց եղիջիք օրհնեալք յԱստուծոյ և ի մէնջ. ե շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ ձեզ ամենեսին, Ամէն։

Գրեցաւ ի 1802 թուոջս, և ի մարտի... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՃՀԷ. *Թուղթ յԷջմիածնէն առ հասարակութիւն նոցա, պատմութիւն զանցիցն անցելոց մինչեւ ցմարտի վերջն:*

Եւ ընդ սիրապարգեւ ողջունառաք օրհնութեան նամակիս գիտութիւն լիցի ընտիր եւ տէրունի ժողովրդոց իմոց եւ լուսածին զաւակաց Մօրս ձերոյ շնորհատուի սրբոյ Գահիս Աստուածաէջին. Զի յառաջ քան զայս զամենայն անցսն տեղւոյս եւ զիրակութիւնսն երկարապէս գրեալ եմք սիրելեացդ իմոց օրհնութեան կոնդակաւ, եւ նովաւ զհոգեւոր որդին սրբոյ Աթոռոյս եւ զընտիր միաբանն սորին եւ զարժանավայել առաջնորդն եւ զնուիրակն ձեր զՄարտիրոս շնորհափայլ արքեպիսկոպոսն, անդրէն ի վերայ տէրունի յատկեղ ժողովրդոցդ իմոց տեսուչ եւ դէտ կացուցեալ, գրեցաք եւս զընդհանրական կոնդակ մի առ ընդհանուր Ազգ մեր ծանուցանելով զամենայն հանգամանս եւ զեղելութիւնս օծման մերոյ, յորոց խնդրեցաք բացայայտ զայն կամ զոչն մեզ գրել, կամ միամտութեամբ ի գործս լինել եւ կամ ցուցանել զճշմարտութիւն ազատ ի բամբասանաց մնալ. ընդ մեզ եւ միաբանք եւ երկրացիք գրեցին զերիս մահսէրս առ ընդհանուր Ազգ մեր, առ Կարնեցիսն եւ առ նոյն ինքն Դանիէլն յայնժամ համեմատ դրուածոց մերոց. Գերագնիւ խանն տեղւոյս եւս գրեաց զամենայն ինչ ճշմարտութեամբ առ Թագաւորն Օսմանցւոց եւ առ մեծամեծսն նորին եւ առ փաշայսն Ղարսայ եւ Կարնոյ. Զորս յղեցաք ձեռամբ Ստեփանոս արքեպիսկոպոսին հարազատ զաւակին սրբոյ Գահիս ի փետրուարի ԺԶ. եւ սակս կասկածանաց ճանապարհի, զերեւելի իշխանն երկրիս՝ Հաջի Իսմայիլ անուն խնդրեալ ի խանէն ընդ վերոգրեալ եպիսկոպոսին մերոյ ի տանիլ ամբողջութեամբ զԹուղթսըն եւ զԹղթատարն մեր ի Պոլիս, եւ անդէն խաղաղութեամբ առ մեզ դարձուցանել, զի ի պատճառս նենգաւորաց, չկարացաք բնաւին թղթովք զցաւս մեր յայտնել Ազգին, այնզի՝ հետամուտ թղթոց մերոց եղեալ արարին կորուստ զայնս. Եւ մինչ ցարդ լուսամք, թէ գնացեալ ի Պոլիս աւարտեալ իցէ բարեպէս զառաջիկայ գործն, եւ զգայթակղեալսն անդրէն հաստատեալ, եւ զամենեսին խաղաղացուցեալ, յայտնելով ամենեցուն զճշմարտութիւնն եւ զկոնդակն, եւ զյատուկ թուղթսն օրհնեցելոցդ անտի առ սիրելի ժողովուրդսդ իմ առաքեալ եւ օժանդակութեամբ ձերով բարձեալ զամենայն նիւթս եւ զսերմունս չարասիրաց, զորոց ոչ երկարեմ. Իսկ նարգենիս զայս ինչ գրեմ սիրելեացդ իմոց, զի Դանիէլ վարդապետն ի Կարնոյ, իւր ֆարմանի օրինակն ի ձեռն միոյ սեազլխի եւ թաթարի առաքեալ էր յԵրեւան առ խանն, եւ զանկարելի խնդիրս մանաւանդ թէ՝ զապականարարս եւ զտնաքակս առաջի արարեալ, եւ խնդրեալ եւս էր ի ձեռն ծանր կաշառաց (զորոյ զգումարն անտեղի համարիմ աստէն յիշատակել) կատարել զիւր ապօրինաւոր խնդիրն. Եւ առաքեալ սեազլուխն իւր ի մարտի 16 մտեալ յԵրեւան՝ թէ զիարդ ի դրունս պլլազգեաց անկեալ ղեգերիւք եւ անխտիր երեւելեաց եւ աննշանից խոստանալը զարծաթ լումայէտս, զայն եւս թողում. Այլ գերապատիւ խանն տեսանելով զհետեւեալ վնասն, որք յառաջ գան ի փոփոխութեանց, ամենեւին ոչ հայեցաւ զերեսս եկելոցն, եւ որպէս բանքն եւ խոստմունք նորին եղեն ծանակելիք, նոյնպէս եւ ինքն ընդ առաքեալ սեազլխին եղեւ արհամարհելի առաջի խանին եւ մեծամեծացն երկրիս, ուստի ատելով ատեաց զԹուղթսն եւ զԹղթաբերն եւ առ առաքօղն նորին դարձոյց ունայն զեկեալն, եւ ի խորհուրդ մտեալ գրեաց վերստին առ Թագաւորն ի Պոլիս թէ՝ ես զայս ինքնագլուխ չարարի, այլ հաճութեամբ Թիֆլիզցւոց՝ հիւսիսայնոց եւ միաբանից եւ շրջակայից, եւ քեզ եւս ծանուցի զնոյնն, եւ դու զֆարման հաստատութեան ետուր, եւ թէ՝ Հայք զօրէնս ունին զօծեալ հայրապետն անփոփոխ պահել մինչեւ ցմահն, որպէս եւ դուք ի ֆարմանի ձերում ամրացուցեալ հաստատեալ էք, զանփոփոխ մնալն. եւ՝ երկիրս Շահինն է, եւ Շահն դիտէ սորա կաթուղիկոս լինելն, եւ երկիցս զպարգեւս եւ բազումս է շնորհեալ, եւ ես թարց նորա գիտութեանն ոչինչ առնել կարեմ, եւ խնդրեաց եւս՝ խափանել զֆարմանն Դանիէլին, եւ զմերն հաստատել. Նոյնպէս գրեաց առ փաշայսն Կարնոյ եւ Ղարսայ զի ձայնակից ինքեան լեալ գրեսցեն եւ նոքա յարքունի դուռն, եւ ժողովրդոցն իւրեանց եւս հրամայեսցեն զմահսէր առնել յանուն մեր, եւ զայսոսիկ թուղթսն յղեաց ձեռամբ հաւատարմին իւրոյ Մահմատ Վէլի Սուլթանին ի Կարին, ընդ որ

և մեք գրեալ զհարկաւորն առ. Կարնեցիսն և առ. Դարանեցիսն, լղեցաք ընդ խանի մարդոցն ձեռամբ Աթոռակալ Սիմէօն արքեպիսկոպոսին, և Մէլիք Ստեփանի ի մարտի 25․ Համեմատ սմին ղրեցաք երկիցս թէ խանն և թէ մեք առ. հիւսիսականոն, զվերջին ի մարտի ելն լղեցաք ձեռամբ Մէլիք Սահակ աղալին և միոյ տաճկի Հասան պէկ անուն։ Չալս թուղթ օրհնութեան և սիրոյ և յորդորանաց ես առ. տէրունի ընտրեալ ժողովուրդդ իմ հարկաւորապէս ղրեցաք ճանաչելով զձեզ սրտացաւ ղաւակ սբբոյ Գահիս, և մեզ նեցուկ ամրութեան տատանեալս անձին ընդդէմ հողմալից ուռուցմանց։ Եւ մանաւանդ ի մէջ ողկուղւոյ զձեզ տեսանեմ ճիռ. օրհնութեան զօրացեալ տերամբ Քրիստոսիւ, և պահպանեալք ամենազօր բազկաւն երկնաւորին ի լոչ կրկնել ծուխ Եւտհաղու, և առաւել ի հալածել զխռովարարն սատանայ իւրովք հնարիւք և ի հաստատել զճշմարտութիւն և լինել աւերեալ և վնասակրեալ Տանս և հայրապետութեանս վերստին կանգնիչ, այնու թողուլ յետագայից ձերոց որդւոց և թոռանց զբարի յիշատակ և զանուն քաջութեան դրեալ յարձանս մշտնջենաւորս, քանզի որպէս յառաջ բազում կերպիւ ցուցիք զձեր Աստուածպաշտութիւնն ընդ ջերմեռանդ կատարիչ հաւատոյ և մեծազոյն սիրոյ գրելով նախքան զամենեսին ըզշնորհաւորութիւնս իւրաքանչիւրքդ առանձին հանդերձ համահաճական մահսէրաւ հասարակութեան առ. մեզ, և զբազում ջատագովութիւնս ի Պօլիս առ. իշխանս և ի կողմն հիւսիսոյ առ. կայսրն, նմանապէս և զարդիս ըզնոյնն առաւելապէս ցուցեալ յաւուր նեղութեանս և վշտաց՝ կանգնեալ էիք զնշան քաջութեան առաջի ամենեցուն՝ առնելով զձեզ անաղարտ հայելի և օրինակ բարի հայեցողացն ի ձեզ։ Այնզի՝ ի Կարնոյ դրեալ էին ոմանք բարեպաշտք զհովուի ձերոյ և զհովուեցելոցդ զբազմապատիկ հաւատարմութիւնս, իբրզի՝ կայք ի բանս ձեր անլեզլի առեալով զստութիւն և զխառնակութիւն չարասիրաց և փափազանօք լիշելով տակաւին զանուն մեր, և մանաւանդ դրելով զնոյն ճշմարտութիւն ես ի հնռաւորս և ի մերձաւորս և զնոսա ես ի դոյնն յորդորելով։ Արդարև՝ կենդանացեալ և զօրացեալ ոսկերաց մերոց զովացուցիչ բարի համբաւովք իբրև ցօղով երկնայնով՝ զխնզրուածս առ. բարձրեալն մատուցաք յՍստուածաէջ տաճարիս միաբանութեամբ հանդերձ սակս մեծահաւատ ժողովրդոցդ իմոց սիրելեաց պահել զամենեսին զձեզ ի պարարտութեան երկրի ցօղով երկնից։ Ուրեմն՝ խնդրեմ և առաւել զթովն Քրիստոսի աղաչեմ ըզձեզ զամենեսին և յորդորեմ կալ և մնալ ի զոյնն անփոփոխ, և ջանալ բառնալ զխռովութիւն զոր ամենաչարն սատանայ արկեալ յոգիս մերազնէից կամի կորուսանել զԱզգս մեր միաբանովին և իսպառ քայքայել զսուրբ տեղիս այս, և ընդ միաբանիցս և ընդ երկրացւոցս և ընդ այլ իրաւասիրացն ձայնակից և կամակից լինելով ձեզ՝ մի դադարեսջիք ի գրելոյ և ի պատմելոյ զուղիղն վկայելով ճըշմարտութեանն, և մանաւանդ օգնական և օժանդակ լինիջիք վերոյդրեալ Ստեփաննոս արքեպիսկոպոսին մերոյ, որ առաքեցաւ յառակապէս ի Պօլիս սակս այսր, յորմէ և ունիք տեղեկանալ զամենայն ինչ։ Այսպէս առնելով ձեր եղիջիք օրհնեալք յԱստուծոյ և վարձատրեալք յառատաբաշխ ձեռանէ նորին և շնորհք սրբոյ տեղւոյս Աստուածաբնակի եղիցի ընդ ձեզ Ամէն։

Գրեցաւ յամի կենարարին մերոյ ի 1802 և ի յապրիլի 4։ յԱստուածակերտ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ՃՀԸ. *Դաւիթ կաթուղիկոս առ Ստեփաննոս եպիսկոպոս* [1]։

Ցիսուսի Քրիստոսի ծառայ Տէր ԴԱՒԻԹ կաթուղիկոս և ծայրագոյն պատրիարք ամենայն Հայոց . . . ծանուցումն լիցի հարազատ սիրելւոյդ մերոյ և հաւատարիմ որդւոյդ սրբոյ Աթոռոյս Ստեփաննոս խոհեմազարդ արք

---

[1] Հասցէն թղթոյս էր այսպէս։ «Հասցէ ի մեծն Պօլիս, ի ձեռն սրբոյ Էջմիածնի հարազատ միաբան մահսէրատար Սաեփաննոս արհիեպիսկոպոսին առ ի բարիս»։ —Կից նորա էր գրեալ. «սորբաղան վեհի թուղթն է զորս ընկալաք ի մայիսի ԻԶ»։ Իսկ ձեռամբ Ներսիսի արքեպիսկոպոսի գրեալ էր. «ի սուրբ Էջմիածնայ, 1802 ապրիլի Ծ. առ Կուչուբեան Ստեփան վարդապետն, Դաւիթն գրէ վերստին վասն

[illegible]
եան, և խոստմանն յաղագս խանական արզեամբք իւրով զպահպանելոյ զԱթոռոն»։ Գ. Վ. Շ.

Այս նամակը Հ. 6 տ. փ. Միքանէ ժողովածուից է։

եպիսկոպոսիդ, զի զկնի յելանելոյն քոյ ի սրբոյ Աթոռոյս՝ մինչ մերձեցաւ Նաւրուզն տաճկաց, և մեք ըստ սովորութեանն ելեալ գնացաք ի աեսութիւն և ի շնորհակալութիւն խանին. անդ իբրև անցուցաք զքանի աւուրս ի Նովրուզէն՝ տեսաք որ ի Կարնոյ Աբտուլ-ռահիմ փաշային մէկ սուրհանդակ և Մարտիրոս սեագլուխն որ առ Դանիէլ վարդապետն կայ՝ կրկին, ունելով ի ձեռս իւրեանց զօրինակ ֆէրմանի կաթուղիկոսութեան Դանիէլ վարդապետին, զոր ցուցեալ խանին և այլ մեծամեծացն՝ խօսեցան զբաղում և զանթուելի կաշառս, առ ի մերժել զմեզ յԱթոռոյն և զԴանիէլն բերել նստուցանել աստ։ Բայց Տօլվաթլու խանն տեսանելով թէ՝ ամենայնիւ ապօրէն է առաջադրութիւն նոցա, միանգամայն հալի յաւերումն և ի կործանումն խըղճալի սրբոյ Աթոռոյս, և զի յոյժ ըղձալի են նմա շինութիւնք սրբոյ Դահին քան զբաղմութիւն զանձուց, ըստ որում ոչ կամի բնաւ թէ սուրբ Աթոռս որ խնամատարութեամբ նախնեաց իւրոց պահպանեալն է ցարդ, այժմ յաւուրս իւր աւերեսցի, որպէս և բազում անգամ ասաց երդմամբ բազմականին ի յատենի իւրում թէ՝ ժողովուրդք Հայոց եթէ ձեռք բարձցեն յօճաղէն՝ ես արդեամբ իմով պահպանելոց եմ, զգիւղի և զանդաստանաց նորին զհարկն թագաւորական բաշխելոց եմ, զի այնու կառավարեսցի և ի շինութեան մնասցէ և այլն։ Ուստի չհաճեցաւ ամենևին ընդ վնասակար խորհուրդ Դանիէլին, այլ արհամարհելով արհամարհեաց զնա և զթուղթս նորա և ըզմեծամեծ խոստմունսն. որև զսուրհանդակն և զսեագլուխն ունայն յետս դարձոյց և զմեզ խիլայազարդեալ միամտացոյց՝ թէ ունի անփոփոխելի պահել զմեզ մինչև ցվախճան մեր։ Ապա խորհրդակցութեամբ միաբանից և երկրացւոց՝ վերստին արզ գրեաց առ թագաւորն Օսմանցւոցդ թէ՝ «ես ինքնակամ չկացուցի զսա կաթուղիկոս, յօժարական հաճութեամբ միաբանիցն և շրջակայ երկրաց երկրացւոց արարի, ձեզ ևս հասկացուցաք որ շնորհեցիք սմա զֆէրման հաստատութեան, հրամայելով այնու թէ՝ մի փոխեսցի սա՝ մինչև ցվախճանելն իւր, ապա զի՞ է զի զհրամանս ձեր եղծել կամիք. և եթէ՝ իւր բոլոր ազգն՝ թէ տէրութեամբ ձեր եղեալքն և թէ ուր ուրեք կան, ընկալեալ են զսա սիրով, որք ամենեքեան կնքեալ են զհամահաճական մահսէրն սորա, և գրեալ ևս են յատուկ յատուկ բարեհաճական մահսէրս և թուղթս ընդունելութեան, որք կան այժմ ի ձեռս սորա, և թէ՝ այս երկիրս մեր Շահինն է, նա գիտէ զկաթուղիկոս լինելն սորա, որում և շնորհեալ է քանիցս զպարգևս և զռաղամս հաստատութեան, և միով ռաղամով յատկապէս պատուէր էր գրեալ մեզ, որ բաց ի նմանէ զայլ ոք չընդունիցիմք կաթուղիկոս. և թէ՝ Հայք զօրէնս ունին զօծեալ կաթուղիկոս իւրեանց ոչ փոփոխել, որպէս և այժմ ոչ կամին բնաւ թէ միաբանք և թէ երկրացիքն զփոփոխութիւն սորա, և մեք ևս գիտելով թէ ընդդէմ է Շահին փոխելն սորա՝ վասնորոյ ոչ կարեմ առնել, այլ խնդրեմք զի զֆէրման Դանիէլին խափանիցես և զսորայն վերստին հաստատեսցես և այլն։

Դրեաց և զթուղթ առ Կարսայ, Ախալցխայ և Կարուց փաշայսն, զի և նոքա համաձայն գիտման իւրոյ արզայս գրեսցեն առ տէրութիւնն և ընդ իշխանութեամբ իւրեանց մերձաւորից ևս հրամայեսցեն մահսէր գրել և յղել առ Պօլսեցիս՝ վասն մեր անփոփոխ մնալոյ։ Զայն արզայսն և թուղթսն իւր յղեաց խանն ձեռամբ Թալնոյ սուլթան Մահմադ Վելի բէկին ընդորում և մեք առաքեցաք զԱթոռակալ Սիմէօն եպիսկոպոսն և զԲլրցի Բալասանի աղայ Մելիք Ստեփաննն հանդերձ կոնդակօք, զի գնասցեն նոցա ի Ղարս և ի Կարին, բերան առ բերան ծանուսցեն զմեծ և զանտանելի վնասսն, որ հասանելոց է սրբոյ Աթոռոյս յերկպառակութենէ անտի, և վասն որդալիցն մահսէրացն ևս հոգ սարցին շինել տալոյ և յղելոյ ի Պօլիս։ Ցետ այնորիկ մտածելով թէ կապանք բանին մեր ի կողմանէ հիւսիսոյ է եղեալ, և արձակումն ևս անդուստ պարտ է լինել, ըստ որում ահա Կարապետ և Աբրահամ եպիսկոպոսունքն մեր արգելեալ մնան ցարդ ի Թիֆլիզ քաղաքի, վասնորոյ Տօլվաթլու խանն մեր՝ առ այն ևս հոգ տարեալ, գրեաց զթուղթըս առ Կնօրին անուն մեծ սահմանակալն և առ այլ մեծամեծսն՝ եղեալս ի Թիֆլիզ քաղաքի, և այնու թղթովք զՀասան բէկ երևելի տաճիկ առաքեաց ի մարտի ԼԱ, վասն լիշեալ վարդապետաց մերոց արձակել տալոյ և ուղևորելոյ առ կայսրն ընդ տաճկին և մեք առաքեցաք զՄէլիք Աբրահամի որդի Սահակ աղայն՝ հանդերձ թղթովք առ յիշեալ մեծա-

մեծսն, և որպէս խանն խնդրեալ էր, նոյնպէս և մեք խնդիր արարաք զի անյապաղ արձակեսցեն զվարդապետսն գնալ ի դուռն կայսեր և ծանուցանել զճշմարտութիւն անցիցս և հայցել մեզ զօգնութիւն և սրբոյ Աթոռոյս։ Տեսցուք զվախճանն թէ զիարդ է լինելոց։ Այսպէս գիտելով քո՝ և զորպիսածանոյց զիրդ անպակաս առնելով. ողջ լեր ի Տէր։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուականին մերում և յապրիլի 8. ի լուսաձև Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ՃՀԹ. *Թուղթ առ Մարաղու Անմատ խանն, օրհնութիւն եւ շնորհակալութիւն վասն երկուց կենաց արձանացն յղելոց։*

Եւ ընդ աստուածային օրհնութեանս՝ ծանուցումն լիցի պատուելի Տոստիդ [31] մերոյ։ Զի ըստ քաղցրակենցաղ բարուցդ և բազմագով բարեբարոյութեանդ, և ըստ յատկեղ սիրոյդ և խնամոյդ առ մեզ՝ որ զիջեալ ի խնդիր մեր՝ շնորհեալ էիր վասն մեր զերկուս մարմառեայ արձանս, զայնս առաքեալ էին առ մեզ հաւատարիմք մեր։ Զորս և մեք ընկալեալ յոյժ սիրով՝ ունիմք մշտնջենաւոր յիշատակ առնել պատուականութեան ձեր, վասնորոյ և մեծաւ գոհունակութեամբ շնորհակալեալ՝ կարդացաք առ ձեզ զբերանալիր օրհնութիւնս, և ի մէջ Աստուածեան սրբոյ Օջաղիս աղօթեցաք առ բարձրեալն Աստուած յաղագս ազնիւ կենաց և խաղաղութեան և յաջողութեան ձեր։ Ուրեմն՝ նոյն ինքն՝ հանրատինամն Աստուած՝ օրհնեսցէ և կարողացուսցէ զՊատուելութիւն ձեր, և փոխարէն բարեշնորհութեանց ձերոց առ մեզ՝ պարգևեսցէ ձեզ և ձերայնոցն զբազմազեղ ողորմութիւնս և զթութիւնս իւր միշտ յաղթօղս և անպարտելիս արասցէ ընդդէմ թշնամեաց ձերոց, և պահեսցէ հանապազ ի փառապերճ ճոխութեան, յառաջադէմ իշխանութեան և ի բարեզուարճ կեցութեան։ Եւ որպէս օրհնեաց և մեծացոյց զԱդամ, զՆոյ, զԱբրահամ, զԻսահակ, զՅակոբ, զԴաւիթ և զայլ թագաւորս նոյնպէս և զձեզ՝ որ ունիք զսէր և զխնամոց քաղցրութիւն առ Օջաղս՝ առ մեզ՝ և առ ազգ մեր՝ օրհնեսցէ և մեծացուսցէ, և փառաց ի փառս բարձրացուսցէ, և լցուսցէ ամենայն բարեօք և զօլվաթով, և զիշխանութիւն և զմեծութիւն ձեր՝ յորդւոց յորդիս յազգէ յազգ պահելով՝ մշտնջենաւոր և յաւիտենական արասցէ մինչև ցկատարած աշխարհիս։ Եւ որպէս զուք փոյթ տարաք հոգալ զպիտոյս մեր՝ նոյն ինքն տուօղն բարեաց ևս լի արասցէ զամենայն պէտս ձեր ըստ իւրում մեծութեան։ Արդ՝ որովհետև զբարերարաց շնորհակալիլ պարտ է, վասնորոյ և մեք արժան համարեցաք այսու թղթով օրհնութեան շնորհակալ լինել զմեծութենէ ձերմէ։ Որով և խնդրեմք, զի զսէրդ և զխնամսդ և զդօստութիւնդ զոր ունիս առ սուրբ Աթոռս և առ մեզ՝ հաստատուն և աննուազ պահեսցես, և միշտ զբարին և զօգուտն սորա կամեսցիս և արասցես՝ որոց աղագաւ յարաժամ շնորհակալութեամբ աղօթող եմք լինելոց վասն բարւոք կենաց և բարօրութեան ձեր։ Իսկ և լուաք զգալն ձեր խաղաղութեամբ ի Թէհրանդ, առ որ և ուրախացաք մեծապէս որք և ասեմք թէ գալուստ ձեր ի բարին եղիցի. և ամենայն օգտակար աշխատութիւնք ձեր արդիւնաւոր լիցին ի խաղաղութիւն և ի շինութիւն աշխարհի՝ Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս, և յապրիլի ԺԵ ի սուրբ Էջմիածին։

ՃՁ. *Թուղթ ի Միաբանից առ Բայազիտեցին սակս անցեալ չփոթիցն որք գործեցան ընդ վայր։*

Զի ըստ առաքելոյն բանի՝ ոսոխն մեր սատանայ աննիրհ և անքուն շրջի հանապազ, և ամենակերպ հնարիւք ջանայ և խնդրէ թէ զո՞ ոք ի յընտրելոցն Աստուծոյ կլանիցէ. ուստի՝ մեք որք եմք օրէնսգէտք և ի ժողովրդոցդ ընտիր կարծեցեալ՝ եղաք կերակուր նորին, հետևելով կամացն, քանզի որսացեալ՝ ի նմանէ անկաք յորոգայթ նորին, և գլորեցաք անզգուշութեամբ. վասնզի յաղագս չնչին պատճառի և տարապարտուց վրդովեալ զմիտս մեր մեք մե-

զէն զաղմուկ չփոթից արկաք ի սուրբ Աթոռոջս և ընդ վայր և ի նանիր վիրաւորեալ զքաղցր և զմաքուր սիրտ խնամառատ տեառնս մերոյ մեծի և հօր բարերարի ցուցաք զանհնազանդութիւն, և այնու ոչ բաւականացեալ դիմեցաք յԵրևան առ խանն, և ի յապարանս նորա բողոք կալաք զսրբազանն զպատուական ծնողէս մերմէ, իսկ խանն տեսանելով զխելայարութիւն մեր՝ ի խաղաղութիւն համոզեաց զմեզ և մեք ևս մոռանալով զանպատեհ գործսն և ճանաչելով զյանցանս և զանվայել արարմունս մեր զղջացաք կարի յոյժ, և իբրև անառակ որդի դիմեցաք մեղայական կոչմամբ վերստին ի յոտս սրբազան քահանայապետիս մերոյ, և գտեալ ի գթառատ Տեառնէս մերմէ զաստուածարար զներումն և զթողութիւն մեծագոյն յանցանաց մերոց կամք այժմ ընդ հովանեաւ բազմապատիկ խնամոց մարդասիրութեանց սրբազան Տեառնս մերոյ խնամակալեալ։ Եւ այսպէս ի բաց վանեալ ի մէնջ և ի միաբանութենէս զամենաչարն սատանայ իւրով գործակցօք՝ ուրախացուցաք զԱստուած, և ընդ հաշտութեան մերոյ հաշտեցուցաք և զողորմութիւն նորին ընդ մեզ, և ուխտեցաք ես՝ միով մեծաւ հնազանդութեամբ և ջերմեռանդ որդիութեամբ ընդ ամենաքաղցր իշխանական գաւազանին սրբազան Տեառնս մերոյ, և նզովեցաք զխռովարարն ոգւոց մերոց և ի դրդմանէ նորին յառաջացեալ զգործս մեր, և զայս Թուղթ փութապէս օրհնեցելոցդ գրեցաք ի կալ ձեզ անվրդով և ի միով հանդարտութեամբ։ Արդ՝ ուրեմն խնդրեմք մեծաւ սիրով և պաղատանօք ի ձերդ աստուածպաշտութենէն զի ի լսելն ձեր զչփոթս աղմուկից մերոց՝ և ի կամ պատմելն ուրուք ձեզ աւելորդութեամբ՝ հաւատ չընծայեալ երկնաւոր խաղաղութեամբն խաղաղասջիք, և անվրդով և անխառն զձեզ և զսիրտ ձեր պահեալ ի հանդարտութեան կացջիք և դուք, և մի վերստին արծարծեալ զայնս զայրացուսջիք զքաղցր սիրտ սրբազան ծնողիս մերոյ, զոր մեք մերով խոնարհական մեղալիւ զիջուցաք։ Այսպէս գիտելով ձեր և կատարելով զգրուածս մեր՝ միջիք օրհնեալք յԱստուծոյ, և զօրացեալք ի նոյնն և շնորհք սրբոյ տեղւոյս Աստուածաբնակի եղիցի ընդ ձեզ միշտ։ Ողջ լերուք ի սէր և ի ցնծութիւն ստորակնքողացս Թղթոյս ի միամտութիւն սիրելեացդ մերոց Ամէն.

Գրեցաւ ի ՌՄԾԱ յապրիլի ... ի շնորհածաւալ և յերկնահանգէտ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ՃՁԱ. Թուղթ ի միաբանից առ պարոն Կնօրինն եւ առ պարոն Կաւալենցկին վասն Յովհաննէս վարդապետին:

Շնորհաւորեմք նախապէս զդուշաւոր ձերդ պատուականութեան ի քաղաքդ այդ, տացէ Տէր ընդ մտանելն ձեր ի կողմունսդ այդ զխաղաղութիւն երկրի, և զերջանկութիւն ժողովրդոց և զմեզ ևս արժանացուսցէ վայելել զնոյնն առաւելապէս։ Եւ ապա զայս ծանիցէ համառօտ ձերդ գերազանցութիւն։ Զի Յովհաննէս եպիսկոպոսդ այդ որ ինքնահալած փախտեալ անկաւ ի քաղաքդ այդ, է այր խռովարար բանսարկու, և վրդովիչ քաղաքի և ազգի, քանզի մոռացեալ զամենայն բարութիւնս սրբազան Տեառնս մերոյ, առ ոտն հարեալ զբազում երախտիս սորին չուեաց յայդ կոյս, որպէս զի և յայդր պղտորեսցէ զժողովուրդսն, և զպարզ սիրտս ձերդ գերազանցութեան իւրով խոտորեալ բարուքն։ Վկայեմք մեք ամենեքին, որ յորէ յօծմանէն սրբազան Տեառնս մերոյ մինչ ցարդ զբազում չարիս գործեաց դա արժանի պատժոց, և եցոյց յայտնի և ի ծածուկ զպէսպէս նենգագործութիւնս, բայց զոչինչ պատկանաւոր տրիտուր ընկալաւ ի գթաշատ Տեառնէս մերմէ, եթէ ոչ զսէր և զքաղցրութիւն, և ի վերայ այնքան չարութեանց կամեցաւ և զաթոռակալ Սիմէօն արքեպիսկոպոսն ի ճանապարհին Ղարսայ սպանանել տալ, խոստացեալ զքառասուն թուման սպանողացն, բայց նոցա ոչ հնազանդեալ չար խորհրդոց դորին՝ եկեալ պատմեցին սրբազան Տեառնս մերոյ առաջի մեր ամենեցուն և մեք լուեալ ի բերանոյ ասողացն, կնքեցաք և գրով ետուք վկայութիւն սրբազան Տեառնս մերոյ, իսկ Տէրս մեր գթաշատ հայրաբար ներեաց մեծագոյն յանցանաց դորին, և զկնքեալ վկայական մեր ևս ինքեան շնորհեաց։ Եւ մինչ Յովհաննէս վարդապետդ այդ եաես զայսչափ և զայսքան

խնամարկութիւնս և զճշմարիտ հայրութիւնս ի սրբազան ծնողէս մերմէ, ուխտեաց և երդմամբ երդուեալ անուամբ բարձրելոյն, և սուրբ Գեղարդեամբ նորին և սրբոց մասամբքն, կալ այնուհետև ի հնազանդս Թեան և դադարել ի խռովելոյ զժողովուրդսն, բայց փոխանակ այնըր՝ դալդ չարիս գործեաց փախստեալ անկանելով յայդր ընդդէմ ամենայն իրաւանց, ուստի որպէս յայսմհետէ ատելի է մեզ և միաբանութեան մերոյ ինքն և խոտորեալ գործքն իւր, նոյնպէս, և ձերդ գերաղանցութեան առաջի՝ ատելի երևեսցի ինքն և ունայնախօսութիւնք իւր, և զոր ինչ բան խօսեսցի ի դիմաց մերոց իբրու ի մէնջ առաքեցեալ և կամ ցուցանելով զմեզ խորհրդակից ինքեան, զհաւատս չընծայեալ, ծանիջիք զդա այր ոչ միայն խռովարար, այլ և երդմնազանց: Զայս չափս գիտացեալ ձեր, ողջ լերուք զօրութեամբ կենսատու սուրբ խաչին Քրիստոսի, ի պարծանս սուրբ հաւատոյս մերոյ, և ի շինութիւն եկեղեցեացն Աստուծոյ ամէն:

Գրեցաւ ի յապրիլի ... 1802 ի յերկնահանգէտ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին, ի դաշտս Արարատեան:

ՃՁԲ. *Թուղթ առ Կնօրլինի Թարգման Պետըր Գրիգորիչն, ի շնորհաւորութիւն գալստեանն, եւ յանձնարարութիւն վասն վարդապետաց մերոց:*

Որում և ծանուցումն լիցի: Զի նարդենիս իմացեալ մեր զուրախաբեր համբաւ խաղաղութեամբ գալստեան զերազանցազունեդ Գառլ Ֆէօդրիչ բազմայաղթ կողմնակալին, և ձերդ պատուականութեան ի Թիֆլիզ քաղաք, յիրաւի մեծ իմն բերկրութիւն ընծայեցաւ բազմահոգ սրտի մերումս: Վասն որոյ և ասեմք՝ շնորհաւոր և բարի եղիցի գալուստ ձեր, և ամենայն օգտակար գործք և աշխատութիւնք ձեր զոր առնելոց էք՝ արդիւնաւոր լիցին ի խաղաղութիւն և ի շինութիւն հաւատացեալ ժողովրդոց, ի փառս Քրիստոսի. և ձեզ զործունէիցդ առաւելապէս պարգևեսցին վարձք բարեաց առ ի նմանէ: Այլ հոգեոր որդիքն մեր՝ Կարապետ և Աբրահամ շնորհափայլ արքեպիսկոպոսքն յատկապէս գրեալ էին մեզ զազնուականութիւն քոյ և զբարեբարոյութիւն, և զունելդ առ սուրբ Աթոռս և առ մեզ զջերմեռանդ սէր և զկատարեալ հաւատարմութիւն, որովք ես կրկնակի ուրախացեալ մեր, շնորհակալ եղաք զպատուականութենէ քումմէ, և օրհնեցաք զքեզ լիագոյն օրհնութեամբ: Զոր Տէր օրհնեսցէ և զօրացուսցէ, փրկեսցէ յամենայն վտանգից հոգւոյ և մարմնոյ, և պահեսցէ ի խնամս իւր, և զամենայն իրս քոյ առ ի բարին յաջողեսցէ: Արդ մինչ մխիթարութիւն մատուցաք մեզ բարի համբաւով գալստեան ձեր, վասնորոյ պարտ և պատշաճ համարել գրեցաք զթուղթս շնորհաւորութեան առ նորին գերազանցութիւն, զոր և ահա յղեցաք: Ընդորում զայս օրհնաձիր թուղթ ես առ պատուականութիւնդ գրեալ՝ խնդրեմք, զի ըստ կատարեալ սիրոյդ առ մեզ ձեռնտու և օժանդակ լիցիս վերոյիշեալ Կարապետ և Աբրահամ արքեպիսկոպոսացն մերոց, և որպէս մեք խնդրեալ եմք, սիրելիդ ես խօսք անցուսցես առ նորին գերազանցութիւն, զի թղթով իւրով անյապաղ ուղեորեսցէ զնոսա գնալ ի սպաս ինքնակալ կայսեր, և ծանուցանելով զամենայն ցաւս և զվիշտս մեր խնդրել ի նորին կայսերական մեծութենէն՝ զօգնութիւն և զխնամութիւն մեզ ի զուր բամբասելոցս: Որովք մնալոց եմք պարտական աղօթելոյ առաջի Քրիստոսաէջ սրբոյ տեղւոյս վասն երկարութեան հասարակաօգուտ կենսաց և ձերդ պատուականութեան: Իսկ զայլ որպէսն մեր աստէն ոչ երկարելով թողումք ի թղթոյ նորին գերազանցութեան իմանալ Ողջ լեր ի Տէր:

Գրեցաւ յամի Տեառն 1802 և յապրիլի... ի սուրբ Էջմիածին:

ՃՁԳ. *Թուղթ ի Հաշտարխան առ աղայ Ցակովբոսն Աղաբաբեան, ծանուցումն զտեղւոյս անցից:*

Եւ ընդ ամենառատ օրհնութեանս Աստուածայնոյ՝ գիտութիւն լիցի ընտիր սիրելւոյդ մերոյ՝ և օգտախոհ որդւոյդ սրբոյ Աթո-

ռոյս Էջմիածնի։ Զի մինչ ըստ յաջողելոյ շնորհի ողորմութեան Աստուծոյ առ մեզ, կոչեցեալ եղաք յ'յս բարձր աստիճան հայրապետութեան սրբոյ Աթոռոյս և օրհնեալ Ազգիս Հայոց՝ ընդունելով ի գլուխս մեր զօծումն շնորհաբաշխ սուրբ Միւռոնին ի ձեռն հասարակական համահաճութեան, թէպէտ չկարացաք գրել առ սիրելիդ յատկապէս զթուղթ նախընծայ օրհնութեան, և ի պատճառս անծանօթ գոլոյն մեր յազնուոյդ, և մանաւանդ սակս յոգնահոլլ հոգոց և զբաղանաց ծանրաբեռնելոց ի վերայ մեր, սակայն քանիցս անգամ զօրհնամատոյց կոնդակս գրեցաք ի հասարակութեան ժողովրդոց աստուածախնամ քաղաքիդ, որովք ի ժառանգեցուցանելն մեր ձեզ զհոգեպարար շնորհս սրբոյ Աթոռոյս՝ և զօրհնութիւնս մեր՝ ծանուցաք և զորպէսն այսր անցից մերոց։

Եւ մինչ ակն ունէաք ընդունիլ ի ձէնջ, զդիւրութիւն և զմխիթարութիւն, և զկարեւոր օժանդակութիւն միայնութեանս մերում առ հոգաբարձութիւն բազմահոգ մեծի Տանս սըրբոյ, այլ ընդդէմ ակնկալութեան մերոյ՝ փոխանակ սիրոյ և խաղաղութեան լրոյ՝ զգայթակղութեան և զանմիաբանութեան և զերկպառակութեան համբաւս լուաք, որով անտանելի ցաւ և տրտմութիւն եղև մեզ։ Բայց սիրելի, գործ խոհեմին է, նախապէս լինել զառնելեացն՝ իւրաքանչիւր մարդ զոր ինչ խորհի առնել, պարտի զվախճանն ես նկատել, թէ առ ինչ ունի բերել, յօգուտ, թէ վնաս։ Այդ ներհակութիւն և աղմուկ չփոթիցդ զոր Եփրեմ վարդապետն յառաջադրէ ձեզ առնել ընդդէմ մեր, ոչ զայլ ինչ ունի յառաջ բերել, եթէ ոչ զաւերումն և զկործանումն լուսածին մօրս ձերոյ սրբոյ Աթոռոյս, զմշտնջենաւոր խայտառակութիւն Ազգիս ի մէջ այլակրօնից և զմեծագոյն խղճահարութիւն ձեզ յատկապէս։

Դիցուք թէ Եփրեմ վարդապետն շարժեալ ի նախանձուէ ատելութեան՝ առ մեզ թշնամութիւն առնէ, և անսալով ունայնախօսութեանց Դանիէլ վարդապետին, վատահամբաւէ զմեզ զանազան զրպարտութեամբք, բայց դուք պարտիք իրաւասիրութիւն գործածել, ճշմարտութեան հետևող լինիլ, զստութիւն ի բաց մերժել։ Նա այնպէս հռչակէ զմէնջ, իբր թէ մեք թարց հաճութեան աթոռայնոց, և Ազգին ակամայ և բռնութեամբ նստեալ իցեմք յայս Աթոռ, որ քաւ լիցի. այլ մեք ի բիւրաւոր անձանց զմահուէրս և զթուղթս ունիմք, և ի զանազան աշխարհս բնակեալ Ազգիս Հայոց զհաճութիւնսն ընկալեալ եմք, և այնոքիւք առեալ զայս պատիւ, որպէս ահա զորքան ինչ մահուէրս և թուղթս ունիմք հանդերձ յանուն մեր տուեալ Օսմանցւոց թագաւորի ֆէրմանի՝ և Պարսից Շահի ռաղմի օրինակօքն յղեալ եմք հասանիլ առ ձեզ ձեռամբ Կարապետ և Աբրահամ արքեպիսկոպոսացն, բայց զինչ օգուտ՝ որ առ տարաբաղդութիւն մերոյ նոքա արգիլեցեալք ի Թիֆլիզ քաղաքի ոչ կարողանան անցանել յայդկոյս։ Տացէ Տէր զի նոքա արձակեցեալք անդուստ, եկեսցեն առ ձեզ, և դուք տեսջիք զ'ի ձեռս նոցա եղեալ զրեանսն մեր, և ըստ այնմ իրաւունս տաջիք մեզ։ Այլ արդ՝ պատշաճ համարելով մեր զօրհնամատոյց կոնդակ մի գրեցաք ի վերայ հասարակութեան ժողովրդոց աստուածախնամ քաղաքիդ, որով և երկարապէս ծանուցաք զամենայն հին և նոր անցսն մեր, զորոց աստանօր ոչ երկարելով առ ի չտալ ձանձրոյթ լսելեաց սիրելւոյդ, թողումք ի կոնդակէն իմանալ. իսկ այսու թղթով զայս ունիմ գրել ազնուոյդ, զի այս սուրբ Աթոռս մեր՝ որ մինչև ցայսօր ի շինութեան մնացեալ է՝ այն է ի պատճառս անփոփոխելի գոլոյն հայրապետութեան, և միաբան լինելոյ Ազգին ընդ սմա, այժմ Եփրեմ վարդապետն կամի ընդ փոփոխութեամբ արկանել զհայրապետութիւն Ազգիս, որով և աւերել զսուրբ Աթոռս։

Հոգելոյս նախնիքն մեր հոգւով չափ զուն գործէին, զանձինս իւրեանց ի մահ մատնէին՝ առ ի զպակասաւորութիւն ինչ չբերել առ Աթոռս, այլ արդ՝ թէ նա ինքն Եփրեմ վարդապետն և թէ Դանիէլ վարդապետն համաձայնեալ միմեանց՝ մինն յայդր նստելով, և միւսն ի Պալաղիտ, անձանձիր թարց խղճմտանաց աշխատին՝ առ ի աւերել և քայքայել զայս Լուսաւորչաշէն սուրբ Գահս, սուտ գրութիւնս առնեն աստ՝ և զմիաբանսն մեր խոտորեցուցանեն ի թիւր կամս իւրեանց, որոց և ըզխոստմունս խոստանալով՝ ցրուեալ յառաջադրեն և այսպէս կամին շիջուցանել ամենեւիմբ զճրագն սրբոյ Աթոռոյս, և ի Պրտստան զնոր աթոռ հաստատել։ Բայց թէև զայն չառնիցեն,

այլ միայն ջանասցին՝ զի փոփոխութիւն լիցի հայրապետութեանս, այնու ևս երբ և իցէ սիրելոց է Աթոռս, քանզի այս սուրբ Աթոռս է ի մէջ երից տէրութեանց, ռուսացդ, և օսմանցւոց և պարսից, այժմ. եթէ մի տէրութիւն փոխեսցէ զհայրապետութիւնս, պարսիկք ևս ուսեալք, յաղագս կաշառաց և հարկապահանջութեանց յամիսն միանգամ. ունին փոփոխել, և այնու սուրբ Աթոռս, ընդ ծանր պարտուք անկանելով՝ աւերելոց է որպէս երկարապէս դրեցաք ի կոնդակոջն. և տէրութիւնդ այդ որ առանց վերահասութեան կամի փոփոխութիւն առնել մեզ, հաւատալով բանից թշնամեաց մերոց, և այնու կարծէ զբարիս առնել Աթոռոյս և Ազգիս, աւերութեան լինի պատճառ յայնժամ։ Մեք զմեր հոգսն ոչ հոգամք, զի մահկանացու գոլով մեր՝ թէ կանուխ և թէ անագան վճարելոց եմք զպարտս մեր, այլ վասն այն ցաւիմք և վարանիմք, որ այս մեծանուն Տունս պատճառաւ միոյ մարդոյ աւերի. ուրեմն խնդրեմք ի սիրելւոյդ, զի զբանս յաչաղկոտաց իսպառ ընդունայն համարելով զառաջին սէրն քո որ առ սուրբ Աթոռս և առ գահակալս սորին՝ նորոգեսցես, և քահանայից և ժողովրդոց ևս ի դոյն յորդորող լիցիս. և հասարակութեամբ ծանուցանելով զաղէտսն մեր՝ խնդրեսջիք զթուղթ ողորմութեան վասն ի չինութեան հաստատութեան մնալոյ սրբոյ Աթոռոյս, և անփոփոխելի հայրապետութեանս, և սիրելիդ յատկապէս քոյինդ սիրանիշ գրով զմխիթարութիւն մեր մխիթարել կամեսցիս, որովք ընկալցիս զվարձս բարիս Աստուծոյ, զշնորհս ի սրբոյ Աթոռոյս՝ և զօրհնութիւնս ի մէնջ։ Իսկ զերկար անցսն մեր, և զայլ որպէսն ի կոնդակէն իմանալով՝ ողջ լեր ի Տէր։

Գրեցաւ յամի Տեառն 1802 և յապրիլի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՃՁԳ. *Թուղթ ի Հաշտարխան՝ առ աղայ Յակոբոսն Աղաբաբեան, ծանուցումն զտեղւոյս անցից։*

Եւ ընդ շնորհապարգև օրհնութեան նամակիս գիտութիւն լիցի ընտիր սիրելեացդ մերոց և օղտախոհ որդւոցդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի յորմէ հետէ ըստ յաջողելոյ շնորհաց և ողորմութեան աստուծոյ առ մեզ՝ կոչեցեալ եղաք ի կարգ և յԱթոռ կաթուղիկոսութեան օրհնեալ ազգիս հայոց քանիցս դրեցաք զօրհնամատոյց կոնդակս ի վերայ տիրախնամ. քաղաքիդ, որովք ի մասնաւորելն մեր զձեզ ըղբարեպաշտօն օրհնեալ ժողովուրդսդ ի հոգեպարար շնորհացդ սրբոյ Աթոռոյս, և յանդրանիկ օրհնութեանց մերոց՝ ծանուսցուք ստուգութեամբ զորպիսութիւն այսր անցից մերոց, զոր և դուք իմացաք ի հարկէ։ Արդ և ըստ որում. խորհրդական անդամք էք սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց, վասն որոյ ի կարգելն մեր հոգևորական գլուխ ի ձեռն հասարակականի համաձայնութեան, արժան էր և ձեզ ուրախանալ հոգևորապէս՝ իբրև անդամոց ի պսակաւորութիւն կատարման գլխոյ, և զուրախութիւն ձեր յայտնի առնել մեզ ի ձեռն սիրանիշ թղթոց։ Բայց առ տարաբաղդութեան մերոյ վերջացեալ երևեցայք ի հանդամանաց սիրոյ։ Եւ սակայն՝ հարազատ որդիք էք սրբոյ Աթոռոյս, և տեսանէք ահա՝ թէ այս որչափ անտանելի վիշաք և ձախորդութիւնք և անպատուութիւնք են, որք հասանեն սմա, և այլն. ոչ ի թշնամեաց և ոչ յօտարաց, այլ յանուանեալ որդւոց իւրոց, այս ահա լման մէկ տարի եղև, որ սուրբ տունս մեր, իբրև ի ծովու ծփայ զանազան ալեօք փորձութեանց, և մեք ի զուր անկեալ ի բերանս յաչաղկոտաց՝ բամբասիմք ստայօդ բարուրանօք, և ընդունիմք զվիշտս ի յազգէ, ի սուտ եղբարց, ի հեթանոսաց, և յայլոց զորս թուէ սրբազան առաքեալն։ Սիրելիքդ եթէ վասն մեր սրտացաւութիւն ոչ առնէք, պարտիք ցաւիլ վասն լուսածին մօրս ձերոյ, սրբոյ Աթոռոյս, որ ահա մերձ է գլխովին կործանիլ. զի ողորմութեամբն Աստուծոյ գտանիցեալ էք ի կայսերական երկրոջդ և հարազատ որդիք և տէրունի ժողովուրդք էք սրբոյ Աթոռոյս և այոց չփոթութեանցս ծայրն ոչ յայլ ուստեքէ ծագեցաւ, եթէ ոչ այտի որպէս և գիտէք. Զառաջինն՝ Ամենողորմած մեծութիւնդ Աստուածապսակեալ օգոստափառ և ինքնակալ կայսրն հաստատեաց զմեզ յայս աթոռ. ըստ որում. ողորմութիւն առնելով մեզ՝ հրաման առաքեաց ի Պօլիս, ըղֆէրմանն մեր հանել ետ ի թագաւորէն օսմանցւոց. յետոյ՝ Եփրեմ. վարդապետն լսելով զբարա-

նութեանց Դանիէլ վարդապետին, պղտորեաց զմիտս նորին մեծութեան, պէտք էր որ սիրելիքդ հետեւղ չլինէիք՝ այլ յօգուտն սրբոյ Աթոռոյս նայելով՝ ծանուցանէիք հասարակութեամբ նորին բարձրութեան զուգզութիւն անցիցս և զառ ի փոփոխութենէ հայրապետութեան լինելի վնասսն, և զմեզ ազատէիք ի բերանոց յաչազկոտաց։ Բայց թող զկարեւոր օրհնութեամբ ձեռնտու չլինիլն ձեր մեզ. դոնեայ զուգնաքեայ բանիւք նպաստ մատուցանել վշտաւորացս ոչ կամեցայք։ Դիցուք թէ՝ առ. մեզ ոչ ունիք զթուղթ սիրոյ, բայց պարտ էիք. յայս սուրբ Աթոռս խնայել, և փոյթ կալնուլ օգնելոյ սմա՝ յայս նեղ և դառն ժամանակիս, ըստորում. յաւուր նեղութեան փորձի բարեկամ։ Իսկ զոր ինչ ստոյգ անցքն է մեր, թէպէտ յառ.աջմէ գրեալ եմք, բայց արդ ևս կամիմք գրել սիրելեացդ, որպէս զի լաւապէս իմացեալ և յԱստուածային կոյս կողմանէ համարեալ զկոչումն մեր յայս պատիւ, ջերմասջիք ի սէր և ի հարազատութիւն սրբոյ Աթոռոյս։ Քանզի զկնի փոխելոյն յաստեացս Տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին մինչ դնացաք մեք ի մեծն Պոլիս սակս ընտրութեան կաթուղիկոսի մեծամեծ ամիրայքն զառաջինն մանաւանդ զմէնջ պատչաճ զատէին և զմեզ յորդորէին լինել կաթուղիկոս. զի կամէին՝ որ Դանիէլ վարդապետն մնասցէ ի պատրիարգութեան։ Յետոյ կամելով առաքել զնա աստ՝ զմեզ կացուցին պատրիարգ։ Եւ ապա իբրև. նա՝ թէ իւր խելացն, և թէ ի թելադրութենէն Աստուծոյ գնաց յաքսորս, և Յովսէփ սրբազանն անուանակոչեցաւ կաթուղիկոս, մեք ևս ի պատճառս զանազան չփոթիցն թողեալ զպատրիարգութիւն և առեալ զֆէրմանն նորա՝ դարձաք ի սուրբ Աթոռս և ի ճանապարհին ամենայն քաղաքս ուր ու.րեք որ հանդիպեցաք մերազանց, ամենեքեան գրեթէ մեզ վայելուչ համարէին զայս պատիւ, մինչև այլազգիք ևս՝ ապա մինչ Յովսէփ կաթուղիկոսն եկեալ ի Թիֆլիզ վախճանեցաւ, և Դանիէլ վարդապետն մնաց ի Թօխաթ, միաբանք և երկրացիքն մեր, ես և այլ և այլ հեռաւոր և մերձաւոր կողմանց բնակիչք՝ սկսան գրովք և բանիւք զմեզ յորդորել. յայնմ. միջոցի Թիֆլիզու բնակիչքն ես բազմակնիք մահսէրաւ ծանուցին զբանիւ կտակարարութիւն Յովսէփայ կաթու ղիկոսին վասն մեր և խնդրեցին ի միաբանից և յերկրացւոց մերոց փութով զմեզ յայս աստիճան կացուցանել. որոց և իշխօղն մեր համաձայնեալ սկսաւ բռնադատել զմեզ։ Ուստի և մեք իմանալով՝ թէ ձայն բազմաց է ձայն Աստուծոյ և մանաւանդ վստահանալով ի ջերմ. սէրն որ առ իս իշխանացն Պոլսոյ, յանձն առաք զայս ծանրութիւն տիրականի լծոյս, ապաւինելով նախ յողորմութիւն Աստուծոյ, և ապա ի կարեւոր օժանդակութիւնս օրհնեցելոյ Ազգիդ։ Եւ այսպէս ընկալեալ ի գլուխս մեր զօծումն սրբալոյս մեռոնին յանցեալ թուոյ յապրիլի ԻԸ որ ահա լման մէկ տարին էանց, բազմակնիք մահսէր առաքեցաք առ ընդհանուր ազգ մեր ձեռամբ Կարապետ արհիեպիսկոպոսին ի ծանուցումն անցիցս։ Ապա թէ սիրելի եղբայրն մեր Յովհաննէս պատրիարգն Պոլսոյ և թէ օրհնեալ ամիրայքն և ժողովուրդք բարեհաճեալ ընդ ընտրութիւն մեր՝ զմահսէրն մեր կնքեալ էին ու.րախութեամբ սրտի, զոր և ընդ ֆէրմանին մեր յանձնելով մահսէրատարին՝ յոյժ յարգանօք դարձուցեալ էին զնա առ մեզ. և իւրաքանչիւրքն ևս դրեալ էին զյատուկ յատուկ թուղթս շնորհաւորութեան։ Յետոյ Շահն պարսից ևս իմացեալ զայս անցքս մեր՝ շնորհեաց մեզ զքանիս ռաղամս ի հաստատութիւն հայրապետութեան մերոյ։ Զկնի անցիցս անցելոց յորժամ. լուաք թէ Եփրեմ վարդապետն պղտորեալ է զսիրտս աստուածապսակեալ օգոստափառ և ինքնակալ կայսերն, վասնորոյ հարկ համարեալ առաքեցաք ի դուռն նորին մեծութեան զյիշեալ Կարապետ և զԱբրահամ. արհիեպիսկոպոսունս հանդերձ Օսմանցւոց թագաւորի և Պարսից Շահի մեզ շնորհեալ ֆէրմանի և ռաղամի օրինակօքըն, և մեծին Պոլսոյ պատրիարգի և իշխանաց շնորհաւորական թղթովք և համահաճական մահսէրաւ մերով, ես և այլ և այլ քաղաքաց առաջնորդաց, երևելի անձանց և ժողովրդոց թղթովք և մահսէրօք, ես և թուրքաց փաշայից և խանից՝ և այլ մեծամեծաց գրեամբք։ Բայց նոքա դեռ ի Թիֆլիզ արգելեալք գոլով, ոչ կարեն գալ յայգկոյս, և ծանուցանել զցաւսն մեր։ Ապա ազդ եղեալ մեզ՝ եթէ մեծութիւն աստուածապսակեալ օգոստափառ և ինքնակալ կայսերն հրաման առաքեալ է ի Պոլիս առ դեսպան և նա հանեալ

է զֆէրման յանուն Դանիէլ վարդապետին, վասնորոյ միաբանք և երկրացիք միախորհուրդ լեալք բազմակնիք ստորագրութեամբ զերիս մահուէրս գրեցին, զմինն առ. Դանիէլ վարդապետն, զի ձեռս բարձցէ ի սնոտի խորհրդոցն իւրոց, ապա թէ ոչ՝ մերժեալ լիցի յորդիութենէ որբոյ Աթոռոյս. Զերկրորդն առ. Կարնեցիս, զի ի բանս և ի գործս Դանիէլին հաղորդ չգտանիցին։ Զերրորդն առ. ընդհանուր Ազգ մեր, որով զվերջին կամս իւրեանց յայտնեցին թէ զոր միանգամ ընտրեցաք և օծաք բնաւին, ոչ փոփոխեմք, և որչափ կենդանի է՝ այլում կաթուղիկոսի պէտս չունիմք, ոչ՝ Դանիէլին և ոչ այլոյ ուրուք։ Ըստ այսմ մտաց մահուէր մի ես յայդ երկրաւորդ ձեր գրեցին, թերևս տեսեալ իցէք զայն՝ և կամ տեսանելոց էք։ Մեք ևս գրեցաք առ բոլոր Ազգ մեր զերկու ինչ, կամ հանդարտել և կամ զճանապարհ ինչ ցուցանել մեզ, զի ըստ այնմ արասցուք։ Իսկ խանն մեր ևս զըրեաց արզ առ. Թագաւորն Օսմանցւոց, և զըթուղթս առ. գործակալսն նորա վասն մեր անփոփոխ մնալոյ։ Այսոքիկ գրեանք առաքեցան ի փետրուարի մէջ. ձեռամբ Ստեփաննոս արքեպիսկոպոսին և հաջի Իսմայիլ անուն ումն երևելի տաճկի, որք Աստուծով ցարդ հասեալ են ի Պօլիս։ Ցետոյ մինչ մեք գնացաք յԵրեւան առ. խանն ի շնորհաւորութիւն վասն Նաւռուզին, ի Կարնոյ փաշայէն մէկ սուրհանդակ, և ի Դանիէլ վարդապետէն ումն սևագլուխ եկին անդ՝ հանդերձ յանուն նորա հանեալ ֆէրմանի օրինակաւ։ Զոր ցուցեալ խանին, յայտնեցին զմնասակար և զապօրինաւոր զառաջագրութիւն իւրեանց, զոր և գլուխ հանելոյ ազագաւ՝ խոստացան իշխանաց և այլ մեծամեծաց զբազում և զանթուելի կաշառս. այլ խանն իբրև ետես թէ գլուխ գալոյ բան չէ, և յայտնապէս կամին նոքա աւիրել և կործանել զԱթոռս, արհամարհեաց զնոսա, զի ոչ կամի բնաւ՝ թէ սուրբ Աթոռս, որ հոգածութեամբ նախնեաց իւրոց պահպանեցեալն է ցարդ՝ այժմ յաւուրս իւր աւիրեսցի. վասնորոյ ունայն լետս դարձոյց զսուրհանդակն և զսևագլուխն։ Ապա խորհրդակցութեամբ միաբանից և երկրացւոց՝ վերստին արզ գրեաց առ. Թագաւորն Օսմանցւոց, թէ ես ինքագլուխ չկացուցի զսա կաթուղիկոս, այլ հաւանութեամբ և խնդրանօք Ազգին և աթոռակալացն, որպէս Ազգի ձեռնագիրքն կան ի ձեռս սորա, և քեզ ես ծանուցի, որ զֆէրմանն շնորհեցեր, որով և հրամայեալ ես անփոփոխելի մնալ մինչ ցմահն, և թէ Հայք՝ զօրէնս ունին զօծեալ հայրապետն չփոփոխել. և ես թէ երկիրս Շահինն է, և նա գիտէ ըզկաթուղիկոս լինելն սորա, և քանիցս զպարգևս և հաստատութեան ռազամս է տուեալ, ես առանց նորա հրամանին չկարեմ առնել ինչ, և այլն։ Վերջապէս խնդրեաց՝ զի վերստին զհաստատութեան ֆէրման շնորհեսցէ, և զԴանիէլինն խափանեսցէ։ Գրեաց և զթուղթըս առ. Ղարսայ և Կարնոյ փաշայսն, զի և նոքա համաձայն ինքեան արզ գրեսցեն, և մերազնէից ևս հրամայեսցեն զմահուէրս գրել առ. Պօլսեցիս վասն մեր անփոփոխ մնալոյ։ Զայս թուղթս յղեաց ձեռամբ Սահմատ Վէլի անուն ումն երևելի տաճկի. ընդ որում և մեք առաքեցաք զաթոռակալ Սիմէօն արքեպիսկոպոսն, գնալ մինչև ի Ղարս և ի Կարին, առ. ի հոգ տանել արզալիցն և մահուէրացն գրեցուցանելոյ և յղելոյ ի Պօլիս։ Ապա գրեաց խանն և զթուղթս առ. սահմանակալ Տէր Կնօրինն, առ. Կաւալինցկին՝ և առ. այլ մեծամեծսն Թիֆլիզու, վասն զԿարապետ և զԱբրահամ եպիսկոպոսսն արձակելոյ գալ ի դուռն աստուածապսակեալ օգոստափառ. կայսերն և ծանուցանելոյ զխնդիրս մեր, մեք ևս գրեցաք զթուղթս առ. Նոսա վասն այնր խնդրոյ, և ի դիմաց մեր և խանին՝ երկու երևելի անձինք առաքեցան, զի հոգ տարցի բանին։ Այժմ ես իմացեալ մեր թէ յիշեալ պատուելիքն եկեալ են ի Թիֆլիզ՝ վերստին թուղթ գրեցաք առ. Նոսա, և զնոյն խնդիր արարաք. յուսամք՝ թէ թողցեն զվարդապետսն մեր գալ յայդկոյս՝ և ծանուցանել զցաւս և զվիշտս մեր աստուածապսակեալ օգոստափառ. կայսերն, և հասարակութեան ձերում։ Իսկ այժմ զայս ունիմք գրել աստ, զի ահա Եփրեմ վարդապետն չարժեալ ի նախանձութենէ յայտնապէս ջանայ և աշխատի, առ. ի զԴանիէլն հակաթոռ. մեզ կացուցանել՝ բայց յայտնի է ձեզ՝ որ յերկպառակութեանց անտի ոչինչ բարի յառաջանայ, եթէ ոչ կործանումն և աւերումն սրբոյ Աթոռոյս, և մշտջենաւոր խայտառակութիւն Ազգիս՝ ի մէջ այլակրօնից։ Բայց դուք տեսէք ահա և լաւապէս ի միտ առէք՝ զի որ առ. երջանիկ նախնեօք ձերովք չէ եղեալ, ի ժամանակս ձեր

լինի. Լուսաւորչաշէն սուրբ Աթոռս Մայրս
ձեր քաղքալի, և միահեծան անփոփոխելի
հայրապետութիւն Ազգիս ընդ փոփոխութեամբ
անկեալ՝ յերկուս ծուէնս պատառի։ Իսկ արդ՝
մեք բաւականապէս կրեմք զվնասս և զնեղու-
թիւնս զի բերանք ամենեցուն թէ հեռաւոր
այլազգեաց՝ և թէ մերձաւորաց, առ մեզ բա-
ցեալք են առ ի կլանել, հոգեւոյս նախնի
հայրապետքն մեր որք յամենայն ուստեքէ
զարգիւնս ընդունէին՝ կարի դժուարութեամբ
կենցաղավարէին, իսկ այժմ մեք՝ որ ուստե-
քէ մէկ փարայ մուտս չունիմք, այլ զեւյն
ընդ միոյն տասնապատիկ առաւելեալ ունիմք,
դիարդ կարասցուք կառավարել զայս բազմա-
հոգ Տունս։ Մանաւանդ մեք վասն մեր ոչ
ցաւիմք, այլ վասն ապագային հոգամք, զի
ահա մահկանացու զոլով մեր՝ երբ և իցէ ու-
նիմք վճարել զպարտս մեր, բայց յապագայն
կաթուղիկոսք ոչ կարեն նստիլ աստ յաղագս
այսր պատճառի. քանզի Աթոռս այս է ընդ
հրամանօք երից տէրութեանց, ռուսացդ, Օս-
մանցւոց և Պարսից, ուրեմն եթէ մի տէրու-
թիւն կամիցի փոխել զհայրապետութիւն Ազ-
գիս, յանժամ. և պարսիկք՝ որք մինչև ցայժմ.
անփոփոխելի գիտեն զսա, ի տեսանելն մի-
անգամ. զփոփոխութիւն ինչ, սկսանին և ին-
քեանք յաղագս կաշառաց և այլ չնչին պատ-
ճառաց յամիսն միանգամ. փոխել հայրապետն
և զայլ ոք կացուցանել. և այսպէս բազում.
խալտառակութիւնք յառաջ գան՝ և մեծ դրա-
մավատնութիւնք, և վերջապէս աւերումն և
կործանումն լինի խղճալի Աթոռոյս։ Վասն-
րոյ պարտիմք յամենայն սրտէ հոգատար լի-
նիլ որ այս անտանելի և մեծամեծ վնասքս
չդիպեսցին մեզ։ Դիցուք թէ առմեզ ոչինչ փոյթ
կայնուք, այլ խնայեցէք ի սուրբ Աթոռս և
կամեսջիք օգնել սմա։ Մեք ահա դրեալ եմք
Ազգին՝ զհաւատարիմ արս յղել առ մեզ՝ որ
հասու լիցին ելումուտիցն մերոց։ Դուք ևս եթէ
կամիցիք, ի ձէնջ զքանիս խոհական անձինս
յղեսջիք աստ, զի հասու լինելով՝ իմասցին
թէ մեզ որչափ ինչ են յանձնեալ, և մեք որ-
քան ինչ եմք խարճեալ, ըստ այնմ. իրաւունս
տասջիք մեզ։ Ուրեմն՝ խնդրեմ. զի ղզաստա-
ցուսջիք զԵփրեմ. վարդապետն՝ որ ի հան-
դարտութեան մնասցէ, և չգտանիցի պատ-
ճառ աւերման սրբոյ Տանս, և ի ժողովրդոցդ
ևս եթէ ոմանք պղտորեալք իցեն, ծանուս-
ջիք այնպիսեացն զճշմարտութիւն և զմիտս
նոցա ուղղեսջիք, և զամենեսին ի սէր և ի
հաւատարմութիւն սրբոյ Աթոռոյս յորդորես-
ջիք, և խափանեսջիք զամենայն ապականա-
բար խորհուրդս։ Զի ժառանդորդս դոջիք վար-
ձուց մեծաց և երկնաւոր օրհնութեանցն զոր
հատուցանէ Տէր ուղղոց և ճշմարտասիրաց։ Որք
և եղիջիք օրհնեալք յԱստուծոյ, և վարձատ-
րեալք ի նմանէ, և շնորհք Քրիստոսաէջ սըր-
բոյ Աթոռոյս լիցի ընդ ձեզ յարաժամ։ Ամէն։

Դրեցաւ յամի Տեառն 1802 և յապրիլի
... ի սուրբ Էջմիածին։

ՃՁԵ. *Թուղթ ի Թիֆլիզ առ պարոն Կաւալենցկին ընդ Եփրեմ պօտուչիկին։*

Որում. և գիտութիւն լիցի, թէպէտ յա-
ռաջագոյն զհարկաւորսն դրեալ եմք ձերդ
գերազանցութեան, սակ այն զայսքանս ևս աս-
տէն ծանիցէ ընտիր սիրելիդ մեր։ Ազգ մեր
ի հեռաւոր երկիրս բնակեալ ընդ հեթանոսաց
իշխանութեամբ ցանկայր յիրաւի փրկութեան
աւուր իւրոյ, և ողորմութեամբն աստուծոյ
մերձեցեալ է այն օր այցելութեան իւրեանց,
և հանդերձեալ են ի բարութեան վայելել
զայն, մերձենալովն ձեր զօրօք ի կողմունսն
մեր, բայց զինչ օգուտ՝ որ ի լսելն թէ ար-
դարադատ տէրութիւնդ այդ բանիւք նախան-
ձոտաց՝ թարց վերահասութեան՝ ընդդէմ կա-
մաց իւրեանց կամի փոփոխել զանփոփոխելի
հայրապետութիւն ազգիս, ընդ նմին և զ ի
նախնեաց հետէ հաստատեալ զօրէնս մեր,
խորշին և դժուարանան և կան ի տարակու-
սի։ Քանզի՝ Դանիէլ վարդապետն մինչ ան-
օգնական լեալ յուստեքէ՝ չկարաց զստութիւն
իւր յառաջ տանել առաջի շահին և խանից և
այլ անօրինաց, ի տէրութեան յայդմիկ զտե-
ղի գտեալ, վրդովեաց զձեզ զամենեսին, և ի
ձեռն քաղցր և բարեհոչակ տէրութեան ձե-
րում, կամի խանգարել և զբարեկարգութիւն
ազգիս մերոյ ընդդիմանալով օրինաց մերոց
և կամաց ազգին, պատճառ զձեզ առեալ իւրոյ
փառամոլութեան, իբրու ինքն ոչ կամի, այլ
տէրութիւնդ այդ ստիպէ զինքն ի լինել կա-

թուղիկոս։ Իսկ եթէ ասասցեն նախանձոտք զմէնջ թէ՝ կաշառօք եմք նստեալ, և վասն կաշառաց և արծաթոյ օգնեն մեզ հեթանոսք, առ այդ յառաջագոյն բազմիցս գրեալ եմք և աստէն ոչ կրկնեմք, այլ թողումք։ Զի հաւատարիմ դեսպանն պարոն Կնօրինի Եֆրեմ, պատմեսցէ ձերդ զերազանցութեան, զոր ինչ ետեսն և զոր ինչ լուաւ։ Եւ՝ ես եթէ նոյն բանսարկուք պատճառեսցեն թէ՝ ազգն ոչ կամի և այլն. մեք ազգի զբարեհաճութիւնսն մահսէրօք ընդ Կարապետ և Աբրահամ եպիսկոպոսաց յղեալ եմք յայդր, կարէք հասու լինել, և զիրաւն և զսուտն գիտել, այժմ ես կրկին նոր ի նորոյ թէ զինչ գրեն մեզ օրհնեալ ազգն մեր յայլ և այլ տեղեաց, և զիարդ փափագին անուան մերոյ, յիշելով յեկեղեցւոջ, և բառնալով զանուն Դանիէլին, զայնս ես ոչ յիշատակեմ աստ. այլ թողում վերստին ի դեսպանէն ձերմէ գիտել, որ եկն ահա յայդր, որում ցուցաք զթուղթսն ազգին, և զօրինակն այնց ես յղեցաք ընդ զրոյս առ պատուականութիւն ձեր ի տեսանել և ի ստուգել զգրուածս մեր։ Վերջապէս խնդրեմք, զոր ինչ և առնիցէք, քննութեամբ լինիցի և ուղիղ դատողութեամբ, զի մի զրկանք և անիրաւութիւնք ներմուցեն ի յարդար վճիռս ձեր, և մեք յայնժամ զբազում քննութեամբ վճռեցեալն նորին կայսերական մեծութեան, սիրով ընդգրկեմք։ Իսկ վասն Յովհաննէս վարդապետի արարմանցն՝ միաբանք տեղւոյս բազմակնիք թղթով ծանուցին պարոն Կնօրինին և ձեզ, անտի ունիք գիտել. զոր ոչ երկարեմ։ Ողջ լերուք ի տէր և զօրացեալք շնորհիւ աստուածաէջ սուրբ տեղւոյս ի շինութիւն և ի պայծառութիւն սորին, Ամէն։

Գրեցաւ ի մայիսի 7. ի 1802 յաստուածակերտ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին որ ի դաշտս Արարատեան։

ՃՁԶ. Թուղթ ի Թիֆլիզ առ պարոն Կնօրինն ընդ Եֆրեմ պօռուչիկ դեսպանին։

Զի ոչ ոք հասեալ յառաւօտ՝ և ի ծաղման լուսոյ լուսայ մթանալ։ Արդ՝ առատ ողորմութիւն բարձրելոյն, և լայնածաւալ զըթութիւն մեծի ինքնակալին մերձեցեալ է առ մեզ և առ ողորմելի ազգս մեր, և իբրև զլոյս առ մեզ ծագեալ, և բազումք թէպէտ և ի բազում ամաց հետէ բաղձալին այսմ հանդիպել սակայն չեղեն արժանի, իսկ առ մերով ժամանակաւ լուսան զբաղձանս սրտից լցուցանել՝ լսելով զմերձիլն ձեր, և քրիստոսազօր զօրաց ձերոց, բայց զինչ օգուտ՝ որ լոյս զթութեան ձերոյ զոր պարգևել կամիք ազգիս մերոյ՝ ի մթութիւն և ի խաւար փոխարկի, և ազգ մեր՝ որք ցանկային ձերով օգնականութեամբ ազատանալ ի լծոյ, և բարեկարգութեամբք ճոխանալ, այսօր ի տարակուսի կան, լսելով թէ՝ զրաբանութեամբ նախանձոտաց և խռովարարաց՝ թարց իրաւանց և ստոյգ քննութեանց՝ իրաւախոհ և արդարադատ տէրութիւնդ այդ զանփոփոխելի հայրապետութիւն ազգիս, ընդ փոփոխութեամբ կամի արկանել։ Որ նոյն փոփոխութիւն թէ քանի չարեաց և անիրաւութեանց սրբոյ Տանս, և խռովութեան ազգի լինի պատճառ և քակտէ զօրէնս նախնեաց և խանգարէ զբարեկարգութիւն մեր՝ թողումք խոհական դատողութեանց ձերոց, և մանաւանդ յառաջագոյն պարզապէս գրեալ եմք զայսոսիկ զամենայն ձերդ զերազանցութեան։ Եւ զարմանք է, զի ստութիւնք Դանիէլ վարդապետին և զրաբանութիւնք նորին առաջի Շահին և խանից և այլ հեթանոսաց չեղեն ընդունելիք, իսկ ի յաստուածապսակեալ տէրութիւնդ այդմիկ, և առաջի ձերդ գերազանցութեան, և այլ մեծամեծաց՝ իբրև ճշմարիտ ընդունի և յարգի, և մերս իրաւացի բողոք և բան և թուղթ անարգի և սուտ համարեցեալ լինի։ Եթէ թշնամիք մեր պատճառեսցեն թէ վասն կաշառաց մերոց՝ հեթանոսք զմեզ սիրեն և օգնեն, առ այդ յառաջագոյն քանիցս գրեալ եմք, և այժմ թողում, զի հաւատարիմ դեսպանն ձեր պատմեսցէ զոր ինչ ետեսն, և զոր ինչ լուաւն, և որչափ վերահասու եղեն, ուստի՝ այլ ոչ երկարեմ։ Եւ ես եթէ նոյն նախանձոտք զազգն պատճառեսցեն, իբրև թէ՝ ազգն ոչ կամի Հայրապետ լինելն մեր, մեք զբոլոր ազգի համահաճութիւնսն ի ձեռն մահսերաց՝ առաքեալ եմք՝ ընդ Կարապետ և Աբրահամ եպիսկոպոսացն մերոց առ ձերդ գերազանցութիւն, անտի կարէք գիտել և զճշմարիտն ի ստոյն որոշել։

Եւ ահա կրկին՝ թէ զինչ գրեն մեզ ազգն, և որպէս փափագին զանուն մեր յիշատակել, զայն ամենայն ի պարոն դեսպանէն ձերմէ ունիք լսել, որում ցուցաք զգրեցեալ թուղթսն ազգին մեզ, և զօրինակսն ևս ընդ թղթոյս առ. ձերդ գերազանցութիւն յղեցաք՝ ի հաւաստութիւն գրեցելոցս։ Եւ մանաւանդ Շահն և խանն երկրիս՝ առաւել խնամեն զմեզ քան զառաջին հայրապետոն։ Եւ արդ այս է մեր խնդիր ի ձերդ Աստուածպաշտութենէն, զբանս մեր և զգանկատանս հասուցանել յունկս ամենաողորմ ինքնակալին և զեպիսկոպոսունսն թողուլ զիմել ի լոյս նորին կայսերական մեծութեան, և ի փառս խաչեցելոյն Քրիստոսի, զոր ինչ լուեալ էք վասն մեր՝ քննել և իրաւամբ զուղիղն և զսուտն իմանալ, և ապա վճիռ հատանել ընդունելով զճշմարիտն և խորշելով ի ստոյն, յայնժամ և մեք սիրով ընդգրկեմք զքննութեամբ վճռեցեալն։ Նաև վասն աշխարհաւեր Յովհաննէս վարդապետին միաբանքն գրեցին ձերդ գերազանցութեան. խնդրեմ հասու լինել և այնու գիտել զկացս նորին և զբնութիւն։ Յաւել յայսմանէ ցանկամք բարեացապարտ կենաց ձերոց, և մնամք վասն բաղձալի աւուրց ձերոց միշտ աղօթարար Դաւիթ կաթուղիկոս ամենայն Հայոց։

Ի մայիսի 7 ի 1802 ի սուրբ Աթոռս Էջմիածին, որ ի դաշտս Արարատեան։

ՃՁԸ. *Թուղթ ի միաբանից սրբոյ Աթոռոյս առ պարոն Գաւրիլ Ֆէօդրիչ Կնօրինն և առ պարոն Պետր Իվանիչ Կաւալենսկին:*

Թէպէտ վասն ամենայն զրպարտութեանց ոմանց խառնակիչ և խռովարար անձանց՝ ի զանազան ժամանակս դրեալ եմք բազմակընիք թղթովք աստուածապսակեալ մեծի կայսերն, և ձերդ գերազանցութեանց, և յայլ և այլ տեղիս, սակայն ոչինչ օգնութիւն անտի ժամանեցին մեզ։ Իսկ այժմ մինչև եկն հաւատարիմ դեսպան ձեր պարոն Եփրեմ Դաւիթեիչն, մեք և բոլոր միաբանք սրբոյ Գահիս գընացեալ առ նա ծանուցաք բերանօք զուղիղն նմա, և խնդրեցաք ի նմանէ՝ յայտնել ձերդ գերազանցութեանց զոր ինչ ետեսն, և զոր ինչ լուաւն ի մէնջ, և զնոյն բանս մեր՝ ահա բոլոր միաբանութեամբ՝ բազմակնիք ի գիր արձանացուցեալ ճշմարտութեամբ անխառն ի ստութեանց յայտնեմք առանց կեղծաւորութեան մերով կամաւ և յօժարութեամբ թարց բռնադատութեան ումեք՝ և առաջի ձերդ աստուածպաշտութեանց։ Նախ՝ եթէ արք քսուք, և խառնակիչք ազգի և քաղաքի, պատճառեն և թշնամութեամբ զրաբանեն զսրբազան և զԱստուածընտիր հայրապետէս մերմէ, իբրու թէ՝ արծաթով և կաշառօք լցէ նստեալ, և զարծաթեղէն զարդս եկեղեցւոյ խորտակեալ և վատնեալ և այլն։ Ըստ ամենայնի սուտ է, և անաստուածութիւն մեծ, քանզի՝ մեք ամենեքին այսու մերով կնքով վկայեմք առաջի ճշմարտին Աստուծոյ և առաջի ամենայն մարդկանց, և երդնումք յանուն բարձրելոյն, որ ամենայն զարդք սրբոյ Տանս և արծաթեղէնք կան ամբողջ յըսկզբանց անտի մինչ ցարդ, որպէս և հարազատ դեսպանն ձեր ետես աչօք զայնս և կարէ ընդ մեզ և ինքն վկայել հոգւով, իսկ եթէ սուտ լիցի այս մեր գրութիւն, մեք պատասխանատու լիցուք դատողին երկնի և երկրի, և մանաւանդ վկայեմք, որ նա ինքն Դանիէլ վարդապետն է վատնիչ ընչից և արդեանց սրբոյ Աթոռոյս, քակտիչ սորին և պղտորիչ ժողովրդոց, և ուր և եգիտ զինչս սրբոյ Աթոռոյս յափշտակեաց և փչացոյց, քանզի հաւասար տնօթոց աստ եղելոց զայլն անօթք և զարդք և դրամք Աթոռոյս ի Բայազիտ և ի Կարին, յաւանդ եդեալք զայնս ամենայն ի պէտս ախտի իւրոյ ոչնչացոյց, և այժմ զյանցանսն իւր թարց խղճի և իրաւանց ի վերայ հոգընտիր սրբազան Տեառնըս մերոյ կամի դնել, և զանարատ անունս նորին վատահամբաւել՝ այնու և զինքն արդարացուցանել։ Իսկ եթէ զազգն և զմիաբանութիւնս պատճառեսցեն նոյն թշնամիքն արդարութեան, իբրու ազգն և մեր միաբանութիւն ոչ կամի զհայրապետութիւն երջանիկ և պատուական գլխոյս մերոյ, զոր բազում յօժարութեամբ օծաք, և արժանաւորապէս ի վերայ բոլոր Տանս Հայոց և ի վերայ մեր պատրիարգ և կաթուղիկոս կացուցաք, և զոր ընդունիմք և յարգեմք, և եմք հնազանդ մահու չափ և այլն։ Առ այդ ևս՝ յղեալ եմք զրո-

լոր Ազգի մերոյ ղհամահաճական մահուէրաւ հանդերձ բազմակնիք մահուլրօք բոլոր միաբանութեանս և երկրացւոցս, ընդ Կարապետ և Աբրահամ եպիսկոպոսացն մերոց, անտի կարէք դիւրաւ իմանալ զճշմարիտն և զուղտն, և զբերանս անաստուածից կուրկնցուցանել։ Եւ եթէ այնոքիկ Թուղթք և բազմակնիք վկայութիւնք ոչ բաւականասցին ի լեղծանել ըզոնոաի բանս եղծանելեացն, ահա նորապէս առաքեմք առ ձերդ գերազանցութիւն, զնորոգ գրեցեալ Թուղթսն կարնեցւոց և զարսեցւոց, կարէք ի սոցունց գիտել զԱզգի մերոյ զիղձս և զփափագս, զորս ունի առ երջանիկ սրբազան հայրս մեր, և տեսէք զիարդ տենչան պատուական անուան ընտիր գլխոյս մերոյ, և որպիսի բաղձանօք յիշատակեն զփափագելի անուն մեծի վեհիս յեկեղեցիս իւրեանց՝ բառնալով զչարահամբաւ անուն չարասիրին ի սրբոց տաճարացն Աստուծոյ։ Եւ ի կողմանէ մերմէ զորս չաղփաղփեն արք նախանձոտք հետեւալք ի միաբանութենէս մերմէ, իբրու ոչ հաճիմք ընդ հայրապետութիւն սրբազան Տեառնս մերոյ, ահա ի յամօթ և ի նախատինս առեալեացն Աստուծոյ կնքեմք բազմութեամբ զհաստատաուն բանս մեր՝ անջրելի կնքով։ Եւ յայտնեմք այնու մեր ստորագրութեամբ զներքին և զվերջին զիտմունս մեր ամենեցուն։ Որ բաց ի սրբազան և ամենեբանեալ քահանայապետէս մերմէ — այլում. նորոգ և անձնամատոյց կաթուղիկոսի չունիմք պէտս, և ոչ կամիմք իսկ ճանաչել, և որպէս սիրով օծաք, պահեմք նոյնպէս, և սիրով, և միամք մինչև ցվախճան կենաց սորին, ի ներքոյ հոգեւոր հովութեան և իշխանական գաւազանի սորին։ Եւ բաց ի գրեցելոցս՝ եթէ այլ ոք զայլ ինչ քարոզեսցէ, թէև հրեշտակ երկնից իցէ նզովեալ եղիցի՝ և ևս՝ եթէ Յովհաննէս վարդապետդ այդ, որ ինքնահալած իբրև պատժապարտ ոք փախստեալ անկաւ յայդըր, և կամ. դորապիսի չարագրգիռ ոք ի միաբանութենէս մերմէ, և կամ յայլ տեղեաց՝ բանիւք և գրովք վրդովեսցեն զսիրտս ձեր և այլոց, ի բաց հեռացուցեալ զմաքուր լսելիս ձեր ի յաղտեղի բանից զարշելեացն այնոցիկ՝ առեալով առեսջիք իբրև քակտիչ սրբոյ Աթոռոյս, խառնակիչ ազգի և քաղաքաց, և եղծիչ օրինաց մերոց։ Իսկ զարարսն Յովհաննէս աշխարհաւէր սեագլխիդ գրեալ եմք յառաջ բազմութեամբ ձերդ գերազանցութեանց, անտի կարէք լիապէս գիտել, զխովարար և զխաբերայ բնութիւնս նորին, ընդ այլ եղեռնագործութեանցն, զորոց ոչ երկարեմք։ Եւ արդ՝ այս է մեր ամենեցուն խնդիր, և աղերս ի ձերդ աստուածպաշտութեանց, զայսոսիկ գրուածս մեր և զճշգրիտ բանս՝ յայտնել ամենաբարեպաշտ և արդարադատ ինքնակալին մեծի, կամ եպիսկոպոսացն մերոց, արձակելով այտի, և կամ. դուք ինքնին գրելով ի դուռն արքունի, և զիարդ կերպիւ և իցէ զցաւս մեր և զտառապանս, որ մի յառաջ ծանուցանել փութասջիք, խնամակալին Ազգին մերոյ և սրբոյ Աթոռոյս, որ եթէ այլ ևս յամեսցի, հանդերձեալ է սուրբ Տունս այս կործանիլ միաբանութեամբ հանդերձ աղդովին։ քանզի՝ մինչ չկարաց Դանիէլ վարդապետն այն ըզսատութիւնս իւր առաջի անօրինաց յառաջ տանել, ի ձեռն բարեհռչակ տէրութեան ձերոյ կամի զանփոփոխելի հայրապետութիւն Ազգիս մերոյ ընդ փոփոխութեամբ արկանել և սուղ անհնարին և խաւար թանձրամած ածել ի վերայ եկեղեցեաց մերոց, ի վերայ Ազգիս մերոյ և մեր։ Ուստի և մեք սակս քակտիչ Աթոռոյս լինելոյ նորա և խառնակիչ Ազգին և կործանիչ կարգաց և օրինաց մերոց, հատաք ի մէնջ զնա ինքն զԴանիէլն, և որոշեցաք ի միաբանութենէս մերմէ և իբրև անպիտան անգամ. արտաքս ընկեցաք յեկեղեցւոյս մերոյ։ Ծագեսցին ուրեմն ճառագայթք ողորմութեանց ձերոց ի վերայ տառապելոցս, որ ակնադէտ ժամէ ի ժամ. սպասեմք արդարութեանց և իրաւանց ձերոց; բոլոր Հայկազեան սերնդովք։ Ողջ լերուք պսակաւորիչք Ազգի մերոյ ի հաստատութիւն Աստուածաբնակ սուրբ Աթոռոյս, և ի պարծանս բոլոր խաչազգեցից, և ի մխիթարութիւն սրտից պաշտօնէիցս Աստուծոյ և աղօթաւորացս ձերոց ստորակնքողացս Թղթոյս։

Ի մայիսի 17 ի 1802 յԱստուածակերտ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին որ ի դաշտս Արարատեան։

ՃՂԸ. *Թուղթ առ պարոն Կնօրինն, ի պատասխանի ի մայիսի 4 գրեցեալ գրոյն։*

Ի մայիսի 4. թուղթ ձերդ գերազանցութեան ընկալաք մեծաւ ջերմեռանդութեամբ և լցեալ բաղձանօք յամսոյս 8 և դիտացեալ զբարի գրութիւն ձեր ի վերայ մեր, և զբանս մխիթարականս և զլուսաղրականս՝ շնորհակալութեամբ գոհունակեցաք զձէնջ և ի տրտմութեանց փարատեալ զսիրտս մեր առաջի Աստուածաէջ սուրբ տեղւոյս, և առաջի կողամուխ սուրբ գեղարդեան քրիստոսի և այլ սրբութեանց զաղօթս և զխնդրուածս առ երկնաւոր թագաւորն Աստուած մատուցաք. որպէս զի զծաղկեալ կայսերութիւն աստուածապսակեալ մեծի կայսերն, յաւիտեանս ժամանակաց անթառամելի արասցէ, և զբարեհոչակ խորհրդականսդ նորին կայսերական մեծութեան բարեբաղդ երջանկութեամբ, և երկար ամօք պահեսցէ, և զմեզ ես որ կամք յանմխիթար վայրս անկեալ, անօգնական յուսեքէ, արժանացուսցէ վայելման ջերմացուցիչ ճառագայթից, ձերդ խնամարկութեանց. այն զի՝ բաց յԱստուծոյ ի վերայ աշխարհի ի ցաւաշատ ժամանակիս՝ ապաւինեալ կամք ամենայն յուսով հանդերձ տառապեալ ժողովրդովք մերովք ի տիեզերահռչակ տէրութիւնդ այդ առ ի գտանել զհզօր օգնականութիւն բազմապատիկ վշտաց մերոց, որ առաւել քան զնախնիս մեր տանջիմք ընդ ծանր լծով անօրինաց։ Իսկ վասն այլ գրուածոց ձերոց և բանից, յուսամք՝ համեմատ բ.սրի կամաց և դիտմանց ձերոց տալ զկատարումն։ Ողջ լերուք ի պարծանս սուրբ հաւատոյս մեր, և ի շինութիւն տաճարացն Աստուածային, և մանաւանդ ի մխիթարութիւն ցաւալի սրտից մերոց, Ամէն։

Ի մայիսի 8 ի 1802 ի սուրբ Էջմիածին, որ ի դաշտս Արարատեան։

ՃՂԹ. *Թուղթ ի Թիֆլիզ առ պարոն Կաւալենցկին ի պատասխանի գրեցեալ թղթոյն:*

Ցորմէ ժամանեսցի փրկչականն ողջոյն՝ հանդերձ երկնաւոր օրհնութեամբ ի վերայ ընտիր բարեկամիդ մերոյ, և ճշմարիտ սիրելւոյդ ... բարեպաշտ և քրիստոսասէր խորհրդականիդ Աստուածապսակեալ մեծի կայսերն պարոն... մեծանուն նախարարիդ և գերապատիւ դուպեռնաթօռիդ և որոց ընդ ձեզ են ի տէր.. որում և գիտութիւն լիցի. զի ի մայիսի 4 գրեցեալ թուղթ մխիթարութեան ձերոյ և լուսադրութեան՝ բաղում. տենչանօք և բերկրական սրտիւ առընկալեալ ի մայիսի 9. օրհնեցաք զանգին կեանս ձերդ գերազանցութեան առաջի Աստուածային սուրբ տաճարիս և առաջի կողամուխ սուրբ գեղարդեանն Քրիստոսի և այլ սրբութեանցն, հանդերձ բազմապատիկ շնորհակալութեամբ և անբաւ գոհունակութեամբ։ Եւ ի բաց փարատեալ ի սրտից մերոց զխաւարամած տրտմութիւն, զգեցաք զկենդանութիւն և զզօրացուցիչ զուրախութիւն ձերով լուսադրական բանիւք։ Քանզի յայսմ. վշտալի ժամանակիս, և յանմխիթար վայրոջս՝ յորում. տանջիմք և նեղիմք բիւրակերպ տառապակրութեամբ ընդ լծով անօրինաց՝ միմիայն ի յերկինս Աստուած, և ի յերկրի զտիեզերահռչակ և լայնածաւալ քաղցր տէրութիւնդ այդ, և զձերդ գերազանցութիւն ունիմք մեզ ալցելու և պաշտպան և ի ձեռն հզօր օգնականութեան ձերոյ յուսամք հանդիպիլ ընդարձակութեան և բարեբաղդութեան հանդերձ բոլոր Արամեան սերնդովք։ Եւ զայն, զոր ի վաղուց հետէ ցանկայր ազգ մեր Ցաբեթեան տեսանել և բերկրիլ, յուսով եմք. որ փոխանակ այնոցիկ՝ մեք կշտապինդ վայելեսցուք տեսանելով զօր ալցելութեան և փրկութեան մերոյ եկեալ հասեալ առ մեզ։ Իսկ վասն այլ դրուածոց և բանից ձերոց՝ յուսամք զկատարումն տալ համեմատ կամաց ձերոց և ձեքդ դիտմանց։ Ողջ լերուք զօրութեամբ կենսատու սուրբ խաչին Քրիստոսի՝ ի պարծանս սուրբ հաւատոյս մերոյ, ի պայծառութիւն սրբոց եկեղեցեաց Քրիստոսի և մանաւանդ ի մխիթարութիւն վշտակիր սրտի մերոյ, Ամէն։

Ի մայիսի 10 ի 1802 ի սուրբ Էջմիածին, որ ի դաշտս Արարաաեան։

ՃԴ. *Թուղթ ի Թիֆլիզ առ պարոն Իվան Իվանիչն շնորհատրութիւն վասն գալստեանն, եւ յանձնարարութիւն վասըն վարդապետաց մերոց:*

Որում և գիտութիւն լիցի. զի թէպէտ դգալի աչօք չունիմք զպատուականութիւն ձեր տեսեալ, սակայն իմանալեաւ զվերադնուութեան ձերոյ զքարի զրութիւն առ սուրբ Աթոռս և առ մեզ, և մանաւանդ լուեալ ի բազմաց և գիտացեալ ի գրոյ և ի լրոյ, և յաւէտ ի Կարապետ և յԱբրահամ եպիսկոպոսացն մերոց՝ իբրաւացի փափագմամբ ըղձան սիրտք մեր ընդ ձեզ սիրով ճշմարտիւ կապակցիլ։ Այնզի՝ որպէս ջուր ցուրտ անձին ծարաւոյ, սոյպէս և համբաւ բարի զառնէ պատուականէ ախորժելիք են ոգւոյ։ Ուստի բարի համբաւ ախորժ անուան ձերոյ, և մաքրութիւն սրտի, և ստուգութիւն ի բարեկամութեան, և առաւել մարդասիրութիւն զովանի բարուց ձերոց՝ յառաջարշէ զմեզ՝ մատչիլ առ ձերդ պատուականութիւն այսու օրհնալիր և սիրալիր նամակաւ. Վասնորոյ՝ բերկրական սրտիւ շնորհաւորեմք զմուտդ ձեր յաստուածախնամ քաղաքիդ ի Թիֆլիզ խաղաղութեամբ և ողջութեամբ, և հայցեմք ի բարձրելոյն առաջի Քրիստոսաէջ սուրբ տաճարիս՝ պահել զքաղցրալի կեանս ձեր ընդ երկար ամօք ցնծուն սրտիւ և բարձրագոյն փառօք, և յաջս աստուածապըսակեալ մեծի կայսերն և բոլոր անուանի իշխանապետացն նորին քաղցր և հաճելի երեւեցուսցէ և երկնաւոր օրհնութեամբ իւրով օրհնեսցէ պերճացուցանելով զձեզ հոգեկանօք և մարմնականօք։ Եւ ապա՝ մաղթեմք ի ձերմէ աստուածպաշտութենէ, զի ըհաւատարմական բարեկամութիւն ձեր, և զ՚ի յամենայնի հզօր ձեռնտուութիւն, և զճշմարիտ սիրելութիւն ի սրբոյ Աթոռոյս և ի մէնջ անպակաս առնել, և աննուազելի ունել, անփոփոխելի ի ձեզ պահել։ Եւ որպէս մինչ ցարդ բարեպաշտութեամբ ձերով մխիթարեալ էք զեպիսկոպոսունսն մեր և շահեալ որք բազմապատիկ շնորհակալութեամբ զզանազան բարերարութեանց ձերոց զջատագովութիւնս էին մեզ գրեալ, խնդրեմք, յայսմհետէ ես առաւել օգնական լեալ և պաշտպան նպաստամատոյց լինիջիք և ձերով արդարակորով և աստուածապաշտ ճշմարտասիրութեամբն անուննկնդիր լեալ ամենայն անհիմն և ստալի զրուածոց և բանից չարասիրաց և խռովարկուաց՝ ի փառս ճշմարտին Աստուծոյ ձեռնտու լինիջիք եպիսկոպոսացն մերոց՝ և որչափ կարէք ջանասջիք օրմի յառաջ արձակել զդոսա այտի, և առ արդարադատ զուռն ինքնակալին փութացուցանել, որպէս զի՝ գնացեալ պատմեսցեն նորին կայսերական մեծութեան զամենայն ինչ ճշմարտութեամբ, և զմեզ ի զուր բամբասանաց ազատեսցեն, և զուգիգն ծանուցեալ զքաւականութիւն մեզ, և զօղնականութիւն սրբոյ Աթոռոյս խնդրեսցեն, որ ի բնրան անկեալ առանց իրաւանց հարստահարիմք, և սուրբ Տունս այս ի պատճառս այնպիսեաց մեծապէս օրքան զօր վնասի, և մերձ է յաւեր։ Ուրեմն՝ ոչ միայն վարդապետաց մերոց պարտիք օգնել, այլ և վասն մեր և վասն Աստուածային Տանս յԱստուածակոյս կողմանէ զքարին խորհել և առնել և կաբեկից մեզ լինել, և ճշմարտութեան ջատագով դտանիլ զոր արք չարաբարոյք եղծել ջանան. այսպէս առնելով ձեր՝ զվարձս ի ճշմարտասիրէն Աստուծոյ ընկալջիք, ողջ լերուք։ Ի մայիսի ... 1802 ի սուրբ Էջմիածին որ ի դաշտս Արարատեան։

ՃԴ.Ա. *Թուղթ ի Թիֆլիզ առ պարոն զուպեռնաթօր Կաւալենցկին։*

Որում և գիտութիւն լիցի. զի ի 4ըն ամսոյս գրեցեալ թղթոյ ձերոյ զպատասխանին, յնդ պարոն Աւագին դարձուցաք առ ձերդ գերազանցութիւն։ Յորում և խոստացաք զկատարումն տալ բանից ձերոց, և հետեւիլ այնմ. Այժմ ահա զբանին այնր որպիսութիւն գրեցաք քնեազ Սոլոմոնին Արղութեան յայտնել ձերդ գերազանցութեան։ Ուստի զայս թուղթ ի ձեռն յատուկ մայզոյ յղեալ, սպասեմք պատասխանատրութեանց ձե-

րոց։ Ուրեմն՝ և դուք զորպէս կամիլն ձեր և զբարեհաճիլն, ընդ գրաբերիս մեզ ծանուսջիք։ Ցուել յայսմանէ ցանկամք ձերդ բարեյաջողութեան և քաղձալի կենաց, և մնամք վասն երկարութեան անդրին աւուրց ձերոց աղօթօղ միշտ առաջի քրիստոսահիմն սուրբ տեղւոյս։ Լուաք և զնորին գերադանցութեան պարոն Կնօրինի ի Կախէթ երթալն, վասն որոյ և յատուկ թուղթ չգրեցաք նմա. ևթէ յաղդր իցէ, և կամ վերադարձեալ անաի, զայս թուղթ իբր երկուց պատուականացդ գրեալ համարելով՝ ողջ լերուք ի Քրիստոս և պահպանեցեալք շնորհիւ կենսատու սուրբ խաչի նորին, Ամէն։

Ի մայիսի 19 ի 1802 յԱստուածակերտ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին, որ ի դաշտ Արարատեան։

ԺՂԲ. *Օրինակ գրոյն աստապատնցի չիք Խաչատուր սեւատրին եւ Դաւիթ Ղօրղանովին։*

Ամենողորմած տեառնդ մերոյ սրբազան Դաւիթ կաթուղիկոսիդ ամենայն Հայոց ի սուրբ գարշապարին համբուրիւ։

Ցայտ առնեմ տէրութեանդ ի դրեալ սիրտնիչ թուղթդ օրհնութեան յայրեյի ԻՆ են, մայիսի ԺԴ ին ընկալեալ յամենայն ինչ ես լիմացեալ ուրախացայք մեծաւ ուրախութեամբ, որ վաղուց հետէ ոչ էլիք ընկալեալ թուղթդ, վասն զալստեան թուխթիդ լոյս մեծ ծագեաց. տեղւոյս որպէսութիւն յայա լիցի ստուգիւ ի Գրիգոր արք եպիսկոպոսէն որ եկն թուղթ՝ որ գրէ թէ ունի կայսերն մեծ ողորմութիւն վասն կաթուղիկոսին մերոյ յուսամ որ լաւ լինիլն շնորհօքն աստուծոյ յաւիտեան մի հոգար ի տեղիս քաղում երեելի անձինք որ կայն վասն քոյ թէ Գանէլի յանուն լիշատակելն ասես տեղս ի ժամ զալստեան որ առակելոցն ասեն յամենայն ժողովուրդք եկեղեցէն դուրս են ելանում, յուսամ,

որ անուն որ վերացուցանեմք մինչև քանի յաւուրն, այսպէս ժողովուրդք յամենայն կայ քեզ կապակցեալ յամենայնիւ ենեն չեն ճանչելու Գանիէլն կամ Նորայինքն, Պօլսեցի Օհանէս վարդապետն թէ Թիֆլիզու թէ ինչ դրութիւն էր արեր վասն չարալօղ բանիւ՝ որ ժողովսւրք լիմանալով յամենայն չեղվեցան թէ այսպէս հարկ չէ զլ ելն, դքոյ զբանք որ եկն տեղս քաղում անձինք տեսան և առակեցաք առ Գրիգոր արք եպիսկոպոսն, խնդրեմ տէրութիւնդ որ քանի անձինք կայ տեղս կամենումեն որ շնորհաւորութիւն դրեն տէրութեանդ բայց ձեռաց հասուչելան որ ունին հաւատարմութիւն որ յառաջ գրեալ էր աղայ Գալուստ Մկրտումեանն կամ աղայ Մարդար Գալուստեանն որ պատասխան յուսամ որ զայցէ կամք մինչ ի կենդանութիւնս մեր հողեցողութեան այս բանիս յառաջմէ դրեալ եմք, թէ խնդիր առ կայսերն միաբանից բերանէն գրել տաս առակես ոչ եկն էհաս խնդրեմք որ գրես, մէկ էլ անցեալ գրերուդ պատասխան ես ասացեալ հասեալ է կայսերն, բայց դեռ և պատասխան չէ եկալ ես զալստեան գրելոց եմ լիովին. այս կարճառօղ թխտիւ յայտնեցաք առ սրբութիւնդ ես լիմասցիս տէր իմ որ քանի անձինք կայ տեղս այս թղթիւս անուանքն գրեցաք որ շատ ջատագով վասն քոյ, խնդրեմք որ ներութիւն չլիցի սոցայ օրհնութեան գիր գրես անցանցանբալի որ վասն բարի բանիւ լինելոց է յառաջումն պատճառն գրելու շնորհակալութիւն որ էք հաւատարիմ սրբոյ Աթոռոյս կամ մեզ այսպէս դիտասջիր որ աղայ Գալուստ Մկուբաանն աղայ Մարղարայ Գալուստեանն որ յառաջ գրեալ են նոքա թէ գրեալ ես մինչի ցարդ չէ հասեալ լինի հասանի այս միջոցս թէ չես գրեալ այս քանի անձինքս չարալգրեցաք որ գրելն հարկ է վերոյ դրեալ երկու անձանցն կամ մուսոցն յատուկ յատուկ գրով աղայ Ցարութիւն Նղեաղարեանըն, աղայ Ցովսէփ Թումանովեանն, աղայ Գէորք Ապէլեանն, պարոն Մովսէս Գատաչեանն, պարոն Օհանէս Հարապետեանն, պարոն Ղէվանդ Պօղոսեանն, պարոն Նազարէթ Ցարութիւնեան, որ է զործակից աղայ Սիմէօնի այսքանի անձանց ես գրես խնդրեմք մանաւանդ աղայ Մկուրտի կինն, որ յառաջմէ գրեալ եմ յատուկ թուխթ կամ մխիթա-

րանք կամ չնորհակալութիւն հաւատարմութենէն կամ ձեռամբ Յօսէփ կաթուղիկոսին մէկ ոսկէ փուռվառ է առաքեալ, նորա կողմանէն օրհնեանք որ գրեալ էի թէ երկու աւետարանն ևս է առակելու այսպէս մեք փորքն ղըրելով դու շատ իմացիր ևս սղալն ներիր որ չունիմք այս սուղ միջոցիս այսպէս դրութիւն անողն. մնամ ամենաերեախտեացդ նուաստադունեղ წარა სრბაჩხუთიახუ ღაგოთ ყორლანოვ.

1802 մայիսի 20, Ցաշտարխան

Ի տէրութիւնդ ծառայ նուաստ ի սըրբոյ թաթ ոտիցդ համփորեմ աղերսանօք յայտ լիցի որ յառաջմէ գրեալ էլի թուխթ այժմոյս խնդրեմք ներես որ ձեռաց հասու չեղաւ վասն ապալրախտութեան իմոյ ևս դալոցս մէջումն հողեղալուստան լիովին գրելոց եմք ևս լինելոց է յայանի վեհիդ վասն իմ որպիսութիւն յուսամ որ լաւ և լինելոց է, այս սակաւ՝ գրութիւնս գրեցի դու լիովին ։իմասցիս ևս սղալն ներես աղայ Սիմէօն Սարգիսան սրբազան դիրդ ընկալ առակաց առ Գրիգոր արքեպիսկոպոսն այս պատճառէն դիր չի գըրեաց որ Աբրհամ և Կարապետ եպիսկոպոսունք գրում են թէ գալ փոշտին յամենայն որպիսութիւն դու գրեմք այն պատճառին որ պատասխան ընկալ յամենայն կու գրեմք, ահա Տէր իմ այսպէս յիմացիր յամենեին միամիտ լինիս որ Նիրեմն մնալու է կուրայղլուխ. այսպէս յիմացիր աղայ Սիմէօնի եղբայր աղայ Ավէտիկին յատուկ օրհնութիւն գրես կրկին արդ լիցի, թէ այս գրանք հասի իսկուն ժողովուրդքն միւսք էլ յետ կու դառնան որ մին քանի անձինկսն յետկոյ իմասցիս դառան։

Մայիսի 20, Ցաժտարխան։

Խաչատուր սևաւոր ծառայ սրբազանիդ Աստապատեցի։

ՃՂԳ. *Դաւիթ կաթողիկոսն առ Ստեփաննոս եպիսկոպոսն:*

Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր ԴԱԻԻԹ կաթուղիկոս և ծայրագոյն պատրիարք ամենայն Հայոց... ծանիր սիրելի և հոգևոր որդիդ մեր և հարազատ զաւակ սրբոյ Աթոռոյս Ստեփաննոս հանճարունակ վարդապետ և արհիապանծ եպիսկոպոս։ Զի ի յԱխալցխայ և ի Կարուց գրեցեալ թուղթ քո հասեալ են առ մեզ. և մեք զպատասխանիս նոցա գրեալ եմօ ըստ ժամանակին, և իմացաք թէ ի թղթոյ քոյ և թէ ի գրութեանց Կարնեցւոց, որ ի մարտի ամսոյ անտի ի Կարնոյ ելեալ գնացեալ ես ի Պօլիսդ, յուսամք յԱստուած թէ խաղաղութեամբ ցարդ ժամանեալ իցես յայդր ի Պօլիս, բայց թէ զինչ արարեր, և որպէս հոգացումն եղև իրաց քոց՝ տակաւին չիմացաք. առ որ կամք ի տարակուսի։ Այլ մեք այսու թղթով կամիմք զինչ ինչ որպիսութիւնս ծանուցանել սիրելւոյդ։ Քանզի ի մարտ ամսեանըն մինչ գնացաք մեք յԵրևան ի տեսութիւն և ի շնորհաւորութիւն խանին, վասն Նովբուղին, անդ անցուցեալ զաւուրս ինչ տեսաք, որ Կարսայ Աբտուլռահման փաշայէ մէկ սուրհանդակ՝ և Դանիէլ վարդապետի Մարտիրոս սեազլուխն եկին անդանօր, ունելով ի ձեռս իւրեանց զօրինակ ֆէրմանի կաթուղիկոսութեան նորա, զոր ցուցեալ Դօլվաթլու խանին՝ յայտնեցին զապօրինաւոր խորհուրդ իւրեանց, զոր և ի գլուխ տանելոյ աղաղաւ խոստացան իշխօղաց և այլ մեծամեծաց նշանաւորաց և աննշանից զքաղում և զանթուելի կաշառս։

Այլ 'Իօլվաթլու խանն իբրև ետես թէ խորհուրդ նոցա հայի յաւերումն և ի կործանումն խղճալի Աթոռոյս, արհամարհեաց ըղնոսա և ունայն յետս դարձոյց. վասնորոյ և ըստ մտաց քոյդ տարեալ արզայլին՝ վերստին արդ մի գրեաց առ մեծազօր տէրութիւնդ այդ ի խնդիր՝ վասն զֆէրմանն մեր վերստին հաստատելոյ, և զԴանիէլինն խափանելոյ։ Դրեաց և զթուղթ առ Ղարսայ և Կարուց փաշայսն՝ զի և նոքա համաձայն ինքեանք արզ գրեսցեն առ տէրութիւնդ. և մերազնէից ևս հրամայեսցեն առ ի զմահսէր չինել և առաքել ի Պօլիսդ վասն մեր անփոփոխ մնալոյ։ Զայն

թուղթսն իւր յղեաց խանն ձեռամբ Թալնոյ սուլթան Մահմէտ Վէլի բէկին, մեք ես գրեցաք զկոնդակս առ Ղարսեցիս և Կարնեցիս, և ձեռամբ աթոռակալ Սիմէօն արքեպիսկոպոսին և Մէլիք Ստեփանին առաքեցաք, որ սուլթանն վասն գրուածոց խանին հոգ տարցէ տալ զկատարումն, և աթոռակալն՝ զամենայն ցաւս և վիշտս մեր բերան առ բերան ծանուսցէ ժողովրդոցն։ Իսկ Մէլիք Ստեփանն առեալ զարզայն խանին և փաշայիցն, և զմահսէրն մերազնէիցն՝ բերցէ հասուցանել ի Պօլիսդ։ Ուստի գնացեալ նոցա ի Ղարս քաղաք՝ ժողովուրդք տեղւոյն սիրով ընկալեալ էին զնոսա, և զկոնդակն մեր ընթերցուցեալ ի սուրբ եկեղեցւոջն և ըստ գրուածոյն մերոյ՝ բազմակնիք մահսէր մի էին շինեալ և տուեալ նոցա։ Փաշայն ես արզ էր գրեալ և տուեալ, և հաւատարիմ ուղեկցօք ուղարկեալ էր զնոսա դէպ ի Կարին։ Անդ ես յոյժ սիրով և յարգանօք ընկալեալ էին զնոսա, թէ համայն բարեպաշտօն օրհնեալ ժողովուրդքն, և թէ տեղւոյ փաշայն, բազմախուռն հանդիսիւ ընթերցեալ էին զօրհնութեան կոնդակն մեր և բարձեալ էին զանուն Դանիէլին՝ և զմերն յիշատակեալ, և յամենայնի զսէր և զհնազանդութիւն և զհպատակութիւն ցուցեալ առ մեզ, որպէս լիադոյնս ունիս իմանալ ի թղթոյ նոցին առ մեզ գրեցելոյ, զոր ահա յղեցաք առ քեզ զի տեսցես, և բարեկամաց մերոց ես ցոյց տացես. վերջապէս օրհնեալ իշխանք տեղւոյն՝ գրեալ էին վասն մեր զյատուկ յատուկ թուղթս առ Պօլսեցիսդ, կամեցեալ էին թէպէտ հասարակութեամբ զմահսէր ես գրել, բայց յետոյ մտախոհ լինելով՝ ասացեալ էին վասն քո՝ թէ ահա նա գնացեալ է և տարեալ է զմահսէր, սպասեսցուք մինչև նա դարցէ, և կամ մէկ համբաւ յղեսցէ մեզ, և յայնժամ եթէ դէպ լիցի վերստին գրել զմահսէրն գրեսցուք և յղեսցուք, այսպիսի պատճառաւ չէին կամեցեալ կամ զմահսէրն գրել և կամ զՄելիք Ստեփանն առաքել, որ այն ես ի մեր վերայ աւելի խարճ չնստացի. այլ միայն զիւրեանց յատուկ յատուկ գրեցեալ թուղթսն զոր յիշեցաք, և զ՚ի ձեռն մարդկանն մերոց գտանեցեալ արզայն և մահսէրսն առաքեալ էին ընդ եկողաց հասանել յայդր, որոյ ի հասանելն ի հարկէ տեսանելոց ես և իմանալոց զմիտս գըրուածոցն։ Վասնորոյ փաշայն Կարնոյ յետ սիրով ընդունելոյն զմարդիկսն մեր՝ զերեսին ես խիլայադարդեալ էր, և դարձուցեալ յետս առ մեզ՝ հանդերձ պատասխանեօք թղթոց մերոց, որք երեքն ամսոյս եկին հասին աստ խաղաղութեամբ։

Այլ յայնժամ մինչ զաթոռակալն և զայլսըն դէպ ի Ղարս և ի Կարին առաքեցաք, յետ նոցա գնալոյն աստի պատշաճ տեսանելով մեր գրեցաք զթուղթս առ Կնօրինն՝ մեծ կուսակալն ռուսաց, առ Կաւալենդկին և առ այլ մեծամեծսն Թիֆլիզու ի խնդիր՝ զՍարապետ և Աբրահամ եպիսկոպոսսն մեր արձակելոյ գնալ ի դուռն կայսեր և ծանուցանել ըզխնդիրս մեր։ Դօլվաթլու իշխողն մեր ես զըրեաց զթուղթս առ յիշեալ մեծամեծսն, թէ՝ ես ինքնագլուխ չկտցուցի զսա կաթուղիկոս, դուք խնդրեցիք և ծանուցիք զհաճութենէ կայսերն առ սա. Թիֆլիզեցիք ես՝ թէ բազմակնիք մահսէրաւ և թէ յատուկ թղթովք յայտ առնելով զբանիւ կտակաբարութիւն Յովսէփ կաթուղիկոսին, ստիպմամբ խնդրեցին առ ի կացուցանել զսա ի տեղի նորին, միաբանք և երկրացիքն ես համաձայն հաւանութեամբ կամեցան, ապա և մեք հաճեցաք՝ որ եղև կաթուղիկոս. յետոյ ես հասկացուցաք Օսմանցւոց թագաւորին, և նա շնորհեաց ըզֆէրմանս յանուն սորա. Ազգն ես ընկալան սիրով՝ որպէս ամենեցուն մահսէրքն և ձեռագիրքն կան ի ձեռս սորա, Շահն մեր ես՝ քանիցս շնորհեալ է զպարգևս և զռաղամս ի հաստատութիւն հայրապետութեան սորա և այլն։ Վերջապէս խնդիր արար վասն ուղևորելոյ զվարդապետսն առ կայսերն. այսու թըղթովք առաքեցան ի դիմաց խանին և մեր՝ ոմն երևելի տաճիկ, և Մելիքի որդի Սահակ աղայն, զի հոգատար լիցին բանին։ Սոքա մինչ գնալին ի Թիֆլիս, յիշեալ մեծ կողմնակալն և Կաւալեցկին ես եկին անդ, որք տեսեալ էին զթուղթսն մեր և զմարդիկսն, և պատասխանիս դարձուցեալ էին առ մեզ, թէ կայսրն և մեք իսկ՝ զկաթուղիկոսութեան բանն թողեալ եմք Ազգին, մեք իլախալ [32]) չունիմք, Ազգն գիտէ զոր ոք ընդունելն և այլն, այսպէս էին ջուղապ տուեալ և զթղթատարն մեր դարձուցեալ։

Այժմ ես մեք ես մնամք կախեալ զբարեսէր կամաց օրհնեալ Լուսաւորչակրօն Ռռ.

դիդ, որք զինչ և գրեսցեն ընդ քեզ՝ ըստ այնրմ առնելոց եմք։ Բայց Եփրեմ և Դանիէլ վարդապետքն ոչ դադարին երբէք ի խռովեցուցանելոյ և յերկպառակութիւն ածելոյ զԱզգըն, ի վնասելոյ զխղճալի սուրբ Տունս, և ի վատահամբաւելոյ զմեզ զանազան զրպարտութեամբք։ Դանիէլ վարդապետն ի Բայազիտ նըստելով և կաթուղիկոս ձեռնալով, զիւրն որբոյ Աթոռոյս ուր ուրեք և գտանէ՝ յափշտակէ։ Յորժամ ի Կարին էր՝ թէ զինչ գործեաց և որքան անհամութիւնս արար, և որչափ վնաս և ղայթակղութիւնս ետ ողորմելի ժողովրդոցն՝ ղայսոսիկ իմացար ի հարկէ անդ ի Կարին, վասն որոյ ոչ երկարեմք աստէն։ Վերջապէս ի դառնալն իւր աստի զայն մէկ րեռն մեր զոր Զմիւռնոյ առաջնորդ Մարտիրոս վարդապետն էր առաքեալ, կալին ի նմա ինչ ինչ ընծայք յանուն մեր յղեցեալք ի յօրհնեալ իշխանաց տեղւոյն, և արդեամբք սրբոյ Աթոռոյս գնեցեալ իրք՝ ի պէտս հարկաւորութեան սորա, թէ զայն րեռն՝ և թէ զ ի հոգելոյս Ներսէս վարդապետէն առ գործակալսն մեր մնացեալ րեռն, երեր ի Բայազիտ, և անդ եղեալ աւանդիցն մերոց ևս տիրեաց։ Զայսոսիկ զիւրն սրբոյ Աթոռոյս առեալ՝ վաճառէ աստ և անդ՝ կաշառս տալով փաշայից, խանից և այլոց, առ ի լցուցանել զախտ իւր, և այսպէս ինքն եղեալ վատնիչ իրաց սրբոյ տանս՝ զմեզ վատահամբաւէ, չգիտեմք օրհնեալ Ազգդ իմանայ զարարմունս սորա թէ ոչ, Եփրեմ վարդապետն ևս յամենայնի օգնական լեալ սմա, որչափ ինչ պղտորեաց զմիտս կայսերն և այնր կողման ժողովրդեանն. զորս և պաղեցոյց ի սիրոյ սուրբ Աթոռոյս, այնու ոչ բաւականացեալ՝ այժմ ձեռնարկեալ է ի պարզամիտ միաբանսն մեր, սուտ գրութիւնս առնէ ընդ սոսա, և ոմանց զփիլոնս խոստանալով, և ոմանց զմատանիս և այլ պարգևս, յորդորէ ցրուիլ և գնալ առ Դանիէլն, այսպիսեաւ սնոտի յուսով խախտէ զպարկեշտութիւն սոցա և զհնազանդութիւն՝ զորս ունին առ գահակալս իւրեանց, և զպատրանաց թուղթըն նորա զորս գրեալ էր առ ոմանս ի միաբանիցս, ահա յղեցաք զի տեսցես, և հաւատարմաց մերոց ևս ցոյց տացես։

Իսկ ոչ ու փուչ Յովհաննէս Պօլսեցի ևս պատրեալ ի բանից նոցին, թէ յորէ կոչման և օծման մերոյ զորչափ բազում անհամութիւնս և չարիս գործեաց առ մեզ արժանի պատժոց, և քանիցպատիկ եցոյց զնենգագործութիւնս յայտնի և ի ծածուկ՝ գիտես լաւապէս, մեր վերստին երկարելն աստէն աւելորդ է, բայց զայնքան բազմապատիկ չարութեանցն պատկանաւոր տրիտուր ոչ զայլ ինչ ընկալաւ ի մէնջ, եթէ ոչ զներողութիւն, զսէր և զքաղցրութիւն, որպէս գիտես և զայնս։ Վերջապէս կամելով մեր իսպառ ձեռս բառնալ տալ նմա ի չարութեանց իւրոց և պահել ի յանդորրութեան, հոգևոր նշանաւ կապակցեցաք զնա ընդ մեզ՝ և բարեկամացաք, կնքահայր առնելով նորածնելոյ զաւակի Բարսեղի մերոյ, և ինքն ևս քանիցս երդուաւ ի սուրբ Դեղարդն և յայլ մասունս մնալ առ մեզ հաւատարմութեամբ. ուստի և մեք հաւատացեալ նմա՝ երբեմնապէս առաքէաք յԵրևան առ իշխօզն վասն հարկաւորութեան մերոյ, և տեսանելով զպակասութիւնն ի մարմնաւոր պիտոյից քանիցս խաբճլըխ ևս տուաք։ Բայց որպէս անկարելին է ընձուց զխայտուցն փոխել, և Եթովպացւոց զթխութիւնն, նմանապէս և նա անյեղլի լեալ ի նենգաւոր բարս իւր, ստեաց յերդմունս իւր, և ուրացաւ զամենայն երախտիսն և զլաւութիւնս մեր, քանզի ի մեծի պահոց վերջին շաբաթի աւուրն յուղարկեցաք զնա յԵրևան առ խանն՝ վասն իրիք հարկաւոր գործոյ, նա գնացեալ անդ և կացեալ աւուրս ինչ՝ ապա յաւուր ճրագալուցի սուրբ Զատկին ինքնահալած լինելով, փախուցեալ անկաւ ի Թիֆլիզ քաղաք, առ ի առաւել ևս զչարիս գործել, յԱստուծոյ ընկալցի զարարմանց իւրոց զհատուցումն։ Ի գիտելն մեր զլուր փախստեան նորա, զՅօհաննէս սպասաւորն իւր՝ զոր ի մեծի պահոցըն աբեղայ արար և կոչեաց զանունն Կարապետ, զնա բերել տուաք առ մեզ հարցափորձ առնել, և յանկարծակի իմն տեսաք թէ՝ միաբանքն մեր բազմութեամբ ժողովեալ, զաղմուկ չփոթի հանին ընդ վայր ըստ առաջնոյն. ի մէջ ևս թուլատուութիւն տեսեալ՝ այնպէս աղմկեալ մնացին ի գիշերի միում, և ի լուսանալ առաւօտուն՝ դիմեցին բազմութեամբ առ խանն յԵրևան. բայց խանն և այլ մեծամեծքն զայնոսիկ զամենայն տեսեալ զօգուտն խղճալի Տանս խոկալով որ ի պատճառս Դանիէլ վարդապետին աւերի և քայքայի, յետս դարձուցին առ մեզ զմիաբանսն, զորս

խնամարկութեամբ ընկալաք և ներեցաք ամենից յանցանացն ևս, և այժմ ունիմք զամենեսեան ի սէր մեր։

Զայսքան բազմապատիկ վնասուց և խայտառակութեան պատճառ լինի նա ինքն Դանիէլ վարդապետն, որ զազգն մեր վրդովէ և վեր ի վայր առնէ, զսուրբ Աթոռս մեր կամի աւերել, և ի Քրդստան զնոր աթոռ կազմել, և ջանայ միշտ զանազան զրպարտութեամբք վատահամբաւել զանուն մեր, զի զանցեալ յօղնագիմի զրպարտութիւնսն բաւական չհամարելով, նարդենիս ևս մէկ այնպէս ինքնաստեղծ ստայօդ բարուրանս է հնարեալ զմէնջ՝ զոր մեք լիրաւի պատկառիմք գրել աստանօր։ Զայն բարուրանս գրեալ է առ հասարակութիւն ժողովրդոցն Կարնոյ, և նոքա տեսանելով զայն անճոռնի և սնոտիապատուաստ գրութիւնս նորին, և չկամելով ծածկել ի մէնջ՝ զերեսս թղթոյ նորա առեալ էին ի գիր, և յղեալ առ մեզ ձեռամբ աթոռակալ Սիմէօն արհիեպիսկոպոսին, մեք ևս օրհնակեալ զայն՝ ահա ընդ թղթոյս յուղարկեցաք առ քեզ ի տեսանել, և ցոյց տալ օրհնեալ ամիրայից՝ որոց և կամեսցիս, և իմանալ թէ սանդարամետականն կարէ հնարել զայդ զըրպարտութիւն՝ զոր նա հնարեալ է ստորագրեալ զմէնջ։

Արդ՝ թող կշռեսցեն օրհնեալ Ազգ մեր զխելս նորա, և իմասցին թէ որչափ թշնամութիւն է զոր առնէ ընդ մեզ, և կամ առաջին բարուրանք նորին զոր արարեալ է զմէնջ՝ ճշմարիտք են, եթէ սուտք և ունայնախօսութիւնք։

Զսրբոյ Աթոռոյս ոչ հոգայ՝ թէ աւերի և կործանի, զԱզգէն ոչ մտածէ՝ թէ գայթակղի և ծաղր լինի ի մէջ այլակրօն ազանց, և զկանոնաց նախնեաց ոչինչ փոյթ կալնու՝ թէ եղծանի և առ ոտն հարկանի. միայն անձանձիր ջանայ և աշխատի՝ առ ի զիշխանութիւն մեր յինքն յափշտակել, բայց սոյն այս իշխանութիւն մեր՝ ոչ մարդ է տուեալ մեզ, ոչ թէ ի մարդկանէ առեալ լինելոց է՝ այլ է ի Հոգւոյն սրբոյ. ըստ որում ամենայն պարգևք շնորհաց ի նմանէ է. զի նա է որ յաջողէ զամենայն յամենայնի, ըստ գրելոյ սրբազան առաքելոյն Պօղոսի։

Ուրեմն ապօրինաւոր և ի նանիր է աշխատակիր լինելն Դանիէլին. և ներհակութիւնն՝ զոր առնէ, ոչ թէ է առ մեզ, այլ առ շնորհաբաշխ սուրբ Հոգին վերաբերի։ Մեք լիրաւի մինչև ցայսօր չեմք երբէք անպատուեալ զնա, այլ միշտ ի պատուի եմք ունեցեալ ի խօսս և ի բանս մեր, և ի գրուածսն մեր ևս՝ յարգանօք յիշեալ եմք զանուն նորա. բայց մեք որչափ համբերեցաք և կամեցաք սիրաշահել զնա և համոզել ի խաղաղութիւն, այնքան յաճախեաց զչարիս իւր, և ի հասուցանելոյ զվնաս սրբոյ Աթոռոյս, և կեղտոտելոյ զանուն մեր՝ ոչ վերջացաւ. վասնորոյ այլ ևս ոչ հնալով մեզ ճար տանելոյ անհամութեանց նորա, մերով Հայրապետական բարձու իշխանութեամբ բանադրեցաք զնա, և կապեցաք հողեոր կապանօք յերկինս և յերկրի զինքն՝ և զհամայն համախոհս իւր, որք բանիւ և գործով օգնական են նմա. զորս և յամենայն քահանայական կարգաց և աստիճանաց մերկացուցաք և որոշեցաք իբրև զհոտեալ անդամս՝ ի սուրբ եկեղեցւոյ, որք անիծեալ են յԱստուծոյ և ի մէնջ։ Զայս ոչ եթէ վասն այնորիկ արարաք՝ իբր զի ներհակիցեմք Ազգին, և զոր ինչ գրեցին մեզ՝ զընդդէմն նոցա արասցուք, քաւ լիցի, այլ առ իրաւանցն պահանջելոյ վրէժխնդիր եղաք. իսկ թէ ոչ, մեք՝ որպէս գրեալ եմք քոյդ տարեալ կոնդակաւ մերով, բարեսէր օրհնեալ Ազգդ մեր՝ եթէ կամեսցին յայտնապէս անպատուել զմեզ, այնմ և ոչ ունիմք ներհակիլ, միայն թէ զճանապարհ մի ցուցցեն մեզ՝ զի ըստ այնմ արասցուք։ Այլ և զայն գիտասջիր, զի յորժամ Սահակ աղայն և տաճիկն դարձան ի Թիֆլիզ, ընդ նոսա ռուսաց մէկ էլչի [33]; եկն յԵրեւանու խանն՝ թէ ի կողմամէ երկրիս խօսելոյ, և թէ վասն բանի Հայրապետութեան, որոց աղագաւ թէպէտ բադասական Ջուղայ [34]) ետ խանն բայց և զէլչին յուղարկեաց ի սուրբ Աթոռն, առ ի տեսանել զանօթսն սուրբ եկեղեցւոյն մերոյ, զոր Դանիէլն զուր բարուրանօք հռչակեալ է՝ իբրթէ խորտակեալ իցեմք և տուեալ այլազգեաց։ Եւ էլչին եկեալ աստ՝ ետես զամբողջութիւնս ամենայն եկեղեցական անօթիցն և զարդուցն սրբութեանց, և միաբանքն ևս երդմամբ հաւատացուցին՝ թէ այնպիսի բանք չեն եղեալ զոր Դանիէլն բարբանջէ, և այլն։ Ապա և գրեցին զմահսէր առ Կնօրին և առ Կաւալեցկին ի ծանուցումն անցից ստուգութեանն, և խորտակիչ և աւերիչ գոլոյ Դանիէլին, և մեր-

ժելոյն իւրեանց ընա անիծիւք, ի յորդիութենէ սուրբ եկեղեցւոյ իբրև ընոտեալ անդամ Այսու մահուէրաւ էլչին դարձեալ եղև լասաի ամսոյս Ը։ Յետ գրելոյն մեր զայս թուղթ այն ինչ կամէաք վերջացուցանել և յղել, ապա յապրիլ ամսոյս 16 գրեցեալ թուղթդ եհաս առ մեզ յամսոյս 14, հանդերձ թղթովք օրհնեալ պարոն Պետրոսին և մեր Ղազար վարդապետին, զոր ընթերցեալ և իմացեալ մեր՝ զի 14 ապրիլի՝ խաղաղութեամբ մտանիցդ յայդր ի Պօլիս՝ միամտեցաք։ Տացէ Տէր. զի ալաի ես խաղաղութեամբ և արդիւնաւորութեամբ դարձ առնիցես առ մեզ։ Արդ ի հասանել թղթոյս՝ լուսամք թէ ելեալ իցես, բայց թէ տակաւին յայդր իցես, պարտիս հոգատար լինել չուաով ելանել, և միամտութիւն բերել առ մեզ։ Իսկ մեք՝ մինչ տակաւին չընկալաք զփոխադարձս թղթոց մերոց ի յարդելի ամիրայից տեղւոյդ, առ այն՝ չգրեցաք այժմոյս զթուղթս առ զոսա, երբ ընկալցուք, ի հարկէ գրելոց եմք զօրհնութիւն և զշնորհակալութիւն։

Այժմ զայս թուղթ առ քեզ գրեալ, թուղթ մի ևս առ Նփրիկեան պարոն Պետրոս գրեցաք, զոր և դուք ցոյց տաջիք օրհնեալ ամիրայից և այլոց՝ առ ի զօրպէսն մեր իմանալ։ Կոնդակ մի ևս ի վերայ Իզմիրցոց գրեցաք և յղեցաք առ պարոն Պետրոսն հասուցանել առ առաջնորդ Մարտիրոս վարդապետն, դու ևս եթէ Պօլսոյ իցես, վերահասու լինիցիս յղելոյն։ Մեք ևս ի միջակ խաղաղութեան կամք, այլ խանն մեր զօրս առաքէ ի վերայ Ղարսայ, և ի Պարսից ևս լուր եղև թէ զօրք խաղալոց են յայսկոյս, վասնորոյ խանն զմեզ խնդրեալ տարաւ յԵրեան ի խորհրդակցութիւն. գնացեալ մեր անդ՝ կացաք ի Դ աւուրս և դարձաք, լուսամք թէ Պարսից դալն խափանեսցի, և խաղաղութեամբ անցուսցուք զայս ամենայն։ Այսպէս գրելով ողջ լեր ի Տէր։

Գրեցաւ ի ՌՄԾԱ և ի մայիսի ԻԴ. ի սուրբ Էջմիածին։

ՃՂԴ. *Թուղթ ի Թիֆլիզ առ Կաւալենցկին ընդ Մելքոն Մեհրաբովին։*

Յորմէ սիրով բազմաւ, լիսուսածիր ողջունիւ և կարօտիւ գիտութիւն լիցի յատկեղ սիրելւոյդ մերոյ և ճշմարիտ բարեկամիդ, և ամենախոհեմ քաղաքապետիդ, բարձրաստիճան և զանազան նշանակրիդ՝ պարոն Պետր Իւանիչ մեծահամբաւ գուպեռնաթօրիդ։ Զի զսիրոյ և զբարեկամութեան թուղթ ձեր յամսոյս 19 գրեցեալ, ընկալաք անչափ ուրախութեամբ և մեծ շնորհակալութեամբ ձեռամբ հաւատարմին ձերոյ և մեր՝ ազնիւ պարոն Մելքոն Մէհրապովին, և գիտացեալ զսրտի ձերոյ քաղցրութիւն և զմարդասիրութիւն առ սուրբ Աթոռս և առ մերս նուաստութիւն, օրհնեցաք զանդին կեանս ցանկալւոյդ մերոյ առաջի աստուածային տաճարիս հանդերձ միաբանութեամբ. զոր Ա՜ծ ամենազօրին պահեսցէ երկար և խաղաղ կենօք, և յաչս օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն քաղցր երևեցուսցէ ի պարծանս և ի յուրախութիւն մեզ վշտացելոցս։ Մաղթեմք զդոյն առաւելութիւն սիրոյդ, և զճշմարիտ բարեկամութիւն ընդ հզօր ձեռնտուութեան ձերոյ ի սրբոյ Աթոռոյս և ի մէնջ հանապազ աննուազելի ունել, և օրքանզօր բանիւ և գործով արդիւնաւորել՝ որովք պարտաւորելոց էք զմեզ անդադար շնորհակալիլ զձէնջ օրհնաբանութեամբ։ Եւ որպէս մեք զհարկաւորսն տեղեկացաք ի հաւատարիմ սիրելւոյն ձերմէ և մեր ի պարոն Մեհրապովէն, նոյնպէս և ձերդ գերազանցութիւն զսրպխութիւն կողմանցս և սրբոյ Աթոռոյս և մեր՝ ունի անդրէն ի նըմանէ գիտել լիովին, որ է դիր կենդանի յերկոցունցս կողմանց։ Այլն ցանկամ ձերդ բարեյաջողութեան, և բաղձալի կենաց, և զսուրբ Աթոռս և զիս և զգործ մեր յանձնեմ ի սէր սիրելւոյդ, ողջ լերուք, Ամէն։

Ի մայիսի 28 ի 1802 ի սուրբ Էջմիածին, որ ի դաշտս Արարատեան։

ՃՂԵ. *Թուղթ ի Թիֆլիզ՝ առ Դիւան Յովհաննէսն Բէզթաբէկեան, ի պատասխանի թղթոյն, եւ ծանուցումն զգալստեննէն առ մեզ պարոն Մելքոնին Մեհրապով, եւ հասուցանելոյն զժ· թումանն։*

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ՝ ծանուցումն լիցի բարեպաշտութեան քում

Զի թուղթ քո՝ էհաս առ. մեզ. զոր ընթերցեալ իմացաք զամենայն զրուածսդ։ Սիրելին մեր՝ Աստուծով զօրացեալ պարոն Մելքոնն Մէհրապով ևս եկն ի սուրբ Աթոռս և առ. մեզ, զոր և մեք յոյժ սիրով ընկալաք, և պատուեցաք ըստ արժանւոյն։ Եւ տեղեկացաք ի նմանէ ամենից մեղապատշաճ անցից և որպիսութեանց ձերոց։ Եւ զոր ինչ օգուտն և բարին էր սրբոյ Աթոռոյս և մեր՝ բերան առ. բերան խօսեցաք ընդ նմա, և զգուշացուցաք հեռի մնալ ի վնասակար խորհրդոց։ Եւ յետ այսպէս խորհրդակցելոյն մեր, և սիրով ընդունելոյն զնա՝ և յարգելոյն ըստ արժանաւորութեան իւրոյ, ահա սիրով և օրհնութեամբ վերադարձաւ գալ, որում Տէր լիցի ուղեկից։ Ի գալն բարեաւ յայդր՝ բերանով պատմելոց է ձեզ զոր ինչ խօսեցեալ եմք ընդ նմա, և զամենայն անցս և զորպիսութիւնս մեր։ Ընդ որում գալս թուղթ գրեալ առ. ստոյգ սիրելիդ խնդրեմք, զի խորհրդակցեալ ձեր ընդ օրհնեալ պարոն Մելքոնիդ, ջանացարուք յօգնութիւն հասանիլ լուսածին մօրս ձերոյ սրբոյ Աթոռոյս, և որպէս մինչև ցարդ, նոյնպէս և յայսմհետէ ես զօգուտն և զբարին սորա և մեր՝ խորհել և առնել, ծանուցանելով զցաւս և զվիշտս մեր գերապատիւ և չքնաղաշուք մեծամեծաց տեղւոյդ, և խնդրել ի դոցանէ զօգնութիւն մեզ վշտաւորացս, որոց ազաղաւ չնորհակալ լինելոց եմք բազմաւ օրհնութեամբ։ Իսկ ի կողմանէ Ժ. Թուման զրամոյն՝ զոր առաքեալ էիր վասըն հոգւոյ ի Քրիստոս հանգուցեալ հօր քոյ բարեպաշտօն Դիւան Սօլօմօնին հասանել ի սուրբ ուխտն Սեանայ, այսպէս գիտել լիցի. զի արդարև՝ որպէս բարի կամեցողութիւն և խնդիր՝ էր սիրելւոյդ, ըստ այնմ կամեցաք և մեք առնել. բայց ի ներկայս օրինաւոր առաջնորդ ոչ գոյ անդ ի սուրբ անապատն Սեանու, այլ վարդապետ մի վէքիլ է կարգեցեալ՝ ի մէնջ՝ որ զվանքն կառավարէ, և մանաւանդ՝ օրհնեալ պարոն Մելքոնն ևս այնքան չմնաց ի տեղս, զի մեք մարդ յուղարկէաք, և զայն վէքիլ վարդապետն բերել տայաք առ. մեզ, և խորհրդակցութեամբ նորա զդրամն ըստ զրուածոյ սիրելւոյդ առնէաք։ Եւ որովհետև ինքն պարոն Մելքոնն զարձ առնէր, մեք զայն դրամն առաք պահել՝ և յայս մօտակայ աւուրքըս յատուկ մարդ եմք առաքելոց յայն սուրբ անապատն, առ. ի զվէքիլ վարդապետն նորա բերել առ. մեզ. յորժամ գայցէ նա՝ կամ ըստ գրութեան սիրելւոյդ յիշատակ ինչ չինեցուցանելոց եմք, և հաստուցանելոց ինքեանց, և կամ թէ գիտութեամբ այն վէքիլին զդրամն յանձնելոց եմք մէկ մարդոյ՝ որ օգուտն նորա հասցէ յայն սուրբ ուխտն, և զանուն բարեպաշտ Սօլօմօնին և ձեր գրել տալոց եմք ի խորհրդատետր, զի յիշեսջիք ի սուրբ պատարագս որք մատչիցին անդ, և զիարդ և արասցուք զդրամն՝ գրելոց եմք սիրելւոյդ զորպէսն ի գիտել, և այժմ մինչ այսպէս բանն անկատար էր, և մեք ես ձեռնհասութիւն չունէաք, վասն այնորիկ այժմ զօրհնութեան կոնդակ չգրեցաք առ. բարեպաշտուհի մայրն քոյ. յետոյ մինչ կատարեսցուք զբանն ըստ գրուածոյս մերոյ՝ յայնժամ ծանուցանելոց եմք ձեզ, և գրելոց եմք զկոնդակն օրհնութեան ի միամտութիւն ձեզ։ Ո՛ղջ լեր ի Տէր։

Գրեցաւ յամի Տեառն 1802. և ի մայիսի ԻԸ, ի սուրբ Էջմիածին։

ՃՂԶ. *Թուղթ ի Հաշտարխան առ Դարբանդցի Յարութիւն աղայն, օրհնութիւն վասն սիրոյն եւ հարազատութեան առ սուրբ Աթոռս, եւ յորդորումն ի նոյնս:*

Եւ ընդ ամենառատ օրհնութեանս Աստուածայնոյ՝ ծանուցումն լիցի ստոյգ սիրելւոյդ մերոյ՝ և բարեմիտ որդւոյդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի յորմէհետէ ըստ յաջողելոյն Աստուծոյ կոչեցեալ եղաք ի սոյն այս պաշտօն հայրապետութեան սրբոյ Աթոռոյս և օրհնեալ Ազգիս Հայոց՝ թէպէտ չեղև մեզ դրել յատկապէս առ. սիրելիդ զթուղթ անդրանիկ օրհնութեան, և այն՝ ի պատճառս անծանօթ զոլոյն մեր զքէն, բայց ի ներկայումս ընտիր սիրելին մեր՝ Աստուծով զօրացեալ աղայ Սիմէօն Սէրգէիչն թուղթ էր գրեալ առ. մեզ՝ որով և ծանուցեալ էր զբարելաւութիւն քոյ և զյառաջադիմութիւն ի մերազնեայսն քաղաքիդ, և զունելդ զորդիական ջերմեռանդ սէր և զկատարեալ հաւատարմութիւն առ. լուսածին Մայրս քոյ սուրբ Աթոռս և առ. հոգևոր

հայրութիւնս մեր։ Որովք ախորժալուր համբաւովք սրտաղիւր եղեալ մեր՝ ուրախացաք, և բազմաւ զոհունակութեամբ շնորհակալեցաք զբարեպաշտ սիրելւոյդ։ Վասնորոյ և արժան համարելով, գրեցաք զայս սիրանիշ թուղթ ի վերայ սիրելւոյդ, առ ի ժառանգեցուցանել այսու զհոգեպարար շնորհս Քրիստոսաէջ սրբոյ տեղւոյս, և զօրհնութիւնս մեր հոգեոր։ Ապաքէն ի գալ ժամանել օրհնաձիր նամակիս մերոյ առ սիրելիդ, հանգիցէ ի վերայ քոյ և համայն օրհնեալ ընտանեացդ շնորհք ողորմութեան և գթութեանն Աստուծոյ, օրհնեսցէ զձեզ և զօրացուսցէ, ազատս կացուսցէ ի փորձութեանց հոգեկանաց և մարմնականաց, և պահեսցէ միշտ ընդ թեօք Աստուածայլին խնամոց իւրոց ի խաղաղութեան և ի բարեզուարճութեան, և տացէ ամենից բանից և գործոց ձերոց զպաջողուածս բարեաց։ Իսկ զզառնաղէտ որպիսութեանց լուսածին Մօրս ձերոյ սրբոյ Աթոռոյս՝ թէպէտ բազում անգամ գրեալ եմք կոնդակօք առ հասարակութիւն ձեր, բայց համառօտիւ ես այսպէս գիտել լիցի, զի այս ահա լրացաւ մէկ տարի ժամանակ՝ յորում խղճալի Տունս այս՝ կոհակօք բազմօք անթիւ դիմեցմանց տատանեալ ծփի իբրև զծով, և ի սաստիկ ամբոխման կայ, որև զանազան վնասուք և ձախորդութեամբքն զորս կրէ՝ հասեալ է ահա ի կէտ յետին թշուառութեան, և այս՝ ոչ ի բարբարոսաց, և ոչ ի յօտարաց, այլ յիւրմէ ծոցածին որդւոց, իբրև յայնց՝ որ ասէ սուրբն Յովհաննէս՝ առ ի մէնջ ելին, այլ ոչ էին ի մէնջ, և այլն։ Յայս քան հազարաւոր ամս՝ յորմէ հետէ այս սուրբ Աթոռս կառուցեալ և հաստատեցեալն է ի սրբոյ Լուսաւորչէ անտի, բազում և յոգնազլիմի թշնամեաց և այլակրօն ազանց զդէմ ունելով կարացեալ է մնալ ի հաստատութեան և ի պայծառութեան՝ հանրախնամ շնորհիւ ողորմութեանն Աստուծոյ, բայց այսօր կրելով զվնասս և զնեղութիւնս ի յընտանի թշնամեաց, ոչ զօրէ մնալ ի շինութեան, այլ մերձ է գլխովին յաղարտ վարիլ։ Քանզի՝ արք յաչաղկոտք և զրաբանք՝ շարժեալ նախանձու ատելութեան՝ յայտնապէս կամին աւերել և կործանել զսուրբ Աթոռս, և մեք ոչ ումեք կարողանամք զաղէտս և զվիշտս մեր. աղաղակեմք առ արդարակորով տէրութիւն աստուածապսակեալ ինքնակալ մեծի կայսեր, բայց չթողուն զաղաղակն մեր հասանել առնա։ Եւ Քրիստոսասէր օրհնեալ ժողովուրդք ես ամենեին ոչ հոգան՝ և ոչ փոյթ կալնուն առ ի յօգնութիւն հասանել լուսատու Ծնողիս իւրեանց սրբոյ Աթոռոյս, որ ի պատճառս միոյ և երկուց նախանձոտ արանց աւերի և քայքայի։ Եւ զի՝ դու յԱստուծոյ օրհնեալդ հարազատ որդի ես սրբոյ Աթոռոյս, և ճշմարիտ բարեկամ, և հաւատարիմ սիրելի մեզ, վասնորոյ սրտական հաւատարմութեամբ յորդորեսցես զպարգեւլի իշխանսն քաղաքիդ և զհամայն օրհնեալ ժողովուրդսն՝ առ ի ջերմանալ ի սէր լուսածին Մօրս իւրեանց, և նպաստ օգնութեան մատուցանել սմա և մեզ վշտաւորացս. եթէ զմէնջ ոչ հոգայցեն՝ գոնեայ ի սուրբ Աթոռս խնայեսցեն վասն դառնակսկիծ չարչարանաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ և որդիական սրտացաւութեամբ հոգալով վասն սորա՝ կամեսցին ձեռնտու լինել սմա, և ազատել ի վերջին վտանգէս, որովք ունին ստանալ զմեծ վարձս յԱստուծոյ աստ և յանանց կեանսն։ Եւ դու սիրելիդ ես ի ջերմեռանդ սէրդ և ի հաւատարմութիւնդ առ սուրբ Աթոռս և առ մեզ յարամնասցես հաստատուն, և յամենից բանից ստախօս արանց անպղտոր պահելով զմիտսդ՝ միշտ զօգտից սորա և մեր լիցիս խորհող և առնող, և երբեմնապէս սիրտնիչ գրութեամբդ ես մխիթարեսցես զվրդտաւորութիւն մեր, զի միշտ շնորհաց և օրհնութեանց արժանաւորեսցիս։ Ողջ լեր ի Տէր, և պահպանեսցեալ հզօր աջով նորին հանդերձ քոյայնովքդ ամենիւք յարաժամ, Ամէն։

Գրեցաւ յամի Կենարարին 1802 և ի մայիսի . . . ի լուսանկար Աթոռս սուրբ Էջմիածին։

ՃԴԷ. *Թուղթ ի Կարին, ծանուցումն ըզգալստենէ աթոռակալին ի սուրբ Աթոռս, եւ շնորհակալութիւն զնոցանէ վասն բազմապատիկ բարեկաւութեանցն նոցին ցուցելոց մեզ եւ այլն:*

Եւ ընդ օրհնառաք նամակիս, ծանուցումն եղիցի սիրելի և հարազատ ժողովրդոցդ մերոց, և քաջընտիր զաւակացդ սրբոյ Ա-

Թոռոյս Էջմիածնի։ Զի եթէ երկիր օրհնաբանի սակս լինելոյն ընրրի, և ծով դրուատի ունող մարգարտի, և ծառ. ախորժի պտղովք լիալի, ապա որ օրհնութիւն և որպիսի գովութիւն բանիւ բերանոյ ի մէնջ մատուցի բարեբեր տնկոցդ օրհնութեան չառաւիղելոցդ ի բարի և յօրհնեալ արմատոյ յերջանիկ և ի բազմաց ներբողից արժանաւոր նախնեացն ձերոց ի Քրիստոս ննջեցելոց, որոց բարեաց արդասիք ի զանազան զարս պարարտացեալք գտանին ի հին մատենագիրս սրբազան հայրապետաց զանազան օրհնութեամբ, և տեսանեմք յայնս մատեանս զարդարակորովութիւն և բազում. արդիւնաւորութիւն երանելի նախնեաց ձերոց, որք մշտապէս ջատագովք են եղեալ Աստուածաբնակ սուրբ Դահիս, և սորին դահակալացն, և յոդնադիմի կարեկցութեամբ նպաստամատոյց եղեալ ի նեղութեան պահու, և արժանապէս ըստ գործոց իւրեանց զօրհնութիւնս ժառանգել, յորոց մինն հանեալ ի նոյն մատենից՝ առաքի ընդ գրոյս ահա առ ձեզ՝ ի հաւաստութիւն գրեցելոցս։ Զոր երանելի և ճշմարտասէր նախնիքն ձեր գրեալ են առ իշխանսն Երևանու ի ՌԾՂԷ թուին, որով և յորդորեալ զնոսա ի բաց կալ ի յապօրինաւոր Քիւթուրէն, և անդրէն զՂազար օրինաւոր հայրապետն ընկալնուլ, և այլն։ Եւ՝ զի է մեզ զեզերիլ ի գործս հնոց, ոչ ապաքէն և ի մերում ժամանակի յորէ յօծմանէն մերմէ մինչ ցարդ տեսաք և տեսանեմք, և զգամք, և իմանամք զորդւոցդ օրհնութեան ղուղիդ չաւիղս, և վայելեմք ի քաղցրաճաշակ պտղոց ձերոց ի հարազատութեանց ի ջերմեռանդ որդիութեանց և յառաքինական գործոց։ Թողեալ զ ի զանազան ժամանակի ցուցեալ բարելաւութիւնսն ձեր, բուռն հարցուք զնարդենէս, զորս առաւել քան զոր յուսայաքն՝ իւրաքանչիւրքդ ի հասարակի և ուրոյն ուրոյն ցուցեալ էիք զջատագովութիւնս և զմեծագոյն հաւատարմութիւնս Լուսոյ Մօրս ձերոյ և գահակալես սորին դեր քան զնախնիսն ձեր, իրաւամբ բառնալով յահեղ խորհրդոյն զանուն կարգազեղծ և կարգազերծ չարահամբաւին, և ի տեղի զանուն մեր յիշատակելով։ Նոյնպէս զձերդ առատագոյն սէր և զճշմարտասիրութիւն յայտնեալ էիք բանիւք յայդր սիրելով զարդարութիւն, և զհետ լինելով Աստուածային երկիւղին, և գրովք մեզ, յորս և խոստացեալ էիք յարամնալ ի նոյնն։ Զայոսիկ զամենայն և Աթոռակալ Սիմէօն արքեպիսկոպոսն երկարապէս պատմեաց մեզ ընդ ինքեան ցուցեալ զերագոյն մարդասիրութեանց ձերոց.։ Նոյնպէս գիտացաք և Դօվլաթլու փաշայի զբարելաւութիւնսն, զորս և գրով իւրով ցուցեալ էր մեզ, և զբազմադիմի յուսադրութիւնս արարեալ։ Զորս դիտելն մեր ի գրոյ և ի լրոյ՝ լցան սիրտք մեր արդարև ցնծութեամբ, և կենդանացան ոգիք մեր, և բազմաւ գոհունակութեամբ ի բոլոր սրտէ օրհնեցաք զօրհնեալսդ յԱստուծոյ և ի սրբազան հայրապետացն առաջնոց, զորս զօրացուցէ Տէր բարձր բազկաւ իւրով, և երկնաւոր բարութեամբ լցուսցէ, և ի կարիս և ի նեղութիւնս հասցէ ձեզ ի թիկունս, և յամենայնի պաշտպան և վերակացու լիցի՝ փրկելով յամենայն պատահարաց, և յատկապէս պահեսցէ զձեզ Ամենառատ գթութեամբն իւրով ի շինութիւն Տանս իւրակերտի և ի սփոփանս թախծեալ սրտի մերոյ, և զոգիս երջանիկ նախնեացն ձերոց անմահական լուսով զարդարեսցէ ընդ սիրելիսն իւր դասակցելով։ Պատուիրեմ. ուրեմն՝ սիրելեացդ իմոց՝ պինդ կալ ի դոյնն հաստատուն, զի վախճանն է հանդիսադիր և պսակաւորիչ գործոյն, ուստի՝ զովանի վախճանաւ անյեղլի մնալով ի բարեպաշտութեան և ի յուղղութեան, զարդարեսջիք զգործս ձեր բարիս՝ ընդդիմանալով հողմալից ուռուցմանց, և առաւել հաստարմատ առնելով զայնս, որպէսզի՝ ի յերկնաւոր հանդիսադրէն զվարձս բարիս ընկալջիք ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։ Եւ արդ՝ յաւարտ բանիս զայս ծանիք, զի աթոռակալն մեր եբեր և զթունաւորեալ թուղթ Դանիէլին ընդ ինքեան զգրեցեալն առ հասարակութիւն ձեր, զոր ըստ բնաբոյս բարուց իւրոց, լցեալ էր անհամար թունօք. (իբրաւի կոչի Դանիէլ, այսինքն տան օձ դարանակալ ի ճանապարհի, որ է լի ամենայն անկարգութեամբ, որով նախ զինքն թունաւորեալ մահացուցանէ, և ապա թունալի գրովք իւրովք զհոգիս պարզամտաց, և ոչ դադարի ի դարանակալելոյ և ի խածանելոյ զզարշապարս մեր, և զյանցանսըն իւր այլով յանցանօք կամի քաղել, և զերանակիր աչօք լեալ՝ զչիւզս այլոց նշմարէ, և թիւր արարմամբքն ոչ չատացեալ՝ ըզլեզուն իբրև զսուր սրեալ՝ ածէ զմեօք. որով

և վատահամբաւել ջանալ՝ վատահամբաւեալն յամենից և յամենայն ուրեք, և ի ներողամիտ թուլատուութենէն մերմէ համարձակի դեր քան զչափն նկրտել, և յանդգնարար ըղմեզ արհամարհել, որոց ինքն է արժանապէս պատուհասել։ Քանզի՝ ամենայն բերան խոստովան լինի՝ թէ է նա քակտիչ Աթոռոյս, խռովարկու ժողովրդոց, և խանգարիչ բարեկարգութեանց Ազգիս և միաբանիս։ Քակտիչ է, որ ուր և եղիս զարդիւնսն սրբոյ Աթոռոյս վատնեաց, ի յառաջնորդութեան՝ Զմիւռնիոյն, ի նուիրակութեան՝ զՌուռումելուն, ի պատրիարգութեան՝ զպատրիարգարանինն, և ի ցանկալն լինել կաթուղիկոս՝ զԱթոռոյսն. քանզի՝ ահա երկու ամ է, և այլ աւելի, յորս բաղձալ այսմ իշխանութեան հասանիլ, և Աստուած իրաւամբ զրկէ։ Ուստի և անկեալ յանկեան տեղիս՝ զօրէն արբեցոց՝ այսր անդր դեղևի, և ի ծովու ընկղմեալ՝ զձեռն յանարժան իրս ձգէ, և զով և գտանէ, յօգնութիւն իւրն կոչէ, և անդադար թղթոց և թաթարաց երթևեկութեամբ զմեծամեծս վատնէ և դայթակղեցուցանէ զբազումս, և ի վերջոյ եկեալ յայդր՝ զբեռն լուսահոգի Ներսէս վարդապետին յափշտակեաց, և ի վերայ այնր արդեամբ մերով գնեալ բեռինսն զեկեալսն յԶմիւռնոյ եկուլ, և բաց ի զմեզ վնասելոյ՝ զքաղաքդ այդ վեր ի վայր արարեալ տուգանեաց զխըղճալի ժողովուրդսդ մեր, և եկեալ ի Բալաղիա յափշտակեաց զաւանդսն սրբոյ Աթոռոյս, և յայլ և այլ տեղեաց անդ ժողովեալ դինչսն և զարդիւնսն, ի պատճառս նորա կաթուղիկոսութեան եղև և առեցեալ դրամքն խանին երկրիս. քանզի արք ախաալիցք կամելով միանդամայն զախտս իւրեանց և զնորայն պաշտել՝ խոստացան զայնքան զումարն խանին, զի սպասեսցէ նորա գալստեանն, և իբրև ոչ յաջողեցաւ նմա գալ, և արժանաւորիլ այսմ պատուոյ, և զրկեցաւ ի շնորհաց Տեառն, որպէս և յառաջին նուաղին, զայն զումար ի մէնջ էառ խանն, զոր առանց խղճի և ամօթոյ ի վերայ մեր բարդէ։ Թողում և զայլ հասուցեալ մեզ վնասսն, որ նուիրակունքն մեր յամենայն ուրեք կան արգելեալք, և գործք սրբոյ Աթոռոյս ի վերայ երեսի մնացեալք ի պատճառս միմեայն փառամոլ սևագլխի, և նորա ի մի ամս թաթարի առեցեալ դրամն զանցանէ զամենայն ծախուք մերովք, զոր թողում զի ըստ ապիրատութեան՝ ի Տեառնէ ընկալցի զարժանի զհատուցումն։ Խռովարկու է ժողովրդոց, որ ուր և գնաց՝ թարց աղմուկի չել, եմուտ յԶմիւռին, խռովեալ ըղքաղաքն ամենայն՝ արտաքսեցաւ անպատիւ, խաղաց՝ ի Պոլիս՝ և տակաւին ոչ դիտելով ոմանց զնորին բնութիւն կացուցին պատրիարգ, և ըստ ընդաբոյս բարուցն գործեալ զանպատշաճս՝ չողաւ յաքսորս և յերկուց աթոռոց զրկեալ՝ ի պատրիարգութենէ և ի կաթուղիկոսութենէ նստաւ ի դետնի, եկն ի քաղաքդ՝ և զխաղաղութիւն քաղաքիդ խռովեալ՝ մերժեցաւ անարգութեամբ ի ձէնջ, որք ձեզ լաւապէս են յայտնիք, և ի Բալաղիտ նստեալ՝ զթոյն իւր ապականարար լցոյց գրով յաշխարհ ամենայն, ի հիւսիս, ի Թիֆլիզ, ի Պոլիս, և յայլս, և ապականեալ զսեալիս ամենից՝ գայթակղեցոյց զնոսա, և զամենեսին ամբոխեալ՝ եթող յալեկոծութեան. որք յերկու ամս ամբողջ՝ ազգ մեր գլխովին հանդերձ միաբանութեամբ կան յերերման և ի ծփման, յաւ էր նմա կապել ընդ պարանոցն զերկանաքար, և կործնիլ, քան դայթակղեցուցանել ոչ զբազումս, այլ զմի ի փոքրկանցս։ Եւ խանգարիչ է բարեկարգութեանց, որ զկրօնս և զպարկեշտ կարգս եկեղեցւոյ մերոյ, և զբարեշուք իշխանութիւն հայրապետութեան՝ ընդ ոտիւ թաւալեալ և առ ոտն հարեալ՝ ծաղր և ծանակ կացոյց առաջի ամենայն ազգաց մերոց և օտարաց, և զսիրտս բնաւից՝ ցրտացոյց ի սրբոյ Աթոռոյս, և արձան մշտնջենաւոր կանգնեաց նշան վատահամբաւութեան իւրոյ, զի ընթերցի յազգաց յազգս, և նզովս և անէծս կարդասցի ի բազմաց զկնի նորա, և յետ ամենայն չարութեանց՝ սկսաւ և զողորմելի միաբանից մերոց զսիրտսն ևս պղտորել, ոմանց դպատիւ և զաստիճան խոստանալով, զորս ինքն տակաւին ոչ ունի, և զոմանս ահացուցանելով, յորոց ոմանց երկուցեալ ի բանից նորա, և ոմանց խաբեցեալ, թարց գլխաւոր առթի՝ զաղմուկ չփոթից հանեալ՝ դիմեցին յԵրևան առ խանն, և մինչ հասու եղաք իրին մեք և խանն, և ինքեանք ևս զգացին զնենգութիւնս չարասիրին՝ սարջացեալ յարարից իւրեանց դիմեցին առ մեզ մեղայիւ, և զթութեամբ ընկալեալ՝ սփոփեցաք զամենեսեան և ներեցաք զորս անգիտութեամբ գործեցին, և ուխտեցին կալ

այնուհետև ի հպատակութեան և ի հարազատութեան, դրեցին զնոյնն ի մերձաւոր տեղիս, որպէս և առ. ձեզ ահա։ Ուստի՝ և մեր այլ ոչ ևս կարացեալ տանիլ զարարսն նորա, ահա վասն այսչափ և այսքան անօրէնութեանց իւրոց նզովեցաք ղքակտիչն Տանս Աստուծոյ, զխռովարկուն օրհնեալ ժողովրդոցդ Քրիստոսի, և զխանգարիչն ամենայն կարգաց և կրօնից մերոց, և իբրև զնեխեալ անդամ հատաք Աստուածայլին սրով ի յեկեղեցւոյս Հայաստանեայց և ի կարգաց, զոր ոչ միայն ոչ պարտիք ճանաչել հայրապետ Հայոց, այլ և ոչ կարգաւոր, զի լուծաք մեք մերով հայրապետական բարձր իշխանութեամբ զնա յամենայն աստիճանաց, և երկու հազար հինգ հարիւր սուրբ հարքն, որք գումարեցան ի Սեաւ լերինն, նզովեալ ընդ բանիւք արկին ոչ զիմապլիսի օրինաւոր հայրապետն և զօծեցեալն, այլ զայն, որ անձնամատոյց լինի, և արծաթով ի բանաւորաց յառաջ կոչի, և վեր ի վայր առնէ զտաճարն Աստուածայլին, և ըղժողովուրդսն նորին և զմիաբանսն, որ նա ինքն է։ Գուցէ տակաւին չիցէ տեղեկացեալ պատճառացն գումարման նոցին, վասն այն աստէն իրազէկ զինքն արարաք. զի ծանիցէ զինքն ոչ միայն ի մէնջ բանադրեալ, այլ և ի հազարաւոր սրբոց հարց նզովեալ և արտաքս ընկեցեալ։ Եւ զամենայն համախոհս նորին և զկամակիցսն, և որք հաղորդին նմա յայսմհետէ, առնելոց եմք ըստ սոյն սարասի. եթէ ոչ դարձցին ի չարեաց իւրեանց և զըղջասցին։ Բայց զորս մինչ ցարդ արարին և գործեցին համախոհք նորին թէ գիտութեամբ և թէ անգիտութեամբ՝ թողումք ի միւս անգամ գործելն՝ նման նմին ընկալնլոց են ի մէնջ թարց ներողութեան արդար վրէժխնդրութեամբ զհատուցումն առաւել քան զնորայն։ Իսկ վասն թէմէջսուկացն զորս չաղփաղփէ թէ՝ իցեմք մեք հնարեալ յանուն իւրն՝ ահա զայնմանէ բոլոր միաբանք սրբոյ Գահիս ստուգութեամբ զիրսն քննեալ բաղմակնիք թղթով, ծանուցին աստուածպաշտութեան ձերում, անտի գիտասջիք, ղհոգւոյ մերոյ պարզութիւն, և զսրտի նորին զաղտեղութիւն, և իրաւամբ զատեցէք, մեք եմք սանդարամետականն, որ չեմք միանգամ ևս զմտաւ ածեալ, թէ ինքն է անդնդայլին և դիւազգեաց, որ և գրով արձանացուցանէ զմտացածինն իւր, և ի վերայ մեր զնէ անամօթաբար։ Իսկ այլ անպատշաճ գրուածոց նորին՝ ոչ կամեցեալ տալ զպատասխանի անարժան այնմ վարկանելով թէև կարէաք, կնքեմք զբանս մեր զի մի ընդ անզգամին կցորդ լիցուք. ողջ լերուք Տերամբ Քրիստոսիւ և զօրացեալք Ամենաբարձր Աջով նորին, և Շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ ձեզ ամենեսին, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուաջս, և ի մայիսի ... յԱստուածաէջ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ԾԳԸ. *Թուղթ ի Բամբակածոր առ պօլկովնիկ Պաւլայն ի պատասխանի թղթոյն ընդ Սարգսին գրեցելոյ։*

Որում և գիտութիւն լիցի, զի թուղթ ձերդ դերազնութեան ընկալաք ի ձեռն Սարգսին, և գիտացեալ զբարի գալուստդ յայդր, և զհաւատարմութիւնդ առ. սուրբ Աթոռս և առ. մեզ, ցնծացաք յոյժ, և օրհնեցաք առաջի աստուածաբնակ սուրբ տաճարիս զանգին կեանս ձեր, զոր տէր օրհնեսցէ և յաչս օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն միշտ քաղցր և սիրելի պահեսցէ և գերագոյն աստիճանաց հասուսցէ։ Շնորհաւորեմք և զբարի գալուստդ, և խնդրեմք, որքան զօր առաւելով զդոյն ճշմարիտ սէրդ, և ի բարեկամութեանդ, զոր սկիզբն արարեր, հաստատունմնալ, որպէսզի՝ հանապազ օրհնութեան և գերագոյն սիրոյ վայելող լինիցիս։ Մեք ևս որպէս մինչև ցայժմ եղեալ եմք հաւատարիմ օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն, և նորին զօրապետացն, նոյնպէս և յայսմհետէ լինելոց եմք հարազատ, և կամք ի նոյնն, և ձեզ ևս ցուցանելոց եմք առաւելապէս, զթուղթդ որ առ. Խանն գերապատիւ յղեցի, և զպատասխանին ի նմանէ առեալ, ընդ մեր հաւատարիմ Յովակիմ տղային առաքեցի առ. պատուականութիւն ձեր և բերանօք ևս պատուիրեցի զամենայն ինչ ծանուցանել ձեզ՝ ըստ որում չէր հնար զայնպիսիսն գրով դրել։ Եւ կողմանցս որպիսութիւն ի պարոն Կնօրինի դեսպանէն կարէք լիապէս գիտել, որ ահա եկն

յայդր, ուստի՝ ոչ երկարեմ։ Իսկ Բալազիտոյ փաշայի Թուղթն, զոր գրեալ էիք ընդ Սարգսին յղել ի Բալազիտ, Սարգիսն ոչ կամեցաւ դնալ, վասնորոյ՝ երկու մարդով իմ յատուկ չաթրաւ և այլով հաւատարմաւ յղեցի առ նա, և սպասեմ պատասխանւոյն, զոր ի յընկալնուլս, ընդ Սարգսին յղեցից առ սիրելիդ իմ. և զՍարգիսն պահեցի աստ վասն այսմ։ Մեք չունիմք դալլ ինչ խնդրելի ի ձերդ զերազնուութենէն բաց յայսց, զԹուղթ ձեր ի մէնջ աննուաղելի առնել ընդ բարեկամութեան, զմերս հաւատարմութիւն զոր ունիմք առ նորին կայսերական մեծութիւն՝ ծանուցանել ում հարկն է. և մանաւանդ կարդաւորք, որք գան յայդր ի սրբոյ Աթոռոյս՝ չթողուլ երթալ ի Թիֆլիզ Թարց մերս Բաչփորթի և վկայականի և կարմիր կնքոյ։ Յաւել յայսմանէ՝ ցանկամք մշտագուարճ առողջութեան ձերոյ և բարեբաղդութեան, ողջ լերուք ի սէր մեր, Ամէն։

Ի մայիսի... 1802 յԱստուածակերտ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին, որ ի դաշտս Արարատեան։

ՃՂԹ. *Թուղթ դարձեալ ի Թիֆլիզ առ Մոնթոյենց Յովսէփն, յորդորումն ի սէր եւ ի հաւատարմութիւն առ սուրբ Աթոռս, եւ ի ծեռնտուութիւն վարդապետաց մերոց՝ կամ յայսկոյս եւ կամ յայն կոյս առաքելոյ:*

Եւ ընդ սիրոյ և օրհնութեանս Աստուածայնոյ՝ դիտասջիր սիրելիդ մեր ի Քրիստոս՝ և օգտախոհ որդի մեծի Աթոռոյս սուրբ Էջմիածնի։ Զի յայսքան երկար միջոցի՝ յորում շնորհիւ ամենասրբոյ հոգւոյն կոչեցեալ եմք ի կարդ և յԱթոռ. հայրապետութեան սրբոյ Աթոռոյս և օրհնեալ ազգիս հայոց, թէպէտ ոչ սիրելիդ դրեցեր առ մեզ զԹուղթ ի բացայայտութիւն սիրոյդ և որդիութեանդ, և ոչ թէ մեք կարացաք գրել, և այն՝ ի պատճառս բազմազան հոգոց և զբաղանաց մերոց։ Այլ ի ներկայումս հաւատարիմք և սիրելիք մեր որք յայդր, և մանաւանդ՝ հոգևոր որդին մեր Տէր Սիմէօն շնորհունակ քահանայն՝ դրեալ ծանուցեալ էին մեզ զմեծութիւն որդիական ջերմագին սիրոյդ և կատարեալ հարազատութեանդ առ լուսաւոր Ծնօղս քո սուրբ Աթոռս և զմտերմօրէն ջատագովութիւնդ և զօգտախոհութիւնսդ առ մեզ։ Որովք ախորժալուր համբաւովք ստացեալ մեր զխիւր սրտի, շնորհակալ եղաք զբարեմիտ սիրելւոյդ, և օրհնեցաք զքեզ լիադոյն օրհնութեամբ։ Զոր Տէր օրհնեսցէ՝ և զօրացուսցէ՝ և կարողացուսցէ, և ընդ հաւատարմութեանցդ առ մեզ վարձատրեսցէ առաւելապէս ի յերկակի կեանս քոյ. փրկեսցէ ի յամենակերպ փորձանաց և ի վտանգից, և պահեսցէ ընդ հովանեաւ խնամոց և բարեգթութեան իւրոյ ի խաղաղութեան, ի յաջողութեան և ի բաբեզուարճութեան հանդերձ համայն օրհնեալ ընտանեօք քովք։ Արդ՝ ի բացայայտութիւն օրհնութեան և շնորհակալութեան մերոյ, և ի յարծարծումն սիրոյ և բարեկամութեան՝ դրեցաք զայս Թուղթ առ ազնուամիտ սիրելիդ, որով և յիշատակեմք զայս, զի ահա տեսանէք և իմանայք՝ Թէ սոյն այս խղճալի սուրբ Աթոռ Մայրս ձեր զիարդ սկսեալ է աւերիլ և քայքայիլ ի ձեռն յաչաղկոտաց և զրաբանից, որք ըստ Տեառն բանի՝ սիրելով զփառս մարդկան առաւել քան զփառս Աստուծոյ, անդադար ջանան և աշխատին վասն աւերման և անկման սորա և մեր, զի անձանց իւրեանց ստասցին զփառս։ Բայց դուք որ հարազատ որդիք էք սրբոյ Աթոռոյս՝ և հաւատարիմ սիրելիք մեր, պարտիք ցաւիլ վասն աղէտից լուսածին մօրս ձերոյ սրբոյ Աթոռոյս՝ և մեր իսկ. և կամիլ յօդնութիւն հասանիլ սմա, և զորինչ օգուտն է և բարին սորա և մեր՝ զայն խորհել և առնել, որպէս վայել է որդւոց հարազատից։ Ուրեմն, զի ընդ յարդելի օրհնեալ իշխանացն քաղաքիդ խորհելով համակամութեամբ զցաւս և զվիշտս մեր ծանուսջիք գեղաշուք և մեծահամբաւ՝ մեծամեծացն տեղւոյդ, և վասն Կարապետ և Աբրահամ եպիսկոպոսաց մերոց խնդիր արասջիք, զի զզօսա կամ ըստ խնդրոյ մերոյ ուղևորեսցեն յԱրքայական դուռն, և կամ դարձուսցեն յետս առ մեզ։ Դարձեալ զայս ծանիր. զի սիրելի և հոգևոր որդին մեր՝ միւս Աբրահամ Աստուածիմաստ վարդապետն և շնորհապերճ եպիսկոպոսն՝ զոր առաքեալ եմք վասն ժողովման մոմոյ՝ ի նիւթ լուսավառութեան Աստուածեան սուրբ տաճարիս,

լիրաւ ի զա պիտանի էր մեզ ի բազում իրս, և բնաւ ոչ վայելէր այժմ պաշտօնի, բայց մեք ի սէր համաշխարհիկ ժողովրդոցդ մերոց առաքեցաք, առ ի քարոզել ձեզ զբանն կենաց ընդ վերնածիր իմաստութեան իւրոյ, և մխիթարել զձեզ հոգևոր վարդապետութեամբ։ Եւ վասն այսր պատճառի մինչ առաքէաք, զայն գործն ևս իբրև երկրորդ պատճառ՝ յանձնեցաք դմա, զի շուտով կատարեսցէ զայն՝ և դարձցի։ Բայց քանի ժամանակ է՝ որ դա եկեալ է յայդր և պարապ նստեալ կայ։ Վասն որոյ գրեմք, զի թէ օրհնեալ ժողովուրդքդ տալոց էք զմոմն զհոգևոր պարտոն ձեր, ձեռնտու լիջիք դմա, զի ժողովեսցէ՝ և բերցէ ի սուրբ Աթոռս ի նիւթ լուսավառութեան սորա։ Իսկ թէ ոչ կամիցիք տալ զմոմ դորա յայդր միայն աւելորդ է. աւուրբ միով յառաջ ուղևորեսջիք զդա առ մեզ, որ կարի հարկաւոր է լիւրապատշաճ գործս։ Եւ մեք բարելաւութեանց ձերոց աղագաւ շնորհակալ լինելոց եմք օրհնութեամբ։ Որ և ի սէրդ և ի բարեկամութիւնդ առ մեզ հաստատ մնալով, և երբեմն սիրանիշ թղթովդ զմեզ մխիթարել կամելով՝ ողջ լեր ի Տէր։ Ամէն։

Գրեցաւ յամի կենարարին 1802 և ի մայիսի... ի սուրբ Էջմիածին։

Մ. Թուղթ ի Հաշտարխան առ Պլատոն սրբազան արքեպիսկոպոսն յաղագս սիրոյ եւ խաղաղութեան։

Յորմէ Յիսուսածիր սուրբ ողջունիւ, և ճշմարիտ սիրով սուրբ հոգւոյն և բազում բաղձանօք գիտութիւն լիցի մեծապատիւ եղբօր մերոյ սիրելւոյ, Տեառն Պլատոնի սրբազան արքեպիսկոպոսի, և տիրախնամ քաղաքիդ Հաշտարխան արժանաւոր կառավարչի և զանազան նշանակրի. քանզի՝ որք միաբան աշակերտեալք եմք երկնաւոր վարդապետին Յիսուսի, և մանաւանդ որք ենթարկեալ եմք ըզպարանոցս մեր ընդ քաղցր լծով նորին, պարտաւորիմք ստոյգ սիրով ոչ միայն զմերձաւորս սիրել, այլ և զհեռաւորս. զի ոչինչ է արգել սիրոյ, ոչ հեռաւորութիւն վայրաց, ոչ ուրոյնութիւն լեզուի և ոչ փոփոխութիւն ժամանակի։ Արդ՝ սոյն կատարեալ սիրով, զոր շնորհեաց մեզ Տէրն մեր Քրիստոս, զգերապատիւ եղբայրութիւն ձեր սիրել ստիպէ, զմեզ բարելուր համբաւն, զոր յարաժամ լսեմք ըզձէնջ։ Այն զի՝ մինչ գրեցաք զառաջինն զառաւելութիւնն սիրոյդ, զոր ունիք առ մերազնեայսն տեղւոյդ, առ սուրբ Աթոռս մեր, և առ մեզ փութացաք սիրալիրական թղթով մատչիլ առ ձերդ սրբազնութիւն, զոր և յղեցաք ընդ Գրիգոր արքեպիսկոպոսին մերոյ, զորոյ զդարձն չընկալաք ցարդ։ Եւ ապա, իբրև վերստին բարեկամք ոմանք գրեալ էին մեզ այտի զխնամարկութիւն ձեր ի վերայ ինքեանց, և զմարդասէր և իրաւախոհ բարս ձեր, և զճշմարիտ բարեկամութիւնդ զոր ունիք յատկապէս առ սուրբ Աթոռս Աստուածաբնակ, և առ մերս նուաստութիւն, վասնորոյ զայս թուղթ սիրոյ և ողջունի՝ երկրորդեցաք առ ձերդ եղբայրութիւն շնորհակալելով զձէնջ յաղագս ցուցեալ խնամարկութեանց ձերոց մերազանց։ Հայցեմ ուրեմն ի մեծապատիւ յայրութենէ ձերմէ, զի դուք առ մեզ զայն ճշմարիտ սէր երևեցուսջիք գրով և արգեամբ ըստ մեզ, և զսուրբ Աթոռս և զմեզ ի սէր ձեր ունիջիք, յամենայնի օժանդակ լինելով տկարութեան մերոյ և վշտակրութեան, որ տառապիմք բազում նեղութեամբք ի մէջ անօրինաց։ Քանզի և մեք բոլոր միաբանիւք ազգովին աղօթող եմք առաջի Աստուածային տաճարիս վասն անդին կենաց աստուածապսակեալ օգոստափառ մեծի կայսերն, և համայն պալատականացն նորին, և ամենայն զօրապետացն և զօրացն։ Զորս ամենաթագաւորն Քրիստոս յաղթող պահեսցէ մինչ ի կատարած աշխարհի, բոլոր ժառանգակցօքն իւրովք շնորհիւ սրբոյ խաչին կենսատուի, ի պարծանս և ի հաստատութիւն եկեղեցեաց մերոց, և ևս առաւել մեզ տառապելոց։ Եւ արդ՝ այս է մեր խնդիր ի ձերդ պատուականութենէ, զի Եփրեմ վարդապետն ծանուցեալ է գրպարտութեամբ օգոստափառ կայսերն՝ զբազում սուտ բանս վասն մեր, զքաղցր սիրտ նորին վրդովեալ, և մեք առ ի ճշմարտութիւն յայտնել, առաքեցաք աստի զերկու եպիսկոպոսս զԿարապետ և զԱբրահամ ի դեկտեմբերի 13ն բազում թղթովք ի յատս նորին կայսերական մեծութեան, զի քննութեամբ զիրաւունս արասցէ և մեզ ի զուր բամբասելոցս

դրաւականութիւն տացէ, և նոյն եպիսկոպոսունքն մեր կան ցարդ արգելեալ ի Թիֆլիզ, զպատճառն անգիտանամք։ Վասնորոյ խնդրեմք խոնարհաբար նախ զիրաւացի բողոքս մեր հասուցանել ի յունկս աստուածապսակեալ օգոստափառ մեծի կայսերն, և քաղցրացուցանել անդրէն զսիրտ նորին ի վերայ սրբոյ Տանս Աստուծոյ և ի մեր, և ապա դուք ես ի բաց հեռացուցեալ զլսելիս ձեր ի սնոտի բանից նախանձոտաց, ի մխիթարել զանմխիթար սիրտ մեր, և հզօր ձեռնտուութեամբ ի յօգնել մեզ նեղելոցս փութասջիք սիրանիշ և ուրախարար գրովք ձերովք, որովք պարտաւորէք զմեզ արդարև զամենայն աւուրս կենաց մերոց շնորհակալիլ բազմապատիկ ըղձերդ եղբայրութենէ. ողջ լերուք ի յողջ գըլուխն Քրիստոս ի յուրախութիւն սրտի մերում ամէն։

Ի մայիսի ի 1802, յԱստուածակերտ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին, որ ի դաշտս Արարատեան։

ՄԱ. *Թուղթ ի միաբանից առ ինքնակալ մեծ կայսրն Ռուսաց, խնդիր վասն հաստատութեան սրբազանիս, եւ բանք վասն Դանիէլ վարդապետին։*

Ամենաւողորմած թագաւոր և խնամակալ ազգիս մերոյ խոնարհաբար յայտարարութիւն լիցի. ի յաստուածակառոյց սրբոյ և մեծի Աթոռոյս Էջմիածնի խոնարհ պաշտօնէից և ջերմեռանդ աղօթաւորաց ձերոց ի բոլոր միաբանից այսինքն յարքեպիսկոպոսաց, եպիսկոպոսաց, ի վարդապետաց, ի յաբեղայից, և ի համայն հոգևորական խմբից։ Այլ և յանապատաց և ի վանօրէից առաջնորդաց, ի միանձանց, և ի կրօնաւորաց։ Նաև Երեւանայ նահանգիս ի քաղաքաց և ի գիւղականաց, քահանայից, ի Մէլիքաց, ի յիւզբաշւոց, ի տանուտեարց, յիշխանաց և ի ժողովրդոց ի մեծաց և ի փոքունց։ Զի Հայաստանեայց սուրբ եկեղեցիս ի լուսաւորչէ և ի սրբազան հայրապետաց ունի զօրէնս վասն հաստատուն և անփոփոխելի պահելոյ զգահակալն իւր և զօծեալ կաթողիկոսն, քանզի երջանիկ հայրապետքն մեր գիտելով զազգի ազգի վնասսն որք ծագին ի փոփոխութենէ կաթողիկոսաց, միանգամ վճռեալ են, և նզովիւք փակեալ հաճութեամբ ազգին և միաբանից օծեալ կաթողիկոսն՝ մինչև ցմահն անփոփոխ մնալ, զի եթէ ոչ իցէր այսպէս, այլազգիք յաղագս հարկապահանջութեանց և կամ այլ ինչ ինչ պատճառի ձգեալ զմինն յԱթոռոյ, զմիւսն նստուցանէին, և կամ փառամոլ անձինք, ի ձեռն կաշառաց լափշտակէին զայս իշխանութիւն բռնութեամբ, ընդդէմ կամաց ազգին և մեր, և այսպէս ի փոփոխիլ ամսոց փոփոխէր և կաթողիկոսն հայոցս. սակս այսր և այլ սոյնպիսի վնասուց բազմիցս բազմաջումար սինհոդոսին ամրացուցին սուրբ հարքն մեր, զի օծեալ կաթողիկոսն մինչև ցվախճան կենաց իւրոց անփոփոխելի կացցէ յիւրում իշխանութեանն. որպէս զայսոսիկ ծանուցեալ թագաւորք Հագարացւոց և Պարսից ի հրովարտակի իւրեանց ամրափակեալ են սաստկապէս թէ կաթողիկոսն հայոց ըստ ծիսի իւրեանց մինչև ցմահն իւր անփոփոխելի լիցի և այլն։ Արդ մեք բոլոր միաբանք սրբոյ գահիս և մնացորդք երկրիս, ի մի վայր եկեալ առաջի աստուածային սուրբ տաճարիս բազում քննութեամբ և յօժարակամ սրտիւ յառաջ կոչեալ զՏէր Դաւիթ սրբազան կաթողիկոսն, որ նախագահ էր ի մեզ, և արժանաւոր այսմ առաքելական կոչման, օծաք հայրապետ և կացուցաք պատրիարգ ի վերայ Տանս Հայոց, ի վերայ բոլոր ազգիս մերոյ և ի վերայ մեր, շնորհիւ սրբոյ Հոգւոյն և կամեցողութեամբ համայնիցս և շրջակայ քաղաքաց երկրիս, ըստ կտակի սրբազան Յովսէփայ հանգուցելոյն, որպէս վասն այսմ կան առ մեզ բազմակնիք ստորագրութիւնքն բոլոր բնակչացն Թիֆլիզու հանդերձ հաւանութեամբն ինքեանց։ Եւ ըստ կանոնի սրբազան հայրապետաց և սահմանադրութեանց սուրբ եկեղեցւոյս, պահելոց եմք աստուծով անփոփոխելի, մինչև ցվախճան կենացն և մնալոց եմք սիրով ընդ հոգևոր հովուութեամբ սորին և զայսպիսի գործս ըստ սովորութեան մերոյ ծանուցաք և ընդհանուր ազգիս մերոյ ի Պօլիս և յայլուր, որք միասիրտ և միակամ ընդ մեզ եղեալ բազմակնիք մահսէրօք և շնորհաւորական թղթովք ցուցեալ էին զհամահա-

ճութիւնս իւրեանց, որպէս և քաղցր ակնարկութեամբ ձերով, հանեալ եղեն և հրովարտակքն ի դրանէն արքունի։ Եւ այսպէս թէ մեք և թէ ազգ մեր, ի խաղաղութեան կալով, ուրախութեամբ օրհնէաք զաստուած ի մերում կրօնաստանի զկատարիչն այսմ գործառնութեանս։ Ապա՝ մինչ բանսարկուք ազգի և քաղաքի լցեալ նախանձու պղտորեցին զանվրդով սիրտ ձերդ կայսերական մեծութեան ի ձեռն նենգուպատիր բանից, և զքաղցրութիւն ձեր ի դառնութիւն փոխարկեալ, բարձին զգթութիւնս ձեր ի սրբոյ Աթոռոյս մերոյ և ի ջերմեռանդ աղօթաւորացս ձերոց զըրաբանութեամբքն իւրեանց, իբրու զարծաթեղէնս իցէ խորտակեալ սրբազան տէրս մեր և ընդդէմ կամաց ազգին և մեր բռնութեամբ նստեալ և այլն։ Վասնորոյ հարկ համարեալ՝ առաքեցաք ի լոյս կայսերութեան ձերոյ երկուց թագաւորաց զՊարսից և զՀօգարացւոց հրովարտակսն և զբազմակնիք մահսէրսն պօլսեցւոց և ընդհանուր ազգիս մերոյ, հանդերձ շնորհաւորական թղթովք, հոգևորական և աշխարհական անձանց, մինչև փաշայից և խանից հաւանութեան թուղթսն ես ձեռամբ երկուց արք եպիսկոպոսաց Կարապետի և Աբրահամու, զի ծանիցէ ձերդ կայսերական մեծութիւն այնոքիւք զճշմարիտն և զսուտն և արդար իրաւամբ զգենութիւն արարեալ, զբաւականութիւն շնորհեսցէ զըկելոյն գնելով ի գլուխ սրբազան հայրապետիս մերոյ իբրև զպսակ արդարութեան զբարձրագոյն դրամատն հաստատութեան պատրիարգական իշխանութեան սորին։ Եւ նոյն եպիսկոպոսունքն մեր կան ցարդ արգելեալքդ ի Թիֆլիզ քաղաքի, և պատճառն չէ մեզ յայտ. եթէ իգութ չարժեալ հրամայեսցէ ձերդ կայսերական մեծութիւն եպիսկոպոսացն այնոցիկ գալ և ներկայանալ առաջի ձեր, ճշմարտին յայնժամ այսոքիկ բանք մեր և ամօթապարտ լինին թշնամիքն ճշմարտութեան։ Քանզի զարծաթէղինացն, զորս ասեն, ըստ ամենայնի սուտ է և անաստուածութիւն մեծ, զի մեք ամենեքին վըկայեմք առաջի Աստուծոյ, որ ամենայն զարդք սրբոյ տաճարիս կան ցարդ ամբողջապէս, և եթէ սուտ լիցի այս մեր վկայութիւն, կարէք քննութեամբ ի ձեռն հաւատարմաց ձերոց ստուգել։ Իսկ զազգն և զմիաբանութիւնս մեր եօրը պատճառեն, առ այդ ես՝ լղեալ եմք զհամահաճական բազմակնիք մահսէրսն ազգին, բոլոր միաբանիցս և երկրականացս ընդ վերոյգրեալ եպիսկոպոսացն մերոց, անտի ունի տեղի կանալ ձերդ կայսերական մեծութիւն, զորոց ոչ երկրորդեմք։ Եւ ի վերայ այսր վկայեմք ես՝ որ նախ ինքն Դանիէլ վարդապետն է վատնիչ արդեանց սրբոյ Աթոռոյս և պղտորիչ ժողովրդոց, և ի ձեռն կաշառաց ընդդէմ կամաց ազգիս և մեր կամի զանփոփոխելի հայրապետութիւն ազգիս ընդ փոփոխութեամբ արկանել, և բռնութեամբ յափշտակել զայս հայրապետական աստիճանս։ Քանզի՝ մինչ չկարաց զստութիւնս իւր յառաջ տանել առաջի անօրինաց, Պարսից և Հագարացւոց, ի ձեռն բարեհռչակ տէրութեան ձերոյ կամի զմնասակար կամս իւր պաշտել, և զօրէնս սրբազան հայրապետացն լուծանել։ Ուստի՝ և մեք որ ցանկամք ի վաղուց հետէ քաղցր հովանաւորութեան ձերոյ, առ ի հաստատուն պահել զօրէնս մեր և զպայծառութիւն եկեղեցեաց մերոց, ոչ կամիմք թէ՝ հիմնեալն ի սրբոյ Լուսաւորչէն սուրբ Աթոռս այս, և ի մէջ օձաբարոյից և ի ձեռաց գազանաց, ի յանգլուխ զօրացն Պարսից հաստատ մնացեալն մինչ ցարդ՝ ի ժամանակս հանրաչէն և Աստուածահաստատ տէրութեան ձերում քակտեսցի և աւերեսցի, և անփոփոխելի հայրապետութիւն ազգիս ընդ փոփոխութեամբ անկցի. ծագեսցին ուրեմն ընդհանրածաւալ ճառագայթք ողորմութեանց ձերոց ի վերայ խղճալի Տանս Աստուծոյ, որ յերկու ամս ահա ի պատճառս Դանիէլ խռովարարին մեծապէս վնասի և մերձ է յաւեր, և զամենայն բանս թշնամեաց անարգեալ, քաղցր ակամբ և գըթութեամբ հայեսջիք ի մեզ և ի տառապեալ ազգս մեր, և իրաւամբ և արդարութեամբ ամենաողորմածաբար շնորհեսջիք զդրամատն վերահաստատութեան սրբազան հայրապետիս մերոյ զի անփոփոխելի կացցէ օրէնք ազգիս մերոյ, և ի շինութեան մնասցէ Աթոռս այս, և ի դուռն արքունի ի Պօլիս ես հրամայեսջիք վերահաստատել զառաջին հրովարտակն իւր, առ որ ակնադէտ ժամէիժամ սպասեմք մեք հանդերձ բոլոր Հայկազեան սերնդովք։ Ողջ լեր պսակաւորիչ ազգի մերոյ, Աստուածապսակեալ օգոստափառ կայսր ինքնակալ, ի հաստատութիւն եկեղեցեաց մերոց, ի պար-

ծանս բոլոր խաչազդեցից, և ի մխիթարութիւն աղօթաւորացս ձերոց ստորակնքողացս թղթոյս։ Ի մայիսի... 1802 յԱստուածակերտ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին որ ի դաշտս Արարատեան։

ՄԲ. *Ի Միաբանից առ ինքնակալ կայսըրն Ռուսաց, խնդիր վասն հաստատութեան սորին, և բանք վասն Դանիէլ վարդապետին։*

Մեր ամենաողորմած թագաւոր... Ջերմեռանդ աղօթարարք և խոնարհ պաշտօնեայք Աստուծոյ... բոլոր միաբանք սրբոյ և մեծի Աթոռոյս Էջմիածնի, այսինքն արքեպիսկոպոսունք, եպիսկոպոսք, վարդապետք և աբեղայք, յայտնեմք ճշմարտութեամբ զուղղութիւն, և զարարս Դանիէլ վարդապետին, և զվերջին խնդիրս մեր առաջի աստուածազօր կայսերութեան ձերոյ։ Նախ՝ եթէ արք խառնակիչք ազգի և քաղաքի զրաբանեն զսրբազան հայրապետէս մերմէ՝ իբրու զարծաթեղէնսն իցէ խորտակեալ, և բռնաւորաց տուեալ, և նոքօք լափշտակեալ զայս Աթոռ և այլն։ Ըստ ամենայնի սուտ է և անաստուածութիւն մեծ։ Քանզի մեք ամենեքեան վկայեմք առաջի ճշմարտին Աստուծոյ, որ ամենայն զարդք սրբոյ տաճարիս կան ցարդ ամբողջապէս, և կարէք ստուգել զգրուածս մեր ևս ի ձեռն քննութեան, հաւատարմաց ձերոց։ Երկրորդ՝ եթէ ղազգն և զմիաբանութիւնս մեր պատճառեսցեն նոյն թշնամիքն արդարութեան, իբրու ազգն և մեք ոչ կամիմք զհայրապետութիւն սրբազան տեառնս մեծի և այլն, առ այդ ևս յղեալ եմք զհամահաճական բազմակնիք մահսէրսն ազգիս մերոյ, և բոլոր միաբանիցս և երկրականացս ընդ վերոգրեալ եպիսկոպոսացն մերոց, անտի կարէք գիտել զճշմարիտն և զսուտն քննութեամբ և այժմ ևս կրկնեմք զնոյնն, քանզի՝ զոր միանգամ օծաք բաղում յօժարութեամբ ըստ կտակի սրբազան Ցովսէփայ հանգուցելոյն և արժանապէս ի վերայ տանս հայոց և ի վերայ մեր պատրիարգ և կաթուղիկոս կացուցաք, և որ հաստատեցեալն է հրովարտակօք երկուց թագաւորաց Պարսից և Օսմանցւոց՝ ամենևին ոչ փոփոխեմք մինչև ցմահն ըստ ծիսի և օրինի մերում, և այլում նորոգ կաթուղիկոսի չունիմք պիտոյ։ Իսկ զկտակն սրբազան հայրապետին Ցովսէփայ, զոր ոմանք սուտ համարին, այդմ բնակիչք Թիֆլիզու տացեն զպատասխանի. զի մեք զբազմակնիք վկայութիւնս նոցա ունիմք, և ընդ եպիսկոպոսացն մերոց յղեալ եմք առ ձերդ կայսերական մեծութիւն։ Եւ երրորդ՝ վկայեմք ևս որ նա ինքն Դանիէլ վարդապետն է վատնիչ արդեանց սրբոյ Աթոռոյս, քակտիչ սորին և պղտորիչ ժողովրդոց, քանզի... աստ եղելոց գոյին զարդք, և դրամք Աթոռոյս... մանաւանդ եղեալք. զայնս ամենայն սակս սնոտի ձգմտանցն... այժմ զայն յանցանսն իւր անիրաւաբար... հայրապետիս մերոյ կամի գնել. և զանարատ անուն... աւել զորոց ոչ երկարեմք։ Եւ արդ այս է... ի ձերդ կայսերական բարձրազահ սուրբ... զի զամենայն բանս թշնամեաց և խռովարարաց անարգ . . . համարեալ քաղցր ակամբ և գըթութեամբ, և ողորմութեամբ . . . ի մեզ և ի տառապեալ ազգս մեր, և պատճառ շինութեան . . .ութեան լինիջիք սրբոյ տաճարիս Աստուածաբնակի։ Քանզի . . . հիմնեալ . . . Պարսից անհաշտ . . . ի ձեռաց յափշտակող գազանաց . . . զօրաց նոցին իսպառ աւերել և այսպէս սուգ անհնարին . . . և խաւար թանձրամած անել ի վերայ եկեղեցեաց մերոց և ի վերայ ազգիս մերոյ և ի վերայ մեր։ Ծագեսցին ուրեմն ընդհանրածաւալ ճառագայթք ողորմութեանց ձերոց ի վերայ տառապելոցս և Ամենողորմածաբար շնորհեսջիք զբարձրագոյն ղրամատն վերահաստատութեան պատրիարգական իշխանութեան սրբազան քահանայապետիս մերոյ. ընդ որ ակնադէտ ժամէ ի ժամ սպասեմք արդարութեանց և իրաւանց ձերոց բոլոր արամեան սերնդովք։ Ողջ լեր պսակաւորիչ ազգի մերոյ Աստուածապսակեալ օգոստափառ կայսր ինքնակալ ի հաստատութիւն եկեղեցեաց մերոց, ի պարծանս բոլոր խաչազդեցից, և ի մխիթարութիւն սրտի պաշտօնէիցս Աստուծոյ և աղօթաւորաց ձերոց՝ ստորակնքողացս թղթոյս։

Ի մայիսի... ի 1802. յԱստուածակերտ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին որ ի դաշտս Արարատեան։[1]

---

[1] Այս թղթի օրինակը տեղ տեղ եղծուած էր։

ՄԳ· *Թուղթ ի միաբանից առ Էրզրումեցիսն զանազան բանք, եւ վերջապէս բանադրանք Դանիէլին:*

Որոց և գիտութիւն լիցի· Թէպէտ ի զանազան ժամանակս ընդդէմ զրաբանութեանց ոմանց զսրբազան Տեառնէս մերմէ գրեալ եմք բազմակնիք վկայութեամբ զճշմարտութիւնն ամենայն ուրեք առ Ազգն մեր օրհնեալ, զորոց ոչ առնեմք զյիշատակութիւն ինչ աստանօր, սակայն ի լսելն մեր և ի տեսանելն ըզ թուղթ Դանիէլ չարահամբաւ խռովարարին, զոր գրեալ է առ ձեզ, զորոց զօրինակն առաքեալ էիք առ սրբազան քահանայապետս մեր, որով և ընդդէմ ամենայն օրինաց և խղճի մարդկանց զծանր ծանր զրպարտութիւնս է արարեալ զսրբազան Տեառնէս մերմէ ապականեալ մտօք և աղտեղի սրտիւ զյանցանսն, զորս ինքն է գործեալ, ի վերայ պատուական և հոգէընտիր սրբազան Տեառնս մերոյ եղեալ, վասնորոյ ոչ կարացեալ այդմ նորալուր անաստուածութեանց նորին տանել՝ հարկաւորապէս գրեմք սիրելեացդ մերոց· Զի ի ներողամիտ Թողլտուութենէ սրբազան Տեառնս մերոյ համարձակեցաւ նա վեր քան զչափն իւր ձկտիլ, և ի վերայ անհամար չարութեանց իւրոց, զորս գործեաց անդարձ և անզղջ սըրտիւ ընդդէմ սրբոյ Աթոռոյս, սրբազան գահակալի սորին, և ընդդէմ բարեկարգութեանց մերոց, և սուրբ օրինաց, յաւել և զայդ չարիս չարժեալ ի գիւաց, զորս իբրև զհանդերձ ունի զգեցեալ, քանզի՝ վասն Թէմէսուկացն զորս չաղփաղփէ անպատկառ վատահամբաւեալն ամենայն ուրեք յամենից, իբր սրբազան Տէրս մեր իցէ հնարեալ, յանուն իւրն, և տարածեալ այսր և անդր, և այլն· Արդ նախ այնչափ հեռի է ի ճշմարտութենէ, որչափ հրեշտակ ի բէլիարայ· զորս ոչ թէ միայն չեմք լուեալ և չեմք տեսեալ, այլ և մտօք անգամ մի չէ հընար ումեք խորհիլ, ուր մնայ ի գիր արձանացուցանել· որպիսի ճիշտ քննութեամբ հասու եղաք և գիտացաք զգիւական չունչ զիւաղդեցին։ Այդու ահա ծաներուք զսրբազան հօր մերոյ զսրտի պարզութիւնն, և զհնարողի զորին զթիւրութիւնն, և զանզգամութիւնն, և ասացէք ստուգիւ՝ թէ ով է արդեօք սանդարամետականն, գտօղն այդպիսի չարութեանց, եթէ այն՝ որ մտօքն և ոչ առ անգամ մի իցէ խորհեալ· ուրեմն ոչ միայն գրուածք նորին են սուտք և առասպելք, այլ և ինքն բոլորովիմբք է ստութիւն և շտեմարան ամենայն չարութեան և հաւասար է արդարև հօրն իւրոյ ստութեան սատանայի։ Եւ երկրորդ՝ ի վերայ այսր վկայեմք եւ մեք ամենեքին ճըշմարտութեամբ, որ ինքն գերանակիր աչօք եղեալ զշիւղս այլոց նշմարէ, այնզի՝ ինքն զծանր ծանր կաշառս խոստանայ և տայ և առ որսն ժամանէ և ձեռնհաս լինի ի տալ, զթէմէսուկս տարածանէ վասն սնոտի ախտի իւրոյ, և զայն ի վերայ պատուական Տեառնս մերոյ բարդէ, և զանթողլի զյանցանս իւր այլով յանցանօք դաղել ջանայ ողորմելին, ոչ գիտելով Թմրեալն այլ թէ՝ ոչ ինչ է ծածուկ որ ոչ յայտնեսցի, և ի վերայ տանեաց քարոզեսցի։ Եւ մանաւանդ կարէ ըզսոյն հնարեցեալ թէմէսուկոն յանուն իւրն ի ձեռն բերել, և ամենեցուն ցուցանել, զի գիտասցուք ամենեքեան զարդարն՝ ուստի աւելորդ է երկարութեամբ բանից ի վերայ այդմ խօսելն մեր։ Եւ արդ՝ մեք բնաւ ուխտք եկեղեցւոյ՝ բոլոր միաբանօ սրբոյ Գահիս ի մի եկեալ քննեցաք զամենայն արարս և զգործս Դանիէլ չարահամբաւին, և գտաք զնա քակտիչ և աւերիչ սրբոյ Տանս, վատնօղ արդեանց և ընչից սորին, խռովարկու ժողովրդոց, և մերս միաբանութեան, և եղծիչ և խանգարիչ բարեկարգութեանց մերոց, և օրինաց սրբազան հայրապետաց, և պարկեշտ կարգաց և կրօնից Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյս։ Քակտիչ է, որ ուր և եգիտ զարդիւնս սրբոյ Աթոռոյս յափշտակեաց վատնեաց, ի յՈւռումէլի, ի յԸզմիւռին, ի Պօլիս, ի Կարին քաղաքդ, և ի Բայազիտ զորս թուեալ է սրբազան Տէրս մեր ի յիւր կոնդակին, զորովք մեք զանց առնեմք։ Եւ այնոքիւք ոչ շատացեալ զթէմէսուկս գրեալ ցրուէ այսր և անդր, և միշտ ի ցրուելն է· զոր ի վերայ այլոց ստորոգէ, առ ի պատրուակել զգործ իւր, որպէս ի վերդ գրեցաք։ Խռովարկու է Ազգին, և քաղաքի, և մերս միաբանութեան, որ ուր և գնաց ելից աղմկով, և ուր ոչ էհաս՝ չփոթեաց գըբովք, եմուտ յԸզմիւռին և խռովեալ զամբոխն՝ արտաքսեցաւ անարգութեամբ։ Կացուցաւ պատրիարգ և գործեալ զանպատշաճս՝ չոգաւ յաքսորս, եմուտ ի քաղաքդ և զխա-

զաղութիւն քաղաքիդ խռովեալ, եւ անպատիւ տուգանելով զխղճալի ժողովուրդսդ մեր, և նստեալ ի Բայազիտ ապականեաց զլռելիս ամենեցուն թունալի գրովք, զայթակղեցոյց զհիւսիստկանսն։ Եւ ի վերայ այսչափ չարութեանց՝ ձեռն էարկ և ի միաբանութիւնս մեր, և ի ձեռն խոստմանց՝ վիճակաց և աստիճանաց որսաց զթուլամորթս ոմանս ի մէնջ, նմին նման և Եփրեմ վարդապետն ի հիւսիսոյ՝ ի ձեռն նենգուպատիր բանից վրդովեաց ըզպարզամիտս ոմանս ի մէնջ, որք խռովեալ զազմուկ չփոթից հանին և վասն չնչին աուիթի գնացին առ խանն երկրիս, որոյ գիտացեալ զպատճառսն դարձոյց յետս առ սրբազան Տէրս մեր, որոց եկեալ մեղայական կոչմամբ գլիմեցին ի յոտս սրբազան հայրապետիս և նզովեցին զխռովարարն սատանայ և զպատճառսն գայթակղութեանց. և սիրով և հայրական մարդասիրութեամբ ընկալեալ ի քաղցր և յանյիշաչար Տեառնէս մեծէ, կամք այժմ ամենեքին խաղաղութեամբ ի հնազանդութեան։ Եւ վերջապէս եղծիչ է օրինաց և բարեկարգութեանց մերոց, որ զանփոփոխելի հայրապետութիւն Աղվիս կամի ընդ փոփոխութեան արկանել և կամ ընդդէմ սրբոյ Աթոռոյս յայլ ուրեք զհակաթոռ հաստատել և զհիմնեալն ի սրբոյ Լուսաւորչէն և մինչև ցայժմ զհաստատ մնացեալն շնորհօք կենարարին և իջեալ Միածնին ի սմա, կամի քակել և ամայի առնել, զոր Տէր մի արասցէ, և մի տացէ մեզ տեսանել զայն ի մերում ժամանակի, զի մինչև ի զոհ լինիլն և իբրև բոլորապտուղ ողջակիզիլն մեր՝ պահեալ եմք զշինութիւն սրբոյ Աթոռոյս ի պայծառութեան, և պահելոց ես եմք Աստուծով, և ձերդ օգնականութեամբ։ Ուստի՝ վասն այսչափ չարութեանց նորին և վնասատուութեանց ընդ սրբազան հայրապետիս մերոյ, և մեք համայն ուխտք սրբոյ մեծի Աթոռոյս ընդ բանիւ արարաք զնոյն ինքն զԴանիէլն՝ զխանդարիչն Աթոռոյս, ազգի, քաղաքաց և մերս միաբանութեան, զհակառակն Աստուածային օրինաց և սրբազան հայրապետաց։ Եւ նզովեալ որոշեցաք ի մէնջ և ի միաբանութենէս մերմէ, և իբրև անպիտան և մանաւանդ ապականաբար անդամ հատեալ՝ արտաքս ընկեցաք ի հաղորդութենէ Հայաստանեայցս սուրբ եկեղեցւոյս, և որպէս ատելի է մեզ յայսմհետէ ինքն և խոտորեալ գործքն իւր, նոյնպէս և առաջի աստուածասիրացդ անարգեալ և անպիտան լիցին բանք և գրուածք նորին։ Այսպէս գիտացեալ ձեր՝ և համեմատ կամաց և գործոց մերոց զկատարումն տուեալ, եղիջիք օրհնեալք շնորհիւ սրբոյ տեղւոյս Աստուածարդակի Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս և ի մայիսի ... առ դրան ներհտկակործան և թշնամալան Աթոռոյս մեծի սրբոյ Էջմիածնի։

ՄԴ. *Թուղթ ի յԱխալցխայ առ Հաչիքարայ կոչեցեալ մահտեսի Յակոբ աղայն, ի պատասխանի թղթոյն, եւ ծանուցումն զգալստենէ աթոռակալին ի Կարնոյ:*

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ՝ գիտութիւն լիցի բարեպաշտութեան քում։ Զի սիրագիծ թուղթն քո էհաս առ մեզ. զոր ընթերցեալ իմացաք զխաղաղութեամբ ժամանելն յայդր սիրելւոյն մերոյ օրհնեալ Արիսակէսին, առ որ և միամտեցաք։ Ծանուցեալ էիր զհանդերձեալ լինիլդ գնալ ի Կարին քաղաք. Աստուած յաջողեսցէ, զի խաղաղութեամբ գնասցես։ Իսկ սիրելիքն մեր աթոռակալ Սիմէօն արքեպիսկոպոսն և Մելիք Ստեփանոսն Դ. անվտանգ եկին անտի ի սուրբ Աթոռս և պատմեցին մեզ թէ որպէս մեծաւ սիրով և յարգանօք ընկալեալ էին զինքեանս թէ համայն բարեպաշտօն ժողովուրդք քաղաքին, եթէ մեծապատիւ Դօլվաթլու փաշայ էֆէնդին, որ և զգեցուցեալ էր սոցա զպատուկ խիլայս և զՄահմաա Վէլի բէկն ևս չահեալ էր ըստ արժանւոյն, և այնպէս զնոսա դարձուցեալ առ մեզ հանդերձ պատասխանեօք թղթոց խանին և մեր։ Իսկ յարգելի իշխանքն ևս գրեալ էին առ մեզ զթուղթս սիրոյ և յարգանաց, որովք և ծանուցեալ էին թէ զկոնդակն մեր բազմախուռն հանդիսիւ ընթերցեալ էին յեկեղեցւոջ, և ուրախութեամբ սրտի բարձեալ էին զբառնալի անուն Դանիէլին, և զմերն յիշատակեալ։

Կամեցեալ էին թէպէտ զբազմակնիք

մահուէր ես դրել ի Պօլիս՝ և ձեռամբ Մելիք Ստեփաննոսին առ քեզ, բայց լաղագս կարեւոր պատճառի իրիք արգելեալ էին, որպէս ի գնալդ բարեաւ՝ անդ ի Կարին՝ տեղեկանալոց ես ամենայն անցիցն, զոր մեք աստանօր ոչ երկարեմք։ Զայսքան բարելաւութիւնս նոցա ընկալեալ մեր, շնորհակալութեամբ օրհնեցաք զհամայն Քրիստոսասէր ժողովուրդսն, հայցելով վասն նոցին առաջի սրբոյ Իջման տեղւոյս Քրիստոսի և զբարեկաջողութիւնս յամենայնի։

Վասնորոյ և առ. հարկին սպահանջելոյ՝ գրեցաք զկոնդակ օրհնութեան և շնորհակալութեան առ հասարակութիւն նոցա։

Յղեալ էին առ մեզ ոմանք սիրելիք և զօրինակն ստայօդ գրութեանց անխիղճ Դանիէլին, որք և ծանուցեալ էին թէ ինմանէ օրինակ մի ես առ ընտիր սիրելիդ են առաքեալ։ Զոր տեսեալ ես ի հարկէ՝ և իմացեալ թէ որպէս ամենայն կերպիւ ջանայ առ ի հնարել զստայօդ բարբառանս, և այնոքիւք վատահամբաւել զմեզ. ինքն է գրեալ զսանատս կաշառաց և յղեալ առ փաշայս և առ խանն մեր և առ այլս, առ ի ցուցանել զախտս իւր, բայց զկեղտ անունն ի վերայ մեր բարդել կամի, զի մեք զայնպիսի խարդախութիւն ոչ թէ միայն չեմք գործեալ, այլ և մտօք անգամ. ոչ եմք խորհեալ, որպէս ահա վկայեցին այժմ. միաբանքն մեր բազմակընիք մահուէրաւն իւրեանց, զոր գրեցին առ հասարակութիւն ժողովրդոցն Կարնոյ՝ որ յայտնի լինելոց է սիրելւոյդ։ Արդ՝ յորմէ կոչման և օծման մերոյ մինչև ցայսօր թէ որչափ անօրէնութիւնս գործեաց ընդ մեզ ի գայթակղութիւն պարզամիտ ժողովրդոցն, և զորքան վնասս հասոյց խղճալի սրբոյ Աթոռոյս՝ լաւապէս գիտես։ Զիրսն սորա ուր ուրեք եգիտ՝ յափշտակեաց, որպէս ի Կարնոյ զմէկ բեռն իրաց մերոց՝ զոր Իզմիրու առաջնորդ Մարտիրոս վարդապետն էր առաքեալ, և կային ի նմա ինչ ինչ ընծայք յանուն մեր յղեալք յիշխանաց տեղւոյն, և արդեամբք մերովք գնեցեալ իրք վասն հարկաւորութեան սրբոյ Տանս, թէ զայն և թէ զ՚ի հոգելոյս Ներսէս վարդապետէն մնացեալ մէկ բեռն, յափշտակեաց՝ և եբեր ընդ ինքեան ի Բայազիտ, և անդ եղեալ աւանդիցն մերոց ես տիրեաց, յորս թէ ոչ ձեռնամխեալ է, և զիարդ ունի վատնել, մեք ոչ դրեմք աստէն, այլ թողումք՝ զի յայլոց իմասցիս։

Այնոքիւք չարութեամբք չբաւականացեալ այժմ. ես ձեռնարկեալ է, ի միաբանսն մեր, և սուտ գրութեամբք և խոստմամբք խախտէ զհպատակութիւն սոցա զորս ունին առ գահակալս իւրեանց։

Որպէս և յիշանալի Յովհաննէս վարդապետն պօլսեցի՝ պատրեալ ի սնոտի գրութեանց նորա և Եփրեմ. վարդապետին, զոչ սակաւ անզգամութիւնս և լրբութիւնս արար ընդ մեզ, թերևս տեղեակ լինիս այնց։ Վերջապէս քանիցս մեղայ ասացեալ՝ երդուաւ ի սուրբ Գեղարդն և յայլ մասունսն ձեռնքարշել ի նենգագործութեանց։ Մեք ես ներելով յանցանաց նորա հոգևոր նշանաւ բարեկամացուցաք ըզնա ընդ մեզ, առ ի պահել զնա ի հանդարտութեան։

Բայց նա անփոփոխ եղեալ ի չարութիւնս իւր, ստեաց յերդմունսն, և ի մեծ պահոց աւուր շաբաթի աւուրսն մինչ առաքեցեալ ի մէնջ՝ գնաց յԵրևան առ խանն վասն գործոյ իրիք, անտի ինքնահալած լինելով՝ փախստեալ անկաւ ի Թիֆլիզ քաղաք։ Ի Տեառնէ ընկալցի զհատուցումն արարմանց իւրոց։ Իսկ իբրև լուաք մեք զլուր փախստեան նորա, զաբեղայն նորին բերեալ առ մեզ հարցափորձ առնել, տեսաք յանկարծ՝ որ միաբանքն զազմուկ չփոթի հանին և զոչ սակաւ յանդգնութիւնս և լրբութիւնս արարին և ի մէնջ ես թոյլտուութիւն տեսանելով բազմութեամբ զլխեցին յԵրևան առ խանն։

Իսկ նա ինքն Դօլվաթլու խանն, տեսանելով թէ ի պատճառս Դանիէլին են այնպէս աղմկեալ դարձոյց զնոսա յետս, զորն սիրով և զորն բռնութեամբ, որք եկեալ առ մեզ մեղայ ասացին, և մեք սիրով և գրով ընկալեալ ներեցաք ամենից յանցանացնոցա, և կան այժմ. ի հանդարտութեան։ Այսքան վնասուց և խայտառակութեան պատճառ լինի անձնասէր Դանիէլն, և զազգն ես այնպէս վրդովէ և գայթակղեցուցանէ։ Վասնորոյ և մեք այլ չկարելով տանել անհամութեանց նորա՝ ահա հայրապետական բարձր իշխանութեամբ մեր վ բանադրեցաք զնա. և նզովեալ կապեցաք յերկինս և յերկրի. որ անիծեալ է յԱստուծոյ և ի մէնջ, որպէս լիագոյնս ունիս գիտել ի յիշեալ հասարակական կոնդակէն մերմէ։ Միա-

բանքն մեր ևս մերժեցին զնա յորդիութենէ սուրբ եկեղեցւոյ, և իբրև զհոտեալ անդամ իբաց ընկեցին, որոյ աղաղաւ և գրեցին ըզմահսէր ի Կարին քաղաք, զոր անսանելոց ես. կամէաք թէպէտ զամենայն համախոհսն նորա ևս ընդ բանիւ առնել, բայց սպասելով զարձի նոցին առ ժամս զանց արարաք։ Եթէ զղջաստացին՝ բարի է, եթէ ոչ յանժամ ընկալնլոց են զպատիժս իւրեանց։ Իսկ և զայս գիտասջիր, զի ի Թիֆլիզ գնացեալ մարդիկն մեր զարձան, ընդ որս ի տեղն եղեալ ռուսաց մեծամեծքն պատասխանիս գրեալ են առ խանն և առ մեզ՝ թէ կայսրն զբանն կաթուղիկոսութեան թողեալ է ի կամս Ազգին, որ ըստ օրինի իւրեանց արասցեն, յետոյ ևս նոյն մեծամեծքն ռուսաց զմիամտութեան թուղթս էին գրեալ առ մեզ, որով յուսամք թէ վախճանաբար զդիւրութիւն ընկալցուք։

Այլ ի յիշեալ մեծամեծացն ռուսաց մէկ դեսպան եկն յՆրեան առ խանն ի խօսել վասն երկրին՝ և վասն բանի հայրապետութեանս։ Եւ խանն յետ բացասական ջուղապ տալոյն՝ առաքեաց զայն դեսպանն ի սուրբ Աթոռն՝ առ ի զեկեղեցական անօթսն մեր տեսանել, զորոց հռչակեալ է Դանիէլն, իբր թէ խորտակեալ իցեմք և այլն. Նա եկեալ առ մեզ՝ ետես զանօթսն և զզարդսն և զսրբութիւնսըն, որք կային յամբողջութեան՝ յամօթ և ի նախատինս զրպարանից. և միարանքն ևս երդմամբ վկայեցին ուղղութեան անցիցն, և միաբերան ասացին, թէ սուտ է զոր Դանիէլն խօսեցեալն է, այնպիսի բան չէ եղեալ։

Վասնորոյ և գրեցին մահսէր առ մեծամեծսն ռուսաց ի հաստատութիւն բանին, և ի ծանուցումն աղմկալոյզ դոլոյն Դանիէլին, և մերժելոյն իւրեանց զնա յորդիութենէ սրբոյ եկեղեցւոյ։ Այլ և զայս իմա. զի ի ներկայս մէկ պահարանաւ թուղթ ստացաք ի Պօլսոյ, յորում կային թուղթք ի Ստեփաննոս վարդապետէն, ի ձեր պարոն Պետրոսէն և ի յՈղմիրու ի Ղազար վարդապետէն, և իմացաք այնոքիւք, որ Ստեփաննոս վարդապետն յապրիլի ԺԳ. մտեալ է անդ ի Պօլիս՝ և ըզգրեանսն մեր տարեալ, վասնորոյ և ի ԺԶ. նոյն ամսոյ զայն թուղթսն հասուցեալ յիւրաքանչիւր տեղիս։ Գրեալ էր առ մեզ ի յուսադրութիւն և ի միամտութիւն, տեսցուք զվախճանն թէ զիարդ ունի եղերել։

Իսկ զորպիսութեանց մերոց այսպէս գիտել լիցի, զի ողորմութեամբն Աստուծոյ թէպէտ կամք ի միջակ խաղաղութեան, իշխողքըն մեր զսէր և զխնամսն ունին առ մեզ, սակայն յայժմոյս չշունչ լինելով թէ ի պարսից զօրք խաղալոց են յայսկոյս, խանն ըզմեզ կոչեալ տարաւ յՆրեան ի խորհրդակցութիւն վասն նոցա գալոյն։ Որև ի գալն մեր ընկալաւ սիրով. և պատուեաց իսկ տանելով ի ճաշ իւր։ Եւ յետ կալոյ մնալոյ մեր անդ ի քանիս աւուրս դարձ արարեալ եկաք ի սուրբ Աթոռս. յոյս ունիմք թէ շնորհիւ սրբոյ իջման տեղւոյն Քրիստոսի յիշեալ զօրաց գալոյն ևս խափանումն լիցի, և խաղաղութեամբ անցուսցուք զայս ամս։ Զոր Տէր յաջողեսցէ։ Նաև սիրելիդ զոր գրեալ էիր, թէ գնալոց ես ի Կարին, առ այն հարցեալ մեր ցթղթաբերն Կարնոյ՝ (որ էր սուրբ Երուսաղէմայ նուիրակի Գրիգոր տըղայն), նա ասաց թէ՝ տակաւին չես գնացեալ։ Ի գնալդ բարեաւ՝ ծանուսցես մեզ հանդերձ մեղապատշաճ որպիսութեամբքդ։ Որև ի սէրդ հաստատ կալով ողջ լեր ի Տէր։

Գրեցաւ ի ՌՄԾԱ և ի մայիսի ••• ի սուրբ Էջմիածին։

ՄԵ. *Ի Բասմքակ առ պալկովնիկ Պաւլայ Կուրակինն:*

Ցորմէ ժամանեցի խաղաղական ողջոյն հանդերձ ամենառատ գթութեամբն Տեառն, ի վերայ ընտիր սիրելւոյդ մերոյ՝ մեծապատիւ պարոն Պաւլայ բարեհամբաւ՝ պալկովնիկիդ, և որոց ընդ ձեզ են, ի տէր խնդալ։ Որում և գիտութիւն լիցի. զի պարոն Աղալոյ թղթաբերս եկեալ ի սուրբ Աթոռս վասն հարկաւորութեան, վերադարձուցաք ահա, յորմէ ունիք գիտել զորպիսութիւնս մեր և կողմանցս։ Բայց զայս գրեմ և խնդրեմ, զի զուք ըստ որում ճշմարիտ բարեկամք էք մեր, պարտիք ուրեմն զսիրելին մեր և զթշնամին ճանաչել, զի գործ ճշմարիտ սիրելւոյ է, ընդ սիրելւոյն սիրելի, և ընդ թշնամւոյն թշնամի լինել։ Արդ՝ Գանիէլ վարդապետն, որ է ի Բայազիտ, թշնամի է մեզ և սրբոյ Աթոռոյս, և նորա մարդիկքն հանդերձ աղմկալիր թղթովք եր-

թան այտի ի Թիֆլիզ, և անտի վերստին դոյն ճանապարհաւ անցանեն ի Բալագիտ, և բազում խռովութիւնք ծագին երթևեկութեամբ այնպիսեացն։ Ուրեմն կատարեալ բարեկամութեամբ ձերով և խոհեմութեամբ՝ պարտիք հատանել զմուտս մարդկանցն նորա այտի, և չթողուլ անցանել։ Այլ ի հանդիպիլն, զգըրեանսն առնուլ ի ձեռաց այնպիսեաց և առ մեզ յղել, և զեկեալսն դատարկ առ առաքօղ նորին վերադարձուցանել։ Այսպէս առնելով ձեր պարտաւորէք զմեզ չնորհակալիլ մշտապէս զձերդ պատուականութենէ։ Զայլն ունիք ի սիրելւոյ մերմէ ի պարոն Ազալօյէդ գիտել ողջ լերուք։

Ի յունիսի 11 ի 1802 ի սուրբ Էջմիածին, որ ի դաշտս Արարատեան։

ՄԳ. *Թուղթ ի Հաշտարխան առ Թաղայ Դաւիթն:*

Ի մայիսի 20 զսիրոյ և զորդիական մտերմութեան զթուղթդ ընկալայ ի սոյն ամսոյս 8, բազում օրհնութեամբ և չնորհակալութեամբ և զամենայն զգրուածսդ գիտացեալ, ծանեայ զմեծագոյն սէրդ և զկատարեալ բարեկամութիւնդ զոր ունիս առ սուրբ Աթոռս և առ մեզ, զորոյ չունիմ երբէք զկարծիս, Տէր օրհնեսցէ զքեզ և զօրացուսցէ և զամենայն բանս և գործս քո ի բարին յաջողեսցէ, և խաղաղական կենօք պահեսցէ հանդերձ բոլոր քոյայնովքն։ Ա՛ա մեք ըստ յառաջագրութեան ձերոյ՝ զմահսէր մի գրեցուցեալ միաբանից և երկրացւոց, առ նորին կայսերական մեծութիւն՝ յղեցաք առ գեներալիւ պարոն Սիմէօն Սէրգէյիչն, զի առաքեսցէ ուր հարկ է. ընդ նմին և քանի մի անձանց քաղաքիդ ոմանց յառաջագոյն գրեցաք, զօրհնութեան և զսիրոյ թուղթսն և ոմանց ահա այժմ ընդ դրոյս գրեալ յղեցաք ի ձեռն պարոն Սիմէօն Սէրգէյիչին, և յորդորեցաք զգոսա մնալ ի սէր և ի բարեկամութիւն մեր հաստատուն, և չինութեան սրբոյ Տանս զհետ լինել, և ջաադով ճշմարտութեան դտանիլ։ Դու ես որչափ կարես բանիւք զգոսա և զրովք զհեռաւորսն ի սոյն յորդորեսցես, հանապազ ի քարոզելոյ զուղղութիւն և զճշմարտութիւն մի դադարեսցես, քանզի՝ որպէս ի սրբոյ Աթոռոյս և ի մէնջ ընկալնլոց էք զշնորհս և զօրհնութիւնս, նոյնպէս և ի յիրաւասիրէն ունիք վարձատրիլ յերկնի կեանս ձեր։ Եւ արդ՝ Դանիէլ վարդապետն յետ բազում անկարգութեանց և վնասատուութեանց անդադար ջանայ և ես վնասել զաստուածաչէն սուրբ տաճարս այս, և զանազան զրպարտութեամբք զանուն մեր վատահամբաւել, քանզի զորս ինքն գործէ, ի վերայ մեր կուտէ անիրաւաբար, և զյանցանսն իւր՝ այնու ծածկել կարծէ. քանզի զաւանդսն սրբոյ Աթոռոյս, որք ի կենդանութեան հօգելոյս հայրապետին Ղուկասու էին անդ ամանաթ եղեալք, յափշտակեաց, և սակս փառամոլութեան իւրոյ յումպէտս վատնեաց և այժմ ջանայ և հետևի, զի ի ձեռն բարեկարգ կայսերութեանդ այգմիկ քակել և աւերել զԼուսաւորչակերտ սուրբ Տունս Աստուծոյ, և զանփոփոխելի հայրապետութիւն Ազգիս ընդ փոփոխութեամբ արկանել, այնպէս այնու վեր ի վայր կացուցանել զխաղաղութիւն և զշինութիւն Աթոռոյս և Ազգին, և արձան խայտառակութեան թողուլ յաշխարհի ի յամօթ ինքեան և նմանեաց իւրոց, զոր թողում, զի ըստ ապիրատութեանն իւր յարդարադատէն ընկալցի ըզտրիտուրն արարմանցն իւրոց։ Ա՛ռ ապաւինեալ ի ճշմարիտն Աստուած՝ կամք ողորմութեամբն նորին ցարդ ի խաղաղութեան հանդերձ միաբանիւք, և Շահն և խանն երկրիս առաւել քան զարժանն ունին զխնամարկութիւնս ի վերայ մեր և սրբոյ Աթոռոյս դեր քան զնախորդսն իմ, և նոյն ճշմարտութիւնն ազատել կարէ զմեզ ի ձեռաց նենգաւորաց։ Նաև ի պարոն Կնօրինգէն և ի պարոն Կաւալենցկուն զթուղթս սիրոյ և բազում յուսադրութեան ընկալաք և լուսով եմք զի Աստուծով ամենայն ինչ ի բարին եզերեսցէ օգնութեամբ բարեպաշտ ժողովրդոցդ, և թըշնամիքն արդարութեան կորագլուխ լինիցին։ Եւ ես երկու անգամ դեսպանք եկին ի պարոն Կնօրինգէն և ի պարոն Կաւալենցկուն, առ խանն վասն զանազան հարկաւորութեանց. որք եկեալ ի սուրբ Աթոռս ծանեան զամենայն որպիսութիւն տեղւոյս, և ամենայն անցիցն և սուտ բանիցն նախանձոտաց վերահասու եղեն և գիտացին զթշնամեաց չարախօսութիւնսն, և որպէս տեսինն, ըստ այնմ և

գնացեալ պատմեցին նոցին դերազանցութեանց, և ողորմութեամբն Աստուծոյ փութով ճշմարտութիւնն յայտնելոց է, և խաւարասէրքն զամօթ կրելոց։ Իսկ Թիֆլիզու օրհնեալ ժողովրդոց զքաջութիւնսն և ջատագովութիւնսն, որք իւրաքանչիւրքն գնացեալ առ պարոն Կնորինգն և առ պարոն Կովալենսկին բողոք են բարձեալ և միաբերան աղաղակեալ թէ մեք զԴանիէլն ոչ գիտեմք, և ոչ ճանաչեմք, այլ որ կայ ի ներկայումս օծեալ և նստեալ ի յաթոռ սրբոյ Լուսաւորչին զայն ընդունիմք, և զնա ճանաչեմք մեզ հայրապետ, և այլն, թողում զի երկարապէս ի վարդապետացն մերոց և մանաւանդ ի քընեաղ պարոն Սոլոմոնէն գիտասցես։ Այսքանս առ այժմ իմացեալ, և զսիրոյ և զորպիսածանոյց թուղթդ ի մէնջ անպակաս արարեալ լեր ողջ ի Տէր, և պահպանեսցեալ նովաւ հանդերձ բոլոր քոյոյնովքդ ի մխիթարութիւն սրտի մերոյ, Ամէն։

Ի յունիսի․․ ի 1802, ի մայր Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ՄԷ․ *Թուղթ ի Թիֆլիզ առ էսնաֆապետ պարոն Յարութիւնն, եւ բոլոր սառաջ էսնաֆսն, օրհնութիւն եւ շնորհակալութիւն յաղագս հարազատութեանցն եւ ի նոյնն յորդորումն:*

Եւ ընդ շնորհաձաւալ օրհնութեանս աստուածաձայնոյ՝ դիտութիւն լիցի սիրելեացդ մերոց ի Տէր և հարազատ որդւոցդ սրբոյ գահիս միածնաէջքի։ Զի սիրելի և հոգևոր որդիքն մեր և շնորհածին զաւակունքն սրբոյ Աթոռոյս, Կարապետ և երկոքին Աբրահամ հաճարունակ արքեպիսկոպոսքն՝ գրեալ և ծանուցեալ էին մեզ իբր թէ դուք սիրելիքդ ես ընդ այլ էսնաֆացն քաղաքիդ միահամուռ բազմութեամբ, գնացեալ էք ի դուռն մեծահամբաւ և դերազնիւ Կնորինին և Կովալենսկուն և սրտացաւօրէն ջատագովութեամբ միաբերան աղաղակեալ էք վասն մեր՝ եթէ որ միանգամ ընտրեալ է և օծեալ, և ի սուրբ Աթոռոջն նստեալ, նա է կաթողիկոս հայկականս սեռից և բաց ի նմանէ ոչ զոք ճանաչեմք և ընդունիմք մեզ ի հայրապետութիւն։ Եւ այսպէս ասելով՝ զերկու բազմակնիք մահսէրս էք արարեալ, զորոց մինն առաքեալ էք առ ամենաողորմած կայսրն ի վերահաստատութիւն մեր ի սոյն այս պատիւ և զմիւսն առ ի կողմունս հիւսիսոյ բնակեալ մերազնեայ ժողովուրդս՝ ոչ ունկնդիր լինել դոյն այդ չիք Յոհաննիսի ստայօդ գրութեանց։ Լուաք ես՝ որ զմոմի ժողովարար Աբրահամ եպիսկոպոսն սիրով և յարդանօք ընկալեալ էք, խոստացեալ էք՝ տալ զհոգեոր պարտս ձեր դմոմն ի նիւթ լուսավառութեան Աստուածաբնակ սուրբ տաճարիս, և յիշատակելով զանուն մեր բարձեալ էք զանուն Դանիէլին յամենայն եկեղեցեաց։ Ուստի և մեր մեծապէս շնորհակալեալ օրհնեցաք զսիրելիս օրհնութեամբ։ Զորս Տէր օրհնեսցէ և զօրացուսցէ, ի յամենառատ խնամս և յողորմութիւնս իւր պահեսցէ, և ամենայն գործառնութեանց ձերոց՝ զբարիյաջողումն շնորհեսցէ։ Արդ սիրելիք մեր՝ որպէս դուք այսու բարեյաւութեամբ ձերով յայտնեալ յայսմ նեղութեան ժամանակիս զորդիական սէր և զհարազատութիւն ձեր՝ որ առ սուրբ գահս աստուածաէջ, և առ մերս հոգեոր հայրութիւն, նոյնպէս և մեք յայտնեմք ահա ի ձեռն սոյն այս օրհնալիր նամակիս զհայրական սէր մեր, զոր ունիմք առ հոգեոր որդիսդ, որոցդ և պատուիրեմք իսկ միայն հաստատնապէս ի ձերդ որդիական հարազատութիւն և ի ջատագովութիւն և զսկսեալն ձեր զգործ որ ի յօգուտ սրբոյ Աթոռոյս և ի խաղաղութիւն ազգին՝ մեծաւ ջանացողութեամբ ի կատար և ի գլուխ հասուցանել փութալ, որով ունիք ընկալնուլ զվարձս յԱստուծոյ, զշնորհս ի սուրբ գահէս և զօրհնութիւնս ի մէնջ։ Ի վախճանի զայս մի ինչ ևս գիտասջիք, զի զչիք Յոհաննէսդ գայլ, զոր յառաջն բանադրեալ էաք, այժմ ևս վերստին նզովեալ արտաքսեցաք յամենայն եկեղեցեաց իբրև խանգարիչ և եղծիչ օրինաց ապա ուրեմն՝ մի՝ ամենեւին հաղորդեսջիք ընդ դմա, զի գող է, և աւազակ։ Իսկ եթէ համախոհքն իւր ևս յայսմ հետէ ոչ զգաստասցին ի չարութեանս իւրեանց, զնոսա ևս դմին նման առնելոց եմք անխնայաբար։ Ահա առ հասարակութիւն քաղաքիդ զօրհնութեան և զշնորհակալութեան

կոնդակ գրեցաք, զայսոսիկ անտի ես կարէք երկարապէս իմանալ, ողջ լերուք ի տէր Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ... թուականիս և ի յու... ի սուրբ Էջմիածին։ [1])

ՄԸ. *Թուղթ ի Պօլիս առ պարոն Թամարովն Վասիլ Ստեփանիչ։*

Զի յառաջքան զայս բազմիցս գրեալ եմ ձերդ պատուականութեան զմեր անցսն, և զսրբոյ Աթոռոյս և զմիաբանից որպիսութիւնսըն և զնախանձոտաց զրպարտութիւնս զմէնջ զորս և ձեռամբ հաւատարմաց մերոց յղեալ առ ձեզ, որպէս զվերջինն ընդ Ստեփաննոս արքեպիսկոպոսին յղեցաք այդր. և լուամք զի լիապէս տեղեկացեալ էք զգրուածսն մեր, և գիտացեալ զչար արարմունս չարասիրաց, զորս ոչ երկրորդեմ, նոյնպէս և ի ձերդ գերազանցութեանց ունիմք ընկալեալ քանիցս զսիրոյ և զբարեկամութեան թուղթս, բայց այժմ զայսքանս գրեմ, զի ճշմարտութիւնն զոլով յաղթօղ՝ իբրև զարեգակն բացերեապէս ունի փայլել Աստուծով հուպ ընդ հուպ, զի քաղցր է Տէր որոց յուսան ի նա, Քանզի՝ մինչ այնոքիկ զրպարտութիւնք հասին յականջս մեծի ինքնակալին ռուսաց՝ հրամայեալ էր զքննութիւն առնել, յորոյ հրամանէն եկին երկու դեսպանք ի Թիֆլիզու առ խանն Երեւանայ և առ մեզ ի մեծ կողմնակալ պարոն Գաւլ Ֆէօզրիչ Կնօրինգէն և ի քաղաքապետ պարոն Պետր Իվանիչ Կաւալենցկուն, որք հասու եղեալ ամենայն անցիցն անցելոց, և նախանձոտաց առասպել սուտ և անհիմն բանիցն, և տեսեալ զամենայն զարծաթեղէն զարդս սրբոյ տեղւոյս ամբողջ, գնացեալ ըստ այնմ պատմեցին նոցին գերազանցութեանցն։ Ցորոց ընկալաք և մեք զթուղթս սիրոյ և բազում յուսադրութեան, որով խոստացեալ են ծանուցանել զայնս նորին կայսերական մեծութեան, զորոց զրոյ զօրինակսն ահա յղեցաք առ ձեզ վրացերէն թարգմանեալ ի նոյն Թիֆլիզ քաղաքի, իսկ զայլ զորպիսութիւնսն ունիք գիտել լիապէս ի պարոն Գէորգէն Ազալեկեան ի սիրելւոյն մերմէ, առ որ երկար գրեցաք։ Բայց այսու համառօտ գրով շնորհակալիմք մեք ի բոլոր սրտէ զամենայն աւուրս կենաց մերոց զձերդ բարեկամութեանց և ձեռնտուութեանց ցուցելոց հանապազ մեզ և մերայնոցն, որք յայտ են և չեմք մոռացեալ զայնս. այլ միշտ ի մտի ունելով զպատուական անուն ձեր, զմարդասէր գործըս ձեր և ի հոգւոյ իմ անջրելի տպաւորեալ զհաւատարմութիւնդ և զկատարեալ բարեկամութիւնսդ զորս առաւելապէս ցուցեր և ցուցանես մերս անարժանութեան, պարտաւորս զիս վարկանիմ օրհնելոյ զանձին և զբարեացապարտ կեանս ձեր առաջի Աստուածայլին սուրբ տաճարիս բոլոր միաբանութեամբ. ի վերջոյ խնդրեմ ի ձերդ գերազանցութենէ զամենայն զբանս նենգաւորաց և խռովարարաց անպիտան համարեալ՝ ի սէրդ ճշմարիտ և ի բարեկամութիւնդ կատարեալ հաստատուն կացջիք. և մի մոռասջիք զնուաստութիւն մեր, այլ սիրով սրտիւ և բանիւ, և երբեմն գրով ես եթէ կարելի է, ընդ մեզ միակցեալ և վշտապատ սիրտ մեր մխիթարեալ, բանից և գործոց մերոց օգնական լինիջիք որպէս յառաջնումն. և Ստեփաննոս արքեպիսկոպոսին մերոյ ձեռնտու լեալ՝ ի վերադարձուցանել առ մեզ փութասջիք աւետալիր գրովք հանդարտեցուցանելով զխռովութիւն քաղաքիդ։ Ողջ լերուք շնորհիւ կենսատու սուրբ խաչին Քրիստոսի ի պայծառութիւն Աթոռոյս մեծի և ի յուրախութիւն ցաւակիր սրտի մերում. Ամէն։

Ի յունիսի... 1802. յԱստուածակերտ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին. որ ի դաշտս Արարատեան։

ՄԹ. *Թուղթ ի Թիֆլիզ առ Էսնաֆբաշիսն հանդերձ էսնաֆօք իւրեանց, օրհնութիւն եւ շնորհակալութիւն զհարազատութեանցն եւ ի նոյն յորդորումն։*

Եւ ընդ օրհնութեան ողջունառաք սիրոյ նամակիս, ծանուցումն եղիցի սիրելեացդ մե-

---

[1]) Նոյնպիսի կոնդակներ են գտնուած և Թիֆլիզի ղազազ և լեհենչի ամնաֆներին, որ աւելորդ համարեցինք առաջ բերել։

րոց և մշտահարազատ զաւակացդ շնորհատու ծնողիս ձերոյ սուրբ զահիս Աստուածախշլի։ Զի ի թղթոց եպիսկոպոսացն մերոց՝ դիտացաք զձեր մեծագոյն հաւատարմութիւնն, և զջերմեռանդ որդիութիւնն, զոր ունիք դէպ առ. միածնաէջ սուրբ Աթոռս մայրս ձեր, և առ մերս հոգևոր հայրութիւն, հանդերձ ճշմարտասիրութեամբ ձերով։ Նոյնպէս իմացաք հեռի կալն և մնալն ձեր ի խռովարար և ի քսու և դիւաշունչ և դիւազդեաց արանց, և բոլորովիմբ ատելն ձեր զնոսա և զհետ ճշմարտութեան և ուղղութեան լինելն։ Եւ զմոմի ժողովարար Աբրահամ՝ շնորհունակ եպիսկոպոսն սիրով ընկալնուլն ձեր և զկոնդակսն փափագանօք ընթեռնուլ տալն ի յեկեղեցիսն և զանուն մեր յիշատակելն՝ բառնալով իբրաւամբ զանուն ինքնակալ փառամոլացն։ Զսոյնօրինակ և միահամուռ դիմելն ձեր ի դուռն պարոն Կնօրինզին և պարոն Կաւալինցկուն և բարձրաբարբառ յայանի և համարձակ աղաղակելն ձեր յայտ յանդիման ամենեցուն թէ որ կայ դարդիս օծեալ և նըստեալ յաթոռ սուրբ Լուսաւորչին, զնա ճանաչեմք մեզ հայրապետ և հովիւ և կաթուղիկոս և գլուխ եկեղեցեաց մերոց, և զնա ընդունիմք, և նմա հնազանդիմք և զայլ ոք ի տեղի նորա ոչ կամիմք և ոչ իսկ ճանաչել ունիմք. և այլն։ Նման սմին ծանեաք և զերկուս մահսէրս զրեյն ձեր զմին առ ինքնակալ մեծ կայսրն վասն վերահաստատութեան մերոյ ի սոյն յայս Աթոռ հայրապետական, և զմիւսն առ հիւսիսային կողմանց ժողովուրդսն վասն Յովհաննէս աշխարհաւէր և բանսարկու անդնդական սեաւորին, և զայնս թարգմանութեամբ տալն՝ նորին գերազանցութեան Պարոն Կնօրինին, և նորա սիրով ընկալնուլն և խոստանալն ծանուցանել զայնս արդարադատ օգոստափառին և այլն, զորս ի լսելն մեր և ի դիտելն, լցան սիրտք մեր բերկրութեամբք, և շրթունք մեր օրհնութեամբ և շնորհակալութեամբ, և գոհացաք զաստուծոյ, որ ամօթապարտ արար զթշնամիսն արդարութեան, և իբրև զարեգակն փայլեցոյց զճշմարտութիւնն սոյնդունակ և զհարազատ որդւոցդ և զճշմարիտ սիրելեացդ իմոց շնորհակալեալ բոլորով սրտիւ՝ օրհնեցաք զարժանաւորսդ օրհնութեան, երկնաւոր հոգևոր և անանցանելի օրհնութեամբ.

Տէր օրհնեսցէ զձեզ և զօրացուսցէ, և զամենայն բանս և զգործս ձեր ի բարին տնօրինեալ յաջողեսցէ, և խաղաղական կենօք անփորձ և անսասան պահեսցէ զձեզ զամենեսեան հանդերձ ձերայնովքն ամենեքումբք և յամենայն չարեաց և ի փորձանաց փրկեսցէ և զհոգիս երանելի նախնեացն ձերոց և ծնողաց անմահական լուսով զարդարեսցէ, ներումն և թողութիւն շնորհելով մարդկօրէն սխալանաց նոցին և զձեզ բարի յիշատակ արարեալ յաջողութեամբ պահեսցէ ի շինութիւն և ի պայծառութիւն եկեղեցեաց մերոց և ի մխիթարութիւն վշտապատ սրտի մերում։ Եւ արդ՝ այս է այժմ իմ պատուէր և յորդորանք սիրելեացդ իմոց, ի դոյն հաւատարմական սէր և բարեպաշտական գործ հաստատուն մնալ, և զսկսեալ գործն ձեր Աստուածահաճոյ ի կատար հասուցանել, որով ընկալջիք զբազմապատիկ վարձս ի յերկնաւոր վարձատրէն։ Նաև մինչև ցարդ զոր ինչ գրէաք ձեզ վասն նենգաւոր և խաբեբայ կարգաւէր Յովհաննէս անզգամիդ, վասն դորապիսեաց, և զգուշացուցանէաք զձեզ և զքաղաքացիսդ ի բաց կալ ի դոցանէ իբրև յատելեաց աստուծոյ և ի թշնամեաց եկեղեցւոյս և օրինաց մերոց, կարելի է թէ՝ երկբայութեամբ ընդունէիք զայնս, այժմ շնորհօքն Աստուծոյ դուք ինքնին անձամբ հասու եղեք դորին նենգագործութեանցըն զտանելով ի դմա զսրբալոյս միւռոնն զգողօն. զոր թողում դիտել ձեզ ի հասարակական կոնդակէն, զոր գրեցաք ահա առ. օրհնեալ ժողովուրդսդ մեր հանդերձ այլով որպիսութեամբք. Նաև վասն այդպիսի չարութեանցն դորին. որպէս յառաջ նզովեալ արտաքս ընկեցաք զդա ինքն Յովհաննէս չիքդ, նմանապէս և այժմ նզովեալ բանադրեցաք զդա զչարդ և զանօրէնդ, իսկ զամենայն զհամախոհսն դորին և զկամակիցսն, որք եթէ ոչ դարձցին ի չարութեանց իւրեանց, յայտնեալ է նման զմին առնելոց եմք առանց ողորմութեան։ Այսպէս դիտելով ձեր՝ ի սէր և յորդիութեան անսպառ կալով, ողջ լերուք ի Տէր և զօրացեալք միշտ ի նոյնն և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ ձեզ Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս և ի յունիսի ... յԱստուածակերտ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ՄԺ. *Թուղթ ի Թիֆլիս առ պարոն Կնօրինն ընդ Աղալլին։*

Զի յայտնի է, որք տեղեակք են թէ մինչև ցայժմ որչափ տառապանք մեզ և մեծագոյն վնասք անթուելիք սրբոյ Աթոռոյս եղեն ի պատճառս խռովարարաց որք ղղուեցուցեալ զլսելիս բազմաց՝ զայլթակղեցուցին զնոսա ի վերայ մեր, և ոչ ղաղարին արդ ևս բանիւք սնոտիւք, և թունաւորեալ գրովք ի վրդովելոյ զԱզգն և զձեզապլսի յարգի անձինս. այլ մեք յուսացեալ էաք ի ճշմարիտն Աստուած, որ կարող է փրկել զմեզ ի ձեռաց ամբարշտաց, և ապա ի յիրաւասէր և ի մեծահաւատ բարեպաշտութիւն ձեր, և միշտ բարի զալստեան ձերոյ ի քաղաքդ այդ սպասէաք, որպէս զի մերձանալովն ձեր յայլկոյս և անցիցն անցելոց վերահասութեամբ զիւրութիւն ինչ լինիցէր մեզ ի նախանձոտաց։ Եւ այժմ ևս տակաւին նոյն յուսով կամ, և աներկբայեմ ի ձէնջ և չկարծեմ բնաւ ին, թէ ձերդ գերազանցութիւն թարց ճիշտ քննութեան տեղի տացէ նենգաւորաց, ե բանից նոցին փութապէս զհաւատ ընծայեսցէ, որ որպէս և մեր պարոն քնեազ Սոլոմոնն Արղութեան գրեալ էր մեզ զուղղասիրութեանց ձերոց և բազում կերպիւ յուսադրեալ և ի կողմանէ ձերդ գերազանցութեան զմեզ միամտեցուցեալ, բայց զինչ օգուտ որ դեռևս նոյն Դանիէլ վարդապետն սուտ զրութեամբ պղտորէ զմիտս քաղաքացւոցդ և այտի ևս համախոհք նորին զանազան թունաւոր թղթովք ապականեն զլսելիս պարզամտաց և լնուն անհամար սըտութեամբ երկիրն Օսմանցւոց և ձերդ գերազանցութիւն առնուն պատճառ չարութեանց իւրեանց, և յանուն ձեր յառաջացուցանեն զգթշնամութիւնս իւրեանց ընդ մեզ, և վատահամբաւեն զանուն մեր այնու ի մէջ աշխարհի։ Ուրեմն ճշմարտասիրութեամբ ձերով որպէս այլ բանից հոգ տանիք, նմանապէս և զայս սուտ զրութիւնս վերջացուցանել պարտիք, որով լիցի խաղաղութիւն Ազգիս մերոյ իըղճալւոյ ե Աստուածային սուրբ Տանս, ի փառս անուանն Յիսուսի, ե ի պայծառութիւն եկեղեցեաց քրիստոնէիցս։ Զայլն ամենայն ունի լիապէս գիտել գերազանցութիւն ձեր ի մեր պարոն քնեազ Սոլոմոնէն Արղութեան, որում յաճախօրէն գրեցաւ և ի թղթաբերէդ. ողջ լերուք Ամէն։

Ի յունիսի... 1802. յԱստուածակերտ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին որ ի դաշտս Արարատեան։

ՄԺԱ. *Թուղթ ի Թիֆլիզ առ գուբերնատոր պարոն Կաւալենսկին։*

Զի աներկբայ յուսով ըստ դատողութեան մերում, գիտեմք ստուգիւ զձերդ մարդասիրութիւն և զկատարեալ սէր, զորս ունիք առ սուրբ Աթոռս այս և առ մերս նուաստութիւն։ Եւ մանաւանդ ի լրոյ և ի թղթոյ սիրելեացն մերոց և հաւատարմացն ձերոց քնեազ Սոլոմոնին Արղութեան և Դիւան պարոն Յովհաննիսին Բէգթաբէգեան լիապէս ունիմք տեղեկացեալ, որպէս ե զփորձն ևս առեալ ճշմարտասիրութեանց ձերոց՝ պարտաւորս զմեզ համարիմք անդադար աղօթելոյ առաջի Աստուածային սուրբ տաճարիս բոլոր միաբանութեամբ վասն անզին կենաց ձերդ գերազանցութեան, հանդերձ բազմապատիկ շնորհակալութեամբ յաղագս ցուցեալ բարեյաւութեանց ձերոց։ Եւ արդ՝ ըստ որում պատահեցաւ ասա նոյն վերոյիշեալ Բէգթաբէգեան Դիւան պարոն Յովհաննիսի եղբայր Զալն, և գայր յայլկոյս, զայս թուղթ սիրոյ և կարօտանաց գրեալ մատուցաք առ ձերդ պատուականութիւն, որով և խնդրեմք, զի զոր ինչ գրեալ եմք յառաջ զքանի մի հարկաւոր խնդիրս մեր քնեազ Սոլոմոնին Արղութեան, զայնս սիրով ի կատար ախորժեսջիք։ Իսկ զայլ որպիսութիւն սրբոյ Աթոռոյս և կողմանցս ի թղթաբերէդ ունիք լիովին գիտել։ Ողջ լերուք, ի յունիսի ... 1802, ի սուրբ Էջմիածին որ ի դաշտս Արարատեան։

Իսկ զՍտեփանոս արքեպիսկոպոսն մեր զոր ուղևորեցաք յայլկոյս սակս խաղաղութեան և ուղղութիւն իրացն ծանուցանելոյ, յանձնեմ ի սէր սիրելեացդ ընդունել մարդասիրութեամբ և կարեկից լեալ վշտապատ ծնողիս ձերոյ լուսոյ՝ փութապէս խաղաղական գրով և ուրախական լրովք առ մեզ վերա-

դարձուսջիք, զի գործ սրբոյ Աթոռոյս այլ ևս մի մնասցէ խափան և մեք ազատեալ ի հոգոց միամտաբար զհետ շինութեան և պայծառութեան Աստուածային Տանս եղիցուք։

ՄԺԹ. Առ Գրիգոր վարդապետն ի Պետերբուրգ:

Սորմ; բազում սիրով, հոգևոր օրհնութեամբ և Քրիստոսաձիր ողջունիւ հանդերձ շնորհիւ սրբոյ Իջման տեղւոյս Քրիստոսի ծանուցումն լիցի սիրելի և հարազատ որդւոյդ մերում և հոգևոր զաւակիդ սրբոյ Դահիս Գրիգոր շնորհափայլ արքեպիսկոպոսիդ։

Զի յապրիլի 25 գրեալ քանի՛ թերթ թուղթըդ ընկալեալ ի յունիսի 23 ծանեայ զամենայն միտս դրեցելոցդ և զարարս Նիվրեմին, և զքսութիւնս Մէլիք Մինասին, Բեալին, և քահանայի միոյ։ ԶՄէլիք Մինասի ի Քանա գնելն խանին, զոր լուեալ էք ճշմարիտ, բայց ոչ այնր, զոր ինքն գրէ, այլ վասն այն, որ զպահարանաւ թուղթսն մէկ ի Պօլիս գնալի՝ կալեալ ի ճանապարհին պատառեալ էր, ուստի և արժանապէս բանտից մատնեալ, իսկ Վեալն մեծամեծս երդնու չգիտել, որպէս և ինքն անձ գրեաց։ Բայց քահանայի գրելն չէ զարմանք, ըստ որում փեսայն է, հարկիւ զնա ջատագովէ, և զմէնջ ամբաստանէ՝... [1] կութիւնս ոմանց չարասիրաց բանիւք և դրովք յայլ և յայլ տեղեաց։ Նոյնպէս գիտացաք ըզթղթոց մերոց հասանելն առ քեզ, և թարգմանութեամբ տալն իւրաքանչիւր մեծամեծացն, և այլն։ Մեք ևս ի զանազան ժամանակի՝ զամենայն անցս տեղւոյս անյապաղ ծանուցեալ եմք քեզ։ Եւ գիտեմ զի ցարդ հասեալ գիտացեալ իցես զչիք Յովհաննիսի փախստեալ անկանելն ի Թիֆլիզ, և անդ զանազան չարիս նիւթելն վասն մեր, բայց Աստուած իւրով ճշմարտութեամբ խայտառակեալ զչիքն ամօթով է արարեալ յոյժ, քանզի բազմութեամբ դիմեալ են ի դուռն պարոն Կնօրինին և պարոն Կաւալենցկուն, և բողոք բարձեալ թէ որ օծեալ և նստեալ ի սուրբ Աթոռն Լուսաւորչի, զնա գիտեմք մեզ հայրապետ, և զայլ ոք ոչ կամիմք ճանաչել ամենևին։ Այսպէս ասելով և զերկու մահսէրս են արարեալ, զմինն առ ողորմած կայսրն վասն վերահաստատութեան մերոյ և զմիւսն վասն չիք Յովհաննիսին պօլսեցւոյ առ հիւսիսականսն, զի ունկնդիր չլինիցին սուտ դրութեանց նորին։ Եւ պարոն Կնօրինն ևս խոստացեալ է՝ զայն ծանուցանել մեծի կայսերն, և մեք բազում յուսով կամք օգնութեան ինքնակալին, և միջնորդութեան պարոն Կընօրինին, որպէս զայսոսիկ ունիք լիապէս գիտել ի թղթոց եպիսկոպոսացն մերոց և քընեաղ պարոն Սոլոմոնին, զորս ոչ երկարեմ։ Մեք ևս վասն այսպիսի չարութեանցն նորին և վասն դողութեան որ ի փախչիլն աստի, տարեալ է ընդ իւրն և սափորաւ միւռոն, բանադրեցաք զչիքն, և յամենայն եկեղեցիս դըրեալ որոշեցաք ի կարգէն, և իբրև զհոտեալ անդամ հատեալ արտաքս ընկեցաք։ Նաև ի Հաշտարխան Սիմէօն Սէրղէյիչին, և քանի մի անձանց զթուղթ գրեալ յորդորեցաք և յորդորեմք միշտ հաստատուն կալ և մնալ ի նոյն, և յոյժ շնորհակալ եմ զնորին և զքանի մի անձանց հարազատութեանցն, ընդ այնց և զմահսէր մի ի միաբանից և երկրացւոց դըրեալ առաքեցաք առ նա հասուցանել առ քեզ։ Զայսոսիկ զամենայն ստուգիւ գիտեմ, զի մինչ ցարդ ունիս ընկալեալ և հասու եղեալ։ Զկնի ամենայնի, շնորհօքն Աստուծոյ ցարդ խաղաղութեամբ կամք, գերապատիւ Շահն և խանն ունին զբազում խնամս ի վերայ մեր, բայց ցաւիմք յոյժ յոյժ ի վերայ խռովութեան ժողովրդոց, քանզի ամենեքին մուտք և արդիւնք խափանեալք են, և մեք յառաւօտէ ցերեկոյ, և յերեկոյէ յառաւօտ հոգամք զպակասութիւն Տանս և միաբանից և շուրջ զմեօք եղեալ արտաքին թշնամեաց, որք միշտ ի կեղեքելն են։ Թողեալ զայսոսիկ, ընտանի թըշնամիքն մեր որպէս Դանիէլն և այլք ոչ թողուն բնաւին զմեզ մնալ հանդարտ, այլ զանազան կերպիւ հասուցանեն մեզ և սրբոյ Աթոռոյս զցաւս անտանելիս և զպէսպէս նեղութիւնս, և կարօտ եմք հզօր օգնականութեան մեծի կայսերդ, որ եթէ յամեսցի, քայքայի իսպառ. զինչ պարտիմք առնել, եղիցի կամք Տեառն օրհնեալ։ Երկիրս այժմ է ի խառնակութեան, և մեք եկեալ յԵրևան առ խանն

[1] Եղծուած էր մի քանի տող։

հոգամբ զապաղալից։ Դու զամենայն որպիսութիւնսդ գրով մեզ ծանուցեալ՝ հանապազ ըզգաստութեամբ ի բանս և ի գործս քո արի լիցիս, մինչև անսցուք թէ՝ Աստուած ուր ունի եզերել զբանն. ցաւիմք ի վերայ Գրիգորապօլցւոցն և ցիր լինելոյն. Աստուած ողորմութիւն արասցէ։ Վասն Բէկլէշովի թղթոյն մեք չեմք սխալեալ, այլ զու զանազանն չէիր լիշեալ, այժմ չունէաք դձեռնհասութիւն, յետոյ ընդ այլ խնդրեալ թղթոցդ առաքեցից։ Նաև՝ Նփրեմդ այդ զնորանոր անլուր չարութեանցն, զորս բաբաջէ զմէնջ, իբրու թէ ի կողմն Շահին իցեմք հակեալ, և ի նա յուսացեալ, և կամիմք զզօրս նորա յառաջ բերել և այլն, այդ ես չէ զարմանք, վի այնչափ սուտ և անհիմն զրպարտութիւն առնօղն զմէնջ, զայդչափ ես կարէ բարդել ի վերայ մեր, ըստ որում միանգամ մեռուցեալ զա զխղճմտանս իւր, և իբրև անագորոյն ամեհի երիվար յարուցեալ է ի կիցս արձակել մեզ, և ի մտի իւրում տպաւորեալ է արհամարհել զմեզ, և խսպառ քակել զսուրբ Տունս խղճալի, զորոյ զչար խորհուրդս ցրուեսցէ տէր, և զժանիսն փշրեսցէ, և զամենայն զօրութիւնս նորին և հեաևողացն նմին տկարացուցեալ ողորմութեամբ յայց ելցէ մեզ։

ՄԺԳ. *Թուղթ առ պարոն Կնօրինն եւ այլն:*

Զի ի թղթոց սիրելեաց գիտացաք զխաղաղութեամբ չուելն ձեր դէպ ի Մօզդոկ։ Նոյնպէս ծանեաք ղճշմարտութեամբ հասուլինիլն ձեր անցիցն և գործոցն, որք գործեցան և ի նախանձոտաց այլապէս առաջի ձերդ գերաղանցութեան և այլոց պատմեցան։ Եւ ես ղքաղաքացւոց ջատագովութիւնն և աղաղակաւ ղիմելն յապարանս ձեր, և զերկու մահսէրս առնելն, յորոց և զմինն թարգմանութեամբ մատուցանելն ձերդ գերազանցութեան, և ձեր սիրով ընկալնուլն, և խոստանալն յայտնել զխնդիր հասարակութեան Թիֆլիզու նորին կայսերական մեծութեան և այլն։ Որոց ամենից բարեյաւութեանց ձերոց սակս՝ մեծագոյն շնորհակալութեամբ զգոհութիւնս մատուցանեմ, և յայտնեմ ես զսուրբ Աթոռս և զնուաստութիւն մեր յանձնեմ ի խնամս և ի շնորհ ձեր, ի մտի ունիլ և ձերով բարեպաշտութեամբ և ճշմարտասիրութեամբ որպէս վերահասու եղէք ուղղութեան, ըստ այնմ և ծանուցանել օգոստափառ մեծի կայսերն փոյթ կալջիք. զի օր յառաջ ելցեն իրաւունք և արդարութիւնք ի մեծազօր դրանէն արքունի, որով և մեզ բաւականութիւն և դիւրութիւն լիցի ի ձեռաց ամբարշտաց, քանզի՝ եթէ այլ ես յամեսցի օգնութիւն ձեր՝ բոլորովիմբք աւերի սուրբ Տունս ի պատճառս խռովարարաց, զոր թողում ի բարի խղճմտանս ձերդ արդարակորով դատողութեան։ Ես չունիմ երբէք զկարծիս ղօգնութենէ ձերմէ և զսիրոյ որպէս փորձիւ գիտեմ, և որպէս յուսագրեն զիս բազումք ի Թիֆլիզու թղթովք, և մանաւանդ պարոն Մինաս Քիստովն։ Առ որ և զայս թուղթ առաքեալ պատուիրեցաք հաւատարմաւ հասուցանել առ ձերդ գերազանցութիւն. յաւել յայսմանէ մնամք վասն բարեացապարտ կենաց ձերդ գերազանցութեան աղօթարար միշտ առաջի Քրիստոսաէջ սուրբ տեղւոյս բոլոր միաբանութեամբ, ողջ լերուք ի պարծանս սուրբ հաւատոյս մերոյ և ի պայծառութիւն սրբոյ Աթոռոյս, և եկեղեցեաց մերոց, և մանաւանդ ի մխիթարութիւն սրտի վշտակիր անձին մերոյ։ ԴԱՒԻԹ կաթուղիկոս ամենայն Հայոց։

Ի յունիսի ... ի 1802. ի սուրբ Էջմիածին։ Որ ի դաշտս Արարատեան։

ՄԺԴ. *Առ պարոն Պետր Գրիգորիչ Պուտկովն հաւատարիմ խորհրդականն նորին գերազանցութեան:*

Զի ի թղթոց սիրելեաց մերոց Կարապետ և Աբրահամ եպիսկոպոսաց, քնեազ Սոլոմոնին Արղութեան, և պարոն Քրիստով Մինասին և այլոց, գիտացեալ զմեծագոյն սէրդ և զկատարեալ բարեկամութիւնդ զորս ունիս առ սուրբ Աթոռս և առ մեզ, ուրախութեամբ սրտի շնորհակալեալ յոյժ յոյժ զձերդ պատուականութենէ օրհնեցաք առաջի Քրիստոսաէջ սուրբ տեղւոյս զբարեացապարտ կեանս ձեր. զոր Տէր օրհնեսցէ խաղաղ և բարեկաջող կենօք պահեսցէ հանդերձ բոլոր ազնուական ըն-

տանեօքդ և յաչս ինքնակալին մեծի քաղցր և սիրելի արասցէ։ Ուստի՝ զայս թուղթ օրհնութեան և սիրոյ արժանապէս գրեալ առ գերապատիւ սիրելութիւն ձեր՝ խնդրեմ ի դոյն ճշմարիտ սէրդ հաստատուն մնալ, և զբանս խռովասիրաց ոչինչ և անպիտան համարել ընդհետ ճշմարտութեան լինել և ջատագով նըմին դտանիլ. քանզի ահա ի պատճառս նախանձոտաց՝ մեծապէս վնասեալ սուրբ Աթոռս և մեք կամք ի մեծի նեղութեան, և սպասեմք բազում յուսով օգնականութեան օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն։ Ուրեմն՝ ի պատուականութենէ ձերմէ ևս խնդրեմք, զի միշտ յորդորող լինիջիք նորին գերազանցութեան Պարոն Կնորինին, զի զբողոքս մեր, և զխնդիրս բոլոր հասարակութեան Թիֆլիզու փութով ծանուցեալ նորին կայսերական մեծութեան՝ քաղցրացուսցէ վերստին զմաքուր սիրտ նորին ի վերայ սրբոյ Աթոռոյս և ի վերայ մերս նուաստութեան. որ ի բերան անկեալ բամբասիմք ի զուր։ Եւ մեք բոլոր միաբանութեամբ առաջի Աստուածաէջ սուրբ սեղանոյս ազօթօղ եմք վասն կենաց ամենաբարեպաշտ մեծի կայսերն, և բոլոր քրիստոսազօր պալատականացն նորին և ամենայն խաչապսակ զօրապետաց և զօրացն. նաև ջանասջիք խափանել զերթևեկութիւն խռովարարացն ի քաղաքէդ և վերջացուցանել զչփոթալից դրուածսն նոցին, որք այտի սերմանին դրով առ այլս, և յայլուստ յայդր, քանզի մինչ ոչ վերջասցի դրութիւն չարասիրաց, խաղաղութիւն ոչ լինի երբէք. որպէս զսոյնս և պարոն Կաւալենցկուն գրեցաք։ Եւս ի նշան մերս հայրական սիրոյ և օրհնութեան առաքեցաք ահա առ յատկեղ բարեկամդ մեր զմէկ քէհրիդար Տէրողորմեա, զոր ի վայելելդ ուրախութեամբ, ի մտի ունիցիք զմեզ, և ի սէր և ի բարեկամութիւն ընդ սրբոյ Աթոռոյս և ընդ մեզ կացեալ, ողջ լերուք ի Տէր Ամէն։

Ի յունիսի ... ի 1802. ի սուրբ Էջմիածին, որ ի դաշտս Արարատեան։

ՄԺԵ. *Թուղթ ի Թիֆլիզ առ պարոն քաղաքապետ Պետր Իվանիչ Կաւալենցկին:*

Զի ի թղթոց սիրելեաց մերոց և հաւատարմաց Կարապետ և երկու Աբրահամ արքեպիսկոպոսաց, քնեազ Սոլոմոնին Արղութեան, պարոն Մինասին և պարոն Մելքոնին և պարոն Յովհաննին և այլոց գիտացաք զմեծագոյն սէր ձեր և զբարեկամութիւն, զորս ունիք առ խղճալի սուրբ Աթոռս մեր, և առ մերս նուաստութիւն, որ ի բերան անկեալ բամբասիմք ընդ վայր, և սուրբ Տունս Աստուածակերտ ի ձեռաց նախանձոտաց, և ի պատճառս խռովասիրութեանց նոցին մեծապէս վնասեալ՝ օր քան զօր քակտի։ Նմանապէս գիտացաք զժողովրդոց քաղաքիդ զարիական քաջութիւնսն զկրէժխնդրութիւնսն Աստուածային օրինաց, որովք հեռացեալ ի խաբեբայ և յաղմկալից արանց, և անպիտան համարեալ զամենայն զբանս նոցին, իբրև այր կատարեալ և բարեպաշտ քրիստոնեայ, հասարակութեամբ դիմեալ են յապարանս ձեր, և զմէնջ զբազում ջատագովութիւնս արարեալ թէ՝ որ կայ այժմ օծեալ, զնա ճանաչեմք, և այլն, և ի վերայ այսր զերկու մահսէրս արարեալ զմինն առ ողորմած օգոստափառ կայսրըն և միւսն առ հիսիսականսն վասն խաբեբայ և բանսարկու Յովհաննէս սևաւորիդ, և ես՝ իմացաք, թէ նորին գերազանցութեան պարոն Կնօրինի և թէ ձերդ պատուականութեան ձեզէն անձամբ վերահասու լինելն ամենայն անցիցն ստուգութեամբ, և աչօք տեսանելն զփափագս ցանկութեան սրտից օրհնեցելոցդ տեղւոյդ, և զհետ երթալն ձեր ճշմարտութեան, արդարութեամբ դատելն ձեր, և խոստանալն զբաւականութիւն շնորհել մեզ ի ձեռաց թշնամեաց մերոց ծանուցանելով զայնոսիկ ամենաբարեպաշտ մեծի օգոստափառ կայսերն, և այլն։ Արդարև՝ ոչ սակաւ շնորհակալեալ օրհնեցաք դբարեացապարտ կեանս քաջընտիր սիրելւոյդ մերոյ, և օրհնեմք միշտ առաջի Աստուածային սուրբ Տաճարիս։ Եւ արդ՝ զայս մի ինչ խնդրեմ, նախ որպէս խոստացեալ էք հասարակութեան քաղաքիդ, և յուսադրեալ զմեզ յայտնել զխնդիրս դոցա, և զբողոքս մեր նորին կայսերական մեծութեան, ի կատարեալ սիրով փութասջիք, և հաստատուն ի բանս և ի խոստմունս ձեր մնալով՝ յօգնութիւն մեզ փութասջիք։ Եւ ապա՝ ջանասջիք բառնալ զչարն և զխռովարարն ի միջոյ, խափանել զթունալի դրուածս և զթուղթըս նոցին, որք գան և երթան աստի և յայլ տեղեաց՝ յայդր, և այտի յայլ և այլ տեղիս,

որովք լիցի խաղաղութիւն ի քաղաքիդ, զի մինչ ոչ վերջացուցին այնպիսի թուղթք, ոչ վերջանայ խռովութիւն ժողովրդոց։ Յաւել յայմանէ՝ յանձնեմք զմեզ և սուրբ Աթոռս մեր ի խնամս, և ի շնորհս ձեր, և յորէ յոյս ողորմութեան մեծի կայսերն և օգնականութեան ձերոյ սպասեմք։ Զայլն ունիք գիտել ի թղթոց եպիսկոպոսացն մերոց, ողջ լերուք ի Տէր Ամէն։

Ի յունիսի... ի 1802, ի սուրբ Էջմիածին որ ի դաշտս Արարատեան։

ՄԺԳ. *Թուղթ ի մեծն Պօլիս առ Հաջի Դատ կոչեցեալ մահտեսի Առաքել ամիրայն, ծանուցումն զայլ եւ այլ անցից, եւ խնդիր վասն օգնութեան Աթոռոյս։*

Եւ ընդ սիրոյ և օրհնութեան ողջունաւոք նամակիս՝ գիտութիւն լիցի ազնուականութեան քում. Զի որպէս արեգակն և լուսին, ի պարս աստեղաց, նոյնպէս և ի դրոհի Աղքանայեան տոհմականութեանս դուք այսօր շնորհիւ ողորմութեան Աստուծոյ ծաղկեալ երեւիք և փայլիք՝ թէ ըստ իշխանական պատուոյ և ճոխութեան և թէ ըստ ամենայն հանդամանաց, բարեպաշտութեան. իրաւունք ե՞ ապա որ այսօր յաւուրս ձեր այս խղճալի սուրբ Աթոռ մայրս հաւատոյ ձերոյ զայսպիսի անօրինակ վնասս և զանպատուութիւնս ընդունի ոչ ի յօտարազնէից, այլ ի ընտանի թշնամեաց. և դուք որք ձեռնհաս էք սաստել այնպիսեացն և զմեզ ազատել ի ձեռանէ նոցին, բայց բնաւ ոչինչ փոյթ կալնուք առ այն։ Լուսահոգի նախնիքն ձեր՝ թէ զի՞արդ բարւոք խնամարկութեամբ և հոգաբարձութեամբ պահպանէին զայս սուրբ Աթոռս, զայն լաւապէս և դուք գիտէք. Վասն է՞ր ապա և դուք ըստ նմանութեան բարի շաւղաց նոցին խնամ ոչ տանիք առ ի պահպանել զշինութիւն և զհաստատութիւն սորա. այլ անփոյթ եղեալ՝ թողլ տայք՝ զի արք յաչաղկոտք և պրարանք վասն փառամոլութեան ախտի իւրեանց աւերեսցեն և քայքայեսցեն զսա. եթէ այնպէս առնիցեն՝ միթէ նախատինք խայտառակութեան ոչ է լինելոց Ազգին. Գիտեմ, զի բարեպաշտ սիրելիդ ըստ ողջախոհ բարուց քոց չես ընդ այս խառն, ըստ որում. որպէս ի քոյդ գրուածոց, նմանապէս և ի թղթոց հաւատարմաց մերոց իմանամք զսիրոյդ ջերմութիւն, և զմտերմօրէն ջատագովութիւնդ առ սուրբ Աթոռս և առ մեզ, վասնորոյ և յարաժամ օրհնարտնեմք սիրելւոյդ, և յիշատակեմք զքեզ առ ի բարին, զոր Տէր օրհնեսցէ և զօրացուսցէ, և ըստ հաւատարմութեանցդ առ մեզ վարձատրեսցէ առաւելապէս.

Բայց կան ոմանք յայդր՝ որք ձեռնտու լինին ան.ձնտսէր Դանիէլին, վասնորոյ և նա ի Բայազիտ նստելով, կամի հակաթոռ մեզ լինել, և ի Դրդսեան ի հայրենին տեղի իւր, հաստատել զաթոռ, և զայս Քրիստոսակերտ և Լուսաւորչաշէն սուրբ Գահս աւիրել և կործանել, և զանփոփոխելի հայրապետութիւն Ազգիս ընդ փոփոխութեամբ արկանել. Որ և զամենայն զինչսն սրբոյ Աթոռոյս՝ ուր և գտանէ, որպէս ի Բայազիտ՝ Ժ. կամ ԺԱ բեռինք կային մեր՝ վասն ահին պարսից առաքեցեալք ի պահպանութիւն ի լուսահոգի Ղուկաս կաթուղիկոսէն, այնոցիկ տիրեաց. Ի Կարնոյ ևս յափշտակեաց զերկու բեռինսն մեր, յորոց մէկն Իզմիրու առաջնորդ Մարտիրոս վարդապետէն առաքեցեալն է վասն հարկաւորութեան սրբոյ Տանս, և միւսն ի հոգելոյս Ներսէս վարդապետէն՝ Միացեալ. Զայնոսիկ յափշտակեալ, ոչնչացուցանէ. գրէ ըզսանատս ծանր ծանր կաշառաց՝ և առաքէ առ խանն մեր և առ այլս՝ զի ինքն գայցէ և նստցի աստ, բայց զկեղծ անունն ի վերայ մեր դնէ՝ թէ մեք հնարեալ իցեմք յանուն իւր զսանատս, և յղեալ առ նոսա, որ զուր է ամենեին. Իսկ խանն մեր իմանալով թէ յայտնապէս կամի նա տապալել զսուրբ Տունս, ոչ հաճի բնաւ ընդ նա և ընդ խոստմունսն նորին. Որպէս և ի Թիֆլիզու ռուսաց զլխաւորացն ևս դեսպանք եկին առ խանն, թէ վասն երկրիս, և թէ սակս բանի հայրապետութեանս, որոց ջուղապ ետ խանն, և ծանոյց զուր լինելն խօսից և ասութեանց Դանիէլին, հաւատարմացուցանելով և զկարգիլն մեր յայս պատիւ ոչ ակամայ և բռնութեամբ, այլ հաճութեամբ շրջակայ երկրացւոց, և միաբանիցն եղեալ.

Ապա և զնոյն դեսպանսն առաքեաց

ասա ի սուրբ Աթոռս, որք նկեալ տեսին զեկեղեցական անօթսն մեր՝ զոր-ց Դանիէլն հռչակեալ է իբր թէ խորտակեալ իցեմք և այլն։ Եւ միաբանքն մեր ևս Նրզմամբ հաստատեցին թէ այնպէս բան չէ եղեալ, վասնորոյ և՞ գրեցին զբազմակնիք մահսէր առ գլխաւորսն ռուսաց, ծանուցանելով, թէ սուտ է և թշնամութիւն զոր ինչ Դանիէլն բարբանջեալն է, և այլն։ Այժմ նոյն մեծամեծքն ռուսաց զշնորհս ունին առ մեզ, և բազմիցս ըզբարեկամութեան և զլուսադրութեան թուղթս գրեալ են առ մեզ, խոստանալով զգացուցանել կայսերն զճշմարտութիւն այսր անցից մերոց։ Արդ՝ զօգուտն և զվնասն սրբոյ Աթոռոյս և զցաւս մեր՝ թէպէտ յառաջմէ բազմիցս գրեալ եմք առ յարգելի օրհնեալ իշխանսն տեղւոյդ թէ հասարակական և թէ յատկական թղթովք, և զեռ մէկ սրտադիւրական պատասխանի ոչ եմք ընկալեալ, բայց այժմ ևս գրեցաք, թէ առ սիրելի եղբայրն մեր պատրիարգ զգօնամիտ վարդապետն, և թէ առ հասարակութիւն պերճապատիւ ամիրայից, որպէս տեսանելոց և իմանալոց ևս։ Նոյն այսու օրհնութեան թղթով քեզ հաւատարիմ սիրելւոյդ ծանուցանեմք զայս, որ այս խղճալի սուրբ Աթոռս այսպէս երես ի վայր անկեալ մնալով, յիրաւի օր ըստ օրէ աւերի և կործանի, և Աստուած մի արասցէ՝ եթէ աւերեսցի ի չորաչատ ժամանակի յայսմիկ՝ այլ ևս ոչ է շինելոց, որպէս և քաջ գիտէք։ Վասնորոյ բարեպաշտութիւնդ առ Աստուած՝ և ըստ սրբտական սիրոյդ առ սուրբ Աթոռս՝ փոյթ կալցիս օգնել սմա՝ որչափ զօրէ կարն քոյ, սիրով յորդորեսցես որոց պէտք է՝ չհաճիլ ընդ մնասակար արարս Դանիէլին, եթէ կարծիս ունին վասն մեր յումպէտս վատնօղ եղելոյ իրաց սրբոյ Տանս՝ զքանիս հաւատարիմ արս առաքեսցեն աստ, և հասու լիցին ճշմարտութեան, և ըստ այնմ իրաւունս արասցեն, և ի նանիր պատճառ չգտցին աւերման մեծանուն Աթոռոյս, և զՍտեփաննոս եպիսկոպոսըն մեր եթէ մինչև ցարդ չէք ուղևորեալ առ մեզ, շուտով հոգ տարցին առաքել՝ հանդերձ խաղաղական և աւետաւոր թղթովք իւրեանց։ Եւ դու օրհնեալդ ըստ բարեշնորհութեանցդ ընկալցիս զվարձս յԱստուծոյ, և ժառանգեսցես զշնորհս սրբոյ Գահիս և զօրհնութիւնս մեր։ Որ և ի սէրդ և ի բարեկամութիւնդ հաստատ կալով, և երբեմն սիրանիշ գրովդ զմեզ մխիթարելով ողջ լեր ի Տէր։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս և ի յունիսի ... ի սուրբ Էջմիածին։

ՄԺԷ. *Թուղթ ի մեծն Պօլիս առ Փափազօղլի Սիմէօն ամիրայն, յորդորումն ի մէր սրբոյ Աթոռոյս:*

Եւ ընդ ամենառատ օրհնութեան Աստուածայնոյ՝ գիտութիւն լիցի իսկապէս սիրելւոյդ մերում և բարեմիտ որդւոյդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։

Զի յանցեալ տարւոյն սկսեալ մինչև ցարդ յորմէ հետէ յաջողմամբ Տեառն կոչեցեալ եմք յայս աստիճան հայրապետութեան սրբոյ Աթոռոյս և օրհնեցելոյ Ազգիս Հայոց, քանիցս առ յարգոյապատիւ սիրելիդ գրեալ եմք ըզսիրանիշ թուղթս իշխանապետական պատուով և յարգանօք՝ որպէս վայել է քումդ ազնուականութեան. ծանուցանելով այնոքիւք յիւրաքանչիւր ժամանակի եղեալ զորպիսութիւնսն մեր, և զգուշացուցանելով՝ հեռի կալ մնալ ի մնասակար խորհրդոց խռովասիրաց՝ որ հայի յաւերումն և ի կործանումն խղճալի սրբոյ Աթոռոյս։ Եւ որպէս իմացեալ եմք ստուգութեամբ ի յայնց թղթոց գրեցելոց ի մէնջ՝ են որք հասեալք են ըստ ժամանակին առ պատուականութիւն քոյ. և են որք ոչ են ժամանեալք, զի ի թշնամեաց ձեռս անկանելով՝ անյայտացեալք են։ Բայց մեք տարակուսիմք առ այս՝ թէ արդիւնք ճշմարտութեան կամիք լսող լինել որպէս վայել է Քրիստոնէական հաւատոյս, եթէ ստութեանն։

Արդ՝ եթէ ճշմարտութեան ունիք զունկն մատուցանել, բարի է թէպէտ, սակայն տակաւին արդիւնք ինչ ոչ երևեցաւ առ մեզ։ Իսկ եթէ յայտնապէս կամիք քամահել զճըշմարտութիւն, և ընդունել զստութիւն, զիարդ պարտիք այդպէս առնել, ոչ ապաքէն անդէպ ինչ է, և մեղք մեծ, և ընդդէմ Աստուածային կամաց և օրինաց. զի Քրիստոս Տէրն մեր, որպէս զամենայն մեղս և զյանցանս՝ նոյնպէս և զստութիւն խոտեաց և անարգեաց, յորմէ և ամենևիմբ ի բաց հրաժարեցոյց զաշակերտ-

եալքս իւր։ Ապա զի՞ է որ դուք օրհնեալք Թարց քաջ խոհականութեամբ հասու լինելոյ իրացն ստուգութեան, զհակառակն Աստուծոյ և օրինաց նորին գործէք ընդդէմ ճշմարիտ և անխարդախ բարեպաշտութեան ձերոյ, և թողեալ զճշմարտութիւն, զպատճառն փրկութեան հոգւոց ձերոց, հետևիք լսել ստութեան ամենայն ատելւոյն Աստուծոյ և մարդկան։

Արդ՝ ահա այնոցիկ է՝ որ մոլեալք են այլ և այլ ախտիւք, որովք և կուրացուցեալք են զաչս հոգւոց իւրեանց, վասնորոյ և յայտ յանդիման ուրանան զճշմարտութիւն և հետևին ստութեանց, զի ի ձեռն այնց կարասցեն հասանել այնմ տռփանաց իւրեանց, առ որ ըզցայգս և զցերեկ կան հակամիտեալք· իսկ ձերինդ ճշմարիտ բարեպաշտութեան, որ չունիք ինչ տռփանս առ ախտս այնպիսիս այլ միայն զեկեղեցեաց շինութիւն, և զհոգւոց ձերոց ըզպայծառութիւն կամիք, և որդւոց ձերոց զաբեչատութիւն, յիրաւի բնաւին ոչ է արժան իբաց մերժել զճշմարտութիւն, և առ ընդունիլ զստութիւն։ Արդ՝ յայտ է զի մեք առ Դանիէլն չունիմք ինչ մեզ, բայց նա ամենայնիւ յամենայնի պարտաւոր է առ մեզ՝ և առ սուրբ Աթոռս։ Քանզի յայնմ ժամանակի մինչ եկաք մեք՝ ի մայրաքաղաքդ մեծ ի հրաւիրումն նըմին ի կաթուղիկոսութիւն, յիրաւի մեր ներքին և արտաքին կամքն այն էր, զի նա բերեաք, որպէս յայտնի է Աստուծոյ և խոհական սիրելեացդ· բայց նա որ խելադարեալ, զինչ արար ընդդէմ կամաց ձերոց, որով դնաց յոքսորս, և ոչ էհաս այսմ աստիճանի, մեզ ինչ պարտաւորութիւն կայ անդուստ։ Յետ այնորիկ հոգելոյս Յովսէփ հայրապետն՝ որ հաճութեամբ ազգիդ և հրովարտակօք մեծազօր թագաւորին յատկացաւ ի կաթուղիկոս, և եկեալ հասեալ ի Թիֆլիզ քաղաքդ՝ վախճանեցաւ անդէն, ո գիտէր՝ թէ այն այնպէս լինելոց էր, և մանաւանդ ով գիտէր թէ նա ինքն հոգելոյս հայրապետն ի վախճանիլն իւրում կտակ առնելոց էր յաղագս մեր յաջորդեցուցանելոյ ի տեղի իւր։ Ոչ ապաքէն ապագայ լինելիքն նախատեսութեան Աստուծոյ միայն են գիտելիք, և նա է՝ որ ըստ անհնոյ իմաստութեան իւրոյ տնօրինէ և կարգադրէ զամենայն իրս աշխարհի, և որպէս կամի՝ զորս ածել ի փառս, և զորս ածել յանարգանս՝ այնպէս առնէ։ Ոչ ապաքէն և Աստուած էր՝ որ զայսքան հազարաւոր և բիւրաւոր անձանց, այսինքն բոլոր միաբանից և համայն շրջակայ երկրացւոցս զմիտս և զխորհուրդս միաբանեաց ի մի՝ և յօժարեցոյց ի յընդունիլն կտակի միոյ ուրումն, և կարդելոյ և կացուցանելոյ զմեզ յայս պատիւ։ Ոչ ապաքէն նոյն ինքն Աստուած էր, որ զառաջինն քաղցրացոյց զսիրտ մեծազօր տէրութեան շնորհել մեզ զնոմոսն մեր, և ըզմիտս բոլոր Հայկազնեայ օրհնեալ ժողովրդոցդ ևս շարժեաց ի յընդունելութիւն և ի հաճութիւն ընդ հայրապետութիւն մեր· թէև յետոյ արք ախտամոլք յաչաղկոտք վրդովեցին զձեզ, և չթողին մնալ ի կամս ձեր։

Այն ևս Աստուծով չէ՞ր որ ի տեղդ դալով՝ սիրելիդ իբրև Աստուածայինն իմն ազդեցութեամբ մանաւանդապէս մեզ՝ պատշաճ տեսանէիր զայս պատիւ, վասն այն փութացանէիր զմեզ ի ծածուկ առ ի գալ ի սուրբ Աթոռս. եթէ չէաք արժանի այսմ, ընդէ՞ր սիրելիդ զնոյն բանսն ասէիր յայնժամ, և կամ յետոյ զիարդ կնքեցիր զհամահաճութեան մահուէրն մեր։

Իսկ եթէ արժանի, վասն էր ապա այժմ ոչ պահպանես զմեզ, և ոչ տիրութիւն առնես կնքոյդ զոր եդեալն ես ի վերայ մահուէրիս մերոյ։ Արդ ըստ Գամագիէլի օրէնսուսուց դըտեալ ի հրէից, որ վասն առաքելոցն ասութեանց՝ ասեմք և մեք, զի այս գործ և իրականութիւն մեր եթէ ի մարդկանէ է, երբ և իցէ քակտելոց է, աւելորդ է ուրուք առ այն աշխատ լինելն. իսկ թէ յԱստուծոյ է, ոչ կարէ ոք քակտել զսա՝ գուցէ և Աստուածամարտ գտանիցի այնպիսին։ Ապա այժմ, որ Դանիէլն ընդդէմ Աստուծոյ հակազինեալ, կամի աւերել և կործանել զխղճալի սուրբ Աթոռս մեր առ ի լցուցանել զախտս իւր, չգիտեմ սիրելիքդ ևս համախոհ էք նմին, թէ ոչ, և արդարև բնաւ ոչ կարծեմք թէ օրհնեալքդ հաճիցիք ընդ վնասակար գործ նորին. քանզի այս սուրբ Աթոռս ձեր հոգւոյ տունն է, եթէ վասն մարմնաւոր տան ձերոյ ոչ կամիք զաւերումն, զիարդ ապա կամելոց էք, թէ այս սուրբ տունս հոգւոց ձերոց աւերեսցի, վասն զի որպէս պայծառութիւն սորին՝ ձերն է, և պատիւն առ անուանս ձեր վերաբերի նմանապէս և անչքութիւն սորա, ձեզ և որդւոցդ ձերոց լինելոց է նախատինք և ստգտանք քանզի մեք մարդ մահկանացու գոլով, երբ և

իցէ թէ կանուխ և թէ անագան գնալոց եմք ընդ ճանապարհ ամենայն մարդոյ, իսկ զայս սուրբ Աթոռս դուք և որդիք և թոռունք ձեր, պարտիք վայելել. լուսահոգի նախնիքն ձեր բազում հոգաբարձութեամբ պահպանելով զսա հասուցեալ են առ ձեզ, դուք ես եթէ ըստ շաւղաց լուսահոգեացն այնց՝ հող տանիցէք վասն պահպանութեան սորա, վայելելոց էք ի հարկէ յորդւոց յորդիս՝ յազգէ յազգ զշնորհս սորին, որովք և ունիք վարձատրիլ ի Տեառնէ աստ և յանանց կեանսն։ Իսկ եթէ մուղալէթ չլինիցիք սմա, և թոյլ տացի նախանձոտաց աւերել զսա՝ վերջապէս դուք և որդիք ձեր կրելոց էք զնախատինս խայտառակութեան։

Արդ՝ թէ կամիցիք զի այս սուրբ Աթոռս աւերեսցի և քայքայեսցի, բնաւ մի ինչ հոգս առնէք առ այլ կերպ աշխատ լինել վասն այնր, զի ահա ի մէջ օձից և կարճաց զետեղեալ գոլով սրբոյ Աթոռոյս միշտ կեղեքի և գիշատի, զի այլազգիք կողմանցս թէ հեռաւորք, և թէ մերձաւորք իբրև զտզրուկս ծծելով զարիւնս սորա, յետին թելս են հասուցեալ, այնպէս առնելով օր ըստ օրէ աւերելոց են ի հարկէ։ Գիտցուք թէ դուք այս մեր տաճկաց բարուց և որպիսութեանցն ոչ ունիք զտեղեկութիւն, բայց արդ՝ առ ձեզ եղեալ տաճկովքն իմասջիք, զի եթէ դոքա՝ որք լաւքն են քան զսոսա թէ վասն հաստատ թագաւորութիւն ունելոյն, և թէ յաղագս քաղաքավարի անձինք գոլոյն, այնպէս չունին յետս քարշել ի գրոմոց, ապա սոքա որ ըստ իմաստնոյն բանի են առիւծք քաղցեալք, և գայլք ծարաւիք, զիարդ ոչ են կլանելոց զմեզ, և կեղեքելոց զսուրբ Աթոռս։ Միթէ այս ցաւս և վնասս զորս կրեմք ի սոցունց մեզ բաւական չէ, որ ի ընտանի թշնամեաց ես նեղիմք և վնասիմք։

Արդ որպէս գրեցաք ի վերոյ յիրաւի մեք ոչ յուսամք թէ ձերինդ բարեպաշտութիւն ախորժեսցի ընդ կործանումն լուսածին մօրս ձերոյ սրբոյ Աթոռոյս, վասնորոյ յառաջմէ բազմիցս գրեալ, այժմս գրեցաք զերկարապէս թուղթ մի առ հասարակութիւն արգոյ իշխանապետացդ զոր ընթեռնլոց էք և իմանալոց զամենայն ցաւս մեր, թուղթ մի ևս առ յարգելի եղբայրն մեր պատրիարգ զերգզօն վարդապետն գրեցաք, ի համոզումն սիրոյ և խաղաղութեան։ Իսկ զայս թուղթ_ես յատկապէս առ ազնուութիւն քոյ գրեալ՝ խնդրեմք, զի կամ վասն սրբոյ Աթոռոյս մեզ խնայեսջիք՝ որ այսօր շնորհիւ սրբոյ Հոգւոյն գլուխ և հովիւ եմք կարգեցեալ ձեզ, և պահնորդ եմք հոգևոր և մարմնաւոր գանձուց ձերոց։ Եւ կամ թէ վասն Աստուծոյ և վասն սրբոյ Լուսաւորչին ի սուրբ Աթոռս խնայեսջիք, և կամեցարուք յօգնութիւն հասանել սմա։ Ստեփաննոս եպիսկոպոսն մեր, թէ երբ է մտեալ յայդր գիտեմք, բայց թէ մինչև ցարդ զինչ արար և դուք զինչ ունիք պատասխանել մեզ, ոչ գիտեմք, առ որ կամք ի տարակուսի. բաւական համարեսջիք՝ զոր ինչ եղեն ցարդ, եթէ կարծիս ունիք իբր թէ աւելորդ խարճեալ իցեմք որպէս արք նախանձոտք գրաբանենն զմէնջ, առ այն որ գրեալ եմք, ըստ այնմ արասջիք, այսինքն, զքանիս հաւատարիմ արս յղեսջիք առ մեզ, հասու լինել ելումտիցն մերոց. և իմասջիք այնու թէ այս մեր միոյ ամի խարճն է շատ, եթէ այն անցեալ տարւոյ ծախքն՝ յորում սուրբ Աթոռս կայր յանգլխութեան և ըստ այնմ իրաւունս տասջիք մեզ։ Վերստին խնդրեմք ուրեմն, զի համոզող լիցիս պատրիարգ վարդապետին և այլ օրհնեալ իշխանացն, տալ մեզ զմիամտութիւն, և ի նանիր պատճառ չգտանիլ աւերման Աթոռոյս։ Որով միշտ պարտականս կացուցանելոց ես աղօթելոյ առ Տէր վասն երկարութեան կենացդ, և արեշատութեան որդւոցդ։ Ողջ լեր ի Տէր։

Գրեցաւ յամի ՌՄԾԱ թուոջս, և ի յունիսի ... ի սուրբ Էջմիածին։

ՄԺԸ. *Թուղթ դարձեալ ի Պօլիս առ Պաշպազրկեանեան մահտեսի Յովհաննէսն յաղագս սիրոյ եւ խաղաղութեան:*

Եւ ընդ շնորհապարգև օրհնութեան նամակիս գիտութիւն լիցի բարեպաշտութեան քում։ Զի յորժամ տնօրինմամբն Աստուծոյ կոչեցեալք եղաք յայս կարգ և յԱթոռ հայրապետութեան սրբոյ Գահիս Աստուածեան, հաճութեամբ և յորդորանօք միաբանից մերոց. և համայն ժողովրդոց երկրիս և բոլոր շրջակայ նահանգաց սորին, և ընկալաք շնորհիւ սրբոյ Հոգւոյն զօծումն կաթուղիկոսութեան, ապա գրեցաք առ

հասարակութիւն մերազնէից մայրաքաղաքիդ զորրոյ Աթոռոյս և զմեր կոչման որպիսութիւնսըն։ Ընդ մեզ և համայն միաբանք սրբոյ Գահիս և ժողովուրդք երկրիս գրեցին և ծանուցին բազմակնիք մահսէրաւ։ Գրեցաք մեք լայնժամ և առ զերազնիւ սիրելիդ զթուղթ հայրապետական անդրանիկ օրհնութեան։ Ապա մինչ դարձաւ առ մեզ մահսէրաբերն մեր Նարոտպետ հանճարունակ եպիսկոպոսն հանդերձ յանուն մեր հանեալ արքունական նոմոսօքն և բազում. բազումչնորհաւորական մահսէրօք, և թղթովք հոգեորականաց և աշխարհականաց՝ տեղականացդ և այլ երկրականաց, տեսաք՝ որ սիրելիդ թէպէտ կնքովդ եղելով ի վերայ համահաճական մահսէրին մերոյ՝ յայտնեալ էիր զաներեոյթ կիրս ուրախութեամբ սրտիդ ընդ կոչիլն մեր յայս չնորհ, առ այն և մեք չնորհակալ եղաք զքէն օրհնութեամբ, բայց որ առաւել հարկաւորն էր և վայելուչն քումդ բարեպաշտութեան զայն արգելեալ էիր, այսինքն գրելդ առ մեզ զթուղթ սիրանիչ և ուրախակցութեան, որպէս և այլ յարգելի իշխանք տեղւոյդ գրեալ էին. ապա՝ այսքան երկար ժամանակի ևս անցանելով, երբէք զերկտողեան թուղթ չգրեցեր առ մեզ ի մխիթարութիւն բազմահոգ սրտի մերում։ Առ որ տարակուսիմք՝ թէ արդեօք մի՞ գուցէ արք ախտամոլք և նախանձոտք՝ որպէս զբազումս, նմանապէս և զգեղեցիկ միտս Ազնուոյդ պղտորեալ իցեն այլև այլ զրաբանութեամբք զմէնջ։ Եւ սակայն՝ նկատելով առ կատարելութիւն մեծազօրն խոհականութեանդ՝ ակն ունիմք թէ զայն զրաբանութիւնսն իբրև զմեզալական զղջումն համարելով, կացեալ մնացեալ իցես հաստարմատ և անփոփոխ ի պարզութիւն ջինջ և մաքուր սիրոյդ որ առ սուրբ Աթոռս Աստուածեան որպէս և նարդենիս ևս սիրելիքն մեր՝ և հարազատ որդիքն սրբոյ Աթոռոյս՝ Ստեփաննոս չնորհառատ արքեպիսկոպոսն և Աստուծով զօրացեալ պարոն Գէորգն Աղալեկեան և այլք ոմանք՝ գրեալ էին մեզ ի տեղւոյդ չուիլդ առ մեզ զյատուկ սէր, զկատարեալ հաւատարմութիւն և զմտերմօրէն ջատագովութիւն։ Որով և մեք ուրախացեալք յոյժ՝ գոհունակեցաք զազնուոյդ, բարեմաղթ լինելով առ Տէր վասն կենաց և յաջողութեան քոյ։

Վասնորոյ և զայս թուղթ օրհնութեան գրեալ առ սիրելիդ, ասեմք՝ Աստուած օրհնեսցէ զքեզ և զօրացուսցէ հանդերձ համայն ազնուական ընտանեօք քովք, ազատս կացուսցէ ի փորձութեանց և ի վտանգից, և ունիցի ի խնամս իւր բոլորեալ ընաւ բարեբաստութեամբ և չնորհք սրբոյ Գահիս եղիցի ձեզ պահապան և օգնական յարաժամ։

Իսկ զորպիսութեանց սրբոյ Աթոռոյս և մեր զինչ գրեսցուք. քանզի ահա լսէք և իմանալք թէ զի՞արդ արք փառամոլք զանազան բարուրանօք վատահամբաւելով զմեզ՝ ջանան անձանձրոյթ՝ առ ի աւերել և կործանել ըղխղճալի սուրբ Աթոռս, յայսքան հարիւրաւոր և ի հազարաւոր ամս զոր բիւրաւոր խուժադուժ ազգ բարբարոսաց և այլազգի թշնամիք պատահեալք սմա չկարացին ինչ առնել, այժմ ընտանի թշնամիքն առնեն աւերեն և քայքայեն զսուրբ Աթոռս Քրիստոսակերտ՝ զի անձանց իւրեանց ստասցին ըղփառս։

Որպիսի է և անձնասէր Դանիէլն, որ ահա ի մէնջ այսր միոյ տարւոյ յորում կացուցեալ եմք յայս աստիճան, թէ զորքան բազում չարութիւնս և անհամութիւնս արար ընդ մեզ՝ որպէս վայել է իւրում խռովասէր բարուց, որչափ զանազան ստութեամբք և առասպելաբանութեամբք ելից զաշխարհ ամենայն ինքն և զառնաչունչ նմանիք իւր, որովք ի զայթակղեցոյց զմաքուր լսելիս պարզամտաց, զայնս եթէ կամիցիմք գրել մի ըստ միոջէ և ըստ այնց պատասխանեալ ծանուցանելով զճշմարտութիւն, լինելոց է ձեզ մեծ գլխացաւութիւն, և մեզ անհնարին՝ առ ի պարունակել ի յայսմիկ թղթոջս, վասնորոյ ի բազմաց զսակաւն գրեսցուք աստէն։ Զի ահա նա նստեալ ի Իւչքիլիսէի վանքն կամի հակաթոռ մեզ լինել, որով և աւիրել զայս Լուսաւորչաշէն սուրբ Գահս և ի Քրաստան ի հայրենի տեղին իւր հաստատել զաթոռ։ Վասն որոյ զամենայն զինչսն մեր, ուր դտանէ, յափշտակէ, որպէս ի Բայազիտ Ժ. կամ ԺԱ. բեռինք կալին եկեղեցական և արտաքսական իրաց՝ ի հոգելոյս Ղուկաս կաթուղիկոսին առաքեցեալք անդ ի պահպանութիւն վասն ահին պարսից, զայնոսիկ որչափ խնդրեցաք չեղև հնար առնուլն. ինքն ձեռնամուխ է եղեալ յայնս, և վատնէ աստ և անդ։ Ի Կարին ևս Բ. բեռինք կալին մեզ, յորոց մինն Իզմիրու առաջնորդ Մարտիրոս վարդապետն առաքեալ

էր, և զոյլն ի նմա արդեամբք սրբոյ Աթոռոյս զննցեալք իւրք, ի պէտս հարկաւորութեան սրբոյ Տանս, և յիշխանաց անդուոյն յանուն մեր յղեցեալ ընծայք, իսկ միւսն ի հոգելոյս Ներսէս վարդապետէն էր մնացեալ առ գործակալսն մեր. զայնոսիկ ևս յափշտակեաց։ Եւ այսպէս զ-առ պաարասա դրամ զսեալ, ըսկսաւ ծանր ծանր կաշառաց զթէմեսուկս գրել և առաքել առ փաշայս և մանաւանդ առ իշխողն մեր, զի մերժեսցեն զմեզ և զինքն բերցեն և նստուսցեն աստ։ Եւ զայն յանցանսն զորս ինքն գործէր, կամեցաւ յօղել առ մեզ, իբր թէ մեք իցեմք հնարեալ յանուն իւր ըղթլմեսուկս, և յղեալ աստ և անդ։ Որ յիրաւի սուտ է խապառ և անաստուածութիւն մեծ։ Արդ՝ նա զայսքան չարութիւնս գործէ, և աւերս և վնասս հասուցանէ մեզ, և ի տեղականացդ ոչ ումեք լինի փոյթ սաստել նմա. եթէ ի մեզ ոչ խնայեսցեն, պարտին ի սուրբ աթոռս խնայել, որ ի պատճառս միոյ ախտաւորի աւերի և քայքայի. զարմանալի է յիրաւի՝ թէ զիարդ այդպէս արարեալ են զլուսածին Մայրս իւրեանց յարգելի իշխանք մեր. եթէ աւերեսցի սա միթէ միւս անգամ ունի զշինութիւն առնուլ ի չարաշատ ժամանակիս, ոչ, որպէս յայտնի է և քոյդ նրբանկատ խոհեմութեանդ։ Վասնէր ապա թողեալ զճշմարտութիւն, ստութեանց լինին հետևողք, եթէ ըստ ստալօղ գրութեանց նոյն ախտամոլին՝ կարծիս ունին ըղմէնջ՝ որպէս թէ աւելորդ ինչ խարճեալ իցեմք, և կաշառօք նստեալ յայս Աթոռ, զքանիս հաւատարիմ արս յղեսցեն աստ, զի իմասցին զհաշիւս առ ի մէնջ խարճեցելոցն, և յայնժամ զինչ և կամեսցին առնել, մեք ևս ընդունող լիցուք, որպէս լիազօրս դրեալ եմք զսոյն ընդ սիրելւոյն Ստեփանոս արքեպիսկոպոսին։ Իսկ թէ ոչ ընզճէր թարց վերահասութեան պատճառ լինին աւերման խղճալի սըրբոյ Աթոռոյս, ոչ ապաքէն յետոյ զխայտառակութիւն ինքեանք կրելոց են։ Արդ՝ որպէս զայդ կողմունսդ, նմանապէս և զհիւսիսակողմն պղտորեալք էին նոյն խռովասէրքն, վասնորոյ յայսմ ամի մինչ ի ռուսաց մեծամեծ կուսակալք եկին ի Թիֆլիս, ի նոցունց երկու դեսպանք առաքեցան յԵրևան առ խանն թէ վասն երկիրս՝ և թէ սակս բանի Հայրապետութեանս։

Իսկ խանն զայն դեսպանսն առաքեաց աստ՝ առ ի տեսանել զեկեղեցական անօթսն մեր՝ զորոց Դանիէլն հռչակեալ է իբրթէ խորտակեալ եմք և տուեալ տաճկաց։ Նոքա եկեալ տեսին զամբողջութիւն զարդուցն և ամենայն եկեղեցական անօթիցն, և ապա գնացեալ առ առաքողսն իւրեանց պատմեցին, զոր ինչ տեսին և միաբանքն մեր ևս քանիցս բազմակնիք մահսէրօք դրեցին առ նոսա զուղղութիւն այսր անցից մերոց։ Վասնորոյ և այժմ նոյն մեծամեծքն ռուսաց շնորհս ունելով առ մեզ, քանիցս դրեալ են զթուղթս սիրոյ, յուսադիր ևս լինելով՝ զի ծանուսցեն կայսերն ճշմարտութիւն իրացս և վասն մեր զօգնութիւն խնդրեսցեն։ Եւ այժմ Թիֆլիզցիք ևս թէ զորքան ջատագովութիւնս արարեալ են վասն մեր, և զիարդ զերկուս մահսէրս դրեալ են ըղմինն առ կայսրն վասն անփոփոխ մնալոյ մեր, և զմիւսն առ մերազնեայսն հիւսիսակողման, վասն խռովանիւթ արարմանց աղմըկտսէր անձանց, զայս իմանալոց ես յօրինակաց թղթոց նոցին դրեցելոց տու մեզ զոր ահա յղեցաք առ Ստեփանոս եպիսկոպոսն մեր ցոյց տալ ձեզ։ Ուստի որպէս գրեցաք ահա և առ իւրաքանչիւր իշխանսն Մայրաքաղաքիդ, առ յարգելի եղբայրն մեր պատրիարգ ըղգօնամիտ վարդապետն, նմանապէս և ազնուութեան քում գրեմք, զի հեռի մնասցես ի խռովասիրաց և ճշմարիտ սէրդ և զբարեկամութիւնդ որ առ սուրբ Աթոռս և առ մեզ՝ հաստատ պահեսցես և ըստ կատարեալ բարեպաշտութեանդ ջանասցես յօգնութիւն հասանել լուսածին Մօրս քոյ՝ ազատելով զսա ի ձեռաց խռովասիրաց, յորդորող լինելով օրհնեալ իշխանացն, զի և զՍտեփաննոս եպիսկոպոսն մեր եթէ մինչ ցարդ չեն ուղևորեալ յայսկոյս, հոգ տարցին ուղևորել խաղաղական թղթովք իւրեանց։ Որ բարեշնորհութեանց քոց ընկալելոց ես զմեծ վարձս յԱստուծոյ, շնորհս ի սրբոյ Գահէս, և զօրհնութիւնս ի մէնջ։ Ողջ լեր ի Տէր Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ Թուոջս, և ի յունիսի ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՄԺԹ. *Թուղթ առ Կեսարիոյ Առաջնորդ Ստեփաննոս վարդապետն, յիշումն զառաջնոյ առ ինքն գրեալ թղթոյն մեր եւ զկոնդակէն որ առ ժողովուրդսն, եւ յորդորումն ի սէր եւ ի հաւատարմութիւն առ սուրբ Աթոռս։*

Ցորմէ սրտական սիրով և կարի կարօտիւ, Քրիստոսապարգև ողջունիւ և նոյնաէջ սրբոյ տեղւոյս անհատահոս շնորհիւ գիտութիւն լիցի ընտիր և պատուական սիրելւոյդ մերոյ՝ հարազատ և շնորհընկալ որդւոյդ սրբոյ Աթոռոյս՝ վայելչապատիւ առաջնորդիդ տիրապահ մեծի Քաղաքիդ Կեսարիոյ, Ստեփաննոսի գերըղձօն վարդապետի և շնորհապերճ արհիեպիսկոպոսի։ Զի յանցելում ամին յապրիլի ԻԸ. այնինչ շնորհիւ ամենասրբոյ Հոգւոյն որ յաջողէ զամենայն յամենայնի՝ եղև մեզ կարգիլ և օծանիլ ի հայրապետութիւն սրբոյ Աթոռոյս, և յայնմհետէ գրել զկոնդակս և զթուղթս օրհնութեանցն ի Կոստանդնուպօլիս և յայլ ամենայն քաղաքս և ի տեղիս այլց կողմանց ձեռամբ մահսեբատարին մերոյ. ապա առ հարկին պահանջելոյ՝ գրեցաք և զկոնդակ հայրապետական անդրանիկ օրհնութեան առ հասարակութիւն բարեպաշտօն օրհնեալ ժողովրդոց Աստուածախնամ քաղաքիդ Կեսարիոյ և բոլոր Շրջակայից գորին. ընտրում զսի բանիչ թուղթ մի ես առ իսկապէս սիրելիդ գրեցաք, ծանուցանելով այնու թէ՝ զի որդ և յորում ժամանակի եկն ի սուրբ Աթոռս սրբոյ Երուսաղէմի նուիրակ Կարապետ վարդապետն, և ըստ որում ի գալն եգիտ ի ծանր հիւանդութեան զՏէր Ղուկաս սրբազան կաթուղիկոսն, որ և՝ յետ քանեաց աւուրց փոխեցաւ յաստեացս, վասնորոյ զքոյդ թուղթն զոր գրեալ էիր առ նա՝ պահեաց առ ինքն, սպասելով յաջորդ կաթուղիկոսի, զի նմա հասուսցէ, և ընկալցի ի նմանէ զձեռնադրութիւն եպիսկոպոսութեան։ Եւ ապա՝ թէ՝ որպէս մեք զմահսէրս առեալ՝ գնացաք ի մեծն Պօլիս ի խնդիր յաջորդ կաթուղիկոսի, և անդ զկնի բազմաց անցից անցելոց անուանումն կաթուղիկոսութեան կայացաւ առ Յովսէփ արքեպիսկոպոսն հիւսիսոյ, և մեք ընկալեալ զարքունական նոմոսն յանուն նորա հանեալս, դարձաք ի սուրբ Աթոռս, նա ես եկեալ մինչև ի Տփխիս քաղաք՝ էառ անդ զվախճան կենաց իւրոց։ Վասնորոյ և մեք թէ ըստ կըտակարարութեան նորա, թէ ըստ խնդրանաց Թիֆլիզցւոց, և թէ ըստ համահաճութեան միաբանից և բոլոր երկրացւոցս՝ ընկալաք զօծումն ի կաթուղիկոսութիւն սրբոյ գահիս և օրհնեալ ազգիս հայոց։ Եւ յետ այնորիկ Կարապետ վարդապետն զվերոյիշեալ թուղթն քոյ երեր առ մեզ, և մեք ձեռնադրեցաք զնա եպիսկոպոս, և այլն։ Զայսոսիկ ամենայն հանդերձ այլովք որպիսութեամբք գրեցաք սիրելւոյդ յայնժամ՝ յիշեալ թղթով մերով զորոյ և զօրինակն առեալ մեր զարդիս՝ յղեցաք ընդ սոյն այս թղթոյ՝ զի տեսցես, և առաւելապէս մխամտեսցիս։ Արդ՝ թէ զայն թուղթն որ առ քեզ, և թէ զկոնդակն՝ զոր գրեցաք ի վերայ Տիրախնամ քաղաքիդ, զերկուսն ի միասին պահարանեալ՝ այնպէս առաքեցաք յանցեալ տարւոյ յունիսի ամսեանն։ Զորս և համարէաք ի միտս՝ թէ ըստ ժամանակին հասեալ են առ սիրելութիւն քոյ, բայց դուք դանդաղիք զփոխադարձսն գրել առ մեզ։ Իսկ նարգենիս՝ ստոյդ սիրելին մեր՝ դոյն քաղաքացի բարեպաշտօն օրհնեալ մահտեսի Կարապետն հանդերձ քանեօք այլ մեծահաւատ ուխտաւոր եղբարբք եկն ի սուրբ Աթոռս յուխտ և յերկրպագութիւն. զորս և մեք սիրով ընկալաք, և որչափ զօրեաց կար մեր, և ներեաց ժամանակն՝ կամեցաք շահել և մխիթարել։ Եւ ի գալն սոցա՝ մեծաւ յուսով ակնկալեցաք թէ ունիցին զթուղթ առ մեզ ի սիրելւոյդ, բայց տեսաք՝ որ չունէին։ Եւ մինչ խօսակցութիւն եղև մեզ ընդ օրհնեալ մահտեսի Կարապետին, որում և հարցաքննին եղաք զողջութենէ և զբարեկեցութենէ սիրելւոյդ, նա ի պատմելն մեզ զայն, որով և յուրախացուցանելն զմեզ, ասաց և վասն վերոյիշեալ թղթոցն մերոց թէ չեն հասեալք առ ձեզ, ազդելով ես թէ՝ սիրելիդ այնպէս կարծեալ իցես՝ իբր թէ մեք բնաւ թուղթ չիցեմք գրեալ առ քեզ, վասն այն և խաթրամնեալ իցես եղեալ ի մէնջ։ Արդ՝ յիրաւի եթէ մեք ըստ կարծեաց քոց չէաք գրեալ զթուղթ, արժան էր քոյդ խաթրամնեալ լինիլն և մեզ ստրջանք լինելոց էր ոչ սակաւ. բայց մեք ահա գրեալ եմք թէ զթուղթ՝ և թէ զկոնդակ, որք եթէ չեն հասեալք, այնպէս վարկանիմք թէ ի ձեռս նախանձոտաց և զրաբանից անկանելով՝ ի կո-

րուստ մատնեցեալք իցեն։ Որպէս և պատահեալ է բազում թղթոց մերոց յայլ ուրեք գրեցելոց։ Այլ մեք զքոյդ ջերմեռանդ որդիութիւնդ և զկատարեալ հաւատարմութիւնն որ առ լուսածին մայրս քոյ սուրբ Աթոռս, և զվաղեմի սէրդ եղբայրական զոր ունիս առ մեզ՝ քաջ գիտելով, կամիմք միշտ ի պատուի ունիլ զքեզ զի ի տեղի հօղելոյս հօր քոյ Մատթէոսի հոգիազարդ արքեպիսկոպոսի ճանաչեմք զսիրելութիւնդ, և մեծայոյս եմք՝ թէ որպէս լուսահոգին այն՝ հարազատ և հաւատարիմ էր յոյժ առ սուրբ Աթոռս և առ զահակալսն սորին, (որպէս յայտ լինի մեզ ի թղթոց նորուն գրեցելոց առ նախնի սրբազան Հայրապետսն, զորս ունելով առ մեզ ընթեռնումք,) նոյնպէս և դու հոգեծնունդ որդիդ նորա՝ հարազատ և օգտախոհ լիցիս առ սուրբ զահս և առ մեզ։ Վասնորոյ կամելով մեր մասնաւորել զքեզ և զօրհնեալ ժողովուրդսդ ի հոգեպարար շնորհաց սրբոյ Իջման տեղւոյս քրիստոսի, գրեցաք վերստին զկոնդակ օրհնութեան առ դոսա, զոր և ահա յղեցաք, զի ընթեռնուլ տացես ի սուրբ եկեղեցիս քաղաքիդ զի ամենեքեան լուիցեն. և վայելեալ զշնորհս սրբոյ Աթոռոյս՝ զուարճասցին հոգևորապէս։ Իսկ զայս թուղթ սիրոյ եւ առ սիրելութիւնդ գրեալ՝ խնդրեմք, զի եթէ միտք ձեր պղտորեալք իցեն ի գրաբանից, ուղղեսցես զդոյն և այլ ես մի բնաւ հաւաս մատուսցես սասյօղ դրութեանց նոցին. քանզի՝ նոքա յայտնապէս թշնամիք են մեզ, և կամին աւերել և քայքայել զխղճալի սուրբ Աթոռս։ Զպարզամիտ օրհնեալ ազգն այնպէս վրդովեն և վեր ի վայր առնեն, և զմեզ այսպէս յանիրաւի վատահամբաւեն զանազան բարբաջանօք, զորմէ ոչ երկարեմք ասաէն՝ առ ի չտալ ձանձրոյթ լսելեացդ։ Ուրեմն՝ սիրելիդ իրաւասիրութեամբ զուղիղն կալցուցանելով՝ ի ստութեանց ի բաց հեռասցուսցես զլսելիսդ, և աննուազելի պահելով զճշմարիտ սէրդ և զհարազատութիւնդ առ սուրբ Աթոռս, միշտ զօգուտն և զբարին սորա խորհեսցես և արասցես, և զովին սրտական հաւատարմութեամբդ կարեկից լիցիս մեզ, և զօժանդակութիւն մխիթարութեան ցուցցես առ մեզ, թէ յայտր յորդորելով զօրհնեալ ժողովուրդսդ ի կապակցութիւն սիրոյ առ մեզ, և թէ թղթով ի Կոստանդնուպօլիս ջատագով լինելով առ հոգացումն իրաց մերոց։ Քանզի յիրաւի յեային կէտն է հասեալ սուրբ աթոռս և ի վարանումն մեր որ առ այժմ աստ և անդ շրջանեմք զաչս, զի ոք գացի՝ որ զցաւս և զվիշտս մեր իմասցի և ըստ այնմ մատուսցէ մեզ զդարման։ Եւ զի սիրելիդ շնորհիւն Աստուծոյ ընտիր և խոհական անձն ես, և երեելի ի կողմունսդ, և ըստ վերնաձիր խոհեմութեան քոյ՝ կարես իմանալ՝ թէ յերկպառակութենէ աստի որ ծագեալն է, զինչ ունի յառաջագայիլ, և որպիսի զառնազէտ վնաս և աւեր ածելոց է սրբոյ Տանս՝ ի խայտառակութիւն ազգին և ի խղճահարութիւն ամենեցուն։ Ուրեմն՝ որպէս վայելուչ է քումդ հարազատութեան՝ ըստ այնմ հոգասցես՝ առ այս, և զկարևոր ձեռնտուութիւն ցուցցես՝ առ ի մնալ ի հաստատութեան սրբոյ Աթոռոյս, և անփոփոխելի կալ հայրապետութեան սորա՝ ըստ կանոնաց նախնեացն։ Եւ երբեմն երբեմն ես սիրանից գրովդ զվշտաւորութիւն մեր մխիթարել կամեսցիս։ Որովք ունիս ստանալ զմեծագոյն վարձս բարեաց յԱստուծոյ, և մեք շնորհակալ լինելոց եմք զսիրելւոյդ՝ արժանաւոր բարեբանութեամբ։ Իսկ զվերոյիշեալ բարեպաշտօն օրհնեալ Ուխտաւորսն՝ զորս ընկալաք սիրով, գտաք արդարև արժանիս մեծի սիրոյ և շահեցողութեան. և պարտականութիւն իսկ գիտեմք՝ զառ սուրբ Աթոռս դիմեալսն յորդւոց սորին ուրախ առնել որչափ և կարիցեմք. բայց յայս մեր նեղ ժամանակիս եկին, և ի սակաւ աւուրս մնացին աստ, վասնորոյ եթէ ըստ մարմնաւորին ի կողմանէ շահելոյ պակասութիւն լեալ իցէ, այլ յուսամք թէ ըստ հոգևորին լաւապէս շահեցան՝ համբուրելով զՔրիստոսաէջ Տեղին և զայլ սքանչելագործ Սրբութիւնսն, և վայելելով ի մօտուստ զհոգեզուարճ շնորհս սոցին։ Որք և յետ կատարելոյն զուխտ և զերկրպագութիւն իւրեանց, սիրով և օրհնութեամբ արձակեցեալք ի մէնջ՝ ահա վերադարձան. որոց Տէր լիցի ուղեկից՝ առ ի անվնաս հասուցանել ի յօրհնաբնակութիւնս իւրեանց։ Այսպէս գիտելով սիրելւոյդ, և զայլ որպէսն մեր ի թղթաբեր օրհնեալ մահտեսի Կարապետէն իմանալով՝ ողջ լեր ի Տէր, և զօրացեալ ի շնորհս նորին յարաժամ. Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս, և ի յունիսի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՄԻ. *Թուղթ ի Թիֆլիզ առ Ղօրղանենց Գէորգն եւ Սամուէլն, շնորհակալութիւն վասն հաւատարմութեանց նոցին։*

Եւ ընդ սիրոյ և օրհնութեանս Աստուածայնոյ՝ գիտութիւն լիցի սիրելեացդ մերոց՝ և հարազատ որդւոցդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի ի ներկայս՝ սիրելի որդիքն մեր Կարապետ և երկոքին Աբրահամ խոհեմամիտ եպիսկոպոսքն՝ գրեալ էին մեզ յատկապէս զմեծազոյն սէր և ծնողամեծար հարազատութիւն ձեր և զկատարեալ հաւատարմութիւնն զոր ունիք առ լուսածին մայրս ձեր սուրբ Աթոռս և առ հոգեոր հայրութիւնս մեր, որք և նովին սիրով և մտերմօրէն հաւատարմութեամբ ջատագով լինելով վասն ընդունելութեան մերոյ առ Քրիստոսիւ զօրացեալ և գերաշուք Գլխաւորոն անգղիոյ հանդերձ այլ օրհնեալ ժողովրդովք, տուեալ էք յիշատակել զանուն մեր ի սուրբ եկեղեցիս քաղաքիդ, և ի վերայ այնոցիկ բարեշնորհութեանց՝ յիշեալ Աբրահամ մամաժողով եպիսկոպոսին ես խոստացեալ էք յօժարութեամբ տալ զմոմն ի նիւթ լուսավառութեան Աստուածեան սրբոյ Տաճարիս։ Եւ զի որպէս ասէ իմաստունն թէ՝ Համբաւ բարի պարարէ զոսկերս. ըստ այնմ և մեք այսոքիւք ախորժալուր համբաւովք ուրախացեալ մինչև ցպարարումն ոսկերաց, շնորհակալութեամբ գոհունակ եղաք զսիրելեացդ, և օրհնեցաք զձեզ լիագոյն օրհնութեամբ։ Զորս Տէր օրհնեսցէ և զօրացուսցէ, ի փորձութեանց և ի դիպուածոց ազատս կացուսցէ հանդերձ համայն ձերայնովքն և պահեսցէ հանապազ ի ներքոյ խնամոց և բարեգթութեան իւրոյ, և տացէ ամենից բանից և գործոց ձերոց զյաջողուածս բարեաց։ Արդ՝ պատուիրեմք սիրելեացդ, զի զկատարեալ հարազատութիւն ձեր հաստատուն պահեսջիք առ լուսածին Մայրս հաւատոյ ձերոյ սուրբ Աթոռս, և զորդիական սէր և զհպատակութիւն զոր բարեյօժար կամօք սկսեալ էք առ մեզ, աննուազ ունիջիք, այլոց ես ի դոյնս յորդորող լինելով. և զդոյն հարազատական ջատագովութիւնսն ձեր զոր ցուցեալ էք առ մեզ, գրեսջիք և ծանուսջիք բազմակնիք մահսէրաւ թէ Աստուածապսակ ին ընակալ կայսերն, և թէ համայն մերազնէից այնր կողման, որոց զօգուտն սրբոյ Աթոռոյս առաջադրելով յորդորեսջիք ի սէր սորին, նա և՝ որպէս խոստացեալ էք, ըստ այնմ ձեռնտու լիջիք հոգեոր որդւոյն մերոյ Աբրահամ դիտնական եպիսկոպոսին, զի օր յառաջ զմոմն ժողովեալ ի ձէնջ՝ բերցէ ի սուրբ Աթոռս վասն լուսավառութեան սորա։ Որովք զհոգեւոր պարտսն ձեր լցուցանելով, ազատեսջիք և ի պարտուց մեղաց ձերոց, և ժառանգեսջիք յարաժամ զհոգեզուարճ շնորհս սրբոյ իջման տեղւոյս Քրիստոսի, և զօրհնութիւնս հոգեւոր հայրութեան մերոյ։ Եւ արդ՝ մինչ դուք ուրախացուցիք զմեզ համբաւով հարազատութեան ձերոյ, վասնորոյ և մեք կամիմք զսիրելիսդ ուրախացուցանել՝ ազդմամբ համբաւոյ այսր հոգեոր ուրախութեան, զի յաւուր կիւրակէի հրաշափառ Տօնի Գալստեան ամենասրբոյ Հոգւոյն, պատարագելով մեր զՔրիստոս զՍանն սրբալոյս Մեռոնին բազմեցուցաք ի վերայ աւագ Սեղանոյն՝ այնու դիտմամբ, զի ի լրանալ աւուրցն օրհնեսցուք զսրբալոյս Մեռոն ի վայելս հաւատացեալ ժողովրդոց, զոր Տէր յաջողեսցէ։ Այսպէս դիտելով օրհնելոցդ, և ի բարեջանութեանց ձերոց որ առ սուրբ Աթոռս՝ անպակաս կալով, ողջ լերուք։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս, և ի յունիսի .. ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՄԻԱ. *Թուղթ ի Թիֆլիզ առ սուրբ Նշանի աւագ քահանայ Տէր Նիկողայոսն, շնորհակալութիւն վասն հաւատարմութեանցն։*

Ցորմէ սիրով և օրհնութեամբ, Քրիստոսական ողջունիւ և նոյնաէջ սրբոյ տեղւոյս մեծազօր շնորհիւ՝ ծանիր սիրելի և հոգեոր որդիդ մեր՝ և հարազատ զաւակ սրբոյ Աթոռոյս՝ Տէր Նիկողայոս հանճարունակ աւագ քահանայ։ Զի թէպէտ դու ոչ էիր գրեալ առ մեզ զգիր, սակայն ի թղթոյ հոգեոր որդւոյն մերոյ Տէր Սիմէօն շնորհունակ քահանայեն յոր համբուրամատուցութիւն առաքեալ էիր՝ ընկալաք սիրով, և շնորհակալութեամբ օրհնե-

ցաք զքեզ։ Իսկ հոգեծնունդ որդեակքն մեր՝ Կարապետ և Երկու Արքահամիշնորհապերճ արհ. եպիսկոպոսքն յատկապէս գրեալ էին մե զառաւելութիւն ջերմեռանդ սիրոյդ և սրտական հաւատարմութիւնդ՝ զոր ունիս առ սուրբ Աթոռս և առ մեզ։ Որ և ընդ այլ քահանայից և իշխանաց և համօրէն ժողովրդոց ջատագով լինելով մեզ, և զբարեհաճութիւն ձեր որ առ մեզ՝ ցուցանելով զՆերապատիւ զլխաւորաց քաղաքիդ, հրամանաւ և զիտութեամբ դոցին՝ տուեալ էք յիշատակել զանուն մեր ի սուրբ եկեղեցիս ձեր, բառնալով զբառնալի անուն Դանիէլին։ Ի վերայ այնորիկ զաեալ ձեզ և զգողութիւն խռովայոյզ Յովհաննէս սեաւորին, այսինքն զորբալոյս Մեռոնն՝ զոր դաղտագողի առեալ աստուստ՝ բերեալ է յայդր, ատելով առեալ էք զնա, և համաթուեալ ընդ գողս և ընդ աւազակս։ Ապա՝ և համաձայն հաւանութեամբ գրեալ էք զԵրկոսին բազմակնիք մահուէրս, որոց զմինն արզալակերոյ առ կայսերական մեծութիւնն՝ վասն մեր հաստատուն մնալոյ ի հայրապետութեանս՝ ըստ կանոնաց և օրինաց նախնեացն։ Իսկ զմիւսն առ հիւսիսակողման մերաղնեայսն՝ ի ծանուցումն վրգովիչ և խառնակիչ գոլոյ Յովհաննէս չքին, և ննդադործութեանց նորին, և այլն։ Արդ՝ յառաջագոյն մինչ ծանուցաք ձեզ զչարութիւնս և զանհամութիւնս դոյնոյ խայտարակելոյդ, իցէ թէ ոմանք երկբայութեամբ ընդունէին զայնս. իսկ այժմ ահա Աստուծով բանք և գրուածք մեր առաւելապէս հաւատարմացան ամենայն ումեք. և դա՝ որ կամէր զճշմարտութիւնս մեր ծածկել, և զստութիւնս իւր յառաջացուցանել, որով և աւերել զխզճալի սուրբ Աթոռս, նենգութեամբն իւրով խայտառակեցաւ։ Վասնորոյ և մեք՝ որպէս յառաջ՝ նոյնպէս և այժմ նզովեալ զչարդ ընդ բանիւ արտաքս, և ի բաց մերժեցաք ի սուրբ եկեղեցւոյ։ Իսկ այնոցիկ՝ որք համախոհք են զմին, դեռ ես սիրով ներեմք՝ սպասելով զզղջման նոցին. և թէ ոչ զղաստասցին, յայնժամ և զնոսա պատժելոց եմք ըստ արժանեաց իւրեանց, որպէս լիագոյնս ունիս իմանալ ի հասարակական կոնդակէն մերմէ։ Այլ կամելով մեր մասնաւորել զքեզ ի շնորհաց սրբոյ Աթոռոյս և յօրհնութեանց մերոց, գրեցաք զայս թուղթ, որով և ասեմք՝ Տէր օրհնեսցէ զքեզ և զօրացուսցէ, և փայլեցուսցէ ի շնորհս իւր. փրկեսցէ ի դիպուածոց չարաց, և ունիցի ընդ թևօք խնամոց իւրոց ի խաղաղութեան և ի բարեյաջողութեան՝ հանդերձ քոյանովքդ բնաւիւք։ Ապա՝ պատուիրեմք սիրելի որդւոյդ մերում, զի դջերմեռանդ սէրդ և զկատարեալ հաւատարմութիւնդ՝ առ սուրբ Աթոռս և առ մեզ՝ աննուազ և աճեցուն պահեսցես, և ի ջատագովութեանցդ և յօգտասիրութեանցդ որ առ մեզ՝ մի պակասեսցիս, և օրհնեալ իշխանաց և ժողովրդոցն ես սիրով յորդորող լիցիս՝ հեռի մնալ ի խռովասիրաց, և որպէս սկսեալն են՝ ըստ այնմ ջանս դնել առ ի պահպանել զշինութիւն սրբոյ Աթոռոյս՝ և զանփոփոխելի հայրապետութիւն մեր։ Որովք բարեյաւութեամբք քով՝ ընկալցիս զվարձս յԱստուծոյ, զշնորհս ի սրբոյ դահէս, և զօրհնութիւնս ի մէնջ։ Ողջ լեր՝ ի Տէր։

Գրեցաւ յամի Տեառն 1802. և ի յունիսի .. ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՄԻԲ. *Թուղթ ի Թիֆլիզ առ Յոհաննէս Դիւանն, ի պատասխանի թղթոյն, եւ շնորհակալութիւն վասն հաւատարմութեանցն։*

Ն. ընդ Աստուածային օրհնութեանս՝ ծանուցումն լիցի բարեպաշտութեան քում։ Զի սիրալիր թուղթ քոյ յամսոյս Դ. գրեցեալ՝ էհաս առ մեզ ի Ը։ Զոր ընթերցեալ իմացաք զամենայն հարազատական և սրտադիւրական բանսդ։ Որովք ծանուցեալ էիր թէ դու օրհնեալդ՝ և սիրելիդ մեր՝ կնեազ պարոն Սօլօմօնն, Սուլխան Գիւանն, Բաստամեանց պարոն Ստեփանն և այլ օրհնեալ իշխանք և ժողովուրդք՝ ջատագովք լինելով ճշմարտութեան, գնացեալ էք հասարակութեամբ առ դերազանցութիւն մեծաշուք գուբեռնաթօրին քաղաքիդ, որում և ծանուցանելով զբարեյօժար հաճութիւն և զընդունելութիւն ձեր առ հայրապետութիւն մեր, խնդրեալ էք վասն յիշատակել տալոյ զանուն մեր ի սուրբ եկեղեցիսն ձեր։ Եւ նա ես սիրով հաճեցեալ ընդ բանսն ձեր, խօսք տու-

նալ է ձեզ՝ առ ի գնալոյ ընդ ձեզ ի միասին առ. բարձր գերազանցութիւն պարոն Կնորզինին, և նովաւ զխնդիրս ձեր կատարելոյ։ Ուստի՝ և սիրելիդ աղգեալ էիր թէ ինչ բանն ի գլուխ գալցէ, յայնժամ յատուկ մարդով ծանուցանելոց էք մեզ դորպէոն, և զմոմաժողով Աբրահամ եպիսկոպոսի կոնդակն ես ընթեռնուլ տալոց էք յեկեղեցիսն՝ զի և նա ձեռնամխեսցէ ի ժողովումն մոմոյն։ Այսոքիւք ախորժալուր համբաւսվք ուրախացեալ մեր՝ շնորհակալ եղաք զքէն ես զի ամացն օրհնեալ իշխանացն և ժողովրդոցն, զորս և օրհնեցաք լիաբերան օրհնութեամբ։ Տէր օրհնեսցէ զձեզ և զօրացուսցէ, և ըստ հաւատարմութեանցն ձերոց առ մեզ՝ վարձատրեսցէ բազմապատկապէս, փրկեսցէ ի փորձութեանց հոգւոյ և մարմնոյ, և պահեսցէ ի խնամս իւր ի խաղաղութեան և ի բարեյաջողութեան հանդերձ ձերայնովքն ամենիւք։ Արդ՝ ահա գրեցաք առ. վերոյիշեալ հաւատարիմ սիրելիսն մեր և առ. այլս զթուղթս օրհնութեան և շնորհակալութեան։ Թուղթ մի ես առ. բարձր գերազանցութիւն պարոն Կնորզինին գրեցաք յանձնարարութիւն վասն իրաց մերոց. ըստ որում լսեմք՝ թէ նա գնալոց է։ Իսկ առ պատուելի դուքեռնաթորն այժմ չգրեցաք զթուղթ, ըստ որում դա յայտ մնալոց է, և բանն մեր դեռ այդպէս կայ յետոյ մինչ ըստ խոստման ձերում գրեսջիք մեզ զկատարեալ միամտութիւն, յայնժամ և մեք գրելոց եմք առ. պատուելութիւն նորա և առ ձեզ զլիալիր օրհնութիւնս և շնորհակալութիւնս։ Այլ արդ՝ այսու թղթով զայս պատուիրեմք սիրելւոյդ, զի զդոյն ծնողամեծար հարազատութիւն ձեր և զմտերմօրէն ջատագովութիւն անպակաս ունիջիք առ. սուրբ Աթոռս և առ մեզ, որովք և ջանասջիք աղատել զմեզ ի ձեռաց խռովասիրաց, և միշտ զօգուտն սորա և մեր խորհեսջիք և արասջիք։ Եւ մինչ արք յաչաղկոտք խռովեցուցեալ և վրդովեալ են զհիւսիսաբնակ մերազնեայսն, վասնորոյ գուք ես բազմակնիք մահսէրաւ ծանուցանելով նոցա և ի դուռն Արքունի իսկ՝ զհարազատական ջատագովութիւնս ձեր, յորդորեսջիք զնոսա ի խաղաղութիւն և ի կապակցութիւն սիրոյ ընդ սուրբ Աթոռս և ընդ մեզ։ Եւ մոմաժողով Աբրահամ եպիսկոպոսին ես ձեռնտու լիջիք, զի փութով զմոմն ժողովեալ՝ բերցէ ի սուրբ Աթոռս ի նիւթ լուսավառութեան սորա։ Որովք ունիք ստանան զվարձս յԱստուծոյ, զշնորհս ի սրբոյ Աթոռոյս և զօրհնութիւնսն ի մէնջ։ Իսկ և՝ զայս գիտեա, զի ահա Հովեգալստեան կիւրակէին բացմեցուցաք ըղսանն սրբալոյս Մեռոնին, որ ի լրանալ աւուրցն՝ Աստուծով օրհնելոց եմք զսրբալոյս մեռոն ի վայելս օրհնեալ Ազգիդ։ Այսպէս գիտելով ողջ լեր։

Գրեցաւ յամի Կենարարին 1802. և ի յունիսի... ի սուրբ Էջմիածին։

ՄԻԳ. *Թուղթ դարձեալ ի մեծն Պոլիս՝ առ Զաքարիայ պատրիարքի եղբօրորդի Տէր Պօղոսն, ծանուցումն այլ եւ այլ բանից, եւ յանձնարարութիւն վասն Ստեփաննոս եպիսկոպոսին։*

Զի յորմէհետէ ըստ յաջողելոյն Աստուծոյ մտեալ եմք ընդ լծով այսոքիկ տիրական պաշտօնի, ի զանազան ժամանակս գրեալ եմք բազմիցս առ. սիրեցեալ որդիութիւն քո զթուղթս ոիրանիչս և որպիսալայտականս, յորոց են՝ որք անվտանգ հասեալ են առ քեզ, և են՝ որք ընդ այլ թղթոց մերոց ի ձեռն թշնամեաց անկանելով՝ անյայտացեալ են, և ոչ են հասեալք, որպէս իմացեալ եմք։ Այլ երկար ժամանակ էանց՝ յորում ի քէն թուղթ ինչ ոչ ընկալաք, բայց և գիտեմք ստուգիւ զի դու մշտապէս հարազատ ես առ լուսածին մայրըս քո սուրբ Աթոռս, և յամենայնի հաւատարիմ և ջատագով առ մեզ, և միշտ զօգուտն և զբարին մեր կամիս, վասնորոյ և յարաժամ օրհնաբանութեամբ յիշատակեմք զքեզ առ ի բարին. Իսկ այժմ ի նշան յատուկ սիրոյ գրեցաք զայս թուղթ օրհնաձիր առ հոգեոր որդիդ մեր սիրեցեալ, որո:լ և ծանուցանեմք զայս, քանզի՝ ահա յիւրաքանչիւր ժամանակի գրեալ եմք հասարակական և յատկական թղթովք առ պերճաշուք և յարդսյապատիւ իշխանսն տիրապահ Մայրաքաղաքիդ զամենայն ցաւս և զվիշտս մեր, և զապագայ լինելի թշուառութիւնսն՝ որք հասանելոց են սրբոյ Աթոռոյս ի պատճառս յաչաղկոտաց և զրաքանից, որք ինքեանք խոստորեալք՝ զայլս ես

խոտորեցաննեն ի Թիւր կամս իւրեանց, և ղայթակղեցուցաննեն՝ և ածեն յերկպառակութիւն զպարզամիտ Ազգս մեր։ Զգիտեմք՝ թէ վասն այսր զինչ հոգս ունիցին քարշել օրհնեալ իշխանքն, և կամ արդեօք՝ ճշմարտութեան լինելոց են ջատագովք, եթէ ստութեան։ Ահա խղճալի սուրբ Աթոռս մեր՝ այսպէս երես ի վայր անկեալ կայ, և ամենայն բանք և գործք սորին խափան մնացեալք են, այսպէս մնալով՝ ի հարկէ աւիրելոց և քայքայելոց է սուրբ Տունս. մեք ես այսպէս մաշիմք ի տարակուսանս, զի օգնութիւն մեր նուաղեալ է իսպառ յօրհնեցելոյ Ազգէն, բայց բազմութիւն միաբանիցն կայ ըստ առաջնոյն, և երթ և եկքն և խարճաղնացութիւնքն՝ ընդ միոյն երկպատիկ և եռապատիկ առաւելեալք. առանց օգնութեան Ազգին զիարդ է մեզ կառավարել զսոսա։ Լուեալ էք և գիտէք զի Դանիէլն նոր իմն թշնամի է եղեալ մեզ, որ անձանձիր աշխատի՝ առ ի զվնասս և զանպատուութիւնս և զաւերս հասուցանել սրբոյ Աթոռոյս և մեզ, յայնժամ մինչ գնաց ի Կարին, թէ զինչ ինչ անհամութիւնս արար անդ՝ թերեւս իմացեալ իցէք. և անտի մինչ դառնայր, զերկու բեռն իրաց մերոց, (յորոց մէկ բեռն Իզմիրու առաջնորդ Մարտիրոս արհիեպիսկոպոսն առաքեալ էր, և կայլն ի Նմա արդեամբք սրբոյ Աթոռոյս գնեցեալ իրք և ինչ ինչ ընծայք յանուն մեր յղեցեալք յօրհնեալ իշխանաց տեղւոյն, և մէկ բեռն ես ի հոգելոյս Ներսէս վարդապետէն մնացեալ էր առ գործակալսն մեր,) զայն բեռինսն յափշտակեաց և եբեր ընդ ինքեան ի Խալաղիտ։ Եւ անդ ես որ հոգելոյս Հայրապետն մեր Տէր Ղուկաս սրբազան կաթուղիկոսն ի կենդանութեան իւրում զԺ. կամ զԺԱ բեռն եկեղեցական և արտաքսական իրաց՝ փախուցեալ էր ի Պարսից՝ և առաքեալ անդ առ ոմանս ի պահպանութիւն, զայնոսիկ ես յափշտակեալ ոչ տայ մեզ՝ միջնորդութեամբ տեղւոյ մովպետին. քանիցս թէպէտ մարդ յղեցաք և խնդիր արարաք, բայց չեղև հնար առնուլն։ Եւ այսպէս տիրեալ ընչից մերոց՝ վատնէ զայնս՝ կաշառս խոստանալով փաշայից՝ խանից և այլ մեծամեծաց, զի ցուցէ զախտս փառամոլութեան իւրոյ։ Ինքն գրէ զսանատս՝ և յղէ աստ և անդ՝ առ ի տալ զկաշառս, բայց զկեղծ անունն ի վերայ մեր բարդէ՝ իբր թէ մեք չինեալ և գրեցուցեալ իցեմք յանուն իւր զսանատս և առաքեալ առ փաշայս և առ խանս, որ սուտ է ամենևին, քանիցս մարդ առաքեալ է յերևան առ իշխօղն մեր՝ խոստանալով թէ Նմա և թէ այլ մեծամեծաց զԺՌ. թուման, առ ի մերժելոյ զմեզ յԱթոռոյս, և զինքն բերելոյ և նստուցանելոյ աստ. բայց իշխօղն զգիտելով թէ առ նախանձու ունի նա աւերել զսուրբ Աթոռս, արհամարհեալ է զնա և զխոստմունսն իւր։ Նա այժմ ի Խալաղիտ նստեալ նորա, կամի ի Քրդստան ի հայրենի տեղին իւր Աթոռ հաստատել, և զայս Քրիստոսահիմն և լուսաւորչաչէն սուրբ Աթոռս՝ որ հայրենի տուն և տեղի է ամենայն Ազգիս Հայոց, աւերել և կործանել։ Առ այս ահա երկարապէս գրեցաք առ իշխանապետսն տեղւոյդ՝ թէ հասարակ՝ և թէ յատուկ յատուկ թղթովք, որպէս յայտնի լինելոց է ձեզ։ Իսկ զայս թուղթ ես առ սիրելի և հոգևոր որդիդ մեր գրեալ՝ պատուիրեմք, զի ըստ սիրոյդ և հաւատարմութեանդ առ մեզ որչափ բերէ կար քոյ, յորդորօղ լիցիս օրհնեալ Ամիրայիցն՝ հեռի մնալ ի վնասակար խորհրդոյ Դանիէլին, և զՍտեփաննոս եպիսկոպոսն մեր խաղաղական և աւետաւոր թղթովք զարձուցանել առ մեզ, և դու զսիրանիչ գիրդ՝ ի մէնջ անպակաս արասցես, և ի ջատագովութեանցդ առ մեզ մի վերջասցիս. որովք շնորհակալ լինելոց եմք զքէն օրհնութեամբ։ Ողջ լեր ի Տէր և զօրացեալ ի շնորհս նորին. Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուիս, և ի յունիսի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

Բազմաւ սիրով՝ և մեծազօր շնորհիւ միածնաէջ սրբոյ տեղւոյս՝ ողջոյն և օրհնութիւն առաքեմք Աստուածապարգև բարեշաւիղ զաւակացն քոց՝ և հոգևոր որդւոց մերոց՝ Տերամբ Քրիստոսիւ զօրացելոց և ազնուականաց՝ Ջանան և Սէյիմ Չէլէպիյիցն՝ և այլ օրհնեալ ընտանեաց քոց. զորս և յանձնեմք ի խնամս և ի գթութիւնս Արարչին, կալ մնալ խաղաղութեամբ և բարօրութեամբ։

ՄԻԳ. *Թուղթ ի Հաշտարխան առ աղայ Սիմէօն Սէրգէյիչն:*

Զթուղթդ, որ առ. մեր քնեաղ պարոն Սոլոմոնն Արղութեան ընկալալ ձեռամբ նորին, և զամենայն հաւատարմական և զսրտացաւօրէն գրուածսդ գիտացեալ, շնորհակալութեամբ օրհնեցի զքեզ զարժանաւորդ օրհնութեան։ Արդարև՝ հարազատ որդի ես սրբոյ Աթոռոյս լուսատու ծնողիս քոյ, և ընտիր բարեկամ մեզ. քանզի՝ այր ի Նամակի իւրում փորձի, այնզի՝ բոլոր բանք քո՝ հայէին յօգուտ և ի շինութիւն Տանս Աստուածակերտի, զոր ոմանք նախանձոտք և անզգամք կամին քակել, և ի պարծանս մեր և հայրապետական իշխանութեան մերոյ, զորս ջանան խռովարարք ազգի և քաղաքի անպատուել և ընդ ոտիւք արկանել. քանզի Դանիէլ Այրն աղմկասէր՝ մինչ չկարաց զստութիւնս իւր յառաջ տանել առաջի խանից և փաշայից և անօրինաց, կամի այժմ ի ձեռն բարեհռչակ կայսերութեանդ այդմիկ՝ աւերել իսպառ զսուրբ Տունս այս Աստուածաշէն, և զանփոփոխելի հայրապետութիւն ազգիս՝ ընդ փոփոխութեամբ արկանել, և վեր ի վայր առնել զխաղաղութիւն և զբարեկարգութիւն ազգիս և Աթոռոյս. և ոչ երբէք դադարի զչարիս հասուցանելոյ մեզ և սրբոյ Աթոռոյս։ Եւ զաւանդսն սրբոյ գահիս, զոր ի կենդանութեան հոգելոյս հայրապետին Ղուկասու առաքեալ ի Բաղդատ ամանաթ էին եդեալ, ոսկեղէնք և արծաթեղէնք և այլ զարդք մեծագինք յափշտակեալ իւրացոյց, և ի պէտս սնոտի ձկտմանցն իւրոց ոչնչացոյց. զորս ի վերայ մեր բարդէ անիրաւաբար, և վատահամբաւելովն զանունն մեր՝ զիւր յանցանս կամի ծածկել, և զանձն արդաբացուցանել. զոր թողում զի աչք տեսցէ և դատեսցէ։ Քանզի ապաւինեալ եմք մեք ի ճշմարիտն Աստուած, և նոյն ճշմարտութիւն ազատելոց է զմեզ ի ձեռաց զրաբանողաց։ Արդ՝ ահա ըստ յառաջադրութեան մերոյ՝ պատրաստեալ զմահուէր մի ի բոլոր միաբանից և յերկրացւոցս՝ առաքեցաք ընդ գրոյս առ քեզ ի յղել առ Նորին կայսերական մեծութիւն, և առ որս պատշաճի։ Զի գիտասցեն ամենեքեան զճշմարտութիւն, և ի բաց կացցեն ի բանից ամբարշտաց, և իբրև զպղտորիչ քաղաքի և ազգի՝ տեսցեն զայնոսիկ, և ճշմարտութեան հետեօղք լինիցին, ընդորս և քանի մի անձանց տեղւոյդ՝ ոմանց զթուղթ օրհնութեան և սիրոյ գրեցաք յառաջագոյն և յղեցաք, որք ցարդ լուսամ թէ հասեալ իցեն, և ոմանց ահա այժմ գրեալ ի ձեռս սիրելւոյդ մերոյ յղեցաք ի հասուցանել առ նոսա մերս ողջունիւ և սիրով. զուք ևս մի զաղարեսջիք բանիւք և գրովք հրատարակել զուղղութիւն և զրանին իսկութիւն, քանզի՝ որպէս ի մէնջ ունիք վայելել առատապէս զօրհնութիւնս հանդերձ մեծագոյն բազմապատիկ շնորհակալութեամբ, և ի սրբոյ Աթոռոյս զշնորհս և զբարեյաջողութիւնս, նոյնպէս և Տեառնէ Ամենակալէ վարձատրելոց էք ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ. Նա և ի պարոն Կնօրինէն և ի պարոն Կաւալենցկուն զսիրոյ և զշնորհակալութեան թուղթս ընկալալ ի Թիֆլիզու, և մեք ևս ըստ արժանւոյն քանիցս զթուղթ օրհնութեան գրեցաք, և զամենայն անցսն տեղւոյս՝ լիովին ծանուցաք, և մանաւանդ երկիցս դեսպան էր առաքեալ առ խանն երկրիս յաղագս զանազան հարկաւորութեանց, և նոյն դեսպանք եկեալ ի սուրբ Աթոռս վերահասու եղեն ամենայն իրացն և անցիցն, և լաւապէս գիտացին զթշնամեաց զրաբանութիւնոն, և որպէս տեսինն, ըստ այնմ և զգնացեալ վկայեցին առաջի Նորին զերազանցութեան։ Եւ յուսամք, զի ամենայն ինչ բարեպէս եզերեսցի, և թշնամիքն արդարութեան՝ ամօթապարտ լիցին։ Իսկ զԹիֆլիզու անցսն, և զժողովրդոց քաջութիւնսն, որք ամենեքեան գնացեալ առ պարոն Կնօրինն և առ պարոն Կաւալենցկին բողոք են բարձեալ թէ՝ որ կայ ներկայս ի սուրբ Էջմիածին օծեալ և նստեալ, մեք զայն ճանաչեմք և ընդունիմք, և այլն. թողում, զի ի վարդապետաց մերոց, և ի քնեաղ պարոն Սոլոմոնէն տեղեկասջիք։ Այսպէս գիտելով քո՝ և զսիրոյ և զուբախական դիրդ ի մէնջ աննուազելի ունելով՝ ողջ լեր ի Տէր, և զօրացեալ Նովաւ հանդերձ համայն Ազնուական ընտանեօքդ և ծաղկափթիթ Քրիստոսիւ զօրացեալ որդւովք ի յուրախութիւն սրտից մերոց, Ամէն։

Ի յունիսի ... ի 1802. ի մայր Աթոռս ամենայն Հայոց՝ ի սուրբ Էջմիածին։

ՄԻԵ. *Թուղթ ի Հաշտարխան, առ Մովսէս Տատաշեան:*

Եւ ընդ ողջունառաք սիրոյ և անդրանիկ օրհնութեան նամակիս՝ ծանուցումն եղիցի սիրելի և հոգևոր որդւոյդ մերում, և բարեջան և օգտախոհ զաւակիդ Լուսակերպ սուրբ Դահիս Էջմիածնի։ Զի մինչ ցարդ՝ ի հարկէ լուեալ էք ի յլոց, և մանաւանդ ի հասարակական կոնդակէն մերմէ, զոր գրեցաք կանխաւ առ օրհնեալ ժողովուրդսդ՝ զմերս կոչելն ի բազմաց յայս պատիւ՝ և յԱթոռ Հայրապետական, և զօծանելն մեր Շնորհիւ սուրբ Հոգւոյն ի յապրիլի 28 անցեալ թուոյ՝ ի կաթուղիկոս ամենայն Հայոց ըստ հաճութեան բոլոր միաբանիցս և համակ երկրացւոցս, և այլ շրջակայից մերոց, և ըստ կտակի Տեառն Յովսէփայ ի Տէր հանգուցելոյն ըստ վկայութեան Թիֆլիզու հասարակութեան, ուստի զայնցանէ աստանօր ոչ յիշատակեմք ինչ միւս անգամ։ Այլ զայսքանս գրեմ, զի պատշաճ էր թէպէտ յառաջագոյն գրել զթուղթ սիրոյ և օրհնութեան առ սիրելիդ մեր, և առ այլ քեզապիսի հաւատարիմ բարեկամսն, սակայն յայտնի է ձեզ ամենեցդ՝ թէ զիարդ արք նախանձոտք և խռովարարք վրդովեալ զլսելիս պարզամտաց, և ապականեալ զաշխարհս ամենայն բանիւք և թունալի թղթովք զզուեցուցին զբազումս, և գայթակղեցուցին։ Եւ՝ ահա երկու ամ է և այլ աւելի՝ յորս Ազգ մեր իբրև զծով ծփի զանազան ալեօք և խռովութեամբք, և սուրբ Աթոռս հանդերձ միաբանիւք և մեք իսկ գլխովին տարուբերիմք բազմապատիկ փորձութեամբք և տառապանօք, և ենթարկեալ եմք յողնագիմի վշտաց, և սուրբ Տունս այս զրկեալ ի բարեվայելչութեանց իւրոց և լեալ կարօտ ամենայն պիտանեաց, և ի վերջին թելն հասեալ մերձ ընդ մերձ հանդերձեալ է կործանիլ իսպառ եթէ այլ ևս այսպէս մնասցէ, և Ազգ մեր ոչ խաղաղասցի։ Վասնորոյ և մեք այսքանեօք հոգօք զբաղեալ չկարացաք իւրաքանչիւրոցդ յատուկ յատուկ զթուղթ օրհնութեան գրել։ Բայց Նարդեանս մինչ գիտացաք ի գրոյ գերազնիւ աղայ Սիմէօն Սէրգէյիչին, և Թազայ պարոն Դաւթին զհարազատ որդւոյդ զմեծագոյն հաւատարմութիւն և զջերմեռանդութիւն զորս ունիս դէպ առ Շնորհատու ծնօղ քոյ և առ մերս հոգևոր հայրութիւն, վասնորոյ հարկաւորապէս զայս նամակ անդրանիկ օրհնութեան ի նշան հայրականն սիրոյ, փութապէս գրել առ բարեպաշտութիւն ձեր յօժարեցաք, և առաջի Աստուածաէջ սուրբ տեղւոյս զկեանս քոյ օրհնեալ բազմապատկապէս շնորհակալեցաք. Տէր օրհնեսցէ զքեզ, և զօրացուսցէ, և յամենայն փորձանաց փրկեսցէ, և զամենայն զբանս և զգործս քոյ ի բարին տնօրինեալ յաջողեսցէ, և խաղաղական կենօք պահեսցէ ցսիրելիդ իմ հանդերձ համայն քոյայնովքն։ Եւ արդ՝ այս է իմ պատուէր և յորդորանք սիրելւոյդ իմոյ. զի զլսելիս քոյ ի բաց հեռացուցեալ յամենայն բանից թշնամեաց և նախանձոտաց՝ ի սէրդ ճշմարիտ, և ի բարեկամութիւնդ կատարեալ՝ հաստատուն և անփոփոխելի մնասցես, և ըստ չափու և զօրութեան քոյ՝ ջանասցես զճշմարտութիւն հրատարակել, և ուղղութեան քարոզ լինիլ, և զայլս ևս ի դոյն յորդորել փութասցես բանիւք զմերձաւորսն, և գրովք զհեռաւորսն, և համակամ միաբանութեամբ հոգ տարջիք զխաղաղութիւն հաստատել, և զխռովութիւն բառնալ, և այնու որդիս Աստուծոյ անուանիլ և յերկնաւոր հօրէն վարձս զբարիս ժառանգել աստ և հանդերձեալն։ Իսկ զայլ որպիսութիւնս մեր և սրբոյ Աթոռոյս մերոյ ունիս գիտել ի վերոյգրեալ սիրելեացն մերոց լիապէս։ Այսպէս առնելով քո՝ և զսիրոյ և զորպիսութեան դիրդ ի մէնջ անպակաս պահելով՝ ողջ լեր ի Տէր, և զօրացեալ միշտ ի նոյնն և Շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ, և ընդ քոյսն ամենայն, Ամէն։

Ի յունիսի ... ի 1802, յերկնահանդէտ Աթոռս ամենայն Հայոց՝ ի սուրբ Էջմիածին։

ՄԻԶ. *Թուղթ ի Հաշտարխան առ պարոն Եկօր Աքեալիչն:*

Եւ ընդ ողջունառաք օրհնութեան ... *) եանց, և ոչ զգաստացեալ դան ի զղջումն, որոց Տէր տացէ զհոգի երկիւղի և ամօթոյ և զարտասուս աչաց, զի լացցեն ի վերայ անձանց

*) Այս թղթի սկիզբը և վերջը պատռուած էր, ուրեմն և կիսատ։

իւրեանց, և սղբասցեն զկորուստ ինքեանց, զինչ և իցէ թողցուք մեռելոց թաղել զմեռեալս իւրեանց. զի ապաւինեալ եմ ես ի Ամենազօր բազուկ բարձրելոյն և ի ճշմարտութիւն նորին և յուսամ զի նոյն ճշմարտութիւն ազատեսցէ զմեզ ի ձեռաց ամբարշտաց։ Եւ արդ՝ արդարև արժան էր գրել յառաջագոյն զթուղթ սիրոյ և օրհնութեան առ ազնուութիւն ձեր, սակայն զբաղմունք ներքին և արտաքին կասեցուցին ցարդ։ Այժմ մինչ դիտացաք ի թղթոյ գերազնիւ աղայ Միքօն Սէրզէլիչին և Թաղայ պարոն Դաւթին զսիրեցեալ որդւոյդ հաւատարմութիւն և զջատագովութիւն, զորս ունիս առ Շնորհատու ծնօղ հայրս քոյ սուրբ Էջմիածին և առ մերս հոգևոր հայրութիւն, ուրախացեալ օրհնեցաք զքեզ հոգևոր օրհնութեամբ առաջի Աստուածաէջ սուրբ տեղւոյս հանդերձ բազմապատիկ շնորհակալութեամբ։ Տէր օրհնեսցէ զքեզ, և զօրացուսցէ, և զամենայն բանս և զգործս քոյ ի բարին յաջողեսցէ, և փրկեսցէ յամենայն չարեաց, և պահեսցէ խաղաղական և երկար կենօք հանդերձ համայն ազնուական քոյալնովքն ի մխիթարութիւն սրտից մերոց և մանաւանդ ի պայծառութիւն սուրբ Տանս ինքնակերտի, զոր ոմանք նախանձոտք կամին անխնայաբար քակել և ի վերջին աւերութեան հասուցանել։ Որ յիրաւի՝ եթէ այլ ևս երկարասցի խռովութիւն ժողովրդոցդ, և մնասցէ այսպէս, որպէս է, քալքալի խսլառ խղճալի Տունս այս Լուսակերտ և Աստուածաշէջն և լինի կարօտ ամենայն հարկաւորաց, յայնժամ խղճահարին թէպէտ ամենեքեան, բայց անօգուտ։ Տէր տեսցէ զտառապանս մեր և սուրբ տաճարիս իւրոյ և լացց եղցէ։ Պատուիրեմ ուրեմն, սիրելի և հոգևոր որդւոյդ մերում, զի զլսելիս քոյ ի բաց հեռացուցեալ ի ունայն բանից թշնամեացն արդարութեան, զհետ խաղաղութեան, սիրոյ և միաբանութեան երթիցես, և շինութեան և պայծառութեան սրբոյ Գահիս Լուսակերտի ցանկացիս հետևող լինել և ջատագով ճշմարտութեան լեալ՝ ի ստութեանց . . .

Ի յունիսի ... 1802. ի սուրբ Էջմիածին։

ՄԻԵ. *Թուղթ ի Կարին առ մահտեսի Յօհաննէսն ի պատասխանի թղթոյն իւրոյ ի յօգոստոսի 27 գրեցելոյ, եւ շնորհակալութիւն սակս հաւատարմութեանցն:*

Յորմէ սիրով և օրհնութեամբ բազմաւ, Քրիստոսաձիր սուրբ ողջունիւ և Նոյնաէջ գերահրաշ տեղւոյս զուարթարար շնորհիւ, գիտութիւն լիցի ստոյգ սիրելւոյդ մերոյ և հարազատ որդւոյդ սրբոյ Աթոռոյս ի Քրիստոս զօրացեալ և ի շնորհս նորին պերճացեալ՝ վարժապետ պարոն Յօհաննիսիդ։

Զի զթուղթ քո՝ զոր գրեալ էիր յանցեալ ամսոյ 27, ի նշան հարազատութեանդ, առընկալաք ի սէր յամսոյս Զ։ Եւ ընթերցեալ՝ հասու եղաք պարագրելոցն՝ որ ի նմին։ Զի գիտելով մեր զքեզ զոյ ըստ ամենայնի հարազատ և հաւատարիմ սուրբ Գահիս և առ մեզ և չունելով կարծիս ինչ ի քէն՝ վասն որոյ ի գրելն մեր զթուղթս առ ոմանս ոմանս տեղւոյդ՝ ոչ գրեմք սիրելւոյդ, և այն՝ ոչ եթէ ի զանցառութենէ է՝ կամ ի մոռացմանէ, ոչ, այլ վասն անձեռնհաս լինելոյն։ Բայց յիրաւի, յիշատակեմք զքեզ միշտ առ ի բարին, և շնորհակալութեամբ մեծաւ օրհնեմք հանապազ սակս ջատագովութեանդ առ ճշմարտութիւն։ Եւս և՝ չունիմք կարծիս ինչ՝ եթէ սիրելիդ՝ յաղագս կողմնակողացն Դանիէլին զթուղթս իցես գրեալ. գրեալ թէ ևս իցես՝ չէ ինչ յանցանք. զի յատուկ է արուեստաւորին ի գործածել զիւր արուեստն վասն ոյր և իցէ։ Որպէս յառաջնումն պատահէին բազմիցս արհեստաւոր քրիստոնէից սակս հեթանոսաց զաղօթարանս կազմել, և այնու թողեալ զհաւատս իւրեանց՝ հետևէին նոցա արդեօք, ոչ, այլ զիւրեանց զուղղափառութիւն հաստատուն ունէին առ սուրբ եկեղեցիսն. նոյնպէս և զու՝ գիցուք թէ գրեալ իցես և ոչ թիւրեալ կամ յեղափոխեալ՝ այլ մանաւանդ ի նոցունց ըղձնիւթ առեալ և տուեալ մերայնոցն։ Յաղագս մահտեսի Ասլան աղայլին զոր գրեալ էիր, գիտացաք. բայց մեք՝ թէ զնա, և թէ զբոլոր ժողովուրդսն տեղւոյդ առ սուրբ Գահս և առ մեզ հաւատարիմ և ջատագով գիտեմք զի ի նեղութեան և ի հարկաւոր ժամանակին թէ դուքա և թէ Իզմիրցիք առաւել պիտոյացան մեզ և ցաւակից եղեն, քան զմերձակայ գրա-

ցիսն մեր, ուստի և մեք վասն նոցին միշտ աղօթեմք առաջի սրբոյ Քրիստոսաէջ տեղւոյս յանձնելով ի խնամս և ի յողորմութիւնս Տեառն Ամենակալի։ Նաև և զառ մեզն հաւատարմութենէ և զՔատաղովութենէ զոր գրեալ էիր, իմացաք և շնորհակալութեամբ մեծաւ օրհնեցաք զինքն և զամենայն զիւրայինսն, առ որ ևս յատկապէս զօրհնութեան թուղթս գրեցաք։ Զայսչափ ինչ լուեալ քո ի ի մէնջ, ողջ լեր։ Զչարականն ընդ հաւատարիմ եկողի յղելոց եմք փութով, առ որ լիցիս միամիտ։

ՄԻԸ· *Թուղթ ի Պօլիս առ իշխանապետուն եւ իշխանին, բան վասն խաղաղութեան, եւ յորդորումն ի սէր եւ ի միութիւն:*

Որոց գիտութիւն լիցի· զի որպէս դու Աստուած յերկինս, և տէր ամենայնի, այսպէս դու և ճշմարտութիւն և արդարութիւն նորին ամենայն ուրեք, և նոյն ճշմարտութիւն է, որ ազատէ զճշմարտութեան հետևողսն ի ձեռաց ամբարշտաց ըստ անսուտ բանի կենարարին մերոյ Յիսուսի. ուրեմն և եղիցի ամենայն մարդ սուտ, և Աստուած միայն ճշմարիտ, քանզի ունայնանան և մաշին որդիք մարդկան ընդ որս և սնոտի գործք նոցին, բայց ճշմարտութիւն Աստուածային ոչ երբէք մաշի, և կամ հնանայ, և կամ թէ դաղի ընդ իւիք, այլ իբրև զարփի պայծառ ճառագայթի յամենայն ժամ ամենայն ուրեք յորմէ հեռացեալքն, որք գործեն զչար, և ոչ դան առ լոյսն ճշմարիտ Քրիստոս ըստ խաւարասիրաց՝ ամօթապարտ լինին, և իբրև զտունկ անպիտան խլին ի բարեբեր տնկոց ձեռամբ այնորիկ, որ դօսացոյց զունայն ծառն ի պտղոց՝ զպանծացեալն սաղարթախիտ տերևովք։ Արդ՝ մեք ի նոյն միակ ճշմարտութիւն Քրիստոս կամք լուսացեալ և պարծիմք նովաւ, և աներկբայ յուսով հաւատամք թէ կարէ ազատել զմեզ ի ձեռաց սատանայից և յաչաղկոտաց. զի ոչ երբէք խախտի հիմնեալն ի ճշմարտութեան յորդահոս հեղեղօք փորձութեամբք աշխարհիս, և ոչ բնաւին ծածկին ճշմարտութիւնք, և ոչ ոք կարէ ի հողածնաց աստուածամարտ լինել, և ընդդէմ ուղղութեան հակաղինիլ։ Թէպէտ բազում անգամ զբազում ինչ ստուգութեամբ գրեցաք առ ձերդ աստուածպաշտութիւն աննենգ մտօք, պարզ սրտիւ և միամիտ հոգւով, և գիրաց անցելոց յիշատակեալ՝ իսկութեամբ զիրսն առաջի արարաք, և զամենայն բանս խռովասիրաց ցուցեալ՝ բացերևապէս փայլեցուցաք զճշմարտութիւն. ընդ մեզ և բոլոր միաբանք Աստուածաէջ սուրբ տեղւոյս և համակ երկրական ժողովուրդք բազմակնիք վկայութեամբ բարձրաղոչ աղաղակաւ քանիցս և քանիցս ստուգիւ գրեալ յորդորեցին զխոհական անձինդ հեռի կալ ի բանից սնոտեաց և ընդ ինքեանս միակամ և միասիրտ լինել, և խաղաղութեան և շինութեան Տանս մեծի և Ազգիս տառապելոյ զհետ երթալ, բայց որպէս երևի, ոչինչ ազդեցին ձեզ օրհնեցելոցդ այնոքիկ բանք, և մանաւանդ առաւել ընդունելի եղեն ունայնախօսութիւնք Մանուէլ պետին [86]) խռովարկուաց և նորապիսեաց, քան զբնաւիցս, զորմէ և զխառնադնաց վարուց նորին ամենեքին յառաջագոյն վկայէիք առաջի մեր, և թէ զիարդ ուսեալն ի չարիս յեղափոխեցաւ այժմ ի բարիս, ձեզէն թողում խոկալ իրաւասիրութեամբ։ Ուստի՝ իրաւադէտն իմ ի բարձունս է և վկայն բանիցս ի յերկինս, որ քննէ զսիրտս իմ և ամենեցուն։ Եթէ ի բանից և ի գրուածոց նախանձոտաց դատանի լիս, իրաւամբ է, զորս գործենն ժողովուրդքն տեղւոյդ ընդ իս, իսկ եթէ ոչ, և առանց վերահասութեան և քննութիւն առնեն զոր առնենն, ինքեանք տացեն զպատասխանի այնմ, զորոյ զսուրբ տաճարն աղօտացուցանեն ի պայծառութեանց և զպարկեշտ բարեկարգութիւն Ազգիս խանգարեն, և զբազմայարդ հայրապետութիւն ընդ տիղմ թաւալեալ՝ ծանակ կացուցանեն ամենից մերազանց և այլակրօնից։ Եւ եթէ երկբայեն ոմանք ընդ բանս մեր և գայթակղին ի վերայ այնց, զորս լսենն, դիւրին է զայն քննութեամբ դիտել զարս հաւատարիմս յղելով, զի հասու լեալ իրացն անցելոց խաղաղասցին, քանզի չէ անկարելի այն և դժուարահաս, կարէք և դուք ամենեքեան եթէ կամիք հեշտեաւ իմանալ, և զճշմարիտն ի ստոյն որոշել, և զմեզ անբասիր ունել, և որ օրէնք է հաւատալով բանից խառնակչաց՝ զայսքան և զայսչափ վնաս

սրբոյ Տանս, և զխայտառակութիւն ձեզ և յե-տագայից ձերոց գործել առանց ընտրողութեան և ճիշտ հետազօտութեան. այնզի՝ մեք պայծառութեան սրբոյ Տանս ցանկամք, և ոչ թէ ուհրութեան. և եթէ այսպէս, դիմրդ սպառնարելի է մեզ վատնել զինչս սորին, և դարձաթեղէն դուռն Աստուածային սուրբ Տանս ապականօղ կերակուր առնել, և զաւանդս ընդհանուր Ազգիս յումպէտս վատնել։ Եւ զոր ինչ սրամս մինչ ցարդ ետուք անօրինաց, և որչափ վնասեցաւ սուրբ Տունս այս այն ես ի պատճառս Դանիէլին և Նորապիսի խռովարար ընկերացն եղեն, և մանաւանդ յաղագս անմիաբանութեան ձերոյ և տարաձայնութեան։ Եւ եթէ այլ ես երկարեսցի խռովութիւնդ այդ, և ոչ համաձայն միաբանութեամբ դնէք խաղաղութեան երթիջիք, գիտացէք ճշմարտիւ, դի անդէն վաղվաղակի կործանի խսպառ, և ձեզ լինելոց է խղճմտութիւն մեծ և բռութանիք։ Քանզի զմիօք եղեալ այլազգի դրրադիքն յաւէտ այլպիսի ադմկալիր լրոց բռնասեն, դի լազեսցին. ահա էհաս ժամ, և հասին ցանկութեան իւրեանց։ Ուրեմն՝ ես անպարտ եղեց առաջի Աստուծոյ և ձեր, զի այսքան և եթ պարտաւորութիւն զոյր յիմ վերայ զամենայն ինչ յայտնապէս գրել ձեզ, զորուտն ձեր և սրբոյ Տանս դուք ընտրեցէք, դի բաւականապէս դրեալ եմք ձերդ Աստուածպաշտութեն ցայս վայր ամենայն հանգամանօք, և զի երկարեցից. խոհականացդ այնոքիկ ես չատ են։ Նաև՝ ամենեցուն յայտ է, դի ինքն Դանիէլն վատնիչ արդեանց սրբոյ Աթոռոյս և աւերիչ սորին, և զկանցանսն իւր, զորս ինքն գործէ, ի վերայ մեր դնէ թարց խղճմտանաց, քանզի զաւանդսն սրբոյ Աթոռոյս ի Բալազիտ եղեալ վատնեաց առ ի պէտս անոտի ձգտմանց իւրոց և ի վերայ այնր՝ զմեծամեծ կաշառս խոստանայ և տայ փաշայից և բռնաւորաց, և զթէմէսուկս տարածանէ աստ և անդ և զայն ի վերայ մեր բարդէ անիրաւաբար, զոր Տէր տեսցէ և դատեսցէ ընդ իմ և ընդ նորա։ Եւ արդ՝ ես վստահացեալ ի կատարեալ սէր սիրելեացդ և ի ճշմարիտ բարեկամութիւն ցանկալեացդ իմոց, կամ ամենայն լսով ի միամտութեան, քանզի՝ զայնոսիկ զորս երբեմն կշտապինդ վայելեցի յայդր ի կերազնիւ բարեպաշտիցդ, ոչ մոռանամ երբէք և առաւել ես յուսադրէ զիս այն, զոր երբեմն դուք իւրաքանչիւր պատուական և գերյարգի ամիրայքդ օրհնեալ խօսէիք ընդ իս, և կատարեալ սիրով և բարեպաշտութեամբ ձերով զմեզ առաւել պատուօ տեսանէիք այժմ աստիճանի, քան զոյլսն, ոչ ըստ մերում արժանաւորութեան, յորմէ թափուր եմք, այլ ըստ ձերդ բնաբոյս ազնուական բարուց, և բնաւին ոչ կարծեմ և ոչ հաւատամ եթէ՝ թէ դուք յայնժամ առ երես իցէք ասացեալ զայն, և զմեզ նենգեալ, և կամ այժմ ես զգրտութիւն սիրոյ իցէք արկեալ ի մէջ, և զջերմ սիրտ ձեր հեռացուցեալ ի լուսոյ ծնօղէս ձերմէ և ի նուաստ հովուէս, բայց որ զայթակղեցոյցն զձեզ, և վրդովեաց զխաղաղութիւն ձեր և եկեղեցւոյս մերոյ, և վեր ի վայր արար զբարեկարգութիւն սրբազան հայրապետաց, նմա մեծ մեղք են, որում և այլոց, որք ցարդ ոչ զգաստացան, դհոդի զգօնութեան տացէ Տէր և սիրտ դղջման և զարտասուս աչաց։ Ապաքէն խնդրեմ ի չքնաղաչուք փառազարդից ի փառս անուանն Յիսուսի, և ի սէր սուրբ հաւատոյս մերոյ բարձէք դչարն և զխռովարարն ի միջոյ, և հեռացուցեալ զմաքուր լսելիս ձեր ի բանից ապականչաց՝ սիրովն Քրիստոսի զարդարեցարուք, և բաւական համարեալ որ ինչ անցինն, այսուհետև զկնի խաղաղութեան, սիրոյ և միաբանութեան ընթացարուք, զի եղիջիք որդիք խաղաղասիրին Աստուծոյ։ Թէ և յիս ոչ խնայէք, գոնեայ ի Լուսակերտ անարատ Հարսնս Քրիստոսի խընայեալ ողորմեցարուք, որ փոյթ ընդ փոյթ մերձ է ի կործանիլ, եթէ ոչ ժամանեսջիք յօգնութիւն նպաստամատոյց ձեռնտուութեամբ ձերով. զայսոսիկ ոչ վասն իմ գրեմ, և ոչ իսկ բնաւ զանձնէս հոգամ, որպէս սրտագիտին Աստուծոյ է յայտնի. զի այր մի եմ կրօնաւոր, և ամենայն ուրեք կարեմ ապրել շնորհօքն Քրիստոսի, և մանաւանդ մարդ եմ մահկանացու, մեռանիմ որպէս առաջինքն, բայց ցաւիմ և տառապիմ յոյժ յոյժ ի վերայ անմիաբանութեան ձերոյ և ի վերայ աւերութեան սուրբ Տանս, և ողբամ ես ի վերայ գայթակղեցուցչացն ձերոց, զի զոր ցանկալի տեսանել ի պայծառութեան առ մերով ժամանակաւ առաւել քան զառաջինն, ահա առ ի պատճառս ախտամոլաց և փառասիրաց անչքանալ։ Ուրեմն աղդեսցին այսոքիկ աղէտք ձեզ, և հոգ տարջիք լուսոյ ծնողիս ձեր, և զվերջին կամս

և զգլխմունս ձեր յայտնապէս մեզ գրեցէք, զի գիտացեալ ըստ այնմ ընթասցուք յառաջ և կամ յահեակ, առ որ ակնապիշ լեալ հայիմք հանապազ։ Ողջ լերուք ընտիր սիրելիք իմ, և զօրացեալք Ամենաբարձր բազկաւ երկնաւորին ի մխիթարութիւն վշտապատ սրտի մերում և մանաւանդ ի շինութիւն Քրիստոսակերտ սուրբ Աթոռոյս, հանդերձ համայն Լուսաւորչածին օրհնեալ ժողովրդովք, և ազնուազարմ ձերայնովքն, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս, և ի յունիսի . . . ի Լուսակառոյց Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ՄԻԹ. *Թուղթ ի Թիֆլիզ առ Մատենու կառավարիչ պարոն գրաֆուն, զորոյ անունն տակաւին մեզ է անգիտելի:*

Որում և գիտութիւն լիցի, շնորհաւորեմք նախապէս՝ բերկրական սրտիւ զբարի և զբազմաօգուտ գալուստ ձեր ի յԱստուածապահ քաղաքդ Թիֆլիզ և օրհնեմք զըղձալի և զանզին կեանս ձեր առաջի Քրիստոսաքնակ սուրբ տաճարիս հանդերձ բոլոր միաբանութեամբ, զոր ինքն բարձրեալն օրհնեսցէ, և խաղաղական և երկար կենօք պահեսցէ, և յաչս ամենամեծ կայսերն քաղցր և հաճելի երևեցուսցէ։ Եւ արդ՝ մեր քնեաղ պարոն Սոլոմոնն Արղութեան և այլք գրեալ էին մեզ զլուսափայլութեան ձերոյ բարի գրութիւն, և զմարդասիրութիւն դէպ առ սուրբ Աթոռս ի ղճալի և առ մերս նուաստութիւն, որոյ աղաղաւ արդարև մեծապէս ուրախացեալ բազմապատիկ շնորհակալութեամբ գոհունակեցաք զձերդ լուսափայլութեանդ, և պարտաւորեալ զամենայն աւուրս կենաց մերոց մնալոց եմք մշտական ջերմեռանդ աղօթարար վասն պատուական կենաց ձերդ մեծութեան։ Խնդրի խոնարհաբար ի լուսափայլ վեհանձնութենէ ձերմէ՝ զմաքուր լսելիս ի բաց հեռացուցեալ յամենայն բանից նախանձոտաց և նենգաւորաց ի կատարեալ սէրդ և ի ճշմարիտ բարեկամութիւնդ մնալ հաստատուն, և ձերով խաղաղասիրութեամբ հանդարտեցուցեալ զխռովութիւն քաղաքիդ և ազգին՝ յօգնութիւն մեզ վշտացելոցս և սրբոյ Տանս Աստուծոյ ժամանել, որ ի պատճառս Թշնամեաց և խռովարարաց՝ վշտանամք յոյժ յոյժ, և մեծամեծ վնասուց ենթարկեալ տառապիմք բոլոր միաբանութեամբ ազգովին։ Զայլն յանձնեմ զմեզ և ըզսուրբ Աթոռս մեր ի շնորհս ձեր, և ցանկամ ձերդ բարեկամօղութեանց, ողջ լերուք։

Ի յունիսի ... ի 1802. ի սուրբ Աթոռս Էջմիածին, որ ի դաշտս Արարատեան։

ՄԼ. *Թուղթ ի Պօլիս առ մահտեսի Ստեփանն եւ առ մահտեսի Նիկողայոսն յորդորումն կրկին զնոսա ի խաղաղութիւն։*

Որոց և գիտութիւն լիցի. զի յառաջ քան զայս՝ զամենայն ինչ ի զանազան ժամանակի գրեալ ծանուցաք ձերդ Աստուածպաշտութեան, և զայնոսիկ ձեռամբ երևելի եպիսկոպոսաց և վարդապետաց. և այլոց յղեցաք առ սիրելիսդ իմ ի փարատել զկարծիս ի մտաց ձերոց, զորս արք յաչաղկոտք և նենգաւորք վրդովեալ զայթակղեցուցեալ են ի վերայ մեր ընդ վայր և ի սնոտիս, և առ ի հաւատարմացուցանել զբանս մեր բացայայտ առնելով զճշմարտութեան պծածկեալն ի խաւարասիրաց՝ ընդ մեզ և միաբանք և երկրայէն ժողովուրդք բազմակնիք վկայութեամբ ի յեղծանել զբանս եղծանելեաց, և ի նոյն առաջին սէրն և ի ջերմեռանդ որդիութիւն զձեզ անդրէն հաստատել սաւզապէս զանցից անցելոց զսկութիւն անխառն ի ստութեանց յայտնեցին. յորոց են, որք հասեալք են առ ձեզ, և դուք գիտացեալ զմիտս դրուածոցն մերոց, և են, որք ի ձեռս նախանձոտաց անկեալ՝ անհետացեալք։ Բայց ընդ այս կարի զարմանամք, թէ զիարդ բանք խռովասիրաց ի ձեզ զտեղի գտեալ՝ իբրև զճշմարիտ ինչ ընդունին, իսկ դրուածք այսքան բազմութեան արհամարհին։ Ոչ ապաքէն անիրաւութիւն է առանց քննութեան և վերահասութեան՝ վաղվաղակի հաւատալով խաւարն ի խուռն աղճատանաց ցնորելոց, ընդդէմ ճշմարտութեան հակաչինել, և թողու-

զկնի զվատահամբաւութիւն մեծ, և ստոտանք բազում, և Աստուածաշէն սուրբ տանս կործանման պատճառ լինել. քանզի ահա աւերի Աստուածային տաճարս հիմնեալն ի սրբոյ Լուսաւորչէն, և մինչ ցարդ ի նախնեաց հետէ չէն և պայծառ մնացեալն, որում ոչ փութայք ի ցաւակցաբար վշտակցութիւն։ Վասնզի առ խոհական նախնեօք ձերովք չնշեալն, աւասիկ առ ժամանակաւ ձերով լինի և կատարի, և դուք անփոյթ եղեալ զայնմանէ, ոչինչ հոգայք։ Մինթէ յաւուրս նոցին չեն անցեալ այսպիսի անցք և խռովութիւնք պատճառանօք դայթակղեցուցչաց, որպէս քաջայայտ է, որք հմուտք են պատմութեանց դանցելոց. բայց արք խոհեմք և ուշիմք գոլով՝ հետաքննին խուզողութեամբ ի վերայ հասեալ ճշմարտութեան բարձեալ են զչարն ի միջոյ, և զբարին սիրով ընդգրկեալ։ Իսկ եթէ ոչ հաւատայք բանից մերոց և բազմութեանս, կարէք զարս հաւատարիմս յղել, և ամենայն ելումտիցն և արծաթեղինացն հասու լինել, և զկարծիս ի մտաց մերժել ի բաց. որպէս երկարօրէն գրեալ եմք ի կոնդակէն և ի յողջունագիրս, զորս յղեցաք ընդ Ստեփաննոս Արքեպիսկոպոսին առ սիրելիսդ։ Եւ այլու կարէք ես գիտել բացայայտ զհոգածութիւն մեր և զպահպանութիւն արդեանց և աւանդից ազգիդ և Աթոռոյս, և զանհարազատութիւն այլոց, զի յետ վախճանի Ղուկաս հոգելոյս Հայրապետին մինչ ցկոչումն մեր յայս Աթոռ, որչափ ինչ վատնեալ են գործակալք Աթոռոյս ի յանգլխութեան, տակաւին այնքան ինչ մեք չունիմք խարջեալ ի տասն և չորս ամիսս, նոյնպէս ի ձեռն քննութեան կարէք ես իմանալ, մեք եմք անհարազատն և վատնիչն արդեանց Աթոռոյս, թէ Դանիէլն, որ զկնի կլանելոյն զբեռս յԷջմիածնոյ եկեալ, և հանգուցեալ Ներսէս վարդապետին նուիրակին սուրբ դահիս, որք էին ի Կարին, և զկնի վատնելոյն զմեծ զանձն Աթոռոյս՝ ի Բայազիտ գաւառ եղեալն, սկսեալ է զթէ մէտուկս դրել, և առ բռնակալսն յղել. զորս ի վերայ մեր բարդէ անիրաւաբար և վատահամբաւէ ես՝ իբրու մեք լցեմք հնարեալ զայնըս. և յանուն նորին տարածեալ աստ և անդ։ Որպէս ընդ ֆարմանին չարարին, զոր յղեալ էր առ խանն, գրեալ ես էր և խոստացեալ մինչև տասն հազար թուման, զի ինքն եկեալ նստցի աստ. զոր ատելով ատեաց խանն, և զկաշառաբերն առ կաշառատուն դարձոյց յետս ունայն, զի անօրէն գոլով առաւել ցանկայ շինութեան սրբոյ Տանս, քան արծաթոյ. վասն ճշմարտութիւն քաջ ծանեան դեսպանքն, որք եկեալ էին առ խանն երկրիս ի մեծ կողմնակալէն ռուսաց և ի քաղաքապետէն Թիֆլիզու սակս այլ բանի, և հայրապետութեան մերոյ, և վերահասութեան գործեցեալ իրակութեանցն, որոց գիտացեալ զիսկութիւն, և ծանուցեալ զչարախօսութիւնս չարասիրաց զմէնջ, և տեսեալ զամենայն զարդս եկեղեցւոյ ամբողջ և անթերի, գնացեալ ըստ այնմ պատմեցին նոցին զերազանցութեանցն՝ յորոց ընկալաք և մեք ըղձուգթս սիրոյ և բազում յուսադրութեան, որք և խոստացեալ ես էին՝ զամենայն ինչ ճշմարտապէս գրել առ կայսրն, վկայելով զոր ինչ լուանն և որչափ ինչ գիտացին, և մեզ ի տարապարտուց բամբասելոյս զբաւականութիւն շնորհել։ Արդ՝ վերահասութեամբ ամենայն գաղտնիք ի յայտ գան, և չէ հնար ձեզ հեռի գոլով ի մէնջ՝ գիտել ինչ ստուգութեամբ. քանզի պատմեալքն առաջի ձեր, կամ աւելորդօք են, և կամ հեռի ի ճշմարտութենէ, զի գործ առն աստուածապաշտի է, զիրն իսկութեամբ առաջի առնել։ Ուրեմն խնդրի ի ձէնջ, բարեպաշտութեամբ առանց ակնառութեան երթալ զհետ արդարութեան, զուղղութեան, և զիրաւասիրութեան, և զխռովութիւն և զտարաձայնութիւն բառնալ ի միջոյ, և սիրովն Քրիստոսի, և երկիւղիւ նորին զարդարել. և զպատճառն գայթակղութեան ձերոյ և պղտորման ի բաց ի ձէնջ հալածել, կամ բանից մերոց զհաւատ ընծայելով, և կամ ըստ կամաց մերոց զարս արդարակորովս յղելով ի որոշել զճշմարիտն ի ստոյն։ Իսկ թէ ոչ այնպէս կամիք առնել, և ոչ այսպէս, այլ բարձի թողի առնել, զի ամայասցի խսպառ, այդ չէ արժան ձերդ աստուածպաշտութեան. քանզի՝ եթէ զմարմնաւոր տանց ձերոց փոյթ ունիք, և ի շինութեան կամիք պահել, քանի մանաւանդ արժան է ձեզ և առաւել հարկ զհոգւոյ տանէս հոգալ, և մանաւանդապէս շինութեան և պայծառութեան ցանկալ։ Գրելս այսքան վասն այն է, զի օր յառաջ հոգ տարեալ ի խնամարկել փութասջիք, և մի թողուցուք ամայանալ։ Զի յետ աւերելոյն, չեն այնուհետև

պիտոյ մեզ գրել և ձեզ անսալ, կամ ոչ անսալ, զի անօգուտք են յանձամ երկուքն ևս։ Ուստի՝ կրկին գրեմ և յորդորեմ զբարեպաշտ խոհականսդ հեռի կալ ի վնասուց և ի յաշխարհակործան արանց, զի խղճահարիք յետոյ. քանզի՝ որք զայզպիսիսն գործեցին, մեծապէս սարջացան։ Ես ոչ կամիմ, զի դուք չար օրինակ լեալ որդւոց ձերոց և ընտանեաց՝ ընթանայցեն զկնի ձեր մեղք և անէծք ցաւագինք, զի ահա ի պատճառս անմիաբանութեան ձերոյ և խռովութեան կործանի սուրբ Տունս եթէ այլ ես այսպէս մնասցէ, զոր ոչ զգայք և ոչ ցաւիք, քակելն յոյժ դիւրին է, իսկ շինելն կարի դժուարին և մանաւանդ անկարելի, մեղմացուցէք զսիրտս ձեր և ի վերայ Աստուածաէջ սուրբ տեղւոյս ջեռուցէք, որ ահա ի մէջ գազանաց դիշատի չարաչար, և կարօտի օգնականութեան բարեպաշտից։ Քանզի խորամանկ սպարսիկ են զմեօք բնակեալքն ոչ զիս հրաժարեցուցանեն և ոչ զնա, այլ ի ձեռն նորա զիս, և ի ձեռն իմ զնա ահայուցեալ, ծծեն զվերջինն. որպէս նշանքն արդէն իսկ երևին։ Այսու ահա ես անպարտ եղէց, զայլն թողում ձեզէն խոկալ և խղճահարիլ։ Ի վերջոյ՝ յանձնեմ ի բարեպաշտութիւն սիրելեացդ իմոց զհարազատ զաւակն սրբոյ Գահիս զՍտեփաննոս արքեպիսկոպոսն, զի խաղաղական և աւետալիր գրովք առ մեզ ուղևորեալ, զվարձս բարիս և բազմապատիկս ընկալջիք ի խազազասիրէն Աստուծոյ։ Այսպէս գիտացեալ և զսիրոյ թուղթս ձեր ի մէնջ անպակաս արարեալ, ողջ լերուք ի Տէր, և զօրացեալք ի նոյնն, և Շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ ձեզ, և ընդ ձեզայինսն միշտ, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս, և ի յունիսի ... ի լուսակառուց Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ՄԼԸ. *Թուղթ ի Պօլիս առ պարոն Գէորգ Աղայեկովն։*

Ես ընդ օրհնութեանս և սիրոյ, ծանուցումն լիցի քումդ սիրելութեան, զի յառաջագոյն բազմիցս գրեալ եմք տեղւոյս զանցսն և դու լիովին գիտացեալ ես զայնս։

Որպէս զվերջինն ընդ մեր Ստեփաննոս արքեպիսկոպոսին գրեալ առաքեցաք. և ընկալաք զթուղթ այտի յոմանց սիրելեաց ի յապրիլի 16 գրեցեալ. որով և գիտացաք զնորա խաղաղութեամբ յայդր գալն, և Իզմիրու իշխանաց թուղթսն այլով հարազատիւ հասուցանելն առ նոսա, և զայլս այսպիսիս։ Ցորմէ և դու սիրելիդ իմ հարկիւ զամենայն ինչ զհարկաւորսն իմացեալ ես, զորոց կրկին յիշելն աստէն աւելորդ վարկանիմ։ Բայց ընդ այն կարի զարմանամ, որ մինչ ցարդ ի Նմանէ զթուղթ չընկալաք, և չգիտացաք զինչ առնելն այդր, և յինչ բանի վերայ լինելն, և երբ առ մեզ գալն խաղաղութեամբ և ուրախ գրովք։ Նոյնպէս զկնի Ստեփաննոս վարդապետին մերոյ, որ ինչ անցք անցին ընդ մեզ ի սուրբ Աթոռոջս, գրեցաք սիրոյդ, այսինքն է՝ Դանիէլի զմարդ յղելն յԵրևան առ խանն Փիրմանի սուրաթաւն, և ի ձեռն ծանր և անթուելի կաշառաց կամիլն յառաջ գալն և ի տեղի մեր լինելն. և գերապատիւ խանին զանպատուելն զինքն զԴանիէլն, և զթուղթս նորին, և զկաշառն, և զթղթաբերն, և ամօթով զկաշառաբերն առ կաշառատուն դարձուցանելն, և զայլս սոյնպիսիս։ Նման սմին տեղեկացեալ ես ի հարկէ ի յԵրզրում զինչ գործելն նորա, զամբարտաւանութեամբ շրջելն ի հրապարակի, և ի պատճառս սնոտի ախտին իւրոյ զտուգանել տալն զժողովուրդսըն նոյնոյ քաղաքին և անպատիւ ելանելն անտի, և ի Բայազիտ գալն։ Նաև զբեռն, որ եկեալ էր յԷջմիածնոյ յանուն մեր, և զփոխեցալն զրամն ի Կարին՝ յափշտակելն նորա բռնութեամբ ընդ այլ արդեանցն սրբոյ Աթոռոյս. և այլն։ Ուստի թողեալ զայսոսիկ, զայսքանս ծանիր, այժմ ի Բայազիտ նստեալ՝ անդադար ջանայ վնասել զմեզ և զսուրբ Աթոռս մեր, բայց շնորհօքն Քրիստոսի բաղխեալ ընդ սուրբ տեղիս իբրև ընդ անշարժ վէմս, անդրէն ընդ կրունկն դառնայ և ամօթապարտ լինի. զի չարութեամբ իւրով զինքըն առաւել վնասէ, քան զմեզ. քանզի գերապատիւ Շահն և խանն երկրիս գերազանցօրէն ունին զխնամս և զգթութիւնս ի վերայ մեր և ի վերայ սրբոյ Աթոռոյս մերոյ. և միշտ զանազան երդմամբ, և բանիւք, և հրովարտակօք յուսադրեալ՝ նորանոր հաստատեն զիշխանութիւն մեր։ Սոյն օրինակ և մեծ կողմնակալն ռուսաց պարոն Գառլ Ֆէօդրիչ

Կնօրինզն և պարոն Պետր Իվանիչ Կաւալենցկին ունին զխնամարկութիւնս ի վերայ մեր։ Քանզի վասն բանի հայրապետութեան առաքեցին առ խանն երկրիս և առ սուրբ Աթոռս ակնարկութեամբ մեծի կայսերն, զերկու դեսպանս՝ անուն միոյն Եֆիմ Դաւիթիչ մայեօր, և միւսոյն Մելքոն, որ էր թարգման պարոն Կաւալենցկուն, որք եկեալ բազում քննութեամբ վերահասու եղեն անցիցն անցելոց, և տեսին աչօք իւրեանց զամենայն զարդս Աստուածային տանս և զարծաթեղէնս սորին ամբողջ և անպակաս, և գիտացին լաւապէս զանաստուածութիւնս նոցա, որք առանց ամօթոյ և խղճի բարբանջէին զմէնջ թէ՝ արծաթեղէնս է խորտակեալ, և պարսից տուեալ, և այլն։ Եւ նոյն դեսպանքն որպէս տեսին, և դիարդ գիտացին, դնացեալ ըստ այնմ պատմեցին նոցին գերազանցութեանցն։ Եւ նոքա վասն արդարութեան մերոյ և անմեղութեան՝ յարգանաց թղթովք լուսազրեալ զբամբասեցեալս ընդ վայր, խոստացեալ ևս էին ծանուցանել զնոյնս և օգոստափառին, և յուսամ, զի տեառն զործակցութեամբ ի բարին վերջասցի ճշմարտութիւն, և ամօթապարտ լիցին թշնամիքն արդարութեան։ Ահա և նոյին գրոյ զօրինակսն յղեցաք առ պարոն Թամարովն թարգմանել ի Թիֆլիզ վրաց լեզուաւ․ յորմէ և դու ունիս դիտել։ Եւ յետ ամենայն անկարգութեանց՝ ի Բայազիտ նստեալ լի թունօք ապականէ զլսելիս պարզամտաց, և ջանայ ամենայն հնարիւք վատահամբաւել զանուն մեր։ Եւ զորս ինքն գործէ, զայն ևս ի վերայ մեր բարդէ անիրաւաբար․ քանզի ի Բայազիտ եղեալ զաւանդն սրբոյ Աթոռոյս առ Ղուկաս հայրապետաւ, որք էին մեծագին զարդք, և ըստ բաւականին նաղտ դրամք, յափշտակեաց, և յումպէտս վատնեաց․ և ի սպառելն, սկսաւ դթէմեսուկս գրել և առ բռնակալսն տարածանել, և զայն յանցանսն իւր ի վերայ մեր դնել․ իբրու մեք եմք կաշառատուն, և մեք եմք հնարեալ զթէմէսուկսըն յանուն իւրն, և տուեալ այլոց․ որէ անլուր հայհոյութիւն։ Այսոքիւկ չարութեամբք ոչ շատացեալ՝ ի յԻւչքիլիսէ աննշան ընկալաւ զօծումն ի դատապարտութիւն անձին իւրոյ ի մերժեալ և յարտաքս ընկեցեալ իբր զկաթուղիկոսէն Ախթամարայ, որով և կամի զայս Քրիստոսահիմն և զլուսաւորչաշէն սուրբ Աթոռս մեծ քակտել․ և զիւր հայրենական վանքն Քիւրտիստանու կեղծեալ պատճառաւ նորոգել և զարդարել։ Եւ միամիտ իշխանքն մեր ոչ գիտելով զներքին նենգագործութիւնսըն նենգաւորին, փութով զոր ինչ լսեն, հաւատան, և թիւր կամաց նորին հետևին անընտրաբար, և չմտածեն, թէ կատարածն ուր ունի տանիլ զինքեանս։ Բայց դու սիրելիդ իմ հաստատուն կալով ի սէրդ, ի բարեկամութենէ և ի հարազատութենէ անվերջանալի մնասցես․ և որպէս սկսարն, ջանասցես յաւարտն տանել և մի երբէք փքալից ուռուցմանց նոցա երկիցես․ այլ հաստարմատ խարսխեալ զայն, անշարժելի երևեսցիս ի հողմահոսան յարուցմանց նոցա։ Ահա բոլոր իշխանապետացն տեղւոյդ, և իւրաքանչիւր իշխանացն գրեցաք միաանգամ զթուղթս սիրոյ, օրհնութեան, և յորդորանաց, և զգուշացուցաք դարձեալ՝ հեռի կալ ի տնաքակ գործոց, և մտածել և գիտել․ թէ զինչ գործեն և յինչ բանի վերայ են, և փութասցին ի յօգնութիւն և ի ձեռնտուութիւն մեծի տանս, որ մերձ ընդ մերձ կործանի։ Նոյնպէս և առ պարոն Թամարով յատկեղ սիրելին մեր գրեցի զբանս շնորհակալութեան, և յորդորեցի հաստատուն մնալ ի սէր։ Սիրելւոյդ ևս գրեմ, ջանալ դիարդ և իցէ զճշմարտութիւն յառաջացուցանել, զոր խաւարասէրք կամին ծածկել, և զործակցութեամբ Ստեփաննոս վարդապետին մերոյ խաղաղացուցանել զզօսա, սրտագիւրս զմեզ արասջիք։ Եւ օր յառաջ աւետալիր դրովք առ մեզ վերադարձուցեալ, դու ևս զորպիսութիւն քաղաքիդ և ցանկալի առողջութիւնդ մեզ դրեսցես ի միամտութիւն և ի մխիթարութիւն սրտի մերում։ Ողորմութեամբն Աստուծոյ երկիրս է ի խաղաղութեան, միաբանք մեր ի բարեկարգութեան։ Եւ ի Վարդավառ կիւրակէն՝ շնորհիւ սրբոյ Հոգւոյն զկնիքն նորին անջնջելի ի վերայ խաչազգեցիցս զՍուրբ Իւղն օրհնութեան զՄիւռոնն շնորհաձիր սրբազնագործելոց եմք ի զուարճութիւն հոգւոց հաւատացելոց։ Այսպէս գիտացեալ քոյ, և զսիրոյ և զորպիսութեան գիրդ ի մէնջ անպակաս արարեալ, ողջ լեր ի տէր, և զօրացեալ միշտ ի նոյնն, և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ, Ամէն։

Ի յունիսի... 1802 ի սուրբ Էջմիածին։

ՄԼԲ. *Թուղթ առ Թաղայ Դաւիթն։*

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ, ծանուցումն եղիցի սիրելի և հոգևոր որդւոյդ մերում և բարեջան և օգտախոհ բարեկամին սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի մեք թէպէտ և՝ երբեմն յաղագս զանազան զբաղմանց՝ դրով չեմք յայտնեալ զմերս ի սրտէ սէր և օրհնութիւն, սակայն սրտիւ սրտագիտին է յայտնի, հանապազ ունելով զպատուական բարեկամդ իմ ի մտի, օրհնօղ եմ զսիրելիդ և զքոյայինսըն ամենայն մեծապէս շնորհակալութեամբ։ Եւ չունիմ ամենևին ևս զկարծիս զքէն, զճշմարիտ սիրոյդ, և զմեծագոյն հաւատարմութեանցդ, և զկատարեալ բարեկամութենէդ, քանզի դու իմ ես, և չես օտար, և առաւել քան զամենեսին և քան զմերձաւոր արենակիցսն իմ դիտեմ ստուգիւ ցանկաս մերս բարեբախտութեան, և հետևիս ևս խաղաղութեան ժողովրդոցդ և յառաջացման գործոց իմոց, այնզի՝ պատիւն իմ և անարգանքն ևս կատարելապէս իբրև զքոյդ համարեալ՝ ըստ այնմ ջանաս ի պայծառութեան մնալոյ սրբոյ Աթոռոյս և անուան մերոյ։ Զայսոսիկ քաջ գիտեմ, և աներկբայ եմ. և մշտապէս ի դոյնումն անփոփոխելի կալոյդ և մնալոյդ ևս ես ինձէն վկայեմ։ Ուրեմն և քո ի բաց եդեալ զայլ և այլ կարծիսդ եթէ ունիս և ի սէրդ կատարեալ հաստատուն կացցես, և ճանաչելով զսիրտս մեր՝ դու ևս սիրտ քոյ ուղիղ, և զմիտ քո անվրդով պահեալ՝ ի ջատագովութենէդ և ի հաւատարմութենէդ անվերջանալի լիցիս, և ջանասցես ընդ այլ սիրելեաց և մտերմաց մերոց զճշմարտութիւն յառաջացուցանել, և զօրհնութիւնս մեր բազմապատիկ շնորհակալութեամբ վայելել։ Զայլն ունիք ի թղթոց եպիսկոպոսացն մերոց և քնեալ Սոլոմոնին գիտել։ Այսպէս առնելով՝ և զսէրդ և զհաւատարմութիւնդ աննուաղ ունելով, ողջ լեր ի տէր, և զօրացեալ միշտ ի նոյնն, և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ, Ամէն։

Ի յունիսի... 1802 ի սուրբ Էջմիածին։

ՄԼԳ. *Թուղթ ի Թիֆլիզ առ քնեազ Սոլոմոնն, առ պարոն Մելքոնն եւ առ պարոն Յովհաննէսն։*

Եւ ընդ օրհնութեան և սիրոյ նամակիս գիտութիւն լիցի սիրելեացդ իմոց։ Զի զթուղթ ձեր, որք երեքեանդ ի միասին գրեալ էիք ընդ պարոն Աղալօյին՝ ընկալեալ ուրախութեամբ և շնորհակալութեամբ օրհնեցաք զհաւրազատ զմտերիմ որդիսդ իմ, և գիտացեալ զամենայն զքաջութիւնս ձեր և զճշմարտասիրութիւն, սրտի մտօք գոհունակեցաք զձէնջ։ Նման սմին ծանեաք և օրհնեալ ժողովրդոց տեղւոյդ զջերմեռանդ որդիութիւնն, որք ամենեքեան միակամ դիմեալ են ի դուռն նոցին զերազանցութեանց, և զմէնջ ջատագովս եղեալ, և աղաղակաւ բողոքելն թէ՝ որ կայ օծեալ և նստեալ յԱթոռ սուրբ Լուսաւորչին՝ զնա ընդունիմք, և զայլ ոք ոչ կամիմք գիտել։ Նոյնպէս զերկու մահսէր առնելն ձեր զմինն առ կայսրն վասն վերահաստատութեան մերոյ, և զմիւսն առ հիւսիսականսն վասն բանսարկու խռովարար և դիւաշունչ չիք Յովհաննէս կարդապլիզծ սևաւորիդ։ Հանդոյն սմին և փափագանօք ընթեռնուլ տալն զկոնդակսն մեր, և դոցա ընկալնուլն զԱբրահամ վարդապետ որդին մեր զմոմի ժողովարարն, և բառնալն իրաւամբ զանուն չարահամբաւին և զմերն յիշատակելն, և զայլս սոյնպիսիս. զորս ի գիտելն լցաք բերկրութեամբ, և փառս մատուցաք Աստուծոյ, որ արդարութեամբն իւրով ամօթ արար զթշնամիսն, և զճշմարտութիւն իւր յայտնեաց ամենեցուն։ Չէ և այն առանց Աստուծոյ, որ ամենեքեան հասու եղեն չիք Յովհաննիսիդ նենգութեան, գտանելով ի դմա զսրբալոյս Միւռոնն. զոր խաբեբայդ այդ ի փախչիլն բերեալ է ընդ իւրն. որոյ աղագաւ գրեցաք հասարակութեան տեղւոյդ կնքել և յանձնել վարդապետացն մերոց. և զչիք Յովհաննէսն որպէս յառաջ նմանապէս և այժմ բանադրեալ որոշեցաք յամենայն կարգաց և աստիճանաց։ Բայց դուք սիրելիքդ իմ, որպէս սկսայք, նմանապէս և յաւարտ հասուցանել փութասջիք։ Ահա մեծամեծացն ռուսաց, և քահանայից և իշխանաց տեղւոյդ, և զանազան էսնաֆաց և այլ բարեկամաց զթուղթ սիրոյ և օրհնութեան գրեալ յորդո-

րեցաք զամենեսին պինդ կալ ի հարազատ որդիութեան և ի վերայ Աստուածահաճոյ գործոց իւրեանց. զորս ունիք տեսանել։ Մեք վասն խռովութեան երկրիս եկեալ առ խանն խորհիմք վասն ապագայից. ուստի չունելով զխաղաղ ժամանակ, չկարացաք իւրաքանչիւրոցդ ուրոյն ուրոյն օրհնութեան թուղթ գրել. զոր ներելոց էք դիտեմ։ Որպէս և պարոն Ադալօն պատմելոց է ձեզ։ Զայլն յանձնեմ ըզսուրբ Աթոռս և զգործս մեր ձերդ մտերիմ որդիութեանց, և զձեզ տեսան Աստուծոյ։ Զմնացեալն տեղեկանալոց էք ի վարդապետացն մերոց, որոց երկար գրեցաւ։ Ողջ լերուք ի տէր, և զօրացեալք ի նոյնն. և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ ձեզ միշտ. Ամէն։

Ի յունիսի... 1802. ի սուրբ Էջմիածին։

ՄԼԳ. *Թուղթ ի Պօլիս առ Գրիգոր պատրիարքն վասն շնորհաւորութեան։*

Որում և գիտութիւն լիցի. զի մեք աշակերտեալքս երկնաւոր վարդապետին Յիսուսի, որք ենթարկեալ եմք զպարանոցս մեր ընդ նորին քաղցր լծովն, և որք զմի և զնոյն հոգի արբաք յառատաբաշխ ձեռանէ նորին, պարտիմք զնորայն կերպարանել սիրելով զմիմեանս. որով և օրինակ բարի լինել ամենից, և լնուլ զօրէնս, առ որ կատարին ամենայնն։ Արդ՝ որք հեռացեալք են յայսմանէ, և վարին ընդ ընկերն իբրև ընդ թշնամի, և յառնեն ի միմեանց վերայ ատելութեամբ և թշնամութեամբ, և կուտեն զքարինս բամբասանաց և նախատանաց առաւել քան զձօրոյն Նաքովրայ ի գլուխ ոչ թշնամոյ և օտարի, որ և զայն արգելու ի նորոցս օրէնքն հեզոյն և խոնարհին Յիսուսի, այլ ընտանւոյ սիրելւոյ և մանաւանդ եղբօր և առաւել ես ի վերայ երախտաւոր ծնողի, արդեօք որոյ հոգւոյ են աշակերտք և կամ զոր հոգի արբին. զի պարծանք մեր է սէրն՝ ի սուրբ սրտէ և յանկեղծ մտաց, և որ կայ ի նմա, յԱստուած բնակի։ Կարէ ուրեմն եղբայրութիւն ձեր մտածել՝ թէ յըսկզբանէ ցարդ ընդ յարդի անձին ձերոյ զիարդ եմք կենցաղավարեալ, սիրով թէ ատելութեամբ. որպէս բաց ի ձէնջ և սրտագիտին Աստուծոյ է յայտնի, և ինքնին ունիք ես վկայեալ այսմ, և սիրտք ձեր ստղտանելոց են զձեզ։ Եթէ այսպէս, ապա ընդէր յարուցեալ էք ի վերայ իմ իբրև ի վերայ առն թշնամւոյ, և զքարինս ատելութեան ձգէք անխնայաբար գրովք և բանիւք յամենայն ժամ ամենայն ուրեք, և վէմ գայթակղութեան լինիք աշխարհի. զի հարկ է գալ գայթակղութեան, բայց վայ է տէրն յոյր ձեռն լինի։ Եւ զոր արդարութիւն համարիք, և իբրև զառաքինութիւն գործէք, դառնան այնոքիկ ամենայն յաճախութեամբ ի յաւեր և ի վնաս սանս աստուածակերտի զոր քակէք անգիտութեամբ, և զայն ձեզ արդարութիւն մեծ վարկանիք. այնգի՝ պատիւն և անարգանքն իմ առ շնորհատու ծնօղ քոյ վերաբերին. զի մեռանիմ ես ըստ մահկանացուաց, բայց խայտառակութիւն միայ անբառնալի ի սրբոյ Աթոռւս, և ի սորին գահակալաց, և գայթակղութիւն ժողովրդոցն անվերջանալի։ Եւ խղճահարիք թէպէտ, բայց անազան, և այն անօգուտ, որպէս որք արարինն՝ ստրջացան և ոչինչ չահեցան. թէև՝ վէրքն անցանիցեն, այլ սպիքն ոչ երբէք։ Ի միտ առ ուշի ուշով զոր դրեմս, և զվախճանն գործոյդ կալ քեզ նպատակ, զի վախճանն է պսակաւորիչ սկզբնաւորելոց։ Եւ ծանիր ստուգիւ, զի ունաչնանան ներկայականքն և նորանոր նորոգին և իբրև յանջրելի արձանըս մշտնջենաւորս տպաւորին գործեցեալքն։ Նաև՝ ամենայնի չափաւորն է գովելի. զի ծայրքն խոտորեցուցանեն, իսկ միջինն հանէ ի կեանս, ուրեմն կարի առաւելութեամբ է զրպարտութիւնքն այլոց զմէնջ և յարուցումն ձեր ատելութեամբ ի վերայ. քանզի չեմք այնպէս և այնքան, որպէս կարծէքդ, և որքան թշնամանէքդ. զի ընդ հարազատ միաբանսն սրբոյ դահիս, լեալ եմ հարազատ. ընդ աշխատաւորսն՝ աշխատաւոր. ընդ յարգի կարգակիցս իմ և ընդ ձեզ թէ և ոչ աւելի, գոնեայ համապատիւ։ Ուրեմն անիրաւութիւն է և հարստահարութիւն ձերդ արարք։ Զի եթէ մի և նոյն հոգի բաժանէ զշնորհս որպէս և կամի, և զանարգ ձկնորսն կոչէ ի քարոզութիւն, և ոչ խորշի յանարժանից, որ և զչետինս այգեգործաց՝ հաւասարորդս արար առաջնոց, և զբազումս ի փառս և յիշխանութիւնս բարձրացոյց և բարձրացուցանէ միշտ ոչ ըստ արժա-

նաւորութեանց ընդունողացն, այլ ըստ հայրախնամ իւրն բարեգթութեան, որ և զմերս այս այսպէս տնօրինեալ արար և կատարեաց ապա զմեզ Աստուածամարտք գտանիք, և ի բարձունս նետաձգէք. զի եթէ հաւատամք՝ թէ տերև մի ոչ անկանի ի ծառոց թարց վերին ակնարկութեան, զիարդ ապա այս գործ մեծ կատարի առանց նորին նախասահմանութեան, և այն ընդհանրական ժողովով։ Եւ ես՝ եթէ մեք ոչ նախանձիմք ընդ փառս այլոց, որպէս և ոչ ընդ փառս և իշխանութիւնս ձեր, այլ մանաւանդ ուրախանամք ես, և հրճուիմք, և ցանկամք յաւէտ գերագոյն բարեբախտութեանց ձերոց և այլոց ևս, հեմ արդեօք դուք սիրելիքդ իմ և հոգեկիցքդ գժտմնիք և խռովիք ընդ գործս տեառն Աստուծոյ, և ընդդէմ բարի կամաց նորին հակաղինիք, և յամենայն զօրութենէ ջանայք և դուն գործէք զմեզ վատահամբաւել, զորս և արդեամբ երևեցուցանէք. զոր թողում ի բարի կամս և ի խղճմտանս յատկեղ սիրելւոյդ իմոյ։ Եւ արդ՝ արժան էր արդարև, և անչուշտ պարտաւորութիւն ինձ մատչել յառաջագոյն շնորհաւորական բանիւք առ ձերդ սիրելութիւն, բայց զանազան հովք և մանաւանդ ազդի ազդի օտարաձայն լուրք հասեալք առ մեզ, կասեցուցին ցարդ։ Այժմ ի բաց եղեալ զխռուժանն, և մոռացեալ զանցեալ անցսն, որք գործեցան կամայ և ակամայ՝ այսու սիբալքական գրով շնորհաւորեմ զպատրիարդական պատիւդ և իշխանութիւնդ այդ՝ զոր պարգեւեաց հեզ նոյն առատաբաշխ ձեռն բարձրելոյն, և հայցեմ ի նմանէ պահել զպատուական եղբայրութիւն ձեր խաղաղ և անվրդով կենօք ի վայելել ամաց երկարաձգութեամբ զայդ ի շինութիւն եկեղեցեաց մերոց. և ի ձեռն խաղաղասէր եղբօրդ մերոյ՝ խաղաղացուսցէ տէր զխռովութիւն ազգի մերոյ, և ի միաբանական սէր սիրով բաղաղանեսցէ, և արասցէ մի հօտ միահովիւ ի փառս ամենամեծ անուան իւրոյ և ի պարծանս Ցաբեթական տոհմիս։ Խնդրի և ի ձերդ եղբայրութենէ, բառնալ զչարն ի միջոյ, և սիրովն Քրիստոսի զարդարիլ, և զհետ խաղաղութեան երթալ, և այնու գանձել ձեզ զանուն բարի աստ, և զկեանս անմահականս ի հանդերձեալն ժառանգելով զայն, զոր պարգևէ տէրն ամենայն խաղաղարարաց, ողջ լերուք։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուաջս, և ի յունիսի... ի սուրբ Էջմիածին ի մայր Աթոռս ամենայն հայոց։

Իսկ Ստեփաննոս արքեպիսկոպոսի, զոր առաքեցաք այդր սակս խաղաղութեան և գուղիզն ծանուցման, որոյ զայստեանն ես ժամ ի ժամ սպասեմք, յանձնեմ յատկապէս ի խնամս և ի մարդասիրութիւնս ձեր՝ ընդունել սիրով ըստ բարի բարուցդ և գործոյն օժանդակ լինել, և ուղղասիրութեամբդ զբարին յառաջացուցանել՝ խաղաղացուցանելով դհասարակութիւն քաղաքիդ ի շինութիւն և ի վերանորոգութիւն Աստուածաէջ սուրբ դահիս և հայրապետական իշխանութեանս. և ջանասջիք աւետալիր լրովք փութապէս առ մեզ վերադարձուցանել։

ՄԼԵ. *Թուղթ ի Հաշտարխան առ պարոն Յովհաննէս Հայրապետեանն։*

Եւ ընդ օրհնառաք անդրանիկ նամակիս՝ գիտութիւն լիցի սիրելւոյդ մերում, և բարեխոհ և օգտակամ որդւոյդ սրբոյ գահիս Էջմիածնի։ Զի մինչ տնօրինմամբն Աստուծոյ կոչեցեալ եղաք յայս պատիւ և շնորհ Առաքելական, յորդորանօք և ընտրութեամբ միաբանից սուրբ Աթոռոյս, և ժողովրդոցն երկրիս և շրջակայ նահանգաց սորին, և ընկալաք շնորհիւ սուրբ Հոգւոյն զօծումն հայրապետական, և կացուցեալ եղաք կաթուղիկոս ի վերայ տանս Հայոց, և ի վերայ ազգիս Յաբեթեան, յայնժամ ըստ պարտաւորութեան մերոյ, գրեցաք զօրհնութեան կոնդակս որպէս յաշխարհ ամենայն առ ազդ մեր լուսաւորչաւորօն, նոյնպէս և յօրհնեալ քաղաքդ առ ձերդ հասարակութիւն. յորմէ ի հարկէ գիտացեալ էք զայնոսիկ զամենայն, զորս անդրէն ոչ վերակրկնեմք։ Նոյնպէս լուեալ էք և գիտէք յաւապէս զթիւր արարմունս թիւրելոցն ի յուղիդ շաւղաց, որք նախանձու լցեալ զանազան զրպարտութեամբ վատահամբաւեցին անիրաւաբար զանուն մեր, և զայթակղեցուցին զմիամիտսն ընդ հայրապետութիւն մեր, զորս և մինչև ի յունկս նորին կայսերական մեծութեան հասուցին, և նախատինք արարին ըզ-

մեզ և զազգս մեր, և սուրբ կրօնս եկեղեցեաց մերոց առաջի ամենայն ազգաց. զորս թողում զի լարդարադատէն ընկալցին զարժանաւոր տրիտուրն։ Եւ արդ՝ մեք ղիտացեալ ի գրուածոց դերազնիւ աղայ Սիմէօն Սէրգէյիչին և Թաղայ պարոն Դաւթին զսիրելւոյդ մերոյ զհարազատութիւն, և զջերմեռանդ որդիութիւն և յամենայնի ջատագովութիւն, զորս ունիս դէպ առ Աստուածակերտ սուրբ Աթոռըս այս, և առ մերս հողևոր հայրութիւն, և յուցանես ես գործով և արդեամբք, մեծապէս շնորհակալեալ օրհնեցաք զհոգևոր որդիդ մեր Աստուածային և երկնաւոր օրհնութեամբ առաջի Քրիստոսահիմն սուրբ Տաճարիս. զոր տէր օրհնեսցէ և զօրացուսցէ և յամենայն դիպուածոց և պատահարաց փրկեալ ազատեսցէ, և երկար և խաղաղ կենօք պահեսցէ հանդերձ բոլոր քոյայնովքն։ Պատուիրեմ ուրեմն՝ լատկեղ սիրելւոյդ մերում, ի դոյնն, յորում կաս՝ յարամնալ, և որքան զօր յաւելուլ զայդ, և զայլս ես ի դոյնն յորդորել, զմերձաւորսն բանիւք, և զհեռաւոր բարեկամսդ գրովք, որպէս զի համաձայն միաբանութեամբ կարողասջիք բառնալ զչարն և զխռովարարն բանսարկու ի միջոյ, և զխաղաղութիւն և զսէր և զմիութիւն սերմանել յամենեսին։ Քանզի ուր խաղաղութիւն է, անդ և ամենայն բարեաց լիութիւն, և ուրանօր խռովութիւն, անդանօր և ամենայն անկարգութիւն և բարեաց նուազութիւն։ Եւ Աստուած, որ սիրողն է միաբանութեան և հաստատիչ խաղաղութեան, զմիաբանութիւնս ձեր սիրով պնդեալ խաղաղացուսցէ, և բարեպաշտութեամբն իւրով զերտութիւն սիրոյ ժողովրդոցդ՝ ջերմացուսցեալ հալեսցէ, և ի վերայ սրբոյ Աթոռոյս շնորհատու ծնողիս ձերոյ, և ի վերայ մերս հողևոր հայրութեան անդրէն հաստատեսցէ։ Յիրաւի եթէ այլեւ երկարեսցի խռովութիւն ժողովրդոցդ, քալքաի իսպառ սա որ տունս այս Լուսաւորչաշէն՝ ի պատճառս ախտամոլ սնաւորաց, և լինելոց է լետոյ խղճահարութիւն ամենիցդ. ահա յառաջագոյն գրեմ սիրելեացդ, զի օր մի յառաջ յօգնութիւն խղջալի հօղւոյ տանս ձերոյ փութասջիք, և մեզ մշտացելոցս կարեկից և ցաւակից լինիջիք։ Զայլն ունիք գիտել ի սիրելեացն մերոց դերազնիւ աղայ Սիմէօն Սէրգէյիչէն և ի Թաղայ պարոն Դաւթէն։ Այսպէս առնելով քոյ, և զսիրոյ և զմխիթարութեան գիրդ ի մէնջ աննուազ ունելով, ողջ լեր ի տէր և զօրացեալ միշտ ի նոյնն, և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ միշտ, Ամէն։

Ի յունիսի... 1802 ի սուրբ Էջմիածին։

ՄԼԶ. *Թուղթ ի Պոլիս առ Աղնաւուր Մահտեսի Գասպարն, եւ Սուրէն խան Մուրադն։*

Որոց եգէտութիւն լիցի, զի մինչև ցայժմ զբաղում ինչ գրեցաք ձեզ վասն զանազան անցից, որք գործեցան աստ, և այլապէս առաջի ձեր պատմեցան, և ընդդէմ զրաբանողաց զմէնջ, որք զորս ինքեանք այարին և գործեցին հակառակ Աստուծոյ և օրինաց մերոց, զայն ի վերայ մեր եդին, և դուք հաւատացիք. և ի պատճառս խռովարար և աղմկասէր արանց այսքան և այսչափ խռովութիւնք ծագեցան ընդ վայր և ի սնոտիս, և մեծագոյն վնասուց և դրամավատնութեանց դուռն բացաւ։ Ընդ մեզ և միաբանք և երկրացիք դրեալ ծանօ ցին ստուգութեամբ քանիցս և քանիցս, յորոց թէ ոչ բոլորն, հարկիւ շատն հասեալք են առ ձեզ. և դուք գիտացեալ զգրուածս զմիաբանիցն, և մեր։ Արդ՝ ընդէ՞ր ապա բանք թշնամեացն Աստուծոյ և նախանձոտաց յառաջ ընթանան, և ի ձեզ զտեղի գտանեն, իսկ մերն ոչ։ Զի եթէ առաջի անօրինաց փաշայից, և խանից, և այլոց՝ չկարաց զստութիւնս իւր յառաջացուցանել Դանիէլն, և ի ձեռն անգրեկի մեծամեծ կաշառաց զմիտս նոցին խախտել, և զճշմարտութիւն ծածկել, զարմանամ թէ որպէս առաջի ջերմեռանդ հաւատաւորացդ զինքն և զբան իւր ճշմարիտ վարկուցեալ զսուտն իւր և զստոյգ ինչ ետ ձեզ ընկալնուլ, և թիւրեալ մտօք թիւրեաց զձեզ։ Արդ եթէ իբրու ճշմարտասէրք և վրէժխնդիր Աստուածային օրինացն, բարեկարգել կամիք զսուրբ տունս այս, և ուղղութեան հետևել, և զխանգարիչն կարգաց և օրինաց մերոց՝ ի բաց հալածել, այգմ և ես ախորժաբար հետևիմ։ Յայտնի է ձեզ, որ մեք լրացեալ եպիսկոպոսօք յորդորանօք Աթոռայնոցս, երկրացւոց և շրջակայից սորին, ընկա-

լաք զօծումն ըստ կանոնի դուշակութեան ձերոյ և բարեհաճութեննէն։ Իսկ Դանիէլ վարդապետն ի Բայազիտ նստեալ լցոյց զաշխարհըս ստութեամբ, և զաւանդսն և զկնիքսն սըրբոյ Աթոռոյս, որք էին ի Բայազիտ և ի Կարին, վատնեաց յումպէտս վասն սնոտի ախտին և ձկամանն, և ի սպառելն՝ սկսաւ զթէմէսուկս գրել և առ բանակալսն տարածանել, զորս եթէ կամիք, կարէք դիւրաւ գտանել և զայն յանցանսն ես ի վերայ մեր դնէ անխիղճըն այն, իբրու մեք յանուն նորին ի ցեմք զթէմէսուկս գրեալ և այոր անդր ցրուեալ, և այլն։ Եւ ի վերայ այնր ընկալաւ զապօրինաւոր զօծումն ի յանանչան վանքն Իւչքիլիսէն ի մերձեալ իբր կաթուղիկոսէ Ախթամարայ, և զինեցաւ ընդդէմ սրբոյ գահիս Հիսուսեան, և զանփոփոխելի հայրապետութիւն ազգիս ջանալ ընդ փոփոխութեամբ արկանել և Աստուածաչէն պալծառ սուրբ տունս խաթարել, և զիւր հայրենական աղքատ և աւեր վանքն Իւչքիլիսէի շինել։ Եւ զԱթոռն փոխագրել անդ, և բոլորովիմբ յամալի թողուլ, և ցան և ցիր առնել զմիաբանսն։ Արդ եթէ ճշմարտասէր էք և արդարադատ՝ քննեցէք զխանգարիչն օրինաց մերոց, և զվատնիչն արդեանց և զարդուց Տանս Աստուծոյ, եւ ով է խռովարարն, բարձէք ի միջոյ։ Ուրեմն անիրաւութիւն մեծ է խարց քննութեան և խսկութեան բանին վերահասութեան զկարծիս իբրև զպատգամ երկնային համարել, և փոյթ ընդ փոյթ զոր ինչ լսել՝ հաւատալ, և վաղվաղակի վճռել, որոց զեռ չէ խելամուտ մեծամեծ տնաքակութեանց և ծանր վնասուց անգիտութեամբ պատճառ լինել։ Քանզի՝ խռովութիւն ձեր և անմիաբանութիւն ածէ ցվնասս և զաւերութիւնս յաճախութեամբ ի վերայ սրբոյ Տանս և ի վերայ մեր, և վեր ի վայր առնէ զխաղաղութիւն և զբարեձևութիւն մեր, և առաջի ամենեցուն ծաղր և ծանակ կացուցանէ։ Ուստի՝ ցանկամք ձերդ խաղաղութեան և աղօթեմք վասն զգաստութեան թմրելոցն, որք ոչ սորջացեալ լան ի վերայ գործոց իւրեանց, և ոչ ողբան, և ոչ կոծեն զանձինս, որք լինին պատճառ քայքայման Աստուածաչէն և Լուսաւորչակերտ մեծի Աթոռոյս Էջմիածնի։ Ուստի գրեմ ձեզ պարզաբար առանց ստութեան, և դուք ստուգիւ հաւատացէք, զի խսպառ աւիրելոց էք զտունս այս հաւատալով բանից լաշաղկոտաց և թշնամեացն արդարութեան և յետոյ թէև կամիցիք շինել, ամենեւին ոչ կարէք և մեծապէս խղճահարիք ես, և սարջանայք կարի յոյժ ընդ գործս ձեր, բայց անօգուտ։ Քանզի անլագ Պարսիկ են շուրջ զմեօք, ոչ զիս թողուն հրաժարել, և ոչ զնա. այլ ի ձեռն նորա զիս ահացուցեալ ծծեն զվերջին թոշակն մեր, և ի ձեռն իմ զնա սարսեցուցեալ կթեն զնորայն։ Իսկ արդիւնքն, որք առեալ լինին թէ ի մէնջ, և թէ ի նմանէ, ազգիգ է և Աթոռոյս։ Գիտէ տէր ճշմարտութեամբ է, զոր ինչ գրեմս, և առանց խտրդախանաց, և ձերդ սիրտք ես կարեն վկայել այսմ։ Մեք ի բնէ անտի յաջողութեան Դանիէլ վարդապետին եմք ցանկացեալ, և ոչինչ կերպիւ զթշնամութիւն չունիմք արարեալ. քանզի՝ ի սըզմի ուին զոր ինչ գործեաց զանպատշաճս, և անպատիժ ել, մինթէ մեք էաք պատճառն։ Ցետոյ մինչ յաղագս զանազան չփոթից չողու յաքսորս և յերկուց Աթոռոց ես զրկեցաւ, յայտ է թէ՝ անպարտ էաք մեք։ Եւ հուսկ ամենայնի, յորժամ ի Կարին արար զանվայելս, և տուղանեալ զժողովուրդսն մերժեցաւ անպատիւ, և ոչ յայնժամ մեք էաք առիթն։ Նոյնպէս և ոչ զնա մեք սպանաք։ Ուրեմն Աստուածային կամօքն էր, նորա ի Թիֆլիզ մեռանելն, և Դանիէլի ի Թօխաթ յամենալն, և իմ ի սուրբ Աթոռոջս ներկայ գտանիլն, և այլն։ Եւ թէ այսպէս, զմէ ապա նախանձէ ընդ փառս մեր, և ընդդէմ Աստուածային բարի կամացն հակառակի, զի Աստուած է, որ յաջողէ զամենայն յամենայնի և տայ իւրաքանչիւրոցն որպէս և կամի, որ և առանց նորա բարերար ակնարկութեան՝ ոչ ոք կարէ առնուլ յանձնէ և ոչինչ։ Ապաքէն և դուք բարեպաշտօն խոհականքդ պարտիք և երբեմն թոյլ տալ, և բարի կամաց Տեառն Աստուծոյ զկամս ձեր ենթարկել և հետևիլ, զոր ինչ նայն զործէ քանզի մերս այս կոչումն, եթէ ի մարդկանէ է, քակտի, և ես յօժարագոյն հնազանդիմ. իսկ եթէ յԱստուծոյ է, ոչ կարէք խախտել, գուցէ և աստուածամարտք գտանիջիք։ Ուստի՝ թողեալ զխռովութիւն, յորում բնակի բանսարկուն, զաստուած և զխաղաղութիւն նորին ընկալարուք, և բաւականասջիք արարեցելովք, զի մի յետոյ և մեր չկտրելով այլ ես տանիլ, համեմատ չարժմանց ձերոց ընդ հակառակն չարժեալ,

տնկցի ցրտութիւն ինչ սիրոյ ընդ մէջ, և խզեալ զկապ բարեկամութեան, ընդ որով տակաւին կամ պարաւանդեալ՝ վիրաւորութիւն ինչ հոգւոյ և ատելութիւն յառաջանալ յէ. յորմէ ցարդ զգուշացեալ՝ լռութեամբ և եթ հեղձանիմ, և որպէս յառաջագոյն զրեալ եմ, սոյնպէս և այժմոյս զրեմ հաւաստեաւ. զի ես վստահացեալ առաւել ի բանս և ի բարեհաճութիւնս սիրելեացդ, և յաւէտ ի յընտրութիւնս քոյ գերազնիւ իշխան Դասպար Ամիրայ՝ յանձն առի զայս տարժանելի պաշտօն, և կորուսի զվայելչութիւն իմ և զհանգստութիւն. զորս ունէի յառաջ քան զայս. քանզի մինչ յայդր էի, դու կամէիր առաւել զմիայն Դանիէլին առ ձեզ, և զմեր յայս պաշտօն բարձրանալն, որպէս և քանիցս ի մէջ եկեղեցւոյ և այլուր զանազան նշմարմամբ և ակնարկութեամբ յայտնեալ զներքին զիտմունս քոյ խրախուսէիր այնոքիւք յայս զմեզ և ես քան զեւ հաստատէիր զընտրութիւն քոյ. և զարդիս ես զեռ այնու յուսով կամ աներկրայ, և սպասեմ խաղաղութեան ձերոյ և հանդարտութեան, և մանաւանդ ուրախական համբաւոց և պատասխանւոյն. զի ի խաղաղութեան կալով ուրախասցուք զԱստուած ի գործս մեր և ի բանս, և շինութեան ազգին և Աթոռոյս լիցուք պատճառ ի փառս անուան Նորա։ Այսպէս գիտացեալ ձեր ողջ լերուք ի տէր, և զօրացեալք նովաւ, և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ ձեզ. Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս, և ի յունիսի... ի մայր Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ՄԼԵ. *Թուղթ ի Պոլիս, առ Շնորհ Մկրտիչ ամիրայի որդիսն վասն խաղաղութեան եւ համոզելոյ զնոսա ի սէր եւ ի հանդարտութիւն:*

Եւ ընդ օրհնութեանս և սիրոյ նամակիս՝ գիտութիւն լիցի սիրելի որդւոյդ մերում, և օգտասէր զաւակիդ սրբոյ Գահիս Միածնաիջի. Զի յառաջ քան զայս՝ բազմիցս գրեցաք թէ՛ քումդ սիրելութեան, և թէ հասարակութեան քաղաքիդ զսրբոյ Աթոռոյս, և զմեր կոչման որպիսութիւնսն, ընդ մեզ և բոլոր միաբանք սուրբ Աթոռոյս, և ժողովուրդք երկրիս, և այլ շրջակայ քաղաքաց, գրեցին բազմակնիք ամենիցդ։ Եւ ձեր գիտացեալ զորպիսաբար կոչիլն մեր յայս շնորհ, ուրախակցեալ բազում յօժարութեամբ հաճեալ էիք ընդ այս գործ միաբանից, և հասարակական մահսերաւ և յատկական գրովք զնոյնն վերահաստատեալ։ Ապա՝ մինչ թշնամիք ոմանք և աղմկասէրք, որպէս Դանիէլն և նորապիսիք յցին զաշխարհս ստութեամբ և զանազան առասպելաբանութեամբ զայթակղեցուցին զմաքուր լսելիս պարզամտաց, և ընդ վայր անհիմն աղճատանօք ջանացին վատահամբաւել զանուն մեր, որպէս թէ զարծաթեղէնս ինչ եմք խորտակեալ, և բռնութեամբ զայս Աթոռ ընկալեալ, և այլն, որ անաստուածութիւն մեծ է և ընդդէմ ճշմարտութեան։ Այդպիսի բանիւք ի յինքն կամի կորզել զայս պատիւ, զոր մեք յորդորանօք և համահաճութեամբ բազմաց եմք ընկալեալ, և մանաւանդ զթուլամորթ անձինս որսալ, և յիւր կողմն ձգել, և նոքօք զսնոտի փառս ընկալնուլ, և անհոգ ըղձիցն հասանիլ, յայտնի է ամենեցուն, որ մեք ես բազմիցս ջանացաք յաջողութեան Դանիէլին, որպէս և վասն նորա կաթուղիկոսութեան իբրև զհասարակ ոք եկաք այդր, և կամեցաք զնա ինքն այսմ պաշտօնի վիճակել։ Բայց մինչ Աստուած չկամեցաւ, և մերժեաց յերկուց աթոռոց ես, և թոյլ ետ երթալ յաքսորս, մեք զինչ արասցուք։ Զինչ և իցէ իբրև տեսաք՝ թէ որոմն չար սերմանեալ ի նոցունց՝ ունի ապականել զընտիր ցորեանսն, զպարզամիտ օրհնեալ ժողովուրդսն մեր, յայնժամ մեւս անգամ բազմակնիք վկայութեամբ հաստատեալ զառաջին գրուածսն մեր, ցուցաք ըզճշմարիտն, և յայտնի զնենգաւորաց թշնամութիւնսն կացուցաք առաջի, և յորդորեցաք թախանձանօք ես, ընդունայն համարել զայնպիսի բանս, և զնոսա ես թշնամի ճանաչել Աստուծոյ և սրբոյ Աթոռոյս, որք զայսպիսիսն բարբանջեն և կամ գրեն։ Նոյնպէս խնդրեցաք ես՝ ի սէր և ի բարեկամութեան հաստատուն կալ. և սրբոյ Աթոռոյս շինութեան, և հայրապետական պարկեշտ անուանն պահպանող լինել, որպէս զի՝ առ հասարակ ի խաղաղութեան կալով, և զմայր Աթոռս ես և զմիաբանսն ի պայծառութեան և ի բարեկար-

դութեան ունելով, հովիւս և հովուեցեալքդ
միապէս զվարձս ի յերկնաւոր վարձատրէն
ընկալնուաք։ Բայց օրհնեալքն տեղւոյդ՝ փո-
խանակ սաստելոյ գլխաւորարն և առնելոյ
զչփոթալից բանս նոցին, ընկալան սիրով։
Եւ զբանս մեր զայսքան բազմութեան, որպէս
երևի, ոչ առին ի միտ։ Նոյնպէս փոխան քըն-
նութեամբ ճշմարտութեան հասու լինելոյ, և
մեզ ի զուր բամբասելոյս օգնականնելոյ, և
չքեղութեան Աստուածային Տանս ցանկանալոյ
թարց իրաւանց յանդէտս ի մէնջ վիրաւո-
րեալ լքեալ թողեալ են զսուրբ Տունս այս,
որով և գործք սորին ի յերկու ամս ահա յե-
րեսի վերայ խափան մնացեալք, և դեռ ոչ
գիտեն զինչ գործեն, և ուր ունի եղերիլ
խռովութիւն իւրեանց։ Քանզի՝ օր քան զօր
աւերի բոլորովիմբ սուրբ Տունս, զոր ոչ իմա-
նան, և ի մէջ աշխարհի առաջի ամենայն ա-
զանց նախատինք եղաք, զոր ոչ զգան, այլ
մանաւանդ յաւելուն զայնս, զորս իբրև տե-
սաք, և առաջիկայ մեծամեծ վնասսն ես իբ-
րև զիտացաք, որք գալոց են ստուգապէս ի
վերայ քրիստոսակերպ մեծի Տանս, հարկ
համարեալ առաքեցաք երրորդ անգամ զհա-
ւատարիմն մեր զՍտեփաննոս արքեպիսկոպոսն
բազում թղթովք ի մեծդ Պոլիս առ օրհնեալսդ
ի ծանուցանել զաստապանս մեր և զսրբոյ Ա-
թոռոյս, և առ ի զճշմարտութիւն ձեզ յայտ-
նել, զոր արք խաւարասէրք ծածկեալ են, և
զխռովութիւն քաղաքիդ հանդարտեալ՝ վերա-
դառնալ առ մեզ աւետալիր և խաղաղական
գրովք սիրելեացդ իմոց։ Իսկ որ և յարգի
անձին ձերոյ գրեցաք լիապէս զհարկաւորսն.
զորս տեղեկացեալ ես հարկիւ ցարդ, և զա
մենայն ցաւս մեր իմացեալ. քանզի՝ ի յապ-
րիլի 16 նոյն Ստեփաննոս վարդապետ որ
զին մեր դրեալ էր այտի մեզ զիւր զեկն այգր
ի զատկի օրն, և զգրեանսն իւրաքանչիւրոցդ
տալն։ Նմանապէս գրեցաք յառաջագոյն սի-
րելւոյդ իմոյ և զթուղթ մխիթարութեան վա-
սըն ի Քրիստոս հանգուցեալ գերապատիւ հօր
քոյ Քրիստոսասիրի և բարեպաշտի․ քանզի՝ ի
լսելն զպակասելն այնպիսւոյ առն բարեհամ-
բաւի և խոհականի ի մեծ քաղաքիդ յազգէս
և ի մէնջ տրտմեցաք յոյժ յոյժ, և ցաւեցաք
մեծապէս․ զի ուշիմութիւն նորա էր, որով
քաղաքդ այդ ցայս վայր բարեկարգեալ կայր,
և սուրբ Աթոռս մեր բոլոր վանորէիւք և հոգե-
ւորական դասուք ի խաղաղութեան և ի բա-
րեկարգութեան մնայր։ Առաւել ցաւ այն ե-
ղև մեզ, զի յայսպիսի դառն և թշուառ ժա-
մանակիս պատահեցաւ մահ նորին․ զի յոյժ
հարկաւոր էր յայսպիսի անգլխութեան ժամու
զերավսեմ կառավարութիւն նորին։ Քանզի
յսկզբանց անտի ազգ մեր անմիաբանու-
թեամբն իւրեանց կորուսեալ են զմեծամեծս,
և այժմ ի նոյնութեան կան և Աստուած վասն
տարաբախտութեան մերոյ բարձեալ է զծերն
և զխորհրդականն ի միջոյ։ Զի՞նչ պարտիմք
առնել․ եղեցի կամք արարչին օրհնեալ։ Ու-
րեմն լուսաւորեսցէ նոյն տէրն կենդանեաց
և մեռելոց զբարեացապարտ հոգի՝ հոգ-
ւոյս ցանկալւոյ հօր քոյ բարեգործի, և ան-
մահական փառօք զարդարեսցէ․ և զմնա-
ցեալ կեանս նորին՝ ի յըղձալի կեանս զե-
րագնուոյդ իմոյ յաւելցէ, և խաղաղական
կենօք պահեսցէ զքեզ հանդերձ ազնուա-
զարմ եղբարբք քովք օրհնեցելովք, և բնաւ
ձերայնովքն ազնուականօք։ Նաև՝ գրեալ
ես եմք կանխաւ երկիցս և երիցս զպա-
տասխանի քոյդ շնորհաւորական բանից առ
մեզ գրեցելոց, և չգիտեմ տակաւին թէ արդ-
եօք այսօքիկ թուղթք յիշատակեալք ի մէնջ
ի վերդ, ամբողջապէս հասեալք են առ սիրե-
լիդ իմ, թէ ի ձեռս նախանձոտաց և ամբարշ-
տաց անկեալք անհետացեալք ըստ այլ թղ-
թոց մերոց գրեցելոց առ այլս։ Եւ արդ այս
է իմ ծանուցանելին այժմ սիրելւոյդ․ զի ըստ ո-
րում մարդ մահկանացու՝ երջանիկ հայրն քոյ
և այլ նախնիք ձեր, հանգեան ի տէր, այսօր
ի տեղի նոցա դուք էք․ և պարտիք զհետ
ընթացից և զգործոց հարց ձերոց երթալ, և
ըստ չաւղաց նոցին ընթանալ՝ խոկալով ըզ-
շինութենէ Աթոռոյս և զխաղաղութենէ ազ-
գին։ Քանզի՝ աշխարհս միշտ յղի է, և հանա-
պազ զպէսպէս նորանորս ծնանի, որք մեզ
սքանչելի երևին, և անծանօթ, բայց ոչ են
զարմանալիք, զի նոր ինչ ոչ գոյ յաշխարհի,
այլ նոյնն է, որ ինչ եղեալ է յառաջ քան
զմեզ։ Արդ այսպիսի խռովութիւնք և տարա-
ձայնութիւնք կանխաւ առ նախնեօք մերովք
եղեալ են յաճախութեամբ, այլ սակայն՝ արք
ուշիմք գոլով՝ շիջուցեալ են զկայծն, և չեն
թողեալ բորբոքիլ, և մանաւանդ դճշմարիտն
ի ստոյն որոշեալ, զգուշութեամբ ընթացեալ
են ի գործս իւրեանց։ Ուրեմն և դու բարե-

չառաւիղդ օրհնեալ ի յապականիչ բանից ապականելեաց, և բնաւին զհաւատ չընծայեալ. այլ իբրև զբաշջազանս ցնորեալ և խելազար մտաց համարեալ արտաքս ընկենուլ։ Եւ ապա՝ քուով խաղաղասիրութեամբն և ազնուաբարոյութեամբն հանդարտեցուցեալ զխռովութիւն քաղաքիդ և հասարակութեան ձերոյ՝ յօգնութիւն խղճալի և վշտապատ Քրիստոսահիմն լուսոյ մօրս քո՝ սուրբ տեղւոյս հրաշակերտի փութապէս ժամանել՝ որ մերձ ընդ մերձ բոլորովիմբ կործանի, քայքայի, և յաւեր դառնալ, եթէ այլ ևս այսպէս մնասցէ, և խռովութիւն ձեր երկարեսցի։ Քանզի կարօտ է ամենայն հարկաւորաց, մուտքն խափանեալ, ելքն անթուելի, և դրացի թշնամիքն անյագ, և մեծամեծ դրունք անտանելի կաշառաց ես նորապէս բացեալք։ Զի Գանիէլն ի Բայազիտ նստեալ զանգրելի կաշառս խոստանայ բռնակալաց՝ զի զայս Աթոռ յափշտակեսցէ և ինքն ի տեղի մեր նստցի։ Ի հար կէ թէ ինքն եկեալ նստցի՝ զայնքան կաշառն պարտի տալ, թէ մեք լիցուք հարկիւ ի մէնջ պահանջելոց ենւ. Ահա յայսպիսի ցաւոց միջի կամք, և ողբամք ի վերայ անզգաստիցն, և լամք ի վերայ մեծի Տանս, որ ի ձեռս ամբարշտաց քակտի, և դուք հեռի գոլով ոչ իմանայք, և գրութեան մերում ոչ լսէք, և զզարման ոչ մատուցանէք մեզ և ծնողիս ձերոյ։ Ահա ռուսաց մեծամեծքն ի Թիֆլիզու զդեսպանս առաքեալ ի սուրբ Աթոռս, վերահասու եղեն անցիցն անցելոց, և գիտացեալ զնախանձու բանս նախանձոտաց, և զարդարութիւն, զոր ունիմք ի ձեռին, սկսան յուսադրել զմեզ, և խոստացեալ են, զնոյնն և առ կայսրն մեծ դրել։ Աւստի և դուք եթէ տակաւին ունիք զկարծիս զմէնջ և զարծաթեղինացն սուրբ Աթոռոյս, և անհաւատալի երևին ձեզ բանք մեր և գրուածք, կարէք զհաւատարիմ անձինս յղել. և քննութեամբ զճշմարիտն ի ստոյն որոշել. որպէս երկարապէս դրեալ եմք զսոյնս ընդ վերոյիշեալ Ստեփաննոս վարդապետին մերոյ. զոր յանձնեմ ի սէր սիրելւոյդ՝ ըստ ամենայնի ամենայն կերպիւ օգնել նմա, և գործոյն զկատարումն տուեալ՝ աւետալիր համբաւովք և ուրախական գրովդ առ մեզ վերադարձուցանել։ Որպէս գիտացեալ քոյ, և զսիրոյ գիրդ ընդ ցանկալի առողջութեանդ ի մէնջ անպակաս արարեալ, եղիցիս օրհնեալ յԱստուծոյ և յամենայն սրբոց Նորին և ի մէնջ, և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ և ընդ քոյսն, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոյս. ի յունիսի... ի մայր Աթոռս ամենայն Հայոց՝ ի սուրբ Էջմիածին։

ՃԼԲ. *Թուղթ ի Թիֆլիզ առ բարեպաշտ իշխանս ոմանս, շնորհակալութիւն փհարազատութեանցն, եւ յորդորումն դարձեալ ի նոյնն:*

Եւ ընդ սիրոյ և օրհնութեան Նամակիս, ծանուցումն եղիցի սիրելի և հոգևոր որդւոյդ մերում, և բարեխոհ զաւակիդ սուրբ Գահիս Միածնաիջլի։ Զի ոչ ոք յուսացաւ Աստուած, և ամօթով յետս դարձաւ, զի քաղցր է Տէր և ողորմած ի վերայ այնոցիկ, որք ակնկալեալ սպասեն Նմա։ Արդ՝ մեք յուսացեալ ի նոյն Ամենազօր բազուկ բարձրելոյն հաւատամք, զի փրկել կարէ ի ձեռաց ամբարշտաց իւրով արդարութեամբն, ըստ այնմ թէ՝ ճշմարտութիւն ազատեսցէ զձեզ, այլն։ Որպէս նշանքն արդէն իսկ երևին. այնզի՝ մինչ բազում յուսով և երկայնամտութեամբ ակնկալեալ նըստէաք մեծի ծագման ճառագայթի ճշմարտութեան, իսկ և իսկ արփիափայլ հրաշիւք թագ ի գլուխ ջալացայտ ջահացաւ ի բարձանց ճըշմարտութիւն և ողորմութիւն արեգականն արգարութեան, ըստ կանխաբարբառ աւետաւորութեան մեծի մարգարէին Դաւթայ թէ՝ ողորմութիւն և ճշմարտութիւն պատահեսցին, արդարութիւն և խաղաղութիւն համբուրեսցին։ Քանզի՝ ահա հանդերձեալ է Տէր ողորմութեամբ իւրով գթալ ի տառապեալսս և ի խղճալի սուրբ Տունս ինքնակերտ, զոր ոմանք պղտորիչք և խռովարարք ազգի և քաղաքի կամէին քակել, և հիմն ի վեր տապալել։ Եւ ճշմարտութեամբ և արդարութեամբ դատապարտեալ զնոսա, ամօթապարտ առնել, և երկնաւոր խաղաղութեամբ հանդարտեցուցեալ զխռովութիւն ժողովրդոցդ՝ ի բաց վանել զքանսարկուն և զկամարարս Նորին։

Արդարև՝ յորժամ սպասեն առ ի մէնջ բարիքն, զառաւել զարմանալիսն յայնժամ ներգործէ բարեգութ Տէրն, և կարի քաջ լիրաւի։ Քանզի՝ մինչ դիւաշունչ այրդ այդ Յովհաննէս սևաւոր՝ յետ ամենայն անզգամութեանց իւրոց և թիւրութեանց, ցուցց զաշխարհս ստութեամբ ի ձեռն թունաւորեալ թղթոց, որով և կամեցաւ զանփոփոխելի հայրապետութիւն ընդ փոփոխութեամբ արկանել, և նովիմբ լուծանել զօրէնս նախնի Նրջանկաց, և յաւեր և յաւերակ դարձուցանել զՔրիստոսահիմն և զԼուսաւորչաշէն սուրբ Աթոռս այս Երկնաքատակ, և զՔիւբտիստանու աննշան աղքատ վանքն շինել և այլն. արդարադատ թագաւորն տիեզերակալ յայտնեցաւ ի վրէժխնդրութիւն անզգամիդ և ղորապխեաց զառաւել զարմանալիսն յայդր ի քաղաքի ձերում ներգործելով, ի յայտնելն ձեզ զսրբալոյս միւռոնն, զոր նենգաւորդ այդ գողդ և աւաղակդ իբրև զգոզունի՝ ընդ իւրն՝ զող ուղեաւ բերեալ է յայդր, առ ի ստուգել զամենայն դրուածս մեր վասն դորա, և առ ի կոտել զչարիս իւր ի գլուխ իւր, ուստի և մեք որպէս յառաջ բոլոր միաբանութեամբ բանադրեալ հերքեցաք զդա ի միաբանութեանց մերոց և ի սրբոյ Աթոռոյս, նոյնպէս այժմ նզովեալ կարդընկեց արարաք դչարդ և զանօրէնդ ի սրբոց եկեղեցեաց մերոց, և չունիք զհրաման հաղորդիլ ընդ դմա, և իբրև քրիստոնեայ համարել։ Իսկ զամենայն համախոհս դորին, եթէ յայսմհետէ ոչ զգաստասցին, սոյն օրինակ առնելոց եմք առանց ներողութեան։ Արդ՝ թողեալ զայսոսիկ առ ի չտալ զտաղտկութիւն պատուական լսելեաց ձերոց, ըստ որում քաջ տեղեկացայք դուք զայս ամենայն, և չունիք պէտս մերս դրուածոց և վկայութեան այլոց, դաւաքանս այժմ ծանիք, զի ի լսելն մեր և ի գիտելն զորդւոյդ օրհնութեան զարիական զքաջութիւն, և զջերմեռանդ որդիութիւն, որ թողեալ զգաստութիւն՝ իբրև զկատարեալ բարեպաշտ ջատագով ճշմարտութեան լինելով կամեցեալ ես զանուն մեր լիշատակել տալ ի յեկեղեցիսն իրաւամբ և արդարութեամբ, և բառնալ զանուն չարասիրաց, և այլն՝ ուրախութեամբ սրտի օրհնեցաք զհարազատ որդիդ սրբոյ Աթոռոյս մեր։ Նոյնպէս գիտացաք ի դրոց եպիսկոպոսացն մերոց զգործոց մերոց սրտի մտօք օգնական լինիլդ և միաբանութեամբ զմահսէր առնելն ձեր ի հիւսիսային կողմն, և ի վերայ ուղղութեան արիապէս հաստատուն կալն և մնալն ձեր, և զայլս այսպիսիս, մեծաւ շնորհակալութեամբ գոհունակեցաք զսիրելւոյդ մերմէ։ Տէր օրհնեսցէ զքեզ, և զօրացուսցէ, և զամենայն զբանս և զգործս քո ի բարին յաջողեսցէ, և երկնաւոր բարութեամբ լցուսցէ, յամենայն չարեաց փրկեալ ազատեսցէ զքեզ և զբոլոր ազնուական քոյայինսն և խաղաղական կենօք պահեսցէ ի շինութիւն իւրաէջ սուրբ տեղւոյս, և ի մխիթարութիւն վշտապատ սրտի մերում։ Ահա զկոնդակ օրհնութեան և շնորհակալութեան դրեալ առ քաղաքացիսդ, զայս թուղթ սիրոյ ևս քեզ յատկեղ և ընտիր սիրելւոյդ դրեալ, խնդրեմ և յորդորեմ, ի դոյնն յարամնալ, և յամենայն հողմոց և յարուցմանց անխախտելի մնալ, և անփոփոխելի կալ, և ջանալ յառաջ տանել զճշմարտութիւն, և յաւարտն բերել։ Քանզի ընթանալ, ամենեքեանքն ընթանան, բայց մի ոք առնու զյաղթանակն։ Ուրեմն որպէս ի Տէր խրախուսեալ ընթացայք ընդ առաջ դրելով զերկու մահզէրս, զմինն առ ինքնակալ մեծ կայսրն սակս վերահաստատութեան մերոյ. և զմիւսն վասն աշխարհակործան Յովհաննէս անզգամիդ, ջանացարուք արդիւնաւորել զնոյնն, և ի վերայ գործոց և բանից ձերոց հաստատուն և անայլելի մնալ. որով և ընկալնուլ զյաղթանակն զվարձս բարիս և զբազմապատիկս, զորս հատուցանէ առատաբաշխ ձեռն ամենազօրին ամենայն ճշմարտասիրաց և խաղաղարարաց աստ և ի հանդերձելումն։ Այսպէս դիտելով քո՝ և զսիրոյ և զուրախական գիրդ ի մէնջ անպակաս ունելով, և զորպիսութիւնդ և զհաւատարմութիւնդ ընդ սրբոյ Աթոռոյս և ընդ մեզ աննուազելի պահելով, ողջ լեր ի Տէր, և զօրացեալ միշտ ի նոյնն, և Շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ և ընդ քոյսդ, Ամէն։

Գրեցաւ ի 1802. ի յունիսի ··· յԱստուածակերտ և ի շնորհածաւալ Աթոռս ամենայն Հայոց՝ ի սուրբ Էջմիածին։

Հայրական սիրով և հոգևոր օրհնութեամբ ողջոյն մատուցանեմ սիրելի և հարազատ որդւոցն իմոց Քրիստոսիւ օրհնեցելոց պարոն Գոկինին և պարոն Բէժանին, զորս և յանձնեմ խնամոցն Աստուծոյ և շնորհաց նորին, զի զօրասցին նովաւ և յառաջադէմս եղիցին։ Ցի-

բաւի գոհ եմ որպէս զսիրելւոյդ լիմէ, նոյնպէս և զաղնուաբարոյ որդւոց քոց մեծազօյն ջատագովութեանցն. զորս ունին առ սուրբ Աթոռս և առ մեզ, որպէս գրեալ էին մեզ եպիսկոպոսունքն մեր, որոց թէ և այժմ չկարացաք զյատուկ թուղթ գրել, այլ սակայն՝ յետոյ Աստուծով գրելոց եմք յատկապէս։

ՄԼԹ. *Առ Մ՝ին սան Քիստով:*

Ցորմէ ժամանեսցէ թուղթ սիրոյ, օրհնութեան, լուսատու ողջունի, հանդերձ ամենառատ ողորմութեամբն աստուծոյ ի վերայ ընտիր սիրելւոյդ մերոյ և մշտահարազատ որդւոյդ սրբոյ Աթոռոյս Տերամբ Քրիստոսիւ զօրացեալ աղայ Մինասիդ և բոլոր ազնուական քոյլնոցդ, ընտանեացդ ոսկէբողբոջ զաւակացդ և ամենեցուն, որք քոյ են, եղիցի ի Տէր խնդալ։ Որում և դիտութիւն լիցի։

Զի ի յուլիսի ամիսն ղրեցեալ հաւատարմական և սիրոյ թուղթդ ընկալեալ ղիտացաք զմեծ հարազատութիւն սրտիդ և զկատարեալ բարեկամութիւնդ, զորս ունիս առ մեզ և առ սուրբ Աթոռս աստուածաբնակ, Տէր օրհնեսցէ զքեզ և զօրացուսցէ և ի մխիթարութիւն սրրտից մերոց պահեսցէ հանդերձ ամենայն ազնուական քոյլնովքդ և լիցի քեզ վարձատիր ըստ բարեսիրտ սիրելութեանդ և օգնականութեանդ։ Եւ որպէս ի թղթոյդ իմացաք զայնոսիկ զամենայն Տէր լիցի վրէժխնդիր նոցա ըստ գործոց նոցին և պարգևեսցէ զխաղաղութիւն իւրաէջ սուրբ տեղւոյս և Ազգիս մերոյ։ Վասն Տէր Բազդասարի խաչին և ընծայիցն, զորս գրես, ծանիր. չէ օրէն մեզ տալ քահանայի զխաչ կրել ի պարանոցի, ուստի և մեք թէ զխաչն այն և թէ զընծայն ի միումսպահարանի եղեալ և մերով կնքով կնքեալ, այնպէս առաքեցաք առ ձեզ իբրու ընծայ և հոգևոր օրհնութիւն ի մէնջ քեզ սիրելւոյդ մերոյ ի նշան սիրոյ։ Եւ քահանայն այն փոխանակ ամբողջապէս առ քեզ հասուցանելոյն յանդդնաբար բացեալ է զայն և լուծեալ զկնիքն մեր։ Միայն զայս չափս գիտեա կարճառօտ, որ մեք զայն ամենայն առ քեզ եմք յղեալ, և քեզ շնորհեալ, դու գիտես զինչ առնելն, իսկ վասըն քեհրիպար տէրողորմեային այսպէս՞ իմա. Աստուծով ձեռամբ հաւատարմի յղելոց եմք առ սիրելիդ, որոյ վասն միամիտ լիցիս, և վասն ո՞յր էր այն քեհրիպար տէրողորմեայն, նմա կամիս ասա և խոստացիր, զի Աստուծով հասուցանելոց եմք առ քեզ փութով։ Եւ վասըն բուրառոյին, զոր կրկին ես դրեալ էիր, այսպէս դիտեա, զի ամենայն հարկաւոր ինչք մեր և քարեղէնք կապեալ սանդղովք կան ի յՆրեան տակաւին, որպէս վասն այսր յառաջագոյն ևս եմ դրեալ սիրոյդ։ Աստուծով ի խաղաղանալ, անյապաղ առաքելոց եմք զայն, յորոյ կողմանէ ևս այսպէս ծանուցեալ, յանհոգ լեր։ Մեք ողորմութեամբն Աստուծոյ թէպէտ կամք ցարդ խաղաղութեամբ, բայց նախանձոտք ոչ դադարին երբէք ի պէսպէս չարեաց իւրեանց և ի կերպակերպ վնասատուութեանց սրբոյ Տանս։ Ուստի և դու սիրելիդ իմ ոչ պարտիս վերջանալ ի սիրոյ և մեծազօյն հաւատարմութենէդ և ի կատարեալ բարեկամութենէ, լինելով միշտ ջատագով և յառաջացուցանող ճշմարտութեանն և որպէս սկսայքն, ջանասջիք ի յաւարտն բերել և ըղթշնամիսն արդարութեան կոր ի գլուխ առնել, որով որպէս այժմ, նմանապէս և միշտ ունիք վայելել ի մէնջ զօրհնութիւնս և զշնորհակալութիւնս ընդ մեծազօյն վարձուցն, զոր պարգևէ Տէր ամենայն բարեսիրաց. զայսքանս աստէն ղիտացեալ, ողջ լեր ի Տէր և զօրացեալ շնորհիւ նորին հանդերձ ամենայն տամբք քով. Ամէն։

Ի 1802. ի սեպտեմբերի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՄԽ. *Թուղթ ի Պօլիս առ բասմաճի ուստայ Յովհաննէսն, օրհնութիւն եւ շնորհակալութիւն վասն ծԲ ղռուշին։*

Եւ ընդ ամենառատ օրհնութեանս Աստուածայնոյ՝ գիտութիւն լիցի սիրելւոյդ մերում, և լուսածնունդ որդւոյդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի իմաստնացեալն յԱստուծոյ Սողոմոն ասէ ի հոգեշունչ բանս իւր թէ՝ որ երկնչի ի Տեառնէ, պատուէ զծնօղս։ Արդ՝ գոլով քոյ յիրաւի երկիւղած առ ի յԱստու

ծոյ, պատուեալ էիր Նարդենիս զլուսածին մայրս քոյ դոուրը Աթոռս՝ առատաձեռն տրովք դրամոց. և այն յայս ննղ և ի պակասաւորեալ ժամանակի սորին, յորում ընտանի թշնամիք մեր՝ որք ախտամոլք և նախանձոտք առ ի պաշտելոյ զչար կամս իւրեանց զզանազան փորձանս և վնասս և զանպատուութիւնս հասուցանէին սմա, և զմեզ ևս վատահամբաւելով յողնադիմի զրպարտութեամբք, վրդովեալ էին և վրդովէին դեռ ևս զպարզամիտ օրհնեալ Ազգ մեր ածել յերկպառակութիւն և ի գայթակղութիւն. բայց դու օրհնեալդ պնդութեամբ ջերմեռանդ սիրոյդ և սրտական հաւատարմութեանդ զոր ունիս առ սուրբ դահս և առ մեզ, իբրև զվէմ՝ հաստատուն և անդրդուելի մնալով ի հողմոց խռովանիւթ բանից յաչաղկոտացն այնց, և իբրև զվարդ ի մէջ փշոց բուրելով զհոտ կատարեալ բարեպաշտութեանդ առ Աստուած կամեցեալ էիր ըստ չափու կարողութեան քոյ՝ ըստ վերոյիշեալ բանի իմաստնոյն պատուօղ և մեծարու լինել հաւատոյ մորս քոյ։ Վասնորոյ և քոյինդ ինքնայօժար կամօք և տմենազուարթ երեսօք շնորհեալ էիր սրբոյ Աթոռոյս զՆՐ. զուաուշ լուսադին՝ ի յանուն բարեպաշտազնեալ զաւակացն քոց՝ մահտեսի Յօհաննին և մահտեսի Մարտիրոսին և այլ օրհնեալ ընտանեաց քոց. յանձնելով զայն դրամն սիրելւոյն մերոյ դոյն քաղաքացի մեծահաւատ ուխտաւոր մահտեսի Սեդրաքին. և նա բերեալ ամբողջապէս հասոյց առ մեզ։ Զոր և մեք ընկալեալ սիրով մեծաւ ի կարևոր ծախս պիտոյից միաբանից սրբոյ Աթոռոյս, շնորհակալութեամբ բազմաւ օրհնեցաք զքեզ, ասելով զՊահպանեալն վասըն քոյ և բարեբողբոջ որդւոցդ և ամենայն ընտանեացդ, և զՀոգւոցն սակս հին և նոր ննջեցելոց քոց. զորս և յիշեցաք ի փրկարար սուրբ պատարագոջ ի հրաշազարդ սուրբ տեղւոյս։ Եւ մինչ վերոյիշեցեալ բարեպաշտօն մահտեսի Սեդրաքն կատարեալ զուխտ և զերկրպագութիւն իւր՝ համբուրելով զՔրիստոսաէջ սուրբ տեղին և զայլ սքանչելագործ սրբութիւնսն, վերադառնայ աստի, վասն որոյ գրեցաք ընդ նմա զայս օրհնաձիր թուղթ առ մեծահաւատ սիրելիդ մեր՝ զի միամտեալ զուարճասցիս հոգևորապէս։ Արդ ուրեմն՝ ընկալցի Տէր Աստուած քաղցրութեամբ զկամաւոր տուրս քոյ ի հաճոյս իւր, և զփոխարէնն հեղցէ ի քեզ և ի համայն քոյայինսն զշնորհս ողորմութեան և գթութեան իւրոյ։ Օրհնեսցէ զքեզ և զօրացուսցէ հանդերձ մահտեսի Յօհան և մահտեսի Մարտիրոս բարեծնունդ որդւովք. և ամենայն օրհնեալ ընտանեօքդ, ազատս կացուսցէ ի փորձութեանց հոգեկանաց և մարմնականաց, և միշտ տարածեալ ունելով ի վերայ ձեր գթեա Աստուածային խնամոցն իւրոց՝ պահեսցէ ի խաղաղութեան և ի բարեզուարճութեան։ Եւ տացէ ամենից բանից և գործոց ձերոց զյաջողուածս բարեաց։ Եւ զհոգիս ննջեցելոց քոց լուսաւորեսցէ, և հանգուսցէ յարքայութեան երկնից ընդ արդարոցն դասուց։ Եւ արդ պատուիրեմք սիրելւոյդ, զի հաստատուն մնասցես ի կատարեալ բարեպաշտութեանդ առ աստուած, և ի ջերմեռանդ սէրդ և ի հաւատարմութիւնդ որ առ սուրբ Աթոռս և առ մեզ, և որպէս մինչև ցարդ՝ նոյնպէս և յայսմհետէ հեռի պահեսցես զքեզ ի խռովասիրաց, և մի բնաւ հաւատ մատուսցես ունայնաբանութեանց նոցին. այլ հանապազ խորհելով և առնելով զօգուտն և զբարին սրբոյ Աթոռոյս և մեր, զայլս ևս ի դոյն յորդորեսցես։ Որովք միշտ ընկալցիս զվարձս բարեաց յԱստուծոյ, և ժառանգեսցես զհոգեւոր շնորհս սրբոյ դահիս և զօրհնութիւնս մեր։ Իսկ զայլ որպէսն սրբոյ Աթոռոյս և բարեկարգութեան սորին և միաբանիցն բազմութեան՝ աստէն ոչ երկարելով, թողումք իմանալ ի թղթաբերէդ, որ ականատեսութեամբ հասու եղեալ որպիսութեանց մերոց՝ ունի զամենայն պատմել ձեզ։ Ողջ լեր ի Տէր։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս, և ի յուլիսի ... ի լուսանկար Աթոռս սուրբ Էջմիածին։

ՄԽԱ. *Թուղթ առ փոփոս Մէրօբէն վասն բանի ՃԿ ղռուշին. զոր աստ կորուսեալ էր:*

Եւ ընդ զուարթարար օրհնութեանս Աստուածայնոյ՝ գիտութիւն լիցի սիրելութեան քում։ Զի ի յապրիլի ԻԹ գրեցեալ թուղթն քոյ՝ էհաս առ մեզ ի յունիսի ԻԸ։ Զոր ընթերցեալ ծանեաք զամենայն։ Յաղագս ՃԿ ղռուշի ոսկւոյդ կորուսեալ, զոր դրեալ էիր՝

թէ՝ յուր եկն ինձ ձեռամբ լուսարար Կարապետին՝ որ գտանեցեալ է։ Եւ ըստ ջերմեռանդ սիրոյդ խնդրեալ էիր զԿ գռուշն, և զԾ գռուշն առ քեզ առաքել։ Առ որ այսպէս գիտասջիր, զի լիրաւի գտաք, բայց ոչ ամբողջապէս. այլ միայն զԾԻ գռուշն և այն ևս բազում աշխատանօք հազիւ ուրեմն կարացաք ի ձեռ բերել, քանզի յոյժ ամուր տեղի էր. ուստի՝ զԻ գռուշն ևս աշխատող մարդկտնցն ի վարձ տուաք. իսկ զԾ գռուշն ահա գիտութեամբ մեծահաւատ ուխտաւորացն՝ այսինքն՝ Ցօնանի որդի Պետրոսին, պարոն Սրապիոնին, պարոն Առաքելին, պարոն Սաղաթէլին, և պարոն Գէորգին չինեալ և կնքեալ յանձնեցաք քոյդ լիշեալ դարբին օրհնեալ ուխտաւոր Կարապետին, հասուցանել քեզ ամբողջապէս։ Ըստ որում վերոյիշեալ ուխտաւորքն կատարեալ զուխտ և զերկրպագութիւնս իւրեանց վերադառնալին աստի. վասնորոյ զայս օրհնաձիր նամակս գրեցաք սիրելւոյդ, զի ի կողմանէ կորուսեալ ոսկւոյդ ըստ մերս գրեցելոյ միամիտ լիցիս. և ի հասանիլն նոյն Ծ գռուշին առ քեզ՝ փութով ծանուսցես մեզ ի միամտութիւն։ Եւ քոյ այսպէս գիտելով և ի կատարեալ սէրդ և ի հարազատութիւնդ հաստատուն մնալով՝ ողջ մեր ի Տէր։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուին, ի յուլիսի Ժ ի սուրբ Էջմիածին։

ՌԽԲ. *Թուղթ ի յԱղբակ առ Մէլիք Փանոսն։ Օրհնութիւն եւ շնորհակալութիւն սակս բարերարութեանցն եւ ձեռնտուութեանցն՝ որ առ նուիրակ Յօհաննէս վարդապետն, եւ յորդորումն ի նոյնն։*

Եւ ընդ շնորհաձիր օրհնութեանս Աստուածայնոյ՝ գիտութիւն լիցի քումդ հաւատարիմ բարեկամութեանդ. Զի սիրելի և հոգեւոր որդին մեր և նուիրակն ձեր՝ Յօհաննէս խոհեմափայլ եպիսկոպոսն՝ մեծաւ շնորհակալութեամբ գրեալ ծանուցեալ էր մեզ նարդենիս՝ ի գալն իւր յայդր և առ ձեզ, դու օրհնեալդ ըստ մեծի հաւատոյդ և բարեպաշտութեանդ սիրով և յարգանօք ընկալեալ ես, և ըստ արժանւոյն չահեալ և մխիթարեալ, և առ գործն ես ձեռնտու և օգնական եղեալ։ Եւս և՝ յաղագս սրբոյ Աթոռոյս և մեր զբազում ջատագովութիւնս արարեալ, և զորդիական սէր և զհարազատութիւն ցուցեալ։ Վասնորոյ և մեր իմացեալ զայս բարելուր համբաւ զբարեպաշտութենէդ՝ սրտագիւր եղաք. և շնորհակալութեամբ բազմաւ օրհնեցաք ըզքեզ և զամենայն քոյայինսն լիալիր օրհնութեամբ։ Զորս Տէր օրհնեսցէ և զօրացուսցէ, և ըստ բարելաւութեանցդ առաւելապէս վարձատրեսցէ, և ընդ հովանեաւ հզօր աջոյն իւրոյ ի յուրախութեան և յանդորրութեան պահեսցէ, ի հոգեկան և ի մարմնական փորձութեանց փրկեալ ազատեսցէ, և ամենայն գործոց ձերոց ես զյաջողուածս շնորհեսցէ։ Արդ՝ սիրելի մեր՝ որպէս դու քոյդ հարազատական բանիւդ և գործովդ ուրախացուցեր զմեզ այսպիսում դառնադէտ ժամանակիս՝ նոյնպէս և մեք այսու նամակաւ տալով քեզ զօրհնութիւնս Աստուածայինս ուրախացուցանեմք զսիրելիդ ի սիրտ և ի յոգի։ Որում և պատուիրեմք իսկ՝ զի որպէս մինչև ցարդ՝ նոյնպէս և յայսմհետէ հեռի պահելով զքեզ ի յաչաղկոտ անձանց՝ ջանասցես զսրբոյ Աթոռոյս օգուտն և զբարին խորհել և յառաջացուցանել, և զորդիական սէրդ, զհարազատութիւնդ և զջատագովութիւնդ առ սուրբ Աթոռս և առ մեզ՝ օրքան զօր աճեցուցանել, և զայլս ևս ի դոյնապիսի բարեգործութիւնս յորդորել, և զի ահա լսէք և իմանայք թէ՝ որպէս արք նախանձոտք ի վերայ սրբոյ Աթոռոյս զզանազան վնասս և զնեղութիւնս հասուցանելով սմա՝ կամին աւերել և քայքայել. և դու՝ որ հարազատ որդի ես սրբոյ Աթոռոյս և սիրելի մեր. պարտիս զսրտացաւօրէն հաւատարմութիւնդ գործով ևս ցուցանել առ սա, և նուիրակին մերոյ յամենայն սրտէ ձեռնտու և օգնական լինիլ, զի արդիւնաւորութեամբ աւարտեսցէ զգործն՝ ի յօգնութիւն բազմադիմի պակասութեանց մերոց։ Որոց աղագաւ ունիս ընդունել զբազմապատիկ վարձս յԱստուծոյ, զհոգեզուարճ շնորհս ի սրբոյ Աթոռոյս, և զմեծագոյն շնորհակալութիւնս ի մէնջ հանդերձ օրհնութեամբ։ Ողջ լեր ի Տէր։ Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս, և ի յուլիսի ... ի սուրբ Էջմիածին։

ՄԽԳ. *Ի Բամբակ առ Նիկօլայ Նիկիֆորիչ Բելաքօրոտով, որ է գրագիր Մինաս Քիստովին։*

Ցորմէ ժամանեսցէ խաղաղական ողջոյն հանդերձ ամենառատ օրհնութեամբ Աստուծոյ ի վերայ զերազնիւ սիրելւոյդ իմոյ և հաւատարիմ բարեկամիդ սրբոյ Աթոռոյս պարոն Նիկօլայ Նիկիֆրիչ արժանապատիւ ցանկալւոյդ։ Եւ որոց ընդ ձեզ են ի Տէր խնդալ. ուրում և դիտութիւն լիցի։

Զի պարտաւորութիւն է մեզ շնորհակալել զամենայն սրտացաւ և ղօգտաջան բարեկամաց մերոց և մանաւանդ զայնոցիկ որք հաւատարիմ պաշտօնեալք են մեծի կայսերն և սիրելի սիրելեաց մերոց. Արդ ի դրութենէ մեր ազնիւ բարեկամ աղայ Մինասին, դիտացաք որ դերազնիւդ սիրելի ես յոյժ ինքեան և կատարեալ բարեկամ և անքակտելի սիրով կապակցեալ ընդ իւրն, որպէս ինքն պարոն Մինասն առաւելապէս ես գրեալ էր մեզ զայնոսիկ բազմապատիկ շնորհակալութեամբ զպատուականութենէդ։ Նման սմին իմացաք ես, որ ունիս զմեծագոյն սէր և զջերմեռանդութիւն առ սուրբ Աթոռս Աստուածաէջ, և առ մերս հոգևոր հայրութիւն։ Որոց աղագաւ և մեք զայս թուղթ սիրոյ և օրհնութեան գրեալ առ սիրելիդ, շնորհակալիմք մեծապէս վասն ամենայն մարդասիրութեանց ձերոց և բարեյաւութեանց. Եւ խնդրեմք ի դոյնն յարամնալ և օր քան զօր առաւելուլ զայդ, որպէս զի շնորհաց սրբոյ Դահիս և հայրական մերոյ սիրոյ առ-ստապէս վայելող գտանիջիք։ Զայլ որպիսութիւնն մեր ունիք դիտել ի սիրելւոյն մերմէ Մինաս աղայէն և ի Տէր Բաղդասար քահանայէն, ողջ լերուք։

Ի յուլիսի 11 ի 1802 ի սուրբ Էջմիածին, որ ի Վաղարշապատ։

ՄԽԴ. *Ի Բամբակ առ Դիմիտրի Պաւլիչն ընդ Տէր Բաղդասարին։*

Զի ի թղթոյ մեր հաւատարիմ բարեկամ զերազնիւ աղայ Մինասին, գիտացի զմեծագոյն սէրդ և զկատարեալ հաւատարմութիւնդ, զորս ունիս առ սուրբ Աթոռս մեր, և առ մերս հայրութիւն։ Նոյնպէս գիտացաք զպատուականութեան ձերոյ կարդիլն յայդր դատաւոր վասն բարեկարգութեան կողմանցդ։ Եւ առաւել ուրախութիւն այն եղև մեզ, որ դու սիրելիդ մեր ի սրտէ բարեկամ ես աղայ Մինաս Քիստովին և անխարդախ սիրով սուրբ հոգւոյն կապակցեալ ընդ նմա։ Ուստի ի լսելն մեր զայսոսիկ, ուրախութեամբ սրտի շնորհակալեալ զձերդ պատուականութենէ, օրհնեցաք զկեանս ձեր և օրհնեմք միշտ առաջի Աստուածային սուրբ տաճարիս։ Պատուիրեմ ուրեմն ի դոյն ճշմարիտ սէրդ անփոփոխելի կալ և սիրոյ թղթովդ զցանկալի առողջութիւնդ մեզ ծանուցանել։ Նաև խնդրեմ որպէս և պարոն Կաւալենցկուն ես գրեալ խնդրեալ եմ, զի ջանասցես խափանել երթևկութիւն Դանիէլեանցն, քանզի միշտ նորա մարդիկն ի Բայազիտու գան յայդր և երթան ի Թիֆլիզ և անտի դոյն ճանապարհաւ անցանեն ի Բայազիտ, ի պատճառս որոց և այսչափ խռովութիւնք և տարաձայնութիւնք ծագին յազգս մեր. այսպէս առնելով ձեր, պարտաւորեալ էք զմեզ շնորհակալել մշտապէս ղպատուականութենէ ձերմէ. զայլ զորպիսութիւնս մեր ունիք ի սիրելւոյն մերմէ աղայ Մինասէն և ի Տէր Բաղդասարէն գիտել, ողջ լերուք։

Ի յուլիսի 11 ի 1802. ի սուրբ Էջմիածին, որ ի Վաղարշապատ։

ՄԽԵ. *Ի Բամբակ առ Միտր Պաւլչյն:*

... Զի ի յամսոյս 17 դրեալ զգիրդ սիրոյ և ջերմեռանդ բարեկամութեան, ընկալայ սիրով և օրհնութեամբ, և գիտացեալ զառողջութիւն պատուականութեան ձերոյ ուրախութեամբ զփառս մատուցի աստուծոյ. տէր օրհնեսցէ. խաղաղ և երկար ամօք պահեսցէ՝ զպատկեղ սիրելիդ իմ հանդերձ բոլոր ազնուական ընտանեօքդ, և Քրիստոսիւ ղօրացեալ ոսկէբոզքոջ զաւակօքդ ի յուրախութիւն սրտի մերում. Եւ խնդրեմ, զի մշտապէս ղցանկալի առողջութիւնդ ընդ սիրոյ դրոյդ ի մէնջ անպակաս առնել մնալով ի դոյնում հաւատարմութեան։ Մեք ես բոլոր միաբանութեամբ աղօթօզ եմք վասն պա-

տուականութեան ձերոյ առաջի Աստուածաէջ սուրբ տաճարիս։ Գերազնուուհի հոգևոր դստերն մերոյ Կատարինէ Ալէքսանդրովնին, և կենսատու սուրբ խաչիւն Քրիստոսի զարդացեալ դստերն նորին Մարիա Միտրովնին նուիրեմ զՔրիստոսական ողջոյն և օրհնութիւն. ողջ լերուք ի տէր, Ամէն։

Ի յուլիսի 24. ի 1802. ի սուրբ Էջմիածին, որ ի Վաղարշապատ։

ՄԽԷ. *Ի Բամբակ առ պալկովնիկի կին Մարիա Իվանովնայն (պալկովնիցայ)*։

Որում և գիտութիւն լիցի. զի ի յուլիսի 20 գրեցեալ գջերմեռանդ թուղթ բարեպաշտուհի դստերդ մերոյ հոգևորի ընկալաք հայրական օրհնութեամբ և սիրով և զխնդիրդ որ էր չալ ի գլուխ ձգելոյ, ահա կատարեալ ի նշան հայրականի օրհնութեան մերոյ իբրև զհոգևոր նուէր ի շնորհատու Աթոռոյս մեծէ առաքեցաք ձեռամբ Ասլանին և խնդրեմ. զի և դուք ներեսջիք քանզի վասն խառնակութեան երկրիս ամենայն բանք մեր կապեալք սանդզովք կան ի յԵրեւան քաղաքին, և մեք դատարկ կամք աստ նստեալ. զայգ միայն գըտաք առ ձեռն պատրաստ։ Ուրեմն ընկալջիք սիրով և դուք և զջերմեռանդ սէր ձեր և զբարեպաշտութիւն ի մէնջ և ի սրբոյ Աթոռոյս անպակաս առնելով, ողջ լերուք ի տէր քրիստոս խաղաղ և երկար կենօք. Ամէն։

Ի յուլիսի 24. յամի տեառն 1802. ի սուրբ Էջմիածին որ ի Վաղարշապատ։

ՄԽԸ. *Առ Թագուհին Ռուսաց Մարիա Փեօդըրովնայն*։

Ցիսուսի Քրիստոսի ծառայ ԴԱՒԻԹ, որոյ և շնորհիւն կաթուղիկոս ամենայն Հայոց Քրիստոսական սուրբ եկեղեցւոյն։ Ցաջորդ սրբազան առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի, և սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, և ծայրագոյն Պատրիարգ սրբոյ և մեծի Աթոռոյս Էջմիածնի, որ ի Վաղարշապատ։ Ցորմէ խոնարհ գիմօք ժամանեսցի փրկչականն ողջոյն խաղաղական, հանդերձ համասփիւռ ողորմութեամբ ամենասուրբ երրորդութեան, և պէսպէս շնորհօք, և պարգևօք Քրիստոսաիջի սուրբ տեղւոյս, ամենայաղթ խաչին Քրիստոսի, և նորին կողամուխ սրբոյ գեղարդեանն, ընդ թղթոյս մաղթան և խնդրուածոց՝ բարեպաշտի և աստուածասիրի, Քրիստոսազօրի և խաչապսակի՝ Մարիա Փէօդրովնայ առաջին կայսրուհւոյդ և մօրդ աշխարհի գեր քան զամենայն ծնունդս էից։ Որոյ աղագաւ խնդրեմք բազկատարած յամենազօր Թագաւորէն թագաւորաց մեք խոնարհ պաշտօնեայք նորին՝ հանդերձ բոլոր հոգևորական դասուք առաջի սուրբ տեղւոյս հրաշակերտի, զի մաղթանօք ամենայն սրբոց իւրոց՝ պայծառ յաղթող և անվանելի պահեսցէ զձեզ և զծաղկեալ կայսերութիւն ձեր յազգէ յազգ, և յորդւոց յորդիս, և միասցէ անթառամելիս և մշտազուարճս, և զազգսն, զորս ոչն ճանաչեցէք, հնազանդեցուսցէ ձեզ, և երկնաւոր օրհնութեամբ օրհնեսցէ զձեզ և զթագաւորութիւն ձեր, զծնունդս և զազգս ձեր, և ամենազօր աջով իւրով պահեսցէ զթագաժառանգ և զծիրանածին կայսերազն՝ և զմեծ կայսրն ինքնակալ և զօգոստափառ կայսրն և զգաւազան իշխանութեան նորին ձգեսցէ ի ծագաց ի ծագս աշխարհի, և ի վերայ ամենայն թշնամեաց ահընկեցս և յաղթողս արասցէ, և զմեզ ևս, որ ցանկամք ազգովին ի վաղ ժամանակաց հետէ, ընդ ամենաքաղցր գաւազանաւ նորին ժողովեալ սփոփեսցէ, առ որ ըղձատոչոր սրտիւ սպասեմք բազում յուսով։ Եւ արդ՝ այս է նուաստութեան մեր խնդիր, ի խնամաշատ և գթածասիրտ Թագուհւոյդ ամենայն Թագուհեաց. զի զսուրբ և զմաքուր լսելիս ամենաբարեպաշտ և ինքնակալ Անդրանիկ որդւոյ ձերոյ և հանրաիշխող քրիստոսազօր մեծի կայսեր մինչ պղտորեալ են արք նախանձոտք, և զուր բանիւք գառնացուցեալ զբազմագութ քաղցր սիրտ նորին ի վերայ խղճալի Աթոռոյս և ի վերայ մերս նուաստութեան, մաղթեմք խոնարհ գիմօք վերստին քաղցրացուսջիք զայն ի վերայ մեր, առ ի յայց եղանել վնասակրեալ և անօգնական եղեալ սուրբ տաճարիս աստուածայնոյ, և տառապակիր անձանց մերոց, որ ահա զրաբանութեամբ նախանձոտաց, հանդերձ բոլոր ազգօք

ի վերջին Թշուառութեան կամք, և ի Նեղութեան մերում, զկնի աստուծոյ ի հզօր բազուկ և ի յարագահաս օգնականութիւն խաչապսակ և Աստուածազօր մեծի կայսերն տիեզերակալի, քաղցր և սիրելի որդւոյ ձերոյ Թագաւորգի ապաւինեալ՝ կարօտիմք իբրև զանդամալոյծն անօգնական՝ նորին նպաստամատոյց ձեռնտուութեան։ Եւ ազատս կացուսջիք զբարեացապարտ կայսրդ մեծ ի խղճահարութենէ, քանզի որ չէ եղեալ ցարդ փոփոխութիւն հայրապետաց այսքան հարիւրաւոր ամս յանօրինաց և ի զազանաբարոյ այլազգեաց, մի լիցի և առ ժամանակաւ բարեկարգ կայսերութեան օղոստափառ ինքնակալիդ մեծի, զի մի խպառ աւերեսցի սուրբ տունս Աստուծոյ, զոր դժուարին է վերստին կանգնելն։ Ուրեմն լսելի լիցին աղաչանք խոնարհ աղօթարարիս ձերոյ, և մայրական գթարկութեամբ ձերով, մեզ ի դուր բամբասելոցս զբաւականութիւն չնորհեսջիք, առնելով արդար դատաստան, և քննութեամբ ճշմարիտն ի ստոյն որոշելով, քան զոր աւելի չիք այլ ինչ մեր խնդիր, որովք պարտաւորեալ միամք միշտ ամենաբարեպաշտուհւոյ, և ինքնակալուհւոյ մօրդ ողորմութեան աղօթարար պաշտօնեայ միշտ խոնարհ ԴԱՒԻԹ կաթուղիկոս ամենայն Հայոց։

Ի յուլիսի 24. ի 1802. ի սուրբ Աթոռս Էջմիածին որ ի դաշտս Արարատեան։

ՄԽԸ. *Ի Բամբակ, առ Պալկովնիկ Պաւլայն։*

Ցոյժ բազում սիրով, և Քրիստոսական սուրբ ողջունիւ ժամանեսցի Աստուածային օրհնութիւն ի վերայ ընտիր սիրելւոյդ մերոյ՝ դերազնիւ՝ պարոն Պաւ՚լայ Պալկովնիկիդ. և որոց ընդ ձեզ են ի տէր խնդալ։ Որում և գիտութիւն լիցի։

Ի յուլիս ամսոյս 18, զթուղթդ՝ ձեռամբ Ասլանին ընկալաք օրհնութեամբ, և վասն խաչին և կոնդակին տէր Բաղտասար բարեմիտ քահանայլին սիրելւոյն մերոյ և ձեր, զայսքանս գիտացիր։ Զի ի բնէ անտի ոչ գոյ սովորութիւն աստ ի սուրբ Էջմիածին նստող հայրապետաց տալ ումեք քահանայի զխաչ պարանոցի, որպէս և ինքեանք ևս, և բոլոր դասք հոգևորականաց մերոց եպիսկոպոսաց և վարդապետաց սրբոյ Աթոռոյս, ոչ ունին, և ոչ ի գործ արկանեն բաց ի հարկաւոր պահու։ Միմիայն Ցովսէփ սրբազան հայրապետն ի Քրիստոս հանգուցեալ՝ ըստ եւրոպական ծիսի, տայր ումեմ և կամէր, որպէս և ի Թիֆլիզ քանի քահանայի տուեալ է, բայց արտաքոյ է սովորութեան մերոյ՝ զի չէ օրէն քահանայի յաղգիս՝ կրել զխաչ ի պարանոցի, և ըստ որում սիրելիդ մեր խնդրեալ էիր, ի պատիւ երեսաց ձերոց խառալ փիլօնիւ՝ փառաւորեցաք զինքն զտէր Բաղտասար քահանայն։ Եւ այժմ ևս խոստանամք, զի ի բարեաւ՝ խաղաղանալս, և մանաւանդ ի տեսանելս զառաւել զհպատակութիւն ի դմանէ, ի խաթեր ձեր՝ կրկին անգամ բերեալ զգա ի սուրբ Աթոռս, խիլայելոյց եմք խաչիւ, և յատուկ վկայական թղթով։ Իսկ այն տուեալ խաչն պարոն Մինաս Քիստովինն է, զոր չնորհեցաք ինքեան, ողջ լերուք ի Տէր մեր, Ամէն։

Ի յուլիսի 24. ի 1802. ի սուրբ Էջմիածին։ Որ ի Վաղարշապատ։

ՄԽԹ. *Թուղթ ի միաբանից առ ժողովուրդսն Պոլսոյ եւ առ այլ քաղաքաց. յէտոյ տաճկագրած (ընդ ուխտաւորաց վասըն ստայօղ բանից Դաւթի անբարիշտ ընտւորի գրեալ ամենայն ստութեան)։*

Որոց և գիտութիւն լիցի, զի յառաջ քան զայս յաղագս պէսպէս անցից և իրակութեանց, որք աստ գործեցան, և ի յունկս օրհնեցելոցդ այլ ընդ այլ աւելորդօք խառն ընդ ստութեան պատմեցան ի նախանձոտաց, հարկ համարեալ քանիցս բազմակնիք վկայութեամբ յայտնեցաք զճշմարիտն ի փարատումն տարակուսանաց սիրելեացդ, բայց որպէս երևի ցարդ զոչինչ արգիւնաւորեցին այնոքիկ զրարի այլ ես քան զևս սաստկացեալ բանք յաչաղկոտաց թունաւորեցին և զայլս, և իբրև զհուր այրեցին զամենեսին։

Բայց ողորմութեամբն Աստուծոյ մինչև ի զանազան տեղեաց ի մեծէդ Պօլսոյ, և յայլ յանուանի քաղաքաց եկլին բարեպաշտօն ուխտաւորք ի սուրբ Աթոռս Աստուածաէջ յուխտ և յերկրպագութիւն և տեսին զամենայն ինչ ի կարգի և ի բարեվայելչութեան. Թէ և ոչ աւելի քան զառաջինն և ոչ պակաս իսկ այսինքն զմայր Աթոռս մեր ի շինութեան և ի պայծառութեան, զմիաբանութիւնս մեր ի բարեկարգութեան, ի սէր միաբանական և ի մեծի հպատակութեան որ առ գահակալս մեր և զամենայն զարդս և զարծաթեղէնս ի լրութեան և յամբողջութեան, զորոց համբաւեալ էին արք նախանձոտք որպէս թէ խորտակեալ ի ձեռս այլազգեաց իցէ մատնեցեալ և գիտացին ստուգիւ որ զամենայն ինչ զորս լուեալ էին յաշխարհի իւրեանց ընդունայնք և սնոտի զրոյցք էին ի ննջաւորաց յառաջացեալք։ Եւ ի վերայ ինչ ինչ իրաց ես մինչ տարակուսեալ հարցին ցմեզ երդմամբ, մեք ես վկայելով առաջի Աստուծոյ և առաջի վերոյիշատակեալ ուխտաւորացդ խելամուտ այնց արարաք. բառնալով բոլորովիմբք զամենայն զկարծիս և զերկբայութիւնս զորոյ ունէին, այսինքն է հաճութեամբ մերով և երկրականացս է հայրապետութիւն սրբազան քահանայապետիս մերոյ և ոչ բռնութեամբ. յօժարակամ սրտիւ ընդունիմք, և ոչ ի հարկէ և ամենայն զարդք և եկեղեցական սպասք ամբողջութեամբ կան, և չեն պակասեալք, նաև ամենայն բանք զորս բարբանջեն արք թշնամանողք, ցնորեալ մտաց խառնիխառն աղճատանք են և այլն։ Եւ ի վերայ այսր ամենայնի վկայեցաք ես որ Դանիէլն ինքն է վատնիչ արդեանց սրբոյ Աթոռոյս. զի ուր և եղիտ զինչս սորին յափշտակեաց. որպէս ի Բաղաղիտ և ի Կարին եղեալ զբեռինսն, որք էին մեծագին զարդք ի լուսահոգւոյն առ անհի պարսից անդ ւանդ եղեալք՝ վատնեաց ի պէտս սնոտի ախտին և զայն կամեցաւ ի վերայ սրբազան տեառնս մերոյ բարդել և այլն։ Զայս թուղթ կամակար մտօք ի հաստատութիւն ամենայն զրեցեալ բանից մերոց և ի բաց փարատումն սնոտի կարծեաց և տարակուսանաց ամենիցդ կնքեալ ետուք նոյն մեծահաւատ ուխտաւորացն, և խնդրեցաք ես միաբանութեամբ օրինակել տալ և յիւրաքանչիւր քաղաքս առաքել։ Նաև զոր ինչ տեսինն բարի աչօք իւրեանց, և զոր ինչ լուանն ի մէնջ, իբրև ականջալուր և ականատես վկայ՝ զայնս պատմեսցեն օրհնեալոցդ բանիւք, և հեռաւորացդ գրովքդ զի ճշմարտութիւնն Աստուծոյ, զոր ջանան ծածկել խռովարարք, իբրև զարեգակն փայլեալ յայտնեսցի. և զայթակղեալքդ անդրէն ի յառաջին բարեպաշտութիւն հաստատեալ խաղաղասջիք, ջերմացուցանելով զսիրտս ձեր ի վերայ լուսոյ ծնողիս ձերոյ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի, ի վերայ գահակալի սորին, և ի վերայ խղճալի միաբանութեանս։ Ար մեամք միշտ վասն բարեխօսութեան ձերոյ և երկարութեան կենաց աղօթարար ծառայք Աստուծոյ, առաջի սուրբ տաճարին նորին, ողջ լերուք ի սէր ստորակնքողացս թղթոյս։

Գրեցաւ ի ՌՄԾԱ. Թուոջս ի յուլիսի... ի մայր Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ՄԺ. *Ի Թօխաթ առնախորդ պատրիարգըն Պօլսոյ:*

Զի գործ քաջի և զգօնի է ի բարեբաստութեան և ի գժբախտութեան միապէս վարիլ։ Ուրեմն ի վայրիդ յորում կաս ուրախութեամբ անցուցանել զաւուրս աղատապէս, և գոհանալ զԱստուծոյ, որոյ առաջի ընդ փոփոխութեամբ են ամենայն իշխանութիւնք, ուշիմութեանդ են ցոյցք, զոր թողում. քեզէն խոկալ և ի Տէր խրախուսիլ։ Բարեպաշտօն ուխտաւորքն եկեալ ի սուրբ Աթոռս, և զուխտս իւրեանց կատարեալ և զսուրբ տեղիս և զմիաբանութիւն, և զամենայն զարդս Աստուածային Տանս տեսեալ ի պայծառութեան և ի բարեկարգութեան և յամբողջութեան և գիտացեալ զյայտնի զրպարտութիւնս չարասիրաց՝ ուրախութեամբ սրտի գոհանալով զԱստուծոյ վերադարձան յայդր, յորոց զհարկաւորն կարէ տեղեկանալ եղբայրութիւն ձեր։ Սոք յիւրաքանչիւր ժամանակի զմերս սիրոյ թուղթ հանդերձ ուրախութեամբք կողմանց զրեալ եմք սիրոյդ, բայց հասեալք են թէ ոչ, չգիտեմք։ Զարդիս ողորմութեամբն Աստուծոյ կամք միաբանութեամբք և երկրայլին ժողովրդովք ի խաղաղութեան, գերապատիւ Շահն

և խանն երկրիս ունէին զմեծագոյն խնամս ի վերայ մեր, և ի վերայ սուրբ Աթոռոյս առաւել քան ի վերայ առաջնոցն։ Նման սոցին և մեծամեծքն ռուսաց, որք ի Թիֆլիզ, այս է քաղաքապետն և կողմնակալն ունի զմեծագոյն շնորհս ի վերայ մեծի Աթոռոյս և ի ձեռըն զեսպանաց հասու լեալ ճշմարտութեան, խոստացեալ են մեզ ծանուցանել զայնս մեծի կայսերն, և յուսադրեալ եմ սակս հրովարտակի նորին և վերահաստատութեան մերոյ, և որպէս ներևի ի մեր կոյս է Տէր, և զամենայն ինչ ի բարին ունի եզերել։ Սապէս և բոլոր բնակիչքն Թիֆլիզու միակամ և միասիրտ դիմեալ յապարանս նոցին զեբաղանցութեանց վերոյիշատակեալ մեծամեծացն բողոքեալ են միաբանութեամբ, թէ որ կայ օծեալ, և զարդիս ի սուրբ Աթոռ Լուսաւորչին բազմեալ, զնա զիտեմք մեզ հայրապետ և Տէր։ Եւ ի վերայ այսր բարձեալ են զանուն չարահամբաւ Դանիէլին, և զմերն յամենայն եկեղեցիս յիշատակեալ և բաց յայց մեծագործութեանց և զերկու մահսերս են արարեալ զմին առ ինքնակալն վասն անփոփոխութեան մերոյ, և զմիւսն վասն չարասիրաց դրուածոց առ Հաշտարխանցիսն ի չլինել ունկնդիր բանից նոցին։ Թողում զանպատուելն նոցա զՅովհաննէս սապատողն զայրն խռովարար և բանսարկու, որ ի փախչելն աստի ի Թիֆլիզ, տարեալ է ընդ իւր և սափորաւ զմիւռոն, զոր իբրև զգոզունի կալեալ Թիֆլիզեցիքն յափշտակեալ են ի ձեռաց և խայտառակեալ և կամեցեալ են կապանօք առ մեզ դարձուցանել։ Զհուսկն ծանիր, Դանիէլն ի Բայազիտ նստեալ՝ յետ ամենայն անկարգութեանց և վնասատուութեանց ջանայ կամ զանփոփոխելի հայրապետութիւն ազգիս ընդ փոփոխութեամբ արկանել, և կամ ի Քիւրտիստան ի հայրենի վանքն իւր աննշան զաթոռ հաստատել և հակաթոռ դնել։ Բայց Աստուծով յերկուց չարաչար խորհրդոցն ևս ունի չարաչար զրկիլ և զահավիժիլ որպէս երբեմն ի Պօլիս։ Բայց դու սիրելի եղբայրդ իմ ի սէրդ կատարեալ՝ հաստատուն կալով՝ գիտեա, զի յամենայն ժամ զպատուականութիւն քոյ ի սրտի և ի հոգւոջս անջնջելի տպաւորեալ ցանկամ ի չարչարանսդ ընդ քեզ չարչարակցիլ, և ի փառս եթէ եղէց՝ ընդ ազնուոյդ վայելել։ Զայսչափս առ այժմ գիտացեալ, ողջ լեր ի յողջ գլուխն Քրիստոս ի զուարճութիւն և ի յուրախութիւն սրտի մերում, Ամէն։

Ի յուլիսի ... ի 1802. ի մայր Աթոռս ամենայն հայոց ի սուրբ Էջմիածին։

ՄՁԱ. *Թուղթ ի Պետըրբուրղ առ ենարալ պրոկուրոր Ալէքսանդր Անդրէիչ Բէքլէշովն:*

Զի ամենայն մարդասիրութիւնդ ձեր և բարերարութիւնք, զորս ի յիւրաքանչիւր ժամանակի ցուցեալ էք և ցուցանէք միշտ տառապեալ ազգի մերում, յայտնիք են մեզ, առաւելապէս ընդ մեծագունի սիրոյն և օգնականութեան որ առ հանդուցեալ Յովսէփ սրբազանն. զորս լիապէս պատմեալ է մեզ հոգևոր որդին նորին և մեր Գրիգոր արքեպիսկոպոսն և այլք։ Որոց աղագաւ որպէս ազգ մեր կան պարտաւորեալ բարելաւութեանց ձերոց ցուցելոց առ ինքեանս, նմանապէս և մեք առաւել քան զնոսա պարտաւոր եմք բոլոր միաբանութեամբ առաջի Աստուածայլին սուրբ տաճարիս օրհնել զանգին և բարեացապարտ կեանս ձեր. զոր Տէր օրհնեսցէ. լաչս օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն քաղցր երևեցուսցէ. և խաղաղական կենօք պահեսցէ հանդերձ բոլոր ազնուական ձերայնովքն ի հաստատութիւն եկեղեցեաց իւրոց։ Եւ արդ՝ այս է մեր համառօտ խնդիր ի ձերդ բարձր դերազանցութենէն, զի մինչ ըստ կտակի նոյն Յովսէփայ հոգելոյս հայրապետին ընկալաք զայս աստիճան, և ակնարկութեամբ նորին կայսերական մեծութեան հանեալք եղեն և հրովարտակքն ի դրանէ Հաղարացւոց յանուն մեր, սկսան ապա երկու անձինք Դանիէլ և Եփրեմ նախանձիլ ընդ այն և անիրաւաբար ներհակիլ մեզ, որով և զաշխարհ լցին ստութեամբ, զոր մինչև ի յունկս նորին կայսերական մեծութեան հասուցեալ պղտորեցին զքաղցր և զմաքուր սիրտ նորին և փակեցին զլայնածաւալ գթութիւն նորին ի վերայ սրբոյ Աթոռոյս, և ի վերայ մերս նուաստութեան, որով և այսքան մեծամեծ վնասուց և տառապակրութեանց պատճառք եղեն, որպէս կտրէք տեղեկանալ լիապէս զարարս նոյն նախանձոտացն ի հարազատէն ձերմէ Գրիգոր

արքեպիսկոպոսէն, և ընդ այս զարմանամ յոյժ, թէ զիարդ բանք նոցա յառաջ ընթանան, և ի բարեկարգ տէրութեանդ այդմիկ, զտեղի գտանեն, իսկ բանք հարազատիցս ի գ՛րես ելանենն, որ ի ընէ անտի լուսացեալ եմք ի հզօր օգնականութիւն ձեր, և մինչև ցել չընչոյ մերոյ կամք ամենայն հնազանդութեամբ, հաւատարիմ աղօթարարք վասն հանգարտութեան տիեզերահռչակ կայսերութեան ձերում։ Զի սակս մեծի հպատակութեան մերոյ որ առ աստուածազօր կայսերութիւնդ, կամեցաւ հանգուցեալ Յովսէփ սրբազանն զմեզ յաջորդեցուցանել ի տեղի իւրն, և ոչ զօտար ոք, և այլն։ Ուրեմն՝ մեք որ աղգովին ցանկալաք և ցանկամք այժմ ևս մեծի հովանաւորութեան ձերոյ՝ առ ի պայծառութեան ունել զԱթոռս զայս և զօրէնս մեր, ոչ կամիմք ուստի թէ առ ժամանակաւ ձերով, և մանաւանդ ի պատճառս հանրածաւալ տէրութեան ձերոյ՝ աւերեսցի սուրբ Աթոռս, և խախտեսցի օրէնք Ազգիս մերոյ։ Քանզի նոյն երկու սեպգլուխքն յանուն ձեր պարծին և զբարեկարգ տէրութիւնդ ինքեանց անկարգութեանց պատճառ առեալ, կամին զանփոփոխելի հայրապետութիւն Ազգիս փոփոխել, որով և զսուրբ տաճարս Աստուածային կործանել որ ի Լուսաւորչէ հետէ ցարդ ի մէջ բարբարոսաց և անօրինաց հաստատ է մնացեալ։ Ապաքէն մաղթեմք ի ձ՛րդ գերազանցութենէ քաղցրացուցանել վերստին զքաղցր սիրտ մեծի ինքնակալին ի վերայ մերս նաւաստութեան և ի վերայ խղճալի Աթոռոյս մերոյ, և արդարութեամբ զիրաւունս արարեալ մեզ ընդ վայր բամբասելոցս զբաւականութիւն շնորհել պարգևելով զգրամատն վերահաստատութեան մերոյ, զայլն յանձնեմ զխս և զԳրի՛որ արքեպիսկոպոսն ի յատուկ շնորհս և ի խընամս ձեր, և մնամ միշտ աղօթարար պաշտօնեայ Աստուծոյ խոնարհ ԴԱՒԻԹ կաթուղիկոս ամենայն Հայոց։

Ի յուլիսի ... 1802 ի սուրբ Էջմիածին որ ի Վաղարշապատ։

ՄՁԲ. *Ի Պոլիս առ լատին թարգմանն Թամարովի Յովսէփ Ալեքսանեանն։*

Եւ ընդ սիրոյ ողջունառաք օրհնութեան նամակիս գիտութիւն լիցի սիրելութեան քումդ, զի ուսուցանեն մեզ աստուածային գիրք ճանաչել զերախտաւորս և պատուել։ Արդ՝ բաղում անդամ ի բազմաց լուեալ եմք և գիտացեալ զորդւոյդ սիրելւոյ զբարեպաշտութիւնդ և զջերմեռանդ սէրն ընդ մեծի հպատակութեան և հարազատութեան, զոր ունիս զէպ առ սուրբ Աթոռս Աստուածաբնակ, և առ մերս հայրութիւն, զբաղում աշխատանս յանձն առեալ, ի թարգմանելդ զթուղթսն մեր, որ տառ գերապատիւ պարոն Թամարովն, որպէս զնոյն և զարդիս իսկ սիրելին մեր ազնիւ Գէորգ Աղայեկեանն և այլք ոմանք բարեկամք մեր ևս առաւելապէս գրեալ էին այտի, և զմեծագոյն շնորհակալութիւնս մատուցեալ քումդ սիրելութեան։ Եւ խնդրեալ ևս էին ի մէնջ յատուկ օրհնութեան թղթով մերումս հայրական սիրոյ արժանաւորել և զքեզ։ Սակս որոյ՝ և մեք այսու օրհնութեան սիրոյ նամակաւ մեծապէս շնորհակալիմք զքէն յաղագս ամենայնի բարեյաւութեանցդ։ Տէր օրհնեսցէ զքեզ և զօրացուսցէ, և յամենայն չարեաց փրկեսցէ ի խաղաղութեան և ի բարեյաջողութեան պահեսցէ և բանից և գործոց քոց յառաջատութիւն տացէ։ Ապաքէն՝ պատուիրեմ սիրելւոյդ մերում, ի սէրդ կատարեալ, և ի յորդիութիւնդ անխարդախ հաստատուն և անյեղլի կալ և մնալ, և որ քան զօր առաւելուլ և ևս քան զևս ի դոյնն յորգորիլ, և զայլս ևս յորդորել, որպէս զի վարձուց բազմաց, երկնաւոր օրհնութեան և մերս սիրոյ և շնորհակալութեան հանապազօր արժանաւոր գտանիցիս. որպէս զառհաւատչեայն հանդերձ օրհնութեամբ ընկալնուլ ի մէնջ և վայելել յետ ոչ սակաւ միջոցի ի խաղաղանալս Աստուծով. իսկ զայլ անցսն տեղւոյս, և զորպիսութիւնս մեր և զարարս թշնամեացն Աստուծոյ. և զվշտակրութիւնս մեր ի ձեռաց նախանձոտաց, ի պատճառս որոց և զմեծամեծ վնասսն զորս կրէ սուրբ տաճարս Աստուածային և այլն, թողում գիտել ձեզ ի թղթոց պարոն Գէորգին Աղայեկեան։ Բայց սիրելիդ զսէրդ և զորպիսածանոյց թուղթդ ի մէնջ աննուազելի արարեալ։ Ողջ լեր ի տէր և զօրացեալ ամենազօր բազկաւ նորին Ամէն։

Ի յուլիսի... 1802. ի մայր Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։ Որ ի Վաղարշապատ։

ՄԺԳ. *Ի Պետրբուրղ առ զրաֆ Վիկտոր Պաւլովիչն Քոչուպէյով:*

Զի որպէս արեգակն իւրով ճառագայթիւք փայլի յաշխարհ ամենայն այսպէս և քաջագործութիւնք և հանրօգուտ մարդասիրութիւնք ընդ մեծի զգօնութեան՝ հանգուցեալ քեռւոյն ձերոյ և խնամակալին ազգիս մերոյ՝ մեծանուն կանցելարի լուսաւորագունեղ քնեազ Ալէքսանդր Վասիլիչ Բէզբորոդկինի համեմատ նմին յաշխարհ ամենայն տարածեալ քարոզի յամենեսին և ամենայն բերան ստուգապէս խոստովան լինի։ Որպէս նոյն բարեպաշտի և Քրիստոսասիրի սիրոյ ողջունագիրքն, որ առ հանգուցեալ սրբազան Ղուկաս կաթուղիկոսն յայտնի ցուցանէ զնորին բարեգթութեան քաղցրութիւն և զմեծագոյն սէրն, զորս ունեցեալ է և առ սուրբ Աթոռս մեր, և առ դահակալս սորին։ Զայն թուղթ և զայլ նորին նման ի մատեանս ողջունագրաց արձանացուցեալ՝ պահեմք ի սուրբ Աթոռոջս փափագանօք իբրև զխնամակալի սորին մշտնջենաւոր յիշատակ բարեացապարտ պաշտպանութեան նոցին։ Հանգոյն սմին և ձերդ լուսափայլութեան մեծագոյն բարեպաշտութիւն և զմարդասիրութիւն, զորս ցուցեալ էք երբեմն ի մեծն Պօլիս և ի դուռն մեծի Կայսերութեանդ մերայնոցն, յաւուրս Յովսէփայ հոգելոյս հայրապետին, և միշտ ի ցուցանելն էք, ոչ ժխտեմք, զի բացերեապէս փայլին, այլ բոլոր միաբանութեամբ ազգովին պարտաւորեմք զաղօթս առ բարձրեալն մատուցանել առաջի Աստուածային սուրբ տաճարիս վասն հոգւոյ ի Քրիստոս հանգուցելոյ քեռւոյն ձերոյ, և վասն երկարութեան կենաց և բարեյաջողութեան ձերդ լուսափայլութեան։ Եւ արդ զայս մի ինչ խնդրեմ ի ձերդ լուսափայլութենէ, զայդ բարերարութիւն և խնամակալութիւն ընդ հզօր ձեռնտուութեան և ի մերում ժամանակի անպակաս առնել ի սրբոյ Աթոռոյս և ի մերս նուաստութենէ, որ ի բերան անկեալ բամբասիմք ի զուր ի դրունս մեծի կայսերութեանդ։ Եւ բարեգթութեամբ ձերով՝ յօժարեսջիք քաղցրացուցանել զմաքուր սիրտ օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն ի վերայ սրբոյ Աթոռոյս և ի վերայ վշտակիր անձին մերոյ, զոր արք նենգաւորք զառնացուցեալ փակեալ են զհանրածաւալ ճառագայթք նորին ի մէնջ։ Քանզի՝ յետ Աստուծոյն՝ միմիայն ի հզօր ձեռն ամենաբարեպաշտ ինքնակալիդ կամ. ամենայն յուսով ապաւինեալ զի որպէս յսկզբանն ըստ կտակի հանգուցեալ Յովսէփայ հայրապետին սկսաւ խնամատարութեամբ զմերս բարեբախտութիւն, նմանապէս և այժմ զամենայն զբանս նախանձոտաց անպիտան համարեալ քաղցր ակնարկութեամբ իւրով՝ վերահաստատեսցէ զհայրապետութիւն մեր, զոր խռովարարք ջանան փոփոխել և զօրէնս մեր եղծանել։ Առ որ և մեք բոլոր ազգօք ակնապիշ եղեալ հայիմք, և ցանկամք օգնականութեամբ ձերով՝ վայելել զգթութիւն և զողորմութիւն նորին կայսերական մեծութեան, և ի պայծառութեան ունիլ զօրէնս մեր։ Զի որ չէ եղեալ մինչ ցարդ փոփոխութիւն հայրապետաց և աւերութիւն մեծի Տանըս յայլազգեաց, ոչ կամիմք, թէ ի պատճառս բարեկարգ կայսերութեանդ լինիցի՝ զորս ունիք լիապէս ի հարազատէն ձերմէ Գրիգոր արքեպիսկոպոսէն գիտել, զոր և յանձնեմ ի յատուկ խնամս և ի շնորհս ձեր, և մնամ վասըն պատուականութեան ձերոյ աղօթարար պաշտօնեալ Աստուծոյ խոնարհ ԴԱՒԻԹ կաթուղիկոս ամենայն Հայոց։

Ի յուլիսի... ի 1802. ի սուրբ Էջմիածին որ ի Վաղարշապատ։

ՄԺԳ. *Թուղթ ի Պետրբուրղ առ Գաւրիլ Պետրովիչ Գրաֆ Ռումյանցովն։*

Զի որպէս ոչ կարէ թաքչիլ քաղաք որ ի վերայ լերին իցէ կառուցեալ, այսպէս և ոչ կարեն ի թաքնութեան մնալ մեծագործութիւնք, վեհանձնութիւնք, և մեծամեծ հզօր յաղթանակութիւնք ընդ մեծարգիութեան ի Քրիստոս հանգուցեալ երջանիկ հօրն ձերոյ։ Ընդ որս և իբրև զճահ լուսաբորբոք՝ մեծապէս փայլին և հզօր պաշտպանութիւն նորին սուրբ եկեղեցւոյս և ազգիս մերոյ։ Նման սըմին և յայտնի է ամենից՝ առատագոյն սէրն, որ ցուցեալ է սրբազան Յովսէփայ հոգելոյս հայրապետին, զորս, և զայլ սոյնպիսիս տեղեկացեալ եմք մեք լիապէս ի հարազատէն ձերմէ Գրիգոր արքեպիսկոպոսէն և յայլոց.

Այժմ լսեմք ես՝ որ դուք գնմանութիւն բարի հօրն ձերոյ երջանկի ի ձեզ բերելով՝ ջանալք խնամարկել զսուրբ Աթոռս, և զմեզ և Գրիգոր արքեպիսկոպոս սիրելի որդւոյն մերոյ ցուցանէք զզանազան անսակ օգնութիւնս ի կարիս։ Ուստի և մեք լաղագս ամենայն բարելաւութեանց ձերոց և երանելի նախնեացդ, բոլոր միաբանութեամբ առաջի Աստուածային սուրբ տաճարիս զաղօթս առ. բարձրեալն վերառաքեցաք վասն բարեացապարտ հոգւոց ծնօղաց ձերոց և սակս երկարութեան անդին և ըղձալի կենաց ձերդ լուսափայլութեան։ Իսկ արդ՝ այս է ի վերջոյ՝ մերս նուաստութեան խնդիր ի ձերդ Աստուածպաշտութենէ. զի զքաղցր և զմաքուր սիրտ օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն, զոր նենգաւորք և թշնամիք արդարութեան դառնացուցեալ են ընդդէմ մեզ և սրբոյ Աթոռոյս մերոյ, վերստին քաղցրացուսջիք, և ի խնամարկել, և ի նեղութեանս՝ յօգնութիւն մեզ ժամանել՝ իւրով լայնատարած բարեգթութեամբն յորդորեսջիք։ Քանզի նոյն նախանձոտք ի բազում ամաց հետէ ի մէջ անօրինաց հաստատ մնացեալ զսուրբ Աթոռս այս կամին քակել, և զօրէնս մեր լուծանել փոփոխելով զանփոփոխելի հայրապետութիւն ազգիս և պատճառ ինքեանց չարութեանց զբարեկարգ տէրութիւնդ առեալ, ձեօք պարծին, և ի ձեռն ձեր կամին վնասել զսուրբ տունս Աստուծոյ։ Վասն որոյ ցանկամք ազգովին, ոչ թէ առ ժամանակաւ ձերով և ի պատճառս ձեր ի լաւերութիւն տեսանել զսա, և զօրէնս մեր խախտեալ՝ այլ ևս առաւել, ի պայծառութեան։ Ուրեմն՝ քննութեամբ հասու լինել աղաչեմ և արգաբութեամբ զիրաւունս առնել մաղթեմ և մեզ ի զուր բամբասելոց զբաւականութիւն շնորհել, որով պարտաւորէք արդարև զմերս նուաստութիւն անդադար շնորհակալիլ զձերդ պատուականութենէ օրհնաբանութեամբ։ Զայլն ունիք գիտել ի Գրիգոր արքեպիսկոպոսէն, զոր յանձնեմ ի յատուկ շնորհս և ի խնամս ձեր, և մնամ միշտ աղօթարար պաշտօնեայ Աստուծոյ, խոնարհ ԴԱՒԻԹ կաթուղիկոս ամենայն Հայոց։

Ի յուլիսի... ի 1802. ի սուրբ Էջմիածին, որ ի Վաղարշապատ։

ՄԾԵ. *Ի Պետըրբուրգ առ Ենարալ Դիմիտր Պրօկօֆիչն, որ է ատենադպիր մեծի կայսերն։*

Զի որում շատ տուաւ գիտութիւն և ուշիմութիւն, շատ խնդրեսցի, ասէ կենարարն աշխարհի Յիսուս։ Արդ՝ մինչ յառատաբաշխ ձեռանէ նորին ընկալեալ ունիք զբարձրագոյն աստիճանիդ զգերազանցութիւն, և նախագահիք այսօր ի յամենայն խորհրդականս նորին կայսերական մեծութեան, շատ պահանջի ի ձէնջ և արդարութեան շաւիղ։ Այն զի յայտնի է ձեզ, թէ դժարդ արք նախանձոտք ի յոդւոյ ատելութենէ շարժեալք՝ պղտորեցին զմաքուր սիրտ օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն, և ի ձեռն ստութեան դառնացուցեալ զքաղցր և զանվրդով սիրտ նորին ի վերայ խղճալի Աթոռոյս մերոյ և ի մերս նուաստութեան, փակեցին չարութեամբ իւրեանց զողորմութեան դուռն ընդդէմ մեզ։ Որով և այսքան անթուելի աւերութիւնք եկին հասին ի վերայ մեր, և առաջի ամենից ծանակելի արարին զօրէնս ազգի մերոյ։ Զի որ ի Լուսաւորչէ հետէ ցարդ ի մէջ անօրինաց հաստատ է մնացեալ սուրբ Աթոռս և օրէնք մեր, այժմ ի ձեռն բարեկարգ կայսերութեանդ ջանան եղծանել զայն և զանփոփոխելի հայրապետութիւն ազգիս ընդ փոփոխութեամբ արկանել և մեք, որ բոլոր ազգովին ցանկալաք ի վաղնջուց յայնածաւալ զթութեան և ողորմութեան տիեզերահռչակ մեծի կայսերութեանդ այգմիկ, առ ի պայծառութեան պահել զսուրբ Աթոռս և զկրօնս մեր, ահա այսօր ազգովին ի սուգ կամք պաշարեալ։ քանզի տեսանեմք յայտնի, որ նոյն խռովիչքըն յանուն հանրօգուտ կայսերութեանդ պարծին, և ինքեանց չարութեանց զբարեկարգ տէրութիւնդ պատճառ առեալ, վնասեն զսուրբ Աթոռս վնասուք մեծամեծօք։ Ուրեմն՝ դուք այսօր ըստ որում կացուցեալ էք ի վերուստ մատակարար ընդ մէջ երկուց, և խաղաղարար միջնորդ՝ առ ի զբողոքս զրկելոց ծանուցանել մեծի կայսերն և զողորմութիւն նորին բաշխել առատապէս ամենայն կարօտելոց, պարտիք բարեգթութեամբ ձերով քաղցրացանել վերստին զմաքուր սիրտ նորին ի վերայ տառապելոց, որ ի դրունս վեհագունից

բամբասիմք ընդ վայր և կարօտիմք անա հըզօր օգնականութեան ձերոյ։ Եւ խնդրեմք, զի ամենաբարեպաշտ պաշտպանն ազգիս և մեր, Աստուածազօր ինքնակալդ տիեզերի, արդար քննութեամբ զդատաստանս դատեալ վերահասութեամբ մեզ զրկելոցս ի քաղցր հովանաւորութենէն նորին զբաւականութիւն շնորհեսցէ, որոյ աղագաւ պարտաւորեալ մեր կանխեմք առ. տէր, և ի մէջ Աստուածային սուրբ տաճարիս բոլոր միաբանութեամբ զաղօթս առ. բարձրեալն վերառաքեմք վասն երկարութեան կենաց օգոստափառ. և ինքնակալ մեծի կայսերն, և բոլոր կայսերազուն պալատականացն նորին, և մանաւանդ վասն բարեյաջողութեան ձերդ բարձր գերազանցութեան։ Նաև՝ զմերս ջերմեռանդութիւն զոր ունիմք առ. Քրիստոսազօր կայսերութիւնդ յայտնի ցուցաննեն ձեզ խոնարհական թուղթք մեր առաքեալք յայգը առ. մեծ ինքնակալդ, և մանաւանդ վասն մեծի հպատակութեան մերոյ զԳրիգոր արքեպիսկոպոսն ըստ հրովարտակի նորին կայսերական մեծութեան, և ըստ կտակի Յովսէփայ հոգելոյս հայրապետին ձեռնադրեալ առաքեցաք յայդկոյս, յուսալով՝ թէ շնորհակալութիւն ունիմք վայելել յաղագս այնր, իսկ այժմ զներհակն նմին տեսանեմք. զոր թողում գիտել ձեզ ի նոյն Գրիգոր արքեպիսկոպոս հարազատէն ձերմէ, զոր յանձնեմ ի յատուկ շնորհս և ի խնամս ձեր, և հնամ վասն բարեացապարտ անգին կենաց ձերդ բարձր գերազանցութեան՝ աղօթարար պաշտօնեայ Աստուծոյ խոնարհ…

Ի յուլիսի… ի 1802 ի սուրբ Էջմիածին որ ի Վաղարշապատ։

ՄԺԶ. *Պօլիս առ հաճի Յակոբ ամիրայն:*

Եւ ընդ օրհնութեան և սիրոյ նամակիս՝ գիտութիւն լիցի քումդ սիրելութեան։ Զի ի թղթոց մեր Ստեփաննոս արքեպիսկոպոսին, պարոն Գէորգին Աղալեկեան, և այլոց՝ գիտացաք զմեծազօրն սէրդ և զհաւատարմութիւնդ, զորս ունիս առ. շնորհատու սուրբ Աթոռս և առ. մերս հայրութիւն, և բազմապատիկ շնորհակալութեամբ օրհնեցաք զքեզ առաջի Աստուածային տաճարիս հանդերձ բոլոր քոյայնովք։ Տէր օրհնեսցէ զքեզ և զօրացուսցէ, և զամենայն բանս և զգործս քոյ ի բարին յաջողեալ, խաղաղութեամբ և երկար ամօք պահեսցէ փրկելով ի փորձանաց, պատուիրեմ ուրեմն սիրով, հաստատուն կալ և մնալ ի զոյնն, և օրքան զօր առաւելուլ լինելով ջատագով ճշմարտութեան, զոր արք նախանձոտք ծածկեն, և ջանան վնասել ըզսուրբ Տունս Աստուծոյ։ Քանզի՝ Դանիէլ այրն չարագրգիռ և նորապիսիք, թէ զինչ ինչ ասացին և գրեցին վասն մեր, և ստութեամբ լցեալ զաշխարհս զայթակղեցուցին զբազումս ի վերայ ընտրութեան մերոյ և օրինաւոր օծման, որպէս թէ բռնութեամբ եմք նստեալ, և արծաթեղէնս խորտակեալ և պարսից տուեալ, և այլն։ Զայնս ցարդ լաւապէս գիտէք հարկաւ։ Ուստի և մեք քանիցս անգամ բազմակնիք մահսէրօք յորդորեցաք զժողովուրդդ մեր՝ չհաւատալ բանից նոցին, զի ընդունայնք են։ Որպէս զվերջին բազմակնիք մահսէրսն հանդերձ այլովք թղթովք առաքեցաք Ստեփաննոս արքեպիսկոպոսաւ, որոց և սիրելիդ իմ ի հարկէ տեղեկացեալ ես։ Բայց օրհնեալքն տեղւոյդ մինչև ցայժմ զոյինչ պատասխանի մեզ գրեցին, զի զմիտս դոցին գիտացեալ առնէաք ըստ գրեցելումն զայս կամ զայն։ Ահա նմանապէս վերստին գրեալ զկոնդակ առ. իշխանապետսն, և օրհնութեան թուղթըս առ բարեպաշտ իշխանսն, յորդորեցաք անդրէն հոգ տանել վասն սրբոյ Աթոռոյս և յօգնութիւն փութալ։ Զայս թուղթ ևս յատկեղ սիրելւոյդ գրեալ պատուիրեմ, ի բաց կալ ի չարասիրաց, և զհետ խաղաղութեան երթալ, և զցաւս մեր և լուսոյ մօրս ձերոյ յայտնել այնոցիկ, որք խոհեմք են և արք ուշիմք. զորս և ի սէր և ի խաղաղութիւն համոզել։ Քանզի եթէ այլ ևս երկարեսցի խռովութիւն քաղաքիդ և տարաձայնութիւն ժողովրդոցդ՝ քայքայի բոլորովիմբ Լուսաւորչաչէն և Միածնակերտ սուրբ և հրաշազարդ Աթոռս երկնաքատակ փոլթ ընդ փոլթ, զոր թէ և կամիցին յետոյ շինել, ամենևին ոչ կարեն։ Ուրեմն Ազգդ Հայկազեան, և զաւակքդ Լուսաւորչածին պարտիք ձեռնտուութեամբ և խորհրդակցութեամբ միմեանց վերականգնել զԱթոռս Ասքանազեան և զԹահս փրկչական, զոր արք ախտամոլք և անձնասէրք կործա-

նել ջանան։ Վասն զի՝ Դանիէլ այրն աղմկասէր, լեա ամենայն աղմկից և վնասատուութեանց, որ ուր և գնաց աղմկով եկից, և ուր և եգիտ զինչս Աթոռոյս յափշտակեաց, ի Բալաղիա և ի Կարին եղեալ զբեռինսն ես յափշտակեալ առ. ի սկէտս սնոտի փառացն, առ. որ ձգտի նկրտիլ, վատնեաց։ Եւ նորքօք ոչ շատացեալ՝ զթէմֆսուկս զրեալ բաժանէ բըռնակալաց զծանր ծանր կաշառս խոստանալով, զի ի տեղի մեր լիցի, զոր այնքանն ի հարկէ եթէ ինքն տուեալ նստցի, ահա վնաս։ Իսկ եթէ ոչ տացէ, ի մէնջ պահանջեալ առնլոց են։ Ապաքէն յայսպիսի վիշտս կամք մեք, և օրհնեալ իշխանքն մեր հեռի զոլով ոչ գզան։ Ի վերայ ամենայնի՝ ընկալաւ զօծումն ապօրինաւոր ի դատապարտութիւն անձին իւրոյ ի յարտաքս ընկալեալ և ի մերժեալ իբր կաթուղիկոսէն Ախթամարայ. աւաղ ապաբաղդութեան Ազգիս մերոյ և Աթոռոյս, զի տեսանեմ ըստ Սողոմոնի զծառայս հեծեալս ի ձիս, և զտեարս նոցա, զի երթան հետիոտս և այլն։ Արդ՝ զի՞նչ բարի յառաջանայ յայսպիսի արարմանց, ոչ գիտեմ։ Զի նա ի Քիւրտիստան ի հայրենի զաւառի իւրում կամի զնոր Աթոռ հաստատել, և զվանքն Իւչքիլիսէի հարստացուցանել, և զպայծառ Աթոռս այս աղարտել և ի վայելչութեանց խրթնացուցանել, և դուք լռութեամբ տանիք, և ոչ սանձէք։ Եւ զայն, որ ի Լուսաւորչէ հետէ չէ եղեալ և չէ տեսեալ, ահա նա զործէ, փոխագրելով զաթոռ ձեր ի Քիւրտստան, քանզի՝ ի Լուսաւորչէ և այսր՝ բազում հոգատարութեամբ և տրովք և օգնականութեամբ ի Քրիստոս հանգուցեալ երջանիկ նախնեացն ձերոց հաստատ և պայծառ մնացեալն ահա առ ժամանակաւ ձերով քայքայի, և դուք անփոյթ առնէք։ Ի տեղի նախնեաց ձերոց և բարի ծնողաց, այսօր դուք էք, պարտիք քաջապէս ընդդիմանալ օրինազանցից, և վրէժխնդիր լինել, և չթողուլ ըդկանոնս և զսահմանադրութիւնս նախնեաց քակել։ Դարձեալ գրեցաք յառաջ և այժմ ես գրեմ ամենեցուն, զի եթէ տարակուսին տակաւին ընդ բանս մեր, զարս հաւատարիմս յղեսցեն, և քննութեամբ զճշմարիտն ի ստոյն որոշեսցեն, և գիտասցեն, թէ մեք եմք վատնիչն արդեանց սրբոյ Աթոռոյս և կաշառատուն, թէ Դանիէլն։ Ահա ի մեծամեծացն ռուսաց երկու դեսպանք եկեալ ի սուրբ Աթոռս՝ վերահասու եղեն անօթիցն և անցիցն, և ծանուցեալ զթշնամութիւնս նախանձոտաց՝ գնացեալ պատմեցին առաքողացն, յորոց՝ վասն անմեղութեան մերոյ ընկալաք զրագում յուսադրութեան թուղթս, որք և խոստացեալ ես էին ծանուցանել զայն մեծի կայսերն։ Նոյնպէս և ժողովուրդքն Թիֆլիզու առհասարակ միակամ և միասիրտ զիմեալ են յապարանս նոյն մեծամեծացն ռուսաց՝ և միաբերան աղաղակեալ թէ՝ որ կայ զարդիս օծեալ և յԱթոռս սուրբ Լուսաւորչին բազմեալ, զնա գիտեմք մեզ հայրապետ, և ի վերայ այսր՝ և զերկու մահսէրս են արարեալ զմինն առ կայսրն վասն վերահաստատութեան մերոյ, և զմիւսն առ ժողովուրդսն Հաշտարխանու ի չլինել ունկնդիր բանից չարախնդացից և խռովարարաց, որոց թղթոց առ մեզ դրեցելոց, և մահսէրի նոցին զօրինակսն ահա առաքեցաք յայդր ի տեսանել, և զբարեպաշտութիւն նոցա գիտել, թէ զի՞արդ քաջապէս հակադինեալ ընդդէմ հակառակորդաց՝ ջատագով ճշմարտութեան լինին։ Եւ արդ՝ նման նոցին կարէք և դուք քննութեամբ հասու լինել, և զխռովութիւն քաղաքիդ վերջացուցանել։ Ապա սիրելիդ իմ ջանասցես զվրդովեալ պարզամիտսն ի նոյն վերահաստատել և զխաղաղութիւն յամենեսին սերմանել, և բաւական համարել, որ ինչ եղեն և որքան վնասեցան սուրբ Տունս, և որչափ խալտառակ եղաք ի մէջ ամենայն ազգաց։ Սպասեմ ուրեմն՝ խաղաղութեան ձերոյ և աւետալիր թղթոց՝ ի մխիթարել զանմխիթար սիրտ մեր։ Նաև՝ մեր Ստեփաննոս վարդապետին օգնական լեալ ի վերադարձուցանել փութասջիք։ Այսպէս առնելով քոյ եղիցիս օրհնեալդ յԱստուծոյ և Շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ և ընդ քոյսն ամենայն, Ամէն։

Դրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս ի յուլիսի … ի մայր Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ՄԾԷ. *Թուղթ դարձեալ ի Պոլիս առ Անդրէաս Չէլէպին, յորդորումն ի սէր եւ ի խաղաղութիւն։*

Զի զկատարեալ սէրդ և զորդիական սրտացաւօրէն հարազատութիւնդ և զմեծագոյն հաւատարմութիւնդ զորս ունիս առ լուսածին

մայրս քո սուրբ Աթոռս և առ. մեզ՝ յառաջագոյն իսկ իմացեալ զոլով մեր ի սիրանիչ թղթոցդ գրեցնլոց առ. մեզ, Նորդենիս ես գրեալ ծանուցեալ էին մեզ գնոյնս սիրելիքն մեր Սամփոննոս հանճարունակ արհիեպիսկոպոսն և բարեպաշտօն պարոն Գէորգն Աղայեկով։ Ուստի և մեք յոյժ զոհունակութեամբ շնորհակալ եղեալ զազնուախոհ սիրելոյդ՝ օրհնեցաք զքեզ զարժանիդ օրհնութեանց։ Զոր Տէր օրհնեսցէ և զօրացուսցէ, փրկեսցէ ի փորձութեանց ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ հանդերձ քոյայնովքդ բնաւիւք, և պահեսցէ ի շնորհս խնամոց, և բարեգթութեան իւրոյ ի խաղաղութեան և ի յառաջադիմութեան և հոգեպարար շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ձեռ օգնական և զօրավիգ յարաժամ։ Իսկ և ահա լուէք և իմանալք թէ զիարդ արք ախտամոլք և նախանձոտք զանազան բարուրանօք վատահամբաւելով զանուն մեր՝ ջանան զճշմարտութիւն ծածկել, և զստութիւնս իւրեանց յառաջացուցանել, որով և աւիրել և կործանել զխղճալի սուրբ Աթոռս. յոյսքան հարիւրաւոր և ի հազարաւոր (տես ի Պապադրկանեան մահտեսի Յօհաննիսի թուղթն և անտի դրեալ վերջացո։)

Գրեցաւ ի ՌՄԾԱ. թուոջս և ի յուլիսի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՄԾԲ. *Թուղթ դարձեալ ի մեծն Պոլիս առ Եղիսաբէթ խաթունն օրհնութիւն եւ շնորհակալութիւն վասն Ա հատ ծած կոցի սկհւոյ։*

Եւ ընդ ամենառատ օրհնութեանս Աստուածայնոյ՝ գիտասջիր հոգևոր և սիրելի դուստրդ մեր և հարազատ զաւակ մեծի Աթոռոյս սրբոյ Էջմիածնի։ Զի սրբազան Մարգարէն Եսայիաս ասէ թէ՝ Երանի որ ունիցի զաւակ ի Սիօն, այսինքն ի Տան Աստուծոյ։ Որոյ պատճառն է՝ զի որպէս որք ունիցին զմարմնաւոր զաւակ ի տան երկրաւոր թագաւորի. հանապազ վայելեն զսէր և զխնամս նորին միջնորդութեամբ զաւակին իւրեանց, նոյնպէս և որք ունիցին զհոգևոր զաւակ, այսինքն, զյիշատակ բարի ի տան երկնաւոր թագաւորին, վայելելոց են մշտապէս զխնամս և զգթութիւնս նորին ի ձեռն հոգևոր զաւակին իւրեանց։ Արդ՝ ըստ այսմ և դու օրհնեալդ՝ մեծաւ հաւատով և սիրով փափագելով ունել զհոգևոր զաւակ՝ այսինքն զյիշատակ բարի ի տանըս Աստուծոյ նոյնակազմ սուրբ Աթոռոջս, որով և արժանաւորել խնամոց գթութեանց վերաբազմողին ի սմա, տուեալ էիր յանուն սորին զմի գեղեցիկ ծածկոց Սկհոյ՝ ի բարի յիշատակ քեզ և համայն կենդանեաց և ննջեցելոց քոց։ Յանձնելով հարազատ եղբօր քոյ՝ և սիրելոյն մերոյ մեծահաւատ ուխտաւոր Աստուծով զօրացեալ մահտեսի Սեգրաքին, և նա բերեալ հասոյց առ մեզ։ Զոր և մեք ընկալեալ սիրով՝ մատուցաք Աստուածեան սրբոյ տաճարին, և շնորհակալութեամբ բազմաւ օրհնեցաք զքեզ և զամենայն քոյայինսն զկենդանիս և զննջեցեալս, զորս և յիշեցաք ի մեղսաքաւիչ սուրբ պատարագոջ ի հիահրաշ սուրբ Տեղւոջս։ Ապաքէն, հաճեսցի Տէր Աստուած սիրով և քաղցրութեամբ ընդ հոգևոր յիշատակն քո զոր ընծայեալ ես սրբոյ Տանս նորին, և զփոխարէն հատուսցէ ի քեզ և ի համայն քոյայինսն զշնորհս ողորմութեան և գթութեան իւրոյ, զկենդանիսդ օրհնեսցէ և պահեսցէ, ազատս կացուսցէ ի փորձութեանց հոգեկանաց և մարմնականաց, և ունելով միշտ ընդ հովանեաւ արարչական խնամոցն իւրոց, առաւել ևս զարդարեսցէ գործովք առաքինութեան։ Եւ զննջեցեալսն քո հանգուսցէ ի լոյս երեսաց իւրոց, և ընդ կամակատար ծառայսն իւր դասեսցէ և պահեսցէ յարքայութեան երկնից։ Արդ՝ վերայիշեալ հարազատ եղբայրն քո և ստոյգ սիրելին մեր բարեպաշտ մահտեսի Սեդրաքն եկեալ ի սուրբ Աթոռս՝ կատարեաց զուխտ և զերկրպագութիւն իւր՝ համբուրելով զՔրիստոսաէջ տեղին և զայլ հրաշագործ սրբութիւնսն, որով և լցոյց ըղփափաղ ցանկութեան սրտի իւրոյ, և յետ կատարման ուխտին մինչ դառնալը աստի՝ վասնորոյ դրեցաք ընդ նմա զայս օրհնաձիր թուղթ առ քեզ, զի ուրախասցիս հոգևորապէս։ Որով և պատուիրեմք հոգևոր դստերդ մերում, զի հաստատուն մնասցես ի կատարեալ բարեպաշտութեանդ առ Աստուած, ի և յորդիական ջերմեռանդ սէրդ առ յուսածին Մայրս քո սուրբ Աթոռս և առ մեզ, և յող-

տասիրութեանց և ի բարեգործութեանցդ որ առ սա՝ մի պակասեսցիս, զայլս ես ի գոյն յորդորելով։ Որովք ընկալցիս զվարձս յԱստուծոյ, զշնորհս ի սրբոյ Աթոռոյս և զօրհնութիւնս ի մէնջ։ Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս, և ի յուլիսի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՄԺԹ. *Թուղթ առ Պաւլէ պօլկովնիկն ի պատասխանի թղթոյն ընդ Տէր Բաղտասարին գրեցելոյ։*

Ցորմէ ժամանեսցէ սիրանուէր ողջոյն և Աստուածայլին օրհնութիւն, հանդերձ մեծազօր շնորհիւ միածնաէջ սրբոյ տեղւոյս, ի վերայ դերազնիւ սիրելւոյդ մերոյ՝ և հաւատարիմ բարեկամիդ սրբոյ Աթոռոյս՝ Տերամբ Աստուծով զօրացեալ չքեղաշուք և քաջալաղթ՝ Պաւլէ պօլկովնիկիդ, և ամենեցուն որք քոյ են, ուրախ լինել ի Քրիստոս։ Որում և գիտութիւն լիցի։ Զի սիրոյ և հաւատարմութեան թուղթ պատուելութեանդ էհաս առ մեզ ձեռամբ սիրելի և հոգեոր որդւոյն մերոյ և հաւատարմին ձերոյ Տէր Բաղտասար հանճարունակ քահանային. զոր ընթերցեալ իմացաք զբարեկամօրէն դրուածսդ, և օրհնեցաք զքեզ լիագոյն օրհնութեամբ։ Զոր Տէր օրհնեսցէ և զօրացուսցէ, և պահեսցէ միշտ ի խաղաղութեան և ի յաջողութեան, ուղղելով և զամենայն բանս ձեր առ ի բարին և զքաղցրութիւն խնամոց և գթութեանց Աստուածապսակեալ ինքնակալ կայսերն, առաւել ես առատասցուսցէ առ ձեզ։ Իսկ զվերոյիշեալ Տէր Բաղդասար հոգեոր որդին մեր ընկալաք հայրական սիրով, և ըստ արժանւոյն շահեցաք, որում և պատուիրեցաք, զի մշտապէս հաւատարիմ լիցի առ պատուելութիւն ձեր, և ժիր և արի լիւրապատշաճ բանս և գործս ձեր՝ զոր և ահա սիրով և օրհնութեամբ ուղևորեցաք ի գալ։ Ընդ որում առաքեցաք և ի վայելս Պատուականութեանդ իբր նշան սիրոյ օրհնութեան՝ զհինգ լիտր բրինձ, զԲ լիտր անուշահամ գինի. զոր ընկալեալ վայելեսցես, զսուրբ Աթոռս և զմեզ միշտ ի մտի ունելով։ Բայց արդ՝ զայս գիտասցէ Պատուելութիւն քոյ. զի ստէպ ստէպ գրէք և ծանուցանէք մեզ՝ թէ հաւատարիմ և բարեկամ եմք առ ձեզ, և ողորմութիւն ինքնակալ կայսերն ի վերայ ձեր է, և այլն։ Բայց ահա Դանիէլեան խառնակիչ մարդիքն՝ թշնամիքն սրբոյ Աթոռոյս ի Բալաղտոյ յայգկոյս միշտ դերթեւեկս առնեն, և այդ ճանապարհաւ զան անցանեն ի Թիֆլիզ՝ զի խառնակութիւնս արկցեն, և հասուսցեն զվնասս սրբոյ Աթոռոյս. Պատուելիքդ եթէ ստուգիւն բարեկամ էք առ մեզ. ընդէ՞ր թոյլ տայք նոցա անցանել, և զայսքան խառնակութիւնս առնել։ Խնդրեմ ուրեմն՝ զի փոյթ կալջիք արգելուլ զայնպիսի թշնամիսն արդարութեան, և չթողուլ այտի անցանել։ Որով շնորհակալ լինելոց եմք օրհնութեամբ։ Իսկ զայլ որպէսն սրբոյ Աթոռոյս և մեր՝ ոչ երկարելով աստէն, թողումք ի կենդանի թղթոյդ իմանալ։ Ո՛ղջ լեր ի Տէր. Ամէն։

Գրեցաւ յամի Տեառն 1802. և ի յուլիսի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՄԿ. *Թուղթ առ Հնդկաց Նուիրակ Ցակոբ վարդապետն, յորդորումն առ ի գալ ի սուրբ Աթոռս։*

Ցորմէ ճշմարիտ սիրով և սրտական կարօտիւ Քրիստոսապարգև ողջունիւ և պահպանողական շնորհիւ սրբոյ Տեղւոյս Իջման բանին Միածնի, ծանուցումն լիցի վաղեմեան սիրելի եղբօրդ իմոյ՝ հարազատ և շնորհընկալ որդւոյդ սրբոյ Աթոռոյս՝ Ցակոբայ դերդզօն վարդապետիդ և իմաստնառատ արհի եպիսկոպոսիդ։ Զի ըստ յաջողելոյ շնորհի Տեառն՝ յորմէհետէ մտեալ եմք ընդ լծով այսորիկ տիրական պաշտօնի, երկիցս դրեալ եմք առ սիրելութիւնդ զթուղթս սիրանիշս և որպիսայայտական, որք եթէ հասեալ են առ քեզ, ապա արժան էր սիրելւոյդ դարձուցանել զփոխադարձսն նոցին առ մեզ ի միամտութիւն՝ որպէս վայելուչ էր քոյինդ հարազատութեան առ սուրբ Աթոռս՝ և բնականի սիրոյդ առ մեզ։ Իսկ թէ ոչ են ժամանեալք՝ պարտ էիր դու ինքնին հոգ տանիլ գրել դերկառզեան թուղթ առ մեզ ի բացերև նշանակ անյեղլի·

մնալոյ պարզութեան ջինջ և մաքուր ուրոյդ։

Եւ զի այսպէս ի հանդամանաց սիրոյ պակասեալ գտար, վասնորոյ պատշաճ գայ մեզ վարկանիլ՝ թէ արք յաշակերտք և գրաբանք որպէս զբազմաց, նոյնպէս և զքոյդ զգեղեցիկ միտս պղտորեալ իցեն զանազան զրպարտութեամբք զմէնջ. բայց սակայն սիրելւոյդ պէտք էր խոհականութեամբ տնօրինել զլուեալսդ, և չլինիլ փոյթ և վաղվաղուկ յանսացումն այնպիսեաց ստայօդ ճառատանաց, այլ կալ մնալ քաջ վերահասութեամբ և ճիշտ քննութեամբ դիտակ լինելոյ այնց՝ զոր լուեալն էիր, և յայնժամ հաւատալ և հետևիլ զոր ինչ ստոյգ և ճշմարիտն իմանայիր։ Արդ՝ զպատմութիւն անցից մեր և սրբոյ Աթոռոյս՝ և կամ զգրաբանութիւնս յաշակերտացն այնց՝ թէ կամեցիմք մի ըստ միոջէ գրել աստէն, միանգամայն և ծանուցանել զստուգութիւն և զճշմարտութիւն իրաց մերոց, արդարև անկարելի իմն է պարունակել զայնոսիկ ի թղթիս. այլ կարօտի տեսութեան աչաց, և բերան առ բերան պատմելոյ. վասնորոյ Աստուած յաջողեսցէ, զի բարեաւ և խաղաղութեամբ գայցես, և յայնժամ հասու լինելոց ես ամենայնի։ Այլ արդ՝ այսու համառօտ թղթով զայս գրել կամիմք առ սիրելութիւնդ, զի ամենայնիւ յամենայնի միամիտ և անհոգ մնասցես զմէնջ. քանզի՝ նախ քան զկոչիլս մեր ի սոյն այս պատիւ՝ զորքան ինչ սէր և եղբայրութիւն ունէի առ ազնուութիւն քոյ, զնոյն և առաւել իսկ քան զայն՝ ունելոց եմ ի գալդ բարեաւ, և որպէս վայել է քոյդ պատուականութեան՝ ըստ այնմ շահելոց և յարգելոց եմ։ Որպէս և վկայէ սիրտ քո։ Ապաքէն արժան է զմիտսդ ուղղել առ մեզ, և անտարակոյս կալ մնալ առ յատկական սիրելութիւն իմ, զոր ունիմ առ սէրդ։ Իսկ Նարդենիս ի յոմանց Տաճկաց լուաք թէ շնորհիւ ողորմութեան Աստուծոյ՝ ամբողջութեամբ և անվտանգ անցեալ քոյ ընդ ծովն ահագին, եկեալ ժամանեալ ես յայդր ի Բաղդատ, որով աւետաւոր և բարեյուր համբաւովդ՝ յոյժ և յոյժ ուրախացաք, և վերառաքեցաք առ հանրախնամ բարձրեալն զփառս և զգոհունակութիւնս։ Ուստի՝ խնդրեմք, զի նոյն ինքն բարեգութն Աստուած՝ որպէս յաջողեաց քեզ խաղաղութեամբ յայդր հասանիլ, նոյնպէս յաջողեսցէ և առաջնորդեսցէ քեզ անվնաս աստ ի սուրբ Աթոռս ժամանել, առ ի հանգչիլ յաշխատանացդ ի ծոց մօրս քոյ լուսածնի, և մեք քաղցրագունիւ տեսութեամբ քով՝ կատարելապէս ստասցուք մեզ զուրախութիւն սրտի։ Բայց և զայս գիտասցէ սիրելութիւնդ, զի ահա յայանի է՝ որ իւրաքանչիւր ոք զայն ինչ՝ զոր կարի դժուարութեամբ և մեծագունիւ ջանիւ առ ձեռն բերեալ իցէ, այնմ առաւելապէս խնամ տանի, և պահպանութիւն առնէ ամենայն զգուշութեամբ, զի մի յանկարծուստ ի կորուստ մատնեսցէ։ Եւ զի սիրելիդ ահա մեծաւ ջանիւ և աշխատութեամբ, և կարի վշտիւք և տառապակրութեամբ ժողովեալ ես զժողովեցեալսդ՝ ոչ յանուն այլոյ ուրուք, եթէ ոչ վասն լուսածին մօրս քոյ սրբոյ Աթոռոյս՝ և ուրադումար միաբանից եղբարցդ։ Ապաքէն պարտիս յամենայն կողմանէ զգուշութիւն և զգաստութիւն ունիլ, և առաւելագունիւ ջանացողութեամբ հոգածու լինիլ և պահպանութիւն առնել սիրապէս, զի մի զժողովեցեալսդ յումպէտս վատնեսցես ի թշնամեաց ի ձեռս արկանելով։ Այլ ամբողջութեամբ և անթերի հասուսցես ի սուրբ Աթոռս ի մայրս քոյ հաւատոյ, առ ի մեծապէս վարձատրութիւն քեզ ի Տեառնէ, և ի սրբոյ Իջման տեղւոյս Նորին՝ աղօթիւք լրութեան միաբանակից եղբարցս քոց։ Վասնորոյ գրեմք սիրելւոյդ, զի եթէ ներկայապէս կամեսցիս գալ ի սուրբ Աթոռս, և ժամանակն ես յաջող իցէ քեզ առ նոյն, միամտութեամբ սրտի ելցես և եկեսցես՝ հանդերձ ամենայն առձեռն եղեալ կահիւք և կարասիւք քովք, և մեք ես ըստ խոստման մերում վերընդունելոց եմք զեղբայրութիւնդ ի յատուկ սէր և ի յարգանս՝ ըստ քոյդ արժանաւորութեան։ Բայց թէ ի ներկայս չկամեսցիս գալդ, նստեալ մնասցես յայդր առ ժամանակ ինչ՝ մինչև յետոյ զոր ինչ գրեսցուք մեք՝ այնպէս արասցես։ Ուրեմն՝ խնդրի ի սիրելութենէդ, զի ի գրեցելոցս զորն և կամեսցես առնել՝ անյապաղ գրեալ ծանուսցես մեզ ի միամտութիւն, և զհարազատօրէն որդիութիւնդ որ առ սուրբ գահս Աստուածեան, և զսէրդ եղբայրութեան որ առ մեզ՝ աննուազ և աճեցուն ունիցիս, և մի անսալով յաշակերտաց զրաբանութեանց ընդունայն ի բաց մերժեսցես զքեզ աստի՝ ուր սնեալ և զարգացեալն ես շնորհօք և իմաստութեամբ և բարիանունութեամբ։ Արդ առաւել ես ար

ժանաւոր զտանելոց ես յԱստուծոյ փառաց և շնորհաց յերկակի կեանս քոյ, և մեք ես դո հունակ լինելոց եմք զսիրելւոյդ՝ արժանաւոր բարեբանութեամբ։ Իսկ զայլ որպէսն մեր աստանօր ոչ երկարելով յաղագս չալոյ։ զձանձրոյթ պատուական լսելեացդ, թողումք իմանալ ի դայդ բարեաւ։ Բայց ղայս և եթ դիտասցես առ ժամս զի ողորմութեամբն Աստուծոյ սուրբ Աթոռս մեր է ի հաստատութեան և ի պայծառութեան, և բազմութիւնք միաբանիցս կան ի յամբողջութեան և ի բարեկարգութեան. և իշխօղքն մեր ես յամենայնի զսէր և զխնամս ունին առ սուրբ Աթոռս և առ մեզ և չունին հասուցանել մեզ զնեղութիւն ինչ։ Այսպէս իմանալով և ուրախալայտ դրովդ զմեզ մխիթարել կամելով՝ ողջ լեր ի տէր, և զօրացեալ ի շնորհս նորուն հանապազ Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս, և ի յուլիսի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՄԿԱ. *Կոնդակ ի վերայ Աղբակու, Որմու, Սալմաստու՝ եւ այլ վիճակաց սրբոյ վանից սրբազան առաքելոյն Բարդուղիմէոսի, վասն վէքիլութեան Աբրահամ՝ վարդապետին.*

Եւ ընդ սիրոյ և օրհնութեան ողջունառաք նամակիս՝ դիտասջիք սիրելիք մեր ի Տէր, և հարազատ որդիք մեծի Աթոռոյս սրբոյ Էջմիածնի։ Զի յայտ իսկ է՝ որ իւրաքանչիւր ոք՝ թէ հոգևոր և թէ մարմնաւոր՝ միշտ զորդւոց իւրեանց զբարին կամին, և առ բարւոք ընթացս նոցին ուրախանան և խնդամտին, որպէս և սուրբն Յովհաննէս գրէ՝ թէ մեծ ևս քան զայս ուրախութիւն ոչ ունիմ, զի լսիցեմ թէ որդեակքն իմ ճշմարտութեամբ գնան։ Այլ յորժամ տեսանիցեն հարք թէ որդիք իւրեանց ստահակութեամբ գնան, յայնժամ սրտահեղեալ ի վերայ նոցա՝ վրէժխնդիր լինին, և յանդիմանելով սաստեն, զի ուղղեսցին։ Արդ՝ ըստ այսմ և մինչ կոչմամբ և եթ առաջնորդն ձեր լիմարեալ Խաչատուր վարդապետն հրաժարեալ ի յուղղութենէ և ի բարեկարգութենէ, խոտորեցաւ ի զարտուղի և ի վնասաբեր ընթացս, վասն այն և մերս հոգեոր հայրութիւն վրէժխնդիր եղե նմա այսպէս։ Քանզի՝ յայտնի է ամենեցդ՝ որ նա նենգութեամբ և խեռութեամբ վարեցաւ ընդ մեր կողմն՝ յորմէ հետէ կոչեցեալ եմք յայս կարգ և յԱթոռ հայրապետութեան և ոչ սակաւ չարութիւնս և զայրատութիւնս գործեաց ընդդէմ մեր. և թող զայս՝ առ հրաշալի սուրբ վանքն ձեր ևս ոչ ունէր զփոյթ հոգաբարձութեան, այլ բարձի թողի արարեալ զնա՝ ինքն որպէս զխլուրդ մուկն աստ և անդ ծակէ ի ծակ շրջելով՝ զանձն իւր արածէր, և այն հռչակաւոր սուրբ վանքն այնպէս անտերունջ մնալով՝ աւերիւր և քակիւր, առ որ և Աղբակցիքդ իսկ՝ երկիցս գրեցիք մեզ զմեծամեծ տրտունջ և զամբաստանութիւնս զնմանէ, խնդրելով զի ի տեղի նորին զայլ ոք Առաջնորդ կարգիցեմք, որ բարեպէս հոգատար լիցի շինութեան սրբոյ վանացն, այլ մեք ներողութիւն առնելով՝ յառաջագոյն գրեցաք նմա սիրով առ ի գալ ի սուրբ Աթոռս ընդ քանի երևելի Քէթխուտայից ի ձէնջ, զի բերան առ բերան խօսելով՝ զճշմարիտն իմասցուք. և որ ինչ օգտակարն է սրբոյ վանիցն՝ զայն արասցուք, որպէս և առ ձեզ ևս գրեցաք յայնժամ։ Իսկ նա ինքն խաբեբայն ես քանիցս գրեաց մեզ և խոստացաւ թէ զալոց եմ, բայց ստեաց զխոստումն իւր, և ոչ եկն, և թողեալ զկանոնս և զչարութիւն իւր՝ զայլոց ամբաստան լինէր, որպէս և զոմանց քահանայից կողմնականացդ դրեալ էր առ մեզ՝ իբր թէ զայն սրբալոյս միւռոնն՝ (զոր մեք յանցելում ամին առաքեցաք առ ձեզ՝ մասն մասն բաժանել ի մէջ ձեր) նոքա դրամով վաճառեալ իցեն ոմանց ոմանց ժողովրդոց, և այլն։ Զայսպիսի ստայօդ բարբառանս և զամբաստանութիւնս գրէր մեզ, ջանալով զինքն արդարացուցանել, բայց որպէս Եթէովպացի զսևութիւն, նոյնպէս և նա ոչ կարելով ղազել զչարութիւնս իւր, վախճանաբար յայտնապէս ուրացաւ զշնորհատու սուրբ Աթոռ Մայրս իւր՝ և զմեզ, և գնացեալ յարեցաւ առ թշնամին սրբոյ Գահիս, զի չար խորհրդակցութեամբ միմեանց՝ աւերեսցեն և քայքայեսցեն զսա։ Ուստի և մեք առ հարկին պահանջելոյ՝ Հայրապետական բարձու իշխանութեամբ մերով նզովեալ բանադրեցաք զնա

ինքն զկտի և դանզգամ Խաչատուրն, և զայն լոր լուսացեալն էր, այսինքն, զխռովալոյզ Դանիէլն։ Զորս և իբրև գհոտեալ և զտպականեալ անդամս ի բաց ընկեցաք մեք և բոլոր միաբանք մեր, ի խորհրդական մարմնոյն Քրիստոսի ի սուրբ եկեղեցւոյ, որք անիծեալք են յԱստուծոյ և ի մէնջ ինքեանք և անզեղջ համախոհք իւրեանց։ Արդ՝ մինչ այսպէս չիք Խաչատուրն ի բաց մերժեցաւ իբրև զդաղան, և անպիտանացաւ յամենայնի, վասնորոյ հարկ է մեզ չթողուլ զսուրբ վանքն ձեր առանց ուրուք հոգաբարձուի, զի մի խսպառ աւերեսցի և քայքայեսցի. իսկ Աղբակցիքդ յառաջմէ գրեալ, այժմ ևս բազմակնիք մահսէրաւ դրեալ և խնդրեալ էիք վասն զԱբրահամ խոհեմամիտ վարդապետըն կարգելոյ առաջնորդ սուրբ վանիցն ձեր։ Զոր խնդիր դրեալ էին մեզ և պատուելի բէկըն Աղբակու, և հոգևոր որդին մեր՝ և մտերիմ նուիրակն ձեր Յովհաննէս հանճարունակ եպիսկոպոսն։ Արդ՝ թէպէտ բարեմտութեամբ էր խնդիրն, և մեզ հաճելի կատարել, բայց յայսքան ժամանակ Աբրահամ վարդապետն ոչ եկն առ մեզ, զի ականատեսութեամբ իմանայաք զորպիսի ոք լինելն, և թարց քաջ վերտհասութեամբ տեղեկանալոյ մեր որպիսութեանց բարուց նորին տալ զառաջնորդութեան գործ՝ անդէպ ինչ էր։ Բայց և չկտրելով մեր խսպառ զանց առնել զխնդ, ովք Աղբակցւոցդ, վասնորոյ թէ վասն հայցմանց ձերոց՝ թէ ըստ պատշաճատեսութեան նուիրակին և թէ յաղագս խաթեր բէկին՝ ահա այսու կոնդակաւ մերով՝ զյիշեալ Աբրահամ վարդապետ հոգևոր որդին մեր կարգեցաք վէքիլ սրբոյ վանացն ձերոց, այսու պայմանաւ՝ որ ժամանակ ինչ վէքիլ անուամբ կառավարութիւն արասցէ, ժողովեսցէ զվանքական հասոյթս ի յօրհնեալ ժողովրդոցդ և այնու շինացուսցէ և բարեկարգեսցէ՝ զսուրբ վանսն ձեր՝ և զբարի համբաւ տարածանեսցէ՝ և նուիրակին մերոյ ևս յամենայն սրտէ ձեռնտու և օժանդակ լինելով շըրջագայեսցէ ընդ նմա ի գիւղորայսն՝ ուրուբեք որք մնացեալ են ի նուիրակելոյ, և խնդրելոց են սիրով զնուիրակն, մինչ խաղաղութեամբ և արդիւնաւորութեամբ աւարտեալ նորա զգործն՝ գալոց իցէ ի սուրբ Աթոռս ինքն Աբրահամ վարդապետն ևս ընդ նմա եկեսցէ առ ձեզ, ունելով ընդ ինքեան և զքանի քէթխուտայս ի ձէնջ, յայնժամ և մեք օրինաւորապէս կարգեսցուք զնա առաջնորդ յատուկ օրհնութեան կոնդակաւ և սիրանիշ խելայլիւք։ Ուրեմն՝ պատուիրեմք սիրելեացդ, զի զհոգևոր որդին մեր՝ զվէքիլ Աբրահամ խոհեմամիտ վարդապետն սիրով ընկալեալ՝ պատուեսջիք ըստ արժանւոյն և առ գործն ևս ձեռնտու լիջիք կամակար մտօք, և զամենայն վանքական հասոյթս և զիրաւունս լիապէս և անթերի հասուսջիք ի ձեռս նորա՝ զի այնու զշինութիւն և զբարեկարգութիւն արասցէ ի սուրբ վանսդ ձեր ի փառս Քրիստոսի, և ի պատիւ սրբազան առաքելոյ նորին Բարդուղիմէոսի։ Եւ մինչ զայս առնիցէք, և ապա և մեք ի գալն նորա ընդ մերոյ ի սուրբ Աթոռս, կարգելոց եմք զնա առաջնորդ ըստ խոստման մերում։ Եւ դուք ըստ բարեշնորհութեանց ձերոց որ առ սուրբ Տունն հոգւոց մեր՝ ընկալնլոց էք զմեծ վարձս յԱստուծոյ, զշնորհս և զօրհնութիւնս ի հրաշագործ Դամբարանէ սրբազան առաքելոյն Քրիստոսի։ Դարձեալ՝ գիտասջիք և զայս, զի որպէս ազգ լինի մեզ՝ զոն ոմանք ի ձէնջ՝ որք զրաբանից և յաչաղկոտաց զունկն մատուցանելով՝ զստահակութիւնս և զամբարշտութիւնս առնելով և զանպատուութիւնս ցուցանել առ սուրբ Աթոռս և առ մեզ, և ոչ կամին ընդունիլ զնուիրակն մեր։ Վասնորոյ գեռ ևս սիրով ներելով այնպիսեացն՝ պատուէր տամք նոցա և զգուշացուցանեմք, զի ուղղեսցին ի թիւր և ի վատթար արարմանց իւրեանց, և հեռի մնասցեն ի զրաբան անձանց, և զնուիրակն մեր սիրով ընկալցին։ Ապա թէ ոչ, յիրաւի պատժելոց եմք զայնպիսիսն՝ թէ հոգևորապէս և թէ մարմնաւորապէս ուրեմն բարւոք ի միտ առցեն և զգաստասցին։ Իսկ որք կամիցիք ի պատիւ և ի յարգանս ունիլ զսուրբ Աթոռս և զմերս հոգևոր հայրութիւն՝ եղիջիք օրհնեալք ի Տեառնէ և ի սրբոյ Լուսաւորչէն մերմէ և ի մէնջ։ Եւ շնորհք Քրիստոսաէջ սուրբ Տեղւոյս ընդ ձեզ լիցի յարաժամ. Ամէն։

Դրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս և ի յուլիսի ...ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՄԿԲ. *Տիրացու Կարապետին:* Բասմաճի տառս Յօհաննիսի Եղիայն գրեալ որ նոյն է վերոյ։

Զի ըստ կատարեալ բարեպաշտութեանդ առ Աստուած, ամենալօժար սիրով կամեցեալ էիր պատուօղ և մեծարու լինիլ հաւատոյ Մօրս քոյ ըստ վերոյիշեալ բանի իմաստնոյն։ Քանզի մեծաւ հաւատով և ամենազուարթ երեսօք տուեալ էիր յանուն սրբոյ գահիս Աստուածեան զմի պատուական Սկիհ ի բարի յիշատակ առ Քրիստոս հանգուցեալ բարեպաշտուհի Կոյս Քեռն քոյ՝ յանձնելով յայղր ստոյգ սիրելւոյն մերոյ և վայելչապատիւ առաջնորդին և նուիրակին ձերոյ Մարտիրոս Աստուածիմաստ արհիեպիսկոպոսին և նա դրեալ ծանուցեալ էր մեզ։ Զոր և մեք ի սուրբ Աթոռս և առ մեզ հասեալ համարելով՝ շնորհակալութեամբ օրհնեցաք զքեզ. և վասն հանգուցեալ Քեռն քոյ ասացաք զհոգւոցն, և յիշեցաք ի մեղսաքաւիչ սուրբ պատարագոջ ի հիահրաշ սուրբ տեղւոյս։ Վասնորոյ և զայս Թուղթ օրհնութեան դրեցաք առ քեզ, զի ուրախասցիս հոգևորապէս։ Արդ ուրեմն՝ հաճեսցի Տէր Աստուած սիրով և քաղցրութեամբ ընդ հոգևոր յիշատակն քո, և զփոխարէնն՝ բազմապատիկ հատուցանելով օրհնեսցէ զքեզ և զօրացուսցէ, և պահեսցէ ի խնամս իւր ի խաղաղութեան և ի բարեկաջողութեան հանդերձ քոյայնովքդ ամենեքումբք։ Եւ զհոգի բարեպաշտուհի Քեռն քո լուսաւորեսցէ ի լոյս երեսաց իւրոց, և հանգուսցէ ի լուսեղէն առագաստին, ընդ իմաստուն սուրբ կուսանացն դասելով և պսակադարդելով։ Եւ արդ՝ պատուիրեմք սիրելւոյդ... և զօրհնութիւնս մեր, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ և ի յուլիսի...

ՄԿԳ. *Թուղթ յիշմիր՝ առ Մօսկով կոչեցեալ Յովհաննէս աղայի կողակից Թագուհի խաթունն, օրհնութիւն վասն զմի զաւազան յիշատակ տալոյն։*

Յորմէ ժամանեսցէ Թուղթ հայրական օրհնութեան և սիրոյ՝ և Քրիստոսապարգև սուրբ ողջունի, հանդերձ պանպանողական շնորհօք միածնաէջ սրբոյ տեղւոյս, և համայն սքանչելարար սրբութեանց և մասանցն սրբոց որք աստանօր և հրաշալի դամբարանաց սրբուհեաց կուսանացն Հռիփսիմեանց և Գայիանեանց ի վերայ հոգևոր դստերդ մերոյ սիրեցելոյ ի Քրիստոս՝ և լուսածնունդ զաւակիդ սրբոյ Աթոռոյս, բարեպաշտուհի մեծահաւատ և երկիւղագարդ Թագուհի խաթունիդ. և Աստուածախնամ տան քում և բնակութեան, և նոյնապարգև զաւակացդ, և ամենայն ազգայնոց և բարեկամաց քոց, խնդալ ի տէր յարաժամ Շնորհք։

Եւ ընդ շնորհապարգև օրհնութեան նամակիս՝ զխաառջիք հոգևոր դուստր մեր՝ և հարազատ զաւակ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի ըստ բանի իմաստնոյն Սողոմոնի թէ՝ կին բարեպաշտօն և իմաստուն օրհնեսցի. ահաւասիկ տեսանելով մեր զբարեպաշտական գործ քո՝ արժանի գտաք զքեզ օրհնութեանց Քանզի՝ արդարև բացայայտ ցուցանելով զարդիւնս բարեպաշտութեան քոյ առ Աստուած, և իմաստութեանդ որով ունիս զջերմեռանդ սէր և զփափագ առ լուսածին մայրս քոյ հաւատոյ՝ սուրբ Աթոռս, յայսմ ի բարեսպառ ժամանակիս՝ յորում արք նախանձոտք և թշնամիք արդարութեան՝ յարուցեալք ի վերայ սորա կամին խանգարել զսա, զու օրհնեալդ իբրև զվէմ անշարժ և անդրդուելի մնալով ի հողմոց խռովանիւթ բանից նոցին, և առ կողմն ճշմարտութեան ջատագով լինելով, պատուեալ էիր զսուրբ գահս Աստուածեան, տալով յանուն սորա զմի պատուական և ազնիւ զաւազան ի բարի յիշատակ քեզ. զոր և յանձնեալ էիր յայղր խսկապէս սիրելւոյն մերոյ և արժանավայել առաջնորդին և նուիրակին ձերոյ Մարտիրոս Աստուածիմաստ վարդապետին և շնորհապերճ արհիեպիսկոպոսին, և նա դրեալ ծանուցեալ էր մեզ։ Ուստի և մեք զայն հոգևոր յիշատակն քոյ ի սուրբ Աթոռս և առ մեզ հասեալ համարելով շնորհակալութեամբ օրհնեցաք զքեզ հանդերձ քոյայնովքդ կենդանեօք և ննջեցելովք. և յիշատակեցաք ի փրկարար սուրբ պատարագոջ ի լուսակերտ սուրբ տեղւոջս։ Վասնորոյ և զայս Թուղթ օրհնութեան գրեցաք առ քեզ, զի միամտեալ զուարճասցիս հոգևորապէս։ Արդ՝ ուրեմն հաճեսցի տէր Աստուած սիրով և քաղցրութեամբ ընդ հոգևոր յիշատակն քո զոր

ընծայեալ ես սրբոյ Տանս իւրոյ, և զփոխարէնն՝ բազմապատկապէս հատուսցէ քեզ և քոյայնոցն ամենեցուն. զկենդանիսդ օրհնեսցէ և զօրացուսցէ, ազատելով ի վտանգից հոգւոյ և մարմնոյ, և պահպանելով միշտ ընդ հովանեաւ հանուրախնամ աջոյն իւրոյ՝ յաջողեալս առ ամենայն գործս բարութեան, և ճոխացեալս վարուք առաքինութեան։ Եւ զհոգիս ննջեցելոց քոց և մանաւանդ բարեպաշտօն Արիստակէս աղային համարեսցի ի թիւ սրբոց և սիրելեաց իւրոց՝ ժառանգեցուցանելով նոցա զերանական փառս անվախճան կենացըն։ Եւ այդ պատուիրեմք զգաստամիտ դըստերդ մերոյ հոգևորի, զի զոյն ճշմարիտ բարեպաշտութեանդ յարամնասցես հաստատուն, և զհարազատական սէրդ որ առ լուսատու ծնողս քո սուրբ Աթոռս և առ մերս հոգևոր հայրութիւն՝ անպակաս և աճեցուն կալցես, և որպէս մինչև ցարդ՝ նոյնպէս և յայսմհետէ զվայելչապատիւ առաջնորդդ ձեր ի սէր ունելով՝ մեծարեսջիք ըստ արժանւոյն, և մխիթարեսջիք։ Որովք միշտ վարձատրեսցիս յԱստուծոյ, և վայելեսցես դհոգեպարար շնորհս սրբոյ գահիս և զօրհնութիւնս մեր. Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս, և ի յուլիսի ... ի յերկնաքատակ Աթոռս սուրբ Էջմիածին։

ՄԿԴ. *Թուղթ ի Պրուսայ առ նորին առաջնորդ Պօղոս վարդապետն, շնորհակալութիւն վասն հաւատարմութեանցըն առ սուրբ Աթոռս։*

Ցորմէ ճշմարիտ սիրով և աստուածային օրհնութեամբ, Քրիստոսապարգև ողջունիւ՝ սրբով և նոյնաէջ սրբոյ տեղւոյս պահպանողական շնորհիւ՝ գիտասջիր իսկապէս սիրելիդ մեր՝ հարազատ և շնորհընկալ որդի սրբոյ Աթոռոյս՝ Պօղոս համեստաբարոյ վարդապետ և շնորհապերճ արհիեպիսկոպոս։ Զի յորմէ հետէ կոչեցեալ եմք ի կարգ և յԱթոռ հայրապետութեան օրհնեցելոյ Ազգիս Հայոց, քանիցս գրեալ եմք առ սիրելիդ զթուղթս, և զկոնդակ առ Քրիստոսասէր օրհնեալ ժողովուրդդ։ Այլ ի սիրելութենէ թուղթ չընկալաք, զի իմանայաք թէ նամակքն մեր ժամանեալ ըստ ժամանակին առ ձեզ, եթէ ի թշնամեաց ձեռս անկանելով՝ մատնեցեալ իցեն ի կորուստ։ Այլ նարդենիս հաւատարիմ ընտանին քոյ և իսկապէս սիրելին մեր՝ Զմիւռնիոյ վայելչապատիւ առաջնորդ և նուիրակ Մարտիրոս Աստուածիմաստ վարդապետն և արհիապանծ Եպիսկոպոսն թուղթ էր գրեալ առ մեզ, որով և ծանուցեալ էր զքոյդ և զճշմարտասէր օրհնեալ իշխանացդ բարեպաշտից ունիլն առ լուսածին մայրս ձեր սուրբ Աթոռըս և առ մերս հոգևոր հայրութիւն զմեծագոյն ջերմեռանդ սէր և զկատարեալ հարազատութիւն և զհաւատարմութիւն, և նովին սրտական և անխարդախ հաւատարմութեամբ զկարեւոր օժանդակութիւն և զբարեշնորհութիւն ցուցանելն ձեր առ մեզ, թէ առ նա ինքն Մարտիրոս արքեպիսկոպոսն գրելով վասն մեր զմեզ ցաւակցութիւնս և թէ ի Պօլիս առ յարգելի օրհնեալ ամիրայսն գրելով զջատագովութիւնս և զբանս յորդորականս՝ առ ի չթողուլ զճշմարտութիւն, և հետևիլ ստութեանց, միանգամայն ցուցանելով ձեր և զտհաճութիւն և զանախորժութիւն առ ընդունելութիւն փառամոլ և ինքնամատոյց Դանիէլին։ Որովք ախորժալուր համբաւովք ցնծացեալ և ուրախացեալ մեր իբրև գիւտիւ աւարաց բազմաց, արդարև յոյժ և յոյժ գոհունակ եղաք զպատուական սիրելւոյդ և զճշմարտասէր և բարեպաշտօն օրհնեալ իշխանաց տիրախնամ քաղաքիդ, և բերանալիր օրհնութեամբ մեծաւ օրհնեցաք զձեզ։ Տէր տացէ մտերիմ սիրելւոյդ զօրութիւն և կարողութիւն և ըստ սիրոյդ և հաւատարմութեանցդ և մեզ չափեսցէ քեզ զչափ բարւոք՝ թաթախուն՝ շարժուն՝ զեղուն՝ բազմապատիկ պարգևելով քեզ զպարգևս ողորմութեան և բարեգթութեան իւրոյ աստ և յանանց կեանս։ Եւ զբարեպաշտօն իշխանսդ և զայլ ժողովուրդսդ օրհնեսցէ և զօրացուսցէ, ընկալցի միշտ ի շնորհս խնամոց իւրոց, և ի հոգեկան և մարմնական վտանգից ազատս պահեսցէ, և զամենայն բանս և զգործս նոցա ի բարին յաջողելով յարաժամ արդիւնաւորս և շահեկանս արասցէ։ Արդ՝ քաջադոյնս լսէք ահա և իմանայք թէ՝ զիարդ ամբարիշտ և ծնօղուրաց Գրիգոր չպատրիարգն ամենայնիւ ներհակ և հակառակ եղեալ խղճալի սրբոյ Աթոռոյս հոգևոր ծնողիս իւրոյ՝ ջանայ և աշխատի ան-

դժուլ հետևմամբ՝ զի աւերեսցէ և քակքակեսցէ զսա, զհարազատ որդիս սորա զսիրակից և սեղանակից եղբարսն իւր կորուսանել կամի, և զանփոփոխելի հայրապետութիւն ազգիս ընդ փոփոխութեամբ արկանել։ Ցառաջ քան զինքն եղեալ նախնի լուսաւորեալ հոգի պատրիարգունքն թէ որպէս խնամարկութեամբ և սրտացաւօրէն որդիութեամբ պահպանէին զսուրբ Աթոռս և Հայրապետութիւն սորին, այն ահա լաւապէս յայտնի է ձեզ՝ այլ զինչ երկարեսցուք աստէն. բայց նա ոչ գնալով ըստ բարեկարգ շաւղաց նոցին, և ուրանալով զշնորհս և զերախտիս լուսածին մօրս իւրոյ՝ և սրբոյ Հօրն Գրիգորի Լուսաւորչին՝ յայտնապէս սկսեալն է ահա զճրագ սորին շիջուցանել, և ի Քրաստան ի Բագրեւանդ գաւառին զԱթոռ կազմել՝ և զԳանիէլն հաստատել, ոչ գիտելով լիմարեալն և կուրացեալն թէ ի սրբոյ Լուսաւորչէ անտի ցարդ՝ ոչ է եղեալ անդ Աթոռ և ոչ կաթուղիկոս։ Լուեալ ես ի հարկէ և թէ զիարդ կամեցեալ է ըռնական տէրունի վիճակն սրբոյ Աթոռոյս՝ զքաղաքն Զմիւռնիա՝ մերժել և օտարացուցանել ի սմանէ, և առնել վիճակ Բագրեւանդ գաւառին, վասն որոյ և հանեալ է նենգաւորն զհրովարտակ արքունուստ, և ի ձեռն Տաճկաց առաքեալ անդ ի Զմիւռնիա՝ զի կալեալ զառաջնորդ նորին Մարտիրոս արքեպիսկոպոսն, մերկացուսցեն յամենայն զոյից՝ Աթոռոյս և անձնականի, և ի վերայ մերկ երիվարի նստուցեալ՝ իբրև զմի ահապարտ չզթացեալ ոտիւք բերցեն և հասուսցեն առ իւր համաքարոյ ամբարիշտ Գանիէլն, որոյ աղագաւ և եղեալ է մեծ վնաս և գայթակղութիւն և լուսահատութիւն խղճալի զմիւռնացւոցն, թէ և ողորմութեամբ Տեառն և շնորհիւ սրբոյ իջման տեղւոյս նորին՝ անվտանգ ղերծեալ է թակարդէ չարութեան ամբարշտին ինքն Մարտիրոս արքեպիսկոպոսն։ Որպէս գրեալ էր մեզ յոյժ աղէտալի բանիւք։ Արդ՝ գիտէք թէ զսրբոյ Աթոռոյս պատիւն չպահեաց, բայց արժան էր եղբայրական սիրոյն ամաչել, և ոչ խորհել զնենգութիւն և զապիրատութիւն վասն եղբօրն իւրոյ, որք բազում ժամանակաւ սիրակից և հացակից եղբարք են եղեալ ընդ միմեանս ի սուրբ Աթոռոջս. բայց չէ զարմանք՝ զի նա որ զծնօղս իւր մոռացեալ է, ապա և զեղբարս իւր մոռացեալ լինի։ Եւ արդ՝ այլ ինչ երկարեսցուք, և զոր մին զչարութիւնսն գրեսցուք և ծանուսցուք. մինչ ահա յորմէ հետէ անարժանութեամբ կոչեցեալ է յայն գործ՝ միշտ կամեցեալ է զչարիս և զվնասս և զանպատուութիւնս հասուցանել առ սուրբ Աթոռըս և մեզ, և զպարզամիտ Ազգս ևս այդպէս վրդովէ և գայթակղեցուցանէ։ Որպէս լսէք և տեսանէք։ Ուստի՝ և մեք այլ չկարելով համբերել անտանելի ամբարշտութեանց նորին, ահա զընդհանրական կոնդակ գրեալ առ համայն լուսաւորչակրօն ազգ մեր, այնու զնոյն ինքն զլիրբ և խռովարկու Գրիգորն նզովեցաք և բանադրեցաք Հայրապետական բարձու իշխանութեամբ մերով, և մերկացուցաք զնա յամենայն կարգաց և աստիճանաց իւրոց, համարելով զնա ի թիւ պիղծ Նեստորի և Արիոսի, և այլոց չարափառ հերձուածողաց։ Որ այսուհետև անիծեալ և նզովեալ է յԱստուծոյ և ի մէնջ և ի բոլոր միաբանութենէս մերմէ։ Արդ՝ այսպէս ղբանագրանաց կոնդակն գրեալ յուղարկեցաք առ յամենայն քաղաքս և ի տեղիս ընթեռնուլ՝ և իմանալ զչարութիւնս և զանզգամութիւնս նորին. և յայնժամ զինչ և կամեսցին առնել օրհնեալ Ազգ մեր՝ ինքեանք գիտասցեն։ Իսկ զայս թուղթ առ սիրելիդ գրեալ՝ խնդրեմք, զի զճշմարիտ սէրդ և զորդիական հաւատարմութիւնդ առ շնորհածին մայրս քո սուրբ Աթոռս և առ մեզ՝ աննուազ և աճեցուն ունիցիս, և որպէս մինչև ցարդ, նոյնպէս և յայսմհետէ հեռի պահեսցես զքեզ և զօրհնեալ ժողովուրդդ ի չարանիւթ բանից խռովասիրաց, և մի բնաւ հաւատ ժամուսցես այնց. այլ իրաւասիրաբար զուղիղն կալացուցեալ զնոյնն քարոզեսցես ուր և կարասցես. և ի գրելոյ վասն մեր զթուղթս ջատագովութեան ի Պօլիս առ գերյարգելի ամիրայսն՝ և ի համոզելոյ զնոսա ի խաղաղութիւն՝ մի վերջասցիս թէ դու՝ և թէ օրհնեալ իշխանքդ, և երբեմն ես սիրանիշ թղթովդ զվշտաւորութիւն մեր մխիթարել կամեսցիս։ Ո՜րովք արժանաւորելոց ես վարձուց մեծաց յԱստուծոյ և ընկալնլոց զշնորհս սրբոյ Աթոռոյս, և զօրհնութիւնս մեր։ Ո՜ղջ լեր ի Տէր և զօրացեալ ի շնորհս նորա հանապազ. Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս և ի յուլիսի... ի սուրբ Էջմիածին։

ՄԿԵ. Ի Պօլիս առ մահտեսի Միէսեր աղա Կիւլօղլի։

Եւ ընդ սիրոյ և ողջունառաք օրհնութեան նամակիս գիտութիւն լիցի ազնիւ սիրելւոյդ իմոյ և հաւատարիմ զաւակիդ սրբոյ և մեծի Աթոռոյս Էջմիածնի։ Զի յամենայն ժամու բանիւք և գրովք սիրելեաց մերոց գիտացեալ եմք ստուգապէս դսիրելւոյդ մեծագոյն սէրն, զկատարեալ որդիութիւնն, զհաստատուն բարեկամութիւնն և զջերմեռանդ իղձն, զորս ունիս առ սուրբ Աթոռս ցանկալի և առ մերս հայրութիւն։ Որպէս զսոյնս, ազնիւ սիրելին մեր պարոն Գէորգ Աղալեկեանն բազմիցս առաւելապէս ծանուցեալ է մեզ և զու առ յամենայն Թուղթս նորին զքոյդ բազմաբարձ սէրն բազմադիմի խոնարհութեամբ յայտնեալ եռ մեզ մատուցանելով զհամբոյր աջոյն մեր և հայցելով զօրհնութիւն։ Որև մեք լեալ եմք հանապազ շնորհակալ զքումդ պատուականութենէ բազմապատիկ օրհնութեամբ, զոր Տէր օրհնեսցէ և զօրացուսցէ և զամենայն բանս և զգործս քոյ ի բարին տնօրինեալ յաջողեսցէ և յամենայն չարեաց փրկեալ ի խաղաղութեան պահեսցէ երկար ամօք ի զուարճութիւն սրբոտից մերոց։ Եւ արդ արժան էր թէև ի վաղուց դրել զԹուղթ սիրոյ և օրհնութեան առ սիրելիդ, սակայն յայտնի է ցանկալւոյդ իմում մեր ամենայն հոգսն և զբաղմունքն, թէ զիարդ ի ձեռաց թշնամեաց կրեմք միշտ զպէսպէս վիշտս և հանապազ ի վարանս կամք վասն սրբոյ Աթոռոյս, որ ի պատճառս նախանձոտաց մեծապէս վնասակրեալ փոյթ ընդ փոյթ քայքայի, թէ չ'լինիցի ալտի օգնութիւն, որպէս գրեցաք ահա կրկին իշխանապետացն տեղւոյդ և իշխանացն և պարոն Գէորգին Աղալեկեան, զորոց ոչ երկարեմ, բայց դու յարգի բարեկամդ իմ ի սէրդ և իկատարեալ բարեկամութիւնդ հաստատուն կալով և զորպիսածանոյց Թուղթդ ընդ ցանկալի առողջութեանդ ի մէնջ անպակաս առնելով, ողջ լեր ի Տէր և զօրացեալ միշտ ի նոյնն և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ և ընդ քոյսն ամենայն։ Ամէն։

Ի ՌՄԾԱ Թուոջս ի յուլիսի ... ի սուրբ Էջմիածին։

ՄԿԶ. Թուղթ ի Պօլիս առ Տէր Ստեփան քահանայն։

Ցորմէ բազում սիրով, հոգևոր օրհնութեամբ Քրիստոսածիր ողջունիւ և հայրական կարօտանօք, հանդերձ շնորհիւ սրբոյ տեղւոյս և ամենառատ գթութեամբ Աստուծոյ, ծանիր սիրելի և հոգևոր որդի մեր ի Տէր, շնորհընկալ հարազատ և հաւատարիմ զաւակ սրբոյ Աթոռոյս, Տէր Ստեփաննոս խոհեմամիտ աւագ քահանայ։ Զի յառաջ քան ի կենդանութեամբ Յովսէփայ ի Տէր հանգուցելւոյն՝ ծանուցեալ եմ ղորդւոյդ օրհնութեան զմեծաջան աշխատասիրութիւնն որ ի Հնդիկս և զբազմարդիւն հարազատութիւնն որ առ նոյն հանգուցեալն ի հանդիպելդ յաստ մինչ կամէաք սիրոյ արժանաւորել զքեզ և ունէաք ի մտի ես ի սէր և ի պատիւ նոյն հանգուցելւոյն, որոյ բանիւն և կտակաւ ընկալաք զայս Աթոռ, առաւելապէս զսիրելիդ յարգել և ի պատուի ունել, որպէս և զնշանսն ևս երևեցուցաք ընկալնլով զաշխատաւորդ յառաջինն հայրական սիրով, բայց որպէս յայտնի է քումդ խոհեմութեան, գոլով ի բազում հոգս և ի զբաղմունս և մանաւանդ զու ևս զքեզ խորթ և օտար ոք ցուցանելով անյարիր հրջէիր, որով և զերկբայութիւն և և ցրտութիւն սիրոյ պատճառէիր ի մէնջ, ուր մնաց և մեք չէաք իսկապէս տեղեակ քոյդ ներքին ջերմեռանդ. որդիութեան, զոր գազեալ ի քեզ ոչ երբէք յայտնէիր գործով և ևս ոմանք խռովարարք ևս այլապէս մեզ ազդէին ղձէնջ, որպէս և ի Կարնոյ երկարապէս գրեալ էին ղձէնջ դոլ ներհակ մեզ և սրբոյ Գահիս, զոր ոչ բնաւ կարծէաքն և այլն անկան ուստի սակաւ ինչ պաղութիւն սիրոյ ընդ մէջ և չ'կարացաք արժանապէս զսիրելի որդիդ մեր յարգել և վասն բազում աշխատանացդ մխիթարել և կամ շնորհակալել ի դիմաց հանգուցելւոյն, իսկ արդ թողեալ զայսոսիկ զայս մի ինչ ծանիր, զի ըստորում նորապէս գրեալ էին մեզ Գրիգոր արքեպիսկոպոսն ի Պետերբուրգու, մեր Ստեփանոս արքեպիսկոպոսն ի Պօլսոյդ և Գէորգ Աղալեկեանն. և այլք ի ձէնջ զբազում շնորհակալութիւնս, ցուցանելով ըզքեզ հարազատ և ջատագով Գահիս և մեզ, վասնորոյ ուրախութեամբ որտի մեծապէս գոհունակ եղեալ զանխարդախ սիրոյդ և զբազմապատիկ հաւատարմութեանցդ զայս Թուղթ

սիրոյ և օրհնութեան արժանապէս առ. ցանկալիդ մեր գրեալ և զքեզ ի յառաջին հաբազատութիւն յորդորել, ախորժանօք բարեյօժարացաք և զայն պարտաւորութիւն համարեցաք ըստ իմաստնոյն բանի թէ որդի հարազատ օրհնեսցի և թէ զայր հաւատարիմ գործէ դտանել և առ. դիա որոյ ոչ միայն ըղձրադ, այլ և զմեծամեծ ջահս լուցանել։ Ապաուրեմն օրհնեսցէ զքեզ Տէր օրհնութեամբ երկնաւորաւ և լցուսցէ բարութեամբ անսպառելեաւ պահեսցէ խաղաղ և անդորր կենօք մշտնջենաւորաւ և արասցէ յայտնեալ վասն մեր անօթ պատուական սրբեալ ի ժանկոյ, զոր և լցուսցէ սիրով ստուգադունիւ և առաադոյն զարև յստակ մտերմութեամբ ի լինել օրինակ բարի և այլոց թիւրելոց ի յուղիղ Աստուածային չաւղաց, որով և ընկալնուլ վարձըս բազմապատիկս ի յերկնաւոր հանդիսադրէն յերկակի կեանս քոյ ըստ բաղում վաստակոցդ և ըստ չափու ջերմեռանդութեանցդ որ առ. սուրբ Աթոռս հրաշալի և առ. մերս հոգևոր հայրութիւն։ Ի վերջոյ պատուիրեմք սիրելի որդւոյդ իմում կալ և մնալ անյեղլի և անգայթ ի ղմին և օր յորէ ես քանզ ես իբրև զարեակն փայլեցուցանել զորդիութիւնդ բանիւք և արդեամբք և ջանալ յօգնութիւն Քրիստոսակերտ և Լուսաւորչաշէն մեծի Աթոռոյս հոգևոր և շնորհատու ծնողիս քոյ ժամանել, քարոզ և վկայ ճշմարտութեան լինելով, զոր արք յաչաղկոտք և մանաւանդ խռովարարք ազգի և քաղաքի ունին ծածկեալ, որով և կամին զանփոփոխելի հայրապետութիւն ազգի ընդ փոփոխութեան արկանել և զկամս անձին պաշտել և զուխտս իւրեանց լնուլ և այնպէս խանգարեալ զպայծառ զօրէնս մեր և հիմն ի վեր տապալեալ զսուրբ տաճարս Աստուածային, յորոց հետևի այնուհետև աննորոգելի և անկանգնելի կործանումն մեծի Տանս, զոր Տէր աղօթիւք սրբոյ Լուսաւորչին մի արասցէ առ ժամանակ մերով տեսանել։ Զայլ նուագք ի լաղնիւ սիրելւոյն մերմէ պարոն Գէորգէն Ազալեկեան գիտեալ, որում երկար գրեցաւ։ Այսպէս գիտացեալ քոյ և զսիրոյ գիրսըգ ընդ որպիսութեան կողմանցդ ի մէնջ անպակաս արարեալ, ողջ լեր ի Տէր, և զօրացեալ նովաւ և շնորհք սրբոյ Աթոռոյ եղիցի ընդ քեզ, Ամէն։ Ի յուլիսի ... ի 1802. ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՄԿԷ. *Թուղթ օրհնութեան առ Իզմիրու հասարակութիւն, ընդ որս եւ սակաւ ինչ մխիթարութիւն զվշտացն, զորս ի խամսեցի պատրիարգէն Պօլսոյ կրեալ էին, վասն հարազատութեանցն սրբոյ Աթոռոյս:*

Նաւ ընդ սիրոյ, օրհնութեան և սփոփանաց նամակիս, ծանուցումն եղիցի բազմափափաք և տենչալի սիրելեացդ և յատկեղ քաջ ընտիր զաւակացդ և արիասիրտ ջատագով որդւոցդ սրբոյ և մեծի Աթոռոյս Էջմիածնի, և մերս հոգևոր հայրութեան։ Զի թէպէտ նախապէս գլխոյն նուիրակի առողջութիւն ի բարեկեցութիւն անդամոցն, սակայն և անդամոցն առողջութիւն մեծապէս օգտէ, ուստի որպէս ի վշտանալն գլխոյն ամենայն անդամք մարմնոյ ցաւագնին և յաղագս գոյն ի ցաւոց լինին և ինքեանք անցաւք, այսպէս և ի վըշտակրիլն անդամոց մեծապէս նեղսակրի և գլուխն ի վերայ նոցա, մոռանալով զիւրն։ Արդ մինչ բարեյարմար անդամքդ Քրիստոսի յօգեալքդ շնորհիւ նորին ի հոգևոր և ի խորհրդական գլուխ մեր, սրտատռչոր ըղձիւ տառապէիք վասն պայծառութեան հոգևոր ծնողիս ձերոյ սրբոյ Գտհիս Աստուածաբնակի իբրև անդամ ի վերայ պատուական գլխոյ և առաւելապէս վշտանայիք ընդ ցաւս մեր, զորս կրէաք ի սուտ եղբարց և ի գիւաղ'եաց արանց, յորոց և վասն ճշմարտասիրութեան ձերոյ ընկալայք և դուք զպէսպէս վիշտս ըստ մեզ, այժմ մեք թողեալ զմերս, վշտանամք յոյժ յոյժ ընդ տառապակրութիւնս ձեր և ընդ վնասակրութիւնս պայծառ և Աստուածաշէն քաղաքի ձերոյ ի յաշխարհաւեր և ի մարդադէմ գայլոց, դի բացի հանապազորդական ցաւոցս, որք յաճախին օրստօրէ ի վերայ խղճալի Տանս և ի մեր ի պատճառս ախտարած սեւաւորաց, յաւելաւ ինձ ի վերայ այնց և ձերդ վիշտք և տրտմութիւնք և առաւել եղեն քան զնոսա։ Քանզի խաղաղութեամբ ձերով և բարեկեցութեամբ մոռանայի զիմն և դուք էիք իմ մխիթարիչք և ի տրտմութեանց սրտիս փարատիչք, ուստի իմ է առաւել վիշտդ այդ, որք հասին ի ձեզ ի Խամսեցի պատրիարքէն Պօլսոյ, որ քան թէ ձեր։ Գիտացաք ես ի գրոց սիրեցեալ եղբօրն մերոյ Մարտի-

րոս արժանավայել առաջնորդին ձերոյ և այլոց, զմեծապէս հետամուտ լինելն անհաշտ թշնամոյն այնորիկ զկնի իւրն և զպատրաստեալ չարիսն, զորս կամեցեալ է անիրաւարար հասուցանել ինքեան, և ցաւս ի վերայ ցաւոց ընկալեալ, տրտմեցաք ընդ վիշտս հարազատին մերոյ, ուստի և մեք ըստ անվայել գործոց և անօրինակ արարմանցն, այլ ոչ ես կարեցեալ տանիլ, հատուցաք սմա զարժանապէս զտրիտուրն։ Այլ Աստուած որ մխիթարիչն է ամենայնի և խաղաղարար աշխարհի, մխիթարեսցէ զձեզ խաղաղութեամբ իւրով, և ըստ սրբոց և սիրելեաց իւրոց, որոց ես ետ զնեղութիւնս ի գտանել արծաթ սուրբ նովաւ, վարձատրեսցէ յերկակի կեանս ձեր ըստ մեծագոյն վարձու ընտրելոց իւրոց, զորս պահեալ ունի վասն ամենայն առաքինեացն և ուղղասիրաց։ Պատուիրեմ վերջապէս ընտիր և յատկեղ սիրելեացդ իմոց ի Տէր խրախուսել և զճշմարտութիւնն իբրև զզէն Աստուածային զգենուլ և զօրութեամբ Տեառն յաղթանակել, զազեղունս թշնամեաց խորտակել և ամօթապարտ առնել զպարուցեալսն ի վերայ ստութեամբ և ամբարտաւանութեամբ և ինքն Տէր զօրութեամբ կենսատու սուրբ խաչին իւրոյ և շնորհիւ սրբոյ և անյաղթելի Աթոռոյս մեծի և հրաշագործ բազմահաւաք սրբութեանցն սրբոց մասանցն աստ եղելոց և մանաւանդ աղօթիւք հօրն մերոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին փշրեսցէ զնոսա, որք հարկանին ընդ վիմիս ընդ այսմիկ և իբրև զփոշի հոսեսցին ի սմանէ, փախիցեն առանց ուրուք հալածելոյ և երկիցեն ի տերեւոյ խարխափելոյ։

Բայց ճշմարտասիրացդ և ջատագովիցդ սմին, եղիցի վէմ ամրութեան և զօրութիւնս ի լինել անյաղթահարելի ի դրանց դժոխոց։ Իսկ վասն չարասիրացն և խռովարարացն քաղաքիդ, որոց զանուանսն տակաւին ոչ յիշեմք խնայելով զեռ ի տունս և ի յընտանիս նոցին և մանաւանդ սպասելով դարձի և զղջման և հնազանդութեան նոցին, զայս գրեմ, բաւականասցին արարմամբքն և վնասատուութեամբն, զորս ի լուսահոգի Սիմէօն կաթուղիկոսէն և այսր հասուցեալ են սրբոյ Աթոռոյս և անպատուեալ զգահակալսն նորին, ապա թէ ոչ արդար ցասմամբ ի վրէժխնդրութիւն յարուցեալ ժողովեսցից զամենայն զհասուցեալ զչարութիւնս զոցին որք կան ի մատենագիրս սրբազան հայրապետացն արձանացեալք և կուտեցից ի գլուխ չարեացդ, եթէ յայսմհետէ ոչ դարձցին ի լաւանիւթ, որպէս ահա գրեցաք բարեհաչակ առաջնորդին տեղւոյդ, ծանուցանել մեզ զորպիսի լինելն նոցա։ Տեսցեն և զփառաւորութիւնս Գանիէլին, զորս փառաւորեցաք մեք բոլոր միաբանիւք Աստուածեան սուրբ Գահիս, և սանձահարեսցեն զինքեանս, զի մի առաւել քան զնորայն վայելեսցեն։ Որոյ փառաւորութեան թղթոյ զօրինակն ես յղեցաք ի ձեռն սիրելւոյն մերոյ Մարտիրոս արքեպիսկոպոսին ի ցուցանել որոց հարկ է, և զդաստացուցանել զամենեսին։ Այսու ես յայտ լիցի ի վերջէ սիրելեացդ իմոց, զի յառաջ քան զայս երկիցս և երիցս դրեալ զկոնդակ օրհնութեան առաքեցաք առ ձեզ, բայց դիտացաք, որ ի ձեռս թշնամեաց անկեալ անհետացան, վասնորոյ զայս թուղթ կրկին անգամ ի մխիթարել ըզվշտացեալ սիրտ ձեր և ի յորդորել զձեզ ի նոյնն դրեալ հաւատարմաւ փութացուցաք առ սիրելիսդ ի նշան հայրականի սիրոյս բազմաբաղձ տենչանացս, որովք կամք կապակցեալ ընդ բարեացապարտ անձանց ձերոց և զմիւռոնն Աստուածագործ ընդ նուիրակական կոնդակին ես պատրաստեալ սպասեմ հաւատարիմ եկողի, զի անվնաս ի ձեռաց թշնամեաց առ ձեզ ամբողջապէս հասուցից, զի թէ լոկ թուղթք դժուարաւ գան առ ձեզ և ի յերից և ի չորից մինն հազիւ հասանի, ապա վիարդ կարելի է հեշտեաւ զսուրբ միւռոնն յղել, որոյ թշնամիք անքուն ակամբ դիտեն ի ճանապարհս ի յափշտակել, որպէս յայտնի է լաւապէս սիրեցեալ եղբօրն մերոյ, որում գրեցաք զպատճառսն յամեցման սրբալոյս իւղոյն և նուիրակական կոնդակին։ Բայց ջանացայց Աստուծով յառաջ քան զամենայն փոքրիկ անօթով սակաւ ինչ միւռոն, վաղվաղեցուցանել առ ձեզ, մինչ զկնի և զպատրաստեցեալն փութացուցանել։ Զայլն ի թղթոյ բարեմիտ առաջնորդին ձերոյ ունիք գիտել, առ որ երկար գրեցաւ։ Այսպէս գիտացեալ ձեր, ողջ լերուք ի Տէր և զօրացեալք ամենազօր աջով բարձրելոյն ի շինութիւն և ի պայծառութիւն սուրբ Աթոռոյս Քրիստոսակերտի և տրտմափարատ գերազօր շնորհք սրբոյ Գահիս Աստուածաբնակի եղիցի ընդ ձեզ ամենեսին Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուաջս ... յերկնա-

հանդէտ և ի լուսակառոյց Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ՄԿԸ. *Թուղթ ի Պոլիս առ տիրացու Օնոփրիոսն՝ օրհնութիւն եւ շնորհակալութիւն յաղագս 24. ղուրշ լուսազնին յղեցելոյ յանուն սրբոյ Աթոռոյս ձեռամբ մահտեսի Սեղրաքին:*

Եւ ընդ ամենառատ օրհնութեանս Աստուածայնոյ՝ գիտութիւն լիցի սառուգ սիրելւոյդ մերոյ և հարազատ որդւոյդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի վասն մեծի հաւատոյդ առ Աստուած, և սակս ջերմեռանդ սիրոյդ և հարազատ որդիութեանդ առ սուրբ Աթոռս, որ յոյժ նեղ և ի յոգնավիշտ ժամանակիս՝ յորում թշնամիքն արդարութեան խռովանիւթ բանիւքն իւրեանց զանազան վնասս հասուցանեն սրբոյ Աթոռոյս, և ստայօդ բարուբանօք վատահամբաւելով զանուն մեր դալթակղեցուցեալ չփոթեն զտառապեալ ազգն մեր՝ դու օրհնեալդ յԱստուծոյ ի սոցանէ հեռի կալով, և իբրև զվարդ ի մէջ փշոց բուրելով զանուշահոտութիւն բարեպաշտութեանդ առ Աստուած՝ պատուեալ էիր հոգևոր ծնօղս քո զսուրբ Աթոռս՝ շնորհելով սմա զԻԴ ղուրշ լուսազին յանուն ծնողացն քոց մահտեսի Գէորգին, և մահտեսի Համասփիւռ խաթունին՝ ձեռամբ մահտեսի օրհնեալ Սեղրաքին, որ բերեալ հասոյց առ մեզ ամբողջապէս։ Զոր և մեք ընկալեալ մեծաւ սիրով ի կարևոր ծախս պիտոյից սրբոյ Աթոռոյս՝ շնորհակալութեամբ բազմաւ օրհնեցաք զքեզ. ասելով զպահպանեալն վասն կենդանեացդ և զհոգւոցն՝ սակս հին և նոր ննջեցելոցդ, զորս և յիշեցաք ի փրկարար պատարագւոջ ի զերահրաշ սուրբ տեղւոջս։ Եւ որովհետև նոյն վերոյիշեալ մահտեսի Սեղրաքն կատարեալ զուխտ և զերկրպագութիւնս իւր վերադառնայր աստի. վասն որոյ զայս օրհնութեան նամակս գրեալ առաքեցաք ընդ նմա առ սիրելիդ, զի միամտեալ զուարճասցիս։ Արդ ուրեմն ընկալցի Տէր Աստուած զկամաւոր տուրս քո ի հաճոյս իւր, հատուցանելով քեզ զփոխարէնն հոգևորապէս և մարմնաւորապէս։ Օրհնեսցէ զքեզ, և զօրացուսցէ ի խնամս և յողորմութիւնս իւր պահեսցէ հանդերձ քոյայնովքդ և փրկեսցէ միշտ ի փորձութենէ և յամենայն վտանգից։ Եւ զննջեցեալսն քո ի լոյս երեսաց իւրոց հանգուսցէ դասաւորելով ընդ սուրբս իւր յարքայութեան երկնից։ Ի վախճանի պատուիրեմք սիրելւոյդ, զի որպէս մինչ ցարդ՝ նոյնպէս և այսուհետև հեռի և ի բաց կացցես ի խռովասէր անձանց, և ամենևին մի հաւատ մատուցես ունայնաբանութեանց նոցին, այլ միշտ զսրբոյ Աթոռոյս զօգուտն և զբարին խորհեսցիս, և զայն յառաջացուցանել ջանասցես։ Նա և ի ջերմեռանդ սիրոյդ, ի հարազատութենէդ որ առ սա և առ մեզ մի երբէք պակասեսցես, և զայս ևս ի դոյն յորդորեսցես, որովք զվարձս յԱստուծոյ, ըզշնորհս ի սրբոյ գահէս, և զօրհնութիւնս ի մէնջ միշտ ընկալցիս հանդերձ քոյայնովքդ բնաւիւք։ Ողջ լեր ի Տէր։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս, և ի յուլիսի ... ի սուրբ Էջմիածին։

ՄԿԹ. *Թուղթ ի Կարին, առ Աղայեկ աղայն, օրհնութիւն եւ շնորհակալութիւն վասն բարերարութեանցն որ առ Մարտիրոսն մեր, եւ սակս հարազատութեանցն եւ ջատագովութեանցն որ առ սուրբ Աթոռս եւ առ մեզ. եւ յորդորումն կալ մնալ հաստատնապէս ի նոյնն յարաժամ:*

Եւ ընդ շնորհաձիր օրհնութեանս՝ գիտութիւն լիցի քումդ բարեկամութեանդ։ Զի Մարտիրոս հոգևոր որդին մեր ընդ Ստեփանոս արհիեպիսկոպոսին մերոյ՝ զոր առաքեալ էաք ի մեծն Պօլիս՝ վերադարձեալ անտի՝ խաղաղութեամբ ժամանեաց ի սուրբ Աթոռս յամսոյս Ի, որ մեծաւ շնորհակալութեամբ պատմեաց մեզ զբարերարութենէդ ցուցելոյ առ ինքն, որ սիրով և յարգանօք ընկալեալ ես, և ըստ արժանւոյն շահեալ և մխիթարեալ ի սէր սրբոյ Աթոռոյս, և մեր։ Առ որ և մեք ևս շնորհակալ եղաք զսիրելւոյդ, և օրհնեցաք լիագոյն օրհնութեամբ։ Զոր Տէր օրհնեսցէ և զօրացուսցէ, և ըստ ամենից բա-

րելաւութեանցդ՝ առաւելապէս վարձատրեսցէ, և հզօր աջովն իւրով ի խաղաղութեան և յանդորրութեան պահեսցէ հանդերձ քոյանովքդ. և յամենայն ձախողակի դիպուածոց փրկեալ ազատեսցէ։ Արդ՝ սիրելի մեր, տեսանես և իմանաս ահա՝ թէ ոմանք արք փառամոլք, դիւրդ ջանան քակել և աւերել զայս լուսաւորչաշէն սուրբ գահս առ ի լցուցանել զախտս ախտացեալ անձանց իւրեանց, և թունալից գրովք զաշխարհ ամենայն խառնակեալ ապականենն զրաբանելով զմէնջ առանց խղճի մտաց։ Ապաքէն՝ պատուիրեմք սիրելւոյդ, զի հեռի պահելով զմաքուր ունկնդ ի ստայօդ բանից և գրութեանց նոցին՝ ի ճշմարիտ սէրդ և ի հարազատութիւնդ հաստատուն և անփոփոխելի մնասցես, ի ջատագովութեննէդ առ սուրբ գահս և առ մեզ մի պակասեսցես, և զայլս ես ի դոյնս յորդորեսցես, որովք վարձուց մեծաց՝ շնորհաց սրբոյ Աթոռոյս՝ և օրհնութեանց մերոց՝ միշտ արժանաւոր զանիցիս։ Որովհետև Մարտիրոսն մեր զգիւմրուկչի ազայէն ևս շնորհակալութիւն ունէր յաղագս բարելաւութեանցն՝ ահա նմա ևս սիրոյ թուղթ գրեցաք շնորհակալութեամբ հանդերձ։ Այսպէս դիտելով քո ողջ լեր ի Տէր Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ. և ի յուլիսի ԻԸ. ի սուրբ Էջմիածին։

ՄՀ. *Թուղթ ի յուխտաւորաց առ ժողովուրդսն Թիֆլիզու եւ Հաշտարխանու։*

Փառազարդ և գերապատիւ ժողովրդոցդ, և ի Քրիստոս Յիսուս հաւատացեալ Լուսաւորչերամ համազգի և համակրօն աւագագոյն եղբարցդ մերոց, որք կայք բնակեալք ի կայսերապսակ երկիրդ ռուսաց և վրաց ի Հաշտարխան և ի բոլոր քաղաքսդ և ի շրջակայս դորին՝ ի Թիֆլիզ և ի բնաւ գաւառս նմին։ Նախ համայն հոգևորական դասուց, և ապա՝ ազնուազգի իշխանաւորաց մեծաց և փոքունց եղիցի յայտարարութիւն անխառն ի ստութեանց ճշմարիտ բանիւք առանց ակնառութեան։

Զի մեք ներքոյ ստորագրեալ նուաստագոյն ծառայք Աստուծոյ և համազգի միաբանագաւան կրտսեր եղբարք՝ ձեր՝ մինչ շնորհօքն Քրիստոսի ելեալ ի քաղաքաց մերոց և ի բնակութեանց եկաք ի սուրբ և յերկնանման Աթոռ մայրս մեր Քրիստոսակերտ և նոյնաէջ յուխտ և յերկրպագութիւն կրելով զնեղութիւնս ի ճանապարհի և ի շինամիջի յանուն կենարարին մերոյ Յիսուսի և կողամուխ սուրբ Գեղարդի նորին և կենդանի վկայ բազմաչարչար հօրն մերոյ սրբոյն Գրիգորի սքանչելագործ մասանցն և այլ սրբութեանցն, որք ի սմա կան համահաւաք, տեսաք զցանկալի մայր Աթոռս մեր սուրբ Էջմիածին ի պայծառութեան, զմիաբանսն ի բարեկարգութեան և ամենայն զարդք և սպասք սրբոյ Տանս ամբողջ և անպակաս։

Եւ զոր ինչ լուեալ էաք ի քաղաքի մերում ի նախանձոտ և ի քսու արանց վասն սրբազան քահանայապետիս մերոյ և պատուական գլխոյս. իբր թէ՝ բռնութեամբ է նստեալ ընդդէմ կամաց միաբանից և ազգին, և թէ զարծաթեղէնս է խորտակեալ և պարսից տուեալ, և անիրաւաբար բռնացեալ ի վերայ ստորագրելոց, և այլն։ Ամենևին զմինն ի գրեցելոցս, զորս համբաւեալ էին խռովարարքն ոչ տեսաք ի գերընտիր սրբազան Հայրապետս մեր։

Քանզի վասն այսոցիկ ամենից մանրաքննին խուզողութեամբ հարցափորձ եղեալ, իմացաք զճշմարիտն և գտաք զուղիղն, որ չէ թէ բռնութեամբ, այլ ընտրանօք միաբանից և երկրացւոց ընկալեալ է զայս Աթոռ, և ամենայն արծաթեղէնք մեծի Տանս որպէս յըզկզրանց անտի եղեալ են, նոյն և անթերի և անպակաս կան. զորս ի տեսանելն մեր աչօք մերովք և ի լսելն ականջովք զայսոսիկ վերոյիշատակեալսս՝ լցաք խնդութեամբ և զփառս Աստուծոյ մատուցաք, որ ազատեաց զմեզ ի խղճահարութեանց, և զգայթակղեալ միտս մեր անդրէն ի սուրբ հաւատս իւր հաստատեաց, և ջերմացոյց զսիրտս մեր ի վերայ վնասակրեալ խղճալի ծնողիս մերոյ, և ի վերայ Քրիստոսափոխան սրբազան հայրապետիս մերոյ ընդ վայր և տարապարտ ի նենգաւոր և ի բանսարկու անձանց բամբասեցելոցս։

Ուստի ականջալուր և ականատես եղեալ, այսու գրով մերով վկայեմք ստուգապէս ա-

առաջի Աստուծոյ և առաջի ամենեցուն զճշմարտութիւն, և ի հաստատութիւն բանիցս՝ ինքնալօժար իսկ կամօվք՝ կնքեմք զվկայութիւնս մեր իսկական մեր կնքովք՝ ի բաց փարատումն սնոտի կարծեաց ձերոց, և առ ի ազատանալ ձեզ, ըստ մեզ ի խղջահարութեանց և ի գայթակղութեանց· ողջ լերուք ի սէր ստորակնքողացս թղթոյս։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոյս, և ի յուլիսի ... ի մայր Աթոռս մեր ի սուրբ Էջմիածին։

ՄՀԱ. Ի Պօլիս առ Սինան օղլու Բաղդասար ամիրայն։

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ՝ գիտութիւն լիցի սիրելւոյդ մերում, և լուսածին զաւակիդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի թէպէտ արժան էր յառաջագոյն գրել առ քեզ զօրհնութիւն և զշնորհակալութիւն սակս պէսպէս հարազատութեանցդ, զոր ի ժամանակս ժամանակս ցուցեալ ես և ցուցանես միշտ սրբոյ Աթոռոյս և մերումս հոգևոր հայրութեան, որպէս գրեալ են մեզ այտի սիրելիք, սակայն ի բազում հոգս գոլով՝ չեղաք առ այն ձեռնհաս։ Եւ մինչ զարդիս ես մեր Ստեփաննոս արքեպիսկոպոսն և ազնիւ պարոն Գէորգն Ազալեկեան գրեալ էին զանազան զոհունակութեամբ զսիրելւոյդ իմոյ մեծագոյն սէրն և ջատագովութիւն, զորս ունիս առ շնորհատու ծնօղ մայրս քոյ, և առ մեզ, ուրախացեալ օրհնեցաք զսիրելիդ իմ բազմապատիկ շնորհակալութեամբ. տէր օրհնեսցէ զքեզ, և զօրացուսցէ, և զամենայն բանս և զգործս քոյ ի բարին տնօրինեալ յաջողեսցէ, և յամենայն չարեաց փրկեալ ի խաղաղութեան պահեսցէ։ Պատուիրեմ ուրեմն ազնիւ սիրելւոյդ իմում, զի ի դոյն կատարեալ սէրդ և ի բազմարդիւն բարեկամութիւնդ հաստատուն և անփոփոխելի կացցես, և միշտապէս ջատագով ճշմարտութեան լինիցիս հեռանալով ի գայթակղեցուցիչ բանից նախանձոտաց և ատելեացն Աստուծոյ· քանզի նոյն թշնամիքն արդարութեան և հեռացեալքն յԱստուածայլին ուղիղ շաւղաց, ապականարար բանիւք վերեանց վրդովեալ զմիտս օրհնեցելոց՝ աղտեղացուցին զլսելիս նոցա. և միշտ ի յաղտեղացուցանելն են։ Այլ՝ դու սիրելիդ իմ ի բաց հեռացուցեալ զմաքուր լսելիս քոյ յոյնպիսի բանից թունաւորաց, զհետ սիրոյ, խաղաղութեան, զճշմարտութեան և զաստուածպաշտութեան երթիցես, և զայլս ես զգայթակղեալս ի բանից նոցա ի յառաջին սէրն և ի բարեպաշտական միամտութիւն յորդորեալ՝ հաստատեսցես, և յամենեսին որչափ կարելին է զխաղաղութիւն սերմանել ջանասցես, բառնալով զխռովութիւն։ Որպէսզի վարձուց մեծաց, շնորհաց սրբոյ գահիս, և օրհնութեան մերում հանապազ արժանաւոր գտանիցիս հանդերձ շնորհակալութեամբ։ Նաև՝ Դանիէլ այրն չարագրգիռ ի Բալադիտ նստեալ՝ բոլորովիմբ հակառակեալ ընդդէմ սրբոյ Աթոռոյս և մեզ՝ ջանայ զմեծամեծ վնասս հասուցանել, որպէս և հասուցանէ իսկ· քանզի ի Բալադիտ և ի Կարին եղեալ զքեռինսն և զարգիւնսն սրբոյ Աթոռոյս յափշտակեալ՝ վատնեաց ի պէտս սնոտի ախտին, և ի սպառելն՝ զսանատս և զթեմեսուկս գրեալ սկսաւ բաժանել բռնակալաց խոստանալով զծանր ծանր կաշառս, զի ինքն եկեալ ի տեղի մեր նստցի։ Եւ իբրև չկարաց ի ձեռն արծաթոյ զկամս իւր պաշտել, ապա՝ ի Քիւրտիստան ի վանքն Իւչքիլիսէի ընկալեալ զապօրինաւոր օծումն յապօրինաւորաց՝ կամի զաթոռն սուրբ Լուսաւորչին փոխադրել անդ, և զսուրբ Աթոռս Լուսաւորչաշէն և զքրիստոսակերպ աւերել և յամայի թողուլ, և զանփոփոխելի հայրապետութիւն ազգիս ընդ փոփոխութեամբ արկանել, և չար օրինակ լինիլ ապագայից, և տալ արձակել զնզովս և զհայհոյանս զկնի ինքեան։ Ուրեմն եթէ այտի օգնութիւն չլինիցի մեզ, և օրհնեալքդ ոչ սաստիցէք զնա, աւերի իսպառ սուրբ տունս, և լինելոց է խղճահարութիւն ամենեցդ, զոր լեալ թէ և կամիցիք շինել, բնաւին ոչ կարէք։ Ահա վերստին գրեցաք բոլոր իշխանապետացն տեղւոյդ և իշխանացն հոգ տանել, և հոգալ զհոգւոյ ծնօղէս իւրեանց։ Սիրելւոյդ ես գրեմ, խորհրդակցել ընդ բարեպաշտից և ճշմարտասիրաց, և ի բարեկարգել զլխուսեան սուրբ Աթոռս փութալ։ Եւ օգնականութեամբ միմեանց զչարն ի միջոյ բառնալ։ Եւ փութապէս աւետալիր համբաւովք և ուրախական թղթովք զՍտեփաննոս վարդապետն մեր՝ առ մեզ վերադարձու-

ցանել. զի և մեք միամիտ հոգւով զհետ շինութեան և պայծառութեան սրբոյ տանս եղիցուք, և զցաւս մեր և միաբանից հոգասցուք։ Զայլն ամենայն ունիք ի թղթոց պարոն Գէորգին Ազալեկեան գիտել, առ որ երկար գրեցաք։ Ողջ լեր ի տէր, և զօրացեալ միշտ ի նոյնն, և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս, և ի յուլիսի ... ի սուրբ Էջմիածին։

ՄՀԲ. *Թուղթ ի յՈւռուսչուղ առ հասարակութիւն նոցա ընդ հաջի Կարապետին, հաջի Գէորգին եւ խօջայ Յովհաննիսին։*

Եւ ընդ ողջունառաք սիրապարզև օրհնութեան նամակիս՝ ծանուցումն եղեցի սիրելի և հոգեոր որդւոցդ մերոց և լուսածնունդ ղաւակացդ մօրս ձերոյ լուսոյ սրբոյ և մեծի Աթոռոյս Էջմիածնի։ Զի սիրելի որդիքն մեր, և յարգելի իշխանքն և իշխանազունքն տեղւոյդ մահտեսի Կարապետ և մահտեսի Գէորգ ազնուամիտ մեծահաւատ և բարեպաշտօն ազայքն, և այլ օրհնեալ ընկերք նորին՝ եկեալ ի սուրբ և յերկնանման Աթոռս ամենայն Հայոց ի յատուկ տեղիս պարծանաց օրհնեալ ազգիս մերոյ՝ յուխտ և յերկրպագութիւն, տեսին զմայր Աթոռս ցանկալի ի պայծառութեան և ի շինութեան, զմիաբանութիւն ի խաղաղութեան և ի բարեկարգութեան, և ամենայն զարդք և սպասք Աստուածային սուրբ Տանս ի լրութեան և յամբողջութեան, և ուրախութեամբ սրտի զփառս և զգոհութիւնս մատուցանել Աստուծոյ և զամենայն զկարծիս և զերկբայութիւնս ի բաց ի մտաց փարատեալ, զորս ընկալեալ էին ի չարասիրաց և ի խռովարար քսուարանց, և զայթակղեալ, և այլն, և զխնդիրս և զհայցուածս սրտից իւրեանց կատարեալ, վերադարձան ահա յայգը ի յօրհնեալ և ի յԱստուածահաստատ օթեանս իւրեանց։ Յորոց տեղեկացաք միանգամայն և՝ զսիրելեացդ մերոց զմեծագոյն սէրն և զյամենայնի ջատագովութիւն և զջերմեռանդ որդիութիւն, զորս ունիք առ շնորհատու ծնօղս ձեր, և առ մերս հայրութիւն. տէր օրհնեսցէ զձեզ, և զօրացուսցէ, և զամենայն բանս և զգործս ձեր ի բարին տնօրինեալ յաջողեսցէ, և յամենայն փորձանաց փրկեալ՝ ի խաղաղութեան պահեսցէ երկար ամօք հանդերձ բոլոր որդւովք ընտանեօք և ամենայն ձերայնովքն։ Նաև՝ գիտացաք՝ զբարեպաշտական հաւատն ձեր, և զորդիական սէրն, զորս ունիք առ Աստուած և առ սուրբ եկեղեցին ձեր, որով և սկսեալ էք զխախտեալ և զհնացեալ սուրբ Տունն Աստուծոյ նորոգել պայծառացուցանել. և գեղեցկապէս վայելչացուցեալ չքեղազարդել ի փառս ամենամեծ անուանն Աստուծոյ, և ի պարծանս և ի յաւիտենական յիշատակ ձեզ և որդւոց ձերոց յետ ձեր։ Ուրեմն լուսաւորեսցէ նոյն տէրն կենդանեաց և մեռելոց զհոգիս երջանիկ նախնեացն ձերոց և ծնողաց, և ամենայն մարդկօրէն յանցանաց նոցին ներումն և թողութիւն շնորհեսցէ, և զձեզ բարի շառաւիղքդ յօրհնեալ արմատոց նորին՝ բարի յիշատակ պահեսցէ։ Ուստի զայս նամակ օրհնութեան և սիրոյ ընդ վերոյյիշատակեալ օրհնեալ ուխտաւոր սիրելեացս դրեալ առ ձեզ, պատուիրեմ, կալ և մնալ հաստատուն և անփոփոխելի ի գոյն յորս կայքդ, և ի սիրոյ և ի յորդիութենէ անվերջանալի լինիլ և զայլս ևս ի զոյն յորդորել, և զլսելիս ձեր ի բաց հեռացուցեալ ի սնոտի և ի դատարկ բանից ննենգաւորաց՝ զպայծառութենէ և զշինութենէ սրբոյ Աթոռոյս հոգալ։ Իսկ զայլ որպիսութիւնս մեր և հոգւոյ ծնողիս ձերոյ ունիք լիապէս ի սիրելեացն մերոց գիտել, որք են բանական և կենդանի գիր վասն ձեր։ Այսպէս առնելով ձեր, եղիջիք օրհնեալք յԱստուծոյ և ի մէնջ, և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ ձեզ ամենեսին, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուաջս և ի յուլիսի ... ի մայր Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ՄՀԳ. *Ի Պօլիս առ Փարուզատ Ամիրայն։*

Զի յառաջ քան զայս ի զանազան ժամանակի գրեցաք օրհնութեան կոնդակօք առ հասարակութիւն քաղաքի ձերոյ զկոչմանէն

մերմէ յայս Աթոռ առաքելական յորդորանօք և ընտրանօք միաբանից սրբոյ Աթոռոյս և երկրացւոցս և այլոց շրջակայից մերոց. զորս և դու սիրելիդ մեր հարկիւ ցարդ անդեկացեալ ես յայնց կոնդակաց զայսոսիկ առաւելապէս յետ այսորիկ՝ միշտ թշնամիք բարւոյ և արդարութեան՝ սկսան բանիւք և թղթովք առասպելօք՝ վրդովել զպարզամիտսն, և թիւրել զճշմարտութիւն, զանազան զրպարտութիւնս առնելով վասն մեր, որպէս թէ՝ արծաթեղէնս եմք խորտակեալ, և պարսից տուեալ, և ի ձեռն կաշառաց՝ և բռնաւորաց օգնականութեամբ յափշտակեալ զայս Աթոռ, և ոչ ընտրանօք, որովք բանիւք կամեցան և զանուն մեր վատահամբաւել, և զանձինս յառաջ մատուցանել յայս աստիճան բարձրացուցանել և այլն։ Ցայնժամ թէ մեք՝ և թէ միաբանք և երկրացիք բազմակնիք վկայութեամբ ցուցաք, թէ սուտ են և թշնամութիւնք։ Որպէս և զվերջինն ձեռամբ սիրելի որդւոյն մերոյ Ստեփաննոս արքեպիսկոպոսին յղեցաք։ Ցորս գրեցաք ես՝ զարս հաւատարիմս յղել եթէ երկմտին, և ամենայն անօթիցն և անցիցն հասու լինիլ և քննութեամբ զճշմարիտն ի ստոյն որոշել։ Որոց ամենից դրուածոց և բանից մերոց ոչ ոք ցարդ եղև ունկնդիր. և մեք ես չկարացաք պարզապէս դիտել զդիտումն դոցա թէ յինչ միտս կան, և որպիսի խղճմտանօք անփոյթ նղեալ, թողուն աւերել Քրիստոսակերտ և Լուսաւորչաշէն սուրբ Աթոռս առ ժամանակաւ իւրեանց։ Վասնորոյ՝ ահա բազմապատկեցաք զգրութիւնս մեր, և վերստին թէ պատրիարգ վարդապետին, թէ իշխանացն տեզւոյդ և թէ բարեկամացն մերոց դրեցաք զյորդորումն և սէր համոզեցաք զամենեսին։ Եւ արդ՝ արժան էր յառաջ դրել սիրելւոյդ զթուղթ օրհնութեան, սակայն անձեռնհաս գոլով չկարացաք յայնժամ պատրաստել, իսկ այժմ յորժամ գիտացաք ի թղթոց մեր Ստեփան վարդապետին և Ազալեկեան ազնիւ պարոն Գէորգին զքոյդ հարազատութիւն զորս ունիս զէպ առ մեզ և առ սուրբ Աթոռս մայրս քոյ լուսակերտ՝ գրեցաք ահա զայս թուղթ սիրոյ և օրհնութեան բարեմիտ և մեծաջան սիրելւոյդ մերում. որով և շնորհակալեալ մեծապէս վասն ամենայն բարելաւութեանց քոց և ջատագովութեանց օրհնեմք զարժանաւորդ օրհնութեան. զոր տէր օրհնելով օրհնեսցէ, և զօրացուսցէ, և զամենայն զբանս և զգործս քոյ ի բարին յաջողեսցէ, և երկար և խաղաղ կենօք պահեսցէ հանդերձ բոլոր քոյայնովքն ի մխիթարութիւն սրտի մերում, և ի պայծառութիւն սրբոյ տեղւոյս ինքնակերտի։ Եւ արդ՝ պատուիրեմ սիրելւոյդ իմոյ, և մանաւանդ յորդորեմ, ջանալ զխռովութիւն բառնալ, և զխաղաղութիւն յամենեսին սերմանել։ Քանզի եթէ այլես երկարեսցի խռովութիւն քաղաքիդ բոլորովիմբ վնասի սուրբ Տունս. զոր թէ և յետոյ կամեսցին շինել, ոչ կարեն։ Ուրեմն փութով յօղնութիւն ժամանեսցեն, և զսուրբ Աթոռս ի ձեռաց թշնամեաց տղատեսցեն։ Քանզի Դանիէլ այրն խռովարար՝ զամենայն զարդս և զարդիւնս սրբոյ Աթոռոյս, որք կային ի Բայազիտ աւանդ եղեալք յափշտակեաց, և ի պատճառս փառամոլ ախտին վատնեաց։ Նոյնպէս և զընծայինսն որք կային ի Կարին եկուլ։ Եւ այժմ ջանայ զԱստուածաբնակ սուրբ վայրս քակել, և զհայրենի վանքն Իւչքիլիսէի ի Քիւրտիստուն հաստատել, և զհայրապետական Աթոռն անդ փոխադրել, և զանփոփոխելի հայրապետութիւն ազգիս ընդ փոփոխութեամբ արկանել։ Թող զայլ ամենայն անկարգութիւնսըն զթէմչսուկս գրէ և խանից և փաշալից տարածանէ, և զայն յանցանսն իւր ի վերայ մեր գնէ, զոր թողում, զի ըստ ապիրատութեան ի տեառնէ ընկալցի զարժանի տրիտուրն։ Նաև՝ մեծամեծքն ռուսաց ակնարկութեամբ մեծի կայսերն իւրեանց զերկու դեսպանս առաքեցին վասն վերահասութեան։ Որք եկեալ տեսին զամենայն ինչ ի կարգին, և ծանեան, որ թշնամութիւնք են, զոր ինչ ասացեալ են վասն մեր, վասն որոյ և գնացեալ պատմեցին առաջողացն իւրեանց։ Ցորոց մեծամեծացն և մեք վասն անմեղութեան մերոյ՝ ընկալաք զթուղթս յուսադրութեան, որք և խոստացեալ ես էին ծանուցանել զայնըս ինքնակալին։ Նման նոցա և բոլոր բնակիչքն Թիֆլիզու գիմեալ յապարանս վերոյիշատակեալ մեծամեծացն բողոքեալ են թէ՝ կայ ի սուրբ Էջմիածին օծեալ և յԱթոռ սուրբ Լուսաւորչին բազմեալ, զնա ճանաչեմք մեք մեզ հայրապետ։ Եւ ի վերայ այսր զերկու մահսէրս են արարեալ, զմինն առ հիւսիսականսն վասն չլինելոյ ունկնդիր ստալից գրուածոց նենգաւորաց։ Եւ ես՝ փափագանօք

յիշատակեալ են և յիշատակեն զանուն մեր յամենայն եկեղեցիս իւրեանց բառնալով զանունն չարահամբաւ Դանիէլին. որոց թղթոց և մահուէրաց զօրինակսն առաքեցաք յայդր ի տեսանել, և ի քաջութիւնս օրհնեցելոցն գիտել ընդ մեծի վրէժխնդրութեան։ Ի վերջոյ պատուիրեմ կրկին ջանալ ըստ ամենայնի ամենայն կերպիւ զճշմարտութիւն յառաջ տանել, և ամօթապարտ առնել որք խօսին զսուտ։ Եւ մանաւանդ՝ մեր Ստեփաննոս արքեպիսկոպոսին օգնական լեալ ի վերադարձուցանել առ մեզ փութասջիք աւետալիր և խաղաղական գրովք և լրովք. առ որ ակնապիշ լեալ՝ ժամ ի ժամ սպասեմք։ Այսպէս գիտացեալ ձեր, և ըստ կամաց և գրուածոց մերոց սիրով զկատարումն տուեալ, եղիցիս օրհնեալ յԱստուծոյ, և շնորհք սուրբ տեղւոյս Աստուածաիջի՝ եղիցի ընդ քեզ և ընդ քոյսն, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս, և ի յուլիսի ... ի մայր Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ՄՀԳ. *Թուղթ առ պարոն Գէորգ Աղայեկովն ընդ խանի մարդոյն:*

Եւ ընդ օրհնութեանս և սիրապարգև ողջունիս, գիտութիւն լիցի ազնիւ սիրելւոյդ իմոյ և բազմատենչ ցանկալւոյդ։ Զի մեր որդի պարոն Մարտիրոսն խաղաղութեամբ եկն ի սուրբ Աթոռս առ մեզ՝ և մատուցեալ ըզթուղթսդ քոյ և այլոց, ծանեաք զամենայն միտս գրեցելոցն ձերոց և զանցսն և զգործսն տեղւոյդ և նախանձոտաց, և այլն։ Բայց իբրև պատմեաց մեզ և զմահուանէ և վաղաթառամ փոխմանէ ոսկեհատ և ոսկեբողբոջ դստերն ձերոյ անմեղի, և մեր հոգեոր զաւակի, արդարև զամենայն զհոգս և զվիշտս իմ ի բաց թողեալ, ցաւեցայ լոյժ լոյժ յատկապէս ի վերայ դստեր ձերոյ վախճանելոյ։ Եւ յաւետ տխրեցայ ի վերայ այնմ, որ դու սիրելիդ իմ և ուրախութիւնդ և մխիթարութիւնդ սրտի իմոյ, կաս ի տրտմութեան և ի սուգ սակս անպատեհ և ապաժաման դիպուածոյն։ Ուստի՝ իմ է այդ վիշտդ և տրտմութիւնդ, քան թէ քո, և ես առաւել վշտագնիմ քան զքեզ։ Ամին իբր բազկատարած մաղթանօք զաղօթս և զխնդրուածս առ Տէր մատուցեալ առաջի իւրաէջ և հիահրաշ սուրբ տեղւոյս, և Աստուածային տաճարիս՝ հայցեցաք, ընդ սուրբ երամս անմեղաց մանկանց դասեցեալ՝ հոգւով սրբով մխիթարեսցէ և սփոփեսցէ ըզտրտմագին և զսևազգեաց սիրտ սիրելւոյդ և քոյայնոցն, և փոխանակ այնր, միջնորդութեամբ վերոյիշատակեալ սրբոց՝ և սիրելեաց իւրոց զայլ զերագոյնն և զպատուականն պարգևեսցէ՝ ծաղկեցուցանելով ղքեզ և զօրհնեալ տունն քոյ արու զաւակօք, և օրհնեսցէ զձեզ երկնաւոր և յաւիտենական օրհնութեամբ, որպէս զնախահարսն և զնախամարսն զառաջինս, և բազմածինս արասցէ զձեզ բարի յիշատակօք, որդւովք զօրացեալովք, և ծաղկափթիթ զաւակօք, առաւել քան զնոսա։ Եւ զայս թուղթ մխիթարութեան արժանապէս իբրև պարտաւորութիւն իմ գրեալ առ զերազնիւ սիրելութիւն ձեր խնդրեմ, մի առաւել քան զչափն տրտմել, և հոգալ վասն անմեղ արդարոյն, զի որ եհան քեզ, էառ, և դարձեալ կարող է զայլ փոխան նորա շնորհել. ի վերջոյ զայս գրեմ սիրելւոյդ, զի զքոյ խնդրեալ թուղթսն, ի վերայ իշխանացն տեղւոյդ, որոց անուանց սիահին ես յղեալ էիր, անպակաս և անթերի գրեալ զօրհնութեան թուղթս յղեցաք ձեռամբ օրհնեալ ուխտաւորացն տեղւոյդ։ Ընդ որս գրեցաք ղթուղթս և առ պարոն Թամարովն և առ քեզ, և չգիտեմ հասանին առ ձեզ այնոքիկ թուղթք, թէ ի ձեռըն նախանձոտաց անկեալ փչանան, նման միւսոցն։ Զի որովհետև աւետաւորքն վերադարձան ի վերայ Բայազիտու յայդր, վասն որոյ կարծեմ թէ այն թուղթքն, որք էին հարկաւորք և պիտանիք աւելի քան զերեսունն, ի թշնամեաց ծածկեցին, և այլն։ Զկնի այնորիկ Բաթր թաթարն եկն, և մեք զպատասխանին վերադարձուցաք ընդ նմա առ քեզ։ Ահա զերապատիւ խանն մեր, և մեք ես ղըրեալ զթուղթ խնդրանաց առ մեծապատիւ վէզիրն, յղեցաք ձեռամբ (հաջի Միրզայ Մահմատին)· զոր յատկապէս խանն առաքեաց առ նա, հոգալ զգործս մեր և զբանն ի մեր կողմն եզերել։ Կարելի է թէ՝ մեր Մարտիրոսն ես ընդ խանի մարդոյն և ընդ թաթարին եղեալ՝ ուղևորեսցուք յայդր։ Ցորոց ունիս զամենայն ինչ դիտել։ Զայս քանս առ այժմ բաւ համա-

րեալ՝ յանձնեմք զսիրելիդ մեր Տեառն Աստուծոյ, և սուրբ Աթոռս քեզ զօրացելոյդ նովաւ, ողջ լեր։

Ի 1802. ի յօղոստոսի 3. ի սուրբ Էջմիածին։

ՄՀԵ. *Թուղթ ի Կայէն Մատենն առ հանրահռչակ սեպուհ սատրապետ Փիլիպպոս ամիրայն, խնդիր վասն վերահաստատութեան մերոյ։*

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ՝ ծանուցումն եղիցի ղերազնուութեան ձերումդ, զի թէպէտ գիտեմ ստուգիւ զձերդ Աստուածպաշտութիւն և զմեծազոյն հարազատութիւն, զորս ունիք առ. սուրբ Աթոռս, և առ. զահակալս սորին, և յամենայն ժամ ամենայն յօժարութեամբ և կարողութեամբ օգնեալ էք սմին և պաշտպան եղեալ աթոռալնոցս յամենայն նեղութեան, և ի կարիս, և արաղապէս յօգնութիւն հասեալ, և հզօր ձեռնտուութեամբ օժանդակ եղեալ՝ որոյդ բարեաց արգասիք, ի յանջնջելի մատեանս հանդուցեալ հայրապետացն երջանկաց՝ կան արձանացեալք բազմապատիկ գովութեամբք։ Որոց ամենից բարելաւութեանց ձերոց որպէս տեղեակ եմք ի լրոց, նոյնպէս գիտեմք զայնս և անձամբ, և չունիմ բնաւին զկարծիս զայնց։ Բայց այժմ զայսքանս ցաւակցաբար գրեմ մեծապատիւ իշխանիդ մերում և խնամակալ բարերարիդ սրբոյ Աթոռոյս, որպէս և յառաջ բազմիցս դրեալ եմ ղերազնուոյդ. ահա արք նախանձոտք և խռովարարք քաղաքի և ազգի, և թշնամիք արդարութեան, և ուղղութեան յայս կէտս հասուցին զսուրբ Աթոռս, և զօրէնս մեր իւրեանց ներհակ չարժամամբն, և հակառակութեամբն, որպէս լաւապէս յայտնի է ձեզ, և զկարգ մեր և զազգսն առաջի ամենայն ազանց ծանակելի արարին, և թողին յաշխարհի զմշտենջենաւոր խայտառակութիւնս զկնի ինքեանց ի յամօթ և ի նախատինս մեզ ամենեցուն առ հասարակ. և ի յԻւնչքիլլիսէ զհակաթոռ հաստատելով, և զայլ կաթուղիկոս նստեցուցանելով յայտնապէս իրեի, զի կամին զկառուցեալս այս սուրբ տաճար ի Քրիստոսէ և ի սուրբ Լուսաւորչէն, և ընդպարծանքս տղղիս Հայոց՝ քակքակել և հիմն ի վեր տապալել, և ղանփոփոխելի հայրապետութիւն տղղիս ընդ փոփոխութեամբ արկանել։ Լուր և ի միտ առ, բարեպաշտօն իշխան, ի Լուսաւորչէ հետէ չեղեալն և չգործեցեալն՝ ահա ի ժամանակս գերապանծ մեծապատիւ իշխանաւորացդ գործի, և կատարի և դուք անփոյթ առնէք, և մինչ ցարդ ի մէջ անօրինաց և բարբարոսաց հաստատ և պայծառ մնացեալ Աստուածաշէն սուրբ Տունս, հոգացողութեամբ երջանիկ նախնեացն ձերոց ի Քրիստոս հանգուցելոց, ահա այսօր առ ձեօք քակտի, և դուք օրհնեալ շառաւիղքդ նոցին ոչ հոգայք։ Քանզի անտերունջ ազգս և եկեղեցիք մեր ձեօք պարտին վայելչանալ, և բարեկարգիլ, և պարտաւորութիւն երևելի և նշանաւոր իշխանաւորացդ է՝ սանձահարել զխռովիչսն, և զեղծիչսն ազգի խաղաղութեան, և կարգադրութեանց սրբազան հայրապետաց, և զսպել զստահակսն, և զապառումսն, և զեղջիւր ամպարտաւանութեան նոցա բեկանել, և չթողուլ ըստ կամս գնալ և գործել ընդդէմ բարեկարգութեան ազգին։ Քանզի օրհնեալ իշխանքդ ոմանք Պօլսոյ՝ հաւատալով բանից նենգաւորաց, և ունկն մատուցեալ ստոտ դրութեան նախանձոտաց, առանց իրաւանց և քննութեան՝ ցրտացեալ երևին ի սուրբ Աթոռոյս, և մեք պատճառն անգիտանամք, և քանիցս միաբանք սուրբ Գահիս բազմակնիք վկայութեամբ ընդ երկրացւոց գրեցին ամենայն ուրեք զճշմարիտն, յսկ թէ՝ տակաւին երկբայլին ի վերայ գրուածոց մերոց, և ի վերայ անցիցն տեղւոյս, և անհաւատալի երևին բանք մեր, և այնքան բազմութեան, և միայնքանի մի ախտաւոր և բանսարկու սեպղլխացն ստոյգ վարկանին, կարեն զհաւատարիմ արս յղել և լաւապէս հասու լինել ճշմարտութեան, քանիցս անգամ թէ նոցա և թէ ձերդ յարգութեան գրեցաք զսոյնս։ Եւ զայս ոչ թէ ամենեքն գործեն, այլ երեք և կամ չորս անձինք ի յիշխանացն Պօլսոյ։ Ուրեմն՝ խնդրեմք խոնարհաբար, և մանաւանդ գթովն Յիսուսի յորդորեմ զջերմեռանդ իշխանապետդ ազգիս, ի փառս Աստուծոյ քոյով արդարամիտ քաղցրութեամբն և պարզ սրտիւն խաղաղացուցանել զխռովեալսն, և շիջուցանել զհուրն ատելութեան, և զվրդովեալսն, և զգայթակղեալսն անդրէն ի հաւատս և ի սէր Աստուած-

պաշտութեան հաստատել, և զմեզ ե զԱթոռս ի ձեռաց անհաշտ թշնամեացն, և անզեղջ անբարշտացն ազատել։ Ահա և բարձրաստիճան Դօվլէթլի Իւսուֆ փաշայից փաշային և մեծահամբաւ քաջալազթ եպարքոսին ղթուղթ խնդրանաց գրեալ առաքեցաք, յուսամք, զի ձեռնտուութեամբ ձերով և միջնորդութեամբ ի գնալն ի մեծն Պօլիս զբանն ի մի կողմն վերջացուցեալ, օր մի յաւաջ զմեզ միամիտս առնիցէք, և զնախատինս ի սրբոյ Աթոռոյս բառնայցէք, և զխռովարարն սատանայ իւրովք գործակցօք ամաչեցուցեալ ուրախ առնիցէք զԱստուած, և զտրտմութիւն մեր և զաառապանս, զորս կրեմք ի յամբարշտաց, և ունիմք ի վերայ անմիաբանութեան ազգիդ՝ ի սրտից մերոց ի բաց փարատիցէք։ Որովք պարտաւորեալ զմեզ առնելոց էք միշտ աղօթարար վասն երկարութեան բարեացապարտ անգին կենաց ձերդ դերազնութեան։ Արդ՝ Տէր ուղղեսցէ զգնացս ձեր՝ երթալ խաղաղութեամբ ի Պօլիս, և զամենայն ինչ ի բարին եզերել։ Այլ և զսուրբ Աթոռս և զմեզ յանձնեմ ի խնամս ե ի բարի խղճմտանս քո, և զքեզ տեառն Աստուծոյ Ամենակարողի, և բազում յուսով սպասեալ, մնամ բարի համբաւոց և խաղաղութեան լրոյ ի քէն պատճառեցելոյ. ողջ լեր փառազարդ իշխան շնորհիւ կենսատու սուրբ խաչին Քրիստոսի՝ ի պայծառութիւն սրբոյ հաւատոյս մերոյ, ի հաստատութիւն Քրիստոսաէջ սուրբ Գահիս, և ի մխիթարութիւն վշտակիր սրտի մերոյ, և շնորհք սրբոյ և մեծի Աթոռոյս լուսակերտի՝ եղիցի ընդ քեզ և ընդ քոյայինսն, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս, ի յօգոստոսի ... ի մայր Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ՄՀԶ. Առ ընդհանուր ազգն վասն Գրիգոր պատրիարգի արարմանցն: *)

... և չգիտացաք ցարդ յինչ միտս գոյն ձեր և զինչ առնելն։ Եթէ ունիմ զյանցանսն զայնս, զորս բարբանջեն նախանձոտք, յիրաւի դատիմ ի խղճէս և յԱրդարադատէն, և արդարանան ասողքն, և ես ցաւիմ ոչ վասն ասելոյն զայն, այլ վասն ունելոյն զայն, իսկ թէ՝ ոչ դատիմ ի խղճէ մտացս, հողմոց հնչմունք վարկանիմ, և ինքեանք տացեն զպատասխանի այնմ, զորոյ զսուրբ տաճարն աղօտացուցանեն ի պայծառութեանց, և զպարկեշտ բարեկարգութիւն Ազգիս խանգարեն, և զբազմայարդ հայրապետութիւն և զդերամբարձ պատիւ և զմեծութիւն սրբոյ Աթոռոյս ընդ տիղմ թաւալեալ, ըստ տղմասէր վարուց իւրեանց՝ ծանակելի առնեն առաջի ամենից մերազանց և այլազանց, զի ինքեանք փառաւորեսցին ի ռամկաց իբրև զառաքինի և զուղղասէր, և զվրէժխնդիր աստուածային օրինաց, և բարեզարդող Ազգի։ Յայսպիսի խռովարար և գայթակղեցուցիչ արանց մինն է և Խամսեցի Գրիգոր չպատրիարգն Պօլսոյ, որ կուրացեալ ըստ հոգւոյ և մարմնոյ աչօք գայթակղեցուցիչ և մոլորեցուցիչ ձեզ եղև, և զբանաւոր հօտսդ Քրիստոսի փեռեկտեաց՝ և զհուր ատելութեան և խռովութիւն արկեալ ի ձեզ՝ եբարձ զխաղաղութիւն Աստուածային յօրհնեցելոցդ և ի սուրբ եկեղեցեաց մերոց, արզարև՝ ըստ տէրունական բանին՝ լաւ էր թէ չէր ծնեալ քան թէ գայթակղեցոյց ոչ զմին, այլ զբազումս ի ձէնջ. ուրեմն՝ վայելի է և եղկելի, որ զբիւրաւոր անձինս յուսահատեցուցեալ՝ կորոյս ընդ ինքեան, բարւոք է նմա կապել յայմհետէ ընդ պարանոց յանցանաց զերկան իշոյ և կործանել, քան կալ կենդանի։ Զի յորէ, յորմէ հետէ եմուտ անարժանդ ի յարգական Աթոռ պատրիարգական մեծի մայրաքաղաքիդ իբրև ոչխարամոլթ գայլ ծարաւի արեան անմեղաց, ոչ դադարեցաւ ի փողոտելոյ ղանմեղ գառինսդ երկնաւոր հօտապետին, պէսպէս հնարիւք և նենգապատիր խաբէութեամբ իբր Աստուածային ճանապարհաւ, և զանօրինակ զյանցանսն, զորս գործէ, իբրև զարդարութիւն և զաստուածպաշտութիւն մեծ ձեացուցանէ պարզամտաց առաջի։ Յաղագս որոյ՝ կամեցեալ զգազեալ չարիսն ի դմա, և զմթեբեալ և զնեխեալ զմրուրն ատելութեան և նախանձու ի լոյս բերել, որք գանձեալք կան ի լեղեաւ զառնացեալ սիրտ և ի չարարուեստ անձն եղկելւոյդ, զայս թուղթ ծանուցական դրեալ առ աստուածապաշտ ժողովուրդսդ Լուսաւորչերամ իրազգացս առնեմք զձեզ, զի գիտասջիք ամենքին, թէ չէ

*) Սկիզբը թերի էր։

գա հարազատ որդի սրբոյ Աթոռոյս, այլ խորդ, և մանաւանդ ներհակ և հակառակ՝ և քակտիչ սմին և չէ պատրիարգ Պօլսոյ՝ այլ պետ և գլուխ չարեաց, և որթ որթնահար՝ ի բաց մերժեալ և քեցեալ ի մշակութենէ հօրն երկնաւորի և ի հարազատութենէն Քրիստոսի կենարարին մերոյ։ Ուստի՝ և հովուեցեալքդ ի դմանէ, որք իբրև զօ ռ. ի դա հաստատեալ էիք ոչ պարտիք յայսմհետէ գիտել զնա այգի պտղաբեր և տունկ բարունակատու, այլ դաղձաւոր և դօսացեալ, և չոր փայտ ուռճակիր, ունայն յամենայն բարեաց և զարշելի ի գեղեցկութեանց։ Այլ և ո՛չ պարտիք ճանաչել զդա իբրև զկարգաւոր Ազգիս, և ընդունել իբրու ի մէնջ, այլ հրաժարելով հրաժարել ի դմանէ իբրև ի կատաղի ղաղանէ և ի գիշախանձ գայլոյ և համաթուել ընդ գլխաւոր հերետիկոսաց և ընդ համուռ հերձուածողաց՝ և ընդ Նեստորի ընդ Մակեդոնի և ընդ Արիոսի, և այլոց հայհոյչաց, և գիտել զդա հալածող Քրիստոսի և Քրիստոսեանց, և քակիչ Աստուածային և եկեղեցական օրինաց և կանոնաց, և խրամատիչ հայրենի և վաղեմեան սուրբ և Աստուածաչէն ցանդոյն։ Քանզի՝ դա միայն գտաւ ի պատրիարգունս մեծիդ Պօլսոյ թագաւորեալ և բարեկարգեալ քաղաքիդ, որ զինեցաւ ընդդէմ սրբոյ Աթոռոյս, շնորհատու ծնողիս իւրոյ, ներհակ գահակալի սորին, հակառակ գերապանծ պատրիարգական չքոյ և տապալիչ օրինաց մերոց, և եղև զաւակդ Քանանու արժանաժառանգ ամենայն նզովից, և անիծից Աստուծոյ և ամենայն նախնի երջանկաց նման Նմին, հարազատ որդիդ ընդ հարազատ հօրն իւրոյ Քանանու, որ զմերկութիւն ծնողին ծիծաղելով, հրատարակէր, ըստ ապառում անզգամաց, որք ծիծաղելով գործեն զչարիս և ուրացաւ զամենայն զերախտիս սորին, զորս ցարդ ընկալեալ է ի մանկութենէն ծնունդդ խոտորեալ և թիւրեալ, որդիդ արատոյ, և զաւակդ ծնողանարգ, վասն այսորիկ և չիջցի լոյս աչաց դորին և խաւարեսցի։ Նախ զինեցաւ ընդդէմ սրբոյ Աթոռոյս, որ ի Լուսաւորչէ հետէ չեղեալն կամեցաւ առնել ի Ցիւչքիլիսէն հակաթոռ հաստատելով և զայս Քրիստոսակերտ և զաստուածահիմն զսուրբ Աթոռս քակտել և յաւեր դարձուցանել։ Ներհակեցաւ գահակալիս, որ զանփոփոխելի հայրապետութիւն ազգիս ջանացաւ ընդ փոփոխութեամբ արկանել, և զԱզգս մեր երկգլխեան կենդանի հրէշ իմն ցուցանել աշխարհի։ Զինեցաւ ընդդէմ պատրիարգական աթոռոյն և ընդդէմ ինքեան, որ զանէծս ցաւագինս էած ի վերայ իւր վատթար գործովք իւրովք, և զգետնեաց դպատրիարգական պատիւ, որ կայր ցարդ պահեալ յամենից, և այսպէս վեր ի վայր արար զամենայն բարեկարգութիւնս մեր։ Եւ վերջապէս հալածիչ է Քրիստոսի և Քրիստոսեանց, որ ուր և գտանէ զճշմարտասէրս, և զջատագովս սրբոյ Աթոռոյս՝ մեծապէս վնասէ, և զչարիս և զնեղութիւնս հասուցանէ, որպէս զարդիս կամեցեալ է զզանազան աղէտս և զվնասս հասուցանել բարեհոչակ քաղաքի Զմիւռնոյ՝ բարեհամբաւ առաջնորդին և ծայրագոյն նուիրակին սրբոյ Աթոռոյս, Մարտիրոս արքեպիսկոպոսին, զոր մինչև ի Ցիւչքիլիսէն կապեալ ոտիւք և ձեռօք անխնամ ցանկացեալ է աքսորել, բայց Աստուած և զօրազօր շնորհք սուրբ տեղւոյս Նոյնաիջին՝ անարգեալ զչար խորհուրդս դորին, ազատեալ է զսիրելին իւր ի բազմահնար մեքենայից չարի, որպէս թուղթք բողոքանաց նոյն Մարտիրոս Արքեպիսկոպոսին, նուիրակին և առաջնորդին Զմիւռնոյ ցուցանեն զնենգագործութիւնս դորին, որովք առ մեզ և առ բոլոր միաբանութիւն Աստուածեան սուրբ Գահիս բողոքեալ դանգատանօք զիրաւունս առնել պահանջէր։ Արդ՝ իսկզբանցն և այսր՝ չէ ոք լուեալ զայսպիսի ինչ և կամ տեսեալ, զի նախկին պատրիարգունքն Պօլսոյ, թէ և ունեցեալ են դհակառակութիւն ինչ ընդ Զմիւռնոյ առաջնորդաց, բայց ի պատիւ սըրբոյ և մեծի Աթոռոյս սիրով են վարեալ ընդ նոսա, և ոչ ինչ հակառակութիւն և զանգատութիւն չեն ցուցեալ։ Այլ դա տմարդի և կոպիտ և սոպռ Խամսեցիդ, չև ևս տակաւին ինքեան ծանուցեալ զիւր ինչ գոլն, և որչափ տեեյն ի փութակործան յիւրումն ծանակելի իշխանութեան, որ հանգոյն դդմենւոյն Յովնանու ընդ առաւօտն եղ և ի գիշերի ունի կորնչիլ ընդ գիշերաշրջիկ խաւարասէր չղջիկանդ, յանչափս ձկտեալ զձեռն, ընդ այնպիսի վիմի ընդհարկանէ զջախջախելի գլուխն, յորմէ ունի փշրիլ, զի որ ի բարձունս զքար ձգէ, ի վերայ գլխոյ իւրոյ անկցի։ Ուստի՝ մեք վասն այսքան և այսչափ եղեռնագործու-

թեանցն նորին, ընդ բանիւ արարեալ զկարգադրեղծն, և Աստուածային սրով ընդ մէջ հատեալ զդա՝ որոշեցաք ի միաբանութենէ սրբոյ Աթոռոյս և ի բանաւոր հօտից Քրիստոսի, և զնզովս և զանէծս կարդացեալ ի գլուխ անզգամին առաջի սրբոյ և սարսափելւոյ սեղանոյս Քրիստոսաիջի հանդերձ բոլոր միաբանութեամբ և հոգևորական դասուք՝ հատաք ի բաց իբրև զնեխեալ և զապականարար անդամ յամրողջ անդամոցդ Քրիստոսի, և բարձու հրամանաւ սրբոյ և Աստուածաբնակի Աթոռոյս, և հայրապետական իշխանութեամբս մերով ըստ հրամանին Քրիստոսի և ըստ արդար իրաւանցն Աստուծոյ, կապեցաք անլոյծ կապանօք և բանադրեցաք զանիծեցեալդ յԱստուծոյ զչիք և զպիղծ Գրիգոր չպատրի արդդ Պօլսոյ ի յերկինս և ի յերկրի, և մերկացուցաք զդա յԱստուածային սուրբ շնորհաց՝ ի կարգաց և յաստիճանաց և եղիցի նը զովեալ և անիծեալ յԱստուծոյ, յամենայն սրբոց նորին և ի մէնջ։ Բայց ժողովուրդքդ Աստուծոյ, և ընտիր հարազատ զաւակունքդ սրբոյ Աթոռոյս՝ եղիջիք օրհնեալք և ի Տէր զօրացեալք, և լիջիք ազատ և հեռի ամենայն անծիցս, միմիայն ի գլուխդ անզգամիդ այդորիկ կուտեսցին զառնութիւնքս և չարիքս, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ· թուոջս, և ի յօդոստոսի։ Առ դրան թշնամակործան և անպարտելի սրբոյ և մեծի Աթոռոյս Էջմիածնի։

ՄՀԷ· *Ի միաբանից թուղթ առ չպատրիարգն Պօլսոյ ի պատասխանի մայիսի 17 գրեալ առ մեզ թղթոյն։*

Ի լուսակար և ի յԱստուածակերտ սրբոյ և մեծի Աթոռոյս Էջմիածնի բոլոր միաբան և կարդակից եղբարց խոնարհ պաշտօնէից Աստուծոյ, այսինքն յարքեպիսկոպոսաց, ի յաբեղայից, և ի համայն հոգևորական դասուց ծանուցումն եղիցի մեծի քաղաքիդ Պօլսոյ անուանեալ պատրիարգիդ Գրիգորի խարթացեալ և ծնօղանարգ ստամբակ որդւոյդ սրբոյ գահիս. զի ի մայիսի 17 գրեալ ըստ քոյդ արժանւոյ զգիրդ՝ ընկալաք, և բացեալ բուրեաց զհոտ ատելութեան սրտիդ և նախանձու հոգւոյդ, և ծանուցաւ մեզ հակառակութիւն և թշնամութիւն անհարազատիդ որ առ սուրբ Աթոռս Աստուածաբնակ, և առ Աստուածակոչ գահակալս սորին, և ապականեալ զմաքուր լսելիս մեր բանք քոյ, նողկալի արար զմեզ զամենեսին, և թէև անարժան պատասխանւոյ զքեզ վարկաք, սակայն ի զղաստացուցանել զթմրեալդ մնօտի ըղձիւք, և առ ի պարտազերծս զմեզ առնել, զայս դրեմք այժմ համառօտիւ քեզ, միանգամայն և ծանուցանեմք և վերակրկնեմք զներքին դիտմունս մեր ըստ առաջնոյ գրուածոց մերոց։ Նախ՝ զոր միանգամ օծաք շնորհիւ սրբոյ հոգւոյն ըստ կամեցողութեան բազմաց, ամենեսին ոչ փոփոխեմք, մինչև ցվախճան կենացըն, և այլում պէտս ոչ ունիմք, և ոչ իսկ զանունն լսել կամիմք։ որպէս զոյնս բարձրակոչ աղաղակաւ բազմիցս բոլոր միաբանիւք և երկրականօք բազմակնիւք ստորագրութեամբ դրեալ ազդեցաք ամենիցդ։ զի թէ նախանձոտք և խռովարարք ազգի և լուծիչք օրինաց և սահմանադրութեանց սրբոց երջանկաց՝ խցեալ զլսելիս ընդդէմ ճշմարտութեան ոչ լսեն և ոչ զգան, և ըստ զաչացուաց՝ ոչ գան առ լոյսըն, այն չեն մեր մեզ, որպէս և ոչ արեգական զոր ատեն խաւարաշրջիկք։ Երկրորդ զյանցանսն զորս կամիք նախանձու հոգւով վառեալ դնել ի վերայ եռերանեալ սրբազան քահանայապետիս մերոյ, որով և ջանայք վատահամբաւել դքարեհամբաւ զանուն հոգէընտիր հայրապետիս, այնոքիկ ամենայն ի ձեզ և ի ձեզապիսիսն լրացեալ տեսանին որպէս քաջ վերահասու եղեալ դիտեմք, քանզի յաշխարհ յամենայն տարածեալ, քարոզի արծաթով և կաշառօք յառաջ մատչելն թէ քոյդ և թէ Գանիէլին, և զանյագսն և զմեծամեծսն և զփոքունսն լցուցեալ արծաթով, կամիք ծածկել զճշմարտութիւն, որ իբրև զարեակն փայլի յաչս ականաւորաց, թէ և՝ դուք ախտացեալ յախտէ կուրանայք առ այն նկատել։ Երրորդ՝ զզառնութիւն լեղւոյ և զթոյն օձի ի քեզ դաղեալ և ի վերին երեսս զմիաբանութիւն մեր նենգեալ հարազատ որդւոյ կարգաս զքէն ի թունալի թղթիդ. որ բազմօք հեռացեալ կաս ի հարազատութեանց։ Քանզի հարազատ որդին ծանուցեալ զծնօղն՝ երախտա-

հատոյց լիցի. իսկ դու ուրացեալ զծնօղդ, չարահատոյց լինիս։ Հարազատ որդին զանուն ծնօղին գովաբանէ, և բարօրութեան նորին ցանկայ, այլ դու անպատուեալ զշնորհատու ծնօղս քո սուրբ Էջմիածին, և դերամբարձ զամենագով անուն սորին զզետնեալ, և զամենայն փառս և զպատիւսն ընդոտնեալ աւերութեան ցանկաս և մեաս, և հիմի ի վեր տապալել փութաս՝ հաստատելով ի Քիւրտիստուն զհակաթոռ փշրելի՝ ընդդէմ մայր Աթոռոյս միածնաէջի բաղում երկամբք զքեզ դաստիարակողի ըստ քոյդ խոստովանութեան։ Հարազատ որդին զհայրենի տունն տենչայ ի պայծառութեան ունիլ, բայց դու սարաուցեալդ ի սմանէ լաւ համարիս զքակիլն Քրիստոսահիմն և Լուսաւորչաշէն Աստուածային սուրբ տանս և այնմ հետամտիս յամենայն զօրութենէ։ Ընտիր և ճշմարիտ որդին փարեալ զհամահայր և զհամամայր եղբարբք՝ խանդաղատի ի վերայ հօր և մօր, և համաձայնի եղբարց իւրոց, այլ դու թողեալ զքաղցր մայրս քո զսուրբ Էջմիածին և զբազմաչարչար հայրն մեր զսուրբ Գրիգորիոս Լուսաւորիչ, և զարժանաւոր փոխանորդն նորին և զգահակալն սրբոյ գահիս, զհաւանութեամբ ամենիցս զընտրեալս և զօծեալս և զայսքան բազմաթիւ միաբան եղբարս քոյ, ի յԻւչքիլիսէն քեզ ծնօղ որոնես քեզէն միայնակ՝ զատեալ և որոշեալ ի մէնջ ի յեղբարցդ հարազատից և զհետ երթաս աստուածոց օտարաց, զորս ոչ պաշտեցին յառաջ քան զքեզ եղեալքն և ոչ պաշտեմք և չճանաչեմք իսկ մեք։ Արդ՝ որովհետև դու ինքնին թողեալ զսուրբ սէրն մեր, որ առ քեզ, և քեզէն լքեալ զհամակամ և զմիաշունչ միաբանութիւն մեր՝ որոշեցար ի մէնջ, նմին իբր և մեք ահա բոլոր միաբանութեամբ զատեալ և որոշեալ զխորդ որդիդ, և զանպիտան եղբայրդ մեր հատաք զքեզ ի հաղորդութենէ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյս, և արտաքս ընկեցաք ի միաբանութենէ մերմէ, և ընդ սրբազան քահանայապետիս մերոյ միակամ և միաբան, զանէծս և զնզովս կարդացեալ ի վերայ քո, լքեալ թողումք զքեզ և մեկնիմք և հրաժարիմք ի քէն և իբրև ի գլխաւոր թշնամւոյ մերմէ, և ի վնասատուէ սուրբ եկեղեցւոյ։ Ահա և զպատճէն գրոյդ ի սմին թղթի արձանացուցեալ առաքեմք յետս առ քեզ, զի վերստին որոճեալ՝ ծանիցես զգրուածսդ անտեղի և զմեզ անբասիրս ունիցիս։

Գրեցաւ ի ՌՄԾԱ. Թուոջս, և ի յօղոստոսի... առ դրան ներհակակործան և թշնամավան սրբոյ և մեծի Աթոռոյս Էջմիածնի։

ՄՀԸ. *Թուղթ ի վերայ Ղզլարու հասարակութեանն ընդ սուրբ Յակոբայ ջուր տանող պարոն Գաբրիէլին։*

Եւ ընդ սիրոյ և ողջունառաք օրհնութեանս նամակիս, գիտութիւն լիցի Աստուածասէր և մեծահաւատ ժողովրդոցդ մերոց և օգտակամ հաւատարիմ և սրտացաւ որդւոցդ սրբոյ և մեծի Աթոռոյս Էջմիածնի։ Զի բնական է անդամոց՝ վշտանալ ընդ վշտացելոյն և կարեկից նմա լինիլ։ Արդ՝ զսոյն օրինակ մինչ մեք դիտելով զգործս նախանձոտաց, որք թշնամութեամբ և անհիմն բանիւք վրդովեալ զխաղաղութիւն և զմիամտութիւն ձեր և դայթակղեցուցեալ զսիրտս օրհնեցելոցդ ցբաացուցին ի սրբոյ Աթոռոյս և ի մէնջ, վշտանայաք ի վերայ նոցա և մանաւանդ ի վերայ անմիաբանութեան և խռովութեան հարազատ որդւոցդ մերոց՝ իբրև գլուխ ի վերայ անդամոց։ Եւ դուք ևս տեսանելով և լսելով զտարաձայնութիւն հողևորականաց՝ ցաւէիք ի հարկէ ընդ անուղղայ գործս խռովարարաց իբրև անդամ ի վերայ գլխոյ։ Բայց զարդիս թողեալ զամենայն ի բաց, իբրև գիտացաք ի թղթոյ ոմանց սիրելեաց ձերդ քաղաքակցաց զյաճախելն մարախաց և թրթրոց ի յօրհնեալ քաղաքս ձեր, ի յանդս, և ի յանդաստանս և ի ծառաստունկս ձեր, յորոց վնասուց և մեծապէս կասկածիլն օրհնեցելոցդ, որոյ աղագաւ և յատուկ զմարդ էիք առաքեալ ի սուրբ Աթոռս վասն սուրբ Յակոբայ հրաշագործ ջրոյն, փութացաք ուստի և մեք բոլոր միաբանութեամբ Աստուածեան սուրբ գահիս ի թափօր և յանգաստան հանդիսանալ առաջի սարսափելի և սքանչելահրաշ սուրբ տեղւոյս իջման Քրիստոսի Աստուծոյ միածնի հօր, հանդերձ վերոյիշեալ հրաշագործ սրբութեամբք և սրբոց մասամբք, և յատկապէս զսուրբն Յակոբ զպատուական վկայն Քրիստո-

սի, և զսքանչելագործ հայրապետն միջնորդ և բարեխօս կալեալ առ. հեշտալուրն Աստուած բառնալ զպատահարս և զգիպուածս, որք առաջի կան ձեր։ Որ և՝ մաղթանօք սրբոց և սիրելեաց իւրոց բարեգութն Աստուած բարձցէ ի ձէնջ և ի քաղաքէ ձերմէ, ի տանց և ի բնակութեանց ձերոց, յորդւոց և ի յընտանեաց ձերոց, յանդաստանաց և յայգեստանեաց ձերոց զամենայն զպատիժս, զպատուհասս, զպատահարս, զճճիս, զմարախն, զջորեակն, զթրթուրն. և զայլ վնասակար և ապականարար կենդանիս, որք առաքին ի վերուստ ի խրատ անխրատից։ Այլ և պահեսցէ զձեզ Տէր երկար կենօք, խաղաղ ժամանակօք և բարեյաջող բարձրութեամբք ի հաստատութիւն եկեղեցեաց մերոց, և ի մխիթարութիւն վշտակիր սրտի մերումս Ահա ըստ խնդրոյ խնդրողաց՝ առաքեցաք զփափագելին սրտից ձերոց զաղօթիւք բղխեցուցեալ զջուրն բժշկարար սրբոյն Ցակոբայ ի փարատումն ամենայն ցաւոց ձերոց։ Ուրեմն՝ ի մտանելն նորին ի յօրհնեալ քաղաքս և յերկիրս ձեր՝ մտցէն զօրութիւնք և օրհնութիւնք, և օգնութիւնք բարձրելոյն Աստուծոյ և սիրելեացն իւրոց, ամէն։ Եւ արդ՝ ի վերջէ զայս ծանեբուք. իբրև ըստ յաջողելոյ տեառն կոչեցեալ եղաք յայս Աթոռ հայրապետական հաւանութեամբ միաբանից և երկրացւոց՝ գրեցաք զօրհնութեան կոնդակս յայլ և այլ կողմունս ծանուցանելով զանցից և զկոչմանէն մերմէ. Նմանապէս և օրհնեցելոցդ գրեցաք և յուսայաք՝ թէ՝ զուք ընկալեալ իցէք, բայց ստուգեցաք, զի չեն հասեալք առ. սիրելիսդ այնօքիկ թուղթք։ Այլ ի ձեռս նախանձոտաց անկեալք անհետացեալք են, զոր դուք ես կարելի է թէ ցարդ տեղեկացեալ իցէք, ոչ միայն զայն, այլ և զայլ ամենայն վնասակար և զվատթար գործս թիւրելոցն ի յԱստուածային շաւղացն։ Արդ՝ մինչ ի մեծն Պօլիս գրեցաք զօծումն մեր, նոքա զառաջինն սիրով ընկալան. և յօժարութեամբ կնքեալ զմահսէրն, հանին յանուն մեր զֆէրմանն յարքունի դրանէն. և առ մեզ առաքեալ բազում թղթովք շնորհաւորեալ ես էին զհայրապետութիւն մեր. և յոյժ ուրախացեալ ընդ այս գործ միաբանից։ Նման սմին և շահն Պարսից լուեալ զայսոսիկ երկիցս և երիցս զրազամս շնորհեաց մեզ վասն հաստատութեան ի սմին։ Բայց արք նենգաւորք նախանձեալ ընդ փառս մեր՝ և հոգւով ատելութեան շարժեալք լցին զաշխարհս և զլսելիս պարզամտաց սուտ և անհիմն առասպելօք, և ջանացան վատահամբաւել զանուն մեր, և ցրտացուցանել զջերմ սիրտ ժողովրդոց ի մէնջ և ի սրբոյ Աթոռոյս։ Եւ այնքան արարին՝ մինչև և զքաղցր սիրտ նորին կայսերական մեծութեան զառնացուցին ի վերայ մեր։ Եւ ընդ այս կարի զարմանամ, զի զորս ինքեանք գործեն ի վերայ մեր դնեն անիրաւաբար։ Քանզի՝ Դանիէլն վատնեաց զամենայն ինչս սրբոյ Աթոռոյս, որք կային ի Բայազիտ և ի Կարին, զի 11 բեռն արծաթեղէն և ոսկեղէն և ծանրագին զարդք կային ի Բայազիտ յաւանդ եղեալք ընդ որս և ըստ բաւականին նաղտ ոսկի։ Նմանապէս և ի Կարին կային բեռինք և բաւականին դրամք առ գործակալսն և առ վեքիլսն սրբոյ գահիս, և այլն։ Զայսոսիկ զամենայն յափշտակեալ ոչնչացոյց վասն սնոտի ախտին. և յորժամ սպառեցան այսոքիկ զմեծամեծ կաշառաց թէմէջսուկս դրեալ տաբածեաց առ փաշայսն և առ խանսն, և առ բռնակալսն, զի ի տեղի մեր ինքն եկեալ նստցի. և կամեցաւ ի ձեռն կաշառաց և արծաթոյ զճշմարտութիւնն ծածկել, և զստութիւնն յառաջացուցանել, բայց Աստուած ոչ յաջողէ և ոչ կամի, մեք զինչ արասցուք։ Ցառաջ ես կամեցաւ և ցանկացաւ այսմ պատուոյ՝ բայց Աստուած առաքեաց յաքսորս և անպատուեալ մերժեաց յԱթոռոյն, և հանգուցեալ Ցովսէփայ սրբազան Հայրապետին յաջողեաց լինիլ կաթուղիկոս։ Այժմ ես՝ հակառակ Աստուծոյ կամացն՝ արծաթով և բռնաւորաց օժանդակութեամբ կամի զհաւանութեամբ բազմաց ընտրեցեալս և օծեալս հանել, և ի տեղի մեր յաջորդել։ Եւ Աստուած ես անտրգեալ զնա և զգործս նորին, ոչ յաջողէ և զրկեալ յըղձիցն դեգերի ի խորշս և յանկիւնս Քիւրտիստոնու, և մեք անպարտ եմք, ինքն է պատճառ իւրոյ անբախտութեան. և ոչ մեք։ Արդ՝ ահա որպէս գրեցաք, ինքեանք ցրուեն և արծաթով լիացուցանեն զաչս բռնաւորաց. և դալն ի վերայ մեր դնեն անխիղճքն։ Ուրեմն թողեալ ի բաց զերկարութիւնն, ըստ որում անհնարին է զամենայն զարարս և զգործս նոցա ատէն ի գիր. արձանացուցանել բանիւք համառօտիւք. զայս

մի ինչ գրեմ սիրելեացդ, զի զամենայն զոր ինչ լուեալ էք ի նախանձոտաց վասն մեր, քննութեամբ ստուգեցէք և վերահասու եղէք, եթէ դտանիցին ի մեզ այնոքիկ յիրաւի դանդատին և արդարանան առաջի ամենեցուն, ապա եթէ ոչ երևի և ոչ գտանի ի մեզ այլ մանաւանդ այնոքիկ ի յասօղն և խօսօղն գըտանին, և զայն ինքեանք գործեն, զորս ի վերայ դնեն, գիտացէք, զի անպարտ եմք յայնց բանից և ընդ վայր բամբասեն զմեզ առաջի ամենեցուն, զորս Թողում արդարադատին, զի անաչառութեամբ իւրով հատուսցէ իւրաքանչիւրոցն ըստ գործոց։ Եւ արդ՝ պատուիրեմ սիրելեացդ իմոց՝ զլսելիս ձեր ի բաց հեռացուցանել ի սնոտի բանից նախանձոտաց և խռովարարաց, և սիրովն Աստուծոյ զարդարեալ զհոգիս և զմարմինս ձեր, զհետ խաղաղութեան երթալ, և շինութեան և պայծառութեան սրբոյ Աթոռոյս ցանկալ, բառնալով զխռովութիւն և զատելութիւն ի միջոյ։ Վասնզի եթէ այլ ես լամեսցի խռովութիւն ձեր և անմիաբանութիւն, քալքալի իսպառ Աստուածակերտ և Լուսաւորչահիմն սուրբ տաճարս, զոր յետոյ Թէև կամեցիք շինել, ամենևին ոչ կարէք, և խզճահարիք ես, այլ անօգուտ, ուրեմն պարտաւորութիւն ձեր է հոգալ զսուրբ Աթոռոյս, և փոյթ մեծ ունիլ առ պայծառութիւն սորին և հաստատութիւն, զի ի նախնեաց ձերոց բազում հոգածութեամբ և խնամատարութեամբ չէն մնացեալն ի ժամանակս բարի չառաւիղացդ մի աւիրեսցի։ Արդ ահա առ ձեօք քակտի սուրբ Տունս, և նախանձոտք անխնայ յարուցեալ ի վերայ սորա հիմն ի վեր տապալեն, և զօրէնս մեր առաջի ամենայն ազգաց ծանակելի առնեն, և դուք անփոյթ լինիք, և ոչ ի վրէժխնդրութիւն փութայք. և ոչ սանձէք զխռովարարն և զբանսարկուն։ Եւ Աստուած որ խաղաղարարն է աշխարհի և բարեկարգօղ ամենայնի, զխռովութիւն քաղաքիդ խաղաղացուցեալ բարեկարգեսցէ և Թմրելոցն և Թիւրելոցն ես զուգութիւն և զգաստութիւն պարգևեսցէ, և հզօր զօրութեամբ իւրով յօդնութիւն իւրաէջ սուրբ տեղւոյս, և մեզ վշտակրելոցս ժամանեսցէ։ Այսպէս գիտացեալ ձեր՝ և զորդիական սէր ձեր ի մէնջ և ի սրբոյ Աթոռոյս անպակաս արարեալ, ողջ լերուք ի տէր, և զօրացեալք նովաւ, և շնորհք սուրբ Աթոռոյս եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսին Ամէն։

Գրեցաւ ի ՌՄՂԱ. Թուոջս, և ի յօդոստոսի... ։Աստուածակերտ Աթոռս ամենայն հայոց ի սուրբ Էջմիածին։

ՄՀԹ. *Թուղթ ի մեծն Պօլիս առ Բարդուղիմէոս Չէլէպին, օրհնութիւն եւ յորդորումն:*

Եւ ընդ սիրոյ և օրհնութեան ողջունաւտք նամակիս՝ գիտասջիք ստոյգ սիրելիդ մեր և օղտախոհ որդի սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի ահա երկարաձգեցաւ միջոցն՝ յորում որդիական սէր ձեր որ առ սուրբ դահս Աստուածեան՝ ոչ փայլի, և բարեկամական գիր ձեր ոչ գայ առ մեզ։ Մեք Թէպէտ մինչև ցարդ բաղմիցս գրեալ եմք առ պատուելութիւն ձեր զսիրանիչ և զօրհնութեան Թուղթ ծանուցանելով այնոքիւք զաղէտս մեր և զամենայն անցսն սրբոյ Աթոռոյս, սակայն մէկ սրտադիւրական պատասխանի ոչ եմք ընկալեալ յԱստուածսիրութենէ ձերմէ, զի գտցուք մեզ զսակաւ մի զապահովութիւն և զմխիթարութիւն ի բազմապատիկ վարանմունս մեր։ Զդիանեմք՝ Թէ Թուղթքն մեր ի ձեռս Թշնամեաց անկանելով՝ ոչ հասանիցին առ ձեզ, եթէ հասանիցին, բայց դուք ոչ փոյթ կալնուք և ոչ հոգատար լինիք գրել մեզ զփոխադարձսն։ Եւ սակայն՝ ահա լաւապէս իմանայք և տեսանէք, Թէ խղճալի սուրբ Աթոռս մեր ի յորպիսի Թշուառութեան կայ, և զիարդ աւերի և քալքալի օր ըստ օրէ՝ ի Թիւր և ի վատԹար արարմանց զրաբանից և լաչաղկոտաց. գիցուք Թէ զմեզ մոռացեալ էք, և վասն այն ոչ հոգայք զմէնջ. միԹէ զլուսածին մայրս ձեր ես մոռացեալ էք, զորքան և մի լիցի մեզ կարծել. վասն Էր ապա ոչ ցաւիք և ոչ հոգայք վասն սորա և ոչ փութայք կարևոր օգնականութեամբ ազատել զսա ի ձեռաց նախանձոտաց. եթէ աւերեսցի և կործանեսցի սա՝ (զոր տէր մի արասցէ.) միԹէ և ձեզ ոչ է լինելոց խղճահարութիւն՝ և խայտառակութիւն իսկ։ Լուսաւորեալ հոգի նախնիքն ձեր Թէ զիարդ բարուոքագոյն հոգաբարձութեամբ և խնամարկութեամբ պահպանէին զսա, լաւապէս յայտնի է ձեզ։ Ապա և ձեզ արժանի է՝ ըստ նըմանութեան բարի չաղաց նոցին խնամատար

լինել սմա. և չթողուլ զսա ի ձեռաց, զի աւերեսցի և կործանեսցի ի յետին և ի չարաչար ժամանակի յայսմիկ, որ այլ ես ոչ շինելոց և հաստատելոց՝ որպէս յայտ իսկ է Աստուածապարգև խոհականութեան ձերում։ Եւ զի բազմիցս գրեալ եմք զայսմանէ ցաւոց և վշտաց մերոց, և զամենայն զառնադէտ անցիցն սրբոյ Աթոռոյս, յաղագս որոյ այժմ ոչ երկրորդեմք և ոչ վերակրկնեմք զայնս, զի մի ծանրութիւն և ձանձրոյթ լիցի պատուական լսելեաց ձերոց։ Այլ որովհետև նարդենիս դարձեալ զմարգիկ առաքէաք ի տիրախնամ Մայրաքաղաքդ մեծ, ի պատճառս հոգացողութեան իրաց մերոց, ընդ նմա զընդհանրական կոնդակ մի գրեցաք և առաքեցաք, զոր ընթեռնուլ ասլով ձեր՝ իմանալոց էք զդրուածսն մեր։ Իսկ զայս համառօտագիծ թուղթ օրհնութեան ես առ ազնուարարոյ սիրելիդ մեր գրել կամեցաք. որով խնդրեմք, զի ի փառս Աստուծոյ թողցես ի բաց զհեղգութիւն և զդանդաղանս, այլ զարիութեան և զքաջութեան զգեցեալ զհոգի, սրտական հաւատարմութեամբ կարեկից լիցիս մեզ, և հարազատ որդիաբար ցաւելով վասն հաւատոյ մօրս քոյ սրբոյ Աթոռոյս՝ յօգնութիւն ժամանեսցես սմա. յորդորելով զՔրիստոսասէր օրհնեալ իշխանսն տեղւոյդ առ ի ազատել զսա ի ձեռաց խռովասիրաց, և զխղճալի ազգ մեր և զմեզ ապահովացուցանել՝ ի վրդովմանէ, և զՍտեփաննոս եպիսկոպոսն մեր խաղաղական և աւետաւոր թղթովք ուղևորել առ մեզ։ Որովք ընկալնելոց ես զմեծ վարձս յԱստուծոյ, և ժառանգելոց զհոգեպայծառ շնորհըս սրբոյ դահիս և զօրհնութիւնս մեր։ Որև նոյն ինքն բարեգութն Աստուած՝ ըստ բարեշնորհութեանդ զոր ցուցցես առ սուրբ Աթոռս և առ մեզ՝ բազմապատկապէս վարձահատոյց լինելով՝ օրհնեսցէ զքեզ և զօրացուսցէ, և ապահեսցէ ի յապադայ փորձութեանց և ի վտանգից հանդերձ համայն ազնուական ընտանեօք քովք, և զամենայն բանս և զգործս ձեր արդիւնաւորս և չահեկանըս արասցէ։ Ամէն։ Ողջ լեր ի Տէր, և զօրացեալ և պահպանեցեալ միշտ ի նոյն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ. թուոջս, և ի յօգոստոսի... ի լուսանկար Աթոռս սուրբ Էջմիածին։

ՄՁ. *Թուղթ ի Թիֆլիզ առ ազնուական Մէհրաբ աղայն Ենօքեան, շնորհակալութիւն եւ յորդորումն։*

Եւ ընդ Աստուածային օրհնութեանս՝ ծանուցումն լիցի բարեպաշտութեան քում։ Զի սիրելի և հոգևոր որդեակքն մեր՝ երկոքին Աբրահամ հանճարունակ եպիսկոպոսունքն՝ անվտանգ եկին ժամանեցին ի սուրբ Աթոռս՝ յօգոստոս ամսոյս 11։ Եւ զսիրանիչ թուղթն ազնուոյդ ի յուլիսի 20 գրեցեալ բերեալ մատուցին մեզ։ Զոր ընթերցեալ իմացաք թէ ի թղթոյդ և թէ ի բերանոյ գրաբերացն զառատութիւն ջերմեռանդ սիրոյդ և կատարեալ հաւատարմութեանդ առ սուրբ Աթոռ Մայրս լուսոյ, և զմտերմօրէն բարեջանութիւնդ և զջատագովութիւնդ առ մեզ, և իրաւասիրութեամբ զդէմ ունելդ առ թշնամիսն մեր և սրբոյ դահիս։ Որովք ախորժալուր համբաւովք ստացեալ մեր զդիւր սրտի՝ մխիթարեցաք յառաւելապատիկ վարանմունս մեր, և շնորհակալ եղեալ զբարեացապարտ սիրելւոյդ, օրհնեցաք զարժանաւորդ օրհնութեանց։ Զոր Տէր օրհնեսցէ և զօրացուսցէ, և նախախնամեսցէ, պահեսցէ միշտ ի յառաջադիմութեան և ի փառաւորեն ճոխութեան, ազատ կացուցանելով ի յամենից փորձութեանց հոգեկանաց և մարմնականաց՝ հանդերձ համայն ազնուական ընտանեօք քովք, և զամենայն բանըս և զգործս քոյ առ ի բարին յաջողեալ արդիւնաւորս և չահեկանս արասցէ։ Եւ որպէս դու զմեզ սիրաշահեալ մխիթարես, նոյնպէս և Քրիստոս տէրն մեր՝ սփոփիչ և մխիթարիչ և կազդուրիչ եղիցի քեզ յերկակի կեանս քոյ, և շնորհք սրբոյ Աթոռոյս օգնական և զօրաւիգ լիցի յարաժամ։ Արդ՝ զանցսն և զեղելութիւնսն տեղւոյդ իմացաք լիապէս ի պատմութեանց վերոյիշեալ վարդապետաց մերոց, և սիրելիդ ես որ զուղղութիւն սրտիդ յայտնելով գրեալ էիր թէ ոչ զայլ ոք, քան թէ զմեզ գիտես և ճանաչես հոգևոր հայր, խոստանալով ես թէ յամենայն կեանս քո ունիս կալ մնալ ի յորդիական հնազանդութեանդ և հաւատարմութեանդ առ մեզ, զայս մեք թարց քոյդ գրելոյդ գիտեմք և անտարակոյս եմք թէ բնածին արդարակորովութիւն և բարեմտութիւն Ազնուոյդ՝ ոչ թողլատրէ քեզ թողուլ զճշմարտութիւն և

ստութեանց լինիլ հեռեօզ։ Բայց քանզի՝ սիրելիդ ես անախտ մտօք և անխարդախ սրտիւ յայտնեալ էիր զնոյն, մեք ես լիագոյն շնորհակալութեամբ գոհունակ եղաք զազնուոյդ, վերստին բարեմաղթ լինելով առ Տէր պարգևել քեզ զառատադեղ շնորհս խնամոց և բարեկթութեան իւրոյ՝ աստ և յանանց կեանս։ Այլ զոր յուսադիր լինելով մեզ՝ առ ճշմարտութեան յաղթօղ լինելոյ ստութեանց, առաջադրեալ էիր համբերութեամբ տանել չփոթիցն և խռովութեանցն և պահպանել զմեզ ի հանդարտութեան, յիրաւի մեծի սիրոյ և բարեկամութեան ցոյցք էին՝ զորս գրեալ էիր. իսկ մեք ես յուսաբեկ ոչ եմք, այլ ակնկալութեամբ յուսամք՝ թէ շնորհաբաշխ սուրբ Հոգին Աստուած՝ որ յաջողեաց մեզ հասանիլ այսմ պատուոյ, չթողցէ զճշմարտութիւն ծածկեալ և անյայտացեալ, այլ ըստ ժամանակին բացափայլեսցէ զնոյն, և յամօթ արասցէ զհակառակորդս Նորին զթշնամիսն արդարութեան։ Ապաքէն գրեմք սիրելւոյդ, զի զովին սիրով և հաւատարմութեամբդ անյեղլի մնալով ի խոստումդ միշտ զօգուտն և զբարին սրբոյ Աթոռոյս և մեր խորհեսցես և արասցես, և որչափ բերէ կար քոյ՝ ջանասցես ընդ քաղաքիդ քահանայից և իշխանաց բարեկամաց մերոց՝ վերացուցանել զխռովութիւն և հաստատել զխաղաղութիւն, և ազատել զսուրբ Աթոռս և զմեզ ի ձեռաց խռովասիրաց։ Որովք մեծապէս վարձաարելոց ես յԱստուծոյ, և ժառանգելոց զշնորհս սրբոյ գահիս, և զօրհնութիւնս սրբոյ Լուսաւորչին և մեր։ Ո՛ղջ լեր ի Տէր, Ամէն։

Գրեցաւ յամի Տեառն 1802. և ի յօղոստոսի... ի բարձրագահ Աթոռս սուրբ Էջմիածին։

ՄՁԱ. *Թուղթ ի Պրուսայ առ ժողովուրդսն, շնորհակալութիւն զհարազատութեանցն ըստ ազդելոյ մեզ Մարտիրոս վարդապետին։*

Եւ ընդ օրհնութեան, սիրոյ և Քրիստոսապարգև սուրբ ողջունիս, ծանուցումն եղիցի ընտրեալ և բարեհռչակեալ ժողովրդոցդ, և զերագնիւ սիրելեացդ իմոց և քաջընտիր մշտահարազատ զաւակացդ սրբոյ և մեծի Աթոռոյս Էջմիածնի։ Ապաքէն զորպիսի օրհնութիւն և գովութիւն, և մանաւանդ քանի պատիկ գոհութիւն և շնորհակալութիւն մատուցանել մարթասցուք ձերումդ աստուածպաշտութեան և կամ զիարդ քան բաւական իցէ բովանդակ յայտնել զընաւ հաւատարմութիւն զինուորելոցդ Աստուածային զինուք սուրբ և ընտիր հաւատովք, բարեպաշտական ջերմեռանդութեամբ և ճշմարտասէր և ուղղադաւան վարուք ի վրէժխնդրութիւն չարագործաց և ի գովութիւն բարեգործաց։ Կամ թէ որքանեօք ներքին բաւականութեամբ և սրտագիւրութեամբ կարասցուք հաւասարացուցանել ձերդ ամենայն բարեմասնութեանց զմերս այս օրհնաբանութիւն։ Քանզի զանցանէ զամենեքումբք արդասիք բարեաց աստուածասիրացդ։ Այն զի աստուածապահ քաղաքին Զմիւռնոյ բարեմիտ առաջնորդ միանդամայն և սրբոյ Աթոռոյս ծայրագոյն Նուիրակ Մարտիրոս արքեպիսկոպոս սիրելին մեր, գրեալ էր բազմապատիկ շնորհակալութեամբ զհարազատութենէ, զհաւատարմութենէ և զմեծագոյն ջատագովութենէ զերարդոյ եղբօր մերում ի Քրիստոս սիրեցելոյ Տեառն Պօղոսայ աստուածաբան վարդապետի և բարեհամբաւ արքեպիսկոպոսի։ Ընդորս ծանուցեալ նաև մեզ զարիական զգործս ձեր օրհնեցելոցդ և ի բարի հովուէ բարեպէս բարեկարգելոցդ, որպէս զնոյն բազմիցս ի բազմացս ունիմք լուեալ և գիտացեալ, յիրաւի առ ձեզ յանդաւորեալ տեսանի բան ամովսածին, ճիռ մնացեալ ի մէջ ազկուզաց անճմլելի, օրհնութեամբ բարձրելոյն։ Նա զի գիտացաք իսկապէս կալ և մնալն ձեր անշաղախ յամենայն արատոյ և ի բծէ և անդծելի ի չարահնար մեքենայից զիւաղզեցից և իբրև զկոյս մի անխառն և անապական լինելն ձեր յամենայն ապականութեանց սպականելեաց պատճառեցելոց, որովք և իբրև զարծաթ սրբեալ և պարզեալ ի ժանկոյ վայփայիք յաշխարհի որպէս զաբեղակն համատարած յաչս ակնաւորաց ի կուրութիւն զաչացուաց և ի կորուստ դիչերաշրջիկ չղջիկանց, որք ունելով զգործ խաւարի, ոչ գան առ լոյսն ճշմարիտ Քրիստոս, զի լուսաւորեալ պայծառանայցեն։ Ուստի բերանալիր օրհնութեամբ և բոլորով սրտէ շնորհակալութեամբ ի յոգի զուարճացեալ գոհու-

նակեցաք յոյժ յոյժ զբարելաւութեանց ձերոց ցուցելոց առ. մերս հոգևոր հայրութիւն և բոլոր միաբանութեամբ առաջի սուրբ և Աստուածային տաճարիս Քրիստոսաիջի, զաղօթս և զպաղատանս առ. փառաւորողն երկնի և երկրի խնկեցաք, որպէս զի երկնաւոր և զօրացուցիչ օրհնութեամբ իւրով լցուցեալ զձեզ երկարութեամբ կենաց, բարեբաստիկ յաջողութեամբ աւուրց և անքոյթ և խաղաղ ժամանակօք փառաւորեսցէ հանդերձ տամբք, որդովք, ընտանեօք, ազգականօք, ուստերօք և դստերօք բնաւիւք ձերայնովքն փրկելով յամենայն փորձանաց և ի դիպուածոց և զհոգիս երջանիկ նախնեացն ձերոց և ծնողաց անմահական լուսով զարդարեսցէ, ներումն և թողութիւն շնորհելով մարդկորէն յանցանաց նոցին։ Արդ՝ զայս թուղթ օրհնութեան և սիրոյ և շնորհակալութեան . արժանապէս գրեալ առ. սիրելի որդիսդ մեր, պատուիրեմք ամենից ճշմարտասիրացդ և ընտիր ժողովրդոցդ սրբոյ Գահիս Միածնաիջի հեռի կալ յայսմհետէ ի թիւնաւորաց և զանձինս ձեր հրաժարեալ ի նոցունց և զմաքուր լսելիս փակել ընդդէմ ստայօղ աղճատանաց ցնորելոց և Աստուածային երկիւղիւն և սիրով շնորհատու ծնողիս ձերոյ վառեալ, ջատագով ճշմարտութեան լինել, որպէս մինչև ցայժմ լեալ էք, և զհետ շինութեան և պայծառութեան և հաստատութեան լուսակառոյց սրբոյ Աթոռոյս երթալ, և ի դոյն կատարեալ սէր և յորդիութիւն հաստատուն մնալ, և միաբանութեամբ և յամենայնի ձեռնտուութեամբ յօգնութիւն հաւատոյ մօրս ձերոյ փութալ, որ ահա ի պատճառս ախտամոլաց քայքայի, եթէ այլ ես այսպէս մնասցէ, զի մեծապէս վնաս կըրեալ, կարօտի ամենայն հարկաւորութեանց և Լուսաւորչածին զորդիսդ ի վերականգնել առ ինքն խրախուսէ, մեք ևս տառապիմք և վշտանամք ի վերայ տերութեան և անչքութեան անարատ հարսին լուսոյ և ցաւիմք ի վերայ անմիաբանութեան Ազգիս, որ անփոյթ եղեալ ոչ սանձահարեն զխռովարարսն և զլուծիչսն օրինաց և սահմանադրութեանց սրբազան հայրապետաց։ Այլ Աստուած որ աղբիւրն է խաղաղութեան, խաղաղացուսցէ զօրհնեալ ժողովուրդս և զխղճալի Ազգս մեր, բառնալով զխռովութիւն և զատելութիւն և զերկպառակութիւն և շինութիւն և պայծառութիւն պարգևեսցէ ամենայն եկեղեցեաց մերոց և մանաւանդ սուրբ Տանս իւրակերտի։ Եւ թըմբրելոցն և թիւրելոցն ի սուրբ շաւղաց իւր, զգաստութիւն և զուղղութիւն շնորհեսցէ ի դառնալ ի չարեաց և ի փարախ սուրբ եկեղեցւոյն ժողովել։

Վերջապէս պատուիրեմ սիրելի և հոգևոր որդւոցդ իմոց զբազմայարգ սիրելին մեր և զբարեհամբաւ առաջնորդն օրհնեցելոյ վիճակիդ զՊօղոս արժանապատիւ արքեպիսկոպոսն ըստ սմին ամենայն կերպիւ ի յարգանս և ի սէր ունիլ և ձերով առաւելագոյն որդիական մտերմութեամբ հանգուցանել ըզսիրտ նորին ըստ իւրն ազգօգուտ և Աստուածահաճոյ գործոց, զի և զայգոսիկ առ մեզ վերաբերեալ, կրկնակի օրհնաբանութեամբ շնորհակալիմք մշտապէս զձէնջ։ Զայլն յանձնեմ զիս և զսուրբ Աթոռս ի յորդիութիւն սիրելեացդ և զձեզ շնորհաց և ողորմութեան Տեառն ամենակարողի, որ և օրհնութիւն հօրն մերոյ սրբոյն Գրիգորի և շնորհք սրբոյ Աթոռիս աստուածաբնակի եղիցի ընդ ձեզ ամենեսին։ Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ. թուոջս և ի յօգոստոսի, ի մայր Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ՄՋԲ. *Թուղթ ի Ղզլար առ ազնուական պ. Նիկողայոսն, պ. Ստեփանն, պ. Եսային եւ պ. Յովակիմն, որք զպարոն Գաբրիէլն առաքեալ էին վասն սուրբ Յակոբայ Ջրոյն։*

Եւ ընդ սիրոյ և օրհնութեան ողջունառաք նամակիս, ծանուցումն եղիցի սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց և սրտացաւ հաւատարիմ զաւակացդ հաւատոյ մօրն ձերոյ, սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի ի յունիսի 27 գրեալ զթուղթ չորից հարազատ որդւոցդ, ընկալաք հայրական օրհնութեամբ և սիրով ի յուլիսի 30 ձեռամբ... և գիտացեալ զխնդիրս ձեր ի կատարել սիրով փութացաք, զոր և ահա ձեռամբ սոյն թղթաբերիս առաքեցաք առ օրհնեալսդ և առ հասարակութիւն քաղաքիդ և զայս թուղթ ես սիրոյ և օրհնու-

թեան ձեզ հարազատից գրել յօժարեցաք։ Որով նախապէս զայս ծանիք. ի գլխելն մեր զյաճախելն մարախաց և ջորեկաց յարաս և յանդաստանս, յագարակս և ի ծառատունկս օրհնեցելոցդ, յորոց պատճառս և կասկածիլն ձեր ի վնասակար թրթրոցն յանցանէ, իբրև հայր հարազատ ցաւեցաք և մեք ընդ ձեզ և տրտմեցաք։ Ուստի և վասն փարատութեան և բարձման պատահարացն և զերծուածոց ի յօրհնեալ և ի ջերմեռանդ որդւոցդ Լուսաւորչերամից և ի քաղաքէ և ի յանդաստանաց ձերոց միաբանութեամբ հանդերձ ի Թաբօր նըեալ, հանաք զմեծահրաշ և զսքանչելագործ զսուրբ Աջ սուրբ և ընտիր հայրապետին Յակոբայ և սա հեշտալուրն Աստուած միջնորդ և բարեխօս կալեալ զհրաշագործն սուրբ Յակոբ, խնդրեցաք ի Տեառնէ ցրուել և ոչնչացուցանել զամենայն վնասակար կենդանիս, և ի բաց բառնալ զպատահարսն, յորոց կասկածիքն։ Եւ երկնաւոր օրհնութեամբ պտղաբերեալ և արգասաւորեալ զայգիս և զանդաստանս ձեր, բեղմնաւորեսցէ առատաբեր պըտղովք, առատացուսցէ լիացուցիչ բերովք, և ամենայն բարութեամբ և բարօրութեամբ պահեսցէ զձեզ փրկելով ի փորձանաց և ի ձախորդութեանց և զամենազօր՝ բազուկ իւր ձըգեսցէ ի վերայ ձեր և ի վերայ քաղաքի ձերոյ կալ և մնալ ձեզ խաղաղութեամբ և բարեյաջողութեամբ։ Եւ արդ, վերջապէս զայս գրեմ սիրելեացդ իմոց և պատուիրեմ, մինչ արք նախանձոտք և թշնամիք արդարութեան անխտրաբար հաչակեալ ընդ սրբոյ Աթոռոյս և ընդ մեզ լցուցին զաշխարհս ստութեամբ և ցրտացուցին զսիրտս պարզամտացդ ի քաղցրանուն սրբոյ Գահէս ի շնորհատու ծնօղէս ձերմէ, որ ահա անխնամ մնացեալ հօյւոյ Տունս ձեր և հաւատոյ սուրբ մայրս, և անփոյթ եղեալ ի սրտացս որդւոցդ և իբրև անայցելու լքեալ և բարձի թողեալ ի ձէնջ ի վերայ երեսի անկեալ քակտի և աւերի որքանզօր ի պատճառս քանի մի ախտաւորաց և ի պատճառս անմիաբանութեան ազգիս։ Եւ դուք հարազատ որդիքդ սմին, թող տուեալ նոցա, ոչ սանձէք զխռովարարսն խաղաղութեան ձերոյ, և զքակտիչսն Լուսաւորչաշէն և Քրիստոսահիմն սրբոյ տաճարիս։ Ցիրաւի եթէ այլ ևս այսպէս մնասցէ և երկարեսցի անմիաբանութիւն ձեր, գիտացէք ստուգիւ որ բոլորովիմբ ամայանալ սուրբ տեղիս այս և լինելոց է յետոյ խղճահարութիւն մեծ ամենեցդ, բայց անօգուտ։ Քանզի թէև կամիցիք յետոյ շինել, ամենևին ոչ կարէք։ Ուրեմն դուք հարազատ որդիքդ և օգտաջան բարեխոհ զաւակունքդ, գիտացեալ զցաւս և զտառապանս լուսոյ ծնօղիս ձերոյ, պարտիք հարազատօրէն և սրտացաւօրէն յօգնութիւն սմին ժամանել և զամենայն բանս սնոտիս, զորս լուեալ էք ի նախանձոտաց, քննութեամբ հասու լինել և զճշմարիտն ի ստոյն որոշել։ Զի զայն զոր ի վերայ մեր դնեն անխղճմտանաւորքն, ինքեանք գործեն և ի վերայ իւրեանց յարմարի որք և ի ձեռն կաշառաց և արծաթոյ ծածկեալ զճշմարտութիւնն, զսուտն իբրև զուղիղ քարոզեն և յառաջացուցանեն, զորս թողում զի ի յարդարադատէն Աստուծոյ ընկալցին զտրիտուրն։ Ահա և առ հասարակութիւն քաղաքիդ գրեցաք զկոնդակ օրհնութեան և յորդորանաց շարժեալ ի հայրական սիրոյ և ի գթութենէ, զոր ընթերցեալ ի յեկեղեցիսն ձեր, ի սէր և ի խաղաղութիւն համոզեսջիք զբարեպաշտօն ժողովուրդ...դ օրհնեցելոյ քաղաքիդ և ի բաց բարձեալ զխռովութիւնն և զատելութիւնն ի վերայ սրբոյ Աթոռոյս քաղցրացուսջիք զսիրտս ձեր և ջերմացուսջիք։ Որովք ընկալջիք զմեծագոյն վարձս ի խաղաղարար Տեառնէն յերկակի կեանս ձեր։ Եւ Աստուած որ առատն է ի տուրս բարեաց պարգևի, առատացուսցէ ի ձեզ զպարգևս բարութեան և օրհնութեան։ Այսպէս գիտացեալ ձեր, և ի յորդորութեան անուաղելի կացեալ, ողջ լերուք ի Տէր, և զօրացեալք նովաւ և շնորհք սրբոյ Աթոռոյս Աստուածաբնակի՝ եղիցի ընդ ձեզ միշտ, Ամէն։

Գրեցաւ ի 1802 ի յօգոստոսի... ի մայր Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ՄՁԳ. *Թուղթ յԸզմիւռին առ Մոսկով Յովհաննէս աղային շնորհակալութիւն վասն պաշտպանութեանցն առաջնորդ Մարտիրոս վարդապետին ի ձեռաց պատրիարգին Պոլսոյ։*

Զի թէպէտ լովլին գիտակ եմք, և չունիմք այլում վկայի և պատմողի զպէտս զձերդ

պատուականութեան զճշմարիտ սիրոյն, և զմեծագոյն Աստուածպաշտութենէն, որովք իբրև զարևակն փայլիս յաշխարհի զեր զամենեքումբք, և որովք հասանիս զամենայն ժամանակս և յաւէտ ի կարիս և յաւուր նեղութեան՝ սրբոյ Աթոռոյս և Աթոռայնոցս յօգնութիւն, և ձեռնտու լինիս յամենայնի ամենայն հարկաւորօք, սակայն նորապէս մինչ ի թղթոյ սիրեցեալ եղբօր մերոյ և արժանամիտ բարեհամբաւ առաջնորդին գիտացեալ զպաշտպանութիւնդ ինքեան ի ձեռաց մարդախանձ զաղանաց ի չպատրիարգէն Պօլսոյ՝ արդարև՝ ի յոգի զուարճացեալ՝ բերկրեցայ յոյժ յոյժ ընդ մեծագոյն գործդ կատարելոյ՝ հաւատարմի և Աստուածասիրի։ Եւ առաջի Աստուածային սուրբ տաճարիս՝ զաղօթս և զպաղատանս առ Աստուած մատուցեալ վասն պատուական առնդ բարեացապարտի՝ խնդրեցաք ի յԱթոռոյ փառաց նորին, զի զընտրեալդ ի բիւրուց ամենայն ազնուական տամբքդ ի բարեյաջողութեան ի խաղաղ կեանս և ի դերագոյն զահս պատուոյ և փառաց պահեսցէ և ինքն եղիցի պաշտպան վերակացու պահապան և վարձ քեզ զերազնիւ բաղձալւոյդ իմոյ յամենայն հարկաւորութեանդ, և զտրիտուրն Աստուածահաճ գործոցդ և հանրաօգուտ արաբիցդ՝ ընկալցիս յերկակի կեանս քոյ դու և որդիք քոյ և որդիք որդւոց քոց յազգաց յազգս ի յառատաբաշխ ձեռանէ անտի, յոր կասդ յուսացեալ ամենայն սրտիւ Արդարև՝ այդոքիկ բարելաւութիւնք ցուցեալք ի ձէնջ սիրեցեալ եղբօրն մերոյ Մարտիրոս լիահանճար առաջնորդին տեղւոյդ. կատարելապէս առ մեզ և առ սուրբ Աթոռս Աստուածաբնակ վերաբերին։ Որոց աղագաւ ոչ զադարիմք ի յաղօթելոյ, և զպէսպէս պարգևս ի տեառնէ խնդրելոյ հանդերձ լիալիր օրհնաբանութեամբ և շնորհակալութեամբ։ Ահա և մեք զարժանի զհատուցումն ջամբեցաք զայլակերպ հովուին վարձկանի, և ընդ հալածիչս Քրիստոսեանց զասեալ՝ որոշեցաք ի բանաւոր հօտից Քրիստոսի, և այլն. զոր ունիք գիտել ի թղթոց առաջնորդին ձերոյ Մարտիրոս արքեպիսկոպոսին, ընդ այլ պատմութեանց և իրակութեանց, առ որ երկար գրեցաւ։ Պատուիրեմ վերջապէս զերազնուութեան ձերում, կալ և մնալ հաստատուն և անլողդողդ ի զոյնն, և չկասիլ յետս՝ ի յԱստուածակամ գործոցդ, և չդադարել ի քարոզելոյ զճշմարտութիւն, որ ոչ կարէ ծածկիլ և կամ տկարանալ առաջի ստութեան թէ և՝ ի պատճառս ախտամոլաց առ ժամանակ մի ընդ զրուանաւ զաղիցի։ Եւ Աստուած որ աղբիւրն է խաղաղութեան և միաբանութեան, երկնաւոր խաղաղութեամբ բարձեալ զխռովութիւն սատանայի ի յիշխանաց և յազգաց մերոց, յորս ծփին համակ հայկազինք իբր ի համատարած ծովու յերկուս ամս, միաբանական սիրով պահեսցէ. և խաղաղացուցեալ զամենեսին՝ տացէ զնալ մեզ զհետ արդարութեան, Աստուածպաշտութեան, երկիւղի, և սիրոյ։ Այսոքիւք բաւականացեալ առ այժմ, ողջ լեր ի Տէր և զօրացեալ ի նոյնն, և շնորհք սրբոյ և մեծի Աթոռոյս միածնաիջքի՝ եղիցի ընդ քեզ և ընդ բոլոր քոյայինսն. Ամէն։

Յօգոստոսի... 1802. ի սուրբ Էջմիածին։

ՄՁԴ. *Ի Հաշտարխան առ Գոլման Յովհաննէսն։*

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ և սիրառաք Յիսուսաձիր ողջունիս, ծանուցումն լիցի քումդ սիրելութեան. թէև ցանկամք զամենայն ի սէր և ի խաղաղութիւն համոզել և ամենայն ումեք զմերս հայրական օրհնութիւն հաղորդել, բայց են որք զանձինս հրաժարեցուցանեն կամաւ և անձնամուտն լինին խռովասիրին, և են որք իբրև զոչխարս մոլորեալս ի խարխափմանէ տերեաց խրտուցեալք ոչ ժողովին ի փարախ և ոչ մակաղին խաղաղութեամբ ի յարօտ. և բաղում այն է որ մեք անտես զոլով ոչ կարեմք ըստ արժանեաց նոցին և որդիական սիրոյ բաշխել իւրաքանչիւրոցն զարժանաւոր տրիտուրն հանդերձ օրհնութեամբդ. Քանզի ի դէպ էր արդարև վաղ ուրեմն առ յարդի պատուականութիւն ձեր, և առ մեծահաւատ որդիութիւնն փութացուցանել զթուղթ սիրոյ և օրհնութեան և շնորհակալութեան սակս բազմադիմի հաւատարմութեանցդ ցուցելոց առ սուրբ Աթոռս և առ մեզ, սակայն զոլով ծածկեալ ի մէնջ այնց, չեղև մեզ զիտել և կամ զանդրադարձն

փոխարինել ազնիւ սիրելւոյդ մերում։

Այլ սակայն ի զայն յարդելի պարոն Յովհաննիսին ազնիւ սիրելւոյն ձեր և մեր ի սուրբ Աթոռս և ի պատմելն զձէնջ և զամենայն ջատագովութեանց ձերոց, զորս ցուցեալ էք և ցուցանէք առ. շնորհատու ծնող մայրս ձեր և առ. մերս հոգևոր հայրութիւն և ի գիտելն մեր զայսոսիկ յըրապէս ի նմանէ, պարտաւորութիւն մեզ համարեցաք մատչիլ առ. պատուական բարեկամդ մեր օրհնութեամբ և շնորհակալութեամբ. նմին իրի և զայս նամակ սիրանիշ գրեալ, առ. բարեպաշտօն իշխանդ, օրհնեցաք քեզ և զքոյայինսն ամենայն առաջի Աստուածակերտ սուրբ տեղւոյս։ Զոր տէր օրհնելով օրհնեսցէ և զօրացուսցէ և զամենայն բանս և զգործս քո, ի բարին տնօրինեալ, յաջողեսցէ։ Պատուիրեմ ուրեմն ազնիւ որդւոյդ մերում հոգևորի և հաւատարիմ զաւակի, զի ի դոյնն յարամնացեալ հաստատուն և անփոփոխ կացցես և զամենայն զունայն և զսնոտի բանս խռովարարաց անպիտան համարեալ հողմոց հնչմունս վարկցես. զի ճշմարտութիւնն Աստուածային ոչ երբէք թաքչի և կամ զաղի ընդ իւիք։ Եւ մանաւանդ յորդորող լիցիս և այլոց քեզապիսի ուղղասիրաց, զի թողեալ զխռովութիւնն զհետ ճշմարտութեան և խաղաղութեան երթիցեն։ Այն զի ի խաղաղարարս և ի ճշմարտասէրս բնակի և տէրն խաղաղութեան և ատեցօղն խռովութեան։ Ահա հասաք մեք և սուրբ Աթոռս ի վերջին աւերութիւն և եղաք ծանակ և այպն նախատանաց առաջի այլազանց և այլակրօնից, ի պատճառս քանի մի ախտամոլ և կամապաշտ սեաւորաց, զորոց ոչ երկարեմ. այլ թողումք զիտել զայսոսիկ և զայլս ի սիրելւոյն ձերմէ ազնիւ պարոն Յովհանէսին, որ է գիր կենդանի և բանական և տեղեակ ամենայն անցիցն և որպիսութեանցն Պօլսոյ, բազում քաղաքաց և սուրբ Աթոռոյս։ Ի բանից և ի պատմութեանց դորին իմանալ կարէք, թէ զիարդ ազգք համակ վշտանան ընդ տառապակրութիւնս սրբոյ Աթոռոյս և մեր, և որպէս ջատագով ճշմարտութեան լեալ, մաքառեն մահու չափ ընդ խռովասիրաց և հակառակաց Աստուածային օրինաց. զայլն յանձնեմ զսուրբ Աթոռս խղճալի ի բարեպարտ և ի խղճմտանաւոր որդիսդ օրհնութեան և զձեզ ի շնորհս տեառն ամենակալի։ Այսպէս զիտացեալ առ այժմ, ողջ լեր ի տէր, և զօրացեալ ամենազօր բազկաւ բարձրելոյն, հանդերձ բոլոր ազնուական ընտանեօքդ։ Ամէն։

Գրեցաւ ի 1802 և ի սեպտեմբերի 1 յԱստուածակերտ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ՄՁԵ. *Ի Հաշտարխան առ Էֆէնտի պարոն Յովհաննէսն ընդ փեսային իւրոյ պարոն Յովհաննիսին։*

Զի յառաջագոյն զամենայն ինչ օրհնութեան կոնդակօք գրեալ եմք առ հասարակութիւն քաղաքիդ, բայց՝ ըստ որում չունէաք զծանօթութիւն ինչ զազնուայդ՝ ոչ մատուցաք յատկապէս զթուղթ օրհնութեան քեզ. որպէս և ոչ սիրելիդ մատուցեր զնոյնն մեզ։ Բայց արդ՝ սիրեցեալն մեր և յարգի փեսայն ձեր պարոն Յովհաննէսն եկեալ ի սուրբ Աթոռս, և ընկալեալ ի մէնջ զսէր և զքաղցրութիւն, վերադարձաւ յայդր առ. ձեզ, և մեր գիտացեալ զնորա փեսայ գոյն ձեր, ընդ նմին և զբարեպաշտութիւն պատուականութեան ձերոյ, և զջերմեռանդ հաւատդ, և զուղղասիրութիւնդ ի սիրեցեալ որդւոյն մերմէ Աբրահամ վարդապետէն, զայս թուղթ օրհնութեան և սիրոյ, և յատուկ հայրութեան մերոյ առ. ճոխապատիւ իշխանդ, և խաղաղասէր սիրելիդ արժանապէս գրել բարեյօժարեցաք, ի փարատել զամենայն զսնոտի կարծիս և զգայթակղութիւնս սերմանեալս ի չարասիրաց ի պարզ և ի յըստակ միտս բարեպաշտիցդ. որոց ազագաւ՝ թողում ձեզ գիտել ի կենդանի և ի բանական գրոյդ, ի պարոն Յովհաննէս ազնիւ փեսայէդ ձերմէ, քանթէ բանիւ զլսելիս ձեր տեղեկացուցանել. քանզի ինքն պարոն Յովհաննէսն գոլով տեղեակ ամենայն որպիսութեանցն Պօլսոյ և սրբոյ Աթոռոյս, կարէ ձեզ զուղղութիւն պատմելով՝ միամտեցուցանել, և տալ ձեզ իմանալ զարարս թիւրս նախանձոտ չարասիրաց։ Այլ դու ի դոյն ջերմեռանդութեան և ի բարեպաշտութեան հաստատուն կալով՝ մի ունկնդիր լինիջիր բանից նենգաւորաց, և մի ընծայեսջիր զհաւատ նախանձու խօսից խարդախողաց. և ի սիրոյ և ի հարազատութենէ անվերջանալի զքեզ արասջիր՝

ջերմացուցանելով զսիրտ քո ի վերայ սրբոյ Աթոռոյս, և լինելով ջատագով ճշմարտութեան և հետեւող ճշմարտասիրաց, զի բազմասցին քեզ վարձք ի յերկինս ի ճշմարտասիրէն Աստուծոյ։ Այսպէս զիտացեալ՝ և համեմատ գրուածոյս զընթացս քո տնօրինեալ՝ լիջիր զօրացեալ ի տէր և պահպանեցեալ շնորհիւ նորին բոլոր ազնուական քոյայնովքն. Ամէն։

Գրեցաւ ի 1802. ի սեպտեմբերի 1. ի յերկնահանգէտ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ՄՁԶ. *Թուղթ ի Թաւրեզ առ խօջայ Ստեփաննոսն (ի Կազբին եղելոյ) եւ իւր եղբայր պարոն Մանուէլն:*

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ և սիրալրական ողջունիս, ծանուցումն եղիցի բարեպաշտօն և որդւոցդ օրհնութեան և օգտախոհ հաւատարիմ զաւակացդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի ամենայն հաւատարմութիւնք ձեր և սրտացաւօրէն որդիութիւն և ջերմեռանդական սէր, զորս ունիք առ շնորհատու ծնողս ձեր և առ. զահակալսն սորին, յաւապէս յայտնիք են մեզ։ Նոյնպէս և մարդկանց սորա և պաշտօնէից, որք զան յայդր և հանդիպին յայդ կողմունսդ, օգնական և պաշտպան լինելն ձեր, մեք մեղէն ականատես գոլով գիտեմք և վկայեմք։ Որպէս և ծերունի պարոն Նիկողայոսն մինչ եկն այստ առ. մեզ, պատմեաց լիովին զձերդ մտերմական հարազատութիւնն և զկատարեալ սէրն, զորս ունիք առ մեզ և գործով ևս միշտ ի ցուցանելն էք։ Ուստի և մեք ի գիտելն կրկիլ զայսոսիկ ի նոյն պարոն Նիկողայոսէն, ուրախութեամբ սրտի օրհնեցաք զձեզ աւաջի Աստուածայլին սուրբ տաճարիս, զորս տէր օրհնելով օրհնեսցէ և զօրացուսցէ, և յամենայն փորձանաց փրկեալ, ի խաղաղութեան և ի յաջողութեան պահեսցէ։ Պատուիրեմք ահա այսու օրհնութեան նամակաւս ձեզ ընտիր սիրելեացդ իմոց, նախ ի դոյն հաւատարիմ որդիութեան պինդ և հաստատուն կալ, և անփոփոխելի մնալ և զամենայն սուտ և զսնոտի բանս, զորս լուեալ էք ի խռովարար և ի նախանձոտ արանց, անպիտան և ոչինչ համարել։ Եւ երկրորդ, մեր մարդկանց և պաշտօնէից և հարազատաց, որք դտանին յայդկոյս և կամ առաքին ի մէնջ վասն հարկաւորութեան և հանդիպին ձեզ, ըստ ամենայնի ամենայն կերպիւ, պարտիք օգնական և օժանդակ և պաշտպան լինիլն այնոցիկ ի յօտարութեան և որպէս ծերունի պարոն Նիկողոսին էք արարեալ և առաւելապէս քան զնորայն յայտնեալ ցուցանել ամենայն մարդկանց մերոց, որք գրով և բանիւ առաքին յայդ կողմունսն, որպէսզի ընդունեցիք ոչ միայն ի մէնջ զօրհնութիւնս և զշնորհակալութիւնս, ի սրբոյ Աթոռոյս զմեծագոյն շնորհս, այլ և զբազմապատիկ վարձս ի միոյն Աստուծոյ, որ հատուցանէ ամենայն բարեպաշտ առաքինեաց։ Վասն սրբոյ Աթոռոյս և կողմանցս այսպէս ծանիք, ողորմութեամբն Աստուծոյ ի խաղաղութեան կամք հանդերձ բոլոր միաբանութեամբ և չունիմք զվիշտս և կամ զնեղութիւնս յայլուստ, բայց միայն ցաւիմք ի վերայ ատելեացն Աստուծոյ և թշնամեացն արդարութեան, որք ստութեամբ զաշխարհ լցեալ զայթակղեցուցին զպարզամիտ օրհնեալ ազգն մեր։ Եւ թէպէտ այսպէս, սակայն ամենայն ժողովուրդք, որք ի տէրութեան Օսմանցւոց են և այլուր ևս, մինչև ցմահ պատրաստի կան մեռանել ի վերայ ճշմարտութեան և բազումք ևս առ ահի Օսմանցւոց սասանեալք ոչ կարեն խօսել զճշմարիտն. քանզի նախանձոտք ի ձեռն մեծամեծ կաշառաց ծածկեալ զճշմարտութիւնն, կամին զստութիւնն յառաջ տանել և Աստուծով ոչ կարեն զի ճշմարտութիւնն յաղթող գոլով, ոչ ծածկի։ զորս ոչ երկարեմ։ Այսպէս գիտելով ձեր առ այժմ, և ըստ պատուիրի մերում զկատարումն տուեալ և զորպիսութիւն ձեր ևս գրով մեզ ծանուցեալ, ողջ լերուք ի Տէր և զօրացեալք նովաւ. Ամէն։

Ի ՌՄԾԱ թուոյս և ի սեպտեմբերի Զ. ի մայր Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ՄՁԷ. *Կոնդակ ի յԱրտուին, առ հասարակութիւն, յանձնարարութիւն վասն Գրիգոր սարկաւագին:*

Եւ ընդ Աստուածային օրհնութեանս՝ ծանուցումն լիցի սիրելի և հողեոր որդւոցդ մերոց, և հարազատ զաւակացդ սրբոյ Աթո-

ռոյս Էջմիածնի։ Զի սիրելի և հոգևոր որդեակըն մեր՝ դոյն տեղացի տիրացու Գրիգոր շնորհատենչ սարկաւագն՝ նարդենիս հրաման էառ. ի մէնջ, և ահա եկն ի ։օրհնեալ գիւղդ՝ առ ի տեսանել զծնօղսն իւր և ի ձեռն բժըշկաց դարման մատուցանել ցաւոյն և վիրացն զոր ունի լանձն իւր։ Ընդ որում զայս Թուղթ գրեցաք ի վերայ բարեպաշտօն օրհնեալ ժողովրդոցդ մերոց, առ ի ժառանգեցուցանել ձեզ այսու զհոգեբարար շնորհս Քրիստոսաէջ սրբոյ տեղւոյս, և զհոգևոր օրհնութիւնս մեր։ Ուրեմն՝ ի գալ ժամանել Թղթոյս այսորիկ առ ձեզ, հանգիցէ ի վերայ ձեր շնորհք և օրհնութիւն Աստուածային, օրհնեսցէ զձեզ անանցանելի օրհնութեամբն իւրով՝ և զօրացուսցէ, ազատս կացուսցէ ի փորձութեանց և ի վտանգից հոգեկանաց և մարմնականաց, և միշտ տարածեալ ունելով ի վերայ ձեր զթևս արարչական խնամոց և բարեգթութեան իւրոյ՝ պահեսցէ զձեզ ի խաղաղութեան և ի բարեզուարճութեան, և զամենայն բանս և զգործս ձեր առ ի բարին յաջողելով՝ արդիւնաւորս և շահեկանս արասցէ։ Արդ՝ պատուիրեմք օրհնեցելոցդ, զի զվերոյիշեալ սիրելի և հոգևոր որդին մեր՝ և զօծասուն զաւակն սրբոյ Աթոռոյս՝ զտիրացու Գրիգոր աւագապատիւ սարկաւագն՝ (որ հրամանաւ մերով եկն յայդր առ ձեզ,) սիրով ընկալջիք, և շահեալ մխիթարեսջիք, և յետ միջոց ինչ մնալոյ նորա յայդր՝ իբրև տեսեալ զծնօղսն իւր առցէ զմխիթարութիւն և շնորհիւ ողորմութեամբն Աստուծոյ գտցէ զբժշկութիւն ցաւոյն և զառողջութիւն անձինն, դարձեալ ուղևորեսջիք սիրով և խաղաղութեամբ գալ ի սուրբ Աթոռս և առ մեզ, որոյ աղագաւ շնորհակալ լինելոց եմք զսիրելեացըդ օրհնութեամբ։ Նաև՝ զայս պատուիրեմք հոգևոր որդւոցդ մերոց, զի ի ջերմեռանդ սէր և կատարեալ հաւատարմութիւն ձեր որ առ սուրբ Գահս և առ մեզ՝ յարամնասջիք հաստատուն, և յօգտաջանութեանց և ի բարեգործութեանց ձերոց որ առ սա՝ մի պակասեսջիք։ Որովք միշտ ընկալջիք զվարձս բարեաց յԱստուծոյ, զշնորհս ի սրբոյ Աթոռոյս և զօրհնութիւնս ի սրբոյ Լուսաւորչէն և ի մէնջ յարաժամ, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ Թուին, և ի սեպտեմբերի ԺԴ. ի լուսանկար Աթոռս ս. Էջմիածին։

ՄՂԸ. *Թուղթ օրհնութեան առ հաքիմբաշի պարոն Յարութիւնն։*

Որում և գիտութիւն լիցի. զի գիտացաք մեք զաշխատութիւնսդ, զորս կրեալ ես ի վերայ եղբօր մերոյ պարոն Բարսեղին և ձեռնտու լեալ նմա, մինչև գտեալ է զառողջութիւնն Աստուծով, ուստի և արժան վարկաք այսու օրհնութեամբ մերով և ողջունառաք նամակաւ մատչիլ առ քեզ և շնորհակալ լինել զքէն վասն ամենայնի աշխատակրութեանցդ. տէր օրհնեսցէ զքեզ և զօրացուսցէ և առողջ անձամբ պահեսցէ ի լինել քեզ և ևս օժանդակ և օգնական ամենայն նեղելոց և աշխատակրաց հզօր նպաստաւորութեամբն Աստուծոյ։ Եւ արդ գրեմ քեզ ահա, որպէս և մեր Աբրահամ վարդապետն ունի քեզ գրեալ հրամանաւ մերով յանցեալսն, զի եկեալ եկեսցէ ի սուրբ Աթոռս անպատճառ վասն բժշկութեան և հարկաւորութեան մեր Աբրահամ վարդապետին և ի յօրէյօր ձգեսցես, զի ժամանակն անցանի. այսպէս գիտացեալ քոյ, ողջ լեր ի Տէր և զօրացեալ շնորհիւ սրբոյ տեղւոյս Քրիստոսաիջի, Ամէն։

Ի 1802 ի սեպտեմբերի 28. ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՄՂԹ. *Ի Թիֆլիզ առ Աղայ ումն Ննովքեան։*

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ և ողջունառաք սիրոյ նամակիս, ծանուցումն եղիցի սիրելի և հոգևոր որդւոյդ մերում և մտերիմ զաւակիդ սրբոյ և մեծի Աթոռոյս Էջմիածնի։ Զի երկոքին հարազատ որդիքն սրբոյ գահիս, և մեր շնորհածին զաւակունքն Աբրահամ եպիսկոպոսունքն խաղաղութեամբ ժամանեալ ի սուրբ Աթոռս պատմեցին լիապէս զքոյդ հարազատութիւն և զսրտական զորդիութիւնն ընդ կատարեալ մեծագոյն սիրոյն, զորս ունիս զէպ ի քրիստոսակերտ սուրբ գահս, և ի մերս հոգևոր հայրութիւն և մեք ուրախութեամբ սրտի օրհնեցաք զսիրելիդ մեր և զբոլոր քոյայինսն. զորս տէր օրհնեսցէ և զօրացուսցէ և զամենայն բանս քոյ ի բարին

տնօրինեալ յաջողեսցէ և ի մխիթարութիւն սրտի մերում պահեսցէ, յատկապէս զքեզ։ Ընդ որս ծանուցին և զամենայն անցսն տեղւոյդ և զջերմեռանդ փափագանս ձեր, որովք ցանկայք շինութեան սրբոյ Տանս և խաղաղութեան մերում։ Տէր լիցի ձեզ վարձատիր յերկակի կեանս ձեր. ի վերայ ամենայն բարելաւութեանցդ և յատուկ թղթով յայտնեալ զներքին բաղձանս սրտիդ, զբանս քաջալերութեան էիր մեզ գրեալ և յուսադրեալ ես ի լինել անհոգ վասն ամենայնի։ Արդարև այդոքիկ առն բարեգործի և կատարեալ բարեկամի և սիրեցեալ որդւոյ են ցուցք և հարազատութեան նշանակք։ Ցիրաւի թէև չունիմք մեք զայլ ինչ վիշտս և զնեղութիւնս անձնականս, այլ սակայն ցաւիմք և մաշիմք յոյժ յոյժ այնու, զի տեսանեմք զսուրբ Տունս Աստուծոյ անչքացեալ ի նախանձոտաց և զսուրբ օրէնս մեր դղետնեալ և ազգովին ծանակելի լեալ ի ծանակելեաց և այլն. և մանաւանդ Դանիէլ այր չարագրգիռ ոչ երբէք դադարի ի կերպակերպ և ի նորանոր չարեաց իւրոց և հանապազ ի ձեռն բազմահնար մեքենայից ոտնառու լինի մեզ և թակարդել ջանայ զմեզ, մատնելով զանազան անձանց, երբեմն Օսմանցւոց՝ տալով փաշայից և զծանր ծանր գումարս դրամոց, երբեմն Քրիստոնէից՝ ծանուցանելով նոցա ստութեամբ զչարիս զմէնջ, և երբեմն Պարսից խոստանալով մեծամեծս, որպէս զարդիս զմարդ յղեալ առ սարտարն (որէ ի Նախիջևան զօրօք նստեալ) գաշնադրեալ է ընդ նմա տալ շահիւ մէն մի տարւոյ հազար հազար թուման. և ինքեան սաբտաբին իսկ նոյնչափ յիւրաքանչիւրում ամի։ Որոց աղագաւ հարկ համարեալ, առաքեցաք և մեք ի դիմաց մերոց զնոյն ինքն զԱբրահամ եպիսկոպոսն թղթովք ի հարցանել զողջունէն խորհրդատուութեամբ խանին։ Ահա տես դու սիրելի իմ, այսոքիկ են որք մաշեն զմեզ և տառապեցուցանեն, զի մինչ ցանկալի ի շինութեան պահել զսուրբ Աթոռս, ահա ներհակն և ընդդէմն դիպեցաւ մեզ։ Եւ առաւել այն է մեզ դժուարին և հանապազորդական ցաւ, որ չ'գիտեմք, թէ կատարածն ուր ունի եզերիլ։ Ուրեմն պարտ է ձեզ, որք սիրողքդ էք խաղաղութեան և շինութեան, հետևել և ջանալ հաստատել զնոյնն և ի բաց բառնալ զխռովութիւնն և զատելութիւնն ի քաղաքէդ և լաղդէս զսերմանեալսն ի չար և յանբարի արանց, և եթէ հնար է կրկին զմահսէր առնել առ հիւսիսայինսն և առ կայսրն, գրելով զուղղութիւնն ի չլինել խղճահարութիւն յետոյ ինքեան յաղագս գոլոյն և զտանելոյն պատճառ և առիթ այլայլման օրինաց մերոց և աւերութեան տանս Աստուծոյ. զորս թողումք ի յատուկ սիրելութիւն սիրելեացդ զանց չառնուլ և սիրով բանիւ դրուածոյ տալ զկատարումն փութով։ Մեք ողորմութեամբն Աստուծոյ կամք հանդերձ միաբանութեամբ ի խաղաղութեան և երկիւղս ի կասկածի, զի երբեմն խռովութեան և երբեմն ղտրտմանց ձայնք հնչին ի մեզ. պատճառանօք որոց և սուրբ Աթոռս մեծապէս վնասակրի. վասն զի ոչ պակասին երթևեկ այլազգիք իբրու բերդակալք վասն պահպանելոյ զսուրբ Աթոռս և այլն։ Զունիմք զայլ ինչ նորագոյն լուր և որպիսութիւն, զի գրէաք. այն զի ամենայն որպիսութիւնք այդր են, զորս դուք լաւապէս գիտէք. և երբեմն ուրախական և մխիթարական գրովք մեզ ես ծանուցէք զայնոսիկ ի տեղեկութիւն։ Այսպէս գիտացեալ քո առ այժմ և զորդիական սէրդ ընդ ցանկալի առողջութեանդ ի մէնջ անպակաս արարեալ լեր ողջ ի Տէր, և զօրացեալ նովաւ և շնորհք սրբոյ Աթոռոյս Աստուածաբնակիս, եղիցի ընդ քեզ և ընդ քոյսդ. Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս և ի սեպտեմբերի… ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՄԴ․ Թուղթ ի Կարին, առ տէր Գասպար քահանայն։

Զի ի յօգոստոսի 24 գրեալ թուղթ մտերմութեան և սիրոյ ի սիրելւոյդ՝ էհաս առ մեզ. որով գիտացեալ զմեծագոյն ջերմեռանդութիւն և զկատարեալ որդիութիւն օրհնեալ և բարեպաշտօն ժողովրդոցդ տեղւոյդ՝ մերս հաւատարիմ որդւոց օրհնելոց։ Ընդ որս և զբարեկամական գործ Դօլվաթլու փաշայինս։ Եւ մանաւանդ զքոյդ յատուկ սէր, զոր ունիս առ շնորհատու ծնող մայրս քոյ սուրբ Աթոռս, և առ մերս հոգևոր հայրութիւն. ի Տէր կանխեցաք օրհնութեամբ և շնորհակալութեամբ զամենեցդ սակս բազմադիմի բարեմանու-

թեանց ձերոց և բարեկաւութեանց ցուցելոց՝ թէ սրբոյ Աթոռոյս, թէ մեզ, և թէ մարդկանց մերոց եկեղոցն լաղկոյս. Նաև՝ գիտացաք ի նոյն հարազատ գրուածոց քոց՝ զխաղաղութեամբ զիմեյն և հասանիլն ի Պօլիս ընդ Փիլիպպոս ամիրային. յարդի եղբօր մերոյ ի Քրիստոս սիրեցելոյ տեառն Յակոբայ արհիեպիսկոպոսի, և զմեր պարոն Մարտիրոսի անվնաս ժամանելն այդր, և զքաջագործութիւնսն թէ նորայն, և թէ ի Քրիստոս իւրախուսեալ Աստուածազումար ձեր ժողովոյն. Տէր օրհնեսցէ զձեզ, և զօրացուսցէ, և զամենայն բարի սկսուածս ձեր և զգործս ի բարին եզերեսցէ, տալով ձեզ զօրութիւն և կարողութիւն ի կալ և ի հեալ ձեզ անսասանելի ի զրանց զժոխոց, և անյեղլի ի դիւրանցուկ հողմաբեր ուսուցմանց նոցին. այնզի՝ ամենայն կոհակք կուտակեալք և ամենայն ալիք ահացուցիչք՝ Աստուածային վճռաւն և սաստիւն ի յինքեանս բեկոտեալ խորտակին. Եւ ամենայն մառախուղք ստութեան՝ ի քաղցրութիւն տունջեան, և որոտմունք ահագնագոչք՝ ի հանդարտութիւն մեղմութեան, և վհատութիւնք տարակուսական՝ ի խնդութիւն աներկրական ունին յեղափոխիլ տեառն գործակցութեամբ եթէ համբերել կարասցուք անտրտունջ՝ արագափոխք այնց դիպուածոց. Եւ ես գիտացաք զբարի ուխտաւորաց գալուստն առ բարիսդ, և դտեսեալն աչօք իւրեանց և զլուեալն ունկամբք՝ առանց այլայլման պատմելն ձեզ. ընկալցին զվարձս ի ճշմարտասիրէն Աստուծոյ ըստ գործոց իւրեանց զովելեաց. Նաև՝ կամիմք, զի ըստ մեծի հարազատութեանդ՝ զթուղթսն, որ առ սիրելի եղբայրն Յակոբ արհին, թէ զառաջինն, զորմէ դրես քեզ հասեալ. և թէ՝ զերկրորդս այս ի ձեռն հաւատարմի փութացուցանել առ նա յոր վայր և իցէ. Որպէս և զնորայն իսկ զթուղթս եթէ լինիցի առ մեզ, և կամ զլուր ինչ որպիսութեան նորին ի գիտելդ, առ մեզ վաղվաղելն մի զանց դնոքօք առնիցես. որոց վասն՝ մեծապէս ընկալնլոց ես զօրհնութիւնս և զշնորհս ի սրբոյ Աթոռոյս և ի մէնջ գոհութեամբ հանդերձ. Առ որս՝ և զանցսն տեղւոյդ, և զնորանոր գործս ինչ, որք գործին յայդր մեզ ծանուսցես ի գիտել. Իսկ կողմանցս զիարդն այսչափ ինչ գիտեա. զի ողորմութեամբն Աստուծոյ՝ ցարդ խաղաղութեամբ կամք միաբանութեամբ. Եւ ամենայն բնակալք ի հովանաւորութիւն մեզ փութան ի ձեռաց նախանձոտաց, և զանազան նպաստաւորութեամբ խնամարկեն զմայր Աթոռս տիրակերտ. Բայց ցաւիմք ի վերայ անմիաբանութեան ազգիս մերոյ, և ողբամք ի վերայ մոլորելոցն յԱստուածային ուղիղ շաւղաց, և աղօթեմք առ տէր վասն դարձի և զղջման նոցին. զի ի գիտութիւն ճշմարտութեան եկեալ կեցցեն և մի կորիցին. Այսպէս գիտացեալ առ այժմ, լեր ողջ ի տէր, և զօրացեալ շնորհիւ նորին, և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ և ընդ քոյայինսն ամենայն, Ամէն.

Գրեցաւ ի ՌՄՂԱ թուաջս, և ի սեպտեմբերի... ի մայր Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին.

ՄԴԱ. Թուղթ ի Կարին առ շէհիր վէքիլի Խօջայ մահտեսի Յովհաննէսն.

Եւ ընդ օրհնառաք և սիրապարդե ողջունատու նամակիս՝ գիտութիւն լիցի բարեջան և հոգևոր որդւոյդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի. Զի թուղթն, որ ի սիրոյդ՝ ընդ այլոց ոմանց մտերմագունից թղթոց հասեալ առ մեզ, յայտնի կացոյց անդրէն զսրտիդ սիրոյ զառաւելութիւն և զկատարեալ մտերմութիւն, զորս ունիս առ շնորհատու ծնօղս քո սուրբ Էջմիածին և առ հայրութիւն մեր. առ որս անտարակոյս էաք թէև. Ընդ որ տեղեկացաք միանգամայն և՝ զմեր պարոն Մարտիրոսի գալն յայդր, և զելն այտի նպաստամատոյց ձեռնտուութեամբ ձերով, և այլ հարազատից. Նաև՝ ծանեաք զքաջագործութիւնս ձեր և զջանացողութիւն սակս կոնդակին ընթերցմանն. Եւ ես՝ գիտացաք և զօգնական լինելն Գօլվաթլու փաշային բանից և մարդկանց մերոց եկեղոց յայդր. որ թէպէտ ինքն փաշայն չէր զպատուկ թուղթ առ մեզ գրեալ, բայց ի հաւատարմաց նորին իրազէկ եղաք այնմ. որք և ի կողմանէ մեծապատիւ փաշային ես՝ զանազան յուսադրութեամբ միամտեցուցեալ էին զմեզ՝ ի տեսանել և ի վայելել զսքտական բարեկամութիւն նորին արդեամբք յապայն. Որոց ամենից բարեկաւութեանց ձե-

րոց վասն՝ շնորհակալեցաք մեծապէս օրհնութեամբ հանդերձ. Տէր օրհնեսցէ զձեզ և զօրացուսցէ։ Նաև մանաւանդ քեզ օրհնելոյդ ի նմանէ՝ լիցի վարձաւոր ըստ չափու սիրոյդ և վաստակոցդ և մեծագոյն ջանիցդ։ Արդարև՝ ի սկսանելն իւր իմիք՝ երևին դժուարութիւնք ինչ, որպէս երկրագործք ի հերկելն, և ճանապարհորդք յընթացս իւրեանց կրեն զազգի ազգի վիշտս, բայց յետոյ փոխարկին այնոքիկ ամենայն ի հեշտութիւն և ի քաղցրութիւն ի վայելելն զպտուղս աշխատանաց իւրեանց, ՛զորս վաստակեցին. քանզի՝ բնական է յետ կարկտի ծագել արևու, և յետ ամպախաղաց որոտմանց մեղմասիկ քաղցր ցօղոյ։ Ուրեմն՝ քաղցրասցին և ձեզ և մեզ այս տառապանք հայելով ի վախճանն. զոր ունի քաղցրացուցանել տէր, և բաշխել ամենայն ուղղասիրաց. այնզի՝ վախճանն է պսակաւորիչ գործոյն։ Ի կողմանէ սրբոյ Աթոռոյս այսպէս գիտեա, ողորմութեամբ տեառն կամք խաղաղութեամբ, և ամենայն բնակալք ի խնամարկել զմեզ և զսուրբ Աթոռս փութան հրովարտակօք հաստատութեան, և ըստորում սարտարն զօրօք նստեալ կայ մերձ յԵրևան, վասնորոյ պատշաճ դատեցաք զմի ոմն յեպիսկոպոսաց մերոց յղել առ նա ի հարցանել զողջութենէն։ Պատուիրեմք ի վերջէ սիրելւոյդ իմում կալ և մնալ հաստատուն և անփոփոխ ի դոյնն, յորում ես, և անվերջանալի առնել զհաւատարմութիւնդ ի մէնջ և ի սրբոյ Աթոռոյս։ Եւ ջանալ լաւարան և ի կատարն բերել, և որպէս սկսայքն ի յանդ հասուցանել. զի բազմասցին քեզ վարձք յԱստուծոյ, և օրհնութիւնք և շնորհակալութիւնք ի մէնջ։ Այսպէս գիտացեալ առ այժմ, և զսիրոյ գիրդ և զողջութիւնդ ի մէնջ աննուաղ արարեալ՝ ողջ լեր ի տէր, և զօրացեալ նովաւ, և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ, Ամէն։

Ի ՌՄԾԱ թուոջս, և ի սեպտեմբերի... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՄԴԲ. Առ քննազ Սոլոմոնն գրեցաւ

Ե ընդ օրհնութեանս և սիրապարգև ողջունառաք նամակիս՝ գիտութիւն լիցի քումդ սիրելութեան։ Զի երկու Աբրահամ շնորհափայլ եպիսկոպոսունքն խաղաղութեամբ ժամանեալ ի սուրբ Աթոռս առ մեզ պատմեցին լիապէս զամենայն անցսն տեղւոյդ, ընդ որս և զթիւր արարս ներհակացն Աստուծոյ, և դքաջագործութիւնս հարազատ և մտերիմ սիրելեաց մերոց։ Ցաւեցաք ի վերայ անզգամացն գործոց, և ուրախացաք ընդ սրտական հաւատարմութիւնս և ընդ արժանաւոր գովեստից գործս մերոց սիրելեաց։ Բայց անտի և այսր՝ չունիմք ընկալեալ զթուղթս ինչ ի քէն, և չգիտեմք զներկայական զորպիսութիւնսն ձեր և այլոց ոմանց սիրելեաց, և զանցսն քաղաքիդ այդմիկ։ Նմանապէս և Գրիգոր վարդապետի ուր գոլն, և զինչ առնելն ամենևին չէ յայտ մեզ։ Ուստի՝ այսու թղթով մերով՝ կամիմք և մանաւանդ պատուիրեմք հարկաւ, զի ամենայն ուղիղ և ստոյգ անցք քաղաքիդ, և որպիսութիւնք ձեր, ընդ Գրիգոր վարդապետի և հիւսիսայնոց զիւրդութեանցն մեզ ծանուցեալ՝ իրազէկ զմեզ առնիջիք անյապաղ. քանզի՝ աստ ոչ իսկութեամբ և ուղղութեամբ պատմին այնոքիկ, այլ յեղաշրջեալ փոփոխութեամբ և այլայլմամբ։ Զկողմանցս կացութիւն համառօտիւ այսպէս գիտեա. մեք տառապիմք և վշտակրիմք միշտ ի թշնամեաց և ի ձեռաց ամբարշտաց. քանի Դանիէլն հանապազօր շարժեցուցեալ զտուտն՝ երբեմն ի ձեռս Հագարացի այլազգեաց վաճառէ զմեզ, և նոքօք ջանայ վնասել զմեզ և զսուրբ Աթոռս։ Երբեմն մատնեալ Պարսից՝ նոքօք կամի զցաւս հասուցանել մեզ խոստանալով շահին ամյամէ մէկ հազար թուման մշտնջենապէս, և մէկ հազար թուման ես ի տարի տարւոյ՝ նորին սարտարին։ Եւ երբեմն քրիստոնէից վաճառէ զմեզ՝ ծանուցանելով նոցա ստութեամբ զեղեալսն, և այլն։ Եւ այսպէս տարուբերեալ իբրու ի համատարած ծովու ծփիմք զանազան ալեօք և կոհակօք փորձութեամբք, և կամք ապաւինեալ ի միակ ճշմարիտն Աստուած. զի լիցի վրէժխնդիր այնոցիկ, որք գործեն զչար, և հեռացեալ են ի նորին սուրբ շաւղացն։ Սարտարն զօրօք ի Նախիջևան նստեալ՝ ոչ գիտեմք զվախճան դիտաւորութեանցն նորին. նոյնպէս և իշխօղն մեր պահպանէ զսուրբ Աթոռս պահնակօք. և թէ յինչ միտս է այսպէս առնելն, այն ևս չէ յայտ մեզ։ Թէ այսպէս և թէ այնպէս ըստ ամենայնի ամենայն

կերպիւ մեք և սուրբ Աթոռս վշտակրիմք և աղտապալիմք, և հանապազ զանազան հոգունակութեամբք մաշիմք, և կեղեքիմք անլաղ, և կրեմք զպէսպէս և զազգի ազգի նեղութիւնըս, են՝ որ արտաքուստ, և են՝ որ ի ներքուստ. զորս թողումն զի ի տեառնէ եղիցի մեզ այցելութիւն, քանզի անիծեալ է, որ դնէ զյոյս իւր ի մարդ. այնզի՝ եթէ ոչ տէր չինէ զտունն ի նանիր վաստակին շինողքն, և այլն։ Ի վերջոյ զայս ես իմա. զի խանն որովհետև ի դիմաց իւրոց առաքեաց զոմանս լերեելեաց իւրոց առ սարտարն, որ ի Նախիջեան ի հարցանել զողջութենէ նորին խորհրդատութեամբ խանին և նորին լուռաջադրութեամբն և մեք ի կողմանէ մեր առաքեցաք առ նոյն սարտարն զՎսնայ նուիրակ զայտի եկեալ Աբրահամ եպիսկոպոսն ընդ Խանի մարդկանն ի հարցանել զխաթրն, և այլն։ Զարդիս՝ երկիրս և մեք վասն այլ և այլ ձայնից կամք ի կասկածի ի յապաղայ խռովութեանց սակս. տէր տացէ զխաղաղութիւն իւր մեզ և երկրիս այսմիկ խղճալւոյ։ Մեր Ստեփան վարդապետն տակաւին ի Պօլիս կայ, և փոխարքային՝ այնէ Իւսուֆ փաշայ վէզիրի աղէմն ընդ Փիլիպպոս ամիրային մտեալ են ի Պօլիս, և սպասեմք, զի ողորմութեամբն Աստուծոյ բանն ի մի կողմն վերջասցեալ՝ վերասցին տարաձայնութիւնք յաղէս մերմէ։ Այսքանս աստէն ի կարճոյ գիտացեալ՝ լեր ողջ ի տէր և զօրացեալ նովաւ, և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ և ընդ քոյսդ. Ամէն։

Հայրական սիրով ողջոյն և օրհնութիւն նուիրեմ. տերամբ զօրացեալ Թադոլեան Նսալի աղային, քնեաղ Զաքարին, քնեաղ Նիկողայոսին, և այլոցն, որք ընդ ձեզ են, և ձեր։

Գրեցաւ ի 1802. ի սեպտեմբերի... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՄՂԴ. Թուղթ ի Թիֆլիզ առ Յովհաննէսն Շիոյեան:

Զի ի յուլիսի 20, գրեալ թուղթ յուսադրութեան և քաջալերութեան, ընկալեալ ձեռամբ Աբրահամ եպիսկոպոսին գիտացաք ըզսրտից սէր և զկատարեալ մտերմութիւն, զորս ունիս դէպ առ մեզ։ Որպէս զնոյնս լիապէս պատմեաց և բերանօք ինքն Աբրահամ վարդապետ հոգեծին զաւակն մեր։ Ուստի՝ և մեք վասն ամենայն բարեկաւութեանց քոց և օգնականութեանց ցուցելոյ թէ մեզ, թէ սրբոյ Աթոռոյս, և թէ հարազատիցն մերոց այլք բանիւ և գործով և արդեամբք, շնորհակալեցաք մեծապէս յոյժ յոյժ։ Զոր Տէր ինքն օրհնեսցէ զքեզ և զբոլոր Աստուածազօր Տուն քոյ և զքոյայինսդ, և յամենայն փորձանաց փրկեալ՝ ի մխիթարութիւն սրտից մերոց պահեսցէ զձեզ։ Ցիրաւի և մեք չունիմք զայլ ինչ հոյս ի կողմանէ նախանձոտաց, և դիտեմ, զի Աստուծով ճշմարտութիւն յաղթող լեալ՝ ամօթապարտ առնելոց է զայնոսիկ, որք հեռացեալք են յայնմանէ, բայց զինչ օգուտ, զի զաշխարհս լցին ստութեամբ, և պատճառք լինին մեծամեծ վնասուց սրբոյ Տանս, և առաջի ամենայն ազգաց ծանակելի և նախատելի արարին զմեզ և զօրէնս մեր։ Եւ ոչ դադարին ի չարութեանց իւրեանց. քանզի՝ Դանիէլն իւրով համախոհիւք և բնածին վարուքն ոչ հանգչի ի պէսպէս չարիս հասուցանելոյ Տան Աստուծոյ, զի երբեմն Օսմանցւոց վաճառէ զմեզ խոստանալով նոցա զծանր ծանր կաշառս, երբեմն քրիստոնեայ իշխանաւորաց, և երբեմն Պարսից։ Որպէս զարդիս մարդ յղեալ առ սարտարն (որ ի Նախիջեան) խոստացեալ է յամէ յամ տալ Շահին մէկ հազար թուման, և ինքեան սարտարին ես նոյն չափ յամենայն ամի։ Որոյ աղագաւ և մեք խորհրդակցութեամբ խանին մերոյ՝ առաքեցաք զնոյն ինքն Աբրահամ վարդապետ հոգեծին որդին մեր առ սարտարն ի հարցանել զողջութենէն, և առ ի ծանուցանել նմա ըզսուտ բանս Դանիէլին, և այլն, որ տակաւին անդ է Աբրահամ վարդապետն մեր, և դեռ չէ վերադարձեալ։ Ահա յայսպիսի տառապանաց միջի կամք, և սուրբ Տունս խղճալի օր քան զօր վնասի և աւերի։ Եւ չիք մեզ օգնութիւն ուստեքէ բաց ի Տեառնէ ամենակալէ, զի յուսացեալ կամք ի նա, և կարէ ազատել զմեզ ի ձեռաց գրաբանից. բայց դուք սիրելիք իմ, պարտիք ոչ լքանիլ յառաջիկայ բարի սկսուածոց ձերոց, և ոչ կասիլ յետս ի յաստուածահաճոյ գործոցդ յալդցանէ, և մի վերջասջիք ի քարոզելոյ և ի պատմելոյ զճշմարտութիւն ամենից բանիւք ի մերձաւորս և գրովք ի հեռա-

ւորս, և եթէ հնար է վերստին բազմակնիւք վկայութեամբ ծանուսջիք զուղղութիւն մեծի կայսերն. զի աւուրբ յառաջ յօգնութիւն ժամանեալ վնասակրեալ սրբոյ Գահիս, խաղաղացուսցէ զմեզ և զազգս մեր, որ ծփիմք ահա յերկու ամս զանազան ալեօք իբրև ի համատարած ծովու, կողմանցս որպիսութիւն այս է. սարտարն զօրօք կայ նստեալ ի Նախիջևան, և թէ յինչ միտս է, չէ մեզ յայտ։ Մերս Ստեփան վարդապետն, զոր առաքեալ եմք ի Պօլիս վասն խաղաղութեան, տակաւին անդ է, և չունիմք զլուր ինչ դնմանէ։ Դուք ըղձեր ողջութիւն և տեղւոյդ զամենայն անցսն, որք լինին յայսմհետէ՝ անդադար մեզ գրեսջիք ի գիտել, որոց սպասեմք միշտ. քանզի չգիտեմք թէ զկնի վարդապետաց ելանելոյն այտի, զինչ անցք անցին և կամ զուք սիրելիքդ իմ յինչ միտս և ի գործս կայք, զորս կամիմք գիտել և միամտիլ։ Ամենայն բարեմիտ և ուղղասէր քահանայից մերս հարազատ և հաւատարիմ որդւոց, և բարեպաշտօն և ուղղաշաւիղ իշխանաց և ժողովրդոց նուիրեմ զողջոյն և զօրհնութիւն, և պատուիրեմ մնալ հաստատուն ի սէր, և անշարժելի ի դրանց դժոխոց։ Զայլն յանձնեմ զսուրբ Աթոռս ի սիրելի որդիսդ սորին, և զձեզ Տեառն Աստուծոյ։ ողջ լերուք շնորհիւ և զօրութեամբք Նորին։ Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս, և ի սեպտեմբերի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՄՂԳ. *Թուղթ ի Թիֆլիզ առ Դիւան Յոհաննէսն, ծանուցումն զանցից մերոց, եւ զթղթոց նորին չհասանելոյն առ մեզ:*

Եւ ընդ սիրոյ և օրհնութեան ողջունառաք նամակիս՝ ծանուցումն լիցի Աստուածսիրութեան քում։ Զի ի նախընթաց ամսոյ 11. սիրելի և հոգևոր որդեակքն մեր՝ և հարազատ զաւակունքն սրբոյ Աթոռոյս՝ երկոքեան Աբրահամ առատահանճար Եպիսկոպոսունքն, խաղաղութեամբ եկեալ ժամանեալ ի սուրբ Աթոռս և առ մեզ, թէպէտ ի սիրելւոյդ ոչ ունէին զթուղթ, որք այնպէս զգացուցին մեզ՝ իբրթէ ի գալն իւրեանց յայսկոյս՝ սիրելիդ և կնեազ պարոն Սօլօմանն Արղութեան՝ թուղթս իցէք գրեալ առ մեզ՝ և տուեալ ինքեանց բերել, բայց նոքա կամ մոռացմամբ յայգր թողեալ իցեն, և կամ յայլ ուրեք կորուսեալ, զոր չգիտելով թէ զինչ իցեն արարեալ, տարակուսեցան։ Այլ սակայն՝ ի պատմելն նոցա բերան առ բերան զամենայն անցս և դիրակութիւնս քաղաքիդ՝ և զորպիսութիւնս մերազնեայ ժողովրդոց, ծանուցին մեզ յատկապէս և սիրելւոյդ գերազանցօրէն օգտախոհութիւնսն և ջատագովութիւնսն՝ հանդերձ որդիական ջերմեռանդ սիրովդ և սրտական հաւատարմութեամբդ՝ որ առ սուրբ Աթոռ Մայրս քո հաւատոյ՝ և առ հոգևոր հայրութիւնս մեր։ Զորոյ յառաջ.մէ ես քաջ տեղեկութիւն ունելով մեր, վասնորոյ մեծապէս շնորհակալ եղաք զառաջնոյդ, և օրհնեցաք զքեզ լիագոյն օրհնութեամբ։ Զոր Տէր օրհնեսցէ և զօրացուսցէ, և փրկելով ի ձախողակի դիպուածոց՝ պահեսցէ ընդ թևօք Աստուածային խնամոց իւրոց՝ հանդերձ բնաւիւք ազնուական ընտանեօք քովք, և զամենայն իրս քո ի բարին յաջողելով՝ արդիւնաւորս և շահեկանս արասցէ։ Արդ՝ ահա երկարաձգեցաւ միջոցն՝ յորում ի սիրելւոյդ թուղթ ոչ ընկալաք, վասնորոյ չգիտեմք՝ թէ զինչ կայք, և զորպիսի հոգացողութիւն ունիք առնել առ ի ազատել զսուրբ Աթոռ խղճալի Մայրս ձեր և զմեզ ի ձեռաց խռովասիրաց և զրաբանից, որք ահա ոռ նախանձու չարութեան, ի ձեռս զազանաց զմեզ մատնելով՝ կամին տալ կեղեքել բոլորովին զկեանս մեր, և զսուրբ Տունս իսպառ աւերել և քայքայել։ Դուք էք այսօր մեր մերձաւոր հաւատարիմք և սրտացաւք, և մեր հոգսն ևս ձեզ անկանի առաւելապէս, վասն Քր ապա ոչ կարէք զնպաստ ազատութեան մատուցանել մեզ և սրբոյ Գահիս։ Քանզի՝ անձնասէր և փառամոլ Գանիէլն յամենուստ կուսէ ևս զվնասիչս և զկողոպտիչս զարթուցանէ առ մեզ, վասն զի՝ խոստմամբ մեծամեծ կաշառաց՝ յառաջ զմերձակայ գլխաւորքս յարոյց ի վերայ մեր և յետոյ՝ մերթ ի ձեռս Օսմանցւոց մատնեաց՝ և վաճառեաց զմեզ, և մերթ՝ ի ձեռս քրիստոնեայ գլխաւորաց, որպէս և յաւագոյն յայտնի է ձեզ։ Իսկ յայսմ միջոցի ևս միջնորդութեամբ փաշայի Բայազտոյ՝ թուղթ էր գրեալ յատուկ մարդովք առ Փիրզուլի խան սարտարն պար-

սից՝ որ նստեալ է ի Նախիջևան, խոստանա-
լով նմա՝ տալ զհարկ չահին Ռ. Թուման լիւ-
րաքանչիւր տարւոյ։ Ռ. Թուման ես ինքեան
սարտարին։ Զոր ազդեցին մեզ ոմանք գոր-
ծակալք նորա, և խանն մեր ես իմացաւ։
Բայց մեք մինչև ցարդ՝ կամ գԹուղԹ՝ և կամ
զմարդ չէաք առաքեալ առ նա ինքն սարտարն,
ըստ որում ի մէջ նորա և խանին ոչ գոյր
պարզութիւն։ Իսկ արդ՝ մինչ հաշտութիւն
եղև, և խանն դիւր տարեկան հարկն առա
քէր առ նա, մեք ևս հրամանաւ խանին մէկ
Թուղթ գրեցաք, և զՏաթևացի Աբրահամ վար-
դապետն յղեցաք վասն զխաթրն հարցանե-
լոյ, որ դեռ ոչ է դարձեալ առ մեզ։ Այսպէս
թէ ներքուստ՝ և թէ արտաքուստ՝ նեղիմք և
վնասիմք, և ուստեքէ զդիւրութիւն ոչ տեսա-
նեմք։ Աստուած ողորմեսցի և մեց արասցէ
խղճալի սրբոյ Աթոռոյս և մեզ։ Եւ արդ՝ այժմ
գրեցաք զԹուղԹս առ սիրելիդ և առ այլ բա-
րեկամս մեր, ծանուցանելով ձեզ զորպէսն
սրբոյ Գահիս և մեր, զի դուք զձեր և զքա-
ղաքիդ պատասխան մեզ գրիցէք ի դիտել։
Մանաւանդ՝ խնդրեմք ի սիրելւոյդ, զի ընդ
այլ բարեկամաց մերոց ջանասցես զօգուտն և
զբարին սրբոյ Աթոռոյս յառաջացուցանել, և
ազատել զսա և զմեզ ի ձեռաց խռովասիրաց
կամելով միշտ զխաղաղութիւն սերմանել յա-
մենեսին, և զխռովութիւն արմատախիլ առ-
նել հանդերձ հետևողօք նորին։ Նաև հասարա-
կութեամբ ծանուցանել թէ ինքնակալ կայ-
սերն, և թէ մեծամեծաց քաղաքիդ զուղղու-
թիւն ալսր անցից մերոց, զօգնութիւն և զո-
ղորմութիւն ցուցցեն առ մեզ։ Որովք և մեք
միամտեալք և ևս առաւել լիցուք շնորհակալ
զձէնջ՝ արժանաւոր օրհնութեամբ։ Ողջ լեր ի
Տէր։ Ամէն։

Գրեցաւ լամի Տեառն 1802. և ի սեպ-
տեմբերի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՄՂԵ. *Թուղթ ի յՈւզումչի գիւղն, առ քահանայսն եւ ժողովուրդսն, օրհնութիւն եւ շնորհակալութիւն վասն երթեւեկացըն ցուցանելոյ զընդունելութիւն:*

Եւ ընդ ամենառատ օրհնութեանս Աս-
տուածայնոյ զխտութեան լիցի բարեպաշտու-
թեան ձերում։ Զի դուք օրհնեալքդ ի բնէհե-
տէ հարազատ և հաւատարիմ որդիք գոլով
սրբոյ Աթոռոյս՝ և տէրունի ժողովուրդք սո-
րին, անխարդախ մտօք ունիք առ սա և առ
մերս հոգևոր հայրութիւն զորդիական ջերմե-
ռանդ սէր և զկատարեալ հաւատարմութիւն,
որպէս միշտ երևեցուցանէք զնոյնս յայդր եր-
թևեկաց մերոց, արժանաւոր յարգութեամբ և
կատարեալ բարեպաշտութեամբ զընդունելու-
թիւն և զշահեցողութիւն ցուցանելով առ նո-
սա, որք լիւրաքանչիւր ժամանակի պատմեալ
են մեզ, և մեք շնորհակալութեամբ օրհնեալ
եմք՝ և օրհնեմք զձեզ զարժանաւորսդ օրհնու-
թեանց, հայցելով ի տեառնէ Աստուծոյ վասն
ձեր զխնամս և զգթութիւնս և զբարեյաջո-
ղութիւնս յամենայնի։ Իսկ ի գալն յայդր ի
մէջ ձեր սիրելի և հոգևոր որդւոյն մերոյ և
մտերիմնուիրակին ձերոյ Յովհաննէս հանճա-
րունակ եպիսկոպոսին՝ որ յատուկ իմն սիրով
ընկալեալ էիք զնա, և ըստ արժանոյն չա-
հեալ և յարգեալ ի պատիւ սրբոյ գահիս և ի
սէր մեր, տալով և կամաւոր յօժարութեամբ
զտուրս ձեր նուիրակութեան, նա ևս գրեալ և
ծանուցեալ էր մեզ մեծաւ շնորհակալութեամբ
զամենայն բարելաւութիւնս ձեր։ [illegible] որս և
մեր շնորհակալեալ մեծապէս զբարեպաշտու-
թենէ ձերմէ, օրհնեցաք զձեզ լիաբերան օր-
հնութեամբ։ Զորս տէր օրհնեսցէ և զօրա-
ցուսցէ, ի փորձութեանց և ի վտանգից հո-
գեկանաց և մարմնականաց ազատս կացուսցէ,
և միշտ տարածեալ ունելով ի վերայ ձեր զԹևս
Աստուածային խնամոց իւրոց՝ պահեսցէ հա-
նապազ ի խաղաղութեան և ի բարեյաջողու-
թեան, և փոխարէն սիրոյ և հաւատարմու-
թեանց ձերոց առ սուրբ Աթոռս զրազում
վարձս բարեաց պարգևեսցէ ձեզ աստ և յա-
նանց կեանս։ Եւ զհոգիս համօրէն ննջեցելոց
ձերոց լուսաւորեսցէ, և հանգուսցէ յարքայու-
թեան երկնից ընդ արդարոցն դասուց։ Եւ
արդ՝ որովհետև զբարերարաց շնորհակալիլ
հարկ է, վասնորոյ և մեք այժմ կամեցաք այ-
սու օրհնամատոյց Թղթով շնորհակալիլ զսի-
րելի և հոգևոր որդւոցդ մերոց յաղագս բազ-
մապատիկ բարերարութեանցն ձերոց ցուցե-
լոց առ յայդր երթևեկսն մեր։ Որ և սիրով
գրեմք և պատուիրեմք օրհնեցելոցդ, զի զդոյն
առաւելութիւն ջերմագին սիրոյ և կատարեալ
հաւատարմութեան ձերոյ որ առ լուսածին

մայրս ձեր սուրբ Աթոռս և առ հոգևոր հայրութիւնս մեր՝ աննուազելի պահեսջիք, և ի յօգտարար բարեգործութեանց ձերոց որ առ սա՝ մի պակասեսջիք երբէք, յարաժամ զոգուան և զդարին սորա խորհելով և առնելով, նա և՝ որպէս մինչև ցարդ՝ նոյնպէս և յայսմհետէ երթևեկացն մերոց առ ձեզ՝ զսէր և զպարզութիւն և զշահեցողութիւն ցուցջիք, ամենայնիւ բարեյօժարութեամբ առ ընկալուչ և մեծարու լինելով օտարութեան նոցին և յորժամ ի մէնջ առ բարձրապատիւ Շահն զնալի մարդիկ հանդիպեսցին ձեզ, նոյնպէս սիրով և յարգմամբ ընկալնլով զնոսա և շահելով, խազաղութեամբ ուղևորեսջիք առ նա ինքն մեծազօր Շահն, և ի դառնալն նոցա ևս սիրով և պատուով ուղևորեսջիք զէպ յայսկոյս առ մեզ։ Որոց բարեյաւութեանց ձերոց աղաղաւ ընդունելոց էք զմեծագոյն վարձս ի վարձատուէն բարեգործաց, և ժառանդելոց միշտ զհոգեպարար շնորհս սրբոյ գահիս և զօրհնութիւնս մեր։ Որք և եղիջիք օրհնեալք ի տեառնէ և ի սրբոյ Լուսաւորչէն մերմէ հանապազ. Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս և ի սեպտեմբերի... ի սուրբ Էջմիածին։

ՄԴԶ. *Թուղթ առ սրբոյ Երուսաղէմի պատրիարգ Թէոդորոս վարդապետն, սակաւ մի մեղադրութիւն վասն թուղթ չգրելոյն, եւ յորդորումն ի սէր։*

*** Քրիստոսի Աստուծոյ մերոյ յաղագս մեր մարմնացելոյ ամենաբաղձալի գերաքանչ սուրբ Տնօրէնացն տնօրինականաց՝ հրաշալի սուրբ ծննդեան, Աստուածաբարձ Գողգոթային և լուսացնցուղ սուրբ գերեզմանին, և այլ շնորհաբաշխ Տեղեացն սրբոց՝ ջերմեռանդ սիրով և կաթողին բաղձանօք մատուցանեմ զերկրպագութիւնս։ Ընդ որս և Քրիստոսամերձ սրբազանից առաքելոցն Յակոբեանց սուրբ Գլխադրին և սուրբ գերեզմանին առընծայեմ զհամբոյրս շրջամբք հոգւոյ ըղձութեան չնչոյ, ապաւինեալ յանդառնալի բարեխօսութիւն նոցա առ Տէր՝ ընդունել այնու զքաւութիւն մեղաց իմոց, և զօգնութիւն տկարութեան անձինս։

Որ անհա նախապէս ***։ Եւ ապա Քրիստոսաւանդ սուրբ ողջունիւ և նոյնապատուէր միարար սիրով ճշմարտիւ՝ ծանուցանեմք սիրելի եղբօրդ մերոց յարգելւոյ՝ և հարազատ և շնորհընկալ որդւոյդ սրբոյ Աթոռոյս՝ արժանավայել Պատրիարգիդ հրաշանուն քաղաքիդ սրբոյ Երուսաղէմի՝ տեառնդ Թէոդորոսի Աստուածիմաստ վարդապետիդ և արհիապանծ եպիսկոպոսիդ. Զի ըստ վերնախնամ տեսչութեան ամենասրբոյ Հոգւոյն՝ (որ պարգևէ զզանազան շնորհս՝ և յաջողէ զամենայն յամենայնի ըստ բանի առաքելոյն,) մինչ յաջողեցաւ մեզ կարգիլ ի սուրբ Աթոռս Հայրապետութեան, և առընկալաք զօծումն կաթուղիկոսութեան օրհնեցելոյ ազգիս Հայկազնեայ՝ և լուսանկար սրբոյ Գահիս, և գրեցաք ի զանազան կողմանս զթուղթս օրհնութեան և ծանուցման մերս հանդիպմանց այսմիկ առաքելական շնորհիւ, և զի սիրելութիւնդ ևս հարազատ որդի ես սրբոյ Աթոռոյս, և հոգեկից եղբայր մեր, և դիտելով թէ ուրախանալոց ես ընդ սոյն այս լինելութիւն, վասն որոյ գրեցաք և առ եղբայրութիւնդ զթուղթ նախանուէր սիրոյ, ի ծանուցումն այսր անցից մերոց։ Իսկ սիրելի և հոգևոր որդեակքն քոյ և մեր՝ և հաւատարիմ միաբանքն սրբոյ Աթոռոյդ՝ Գրիգոր և Կարապետ հանճարունակ վարդապետքն՝ նուիրակունքն Կարնոյ և Զմիւռնիոյ՝ որք յայնժամ աստ առ մեզ էին՝ և ունէին դառ ի յեղբայրութենէդ զվկայականս գրեցեալս առ Ղուկաս և Յովսէփ հոգելոյս կաթուղիկոսունսն վասն ձեռնադրութեան իւրեանց եպիսկոպոս, ի յաջորդիլն մեր յայս Աթոռ, նոքա բերեալ մատուցին մեզ զայն վկայականսն, զորս մեք տեսանելով՝ և հաճելով ընդ բարի խնդիրս նոցին, ի սակս սիրոյ և խաթեր ձեր, և վասն օգտի սրբոյ Տանդ շնորհօք ամենասուրբ Հոգւոյն՝ ի յատենի լուսանկար սրբոյ Տաճարիս ձեռնադրեցաք զնոսա եպիսկոպոսունս, և առաքելական կարգիւ ճոխացուցաք, ի բարի ւիշատակ մեզ և ձեզ։ Եւ այսպիսի փառաւորութեամբ և հոգևոբական պատուով վերադարձուցաք ի տեղիս իւրեանց, զոր և դրեալ ծանուցաք սիրելութեանդ յայնժամ վերոյիշեցեալ թղթով մերով։ Այլ ահա երկարաձիգ ժամանակ էանց ի կլոէ առաքման այնր թղթոյ մերոյ ցարդ, և սիրելութենէդ մէկ սր-

տագիւրական պատասխանի չընկալաք, և զոր հարկ էր՝ թէ սակս հարազատ որդիութեանդ առ սուրբ Աթոռս, և թէ լաղագս քաղաքավարութեան կանոնի՝ երկառղեան թղթով դուրախակցութիւնդ առ մեզ յայս առնել, չարարեր, և կարօտ թողեր զմեզ վայելման եղբայրականի սիրոյդ։ Դիցուք թէ՝ այնպէս համարիցիմք, եթէ այն թուղթն մեր հանդիպելով անհաւատարմաց՝ ի կորուստ իցէ մատնեցեալ, և ոչ իցէ ժամանեալ առ սիրելութիւնդ, որպէս և բազումք ի թղթոց մերոց ի ձեռս թշնամեաց անկանելով անյայտացեալք են. այլ գիտեմք աններկբայութեամբ՝ թէ լիշեալ Գրիգոր և Կարապետ շնորհունակ եպիսկոպոսունքն՝ որ լոյժ հարազատք և հաւատարիմք են առ մեզ, և այսր անցից մերոց եւ ականատեսութեամբ քաջ վերահասուք, ի հարկէ գրեալ և ծանուցեալ են առ պատուելութիւնդ՝ զոր ինչ տեսեալ և իմացեալն են։ Ապա ընդէ՞ր ոչ եղև փոյթ լայսքան ընդարձակ միջոցի անդամ մի զհամառօտագիծ թուղթ գրել, ի բացայայտութիւն անկեղծ գոլոյ պարզութեան ջինջ և մաքուր սիրոյդ՝ և բարեկամութեանդ առ մեզ, որով և լինիւր մխիթարութիւն մեզ ոչ սակաւ՝ ի բազմապատիկ հոգս և վարանմունս մեր. Քանզի՝ ահա լսէք և իմանայք՝ և տեսանէք իսկ աչօք ձերովք՝ թէ զիա՞րդ արք լաչաղկոտք և զրաբանք, և ըստ բանի սրբազան առաքելոյն Ցուդայի ատեցեալք և չողմոգք, երթեալք զհետ ցանկութեանց իւրեանց, և ի սէրս իւրեանց խարդախութեամբ, յարուցեալք ի վերայ խղճալի սրբոյ Աթոռոյս, ջանան աւերել և քայքայել զսա, և զլխովին կործանել՝ սակս փառամոլութեան իւրեանց, զպարզամիտ օրհնեալ ազգ մեր վրդովեն և խռովեն, և ի սաստիկ երկպառակութիւն և ի վերջին լուսահատութիւն ածեն, և զմեզ զանազան բարուրանօք և ստայօդ զրպարտութեամբք վատահամբաւեն, զոլով մեր լայսպիսի կիրս նեղութեան և տարակուսութեան ակնկալեալ սպասեմք գտանել մեզ զգիւրութիւն մխիթարութեան, և զօգնութիւն ձեռնտուութեան նախ յամենաւագթածէն Աստուծոյ, և ապա ի ձէնջ ի ճշմարտասէր և ի հարազատամիտ եղբարցդ. եթէ դուք ես անփոյթ առնիցէք զմեօք, այլ ես մեք յումմէ՞ յուսասցուք զբարութիւն։ Եւ լիբաւի լոյժ արժան էր սիրելի եղբօրդ՝ կամ սրտական հաւատարմութեամբ ձեռնտու և օժանդակ գտանիլ մեզ յայդ կողմունսդ՝ գրելով ի Պօլիս բանս զգուշացուցականս առ ճշմարտասէր անձինս, և համոզելով զնոսա ի խաղաղութիւն. կամ զոնեայ սիրանիշ թղթով կարեկից և ցաւակից լինել մեզ։ Եւ թէպէտ սիրելութիւնդ ի հանդամանաց սիրոյ պակասեալ գտար, բայց մեք յարաժամ ունելով զքեզ ի միտս մեր՝ յիշատակեմք առ ի բարին. որպէս և զարդիս սիրանիշ թղթովս այսու կամիմք հարցանել զողջունէ պատուական անձինդ, զոր տէր պահեսցէ անփորձ և անսասան ընդ հօր բազկաւ իւրով, յաւելեալ բարօրութեամբ ի քօշազուարթ կենդանութիւնս յամս յոլովս ի հրճուանս մեր։ Իսկ եղբայրութիւն քոյ ես եթէ կամիցի զմէնջ հարցարանել, փառք Աստուծոյ՝ զի ողորմութեամբ Նորին կամք ի միջակ խաղաղութեան, և սուրբ Աթոռս մեր է ի շինութեան և ի պայծառութեան, անպակաս ի լրութենէ բազմութեան միաբանից, և իշխօղքն մեր ես յամենայնի զսէր և զխնամս ունին առ մեզ. այլ մեր ցաւ և հոգ սրտի՝ է՞ երկպառակութիւն և խառնակութիւն մերազնեայ ժողովրդոց. զոր տէր վերացուսցէ և ի բաց բարձցէ շնորհիւ սրբոյ Աթոռոյս, զիւր ըղձալի խաղաղութիւն և զմխիթարութիւն պարգևելով նոցա և մեզ։ Արդ՝ գրեալ մեր զայս թուղթ առ սիրելութիւնդ, խնդրեմք՝ զի զմաքուր սէրդ առ սուրբ Աթոռ մայրս քո յուսատու՝ և զսիրակից եղբայրութիւնդ առ մեզ անպակաս արասցես, և կարևոր օգնականութեամբ ձեռնտու և օժանդակ մեզ լինել կամեսցես՝ որչափ բերէ կար քո, և մանաւանդ՝ հանդերձ սիրագումար միաբանիւք յաւելցես զաղօթս յԱստուածավիճակ սուրբ վայրսդ առ բազմագութ ներողութիւն Նորին, այց առնել ազգիս մերում և մեզ, ցրելով առ ի մէնջ զդժնդակ մրրիկս, և շնորհելով զխաղաղութիւն և զանդորրութիւն։ Եւ երբեմն սիրանիշ գրովդ ես զմեզ մխիթարել ջանասցես, որ մեծ առիթ է քեզ ընդունելոյ զվարձս յԱստուծոյ, զշնորհըս ի սրբոյ Աթոռոյս և զգոհունակութիւնս ի մէնջ։ Ողջ լեր ի Տէր։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուսջս, և ի սեպտեմբերի... ի լուսակազմ Աթոռս սուրբ Էջմիածին։

Բազմաւ սիրով և Աստուածային օրհնու-

թեամբ ողջոյն տամք սիրադումար Միաբանից սրբոյ Աթոռոյդ՝ շնորհապերճ եպիսկոպոսաց, այսինքն լուսարար Բաղտասարին և Մատթէոսին, նաև Հնդկաց նուիրակ Պետրոսին, և Զաքարիայ պատրիարգի հոյեծին որդի միւս Պետրոսին Կեսարացւոյ՝ (որք եթէ յայդր իցեն,) մեր յիշեալ հոգևոր որդի Կարապետին, (զորմէ լուաք թէ եկեալ է յայդր,) Բաղտասին, Գէորգին, և այլ հանճարունակ եպիսկոպոսաց, խոհեմամիտ վարդապետաց, համեստակենցաղ աբեղայից և համայն աստիճանաւորաց՝ և բարեպաշտօն մահտեսեաց, յանձնելով զամենեսեան ի խնամս և ի գթութիւնս բարերար Բարձրելոյն, կալ մնալ խաղաղութեամբ։

ՄՂԷ. *Թուղթ ի Պօլիս առ Յակոբ վարդապետն սրբոյ վանիցն Կարապետու։*

Յորմէ բազում սիրով, Քրիստոսական սուրբ և միարար ողջունիւն, բազմաբաղձ կարօտանօք և յոգնատենչ ըղձիւ եռանդեան սրտի՝ ծանիր յատկեղ բաղձալի հոգւոյս՝ և սրտակից սիրելի իմ. և մշտահարազատ հաւատարիմ և շնորհընկալ զաւակ Յիսուսեան սուրբ Գահիս Նունաիջի՝ և արժանաժառանգ առաջնորդ և այցելու մեծի ամլորդոյն սրբոյն Յօհաննու՝ Յակոբ շնորհառատ վարդապետ և արհիապանծ եպիսկոպոս։ Զի զթուղթ սիրոյդ ընկալեալ ի փետրուարի 5 ծանեաք զբարեացապարտ անձին ձեր զվիշտս որ յանբարի և ի չարաբարոյ դժնէից, և չեն ինչ զարմանք, զի և Տէրն և ընտրեալքն նորին՝ զզոյնս կրէին ի յաչախկոտաց, զի աշխարհ զիւրսն սիրէ, և որք կապեալք են զսիրտս իւրեանց յայն։ Ուստի՝ ուրախութեամբ քան թէ նեղսակրութեամբ պարտիմք տևել, որք ջամբեն մեզ, աշխարհէ և ի նորին հետևողաց։ Նա զի և Աստուածայինն ճշմարտութիւն ոչ թողու իսպառ զմեծարուն և զպաշտօնատարն ուղղութեան զի արդար է նոյն, և արդարացուցանէ զիւրսն։ Որով յուսով կամք ապաւինեալ ի նոյն միակ արդարադատն։ Եւ բաց ի մի թղթոյդ զոր ի վերդ յիշատակեցաք, զայլ ինչ թուղթ չունիմք ընկալեալ։ Զպատասխանին այնմ գըրուածոյդ ի յուլիսի 10, ընդ ուխտաւորաց վերադարձուցաք և մեք ի Կարին, առ հարազատն երկուցս Տէր Գասպար քահանայն՝ պատուիրելով յղել առ սիրելիդ հաւատարմաւ, նորմէ ընկալաք զանդրադարձն ի յօգոստոսի 2ն. դրեցեալ, որով միամտեցուցանէ զմեզ զթղթոյն մերմէ, իբր զի առաքեալ իցէ առ բաղձալի եղբայրութիւն ձեր։ Յորոյ գրուածոց գիտացեալ եմ՝ զխաղաղութեամբ ժամանելն սիրոյդ յաստուածապահ քաղաքդ ի Պօլիս ընդ օրհնելոյն յԱստուծոյ և ամենազօր բազկաւ նորին զօրացելոյն Փիլիպպոս բարեհամբաւ ամիրային, միամտեցաք։ Տացէ Տէր ի մտանելն ձեր ի քաղաքդ տիրապահ՝ եղիցի խաղաղութիւն քաղաքիդ, և հանդարտութիւն ժողովրդոց, լինելով ձեզ վկայ յԱստուածակոյս կողմանէ բանին ստուգութեան և բերան և լեզու ի դիմաց մերոց ծանուցանելով ամենից ուղղասիրաց զանցիցն անցելոց զիսկութիւն, և ելով քարող ճշմարտութեան ի յունկըս բարեպաշտից։ Այլ և ցաւիմ յոյժ յոյժ, մանաւանդ ի վերայ այնոցիկ, որք թողեալ զայսքան և զայսչափ բազմութեան երևելեաց՝ միաբանից, երկրացւոց և շրջակայից սորին զբազմակնիք ստորագրութիւնն և վկայութիւնն և զճշմարտաճառ գրութիւնն, քանի մի աննշան և անուանարեկ սևաւորաց հետևելին, որպիսի են Ներսէս և Մանուէլ խռովասէրքն և ապականիչքն աշխարհի և ժողովրդոց, զորոց ինքեանք էր՝ զի զանգատէին, և նողկալի էր դոցա արարք, և ընթացք նոցին, զորս թողում, որք միտս ունին՝ խոկալ և զբանս մեր հաւատարիմ. վարկանել։ Այլ և մաղթեմք ի յեղբայրութենէ ձերմէ զի զամենայն անցսն տեղւոյդ, ընդ նմին և զառողջութիւն և զգիարդութիւն պատուականութեանդ անդանդաղ մեզ գրեսցես ի տեղեկութիւն, առ որս սպասեալ կամք և մնամք։ Ըզսոյնս ահա գրեցաք ի Կարին և առ Տէր Գասպար քահանայն ի գիտելն զլուր ինչ ի Պօլսոյ զձէնջ՝ ծանուցանել փութով մեզ ի միամտութիւն։ Ի ձեռս որոյ և զայս թուղթ առաքեալ պատուիրեցաք վերստին առ սիրելիդ իմ. հասուցանել։ Եւ ես ի կողմանէ սրբոյ Աթոռոյս և մեր այսչափ ինչ գիտեալ, զի վասըն խռովութեան իրիք, որ ընդ խանն և ընդ սարտարն, կամեցաւ խանն երկրիս տալ զատարկել զսուրբ Աթոռս, և զմեզ միաբանովքն տանել ի յամրոցն, այլ ի յընդդիմանալն մեր՝

թողլ ետ։ Որ և կամք խաղաղութեամբ թէ մեք, թէ միաբանք սրբոյ Աթոռոյս, և թէ երկրային ժողովուրդք։ Բայց ըստ որում սարդարն զօրօք նստեալ կայ առ. երի Նախիջեւանու իբրև երեք աւուրբք հեռի յԵրեւանայ՝ նմին իրի պատշաճ համարեալ՝ առաքեցաք զմի ոմն յեպիսկոպոսաց մերոց թղթով առ նա հարցանելով զողջութենէն։ Մեր Մարտիրոսն եկն, և կրկին հարկաւոր թղթովք դարձուցաք ի Պօլիս այդր, զորոյ զեկն ի Կարնոյ դէպ յայդկոյս սուրհանդակաւ գրեալ էին մեզ սիրելիք ոմանք ի Կարնոյ և ինքն իսկ Պարոն Մարտիրոսն։ Ի դալն որոյ յայդր գիտելոց էք ըստ բոլորին զմեր զորպէսն զոր ի խնամս և ի սէր սիրելւոյդ յանձն առնեմ։ Այսպէս դիտելով քո առ այժմ, և զսիրոյ դիրդ և զողջութիւնդ ի մէնջ անուաղ ունելով լեր ողջ ի Տէր։ և զօրացեալ նովաւ և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ ի կարողացուցանել զքեզ յամենայնի առ ի ընդդիմակալել ամենայն հողմաբեր յարուցմանց թշնամեացն ամէն։

Ի ՌՄԾԱ թուոջս և ի սեպտեմբերի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՄՂԲ. Թուղթ ի Թիֆլիզ առ Պետր Իվանիչ Կաւալենսկին:

Ցորմէ բազում սիրով և տենչմամբ նուիրեսցի բարեբաշխ ողջոյնն Քրիստոսական՝ հանդերձ երկնաւոր և զօրացուցիչ օրհնութեամբ նորին և գերահրաշ շնորհօք նոյնակերտի սուրբ տեղւոյս, մեծապատիւ քաղաքապետիդ և ամենախոհեմ կառավարչիդ պարոն Պետր Իվանիչ բարձրաստիճան ղուպեռնաթորիդ, որում և եղիցի ի Տէր խնդալ։

Ի ձեռն սոյն օրհնամատոյց նամակի գիտութիւն լիցի ձերդ գերազանցութեան։ Զի ի հոկտեմբերի 13, գրեալ թուղթ ձերոյ յարգութեան ընկալեալ ի թղթաբերացն եկելոց յայսկոյս սակս սքանչելագործ Ջրոյն սրբոյն Ցակոբայ մեծի հայրապետին, գիտացաք զառաւելութիւն սիրոյ անխարդախ սրտի ձերոյ դէպ ի սուրբ Աթոռս վնասակիր, և ի յանձն մեր վշտալիր, որոց աղագաւ մեծապէս ուրախացեալ շնորհակալութեամբ հանդերձ զաղօթս առ Տէր վերառաքեցաք սակս երկարութեան կենաց նորին կայսերական մեծութեան և վասն բարեկաջողութեան զերադնիւ սիրելւոյդ մերոյ։ Բայց զոր գրէ մեծութիւն ձեր՝ յերկար միջոցի չընկալնուլն զթուղթ ի մէնջ, և այլն, սա այդ ծանիցէ գերազանցութիւն ձեր, զի ոչ եթէ ի մոռացմանէ է, և կամ ի նուաղութենէ սիրոյ, որ մի լիցի. այլ ի պակասութենէ երթևեկաց, ըստ որում ոչ պատահին մեզ այնպիսի հաւատարիմ անձինք, որովք կարող լիցուք զպարտաւորական շնորհակալութիւն մեր և գոհունակութիւն օրհնութեամբ մատուցանել առաջի մեծութեան ձերոյ, որպէս ի գալն երկուց Աբրահամ եպիսկոպոսացն այտի առ մեզ, և ի պատմելն զամենայն բարիբարութեանց ձերոց ցուցելոց ինքեանց, վաղվաղակի թէև՝ փութացաք ՚ի գրութիւն, ի յայտնել զմերս բաւականութիւն սրտի. սակայն առ ի չգոյէ ուղևորաց աստի այդր, մնացին այնոքիկ թուղթք ցարդ առ մեզ, զոր թէպէտև կամեցաք ընդ սոյն գրոյս առաքել առ ձեզ, ի ստուգել զմեր այս բան, բայց յոչ տալ լսելեաց ձերոց զտաղտկութիւն, զանց արարաք, և զայս օրհնութեան և սիրոյ թուղթս նմանապէս գրեալ վերստին ձեռամբ թղթաբեր քահանային յղեցաք առ մեծութիւն ձեր, կատարելով միանգամայն և զամենայն զխնդիրս ձեր, զորս ունիք գիտել ի թղթաբերաց։ Իսկ զորպիսութենէ սրբոյ Աթոռոյս և մեր, զոր կամի գիտել սիրելիդ մեր, այսչափ ինչ գրեմք, զի տակաւին չկարացաք գտանել զայնպիսի արդարակորով և ճշմարտասէր ոք, որ զեղելութիւնսն և զանցսըն և զարարս նախանձոտաց ծանուցեալ ուղղութեամբ արդարադատ կայսերն մեծի, շարժէր զամենողորմ սիրտ նորին ի քննել զճշմարիտն, և ազատել զինքն ի խղճէ, միանգամայն և զմեզ և զսուրբ Աթոռս ի տառապանաց, զորս կրեմ ի բազմավրդով չարասիրաց։ Ուստի՝ մնամք մեծի ողորմութեան երկնաւորին, և սպասեմք այցելութեան Տեառըն։ Զայսքանս համառօտիւ գիտացեալ այժմ աստէն, և զկատարեալ բարեկամութիւն ձեր ի սրբոյ Աթոռոյս և ի մէնջ աննուազելի արարեալ՝ գրելով և զցանկալի առողջութիւն ձեր, որում բաղձանք յաւէտ, ողջ լեր ի Տէր և պահպանեցեալ ամենազօր աջով նորին ի յուրախութիւն սրտի մերում, Ամէն։

Ի հոկտեմբերի ... 1802. ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՄԴԹ. *Ի Հաշտարխան առ Սիմոն Սէրզէլիչն։*

Ցորմէ ժամանեցի թուղթ սիրոյ, յիսուսածիր ողջունի, երկնաւոր օրհնութեան և խաղաղութեան, հանդերձ շնորհիւ՝ Աստուածաէջ սուրբ տեղւոյս՝ ի վերայ ընտիր սիրելւոյդ մերոյ, և հաւատարիմ զաւակիդ սրբոյ Աթոռոյս՝ գերազնիւ՝ աղայ Սիմոն Սէրգէլիչիդ։ Եւ Աստուածապահ տանդ և բնակութեանդ, և Քրիստոսիւ զօրացեալ ընտանեացդ, ազգայնոցդ, և ամենայն բարեկամացդ, որոց և եղիցի ի տէր խնդալ բազում բարութեամբ։ Որում և գիտութիւն լիցի, զի ի նոյեմբերի ամսոյս 20. զսիրոյ և զհարազատութեան գիրդ ընկալեալ՝ գիտացաք զգրեցեալսդ, և զմեծագոյն բարեկամութիւնդ, և զորդիական ջերմեռանդութիւնդ, զորս ունիս առ շնորհատու ծնօղս քո, և առ մերս հոգեւոր հայրութիւն։ Վասնորոյ և օրհնեցաք զսիրելիդ մեր, զոր տէր օրհնեսցէ, խաղաղական կենօք պահեալ՝ զօրացուսցէ՝ հանդերձ բոլոր ազնուական ձերայնովքն։ Եւ վասն թղթաբերին, զոր գրես, թղթաբերն չէր եկեալ, այլ այլոյ ձեռամբ զթուղթն յղեալ, և ինքն մնացեալ, գրեցաք, զի եկեսցէ, և ի գալն, ի սէր սիրելւոյդ սիրով ընկալեալ՝ ունիմք շահել, և զմարդասիրութիւն ցուցանել, յորոյ կողմանէ այսպէս գիտացեալ՝ լեր միամիտ։ Իսկ զսրբոյ Աթոռոյս և զմեծին Պօլսոյ որպիսութիւնք և անցքըն, ըստ որում իբրև զճշմարիտ բարեկամ ունիս ուրախանալ, սմին իրի գրեմ ահա, զի ուրախացեալ ծանիցես զճշմարտութիւն աստուածային, որ ոչ երբէք ծածկի ընդ խաւարաւ ստութեան, այլ ճառագայթարձակ փայլի յիւրաքանչիւր ժամու և ժամանակի, որպէս զարդիս ի Պօլիս մեծապէս յայտնեալ զամօթի եհար զայնոսիկ, որք ի ձեռն ստութեան և մարդկային հնարից ջանային ունայնացուցանել զիրաւունս մեր։ Քանզի՝ մինչ յանցեալսն եկին ուխտաւորք ի սուրբ Աթոռս, ի Պօլսոյ և այլ և այլ կողմանց, և բարի աչօք իւրեանց և ականջովք տեսին և լուան, և գիտացին, որ սուտ են ամենայն բանքն, զորս ասեն զմէնջ, և գնացեալ յաշխարհ իւրեանց, ծանուցին և քարոզեցին ամենեցուն, զճշմարիտն և զուղիղն. վասնորոյ և իշխանքն Պօլսոյ խոկալով զշէնութենէ սրբոյ Աթոռոյս մինչև ութըն անգամ զխնդիրս են մատուցեալ արքային վասն հաստատութեան և անփոփոխութեան մերոյ. (և յայտնեալ՝ թէ զլուսաւորչահիմն զԱթոռս ոչ կամիմք քակել, և զանփոփոխելի հայրապետութիւն ազգիս ևս ընդ փոփոխութեամբ արկանել) և մինչև Գրիգոր Խամսեցի չպատրիարգն խափանեալ է, և չէ թողեալ յառաջ ընթանալ խնդրոց իշխանաց և հասարակութեան նոցին, ապա՝ ի յիններորդ անգամն զինքենէ զնոյն պատրիարգէն զանգատս բարձրացուցեալ առ ապարանս Արքայի՝ ընկալեալ են զհրաման ի դրանէ թագաւորին՝ աքսորեալ զնա ինքն զչպատրիարգն Պօլսոյ Դրիգոր ի սուրբ Աթոռս հանդերձ Դանիէլիւ, և զառաջին պատրիարգն իւրեանց զՅովհաննէս արքեպիսկոպոսն տանիլ, և անդ պատրիարգ վերահաստատել։ Որպէս զայսոսիկ զամենայն յատուկ թաթարաւ և սուրհանդակաւ ծանուցեալ էին մեզ ի Պօլսոյ աւետատու լինելով։ Այժմ սպասեմք մեք ֆէրմանացն, որք նորապէս տրին մեզ ի թագաւորէն՝ ըստ խնդրոյ ժողովրդոց, և գալստեան Գրիգոր Խամսեցւոյն։ Բայց մեք յառաջ քան զբռնութեամբ և կապանօք բերելն զԴանիէլն առ մեզ, յարգանօք մարդ առաքեալ առ նա ինքն Դանիէլն, հրաւիրեցաք ի բաց դնել զհակառակութիւն, և զկամապաշտութիւն, և հնազանդիլ Աստուածային կամաց և մարդկային հաճութեանց, և գալ ի սուրբ Աթոռս, և խաղաղութեամբ մնալ աստ, տեսցուք թէ զինչ է պատասխանելոց, զի տակաւին գնացողքն չեն վերադարձեալ անտի։ Արդ ահա ամենայն ընտրութիւնք և դատողութիւնք մարդկան ունայնացեալք՝ Աստուածայինն յաջողեցաւ, զի ոչ ոք կարէ Աստուածամարտ գտանիլ։ Ուրեմն՝ տացէ տէր, որպէս ժողովուրդք Պօլսոյ ծանուցեալ զճշմարտութիւն՝ ջատագով գտան նմին, նոյնպէս և ժողովուրդքն տեղւոյդ շնորհիւ՝ նորին, և աղօթիւք սուրբ Լուսաւորչին դարձցին ի ծանօթութիւն ճշմարտութեան, և գիտասցեն թէ զինչ է ճշմարտութիւն, և մի անգիտութեամբ իբրև խուժ և դուժ խուժան յարձակիլ անընտրողաբար ի վերայ։ Եւ մեք աղօթեմք, տալ զօրութիւն և կարողութիւն հարազատիցն սրբոյ Աթոռոյս ճշմարտասիրաց և խոհականաց, և թիւրելոցն յուղիղ շաւղաց և ի հետոց, և թմրեալ յամառելոցն ի կամս իւրեանց՝ զգաստութիւն և

ղուղղութիւն։ Զայսքանս առ այժմ համառօտիւ գլխացեալ, և զսիրով թուղթդ ի մէնջ անպակաս արարեալ ողջ լեր ի տէր, և զօրացեալ նովաւ, և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ, և ընդ քոյսդ, Ամէն։

Հայրական սիրով զողջոյն և զօրհնութիւն նուիրեմ սիրեցեալ որդւոյն մերոյ աղայ Աւիտիկին, և Քրիստոսիւ զօրացեալ և զարգացեալ որդւոց և զաւակաց ձերոց, և նորա, զորս և տեառն ամենակալի յանձն արարեալ ցանկամ ի տէր զօրացման նոցին և յառաջադիմութեան։

Յ. *Թուղթ ի Թիֆլիզ առ Բաստամենց պարոն Ստեփաննոսն, սակաւ մի յանդիմանութիւն յաղագս թուղթ չգրելոյն, եւ ծանուցումն զանցից եւ զիրակութեանց Դանիէլին։*

Եւ ընդ ամենառատ օրհնութեանս Աստուածայնոյ գիտութիւն լիցի բարեպաշտութեան քում։ Զի հոգեծնունդ սիրելի որդեակքըն մեր՝ և հարազատ զաւակունքն սրբոյ Աթոռոյս՝ երկոքին Աբրահամ շնորհունակ եպիսկոպոսունքն մինչ խաղաղութեամբ դարձ արարեալ այտի՝ եկին՝ ժամանեցին անվտանգ ի սուրբ Աթոռս, նոքա ի սիրելւոյդ գրեցեալ զերկոսին թուղթսն՝ մատուցին մեզ, զորս և մեք ընթերցեալ՝ իմացաք զեռափափագ ջերմեռանդ սէրդ և հարազատութիւնսդ առ մեզ. և թղթաբերքն ես բերան առ բերան պատմեցին զամենայն անցս և զորպիսութիւնս քաղաքիդ և մերազնեալ ժողովրդոց, ես և զսիրելւոյդ բազմապատիկ հաւատարմութիւնսն, և զհարազատ որդիաբար հոգունակութիւնսն և զմտերմօրէն ջատագովութիւնսն առ սուրբ Աթոռս և մեր։ Ընդ որս և մեր շնորհակալեալ մեծապէս դազնուականութենէ քումմէ՝ օրհնեցաք զքեզ լիագոյն օրհնութեամբ։ Զոր Տէր օրհնեսցէ, և փրկեսցէ յամենայն չարեաց և ի փորձանաց հանդերձ համայն օրհնեալ ընտանեօք քովք, և ամենայն բանից և գործոց քոց զբարի յաջողումն շնորհեսցէ։ Արդ՝ յետ գալոյն առ մեզ վերոյիշեալ վարդապետաց մերոց, որ ահա մինչև ցարդ բազում աւուրք անցից, վերստին այլ ևս մէկ համբաւ չիմացաք դտեղւոյդ և զձէնջ, զի կամ ի սիրելւոյդ, և կամ յայլ հաւատարմաց մերոց գիր ինչ ոչ ստացաք, զի իմանայաք թէ զիարդ կեայք, և զինչ առնէք, և կամ զորպիսի հոգս քարշել ունիք վասն լուսածին մօրս ձերոյ սրբոյ Աթոռոյս՝ և մեր իսկ։ Եւ թէպէտ մեք ևս յայսքան ընդարձակ միջոցի չկարացաք զթուղթ գրել առ ձեզ ի պատճառս լողնազան հոգոց և ցաւոց և վարանմանց մերոց, բայց մերս որպիսութիւն ահա յայտնի է ձեզ՝ որ խեղճալի սուրբ Աթոռս մեր՝ անարատ հարսնս լուսոյ՝ այսպէս յերեսի վերայ անկեալ կայ, և յամենայն կողմանց ևս զաղէտս և զվտանգս և զանպատուութիւնս ընդունելով՝ օրըստօրէ խրթնանայ և անչքանայ ի գերագարդ վայելչութենէ, և մեք այսպէս զանազան տուայտանօք և վնասակրութեամբք աւերիմք և քայքայիմք։ Քանզի՝ անխիղճ Դանիէլն՝ մատնելով զմեզ ի ձեռս այլազգեաց հեռաւորաց և մերձաւորաց՝ կամի բոլորովին կեր և կուր առնել նոցա. վասն զի՝ երբեմն աստ առ ընթեր մեր եղեալ օտարազգէից մատնէ զմեզ, երբեմն Օսմանցւոց վաճառէ, և մերթ ևս ի ձեռս Քրիստոնէից մատնէ, որպէս և քաջ գիտէք, վասն այն և մեք ոչ երկարեմք և պարզարանեմք աստէն։ Եւ այսպէս ի չորից կողմանց աշխարհի զխնդրակս և զվնասիչս և զկեղեքիչս յարուցանէ ի վերայ սրբոյ Տանս և մեր և չգիտեմք թէ որոց ջուղապ տամք, և զորոց զցաւսն ողբամք։ Իսկ ի ներկայս ևս միջնորդութեամբ մովպետին Բայազտոյ՝ թուղթ էր գրեալ՝ և մարդիկ էր առաքեալ առ Փիրղուլի խան սարտարն Պարսից՝ (որ նստեալ կայ ի Նախիջեան,) և խոստացեալ էր նմա՝ յիւրաքանչիւր տարւոջ զհազար թուման հարկ տալ Շահին, և զհազար թուման ինքեան սարտարին, զի թերևս գայցէ և նստցի աստ։ Զոր ազդեալ էին մեզ թղթով՝ ոմանք գործակալք սարդարին, իշխօղն մեր ևս իմացաւ։ Ապա՝ իբրև նա ինքն իշխօղն մեր հնազանդութիւն ցուցանելով առ Շահն, զիւր տարեկան հարկն առաքէր, մեք ևս գիտութեամբ և հրամանաւ նորին թուղթ գրեցաք առ յիշեալ սարտարն յաղագս շնորհաւորութեան գալստեանն, և զխաթրն հարցանելոյ, և այնու թղթով ի տեղւոյդ եկեալ Տաթևացի Աբրահամ վարդապետն առաքեցաք, որ տա-

կաւին ոչ է դարձեալ առ մեզ։ Այսքան ցաւոց և հողոց և տարակուսանաց միջի կամք պաշարեալ, և չընկալնում. ուստեքէ ղօգնութիւն ձեռնտուութեան, և զդիւրութիւն մխիթարութեան։ Մէկ փարայ արդիւնք ոչ լինի մեզ, բայց զեյսն ունիմք տասնապատիկ առաւել. զի երթևեկքն այլազգեաց՝ միշտ անպակաս են ի սրբոյ Աթոռոյս և մերձակայ գիւղօրքն մեր ամենևին ոչ դալով զպակասութեանց մերոց՝ ըստ բնական բարուց իւրեանց՝ ունին պահանջել ի մէնջ զսովորական պահանջելիս իւրեանց։ Որք և յերկար ժամանակի ղոմն երևելի Տաճիկ հանդերձ քանի մարդկամբ իւրով բերդապահս կացուցին ի մէջ պարսպիս մերում, որոց աղագաւ ես ոչ սակաւ խարճս և ծախք եղեն ի մէնջ։ Ի ներկայս՝ թէպէտ ելեալ գնաց աստի այն երևելի Տաճիկն, բայց ի մարդկանց նորին ոմանք դեռ ևս աստ մնան հրամանաւ իշխողին, և թէ ինչ դիտմամբ այսպէս ունին սոքա զպահապանս կացուցանել ի վերայ մեր, ոչ իմանամք. Տէր գիտէ միտս սոցա։ Եւ արդ՝ այսպէս յամենուստ կուսէ՝ թէ ներքուստ և թէ արտաքուստ՝ տարակուսիմք և վարանիմք և նեղիմք և վնասիմք, և դցաւս մեր ումեք չկարողանամք ծանուցանել. և այսպիսի յոգնավարան տարակուսանս մեր՝ կամք մնամք ապաստան ոչ յայլ ոք, եթէ ոչ՝ ի բազմազեղ ողորմութիւն Աստուծոյ, զի ըստ Մարգարէին բանի՝ անիծեալ է՝ որ դիցէ ի մարդ զյոյս իւր։ Վասնորոյ և մեք բնաւին զյոյս մեր առ նա ինքն բարեգութն Աստուած եդեալ, նմա ակնկալեալ սպասեմք՝ ողորմութիւն և այցելութիւն առնել իւրաէջ սրբոյ Տանս և մեզ նեղելոցս և վշտացելոցս։ Այլ որովհետև դուք օրհնեալքդ էք մեզ սիրելիք, և հաւատարիմ. բարեկամք և սրտացաւք, և երկար միջոց էանց՝ որ թուղթ չընկալաք ի ձէնջ՝ զի իմանայաք ղողջունէ ձերմէ, և զինչ հոգս քարշելոյն ձեր վասն իրաց մերոց, վասն այնորիկ այժմ փոյթ կալեալ գրեցաք ղայս թուղթ օրհնութեան առ ընտիր սիրելիդ, որով և զանցս և զօրպիսութիւնս մեր ծանուցաք. զի դու օրհնեալդ ես զքաղաքիդ և զձեր որպիսութիւնսն մեզ գրեալ ծանուսցես պատասխանեաւ թղթոյս։ Այլ և խնդրեմք յԱղնուոյդ, զի որպէս մինչև ցարդ սրտական հաւատարմութեամբ հոգացողես եղեալ վասն մեր և սրբոյ Աթոռոյս, նոյնպէս և յայսմհետէ յամենայն սրտէ հոգատար լիցիս, և ընդ այլ օրհնեալ իշխանաց քաղաքիդ ջանասցես հաստատել զօգուտն և զբարին սրբոյ Գահիս և զմեր, և աղատել զմեզ ի ձեռաց խռովասիրաց և յաչաղկոտաց, և երբեմն ևս սիրադրութեամբ մխիթարել զթախծեալ սիրտ մեր կամեսցես։ Որովք ունիս ստանալ զմեծ վարձս յԱստուծոյ, զհոգեբտած շնորհս ի սրբոյ իջման տեղւոյս Քրիստոսի, և ղօրհնութիւնս ի մէնջ։ Ողջ լեր ի Տէր։ Ամէն։

Գրեցաւ յամի Տեառն 1802. և ի սեպտեմբերի... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

Բազմաւ սիրով և մեծազօր շնորհիւ սրբոյ Աթոռոյս՝ ողջոյն և օրհնութիւն առաքեմք սրբանուէր քահանայից և բարեպաշտ իշխանաց՝ այնոցիկ՝ որք որդիական սիրով օղտախոհք են առ լուսատու մայրս իւրեանց, և ղհետ խաղաղութեան և սիրոյ ընթանալով հեռի են ի խռովութեանց և ի հետևողաց նոցին, և հաւատարիմք են առ մեզ։ Զորս և յանձնեմք ի խնամս և ի գթութիւնս արարչին՝ կալ մնալ խաղաղութեամբ և բարօրութեամբ։

ՅԱ. Առ տէր Գէորգն ի յԱմիդ։

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ՝ գիտութիւն լիցի սիրելւոյդ մերում. զի բարեբողբոջ որդին ձեր և հոգևոր զաւակն սրբոյ Աթոռոյս, և մեր, տիրացու Յովհաննէսն խաղաղութեամբ և անվնաս եկեալ ի սուրբ Աթոռս, և զԱստուածաէջ սուրբ տեղիս և զայլ սրբութիւնսն և սրբոց մասունսն համբուրեալ, և զախտս սրտի իւրոյ և զփափաքն լցուցեալ և ի մէնջ ևս զսէր և զքաղցրութիւն վայելեալ, և զհոգևկան նուէրս ձեր ևս՝ որ է երեք զոյուշ իբր աջահամբոյր ի նշան սիրոյ սրտի ձերոյ մեզ մատուցեալ, և զգերազօր շնորհս Աստուածաբնակ սուրբ Աթոռոյս ընկալեալ, վերադարձաւ ահա կրկին առ ձեզ։ Ընդ որ և մեք զայս թուղթ սիրոյ և օրհնութեան առ վաղեմնական և նախածանօթ սիրելիդ իմ. գրել բարեպատշաճ և արժան գտեալ ի հարցանել ղողջութենէդ և զորպիսութեանցդ, և ի ցուցանել զմեզ գոլ անմոռաց սիրոյդ, զոր ընկալեալ վայելեալ եմք։ Ուստի և պա-

տուիրեմք սիրով, հաստատուն կալ ի նոյնն, և անվերջանալի մնալ ի յորդիութենէ սրբոյ Գահիս, և յամենայնի ջատագով ճշմարտութեան, և գերաշուք անուան սորին, և հայրապետական պատուոյն լինել. զի բազմասցին քեզ վարձք որպէս ի յերկինս, նոյնպէս և ի յերկրի։ Զայլ որպիսութիւնսն մեր և սրբոյ Աթոռոյս սիրելի որդին մեր և ձեր ունի պատմել ձեզ, զորս մեք աւելորդ վարկաք գրել զի է գիր կենդանի և բանական։ Այսչափս առ. այժմ աստէն գիտացեալ, և զսիրոյ դիրդ ի մէնջ անպակաս արարեալ՝ լեր ողջ ի տէր, և զօրացեալ նովաւ, և շնորհք սրբոյ Աթոռոյս մեծի՝ եղիցի ընդ քեզ և ընդ քոյալինսն, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուաջս, և ի նոկտեմբերի ԺԵ։ Ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՅԲ. *Թուղթ ի Սալմաստ առ Մելիք Սաֆարն, ծանուցումն զանցից մերոց:*

Եւ ընդ ամենառատ օրհնութեանս Աստուածայնոյ՝ գիտասջիր ընտիր սիրելիդ մեր և օգտախոհ որդի սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի յանցելում ամին իբրև առատաբաշխ շնորհիւ ամենասրբոյ հոգւոյն օծաք յայս Աթոռ հայրապետութեան օրհնեցելոյ Ազգիս հայոց և Աստուածեան սրբոյ Գահիս, գրեցաք զկոնդակ անդրանիկ օրհնութեան ի վերայ մերազնէից կողմանցդ, ժառանգեցուցանելով ձեզ զշնորհս և զօրհնութիւնս, և ծանուցանելով զանցս և զորպիսութիւնս մեր։ Կամէաք թէպէտ յանժամ մասնաւորապէս ևս զյատուկ յատուկ օրհնութեան թուղթս գրել առ քեզապիսի սիրելիս և հաւատարիմ բարեկամս մեր, սակայն չունէաք տեղեկութիւն զձէնջ, և չգիտէաք թէ ուր ուրեք բնակիք, և յինչ կացութեան կայք, վասն այնորիկ արգելեցաք։ Բայց պէտք էր, որ սիրելիքդ փոյթ տանէիք և գրէիք և ծանուցանէիք մեզ զհամբաւ բարեկեցիկ ողջունի և այլ անցից և որպիսութեանց ձերոց, զորս և մեք իմացեալ՝ ըստ այնմ գրէաք առ. ձեզ զբանս օրհնութեան։ Դուք ոչինչ գրեցիք ցայսքան երկարագոյն միջոցի, մեք ևս թէ որքան զանազանակերպ հոգօք և ցաւօք պաշարեցեալ կամք, յայտնի է ձեզ. փոքր ի շատէ. քանզի՝ արք ախտամոլք և թշնամիք արդարութեան՝ առ. նախանձու ատելութեան զմեզ այսպէս տաղտապեցուցանեն և վեր ի վայր առնեն, և զսուրբ Աթոռս ևս այսպէս աւերեն և քայքայեն. և զի հարազատ սիրելին և բարեկամն յայսպիսի ժամանակի լաւապէս ունի երեւիլ, սիրելիքդ՝ թերևս զայլ ինչ օգնութիւն ոչ կարէիք ցուցանել առ. սուրբ Աթոռս և առ. մեզ, բայց սիրոյ և բարեկամութեան թղթովք կարէիք կարեկիցք և մխիթարիչք մեզ լինել, բայց ո՛չ եղէք, ինչ և իցէ՝ դուք ողջ կացջիք։ Իսկ նարդենիս սիրելի և հոգևոր որդին մեր՝ Աբրահամ գերզգօն եպիսկոպոսն՝ ի Խօյու վերադարձեալ առ. մեզ, պատմեաց բերանով, թէ դու սիրելիդ և այլ քեզապիսի իշխանք եկեալ էք անդ ի Խօյ քաղաքն, և զբազում սէր և ընդունելութիւն ցուցեալ ինքեան։ Որով և մեք զձեր հարազատութիւն առ. սուրբ Աթոռս և առ. մեզ իմացաք, և շնորհակալութեամբ օրհնեցաք զքեզ և զհամայն Քրիստոսասէր օրհնեալ ժողովուրդըս քաղաքիդ ձեր։ Վասնորոյ և զհասարակական կոնդակ մի օրհնութեան առ. նոսա գրեալ, (որպէս տեսանելոց ես.) զայս օրհնաձիր թուղթ ևս առ. ազնիւ սիրելիդ գրեցաք, կամելով յատկապէս ժառանգեցուցանել քեզ զշնորհս սրբոյ Իջման տեղւոյս Քրիստոսի, և զօրհնութիւնս մեր։ Ապաքէն՝ Տէր օրհնեսցէ զքեզ և զօրացուսցէ, ի փորձութեանց ազատ կացուսցէ, և պահեսցէ միշտ ընդ թևօք բարեգթութեան իւրոյ հանդերձ համայն բարետոհմ ընտանեօք քովք, և զամենայն բանս և ըզգործս քո արդիւնաւորս և շահեկանս արասցէ։ Արդ գրեմք սիրելւոյդ, զի ի ճշմարիտ սէրդ և ի հաւատարմութիւնդ առ. լուսածին մայրս քո և առ. մեզ՝ յարամնասցես հաստատուն, և սիրանիշ թղթովդ երբեմնապէս մխիթարեսցես զմեզ։ Եւ զի երևելի իշխան ես առ. մերազնեայսն կողմանցդ, սիրելով յորդորեսցես զդոսա մնալ ի յորդիական հպատակութեան առ. սուրբ Գահս և առ. գահակալս սորա. քանզի՝ և տեսանէք և իմանայք թէ որպէս արք նախանձոտք՝ ինքեանք թիւրեալք և խոտորեալք, կամին զայլս ևս խոտորեցուցանել ի թիւր կամս իւրեանց։ Վասնորոյ պարտիք զգուշանալ յայնպիսեացն խռովասիրաց, և եթէ ի հեստելոյն ի սրբոյ Աթոռոյս և ի նզովելոյն ի յԱստուծոյ՝ ի խռովայոյզ Դա-

նիէլէն իւրապիսի վրդովինչք զալցեն ի մէջ ձեր և կամեսցեն թղթովք և բանիւք ղձեզ խռովեցուցանել, մի տաջիք ղտեղի, այլ բացէ ի բաց հեռասջիք ի նոցունց, և ատելով ատեսջիք զնոսա իբրև զաթոռաքակս և եղծիչս և քակտիչս օրինաց, և հալածելով հալածեսջիք զայնպիսի վրդովիչսն ի ձէնջ, և եթէ կարելի է, կապանօք առաքեսջիք զնա առ մեզ գիտութեամբ և հրամանաւ մեծապատիւ սարտարին, որ նա ես տեղեակ է այս անցից մերոց։ Նաև կացջիք մնասջիք հաստարմատ ի Լուսաւորչաւանդ սուրբ կրօնս բարեպաշտութեան և երկիւղածութեան ձերոյ և ի բարեմաօրէն որդիութիւն ձեր՝ առ սուրբ Գահս և առ հոգևոր հայրութիւնս մեր։ Որովք արժանանալոց էք վարձուց մեծաց յԱստուծոյ, և հոգետած շնորհաց սրբոյ Գահիս, և արդիւնական օրհնութեանց սրբոյ Լուսաւորչին և մերոյ։ Իսկ զայլ պատուէրս մեր ի լիշեալ կոնդակէն մերմէ ղիտելով, ողջ լեր ի Տէր։

Գրեցաւ ի ՌՄԾԱ. թուոջս, և ի հոկտեմբերի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՃԳ. *Թուղթ ի Բաքու, առ Գիօրգինի որդի պարոն Աբրահամ զանձապետն սրբոյ Աթոռոյս ի պատասխանի թղթոյն գրեցելոյ յաղագս գանձանակաղրամին եւ զաւազանին եւ սկհոյն եւ այլ իրաց տուեցելոց Աւետիս վարդապետին հասուցանել ի սուրբ Աթոռս։*

Եւ ընդ սիրոյ և օրհնութեան Աստուածայնոյ՝ գիտասջիր սիրելիդ մեր ի Տէր և օղտաջան որդի սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի յայսմ ամի ի սեպտեմբերի մուտն գրեցեալ սիրալալտ թուղթ քո էհաս առ մեզ ի հոկտեմբերի ամսոյս 25. զոր ընթերցեալ իմացաք զհարազատօրէն դրուածսդ։ Որովք ծանուցեալ էիր զունելգ առ լուսատու ծնողս քո սուրբ Աթոռս և առ մեզ զեռափափագ ջերմեռանդն սէր և զկատարեալ հաւատարմութիւն, որև ըստ նոցունց սիրոյդ և մտերմութեանդ ի հասանելն առ քեզ յանցելում ամին անդրանիկ օրհնութեան կոնդակին մերոյ, մեծաւ սիրով և յարգանօք ընդունելով զնոյն, բարեպատեհ փառաւորութեամբ ընթեռնուլ տուեալ ես ի սուրբ Աստուածածնի եկեղեցւոջդ ձերում ի լուր ամենից բարեպաշտ ժողովրդոց, և հետևաբար յիշատակեալ տուեալ զանուն մեր ի սուրբ Պատարագն։ Արդարև կատարեալ բարեպաշտութեան նշանակք, և ճշմարիտ սիրոյ ներգործութիւնք, և յատուկ բարեկամութեան ցոյցք են՝ զորս արարեալ ես։ Որոց աղագաւ և մեք առստացաք զգովութիւն բազմահոգ սրտի մերում տապացելոյ եռանդեամբք ազգի ազգի նեղութեանց և ցաւոց՝ զորս կրեմք ի սուտակասպաս և ի մարդախոշոշ արանց. և մեծաւ դոհունակութեամբ շնորհակալեալ զսիրելւոյդ հաւատարմէ՝ օրհնեցաք զքեզ լիաբերան օրհնութեամբ։ Զոր Տէր օրհնեսցէ և զօրացուսցէ, ազատս կացուսցէ ի հոգեկան և ի մարմնական փորձութեանց՝ հանդերձ բնաւիւք ընտանօքն ընտանեօք քովք, և միշտ տարածեալ ունելով ի վերայ ձեր զթես արարչական խընամոց իւրոց՝ պահեսցէ ի խաղաղութեան և ի փառազուարճ ճոխութեան, և զամենայն բանս և զգործս քո յաջողեսցէ առ ի բարին։ Իսկ և՝ ծանուցեալ էիր՝ թէ առ ժամանակաւ Տեառն Ղուկասու հոգելոյս հայրապետին՝ մինչ Աւետիք վարդապետն եկեալ է յայդր ի գործ նուիրակութեան, դու օրհնեալդ տուեալ իցես նմա զերեսուն թուման դրամս յարդեանց գանձանակին սրբոյ Աթոռոյս, Դ. թուման ես հոգեբաժնական տուրս, ընդ որս և զմի հատ արծաթեալ Սկիհ՝ մէջն ոսկեջրեալ՝ հասանելի ի Լիմ Անապատն, զմէկ հատ ես արծաթեալ գաւազան ոսկեզօծ, ի հինդ կտորից՝ յանուն լիշեալ հայրապետին յիշատակագրեալ, և զմէկ հատ փուրուրար ժամարարի ի դիպակ ճոթից. զորոց և հարցեալ էիր, զի եթէ իցեն աստ ի սուրբ Աթոռս՝ գրեսցուք քեզ. առ որ այսպէս գիտասջիր. զի ահա Աւետիք վարդապետն ի յաւարտելն զգործ իւր ի կողմունսդ՝ ոչ եկն ի սուրբ Աթոռս, այլ ի Հաշտարխան էանց՝ որպէս և գիտէք, և Յովսէփ կաթուղիկոսն մինչ յատկացաւ ի կաթուղիկոսութիւն և եկեալ ի Թիֆլիզ վախճանեցաւ, զկահս և զկարասիս նորա բերել ետուք ի սուրբ Աթոռս և Աւետիք վարդապետն ես եկն աստ. այժմ խօսեցեալ մեր ընդ նմա, այնպէս պատասխանեաց մեզ՝ իբր թէ ի զսիրելւոյդ ինքեան տուեալ դրամսն և զայլ իրսն հասուցեալ իցէ առ Յով-

սէփ կաթուղիկոսն, և մեք մինչ զկալսն նորա ստացաք, վասնորոյ ղքոյդ լինել երեսուն և Դ թուման զրամսն ես ի սուրբ Աթոռս և առ մեզ հասեալ համարեցաք, իսկ զարծաթեալ գաւազանն զոր լինես սիրելիդ՝ թէպէտ պարզապէս ոչ գիտեմք, բայց երկու հատ գաւազան եւ ի կալից հանգուցեալ հայրապետին Յովսէփայ. այնպէս կարծեմք, թէ այնց գաւազանաց միոյն սիրելւոյդ տուեալն իցէ։ Իսկ միւս իրքն՝ այսինքն, Սկիհն և և փորուրարն ամենևին ոչ երևեցաւ մեզ, չգիտեմք թէ զինչ են եղեալ։ Այս է ստոյգն՝ զոր գրեցաք սիրելւոյդ ի գիտել և միամտիլ։ Եւ զոր ծանուցանելով սիրելիդ՝ թէ մահմետական ռազմական տոմս՝ հայերէն դուրս դրած, խնդրեալ էիր ի նմանէ զմինն յղել առ քեզ, զոր խնդիր թէպէտ յօժար էաք կատարել, բայց չիմացաք թէ այն որպիսի բան է, զի զայնպիսի ռազմական չեմք տեսեալ և կամ լուեալ։ Վասնորոյ վերստին պարզապէս ղրեսցես մեզ՝ թէ որպիսի բան է այն, և զպատկութիւնսն նորա և զայլ պարագայսն լաւագոյն ծանուսցես մեզ չուտով, զի իմասցուք և եթէ գտանիցի այնպիսի ինչ առ մեզ՝ յղեսցուք առ սիրելիդ։ Այլ և գրեալ էիր թէ ըստ օրինաց աշխարհի ամուսնացուցեալ իցես զքոյդ աներոյ որդի օրհնեալ պարոն Ղազարն. վասնորոյ ասեմք՝ թէ շնորհաւոր եղիցի հարսանիսն, աչք սիրելւոյդ ի լոյս։ Աստուած օրհնեսցէ՝ զփեսայն և զհարսն՝ որպէս օրհնեաց զՆոյ և զՆոյեմզարայ, զԱբրահամ և զՍառա, զԻսահակ և զՌեբեկա, և զայլ նոյնպիսիսն, աճեցուցեալ ծաղկեցուսցէ՝ որդւովք և դստերօք, և արասցէ յազդ մեծ՝ ի բարեկիչատակ քեզ։ Ի վերջ բանիցս պատուիրեմք սիրելւոյդ, զի նախապէս զորդիական սէրդ և զհարազատութիւնդ անպակաս և աճեցուն ունիցիս առ սուրբ Աթոռ Լուսաւոր ծնողիս քո և առ հոգևոր հայրութիւնս մեր, և յօգտաբարութեանց որ առ սա՝մի վերջասցիս։ Երկրորդաբար՝ որպէս մինչև ցարդ նոյնպէս և յայսմհետէ հեռի կացցես ի զրաբան անձանց, և զի երևելի իշխան ես ի մերազնեայսն Տեղւոյդ, և հարազատ գործակալ մեր, վասնորոյ և սիրով յորդորօզ լիցիս դոցա, չպատրիլ և չխախտիլ ի թունալի գրոց նոցին, և չտալ զտեղի սերման խռովութեան հակառակասիրացն, այլ կալ միալ անշեղ և անսպառ ի սիրոյ և ի հաւատարմութենէ առ Լուսաւորչական սուրբ Գահս և առ գահակալս սորա։ Եւ երրորդապէս՝ հոգեշահ գործոյդ զանձապետութեան՝ բարւոքաբար մուղայէթ կացցես, և արիութեամբ կատարեսցես զզոյն և զոր ինչ գանձանականն արդիւնս ժողովեալ ես, այնուքիւք դնեսցես զզաֆոան և զայլ իրս՝ զոր ինչ յաւուրս լուսահոգի հայրապետին առեալ և յղեալ ես, զայնպիսի իրս առցես՝ և հաւատարմաւ առաքեսցես ի պէտս հարկաւորութեան սրբոյ Տանս։ Եւ զորքանն զնոց նոցին և զայլ հանդամանսն գործոյդ գրեսցես մեզ ի գիտել։ Որոց ամենից բարելաւութեանցդ աղագաւ շնորհակալ լինելոց եմք մեծապէս զսիրելւոյդ, և օրհնելոց զքեզ բազմաւ օրհնութեամբ։ Առ երկուս քահանայսն ձեր զորս ծանուցեալ էիր մեզ, ահա զօգնութեան գիր գրեցաք և յղեցաք. ողջ լեր ի Տէր. Ամէն։

Դրեցաւ յամի Տեառն 1802. և ի հոկտեմբերի … ի բարձրագահ Աթոռս սուրբ Էջմիածին։

ՑԴ. *Ի Թիֆլիզ առ Զիլթակարենց Ստեփանի Կարապետն։*

Եւ ընդ սիրապարգև անդրանիկ օրհնութեան համակիս, գիտութիւն լիցի ազնիւ սիրելութեան ձերում։ Զի ի թղթոց Կարապետ շնորհափայլ եպիսկոպոսին գիտացաք զբարի զալուստդ ի քաղաքդ Աստուածապահ, միանգամայն իսկ զառաւելութիւն և զառատութիւն յորդ սիրոյ, բարեխոհ սրտի ձերոյ, զորս ունիք դէպ առ լուսածին ծնողս ձեր սուրբ Գահս Աստուածաէջ, և առ գահակալս նորին։ Ընդ որ ծանուցեալ էր իսկ նոյն Կարապետ վարդապետ հոգևոր զաւակն մեր, զմեծագոյն հաւատարմութիւնդ, և զճշմարտութեան ջատագով լինելդ և որդւոյդ օրհնութեան դհետ խաղաղութեան ազգին և շինութեան Աստուածային Տաճարիս երթալն և այնց բաղձալն և կամելն, և զայլս նոյնպիսիս, որք արդարև են ցոյցք և նշանք բարեբարոյութեան, ազնուամտութեան և աննենգութեան սրտի, ազնիւ որդւոյդ մերում սիրեցելւոյ. զորս ի գիտելս առ ընկալաք ուրախութիւն և բազում շնորհակալութեամբ օրհնեցաք զարժանիդ օրհնութեան, զոր օրհնեսցէ Տէր, ամենաբաւա-

կան օրհնութեամբ իւրով անանցանելեաւ, և պահպանեսցէ ընդ հովանեաւ խնամոց ամենազօր աջոյն իւրոյ, յառաջադէմս առնելով զքեզ յամենայնի, և քաղցր և հաճելի լաչս ամենաբարեպաշտ օգոստափառին մեծի, և բոլոր մեծամեծացն նորին ի յուրախութիւն սրտի մերում։ Արդ զայս թուղթ սիրոյ և օրհնութեան, ի նշան մերս հոգևոր հայրութեան, բարեպատշաճ դատեցաք գրել առ սիրելի որդիդ մեր վարդապետդ, որով և յորդորեմք նախ ի բաց կալ ի չարասիրաց և զամենայն ապականարար բանս նոցին ատելով ատել, և զմաքուր լսելիս քոյ խնուլ ընդդէմ ատելեաց Աստուծոյ զբարանութեանց, և երկրորդ, ի զոյն հաւատարմութեան և ի սէր որդիական պինդ և հաստատուն մնալ և օրքանզօր առաւելուլ զմեծագոյն բարեկամութիւնդ և ամենայն սրտիւ և հոգով չափ ջանալ ըստ քում կարի խափանել զչարն և բառնալ լղխռովութիւն զսերմանեալոն ի խռովալոյզ ննենգաւորաց ի յօրհնեալ և ի միամիտ ազգս մեր և զխաղաղութիւն Տեառն արմատացուցանել ի սիրտ և ի հոգի բարեպաշտից և նովիմբք յօղնութիւն ժամանել խղճալի Տանս մեծի, որ անչքանալ օրքանզօր և մեզ վշտացելոցս, որ բացի բազմազան հոգոց և զբաղանաց ներքնոց և արտաքնոց, ցաւիմք ևս ի վերայ անմիաբանութեան ազգիս մերոյ։ Թէև հարկ էր զամենայն անցսն տեղւոյս և զաբարս և զգործս հակառակացն Աստուծոյ, երկարօրէն գրել ձերումդ ազնուութեան, առ ի տեղեակ առնելոյ զձեզ այնց ամենից, այլ ի չտալ զձանձրութիւն ձեզ, զանց զնոքիմբք առնեմք, թողլով դիտել ձեզ զայնոսիկ զամենայն լիապէս ի Կարապետ վարդապետ սիրելւոյն մերմէ, զոլով նմա դիր կենդանի, կարէ տալ ձեզ զտեղեկութիւն ոչ գրեցելոցն մերոց աստէն։ Զայսչափս առ այժմ դիտացեալ և զսիրալից թուղթ քոյ ի մէնջ անպակաս արարեալ, զբելով միանդամայն զառողջութիւն ձեր, ողջ լեր ի Տէր, և զօրացեալ նովաւ և շնորհք սրբոյ տեղւոյս հրաշակերտի եղիցի քեզ օգնական և զօրավիգն. Ամէն։

Ի հոկտեմբերի ... ի 1802. յաստուածակերտ և յերկնահանդէտ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ՑԵ. Առ Իսրայէլ կաթողիկոսն ընդ Ղարաբաղու մելիքացն:

Զի՛ թէև հարկ էր մեզ ցարդ բազմադիմի սիրալիրական գրուածով ուրախ առնել զձեզ, և յայտնել զմերս առ յարդութիւն ձեր սէր, և եղբայրութիւն, այլ ի չգոյէ անդբոս ժամու և մանաւանդ ելով մեր ի յօղնապիսի պատաղմունս՝ կասեցաք, ի յարդիւնարար սիրոյ, և ի գրուածոյ յակամայս։ Այն զի՝ հարկիւ մինչ ցայժմ բրազեկ լեալ սրբոյ Աթոռոյս կողմանցս, մեր և Ազգիս, որպիսութեանցն, չունիք զպէտս անդրէն ազդեցութեանց երկարութեամբ բանից, որք բերեն զտաղտկութիւն լսելեաց։ Նաև գիտեմք զի ողջախոհ բարեմտութեամբ ձերով՝ անմեղադիրս ունելոց էք զմեզ առ այս։ Զառաջինն մինչ գրեցաք առ յարգապատիւ եղբայրութիւն ձեր, վասն իրիք հարկաւորութեան, ըստ խնդրոյ սրբազան պատրիարգին Պօլսոյ, և ի ձէնջ ընկալաք զանդրադարձն որոյ բազում յարդանօք, անտի և այսր չեղև մեզ երբեք գտանել զժամ ի փոխարինել սիրալորդոր բանից սիրելւոյդ, զորիտուրն յարգարեալ բաղձանօք։ Հանդոյն սմին ոչ եղև և դիպօղ ժամ՝ մեզ ի յուղղել զպաահակսն, որք որջացեալք կան յամենայն դարանի, և խածանել զգարշապարս մեր և ձեր, յորոց և մինն է ի Կեանջայ Նղեայ սեագլուխն, զորմէ գրեալ էիք, զոր և ունիմք ի մտի և յայտնեմք Աստուծով ի դէպ ժամու վրէժխնդիր այնպիսեաց չարաշչուկ խռովչաց, ըստ գործոց իւրեանց ի նոցունց որոց վասն յանհօգս լիցի սիրելի եղբայրդ մեր։ Արդ՝ զարդիս զայս գիտասցէ սիրելիդ մեր՝ զի մինչ կողմանցդ մելիքքն եկին ի սուրբ Աթոռս հանդերձ թղթով՝ Դօլվէթլու Իբրահիմ խանին, ի խնդրել Աբրահամ եպիսկոպոսն առաջնորդ Տաթևու հրաշալի վանիցն, ի վերադառնալն նոցին այդր, զայսքանս ի նշան մերս կատարեալ սիրոյ ի զբաղման անդ զրեցաք յարդի եղբայրութեան ձերում, յորդորելով զպատուականութիւն ձեր ի սէր և յեղբայրութիւն կալ անյեղլի, և ի գիտել և ի հարցանել զառողջութենէ և կեցութենէ ձերմէ, որոց փափագիմք յաւէտ և ցանկամք։ Իսկ կողմանցս և մեծին Պօլսոյ անցսն, համառօտիւ յայտ առնեմք աստէն. զի բարեպաշտօն իշխանքն

Պօլսոյ, խոկալով զչինութենէ և զհաստատութենէ որրոյ Աթոռոյս, միակամ հաւանութեամբ հաճեալ ընդ հայրապետութիւն մեր՝ խնդիրս են մատուցեալ մեծի արքային վասն կրկին հաստատութեան մերոյ. յորմէ և ելեալ է հրաման՝ զՅովհաննէս պատրիարգն, որ էր ի Թոխաթ աքսորեալ, վերստին տանել ի Պօլիս, և կացուցանել զպատրիարգ անդ, իսկ զԳրիգոր իբր պատրիարգն, և զԴանիէլ վարդապետն զերկոսին ևս ի սուրբ Աթոռս կապանօք յաքսորս առաքել առ մեզ, և մեք սպասեմք գալստեան նոցա, և ընկալման կրկին նոմոսացն ֆէրմանաց և բերոթին յանուն մեր. զորոց յայնժամ ես ի կատարն հասանել բանին՝ ունիմք լիապէս գրել յայնժամ, և յայտնել զառաւելութիւն սիրոյն մերոյ զոր ունիմք առ պատուական եղբայրութիւն ձեր։ Զայսքանս ի կարճոյ գիտացեալ՝ ողջ լեր ի Տէր։ Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ. թուոջս, և ի նոյեմբերի ԺԷ. յԱստուածակառոյց ի սուրբ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

62. Թուղթ ի Թիֆլիզ առ պարոն Պետր Իվանիչ Կաւալենսկին շնորհաւորութիւն վասն գալստեան. խնդիր վասն արձակման վարդապետաց, եւ բան վասն Յովհաննէս վարդապետին։

Յորմէ ժամանեսցի փրկչականն ողջոյն հանդերձ օրհնութեամբ և շնորհիւ սրբոյ տեղւոյս Աստուածաբնակի ի վերայ պատուական անձին ցանկալւոյ բարեհամբաւ և ճշմարտասէր քաջալաղթ զօրապետիդ Պարոն ‴ զանազան նշանակրիդ և ամենեցուն որք ձեր են ի տէր խնդալ։ Շնորհաւորեմք նախապէս ուրախական սրտիւ և բերկրանօք զցնծալի և զբարեբեր գալուստ ձեր ի քաղաքդ Թիֆլիզ, առ որ միշտ փափագանօք սպասէաք. տացէ տէր ի մտանելն ձեր յայդր խաղաղութիւն երկրի և երջանկութիւն ի ձեզ ապաստան եղելոցն. ցանկամք և մեք բնակեալքս յանմխիթար վայրի, վայելել զայն քաղցրութիւն, զորս առ հասարակ վայելեալ են խնամակալեալքն ի ձէնջ և ունին վայելել միշտ. և մաղթեմք մեզ փափագողացս ես բարի անուան ձերոյ և մարդասիրութեան արժանացուցանել զբարութիւնս ուրախական գրովք ձերովք, որ առաւել քան զամենայն բարիս ըղձալիք են մեզ այնոքիկ։ Եւ ապա՝ խնդրեմք խոնարհ հոգւով որպէս յառաջ քան զայս քանիցս խոնարհաբար խնդրեալ եմք ի ձերդ գերազանցութենէն, զի ձերով բարեգթութեամբ արձակել ջանասջիք զեպիսկոպոսունսն մեր որք յայսքան միջոց կան յայդր արգելեալ, երթալ ի յոտս օգոստափառ և ինքնակալ մեծի կայսերն և յայտնել զճշմարիտն, և զբաւականութիւն և զօգնութիւն խնդրել յամենաբարեպաշտ ինքնակալէն մեծէ, մեզ, որ ի զուր թարց իրաւանց բամբասիմք ի նախանձոտաց։ Որ եթէ այլ ես երկարեսցի գթութեան և ողորմութեան ժամն, քայքայլի սուրբ Տունս իսպառ, և զակնկալեալս ի ձերդ քաղցր հովանաւորութիւն ի յուսահատութիւն վերածէ, և զՅովհաննէս վարդապետդ այդ, որ ինքնահալած փախստեալ անկաւ յայդր ի Թիֆլիզ՝ առ ի վնասել զտունս այս ողորմելի և ի կեղտոտել զանուն մեր, ծանիջիք այր խռովարար և վրդովիչ քաղաքի և ազգի. քանզի յըսկզբանէ անտի ի Յովսէփայ կաթուղիկոսէն և այսր մշտապէս խռովեալ է զժողովուրդսն, և տակաւին կայ պարապեալ ի նոյնն, մեք ոչ դադարեցաք երբէք ի բարեբարբելոյ զինքն, և դա ոչ վերջացաւ և կամ սարջացաւ ի տգեղ չարժմանց իւրոց և ի չարութեանց և քանիցս զանունն ամենամեծին Աստուծոյ և զսուրբ գեղարդն նորին վկայ զղջմանն իւրոյ արարեալ, և երդուեալ ես չարաչար ի նոսա, սուտ գտաւ առ ճշմարիտն Աստուած և առ սրբութիւնսն նորին։ Ուստի ոչ միայն խռովարար պարտիք գիտել զդա, այլ և երդմնազանց, զորս ոչ երկարեմ, այլ թողում ի բազմակնիք մահսէրէ միաբանիցն գիտել, և այնու ճանաչել զհողւոյ դորին թիւրութիւն։ Ողջ լերուք ի տէր շնորհիւ կենսատու սուրբ խաչի նորին և պարծանս սրբոյ հաւատոյս մերոյ և ի մխիթարութիւն վշտապատ սրտի մերում։ Ամէն։

Ի յապրիլի 1802. ի քրիստոսակերտ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին որ ի Դաշտ Արարատեան։

ՑԷ. *Թուղթ ի Կարին, առ չորեսին իշխանս, մահտեսի Ցակոբ ամիրայն, մահտեսի Ցովանէս աղայն, խօջայ Ցովհաննէսն եւ մահտեսի խօջայ Կարապետն ծանուցումն զայլ եւ այլ բանից, եւ զգալստեանէ Դանիէլին ի սուրբ Աթոռս։*

Եւ ընդ շնորհապագև օրհնութեան նամակիս գիտասջիք իսկապէս սիրելիք մեր և լուսածնունդ որդիք սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։

Զի նոյեմբեր ամսոյս Ժ. մինչ եկն առ մեզ ախորժալուր համբաւովք Բաթր բէկ սուրհանդակն Պօլսոյ, ի քանի աւուրս պահեալ մեր զնա աստ՝ ապա վերադարձուցաք՝ և ի վերադարձուցանելն մեր զնա գրեցաք ընդ նմա զկոնդակ ի վերայ հասարակութեան օրհնեալ մերադնէից քաղաքիդ և զԹուղթս օրհնութեան առ յատկեղ սիրելիսդ։ Ցետ այնորիկ առ. ի ձէնջ առաքեցեալ պայտառ վարպետ Ներսէսն եկն ի սուրբ Աթոռս բերեալ մատոյց մեզ զուրախակցութեան Թուղթսն ձեր։

Որոց և մեք զփոխադարձսն գրեալ յատուկ յատուկ օրհնութեամբ և շնորհակալութեամբ, ծանուցաք տլնոքիւք սիրելեացդ եւ թէ որպէս Դօլվաթլու իշխօղն մեր զԹուղթ գրեաց և զերեւելի Տաճիկ ոմն առաքեաց առ Պալազտոյ Փաշայն, ընդ որում և մեք առաքեցաք զեպիսկոպոս մի հանդերձ սուրհանդական զի խելամուտ արասցեն զԽանիէլն առ ի միամտութիւն գալ ի սուրբ Աթոռս։ Զայն Թուղթսն մեր այսպէս գրեալ յանձնեցաք վարպետ Ներսիսին և ուղևորեցաք, եղեալ ընդ նմա զԹուանկչի՝ զի տարեալ անցուսցէ անվտանկ ընդ երկիւղալից տեղիս ճանապարհացն։ Որոց ի գնալն պատահեալ էին աւազակաց Թալինցւոց որք զզէնսն նոցին և զայլ իրս յափշտակեալ էին և յայնմ կիտոյ Ներսէսն փախուցեալ էր և անյայտացեալ, իսկ Թուանկչին մեր ես փախստեալ դարձեալ էր առ մեզ։

Եւ մեք իմացեալ, զքանի Թուանկչիս առաքեցաք, որք գնացեալ առեալ էին զկողոպտեցեալ իրսն ի կողոպտչացն, և զՆերսէսն ես գտեալ էին և բերեալ առ մեզ։ Զոր և մեք ահա վերստին ուղևորեցաք գալ հանդերձ առ ձեռն իւր եղեալ Թղթովքն մեր. ընդ որում և գրեցաք զայս սիրանիշ Թուղթս առ սիրելիսդ, որով և ունիմք ծանուցանել զայս զի մարդիկք են մեր և խանին զորս առաքեալ էաք ի Պալազիտ, նոքա գնացեալ առեալ էին ի փաշայէն զԴանիէլ վարդապետն, զոր և հանդերձ բոլոր մարդկամբն իւրով բերին առ մեզ. որոց մուտն ի սուրբ Աթոռս եղև յամսոյս ԻԸ. Եւ մեք առընկալաք սիրով զԴանիէլ վարդապետն, և զանցեալսն անցեալ դնելով՝ կամիմք ի պատուի պահել և շահել և մխիթարել, ինքն ես զբարեվայելուչ հպատակութիւն ցուցանելով առ մեզ՝ երևի զղջացեալ յարարմանց իւրոց. Աստուած տացէ զի կատարելապէս խաղաղութիւն լիցի ազգին և մեք գտցուք զլիալիր միամտութիւն և ապահովութիւն։

Եւ զի դուք օրհնեալքդ հարազատ որդիք գոլով սրբոյ Աթոռոյս և ընտիր սիրելիք և բարեկամք մեր, ինարկէ ուրախանալոց էք ընդ բառնալն երկպառակութեան մերոյ և տարաձայնութեան ազգին, վասն այնորիկ գրեալ ծանուցաք օրհնեցելոցդ, զի ուրախասջիք, և ջանասջիք զքաղաքդ ես կատարելապէս խաղաղացուցանել, և զամենեսին զվրդովեալսն յորդորել ի սէր սրբոյ Աթոռոյս և մեր։ Նաև խնդրեմք զի զտեղւոյդ և զՊօլսոյ համբաւսն զոր ինչ և գիտէք՝ շուտով գրեսջիք մեզ իմանալ. որոյ աղագաւ յոյժ և յոյժ շնորհակալ լինելոց եմք սիրելեացդ օրհնութեամբ։ Ողջ լերուք ի Տէր։

Գրեցաւ յամի ի ՌՄԾԱ. Թուոջս, և ի նոյեմբերի… ի սուրբ Էջմիածին։

ՑԸ. *Առ տէր Վահանի որդի պարոն Գէորգն:*

Զի ընկալեալ զԹուղթ ի սիրելւոյդ ընդ Սալիին, գիտացաք զմեծագոյն սէրդ, և զհաւատարմութիւնդ, զորս ունիս առ սուրբ Աթոռս և առ մեզ, և օրհնեցաք բազում շնորհակալութեամբ, զոր տէր օրհնեսցէ, և զօրացուսցէ, և զամենայն բանս և զգործս քո ի բարին տնօրինեալ յաջողեսցէ, և հանապազ զորին պարզ և անկեղծաւոր սիրով և մտերմութեամբ պահեսցէ ի մխիթարութիւն մեզ, և ի պարծանս անուան քոյ և հայրենի տան քո։ Բայց յառաջ քան զգալն Թղթոյդ առ

մեզ, մեք զԱբրահամ եպիսկոպոսն խանի մարդովն լցեալք առ. Դօլվաթլու փաշային, որպէս տեսեր և իմացար. պատուիրելով զոյա՝ զի փութով ծանուսցեն մեզ զբանին կերպըն, որոյ վասն և յայնչափ միջոց զեղեալ մարդդ զթղթաբերն պահեցաք աստ, զի կատարեալ պատասխանատուութեամբ դարձուցանիցաք առ ձեզ՝ այլ սակայն՝ իբրև յամեցան դոքա յայդր, և մինչև ցայժմ չընկալաք զտեղեկութիւն ինչ անցից և գործոց այդր անցելոց և եղելոց, զուցէ վասն կենադրաւ լինելոյ մօր փաշային իցէ այնչափ յամեցումն դոցին ըստ գրելոյդ մեզ զմահուանէ նորին, վասնորոյ անա՛ այսու թղթով մերով դարձուցաք զՍային առ. քեզ։ Եւ զի՝ ըստ որում պատահեցաւ՝ վախճան մօր Դօլվաթլու փաշային, և մեք զիտացաք ի գրութենէ սիրելւոյդ, վասնորոյ պատշաճ դատեալ՝ առաքեցաք անա՛ ըստ ձեռնհաս լինելոյ մեր ի դառն և ի սուգ և ի չքաւոր ժամանակիս զբաշսաղլըխը, [36]) զնծայս ինչ ձեռամբ մեր Յովակիմին և Գրիգորին առ. ձեզ ի մատուցանել ի դիմաց մերոց բաղմապատիւ՝ Դօլվաթլի փաշային։ Եւ թէ և հարկ էր զվարդապետ մի ես լցել ընդ ընծայիցն, բայց որովհետև Աբրահամ եպիսկոպոսն այդր է, վասնորոյ զանց արարաք։ Ուրեմն զու ընդ Աբրահամ վարդապետին մերոյ, և ընդ սիրելւոյն մերոյ Ենկիբարեան պարոն Գէորգին, և ընդ այլ հաւատարիմ և արժանաւոր արանց կամ Հայոց և կամ Տաճկաց մատուսջիք զընծայսն մեր նորին զերազանցութեան հանդերձ մերս հարցմամբ ողջութենէն, և զկնի ծանուսջիք մեզ գրով ձերով զու և Աբրահամ եպիսկոպոսն զամենայն եղելութիւնսն տեղւոյդ. և կամ ջանասջիք ընդ եկեալ մարդկանցըն վերադարձուցանել և զզոսա փութով հայելով միանդամայն և ի բարեպէս եղերումն բանին։ Իսկ զոր գրես, տեղւոյդ ոմանց անձանց զթուղթ գրելն և յորդորել զսոսա ի խաղաղութիւն և ի հարազատութիւն սրբոյ Աթոռոյս, մեք զամենեսին հարազատ և սիրեցեալ որդի սրբոյ գահիս ճանաչելով՝ քանիցըս և քանիցս գրեցաք զթուղթս սիրոյ և օրհնութեան հասարակ կոնդակօք, և յատկական գրովք, որպէս և ընդ Աբրահամ վարդապետին նորապէս լցեցաք զկոնդակ սիրոյ և խաղաղութեան, բայց մինչ ցարդ յոչ ումեքէ ընկալաք զպատասխանի, և կամ զնչան և զպտուղ հարազատութեան, վասնորոյ և սարջացեալ իսկ եմք ընդ բաղում զրութիւնս մեր, զի որչափ և համոզեմք, այնչափ օրքան զօր յաւելուն խռովութիւնս։ Արդ՝ թողումք այժմ ի կամս իւրաքանչիւրոց՝ տեսանել զխղճութիւնս սրբոյ Աթոռոյս, և զտառապանս նորին, և դադարել ի խռովութեանց և յերկպառակութեանց, բաւական համարելով որ ինչ անցինն, և որչափ ծանակեցի արարին զօրէնս մեր յամենից։ Եւ վասն արդեանցն, զոր գրես, ահա որպէս սիրելւոյդ, նոյնպէս և այլոց բարեպաշտից և Քրիստոսասիրաց գրեմ և յորդորեմ, և պատուիրեմ, հող տանիլ ըստ ամենայնի եկեղեցական իրաց և դարդուց, և արդեանց սրբոյ Աթոռոյս, և չթողուլ վատնիլ ծախիլ, և կորնչիլ ի զուր չարժելով ի վերայ անարատ հարսինս Քրիստոսի, որ ի խռովայոյդ մրրկաբերաց՝ ծփի և ալէկոծի յայսքան միջոցս։ Սպասեմ արդ՝ արդիւնարար գործոց և խոհականացդ բարեկարգութեանց՝ յանձնելով զսուրբ Աթոռս, և զամենայն զհոգալիս նորին ի ջերմեռանդ որդիութիւնս ձեր, և մեք աղօթեմք առ տէր՝ տալ զխաղաղութիւն ամենից, և իւրով անսպառ ողորմութեամբ զթացեալ ի յիւրաէջ տեղիս իւր սուրբ բառնալ զխռովութիւն ի միջոյ. հաստատելով զօտ կատարմանն զսէրն միարար։ Ամենայն քահանայից և ժողովրդոց սիրելեաց մերոց ի Քրիստոս նուիրեմք զողջոյն և զօրհնութիւն ընդ քոյոցն։ Ջայսքանս զիտացեալ ողջ լեր ի տէր, և զօրացեալ նովաւ և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ և ընդ քոյայինսն, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս, և ի նոյեմբերի... ի մայր Աթոռս ամենայն Հայոց՝ ի սուրբ Էջմիածին։

ՅԹ. *Ի Բամբակ առ պօլկովնիկն։* [37])

Որում և զիտութիւն լիցի. զի՝ ընդ Խօքմաչի Սարգսին ընկալեալ զհաւատարմութեան և զշնորհաւորութեան զիրդ՝ ուրախ եղաք։ Եւ յուսամք՝ ըստ գրելոյ ձեր՝ զի և օգոստափառ մեծ կայսրն՝ տեսեալ զխնդիրս ազգին, և զջերմեռանդ հաւատարմութիւն մեր, զոր ունիմք առ բարձրագահ Աթոռ նորին, ի զուր չար-

ժեսցի, և բարձցէ զխռովութիւն ի միջոյ՝ կատարելով զհայցուածս հասարակութեանս. Դուք ևս՝ զբարեկամութիւն ձեր ընդ մեզ հաստատուն պահելով՝ ըստ կարողութեան ձերոյ ի սիրոյ և ի հաւատարմութենէ անվերջանալի մնասջիք. Ես ընդ թղթաբեր Սարգսիւ՝ կէս լիտր լաւ երաղ յղեցաք առ սիրելիդ մեր ի նշան սիրոյ, զոր ի վայելելդ՝ յիշեսջիք զմեզ ի բարին. Հոգևոր զաւակն մերոյ դերազնուուհի Մարիամ Իվանովնային նուիրեմք զողջոյն և զօրհնութիւն. զորոյ և զհոգևոր ընծայ զչուլքին ընկալեալ օրհնեցաք. Զայսքանս իմացեալ՝ ողջ լերուք.

Ի նոյեմբերի 23. ի 1802. ի սուրբ Էջմիածին։

ՅԺ. Կոնդակ ի վերայ հասարակութեան Թիֆլիզու ի մասնաւորի զգալստենէ Դանիէլ վարդապետին ի սուրբ Աթոռս։

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ, և ողջունառաք նամակիս՝ ծանուցումն եղիցի սիրելի և հոգևոր որդւոցդ իմոց և հարազատ զաւակացդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի. Զի որ ինչ ցարդ անցք և եղելութիւնք գործեցան և եղեն թէ աստ ի սուրբ Աթոռոջս և թէ ի մեծն Պօլիս, և թէ յայլ և այլ տեղիս, ի հարկէ զամենայն ունիք գիտացեալ լիովին, և ոչ կամիմք կրկին տալ ձեզ զտաղտկութիւն. Բայց զարդիս թողեալ զայլն ամենայն ի բաց, զայս մի ինչ, որ հայի ի շինութիւն սրբոյ Աթոռոյս, և ի խաղաղութիւն ազգիդ, գրեմ սիրելեացդ և աւետաւորեմ. Զի ի նոյեմբերի 10 եկին ժամանեցին առ մեզ ի մեծէն Պօլսոյ յատուկ սուրհանդակաւ թուղթք ուրախութեան, որովք և ծանուցեալ էին մեզ՝ թէ որպէս վասն հաստատութեան մերոյ և անփոփոխութեան հայրապետութեան ազգիս և սակս պայծառութեան և անշքութեան Լուսաւորչահիմն սրբոյ Աթոռոյս՝ մատուցեալ են զաղերս առ թագաւորն ի յիններորդ անգամն, զի մինչև յութերորդն՝ չեն կարացեալ յառաջացուցանել ինչ յահէ և յերկիւղէ Խամեցի Գրիգոր իբր պատրիարգին. Բայց ի յիններորդին ընկալեալ են զկատարումն խնդրանաց իւրեանց և զհրաման աքսորելոյ զնա ինքն զԳրիգորն և ընդ նմին զԴանիէլն ի սուրբ Աթոռս, և զՅովհաննէս պատրիարգն վերահաստատել կրկին ի տեղւոջ իւրում. իբրև գիտացաք զայսոսիկ, առաւել պատշաճ տեսաք պատուով քան բռնութեամբ ածել զԴանիէլ վարդապետն այսր, վասնորոյ և առաքեցաք թէ մեք և թէ խանն երկրիս առ փաշայն Բայազիտու, և զԴանիէլ վարդապետն բերել տուաք ի սուրբ Աթոռս հանդերձ իւրայնովքն և կայ այժմ առ մեզ, և պահեմք յարգանօք. Եւ սպասեմք գալստեան Գրիգոր իբր պատրիարգին. և մանաւանդ նորանոր ֆէրմանացն որք տրին յանուն մեր, որպէս յայտնեաէ զորինչ և դիպեսցի և գործեսցի, գրելոց եմք սիրելեացդ. Արդ զայսքանս իբր պատճառ ուրախութեան տալով ձեզ, յորդորեմք զամենեսին ի սէր և ի խաղաղութիւն, ի բաց եդեալ զերկպառակութիւն և զխռովութիւն և իբրև մի հոգի և մի սիրտ լինելով՝ ջանալ խափան բառնալ զատելութիւն ի միջոյ և եղբայրական սիրով կալ ձեզ առ միմեանս, և յաւէտ ձեզ զհետ երթալ, և դադարել ի զանազան հնարից. որպէս զի բանաւոր հօտքդ Քրիստոսի մի հովիւ եղեալ՝ ուրախութեամբ տացուք զփառս այնմ, որ յաջողեաց մեզ զայս այնպէս որպէս գրեցաքս. Զայսքանս համառօտիւ՝ գիտացեալ՝ ողջ լերուք ի տէր և զօրացեալք նովաւ, և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ ձեզ միշտ Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջ, և ի նոյեմբերի ԻԹ. ի մայր Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ՅԺԱ. Թուղթ ի մեծն Պօլիս առ սհաթչի Բարդուղիմէոս Չէլէպին, օրհնութիւն և շնորհակալութիւն վասն սիրոյն և հարազատութեանցն առ սուրբ Աթոռս

Եւ ընդ Աստուածայնին օրհնութեան ողջունաբեր նամակիս՝ գիտութիւն լիցի պատուական սիրելւոյդ իմոյ, և բարեմիտ որդւոյդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի. Զի որ ասացեալն է յաղագս սիրոյ՝ եթէ գետք ոչ կարեն շիջուցանել, զայն եռանդագին սէր ի ճշմարիտ սիրելիդ տեսանելով, և մեր սիրտ վասն այնմ ջեռեալ

առ. քեզ, պարտաւորեցաք ալսու նամակաւ լալտ առնել լարդիս զշնորհակալութիւն մեր զքէն։ Քանզի՝ սիրելիքն մեր՝ Ստեփաննոս արհիապանծ եպիսկոպոսն և բարեպաշտօն պարոն Գէորգն Ազալեկեան՝ գրեալ էին մեզ զհամակամ սիրով միաբանելն ձեր ամենեցուն, և զբառնալն ի միջոյ զամենայն զաւիթս խռովութեան, և զնոսին իսկ խռովութիւնսն և նովին միաբանութեամբ՝ խորհիլն զօգուտ սրբոյ Աթոռոյս և մեր, և առնելն իսկ զնոյնս ի լոյս և զսիրելւոյդ՝ լատուկ և մեծագոյն ջանիւք ոգնիլդ և աշխատասիրելդ, և զբազմապիսի օգտակարութիւնս և զջատագովութիւնս ցուցանելդ առ Լուսաւորչական սուրբ Գահս և առ մեզ։ Որովք բարելուր համբաւովք սրտագիւր եղեալ մեր՝ ուրախացաք և հրճուեցաք՝ հանդերձ բոլոր միաբանիւք մեր և երկրացուովքս և գոհութեամբ հանդերձ՝ փառս վերառաքեցաք առ բազմագութն Աստուած՝ որ լալց եւ մեզ իւրաէջ Տանս սրբոյ, և քաղցրացոյց զսիրտ բարեպաշտ ժողովրդոցդ առ սա։ Նւ լաղագս բարեջանութեանց սիրելւոյդ առ իրս մեր, շնորհակալ եղաք զքէն, և օրհնեցաք զարժանաւորդ օրհնութեանց։ Խնդրելով ի տեառնէ, զի բարեխօսութեամբ հօրն մերոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին պարգևեսցէ քեզ զերկարութիւնս կենաց հանդերձ լամենայնի ուրախութեամբք և ցնծութեամբք։ Որև նոյն ինքն ամենագութն տէր՝ մի պակասեցուսցէ ի քէն զգութ և խնամս իւր լամենայն կեանս քոյ՝ փոխանակ սրտացաւութեամբ ջանալոյդ վասն օգտի և պայծառութեան հաւատոյ մօրս քոյ։ օրհնելով օրհնեսցէ զքեզ և զօրացուսցէ զքեզ և վարձատրեսցէ բազմապատկապէս ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, և ես առաւել աճեցուսցէ և ճոխացուսցէ հոգեկան և մարմնական բարութեամբք, և իշխանական փառօք. և ընդ քեզ և ընդ բարեծնունդ որդւոցդ և ամենայն քոյայնոցն լինելով միշտ, եղիցի ձեզ օգնական և պահապան յարաժամ։ Արդ՝ խնդրեմք ի գերազնիւ սիրելւոյդ, զի զծնողամեծար որդիութիւնդ և զսրտացաւօրէն ջատագովութիւնդ առ սուրբ Աթոռ մայրս լուսոյ և առ մեզ աննուազելի պահեսցես, և ընդ այլ հաւատարիմ բարեկամաց մերոց խորհելով զօգուտսն սորա և մեր՝ ի գլուխ տարջիք զոր սկսեալդ էք՝ առ ի ազատել զսուրբ Աթոռս ի ձեռաց խռովասիրաց զՍտեփաննոս եպիսկոպոսն մեր ի սէր ունիջիք՝ որքան լալդր է, և զֆէրմանն մեր՝ հանդերձ խաղաղական և բարեկամական թղթովք ձեր հոգասջիք շուտով առաքել առ մեզ. զի և մեր գտեալ զմիամտութիւն՝ բարւոքապէս հոգ տարցուք կառավարութեան սրբոյ Տանս, միշտ աղօթաւոր լինելով առ Աստուած առաջի սրբոյ իջման տեղւոյս Նորին լաղագս աղնիւ կենաց ձերոց՝ և բարեյաջողութեան գործոց և լայնժամ առ հարկին պահանջման դրելոց եմք զհասարակական կոնդակ առ բարեպաշտօն օրհնեալ ժողովուրդս Աստուածապահ մայրաքաղաքիդ, և զյատուկ լատուկ թուղթսն լիալիր օրհնութեանս և շնորհակալութեանս առ նշանաւոր և երևելի անձինսդ։ Ապաքէն առ ժամս զայս բաւ համարեալ, և զյատկեղ սէրդ և զհարազատութիւնդ առ սուրբ Գահս և առ մեզ անլեղլի պահեալ՝ ողջ լեր ի Տէր, և պահպանեցեալ կենսատու խաչիւ Նորին. Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս և ի նոյեմբերի... ի բարձրաղահ Աթոռս սուրբ Էջմիածնի։

Հայրական սիրով, և սրբոյ իջման տեղւոյս Քրիստոսի պահպանողական շնորհիւ ողջոյն և օրհնութիւն առաքեմք Աստուածապարգև զաւակաց քոց՝ և հոգևոր որդւոց մերոց սիրեցելոց՝ բարեծնունդ և ոսկերողբոջ Սարգիս և Յակոբջան ազաղատէիցն, և բազմամեայ աշխատաւորին ձերոյ՝ տէրամբ օրհնեցեալ և բարեպաշտ Խօջայ Մարտիրոսին, զորս և յանձնեմք ի խնամս և ի գթութիւնս արարչին՝ կալ միալ խաղաղութեամբ և բարօրութեամբ։

ՅԺԲ. Թուղթ ի մեծն Պոլիս՝ առ Թիֆլիզցի տէր Ստեփաննոսն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյն ընդ մահսէրին Պոլսեցւոց։

Յորմէ սիրով սուրբ Հոգւոյն և հայրական օրհնութեամբ Քրիստոսապարգև ողջունիւ և սրբոյ իջման տեղւոյս Նորին հոգեզուարճ շնորհիւ ծանուցումն լիցի սիրելի և հոգևոր որդւոյդ մերոյ՝ և հարազատ զաւակիդ

սրբոյ Աթոռոյս՝ Տէր Ստեփաննոս հանճարունակ և խոհեմամիտ աւագ քահանայիւ։ Զի աւետաւոր թուղթ քո ի նոյեմբերի մուտն գրեցեալ՝ ժամանեաց առ մեզ ի ամսոյս ԺԶ։ Զոր ընթերցեալ իմացաք զմեծագոյն սէրդ և զորդիական հարազատութիւնդ առ հաւատոյ մայրս քո սուրբ Աթոռս և առ հոգևոր հայրութիւնս մեր։ Որ զոյին սիրով և սրտացաւօրէն հաւատարմութեամբ զգեղազանց ջատագովութիւն ցուցանելով առ մեզ, ի սրտէ յորդոր եղեալ ես զերազնիւ սիրելոյն մերոյ իմաստնախոհ և չքնաղ շուք Առաքել ամիրային առ ի գտանել զհնար խաղաղանալոյ մերազնէիցդ՝ և անփոփոխելի կալոյ հայրապետութեանս մերոյ. և նա ևս ընդ կատարեալ բարեպաշտութեան իւրոյ փոյթ կալեալ առ յորդորմունսդ, ի գալն մեծազօր արքային և զերաշուք բդեշխին ի տեսութիւն առ ի նըմանէ ամենահնար ճարտարութեամբ յօրինեալ գործարանին, և ի խիլայադարզելն զինքն զերազոյն պատուով և ճոխութեամբ, աղերս արկեալ է վասն վերահաստատութեան մերոյ։ Որև թէ ըստ աղերսանաց նորին բարեպաշտութեան, և թէ ըստ խնդրանաց համայն հասարակութեան իշխանաց և ժողովրդոց, ելեալ է հրաման յարքունուստ՝ զի մեք հաստատ կացցուք ի դահակալութեանս, սիրելի եղբայրըն մեր Յովհաննէս արքեպիսկոպոսն դարձեալ նստիցէ պատրիարգական Աթոռդ, և Գրիգորն և Դանիէլն աքսորեսցին աստ առ մեզ։ Եւ մեք զաքսորանաց ֆէրմանն Դանիէլ վարդապետին ընկալաք՝ հանդերձ համահաճական մահսէրիւ մերազնէից. բայց յառաջմէ իսկ՝ ի նոյեմբերի Ժ մինչ Բաթր բէկ սուրհանդակն եկն առ մեզ, և իմացաք զախորժալուր համբաւսն, զՏաթևացի Աբրահամ եպիսկոպոսն առաքեցաք ի Պալաղիտ. ընդ որում և իշխօղն մեր ևս զթուղթ գրեաց առ փաշայն և երևելի տաճկաւ միով առաքեաց, առ ի զԴանիէլ վարդապետն ուղևորելոյ ի սուրբ Աթոռս ըստ հրամանի մեծազօր արքային։ Եւ մարդիկքն մեր գնացեալ առին ի փաշայէն զնա հանդերձ իւրայնովքն, և բերին ի սուրբ Աթոռս ի նոյեմբերի Ի։ Զոր և մեք ընկալաք սիրով, և կամիմք պատուել և շահել որպէս արժանն է։ Իբրև զայս արարեալ ճաք մեք, ապա էհաս առ մեզ նորին աքսորանաց ֆէրմանն ընդ հասարակական մահսէրին զօրս և մեք ընթեռնուլ տուեալ ի լուր հոգևորականաց և աշխարհականաց դասուց, օրհնեցաք միաբանութեամբ զհամայն լուսաւորչակրօն Ազգդ մեր, որք աշխատասիրեալ աղաչեցին զմեզ ի ձեռաց խռովասիրաց, և նոր ի նորոյ շինեցին և հաստատեցին զսուրբ Աթոռս։ Աստուած լիցի ինքեանց՝ վարձահատոյց ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։ Ահա գրեցաք զկոնդակ օրհնութեան առ հասարակութիւն նոցա՝ որպէս տեսանելոց ես։ Երբ յաջողեսցէ Տէր, զի ընդունիցիմք զնոցին կրկին մահսէրն զոր խոստացեալ էին գրել։ *)

ՅԺԳ. *Թուղթ ի մեծն Պոլիս առ Հաջի Դատ կոչեցեալ ճարտարապետ մահտեսի Առաքել ամիրայն, օրհնութիւն եւ շնորհակալութիւն վասն սիրոյն եւ հարազատութեանց առ սուրբ Աթոռս:*

Եւ ընդ սիրոյ և օրհնութեան ողջունաձիր նամակիս՝ զխտութիւն լիցի զերազնիւ սիրելոյդ իմոյ, և օգտակամ որդւոյդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի թէպէտ՝ է մեր քաջագոյն վերահասութիւն և ականատես տեղեկութիւն ճշմարիտ բարեպաշտութեան սիրելւոյդ որ առ Աստուած, և անկեղծ սիրոյ և անխարդախ հարազատութեան քոյ որդիականի որ առ լուսատու ծնօղս քո սուրբ Աթոռս և առ մեզ, վասն որոյ և անխափան օրհնաբանելով մեր սիրելւոյդ՝ յիշատակեմք զքեզ առ ի բարին։ Բայց նարդենիս ևս ստոյգ սիրելիքն մեր՝ Ստեփաննոս շնորհապերճ արքեպիսկոպոսն և Տերամբ զօրացեալ պարոն Գէորգն Աղայիկեան՝ ձեռամբ յատուկ սուրհանդակի զթուղթըս էին գրեալ առ մեզ յաւետաբանութիւն զերևելոյ նշանի խաղաղութեան յԱստուածախնամ մեծի մայրաքաղաքումդ, որով և ծանուցեալ էին յատկապէս զազնւոյդ դերազանցութիւն սերտ սիրոյ և բազմադիմի հարազատութեանցդ առ սուրբ Գահս և առ մեզ։ Որ և ահա զոյին սիրով և կատարեալ բարեպաշտութեամբդ ջանաս միշտ զբարին և զօգուտն սորա և մեր խորհիլ և առնել, զձեռնտուու-

*) Այս թուղթը թերի էր։

թիւն ցուցանել նոյն Սանփաննոս Եպիսկոպոսին առ. բարեպէս յառաջանալոյ իւրաց մերոց, և յորդորել զպարգևլի իշխանսն և զօրհնեալ ժողովուրդսն, վասն սարարառնալոյ զխռովութիւն սերմանեալ ի յաշաղկոտ և ի զրպարան անձանց, և հաստատելոյ զդերըզձային խաղաղութիւն և Աստուածահաճոյն միաբանութիւն։ Որև ըստ բարի կամեցողութեան ձերինդ հասարակութեան, և ըստ բազմագեղ ողորմութեան և գթութեան Տեառն Աստուծոյ չարժելոյն առ. իւրաէջ Տունս սուրբ՝ և առ. բազմավլիշտ զահակալս սորին, հանեալ է ի ՌԾալօր Թագաւորէն նորոգ ֆէրման ի վերահաստատութիւն հայրապետութեան մերոյ, և ճրագ ճշմարտութեան իբրև ի վերայ աշտանակի բացափայլելով, հանդերձեալ է լուսաւորել զմիտս զայթակղելոց, և յայտնել ըզմէգ և զխաւար ստութեան խռովասիրաց և խառնակչաց։ Որովք ձայնիւք աւետեաց՝ տրտմագնեաց հոգի մեր զուարթացաւ, և ոսկերք մեր պարարեցան ըստ իմաստնոյն բանի, և եկեղեցիք մեր՝ մերկացեալք ի խրթնութեանց, զգեցան զպերազարդ վայելչութիւն, և մանկունք նորոգ Սիօնի ուրախացեալք յոյժ՝ փառս և գոհութիւնս մատուցին այնմ՝ որ ունի զսիրտ թագաւորաց ի ձեռին իւրոյ, և ընդ որ կոյս կամի հայեցուցանել՝ դարձուցանէ զնա։ Ապա մեր շնորհակալեալ մեծապէս զպատկառոյն սիրելւոյդ՝ մերմէ, օրհնութեամբ մեծաւ օրհնեցաք զքեզ առաջի սուրբ Իջման տեղւոյս Քրիստոսի։ Ցորմէ և հայցեցաք իսկ՝ հատուցանել քեզ զփոխարէնն այդքան սիրոյ քոյ և հարազատութեանց առ. մեզ։ Որև նոյն ինքըն պարգևատուն բարեաց՝ պարգևեսցէ ազնուոյդ զվարձս բարեգոյնս ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, օրհնեսցէ և զօրացուսցէ, պահեսցէ միշտ ի խնամս և յողորմութիւնն իւր, և փըրկեսցէ յամենայն չարէ հանդերձ բարեկարգ տամբդ և ազնուական ընտանեօքդ։ Լիցի ընդ քեզ յամենայն կեանս քոյ, և առաւել ես պատւով և ճոխութեամբ և բարեանուննութեամբ պերճացուսցէ, և զամենայն բանս և զգործս քո արդիւնաւորս և շահեկանս արասցէ։ Արդ՝ այժմ. թէպէտ ոչ ունէաք զթուղթ ի բարեպաշտ սիրելւոյդ, բայց մինչ ի դրուածոյ վերոյիշեալ սիրելեաց մերոց իմացաք զազգի ազգի բարեշնորհութիւնսդ և զջատագովութիւնսդ առ. սուրբ Գահս և առ. մեզ, վասնորոյ փութացաք զայս թուղթ օրհնութեան գրել առ. ազնուութիւնդ ի բացայայտութիւն շնորհակալութեան մերոյ զքէն։ Այլ յորժամ. յաջողեսցէ Աստուած՝ զի ստասցուք զուրախական և զխաղաղական թուղթս ի ձէնջ, և յստակապէս իմասցուք զապահովանալ ձեր ի վրդովմանց, և զկորագլուխ լինելն թշնամեաց արդարութեան, յայնժամ. առ. հարկին պահանջելոյ գրելոց եմք զկանդակ լիալիր շնորհակալութեան առ. Մերազնեայն տեղւոյդ, և զյատուկ յատուկ թուղթս օրհնութեանց առ. գերարդոյ իշխանոդ և առ. այլ երեելի անձինս։ Բայց արդ՝ խնդրեմք յազնուամիտ սիրելւոյդ, զի հաստարմատ կացցես ի գերազանց սէրդ և ի բարեկամութիւնդ առ. մեզ, և ի կատարեալ հաւատարմութեանցդ՝ և ի ջատագովութեանցդ որ առ. սուրբ Աթոռս՝ մի վերջասցիս, և յամենայն սրտէ զօգուտն սորա և մեր խորհելով ընդ՝ այլ օրհնեալ Ամիրայից, ջանասջիք ի գլուխ հանել զոր սկսեալդ էք, զերկպառակութիւն և զտարաձայնութիւն կարճ նովին ի բաց լուել, և զխաղաղութիւն և զմիաբանական սէր հաստել ընդ մէջ մեր և ձեր՝ առ. ի լինել մի հօտ՝ և մի հովիւ, որով և սուրբ Աթոռս և մեք ազատեսցուք ի ձեռաց խռովասիրաց, և դուք արժանասջիք վարձուց բարեաց յԱստուծոյ. և միշտ ընկալջիք զշնորհս սրբոյ Գահիս, և զարդիւնական օրհնութիւնս սրբոյ Լուսաւորչին և մեր։ Դարձեալ խնդրեմք, զի զֆէրմանն մեր հանդերձ ուրախական թղթովք ձեր շուտով առաքել առ. մեզ և զՍանփաննոս եպիսկոպոսն ի սէր ունիլ՝ որքան յայդր է, և ըստ կարեացդ օգնական լինել նմին, որովք միշտ աղօթող եմք լինելոց վասն կենաց և բարեյաջողութեան քոյ։ Ողջ լեր ի Տէր։

Գրեցաւ ի ՌՄՇԱ. թուոջս, և ի նոյեմբերի ... ի սուրբ Էջմիածին։

Բազմաւ սիրով և պահպանողական շնորհիւ Քրիստոսաէջ սուրբ տեղւոյս՝ ողջոյն և օրհնութիւն առաքեմք հարազատ զաւակացն քոց՝ և հոգևոր որդւոց մերոց՝ բարեպաշտազնէից և խոհականաց, Սիմէօն՝ Թադէոս և Յօհաննէս Չէլէպիից, և նորաբողբոջ թոռանցդ և այլ ընտանեացդ, զորս և յանձնեմք ի խընամս և ի բարեգթութիւնս Արարչին։

ՅԺԴ. *Թուղթ ի յԱրթիկ գիւղն առ Մուսա Սուլթանի քաժին ժողովուրդն, վասըն երեսփոխութեան պարոն Յօհաննիսին:*

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ, գիտասջիք սիրելիք մեր ի Տէր, և հարազատ որդիք սրբոյ Աթոռոյս Էջմիածնի. Զի Մուսայ Սուլթանն ձեր՝ որ կամեցեալ է վասն հոգևոր որդւոյն մերոյ օրհնեալ պարոն Յօհաննիսին լինել երեսփոխան ձեզ իւր քաժին ժողովրդոցդ, այժմոյս նա թուղթ էր գրեալ մեզ, որով և խնդրեալ էր՝ առ. ի մեր ևս կարգել զնա կոնդակաւ երեսփոխան ձեզ օրհնեցելոցդ. Ուստի՝ և մեք ահա այսու օրհնաձիր կոնդակաւ՝ վերոյիշեալ զսիրելին մեր՝ բարեպաշտօն պարոն Յովհաննէսն կարգեցաք երեսփոխան և գործակալ ձեզ Մուսայ Սուլթանի քաժին ժողովրդոցդ ի կողմանէ սրբոյ Աթոռոյս և մեր. Վասնորոյ պատուիրեմք սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց, զի զնորոգ կարգեալ գործակալդ մեր՝ և զերեսփոխանդ ձեր զօրհնեալ պարոն Յօհաննէսդ սիրով ընկալջիք, և պատուեսջիք ըստ արժանւոյն և մինչ ոչ իցէ ի միջի ձերում վարդապետ ի մէնջ՝ զամենայն առաջնորդական և վանքական հասոյթս ձեր՝ այսինքն զպտղի, զպսակադրամ, զհոգեբաժին, զխոստմունս, և զայլ ինչ արդիւնս՝ զորս սովոր էք տալ յանուն լուսածին Մօրս ձերոյ սրբոյ Աթոռոյս, զայն ամենայն անպակաս և առատաձեռնութեամբ հասուսջիք ի ձեռս գործակալիդ մերոյ, զի հաւատարմութեամբ պահեսցէ առ ձեզ՝ ինքն. և ի դալ վարդապետաց ի մէնջ առ ամբողջապէս յանձնեսցէ նոցա, զի բերեալ հասուսցեն ի սուրբ Աթոռս և առ մեզ, և ձեզ բարեարդիւն պտղատուացդ վարձք բազմասցին յերկինս. Որք և մնալով հաստատուն ի բարեպաշտութեան որ առ Աստուած և ի սուրբ կրօնս Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյս՝ և ի սէր և ի հարազատութիւն սրբոյ Աթոռոյս՝ և մեր, եղիջիք միշտ օրհնեալք ի Տեառնէ, և յանձնեալք ի խնամս և ի բարեգթութիւնս նորին յարաժամ. Ամէն.

Գրեցաւ ի ՌՄՃԱ թուոջս, և ի Նոյեմբերի ... ի սուրբ Էջմիածին.

ՅԺԵ. *Ի Կարին առ Շահնիրվեքիլն, ընդ Յովհաննէս վարդապետին:*

Յորմէ բազում սիրով, օրհնութեամբ քրիստոսաձիր ողջունիւ և շնորհօք սրբոյ տեղւոյս նոյնաիջի, ծանուցումն եղիցի ընտիր և բարեմիտ բարեկամիդ մերում և յատկեղ սիրելւոյդ բարեպաշտ աստուածասէր և փառազարդ մահտեսի Յովհաննէս աղայիդ, զի թուղթդ հաւատարմական, ընդ ներքին ներտրամագրեալ մեծագոյն մտերմութեանցդ և լիալիր հաստարմատ սիրոյդ ընկալեալ և վայելեալ, գիտացաք զ'ի նմայն. Եւ զհոգևոր որդին մեր սիրելին ձեր Յովհաննէս պարկեշտափայլ վարդապետն ի սէր սիրելւոյդ սիրով սիրաշահեալ, ընկալաք ի գիրկ հայրութեան մերոյ և խնամոց, և ի սուրբ և ի ոսկեփակ տեղւոջս աստուածամիջի և աստուածաբնակի մատուցեալ ղհաշտարարն ընծայ, զանարիւն խորհուրդ աստուածայրականին Յիսուսի, ընկալաւ զլրումն ըղձի, ըղձակաթ սրտիւ. Նման սմին չրթամբք հոգւոյ ի համբոյր մատուցեալ սրբութեանց տեղեացս, և սքանչելարար սրբոց մասանցն և նշխարաց մեծ վկայիցն Աստուծոյ և իմանալեաւ զուարթացեալ ի զօրութիւն հոգւոյ և ի զարգացումն մարմնոյ էառ զօգնութիւնս և զօրհնութիւնս Աստուածայինս և հոգեղէնս նոյին միջնորդութեամբ. Եւ առ ի բովանդակել ի նմա ընդ հոգևորին և զմարմնաւորն յաւելաք և զայս արկեալ զնովաւ ի հանդիսի առաջի արքեպիսկոպոսաց զպատուական խաւէ փիլոն մի ի նշան մերո հայրականի սիրոյ և օրհնութեան. Եւ այսպէս հոգևորօք և մարմնաւորաւ, վայելչացուցեալ զվերոյիշատակեալդ Յովհաննէս վարդապետն, վերադարձուցաք անդրէն սիրով առ սիրելիդ մեր. Ընդ որ և զայսքան հիւսուածս բանի առ ընտիր բարեկամդ ևս գրելն բարեպատեհ վարկաք, ի հարցանել նախ զցանկալի առողջութենէդ և ի փոխարինել ապա սիրոյդ, զրուածոյն զանդրադարձն. Իսկ զսուրբ Աթոռոյս և զմեր որպիսութեանց պատմութիւն ի դա ի սիրելի որդեակդ մեր թողաք, գոլով գիր բանական. Եւ մանաւանդ կողմունքս և մեք ի միջին խաղաղութեան կալով, ոչ դոյ այնքան եղելութիւն ինչ աստէն արժանաւոր գրելոյ. Սպասեմք մեք յաւէտ կողմանցդ և մեծին Պոլսոյ եղելութեանց, զորս ի գրելդ և ի ծա-

նուցանելդ մեզ կացուցանելոց ես զմեզ պարտապանս աղօթելոյ և օրհնելոյ զսիրելիդ մեր, զոր Տէր օրհնեսցէ և վասն մեր պահեսցէ զքեզ։ Այսչափս առ այժմ գիտեցեալ և սիրոյ գիրդ աննուազելի ի մէնջ արարեալ ողջ լեր ի Տէր և զօրացեալ նովաւ և շնորհք որբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ և ընդ քոյսդ Ամէն։

Գրեցաւ ի ՌՄՇԱ ի նոյեմբերի ... ի սուրբ և յերկնահանգէտ Աթոռս ամենայն Հայոց սուրբ Էջմիածին։

ՅԺԶ. *Ի Պօլիս առ մահտեսի Գաբրիէլն, ընդ Բալթը Թալթալին:*

Եւ ընդ աստուածային օրհնութեանս և սիրոյ ողջունիս, գիտութիւն լիցի սիրելւոյդ մերում, զի գիտացաք խաղաղութեամբ հասանելդ ի տիրապահ քաղաքդ ի յօրհնեալ օթեանս քոյ և զամենայն գլուեալն քոյ ստունկամբք, և տեսեալն աչօք այգր առաջի ականաւորաց անախտակիր ողւով պատմելդ ստուգապէս թարց յաւելման և պակասեցուցման և զմեծսպէս ջատագովելդ զսուրբ Աթոռս և զմեզ աստուածակոյս կողմանէ և զբերան և լեզու ի գլխաց մերոց լինելդ ի մէջ ղայթակղելոյն ի նախանձոտաց և զայլս նոյնապիսիս, որովք լիրաւի իբր պարարտութեամբ իւիք լցեալ, զուարթացաք յոյժ և ի մէջ Աստուածային տաճարիս առ Տէր կանխեցաք օրհնութեամբ և շնորհակալութեամբ, սակս բարեյաջողութեան և երկարութեան կենաց սիրելւոյդ իմոյ, զոր օրհնեսցէ Տէր երկնային և հովւոր օրհնութեամբ իւրով և բարձր բազկաւ պահեսցէ զքեզ ի խաղաղութեան և փրկեսցէ յամենայն չարեաց և փորձանաց, պարգևելով զաջողութիւն յառո և ի տուրս քոյ և լիցի քեզ վարձատիր ընդ բազում վաստակոցդ։ Եւ ես ի թղթոց հարազատիցն մերոց Ստեփաննոս արքեպիսկոպոսին և պարոն Գէորգ Աղայեկովին զամենայն անցսն Պօլսոյ տեղւոյդ զուրախականս, որք և ծանուցեալ էին միանգամայն և զաստուածային յաջողութիւնս, որով ի զութ շարժեալ հանդերձեալ է ողորմել և զթալ ի սուրբ և ի բազմավիշտ զահակալս սորին, ծագելով ի սիրտս բանաւոր հօտիցդ իւրոց զճշմարտութեան ճառագայթ առ ի փարատել զմէգ և զխաւար զխռովութիւն և զհակառակութիւն սերմանելս ի չարասիրաց, որպէս զսոյնս աւետալի թղթովք ազդեալ մեզ վերոյիշատակեալ մտերմացն մերոց, խրախուսեալ էին զմեզ։ Զորս ի գիտելն, դիմեցաք առ բարձրեալն աղօթանուէր հայցմամբ առաջի սուրբ տաճարիս ինքնակերտի և իւրամիջի, և զփառս և զգոհութիւնս բերանալիր օրհնութեամբ վերառաքեցաք անօրինօղին և յաջողողին զայս ամենայն, որ ոչ անտես արար զյուսացեալսն իւր, այլ յայտնեաց աշխարհի զարփիափայլ ճշմարտութիւնն որ երբեմն ծածկեցեալ կայր ընդ ամպովք սաւթեան զաչացուաց։ Սպասեմք արդ, գալստեան մեր Ստեփաննոս արքեպիսկոպոսին և ֆարմանացն, որպէս զի գիտացեալ անտի զամենայն ինչ ուղղութեամբ բոլոր հանգամանօքն, գրեցաք յանձժամ իւրաքանչիւրոց բարեպաշտից և աստուածսիրաց զմերս օրհնութիւն և շնորհակալութիւն յաճախակի հասարակական կոնդակօք, և յատկական թղթովք։ Եւ արդ այս է մեր գրելն քեզ սիրելւոյդ, ջանալ և զուն գործել զբարի սկսուածս այդ ի կատարն հասուցեալ և աւուրբ յառաջ, մաքրել զքաղաքդ ի խռովութեանց և զմիացեալ որոմն չարին արմատաքի խլեալ ի սրտից բարեսիրաց և յորդորել ի սէր սրբոյ Աթոռոյս պլնտ և հաստատուն կալ և մանաւանդ հետևիլ փութով ճանապարհել զՍտեփաննոս վարդապետն մեր ֆերմանօք հանդերձ։ Եւ Աստուած աղբիւրն խաղաղութեան զօրավիգն լեալ ձեզ, խաղաղացուսցէ զվրդովեալ քաղաքդ այդ։ Յայսքանս համառօտիւ գրեալ, թողումք զայլն սլլումս բարեպատեհ ժամու։ Ողջ լեր ուրեմն ի տէր և զօրացեալ նովաւ. և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ։ Ամէն։

Գրեցաւ ի ՌՄՇԱ թուոջս, ի նոյեմբերի ... ի սուրբ և յերկնահանգէտ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ՅԺԷ. *Ի Պօլիս առ Յարութիւն աղայի որդի մահտեսի Յովհաննէս Չելեպին։*

Եւ զկնի Աստուածային օրհնութեան և սիրալիրական ողջունի Քրիստոսեան, ծանուցումն եղիցի խոհական և զգօնամիտ վեհան-

ձնութեան ձերում Չի յամսոյս Ժ. յաւուր երկուշաբթի, եկն ժամանեաց առ մեզ ի սուրբ Աթոռս սուրհանդակս այսի առաքեցեալ Բաթր անուն, հանդերձ ուրախալի համբաւովք և աւետաւոր թղթովք սիրելեացն մերոց Ստեփաննոս արքեպիսկոպոսին և Աղայեկեան պարոն Գէորգին, որովք գիտացաք զամենայն անցսն տեղւոյդ, և զաստուածային տնօրինութիւն, որ խափանեալ զչարն և յետս նահանջեալ զամենայն զմարդկային կամոն, զիւրն յաջողեաց զբարին և զարդարն և իբրև զար մի լուսափայլ, յաշտանակ եղեալ զճշմարտութիւնն փայլիտեաց յաշխարհի և զուարճացոյց զսիրտս ճշմարտասիրաց և հեռեղացն իւրոց։ Չորս ի գրելն մեր սուղապէս զայսոսիկ, զիմեցաք ի տաճար սուրբ իւր, և առաջի անմահ կենարարին զագոթս, զօրհնութիւնս և զփառս զոհութեամբ հանդերձ մատուցեալ, խնդրեցաք բառնալ իսպառ զխռովութիւն և զանկլութիւն յազգէս մերմէ և հաստատել զխաղաղութիւն, տալով զօգնութիւն իւր ձեզ և զօրավիգն լինելով յամենայն գործառնութիւնս ձեր ի շինութիւն փառաց տաճարիս հաւատոյ մօրս ձերոյ, և ի պայծառութիւն կարգաց և կրօնից մերոց։ Եւ թէպէտ չունէաք զթուղթ ի քէն, որպէս և ոչ յայլ սիրելեաց մերոց, (որոց սպասեմք ընկալնուլ) սակայն ի թղթոց վերոյիշատակեալ հաւատարիմ զաւակացն սուրբ գահիս Ստեփաննոս արքեպիսկոպոսին և Աղայեկեան պարոն Գէորգին գիտացաք յիապէս զմեծագոյն սէրդ, զորդիական զկատարեալ մտերմութիւնդ, և զարիական զործս և ջատագովութիւնս բարի բարունակիդ՝ բարեբեր տնկոյն օրհնութեան. շառաւիղդ բարգաւաճեալ տէրամբ, բարի շաւղաց և հետոց ի Քրիստոս հանգուցեալ հօրն քոյ Աստուածապաշտի և Քրիստոսասիրի, զհետ ընթանալով և զայս այսպիսի ուրախացուցիչս սրտի և զուարթարարս հոգւոյ, միանգամայն և հաճելիս Աստուծոյ և մարդկան։ Որոց ամենից վասն ուստի շնորհակալիմք այժմ ի ձեռն սոյն փոքրաքանակ թղթոյս զճշմարիտ սիրելւոյդ մերմէ յոյժ յոյժ։ Իսկ զլիալիրն ունիս յետոյ վայելել ի սրբոյ Աթոռոյս և ի մէնջ բազմապատիկ օրհնութեամբ յորժամ Աստուծով և դքոյդ ընկալնումք մեք զթուղթ ուրախութեան և սիրոյ. ուրեմն օրհնեսցէ տէր զպատուական և զառաքինասէր իշխանդ ընտիր օրհնութեամբ անանցանելեաւ, ընդ հըզօր և անուանի նախարարսն և իշխանսն ազգիս, որք վասն հաւատոյ և վասն Աստուածային ճշմարտութեան և յաւէտ յաղագս շինութեան և պայծառութեան սրբոց եկեղեցեաց ոչ միայն նախատեցան և ազգի ազգի տանջանօք թաղեալ կոչկոճեցան, այլ և զարիւնս իսկ հեղին և զանձինս ի մահ մատնեցին. որովք և դհայաստանեայս զսուրբ տաճարսն Աստուծոյ մաքրեցին յամենայն արատոյ։ Նաև պահեսցէ զքեզ անուանի միշտ, և բարեհռչակ յաշխարհի պարգևելով զկեանս երկարս և խաղաղականս ի փառս ամենասուրբ անուան իւրոյ և ի շինութիւն և հաստատութիւն սրբոյ և մեծի Աթոռոյս ինքնաիջի, և մանաւանդ ի մխիթարութիւն և ի դիւրութիւն վշտակիր սրտի մերում։ Զայսքանս առ այժմ հազիւ կարացեալ գրել սակս սղութեան ժամանակին, զայլն թողում յետոյ յաջողապէս տալ ձեզ գիտել։ Միայն զայսչափս ծանուցեալ արդ, յորդորեմ, պինտ և հաստատուն կալ ի դոյնն և զոր սկսայքն, ջանասջիք շնորհիւ տեառն Աստուծոյ ի յանդգն հասուցանել և ըստ ամենայնի մաքրել զքաղաքդ յամենայն խռովութեանց և սպառսպուռ ջնջել և անհետ առնել զսերմանեալսն ի բանսարկուէն և սիրովն Քրիստոսի և երկնաւոր խաղաղութեամբ զարդարեալ զսիրտ և զհոգի ձեր և ամենեցուն ջերմանալ ի վերայ տառապեալ մօրս ձերոյ սրբոյ Աթոռոյս Քրիստոսաիջի, և զայլս ևս ջերմացուցանել նովիմբ սիրով և որդիական հպատակութեամբ, զի լինիցիք մի հօտ միահովիւ։ Այլ և հող տարջիք արքունական նոմոսացն ֆարմանին և բերաթին և ընդ Ստեփաննոս վարդապետ սիրելւոյն մերոյ առաքեսջիք փութով, զոյս յանձնեմ ի մեծաջան հետևողութիւնս քոյ, որոց և մեք ակնապուչ եղեալ սպասեմք օրքան զօր։ Այսպէս գիտեցեալ քոյ և սէրդ ի մէնջ աննուաղելի արարեալ. ողջ լեր ի տէր և զօրացեալ նովաւ և շնորհք սուրբ գահիս Աստուածաբնակի եղիցի ընդ քեզ և ընդ քոյսդ, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս ի նոյեմբերի ... Ի շնորհատու և յերկնաքաղաք Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ՅԺԲ. *Ի Պօլիս, առ Կապուտան փաշայի սառաֆք Յարութիւն եւ Յակոբ ամիրայքն։*

Եւ ընդ օրհնութեանս և սիրապարգև ողջունառաք նամակիս, գիտութիւն լիցի աղնիւ սիրելեացդ իմոց, և ընտրելագոյն բարեկամացդ։ Զի ի նոյեմբերի ամսոյ Ժ. յաւուրս երկուշաբաթի ընկալաք զթուղթս բերկրականս և զուարթարարս սրտի ի հարազատ զաւակացն սրբոյ Աթոռոյս ի Ստեփաննոս շնորհափայլ արքեպիսկոպոսէն, և յազնիւ պարոն Գէորգ Աղայեկեանէն, որովք ծանուցեալ զԱստուածային յաջողութիւն և զխնամարկութիւն ի վերայ մնասակրեալ տանս իւր սրբոյ և ի վերայ խղճալի և վրդովեալ ազգիս մերոյ, որովք և յայց ելեալ մեզ հանդերձեալ է զերծուլ զհանդերձ տխրութեան ի մէնջ և յաղգէս և բառնալ զխռովութիւն և զերկպառակութիւնն ի քաղաքէդ, որովք ծփայր քաղաքդ յայսքան ժամանակս, զփառս գոհութեամբ տնօրինողին և յաջողողին յայս ամենայնի մատուցաք։ Յորմէ և խնդրեցաք տալ վերկնային զխաղաղութիւն իւր բանաւոր հօտիդ. և ի բաց փարատեալ խապառ զսատանայական յարուցմունս ի քաղաքէդ. և յամենայն ժողովրդոց իւրոց։ Նաև գրեալ իսկ էին բազմադիմի շնորհակալութեամբ և զձեր զմեծագոյն սէրն և զաշխատասիրութիւնն և զջատագովութիւնն, որովք վառեալ և զինու սրբոյ Հոգւոյն անպարտելի ճշմարտութեամբ նորին զինուորեալ իբրև ախոյեան անյաղթելի, զիմակալեալ էք ամենայն հակառակութեանց հակառակողաց և ունայնացեալ զամենայն խորհուրդս և զարտուղի կամս նոցին, որ տանէր զմեզ աղդովին յաւեր և յապականութիւն և լինէր պատճառ քայքայման Աստուածակառոյց և Լուսաւորչահիմն Սուրբ Աթոռոյս մեծի։ Ուստի ի դիտելն մեր զայսոսիկ մեծապէս ուրախացաք ի վերայ Աստուածահաճոյ գործոց ձերոց և բազմապատիկ շնորհակալութեամբ օրհնեցաք զարժանաւորսդ օրհնութեան, զորս օրհնեսցէ տէր անսպառ օրհնութեամբ իւրով, և զօրացուսցէ և զամենայն բանս և զգործս ձեր ի բարին յաջողեսցէ, և խաղաղական կենօք պահեսցէ յաշխարհի հանդերձ ամենայն աղնուական ընտանեօք ձերովք, և զսկսեալդ այդ զործ բազմապահ ի յաւարան հասուսցես և մեզ ասցէ տեսանել զայն և վայելել. և օգնական լեալ ձեզ, պսակաւորեսցէ զգործ ձեր սկսեալ բարի վախճանաւ։ Եւ արդ այս է զարդիս մեր որբելին ձեզ սիրելեացդ իմոց. նախ պինդ և հաստատուն կալ ի զոյնն և զայլս ևս յորդորել և ջանալ բոլորովիմբ վերջացուցանել զտարաձայնութիւնն ի քաղաքիդ և փոխանակ հաստատել յամենեսին զսէր և զմիաբանութիւնս։ Եւ ապա հետևիլ ֆարմանին և բերաթին, զի աւուրբ յառաջ փութացուցեալ առ մեզ, ուրախ արասջիք զթախծեալ սիրտ մեր, որպէս զի և մեք ի բաց եղեալ զայլ հոգս զհետ բարեկարգութեան ազգիս և շինութեան և պայծառութեան սրբոյ գահիս եղիցուք։

Ուրեմն սպասեմք ահա ժամէ ի ժամ ընկալնման արքունական նոմոսացն և ձեր և հասարակութեան քաղաքիդ ուրախական թղթոցն, զի ընկալեալ գրեսցուք յայնժամ և մեք իւրաքանչիւրոցն ըստ արժանեաց և ըստ աշխատանաց իւրեանց զօրհնութիւնս և զշնորհակալութիւնս։ Իսկ զՍտեփաննոս վարդապետ հարազատ զաւակն սրբոյ Գահիս յանձնեմ վերստին ի խնամս և ի շնորհս ձեր, ըստ ամենայնի նպաստամատոյց և օգնական լինել կրկին յամենայն բանս և ի գործս նորին. և դուք Աստուծոյ եղիցիք յանձնեցեալք։ Զայսքանս առ այժմ հաղիւ կարացեալ գրել, թողումք զլիալիրն յայլ պահու։ Այսպէս գիտացեալ ձեր, և զսիրոյ և զուրախութեան գիր ձեր ընդ ցանկալի առողջութեանց ձերոց, անպակաս արարեալ, ողջ լերուք ի տէր և զօրացեալք ամենազօր աջով նորին, և շնորհք սրբոյ տեղւոյս լուսակերտի, եղիցի ընդ ձեզ և ընդ ձերայինսն ամենեսին. Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս և ի նոյեմբերի... յԱստուածակառոյց և յերկնահանգէտ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ՅԺԹ. *)

Որում և գիտութիւն լիցի. զի թէև չէ մեր տեսեալ յանդիման զպատուականութիւն ձեր, և ոչ գրով կալեալ ընդ ձեզ բարեկամութիւն, սակայն՝ թէ ի լրոյ, և թէ ի թղթոց այլոց յայտնիք են մեր զերավսեմ խոհակա-

*) Վերնագիրը չկայ բնագրում։

նութիւն անձին ձերոյ, և սրտի պարզութիւն, ընդ բազմադիմի ազգաշահ գործոցն. որ վասն խաղաղութեան աշխարհի, և վասն պայծառութեան հայրենեաց մերոց, և Աստուածային սուրբ տաճարացն, զաշխատանս յանձին կալեալ՝ ջանացայք ի հանգստութեան ունիլ զազգս վշտացեալս. որոց աղաչաւ և դեգերեցայք ցարդ ի դրունս մեծի ինքնակալին ամենայն ռուսաց։ Ուստի՝ այսօրիկ ողջունարճ համբաւք բարեհռչակ անուան ձերոյ՝ խրախուսեաց զմեզ մատչիլ այսու օրհնութեան անդրանիկ նամակաւ առ պատուականութիւն ձեր ի հարցանել զցանկալի առողջութենէ ձերմէ. և մանաւանդ ի շնորհաւորել զբարեբեր գալուստ ձեր ի քաղաքդ Աստուածապահ։ Որով արդարև առաւել ուրախացաք, քանզի՝ որպէս քաղաքիդ լինի խաղաղութիւն, և ժողովրդոցն դորին երջանկութիւն բարի գալստեամբ ձերով, նոյնպէս և մեք յուսամք, զի լինիցի և Աստուածային մեծի Աթոռոյս, և մեզ վշտացելոցս դիւրութիւն և մխիթարութիւն օժանդակութեամբ ձերով և բարեմտութեամբ։ Ուրեմն՝ պահեսցէ տէր զկամակատար պաշտօնեայդ իւր զբարեփառ իշխանդ մեծ երկար և խաղաղ կենօք հանդերձ ամենայն Աստուածապարգև ձերայնովք. և փառաց ի փառս բարձրացուցեալ՝ և ևս անուանի և մեծահռչակ արասցէ զձեզ յաշխարհի, և յաչս ✠ քաղցր և հաճելի երևեցուսցէ, տարածելով զամենազօր բազուկ իւր ի վերայ դերապատիւ իշխանիդ մեծի, և ի վերայ բարեկարգ տան ձերոյ, և բոլորից ազնուազարմ ընտանեաց ձերոց ի հովանաւորութիւն։ Եւ արդ՝ այս է մեր ծանուցանելին և խնդիրն համառօտիւ. Նախ՝ լուսահոգի Ղուկաս սրբազան հայրապետն, որ զՆիփրեմ վարդապետն ի Հաշտարխան յղեաց, և զայլս այլուր, զինչ պատճառ էր, որ զմեզ ոչ ուրեք յղեաց, և առ ինքն պահեաց, որպէս և երբեմն երբեմն յայտնէր զմիտըս իւր մեզ, և զպատճառն առ ինքն պահելոյն զմեզ։ Եւ ի վախճանիլն նորին՝ մեք զայլ ինչ զմտաւ մերով չանցուցեալ՝ միամիտ հոգւով գնացաք ի Պօլիս ի դիմաց միաբանից մահսէրաւ ի խնդիր նորոգ կաթուղիկոսի և թէպէտ ի Պօլիս ևս գրեթէ բազում երևելի անձինք զմէնջ պատշաճ տեսանէին լինիլ կաթուղիկոս ազգին, որպէս և հարկադրեալ զմեզ՝ արարին ինքեանց պատրիարգ, սակայն՝ անարժան զմեզ այնմ վարկուցեալ՝ զիմեցաք անդրէն ի սուրբ Աթոռս, և Դանիէլ վարդապետն՝ որ կամէր կաթուղիկոսութեան հասանիլ, գնաց յայնժամ յաքսորս, և յաջողեաց նմա տէր։ Ապա մինչ հիւսիսային կողմանց առաջնորդ Յովսէփ սրբազանն ընտրեցաւ ի Հայրապետ, և եկն ի Թիֆլիզ քաղաքդ, և կամեցաք ընդ այլ եպիսկոպոսաց և մեք գալ ընդ յառաջ նորին մինչև ի Թիֆլիզ, գրեաց մեզ մնալ ի սուրբ Աթոռոջս ի պահպանութիւն սորին, և ի կառավարութիւն միաբանից, և չհաճեցաւ ընդ հեռանալն մեր աստի, որպէս նորա ձեռագիրն առ մեզ ունիմք։ Եւ մեք զառաջինն չիմացաք զդիտումն նորին, բայց յետոյ իբրև փոխեցաւ յաստեացս ի քաղաքիդ, և յայտնեաց կտակաւ զմիտս իւր մերձակայից իւրոց և բազմաց քաղաքացւոցդ. և դոքա զնոյն բազմակնիք մահսերաւ մեզ, և միաբանից սրբոյ Աթոռոյս, և խանին երկրիս ծանուցին, յայնժամ յայտնի երևեցաւ բարի կամք նորին, և պատճառն զմեզ ի սուրբ Աթոռոջս արգելլոյն։ Եւ դոյն քաղաքացիք որպէս մեզ, նոյնպէս և ի դուռն ինքնակալին ծանուցեալ՝ յայտնեալ էին զկտակն Յովսէփայ հանգուցելոյն, յորոց դրուածոց յորդորեալ և օգոստափառին, հրամայեալ էր ի Պօլիս իւրում դեսպան պարոն Թամարովին՝ զմեզ յաջողեցուցանել յԱթոռ հայրապետական, որ և ակնարկութեամբ Օծելոյն մեծի ընկալաք ի միում աւուր յաջողութեամբ տեառն երկուց թագաւորաց զհրովարտակսն պարսից և օսմանցւոց։ Զայսուիկ զամենայն յԱստուածուստ համարեալ մեր՝ յակամայ կամս յանձն առաք գալ ընդհանուր կառավարութիւն ազգիս շնորհօք հոգւոյն սրբոյ, հաճութեամբ ազգին և միաբանից, յորդորական թղթովք և բանիւք շրջակայ ժողովրդոց, և մանաւանդ բնակչացդ քաղաքիդ ըստ կտակի Յովսէփայ ի Քրիստոս հանգուցելոյն. որպէս այսմ կարեն վկայել դոյն քաղաքացիք, որոց բազմակնիք մահսէրն առ մեզ կայ, և ինքեանք տացեն զպատասխանի Աստուծոյ և ձեզ, եթէ ստութեամբ ինչ գրեալ իցեն մեզ։ Բայց թշնամին խաղաղութեան սկզբնաչարն բանսարկու լցոյց զսիրտըս երկուց ոմանց վարդապետաց Դանիէլի և Եփրեմայ Նախանձու, և յարոյց ի վերայ մեր ատելութեան հոգւով. որք և ստալի բանիւք գայթակղեցուցեալ զպարզամիտսն՝ խռո-

վեցուցին զնոսա. մինչև ի լունկ ✠ հաստատեցաւ զառնացուցին զքաղցր սիրտ նորին ի վերայ որրոց Աթոռոյս և ի վերայ մեր. որ ամենայն յուսով վստահացեալ և լցեալ էաք ի լայնածաւալ գթութիւն նորին հանդերձ բոլոր ազգօք և միաբանութեամբ՝ առ. ի յապահովի կալ և մնալ, և յանդորրու ունիլ զմիաբանսն և ի բարօրութեան վայելել։ Իբրև գիտացաք զայսոսիկ՝ փութացաք և մեք առաքել ի դուռն նորին կայսերական մեծութեան զերկու պատուաւոր եպիսկոպոսս զԿարապետ և զԱբրահամ հանդերձ օրինակօքն հրովարտակաց և այլ բազում թղթովք առ մեզ գրեցելովք ի մերազանց և յայլասեռից։ Եւ թէ զիարդ եղև, որ նոյն եպիսկոպոսքն մեր չկարացին յառաջ խաղալ, այլ կացին արգելեալ ցարդ՝ ի քաղաքդ Թիֆլիզ՝ կարէք ընդ այլ ամենայն եղելութեանցն տեղեկանալ ի դոյն Կարապետ արքեպիսկոպոսէդ, որ կայ յայդր և է գիր կենդանի. զոր ի շնորհս ձեր յանձնեմ։ Եւ տակաւին օրքանզօր՝ սաստկանայ խռովութիւն, և նշան խաղաղութեան չերևի։ Եւ չկարացաք մինչև ցայժմ գտանել զայնպիսի հաւատարիմ և Աստուածապաշտ ոք, որ կարիցէր զամենայն ինչ ճշմարտութեամբ ծանուցանել օգոստափառ ինքնակալին մեծի, և զնա ազատս կացուցանէր ի խղճէ։ Ուստի՝ դիմեմք այսու յորդորանաց գրով առ պատուական սեպուհ իշխանդ Քրիստոսասէր և բարեմիտ, զի ձերով խաղաղարար և ազգաօգուտ ձեռնտուութեամբն՝ սուրբ Աթոռս և մեք և ազգ մեր տառապեալ գտցուք զհանգստութիւն ինչ ի ձեռաց նախանձոտաց. և խնդրեմք, զի և դուք զբարի յառաջադրութիւն ձեր՝ մեզ ծանուցեալ թղթով՝ զօգուտն և զբարին առաջի մեր դիջիք, և զինչ առնելն ձեր, և զիարդ խորհելն մեզ գրեսջիք. արդեօք զայս թուղթս թարգմանեալ ուղղակի առաքելոց էք ի դուռն ինքնակալին, թէ դուք ինքնին գրելոց իցէք առ ողորմած թագաւորն, և թէ զայլ ինչ նոր հնարս գտեալ՝ հասանելոց էք յօգնութիւն սուրբ Աթոռոյս մեծի։ Ինչ և իցէ՝ մերս կամք և խնդիր այս է, զի ողորմած մեծ կայսրն ինքնակալ գիտասցէ զճշմարտութիւն, և զբանին ուղղութիւն. և արդարութեամբ քննեալ զճշմարիտն և զսուտն, դատաստան արդար դատեսցէ ընդիս և ընդ Դանիէլին և ընդ Եփրեմին։ Ի հարկէ թարց քննութեան վճիռն, և կամ զմի կողմն առանց վերահասութեան արդարացուցանել, և զմիւս կողմն պարտաւորել բերէ զտրտունջ և զգըրկանս։ Իսկ թէ՝ այսոքիկ բանք մեր սուտ թուեսցին, կարէ ողորմած ինքնակալն զարս հաւատարիմս յղել, և հասու լինել։ Ցիրաւի՝ եթէ զոր ինչ ասեն թշնամիքն, կայանայ ի վերայ մեր, և ստուգի, արժանի եմ յանժամ մեղադրանաց, և ոչ հրաժարիմ ի յապաշխարելոյ։ Զայսքանս՝ թէ և ձանձրութիւն համարեցաք ձերում վեհանձնութեան, սակայն՝ ներել մաղթեմք. զի հարկն ստիպէ, և աւերութիւն սրբոյ տաճարիս Աստուծոյ տեսանելով՝ համարձակեցուցանեն զմեզ ի սոյն. այնզի՝ ոչ ի տարապարտուց խանչէ ցիռ ըստ Յօբայ, և ոչ եզն գոչէ առ մսուր. զայսչափս աստէն իբրու զպատճառս տալով իմաստուն մտաց ձերոց, զայլն յանձնեմ զմեզ և զսուրբ Աթոռս խղճալի ի բարի խղճմտանս խաղաղարար իշխանիդ մեծի, և զձեզ տեառն ամենակալին. ողջ լերուք շնորհիւ կենսատու սուրբ խաչին Քրիստոսի, Ամէն։

Ի Նոյեմբերի... 1802. ի սուրբ Աթոռս Էջմիածին։

Զայս թուղթ երկու օրինակ գրեցուցեալ սակս երկիւղի ճանապարհաց, որոց՝ եթէ մինն չհասանիցի, գոնեայ միւսն հասցէ առ ձեզ։ Ընդ որոց և զթուղթ առ մեծ կայսրն գրեալ երկօրինակ՝ յղեցաք առ սիրելիդ մեր՝ զի ձերով թղթով ժամանեցուսջիք առ նոյն ողորմածն որով արդարև երևիք սրբոյ Աթոռոյս և մեզ բարերարք։

ՅԻ. Ի Պօլիս, առ սարաֆլար քեահեասի մահտեսի Մարտիրոս ամիրային։

Եւ ընդ օրհնութեան Աստուածայնոյ, և Քրիստոսաւանդ ողջունիս, ծանուցումն եղիցի սիրելւոյդ մերում, զի ի նոյեմբեր ամսոյս Ժ. յաւուր երկուշաբթի՝ ընկալաք ի հաւատարիմ որդւոցն մերոց՝ ի Ստեփաննոս արքեպիսկոպոսէն, և ի յԱղայեկեան պարոն Գէորգէն զթուղթս ուրախականս և զուարճացուցիչս սրտի Բաթըր անուն թաթարաւ որովք ծանուցեալ էին զանցսն տեղւոյդ, և զԱստուածային ճշմարտութեան բացայայտիլն, և ճշմարտասէր անձանց բարեպաշտից՝ օրհնեալ

իշխանացն տեղւոյդ՝ որրոյ Աթոռոյս խզջալւոյ ջատագով լինելդ, և զպայծառութենէ և զշինութենէ սորին հոգալդ, միանգամայն և՝ զպատուական սիրելւոյդ մերոյ՝ զջանն և զաշխատասիրութիւնն առ. բարին և առ. օգուտն սրբոյ Տանս Աստուածակերտի, և զմեծապոյն սէրդ կատարեալ առ. գահակալս սորին, և զայս և նշանս մեծի հաւատարմութեան, որովք լիրաւի բերկրեցաք ոչ եթէ վասն այնր, զի խռովութիւն բառնի ի քաղաքէդ և ի մէնջ, այլ առաւել վասն այն, զի ճշմարտութիւն Աստուծոյ ծածկեալն ի նախանձաբեկաց և ի թշնամեացն արդարութեան, ունի մեծապէս փայլել և ճահաւորել յաշխարհի յայս որք անախտակիրք են։ Ուստի՝ և մեք ի գլխելն զայսոսիկ զփառս գոհութեամբ հանդերձ մատուցաք ամենազօրին, որ դարձուցանէ զստուերն յայգ, և պահէ զլուսացեալսն իւր, և ոչ ամաչեցուցանէ։ Արդ՝ սպասեմք դալստեան մեր Սանփաննոս արքեպիսկոպոսին, և ընկալնման ֆարմանացն և ուրախական թղթոց ձերոց, և հասարակութեան քաղաքիդ. որպէսզի՝ և մեք յարդելի եղբօր քոյ Յովհաննէս բարեսիրտ Չէլէպիին, և աղնուամիտ որդւոյ քոյ Առաքել Չէլէպիին՝ նուիրեմ ողջոյն և զօրհնութիւն բազում սիրով զորս և խնամոց և պահպանութեան Տեառն յԱստուծոյ յանձնեմ։ Զի միշտ ի բարեյաջողութեան լինիցին ձեօք հանդերձ։ Ըստ այնմ յորդորեսցուք ի յօրհնութիւն և ի շնորհակալութիւն հասարակական և յատկական կոնդակօք։ Ուրեմն՝ խնդրի ի յԱստուածասէր և ի խոհական սիրելւոյդ մերմէ, հետևել և ջանալ զսկսեալդ այդ ձեր գործ հանրաշահ և Աստուածահաճոյ՝ ի գլուխ տանիլ, և յաւարտն բերել՝ զի աւուրբ յառաջ խաղաղացեալ ձեր և մեր, միամտութեամբ ի գործս մեր կանխեսցուք։ Եւ մանաւանդ հոգ տարջիք ֆարմանին և բէրաթին հանել և ընդ Ստեփաննոս վարդապետին մեզ ժամանեցուցանել, առ որ սպասեմք ակնաղէտ եղեալ։ Եւ որպէս ի սրբոյ Աթոռոյս և ի մէնջ վայելելոց էք զօրհնութիւնս և զշնորհս, նոյնպէս և ի տեառնէ Աստուծոյ ունիք վարձատրիլ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։ Այսպէս գիտացեալ առ այժմ, և զսիրոյ և զմխիթարութեան թուղթդ ի մէնջ անպակաս արարեալ, ողջ լեր ի Տէր, և զօրացեալ նովաւ, և շնորհք սրբոյ Աթոռոյս Լուսակերտի եղիցի ընդ քեզ և ընդ քոյսդ, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս, և ի նոյեմբերի... ի լուսածաւալ և ի շնորհատու Աթոռըս ամենայն Հայոց՝ ի սուրբ Էջմիածին։

ՅԽԱ. Ի Պօլիս առ պատրիարգն Պօլսոյ Յովհաննէս։

Զի մինչ երբեմն կաղակարծիւ զտրտմականն և զլուսադրականն ջամբէաք քեզ, և թախծեալ ոգւով մաչէաք ի վերայ անմիաբանութեան ազգիս, և ի վերայ տարագրութեան պատուականի անձին ձերոյ, և նովիմբ ոգւով առ ձեզ մատչէաք ի մխիթարութիւն, այժմ ահա շնորհօք տեառն՝ ի բաց եղեալ զայնս ամենայն զթաղձականս և զտրտամաչս, ուրախականաւ բանիւ բերիմք առ սիրելիդ ոգւոյս՝ աւետաւոր լինելով զխաղաղութենէ ազգին, և զ՚իբաց բարձմանէ մրրկալոյդ վըրդովչաց։ Եւ դուք ևս մինչ տարապարտուց վարատեալք՝ ի վայրդ օտար տաղտապէիք, և այցելութեան տեառն հասեալք, արդ մերձեցաւ նոյնն, և ճշմարտութիւն Աստուածային ծածկեալն ընդ մասամբ ստութեան զաչացուաց՝ բացապէս ճառագայթարձակ նշողիւք յայս, որք անախտակիրք են, արփիաւորեալ ջահաւորեցաւ, որովք այսօր համակ ազգօք և բազմերամ միաբանութեան խմբիւք զփառս գոհութեամբ՝ այնմ, որ թեակոխեալ զամենայն կամս մարդկայինս և զընտրութիւնս նոցին՝ բարձրացաւ, և զել զնովիմբք, և զիւրն զարգարն և զբարին տնօրինեալ յաջողեաց, և ետ մեզ պարծիլ և պանծալ ամենայն ուրեք առաջի ամենից մերով անմեղութեամբ՝ վերառաքեցաք։ Ուստի՝ և դու սիրելիդ իմ մոռացեալ զվիշտսդ՝ խրախուռնեաց արդ ի աէր, և զօրացեալ նովաւ՝ բուռն հար յայսմհետէ կրկին զուղղութենէն և զճշմարտութենէն. որովք հաստանեմք զուղին անվթար, բայց մի՛ նովին ճշմարտութեամբ վարիլ առ. նախանձաբեկս և առ. յանցաւորս, որք ջանային ունայնացուցանել զիրաւունս մեր, և առ ոտն հարկանել զԱստուածային և զմարդկային ընտրութիւն և զհաճութիւն, այլ ընդ ամենեսին քաղցրութեամբ վարեալ՝ սփոփել զնոսին. զի զչափ առցեն հեզութեանց մերոց և հայ-

բախնամ քաղցրութեանց. որովք առաւել պարտաւորեալք զան առ լոյսն ճշմարիտ, և խոստովանին զոր ինչ յանգէտս գործեցին։ Այլ արդ՝ Թողեալ զայսոսիկ այժմ, զայս գրեմք սիրոյդ՝ ընկալեալ զԹուղԹս ի հարազատիցն մերոց ի Ստեփաննոս արքեպիսկոպոսէն, և ի յԱզալեկեան պարոն Գէորգէն և յԱմիրիկեան խոջայ Նիկողոսէն յամսյս Ժ. յաւուր երկուշաբթի ընդ Բաթըր անուն Թաթարին, գիտացաք զանցսն Պոլսոյ, և զօրանալն ճշմարտասիրաց ընդդէմ ճշմարտութեան մաքառողաց. որպէս զսոյնս և դու սիրելիդ մեր հարկիւ մերձ գոլով գիտացեալ ես, զորովք մեք զանց առնեմք աստէն։ Բայց տացէ քեզ տէր, որպէս և գրեննն մեզ, խաղաղութեամբ հասանիլ ի սեպհական վիճակն քոյ, և զամենայն ինչ քոյով խոհական կառավարութեամբ ի բարին յանկաւորել, և զօրպիսութիւն փութով մեզ ազդել, զի և մեք ըստ այնմ կանխեսցուք ի գործ և ի գրութիւն իւրաքանչիւրոցն ըստ իւրեանց արժանեաց։ Ուստի՝ սպասեմք ուրախական Թղթոց ձեր, և այլոց հարազատից ի տեղեկութիւն գործեցելոցն անդանօր։ Զայսքանս վաղվաղեալ առ սիրելիդ՝ մնամք ձերոցըն։ Ողջ լերուք ուրեմն ի յողջ գլուխն Քրիստոս, և շնորհք սրբոյ տեղւոյս նոյնաիջի եղիցի քեզ զօրաւիգն Ամէն։

Ի նոյեմբերի... 1802 ի սուրբ Էջմիածին։

ՅԻԲ. Ի Կարին, առ հասարակութիւն նոցա, ընդ Բաթըր Թաթարին:

Ն. ընդ օրհնութեանս Աստուածայնոյ, և հոգևոր սիրառաք ողջունիւ, ծանուցումն եղիցի ընտիր և սիրեցեալ ժողովրդոցդ մերոց, և մշտահարազատ զաւակացդ լուսոյ ծնողիս ձերոյ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի սովորութիւն է, և մանաւանդ օրէն է, զուրախալիսն գրով և բանիւ յայտնել սիրելեաց, և հաղորդս այնց առնել զնոսա. եթէ այսպէս, ապա քանի՞ մանաւանդ մեզ ճա՛հ է գրել և ազդել ձեզ զբանս բերկրականս, և զուարթարարս ոգւոյ, և այնու խրախուսել զձեզ, և յորդորել ի յուրախութիւն հոգևոր, որ ցարդ խռովութեամբ և ազգի ազգի հոգսակրութեամբ տառապէիք վասն անարատ հարսինս երկնաւոր փեսային հոգւոց ձեր հաւատոյ մօրս, և յատուկ ազգիս պարծանաց տեղւոյս՝ սրբոյ տաճարիս լուսակերտի, աստուածաբնակի և Քրիստոսաիջի, զոր ջանային ազատացուցանել արք նախանձոտք, և յամենայն բարեզարդութեանց խրթնացուցանել։ Վասնորոյ մատչիմք ահա առ սիրելի որդիսդ մեր այսու օրհնառաք և աւետաւոր նամակաւ՝ ի փարատել ի ձէնջ և ի վշտատար սրտից ձերոց՝ զամենայն նիւթս տրտմութիւս և Թաղձականս զսերմանեալսն ի սկզբնաչար բանսարկուէն, աւետարանելով ձեզ զխաղաղութենէ ազգին, որ ի Կոստանդնուպօլիս, և զի բաց բարձմանէ չարաշշուկ խռովչաց, և զնորատունկ խաղաղութենէ ի խաղաղարար Տեառնէն։ Այնզի՝ եկին ժամանեցին առ մեզ Թուղթք ի Պոլսոյ ի ձեռն սուրհանդակի. յորս ծանուցեալ էին մեզ զյաջողութիւն Աստուծոյ, որով զծածկեալ ճշմարտութիւն ի յաշտանակ եղեալ յայտնեալ աշխարհի. և զամենայն զկամս մարդկայինս և զխորհուրդս նոցա, (որ հալէր յաւեր և յապականութիւն ազգիս և մեծի Աթոռոյս) ցրուեալ, զիւրն է տնօրինեալ զբարին և զարդարն, որպէս ցարդ և դուք գիտացեալ իսկ էք հարկիւ, և կամ ունիք գիտել, զորովք մեք այժմ աստէն զանց առնեմք։ Արդ՝ մեք սպասեմք Կոստանդնուպօլսոյ իշխանաց և հասարակաց Թղթոցն, և ֆերմանացն և բէրաթացն, որք գալոց են փութով առ մեզ յատուկ սուրհանդակօք։ Եւ յայնժամ ունիմք լիապէս մատուցանել և ծանուցանել ձեզ զամենայն ինչ։ Զայսքանս արդ գիտացեալ, և ի սէր և ի յորդիական մտերմութեան հաստատուն կացեալ, ողջ լերուք շնորհիւ կենսատու սուրբ խաչին Յիսուսի, և օրհնութիւն Հօրն մերոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, և Շնորհք Աստուածաբնակ սրբոյ Գահիս եղիցի ընդ ձեզ և ընդ ամենեսին, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ Թուոջս՝ և ի նոյեմբերի ...յԱստուածակառոյց և ի շնորհածաւալ Աթոռս ամենայն Հայոց՝ ի սուրբ Էջմիածին։

ՅԻԳ. Առ Տէր Գասպար քահանայն ի Կարին։

Զի ի սոյն ամիս ի Ժ. զառ ի քէն սիրով սրտի, և ջերմեռանդ տենչանօք, և որ-

դիական պատարուն և կղկաթին փափաղմամբ դրանդ շնորհաւորական, և լաւէտ բերկրական, և դուարթարար ողուոյ, ընթերցեալ գիտացաք զ՚ինմայսն, միանգամայն և՝ զսիրտ և զոգի չարահիւսողիդ՝ այր ինամակէ ճանաչելով։ Որոց գրուածոցդ այժմ ի մէնջ ոչ այլ ինչ պատասխանատրի, զանց դնոքումբք արարեալ, ըստ ուրում լիապէս իրաղէկ լեալ անցիցն Պօլսոյ՝ չունիք զպէտս անդրէն զեկուցմանց, բայց միայն այս։ Զի որպէս դուք և այլք ճշմարտասէրք խայտալք ընդ իրեարս ի վերայ Աստուածայլին նախասահմանութեան, և հռչակաւոր ծաղմամբ լուսափայլ ճշմարտութեան, նման դմին, և առաւելապէս ի վերայ այնմ հրճուիմք։ Որ ոչ անտես արար Տէր զապաւինեալքս ի յինքն, և զլցեալքս ամենայն վստահութեամբ ի նորին միակ ճշմարտութիւն անխաբ և անթաքչելի ի մարդկային հնարից։ Ուստի՝ ի լսելն մեր և ի դիտելն ստուգապէս զայնոսիկ համբաւս, զորս լուեալքդ էք այդր՝ ի հաւատարմացն մերոց արժանահաւատից՝ զանազան խրախուսական հիւսուածովք բանից, զփառս ի սրտէ բազում դոհութեամբ՝ տնօրինօղին և հաստատողին այսմ այսպէս սքանչելի իմն հրաշիւք՝ վերառաքեցաք։ Որպէս զի՝ որպէս սկսեացն, նոյնպէս և զաւարտն ե զկատարածն պսակաւորեալ տացէ մեզ տեսանել և վայելել խաղաղական կենցաղավարութեամբ և բարեկրօն կարգաւորութեամբ. քանզի՝ կամիմք, զի և զայլսն զփեռեկտեալսն, զախտացեալսն ե զարտաքոյ մնացեալսն ես՝ բժշկել դարմանամատոյց լինել՝ և ի գլուխն Քրիստոս բաղազանել՝ զօդել, ե ի փարախ սուրբ եկեղեցւոյ ի դալար վայրի ժողովեալ մակաղել՝ որովք վարձուց և երկնաւոր փոխատրութեանց արժանաւորիլ, և երեւիլ ներօղ և գթած առ ամենեսին ըստ կոչման ե պայտաւորութեան աստիճանի մերոյ՝ նմանելով կենարարին Յիսուսի ճշմարտապէս հեզոյն ե խոնարհին, զորոց ունիք այլուր յայլում ժամու լսել և գիտել ի մէնջ օրհնութեան, սիրոյ, և յորդորանաց ե բարեկարգութեան կոնդակօք։ Այլ դու սիրելիդ իմ ի սէրդ որդիական, և ի հարազատութիւնդ օգտարար հաստատուն կալով՝ ունիս վայելել զշնորհս և զօրհնութիւնս ի սրբոյ Աթոռոյս և ի մէնջ ըստ աշխատանացդ և ջանիցդ ընդ այլ մտերմաց։ Ուրախացաք դարձեալ՝ ի վերայ զալստեան և մերձելոյն սիրեցեալ եղբօր մերոյ՝ Տեառն Ցակորայ արքեպիսկոպոսին, զորոյ զգալստենէն ի Թօխաթ դրեալ մեզ՝ ծանուցեալ էիր, յաջողեսցէ Տէր խաղաղութեամբ գալ ժամանել ի քաղաքդ օրհնեալ և մեր լսելով և վայելելով զգուտ սէր նորին՝ բերկրիլ։ Առ որ քանիցս գրեալ թուղթքն մեր և առ սիրելիդ յղեալ՝ յուսամք յիւրաքանչիւրում պահու ի յընկալնուլդ հասուցեալ իցես ինքեան, թէպէտև՝ մեզ զոչինչ ունիս ազդեալ զայնց թղթոց։ Ամենայն սիրելեաց և ընդ քեզ միակամ և միասիրտ եղեալ քահանայից՝ նուիրեմք զողջոյն և զօրհնութիւն, և խնամոց Տեառըն յանձնեալ ցանկամք տեսանել և ի նոցունց զպտուղս մեծի հաւատարմութեան, և սիրոյ արժանաւորիլ։ Նաև՝ ընդ նոյն սուրհանդակին գրեցաք զհամառօտ կոնդակ իմն առ հասարակութիւն քաղաքիդ, զոր ի ընկալնուլն՝ ըստ պատշաճի և վայելման ընթերցեալ ի եկեղեցին, զկնի և զայնմանէ, և զայլոց եղելոց եթէ լինիցի գրեսցես մեզ։ Զայսքանս գիտացեալ նովաւ, և Շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ ձեզ, Ամէն։

Ի Նոյեմբերի ... ի ՌՄԾԱ թուոջս. ի մայր Աթոռս ամենայն Հայոց՝ ի սուրբ Էջմիածին։

ՅԻՓ. *Ի Կարին առ խօջայ Հայրապետն:*

Զի զսիրոյ, շնորհաւորութեան և զուրախակցութեան զթուղթ ձեր ընկալեալ՝ ծանեաք զջերմեռանդութիւն և զմեծագոյն հաւատարմութիւն սրտից ձերոց. զորս ունիք առ Շնորհատու ծնօղս ձեր ի վաղ ժամանակաց հետէ, ե մանաւանդ առ մերս հոգևոր հայրութիւն, որով և ուրախացեալ օրհնեցաք զձեզ, զորս օրհնեսցէ Տէր հոգևոր օրհնութեամբ իւրով, և բարեյաջողութեամբ պահեսցէ յաշխարհի երկար և խաղաղական կենօք, և զամենայն զբանս և զգործս ձեր ի բարին տնօրինեալ՝ օգնական եղիցի ձեզ։ Այլ և ի վերայ ուրախական համբաւոյն, ե անցիցն Պօլսոյ՝ իբրև մտերիմ բարեկամ և հարազատ՝ ուրախանալն ձեր և խնդալն, և զշինութենէ և զպայծառութենէ սրբոյ Գահիս, և գահակալիս սորին խոկալն, և այնց ցանկալն ձեր գիտացեալ՝ մեծապէս շնորհակալեցաք զձէնջ. տացէ

Տէր, որպէս մեք կամիմք, և դուք յուսայք, այնպէս լինել, զբանն ի կատարն հասեալ տեսանել, և հանդերձ ձեօք և այլովք մտերմօք զփառս գոհութեամբ առ բարձրեալն մատուցանել։ Սպասեմք մեք այժմ զալստեան կրկին արքունական նոմոսացն ֆերմանին և բէրաթին, և այլ իշխանաց և ժողովրդոց թղթոցն, զի և մեք յայնժամ միամտութեամբ ի գործս մեր լիցուք, և իւրաքանչիւրոցն ըզմերս օրհնութիւն ընդ շնորհի սրբոյ տեղւոյս մատակարարեսցուք, որպէս յայնժամ և դուք ունիք ընդ սիրելեաց և ջատագովացն մերոց վայելել կշտապինդ։ Նաև զթաթարն, որ եկեալ էր առ մեզ ի Պօլսոյ՝ դարձուցաք ի Բայազիտ առ փաշայն, զի սիրով տացէ մեզ զԴանիէլն յառաջ քան զչաւուշաց [38]) գալն, և բռնութեամբ բերելն զնա այսր։ Ընդ թաթարին և զմի եպիսկոպոս ոմն ևս եդաք։ Խանն մեր ևս վասըն այսմ գրեաց առ փաշայն, և զերեւլի ոմն յղեաց ընդ թաթարին, տակաւին չեն վերադարձեալ գնացօղքն ի Բայազիտ, տեսցուք թէ փաշայն և Դանիէլն զի՛նչ են պատասխանելոց։ Բայց ի վերայ այսքան ուրախութեան մերոյ՝ մինչ իմացաք զմահ սիրելւոյն մերոյ Մելքոնին, յիրաւի տրտմեցաք. Տէրն կենդանեաց և մեռելոց՝ լուսաւորեսցէ զհոգի նորին, և զտրտմեալ սիրտս ձեր մխիթարեսցէ, և փոխանակ զայլ ուրախութիւն և զդիւրութիւն սրտի շնորհեսցէ ձեզ։ Պատուիրեմ հարազատից սրբոյ Աթոռոյս՝ կալ և մնալ հաստատուն ի դոյն սէր և ի հպատակութիւն, և ի յօգտարար և Աթոռաշահ բանից և ի գործոց անվերջանալի զձեզ ունիլ, որովք վարձատրեալ լինելոց էք ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։ Զայսքանս համառօտիւ գիտացեալ ձեր առ այժմ, և զսիրոյ թուղթս ձեր ի մէնջ անպակաս արարեալ՝ ողջ լերուք ի Տէր, և զօրացեալք նովաւ, և Շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ ձեզ միշտ, Ամէն։

Ի նոյեմբերի...ի ՌՄԾԱ թուոյս. ի մայր Աթոռս ամենայն Հայոց՝ ի սուրբ Էջմիածին։

ՑԻԵ. *Ի Կարին առ Օքսուզեան մահտեսի Աբրահամն, եւ եղբօր նորին Մերկերիոսին։*

Զի՝ օրէն է՝ ընդ ուրախալիսն ուրախանալ, և ընդ տրտմելիսն տրտմիլ։ Արդ՝ գիտեմ ստուգիւ՝ զի ի լսելն ձեր զզանազան բանս տրտմառիթս ի նախանձաբեկաց դժէնջ, իբրև հարազատ որդիք ցաւելով ի վերայ տառապելութեան ծնողի, տրտմեալ լիցէք ընդ ձախողակի դիպուածս անարատ ծնողիս ձերոյ մօրս լուսոյ ըստ մեզ։ Ուրեմն՝ ահա այսօր մինչ տէրն գթառատ եբարձ զամենայն նախատինս նախատչացն, և իբրև զարեգ լուսալիր ճառագայթաւէտ ճանաչմամբ բացափայլեաց յաշխարհի զզադեալ ճշմարտութիւն ի պարծանս ճշմարտասիրաց, և յամօթ ստարոցելոցն ի նմանէ, արժան է ձեզ ուրախանալ ընդ այս, և զփառս գոհութեամբ առ տուիչն այսպիսի պարգևաց մեզ ընդ վայր բամբասելոցս՝ նուիրել։ Որ ինչ անցք և եղելութիւնք, որք գործեցեալք են նորապէս ի Պօլիս՝ յայտնի ելով ձեզ, թողումք ի բաց՝ զայս միայն գրելով այժմ։ Զսուրհանդակ թաթարն ի Պօլսոյ աւետաբերն ցնծութեան մեզ ընդ միոյ եպիսկոպոսի հանդերձ այլովք ոմամբք յղեցաք ի Բայազիտ գրելով միանգամայն և առ փաշայն նորին. զի առաքեսցէ զԴանիէլն ի սուրբ Աթոռս. վերջացուցանելով զվէճն և զխռովութիւն ի միջոյ. և դեռ չեն վերադարձեալ անտի գնացօղքն։ Նա և՝ սպասեմք ըստ գրութեան Պօլսեցւոցն՝ զալստեան Գրիգոր Խամսեցւոյն, յաջորդութեան Յովհաննէս պատրիարգին, և նորագոյն ֆէրմանացն, և արքունական նոմոսացն, և զալստեան թագաւորական մարդկանցն՝ չաւուշաց և այլոց, և մանաւանդ հասարակական թղթոց նոցին. զի և մեք յայնժամ ի գործս մեր լիցուք միամտութեամբ. որպէս յայնժամ ես ունիմք լիապէս գրել ձեզ սիրելեացդ իմոց օրհնութեամբ։ Այլ զայսքանս իբր առիթ ուրախութեան և նշան սիրոյ գրեալ առ սիրելիդ վաղվաղակի ի սուղ միջոցիս համառօտիւ ի պատասխանի քոյդ գրուածոց, թողումք զայլն յայլում պահու ծանուցանել, միայն պատուիրեմ սիրելեացդ իմոց՝ ի սէր և ի ջատագովութիւն անյեղլի և անկասելի կալ, և

ի յօդաարար բանից, և յԱստուածահաճոյ գործոց անհնուազելի լինիլ, և մնալ ի կատարեալ հաւատայմութեան և յայսմհետէ առաւելապէս, որպէսզի կատարելապէս ըստ հոգւոյ ընդունիցիք զօրհնութիւնս և զվարձս, և զմեծազօր շնորհս Աստուածաինջի սուրբ անդւոյս ի հոգիս ձեր։ Այսպէս դիաելով ձեր և զսիրոյ դիր ձեր՝ ընդ որդիսութեանց քաղաքիդ ի մէնջ անպակաս առնելով, ողջ լերուք ի Տէր և զօրացեալք նովաւ, և շնորհք սրբոյ Աթոռոյս՝ եղիցի ընդ ձեզ, Ամէն։

Ի ՌՄԾԱ թուոջս, և ի նոյեմբերի... ի մայր Աթոռս ամենայն Հայոց՝ ի սուրբ Էջմիածին։

ՅԺԶ. *Ի Պօլիս առ Բաշքաջիըկեան մահտեսի Յովհաննէս ամիրային։* (Մէնկլէն փէտ ի Փափազ օղլու Գէրին։)

Եւ Դուկասու հանդուցելոյն և այսր, նմին իրի ոչ ունիք զպէտս երկարապատում բանից։ Այլ և՝ ի յօժմանէն մերմէ մինչև ցայժմ ևս՝ թէ որչափ խռովութիւնք ծագեցան ի քաղաքիդ և յազգս մեր տարաբնակ, լաւապէս յայտնիք են այնիւ սիրելւոյդ մերում։ Կողմանցս և սրբոյ Աթոռոյս զանցսն ևս ի զանազան ժամանակի մեք ունիմք սիրոյդ դրեալ օրհնութեան թղթովք, բայց հասեալք են եթէ ոչ, չէ մեզ յայտ. միայն զայսքանս դիտեմ, զի եթէ հասեալք էին, հարկիւ և դուք պատասխանէիք մեզ։ Արդ՝ թողեալ զայսոսիկ՝ ըստորում ոչ է ժամ երկայնել զբանս, զհարկաւորսն և եթ դրեմ ընդ սիրելութեան քում։ Զի ի թղթոց ոմանց սիրելեաց գիտացեալ զմեծագոյն սէրդ, և զբազմադիմի հաւատարմութիւնդ, զորս ունիս առ շնորհատու ծնօղ մայրս քոյ լուսակերտ, և առ մերս հոգևոր հայրութիւն. որպէս և գործով և արդեամբ ցուցեալ զնոյնն ջատագով ևս լեալ ճշմարտութեան ի բաց հեռանալով յամենայն բանից նենգաւորաց, և ի խռովարար գործոց նոցին. որովք և ժառանգեալ քեզ զանուն բարի յաշխարհի. զգովութիւնս ի մարդկանէ, և զվարձս բազումս յԱստուծոյ, ի սրբոյ Լուսաւորչէն և ի սրբոյ Աթոռոյս մեծէ։ Ցիրաւի՝ որպէս ակն ունէաքն ի քէն տեսանել և վայելել զբարիս ըստ քոյդ աղնուաբարոյութեան, նմանապէս և արդիւնաւորեցաւ, և կատարեցաւ։ Քանզի յորէ տեսութեան մերոյ զքեզ ցարդ՝ ի չարս հաւատարմի և սիրելւոյ համաթուեալ զսիրելիդ պահեալ եմք ընդ քեզ հաստատուն զայն սիրելութիւն՝ զոր և երբեմն երբեմն գրով ևս եմք յայտնեալ զայն։ Ուրեմն՝ օրհնեսցէ զքեզ տէր օրհնութեամբ երկնաւորաւ և անանցանելեաւ և բանից և գործոց քոց ևս զբարի յաջողութիւն շնորհեալ պահեսցէ ընդ թևօք ամենազօր խնամոց իւրոց երկար և խաղաղ կենօք, և վարձատիր լիցի քեզ ըստ չափու սիրոյդ և աշխատանացդ։ Եւ արդ՝ պատուիրեմ կրկին սիրելւոյդ իմոյ. ի դոյնն անփոփոխելի կալ և մնալ՝ և օրքանզօր առաւելուլ զսէրդ և զհարազատ որդիութիւնդ՝ և բանից և գործոց սրբոյ Աթոռոյս, և սիրեցեալ որդւոյն մերոյ Ստեփաննոս արքեպիսկոպոսին ևս օգնական և օժանդակ լեալ՝ նպաստամատոյց լինել. և զբարին և զօգուտն սրբոյ Աթոռոյս և մեր խորհել և գործել որպէս զի՝ օրհնութեան և շնորհակալութեան արժանաւոր զտանիցիս միշտ։ Ի նոյեմբերի Ժ. եկն Բաթըր թաթարն առաջին. և զեպիսկոպոս մի առաքեալ ի Բայազիտ՝ զԴտնիէլ վարդապետն բերել տուաք ի սուրբ Աթոռս ի նոյն նոյեմբերի ԻԼ. և պահեմք յարգանօք։ Ապա՝ ի դեկտեմբերի ԺԶ եկին զսիւրկիւն ֆէրման և զմահսէր բերողքն. զորըս ի հանդիսի ընթերցեալ՝ փառս մատուցաք տնօրինօղին Աստուծոյ։ Յետ որոյ՝ ի սոյն դեկտեմբերիս ԻԼ. եկն մեր Մարտիրոսն, և Գրիգոր պետն ևս ի Ղարս մնացեալ վասն հիւանդութեան՝ գալոց է յայս քանի աւուրս. այսպէս գիտացեալ, ողջ լեր ի տէր, և զօրացեալ նովաւ, և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ Ամէն։

ՅԺԷ. *Ի Պարսից առ Հայս թարգմանութիւն գրութեան ղրաֆ Վօրօնցովի որ առ Մահմէդ խանն չուխուր էսատ Երևանայ։* *)

Ձերոյ բարձրադահութեան իբրև արփի յայտ և երևելի է որ վաղեմի կանոնիւք և կարգագրութեամբ, և կամայաջորդ ձևակեր-

*) Այս թղթի շատ աղաւաղ օրինակ կար մեր ձեռին։

տեալ հնազոյն ծիսիւ խմբից կրօնաւորացն Հայոց՝ և համահաճութեամբ բոլոր ժողովրդականաց՝ նոյնոյ յիշեալ ազգին զամենադիտունն ի Ցիսուսեան գիտնականաց, այսինքն, հոգեւորականաց և զպարծանքն լառաքեացն քրիստոսականաց զԴանիէլ հայրապետն ի հայրապետութիւն ընտրեալ, և ըստ ծանարտակաց, այսինքն, արզ ու մահզարից և խնդրանաց ամենից հողեորականաց՝ և ընդհանուր ազգին Հայոց՝ ամենազօրման և ամենամեծ կայսրն ստուերն Աստուծոյն իմոյ, եւ զերամբարձ Թագաւորն և Սուլթանն Րումի, այսինքն Թուրքաց. իւրաքանչիւր ամենամեծ Թագաւորքն համայն գԹութեամբ, փառաց իւրեանց պատկանելի շնորհիւ երկոքումբք գերամբարձ հրովարտակօք. զվերոյգրեալ Դանիէլ հայրապետն. ի Զուխուր Խսատին Երեանայ՝ տեղւոջ իշխանութեան ձերոյ բարձրագահութեան, ի Իւչքիլիսայի, այսինքն Էջմիածնայ, հայրապետ կարգեալ վերահաստատեցին, և մաքրահոգի հայրապետն մեծայարգոյ՝ զօրութեամբ բանից արքունական հրովարտակաց, ի ծայր սահմանի տէրութեան Օսմանցւոց ի Իւչքիլիսայն Բագրեանայ ի ժամանիլն՝ արգելեալ և զկայ առեալ եղե, փափագանօք արդեանց և պաշտամանց պայծառափայլ տեղւոյն Իւչքիլիսայի Զուխուր Խսատին Երեանայ, այսինքն Էջմիածնայ, զի ընտիրն ի կրօնաւորաց փառաիզձ Դաւիթ վարդապետն օգնութեամբ և ձեռնտուութեամբ ոմանց իշխանացն Ատրպատականի զաստիճանն կաթուղիկոսութեան՝ այսինքն, հայրապետութեան ազգի Հայոց անիրաւաբար յափշտակեալ, և մինչ ցայսօր զարժանին հայրապետական գործակալութեան զԴանիէլ հայրապետն ոչ թողու, որ մտեալ յԷջմիածին ըստ անուանակոչութեան, և ըստ աստիճանին որով հուչակեցեալն է ի նոյն պարապեսցի. ի սոյն միջոցի ամենամեծ կայսրն իմ, ամենամաքուր պատգամաւ իւրով հրամայեաց ինձ բարեկամի և սիրոյ գործակցի ձերոյ զորպիսութիւն վերոյիշելոց՝ գրութեամբ ներկայացուցանել ձերոյ բարձրագահութեան. բարեկամութիւն իմ ես վասն բարձրագոյն հրամանի սոյն սիրոյ նամակ գրեալ առաքեցի. յայտ լիցի որ ամենամեծ կայսրն ընդհանուր Ռուսաց նմանապէս մեծաղահ Թագաւորն Օսմանցւոց մերձակայ դրացի գոլով ձերոյ բարձրագահու թեան՝ հաւաստի են մտերմութեան ձերոյ՝ որ ի ժամանել սոյնոյ զեկուցման բոլոր որպիսութեանց վերոգրեցելոց, ըստ զօրութեան և բացայայտութեան գերամբարձ հրովարտակացն արքունականաց, բարձրագահութիւն ձեր՝ զանտեղի վէճն՝ ընտրոյն ի կրօնաւորաց՝ Դաւթայ վարդապետի, ըստ բանից հրովարտակացն խափանեալ լռեցուցանես, և զկողմնապահսն և զաղերսարկուս նորին ի դրանէ ձերմէ սաստեալ մերժես, և զպախուրց բարենկատ խոկման ձերոյ՝ ի նուաճումն Դաւթայ և կողմնականաց նորին դէպ առ կողմն գերագունին միադաւանից, և ամենապատուոյն ի կրօնաւորաց Դանիէլ հայրապետի դարձուցանելով՝ նորին մեծութեան օգնութեան և ձեռնկալութիւն արարեալ. Զկայ առեալ տեղւոյն, կատարեալ պատուով և Թարց իմիք բանի, ծայրագոյն յարգանօք յԷջմիածին մուծեալ՝ ի հայրապետական Աթոռոջ իւրում բազմեցուցմամբ զգործառութիւն փակելոյ և բանալոյ բոլոր ազգին Հայոց՝ որպէս որ նախնի հայրապետաց լեալ է, նմա յատկացուցանէք. Եւ ըստ պաականելոյ համբաւոյ ձերոյ յամենայնի իրի, և յամենայնի դիպուածոցն՝ նորին, հոգածու և խնամատար եղեալ, զոչան հովանաւորութեան, և զջան պահպանչութեան ձերոյ, և զամենայն հարկաւոր հետեւողութիւն ձեր ի նմանէ ոչ խնայելոց էք ոյր վասն՝ և հաւատարիմ լիջիք, որ փոխարէն սոյնոյ բարեհաճութեան և բարեընթաց դեղեցիկ հոգածութեան ձերոյ, այնչափ շնորհիւ ամենամեծ կայսերն, և անհուն ողորմութեամբ մեծի Սուլթանին Թուրքաց՝ պարփակեալ լինիք, իսկ եթէ ի սոյն իրի յամառումն եղեալ ընդդէմ հրամանի գերամբարձ հրովարտակաց ընթասցի, Թարց կարծեաց՝ և առանց երկբայութեան՝ երկոքին մեծագոյն տէրութիւն դրացիք ձեր տհաճին և վիրաւորին ի ձերոյ բարձրագահութենէ. Բաց ի սմանէ, յայսմիկ միջոցի, ամենամեծ կայսրն իմ, գերմաքուր պատգամաւ իւրով հաստատապէս հրամայեաց ինձ՝ զեկուցանել ձեզ, որ Հայոց հայրապետութեան յափշտակող ընտրոյն ի կրօնաւորաց Դաւթայ վարդապետի խրատեսցիք, որ յանիրաւ դաւոյ իւրմէ յետս չողիցի, և զգործն հայրապետութեան յօժարութեամբ և հաճութեամբ իւրով, Դանիէլ հայրապետին՝ որ արժանի է նոյնոյ պայծառ աստիճանի, և ըստ զօրութեան բարձրագոյն հրովարտակաց կացուցեալ է՝ և հաստատեցեալ եթէ յետս դարձուսցէ, արքունի անբաւ

շնորհաց ընդունակ լինիլ լուսասցի։ Որ և վասն հաւաստութեան իւրոյ սոյնոյ սրբացեալ բարձր հրամանի, ի կողմանէ նորին մեծութեան առ ընթեր իւրոյ բարձրութեան Դանիէլ հայրապետի ես ղեկուցաւ, որ ողորմութեամբ Աստուծոյ՝ զկնի ժամանելոյ և բազմելոյ իւրոյ ի նպատակեալ տեղին, զպատուելին ի վարդապետաց Դաւիթն համանման միւս հողեորական եղբարց, ընդ հովանեաւ շնորհաց իւրոց ընկալեալ ենթ ստուերի պաշտպանչութեանն և լարգանաց իւրոց րնդունեսցէ, և ի մէջ ընկերակցաց պատուեալ և ըստ արժանոյն աստիճանի բարձրագլուխ արասցէ։ Եւ ըստորում վասն մեծագոյն հրամանի սոյնպիսի զեկուցմունք հարկ եղե, սոյն նամակ սիրոյ գրեցեալ բացայայտեցաւ։ Մնամ միշտ բարեհաճ բարեկամութեամբ պատրաստ ամենայն հարկաւոր խնդրանաց ձերոյ բարձրազահութեան կատարող, աւուրք և բարեյաջողութիւն ձեր եղիցի ըստ ըղձի ձերում։

Բարձրազահ աղատ աթոռ բազմող։ Եւ յատուկ խորհրդական ծածկեալ խորհրդոց յատկացելոց իւրոց ամենամեծ և վերամբարձ ողորմութեան, և արքունի շնորհաց։

Առաջին նախարար՝ նախարարաց լայնատարած տէրութեան, եգլխաւոր դատաւոր յատուկ դատարանաց և ազատական ընտանի պալծառափայլ սենեկաց իւրոց ստուերի՝ Աստուծոյ՟ թագաւորին խնամակալին արարածոց։ Եւ կրող զանազան մանեկաց։ Այսինքն սրբոյն Անդրէի առաքելոյն, և սրբոյն Աղէքսանդր Նէվսկիի. և քնեազ Վլատեմիրի սրբացելոյ ի նախկին աստիճանի, և սրբուհւոյն Աննայի, առաջներորդի կարգի։ Եւ մեծ եպարքոս ընդհանուր տէրութեան Ռուսաց։

Դրեցաւ ի գահոյտնիստն Ս. Պետերբուրգ ի 21. հոկտեմ. որ համապատասխան է, ամսոյն րէճէպի 1802։

ՑԻԸ. *Թուղթ ի Կարին առ ժողովուրդն։*

Ցառաջ քան զայս զՍտեփաննոս արքեպիսկոպոս և հարազատ որդին սրբոյ Աթոռոյս զանազան հարկաւոր թղթովք, առաքեցաք առ ձեզ այտի գնալ ի մեծն Պոլիս, ընդ նմա էին և երեք մահսէրք ի միաբանից և յերկրացւոց, մինն է պատասխանի մահսէրակերպ թղթոց ձերոց զոր յղեալ էիք առ ինքեանս։ Երկրորդն էր առ նոյն ինքն Դանիէլ վարդապետն, զի դադարեսցի ի սնոտի ձկտմանցն։ Եւ երրորդն է առ Պօլսեցիսն։ Ընդ որս և զերապատիւ խանն երկրիս գրեաց նախ ի դուռն արքունի տէրութեանդ Օսմանցւոց, և առ գործակալսն նորին, և ապա առ Դովլէթլի փաշայսն տեղւոյդ, Ղարսայ, Ախալցխայու և այլոց, ծանուցանելով զրանին զիսկութիւնն։ Եւ զայոոսիկ տաճկերէն թուղթսն ընդ հաւատարմին իւրոյ Իսմայէլ պէկին և ընդ մեր վերոյգրեալ Ստեփաննոս արքեպիսկոպոսին առաքեաց։ Որք ի հարկէ մինչև ցարդ կամ հասեալք են առ ձեզ, և դուք գիտացեալ էք զգրուածսն ի նոսա, և կամ հասանելոց են։ Այլ արդ՝ որովհետև Դանիէլ վարդապետն ի քաղաքէ այտի զսևագլուխ մի Մարտիրոս անուն, ընդ Դովլէթլի փաշայի թաթարին յղեալ էր յԵրեան առ գերապատիւ խանն մեր հանդերձ ֆարմանի օրինակաւն և զանկարելի խնդիրս և մանաւանդ թէ զվնասակարս, զտնաքակս և զընդէմ օրինաց մերոց առաջի արարեալ և աղաչեալ ի ձեռն ծանր և անգրելի կաշառաց կատարեալ զիւր ապօրինաւոր և զծիծաղելի խնդիրսն, որպէս և սևագլուխն իւր Մարտիրոս եկեալ ի քաղաքս և անկեալ ի զբունսն տաճկաց, թէ զորքան և զորչափ կաշառս խոստանայր թէ մեծամեծացն և թէ աննշան անձանցն, թողում և անտեղի համարիմ գրելն, զի կարէք զայն և յայլոց իմանալ, և զբանս մեր ճշմարտել, արդարև՝ եթէ քարինք Աթոռոյ լոսկի դարձցին, ոչ բաւական սնանան խոստացելոյ գումարին այնմիկ, զորս թարց խղճի մտաց յօժարութեամբ տան ի կործանումն և ի քակտումն խղճալի տանս այսմիկ, միայն թէ զկամս իւրեանց պաշտեսցեն. և զսնափառ ախտս իւրեանց յառաջացուսցեն, զոր թողում մեռելոց թաղել զմեռեալս իւրեանց։ Ուստի բարձրապատիւ խանն մեր, և բոլոր մեծամեծքն իւր, ընդ միաբանից և երկրականաց խորհուրդ արարեալ, և զհետակայ վնասսն և զաւերութիւնսն լաւապէս մտածեալ և զգուշութեամբ քննեալ որք ծագին և յառաջ գան ի փոփոխութենէ, վերադարձոյց զթաթարն և զսևագլուխն ունայն և սկսաւ ինքն մեծապատիւ խանն դրել առ քաջալաղթ թագաւորն Օսմանցւոց կրկին անգամ, ծանուցանելով թէ,

եւ ինքնագլուխ ոչ արարի զայս, այլ կամե-
ցողութեամբ և հաճութեամբ Թիֆլիզու և հիւ-
սիսականաց ժողովողոցն և միաբանից և եր-
կրացւոցս և շրջակայ քաղաքաց կամեցողու-
թեամբն որպէս այսոցիկ ամենեցուն ձեռա-
գրեալ մահուրքն կան աստ. և ես զայսոսիկ
տեսանելով և հաստ լինելով կատարեցի զխն-
դիրս ազգին, և կացուցի զսա կաթուղիկոս
և ձերդ մեծութեան ես գրեալ ծանուցի, և
դուք զֆերման և զբերաթ շնորհեցիք, ապա
պէտ է զի զհրաման ձեր փոփոխել կամիք. և
թէ գրեալ էք ի ֆարմանի ձերում. մինչև
ցմահ մնալ անփոփոխելի, և զիարդ այժմ
ներհակ ֆարմանի ձերում շարժէք և մա-
նաւանդ երկիրս այս Շահինն է, և մեծ Շա-
հըն գիտէ սորա կաթուղիկոս լինելն, և քա-
նիցս անգամ զմեծագին պարգևս և զկրկին
կրկին բազմս վերահաստատութեան է շնորհ-
եալ և ես թարց գիտութեան Շահին ոչ կա-
րեմ առնել ինչ և այլ այսպիսի բանք։ Եւ
վերջապէս խնդրեաց ի թագաւորէն ի բանս
և ի հրամանս իւր մնալ հաստատուն և նորա-
պէս զֆարման անփոփոխութեան սակս մեր
կաթուղիկոսութեան շնորհել։ Որպէս զայ-
սոսիկ գրեցեալքս գիտելոց էք ի յերեելի իշ-
խանէն իւրմէ ի Մահմադ Վ.էլի սուլթանէն,
որք առաքեցան յատկապէս յայդր, և ի հոգե-
ւոր որդւոյդ մերմէ վասն այսմ։ Որպէս զի ե-
կեալ յայդր՝ մինն ծանուսցէ Դօվլեթլու փա-
շային զկամս խանին, և միւսն զցաւս և զտա-
ռապանս մեր և Աթոռոյս մերոյձեզ բարեպաշ-
տիցդ, նոյնպէս գրեաց խանն և առ Դօվլէթ-
լի Ապտուռահման փաշայն, զի ձայնակից և
կամակից ինքեան եղեալ գրեսցէ և խնդրեսցէ
և ինքն Ապտուռահման փաշայն ի Պօլիս ի
դուռն արքունի, և ձեզ հրամայեսցէ հասա-
րակութեամբ զմահսէր առնել վերստին յանուն
մեր, և առ իշխանսն մեր ի Պօլիս յղել և
յորդորել զնոսա ի բաց կալ ի չարաբեր և ի
վնասակար խորհրդոց և ի գործոց իւրեանց,
առաջի դնելով նոցա զկետակայ թշուառութիւն-
սըն և զխղճութիւնսն և զաղէտսն, որք զա-
լոց են ի վերայ ինքեանց, և ողբոց արժանի
տանս, և պատելոց զմեօք, որպէս նշանքն
արդէն երեւին իսկ։ Վասն որոյ և մեք գրեմք
սիրելի և հոգեւոր որդւոցդ մերոց և ճշմարտա-
սէր բարեպաշտիցդ մտածել զապագայ վնասսն
և զխայտառակութիւնս և ըստ այնմ. ուղղու-
թեան ջատագով լինել։ Քանզի դուք քան
զամենեսեան մերձաւոր էք մեզ, և գիտէք
զանցսն թէ արդեօք բռնութեամբ եմք նս-
տեալ և կաշառօք, եթէ ընտրութեամբ ազ-
գին և հաւանութեամբ միաբանիցս։ Ուրեմն
հարկ է ձեզ՝ որք տեղեակ էք ճշմարտութեան,
վկայ մեզ լինել և իբրև սրտացաւ և օգտա-
խոհ որդիս հոգալ զխղճալի տանէս որ մերձ
ընդ մերձ փոյթ է ի կործանիլ և զրով և մահ-
սէրօք զնոյն վկայել ի Պօլիս և ծանուցանել
զանթուելի և զանհամար աղէտս, որք ծագե-
լոց են յերկպառակութենէն։ Քանզի Շահն և
Խանն երկրիս և բոլոր մեծամեծք տաճկաց և
հայոց կան ի խօսս և ի գործս իւրեանց հաս-
տատուն, և անյեղլի և բնաւ երբէք զԴանի-
էլն և կամ զայլ ոք ի ներս չեն ընկալնլոց,
և զմեզ մինչև ցվախճան կենաց մերոց ամե-
նեւին չեն փոփոխելոց, թէ և տասն այնչափ
որքան խոստանան այժմ զկաշառս տացեն։ Այն
զի խանին երկրիս ոչ այնչափ ըղձալի են
արծաթն որպէս շինութիւն և պայծառութիւն
մեծի տանս. նա զի՝ զհաստատեալն վաղժա-
մանակաւ ի նախնեաց անտի. և զպայծառ մնա-
ցեալն խնամարկութեամբ առաջնոցն իւրոց
մինչև ցինքն, ոչ կամի թէ զարդիս առ ժամա-
նակօք իւրովք ամայասցի և յաւեր դարձցի, որ-
պէս քանիցս և քանիցս յայտ յանդիման առաջի
ամենայն բազմականացն ասաց թէ՝ ժողովուրդք
Հայոց եթէ բարձցեն զխնամս ի յՕճախէն,
սակայն ես զոյիւք իմովք խնամարկեալ պահ-
պանելոց իմ. զԿաթուղիկոսն և զԱթոռն ոչ
պահանջելով բնաւին զհարկս թագաւորական
և այլն։ Եւ այսու երեւի՝ որ Դանիէլն ոչ կարէ
մտանել յերկիրս այս. ուրեմն եթէ նստի այլ
ուրեք, տեղին այն ոչ կարէ լինել օրինաւոր
Աթոռ և ոչ ինքն օրինաւոր կաթուղիկոս, և
ապօրինաւորն ընդդէմ. Աստուծոյ է և հակա-
ռակ ճշմարտութեան։ Եւ մանաւանդ այն մար-
դաշէն նոր Աթոռն ոչ հաստատի, և այս Աս-
տուածաշէնս ես նսեմանալ և անվայելչանալ
թէ և 'ի ձեռն մեծամեծաց կաշառաց եկեսցէ
Դանիէլ վարդապետն և մտցէ յերկիրս որ
անկարելին է, կրկին ոչ կարէ լինել կաթու-
ղիկոս. քանզի յայնժամ ես զիս ի ձեռաց ոչ
թողուն, թէև բիւրիցս հրաժարիցեմ, այլ յա-
միսն միանգամ. զնա իջուցեալ զիս նստուցա-
նեն. և զիս իջուցեալ զնա։ Եւ. այսպէս ըստ
փոփոխութեան ամսոց՝ լինի և փոփոխութիւն

կաթուղիկոսաց։ Զայսոսիկ զամենայն զորս գրեցաք և զորս թողաք խորին քննութեամբ մտածելով ձեր՝ զարման տարջիք լուսածին մօրս ձերոյ և ի յօգնել և ի կանգնել զսա ջանասջիք, հարազատ որդիքդ սորին. որոյ աղագաւ ընդ Մահմէդ Վէլի սուլթանին և ընդ սիրելւոյն մերոյ (Մէլիք Աբրահամ աղային) և մեք զայս թուղթ յորդորանաց գրեալ յղեցաք առ բարեպաշտութիւն ձեր, որով և խնդրեմք զի ի գալն թղթաբերացս այսոցիկ առ ձեզ և ի պատմելն զոր ինչ ի վերդ գրեցաք, յօժարութեամբ և ցաւակցաբար ընկալեալ, կատարեալ սիրով փութասջիք և ձեռնտու և նպաստամատոյց մեզ լինիջիք։ Եւ ի հրամայելն Դօվլեթլու փաշային ձեզ սակս մահսէրին, բարեպաշտական սիրով և ջերմեռանդ հաւատարիմ որդիութեամբ օր մի յառաջ առանց զանցառութեան հասարակութեամբ կնքեսջիք և ի վերայ ճշմարտութեանն զանձինս ձեր մինչև ի զոհ տեառն Աստուծոյ մատուցանելն յօժարեսջիք. զի երկնաւոր փառացն և անթառամ պսակացն արժանաւորք լինիջիք, զորս պարգևէ տէր ճշմարտասիրաց։ Եւ զմահսէրն զոր առնելոց էք, եթէ մեր Ստեփաննոս արքեպիսկոպոսն ցարդ յայդր իցէ, առջիք իւրն տանել ի Պօլիս, իսկ եթէ տակաւին չիցէ եկեալ յայդր և կամ անցեալ և գնացեալ, յանձնեսջիք զայն հաւատարմին մերոյ (Մէլիք Աբրահամ աղային) զի տարցէ ի մեծն Պօլիս. որպէս վասն այդմ յատուկ զպատուէր ունիմք տուեալ. և գիտէ ինքն զինչ առնելն։ Եւ ի կատարելն և ի յղելն ձեր զմահսէրն, փութապէս և մեզ ծանուսջիք ի գիտել և ի ուրախութեամբ օրհնել զկեանս ձեր զամենայն աւուրս կենաց իմոց, զոր տէր օրհնելով օրհնեսցէ և զօրացուսցէ և յերկնաւոր բարութիւնս զձեզ պահեսցէ հանդերձ ձերայնովքն փրկելով յամենայն փորձանաց ի փառս անուան իւրոյ, և ի շինութիւն տաճարիս իւրակերտի, և մանաւանդ ի մխիթարութիւն և ի սփոփանս վշտակիր սրտի մերում, որ մաշիմք և տառապիմք ի վերայ անմիաբանութեան և խռովութեան ազգիս մերոյ. և լսողքդ և կատարողքդ աղաչանաց մերոց եղիջիք օրհնեալք յԱստուծոյ և յամենայն սրբոց նորա և ի մէնջ. և շնորհք սուրբ Աթոռոյս եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեան Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ. թուոջս և ի մարտի... ի բարձրադումար Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։ *)

ՅԺԹ. *Ի Պօլիս առ Թէվէքէլի աղայն:*

Եւ ընդ ամենառատ օրհնութեանս աստուածայնոյ՝ գիտասջիր սիրելիդ մեր՝ և հարազատ որդի որբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի նարդենիս բազմակնիք մահսէրիդ բարեպաշտօն օրհնեալ մերազնէից մայրաքաղաքիդ իմացաք զհամակամ սիրով միաբանիլն ձեր, և զարգայս մատուցանելն մեծազօր արքային, և հանելն ինմանէ զֆէրմանս վասն վերահաստատելոյ մեր ի գահակալութիւն սրբոյ Աթոռոյս, և վասն սիրելի եղբօր մերոյ Յօվաննէս դերզգօն արքեպիսկոպոսին գալոյ յԵւդոկիոյ, նստիլ ի պատրիարգական աթոռ իւր, որովք և մեք մխիթարեալք ի բազմաժամանակեայ վարանմունս մեր՝ հայցեցաք յԱստուծոյ առաջի սրբոյ Իջման տեղւոյս նորին վասն ձեր զխնամս և զթութիւնս և զբարեյաջողութիւնս յամենայնի։ Իսկ սիրելի և հոգևոր որդին մեր Տէր Ստեփաննոս հանճարունակ քահանայն յատկապէս գրեալ էր մեզ զմեծափափաղ ջերմեռանդ սէրդ և զսրտական հաւատարմութիւնդ առ սուրբ Աթոռ Մայրս քո յուսատու և առ մեզ։ Որ ըստ ազգականութեանդ և արենակցութեանդ՝ զոր ունիս առ դեբազնիւ սիրելին մեր ամենազով ճարտարապետ ճոխապատիւ մահտեսի Առաքել ամիրայն Հաջի Դատ կոչեցեալ, նմանապէս և աստուածսիրութեան նորին և կատարեալ բարեպաշտութեան լինելով նմանօղ, յորդորեալ ես զնա՝ առ ի յառաջացուցանել զօգուտն և զբարին սրբոյ Աթոռոյս և մեր, և բառնալ ի միջոյ զխռովութիւն և զառիթսն խռովութեանց, և հաստատել զխաղաղութիւն և զմիաբանական սէր, զի եղիցուք մի հօտ և մի հովիւ։ Ուստի՝ և մեք յոյժ և յոյժ շնորհակալեալ զսիրելւոյդ օրհնեցաք զքեզ զարժանաւորդ օրհնութեանց։ Զոր Տէր օրհնեսցէ և զօրացուսցէ, ըստ հաւատարմու-

*) Այս թուղթը, ինչպէս և միքանի այլ թղթեր, ուշ հասան մեր ձեռքը, ուստի և անկարող եղանք զետեղել իրանց տեղերը։

թեանցդ առ մեզ՝ վարձատրեսցէ առաւելապէս՝ փրկեսցէ ի փորձութեանց հոգեկանաց և մարմնականաց հանդերձ համայն ազնուական ընտանեօքդ, և պահեսցէ միշտ ի խաղաղութիւն, յաջողելս առ ամենայն գործս բարութեան, և զարդարելս հոգեկան առաքինութեամբք։ Արդ ֆէրմանն տարագրութեան աստ Դանիէլ վարդապետին զոր յղեալ էին ի տեղւոյդ՝ թէպէտ եհաս մեզ, բայց մեք յառաջագոյն իբրև լուաք զհանումն յայդր այնր ֆէրմանին, զեպիսկոպոս մի առաքեցաք ի Բայազիտ, և իշխողն մեր ևս զթուղթ դըրեաց առ տեղւոյն փաշայն և երևելի տաճկաւ միով առաքեաց, զի Դանիէլ վարդապետն ինքնին պատուով ելցէ եկեսցէ աստ։ Եւ մարդիկքն մեր գնացեալ առին զնա ի փաշայէն, և հանդերձ իւրովքն բերին ի սուրբ Աթոռս, ի նոյեմբերի ԻԷ։ Զոր և մեք առընկալաք սիրով, և կամիմք պատուել և չահել ըստ արժանւոյն իւրոյ։ Եւ արդ թէ ըստ յաջողելոյն Աստուծոյ, և թէ ըստ արիաջանութեանց հասարակութեան ձերոյ վերացաւ երկպառակութիւն, և սէր և խաղաղութիւն կալացաւ, փառք և գոհութիւն Արարչին։ Եւ առ այս ահա զօրհնաձիր կոնդակ գրեցաք առ մերազնեայսն տեղւոյդ. մինչ յաջողեսցէ Աստուած՝ զի զկրկին համահաճական մահսէրն ձեր ևս ընդունիցիմք, յայնժամ ևս գրելոց եմք զկոնդակ լիալիր օրհնութեան և շնորհակալութեան։

Իսկ արդ զայս սիրանշան թուղթ գրեալ առ սիրելիդ, խնդրեմք՝ զի ըստ բարեպաշտութեանդ առ Աստուած՝ և ըստ առատ սիրւոյդ առ մեզ՝ այլ ևս յորդորող լիցիս յարգոյապատիւ մահտեսի Առաքեալ ամիրային, զի որպէս յաջողմամբն Աստուծոյ ծանուցին վասն մեր մեծազօր արքային, հանին զֆէրման և զբէրաթն մեր, զդոյն բարեշնորհութիւն իւրեանց դրեսցեն և ծանուսցեն հասարակութեամբ տէրութեան Ռուսաց, որպէսզի բոլորովիմբ վերասցի խռովութիւն և ամենայն ուրեք ևս խաղաղութիւն արմատասցի։ Նաև զդոյն աթոռաօգուտ և ազգաշահ իրողութիւն զոր սկսեցինն՝ ի յաւարտն բերցեն, բառնալով իսպառ զխռովութիւն ի քաղաքէդ և ըզխաղաղութիւն սերմանելով յամենեսին։ Եւ սիրելի եղբօր մերոյ պատրիարգ գերզգօն արք եպիսկոպոսին թև և թիկունք լիցին, որ այլ ևս փոփոխութիւն չլինիցի, յորմէ ահա մեծ վնաս յառաջանայ թէ սրբոյ Աթոռոյս՝ և թէ օրհնեալ ազգիդ, որպէս տեսիք և փորձեցիք։

Եւ առ նա ինքն պատրիարգ եղբայրն մեր ևս գրեցաք, զի ընդ ամենեսին ևս սիրով և քաղցրութեամբ վարեսցի ի յօգուտ ինքեան՝ ի շինութիւն և ի պայծառութիւն սրբոյ Գահիս և յանդորրութիւն մեզ։ Եւ սիրելիդ ի բարեջանութեանցդ և յօգտասիրութեանցդ առ մեզ աննուազ կալով եղիցիս օրհնեալ և վարձատրեալ ի Տեառնէ, և շնորհք սրբոյ Գահիս լիցի ընդ քեզ և ընդ քոյայինսն ամենեսին յարաժամ. Ամէն։

Գրեցաւ յամի ՌՄԾԱ թուոյս, և ի դեկտեմբերի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՅԼ. *Թուղթ առ Պօլսոյ Յովաննէս պատրիարգն, ի ծանուցումն զգալստենէ տեղւոյ սուրհանդակին եւ Դանիէլ վարդապետին։*

Ի նոյեմբեր ամսոյ Ժ. այն ինչ Բաթըր բէկ սուրհանդակն եկն առ մեզ և ծանոյց աւետաւոր թղթովք զգուարճական համբաւ հանդերձելոյ սիրառատի եղբօրդ տեղակալել ի պատրիարգականդ քոյ գահ իբրև ի հայրենի ժառանգութիւն, և մեզ վերահաստատել ի սոյն այս պաշտօն հայրապետութեանս՝ ըստ յաջողելոյ շնորհաց և ողորմութեան Աստուծոյ, որ ունի զսիրտ թագաւորաց ի ձեռին իւրոյ և ընդ որ կոյս կամի հալեցուցանել դարձուցանէ զնա, որպէս ասէ իմաստունն։ Մեք ևս յայնժամ ընդ լինել սուրհանդակին գրեցաք զթուղթ սիրոյ, և ուրախակցութեան առ սիրելի եղբայրութիւնդ։

Թուղթ մի ևս զկնի այնորիկ գրեցաք ի յանձնարարութիւն՝ վասն ազնիւ սիրելւոյն մեր և քոյ՝ Հաջի Բաբայ կոչեցեալ մահտեսի Յակոբ աղային.զոր և յղեցաք առ նա՝ հասուցանել առ յարգութիւնդ։

Յայնց երկուց թղթոց թէ երկրորդն չիցէ հասեալ առ սէրդ մինչև ցարդ, յուսամք թէ առաջինն վաղուրեմն ժամանեալ իցէ և իմացեալ իցես զ'ի նմայն գրուածսն մեր։ Այլ այնու երկրորդ թղթով մերով գրեցաք ևս ընդ

երկար՝ թէ զիարդ մեք և իշխօղն մեր զմարզիկս առաքեցաք ի Գաղատիա առ. փաշայն վասն զԴանիէլ վարդապետն ուղարկելոյ առ. մեզ ըստ հրամանի մեծազօր արքային։ Այն մարզիկքն մինչ գնացեալ էին անդ, թէպէտ Դանիէլ վարդապետն չէր կամեցեալ գալ, բայց փաշայն բռնաբարութեամբ տուեալ էր զնա ի ձեռս նոցա. որք առեալ և բերեալ էին ի սուրբ Աթոռս և առ. մեզ ի նոյեմբեր ամսոյս ԻԷ. հանդերձ բոլոր սպասաւորօք նորուն՝ և փախստական վարդապետօք և այլովք։

Եւ մեք առընկալաք զնա սիրով և գթով, և զանցեալսն անցեալ վարկուցեալ եղաք ի յատուկ տեղւոջ առ. ի նստել. հոգալով զամենայն զկարեւոր պիտոյս նորա, և զգեցուցանելով զվայելուչ հանդերձս յոտից մինչև ցգլուխ, և պատուական փիլոնաւ ևս խելտալազարդելով։ Եւ ի սուրբ եկեղեցւոջն ևս կանգնեցուցաք ի դաս, ի վերայ յատուկ օթոցի առաջի սրբոյ իջման տեղւոյն. լեցեալ ի քարն որ կայ արձանացեալ ի դէմս սրբոյ սեղանոյն յաջ կողմն կաթուղիկոսարանին։ Այսպէս ի յատուկ սէր վերընկալեալ զնա կամիմք ըստ ամենայնի պատուել և շահել և մխիթարել որպէս արժան է։ Զկնի գալոյն սորա աստ, ապա յամսոյս ԺԶ. Երևանցի ի Պօլիսդ եղեալ տաճիկքն մեր եկին հանդերձ սուրհանդակաւ միով, և բերին առ. մեզ զսորին աքսորանաց ֆէրմանն, և զհամահաճական բազմակնիք մահսէրն յօրհնեցելոյ յաղդէզ գրեցեալ առ. մեզ։

Զորս և մեք սրժանախառ. հանդիսաւորութեամբ և յարգանօք առընկալեալ ընթեռնուլ տուաք ի լուր յօգնախուռն բազմութեան հոգևորականաց և աշխարհականաց դասուց։ Որոց ուրախացեալ մեծաւ զուարճութեամբ սկսան միաբանական ձայնիւ. փառս և գոհութիւնս վերառաքել առ. բարեգութն Աստուած՝ որ յայց ելեալ իւրաէջ տանն սրբոյ, բացափայլեաց զճշմարտութեան ճառագայթ, և այնու ազատեաց զսա ի ձեռաց ի ռովասիբաց։

Նմանապէս և մեր ուրախ և խնդամիտ եղեալ կանխեցաք յաղօթս առ. տէր, յորմէ և հայցեցաք լրութեամբ սրտի առաջի սրբոյ իջման տեղւոյն նորին զօրութիւնս զխնամս և զգթութիւնս և բարեյաջողութիւնս յամենայնի յաղագս պատուական իշխանապետացդ և իշխանաց՝ և այլ համայն օրհնեալ ժողովրդեանդ մեծի մայրաքաղաքիդ, որ զայլ ամենայն զրաբանութիւնս աւելորդախօսիցն ընդունայն համարելով, վերստին զճշմարտութենէ բուռն հարին, և զերկիւղածութիւն ցուցանելով առ. Աստուած՝ պատուեցին և մեծարեցին զլուսատու ծնօղս իւրեանց զսուրբ Աթոռս և զմեզ բառնալով և ի բաց վերացուցանելով զառիթսն խռովութեանց, և զնոյն ինքն զխռովութիւնսն, որովք տաղտապեալ տագնապէաք մեք և ինքեանք իսկ և հիւծեալ մաշէաք։ Որք և գրեցաք ահա զկոնդակ օրհնութեան և շնորհակալութեան առ. հասարակութիւն դոցա ի պատասխանի բազմակնիք մահսէրին, զոր և առաքեցաք առ. յարգութիւնդ, զի ընթեռնուլ տացես և ի սուրբ եկեղեցիսն ՚ի լուր ամենեցուն՝ ի յուրախութիւն հոգեորապէս։ Իսկ Խամսեցի փըչանալի Գրիգորն թէպէտ ոչ եկն առ. մեզ մինչև ցարդ, բայց ըստ ասութեանց սուրհանդակին և այլ տաճկացն համարիմք թէ յայս մօտակայ աւուրքս գայցէ. լիրաւի կատարեցաւ և առ. նա բան մարգարէին թէ՝ զուրն զոր փորեաց և պեղեաց, ի նոյն անկցի ի խորխորատ՝ զոր և գործեաց. զի որ մտադրեալն էր զհաւատարիմսն սրբոյ Աթոռոյս վարել յայլրուստ, ինքն վարեցաւ և էառ. յԱստուծոյ զհատուցումն վատթար արարմանց իւրոց։

Այլ վասն յարգելի եղբօրդ ևս այնպէս զգացուցին մեզ յիշեալ տաճիկքն, թէ յուղեւորութեանդ տեսեալ իցեն զքեզ՝ Ն կամ Զ աւուրց ճանապարհաւ հեռի ի Պօլսոյդ. որով և մեք յուսամք՝ թէ զարդիս կալեալ իցես զպատրիարդականդ քոյ Աթոռ. զոր շնորհուօր արասցէ Տէր. և բարեաւ և խաղաղութեամբ վայելել տացէ մինչև ցելումն շնչոյդ ի պարծանս սրբոյ Աթոռոյս՝ և ի սփոփանս մեզ։ Եւ զի խոստացեալ էին մեզ յարգելի օրհնեալ իշխանք և ժողովուրդք յիշեալ բազմակնքիւ իւրեանց, թէ ի հասանելն սիրելի եղբօրդ առ. ինքեանս յայնժամ ևս գրեսցեն առ. մեզ զլիալիր բազմակնիք մահսէր, որում և մեք ակնադէտ սպասեմք. և մինչ ընկալցուցումք, յայնժամ վերստին ևս գրելոց եմք զկոնդակ լիագոյն օրհնութեան և շնորհակալութեանս և յուսադրական խրատուց և կանոնաց, որպէս օրէնն է բնական։ Իսկ սակս ֆէրմանին և բերաթին

մերոյ այնպէս էր գրեալ մեզ սպնիւ սիրելին մեր Ազալեկեան օրհնեալ Գէորգ աղային թէ հանեալ ի պատրաստի կտն ի ձեռս իւրեանց, զոր ոսկեզօծ առնել տան և օրինակս դրեցուցանեն. յառաջմէ թէպէտ գրեալ եմք Սահփաննոս արքեպիսկոպոսին, այլ խնդրեմք ի սիրելի եղբօրէդ, զի դու ևս հող տարցիս փութով առաքել առ մեզ զֆէրման և զերաթն մեր. եթէ կամեսցիս՝ մեր Սահփաննոս եպիսկոպոսի ձեռամբն առաքեսցես. իսկ թէ զնորա մնալ յայլր պատշաճ տեսանիցես, բարի է, մնասցէ առ ժամանակ մի ևս, որպէս և մեք գրեալ եմք նմա մնալ, մինչև իսպառ լիցի միամտութիւն քեզ և մեզ. սակայն զնոմոսն մեր այլ հաւատարմաւ առաքեսցես հասանել առ մեզ, զի և մեր դտեալ զմիամտութիւն զնուիրակունսն մեր ի դուրս հանցուք։ Ահա թէ որչափ անհուն և անթուելի վնասք ժամանեցին խղճալի սրբոյ Աթոռոյս և մեզ՝ թէ աստ՝ և թէ յայլ ամենայն տեղիս՝ փոքր ինչատէ լուեալ ես. և դրեթէ իսպառ տնանկացաք, ի դոլից թափեցաք, և ի յետին թելն եմք հասեալ. և թէ յինչ պատճառէ, այն յայտնի եղև ամենեցունցդ, այլ զինչ երկարեսցուք աստէն. և այսու եղանակաւ եթէ այլ ևս մնասցուք, իսպառ աւերումն է մեզ, և անկումն սրբոյ Տանս։ Վասն որոյ պարտիս օր յառաջ յուղարկել առ մեզ զօրինակսն նոմոսացն մեր, զի և մեք հանցուք զնուիրակունսն մեր, և անտարակոյս մտօք տեսցուք զհոգաբարձութիւն սրբոյ Աթոռոյս, և շինութեան փոյթ տարցուք, և աղօթող լիցուք առ տէր վասն կենաց և բարեյաջողութեան յարգութեանդ։ Այլ և ոմանք ի տեղւոյդ ազդեալ էին մեզ՝ իբր թէ հասարակութիւն քաղաքիդ ունին զմահսէր դրել վասն մեր առ տէրութիւն Ռուսաց առ այն և մեք խնդրեմք ի յարգութենէդ, զի ջանացող լիցիս, և գրեցուսցես զայն մահսէրն, ծանուցանելով զուղղութիւն իւրացս և զբարեհաճութիւն օրհնեալ ազգիդ առ մեզ և դու ևս գրեսցես առ որս և պատեհ տեսցես, զի գուցէ թէ այն կողմունսն ևս կալասցի խաղաղութիւն, որով և մեք գտցուք զդիւրութիւն և զօգտութիւն և զձէնջ շնորհակալ լիցուք արժանաւոր բարեբանութեամբ։ Նաև վերոյիշեալ գերապատիւ սիրելին մեր Աստուծով զօրացեալ Գէորգ աղային Ազալեկեան, թէ այսպիսի անբարի միջոցի յորում սուրբ Աթոռս ուծացաւ յորդւոց և ի հարազատից յիւրոց իբրև ոչ յիւրմէ, զորքան բազմօզիմր հաւատարմութիւնս և զհարազատութիւնս եցոյց առ մեզ, և թէ զանձն իւր եդեալ ի վերայ մեր զորչափ աշխատանս և չարչարանս կրեաց վասն մեր, և յամենայն սրտէ ջանացող եղև առ ի յառաջացուցանել զբարին և զօգուտն մեր և յարգութեանդ իսկ, ոչ լինի մեզ պարունակել ի թղթիս. համարիմք թէ յարգութիւնդ ևս իմացեալ իցես զայն բարեշնորհութիւնս նորա։

Ուստի՝ յատկապէս խնդրեմք, զի զպատուկ սէր ունիցիս առ նա, համարելով զնա իբրև առանձին իմն խորհրդակից քեզ, ի զործառնութիւնսդ և զոր ինչ խորհուրդ և բան և իրողութիւն հանդիպեսցի՝ թէ ի մերս կողմանէ և թէ ի քոյդ խորհրդեամբ նորին արասցես, զձեր բան և գործ՝ որպէս զմերն համարեսջիք. և զմերն որպէս զձերն. և իբրև միաշունչ և համախոհ տեսջիք զհոգալիս ձեր և զդրելիս և ծանուցանելիս ձեր առ մեզ. միով հոգւով և միով խորհրդեամբ արասջիք, և յառաջացուսջիք զօգուտն ձեր և մեր, զի անվրդով մնասցուք։

Իսկ և ընտիր սիրելին մեր Աստուծով զօրացեալ և պերճապատիւ Խարդուղիմէոս Զէլեպին Յովսէփեան՝ թէ որքան հարազատ և հաւատարիմ է առ սուրբ Աթոռս և առ մեզ, և իբնէ հետէ բոլորով սրտիւ ջանացող և աշխատող վասն օգտի մեր և սիրելի եղբօրդ, ի հարկէ գիտես, բայց լուեալ եմք՝ թէ ոչուփուչ Խամսեցին ըստ ամբարիշտ բարուցն իւրոց ի դուր բանադրեալ է զայնպիսի անձն պատուական, թէ և յետոյ արձակեալ է. և զի յայտնի է՝ որ անէծք չար ումէք ոչ ելանեն, որպէս ասէ իմաստունն. բայց այնպէս իմանամք՝ թէ օրհնեալն այն սրանեղութեամբն և վիրաւորութիւն ունի։

Որոյ աղագաւ կամէաք թէպէտ զօրհնութեան կոնդակ դրել առ ի շահել զնա, բայց վասն սղութեան միջոցիս չկարացաք. յետոյ ի ձեռնհաս ժամու դրելոց և յղելոց եմք։ Վասն որոյ խնդրեմք զի ի դիմաց մեր ողջոյն և օրհնութիւն տալով՝ շահեսցես զնա, և ի սուրբ եկեղեցւոջ, ի հանդիսի բազմութեան պատշաճաւոր ծանուցմամբ դովելով՝ զազնուականութիւն նորա, և զբարեյաւութիւն և զեբախտիս բարեաց յիշատակաց արժանաւոր

նախնեաց նորա հողելոյս Յովսէփին և այլոցն, որք ահա պատճառ եղեալ են վասն ի շինութեանցն սուրբ Երուսաղէմի սրբազան առաքելոցն Յակոբայ տաճարին, և տեղւոյդ նորոգման Սամաթիոյ ամենասուրբ երրորդութեան տաճարին. զայն երախտիս նախնեաց նորին զոր անխոհեմ. Խամսեցին ոչ ի միտ բերելով և իբրև առ. ոտն հարկանելով, խոժոռեցուցեալ է զբարեբարոյ անձն ազնուական, յարգելի եղբայրդ ի մերս կողմանէ յիշատակեսցես, զովեսցես և բարեբանեսցես զայն երախտիսն և զառնօզսն այնց, և օրհնեսցես և մեծարեսցես զօրհնեալն այն, և զիւր համայն ազնուական ընտանիսն, և բարւոքապէս սրտաշահ արասցես, որ մեծագոյն առիթ է մեզ շնորհակալութեան զբաղձալւոյդ։

Նաև զայս գիտեա զի յորմէ հետէ կոչեցեալ եմք յայս շնորհ՝ քանիցս գրեալ եմք զթուղթս առ Նուիրակ Գալուստ արքեպիսկոպոսն, բայց ի նմանէ երբէք չեմք ընկալեալ զպատասխանիս, նա իբրև զյատուկ սէր ունէր առ մեզ, բայց այդ յայլ իմն կերպ երևի, և ոչ հայի յայսկոյս. լսեմք թէ պատճառ խոժոռելոյն նորա ի մէնջ իցէ այն, իբր թէ մեք ի թուղթսն մեր որ առ նա ըստ արժանւոյն իւրոյ չիցեմք տուեալ նմա զպատիւս. բայց մեք միշտ առ նա հայրապատիւ եղբայր գրեալ եմք, և ոչ սիրելի և կամ որդի. եթէ աւելորդախօսք զայլ իմն կերպ հասկացուցեալ են, ոչ գիտեմք. յանցելում. ամին, մինչ Կարապետ եպիսկոպոսն դարձաւ առ մեզ և եբեր զՖէրմանսն, յայնժամ մեք թուղթըս գրեցաք առ նա և առ սէրդ. յետոյ մինչ չփոթքն ծագեցան և տարագրութիւն եղև եղբօրդ, այն թուղթքն մեր արգելեալ մնացին ի Կարին առ ժամանակ ինչ. թէ որպէս իբրև զհայր պատուեալ եմք եթէ կամեսցիս յղեսցես առ նա ի տեսանել. որում նոր ևս թուղթ գրեցաք, զոր ընդ վերնոյն առաքեսցես և դու ևս յատկապէս զգիր գրեսցես՝ և միամտեցուսցես ի կողմանէ մեր, որ զորպիսութեանց իւր և գործոյն գրեսցէ մեզ, և յաւարտելն գնոյն՝ միամտութեամբ եկեսցէ առ մեզ, զոր ի տեղի հօր ընդունելոց եմք. և յարգելոց ըստ արժանւոյն. առ որ անհոգ լիցի և զբազմամեայ հաւատարմութիւն որ առ. սուրբ Աթոռս չկորուսցէ։

Ի գլուխ բանիցս և զայս խնդրեմք ի յարգելի եղբօրէդ. զի ահա բաւականապէս նեղեցաք և վշտացաք թէ մեք և թէ դուք, այսուհետև զգաստ կացցես, և ջանասցես սիրով և քաղցրութեամբ քան թէ ներհակօք գրաւել զսիրտս յարգելի իշխանացն և այլոց ամենեցուն առ քեզ և առ. մեզ, և ըստ ամենայնի զխաղաղասիրութենէ բուռն հարկանելով քաղցրութեամբ և խոնարհութեամբ վարեսցես ընդ ամենեսին. զնուիրակունսն՝ զգործակալսն և զգանձապետսն մեր յորդորելով ի սէր, դարձուսցես յիւրեանց առաջին հարազատութիւնսըն զոր ունէին առ սուրբ գահս եւ առ հոգելոյս սրբազան Հայրապետսն, որք որպէս ինմանէ, նմանապէս և ի մէնջ վայելելոց են զսէր և զքաղցրութիւն օրհնութեամբ հանդերձ. զի որ ինչ եղեն ցարդ զայն ամենայն տալով ամենաչարին, այսուհետև զամենեսին զղոսա անպարտս վարկանելով մեր, շահելոց եմք զիւրաքանչիւրսն, ըստ իւրեանց պատւոյ և աստիճանի. առ որ բարւոքապէս միամտեցուսցես. և այսու կերպիւ հոգ տարցես խաղաղացուցանել զմերազնեայսդ, և ուղղել զգայթակղեալս, և զխռովութիւնսն արմատաքի ի բաց խլել ի մայրաքաղաքդ, ի փառս Աստուծոյ, ի պարծանս սրբոյ Աթոռոյս, ի յօգուտ անձին ազնուոյդ, և ի յուրախութիւն մեզ։

Որև խաղաղարարն Քրիստոս տէրն մեր խաղաղացուսցէ զձեզ, և պահեսցէ ի բերկրալից ուրախութեան և ի քաջառողջ կենդանութեան ի հրճուանս մեր։ Ողջ լեր ի տէր։ Ամէն։

Գրեցաւ՝ յամի տեառն 1802 և ի դեկտեմբերի… ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՅԼԱ. *Թուղթ ի մեծն Պօլիս առ Բարդուղիմէոս Չէլեպին ի պատասխանի թղթոյն գրեցելոյ վասն անցիցն սրբազանին:*

Եւ ընդ ամենառատ օրհնութեանս Աստուածայնոյ՝ ծանուցումն լիցի ազնուականութեան քում. Զի որպիսայայտ թուղթ պատուելոյդ ի սեպտեմբերի ԻԷ. գրեցեալ՝ ժամանեաց առ մեզ ի դեկտեմբերի ամսոյս ԺԶ. զոր ընթերցեալ սիրով՝ իմացաք զանցս և զի-

րակութիւնս մեծի մայրաքաղաքիդ, զբասրելի և ծանակելի արարմունս չարաբարոյ՝ մրբ և անզգամ Խամսեցի Գրիգորին առ. քոյդ ազնուութիւն, և զառ ի վերուստ զալ ժամանելն ցասման և պատուհասի պատժապարտին այնմիկ։ Ընդ որս և զողորմութեան Աստուծոյ ծագելն առ. մեզ ըստ բարեխօսութեանց համայն մերազնէիցդ, և՛ զբարեյաջող լինելն իւրոց մերոց և յարգելի եղբօրն մեր պատրիարգ Յովաննէս աստուածիմաստ արքեպիսկոպոսին և զ'ի կործանելն ներհակաց և հակառակորդաց մերոց և սրբոյ Աթոռոյս։ Զայսոսիկ ամենայն իմացեալ՝ ընդ տրտմելիսն տրտմեցաք, և ընդ ուրախալիսն ուրախացաք, փառս և երկրպագութիւնս մատուցանելով Աստուծոյ, որ առնէ ընդ փորձութեան և զելս, և ըստ գործոց իւրաքանչիւրոց զարժանաւոր հատուցումն։ Ծանեաք և զքոյդ ազնուութեան մեծաւ հոգունակութեամբ աշխատասիրելդ վասն մեր, և սրտացաւ օրէն հարազատութեամբդ և եռափափակ ջերմեռանդ սիրովդ՝ (զոր ունիս առ. սուրբ Աթոռս և առ. մեզ,) զաղաղակ բարձրացուցանելդ առ. մեծամեծս մայրաքաղաքիդ վասն խաղաղութեան օրհնեալ քաղաքիդ, վասն շինութեան և պայծառութեան սրբոյ Դահիս, և սակս անփոփոխելի կալոյ հայրապետութեանս։ Որովք և դաեալ զդիւր սրտի՝ մեծաւ գոհունակութեամբ շնորհակալեցաք զքէն, և օրհնեցաք զարժանաւորդ օրհնութեանց։ Զոր Տէր օրհնեսցէ և զօրացուսցէ, և ըստ բարերարութեանցդ առ. մեզ՝ վարձատրեսցէ բազմապատկապէս յերկակի կեանս քո, ազատս կացուսցէ ի փորձութեանց և ի վտանգից հանդերձ բարեբողբոջ զաւակօքդ և ազնուական ընտանեօքդ բնաւիւք, և միշտ տարածեալ ունելով ի վերայ ձեր զթեւս արարչական խնամոց իւրոց՝ պահեսցէ միշտ ի բարեկենդանութեան և ի փառաղուարճ ճոխութեան։ Եւ զամենայն բանս և զգործս քոյ առ. ի բարին յաջողելով՝ արասցէ յարաժամ արդիւնաւորս և շահեկանս։ Արդ եկին հասին մեզ և համահաճական մահսէրն օրհնեցելոյ ազգիդ, և յանուն Դանիէլին հանեալ աքսորանաց ֆէրմանն, զոր և մեք յարգանօք ընկալեալ՝ մեծաւ հանդիսաւորութեամբ ընթեռնուլ տուաք ի լուր բազմութեան հոգևորականաց և աշխարհականաց, որք ամենեքեան ուրախացեալ ընդ հաստատիլն խաղաղութեան և ընդ արտամերժիլն տարաձայնութեան, ազօթաւորք եղեն առ. Տէր՝ վասն կենաց և բարեյաջողութեան Լուսաւորչակրօն օրհնեալ ազգիդ։

Բայց նախ քան զգալն ֆէրմանին իբրև Մաթր անուն սուրհանդակն եկն առ. մեզ, և իմացաք զհամբաւսն անցիցդ, յայնժամ զՏաթևացի Աբրահամ եպիսկոպոսն առաքեցաք ի Պալաղիտ առ. ի զԴանիէլն վերառնուլ և բերել աստ։ Իշխողն մեր ես զերևելի տաճիկ մի առաքեաց վասն այնր իրի։

Որոց գնացեալ անդ ի Պալաղիտ, թէպէտ Դանիէլն չէր կամեցեալ զգալն բայց Մոլլետն տեղւոյն բռնութեամբ տուեալ էր նոցա, որք առեալ և բերեալ էին ի սուրբ Աթոռս ի նոյեմբերի Իչ. հանդերձ համայն փախստական վարդապետօք։

Եւ մեք ընկալաք զնա սիրով, և ի սուրբ եկեղեցւոջն ես կանգնեցուցաք ի դաս, և կամիմք պատուել և շահել, և ի կալ մնալ նորա ի խաղաղասիրութիւն, մեք ևս յաւելլոց եմք նմա զպատիւ և զյարգանս։ Իսկ այսօր ես որ է ամսոյս Իէ. ընկալաք և զսուրաթսն ֆէրմանին և բէրաթին մերոյ, և զԽամսեցի փըչանալի Գրիգորն ևս բերեալ են ի Ղարս քաղաք, և յայս քանի աւուրքս բերելոց են աստ ի սուրբ Աթոռս։ Ահա Աստուած՝ ըստ արարմանց նորա հատոյց, և զամենայն չարիս նորին կուտեաց ի գլուխս իւր, և զհետևողս ճշմարտութեան բարձր ի գլուխ արար. դարձեալ փառք և գոհութիւն եղիցի բարեկամաց նորա։ Եւ արդ գրեցաք զկոնդակ օրհնութեան ի վերայ հասարակութեան մերազնէիցդ, զոր տեսանելոց էք ի հարկէ, մինչ յաջողեսցէ Տէր, զի ընդունիցիմք զայն կրկնակի մահսէրն ձեր՝ (զոր խոստացեալ էիք գրել ի դալն հասանիլն առ. ձեզ պատրիարգ վարդապետ եղբօրն մեր), յայնժամ ևս գրելոց եմք առ. ձեզ զլիալիր կոնդակ օրհնութեան և շնորհակալութեան, և լուսագրական բանից և կանոնաց։

Թուղթ մի ևս այժմ առ. նա ինքն պատրիարգ եղբայրն մեր գրեցաք. և որպէս դու բարեպաշտ սիրելիդ խնդրեալ էիր, ըստ այնմ մեք ևս առ. յարգութիւն նորին գրեալ եմք, զի ի պատշաճաւոր աւուր յատեան ելցէ ի սուրբ եկեղեցին, և զիմաց մեր զծանուցումն արասցէ և զհոգելոյս Իւսուֆ հաւուն քոյ բարեաց յիշատակաց արժանաւոր երախտիսն եկեղեցաշի-

նութեանց՝ (զոր անբաւիչտ և անխոհեմ Գրիգորն ոչ մտաբերելով՝ առ ոան հարեալ է), զովեսցէ և բարբառեսցէ, և զոգորմիս հանցէ առ լիշեալ լուսահոգի նախնին քոյ և առ համայն հին և նոր ննջեցեալսդ, և առ ազնուութիւնդ ևս զբանս օրհնութեան կատարեսցէ, և տացէ ըստ արժանւոյդ զպատիւ և զվարդանս և այլն։ Ի հարկէ ըստ այնմ առնելոց է, մինչև մեք ևս զկնի քանեաց աւուրց վասն ազնուոյդ յատկապէս զկոնդակ դրելոց և յղելոց եմք, զոր այժմ սակս այլ և այլ հոգոց և զբաղանաց չկարացաք գրել։ Ապաքէն այսու սիրանչան թղթովս և յատկեղ սիրելւոյդ գրեմք, զի սրտամտութիւն ինչ մի կալցիս ի քեզ վասն զօղանջանաց և բարբանջմանց լըկտի Գրիգորին, զի անէծք զուր ումեք ոչ եկանեն, որպէս ասէ իմաստունն, այլ մանաւանդ ուրախ լեր՝ որ վասն ճշմարտութեան, և սակըս որդիականի սիրոյդ և հաւատարմութեանցըդ որ առ լուսածին մայրս քո սուրբ Գահն Աստուածեան կրեալ ես զբանս զկծանաց։ Որոց զփոխարէնն ընկալնլոց ես զբազմապատիկ վարձս բարեաց ի վարձատուէն բարեգործաց աստ և յանանց կեանսն։ Այլ և խնդրեմք, զի զճշմարիտ սէրդ և դհարազատութիւնսդ առ սուրբ Աթոռս աննուազ և աճեցուն պահեսցես, և ի ջատագովութեանցդ, որ առ մեզ՝ մի վերջասցիս, և յարգելի եղբօր մերոյ պատրիարգ աստուածիմաստ արքեպիսկոպոսին միշտ օգնական և կարեկից լիցիս, և ջանասցես ընդ նմա մաքլել զքաղաքդ ի խռովութեանց, և զխաղաղութիւն հաստատել զոր սկսեալքդ էք, և մանաւանդ հասարակութեամբ զմահսէր մի շինել և առաքել առ կայսրն ռուսաց, ծանուցանելով զհաճութենէ օրհնեալ ազգիդ առ մեզ, և զայլն որպէս խոհեմութեան ձերում վայել է։ Եւ զՍտեփաննոս եպիսկոպոսն մեր շուտով ուղևորել առ մեզ իսկ ֆէրմանօքն մեր և համահաճական մահսերիւ ձեր և այլ շնորհաւորականօք թղթովք։ Որոց բարեշնորհութեանցդ աղագաւ ընկալնլոց ես զմեծ վարձս յԱստուծոյ, զշնորհս ի սրբոյ Իջման տեղւոյս Քրիստոսի և զօրհնութիւնս ի սրբոյ Լուսաւորչէն մերմէ և ի մէնջ։ Իսկ սակս սիրելւոյն մերոյ օրհնեալ պարոն Յովաննիսին զոր ծանուցանելով թէ եղեալ իցէ նա ի Քիւրէկ և կրեալ զվիշտս և զնեղութիւնս վասն ջատագովութեանցն առ մեզ, խնդրեալ էիր զօրհնութեան թուղթ գրել առ նա, զրեցաք և յղեցաք, զոր հասուսցես առ նա։ Բայց և դարձեալ շնորհակալ եմք զազնուոյդ, որ ի սէր մեր՝ փոյթ կալեալ ես, և աղատեալ զնա։ Տէր լիցի քեզ վարձահատոյց և ազատիչ յամենայն փորձութեանց հոգեկանաց և մարմնականաց։ Այլ և զայս գիտեա, զի դրեալ եմք ահա մեր Ստեփանոս եպիսկոպոսին, որ վասըն հարկաւորութեան մերոյ զժամացոյցս առցէ ձեռամբ ազնուոյդ, և բերցէ ընդ ինքեան, վասնորոյ և ի պատուելւոյդ խնդրեմք, ի յաղղելն նորա քեզ, հոդ տարցես առնուլ զԺԵ. հատ ժամացոյցս, Ե. բարձր Ե. միջակ և Ե. ցած, բայց ոսկի չլինիցին, զորս և յանձնել նմա, զի բերցէ առ մեզ, իսկ զգինսն, ինմանէ ըստասցիս. և մեք յոյժ և յոյժ շնորհակալ լինելոց եմք զքէն օրհնութեամբ։ Ողջ լեր ի Տէր։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս, և ի դեկտեմբերի ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

Հայրական սիրով և սրբոյ Իջման տեղւոյս Քրիստոսի պահպանողական շնորհիւ ողջոյն և օրհնութիւն առաքեմք հաւատարմին քոյ և սիրելւոյն մերոյ բարեպաշտօն օրհնեալ պարոն Մարտիրոսին և հարազատ զաւակացն քոց և հոգևոր որդւոց մերոց՝ Տերամբ Քրիստոսիւ զօրացելոց և ազնուականաց՝ Յակովջան և Սարգիս բարեբողբոջ աղազատէցն, և ամենայն օրհնեալ ընտանեացդ, զորս և յանձնեմք ի խնամս Տեառն։ Դարձեալ առաքեմ զողջոյն և զօրհնութիւն հաւատարմին ձերոյ և սիրելւոյն մերոյ բարեպաշտ և մեծահաւատ օրհնեալ պարոն Մարտիրոսին զորմէ ես շնորհակալ եմք յատկապէս՝ որ ի սէր սրբոյ Աթոռոյս և սրբոյ Լուսաւորչին ընդ ազնուոյդ ջատագով եղեալ է առ մեզ, և աշխատեալ վասն իրաց մերոց, և զոչ սակաւ հաւատարմութիւնս և հարազատութիւնս ցուցեալ։ Տէր օրհնեսցէ զինքն և զօրացուսցէ և աշխատանացն զվարձս բարեաց հատուսցէ ինքեան ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի օգնական և պահապան յարաժամ. Ամէն։

ՅԼԲ. Առ տէր Մեսրովբն ի Պօլիս։

Ցորմէ սիրով և օրհնութեամբ, իբրու քեզ ի Թմբրութեանց զգաստացուցիչ հայրական խրատու, և ի խօթութեանց յորս եսդ բուժիչ, և ի յառաջիկայ ախտից և աղետից նս՝ որոց զիպելոց ես փրկիչ և ազատիչ՝ եթէ աղղեսցին, և առողջութեան նախապահ դեղովս բժշկութեան՝ ծանիր անշրջանկատ խոհեմ մեր որդի տէր Մեսրովբ քահանայ։ Զի ընդ ռամիկս այլապէս, և ընդ գիտունս այլազգ խօսիմք և գրեմք զբանս։ Արդ՝ ըստ որում յայտնիք են քեզ քոյդ արարք և գործք, որովք շարժեցար դու ընդ շնորհատու ծնողիս քո, և ընդ գահակալիս սորին, և զանազան վնասուց սրբոյ Աթոռոյս, և անսպառութեան հայրապետական բարձու և պատկառելի շքոյս, խռովութեան խղճալի ազգիս, ծանակութեան սուրբ օրինաց մերոց, և լուծման պարկեշտ կարգաց սրբոց հարց դտար պատճառ, աւելորդ համարիմ աստէն վերալիշել զայնս՝ զանյիշաչարութիւն ի կիր արկեալ, և զնզեալ և զանցեալ զչարիսդ և զյանցուածսդ կրկնակի յիշատակութեամբ ամօթապարտ զքեզ առնել. այլ տալով անաչառ դատման ուշիմ մտաց քոց թողում քեզէն խոկալ, և զամենայն զբանիւ և զգրով առ հեռաւորս և մերձաւորս մեզանսդ նս՝ ինքնին որոճալ և զլուշանալ։ Զի դու ոչ միայն առ սուրբ Աթոռս և առ մեզ ես մեղուցեալ. այլ առ Աստուած, զորոյ զպատճառն կամէիր ազարտել առ սուրբ Լուսաւորիչն, զորոյ զհիմնեալն ջանայիր քակտել, և առ շնորհաբաշխ սուրբ Հոգին, յորմէ զընտրեալն և զօծեալն անպատուել։ Եւ յայտոցիկ գործոցդ թէ զինչ ինչ վնասք ծագեցան, և որչափ զրամավատնութեանց դրունք բացան, ի յոչ զգաստանալդ՝ զիտելոց ես զհաշիւն, և այլն։ Թէև՝ խոստացաք զանց զամենայն զգործովքդ առնել, սակայն արժան է զայսքանս յիշել, և վերջացուցանել։ Զի թէ անարժան զմեզ այսմ շնորհի վարկանիս, ընդէր յայնժամ ի Պօլիս յառաջ քան զամենայն դու քոյով բերանովք ի խորանին ի մէջ քառասնից զոլով՝ զմեզ բարեպատշաճ տեսեր այսմ աստիճանի, և նախ քան զամենայն զու շնորհաւորեցեր։ Իսկ թէ արժանաւոր եմք, որպէս և կամքս Աստուծով, և օծութեամբ նորին, ապա ընդէր ընդդէմ խթանի աքացես, և քեզէն զքեզ սուտ առնես։ Զի կամ յառաջին նուազին ստեցեր զբանըս քոյ, և կամ այժմ սուտ առնես զքեզ, և այլն։ Իսկ արդ՝ զբեմ հայրաբար. զի եթէ թողեալ զառաջին արարսդ, զգաստանաս, և զպըտուղ հարազատութեանց ինչ ցուցանես, իմա հաւաստեաւ, մեք ևս թողումք զամենայն ըզյանցանսդ, և ներեմք սխալմանցդ, և տզօթեմք ևս առ տէր, զի և նա թողցէ քեզ զոր ինչ կամաւ և ակամայ իցես արարեալ։ Քանզի՝ ոչ կամ մ մոռանալ զերբեմնական մտերմութիւնդ, և զորդիական սէրդ, զորս առ անգամ մի վայելեալ եմ։ Եւ մանաւանդ խնայեմ ի քեզ և ի գիտութիւն քոյ։ Ուրեմն դու ևս ողորմելով անձին քում, բուռն հարցես զզղջմանէ և զկատարեալ սիրոյ և զխաղաղութենէ, և զկայթակղեցուցեալսն ի քէն՝ ջանասցես անդրէն ի յԱստուածպաշտութիւն հաստել. և վարձուց Աստուծոյ և շնորհի սրբոյ Աթոռոյս, և հայրականի մեր սիրոյ արժանաւորիլ։ Զայսչափս ի նշան սիրոյ գրեալ, թողում զայլսն իմաստութեամբ քով գիտել. անպարտ եղէց առաջի Աստուծոյ և քո, ողջ լեր։

Ի դեկտեմբերի... ի 1802. ի մայր Աթոռըս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ՅԼԳ. Թուղթ դարձեալ ի մեծն Պօլիս առ ըարզաճի Յովհաննէս ումն, օրհնութիւն եւ շնորհակալութիւն։

Եւ ընդ սիրոյ և օրհնութեանս Աստուածայնոյ, գիտասջիր սիրելիդ մեր և հարազատ որդի սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի իմաստնացեալն յԱստուծոյ Սողոմոն ասէ թէ՝ այր հաւատարիմ օրհնեսցի յոյժ։ Արդ այժմ և մեք իմանալով զորդիական ճշմարիտ հաւատարմութիւն քոյ և զհարազատութիւն որ առ սուրբ Գահս աստուածեան և առ մեզ, արժանի ըզտաք զքեզ օրհնութեան։ Քանզի զերազնիւ սիրելին մեր արքունական ժամացուցաչէն պերճապատիւ Բարդուղիմէոս Չելեպին, նարգենիս գրեալ էր մեզ զբարեպաշտութենէ քումմէ, թէ սակս ջատագով լինելոյդ առ կողմն ճշմարտութեան և զօգտասիրութիւն ցուցանելոյդ առ սուրբ Աթոռս հաւատոյ մայրս քոյ և առ մերս հոգևոր հայրութիւն ի նախանձու

և չարաբարոյ արանց կրեալ իցես զվիշտս և զնեղութիւն և մտեալ իցես ի Թիւրէկ, և յետոյ միջնորդութեամբ նոյնոյ այնուարարոյ սիրելւոյն մերոյ աղատեալ իցես անդուստ և անզօրրացեալ։ Արդ՝ յայտ է ի գրոց սրբոց, զի յաշխարհի աստ յայսմիկ միշտ չարն հակառակի բարւոյն և սուրբն պիղծ թուի չարագործաց ըստ իմաստնոյն և բարեպաշտքն արհամարհին յամբարշտաց։ Եւ սակայն՝ բարին կայ մնայ և գովի և բարեյիշատակի, իսկ չարն եղծանի և կորնչի չարաւ իւրովի։ Որպէս և ահա յայտնապէս տեսիք աչօք ձերովք թէ Խամսեցի լիրբ և անբարիշտ Գրիգորն՝ որ ընդդէմ Աստուծոյ և ընդդէմ հաւատոյ և ճշմարտութեան մաքառելով, պատճառ եղև այսքան վնասուց սրբոյ Աթոռոյս և խառնակութեան և տարաձայնութեան Ազգիս, զիարդ արդարադատին Աստուծոյ վրէժխնդրութեամբ պատժեցեալ չեկաց յոր ինչ էրն, և իբրև անարդ ոք, նախատանօք տարագրեցաւ այդրուստ, և ընդ համախոհին իւրոյ իբրև զպըղպջակս տնձրևոյ կորեաւ չարեաւ իւրովի։ Իսկ ճշմարտասէր որդիքդ սրբոյ Աթոռոյս, դերծեալ յամբարշտութեանց նոցին, խաղաղացայք և դտիք զապահովութիւն։ Եւ զի դու օրհնեալդ որ կրեալ ես զվիշտս և զնեղութիւն, այդ ոչ եթէ միայն վասն մեր է, այլ և վասն սրբոյ Աթոռոյս և սրբոյ Լուսաւորչին մերոյ, ես և յաղագս Քրիստոնէականի հաւատոյս և ճշմարտութեան, վասնորոյ որպէս ի սրբոյ Աթոռոյս և ի մէնջ զշնորհս և զօրհնութիւնս ունիս վայելել, նոյնպէս և ի Քրիստոսէ Աստուծոյն մերմէ ընկալնլոց ես զբազմապատիկ վարձս աստ և յանանց կեանս։ Ապաքէն նոյն ինքն Տէրն մեր՝ որ վարձատրիչն է բարեգործաց՝ վարձատրեսցէ և զքեզ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ. օրհնեսցէ և զօրացուսցէ, և փոխանակ նեղսակրութեանց որ յանուն նոյնաէջ սրբոյ Տանս՝ զմեծ ուրախութիւնս և զչահեկանութիւնս պարգևեսցէ, որդւովք և դստերօք ծաղկեցուսցէ, աղատս կացուսցէ ի յամենակերպ փորձութեանց հանդերձ օրհնեալ ընտանեօքդ բնաւիւք, և պահեսցէ միշտ ի խաղաղութեան և բարեզուարճութեան, և տացէ ամենից բանից և գործոց քոց զյաջողուածս բարեաց։ Արդ՝ զուրախական անցս և զիրակութիւնս մեր, և զբերել տալն մեր զԳանիէլ վարդապետն, և զայլ խաղաղական և զուարճականն համբաւս՝ ահա գրեցաք յատուկ կոնդակաւ առ հասարակութիւն ժողովրդոց մեծի Մայրաքաղաքիդ, և յատուկ օրհնութեան թղթով առ դերապնիւ սիրելին մեր՝ Աստուծով զօրացեալ և մեծաշուք Բարդուղիմէոս Չէլէպին, վասնորոյ աստանօր ոչ երկարելով, թողումք ի նոցունց իմանալ։ Իսկ այսու օրհնաձիր թղթովս քեզ սիրելւոյդ գրեմք, զի ի գոյն ջերմեռանդ սէրդ և ի սրտական հաւատարմութիւնդ որ առ լուսածին Մայրս քոյ և առ մերս հոգևոր հայրութիւն՝ յարամնացես հաստատուն, և որպէս մինչև ցարդ՝ նոյնպէս և յաւսմհետէ զուղղութեան և ճշմարտութեան զհետ ընթանալով, հանապազ զօգուտն սրբոյ Աթոռոյս և մեր խորհեսցես և արասցես։ Ցուսամք յԱստուած՝ թէ յարգելի եղբայրն մեր Յովհաննէս պատրիարգ Աստուածիմաստ արք եպիսկոպոսն եկեալ ի քաղաքդ, բուռնհարեալ իցէ՝ առ ի բոլորովիմբ խաղաղտցուցանել զքաղաքդ, և արմատաքի ի բաց խլել այտի զխռովութիւնսն՝ և զառիթսն խռովութեանց, որում դու ևս ըստ կարեացդ օգնական լինելով՝ ջանս դիցես խաղաղութեան և միաբանութեան։ Որովք միշտ ընկալցիս զվարձըս յԱստուծոյ։ Ողջ լեր՝ ի Տէր։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս, և ի դեկտեմբերի... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՅԼԴ. Առ հաջի Գաբրիէլ եւ հաջի Գրիգոր։

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ, գիտութիւն լիցի սիրելի և հոգևոր որդւոցդ իմոց, բարեջան և օգտախոհ գաւակացդ սրբոյ և մեծի Աթոռոյս Էջմիածնի։ Զի զթուղթ երկուցդ ի միասին գրեցեալ, ընկալաք ընդ մահսէրի քաղաքիդ և ընդ թղթոց այլ սիրելեաց մերոց, որովք գիտացեալ զմեծագոյն սէրն ձեր, և զջերմեռանդ կատարեալ որդիութիւն, զորս ունիք առ շնորհատու ծնօղ մայրս ձեր Աստուածաբնակ, և առ մերս հոգևոր հայրութիւն, ուրախութեամբ սրտի օրհնեցաք զձեզ զարժանաւորսդ օրհնութեան սիրոյ, և յարգանաց, զորս Տէր օրհնեսցէ, զօրացուսցէ, և յամենայն դիպուածոյ փրկեալ ի խաղաղու-

թեան պահեսցէ, և զամենայն զրանս և զզօրծըս ձեր ես ի բարին յաջողեսցէ, և ընդ թևօք խնամոց և գթութեան կայցի գձեզ, ի դիւրութիւն վշտակիր սրտի մերում։ Արդ՝ ձերդ այդ հաւատարմական գործ և բարեկամութիւն, ոչ միայն առ մեզ վերաբերին, այլ և առ Աստուած, զորոյ զտաճարն կամէին քակել չարաբարոյք, առ սուրբ Լուսաւորիչն, և առ ի նոցանէ հիմնեալ և կառուցեալ սուրբ Աթոռս երկնահանդէտ. ուստի որպէս իմէնջ, նմանապէս և ի նոցունց ունիք վարձատրիլ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։ Իսկ կողմանցս որպիսութիւնքն համառօտիւ այս են, ի գալ Բաթր Թաթարին առ մեզ ի նոյեմբերի Ժ. լաւ համարեցաք պատուով բերել զԳանիէլ վարդապետն, քան բռնութեամբ, վասնորոյ և զեպիսկոպոս մի Աբրահամ անուն հանդերձ այլովք ոմամբք յղեալ ի Բալազիտ, զնա ինքն զԳանիէլ վարդապետն հանդերձ ամենայն սպասաւորօքն և վարդապետօք բերել տուաք ի սուրբ Աթոռս ի նոյն նոյեմբերի ԻԷ. և պահեմք այժմ ի յարգել։ Ցետ այնորիկ եկին հաջի Իսմայէլն, Միրզայ Մահմատն, և Թաթարն, և բերին ըզվերոյիշատակեալ թուղթսն ձեր և այլոց ընդ մահսէրին և սիւբկիւն Ֆէրմանին, զմահսէրն հանդիսի դասուց հոգևորականաց և աշխարհականաց ընթերցեալ՝ ուրախութեամբ փառս մատուցաք Աստուծոյ, որ յաջողէ զամենայն յամենայնի, որ և զայս այսպէս տնօրինեաց և յաջողեաց։ Զայլ ամենայն բանսն ունիք լիապէս գիտել ի թղթոց Ստեփան վարդապետին մերոյ և Ազայեկեան պարոն Գէորգին, որոց երկար գրեցաւ՝ չունելով մեր զժամանակ խաղաղ և զոլով ի զանազան հոգս պատաղեալ ոչ կարացաք երկարապէս գրել ինչ, վասնորոյ ի համառօտն բերեալ թողումք զայլն՝ յայլում պահու գրել։ Զայսքանս այժմ աստէն գիտացեալ, և ի սէր ձեր և յորդիութիւն հաստատուն կացեալ, և զսիրոյ թուղթս ձեր ես ի մէնջ աննուազելի արարեալ, ողջ լերուք ի Տէր, և զօրացեալք նովաւ և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ ձեզ և ընդ ձերայինսն, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս, ի դեկտեմբերի ... ի մայր Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

Հայրական օրհնութեամբ, և լիսուսաձիր ողջունիւ ամենայն ընտանեաց ձերոց և ազգականաց, և ամենեցուն ես, որք ընդ ձեզ են, և ձեր, մատուցանեմ զօրհնութիւն և զողջոյն, և խնամոց և գթութեանց բարձրելոյն յանձն առնեմ զամենեսին զնոսա, զի մնասցեն ի բարեկենդանութեան հոգևոր և մարմնաւոր բարութեամբք։

ՅԼԵ. *Թուղթ առ Կիրակոս վարդապետ ոմն։*

Ցորմէ սիրով բազմաւ, լիսուսաձիր ողջունիւ, օրհնութեամբ և շնորհօք սրբոյ Աստուածաէջի տեղւոյս՝ ծանիր սիրելի և հոգեւոր որդի մեր, և շնորհընկալ զաւակ սրբոյ Աթոռոյս, տերամբ Քրիստոսիւ զօրացեալ Կիրակոս խոհեմամիտ վարդապետ։ Զի ի թղթոյ սիրելի որդւոյն իմոյ Ստեփաննոս արքեպիսկոպոսին ծանեաք լիապէս զմեծագոյն սէրդ, զբազմադիմի հարազատ որդիութիւնդ, և զջերմեռանդութիւն սրտիդ, զորս ունիս առ շնորհատու ծնօղ մայրս քոյ, և առ մերս հոգևոր հայրութիւն. որովք և ջատագով ճշմարտութեան լեալ՝ ցուցեալ ես զնոյնն և գործով յայտ ի Պօլիս. որպէս և դու երկար ունէիր մեզ գրեալ, և զորպիսութիւնդ մտերմական մեզ ծանուցեալ։ Ուստի և մեք այսու օրհնութեան նամակաւ մերով շնորհակալիմք, և ունիմք զսիրելի որդիդ մեր ի մտի, զոր Տէր օրհնեսցէ, և զօրացուսցէ, և ի դոյն մտերիմ որդիութեան պահեսցէ։ Որպէս զի՝ որպէս ցարդ, նոյնպէս և յապայն կացցես և մնասցես ի դոյնն, և ընկալցիս ըստ չափու սիրոյդ և որդիութեանդ և աշխատանացդ զօրհնութիւնս և զշնորհս ի սրբոյ Աթոռոյս և ի մէնջ։ Զորպիսութիւն սրբոյ Աթոռոյս մեր, չունելով զխաղաղ ժամ, ոչ կարեմք այժմ գրել ինչ զնոցունց։ Այլ թողում գիտել ձեզ ի հասարակական կոնդակէն և ի յառանձնական թղթոցն մերոց, որ առ յատկացեալ սիրելիսն մեր։ Զայսքանս ես՝ ի յանձեռնհաս միջոցիս, յորս կամք պատաղեալ ի յողնադիմի հոգս, քեզ սիրելի որդւոյդ գրեալ ի նշան սիրոյ և հոգևոր հայրութեան մերոյ, թողումք զայլսն յայլում ժամու գրել ձեզ։ Զայսչափս գիտացեալ՝ ողջ լեր ի Տէր, և զօրացեալ նովաւ, և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ և ընդ ամենայն ճշմարտասէր որդիսն մեր, Ամէն։

Ի դեկտեմբերի... ի 1802. ի մայր Աթոռս ամենայն Հայոց՝ ի սուրբ Էջմիածին։

ՅԼԶ. *Կոնդակ ի Թաւրէզ ի վերայ հասարակութեան եւ ժողովրդեան։*

Զի յառաջ քան զայս՝ բազմիցս ի զանազան ժամանակի՝ գրեալ եմք զանցս սրբոյ Աթոռոյս ձեզ բարեպաշտիցդ, և օրհնութեան կոնդակօք զմերս հայրական օրհնութիւն հանդերձ շնորհօք Աստուածայջ սուրբ տեղւոյս ձեզ բաշխեալ։ Յորոց ի հարկէ ցարդ գիտացեալ զամենայն եղելութիւնսն տեղւոյս չունիք պէտս կրկին ազդեցութեանց։ Նա մանաւանդ լրապէս լուեալ ես էք հարկի, զոր ինչ գործեցան և պատմեցան ձեզ ստութեամբ և աւելորդութեամբ ի նախանձոտաց և ի խռովարարաց, և որչափ ինչ վնասեցին զսուրբ Տունս Աստուծոյ, և զայթակղեցուցին զբազումս ի ձէնջ։ Բայց՝ զարդիս այնոքիկ ամենայն յայտնեցան, և ճշմարտութիւն ծագեցաւ, և լռմօթ արար զխռովիչն բանսարկու սկզբնաչարն սատանայ, և զայնոսիկ, որք հակեալ էին կամաւ ի սուտ անդր։ Վասնզի ժողովուրդքն Պոլսոյ և բարեպաշտ իշխանքն տեսեալ զաւերութիւն սրբոյ տեղւոյս խոկալով զշինութենէ սորին և զպայծառութենէ, և հայրապետութեան ազգիս զանփոփոխ մնալոյ՝ մատուցեալ են զաղերս առ Թագաւորն Օսմանցւոց ուխտիցս, և մինչ Խամսեցի Գրիգոր ոչ պատրիարքն խափանեալ է և չէ թողեալ, ապա միւսանգամ սկսեալ են զնոյնն խնդրել։ Եւ Թագաւորն զիջեալ յաղաչանս և ի խնդիրս նոցա հրամայեալ է տալ զկատարումն ամենայն աղաղակացն հասարակութեան. այս է՝ զԳրիգոր չպատրիարքդ հանդերձ Դանիելիւ առաքել կապանօք ի սուրբ Աթոռս իբր աքսորս և յանուն մեր նորոգել զֆերմանն, և անփոփոխելի կալ և մնալ մեզ ի սոյն իշխանութեան ի պայծառութիւն և ի հաստատութիւն սրբոյ Աթոռոյս։ Ուստի՝ և զայսոսիկ վերոյգրեալ զեղելութիւնսն յատուկ թաթարաւ ծանուցեալ էին մեզ։ Զորս ի գիտելն, առաքեցաք զեպիսկոպոս մի Աբրահամ անուն հանդերձ խանի մարդովն և այլով ի Բայազիտ առ փաշայն, և զԴանիէլ վարդապետն հանդերձ ամենայն իւրայլին վարդապետօք և սպասաւորօք բերել տուաք ի սուրբ Աթոռս, և ունիմք աստ առ մեզ յարգանօք։ Արդ՝ գրեմ սիրելեացդ իմոց ի լսելն զայս, և ի գիտելն, թողուլ զամենայն խռովութիւնսն և հանդարտիլ ի բազմածուփ ալեաց, որովք յարդ տարուբերեալ ծփայիք. և զսիրտս ձեր, և զոգիս Աստուածային սիրովն վառեալ և զարդարեալ, ջերմանալ ի վերայ սուրբ ծնողիս ձերոյ, և զշինութենէ և զպայծառութենէ սորին խորհիլ և հոգալ միշտ, և մի սիրտ և մի հոգի լինիլ, և թողեալ զերկպառակութիւն, որ է գործի և բնակարան դիւաց, զհետ սիրոյ, խաղաղութեան և ազգաօգուտ և աթոռաշահ գործոց բարեաց երթալ. և նովիմբք գանձել ձեզ և որդւոց ձերոց զանուն բարի և զկեանս անանցանելիս. և իբրև հարազատ և սրտացաւ և օգտախոհ որդիս՝ յօգնութիւն խղճալի մօրս ձերոյ լուսոյ ժամանել, և մեզ սրտադիւրութեան և մխիթարութեան առիթ գտանիլ, բաւական համարելով անցեալ վնասուքն և թշուառութեամբքն, որք եկին հասին առ մեզ, և առ սուրբ տաճարս Քրիստոսաէջ ի նախանձոտաց, ի խռովարարաց, և ի չարաշունչ արանց։ Ուրեմն՝ գրեմ առ ամենեցդ յայտնապէս, և մանաւանդ յորդորեմ զամենեսին, և առաւել զգուշացուցանեմ. հեռի կալ և մնալ ձեզ յայսմհետէ յամենայն աղմկից, ի շփոթից, և ի մրրկաբեր և ի խռովարար բանից և գործոց, և թողուլ զոր ինչ մինչև ցայժմ արարին խօսեցան և գործեցին ոմանք ի ձէնջ զչարիս և զանվայելս, և այսչափ աւերութեանց և խայտառակութեանց պատճառք գտան։ Ապա թէ ոչ՝ զուցէ չկտրելով մեր այլեւս համբերել, ի վրէժխնդրութիւն յարուցեալ՝ հատուսցուք և մեք զարժանի տրիտուրն այնոցիկ և վասն առաջին գործեցելոցն նոցին վնասատուութեանց։ Ուրեմն, գիտացեալ ձեր զայսոսիկ պատուէրս մեր հայրականս՝ զգոյշ լիցի իւրաքանչիւր ոք անձին իւրում և չափ և քանոն դիցէ բանի և լեզուի իւրում, և սանձահարեսցէ զինքն և ի թիւրութենէ ի յուղղութիւն եկեալ՝ ընդ ուղիղ շաւիղ Աստուածային հետոցն ընթասցի։ Եւ Աստուած քաւիչն ամենայնի, և աղբիւրն խաղաղութեան՝ քաւեսցէ զյանցանս ձեր, զորս ցարդ յանդէտս և յակամայս գործեալ իցէք, և պարգևեսցէ առատապէս զերկնաւոր խաղաղութիւն իւր ձեզ սիրելեացդ իմոց պահելով ի յաջողութեան։ Զայսքանս գիտացեալ, ողջ լերուք ի Տէր, և զօրացեալք նովաւ, և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ ձեզ Ամէն։ Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս և ի դեկտեմբերի... ի սուրբ Էջմիածին։

ՇԼԵ. Ի Պոլիս առ Գալուստ վարդապետն։

Ցորմէ սիրով ճշմարտիւ, փրկչաւանդ ողջունիւ, և միարար խաղաղութեամբ բարձրելոյն. հանդերձ շնորհօք Աստուածաէջ սուրբ տեղւոյս ծանիր սիրեցեալ եղբայր մեր ի Քրիստոս, և ծերունի բազմաշխատ նուիրակ սրբոյ և մեծի Աթոռոյս Գալուստ շնորհափայլ արքեպիսկոպոս։ Զի յառաջ քան զայս քանիցս անգամ գրեալ եմք սիրոյդ զորպիսութիւն կողմանցս, և ծանուցեալ զկոչմանէն մերմէ յայս աստիճան, և զներհակ շարժմանց և զզանազան բարուրանաց ոմանց նախանձոտաց։ Ի հարկէ թէ ի գրութեանց մերոց, և թէ այլոց, լուար և ծանեար զեղելութիւնսն, է որ ուղիղ, և է՛ որ խառնի խուռն աղճատանօք։ Բայց թողեալ զայսոսիկ, զհարկաւորսն ահա միայն իմա. ի գալ մահսարաքեր Կարապետ եպիսկոպոսին յանցեալ ամին ի սուրբ Աթոռս ի Պոլսոյ, պատմեաց լիալիր զամենայն զմեծադոյն մտերմութիւնդ և զառաւելութիւն սիրոյդ, զորս արարեալ ես և ցուցեալ ի վիճակի քում լուսոյ ծննդիս քո սուրբ Գահիս, և մերում հոգևոր հովուութեան, որոց ազագաւ և մեր շնորհակալեալ յոյժ յոյժ զպարգի եղբօրէդ՝ գրեցաք յայնժամ զբանս գոհութեան առ բաղձալի յատկեղ եղբայրութիւն ձեր։ Բայց՝ չև ես հասեալ թղթոցն մերոց առ քեզ, անկաւ խռովութիւն ի Պոլիս, և տարագրեցաւ հաւատարիմն սրբոյ գահիս սրբազան պատրիարգն Յովհաննէս, և մնացին թուղթքն այնոքիկ ի Կարին խափանեալ։ Ապա յետ ժամանակաց վերադարձան առ մեզ ամբողջ կնքովն, և մեք ըստորում զփոքրիկ փուսուլայ էաք եղեալ անդ ի վերայ քոյ՝ վասն հարկաւորութեան սրբոյ Տանս զայս ինչ և զայն առնուլ և այլն, զայն փոքրիկ փուսուլայն հանեալ անտի, այնպէս բաց ահա զայն թուղթն վերստին ընդ սոյն այս գրոյս յղեցաք ի Պոլիս առ սրբազան պատրիարգն՝ առաքել առ սէրդ իմ, զի ծանիցես զստուգութիւն և զանխարդախ պարզութիւն սրտի և ոգւոյ մերոյ, որով կամք ընդ բաբեջան և մեծաշխատ հարազատութիւնդ սրբոյ Աթոռոյս ցարդ անլեղլի, և յաթայն աննուազելի։ Բայց ի քէն մինչև ցայժմ պուղթ չեմ ընկալեալ. և միայն Մէլիք Աբրահամ աղային զոր ինչ գրեալ էիր, յայտնի եղև մեզ։ Եւ արդ՝ զայս գրեմ այժմ. զի յաջողութեամբ տեառն և շնորհիւ սուրբ Էջման տեղւոյս, թէ զինչ գործեցան ի Պոլիս ի ներկայումս, և զիարդ օրհնեալ բարեպաշտքն Պոլսոյ ոչ կարելով տանել զանպատուութիւն սրբոյ Աթոռոյս և զահակալիս սորին, և ոչ կամելով զայս Քրիստոսահիմն տեղիս քակել, և ի Վիրտիստան ի բազմաստուածութիւնս կործանիլ, միակամ սրտիւ զաղերս մատուցեալ առ թագաւորն բարձեալ են զամենայն նիւթս ատելութեան և խռովութեան. ընդ նմին և զխռովարարսն և մաքրեալ զանկարգութիւնսն ի քաղաքէ իւրեանց, որով և մաքրեալ զտաւ տեղիս այս, զանց զնոքումբք զամենեքումբք առնեմք։ Զի զայնոսիկ որպէս մեք ծանեաք ի բազմակնիք մահսէրէ և ի շնորհաւորական թղթոց իշխանացն Պոլսոյ, նմանապէս և դուք ունիք տեղեկացեալ, զորոց չէ հարկ վերակրկնել զբանս։ Միայն դու յարգի եղբայրդ իմ, և բազմաշխատ զաւակդ սրբոյ Աթոռոյս, ըստորում այսօր երևելին ես ի միաբանսն մեր և ծերունի, և անուանի ի նուիրակսն սրբոյ Գահիս, և պայծառութեան սրբոյ Աթոռոյս և շինութեան սորին ցանկացող, պարտիս ընդ սրբազան պատրիարգին և ընդ Ստեփաննոս արքեպիսկոպոսին և ընդ մեր հարազատ բարեկամ պարոն Գէորգ Աղայեկովին աջակից և բազմակի՛ց զտանիլ և զօդուան և զբարին խորհիլ, և զխաղաղութիւն զերկնաւոր հիմնել և հաստել ի քաղաքս և ի գեօղս ի հոգիս բարեպաշտից. և զգթեալսն և զգայթակղեալսն ի չարավղող նախանձոտաց անդրէն վերստին միւսանգամ շինել, և յուղիղ շաւիղ աստուածպաշտութեան վերածել, զի բազմասցին քեզ վարձք յերկինս, և գովութիւնք և գոհութիւնք յաշխարհի ի մարդկանց և ի մէնջ։ Ահա զսոյնս գրեալ եմք սրբազան պատրիարգին, Ստեփան վարդապետին և Աղայեկեան պարոն Գէորգին, որ է և քեզ յոյժ սիրելի և հաւատարիմ. զի ընդ քեզ իբրև ընդ ժեծադոյն մտերմի և խորհրդականի մերոյ խորհեալ զարժանաւորսն զկարևորսն, և զայն՝ որք առիթ և պատճառ շինութեան Ազգին և Աթոռոյս, ջանասցեն աւուրբ յառաջ վերջացուցանել զտարաձայնութիւնսն. զի և մեք միամտութեամբ ի գործս մեր կանխեսցուք։ Եւ ես՛ այնոքիկ գործք, որք գործեցան ի հար-

կէ թարց ծախուց չէր կարելի. զի Օսմանցւոց դուռն քեզ լաւապէս յայտնիք են. վասնորոյ զրեմ յարդի սիրելւոյդ հող տանել ծախուցն, և որչափ ինչ ղոլանալ (և կամ որքան կարես և կամիս զայնքանն) պատրաստել և տալ, և մեզ հասեալ զիտել։ Եւ վասն մնացելոցն մեզ զրել. զորս թողում ի կատարումն միտս, և ի բազմախորհուրդ կառավարութիւնս քոյ, սիրով ի կատարել յօժարիլ, և ի սէրդ և յեղբայրութիւնդ հաստատուն կալ, և ի բանից թշնամեաց զլսելիս քոյ հրաժարել, և միամիտ հոգւով, և անվրդով սրտիւ ի գործս քոյ լինիլ, և զկնի կատարման գործոյդ ուրախութեամբ ի սուրբ Աթոռս գալ, և ի գիրկ քաղցր ծնողիս քո հանգչիլ, և ի մէնջ ևս վայելել զվարդանս։ Կողմանցս որպիսութիւնք համառօտիւ այս են. ի դալ աւետաբեր թաթարին առ մեզ ի նոյեմբերի Ժ. և ի գիտելն մեր զբարեպաշտական գործոց ժողովրդոցն Պոլսոյ, որք զԴանիէլ և զԴրիգոր վարդապետսն միանգամայն առաքելոց են ի սուրբ Աթոռս յաքսորս, պատշաճ դատեցաք պատուով և սիրով բերել զԴանիէլ վարդապետն առ մեզ, քան թէ բռնութեամբ և նախատանօք. վասնորոյ և զեպիսկոպոս մի Աբրահամ անուն հանդերձ այլով ումամբ յղեցաք ի Բայազիտ. և զեղբայր Դանիէլ վարդապետն բերել ի սուրբ Աթոռս ի նոյեմբերի ԻԷ. պահեմք ի յարդի։ Եւ առաջի սուրբ իջման տեղւոյն յաջակողման դասուն խալիչայիւ ի վերքան զկաթուղիկոսարանն մեր՝ յատկացուցաք զտեղին, և դասագլուխ կարգեցաք, և կամք եղբայրական սիրով ընդ նմա և ի կոյն և մնայն սորին ի սոյն այս խաղաղութեան, յաւելումք և մեք օրքան զօր զվարդանս. և կամիմք, զի որպէս մեք խաղաղացեալ կամք ի սէր, նոյնպէս և դու յարգի եղբայրդ իմ հանդերձ ի վիճակի քում եղեալ բանաւոր հօտիւք զնոյն խաղաղութիւն ընդգրկեալ՝ մխիթարիչ մեզ լինիջիք։ Իսկ զաւանդսն սրբոյ Աթոռոյս, որք էին ի Բայազիտ յաւուրց անտի Ղուկասու Հայրապետին թէ նաղտք և թէ վէճք, զպիտանիսն և և զպատուականսն ի վիճեցինաց խարջեալ է Դանիէլ վարդապետն ընդ գրամին։ Իսկ մնացեալքն ևս տակաւին կան ի Բայազիտ ի ձեռս Դանիէլեանց ընդ հրամանաւ փաշային. մեք ևս դեռ չեմք պարապեալ ի վերահասու լինիլ և տիրել անդ եղելոցն։ Զայսքանս գիտացեալ առ այժմ, և զեղբայրական աննենգ սէրդ ի մէնջ աննուազ արարեալ, ողջ լեր ի Տէր, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս, և ի դեկտեմբերի... ի սուրբ Էջմիածին։

ՅԼԸ. Թուղթ ի Պօլիս առ Փիլիպպոս Ամիրային:

Որում գիտութիւն լիցի, զի յիւրաքանչիւր պատշաճ ժամանակի զրեալ եմք զերապատիւ սիրելւոյդ զանցսն տեղւոյս, և զաբարս ոմանց ներհակաց և գիտեմք զի քաջ տեղեակ գոլով չունիք անդրէն պէտս զեկուցմանց։ Ուստի՝ զանց զայլովք զամենեքումբք արարեալ՝ զհարկաւորսն և եթ զրեմք անհա համառօտիւ։ Զի թէև յայս միջոցիս՝ ի յԱղնուութենէ ձերմէ չընկալաք զթուղթ, սակայն՝ մեր Ստեփան վարդապետն զանազան գոհունակութեամբք ծանուցեալ էր մեզ բազմաձեռն օգնականութիւն ձեր սրբոյ Աթոռոյս՝ առ որս մեք անտարակոյս կամք, և լաւ գիտեմք, զի թէ ի ձէնջ, և թէ՝ ի ձեզապիսի բարեպաշտից և քաջատոհմից ոչ երբէք յառաջանան վնասք և խռովութիւնք, այլ բարութիք վասն ամենից, և կամիք, զի և այլք ի ձեզ հայելով, և զձեզ բարի օրինակ ինքեանց ունելով, ի լաւ անդր դարձցին։ Եւ ըստ բարի գործոց և ըստ պարզ և անխարդախ սրտից ձերոց, որպէս յաշխարհի աստ գովիք ի հողածնաց, նմանապէս և ի Տեառնէ Աստուծոյ վարձատրիք ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։ Եւ արդ, որ ինչ գործեցան ի քաղաքիդ յաջողութեամբ Տեառն՝ յայտնիք են ձերդ ազնուութեան, զորոց զրուածով, ոչ կամիմ կրկին ձեզ տալ զտաղտկութիւն. միայն զայսքանս գրեմ, զի ի դալ աւետատու թաթարին ի սուրբ Աթոռս՝ ի նոյեմբերի Ժ. պատշաճ համարեցաք սիրով քան բռնութեամբ դալ Դանիէլ վարդապետին ի սուրբ Աթոռս, նմին իրի զեպիսկոպոս մի հանդերձ այլովք ումամբք առաքեալ ի Բայազիտ բերել տուաք զնա ինքն զԴանիէլ վարդապետն ի սուրբ Աթոռս ի նոյեմբերի ԻԷ. և պահեմք յարգանօք։ Եւ եթէ մնասցէ սա ի սոյն այս խաղաղասիրութեան, յաւելումք և մեք զպատիւն, յետ այնորիկ եկին խանի

մարդիկն ընդ Թաթարին ի Պօլսոյ ի Բալաղխա հանդերձ սիւրկիւն ֆէրմանաւն, և տեսին զնա եկեալ ի սուրբ Դահս, և ինքեանք ևս ի դեկտեմբերիս ԺԶ եկին առ. մեզ և բերին ընդ այլ Թղթոց և զհամահաճութեան մահսէրն ազգին՝ զոր առաջի հողեսբտկան և աշխարհական դասուց ընթերցեալ, զփառս մատուցաք Աստուծոյ, որ յաջողեաց զայս այսպէս, և յամօթ արար զայնոսիկ, որք կամէին ծածկել զճշմարտութիւն. զի եթէ ոչ Տէր շինէ զտուն, ի նանիր վաստակին շինողքն, և այլըն։ Ուրեմն, և քեզ յարգապատիւ սիրելւոյդ գրեմ, և մանաւանդ դԹովն Յիսուսի աղաչեմ. զխաղաղութեան դհետ երթալ, և զայլս ևս դխռովեալս խաղաղել, և վարձուց բարեաց ժառանգորդ դտանիլ, իսկ վասն դերի կնոջն Մարիամ անուն, զորմէ գրեալ էր մեզ Ստեփան վարդապետն. իբր զի ի դալն ի սուրբ Աթոռս ի խնամս ունիլ ի սէր սիրելւոյդ, և հաւատարմաւ ուղևորել ի Թիֆլիզ. վասն նորա Տէր Գասպարն ի Կարնոյ գրեալ էր Թէ՝ ինքնս ընդխս բերելոց եմ ի սուրբ Աթոռդ, և այլըն։ Արդ ի դալն Նորին աստ առ. մեզ, ըստ ամենայնի ամենայն կերպիւ յանհոգս լիցի պատուականութիւն քոյ, զի իպատիւ և ի սէր փառաւոր անուն անձկալւոյդ զմարդասիրութիւն և զխնամս ցուցեալ ըստ մերս հովուական հոգևոր պարտաւորութեան, առաքելոց եմք ի հայրենի քաղաքն իւր խնամատարութեամբ։ Զայսքանս ի կարճոյ դիտացեալ, ողջ լեր փառազարդ իշխան ի պարծանս սրբոյ Աթոռոյս և եկեղեցեաց մերոց, և մանաւանդ ի մխիթարութիւն վշտակիր սրտի մերում, Ամէն։

Ի դեկտեմբերի ... ի ՌՄԾԱ. Թուոջս, ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՅԼԹ. *Ի Կարին առ մահտեսի Մարտիրոս աղայն Ասլան կոչեցեալ:*

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ, և ողջունառաք սիրոյ նամակիս՝ դիտութիւն լիցի սիրելի և հոգևոր որդւոյդ մերոյ, և դաւակիդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի ի դեկ. 5. եւ ի նոյեմ. 23. գրեցեալ ուրախալիր և բերկրական Թուղթսդ ընկալաք, և ընթերցմամբ՝ դիտացաք զջերմեռանդութիւն սրտիդ, որով կամիք ցուցանել, զձեզ զոլ մտերիմ սրբոյ Դահիս և մեզ, զոր և հաւաստարմացուցանէք իսկ նովիմբք Թղթովք։ Արդ՝ Թողեալ զայլսն ամենայն և զանց զանցելովք արարեալ՝ տալով զկամաւ և դգիտութեամբ գործեցեալսն ևս մոռացման, զայս միայն գրեմ։ Զի որպէս գրէքդ մեզ, և որպէս խոստանայքդ, զնոյնն և գործով ցուցանել, և արդեամբք կատարել ջանասջիք, որպէս զի՝ կատարելապէս ընկալջիք զվարձս յԱստուծոյ, և զօրհնութիւնս ի սրբոյ Աթոռոյս և ի մէնջ։ Այս զի՝ ոչ կարէ հասանել առ նաւահանգիստն, որ յերկուս հետս կաղայ, և այլըն։ Զորպիսութիւն սրբոյ Աթոռոյս և մեր ի կարճոյ զայսքանս իմա։ Յորժամ եկն յառաջին նուաղին աւետաբեր Թաթարն Բաթըր անուն, լաւ համարեցաք սիրով քան բռնութեամբ բերել զԴանիէլն, վասնորոյ և զեպիսկոպոս մի Աբրահամ անուն առաքեալ ի Բալաղխա հանդերձ այլովք ոմամբ, զնա ինքն զԴանիէլ վարդապետն պատուով բերել տուաք ի սուրբ Աթոռս հանդերձ ամենայն սպասաւորօքն և վարդապետօք, յետ այնորիկ եկին մեր խանի մարդիկն, և տեղւոյդ Թաթարն Սալէհ անուն ի Պօլսոյ, հանդերձ սիւրկիւն ֆէրմանաւն, և տեսին զԴանիէլն եկեալ ի սուրբ Աթոռս, ինքեանք ևս եկին առ մեզ ի սոյն դեկտեմբերիս ԺԶ. և բերին զսիւրկիւն ֆէրմանն Դանիէլի և զհամահաճութեամբ մահսէրն Պօլսեցւոց, զորս ընթեռնուլ տուաք ի հանդիսի բազմութեան հոգևորաց և մարմնաւորաց, և գոհութեամբ զփառս մատուցաք Աստուծոյ, որ յաջողեաց զայս այսպէս։ Ի սոյն դեկտեմբերիս ԻԷ. եկն և մեր որդի պարոն Մարտիրոսն ի Պօլսոյ հանդերձ ֆէրմանի և բէրաթի օրինակօքն։ Այսչափս առ այժմ բաւական համարեալ՝ և սէրդ և զորդիութիւնդ յայսմհետէ աննուազ արարեալ, ողջ լեր ի Տէր, և զօրացեալ նովաւ, և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ և բոլոր քալայինսդ, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ Թուոջս, և ի դեկտեմբերի ... ի մայր Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ՅԽ. *Թուղթ ի Բասրայ առ պարոն Գէորգն Տէր Դաւթեան:*

Եւ ընդ օրհնութեանս, և սիրապարդև
սգջունառաք նամակիս՝ գիտութիւն լիցի բա-
րեմիտ սիրելւոյդ մերում. և հաւատարիմ զա-
ւակիդ սրբոյ Գահիս Միածնաիջի։ Զի ի 1801
ի դեկտեմբերին գրեցեալ միապէս, երկոքին
թուղթքդ ընկալեալ սիրով և օրհնութեամբ՝
դիտացաք զթղթոց մերոց հասանիլն առ սիրե-
լիդ ընդ Յարութիւն ե Գէորգ շնորհափայլ եպիս-
կոպոսաց, ե ի տօնի երկնաւորացն դասուց սր-
բոց հրեշտակապետաց զերկրաւոր քահանայա-
պետութեանս մեր խոբհուրդ ի միասին զկատա-
րելն ձեր, և երկոքումբք զինուորութեամբք՝
այս է երկնաւոր դասուց տօնախմբութեամբ և
երկրաւոր քահանայապետութեան անուան
յիշատակութեամբ և կոնդակաց ընթերցմամբ
հրճուիլ և բերկրիլն ձեր՝ զինուորեալ որդւոցդ՝
զինուորեալ եկեղեցւոյս մեծի Հայաստանեայց,
ուրախ եղաք յոյժ յոյժ։ Եւ ես ծանեաք և զհնդ-
կաց կոնդակն հանդերձ թղթովդ ե օրինակաւն
եպիսկոպոսաց բերեալ կոնդակին յղելդ ի
Հինդ՝ ծանուցանելով նոցա զիրացն ստուգու-
թիւն։ Եւ մեծաւ գոհութեամբ, և լիալիր օրհնա-
բանութեամբ օրհնեցաք առաջի սուրբ և սար-
սափելի տեղւոյս Աստուծոյ զարժանաւոր որ-
դիսդ օրհնութեան զքեզ զհարազատդ մեր, ե
զօրհնեալ ժողովուրդսն քաղաքիդ, զորս Տէր
օրհնեսցէ, ե զօրացուսցէ և զամենայն բանս ե
զգործս ձեր ի բարին տնօրինեալ յաջողեսցէ, և
խաղաղութեամբ և բարեյաջող երջանկութեամբ
պահեսցէ ուրախ ե երկար ե անդորր կենօք ե
ժամանակօք հանդերձ ամենայն տերամբ զօ-
րացեալ ե զարդացեալ ձերայնովքն ի մխի-
թարութիւն վշտակիր սրտի մերում։ Այլև՝
ծանեաք զթղթոյ մերոյ որ առ Նուիրակն
սրբոյ Աթոռոյս՝ Յակոբ խոհեմափայլ արքե-
պիսկոպոսն սիրելին մեր՝ յղելդ ի Բումբայի,
և քոյ ինքնին դրելն ես առ նա զբանս միա-
մտականս, և զնորա առաքելն առ քեզ ի
Բումբայու դքսուրսն ե զինչսն, և քո ըն-
կալնուլն ե պահպանելն. Նաև՝ ի Տէր Յով-
հաննիսեան պարոն Ստեփանէն ես ստանալդ
ի Բաղդատու ի ձեռն բանակատարին քոյ Տէր
Մինասեան պարոն Միքայէլին ի յառաջմէ
յղեցեալ կողոպուտսն Նուիրակին մերոյ ըստ
բանի և թղթոյ նորին նուիրակին, ե զայլս
սոյնպիսիս, որք են արդարև գործք և նշանք
կատարեալ բարեկամի, ճշմարիտ որդւոյ, և
յատկեղ սիրելւոյ, առն բարեպաշտի և քաջա-
տոհմի, որոց ամենից բարելաւութեանց քոց
վասն՝ ունիմ յատկապէս զշնորհակալութիւնս,
և յայտնի եղև մեզ ջերմեռանդ սրտի քոյ ա-
ռաւելութիւն և յորդութիւն սիրոյ. Տէր վար-
ձատրեսցէ զբարիս քեզ սիրելի որդւոյդ մե-
րում ըստ չափու ե որքանութեան սիրոյդ ե
մտերմութեանդ, զոր ունիս առ Շնորհատու
հաւատոյ մայր քոյ սուրբ Աթոռս լուսակերտ և
Քրիստոսահիմն։ Դարձեալ՝ յայսմ թուի՝ ի յապրի-
լի 18. դերկու թուղթսդ՝ ես նոյնպէս մի օրի-
նակ դրեալ, ընկալաք ընդ վերոյգրեալ թըղ-
թոցդ քոց յանցեալ թուոյ ի նոյեմբերի 13.
ե ի դեկտեմբերի 8. գրեցելոց. զերկոսինն մի-
անգամայն ի Թէհրանու, որով գիտացաք ըզ-
սրբոյ Աթոռոյս ծայրագոյն նուիրակ Յակո-
բայ շնորհափայլ արքեպիսկոպոսի խաղաղու-
թեամբ թարց վնասու գալ ժամանելն յայդր
ի յօրհնեալ ե տիրահաստատ քաղաքդ ի Բաս-
րայ հանդերձ իւրայոյն սպասաւորօք վարդա-
պետօք և սարկաւագաւ ե այլովք, ե քոյ ի
սրտէ ըստ կարի օգնական լինելն, բանին և
գործոյն օժանդակ զտանիլն, ե այլն. Արդարև
ուրախացեալ մխիթարեցաք, ե զփառս գոհու-
թեամբ Տեառն Աստուծոյ մատուցաք, որ
հրեշտակի իւրոյ պահպանութեամբ և առաջ-
նորդութեամբ հասոյց ի նաւահանգիստ խա-
ղաղութեան։ Արժանացուսցէ՝ ուրեմն Տէր գալ
և անվնաս ի սուրբ Աթոռս ցանկալի, և հանգ-
չիլ գրկանօք ի գիրկ խնամոց և մայրականի
սիրոյ քաղցրիկ ծնողիս իւրոյ, ե վայելել ի
միմեանց զմխիթարութիւն, զորս ի մէնջ
հայրութիւն և զպարգանս, և մեր ի դմանէ
զճշմարիտ սէր ե զկատարեալ որդիութիւն։
Որում ահա զթուղթ սիրոյ, մխիթարութեան,
և յորդորանաց դրեալ առաքեցաք ընդ թըղ-
թոյս առ սիրելիդ մեր մատուցանել ինքեան,
և յոր վայր և ի ցէ հասուցանել առ նա, դի-
ելեալ օր յառաջ խաղաղութեամբ և ուրախու-
թեամբ գիմեսցէ ի սուրբ Գահս Աստուածաէջս։
Սիրելի որդւոյդ ես գրեմ ե պատուիրեմ. զոէր
զպարգանս ե զպատիւս ցուցանել ըստ արժա-
նաւոր քաղցր բարուց նորին, ե ըստ ամե-
նայնի օժանդակ ինքեան և գործոյն, ե խա-
ղաղ ճանապարհորդութեամբ, և աներկիւղ
ճանապարհաւ ուղևորել առ մեզ որպէս և

ինքեան նուիրակին ես գրեալ զգուշացուցաք քննել զնանգամանս ճանապարհին, և ընդ անվնասն գալ։ Նաև թուղթն ի Հնդկաց եկեալ առ. սրբազան Յովսէփ հանգուցեալն, ընդ թղթոյդ ընկալաք, զի ըստ որում չէաք ումեք ծանօթ մեք ի ժողովրդոցն Հնդկաց, վասն որոյ գրեցաք սիրելւոյ մերոյ Յակոբ շնորհափայլ եպիսկոպոսին իւրոյ խոհեմութեամբ անօրինել զբանն և այլն։ Իսկ զոր գրես թէ՝ չունիմք զթուղթ և զորպիսութիւն ինչ ի սրբոյ Աթոռոյդ, և թէ՝ չիմացաք՝ թէ խռովութիւնքն Պօլսոյ ուր դադարեցան, և այլն։ Գիտասցէ այժմ ահա սիրելի որդիդ մեր զամենայն անցիցն անցելոց համառօտիւ։ Զի մինչ ըստ աջակցութեան Աստուծոյ ընտրեալ կոչեցաք ի միաբանից և յազգէս մերմէ յայս կոչումն և յԱթոռ., և Շնորհիւ սուրբ հոգւոյն Աստուծոյ օծաք հայրապետ ի վերայ ամենայն Լուսաւորչածին ազգիս Հայոց. և հաստատեցաք հրովարտակօք թագաւորաց. և համահաճութեամբ ընդհանուր ազգիս մահսէրօք, ապա ոմանք ի մերոց կարգաւորաց՝ դժգմնեալ ընդ օծումն մեր՝ սկսան զանազան դրութեամբք, սուտ բանիւք, և նախանձու հոգւով զբազում ինչ խօսել և ասել զմէնջ, և ի զանազան տեղիս, ի հեռաւորս և ի մերձաւորս տարածել զայնս և գայթակղեցուցանել զբազումս ի պարզամտաց, և մեծաց վնասուց, և ծանակութեան օրինացս լինել առիթ։ Բայց Աստուած, որ արդար է, զարդարութիւն սիրէ, և զուղղութիւն տեսանեն երեսք նորա, ծագեաց զթագուցեալ ճշմարտութիւն ի սրտաբանից, և իբրև զարեգակն փայլեաց լուսախարհի ի տես ամենից, և ազդեաց ի սիրտս ժողովրդոցն Պօլսոյ զճառագայթս ճշմարտութեան, որով միասիրտ և միահոգի եղեալ՝ մատուցեալ են զխնդիրս թագաւորին Օսմանցւոց թէ՝ մեզ Աթոռ սեպհական զսուրբ Էջմիածին ճանաչեմք և ոչ Իւչքիլիսէի վանքըն, որ ի Բալաղիտ։ Եւ մեզ հայրապետ, զայն, որ է օծեալ և ի յԱթոռ Լուսաւորչին բազմեալ, զնա գիտեմք, և ոչ զԴանիէլն որ ընդդէմ օրինաց՝ ներհակաբար կայ ի Բալաղիտ, և այլն։ Եւ զայս խնդիրս մինչև յութն անգամ արարեալ են, բայց Գրիգոր պատրիարգն Պօլսոյ՝ որ էր ի կողմն Դանիէլին, և ստութեան նորին ջատագով, արգելեալ է, և խափանեալ։ Ապա վերստին զօրացեալ՝ օրհնեալ ժողովրդոցն Պօլսոյ՝ ի դրան և յապարանի արքային զաղաղակ բարձրացուցեալ լիններորդ անգամ, և զնոյն բան կրկնեալ, հուսկ յետոյ՝ ընկալեալ են զկատարումն ամենայն խնդրանաց իւրեանց՝ այսէ՝ զնոյն ինքն Գրիգոր ոչ պատրիարգն Պօլսոյ, և զԴանիէլն որ արտաքոյ կամէր զաթոռ հաստատել, և զինքըն կաթուղիկոս անուանել, կապանօք աքսորել ի սուրբ Աթոռս, և զառաջին խաղաղասէր պատրիարգն Յովհաննէս բերեալ նըստուցանել յիւր տեղին։ Երկրորդ՝ զմեզ ի մերում հայրապետութեան մինչև ցվախճան կենաց մերոց անփոփոխելի ունիլ, և օրէնք ազգիս և հայրապետութիւն սրբոյ Աթոռոյս հաստատուն մնալ ըստ կանոնի սրբոց հարց, և այլն։ Եւ զայսպիսի զեղելութիւնսն յատուկ թաթարաւ ծանուցեալ էին մեզ ի Պօլսոյ յայսըմ թուոջ ի հոկտեմբերի 23. Եւ մեք ի գիտելն զայս ամենայն պատչաճ դատեցաք յառաջ քան զչաւուշաց և թագաւորական մարդկանց գալն ի Բալաղիտ և զԴանիէլն բռնութեամբ բերելն, զեպիսկոպոս առաքել առ նա, և պատուով բերել ի սուրբ Աթոռս, զոր և յղեցաք, և ի ձեռն փաշայլին բերել տուաք զնա ինքն զԴանիէլ վարդապետն ի սուրբ Աթոռս հանդերձ բոլոր վարդապետօք և սպասաւորօք նորին ի նոյեմբերի 27. և պահեմք յարգանօք։ Ի սոյն ամսոյ 16, եկին ի դրանէ Օսմանեան թագաւորին և մարզիկն և սիւրկիւն ֆարմանին վասն Դանիելին, և զտին զնա աստ բերեալ։ Եւ յետ սակաւ միջոցի բերելոց են ի սուրբ Աթոռս կապանօք թագաւորական հրամանաւ հրովարտակօք, և չաւուշօք և զԳրիգոր պատրիարգն։ Արդ՝ ահա յայտնի երևեցաւ ճշմարտութիւն Աստուծոյ, ստութիւն նախանձոտաց, և անմեղութիւն մեր. զի նոքա ապաւինեալ էին ի ստութիւնս իւրեանց և ի կամս անձանց իւրեանց, և մեք ի միակ ճշմարիտն Աստուած։ Ուստի՝ ունայնացան ահա ինքեանք և բանք նոցին, և մեք Աստուծով ի մերում իշխանութեան կամք ապահովացեալ մերով ճշմարտութեամբ։ Զայսքանս ծանուցեալ սիրելւոյդ՝ պատուիրեմ, ի սէրդ, և ի կատարեալ որդիութիւնդ հաստատուն կալ, և ի հարազատութենէ և ի ջատագովելոյ և բարձրացուցանելոյ զբարձր անուն բարձրագահ սուրբ Աթոռոյս, և մերս հոգևոր հայրութեան անվերջանալի մնալ և օգտաբար

և բարեջան ձեռնտուութեամբդ բանից և գործոց մերոց, և ամենայն քեզ պատկանելի իրաց հոգածու լինել. և միշտ զորպիսութիւնս կողմանցդ և Հնդկաց ընդ ցանկալի առողջութեանդ մեզ գրել, որպէսզի՝ ընկալցիս զվարձըս բարեաց յերկակի կեանս քոյ յԱստուծոյ, ողջ լեր ի Տէր, և զօրացեալ նովաւ հանդերձ քոյայնովքն ամենեքումբք, Ամէն։

Ի դեկտեմբերի . . . ի 1802. ի մայր Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ՅԽԱ. *Թուղթ ի Պոլիս առ Անդրէաս եպիսկոպոսն ի շնորհաւորութիւն վեքիլութեան եւ ի շնորհակալութիւն վասն աշխատութեանց ի վերայ մանսէբին։*

Յորմէ բաղում սիրով, քրիստոսական ողջունիւ, միարար խաղաղութեամբ. և ամենաբաւ ողորմութեամբ բարձրելոյն, հանդերձ շնորհօք Աստուածաէջ սրբոյ տեղւոյս հրաշակերտի, ծանիր ընտիր սիրելիդ մեր ի Քրիստոս, և շնորհընկալ և հարազատ օգտախոհ զաւակ սրբոյ և մեծի Աթոռոյս Էջմիածնի Անդրէաս շնորհափայլ վարդապետ և արհիապանծ եպիսկոպոս։ Զի յիւրաքանչիւր ժամու տեսեալ բանիւ և գործով զսէրդ, որ առ մեզ, և կշտապինդ վայելեալ զայն ի դիպօղ պահու, դոհունակիմ յսկզբանէ տեսանելոյ իմ զսէրդ ի Պոլիս և այսր զազնիւ սիրելութենէդ վասըն ամենայնի ցուցեալ և արարեցեալ բանիցդ և գործոցդ գովեստից և դրուատեաց արժանեաց, այնզի՝տեսի յառաջնում զսէրդ իմ այցը, ըստ այնմ կայր և մնայր յետ այնորիկ ընդ մեզ և ընդ սրբոյ Աթոռոյս, ոչ միայն ի Կարապետ եպիսկոպոսէն տեղեկացայ, որ ի գալըն ի Դաղստիա ի յօրհնեալ վիճակս քո՝ ընկալեալ էր ի մէնջ զսէր և զքաղցրութիւն, զոր և մեծաւ գոհունակութեամբք պատմեաց մեզ, այլ և դու եղբայրդ յարգի՝ ինքնին թղթով և սիրանիշ ընծայիւք ես՝ իբրև կենդանի պատգամաւորօք լիապէս յայտնեալ էիր զներտրամադրեալ մեծագոյն սէրդ գորգիական՝ ընդ կատարեալ հաւատարմութեանց յայնժամ ընդ վերոգրեալ մահսարաքեր Կարապետ նորապսակ եպիսկոպոսին մերոյ։ Որում և մեք սխրալի սիրով գրեալ զարժանաւոր զպատասխանի քեզ յարգի սիրելւոյդ, յղեցաք, զորմէ դարդ չունիմք տեղեկութիւն ինչ։ Ուրեմն շնորհակալիմք այսու համառօտ գրուածով մերով զաշխատանացդ, զջանասիրութեանցդ, և զբարեջան օգտաբեր և հանրաշահ գործոցդ. Տէր լիցի վարձատիր քեզ ըստ չափու սիրոյդ և որդիութեանդ, զորս ունիս առ Շնորհատու ծնողս քոյ սուրբ Գահս լիսուսեան։ Քանզի՝ սիրելիքն իմ Ստեփաննոս Արքեպիսկոպոսն, և պարոն Գէորգ Աղալեկեանն և այլք, գրեալ էին լիապէս զամենայն զքաջագործութիւնսդ՝ զորս արարեալ ես յօգուտ և ի շահ ազգիս խղճալւոյ և Քրիստոսահիմն սրբոյ Աթոռոյս վնասակրի և անչքացելոյ ի նախանձոտաց և ի չարաշշուկ խռովչաց։ Եւ արդ՝ զայս զերկու ինչ հարկաւորապէս աւանդեմ և քեզ սիրելւոյդ. նախ ջանալ ըստ ամենայնի ամենայն կերպիւ գործակցութեամբ պատրիարգ վարդապետին բառնալ զխռովութիւնսն ի քաղաքէդ, և իսպառ ամենից արմատաքիլ խլել զատելութիւն և զերկպառակութիւն, և փոխարէն արմատացուցանել զսէր և զքաղցրութիւն, զմիաբանութիւն և զմիակամութիւն ի դոսա՝ բառնալով զամենայն առիթսն խռովութեան և ատելութեան, ընդ նմին և ըղխռովարարսն, զի հաստատուն լիցի հիմնեալդ այդ ձեր շինուած։ Եւ ապա՝ ջանացարուք զՖէրմանն և զբէրաթն ընդ համահաճական մահսէրին առ մեզ փութացուցանել ի միամըտութիւն, կամ ձեռամբ Ստեփաննոս վարդապետին մերոյ, և կամ այլով, որպէս պատրիարգ վարդապետին կամք իցեն։ Հուսկ յետոյ՝ յորդորեսջիք զհասարակութիւն քաղաքիդ գրել զմահսէր մի ես առ հիւսիսականսն, զի և նոքա գիտացեալ զկամս և զհաստատուն միտս ձեր, ընդ ձեզ համակից և համախորհուրդ եղիցին՝ թողլով ի բաց զայլ և այլ ըղձնոտի կարծիսն և զլոյսն, զոր տայ ինքեանց Եփրեմ վարդապետ առաջնորդն իւրեանց։ Զայսոսիկ, զորս գրեցաք՝ ուշիուշով ի միտ առէք, զի կարևորք են մերում դործոյն, և ձերոց գործառնութեանց, թարց որոց՝ իբրև զգործ թերալից մնայ անկատար։ Իսկ կողմանցս զիարդութիւնքն այսոքիկ են. գալ Բաթըր թաթարին առ մեզ ի նոյեմբերի Ժ. իսկոյն զեպիսկոպոս մի Աբրահամ անուն ընդ խանի մարդոյն եղեալ՝ յղեցաք ի Բալաղիտ առ փաշայն վասն Դանիէլ վարդապետին. և գնա ինքն, զԴանիէլ վարդապետն հանդերձ

ամենայն սպասաւորօք իւրովք և ի սրբոյ Աթոռոյս փախստական վարդապետօք բերել տուաք ի սուրբ Աթոռս ի նոյն նոյեմբերի ԻԷ։ Զոր և յարգանօք ընկալեալ պահեմք պատուով և առաջի սուրբ Իջման տեղւոյն խալիչալիւ ղաստղլուխ արարաք յաջակողման դասուն։ Յետ այսորիկ եկին ի դեկտեմբերի ԺԶ. հաջի Իսմայիլ պէկն, և Միրզայ Մահմատն հանդերձ Էրզրումայ Թաթարուն, բերելով և զմահսէրն քաղաքացւոցդ ի նոյեմբերի Ն գրեցեալ հոգածութեամբ և ջանասիրութեամբ սիրեցեալ եղբօրդ մերոյ, և ես զաքսորանաց ֆէրմանն վասն Դանիէլ վարդապետին և այլն։ Բայց որպէս ի վերդ յիշեցաք, յառաջ քան զգալուստ սոցա, մեք բերել տուեալ էաք զԴանիէլն ի Բայազիտու։ Այժմ ըսպասեմք մնացեալ Թերի իրացն, զորս լուսագրէքդ կատարել ի գալստեան սրբազան պատրիարգին. որ յուսամ, ցարդ եկեալ իցէ, և խաղաղութեամբ ժառանգեալ զսեպհական Աթոռն իւր, և զամենայն ինչ իւրով ամենախոհեմ կառավարութեամբ ի յանդ հասուցեալ, որում ես ահա գրեցաք լիապէս զհարկաւորսն։ Զայսքանս գիտեցեալ և զանխարդախ սէր քոյ ի մէնջ աննուազելի արարեալ, ողջ լեր տէր, և զօրացեալ նովաւ, և Շնորհք սրբոյ Աթոռոյս մեծի եղիցի ընդ քեզ ի զօրացուցանել զքեզ յամենայնի, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս, ի դեկտեմբերի ... ի սուրբ Էջմիածին։

ՅԽԲ. *Առ տիրացու Մանուկ ոմն ի Պօլիս։*

Որում և գիտութիւն լիցի. զի ի Թղթոց հարազատեցն մերոց Ստեփաննոս արքեպիսկոպոսին և պարոն Գէորգ Աղալեկեանին, և քոյդ, գիտացեալ զամենայն զմտերմութիւնսդ, զորդիական զսէրդ և զմեծագոյն ջատագովութիւնդ օրհնեմ. ահա այսու նամակաւս զսիրելի որդիդ իմ. զոր տէր օրհնեսցէ և զօրացուսցէ։ Եւ մանաւանդ շնորհակալիմ. ես զամենից բարեկամութեանց քոց զորս արարեալ ես լուսակերտ ծնողիս քո։ Թէև չունիմք զայ գիս զանդորր ժամ, ի գրել լիապէս քեզ սիրելի որդւոյդ ինչ, որպէս և ոչ այլոց, և զայսքանս համառօտիւ միայն կարացաք պատրաստել ի նշան սիրոյ և օրհնութեան մերոյ, սակայն ի հանդարտիլս սակաւ ինչ, և ի խաղաղանալս Աստուծով, ունիս վայելել ի մէնջ և ի սրբոյ Աթոռոյս զշնորհս և զօրհնութիւնս մշտապէս. և ես՝ կողմանցս և մեր զորպիսութիւնսն ըստորում լիապէս դրեցաք Թէ հասարակութեան քաղաքիդ, և Թէ այլոց ոմանց կոնդակաւ և առանձնական Թղթովք, վասնորոյ ոչ կամեցեալ երկրորդել զայնս, Թողում գիտել քեզ ի նոցունց։ Զայսքանս ծանուցեալ քո առ այժմ, և զորդիութիւնդ ընդ հարազատութեանդ ի մէնջ և ի սրբոյ Աթոռոյս աննուազելի արարեալ, դրելով և զկայմճետէ զեղելութիւնսն տեղւոյդ, ողջ լեր ի տէր, և զօրացեալ նովաւ. և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ և ընդ քոյայինսն ամենեսին, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս և ի դեկտեմբերի... ի մայր Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ՅԽԳ. *Ի Պօլիս առ խօջայ Պետրոսն:*

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ, և սիրապարգև ողջունառաք նամակիս՝ գիտութիւն լիցի սիրելի որդւոյդ մերոյ և ազնիւ բարեկամիդ և հարազատ և հաւատարիմ զաւակիդ սրբոյ և մեծի Աթոռոյս Էջմիածնի։ Զի ի նոյեմբերին... գրեցեալ զԹուղԹդ ընկալեալ ի դեկտեմբերիս ԺԶ ընդ հաջի Իսմայէլին, Միրզայ Մահմաաին և ընդ Էրզրումայ Թաթարին գիտացաք զամենայն զմեծագոյն զսէրդ, զորդիական մտերմութիւնդ, զկատարեալ բարեկամութիւնդ և զգովելի Աստուածպաշտութիւնդ, ընդ այլ քաջագործութեանդ. որովք ուրախացեալ օրհնեցաք յոյժ յոյժ զարժանաւորդ օրհնութեան. զոր տէր օրհնեսցէ և զօրացուսցէ և զամենայն զբանս և զգործս քոյ ի բարին տնօրինեալ յաջողեսցէ, և յամենայն չարեաց փրկեսցէ, և յատկապէս ի մխիթարութիւն սրտի մերոյ պահեսցէ։ Արդ՝ ոչ միայն վասն իմ. ես արարեալ զայդ ամենայն, այլ և վասն սրբոյ Լուսաւորչին և վասն ի նմանէ հիմնեալ և կառուցեալ տաճարիս, և ես վասն Քրիստոսի, և վասն սուրբ հաւատոյս մերոյ, և օրինաց։ Ուրեմն որպէս ի մէնջ և ի սրբոյ Աթոռոյս ունիս վայելել զշնորհս և զօրհնութիւնս, նոյնպէս և ի տեառնէ Աստուծոյ ըն-

կալնլոց ես զվարձս ըստ մեծի վաստակոց քոց առ ե ի հանդերձեալն։ Եւ արդ՝ զայս ծանիր. ի զալ Բաթըր Թաթարին առ առ. մեզ ի նոյեմբերի Ժ. մեք պատշաճ զատեցաք պատուով քան բոնութեամբ բերել զԴանիէլ վարդապետն առ. մեզ. Վասնորոյ զԱբրահամ եպիսկոպոս մի հանդերձ այլովք ումամբք առաքեալ ի Բայազիտ, զնա ինքն զԴանիէլ վարդապետն հանդերձ սպասաւորօք նորին և վարդապետօք բերել տուաք ի սուրբ Աթոռս, և պահեմք ի յարդի։ Ցեա որոյ եկին ի ի դեկտեմբերիս ԺԶ վերոյիշատակեալ անձինքն և բերին զսխուրկիւն ֆէրմանին, և տեսին զԴանիէլն եկեալ ի սուրբ Աթոռս։ Համահաճութեան մահսէրն ձեր ընթերցեալ եղև առաջի հոգևոր և մարմնաւոր ժողովոց։ Եւ ուրախութեամբ փառս մատուցաք Աստուծոյ, որ յաջողեաց զայս այսպէս։ Սպասեմք այժմ թերի և անկատար մնացելոցն. այս է ֆէրմանին, րէրաթին, միւս մահսէրին և այլն։ Որոց աղագաւ գրեցաք ահա սրբազան պատրիարգին Յովհաննու, մեր Ստեփան վարդապետին, պարոն Աղալեկեան Գէորգին, և այլոց, և յորդորեցաք ի կատարն հասուցանել զթերի մնացեալսն։ Նոյնպէս և զկոնդակ մի առ օրհնեալ ժողովուրդն տեղւոյդ գրեալ՝ պատուիրեցաք ամենեցն հեռի կալ ի խռովութենէ, և զխաղաղութեան զհետ երթալ, և ընդ միմեանս մի սիրտ և մի հոգի լինել. սիրելւոյդ իմոյ ես գրեմ և պատուիրեմ, որպէս զօրացեալք Աստուծով, և սկսեալք զայդ Աթոռաշահ և ազգօգուտ շինուածն, ի կատարն հասուցանել ջանասիրեսջիք, որպէս զի աւուրբ յառաջ մաքրեալ քաղաքդ այդ յամենայն անկարգութեանց, զտցէ զխաղաղութիւն և մեք ևս ի գործս մեր կանխեսցուք, և զշինութենէ և զբարեկարգութենէ սրբոյ Աթոռոյս, համայն եկեղեցեաց մերոց և ազգիս օրհնեցելոյ բուռն հարցուք։ Նաև՝ որպէս խորհեալք են սիրելիքն իմ զմահսէր մի ևս առ հիւսիսականսն պատրաստել, այնմ դու ևս հոգատար եղիցիս։ Իսկ վասն դրամոց քոց, և ծախուց, զորս արարեալդ էք, ծանիր. յիրաւի գոհունակիմ զազնիւ սիրոյդ, որ ոչ միայն անձամբ բանիւ և այլով աշխատասիրեցեր յայդ գործ մեր, այլ և արդեամբ և գոյիւ չափ. ուստի գրեմ ահա քեզ սիրելւոյդ իմոյ, որպէս և մեր Ստեփաննոս արքեպիսկոպոսին և զերազնիւ Աղալեկեան աղայ Գէորգին ևս գրեցաք զի որչափ դրամք նաղտք զաանին այդր յարդեանց սրբոյ Աթոռոյս, ընկալջիք դուք ի տեղի դրամոցն, զորս խարջեալ ես, և որչափ ինչ մնայ, մեզ գրեսցես յայնժամ, ըստ ամենայնի միամիտ լիցի սիրելութիւն քոյ, զի ունիս անպակաս ստանալ զայնս հանդերձ բաղում շնորհակալութեամբք։ Զայլն ի թղթոց նոցա գիտասցես, և ի սէրդ հաստատուն կացեալ, ողջ լեր ի Տէր և զօրացեալ նովաւ, և շնորհք սրբոյ գահիս Աստուածաիջի՝ եղիցի ընդ քեզ և ընդ քոյայինսն ամենայն, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս, ի դեկտեմբերիս... ի սուրբ Էջմիածին։

ՅԽԳ. *Ի Պօլիս առ Փափազօղլի մահտեսի Սիմէօն Ամիրային։*

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ, և սիրալիրական ողջունառաք նամակիս, գիտութիւն լիցի ազնիւ սիրելւոյդ մերոյ։ Զի ընդ այնս, որք հմուտք են իրաց ինչ և անցից եղելութեանց չէ պարտ աւելորդ բառիւք խօսիլ, իբր ընդ ամենևին անծանօթ գործոցն անցելոց, և տաղակացուցեալ զունկնդիրն նողկալի առնել զբանս։ Արդ՝ վասն ազնուութենէդ է այս, որ զոլով քաջ տեղեակ անցիցն անցելոց ի մահուանէ Ղուկասու հանգուցելոյն և այսր. և մանաւանդ հասու ես որպէս մերս գրուածոց առ քեզ ցարդ յօծմանէ մերմէ, նմանապէս և ներհակացն գործոց և բանից որ թէ առ ձեզ, և թէ առ այլս. որովք յերկուս ամս վարեցան ընդ սուրբ Տանս Աստուծոյ, և ընդ անձն մեր իսկ ի տարապարտուց, թողումք զայն ամենայն ի բաց, տալով զանցեալսն ի մոռացօնս։ Եւ կամ խոկասցէ իւրաքանչիւրոք զիւրսն, և զըտեալ զճշմարիտն կշռեսցէ և զգործոն իւր, և տեսցէ, թէ արդեօք ընդ ճշմարիտ անդր ունին զհաւասարութիւն և հանգունատիպ են այնմ, թէ՝ այլատարազ և զարտուղի։ Եթէ իցէ բաղաղանեալ ընդ ճշմարտութեան, ծանիցէ զինքն ճշմարտասէր և նահատակեսցի վասն այնր։ Իսկ թէ տարբեր և ընդհատ, գիտասցէ, զի ըստ քոյդ բանի մաքառի ընդ ճշմարտութեան և է Աստուածամարտ և ջատագով ստութեան։ Արդարև ի յառնել հողմոց՝ արժան է

իմաստութեամբ զանձն և զնաւակն ապրեցուցանել. Թէ և սէր ճշմարտասիրին գերազանցէ քան զբանզ, և զանցանէ զամենայն փորձութեամբք զերկրորդ վարկուցեալ զալղալիսխն զորս դրէքդ. որպէս ունիք զօրինակն առ ձեզ ի ներկայումս, որք ուրացեալ զինչս և զանձինս իւրեանց խազացին ընդ մահու, և ապրեցան ի սրոյ, և լաղթօղք դտեալք՝ երանութեանց և զովեստից եղեն արժանիք։ Այլ սակայն՝ եթէ իցէ ինքն ի հանդարտութեան, և յարուցմանց հողմոց, և վտանգի ալլոց, և տարաբաղտութեան բազմաց ես առիթ լինիցի, զինչ առ. այնմ յարմարաւոր վճիռ, են։ Արդ՝ թողումք մեք և ներեմք յանցանաց ամենայն մեղուցելոցն առ. մեզ որպէս և կամք են ձեր, որք և յաւէտ ըղձալիք մեզ. որովք յաղթեցաքս և յաղթեմք իսկ։ Բայց զայն, որովք յանցեան, և մեծամեծ վնասուց և անթուելի ծախուց և բացման նորանոր դրանց դրամավատնութեանց պաաճառք գտան, և անչքութեան Լուսաւորչահիմն և Քրիստոսակերտ սրբոյ և մեծի Աթոռոյս Աստուածաբնակի, և անպատուութեան և անարգութեան հայրապետական պատկառելի չքոյս, և ծանակութեան սրբոց օրինաց մերոց ես առիթք եղեն, ես ոչ կարեմ թողուլ՝ այլ հայցեմ ի գթառատ Տեառնէ՝ այց նոցա առնել, և զմեղս նոցա անցուցանել դնոցանօք։ Նազի՝ այդորքիկ ոչ առիս վերաբերին, այլ առ Աստուած, զորոյ զպատկառն կամէին աղարտել, առ շնորհաբաշխ սուրբ հոգին, յորմէ զօծեալն և զընտրեալն անպատուել. և առ սուրբ Լուսաւորիչըն, զորոյ զհիմնեալն տապալել, և ի Քիւրտիստան, զոր ոչ ճանաչէին հարք նոցա, ղնոր աթոռ հիմնել, և ի բազմաստուածութիւնըս մոլորիլ. և այլն։ Իւ արդ՝ զայս իմա. զի որպէս մեք, նոյնպէս և դուք զանցեալն անցեալ ղիտացէք, և զորս գրէքն, և որպէս խոստանալքն, զնոյնս և գործով և արդեամբք ցուցանել ջանասջիք. որպէս զի՝ շինութեան և պայծառութեան սրբոյ տաճարիս, և խաղաղութեան քաղաքիդ և ձեր և մխիթարութեան վշտակիր սրտի մերում առիթ ղտանիցիք և խաղաղասիրութեամբ ձերով որպէս ի մարդոց, նոյնպէս և ի տեառնէ Աստուծոյ զվարձս և զօրհնութիւնս և զգովութիւնս ընկալջիք. զորս թողում ի զղօն միտս, և յառողջ դատողութիւնս քո։ Այլ և զայս գիտասցէ սիրելութիւն քո. զի ի դալ աւետաբեր Թաթարին առ մեզ ի նոյեմբերի Ժ. և ի գիտելն մեր զանցսն տեղւոյդ, պատշաճ դատեցաք սիրով քան բռնութեամբ և նախատանօք զալ Դանիէլ վարդապետին առ մեզ. վասնորոյ զեպիսկոպոս մի Աբրահամ անուն հանդերձ ալլովք ոմամբք առաքեալ ի Բայազիտ, զնա ինքն զԴանիէլ վարդապետն բերել տուաք ի սուրբ Աթոռս, և ըստ ամենայնի յանհոգս լեր պահեմք յարգանօք, և կամք եղբայրական սիրով։ Ցետ այնորիկ եկին զսիւրկիւնի ֆէրման բերօղքն հանդերձ համաձայն մահսէրիւ օրհնեցելոցն տեղւոյդ ի դեկտեմբերի ԺԶ. զորս զֆէրմանն և զմահսէրն ի հանդիսի ընթերցեալ՝ փառս մատուցաք այնմ, որ յաջողեաց զայս այսպէս։ Այլ և ի սոյն դեկտեմբերի ԻԷ եկն մեր պարոն Մարտիրոսն հանդերձ ֆէրմանի և բէրաթի օրինակօքն։ Բայց Գրիգոր պետն ի Ղարս մնացեալ սակս պատճառի իրիք՝ յայս քանի աւուրըս գալոց է ի սուրբ Աթոռս. զնա ես ի սէր ընկալեալ մխիթար լինելոց եմք ի սէր սիրելւոյդ։ Զայսքանս ի հարևանցի ղիտացեալ ձեր՝ և զսիրոյ գիր ձեր ի մէնջ աննուաղելի արարեալ, ողջ լեր ի Տէր, և զօրացեալ նովաւ, և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ ձեզ և ընդ ձերայինսն ամենեսին, Ամէն։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս, և ի դեկտեմբերի... ի մայր Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին։

ՅԻՍՆ. *Ի Պոլիս առ Ցարութիւն ամիրայի որդի մահտեսի Յովհաննէս ամիրայն։*

Ն. ընդ օրհնութեան Աստուածայնոյ՝ ծանուցումն եղիցի աղնիւ սիրելութեան քում։ Զի ծառ բարի՝ պտուղ բարի առնէ, ասէ Տէրն անսուտ։ Արդարև՝ բանիւ և բարի գործով ձերով և արդիւնարար ջանիւք, բերեալ ի ձեզ զնմանութիւն բարի հօր ձերոյ ի Քրիստոս ննջեցելոյ՝ ցուցիք այսօր զգեղեցիկ և զքաղցրաճաշակ պտուղս բազում վաստակոց ձերոց. զոր վաստակեցիք ի բացափայլման ճշմարտութեան. որովք և իբրև զընտիր արծաթ ի բովս քննեալ, ժառանգեցիք ձեզ զանուն ճշմարտասիրի, և ստացայք զգովութիւնս ի մարդոց, և զվարձս բարեաց յայնմանէ, որ

պսակադիրն է ամենայն քեղապիտի ուղղափառաց և խաչազարդարաց։ Արդ՝ օրհնեսցէ զքեզ Տէր հոգևոր և երկնային օրհնութեամբ իւրով, և զամենայն զբանս և զգործս քո ի բարին տնօրինեալ յաջողեսցէ փրկելով յամենայն փորձանաց. և երկար և խաղաղ կենօք պահելով՝ արասցէ զազնիւ սիրելիդ իմ յաչս ամենից և ես երևելի և անուանի, մինչև բարձրանալ քեզ, և իբրև զհայրն քո ի տէր հանդուցեալ լինել ծառ բարի պտղաւէտ, և զալ ժողովել բազմաց ընդ հովանեաւ ձերով։ Արդ՝ արդարև՝ ոչ ջնջին յիշատակք բարերարութեանց ձերոց, որ առ սուրբ Աթոռս խղջալի և վնասակրեալ. և առ մերս հոգևոր հայրութիւն։ Եւ որպէս լուսահոգի Ղուկաս սրբազանն անմոռաց ունելով զերախտիս ծնողին քո՝ օրհնաբան լինէր հանապազ, նման նմին, և առաւել քան զնա, և մեք ի մտի ունելով զամենայն բարիս, զորս տեսաքն և վայելեցաքն ի ձէնջ, լինելոց եմք օրհնաբան և գոհունակ զամենայն կեանս մեր զազնիւ սիրելութենէ ձերմէ բազմապատիկ շնորհակալութեամբ։ Եւ արդ՝ զայս համառօտ թուղթ միմիայն յաղագս սիրոյ և շնորհակալութեան գրեալ՝ յայս սուզ միջոցիս և յզբաղեալ ժամուս ի նշան հոգևոր հայրութեան մերոյ՝ թողումք զայլ երկարն և զլաճախն յայլում խաղաղ ժամանակի գրել. Ուրեմն՝ այսու թղթովս զայսքանս գրեմ, և պատուիրեմ հաստատուն կալ ի սէր, և ըստ ամենայնի ամենայն կերպիւ սրբազան պատրիարգին Յովհաննու, և Ստեփաննոս արքեպիսկոպոսին, և ամենայն մեզ պատկանելի բանից և գործոց և մարդկան օժանդակ և օգնական գտանիլ, և զանձել ձեզ զվարձս որպէս ի յերկրի, նոյնպէս և ի յերկինս։ Այլ և՝ զորպիսութիւն մեր ես այսքան ինչ իմա այժմ. Զի ի զալ աւետաբեր Բաթըր թաթարին առ մեզ ի նոյեմբերի Ժ. պատշաճ համարեցաք սիրով զալ Դանիէլ վարդապետին քան բռնութեամբ. վասնորոյ զեպիսկոպոս մի հանդերձ այլովք ոմամբք առաքեալ ի Բալազիտ բերել տուաք ի սուրբ Աթոռս, ի նոյեմբերի Իէ. և պահեմք յարգանօք. Յետ այսորիկ եկին մեր խանի մարզիկն հանդերձ համահաճութեան մահսէրիւն և սիւրկիւն ֆէրմանաւն ի դեկտեմբերի ԺԶ. զորս ի հանդիսի հոգևոր և մարմնաւոր դասուց ընթերցեալ փառս մատուցաք Աստուծոյ, որ յաջողեաց զայս այսպէս. Ի սոյն ի դեկտեմբերի ԻԵ. եկն մեր պարոն Մարտիրոսն. Իսկ Գրիգոր պետն տեղւոյդ՝ եկեալ ի Ղարս հիւանդացեալ է, յետ քանի աւուրց գալոց է, զոր ի հարկէ սիրով ունիմք մխիթարել. Զայլն յանձնեմ զքեզ ի շնորհս տեառն Աստուծոյ, զի զօրասջիք նովաւ, ողջ լերուք ի Տէր և շնորհք սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ քեզ և ընդ բոլոր քոյայինսն, Ամէն. Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս և ի դեկտեմբերի… ի մայր Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին.

ՅԽԶ. *Թուղթ ի մեծն Պոլիս առ Կիւլապեան Յակոբ ամիրայն, օրհնութիւն եւ շնորհակալութիւն վասն սիրոյն եւ հարազատութեանցն առ սուրբ Աթոռս։*

Եւ ընդ սիրալրական ողջունատրութեանս՝ ծանուցումն լիցի ազնուականութեան քում. Զի թէպէտ ի ներկայս ոչ ունիմք զթուղթ ինչ ի քէն, բայց հաւատարիմ սիրելիք մեր՝ ստէպ ստէպ գրեն մեզ զպատուականութեանդ ջինջ և մաքուր սէրն, և զգերազանցօրէն հաւատարմութիւն և զ՚ի բոլոր սրտէ ջատագովութիւն և օգտախոհութիւն առ սուրբ Աթոռ լուսածին մայրս քո և առ մեզ. Որում մանաւանդ և սիրտ մեր իսկ վկայէ, և թարց ազդման այլոց գիտեմք՝ որ ընդ անխարդախ սիրոյդ առ մեզ՝ որպէս ի բնէ հետէ, նոյնպէս և միշտ ունիս սրտական հարազատութեամբ լինիլ ջատագով վասն մեր, և հանապազ զօգուտսն սրբոյ Աթոռոյս և մեր խորհիլ և առնել. Որև՝ զարդիս ես իբրև երկնայինն իմն ազդեցութեամբ ընդ մերազնէից մայրաքաղաքիդ միաբանեալ համակամութեամբ ի մի սէր, որով և վառեալ ի ճշմարիտ հարազատութիւն և յօգտասիրութիւն մօրս ձերոյ լուսատուի և մեր, զամենայն ինչ բարեպէս ուղղեալ էք, անդորրացուցանելով զքաղաքդ ի խռովութեանց, և հաստատելով ի ձեզ զհասարակաօգուտ խաղաղութիւն, տալով աքսորել և զառիթսն խռովութեանց և հոգալով անթերի ըստ կարգի և ըստ օրինի զֆէրմանն մեր՝ և զբէրաթն հանդերձ այլովք հոգալեօք մերովք. Առ որ դրեալ էիք մեզ զհամահաճական մահսէր, որ ի ԺԶ ամսոյս հանդերձ Դանիէլի տարագրութեան

փէրմանիւն ժամանեաց առ մեզ։ Զորս յոյժ յարգանօք առընկալեալ, արժանափառ հանդիսաւորութեամբ տուաք ընթեռնուլ ի լուր բազմութեան միաբանից մերոց և երկրացւոց․ ընդ որս և ղուարճացեալ և բերկրեցեալ յոյժ՝ արարաք զմեծահանդէս ուրախութիւնս. փառս և զոհութիւնս երկրպագութեամբ հանդերձ վերառաքելով առ բազմագութ բարձրեալն, որ յայց ելեալ մեզ և իւրաէջ տանս սրբոյ յայտնեաց զճշմարտութիւն, և յատուկ իմն հրաշիւք սքանչելագործելով զթշնամիսն մեր և զխառնակիչսն բարեկարգութեան աղգիս՝ չարաւ կոլոյս, և իբրև զոչինչս խոնարհ արար, ի պարտութիւն մատնելով։ Եւ վասն համայն լուսաւորչակրօն օրհնեալ Ազգիդ (որք պատճառ լինելով ազատութեան մեր և սրբոյ Աթոռոյս ի խառնակչաց յանց՝ կամեցայք զանփոփոխ միայն հայրապետութեանս, որով և վերածել զմայրս ձեր յառաջին գերազարդ վայելչութիւն և ի պայծառութիւն իւր.) հայցեցաք յԱստուծոյ տալ ամենեցուն ձեզ զբազմապատիկ վարձս՝ ըստ գերազոյն սիրոյ և յամենայնի օգտարարութեանց և բարի ջանացողութեանց՝ զորս ցուցիք առ սուրբ Աթոռս և առ մեզ։ Որոց աղագաւ և գրեցաք զկոնդակ շնորհակալութեան առ հասարակութիւն ձեր՝ որպէս տեսանելոց էք. մինչ յաջողեսցէ Աստուած՝ զի զառ ի ձէնջ խոստացեալ զլիագոյն մահսէրն ձեր ևս ընդունիցիմք հանդերձ ծաղկազարդ իսկ Փէրմանաւն մեր և այլ խաղաղական թղթովք ձերովք՝ յայնժամ ևս գրելոց եմք զկոնդակ լիագոյն օրհնութեան և շնորհակալութեան, և լուսազրական բանից և պատուիրանաց։ Իսկ այժմ գրեցաք և զայս սիրանշան թուղթ ի վերայ յարգոյապատիւ սիրելւոյդ, առ ի ժառանգեցուցանել քեզ այսու զհոգեզուարճ շնորհս սրբոյ իջմանտեղւոյս Քրիստոսի, և զօրհնութիւնս սրբոյ Լուսաւորչին և մերս հոգեւոր հայրութեան։ Ապաքէն՝ Տէր օրհնեսցէ զքեզ անանցանելի օրհնութեամբն իւրով և զօրացուսցէ․ և ըստ չափու սիրոյ և հաւատարմութեանցդ առ մեզ՝ չափեսցէ ի քեզ և ի քոյսդ առատապէս, բազմապատիկ հատուցանելով ձեզ զվարձս բարեաց ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ. ազատս կացուսցէ ի փորձութեանց. և պահեսցէ միշտ բոլորեալ բնաւ բարեպաշտութեամբ և փառազարդ ճոխութեամբ։ Եւ զամենայն բանս և զգործս քոյ արդիւնաւորս և շահեկանս արասցէ ի հրճուանս մեր։ Արդ՝ նախքան զգալն մահսէրին ձերոյ առ մեզ, իբրև ազդ եղև մեզ բարելուր համբաւ խաղաղական անցից ձերոց, կամեցեալ մեր՝ թէ Դանիէլ վարդապետն յառաջ քան զգալուստ մուպաշիրացն՝ [30]) և նախատանօք բերելն՝ ինքն ելցէ եկեսցէ պատուով ի սուրբ Աթոռս, առաքեցաք առ նա զՏաթեացի Աբրահամ եպիսկոպոսն, ընդ որում և իշխողն մեր ևս զերեելի տաճիկ մի առաքեաց, և զթուղթս գրեաց Պայազտոյ փաշային առ. ի ուղեորել զնա առ մեզ։ Եւ ի գնալն մարդկանց մերոց անդ ի Պայազիտ, թէպէտ Դանիէլ վարդապետն չէր կամեցեալ, բայց փաշային բռնութեամբ տուեալ էր զնա նոցա, որք հանդերձ սպասաւորօք նորա և այլ փախստական վարդապետօք առեալ և բերեալ էին ի սուրբ Դահս ի նոյեմբերի ամսոյ ԺԷ։ Զոր և մեք ընկալաք սիրով, և խիլայազարդեցաք, և ի սուրբ եկեղեցւոջն ևս կանգնեցուցաք ի դաս ի վերայ յատուկ օթոցի․ և կամիմք պատուել և շահել ըստ արժանւոյն և եթէ որպէս այժմ, նոյնպէս և ... *) խաղաղացուցանել զհիւսիսակողման մերազնեայսն, հասարակութեամբ .դրելով զմահսէր առ կայսրն, ծանուցանելով զստուգութիւն իրացս, և զբարեհաճութիւն ձեր առ մեզ. զի իցէ թէ յայնմ կողմանէ ևս դտեալ մեր զդիւրութիւն՝ միամտութեամբ սրտի փոյթ տարցուք շինութեան սրբոյ Աթոռոյս։ Նաև՝ որպէս պատրիարգ եղբօրն մերոյ դրեալ եմք, ըստ այնմ հողատար լիջիք զՍտեփաննոս եպիսկոպոսն օր յառաջ ուղևորել առ մեզ հանդերձ Փէրմանօքն մեր, և լիագոյն համահաճական մահսէրիւ ձեր և այլ ուրախառիթ և խաղաղական թղթովք։ Որովք բարեշնորհութեամբք ժառանգեսջիք զվարձս յԱստուծոյ, զշնորհս ի սրբոյ Աթոռոյս՝ և զօրհնութիւնս ի հոգևոր հայրութենէս մերմէ։ Ողջ լեր ի Տէր։

Գրեցաւ ի ՌՄԾԱ թուոջս, և ի դեկտեմբերի... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

---

*) Մի քանի տող եղծուած էր բնագիրը։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Արղալ—խնդիր, աղերս։

2. Ռաղամ—թագաւորական հրովարտակ, հրամանագիր։

3. Նոմոս—արքունական օրէնք, հրաման։

4. Խիլայ—պարգեւ։

5. Բէրաթ—արքայական գիր, հրովարտակ։

6. Ֆէրման—հրաման, հրովարտակ։

7. Փօլիցայ առնել—փոխանակագիր անել։

8. Սիահի—ցուցակ։

9. Իմտատիայ—նպաստ, օգնութիւն, ողորմութիւն։

10. Մահսէր—հանրագիր, համախօսական։

11. Դօլբանդճի—ճօթավաճառ, չիթ ծախող։

12. Վէքիլ—փոխանորդ, ներկայացուցիչ։

13. Հիսէէն խապէթ—իրեն ընկած մասը, բաժինը։

14. Թէսլիմ—յանձնում, յանձնել։

15. Վէքիլլամայ—փոխանակագիր տալ, փոխանորդ կարգել իւր կողմից։

16. Միսալչէլի իւղ—ս. միւռոնի 44 տեսակ նիւթերից մէկն է, որ հայերէն կոչւում է տուտավիթ կամ չամչխունկ։ Տփխիսեցի բժիշկ Ստեփաննոս Շահրիմանեանցը (քօլէկիօրում ասսեսօր) 1818 թուին հեղինակել է մի ընդարձակ «Տնկաբանութիւն կամ փղորայ Հայաստանի» (գրչագիր), որի մէջ այդ բոյսի մասին գտնում ենք հետեւեալ տեղեկութիւնները.— այդ բոյսը կոչւում է նաեւ հոտոմ խունկ եւ զուկի ձէթ. եւ զորա մի այլ տեսակը չոր զուկի. լատ. ստիւրաքս. արաբ. միլիէ եւ պարսկ. լիւպնի, որին Ամիրդովլաթը կոչում է լուպնի, եւ տաճկ. գարէ քիւնչուկ։ Ռէտնային, հոտաւէտ, խարտեաշ խէժ է՝ թաց և չոր, որի ծառը նման է սեւկեւիլին, բայց տերեւները փոքրադոյն, երկայնաձեւ, հաստամարմին, վերին կողմը կանաչ, ստորեւ սպիտակ եւ սերտ բրդամաղ։ Ծիւղերից փթթում է միասին փնջած ծաղիկներ՝ սպիտակ եւ չրթունքները կտրած ու բոլորաձեւ։ Ծաղիկների անցնելուց յետոյ՝ դուրս են երեւում պտուղներ, կաղինի պէս խոշոր, փոքր ինչ դառնահամ, սպիտակ, հաստ կեղեւով պատած, եւ մէջը մէկ կամ երկու կորիզ սերմով, որոնց մէջ ծծաւոր միջուկ կայ ստորաքսի խէժի հոտով։ Մեր կողմերը ստորաքս ստացւում է չորացրած, Ասորիքից, Կիլիկիայից, Պամփիլիայից, Կրէտէից եւ Պաղէստինէից։ Նորա գէջը՝ խիժալին է, ռետնաւոր, կպչուն, խարտեաշ եւ հոտաւէտ։ Դա համարւում է գեղ հարբուխի, կերկերութեան եւ չնչարգելութեան ու ձայնահատութեան դէմ։ Դեղ է նաեւ կանացի հիւանդութեանց։ Չոր ստորաքսը գործ է ածւում ներսից ընդունելու համար, իսկ գէջը որպէս օծանելիք դրսից։

17. Ստեփան երէց Թիֆլիզեցի-նշանաւոր քահանայ իւր ժամանակին, որի մասին տես մեր «Դիւան Հայոց պատմութեան» գիրք Ե. ծան. 21. սորան չպէտք է շփոթել Ցովսէփ կաթուղիկոս Արղութեանի սիրելի միւս Տէր Ստեփանոսի հետ, որ Հնդկաստան ուղարկուեց հանգանակութիւն անելու տեղական հայերի մէջ Ն. Նախիջեւանի դպրատան եւ տպարանի համար եւ որը մեռաւ ճանապարհին։ Թիֆլիզեցի Տէր Ստեփանը նորա տեղը ուղարկուեց Հնդկաստան, ուր գնալուց առաջ նախապէս ուղարկեց Կալկաթայի, Չինչրու, Սէյդապատի եւ Դաքքայի հայերին այն յայտնի ընդարձակ շրջաբերականը, որ տպեցինք «Դի-

ւանի» նոյն հատորի յաւելուածի բաժնում։

18. Կիւմրիւկչի – մաքսապետ։

19. Տօխսան—իննսուն։

20. Մաղալ—բացի։

21. Կլաւայ—голова, քաղաքագլուխ, քաղաքապետ։

22. Սանատ—մուրհակ։

23. Վաաայ—ժամանակամիջոց, պայմանաժամ։

24. Մուճալլամայ—բողոքագիր մի քանի մարդոց ստորագրութիւններով։

25. Ղուլթի լի ղուրսխու—մի տուփի մէջ դրած՝ ադամանդազարդ ծաղիկ։

26. Մուճասամ մահրամայ—Շահի պատկերը շրջանակով, չուրջը ադամանդներով զարդարած։

27. ✠—Ինչպէս «Դիւանի» ամեն գրքի ծանօթութեան մէջ յիշել ենք, կոնդակագիրները կաթողիկոս բառը յաճախ չկրկնելու համար գործ են դնում ‴ նշանը, իսկ կայսեր անունը չկրկնելու համար դնում են խաչի նշան ✠։

28. Մինբաշի—հազարապետ։

29. Միրիշքարբաշի, միրշքեար—պարսկ. նչ. արքունի որսի կառավարիչ։

30. Մովրով—կառավարիչ։

31. Տօստ—բարեկամ։

32. Իլախայ լայալ—իրաւունք։

33. Էլչի—դեսպան, պատգամաւոր։

34. Ջուղապ—պատասխան։

35. Մանուէլ պետ—յայտնի Մանուէլ վարդապետ Ալթունեան Կիւմիւշխանեցի, գիտնական և գործունեայ վարդապետ, Դանիէլեան կուսակցութեան պարագլուխներից մէկը։ Սորա երկասիրութեանց նուիրուած կլինի «Դիւանի» առաջիկայ հատորներից մէկը։

36. Բաշսազլըխը—գլխագիր։

37. Պօլկովնիկ—գնդապետ։

38. Ջաւուշ—քսանեհնդապետ, ենթասպայ։

39. Մուպաշիր—գործակալ։

ՎՐԻՊԱԿՆԵՐ.

«Դիւանի» Ե. գրքի ծան. 33. բէհլէմիշ անել՝ բացատրուած է давать тумаки. պէտք է լինի՝ մտադրուել։

«Դիւանի» սոյն Զ. գրքում երկու ձևական սխալ է մտել, 1. Բ. և ԺԳ. կոնդակները նոյնն են, վերջինս աւելորդ է տպած։ 2. ՃԺԷ գլխից յետոյ պէտք է հետևեալ թուանշանը դրուէր ՃԺԸ, մինչդեռ կրկնուել է նոյնը՝ ՃԺԷ, թէպէտ կոնդակները տարբեր են, իրանց կարգով տպուած։

ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ

յառաջաբան։

1801

Ա. Թուղթ ի Դաւթէ նորոգ կաթուղիկոսէ առ մեծին Պոլսոյ պատրիարգ Յովհաննէս եպիսկոպոսն ծանուցումն զօծմանէն իւրմէ, և խնդիր վասն արքունական նոմոսացն հանելոյ։

Բ. Ի Զմիւռնիա առ գրոշմահար Ստեփանոս աղային, ի պատասխանի թղթոյն յամի տեառն 1799 յօգոստոսի 20. գրեցելոյ ընդ սուրբ Սաղիմայ նուիրակ Կարապետ վարդապետին առ Ղուկաս սրբ. կաթուղիկոսն։

Գ. Իզմիր առ կեօրտէզցի պրն. Դէորգն, ի պատասխանի թղթոյն առ Ղուկաս սրբազան կաթուղիկոսն գրեցելոյ ի ՌՄԽԸ, օգոստոս՝ 22, որ նախ յիշէ զիւր անցիցն, և ապա շնորհակալ վասն ընծային։

Դ. Առ Եփրեմ վարդապետն յիշումն յառաջ գրեալ թղթոյն իւրոյ. և բանք վասն կողմանցն վրդովմանց։

Ե. Ի Պոլիս առ Շնորհք Միքայէլ ամիրայի որդիսն Մուրատ և Մանուէլ Չէլէպիսն, վասն ընտրութեան իւրոյ և օծման։ Եւ ի յորդորումն՝ զի հոգատար լիցի ֆէրմանին և զմահսարատար Կարապետ եպիսկոպոսն փութով վերադարձուսցէ առ մեզ։

Զ. Փուսուլայ առ մահտ. Նիկողայոս ամիրայն՝ յաղագս ծախուց կաթուղիկոսական հրովարտակացն, և վասն Դալուստ վարդապետ նուիրակին։

Է. Թուղթ ի մեծն Պոլիս առ մահտեսի Յովհաննէս ամիրային Յարութիւնեան յաղագս կաթուղիկոսութեան տեառն Դաւթի։

Ը. Ի Պոլիս առ պարոն Դէորգն Աղաեկեան, յաղագս օծման և հայրապետութեան տեառն Դաւթի։

Թ. Թուղթ ի տէր Դաւիթ նորաօծ կաթուղիկոսէ ի յԶմիւռին առ նուիրակ և առաջնորդ Մարտիրոս վարդապետն յաղագս իւրոյ հայրապետութեան։

Ժ. Ի մեծն Պոլիս՝ առ Նիկողայոս ամիրայն, յաղագս ընտրութեան իւրոյ և օծման և յորդորումն, զի հոգատար լիցի ֆէրմանին։

ԺԱ. Ի մեծն Պոլիս, առ տէր Մեսրոպ քահանայն, յաղագս ընտրութեան և օծման տեառն Դաւթի ի կաթուղիկոսութիւն։

ԺԲ. Առ վէքիլ Պետրոս վարդապետն ի մեծն Պոլիս ծանուցումն հայրապետութեան նորոգ սրբազանիս, և և բան ինչ վասն ծախուց արքունական հրովարտակացն։

ԺԳ. Թուղթ ի Զմիւռնիա առ Դրոշմահար Ստեփանոս աղայն ի պատասխանի թղթոյն յամի տեառն 1799 յօգոստոսի 20, գրեցելոյ ընդ սուրբ Սաղիմայ նուիրակ Կարապետ վարդապետին առ Ղուկաս սրբազան կաթուղիկոսն. որոյ ի յետին հիւանդութեան հասեալ և թուղթն պահեալ մինչև ցամ տեառն 1801 ի մայիսի 3 հասոյց նորապսակ տեառն Դաւթի սրբազան կաթուղիկոսի, որ ձեռնադրեալ զնա, և գրեաց զայս, ի ծանուցումն հայրապետութեան իւրոյ, և ի շնորհակալութիւն վասն յղեալ ընծայիցն։

ԺԴ. Թուղթ առ Փիլիպոս ամիրայն Ալփիարեան ի յեպիսկոպոսաց սրբոյ Աթոռոյս ծանուցումն դեղելութեանցն ի ընտրութիւն և ի օծումն նորապսակ սրբազանիս և խնդիր, յանուն սորին հանել տալ զֆէրման և զբէրաթն յարքունուստ։

ԺԵ. Աստուածապսակեալ օգոստափառ կայսեր, և ամենաողորմած թագաւորի։

ԺԶ. Գառայ Ֆէզրիչին։

ԺԷ. Առ պարոն Մկրտումն Գալուստեան ի Հաշտարխան յաղագս մահուան Յովսէփայ հայրապետին, և վասն իւրն յաջորդելոյ և բան վասն Գրիգոր վարդապետին։

ԺԸ. Առ Յովհաննէս վարդապետն Պոլսոյ կրկին պատմութիւն անցիցն տեղւոյս և արարմանց Դանիէլ վարդապետին ի Բաղաղիտ։

ԺԹ. Կոնդակ ի վերայ Ղազախու Հագարծնու վանից թեմիցն, ի պատասխանի մահսէրին նոցա որք խնդրեալ էին Տէրունի լինել սրբոյ Աթոռոյս։

Ի. Ի Պոլիս առ մահտեսի Կարապետ աղայն, վասն արարմանցն Դանիէլ վարդապետին։

ԻԱ. Առ խորհրդական իշխանսն Պոլսոյ, ծանուցումն ընդլիման արարմանց Դանիէլ վարդապետին։

ԻԲ. Թուղթ երկրորդ առ կայսրն Ռուսաց Աղէքսանդր Պաւլովիչն շնորհակալութիւն յաղագս բարեխնորհութեան և հաճութեան առ կոչումն'իւր ի հայրապետութիւն և վասն սրբոյ Աթոռոյս և ազգին և Գրիգոր նորապերճ եպիսկոպոսին յանձնարարութիւն։

ԻԳ. Առ Հնդկաց երկրին գործաւարտ նուիրակ Յակոբ վարդապետն, ծանուցումն զՀայրապետութենէն, և այլն։

ԻԴ. Ի Պօլիս, առ Թումայ աղային վասն արարմանցն Դանիէլ վարդապետին։

ԻԵ. Կոնդակ ի վերայ Ջուղայու և շրջակայ գաւառացն և Համատանու, յաղագս հայրապետութեան տեառն Դաւթի նորոգ սրբազանիս, և վասն ձեռնադրութեան Յարութիւն և Գէորգ վարդապետացն միաբանիցն սրբոյ Ամենափրկչի վանացն ի յեպիսկոպոսունս, և այլ ինչ ըստ այսմ բանք։

ԻԶ. Ի Բասրայ առ պարոն Ստեփաննոսն Տէր Յովաննիսեան, ծանուցումն զորպիսութենէ հայրապետութեան և այլ իրաց։

ԻԷ. Առ Ատրանայու առաջնորդ Միքայէլ վարդապետն՝ ծանուցումն զհայրապետանալոյ նորոգ սրբազանիս, և յորդորումն ի սէր և ի հաւատարմութիւն։

ԻԸ. Առ սրբոյ Երուսաղէմի Թէոդորոս պատրիարգն, վասն յաջորդելոյ նորոգ սրբազանին զԱթոռս։

ԻԹ. Ի մեծն Պօլիս, առ Գրիգոր ամիրայն վասն զլարանութեանցն Դանիէլ վարդապետին։

Լ. Առ մահտեսի Յովհաննէս ամիրայն ի Պօլիս։

ԼԱ. Ի մեծն Պօլիս, առ Կարապետ աղայն վասն արարմանցն Դանիէլ վարդապետին։

ԼԲ. Ի մեծն Պօլիս առ մահտեսի Գէորգ ամիրայն վասն արարմանց Դանիէլին։

ԼԳ. Ի մեծն Պօլիս, առ Ղրիմեցի պարոն Գէորգ Աղայեկեանն, յիշատակութիւն վասն արարմանց Դանիէլին և այլ բանք։

ԼԴ. Կոնդակ ի Շապին Գարահիսար ի վերայ հասարակութեան. յաղագս ընտրութեան և օծման տեառն Դաւթի ի հայրապետութիւն։

ԼԵ. Առ մահտեսի Մինաս ամիրայի որդի պարոն Աղայեկն ի Կարին։

ԼԶ. Առ Իվան Պետրովիչ Լազրովն ի Բամբակաձոր։

ԼԷ. Ի Բայազիտ առ Գէորգ աղայն, որ է ի վերայ գործոյ փաշային։

ԼԸ. Վակայական Ղզլարու հարազատ ձևացեալ Տէր Սահակին։

ԼԹ. Ղրիմու, և ի Գրիգորիուպօլ և ի շրջակայս գոցին։

Խ. Ի Կարին առ հաճի Բաբային փեսայ Յովհաննէս աղային։

ԽԱ. Ի յԱմիդ առ հարազատ դանձապետ մահտեսի Մարտիրոս աղայն մահտեսի Յօհանեան յաղագս հայրապետութեան տեառն Դաւթի, և այլն։

ԽԲ. Ի Հաշտարխան առ աղայ Մկրտումն և աղայ Մարգարն յանձնարարութիւն վասն Գրիգոր վարդապետին։

ԽԳ. Յեպիսկոպոսաց սրբոյ գահիս առ Հաշտարխանու նուիրակ Եփրեմ եպիսկոպոսն, յաղագս հաշտարխանցւոց և զըլարցւոց և մօզդոկցւոց մահսէքրացն։

ԽԴ. Առ Յովհաննէս պատրիարգն Պօլսոյ, շնորհակալութիւն վասն բերաթին հանելոյ, և զխարճն ես լիւր մօտէն տալոյն։

ԽԵ. Ի Կարին, առ Շէհիրվէքիլի մահտեսի Յովհաննէսն, ի պատասխանի յուլիսի 3 գրեալ թղթոյն, և շնորհակալութիւն ընծայեալ ձիոյն։

ԽԶ. Առ Վանայ ժողովուրդսն յաղագս Դանիէլ վարդապետին։

ԽԷ. Ի Կապան Մատէնն առ Փիլիպոս ամիրայն։

ԽԸ. Ի Պօլիս առ Գէորգ Աղայեկեանն։

ԽԹ. Ի Կապէն Մատէնն, առ Թօթօվեանց մահտեսի Ստեփանոս աղային։

Ծ Ի Թիֆլիզ առ Իվան Պետրովիչ Լազրովն յաղագս վերադարձուցման Գրիգոր պետին ի Հաշտարխան։

ԾԱ Առ Իվան Պետրովիչ Լազրովն ընդ Սոլոման մխիթարին, ի պատասխանի յուլիսի 13 գրեցեալ թղթոյն ի Բամբակու։

ԾԲ. Ի մեծն Պօլիս առ պարոն Վասիլ Ստեփանիչ Թամարովն մեծահամբաւ դեսպանն ռուսաց։

ԾԳ. 1411։

ԾԴ. Ի Հաշտարխան, առ գերազնիւ աղայ Սիմէօն Սերգէյիչն, վասն տուեցեալ յիշատակեացն ձեռամբ հանգուցեալ Յովսէփ կաթողիկոսին։

ԾԵ. Ի Մոսկով, առ աղայ Աւետ Դալստեանն. յանձնարարութիւն վասն Գրիգոր վարդապետին։

ԾԶ. Առ Իզմիրու առաջնորդ Մարտիրոս վարդապետն ի պատասխանի շնորհաւորական թղթոյն, և բան վասն խնդրոյն իզմիրցւոց։

ԾԷ. Առ Հաշտարխանու արքեպիսկոպոսըն ռուսաց Պլատօն, ծանուցումն զնորոգ հայրապետութենէ սրբազանիս, և զեպիսկոպոսութենէ Գրիգոր վարդապետին, և յանձնարարութիւն վասն նորա և ազգին։

ԾԸ. Առ Լմայ կրօնաստանի միաբանսն, ի շնորհակալութիւն ընդունելութեան իւրեանց, և ի պատասխանի խնդրոյն՝ որ զՎարդան վարդապետն արգելուլ ի վանահայրութենէ իւրեանց խնդրեալ էին։

ԾԹ. Ի Թիֆլիզ, առ Մէլիք Դարչին Բէհբութեանն։

Կ. Ի Թիֆլիզ առ Յուլիան Դիւանն և Մանուչար Դիւանն։

ԿԱ. Առ Հաղբատայ առաջնորդն, և Մինաս վարդապետն, և աւագ քահանայսն ի պատասխանի թղթոյն նոցա՝ որք գանգատեալ էին զՏափի Թաղի Տէր Գրիգորէն թէ հրամանագրով Վրաց մեծամեծացն ինքնին գործակալ ձեռնալով ի գիւղօրայսն սարտարեանց՝ արգելու զարդիւնս սրբոյ Աթոռոյս և Հաղբատայ։

ԿԲ. Ի Թիֆլիզ առ Գրիգոր երեց ոմն ի Տափի Թաղն բնակեալ, որ ինքնահնար կամագիւտ լինելով ի վրաց իշխանաւորացն հրամանագիրս առեալ գործակալ էր եղեալ ի գիւղօրայսն նոցա, և արգելոյր զհասոյթսն սրբոյ Աթոռոյս և Հաղբատայ վանիցն։ Առ որս յանդիմանութիւն և սաստ, լուծեալ լինիլ ի կարգէ քահանայութեան։

ԿԳ. Առ Իւանէ սարտարն ի Թիֆլիզ, ի պատասխանի թղթոյն նորա վասն ճորտ Գրիգոր երիցուն, որ ինքնին սորա թղթովն գործակալ էր կարգեցեալ, և քաղաքի առաջնորդք և քահանայքն զիր գանկատանաց էին գրեալ. վասն որոյ և յանդիմանութիւն գրեցաւ նմա։ Իսկ սա այժմ իւր գրով պատճառս արգարութեան տայ նմա և այլն։

ԿԴ. Առ բժիշկ Գրիգորն ի Թիֆլիս, ի պատասխանի թղթոյն, որով խնդիրս էր արարեալ վասն Սահակաչէն եկեղեցւոյն իւրեանց, զի ինքն նորոգեսցէ, և ըստ հաճոյից իւրոց զաւագ քահանայ կարգեսցէ և այլն։ Որոց իբր բացասութիւն։

ԿԵ. Բարեւոհմ Մելիք Արով աղային։

ԿԶ. Ի Թիֆլիզ առ Մելիք Դարչինն և միրիշկարբաշի Եովսէփ աղայսն վասն գալստեան ֆերմանին ի Պոլսոյ առ մեզ։

ԿԷ. Առ Գաւիթ արքայորդին ի Թիֆլիզ, ի պատասխանի թղթոյն ընդ Ղորղանեանց Գաբրիէլին գրեցելոյ։ Բայց անբացայայտօրէն։

ԿԸ. Կոնդակ ի վերայ Թիֆլիզու և բոլոր երկրին Վրաց յաղագս ողորմութիւն տալոյ եկեղեցւոյն Խօջայ Բէհրութեանց, որ է կառուցեալ ի Հաւլաբարն յանուն սուրբ Աստուածածնին, և է գերեզմանատուն նոցա, որ ի յարուցման պարսից և լեզգեաց ամայացեալ է, և նորապէս բնակութիւն էին արկեալ։

ԿԹ. Ի վերայ Աղբակու, Սալմաստու, Ուրմու և այլ վիճակաց սրբոյ վանից սրբազան Առաքելոյն Բարթուղիմէոսի, յիշումն հայրապետութեան նորոգ սրբազանին, և պատասխանի Սալմաստցւոց և Աղբակցւոց խնդրոյն վասն առաջնորդի։

Հ. Առ Սալմաստու և Ուրմու քահանայսն և քէթխուդայսն ի պատասխանի թղթոյն նոցա որք ընդդէմ Աղբակցւոց դրութեան՝ զառաջնորդ Խաչատուր վարդապետն անպարտ էին ցուցեալ, և զԱբրահամ վարդապետ ոմն խարդախիչ՝ պարտաւորեալ։

ՀԱ. Ի Գիլան առ Անգալի եղեալ պարոն Ալէքսանն ծանուցումն զտեղւոյս անցից, և հարկ՝ գրել զտեղւոյս զօրպիսութիւնն, և թէ ի մերայնոցն ովք են մնացեալք և զիարդ կան։

ՀԲ. Ի Շուշի առ քահանայսն և իշխանսըն, խնդիր թէ՝ ի մեծն Պոլիս վախճանեցեալ Ագուլեցի Շահնենց պարոն Պօղոսին զաւակ ունի և թէ ոչ, մահուէրիւ գրեալ վկայեսցեն։

ՀԳ. Առ Լմեայ Անապատի միաբանսն և իւրեանց վիճակի ռէսներն ի պատասխանի մահսէրական թղթոյն իւրեանց՝ յաղագս եպիսկոպոսութեան Անապատի հայր Անանիա վարդապետին, և կոնդակացն շրջաբերականաց՝ զորս խնդրեալ էին՝ յօգնութիւն պարտուց Անապատին։

ՀԴ. Առ Կտուցայ Անապատի միաբանսն, ի պատասխանի թղթոյն նոցա, որով ծանուցեալ էին զիւրեանց առաջնորդ Կարապետ վարդապետի յամենալն ի գալոյ, թէ յաղագս շինութեան գաւթին է, և կոնդակ էին խնդրեալ առ այն։

ՀԵ. Առ Կտուցայ Անապատի վանահայր Կարապետ վարդապետն ի պատասխանի թղթոյն, և ի շնորհակալութիւն վասն աջահամբուրին, և յանդիմանութիւն վասն ոչ գալոյն։

ՀԶ. Առ Պօլսոյ Յովհաննէս պատրիարգն, ի պատասխանի երկուց թղթոց նորա ընդ Կարապետ եպիսկոպոսին գրեցելոց, շնորհակալութիւն, վասն մեծի ընդունելութեան առ նա և յաղագս գերազանց սիրոյն և օգտաջանութեան առ իրս և գործս սրբազանիս, ես և վասն յուղարկեալ ընծայիցն։

ՀԷ. Օրինակ թղթոյ Գէորգ Աղալեկովին 1801, նոյեմբերի 19։

ՀԸ. Կոնդակ ի վերայ Կոստանդնուպօլսոյ ժողովրդոցն առ հասարակ, շնորհակալութիւն և օրհնութիւն յաղագս ընդունելութեան նոցա, և զֆէրման և բէրաթն յղելոյն են։

ՀԹ. Կոնդակ առաջնորդութեան և վիճակական եպիսկոպոսութեան՝ Վարագայ սուրբ Խաչ վանիցն առաջնորդ Յարութիւն վարդապետին։

Ձ. Կոնդակ ժողովարարութեան վասն Թօմայի առաքելոյ վանիցն՝ որ է յեզր Վասպուրական ծովուն որ էր իբր ամայացեալ։

ՁԱ. Առ Պօլսոյ Նուիրակ Գալուստ արքեպիսկոպոսն, շնորհակալութիւն սակս հարազատութեան։

ՁԲ. Թուղթ առ Եփրեմ արքեպիսկոպոսն ընդ Կարապետ և Աբրահամ եպիսկոպոսացն զանազան մտօք բանք։

ՁԳ. Ի Հաշտարխան առ Ղօրղանեան պարոն Թաղայ Գաւիթն ի պատասխանի նորին թղթոյն։

ՁԴ. Ի մեծն Պոլիս առ Մէլրամ զուլի Թովմաս աղային ի պատասխանի թղթոյն շնոր-

հաւորութեան, և յորդորումն զնա ի սէր և ի հարազատութիւն սրբոյ Աթոռոյն։

ՁԵ. Առ Կարապետ և Աբրահամ արքեպիսկոպոսունս։

ՁԶ. Առ Ղազար վարդապետ։

ՁԷ. Առ Թէլաւու Տէր Սարգիսն ի պատասխանի բազմակնիք թղթոյ տեղականացն, զոր Տէր Յարութիւնն բերեալ էր և ինքն ես ղանկատէր զՀաղբատացւոցն։

ՁԸ. Ի մեծն Պօլիս առ Բարդուղիմէոս Չէլէպին, ի պատասխանի շնորհաւորական թղթոյն՝ շնորհակալութիւն և օրհնութիւն։

ՁԹ. Ի մեծն Պօլիս առ հաճի Նատ մահտեսի Առաքել ամիրային ի պատասխանի թղթոյն շնորհաւորականի՝ և յորդորումն ի հաստատութիւն սիրոյ։

Ղ. Կոնդակ ի վերայ Գաղատիոյ յաղագըս հայրապետութեան սրբազանիս մերոյ և ընդունելութեան ժողովրդոցն ընդ հաճութիւն գրելոյ առաջնորդին, առ որ և շնորհակալութիւն։

ՂԱ. Առ օգոստափառ և ինքնակալ մեծ կայսրն ամենայն ռուսաց։

ՂԲ. Թուղթ ի Թիֆլիզ առ ազատազնեալ իշխանս Մէլիք Ջիմշիտն, Ապոմն, և առ Փիրիտոնն, ի յորդորումն զնոսա խաղաղացուցանել զԵփրեմ վարդապետն և զժողովուրդսն Հաշտարխանու և այլ քաղաքաց։

ՂԳ. Ի Պօլիս առ Գէորգ Աղալեկովն, ծանուցումն վասն գալստեան մեր Կարապետ վարդապետին ի սուրբ Աթոռն և շնորհակալութիւն վասն աշխատանացն, զորս ունի կըրեալ յանուն մեր։

ՂԴ. Թուղթ սիրոյ ընդ Կարապետ և Աբրահամ վարդապետացն ի Բամբակաձոր առ Ֆեօտր Կիրիլիչ մայորն։

ՂԵ. Կոնդակ ի վերայ հասարակութեան Ղզլարու ընդ Կարապետ և Աբրահամ եպիսկոպոսացն ի համոզել զնոսա ի խաղաղութիւն։

ՂԶ. Առ պարոն Սոլոմոնն։

ՂԷ. Ի Պօլիս առ վարժապետ տիրացու Մեսրոպն։

ՂԸ. Ի Պօլիս առ Անդրէաս Չէլեպին։

ՂԹ. Թուղթ օրհնութեան առ Ապրօյեան Մարգար աղային Իզմիր, ծանուցումն զմահուանէ Յովսէփ կաթուղիկոսին, և զընտրութենէ սրբազան հայրապետին։

Ճ. ի Զմիւռնիա, առ Զալիկետն մահտեսի Կարապետ աղային ի պատասխանի թղթոյն գրեցելոյ ի ՌՄԽԸ թուոյ օգոստոսի ԻԲ. ընդ սրբոյն Սաղիմայ նուիրակ Կարապետ վարդապետին, առ ի ձեռնադրել զնա եպիսկոպոս։

ՃԱ. Ի Ղազախ առ Սօլօմօն բէկն, վասն զմասն Ղազախու տէրունի առնելոյ սրբոյ Աթոռոյս, և զՍիմէօն վարդապետն Աշաբծնոյ ի կողմանէ սորին վէքիլ կարգելոյ, ես և խնդիր՝ օգնական լինել իւղաժողով Ռէթէոս վարդապետին։

ՃԲ. Ի Բաղդատ, առ աղայ Ղուկասն Ալէքսանեան և պարոն Միքայէլն Տէր Մինասեան, ծանուցումն ուրախութեան նորոգ սրբազան Հայրապետիս։

ՃԳ. Գտրձեալ ի Բաղդատ, առ մահտեսի Ղուկասն Գաբրիէլեան, համառօտակի ծանուցումն զընտրութենէ նորոգ սրբազան Հայրապետիս, և զձեռնադրութենէ Ջուղայու Յարութիւն և Գէորգ վարդապետացն։

ՃԴ. Ի Զմիւռնիա առ Մարգար աղային Ապրօյեան, ի պատասխանի յանձնարարական թղթոյն։

ՃԵ. Կոնդակ ի Հաշտարխան, առ մերազնեայ ժողովուրդսն ծանուցումն զմահուանէ Յովսէփայ կաթուղիկոսին և մխիթարութիւն, և յայտարարութիւն զընտրութենէ սրբազան Հայրապետիս մերոյ, և զձեռնադրութենէ Գրիգոր վարդապետին, ես և խոստումն՝ առ ի ուղարկել յետս։

ՃԶ. Ի մեծն Պօլիս՝ առ պատրիարգաբանին վէքիլ Պետրոս վարդապետն ընդ մահսէրատար Ղազար վարդապետին, ի Ջրումն գրաբանութեանց Դանիէլ վարդապետին։

ՃԷ. Թուղթ օրհնութեան ի Պօլիս առ Սարգիս աղային և իւր կենակից Սուլթան խաթունն, վասն ԺԷ ղուռուշ և կէս տրոցն ընդ ուխտաւորացն յղեցելոց։

ՃԸ. Կոնդակ ի Ղզլար առ հասարակ ժողովուրդսն, վասն առաջնորդութեան Գրիգոր վարդապետին. և շնորհակալութիւն յաղագս երկուց պատուական շուրջառացն յղելոց ընդ կալից Յովսէփայ կաթուղիկոսին։

ՃԹ. Կոնդակ ի վերայ Գրիգորիուպօլու ժողովրդեանն, ծանուցումն մահուան Յովսէփայ կաթուղիկոսին, և բերելոյ զմարմինն և զկայս նորին ի սուրբ Աթոռս, և առաջնորդութիւն Գրիգոր վարդապետին, և ի վերջոյ յանձնարարութիւն վասն Նուիրակ Եփրեմ վարդապետին։

ՃԺ. Ի Ղզլար առ կլաւայ ազնիւ պարոն Յովակիմն, ազդարարութիւն վասն եպիսկոպոսութեան և առաջնորդութեան Գրիգոր վարդապետին հոգեգալակին Յովսէփայ անուանակոչեցեալ կաթուղիկոսին։

ՃԺԱ. Ի վերայ Կտուցայ սուրբ Անապատի միաբանիցն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ ի շնորհաւորութիւն Հայրապետութեան նորոգ սրբազանիս մերոյ։

ՃԺԲ. Ի Ղարս առ առաջնորդ Յովհաննէս վարդապետն և առ քահանայսն և իշխանըս, վասն դրամոյն զոր նոքա խնդրեալ էին տալ աստ իշխողին մերոյ ի կողմանէ փաշային, զի ինքեանք հատուսցեն, և սրբազանն անձեռնհաս լինելով ի տալ, սանսատ ետ որ ի Լ. օր վատային տացի, բայց յետոյ Ժ. օր անցեալ սոքա ստիպէին առնուլ զդրամն, վասնորոյ և սրբազանն զԳէորգ վարդապետն առաքեաց ընդ այսու թղթով, զի հողս արասցեն վասն դրամոյն հատուցանելոյ։

ՃԺԳ. Ի Թիֆլիզ առ մխիթար Սօլօմօնն ի պատասխանի վրացերէն գրեցեալ թղթոյն՝ որ վասն Գրիգոր երեցուն, զի նա թուղթ առեալ լիվանէ սարտարէն, ինքնագլուխ գործակալ եղեալ և զարդիւնսն սրբոյ Աթոռոյս և Հաղբատայ ժողովէր, զոր գիտելով սրբազանին մեղադրանաց թուղթ գրեաց, իսկ այժմ թէ սա և թէ սարտարն գրեալ էին զերիցուէն՝ իբր թէ նա արդար է։

ՃԺԴ. Ի Կեանջայ առ սրբոյ Աթոռոյս գանձապետ պարոն Վարդազարն, ծանուցումն զտեղւոյս անցից, և հարկ՝ առ ի դրել զիւրեանց որպիսութիւնսն։

ՃԺԵ. Ի Արդիկ, առ երեսփոխ Կիրակոսն և Մարտիրոսն, յանձնարարութիւն յաղագս Կարբեցի Յովաննէս վարդապետին՝ որ գնալը անդ առ ի գպտղիսն նոցա ժողովել։

ՃԺԶ. Ի Կարին՝ առ Հաջիյ արայի փեսայ խօջայ Յովաննէսն, մխիթարութիւն վասն մահո ան զոքանչին իւրոյ՝ որ էր կին լիշեալ Հաջիբաբային։

ՃԺԷ. Ի Թաւրիզ՝ առ մահտեսի Յովաննէսն Ղազարեան, ծանուցումն զզալստենէ արքունական նոմոսայն և նոմոսաբերացն Ստեփաննոս և Կարապետ եպիսկոպոսացն, և յանձնարարութիւն ընծայատարին և նոր նուիրակ... վարդապետին։

ՃԺԷ. Ի մեծն Պոլիս՝ առ Շնորհք ամիրայի որդի Մուրատ ամիրայն, ի պատասխանի թղթոյն, շնորհակալութիւն վասն սիրով ուրախակցութեան ընդ անցսն ս. Աթոռոյս։

ՃԺԸ. Ի Թիֆլիզ առ Ղորղանենց Յովսէփ աղայն և առ բոլոր Ղօրղանեցիսն, ծանուցումն վասն վարդապետին թէ ահա յղեցաք առ ի գնալ ի կողմանսն հիւսիսոյ վասն զչփո թութիւնսն նոցա խաղաղացուցանելոյ, և խնդիր՝ զի ինքեանք ես զմահսէր դրեսցեն նմա։

ՃԺԹ. Ի Թիֆլիզ առ Իւան Պետրովիչ Ենարալն, ծանուցումն վասն վարդապետացն յուղարկելոց ի դուռն մեծի կայսեր, և խնդիր, առ ի զնոսա չուտով ուղևորել։

ՃԻ. Ի Մօսկով առ աղայ Յովակիմն և աղայ Մինասն Եղիազարեան, ծանուցումն և յանձնարարութիւն վասն եպիսկոպոսացն։

ՃԻԱ. Ի յԱխլքեալակ, առ վեցեսին անձինս, օրհնութիւն և շնորհակալութիւն վասն վեցեցունց մատաղացուացն, զորս յղեալ էին ի սուրբ Աթոռս։

ՃԻԲ. Ի Վան առ Յարութիւն աղայ մահտեսի Թօմայեան, յանձնարարութիւն վասն նոր նուիրակ վարդապետին։

ՃԻԳ. Ի մեծն Պոլիս առ մահտեսի Յովաննէս ամիրայն մահտեսի Յարութիւնեան, ի պատասխանի թղթոյն շնորհաւորականի ընդ մահսէրաբեր Կարապետ վարդապետին, շնորհակալութիւն վասն ընդունելութեանցն, և յորդորումն ի հաստատութիւն սիրոյ։

ՃԻԴ. Ի յԷարէնէ առ Գանիէլեան Պետրոս աղայն օրհնութիւն և շնորհակալութիւն վասն ընծայիցն ընդ Կարապետ վարդապետին յղեցելոց։

1802

ՃԻԵ. Ի Հաշտարխան առ գերազնիւ Սիմէօն Սէրգէյիչն։

ՃԻԶ. Ի վերայ Երևանու Շհարի ժողովրդոցն առհասարակ՝ վասն արձակման ի բանադրանաց Քեալ պ. Յովաննիսին և պ. Ջօհրապին։

ՃԻԷ. Ի Պետերբուրգ առ սրբազան արք եպիսկոպոսն Ամբրոսէ սէր և յորդորումն ըստ խնդրոյ Գրիգոր վարդապետին։

ՃԻԸ. Ի Հաշտարխան առ Թագօյ պ. Կաւիթն յորդորումն ի սէր և ի հարազատութիւն։

ՃԻԹ. յԸՋմիւռին, առ Աբրօյեան Առաքել աղայն ի պատասխանի օգ. 20 դրեալ թղթոյն։

ՃԼ. Ի Պետերբ. առ Եկիմ Վասիլիչ Խաստատովն ըստ խնդրոյ Գրիգոր վարդապետին։

ՃԼԱ. Ի Պետերբուրղ առ Տէր Գրիգոր աւագ քահանայն օրհնութիւն և պատուէր, զի ի հարազատութեան կացցէ։

ՃԼԲ. Իզմիր առ Ղօնճայեան պարոն Գասպարն, օրհնութիւն և շնորհակալութիւն յաղագս մէկ արծաթապատ Աւետարանին զոր տուեալ էր Մարտիրոս վարդապետին։

ՃԼԳ. Ի Կապէն Մատէնն առ Փիլիպպոս ամիրայն։

ՃԼԴ. Թուղթ օրհնութեան և սիրոյ առ Պլատոն Ալէքսանդրիչ քնեազ Զուպովն ըստ խնդրոյ Գրիգոր վարդապետին։

ՃԼԵ. Ի Պետերբուրգ առ Սէրգէյ Լազրիչ Լաշկարովն օրհնութիւն և սէր ըստ խնդրոյ Գրիգոր վարդապետին։

ՃԼԶ. Ի Պօլիս առ պարոն Թամարով դեսպանն, ընդ Ստեփաննոս արքեպիսկոպոսին։

ՃԼԷ. Ի Նորն Նախիջևան առ պալկովնիկ Յօհաննէս աղայն համեմատ Հաշտարխանու թղթոց մտացն։

ՃԼԸ. Ի մեծն Պօլիս առ Ազնաւուրեան մահտեսի Գալուստ ամիրայն և Սուրէնեան Մուրատ ամիրայն։

ՃԼԹ. Ի Պօլիս առ Տագէսեան Յօհաննէս ամիրայն և Գրիգոր աղայն վասն խաղաղութեան։

ՃԽ. Ի Պետերբուրգ առ վիցկանցելար քնեազ Ալէքսանդր Պարիսիչ Գուրակինն, օրհնութիւն և սէր ըստ խնդրոյ Գրիգոր վարդապետին։

ՃԽԱ. Ի Պօլիս առ Գիւլաբօղլի Յակոբ աղայն և Բարդուղիմէոս Չէլէպին։

ՃԽԲ. Թուղթ մխիթարութեան ի Թիֆլիզ վասն մահուան քնեազ Սօլոմոնի քեան Քեթևանին։

ՃԽԳ. Թուղթ Նղովից և բանադրանաց առ երկու չարագործսն, որոց անուանքն յետոյ իմացեալ լինին։

ՃԽԴ. Ի Պետերբուրգ առ Իվան Պետրովիչ Գասպարովն օրհնութիւն և հարազատութեանց աղագաւ շնորհակալութիւն։

ՃԽԵ. Ի Զմիւռին քաղաք առ դրոշմակիր Ստեփան աղայն ի պատասխանի նորին թղթոյ և բան վասն խաղաղութեան։

ՃԽԶ. Առ Իսահակ աղայն։

ՃԽԷ. յԷջմիածին առ Աբրօյեան Մարգար աղայն ի պատասխանի օգոստոսի 21 գրեալ թղթոյն։

ՃԽԸ. յԻզմիր առ Մոսկով կոչեցեալ Յովհաննէս աղայն Սաւալանեան, շնորհակալութիւն վասն սիրոյն և հարազատութեանցն որ առ սուրբ Աթոռս։

ՃԽԹ. Ի Թիֆլիզ առ Դաւիթ արքայորդին յաղագս ներման և թողութեան Տէր Գրիգոր երիցուն։

ՃԾ. Ի Թիֆլիզ առ Իվան Պետրովիչ Լազրովն։

ՃԾԱ. Ի Թիֆլիզ առ վրացի քահանայն, որ է թարգման պ. Լազրովին։

ՃԾԲ. Ի Հաշտարխան առ գատաստանատանց դատաւորսն վասն Ալիտսկարի բանի։

ՃԾԳ. Ի Կարին առ Ասլան Մարտիրոս աղայն։

ՃԾԴ. Ի Թիֆլիզ ընդ մոմի նուիրակին առ Մելիք Դարչին։

ՃԾԵ. Ի վերայ բնակչացն Թիֆլիզու, ծանուցումն վասն մահսէրացն, և համոզումն գնոսա ի խաղաղութիւն։

ՃԾԶ. առ Մերիչկարպաշի Յովսէփ Ա.

ՃԾԷ. Ի միաբանից և յերկրացւոց առ ընդհանուր Ազգս Հայոց։

ՃԾԸ. Առ Խարալէլ կաթուղիկոսն Աղուանից ի պատասխանի իւր գրուածոյն։

ՃԾԹ. ի վերայ ընդհանուր Ազգիս Հայոց յայլ և այլ աշխարհս բնակելոց, և նախ ի մեծն Պոլիս, ապա յայլ քաղաքս օրհնութիւն և յորդորումն, ի բաց գնել զխռովութիւնսն, և խաղաղութեան զհետ լինել։

ՃԿ. Ի Թիֆլիզ առ միլախօռպաշ ի պարոն Յովսէփն Ղորղանեան, ի պատասխանի թըղթոյն յաղագս վիճոյ Սհակայէն եկեղեցւոյն։

ՃԿԱ. Առ մահ. Յօհաննէս Շէհիր վէքիլն։

ՃԿԲ. Ի Թիֆլիզ առ Բէկթաբէկ Դիւանն։

ՃԿԳ. Ի Թիֆլիզ առ պարոն Կնօրինն շնորհաւորութիւն վասն գալստեան նոցա ի քաղաքն և յանձնարարութիւն վասն եպիսկոպոսաց մերոց։

ՃԿԴ. Ի Թիֆլիզ առ Միրզայ Աբրահամն, ի պատասխանի թղթոյն, և ծանուցումն զայլ և այլ բանից։

ՃԿԵ. Ի գղեակն Շուշւոյ՝ առ սուրբ Աթոռոյս դանձապետ պարոն Աւագն։

ՃԿԶ. Ի Թիֆլիզ առ Պետր Իվանիչ Կաւալենսկին։

ՃԿԷ. Ի Թիֆլիզ առ Մելիք Ջիւմշատն, ծանուցումն զայլ և այլ բանից, և յանձնարարութիւն վասն նորոգ անդ գնալի մարդկանցն։

ՃԿԸ. Ի Թիֆլիզ առ Իվանէ սարտարն։

ՃԿԹ. Թուղթ բանադրանաց առ Թադէոս առաքելոյ վանից չառաջնորդ Գէորգ չեպ՝ եպիսկոպոսն և իւր յկալի աբեղայ Կարապետ չիքն, սակս համարձակելոյ նոցա մաքառել ընդ սըրբոյ Աթոռոյս և ընդ օծեալ հայրապետ սորին բառնալով զանունն ի վիճակէ իւրմէ։

ՃՀ. Առ պարոն Լազրովն ի Թիֆլիզ։

ՃՀԱ. Ի Կարին առ Շէհիր վէքիլի մահտեսի Յօհաննէսն։

ՃՀԲ. Առ պարոն Կնօրինն ընդ պարոն Պաուլ Փչօտրիչին։

ՃՀԳ. Ի Թիֆլիզ առ Դաւիթ արքայորդին, ընդ խանի և մեր մարդկանցն որք գընացին անդ վասն արձակել տալոյ զվարդապետսն։

ՃՀԴ. Կոնդակ ի Ղարս ի վերայ հասարակութեան, ծանուցումն զարարմանց Դանիէլ վարդապետին. և խնդիր զմահսէր գրելոյ ի Պօլիս ի ջատագովութիւն զսրբազան հայրապետէս։

ՃՀԵ. Ի միաբանից առ Էրզրումցիսն զանազան բանք վասն Դանիէլ վարդապետին և վերջապէս բանադրանք նորին։

ՃՀԶ. Ի Թիֆլիզ ի վերայ հասարակութեան մերազանց սակս Անտոն վարդապետին. որ փախուցեալ աստի անկաւ ի Կարին, և անտի ի Թիֆլիզ։

ՃՀԷ. յԷջմիածին առ հասարակութիւն նոցա, պատմութիւն զանցիցն անցելոց մինչև ցմարտի վերջն։

ՃՀԸ. Դաւիթ կաթուղիկոս առ Ստեփաննոս եպիսկոպոս։

ՃՀԹ Առ Մարաղու Ահմատ խանն, օրհնութիւն և շնորհակալութիւն վասն երկուց կճեալ արձանացն յղելոյ։

ՃՁ. Ի միաբանից առ Բալազիտեցիսն սակս անցեալ չփոթիցն որք գործեցան ընդ վայր։

ՃՁԱ. Ի միաբանից առ պարոն Կնօրինն և առ պարոն Կաւալենսկին վասն Յովհաննէս վարդապետին։

ՃՁԲ. Առ Կնօրինի թարգման Պետր Դըրիդորիչն, ի շնորհաւորութիւն գալստեանն, և յանձնարարութիւն վասն վարդապետաց մերոց։

ՃՁԳ. Ի Հաշտարխան առ աղայ Յակովբոսն Ազարաբեան, ծանուցումն զտեղւոյս անցից։

ՃՁԴ. Ի Հաշտարխան՝ առ աղայ Յակոբոս Ազարաբեան, ծանուցումն զանցւոյս անցից։

ՃՁԵ. Ի Թիֆլիզ առ պարոն Կաւալենսկին ընդ Եփրեմ պօռուչիկին։

ՃՁԶ. Ի Թիֆլիզ առ պարոն Կնօրինն ընդ Եփրեմ պօռուչիկ դեսպանին։

ՃՁԷ. Ի միաբանից սրբոյ Աթոռոյս առ պարոն Դաւիթ Նէօզրիչ Կնօրինն և առ պարոն Պետր Իվանիչ Կաւալենցկին։

ՃՁԸ. Առ պարոն Կնօրինն, ի պատասխանի ի մայիսի 4 գրեցեալ գրոյն։

ՃՁԹ. Ի Թիֆլիզ առ պարոն Կաւալենցկին ի պատասխանի գրեցեալ թղթոյն։

ՃՂ. Ի Թիֆլիզ առ պարոն Իվան Իվանիչն շնորհաւորութիւն վասն գալստեանն, և յանձնարարութիւն վասն վարդապետաց մերոց։

ՃՂԱ. Ի Թիֆլիզ առ պարոն գուպեռնաթօր Կաւալենցկին։

ՃՂԲ. Օրինակ գրոյն Աստապատեցի չիք խաչատուր սեաւորին և Դաւիթ Ղօրղանովին։

ՃՂԳ. Դաւիթ կաթուղիկոսն առ Ստեփաննոս եպիսկոպոսն։

ՃՂԴ. Ի Թիֆլիզ առ Կաւալենցկին ընդ Մելքոն Մեհրաբովին։

ՃՂԵ. Ի Թիֆլիզ՝ առ Դիւան Յովհաննէսն Բէգթարէկեան, ի պատասխանի թղթոյն, և ծանուցումն զգալստենէն առ մեզ պ. Մելքոնին Մեհրապով, և հաստացանելոյն զժ թումանն։

ՃՂԶ. Ի Հաշտարխան առ Դարբինղցի Յարութիւն աղայն, օրհնութիւն վասն սիրոյն և հարազատութեան առ սուրբ Աթոռս։

ՃՂԷ. Ի Կարին, ծանուցումն զգալստենէ աթոռակալին ի սուրբ Աթոռս, և շնորհակալութիւն զնոցանէ վասն բազմապատիկ բարեխաւութեանցն նոցին ցուցելոց մեզ և այլն։

ՃՂԸ. Ի Բամբակաձոր առ պօլկովնիկ Պաւլայն ի պատասխանի թղթոյն ընդ Սարգսին գրեցելոյ։

ՃՂԹ. Ի Թիֆլիզ առ Մունթոյենց Բօվսէփն, յորդորումն ի սէր և ի հաւատարմութիւն առ սուրբ Աթոռս, և ի ձեռնտուութիւն վարդապետաց մերոց՝ կամ յայսկոյս և կամ յայնկոյս առաքելոյ։

Մ. Ի Հաշտարխան առ Պլատոն արքեպիսկոպոսն յաղագս սիրոյ և խաղաղութեան։

ՄԱ. Ի միաբանից առ ինքնակալ մեծ կայսրն Ռուսաց, խնդիր վասն հաստատութեան սրբազանիս, և բանք վասն Դանիէլ վարդապետին։

ՄԲ. Ի Միաբանից առ ինքնակալ կայսրն Ռուսաց, խնդիր վասն հաստատութեան սորին, և բանք վասն Դանիէլ վարդապետին։

ՄԳ. Ի միաբանից առ Էրզրումեցիսն զանազան բանք, և վերջապէս բանադրանք Դանիէլին։

ՄԴ. յԱխալցխայ առ Հաջիբաբայ կոչեցեալ մահտեսի Ըակօբ աղայն, ի պատասխանի թղթոյն, և ծանուցումն զգալստենէ աթոռակալին ի Կարնոյ։

ՄԵ. Ի Բամբակ առ պալկովնիկ Պաւլայ Կուբակինն։

ՄԶ Ի Հաշտարխան առ Թաղայ Դաւիթն։

ՄԷ. Ի Թիֆլիզ առ էսնաֆապետ պարոն Յարութիւնն, և բոլոր սառաջ էսնաֆսն օրհնութիւն և շնորհակալութիւն յաղագս հոգատարութեանցն։

ՄԸ. Ի Պօլիս առ պարոն Թամարովն Վասիլ Ստեփանիչ։

ՄԹ. Ի Թիֆլիզ առ էսնաֆբաշիսն հանդերձ էսնաֆօք իւրեանց օրհնութիւն և շնորհակալութիւն զհարազատութեանցն և ի նոյն յորդորումն։

ՄԺ. Ի Թիֆլիզ առ պարոն Կնօրինն ընդ Աղալոյին։

ՄԺԱ. Ի Թիֆլիզ առ գուբերնատոր պարոն Կաւալենցկին։

ՄԺԲ. Առ Գրիգոր վարդ. ի Պետրբուրղ։

ՄԺԳ. Առ պարոն Կնօրինն և այլն։

ՄԺԴ. Առ պարոն Պետր Գրիգորիչ Պուտկովն հա ատարիմ խորհրդականն նորին գերազանցութեան։

ՄԺԵ. Ի Թիֆլիզ առ պարոն քաղաքապետ Պետր Իվանիչ Կաւալենցկին։

ՄԺԶ. Ի մեծն Պօլիս առ Հաջի Դատ կոչեցեալ մահտեսի Առաքել ամիրայն, ծանուցումն զայլ և այլ անցից, և խնդիր վասն օգնութեան Աթոռոյս։

ՄԺԷ. Ի մեծն Պօլիս առ Փափազօղլի Սիմէօն ամիրայն, յորդորումն ի սէր սրբոյ Աթոռոյս։

ՄԺԸ. Ի Պօլիս առ Պաշպազրկեանեան մահտ Յովհաննէսն։

ՄԺԹ. Առ Կեսարիոյ առաջնորդ Ստեփաննոս վարդապետն։

ՄԻ. Ի Թիֆլիս առ Ղօրղանենց Դէօրղն և Սամուէլն։

ՄԻԱ. Ի Թիֆլիզ առ ս. Նշանի աւագ քահ. Տէր Նիկողայոսն։

ՄԻԲ. Ի Թիֆլիզ առ Յօհաննէս Դիւանն, ի պատասխանի թղթոյն։

ՄԻԳ. Ի Պօլիս առ Զաքարիայ պատրիարգի հղբօրորդի Տէր Պօղոսն, զ'այլ և այլ բանից և վասն Ստեփաննոս եպիսկոպոսին։

ՄԻԴ. Ի Հաշտարխան առ աղայ Սիմէօն Սերգէյիչն

ՄԻԵ. Ի Հաշտարխան, առ Մովսէս Տատաշեան։

ՄԻԶ. Ի Հաշտարխան առ Եկօր Արելիչն։

ՄԻԷ. Ի Կարին առ մահտեսի Յօհաննէսն ի պատասխանի թղթոյն իւրոյ ի յօգոստ. 27 և շնորհակալութիւն սակս հարազատութեանցն։

ՄԻԸ. Ի Պօլիս առ իշխանապետսն և իշխանսն, բան վասն խաղաղութեան, և յորդորումն ի սէր և ի միութիւն։

ՄԻԹ. Ի Թիֆլիս առ Մատենու կառավարիչ պարոն գրաֆուն, զորոյ անուննն տակաւին մեզ է անգիտելի։

ՄԼ. Ի Պօլիս առ մահտեսի Ստեփանն և

առ մահտեսի Նիկողայոսն յորդորումն կրկին զնոսա ի խաղաղութիւն։

ՄԼԱ. Ի Պոլիս առ Գէորգ Աղալեկովն։

ՄԼԲ. Առ Թաղայ Գաւիթն։

ՄԼԳ. Ի Թիֆլիս առ քնեազ Սողոմոնն, առ պարոն Մելքոն և առ պ. Յովհաննէսն։

ՄԼԴ. Ի Պոլիս առ Գրիգոր պատրիարգն վասն շնորհաւորութեան։

ՄԼԵ. Ի Հաշտարխան առ պարոն Յովհաննէս Հայրապետեանն։

ՄԼԶ. Ի Պոլիս առ Աղնաւուր մահտեսի Գասպարն, և Սուրէն խան Մուրադն։

ՄԼԷ. Ի Պոլիս առ Շնորհ Մկրտիչ ամիրայի որդիսն վասն խաղաղութեան և համոզելոյ զնոսա ի սէր և ի հանդարտութիւն։

ՄԼԸ. Ի Թիֆլիզ առ բարեպաշտ իշխանս ամենս շնորհակալութիւն զհարազատութեանցն, և յորդորումն դարձեալ ի նոյնն։

ՄԼԹ. Առ Մինասն Քիստով։

ՄԽ. Ի Պոլիս առ բասմաճի ուստայ Յովհաննէսն, օրհնութիւն և շնորհակալութիւն վասն ԾԲ դռուշին։

ՄԽԱ. Առ փոսփոս Սէրոբէն վասն բանի ՃԿ դռուշին. զոր սուտ կորուսեալ էր։

ՄԽԲ. Ի յԱզրակ առ Մէլիք փանոսն։ Օրհնութիւն և շնորհակալութիւն սակս բարերարութեանցն և ձեռնտուութեանցն՝ որ առ նուիրակ Յօհաննէս վարդապետն, և յորդորումն ի նոյնն։

ՄԽԳ. Ի Բամբակ առ Նիկօլայ Նիկիֆորիչ Բելաբօրօտով, որ է գրագիր Մինաս Քիստովին։

ՄԽԴ. Ի Բամբակ առ Դիմիտրի Պաւլիչն ընդ Տէր Բաղդասարին։

ՄԽԵ. Ի Բամբակ առ Միտր Պաւլային։

ՄԽԶ. Ի Բամբակ առ պոլկովնիկի կին Մարիա Իվանովնայն (պալկովնիցայ)։

ՄԽԷ. Առ թագուհին Ռուսաց Մարիա Ֆեօդրովնայն։

ՄԽԸ. Ի Բամբակ, առ Պալկովնիկ Պաւլային։

ՄԽԹ. Ի միաբանից առ ժողովուրդսն Պոլսոյ և առ այլ քաղաքաց։

ՄԾ. Ի Թօխաթ առ նախորդ պատրիարգըն Պոլսոյ։

ՄԾԱ. Ի Պետրբուրղ առ ենարալ պրոկորոր Ալէքսանդր Անդրէիչ Բէքլէշովն։

ՄԾԲ. Ի Պոլիս առ լատին թարգմանն Թամարովի Յովսէփ Ալեքսանեանն։

ՄԾԳ. Ի Պետրբուրղ առ գրաֆ Վիկտոր Պաւլովիչն Քոչուպէյովն։

ՄԾԴ. Ի Պետրբուրղ առ Գաբրիէլ Պետրովիչ Գրաֆ Ռումանցովն։

ՄԾԵ. Ի Պետրբուրղ առ ենարալ Դիմիտր Պրոկոֆիչն, որ է առենադպիր մեծի կոչսերն։

ՄԾԶ. Պոլիս առ հաճի Յակոբ ամիրային։

ՄԾԷ. Ի Պոլիս առ Անդրէաս Չէլէպին, յորդորումն ի սէր և ի խաղաղութիւն։

ՄԾԸ. Ի մեծն Պոլիս առ Եղիսաբէթ խաթունն օրհնութիւն և շնորհակալութիւն վասն Ա հատ ծածկոցի սկհոյ։

ՄԾԹ. Առ Պաւլէ պօլկովնիկն ի պատասխանի թղթոյն ընդ Տէր Բաղդասարին գրեցելոյ։

ՄԿ. Առ Հնդկաց նուիրակ Յակոբ վարդապետն, յորդորումն առ ի գալ ի ս. Աթոռս։

ՄԿԱ. Կոնդակ ի վերայ Աղբակու, Որմու, Սալմաստու՝ և այլ վիճակաց սրբոց վանից սրբազան առաջնորդին Բարդուղիմէոսի, վասն վէքիլութեան Աբրահամ վարդապետին։

ՄԿԲ. Տիրացու Կարապետից։

ՄԿԳ. Թուղթ յԻզմիր՝ առ Մօսկով կոչեցեալ Յովհաննէս աղայ՝ կողակից Թագուհի խաթունն, օրհնութիւն վասն զմի գաւազան յիշատակ տալոյն։

ՄԿԴ. Ի Պրուսայ առ նորին առաջնորդ Պօղոս վարդապետն, շնորհակալութիւն վասն հաւատարմութեանցն առ սուրբ Աթոռս։

ՄԿԵ. Ի Պոլիս առ մահտեսի Միքսեր աղա Կիւլօղլի։

ՄԿԶ. Ի Պոլիս առ Տէր Ստեփան քահանային։

ՄԿԷ. Առ Իզմիրու հասարակութիւն, ընդ որս և աշկաւ ինչ մխիթարութիւն զվշտացն, զորս ի խամսեցի պատրիարգէն Պոլսոյ կրեալ էին, վասն հարազատութեանցն սրբոյ Աթոռոյս։

ՄԿԸ. Ի Պոլիս առ տիրացու Յնօփրիոսն՝ օրհնութիւն և շնորհակալութիւն յաղագս 24. դռուշ լուսաղնին։

ՄԿԹ. Ի Կարին առ Աղալեկ աղայն, օրհնութիւն և շնորհակալութիւն վասն բարերարութեանցն որ առ Մարտիրոսն մեր, և սակս հարազատութեանցն և ջատագովութեանցն որ առ սուրբ Աթոռս և առ մեզ։

ՄՀ. Ի յուխտաւորաց առ ժողովուրդսն Թիֆլիզու և Հաշտարխանու։

ՄՀԱ Ի Պոլիս առ Սինան օղլու Բաղդասար ամիրային։

ՄՀԲ. Ի Ռուսչուղ առ հասարակութիւն նոցա ընդ հաջի Կարապետին, հաջի Գէորգին և խօջայ Յովհաննիսին։

ՄՀԳ. Ի Պոլիս առ Ֆարուղատ Ամիրային։

ՄՀԴ. Առ Գէորգ Աղալեկովն ընդ խանի մարդոյն։

ՄՀԵ. Ի Կապէն Մառենն առ հանրահռչակ սեպուհ սատրապետ Փիլիպոս ամիրային, խնդիր վասն վերահաստատութեան մերոյ։

ՄՀԶ. Առ ընդհանուր ազգն վասն Գրիգոր պատրիարգի արարմանցն։

ՄՀԷ. Ի միաբանից թուղթ առ չպատրիարգն Պոլսոյ ի պատասխանի Մայիսի 17 գրեալ առ մեզ թղթոյն։

ՄՀԸ. Ի վերայ Ղզլարու հասարակու-

թեանն ընդ սուրբ Յակոբայ Ջուր տանող պարոն Գաբրիէլին։

ՄՀԹ. Ի մեծն Պօլիս առ Բարգուզիմէոս Չելէպին, օրհնութիւն և յորդորումն։

ՄՁ. Ի Թիֆլիզ առ ազնուական Մէհրաբ Ենօքեան, շնորհակալութիւն և յորդորումն։

ՄՁԱ. Ի Պրուսայ առ ժողովուրդսն, շնորհակալութիւն զհարազատութեանցն ըստ աղ֊դելոյ մեզ Մարտիրոս վարդապետին։

ՄՁԲ. Ի Դզլար առ ազնուական պ. Նիկողայոսն, պ. Ստեփանն, պ. Եսային և պ. Յովակիմն, որք զպարոն Գաբրիէլն առաքեալ էին վասն սուրբ Յակոբայ Ջրոյն։

ՄՁԳ. յըԶմիւռին առ Մոսկով Յովհաննէս աղայն շնորհակալութիւն վասն պաշտպանութեանցն առաջնորդ Մարտիրոս վարդապետին ի ձեռաց պատրիարգին Պօլսոյ։

ՄՁԴ. Ի Հաշտարխան առ Գոլման Յովհաննէսն։

ՄՁԵ. Ի Հաշտարխան առ Էֆէնտի պարոն Յովհաննէսն ընդ փեսային իւրոյ պարոն Յովհաննիսին։

ՄՁԶ. Ի Թաւրեզ առ խօջայ Ստեփաննոսն (ի Կազբին եղելոյ) և իւր եղբայր պարոն Մանուկն։

ՄՁԷ. Կոնդակ ի յԱրտուին, առ հասարակութիւն, յանձնարարութիւն վասն Գրիգոր սարկաւագին.

ՄՁԸ. Առ հեքիմբաշի պարոն Յարութիւնն։

ՄՁԹ. Առ Աղայ ոմն Ենովքեան։

ՄՂ. Ի Կարին, առ տէր Գասպար քահանային։

ՄՂԱ. Ի Կարին առ չէհիր վէքիլի խօջայ մահտեսի Յովհաննէսն։

ՄՂԲ. Առ քնեազ Սոլոմոնն։

ՄՂԳ. Ի Թիֆլիզ առ Յովհաննէսն Շիոլեան։

ՄՂԴ. Ի Թիֆլիզ առ Դիւան Յոհաննէսն, ծանուցումն զանցից մերոց, և զԹղԹոց նորին չհասանելոյն առ մեզ։

ՄՂԵ. Ի յՈւզունմլի գիւղն, առ քահանայսն և ժողովուրդսն, օրհնութիւն և շնորհակալութիւն վասն երթեեկացն ցուցանելոյ զընդունելութիւն։

ՄՂԶ. Առ որրոյ Երուսաղէմի պատրիարգ Թէոդորոս վարդապետն, սակաւ մի մեղադրութիւն վասն Թուղթ չգրելոյն։

ՄՂԷ. Ի Պօլիս առ Յակոբ վարդապետն սրբոյ վանիցն Կարապետոյ։

ՄՂԸ. Ի Թիֆլիզ առ Պետր Իվանիչ Կաւալենցկին։

ՄՂԹ. Ի Հաշտարխան առ Սիմօն Սէրգէիչն։

Յ. Ի Թիֆլիզ առ Բաստամենց պարոն Ստեփաննոսն, սակաւ մի յանդիմանութիւն յաղագս Թուղթ չգրելոյն, և ծանուցումն զանցից և զիրակութեանց Դանիէլին։

ՅԱ. Առ տէր Գէորգն ի յԱմիդ։

ՅԲ. Ի Սալմաստ առ Մելիք Սաֆարն, ծանուցումն զանցից մերոց։

ՅԳ. Ի Բաքու առ Գիօրգինի որդի պարոն Աբրահամ գանձապետն սրբոյ Աթոռոյս ի պատասխանի Թղթոյն դրեցելոյ յաղագս գանձանակադրամին և գաւազանին և սկհոյն և այլ իրաց տուեցելոց Աւետիս վարդապետին հասուցանել ի սուրբ Աթոռս։

ՅԴ. Ի Թիֆլիզ առ Զիթակարենց Ստեփանի Կարապետն։

ՅԵ. Առ Իսրայէլ կաթուղիկոսն ընդ Դարաբաղու մելիքացն։

ՅԶ. Ի Թիֆլիզ առ պարոն Պետր Իվանիչ Կաւալենցկին շնորհաւորութիւն վասն գալստեան. խնդիր վասն արձակման վարդապետաց, և բան վասն Յովհաննէս վարդապետին։

ՅԷ. Ի Կարին, առ չոյ եսին իշխանս, մահտեսի Յակոբ ամիրայն, մահտեսի Յովհաննէս աղայն, խօջայ Յովհաննէսն և մահտեսի խօջայ Յովհաննէս աղայն, խօջայ Յովհաննէսն և մահտեսի խօջայ Կարապետն ծանուցումն զայլ և այլ բանից և զգալստենէ Դանիէլին ի սուրբ Աթոռս։

ՅԸ. Առ տէր Վահանի որդի պ. Գէորգն։

ՅԹ. Ի Բայբուրդ առ պօլկովնիկն։

ՅԺ. Կոնդակ ի վերայ հասարակութեան Թիֆլիզու ի մասնաւորի զգալստենէ Դանիէլ վարդապետին ի սուրբ Աթոռս։

ՅԺԱ. Ի մեծն Պօլիս առ սհաթչի Բարդուղիմէոս Չէլէպին, օրհնութիւն և շնորհակալութիւն վասն սիրոյ և հարազատութեանցն առ սուրբ Աթոռս։

ՅԺԲ. Ի մեծն Պօլիս՝ առ Թիֆլիզցի տէր Ստեփաննոսն, ի պատասխանի Թղթոյն գրեցելոյն ընդ մահսէրին Պօլսեցւոց։

ՅԺԳ. Ի մեծն Պօլիս առ Հաջի Գասպար կոչեցեալ ճարտարապետ մահտեսի Առաքել ամիրայն, օրհնութիւն և շնորհակալութիւն վասն սիրոյն և հարազատութեանց առ սուրբ Աթոռս։

ՅԺԴ. Ի յԱրթիկ գիւղն առ Մուսա Սուլթանի բաժին ժողովուրդսն, վասն երիցփոխութեան պարոն Յօհաննիսին։

ՅԺԵ. Ի Կարին առ Շեհիրվեքիլն, ընդ Յովհաննէս վարդապետին։

ՅԺԶ. Ի Պօլիս առ մահտեսի Գաբրիէլն, ընդ Բաթր Թաթարին։

ՅԺԷ. Ի Պօլիս առ Յարութիւն աղայի որդի մահտեսի Յովհաննէս Չելեպին։

ՅԺԸ. Ի Պօլիս, առ Կապուտան փաշայի սառաֆք Յարութիւն և Յակոբ ամիրայքն։

ՅԺԹ.

ՅԻ. Ի Պօլիս, առ Սարաֆլար քեահեասի մահտեսի Մարտիրոս ամիրայն։

ՅԻԱ. Ի Պօլիս առ պատրիարգն Պօլսոյ Յովհաննէս։

ՅԻԲ. Ի Կարին, առ հասարակութիւն նոցա, ընդ Բաթըր Թաթարին։

ՅԻԳ. Առ Տէր Գասպար քահանային ի Կարին։

ՅԻԴ. Ի Կարին ո.ո. խօջայ Հայրապեան։

ՅԻԵ. Ի Կարին առ. Օքսուզեան մահտեսի Աբրահամն, և եղբօր նորին Մերկերիոսին։

ՅԻԶ. Ի Պօլիս առ. Բոշրաղիրկոն մահտեսի Յովհաննէս ամիրային։

ՅԻԷ. Ի Պարսից առ. Հայս Թարգմանութիւն գրո Թեան գրաֆ Վօրօնցովի որ առ. Մահմէզ խանն չուխուր Հսաա Եղեանայ։

ՅԻԸ. Ի Կարին առ. ժողովուրդսն։

ՅԻԹ. Ի Պօլիս առ. Թէվէքէլի աղային։

ՅԼ. Առ Պօլսոյ Յովաննէս պատրիարգն, ի ծանուցումն զզալստեանէ տեղւոյ սուրհանդակին և Դանիէլ վարդապետին։

ՅԼԱ. Ի Պօլիս առ. Բարղուղիմէոս Չէլեպին ի պատասխանի Թղթոյն գրեցելոյ վասն անցիցն սրբազանին։

ՅԼԲ. Առ տէր Մեսրովպն ի Պօլիս։

ՅԼԳ. Ի Պօլիս առ. բարդաճի Յովհաննէս ոմն, օրհնութիւն և շնորհակալութիւն։

ՅԼԴ. Առ հաջի Գաբրիէլ և հաջի Գրիգոր։

ՅԼԵ. Առ Կիրակոս վարդապետ ոմն։

ՅԼԶ. Կոնդակ ի Թաւրէզ ի վերայ հասարակութեան և ժողովրդեան։

ՅԼԷ. Ի Պօլիս առ. Գալուստ վարդապետըն։

ՅԼԸ. Ի Պօլիս առ. Փիլիպպոս Ամիրային։

ՅԼԹ. Ի Կարին առ. մահտեսի Մարտիրոս աղային Ասլան կոչեցեալ։

ՅԽ. Ի Բասրայ առ. պարոն Գէորգն Տէր Գուլթեան։

ՅԽԱ. Ի Պօլիս առ. Անդրէաս եպիսկոպոսըն ի շնորհաւորութիւն վասն աշխատութեանց ի վերայ մահսէրին։

ՅԽԲ. Առ տիրացու Մանուկ ոմն ի Պօլիս։

ՅԽԳ. Ի Պօլիս առ խօջայ Պետրոսն։

ՅԽԴ. Ի Պօլիս առ. Փափազօղլի մահտեսի Սիմէօն Ամիրային։

ՅԽԵ. Ի Պօլիս առ. Յակոբ Թիւն ամիրայի որդի մահտեսի Յովհաննէս ամիրային։

ՅԽԶ. Ի Պօլիս առ. Կիւլապեան Յակոբ ամիրային, օրհնութիւն և շնորհակալութիւն վասն սիրոյ և հարազատութեանցն առ սուրբ Աթոռս։

ՑԱՆԿ ՑԱՏՈՒԿ ԱՆՈՒԱՆՑ

Աբրահամ արքեպիսկ. 147. 149. 150. 152. 167–175. 233. 234. 237. 240. 242. 251—254. 258. 259. 267. 268. 271. 276. 279. 281. 284. 289. 318. 324. 326. 329. 332—334. 342—345. 360. 366. 368. 372. 274. 377. 378. 381. 385. 389. 392. 410. 412. 429. 433. 440. 441. 459. 460. 463. 578. 592. 593. 598. 601. 612. 615. 620. 626. 631. 651. 687. 689. 693. 705. 708.
— եպիսկ Տաթևացի 637. 680. 712.
— վարդ. 105. 124. 170. 171. 220. 410. 486. 537. 538. 588. 592. 600. 603. 631.
— Նահապետ 230. 361. 623.
— Օքսուզեան 660.
Աբդուլ Ռահման փաշայ 343. 390.
Աբիրօն 273.
Ագուլիս 127. 135.
Ադամ 230. 361.
Ադքանազեան տոհմ 443.
Ալիսակար 291. 293.
Ալեքսանդր Նեվսկի 665.
Ախալգոր 119.
Ախալքալակ 218.
Ախալցխա 136. 319. 360. 390. 422. 666.
Ախթամար 433. 483. 527.
Աղալօ 426. 427. 435. 487.
Աղայեկ 66. 552
Աղա Ենովքեան 592.
Աղասսաֆա 35. 183.
Աղբակ 122. 123. 125. 507. 535. 537.
Աղբակցիք 124. 125. 537.
Աղեքսանդր 34. 210.
— Պաւլովիչ 40. 189.
Ամիդ 75. 143.
Ամրոսէ արքեպիսկ. 231.
Անանիա վարդ. 128—130.
Անդրէաս արքեպիսկ. 162.
— եպիսկ. 701.
— Ջէլեպի 177. 528.
— առաքեալ 665.
Անզալի 125.
Անտոն աղայ 38.
— վարդ. 353. 354.
Աննա թարեկամուհի Գասպար Ղօճաեանի 243.
— սրբուհի 665.
Ապով իշխ. 166.
Ապտուրահման փաշայ Գովլէթլու 320.
Ապտուլ Ռահիմ փաշայ 359. 667.
Առաքել 507.
— ամիրայ Հաջի Գասս 443. 638. 670.
— Աբրօյեան 234.
— Ջէլէպի 653.
— Ամիրայ 127. 159.
Ասլան 511.
Ատբանա 50.
Ատրպատական 337. 663.
Արարատ 93.
Արարատեան դաշտ 27. 233. 253. 293. 324. 330. 343. 365. 377—79. 382-384. 386. 387. 398. 409. 413. 417. 418. 427. 432. 436. 440. 441. 443. 479. 513.028.
Արղիկ գիւղ 206. 641.
Արդուին 590.
Արիստակէս 422. 541.
— Բահաթուրեան 17.
Արիոս 544. 567.
Արզն 143.
Աւագ 327.
— Իփեկչի 17.
Աւետ Գալստեան 98.
Աւետիք եղբայր Սիմէօն Սարգսեանի 389.
Աւետիկ 615.
Աւետիս վարդ. 621. 622.
Բաբա 74. 75. 127.
Բագրեւանդ գաւառ 95. 543. 663.
Բաթր բէկ Թաթար 562. 629. 643. 652. 655. 662. 672. 680. 687. 696. 702. 705. 709.
Բահաղ 357.
Բաղդատ 44. 51. 183. 185. 533.
Բաղասս 609.
Բաղտասար Աղաղատէ 222—4.
— լուսարար 609.
Բամբակ 93. 426. 509—513. 632.
Բամբակաձոր 67. 119. 136. 170. 408.
Բասէն 84.

Բասրալ 39. 42—44. 47—51. 184. 186. 697. 698.
Բարդուղիմէոս առաքեալ 26. 40. 122. 511. 535. 538.
— Չէլէպի 157. 268. 576. 634. 678. 684. 686.
— Չէլէպի Յովսէփեան 676.
Բարսեղ 394. 592.
— արքեպիսկ. 294.
Բալագիա 31. 32. 37. 46. 56—63. 67. 68. 77—80. 86. 87. 245. 254. 354. 362. 380. 393. 405. 406. 409. 420—423. 426. 427. 444. 452. 466. 467. 475. 479. 482. 493. 499. 510. 515. 517. 527. 532. 556. 560. 562. 574. 602. 616. 629. 629. 630. 634. 637. 659. 660. 662. 671. 673. 680. 687. 689. 693—6. 699—705. 8. 9. 12.
Բէլարօբօտով Նիկօլայ Նիկիֆորիչ 509.
Բէժան 502.
Բէզբօրօդկին Ալեքսանդր Վասիլիչ 521.
Բէկթաբէկ Դիւան 322.
Բէկլեշով Ալեքսանդր Անդրէիչ, գեներալ պրոկուրոր 439. 518.
Բուղախ Սուլթան 206.
Բումբայ 50. 627.
Բուշեր 43.
Բոռչալու 119.

Գաբրիէլ 219. 643.
— հաջի 686.
— Ղորղանեանց 118. 119.
— Մովրով 325.
— Իւզբաշի 201.
— սուրբ Յակոբայ ջուր տանող 572. 582.
Գալուստ ամիրայ Աղնաուրեան 259.
— արքեպիսկ. 145. 677. 591.
— Մկրտումեան 388.
— վարդ. 11. 21. 135. 691.
Գաղատիա 162. 701.
Գամաղիէլ 448.
Գալիանէ կոյս 540.
Գասպար 101.
— ամիրայ իշխան 495.
— Դ.օնճալեան 243.
— մահտեսի Աղնաւուր 492.
Գասպարով Իւան Պետրովիչ 270.
Գարլ Ֆէտրիչ 8. 28. 40. 341.
Գեանջայ 308
Գէորգ 6. 39. 42. 61. 62. 68. 507. 551. 557. 559. 609.
— Աղալեկեան 13. 62. 74. 82. 93. 145. 168. 432. 451. 481. 520. 525. 529. 545—547. 555 557. 561. 635. 638 643. 645. 647. 652. 655. 675. 687. 92. 702—6.
— Ապէլեան 388.
— Ենգիբարեան 631.
— եպիսկ. 44. 95. 336. 697.
— Ղորղանեան 459.
— սուրբ 103.
— վարդ. 39. 43. 46—50. 69. 89. 105. 135. 185. 200. 202.
— Տէր Դաւթեան 44. 184. 697.
— Տէր Վահանի որդի 630.
Գիլան 125. 308.
Գողգոթա 605.
Գրիգոր 544. 569. 627. 631. 637. 662. 708.
— ամիրայ 56. 263.
— արքեպիսկ. 232. 234. 240. 250—254. 267. 275. 387—389. 412. 518. 522—525. 546.
— բժիշկ 113.
— եպիսկ. 40. 64. 68. 70. 74. 84. 87. 90. 91. 98. 99. 102. 239. 437. 607.
— երեց 202.
— Լուսաւորիչ 25. 26. 40. 67. 94—96. 99. 173. 229. 349. 375. 401. 402. 416. 421. 428. 429. 433. 438. 444. 450. 452. 479. 491. 501. 511. 519. 524. 527. 528. 538. 543. 547. 549. 554. 560. 564. 571. 575. 579. 582. 621. 635. 640. 656. 661. 681. 683. 685. 687.
— Խամսեցի 614. 633. 634. 660. 674. 676. 677. 679. 680. 681. 685. 693.
— որդի Սարգսի 193.
— Չէլեպեանց 38.
— պատրիարք Պօլսի 487. 542. 565. 569. 614. 99. 700.
— սարկ. 590. 591.
— վարդ. 8. 27. 29. 31. 41. 55. 63. 71. 72. 77—81. 92. 97. 98. 101. 131—139. 152. 173. 176. 188. 190. 194. 195. 198. 231. 238. 250. 251. 266. 437. 486. 598. 606. 614. 693.
Գրիգորիուպօլ,—պօլցիք 70. 195. 439.
Գողգոթա 53.
Գուրակին Ալեքսանդր Պարիսիչ 266.
Գօկին 502.
Գօրի 113.

Դաղան 273.
Դանիէլ 535. 537. 543. 550. 570. 574. 598. 600. 602. 615. 616. 620. 637. 659. 660. 679. 680. 89. 96. 700.
— արքեպիսկ. 47. 50. 52. 54. 76. 78. 86. 181. 184. 245—248. 257. 261. 267. 311. 314.
— Այր 467. 526. 527. 556. 560. 561. 593.
— եան 510.
— եպիսկ. 2. 3. 5. 10. 13. 17. 19. 24. 43. 80. 189.
— Կաթուղիկոս 154. 266. 288. 404. 430. 663. 664. 665.
— վարդ. 14. 31—33. 36—38. 45. 46. 56—62. 67. 77. 86. 90. 95. 96. 136—38.

191. 192. 214. 227. 236—239. 242. 254—256. 260. 264. 268. 255. 279—234. 288. 290. 293—296. 299—300. 320. 322. 325. 331. 334. 344. 346—350. 355. 356. 359. 360. 368. 371—374. 376. 378. 380. 382. 387—396. 413. 416—419. 423—425. 428. 429. 435. 438. 444—448. 452. 454. 461. 465. 466. 472. 4. 9. 482. 493. 494. 499. 515. 518. 624. 627. 629. 630. 633. 634. 650. 657. 662. 666. 668. 671—673. 687. 93—96. 702—5. 8. 9. 12.
Դաւիթ 219. 233.
— *անբարիշտ բռնաւոր* 514.
— *արքեպիսկ.* 24. 25. 39. 46. 80. 185. 304.
— *արքայորդի* 118. 289. 343.
— *Թաղալ* 427. 469. 471. 485. 491.
— *կաթուղիկոս* 1. 4. 9. 12—17. 26. 40. 53. 56. 64. 67. 75. 86. 87. 95. 137. 152. 153. 179. 237. 270. 303. 324. 358. 379. 387. 390. 414. 440. 513. 519. 522. 523.
— *Դորդանեան* 149. 387.
— *Մարգարէ* 272. 500.
— *Նահապետ* 361.
— *վարդ.* 663-665.
Դիմիտրի Պաւլիչ 509.
— *Պրոկոֆիչ* 524.
Դիւան Սօլօմօն 399. 400.
Դօվլաթլու խան 390. 392. 404. 422. 424. 594. 596. 629.
Դօվլեթլու փաշայ 666. 667. 669.
— *Իւսուֆ փաշա* 565. 631.

Եթովպացի 394.
Եղիազար Անթապցի 95.
Եկիմ Վասիլիչ Խաստատով 238.
Եկոր Արեւլիչ 470.
Եղիսաբէթ խաթուն 529.
Եսայի 17. 582.
— *Թագօլեան* 599.
— *Մարգարէ* 243. 529.
Եւդոկի 670.
Եոկեար 127.
Երեւան 15. 105. 135. 176. 179. 205. 224. 290—293. 308. 320. 323. 325. 334. 344. 346. 354. 356. 374. 390. 394. 396. 397. 413. 424—426. 431. 438. 453. 466. 482. 511. 663. 666.
Երուսաղէմ 4. 6. 22. 40. 53. 84. 426. 605. 605. 677.
Եփրեմ Դաւիդիչ մայեօր 483.
— *կաթուղիկոս* 172. 174.
— *պօռուչիկ* 376. 377.
— *վարդ.* 7. 136—138. 145. 166. 169. 195. 227. 236—239. 242. 254. 258. 268. 275. 278—284. 287. 298. 367. —370. 372. 375. 393. 412. 421. 424. 518. 649. 650.
— *եպիսկ.* 79. 197.
— *արքեպիսկ.* 80. 146. 149. 150. 214. 216. 218. 232. 246. 267.
Զալ, Յովհաննէս Բէկթարեկեան Դիւանի եղբայրը 436.
Զաքարիա 127.
— *պատրիարք* 609.
Զաքար քնեազ 599.
Զմիւռնիա 4. 22. 55. 180. 187. 234. 277. 282. 295. 355. 393. 405. 406. 420. 479. 482. 494. 542. 543. 568.5 84. 606.
Զօհրապ 229. 230.
Էջմիածին 4—6. 9. 11. 14. 19—36. 40. 45—47. 51—74. 81—89. 92. 94—96. 99—131. 137—146. 149—152. 155—163. 170—173. 176—190. 193—5. 197—234. 238. 240—44. 249—53. 259—63. 266. 270. 271. 274. 276. 282. 285. 286. 289. 290. 295. 297. 300. 3. 7. 9. 11. 17. 19. 24. 26—30. 33. 36. 39. 41. 43. 46. 50. 54. 58. 61—70. 76—79. 82—400. 3. 8—13. 17. 18. 22. 26—36. 40—43. 46. 87. 90 92. 95. 500. 2. 4. 6—25. 28—35. 38. 40. 41. 44—48. 51—65. 69—601. 3. 8. 11. 12. 18—27. 30—48. 52. 54. 59. 61. 63. 69. 72. 78. 82—88. 90. 94—6. 99. 701—10. 12.
Էրզրում 66. 350. 419. 482. 660. 803. 4.
Էարինէ 224.
Թադուհի 5. 17. 23.
— *խաթուն կին Յովհաննէս աղալի* 539. 540.
Թադւոր 6. 63.
Թադդէ առաքեալ 26. 40. 95. 336. 511.
Թադէոս եպիսկ. 82.
— *Զէլեպի* 640.
— *վարդ.* 135.
Թազալ պէկ 105.
Թալին 332. 344. 349. 360. 391.
Թամարով Վասիլիյ Ստեպանիչ 14. 40. 62. 90. 137. 138. 253. 431. 483. 484. 520. 562. 650.
Թաւրիզ 122. 207. 589. 689.
Թեհրան 108. 116. 117. 362. 698.
Թէլաւ 119. 155.
Թէւէքէլի աղա 670.
Թէոդորոս արքեպիսկ. 53.
— *պատրիարք* 40. 53. 84.
— *վարդ.* 605. 606.
Թիֆլիս 1. 2. 5. 8—10. 12—20. 23. 24. 27—32. 38. 43. 45. 47. 49—54. 56. 58. 62. 65. 68. 71. 76. 80. 81. 86. 92. 96. 102. 105—110. 116—119. 126. 154. 156. 165. 166. 171. 179—184. 188. 189. 195. 196. 202—205. 213. 215. 217. 228. 233. 234. 246. 247.

254. 257. 261. 264. 270. 289. 291. 295. 29՝. 302. 311. 312. 317. 322—325. 326—330. 333. 339—343. 353. 356. 360. 365. 368. 371—374. 376. 377. 383. 385. 386. 388. 392. 394. 396. 298. 409. 413. 414. 418. 424—441. 441. 447. 452. 456. 459. 460. 4ı2. 468. 469. 477. 480. 433. 486. 494. 4 9. 500. 510. 514. 517. 528. 532. 553. 560. ։78. ։92. 599. 601. 611. 615. 622. 624. 627. 628. 633. 650. 651. 667. 695.
Թիֆլիզցիք 454. 456. 517.
Թովմաս աղայ Մէհրամզուլի 150.
Թորգոմայ տուն 95. 304.
Թուրքեր 664.
Թումայ 45.
Թօխաթ. 2. 5. 12. 15. 17—20. 24. 32. 38. 43. 50—55. 65. 76. 77. 83. 86. 91. 101. 139. 154. 181. 184. 246. 257. 261. 264. 311. 312. 415. 494. 516. 627. 658.
Թօմայ առաքելոյ 143. 144.
Իբրահիմ խան 309.
— *խան Դօվլէթլու* 628.
Իզմիր 99. 243. 285. 397. 423. 425. 444. 452. 465. 472. 482. 539. 548.
Իսահակ աղայ 2-0.
— *Աբրահամ նահապետի որդի* 230. 361. 623.
Իսմայէլ պէկ. 319. 666.
— *հաջի, իշխան* 45?. 373. (87.
— *արքեպս*. 703. 4.
Իսրայէլ կաթուղիկոս Աղուանից 307. 625.
Իւան Իւանիչ 385.
— *սարտար* 111. 202 333.
Իւչքիլիսէ վանք. 32. 95. 452. 493. 527. 560. 563. 567. 568. 663. 699.
Իւսուֆ փաշայ 599.
Լազրով զեներալ Իւան Պետրովիչ 67. 92. 93. 215. 322. 230. 332. 339. 345. 354.
Լիմ անապատ 103. 128. 132. 199. 622.
Խաչատուր 5. 6. 23. 103.
— *Աստապատեցի* 389.
— *վարդ*. 122—125. 387. 535. 537.
Խարբերդ 143.
Խթիռաւարդ ներկարար 219.
Խօջայ Բէհբութեանց 119. 120.
Խօլ 620.
Կաղրին 589.
Կալկաթա 45.
Կախէթ 119. 3 7.
Կայսր Ռուսաց 370. 417.
Կապէն Մատէն 36—38. 59. 563.
Կապուտան փաշայ 617.
Կատարինէ 67.
— *Ալեքսանդրովնա* 511.
Կաւալենցկի Պետր Իւանիչ 364. 374. 376. 379. 383. 386. 392. 396—398. 428. 429. 431. 336. 437. 4 1. 4.8. 483. 510. 611. 627.
Կարապետ եպիսկ. 2. 3. 16. 17. 20. 21. 31. 32. 37. 45. 52. 58—62. 77. 83—86. 89. 93. 133. 134. 140. 142. 148—152. 158. 159. 162. 167. 168. 170—175. 180. 191. 208. 211. 222. 233. 234. 237. 240. 242. 251—254. 258. 259. 267. 268. 271. 276. 279. 281—284. 289. 304. 318. 326. 329. 332—336. 339. 344. 345. 360. 366. 368. 372. 374. 377. 378. 381. 385. 389. 392. 410. 412. 429. 440. 441. 451. 459. 461. 607. 651. 677. 691. 701.
— *Խօջայ* 629.
— *լուսարար* 507.
— *Ձիթակարենց Սահփանի* 624.
— *Ձալիկեան*. 180.
— *տիրացու* 539.
— *ուխտաւոր* 507
— *վարդ*. 4—7. 12. 16. 22 24. 31. 55. 90. 91. 131. 132. 138. 139. 145. 159. 168. 170. 171. 181. 209. 212. 228. 260. 265. 279. 455. 456. 606. 625.
Կարբի 206.
Կարին 11. 21. 32. 33. 38. 55. 66. 74. 83. 136. 207. 236. 254. 278. 281. 293—6. 331 334. 340. 344. 347. 349. 353—357. 360. 373. 374. 380. 390—395. 402. 420. 423. 425. 426. 444. 452. 465. 472. 479. 482. 493. 494. 515. 527. 546. ։52. 556. 560. 574. 594. 596. 606. 610. 611. 629. 642. 655—660. 665. 677. 695.
Կեանջալ 204. 626.
Կեսարիա 455.
Կիրակոս որդի Սարգսի 193.
— *երեցփոխ* 206.
— *վարդ*. 688.
Կիւրեղ Արզումեան 44.
Կնօրին Կառլ Ֆէարիչ 81. 215. 254. 322. 323. 326. 330—336. 339. 341. 345. 346. 360. 364. 374. 379. 383. 387. 392. 396. 408. 428. 429. 431. 433. 435. 438. 439. 441. 442. 463. 468. 483.
Կ. Պօլիս. 1. 7. 9. 15—20. 23. 25. 31. 36—42. 45. 49—52. 56—59. 61—66. 72—80. 82. 86—89. 93. 97. 100. 108. 116. 117. 127. 128. 133. 137—140. 145. 148. 150. 152. 154. 157. 159. 164—168. 174. 176—179. 181. 189. 191. 192. 198. 211. 216. 218. 221. 224—226. 237. 238. 244—248. 253—258. 263. 268. 279. 285—288. 296. 300—303. 309—314. 319—322. 325. 326. 341. 346. 349—351. 357—359. 370—372. 388. 390. 391. 397. 406.

414. 416. 420. 423. 425. 431. 437. 443. 446. 450. 455. 457. 464. 473. 478. 481. 487. 492. 196. 497. 504. 514--517. 519. 521. 525. 528. 529. 542. 544—548. 551. 555. 558. 564. 565. 567—569 573. 576. 584. 585. 587. 595. 599. 601. 608-611. 613 626. 627. 633--636. 642. 614. 617. 650. 655—659. 667—670. 678. 683. 684. 688. 710.
Կարնեցիք 357. 391.
Կովկաս 28. 153.
Կորխ 273.
Կտուց անապատ 130. 132. 199.
Կուրակին Պաւել 426.
Հայարացիք 518. 598.
Հաճրաբալ մոլլա 292.
Հաղարծին 33. 35. 36. 182. 183.
Հաղբատ 108—110. 155. 156. 182.
Համասփիւռ խաթուն 551.
Հաջիբաբալ 207. 422.
Հաշտարխան 30. 77. 80. 92. 96. 101. 135. 149. 166. 188. 227. 228. 233. 245. 256. 292. 366. 369. 389. 400. 407. 411. 427. 438. 467. 469. 470. 490. 517. 528. 553. 586. 588. 613. 622. 649.
Հայաստան 26. 370. 421. 571.
Հայկազեան ժողովուրդ 448. 526. 663. 664.
Հայկազեան տուն 416.
Հայք 323. 334. 356. 368. 408. 417. 631.
Հայրապետ խոջայ 608.
Հասան բէկ 323. 326. 335. 345. 357. 360.
Հնդկաստան 42. 44. 50. 532.
Հնդիկներ 48. 49. 136. 184. 546. 699. 701.
Հազարացիք 415. 416.
Հռիփսիմէ կոյս 540.
Ղազաղ 33. 35. 119. 182. 183.
Ղազար 623.
— եպիսկ. 32. 38. 403.
— վարդ. 63. 65. 67. 75. 79. 84. 87. 89. 93. 136. 153. 191. 248. 265. 269. 314. 397. 425.
Ղարաբաղ 626.
Ղարս 32. 133. 200. 201. 251. 319. 325. 332. 340. 346. 355. 356. 360 364. 274. 390—392. 397. 441. 662 666. 680. 708. 10.
Ղարսեցիք 357. 391.
Ղեոնդ Պօղոսեան 388.
Ղզլար 70. 78. 80. 171. 194. 197. 572 582.
Ղնըզ 99. 100.
Ղրիմ 70.
Ղուկաս 44.
— Ալեքսանեան 183.
— առաքեալ 467.
— Դաբրիլեան 44. 185.
— վարդ. 153.
— կաթուղիկոս 4. 6. 16. 22. 24. 34. 42. 47. 51. 53. 55. 71. 76. 80. 156. 180. 181. 201. 248. 302. 310. 371. 428. 455. 465. 479. 521. 606. 622. 649. 661. 693. 706. 9.
Մակար 35. 36.
Մակեդոն 567.
Մահմադ վէլի սուլթան 320. 332. 344. 349. 356. 360. 391. 422. 667. 669.
Մահմէդ խան 662.
Մանուէլ վարդ. 610.
— Ջէլէպեան 9.
Մանուկ եղբայր խօջայ Ստեփանոսի 589. 703.
Մանուչար Դիւան 107.
Մատէն 90. 91. 143. 477.
Մատթէոս արքեպիսկ. 457.
— լուսարար 609.
Մատրաս 50.
Մարգար 77. 78.
— Ապրոյեան. 179. 187. 282.
— Գալուստեան 388.
Մարիամ կոյս 121.
— Միտրովնա 511.
— Իւանովնա կին պալկովնիկի 511.
— Ֆէոտորովնա կայսրուհի Ռուսաց 511. 512.
Մարկոս 127.
Մարտիրոս աղայ 75. 76. 84. 321. 662.
— առաջնորդ Իզմիրի 548. 549.
— Ասլան աղայ 293. 695.
— 552. 553. 561. 562. 595. 596. 611. 636. 682. 708. 10.
— ամիրա սարաֆլար քեահասի 652.
— արքեպիսկ. 238. 281. 282. 285. 286. 355. 359. 465. 539. 542. 543. 568. 580. 585.
— եպիսկ. 235. 236 277—280.
— երեցփոխ 206.
— մահտեսի 505. 506.
— վարդ. 15. 99. 243. 320. 390. 393. 397. 423. 444. 4 2. 540. 542. 579. 581. 666.
— որդի Սարգսի 193
Մարսվան 69.
Մելիք Աբրահամ 201. 343. 669. 692.
— Աբով 115.
— Դարչին 295.
— Դարչին Բէհբուտեան 105. 116.
— Փանոս 507.
— Ջիմշիդ 166. 330. 331.
— Մինաս Բեալ 437.
— Սահակ 326. 335. 345. 357.
— Սահակ աղայի որդի 392.
— Սաֆար 619.
— Ստեփան 321. 357. 391. 422. 423.
— Ստեփան Բլրցի Բալասանի տղայ 360.
Մելքոն Թարգման Կաւալենցկու 483.

— Մեհրաբով 397—399.
Մեսրոպ 412 486. 659.
— տիրացու 176.
— քահ. 19.
Մերկեռիոս եղբայր Աբրահամ Օքսուզեանի 660.
Մէհրար Ենօքեան 578.
Միէսէր Կիւլօղլի մահտեսի 545.
Մինաս պարոն 442. 509.
— ամիրայ 66. 67 137. 217.
— արքեպիսկ. 17.
— Բաղտասար Աղաղատէին թոռը. 222.
— վարդ. 108. 155. 203. 296. 300. 325.
Մինաս Քիստով 440. 503. 510. 514.
Միտրի Պաւլիչ պօլկովնիկ 510. 513.
Միրզոլ Աբրահամ 325.
— Մահմատ 562. 587. 703. 4.
Միքայէլ 44. 219.
— վարդ. 40. 51.
— Տէր Մինասեանց 183. 697.
Մկրտիչ ամիրայ 9.
Մկրտում Գալստեան 30.
— 77. 78.
Մողտօք 1. 78. 80. 336. 353. 439.
Մոսկվայ 98. 137. 217. 231. 285. 539. 584.
Մովսէս Դատաչեան 388. 469.
Մուշ 212.
Մուրատ ամիրայ Շնորհք ամիրայի որդի 211.
— ամիրայ Սուրէնեան 259.
— Չէլէպի 9.
Մուքուս 60.

Յաբեթ. 384. 489.
Յակոբ. 6. 23. 39. 42. 51. 53. 83. 99. 159. 525. 629.
— Աշաբաբեան 366. 369.
— առաքեալ 143. 605. 6՛7.
— արքեպիսկ. 50. 184. 186. 595. 658. 97. —99.
— կաթուղիկոս 95.
— Հաջի բաբա 672.
— նահապետ 230. 361.
— սուրբ 572. 573. 583. 610.
— վարդ. հնդկաց 532.
— ամիրայ սառաֆ Կապուտան փաշայի 645.
— ամիրայ Կիւլպեան 710.
Յակոբ-ջան 159. 636. 682.
Յարութիւն 429.
— ամիրայ սառաֆ Կապուտան փաշայի 645. 707.
— շարբանղցի 400
— Եղիազարեան 388.
— եպիսկ. 44. 697.
— հեքիմբաշի 592.
— ծերունի 185. 186.
— որդի Յովհաննէս Չէլէպիի 644.
— սարկ. 8. 9. 127.
— վարդ. 39. 43. 46—50. 142. 185.
— քէոխվայ 34. 182.
Յոր 309.
Յովակիմ 85. 137. 197. 217. 408. 582. 631.
Յովհաննէս 8. 23. 126. 129. 230. 242. 437. 442. 486. 557. 584. 681.
— ամիրայ 12 57. 708.
— աղայ 74. 137.
— արքեպիսկ. 614. 637. 670. 679.
— Բարղանճի. 634.
— Բէկթաբէկեան Դիւան 398. 436. 462. 601.
— Դոլման 586.
— եպիսկ. 133. 143. 144. 150. 180. 537. 604.
— խօջայ 629.
— հաջիբաբայի փեսայ 207.
— Հայրապետեան 490.
— Ղորղանեան 207.
— մահտեսի 83. 472. 505. 506.
— մահտեսի խօջայ Շեհիրվեքիլի 596.
— մահտեսի Պաչպաղրկեան 450. 529. 661.
— Յարութիւնեան 221.
— Շիոլեան 599.
— ուստա բառմաճի 504. 539.
— Չէլէպեանց 38. 653.
— պատր. Կ. Պօլսոյ 1. 31. 39. 82. 90. 133. 151. 158. 372. 627. 634. 651. 660. 672. 686. 91. 700. 9.
— Պօլսեցի 393. 438.
— սապատող 517.
— Սաւալանեան 285.
— սուրբ 401. 609.
— վարդ. 31. 69. 116 139. 144. 161. 200. 201. 6. 7. 22. 24. 364. 377. 379. 381. 424. 433. 442. 461. 501. 507. 627. 628. 642.
— տիրացու 618.
— փեսայ Յովհաննէս էֆէնտիի 588.
Յովնան 249. 262. 265. 315. 568.
Յովսէփ 107. 116. 219.
— Ալէքսանեան թարգմ. Թամարովի 519.
— արքեպիսկ. 4. 11. 15. 43. 47. 49. 52. 76. 126. 181. 184. 185. 188. 256. 302. 455.
— Թումանեան 388.
— կաթուղիկոս 1—3. 6. 9. 12. 13. 17. 20. 24. 27—32. 35—45. 50. 52. 54—59. 62. 70. 71. 78-81. 96. 98. 102. 135. 136—138. 147. 152. 155. 164. 172. 179. 184. 188. 189. 194—197. 214. 217. 241. 247. 250. 251. 257. 261. 266. 275. 300. 311. 324. 341. 353. 371. 389. 392. 418. 447. 469. 514. 518—521. 525. 546. 574. 606. 622. 623. 628. 650. 677. 699.
— Ղորղանեանց 213. 317.
— Մունթոյեան 409.

— վարդ. 121.
— քահանայ 291.
Յոբ 652.
Յոհաննէս 17. 641.
— ամիրայ Տագէսեան 263.
— Շէհիր վեքիլ 319. 340.
— Չէլէպի 640.
— պոլկովնիկ 256.
Նազարէթ Յարութիւնեան 388.
Նախիջեան 135. 206. 593. 600—603. 616.
— Նոր 255.
Նաւասարդեան 69.
Նեստոր 544. 567.
Ներսէս վ. 139. 423. 444. 453. 465. 479. 610.
— վարպետ 630
Նիկողայոս աղայ 60.
— 582. 589. 590.
— ամիրայ 4. 11. 17. 20. 21.
— Եփրիկեան 655.
— մահտեսի 478.
— քահ. 7.
— քնեազ 599.
Նոյ նահապետ 230. 361. 623.
Նոյեմզարա 623.
Շահնեանք 127.
Շամչատին 119
Շահպին Ղարահիսար 64.
Շէհիրվէքիլէ 83. 642.
Շհար Երեանու 229.
Շնորհ Մկրտիչ ամիրայի որդի 495.
Շուշի 127. 135. 327.
Ոսկան 5. 23.
Որմ 122. 124. 535.
Ուզումչի գիւղ 603.
Ուռումելի 420.
Ուսկուտար 13.
Ուրհայ 143.
Չարսանջաղ 143.
Չմշկածոր 143
Չուխուր էսադի. 663.
Պաւել պոլկովնիկ 531.
— Պետրովիչ 41.
Պարսից Շահ 284. 303. 308. 339. 340. 356. 360. 368. 372. 616. 667. 668.
Պարսիկք 227. 234. 237. 242 352. 258. 367. 334. 345. 375. 397. 414—17. 465. 494. 573. 593. 598. 600. 616.
Պալադիտ 191.
Պետրոս խօջայ 704.
Պետր Գրիգորիչ Կնորինի Թարգման 365.
Պետերբուրգ 139. 167. 229. 231. 238. 239. 241. 251. 254. 266. 274. 275. 335. 437. 518. 521—24. 546. 665.
Պետր Իւանիչ Կուալենցկի 328.
Պետրոս Եփրիկեան 397.
— 219. 397.
— Դանիէլեան 224.
— խօջայ 704.
— Կեսարացի, հոգեծին որդի Զաքարիա պատրիարգի 609.
— եպս. 3. 20.
— Նուիրակ Հնդկաց 609.
— պատրիարգ 5. 24. 55.
— վարդ. 11. 20. 100. 191.
— որդի Յօնանի 507.
Պլատոն Ալեքսանդրիչ Զուպով քնեազ 250.
— արքեպ. Ռուսաց 101. 102. 411.
Պրուսիա 541. 579.
Պուտկ վ Պ' օտր Գրիգորիչ 440.
Պօլսեցիք 660. 666. 699.
Պօղոս արքեպիսկ. 163. 582.
Պօղոս Շահինենց Թիւլպենճի որդի 134. 135.
— վարդ. Պրուսայի 541. 580.
— 20. 127. 128.
— առաքեալ 72. 140. 188.
Ջանան Չէլէպի 466.
Ջուղայ 39. 43. 44. 46. 50. 95. 185.
Ջուղայ նոր 47.
Ջուղաղ 35. 183.
Ռափայէլ վար. 84.
Ռեբեկա 623.
Ռէթէոս վարդ. 182.
Ռումանցով Դաֆրիլ Պետրովիչ գրաֆ 522.
Ռուսներ 236. 268. 323 345. 413. 663.
Ռուսաստան 383. 665. 671.
Սարէհ Թաթար 696.
Սալի 630. 631.
Սալմաստ 122—124. 535. 619.
Սահակաչէն 113. 317.
Սահակ որդի Սարգսի 193.
— որդի Սելիք Աբրահամի 360.
Սաղաթել 507.
Սալիմ 191.
Սամաթիա 677.
Սամուէլ Ղօրղանեանց 459.
Սանահին 156.
Սառա 623.
Սարգիս 408. 409.
— աղաղայէ 60. 159. 189. 192. 636. 682.
— արքեպիսկ. 108.
— Թոքմաչի 632.
Սեաւ լեառ 407.
Սեան 399.
Սեղրաք մահտեսի 505. 529. 551.
Սէրգէյ Լազրիչ Լաշկարով 251.
Սէլիմ Չէլէպի 466.
Սերոբ փոսփոս 506.
Սիմէոն 388.
— ամիրայ Փափազօղլի 446. 706.
— արքեպիսկ. 321. 326. 332. 344. 357. 360. 364. 391. 395. 404. 422.

— կաթողիկոս 70. 71. 549.
— Չէլէպի 640.
— Սարգսեան 389.
— Սերգէյիչ 96. 227. 400. 427. 438. 467. 469. 471. 491. 613.
Սինան օղլի Բաղտասար ամիրայ 555.
Սոլոմոն 93. 438.
— Արղութեան 386. 435. 436. 440. 442. 467. 468. 477. 602.
Սողոմոն արքայածին 235.
— իմաստուն 218. 310. 504. 527. 540. 684.
— վարդ. 209
Սուրամ 119.
Սուլթան մուսա 641.
— խաթուն 192.
Սուրէն խան Մուրադ 492.
Սուրխան Դիւան 107. 462.
Ստեփան 219. 277. 582.
— աղայ 4. 39. 49.
— արքեպիսկ. 69. 116 208. 253. 255. 294–297. 300. 319. 321. 340. 346. 349. 350. 355. 358. 373 432. 436. 451. 453. 454. 464. 479. 481. 525 526. 529. 546 559. 561. 635. 638 639. 640. 643—645. 647. 652–5. 662. 665. 666. 669. 675. 688. 92. 702. 3. 12.
— Բաստամեանց 462 615.
— Գրիգորովիչ 97.
— եպիսկ. 32. 33. 38. 100. 208. 340. 390. 450. 466. 577. 681. 682.
— երեց 136.
— մահտեսի 4[illegible]8.
— Մելիք 2[illegible]8.
— վարդ 108. 117. 425. 455. 482. 484. 497. 528. 556. 559. 601. 644. 646. 648. 653. 687. 92– 95. 702. 5.
Ստեփանոս Տէր Յովհաննիսեան 39. 44. 49. 184 697.
— Դրօշմահար 22.
— Թօխօվմեանց 91.
— խօջայ 589.
Սրապիօն 507.
Սօլօմօն 462.
— բէկ 182. 202.
— քնեաղ 149. 173. 270. 485. 486. 597.
Վաղարշապատ 94. 509–511. 514. 519. 520. 522. 523. 525.
Վան 86. 142. 220. 599.
Վասպուրական ծով 143. 144.
Վարդան վարդ. 103–105. 130. 200.
Վարդաղար 204
Վլադիմիր սուրբ 665.
Վկալարան սուրբ Դալիանէի 190.
Վրաստուն 24. 119. 153.
Վրացիք 108. 110. 323.
Վօրօնցով գրաֆ 662.
Տաթե 135. 205. 603.
Տաճիկներ 234. 347. 543. 617. 629. 631.
Տափիթաղ 108. 110.
Տիրանակերտ 143.
Տէր Առաքել 108. 127.
— Բաղտասար 503. 509. 510. 513. 514 531.
— Դալուստ 127.
— Գասպար 594. 610. 656. 696.
— Գրիգոր 108. 111. 241. 289.
— Գէորգ 618.
— Դաւիթ 105. 107.
— Մեսրոպ Պօլսի 683.
— Մինաս 127.
— Միքայէլ 219.
— Յարութիւն 155. 156.
— Յարութիւն Մանիսացի 187.
— Նիկողայոս սուրբ Նշանի աւագ քահանայ 460.
— Պողոս 464.
— Սահակ 70.
— Սարգիս 155.
— Սյօն 155.
— Սիմօն 409. 460.
— Ստեփան քահ. 546. 670.
— Սաեփան Թիֆլիզեցի 636. 637.
— Վահան 630.
— Վարդան 99.
Տուն Աղուանից 322.
Փափազօղլի 706.
Փիլիպոս ամիրայ 694.
Փիթօյեանց 8.
Փիլիպոս Ալփիարեան 24.
— ամիրա 84. 87. 90. 91. 244. 563. 595. 599. 610.
Փիրիտօն իշխ. 166.
Փիրղուլի խան 602. 616.
Քահանայ վրացի Լազրովի Թարգման 291.
Քանան 567.
Քեթեան 270. 271.
Քիսեղ 119.
Քիւրէկ 681. 685.
Քրդստան 395. 444. 452. 466. 527. 543. 574. 707.
Քուչուպէյով Վիկտոր Պաւլովիչ գրաֆ 251.
Օհանէս վարդապետ Պօլսեցի 388.
— Հայրապետեան 388.
Օնօփրիօն տիրացու 551.
Օսմանցիք 117. 126. 137. 227. 233. 237. 252. 258. 267. 282. 322. 325. 329. 334. 344. 345. 355. 359. 368. 372— 375. 417. 435. 590. 593. 600. 602. 616. 663. 666. 689. 93. 700.
Ֆարուղատ ամիրայ 558.
Ֆ'օղր Կիրիլիչ. 170.

51	Լումայ » » 1897 ա. գիրք	2	—
52	Լումայ » » 1897 բ. գիրք	2	—
53	Լումայ » » 1898 ա. գիրք	2	—
54	Լումայ » » 1898 բ գիրք	2	—
55	Լումայ » » 1899 ա. գիրք	2	—
56	Լումայ » » 1899 բ. գիրք	2	—
57	Լումայ » » 1900 ա. գիրք	2	—
58	Լումայ » „ 1900 բ. գիրք	2	—
59	Լումայ » » 1901 ա. գիրք	2	—
60	Լումայ » » 1901 բ. գիրք	2	—
61	Լումայ երկամսեայ հանդէս 1902 տարեկան	6	—
62	Լումայ » » 1903 տարեկան	6	—
63	Լումայ „ „ 1904 տար. բաժնեգին	6	—
64	Յ. Պարոնեան, Ծիծաղ, պատկերով, 1899	1	25
65	» Արեւել. ատամնաբոյժ կատակ. 1901	—	50
66	„ Քաղաքավար. վնասները, 1901	—	75
67	Ի. Յարութիւնեան, Ստեփանոս Պալասանեան.	—	25
68	Ն. Տէր-Կարապետեան, Խաչատուր Աբովեան, [illegible]	—	60
69	Ի. Յարութիւնեան, Աշակերտի յուշատետրը	—	30
70	„ Զգացմունքների աշխարհ.	—	30
71	Յարութիւն Թումանեան, Մելիք Իւսուփ	—	25
72	Մ. Եօկայի, Ուրացողը, Թարգ. Խ. Յարութ.	—	20
73	1901 Ս. Էջմիածնի ժԶ. դարադարձը	—	25
74	Եր. Շահազիզ, Մկրտիչ Էմին	—	60
75	Կորոլենկօ, Կոյր երաժիշտը Թարգմ. Մուշէ վրդ.	—	60
76	Չորրորդ դարու Հայ եկեղեցին	—	20
77	Եր. Շահազիզ, Նոր-Նախիջևանի ս. Խաչ վանքը	—	40
78	Ի. Յարութիւնեան, Իմ օրագիրը.	—	20
79	Մեծ Ներսէս	—	25
80	Գ. Խալաթեանց, Հայոց գրոց. բառարանագրութիւնը	—	60
81	Ի. Յարութիւնեան, Կին վիպագիր, Ե. Սեբիլ	—	10
82	Օր. Ն. Աղանեանց, (Թարգմ.) Մի հացի. բ. ա.	—	5
83	Կորոլենկօ. Դատաստանի օրը. Թարգմ. Մուշէ վարդապետ	—	40
84	Կ. Կոստանեանց. Շարժի տարեգրութիւնը Հայոց մէջ. 1902	—	20
85	Գարեգին վ. Յովսէփեան Մանրանկարչութեան արուեստը Հայոց մէջ 1902		
86	Ներսէս Մեծի յաջորդներ 1902	—	25
87	Ֆ. Գոյրկէ. Զէկուշ. Թարգմ. Մուշէ վրդ.	—	20
88	Քուչակ Նահապետի երգերը. Յով. Թադէոսեան.	—	15
89	Սահակ Պարթև	—	25
90	Աղուշը, ծովի Էշրաֆի. Թարգմ. օր. Նուարդ Աղասեանց. բ. տպ.	—	5
91	Վարժապետը. Թարգմ. Լ. Մ.-Ա.	—	5
92	Հազարան Բլբուլ. Յ. Թումանեանց	—	30
93	Պատմական պատկերներ. Եր. Շահազիզի 1903	—	60
94	Ժ. Ժ. Ռուսսօ, Էմիլ. I. Թարգմ. Խ. Յարութիւնեանի 1904.	—	50
95	Խորէն արք. Գալֆայեան և Նուէր. Աղօթքը. Եր. Շահազիզի. 1904	—	60
96	Հերոսապաշտ. Լուդվիգ Ֆուլդայի. Թարգմ. Տ. Վ. 1904	—	50
97	Կանոնք ժողովոց. Մ. Ա. 1904	—	50
98	Ուղեղի նորոգումը. Ֆ. Դիկկելի Թարգմ. Օր. Նուարդ Աղանեան. 1904	—	5
99	Գիտութիւն " " " " " . 1904	—	5
100	Գ. Ե. Սրուանձտեանցի երկասիրութիւնները. I. Համով—հոտով 1904	1	25
101	Ալէմգիր վէպ Վ. Փափազեանի. 1904	—	50
102	Սուտի հոգեբանութիւնը. Գար. Ենգ. 1904	—	10
103	Հայրեր և զաւակներ Ի. Տուրգենևի Թարգմ. Մուշէ վ. 1904	—	75
104	Կօնան Դոյլ. Բանակն ինչպէս ազատեցի. Թարգմ. Տ. Վ. 1904	—	15

Մամուլի տակ են

105 Դիւան Հայոց պատմութեան. Գիրք Է.
106 Եղիշէի պատմութեան բնագիրը.
107 Հայ Գրչագիրներ.
108 Կանոնք ժողովոց Մ. Բ.
109 Է. Բէլլամի. Հարիւր տարուց յետոյ. Թարգմ. Ղ. Աղայեանց և Ռ. Խանազատեանց.

Պատկերներ

Պետրոս Շանշեան	—	10
Յակոբ Պարոնեան	—	10
Աբգար Յովհաննիսեան.	—	10
Աւետիք Ղուկասեան	—	10
Գարեգին եպս. Սրուանձտեանց	—	10

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԴԻՒԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ“
ԺՈՂՈՎԱԾՈՒԻ VI—XV ՀԱՏՈՐՆԵՐԻ

—

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գիրք Զ. ԴԱՒԻԹ ԿԱԹՈՂԻԿՈՍ մաս I
» Է. ԴԱՒԻԹ » II (մամուլի տակ)
» Ը. ՍԻՄԷՕՆ » II (I տպուած)
» Թ. ՂՈՒԿԱՍ » II (» »...)
» Ժ. ՂՈՒԿԱՍ » III
» ԺԱ. ՂՈՒԿԱՍ » IV
» ԺԲ. ԵՓՐԵՄ » I
» ԺԳ. ՄԱՆՈՒԷԼ ԿԻՒՄԻՒՇԽԱՆԵՑԻ
» ԺԴ. ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐՔ ԺԶ—ԺԸ ԴԱՐՈՒՑ։
1. Յովհաննէս Արճիշեցի։ 2. Գրիգոր դպիր։ 3. Դաւիթ Բաղիշեցի։ 4. Բարսեղ Վարագեցի։ 5. Բարդուղիմէոս Ճուղանցի։ 6. Վարդան մեծ Բաղիշեցի։ 7. Յովհաննէս Սեբաստացի պատմիչ։ 8. Իսահակ Սահրատեան։ 9. Յարութիւն Խալֆայեան։ 10. Յովհաննէս Ճահխաթունեան։ 11. Ղեւոնդ Տոոպեցի։ 12. Անցք Վասպուրական աշխարհի։ 13. Յաջորդութիւնք Վանայ բդեշխից։ 14. Ժամանակագրութիւնք անյայտ պատմչաց։
» ԺԵ. ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ ԺԵ—ԺԸ ԴԱՐՈՒՑ։

—

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Այս 10 հատորներից իւրաքանչիւրը բաղկացած կը լինի 600—900 էջերից տպուած «Դիւաններ»ի» գիրքով։

Վեցերորդը ներկայ հատորն է։

Մնացեալ հատորները միաժամանակ մամուլի կյանձնուին, երբ բաժանորդների թիւը կհասնի ՀԱՐԻՒՐԻ։

10 ՀԱՏՈՐԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է 30 ՌՈՒԲԼԻ։ Տպագրութիւնից յետոյ ամէն մի հատորը կարժենայ 4—5 ռուբլի։